Կառուցուածքի տեսակէտից նշուած բանաձեւը յարաբերականօրէն կայուն է, բայց առանձնանում է զանազան գեղեցիկ տարբերակներով: Նման բազմազանութեան պատճառը միայն հայկական բառ ու բանի ճոխութիւնը չէ, այլ նաեւ հայոց անուրանալի պատմութիւնը, որ մի տրտմագին կնիք է դրել մեր վէպք ու զրոյցի վրայ:

Դժուար է որոշել հայ հեքիաթի աչխարհագրութիւնը, նրա ստեղծման եւ պատումի տարածքը: Գրի առնուած հայկական հեքիաթների մի զգալի մասը ստեղծուել է պատմող համայնքներում, որոնք աւա՛ղ, այլեւս չկան. պատմութիւններ վայրերից՝ «աներեւոյթ» թագաւորութիւններից, որոնց քաղցրիկ անունները մոռացուել են, նման հեքիաթային այլաշխարհքներին, ուր «օձն իր պորտով եւ հաւքն իր թեւով» չի կարող հասնել, եւ որոնք կրում են «Պատմական Հայաստան» տեղանունը:

Ասացողների տարագնացութեան հետեւանքով հեքիաթները չարունակաբար ենթարկուել են մշակութային, կրօնական ու լեզուական ազ-

դեցութիւնների։ Հեքիաթի վերջաբանը, որ իր բնեռային դիրքի շնորհիւ աւելի «խոցելի» է նման ներգործութիւնների հանդէպ, նոյնպէս փոփոխուել է՝ սերելով մեծաթիւ տարբերակ-բանաձեւեր։

Բանաձեւի միջուկը՝ խնճորը, որպէս կանոն, մնում է անփոփոխ։ Ստեպ-ստեպ խնճորները փոխարինւում են այլ պտուղներով, օրինակ՝ դեղձերով. «Ըստուծանա իրեք մըեծ-մըեծ հուլի շաւթալի եր ընգնի. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ տըռնըտական անջուկ տըռնողին»[2]։ Հանդիպում ենք նոյնիսկ այնպիսի վերջաբանների, երբ պտուղը փոխարինւում է գինիով. արցախցի կին ասացող Ղումաչ Աւագեանի մէկ հեքիաթում տեղ է գտած մի ուշագրաւ վերջաբան, որտեղ խնճորները փոխարինւում են գինով լի բաժակներով[3]. «Մըեր էն սըր-սաթօտ, դաշանգյ Ղարաբաղին Ղըզղալա շէնին կյինաւ իրեք ստաքան լըցած ա, տիրած ստոլին, եր կալիք, խմեցիք, էս մին ստաքանը՝ ասողին, էս մին ստաքանը՝ լսողին, էս մին ստաքանն էլ էս հաքեաքնին լուս աշխարք քըցողին։ Էտ պըծըպածի անըմ, էտ արեւին կամ նաև հոտը, մէչին կյինաւ հու վըեր խըմի, էլ մահ, մըեռնիլ չօնի, չունքի անմահական ա»[4]։ Առանձին օրինակներում երկնքից աստղեր են ընկնում՝ կտրուկ չրջելով վերջաբանի խորհրդանշանային իմաստը. «Էն ասքխոտ երգյինքաև իրեք ասքըղ վեր ընգաւ. մինը՝ ըսողեն բախտեն, մինը՝ լըսողեն բախտեն, մինն էլ, էն բըլկոնաև անջուկ տըռնողեն բախտեն»[5]։

Էնն Աւագեանը երեք խնճորների բանաձեւի ծագումը կապում է Սուրբ Դորոթէայի պատմութեան հետ, որ հալածուել եւ նահատակուել է Կեսարիայում։ Երբ կոյսին տանում են իր մահավայրը, ամբոխը ծաղրում է նրան. բազմութիւնից Թէոֆիլուս անունով մէկը գոռում է կոյսին, որ չմոռանայ դրախտից իրեն պտուղներ ուղարկել։ Նահատակութեւց առաջ սրբուհին դադարում է աղօթել, յայտնւում է մի փոքրիկ տղայ՝ ձեռքի զամբիւղում երեք վարդ եւ երեք խնձոր։ Կոյսը տղային խնդրում է Թէոֆիլուսին յանձնել խոստացուած ընծան։ Կատարուածից Թէոֆիլուսն այնպէս է տպաւորւում, որ ինքն էլ է քրիստոնէութիւն ընդունում եւ նահատակւում[6]։

Աւագեանի ենթադրութեամբ Դորոթէայի պատմութիւնը կարող էր հիմք ծառայել «երկնքից երեք խնձոր ընկաւ» հեքիաթային բանաձեւի համար, վարկած, որով յաջողուեց անհրաժեշտ ուշադրութիւն բեւեռել հայկական հեքիաթի փակող բանաձեւերի ծագման եւ հնարաւոր մեկնութեան վրայ։

Չթերագնահատելով այս մեկնութիւնը՝ փորձենք փակող բանաձեւերը քննել նրանց իմաստային եւ դործառութային տեսանկիւնից։

Խնձորը

Բուն խնձորի խորհրդանշանային դաշտը չափազանց ընդգրկուն է։ Սակայն, որքան էլ լայն լինի խնձորի իմաստային դաշտը, հետեւեալ

խորհրդանշանային տարրերը հեշտութեամբ կարելի է բացայայտել բանաձեւերից գրեթէ իւրաքանչիւրի մէջ։

Ա. *Ինչպէս շատ այլ մշակոյթներում, հայոց մէջ եւս խնձորը երկարակեցութեան եւ անմահութեան խորհրդանիշ է։ Գարեգին Եպս. Սրուանձտեանցը գրում է.* «Քանի մը առատաջուր ակունք կը բխին այս տեղէն. ամէնն ալ անմահութեան ջրեր, բայց բուն ակն՝ մէկ է, եւ ունի իւր վէպն։ Ամէն տարի, Համբարձման տօնին, առաւօտ, անմահութեան խնձոր մը հրեշտակներէ կը դրուի այս ական մէջ, ուր ամէնէն կանուխ հասնողն միայն կը տեսնէ. բայց երբ ձեռն կը կարկառէ առնելու, խնձորն այլեւս չ'երեւիր։ -- Ափսո՜ս։ Բայց տեսնելս ալ հերիք է, ըսէք թէ ի՞նչ կերպ, ինչ գոյն եւ ի՞նչ մեծութիւն ունի։ -- Ո՞ր աղամորդին կարող է պատմել, կա՞յ անոր նման բան մը, որ հասկցնենք, երբ դրախտն երթանք՝ պիտի տեսնենք ու վայելենք... Աւա՜ղ աղամորդուոցս, աւա՜ղ մահկանացուացս»[7]։

Խորհրդանշային այս կէտից մեկնելով, հեքիաթի բանաձեւն անուղղակիօրէն անմահութիւն եւ արեւչատութիւն է մաղթում թէ՛ պատմողին, թէ՛ լսողին։ Հեքիաթն ընդհանրապէս հակուած է չեշտել կեանքի գերազանցութիւնը մահուան հանդէպ. աւելին, նրան յայտնի չէ մահուան երկիւղը։ Որպէս երկարակեցութեան եւ անմահութեան խորհրդանիշ, երեք խնձորները ենթադրաբար առաջացել են անմահական խնձորների վերաբերեալ մայր մոտիւից որոնք հեքիաթին հաղորդում են լաւատեսութիւն ու պայծառութիւն, ուրախ աւարտ։

Բ. Երեք խնձորները ամուսնութեան եւ հարսանեաց խորհրդանիշ են, իրադարձութիւններ, որ պսակում են գրեթէ ամէն մի հրաշապատում հեքիաթ։ Ցաճախ խնձորները վայր են ընկնում եօթ օր, եօթ գիշեր տեւած մեծաշուք հարսանիքից յետոյ։ Որպէս պսակի, ամուսնութեան եւ տղաբերքի խորհուրդ, բանաձեւը յենւում է անզաւակ մարդու/թագաւորի մոտիւի վրայ։ Հրաշագործ խնձորի շնորհիւ ամուլ թագաւորն ու թագուհին վերջապէս զաւակ են ունենում։ Ահաւասիկ Բասէնի «Գիւլիզար» հեքիաթից մի պատառիկ. «Մի էրքա, արի ետ դարձի, քովըս մէ խընձորըմ կայ, կուտամ քեզի տար, էս խնձորը կըճպէ, կըճեպները լից ձիուդ ի՛առեջը, քու ձիդ էլ քուռակ չէ բերէ, քու կնիկդ էլ երեխա չէ բերէ։ Խընձորն էլ կիսէ։ Կէսը դու կէ, կէսն էլ քու կընիկըդ, կըճեպները ձիդ ուտէ. քեզի մէ լաւ զաւակըմ կէղնի, ձիդ էլ մէ լաւ քուռակըմ կը բերէ»[8]։

Գ. *Խնձորը կարող է հանդէս գալ նաեւ իր բուն՝ նիւթական իմաստով, որպէս կերակրի խորհրդանիշ։ Նման ընթերցումը հիմնւում է այն օրինակների վրայ, որոնք բացայայտ կարեւորում են պտղի համային յատկանիշները կամ ահագին մեծութիւնը՝ բաւարար՝ փարատելու անօթի բազմութեան քաղցը.* «Ըտրանա ետը երգինքեան իրեք կեարմուր խընձոր ա եր ընգնըմ, մըեղրի մընաւ քախծր, մինը ասողին, մինը կարթողին, մինն էլ տիպողին»[9], «Նոր ասսանից երեք կարմիր խնձոր

ա ընկնում, միևը հեքիաթ ասողին, միևը լսողին, միև էլ սաղ արար աշխարին»[10], «Աստծանէ իրեք խնճոր պատաւ, մէկ ասողին, մէկ լսողին, մէկ լէ գաղթականներուն»[11]:

Որպէս կերակրի խորհրդանիշ, բանաձեւային հակայաչափ խնճորները յիշեցնում են յայտնի «հացի ուտոպիաները», օրինակ՝ միջնադարեան անգլիական բանաստեղծութեան մէջ նկարագրուող Կոկէյնի երկիրը (Land of Cocaygne), *ուր գետերով ձէթ, կաթ եւ գինի է հոսում. կամ՝ գերմանական սուտհեքիաթներում* (Lügenmärchen) *յայտնուող Շարաֆֆէնլանդը* (Scharaffenland) *եւն.*[12]:

Հացի ուտոպիաների պատկերները սակաւ չեն եւրոպական եւ ռուսական հեքիաթներում, թերեւս մէկ էական տարբերութեամբ. դրանք սովորաբար բացում են եւ ոչ թէ ամփոփում հեքիաթը: Այսպէս, անգլիական մի հեքիաթ սկսւում է անդառնալի լաւ ժամանակների զաւեշտական նկարագրութեամբ. «....տների կտուրները գաթայով էին կապում, փողոցները սալարկում էին չամչէ պուդինգներով, իսկ խորոված խոզերը վեր ու վար էին անում փողոցներով ու կանչում՝ եկէ՛ք մեզ կերէք: Ա՛յ քէ լաւ ժամանակներ էին ճանապարհորդների համար»[13]:

Որոշ վերապահումով նման պարենային ուտոպիա է Գրիմ եղբայրների վէպի որջը «Հենզէլն Ու Գրետէլը» հեքիաթում, որ թումանեանական մեկնութեամբ «ամբողջովին հացից է շինած, կտուրը՝ գաթից, իսկ լուսամուտները՝ թափանցիկ շաքարից»[14]:

Վերջապէս, ասուածից չատ տարբեր չէ Գերմանիայից Անգլիա արտաքսուած գեղարուեստական ստի արքայ, էրիխ Ռասպէի «Բարոն Միւնխհաուզէնի» «Պանրէ կղզին». «Կղզին, որի մօտ խարիսխ գցեց մեր նաւը, ամբողջութեամբ հրաշալի հոլանդական պանրից էր սարքուած: Այո, մի ծիծաղէք, ճշմարիտ բան եմ ասում ձեզ. հողի փոխարէն մեր ոտքերի տակ պանիր էր: .... Նաեւ տեսայ ծառեր՝ ճիւղերից կախուած մեղրաբլիթներով»[15]:

Ըստ ռուսական մի հեքիաթի՝ Սիսեռ Թագաւորն ու չքնաղ Անաստասիա Թագուհին ապրել են վաղեմի ժամանակներում, «երբ Տիրոջ ստեղծած աշխարհը լի էր անտառի ոգիներով, վհուկներով ու ջրահարսներով, գետերի հունով ջրի տեղ կաթ էր հոսում, ափերը կիսէլից էին, ու խորոված լորերը վազ էին տալիս դաշտերում»[16]:

Պարենով ողողուած առասպելական աշխարհները գովաբանող գրական այս պատրանքների հիմքում ընկած են յաճախակի սովի ու կարիքի ցաւալի յիշողութիւնները: Եւ զարմանալի չէ. բանահիւսութիւնը աղքատի մշակոյթն է: Մեծատուները հաց չեն անրջում:

Ոճական-Գործառութային Երեսակ

Աւարտի բանաձեւերի ոճական-գործառութային կողմը պակասկարեւոր չէ, քան նրանց իմաստային որակները: Փակող բանաձեւերն

ունեն յատակ ժանրորոշիչ դեր եւ օգնում են ունկնդրին/ընթերցողին անսխալ կողմնորոշուել, որ լսած կամ ընթերցած նիւթը պատկանում է գրական որոշակի դասի, այն է՝ հեքիաթի սեռին։

Ա. Կարծում ենք արդարացի կը լինի հեքիաթը դիտել որպէս իւրօրինակ վերացում իսկ երկնքից ընկնող խնձորները՝ որպէս այդ վիճակից սթափեցնող ազդանշան։ Ամերիկացի տեսաբան Բրայըն Սթուրմն ուսումնասիրել է հեքիաթասացութեան ժամանակ ստեղծուող լսողական վերացումը[17]*։ Վերլուծական հոգեբանութեան դպրոցի ներկայացուցիչ Ֆլարիսա Փինքոլա Էսթէսը, որի ընկալմամբ հեքիաթների սկիզբ ու աւարտ ազդարարող բանաձեւեր հաւաքելը մի ուրոյն արուեստ է, գրում է.* «Ահաւասիկ, սրընթաց մի աւարտ մարդկանց հեքիաթից անյապաղ դէպի իրականութիւն ետ շպրտելու։ Նման վերջաբաններ հեքիաթներում շատ կան եւ համարժէք են *բօօ՛* ասելուն, որպէսզի լսողին բարեյաջող առօրեայ իրականութիւն վերադարձնեն»[18]*։*

Հայկական բացող բանաձեւերի դէպքում կարելի է խօսել ոչ միայն լսողական, այլեւ պատմողական վերացման մասին։ Գէորգ Շերենցի հաւաստիացմամբ, շատ ասացողներ «լինում է, չի լինում» բանաձեւը կրկնում էին բազմիցս, մինչեւ չնչակտուր լինելը[19]*։ Ակնյայտօրէն այստեղ որոշակի դեր ունի բացող բանաձեւերի (լինում է, չի լինում) եւ վերջիններիս տարբեր բարբառային եւ գրական փոփոխակների՝ կէղնի չի էղնի (Շիրակ), կէլնի չէլնի (Վան-Վասպուրական), ընում ա չընում (Արցախ) ըլում ա, չի ըլում (Լոռի), կար ու չկար (արեւմտահայերէն) համաչափ, յանգաւորուած բնոյթը։*

Հեքիաթասացութեան երանութեան բնոյթը քննելիս կարեւոր է հաշուի առնել նաեւ մէկ այլ հանգամանք. հեքիաթասացութեան ընթացքը յաճախ, կախուած պատմողի զբաղքունքից. ընթացքը ուղեկցուել է ընդարմացնող կողմնակի ձայնով։ Այսպէս, կին ասացողների պարագայում պատումն ընթանում էր իլիկի կամ ճախարակի միալար գլուղի տակ[20]*։ Համեմատութեան կարգով նշենք, որ Իռլանդիայի ափամերձ գիւղերում հեքիաթներ պատմում էին նաեւ բաց ծովում՝ ալիքների կրկնուող ծփանքի եւ ձկնորսական նաւակների միալար ճոռոցի ձայնակցութեամբ*[21]*։*

Հեքիաթի տեքստի հիպնոտիկ բնոյթն ընդունելու պարագայում լուծուում է հեքիաթագիտութեան հակառակ խնդիրներից մէկը. հաւատո՞մ են արդեօք ունկնդիրն ու ասացողը պատմուող անցքերին։ Երանելի այն հոգեվիճակում, որի մէջ յայտնուում են պատմողն ու լսողը, հեքիաթային իրադարձութիւնները ներկայանում են միանգամայն հաւաստի տեսքով՝ մասամբ բացառելով թերահաւատութեան հնարաւորութիւնը։

Բ. Հեքիաթների հարուստ նիւթի ուսումնասիրութիւնը բացայայտում է ժողովրդական հեքիաթին բնորոշ մի կարեւոր առանձնայատ-

կութիւն, որ կարելի է բնութագրել որպէս թատերայնութիւն: Վերջինս ենթադրում է հեքիաթի իւրօրինակ ընդհանրութիւն թատրոնի հետ: Այս տեսակէտից հեքիաթի փակող բանաձեւում վայր ընկնող խնձորները կարելի է դիտել որպէս բեմական վարագոյրը փոխարինող թատերական հնարք: «Վարագոյր»ն անջրպետում է այս եւ այն աշխարհները, առօրեայ իրականութիւնն ու հեքիաթային անդինը, որ չպէտք է պարզամտօրէն ընկալուի հեքիաթային քաղցր-մեղցր նշանակութեամբ. այն միուրիշ եզերք է՝ հնարաւորի ահռելի ընդգրկումով եւ անհնարի գրեթէ իսպառ բացառումով: Ի դէպ, հայկական հեքիաթի մուտքի բանաձեւը եւս հանդէս է գալիս նման դերով. ի թիւս այլ գործառոյթների լինում է չի լինում արտայայտութիւնը զգուշացնում է՝ չկորցնել իրականն ու անիրականը, այս եւ այլ հնարաւոր աշխարհները յստակ տարանջատող սահմանը, գերծ մնալ պատմութիւնը՝ կեանքի, երեւակայական յօրինուածքը՝ առօրեայ իրականութեան հետ նոյնացնելուց:

Գ. Ըստ էութեան, երեք խնձորների վերջաբանները կարելի է բնորոշել որպէս բաշխման բանաձեւեր, որ իւրատեսակ համաձայնութիւն, պայման են պատմողի եւ լսողի միջեւ[22]: Եւ եթէ Հազար Ու Մի Գիշերներում բարեչնորհ պատմողին հեքիաթի դիմաց բաշխում է եւս մէկ օրուայ կեանք, հայկական հեքիաթում նաեւ ունկնդիրն է տիրանում երկնային խնձորներից մէկին, որ անմահութեան եւ արեւշատութեան խորհրդանիշ է: Այս առումով առանձնայատուկ են ասորական մի շարք հեքիաթներ, որտեղ բաշխումը կրում է շատ տրամաբանական եւ յստակ բնոյթ. հեքիաթը՝ լսողին, խնձորները՝ պատմողին. «Հարսանիքից յետոյ արքայազն Պիրամը նստեց իր թագաւոր հօր տեղը: Նրա հպատակները շատ գոհ մնացին: Դէ, իսկ հիմա հեքիաթները՝ նրանց, ովքեր լսում էին. ես էլ վերցնեմ խնձորները»[23]:

Բանաձեւի միջուկը

Ա. Ինչպէս արդէն նշուեց, հայկական հեքիաթներում բանաձեւի միջուկը բաւականին կայուն է: Գրեթէ անփոփոխ է խնձորների թիւը: Մեզ յայտնի բոլոր օրինակներում խնձորները երեքն են, թիւ, որ հեքիաթի շատ տեսաբանների համոզմամբ խիստ բնորոշ է հեքիաթի պատումին: Այսպէս, չուէյցարացի հեքիաթագէտ Մաքս Լիւթին, գրելով հեքիաթներում հանդիպող տարբեր թուերի մասին, նշում է. «Սակայն հեքիաթում գերիշխողը եռեակն է. յաջորդաբար կատարւում են *երեք* յանձնարարութիւններ, օգնական կերպարը *երեք* անգամ է միջնորդում, թշնամին յայտնւում է *երեք* անգամ ...»[24]:

Առաջին եւ երկրորդ խնձորները օրինակների մեծ մասում նախատեսուած են պատմողի եւ ունկնդիրի համար: Առաջին խնձորը պատմողին, երկրորդը՝ ունկնդիրին. երրորդ խնձորի տէրն է, որ փոփոխւում է հեքիաթից հեքիաթ, տարբերակից տարբերակ՝ բացայայտելով ունկն-

դիրների ամենատարբեր դասեր։ Այսպէս, մի շարք արցախեան վերջաբաններում խնճորներից երրորդը տրւում է մի խորհրդաւոր ունկնդրի՝ դրան ետեւում թաքուն ականջ դնողին. «Աստուծանայ իրեք մըեծ-մըեծ հուլի-շաւթալի եր ընգնի. միևը ասողին, միևը լսողին, միևն էլ տըռնըտական անջուկ տըևողին»[25]։ Ո՞վ է այս ծպտեալ իսկութիւնը, հետաքրքրասէր մանուկ, որի տեղն ուշ ժամին անկողինը պէտք է լինէր, թէ՞ մէկը ջահել հարսներից, որոնց մուտքը դիւանխանա հայոց շատ գաւառներում արգելուած էր։ Կանայք, որքան էլ տարիքով, դիւանխանա մուտք չունէին, գրում է Սերինէ Աւագեանը Արճակի գաւառին նուիրուած ազգագրական աշխատութեան մէջ[26]։ Հետեւո՞ւմ է սրանից, թէ գրեթէ բոլոր մշակոյթներում տեղ գտած կանանց խօսքի սահմանափակումներից զատ հայոց մէջ եղել են նաեւ կին ունկնդիրների նկատմամբ կիրառուող արգելքներ եւ սահմանափակումներ, ի՞նչ նկատառումներով, մահմեդական աւանդոյթների ազդեցութե՞մբ արդեօք. այլ խընդիր է։

Բարեբախտաբար, հայոց աւանդոյթները հրաշալիօրէն զանազան են, տարբեր՝ ինչպէս քաղցրիկ բարբառները. եւ նոյն Վանը, Արցախը, Թիֆլիսը տուել են եզակի ձիրքով օժտուած կին ասացողներ։ Սրուանձտեանցը գրում էր. «Հիմա քիչ մ'ալ հեքիաթ մտիկ ընենք, որ հայոց մամիկներու անգիր մատեաններէն գաղափարուած են»[27]։

Թիֆլիսեցոց Մտաւոր կեանքը աշխատանքի նախաբանում Գէորգ Տէր-Աղեքսանդրեանն իր հաւաքած նիւթի աղբիւրներից առանձնացնում է տարեց կանանց. «.... բայց ինձա խնդրանօք չեմ յիշում անունները, ինձա համեստութիւնը պահելու համար։ Բայց եւ այնպէս մատուցանում եմ ինձա նմանապէս իմ խորին շնորհակալութիւնը»[28]։

Տասնվեցամեայ դուստրս ինձ յուշել է «դռնատակի» խորհրդաւոր կերպարի մի անսպասելի մեկնութիւն. նա հոգին է այն ասացողի, որ առաջինն է այդ հեքիաթը պատմել։ Գուցէ կա՞յ հեքիաթի պահնորդ ոգի, որ դրան ետեւում անտես-աննկատ հսկում է՝ արդեօ՞ք իր հեքիաթը պատմւում է ամենայն բարեխղճութեամբ։ Համաձայնենք, սա փոքր-ինչ խարխլում է աքսիոմ դարձած մեր պատկերացումը ժողովրդական հեքիաթի անանուն-անհեղինակ բնոյթի մասին։ Գուցէ այս վաղնջական պատմողի հետ է առնչւում Վալտէր Անդերսոնի բացայայտած ինքնաճշտման օրէնքը (law of self-correction), համաձայն որի աւանդական պատմութիւնները պարբերաբար ուղղում են իրենք իրենց՝ նախնական ձեւերը պահպանելու նպատակով[29]։

Ընդունենք վերոնշեալը որպէս լուրջ վարկած, մանաւանդ որոշ մշակոյթներում հեքիաթի պահապան ոգիներ կան։ Այսպէս, Նեպալեան հեքիաթներում հանդէս է գալիս հեքիաթների դիցուհին (la déesse des contes), որն անգթօրէն պատժում է այն ունկնդիրներին, որ քնով են

ընկնում հեքիաթի աւարտին չսպասելով[30]։ Ռուսական հաւաստալիքներում համեմատելի գործառոյթով հանդէս է գալիս կատուն։ Աւելի ուշ՝ Ալեքսանդր Պուշկինի «Ռուսլան եւ Լիւդմիլա» վիպերգի նախաբանի հանրաճանաչութեան շնորհիւ հեթանոս այս պաշտամունքը՝ գիտուն եւ քնարեր կատուն փոխարկուեց ռուս վաղնջական դպրութեան խորհրդանիշի.

Ծովի ափին՝ կաղնի դալար,
Ոսկէ շղթայ կաղնու բոլոր,
Ուսեալ կատուն է միալար
Այնտեղ շրջում գիշեր ու զօր.
Քայլում է ձախ՝ հեքիաթ ասում[31]։

Հեքիաթի պահապան ոգին նկատելի ընդհանրութիւններ ունի քնարեր ոգիների հետ։ Աւելին, յաճախ պատմելու եւ քնեցնելու գործառոյթները միաւորուում են միեւնոյն կերպարի մէջ։ Նոյն ռուսական կատուն առաջին հերթին քնարեր ոգի է. մահացու քնի մէջ ընկղմելով՝ նա կարող է կործանել մարդկանց[32]։

Քնարեր ոգիների մերձութիւնը հեքիաթների հովանաւոր ոգիների հետ եւս մէկ հնարաւորութիւն է ընձեռում համոզուելու, թէ որքան իրաւացի էին Սիգմունդ Ֆրէօյդը եւ Կարլ Եունգը, երբ փաստում էին հեքիաթի եւ երազի ակնյայտ ընդհանրութիւնը։ Ըստ Եունգի՝ «Երազներում, ինչպէս առասպելում եւ հեքիաթում հոգին պատմում է իր սեփական պատմութիւնը»[33]։ Եթէ երազի վիճակը գրեթէ նոյնանում է հեքիաթի հետ, վստահաբար, երազը մի պատմութիւն է, որի ասացողը, գլխաւոր հերոսը եւ ունկնդիր/ընթերցողը նոյն անձն է։

Բ. Ուշագրաւ մի վերջաբանով է աւարտւում Բուլանըխի «Քիւչուք Ահմադ» հեքիաթը։ Խնճորներից մէկը տրւում է հեքիաթը տեսնողին. «Էրկնուց իրեք խնճոր իջաւ, մէկ լսողին, մէկ **տեսողին**, մէկ լէ անկանջ էրողին»[34]։ Նման վերջաբանները, թէեւ փոքրաթիւ, արժանի են լուրջ քննարկման ու մեկնութեան։ Նախ եւ առաջ տեսնողը մէկն է, որին բախտ է վիճակուել հեքիաթում պատմուող զարմանալի անցքերի վկան լինել։ Հնարաւոր է, ասացողը հենց իրեն է համարում տեսնող, այն է՝ ականատես նկարագրուած իրադարձութիւններին, հանգամանք, որ հասկանալիօրէն պատմութեանն առաւել հաւաստի բնոյթ է հաղորդում։

Տեսնողին կարելի է նոյնացնել հեքիաթային կերպարի հետ, որ, անշուշտ, նոյնպէս հեքիաթի անցուդարձի «վկան» է։ Հեքիաթի հերոսին խնճոր բաշխելը ենթադրում է տեղադրել նրան եւ ունկնդրին նոյն հարթութեան վրայ։ Կերպարն, այսպիսով, փոխարկւում է գործող անձի, որը չարունակում է իր գոյը պատմութեան աւարտից յետոյ էլ։

Վերջապէս, հնարաւոր է, որ նա, ով «տեսնում է» հեքիաթը, առանձնայատուկ մի ունկնդիր է, եւ այնքան հիմնաւոր է մտնում լսողա-

կան վերացման մէջ, որ կարող է «տեսնել» պատմածը: Այսպիսով, կարելի է խօսել ոչ միայն շնորհալի ասացողի, այլեւ շնորհալի, «կատարեալ» ունկնդրի մասին: Վերջինս հեքիաթասացի հրճուանքն ու յաղթանակն է, լինի նա գեղջուկ գզրար, թափառական փերեզակ թէ ազնիւ պառաւած աղջիկ, որ անցած գեղեցկութեան յուշերն է ներհիւսում իր տրտում պատմութիւնների մէջ:

Ռոլան Բարտի «տեքստի հաճոյքը» հասկացութիւնը լայն իմաստով կարող էր ներառել նաեւ պատմողի հաճոյքը[35]: Հեքիաթը «տեսնող» ունկնդիր ունենալու արքայական հաճոյքի դիմաց ասացողի պարտքն է այլեւս զիջել երեք երկնային խնճորներից գոնէ մէկը:

Ոճ

Երբ հեքիաթի փակող բանաձեւերը ընդգծուած նկարագրական ու գունեղ են, կարելի է ենթադրել, որ պատմողը փորձում է լրացնել ժողովրդական հեքիաթին բնորոշ բնանկարի սղութիւնը: Գտնուելով եզրափակող դիրքում՝ պատումի բուն տիրոյթից գրեթէ դուրս, այս գեղեցիկ պատկերներն այլեւս չեն դանդաղեցնում իրադարձութիւնների սրընթաց զարգացումը, որ պարտադիր պայման է հեքիաթի համար՝ անկախ նրա աշխարհագրութիւնից. «Էն կեարունքվա երգյինքաև, էն պըեց կեապուտ ռանգյի երգյինքաև իրեք խընճոր ա եր ընգնըմ. մինը ասողին, մինը լըսողին, մինն էլ էս հաքեաթը լուս աշխարք քըցողին»[36]:

Վերջապէս, հնարաւոր է, որ երեք խնճորների բանաձեւերն, գոնէ առանձին ասացողների դէպքում, ունեն զարդաբարական գործառոյթ միայն: Հեղինակային հեքիաթը յաճախ նկարագարդ է: Բանաւոր՝ ժողովրդական հեքիաթը պարունակում է նկարագարդման սաղմնային վիճակ, եթէ ընդունելի համարենք նման բնորոշման հնարաւորութիւնը: Ջնայած ընդգծուած իմաստային-խորհրդանշային գերբեռնուածութեանը՝ երեք խնճորները կարող են բեմանկարչական չերտում դիտուել իրենց զարդանախշային գործառոյթով միայն, որպէս անչօշափելի հնարաւոր նկարագարդման նմուշներ՝ սեղմ, բերանացի պատկերազարդումներ: Աւելին, քանի որ համօրէն ներհիւսուած են բնագրին, կարող են ընկալուել որպէս բուսազարդ, բուսանկար ներդրուագումներ՝. «Մեր ռանգյ-ռանգյ, ջուռաբաջուռա ծըղրգյներով... բախչան իրեք փոնջ թուփ վարթեր պերէք, մինը ասողին, մինը կյիրողին, մինը կարթողին»[37]:

ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ

Հենրի Գլեսին Իռլանդական Հեքիաթների իր փայլուն նախաբանում խօսում է զգացական ազգագրութեան հնարաւորութեան մասին[38]: Հետեւելով նրան՝ ներմուծենք հեքիաթի զգայական մեկնութիւն եզրը. գուցէ բացուեն Ալլաչխարհքի ոսկէ դարբասներն ու լուսեղէն

թիկնոցով պարուրուեն մեր խեղճ երկրաւոր հոգիները։ Եթէ նման մեկնութիւնը դիտական չէ, հայցում եմ ընթերցողի ներողամտութիւնը։

Մեկնութիւն առաջին

Երրորդ խնճորը հսկայական էր, բայց ինչպէս միշտ, ինձ ոչինչ չհասաւ։ Քայլերս ուղղեցի դէպի իմ բոյնը։ Դեղին աւազների վրայ սիրահար մրջիւնների կողքին գտայ խնճորի մոռացուած մի կորիզ ու շալակած տուն տարայ։ չոր քար անգամ չունեմ գլուխս վրան դնեմ, քարից հօ փափուկ կը լինի։ Կորիզը ծանր, բայց տաք էր ու նուշի բոյր ունէր։ Կէսգիշերին այն սկսեց թեթեւ շարժուել, ու մի բարակ անուշ ձայն կանչեց։

Նանիկ իմ մարիկ, նանիկ լուսերես,
Չունէիր ծնողք՝ ունեցար աղջիկ,
Չհագար բեհեզ ու կապոյտ շապիկ,
Կը գրկես հուրնիկ, հրեղէն բարուր,
Անտառի մորին մեզի կերակուր։

Մեկնութիւն երկրորդ

Գզրարը հեքիաթ է ասում, գզրարի մազը երկայն ու փափուկ է, հիւսկէն հագուստի վրայից չոյում, չոյում է ջահել ուսը։ Գզրարի մազը դեղին է, ու մազի ոսկին բռնել է կիսամութ դիւանխանան, բռնել է դռնատակին թաքուն ականջ դնող նորահարսի աչքն ու ուշքը։ Գզրարը ոսկեբերան է՝ հեքիաթ է ասում ...Խնկապրակ աննման աղջկան տանում են Քաջանց թագաւորին հարս։ Քաջանց թագաւորը ջահել է ու մազը շէկ ... գինին խփել է գզրարի գլխին, ու նա կայտառ է, ինչպէս ջահել վանականն աբեղաթողին ... Խնկապրա՛կ, իմ աչքերի լո՛յս, իմ հոգու՛ հոգի, հողի տակին էլ կը ճանաչեմ ես ոտնաձայնը քո... Բուխարիկում ոսկեթեփը բուրում է, բռնում հարսի փափուկ ճերմակ կոկորդը... Գզրա՛ր, ախ գզրա՛ր, իմ աչքերի լոյս, իմ հոգու հոգի... Գինեգոյն եազմայի ծայրերը ետ են սահում։ Հարսը շուրթերով փակչում է դռան գոլ, ծխաբոյր ճաքին ու մրոտ ոսկեփոշու մէջ քուլայ-քուլայ քամում բրդի բուրեղ դառնահամը ...

Թեթեւ թրմփոցից դիւանխանան ուշքի է գալիս։ Երկնքից երեք խնճոր էր ընկել վայր։ Ամօթահար քնքուշ դէմքը պոկւում է գոց դռնից՝ կորչում մթան մէջ։ Վարդաբուրիկ նախշուն չապկի տակ ոսկեխնճորը չիկնել է...

Գզրա՛ր, գինեխում, անգէ՛տ գզրար, երեք խնճորից մէկը միշտ դռնատակին ականջ դնողինն է։

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹՒՆՆԵՐ

[1] Misha Kudian, *Three Apples Fell from Heaven: A Collection of Armenian Folk and Fairy Tales*, Hart-Davis, 1969.

[2] *Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատ. V, Արցախ, աշխատասիրութեամբ Արտաշէս Նազինեանի եւ Մարգարիտա Գրիգորեանի, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ.,* 1966, էջ 162:

[3] *Դէպքերի նման զարգացումը մօտեցնում է հայկական հեքիաթի վերջաբանը ռուսական հեքիաթի աւանդական աւարտին, որտեղ ոգելից խմիչքը յաճախում է կանոնաւոր կերպով. «Ես էլ այնտեղ էի, մեղրագինի էի խմում, բեղերովս հոսեց, բերանս բան չընկաւ»* (Aleksandr Afanasiev, *Narodnye Russkie Skazki* (*Ռուսական ժողովրդական հեքիաթներ*), Tom I, Moskva, "Nauka," 1984, էջ 170):

Փոքր-ինչ չեղուելով բանահիւսութեան ոլորտից՝ յիշեցնենք, որ ռուսական գրաքննադատութեան մէջ նոյնպէս առկայ է գինու երանութեան երեւոյթը, գրական գինարբուք, որ, ըստ մի չարք անուանի հեղինակների (Վիկտոր Երոֆէեւ եւ այլք), խթանում, գրգռում է գրողի ստեղծագործ միտքը (Vladimir Popov, Za Svoi Teksti Pisatel Platit Pechenyu (*Բնագրերի դիմաց գրողը վճարում է իր լեարդով*), *Ogonyok*, May 2003, N 15, էջ 38):

Աստածը թերեւս աւելի համոզիչ կը հնչի, եթէ նկատի ունենանք, որ հարբածութիւնը յաճախ ընկալւում է որպէս կենցաղային հիպնոզ: Ինչպէս երեւում է, գեղարուեստական գինարբուքը գրական բոհեմի պարապ հնարքը չէ, այլ ժառանգաբար փոխանցուած բանահիւսական վաղնջական աւանդոյթ: Ահաւասիկ, գինու մէջ է ոչ միայն ճշմարտութիւնը, այլեւ աստը՝ յանուն ասացողի արուեստի ինքնամոռաց կատարելութեան: Աստասիրտ չլինենք. հնում հայերը անգամ հարսանիքի ձիերին էին օղի խմեցնում, որպէսզի աւելի նազանքով քայլեն (Գառնիկ Ստեփանեան, *Ուրուագիծ Արեւմտահայ թատրոնի պատմութեան*, Հատ. 1, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ., 1963, էջ 45):

[4] *Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատ. V*, էջ 52:

[5] *Նոյն*, էջ 288:

[6] Anne M. Avakian, "Three Apples Fell from Heaven," *Folklore*, Vol. 98, 1987, էջ 95-98:

[7] *Գարեգին Սրուանձտեանց, Երկեր, Հատոր 1, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ.,* 1978, էջ 392:

[8] *Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատ. IV, Շիրակ, աշխատասիրութեամբ Մ. Մկրտչեանի, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ.,* 1963, էջ 290:

[9] *Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատ. V*, էջ 231:

[10] *Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատ. III, Ալաշկերտ, աշխատասիրութեամբ Արտաշէս Նազինեանի, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ.,* 1962, էջ 386:

[11] *Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատ. XI, Տուրուբերան, Հարք, կազմեց եւ ծանօթագրեց Մ. Մկրտչեան, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ.,* 1980, էջ 487:

[12] Noel Malcolm, *The Origins of English Nonsense*, Harper Collins Publishers, 1997, էջ 82:

[13] James Riordan (comp.), *Folk Tales of the British Isles*. Moscow, Raduga Publishers, 1987, էջ 106:

[14] *Յովհաննէս Թումանեան, Հեքիաթներ, Երեւան, «Արեւիկ»*, 2002, էջ 188:

[15] Erich Raspe, *Priklyucheniya Barona Munkhhausena* (*Բարոն Միւնխհաուզէնի արկածները*), Moskva, "Detskaya literatura," 1990, էջ 100:

[16] Afanasiev, *Narodnye*, Tom I, էջ 195:

[17] Brian Sturm, The "Storylistening" Trance Experience," *Journal of American Folklore*, 2000, Vol. 113, N 449:

[18] Clarissa Pinkola Estés, *Women Who Ran Away With the Wolves*, London, Rider Books, 1996, էջ 75։

[19] *Հայ ժողովրդական հեքիաթներ, հատ. XIV, Վան-Վասպուրական, աշխատասիրությամբ Ալվարդ Ղազիեանի, Երեւան,Հայաստանի Հանրապետութեան ԳԱԱ Հրատ.*, 1999, էջ 496։

[20] Alvard Jivanyan, *As White as a Wisp of Cotton: On the Rhetoric of Armenian Spinning Tales*, Yerevan: Zangak, 2006, էջ 25-48։

[21] William Butler, *Irish Fairy and Folk Tales*, New York, The Modern Library, n.d., էջ xi։

[22] Gerald Prince, *Dictionary of Narratology*, University of Nebraska Press, 2003, էջ 62։

[23] K. P. Matveeva (comp. and trans.), *Skazki I Legendi Sovremennykh Assiriytsev* (*ժամանակակից ասորիների հեքիաթներն ու լեգենդները*), Moskva, "Nauka," 1974, էջ 345։

[24] Max Lüthi, *The European Folk Tale: Form and Nature*, Indiana University Press, 1986, էջ 33։

[25] *Հայ ժողովրդական հեքիաթներ, հատ. V*, էջ 216։

[26] *Սերինէ, «Արճակ», Հայ Ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, Պրակ 8, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ.*, 1978, էջ 101։

[27] *Սրուանձտեանց*, էջ 418։

[28] *Գէորգ Տեր-Ադեքսանդրեան, Թիֆլիսեցոց Մտաւոր կեանքը*, 1885, *Թիֆլիս*, էջ 425։

[29] Bengt Holbek, "Interpretation of Fairy Tales: Danish Folklore in a European Perspective," *Folklore Fellows Communication*, no. 239, Helsinki, 1987, էջ 328։

[30] Marie-Christine Cabaut, *Contes du Népal de Fleurs et d'Or*, Paris, Éditions Grancher, 2001, էջ 15 ։

[31] *Ալեքսանդր Պուշկին, «Ռուսլան եւ Լիւդմիլա», Երկեր Հինգ Հատորով, Հատ. 2, Երեւան, Հայպետհրատ*, 1955, էջ 7։

[32] Afanasiev, *Narodnye Ruskie Skazki*, Tom II, Moskva, "Nauka," 1985, էջ 128։

[33] Karl Yung, "Dusha I Mif". *Fenomenologia Dukha V Skazkakh* (*Հոգի եւ առասպել. երեւութաբանական ոգին հեքիաթներում*), 2004, *Մինսկ*, էջ 298։

[34] *Հայ ժողովրդական հեքիաթներ, հատ. XI*, էջ 70։

[35] Roland Barthes, *The Pleasure of the Text* (trans. Richard Miller), New York, Hill & Wang, 2000։

[36] *Հայ ժողովրդական հեքիաթներ, հատ. V*, էջ 77։

[37] *Նոյն*, էջ 534։

[38] Henry Glassie (ed.), *Irish Folktales*, New York, Pantheon Books, 1987, էջ 18։

"THREE APPLES FELL FROM HEAVEN": THE CLOSING FORMULAS OF ARMENIAN FAIRY-TALES

(Summary)

ALVARD JIVANYAN
gevalv@netsys.am

The finale of any text is of specific interest. This is true particularly in regard to such a unique narrative as the traditional fairy tale. At the finale of the Armenian fairy tale *three apples fall from heaven.* As a rule the apples are not related to the main body of the story, but are part of the narrative frame.

The author analyses this finale and suggests various hypotheses regarding the diversity of these endings. Based on both the structural differences and semantic features as well as the variations these finales demonstrate, the author concludes that they are conditioned by both regional and dialectal differences as well as by the complexity of their meaning.

A CONTRASTIVE STUDY OF THE NOUN DECLENSION IN AVESTAN AND ANCIENT ARMENIAN LANGUAGES

MOHAMMAD MALEK MOHAMMADI
MEHDI JAFARZADE
malek_m@yahoo.com

ABSTRACT

After leaving the original land, due to different reasons including constant changes of language and new geographical circumstances, Indo-European languages experienced extensive improvement and changes. These changes are so broad that sometimes members of the same language family look very different. Unlike linguists, it is impossible for ordinary people to guess the origin of different branches of a language family.

Avestan and Ancient Armenian (*Grabar*) languages, which are two branches of the Indo-European languages, possess two special noun declension systems, deriving from the original language.[1]

In Indo-European languages, nouns were declined according to their different grammatical cases as well as according to their number (singular, dual and plural) and gender (masculine, neutral and feminine) by means of some inflectional endings. It seems noun in Indo-European languages counted eight grammatical cases: Nominative, Dative, Instrumental, Accusative, Ablative, Genitive, Locative and Vocative. Some branches lost some or all of these cases after departing from the origin.

INTRODUCTION

Languages of the world are categorized according to their structural similarities and historical changes. These members of the same category are so interrelated that they are called "families". It is estimated that the Indo-European original language was spoken in a large area of Europe and southeastern Asia before the first millennium B.C. It spread into other lands from the second half of 1500 B.C. but no record of it is available so far. Through the works left and by means of contrastive analysis, the original Indo-European language can be, to a large extent, rebuilt or identified.[2]

Indo-European language families consist of 10 branches, which, because of geographical circumstances of the new lands, departed from each other so diversely that it is sometimes not simply possible to distinguish their relation.[3]

Inflectional endings in Avesta

	"normal" endings			stems in a: (m.n.)		
	Sg.	**Du.**	**Pl.**	**Sg.**	**Du.**	**Pl.**
N	-s	-â	-ô (-as), â	-ô (yasn-ô)	-a (vîr-a)	-a (-yasna)
A	-em	-â	-ô (-as, -ns), -â	-em (ahurem)	-a (vîa)	-ã (haomã)
I	-â	-byâ	bîsh	-a (ahura)	-aêibya (vîraêibya)	-âish (yasn-âish)
D	-ê	-byâ	-byô (-byas)	-âi (ahurâi)	-aêibya (vîraêibya)	-aêibyô (-yasn--aêibyô)
Abl	-at	-byâ	aêibyô	-ât (yasn-ât)	-aêibya (vîraêibya)	-aêibyô (-yasn--aêibyô)
G	-ô (-as)	-å	-ãm	-ahe (ahurahe)	-ayå (vîr-ayå)	-anãm (yasn-an ãm)
L	-i	-ô, -yô	-su, -hu, -shva	-e (yesn-e)	-ayô (zastayô)	-aêshu (vîraêshu), -aêshva
V	-	-â	-ô (-as), â	-a (ahura)	-a (vîr-a)	-a (-yasna), -ånghô

The formation of the words, in many cases, has changed. New words have been derived or created; some words have changed their meanings. For instance, the third person singular of present tense of the verb 'to be' in some Indio-European languages.

Persian	English	French	German	Latin	Slovak	Lithuanian	Greek	Sanskrit
Ast	is	est(é)	ist	est	jesti	esti	ést(e)	ásti

However, the structures of the language patterns remain so firm that contrastive analysis can help the linguist to figure out the original version. "The relation existing among these languages is too accurate to be comprehensible by ordinary people."[4]

ANALYTIC AND COMPOSITIONAL FEATURES

One of the most important features of some Indo-European languages is being "Analytic". According to this feature, lexicons are used together with prepositions in order to represent their parts of speech, the way the present system of modern Persian and English is used.

Being compositional is another feature of other Indo-European languages. Lexicons, in these languages, are declined, the same way as the verbs are inflected in English language today. The main part of these words is the 'root' which carries its specific meaning. Some endings are added to the words in order to represent their grammatical functions, number (singular, dual and plural) and gender (masculine, feminine and neuter).

NOUN DECLENSION IN ANCIENT IRANIAN AND *GRABAR*

Ancient Iranian and *Grabar* are both considered compositional languages.[5] Accordingly, 'declension' is one of their most important features. Nouns were declined in eight cases in Ancient Iranian languages and "the most important development that occurred in the middle era (around IV Century BC-VII Century AD) was the disappearance of noun declension system".[6]

In *Grabar*, nouns had been declined into seven cases to show different grammatical forms.[7] Noun declension system has been kept unchanged in both middle and modern Armenian eras. Unlike Ancient Iranian languages, no vocative case has been realized in *Grabar*. In other words, there was no special ending to show vocative case.

The eight cases of noun in Ancient Iranian languages and seven cases in *Grabar* are as follows

Case	Example	Armenian[8]
1. Nominative	**John** came	Ուղղական հոլով[9]
2. Accusative	I told **John**	Հայցական հոլով
3. Genitive	I borrowed John**'s book**	Սեռական հոլով

4. Dative	I went **to John**	Տրական հոլով
5. Ablative	I borrowed a book **from John**	Բացառական հոլով
6. Instrumental	I went to the library **with John**	Գործիական հոլով
7. Locative	He lives **in the city**	Ներգոյական հոլով
8. Vocative	**John**, study your lessons[10]	----------

In *Grabar*, a concept of locative case was formed by adding the vowel "h"(i) to the beginning of nominative or dative cases.

Notice the following sentence from *Avesta*,[11] the first paragraph of chapter "vandidad".

"P∂r∂sat zaraθuštra ahur∂m mazdam: ahura mazda ..."

"Zaraθuštra *asked Ahura mazda! Oh, Ahura Mazda!...*"

The word "zaraθuštra" (which refers to the Iranian prophet) derived from the word "zaraθuštra" is characterized as (1) first person singular, (2) nominative and (3) masculine. The word "ahur∂m" derived from the word "ahura" (the great God, Ahuramazda) means "to Ahura" and is characterized as (1) accusative, (2) third person singular and (3) masculine. The word "ahora" derived from "ahura" is (1) vocative (2) second person singular and (3) masculine. In *Avesta*, nouns are categorized by their last vowels or consonants and each category is conjugated by the use of a special inflectional ending.

NOUN CATEGORIES IN AVESTA

Different categories' declension in *Avesta*

A. Vowel Stems	1. Stems in a	
	2. Stems in ā	a. Derivative stems in – ā b. Radical stem in – ā
	3. Stems in *i* and *ī*	a. Derivative stem in original *i* b. Derivative stem in original *ī* c. Radical stems in original *ī*
	4. Stems in *u* and ū	a. Derivatives stems in original *u* b. Derivatives stems in original *ū* c. Radical stems in original *ū*
	5.	a. Stems in *āi-* b. Stems in *–āu*
B. Consonant	6.	(A) Stems without suffix.
	7.	(B) Derivative stems in *-ant, -mant, -vant*
	8.	(C) Derivative stems in *-an, -man, -van*
	9.	(D) Derivative stems in *–in*
	10.	(F) Derivative stems in *-n* and *-m*
	11. (F) Stems in	a. Derivatives stems in original *–tar, -ar* b. Radical stems in original *–r*

Stems	original *r* c. Neuters (derivative) in original *–ar* 1. *-ah* a. Derivatives stems in *–h* (original *–s*) - 2. *-yah* 12. (G) Stems in original *s* 3. *-vah* b. Radical stems in *–h* (original) *–š* 1. *–āh* 2. those resembling them c. Derivative stems in *-i* š, *-u* š

In *Avesta*, for instance, the words 'yasna' meaning worship ends in vowel "a", "daēnā" meaning religion ends in vowel "ā" and "gairi" meaning mountain ends in vowel "i". They are declined as the following tables.

Singular

Case	daēnā	yasna	gairi
Nominative	*daēn-a*	*yasn-ō*	*gair-iš*
Accusative	*daēn-am*	*yasn- ∂m*	*gair-im*
Instrumental	*daēn-āya*	*yasn-a*	*gair-i*
Dative	*daēn-ayāi*	*yasn-āi*	*gar-∂e*
Ablative	*daēn-āyāt*	*yasn-āt*	*gar-ō it*
Genitive	*daēn-ayā*	*yasn-ahe*	*gar-ō iš*
Locative	*daēn-ayā*	*yasn-e*	*gar-a*
Vocalic	*daēn-e*	*yasn-a*	*gair-e*

Dual

Case	daēnā	yasna	gairi
Nominative	*daēn*	*yasn-a*	*gair-i*
Accusative	*daēn-*	*yasn-a*	*gair-i*
Instrumental	*daēn-ābya*	*yasn-aēibya*	*gair-ibya*
Dative	*daēn-ābya*	*yasn-aēibya*	*gair-ibya*
Ablative	*daēn-ābya*	*yasn-aēibya*	*gair-ibya*
Genitive	*daēn-ayā*	*yasn-ayā*	----
Locative	----	*yasn-ayō*	----
Vocalic	*daēn-e*	*yasn-a*	*gair-e*

Plural

Case	daēnā	yasna	gairi
Nominative	*daēn-ā*	*yasn-a* *yasn-āŋhō*	*gar-ayō*
Accusative	*daēn-ā*	*yasn-a*	*gair-iš*

Instrumental	*daēn-ābis*	*yasn-aiš*	----
Dative	*daēn-ābyō*	*yasn-aēibyō*	*gair-ibyō*
Ablative	*daēn-ābyō*	*yasn-aēibyō*	*gair-ibyō*
Genitive	*daēn-anam* *daēn-āhu*	*yasn-anam* *yasn-aēšu*	*gair-inam*
Locative	*daēn-āhva*	*yasn-aēšva*	----
Vocalic	*daēn-ā*	*yasn-a*	----

NOUN DECLENSION IN *GRABAR*

In *Grabar*, nouns were also declined in separate groups. Special inflectional endings are added to nouns according to their ending vowels and consonants. But inflectional endings were not the only signs to represent all grammatical cases. For the two cases, ablative and locative, the vowel, "ի"(i),[12] was added to the beginning of the words in addition to a special inflectional ending that comes to their end. Nouns were declined according to their different grammatical cases as well as number (singular and plural) but no gender was seen.

Although in *Grabar* nouns were declined in seven different categories, there were only five simple inflectional endings: "ա"(ā), "ե"(e), "ի"(i), "ո"(o), "ու"(u), and two compound inflectional endings: "ո-ա"(o-ā) and "ի-ա"(i–ā). Therefore the declension of the nouns occurred in two ways: simple and compound forms.[13]

INTERNAL AND ENDING FORMS OF DECLENSION IN *GRABAR*

We can also divide the declension of the nouns into two types:

A. Ending case. The ending was added to the end of the word to be declined. For example: The following words were declined as:

Ձայն-ի, jāyn-**i** (sound)
Գանձ-ու, gānj-**u** (treasure)
Արմատ-oy, ārmāt-**oy** (root)

B. Internal case: The morphem was added to the last consonant of the word. For Example:

Գագաթն-գագաթան, gāgāt'n-gagat'ān (peak), like few lines above
Աստղ-աստեղ, āstq-asteq (star)
Հարսն-հարսին, hārsn-hārs**i**n (bride)

The following show all kinds of noun declension in *Grabar*, which are together with inflectional endings.

ending						Internal				ending				داخل	
i		o		u		ā		e		i- ā		o- ā		i- ā	
sg.	pl.	sg.	pl.	sg.	pl.	sg.	pl.	sg.	pl.	sg.	pl.	sg.	pl.	sg.	pl.
-	-k	-	-k	-	-k	-	-unk -k(-ānk)	-	-erk -eqk	-	-k	-	-k	-	-ink -unk
-	-s	-	-s	-	-s	-	-uns -s(-āns)	-	-ers -eqs	-	-s	-	-s	-	-ins -uns
-i	-ic	- oy	-oc	-u	-uc	-ān	-ānc	-er -eq	-erc -eqc	-e	-āc	- voy	-eāc	-in	-ānc
-e	-ic	- oy	-oc	-e	-uc	-e	-ānc	-e	-erc eqc	-e	-āc	- voy	-eāc	-e	-ānc
-iv	-ivk	- ov	- ovk	-u	-uk	-āmb	-āmbk	-erb -eqb	-erbk -eqbk	-āv	-āvk (-ok)	-eāv	-eavk (-eoq)	-āmb	-āmbk

NOUN INFLECTIONAL ENDINGS IN *GRABAR*

The following table illustrates all kinds of noun declension in *Grabar*.

Example: inflectional ending "a"		
Case Nominative Accusative	**Singular** Trdāt (z) Trdāt	**Plural** Ålānk (z) Ålāns
Dative and Genitive Ablative Instrumental	Trdātāy) i Trdātāy Trdātāv	Ålānāc yÅlānāc Ålānāvk (ok)
Example: internal inflectional "a"		
Case Nominative Accusative Dative and Genitive Ablative Instrumental	**Singular** āqeqn (arch) (z) āqeqn āqeqnān y āqeqāne qeqāmb	**Plural** āqequnk (z) āqequns āqeqānc yāqeqānc āqeqāmbk
Example: "o"inflectional (ending) **Case Singular** Nominative ārmāt (root) Accusative (z) ārmāt Dative and Genitive ārmātoy Ablative yārmātoy Instrumental ārmātav		**Plural** ārmātk (z) ārmāts ārmātoc ārmātoc ārmātovk
Example: "I"inflectional (ending) **Case Singular** Nominative cārāgāyt' (flame) Accusative (z)cārāgāyt' Dative and Genitive cārāgāy'i Ablative icārāgāyt'e Instrumental cārāgāyt'iv		**Plural** cārāgāyt'k (z)cārāgāyt's cārāgāyt'ic cārāgāyt'ic cārāgāytivk
Example: "i-a"inflectional (ending) **Case Singular** Nominative āšxārh (universe)		**Plural** āšxārhāk

Accusative (z) āšxārh (z) āšxārhs Dative and Genitive āšxārhi āšxārhāc Ablative y āšxārhe yāšxārhāc Instrumental āšxārhāv āšxārhāvk (ok)

Example: "i-a" inflectional (internal)

Case Singular Plural Nominative ānjn (person) ānjink Accusative (z) ānjn (z) ānjins Dative and Genitive ānjin ānjānc Ablative yānjneyānjānc Instrumental ānjāmb ānjāmbk.

There are also some exceptions, irregulars, which do not follow the rules.

DIFFERENCES BETWEEN ANCIENT IRANIAN LANGUAGES AND *GRABAR*

1. In Iranian noun declension system three numbers (singular, plural and dual) are realized while in *Grabar*, only two of them (singular and plural) are observed.
2. Gender was considered in Iranian languages while no gender is observed in *Grabar*.

3 Although eight grammatical cases are represented for nouns in Ancient Iranian Languages, *Grabar* lacks one of them (vocative).

4 No similarity is realized in the inflectional endings. Though the Iranian feminine and dual related to genitive inflectional endings are almost equal to the same case in *Grabar*.[14] Example: genitive case in *Grabar*

Trdat-āy genitive case in Avestan language

Singular: mārtiy**ahyā** (related to human being), dāēn-**ayā** **(related to religion)**, yāsn **āhe (related to yasna).**

Dual: dāēn-āyā, yāsn-**āye**

ENDNOTES

---

[1] *Հ. Աճառեան, Հայոց Լեզուի Պատմութիւն, Երեւան, 1940, Թիւ 1, Թիւ 2. Նաեւ՝ Ս. Ղազարեան, Հայոց Լեզուի Համառօտ Պատմութիւն, Երեւան, 1981. Նաեւ՝ Գ. Ջահուկեան, Հայոց Լեզուի Պատմութիւն (Նախագրային Ժամանակաշրջան), Թիւ 1, Երեւան, 1987. Նաեւ՝ Ա. Մէյէ, Հայագիտական Ուսումնասիրութիւններ, Երեւան, 1978:*

[2] برويز خانلري، *تاريخ زبان فارسي*، تهران، نشر نو، ١٣٦٥، جلد ١، ص. ١٢٢.

[3] برويز خانلري، ص. ١٢١.

[4] مهري باقري، *مقدمات زبان شناسي*، تبريز، دانشگاه تبريز، ١٣٦٧، ص. ١٥٨.

[5] *Գ. Ջահուկեան, Հայոց Լեզուի Զարգացումը եւ Կառուցուածքը, Երեւան, 1969. Նաեւ՝ Լ. Ս. Ցովսէփեան, Գրաբարի Բառակազմութիւնը, Երեւան, 1987. Նաեւ՝ Ռ. Ս. Ղազարեան, Գրաբարի Բառարան, Հտր. I եւ II, Երեւան, 2000. Նաեւ՝ Լ. Շ. Ցովհաննիսեան, «Ցովհան Ոսկեբերանի Թարգմանութիւնների Լեզուական Առանձնայատկութիւնները», Հանդէս Ամսօրեայ, 2002, էջ 1-44:*

[6] *Ռ. Ս. Ղազարեան, Հ. Աւետիսեան, Գրաբարի Ձեռնարկ, Երեւան, 1992:*

[7] *Մ. Մալէք-Մոհամմադի, Ռ. Ս. Ղազարեան, «Ենթակայ եւ Ստորոգեալի Արտայայտութիւնները Եզնիկ Կողբացու «Եղծ Աղանդոց» Երկում», Բանբեր Երեւանի Համալսարանի, 2004, Հտր.1, էջ 191-194:*

[8] *Ա. Ա. Աբրահամեան, Գրաբարի Ձեռնարկ, Երեւան, 1964:*

[9] *Հ. Աւետիսեան, «Գրաբարի Որոշչի Եարադասութեան եւ Համաձայնութեան Հարցի Շուրջ», Բանբեր Երեւանի Համալսարանի, 2003, 2(110), 2003, էջ 63-72:*

[10] A. V. W. Jackson, *An Avesta Grammar*, Stuttgart, 1892, p. 81.

[11] H. Reichelt, *Avesta Reader*, Strassburg, 1911.

[12] *Գ. Մանուկեան, Գրաբարի Նախդիրները եւ Նրանց Գործածութիւնը Հայ Պատմագրական Երկերում (V-XI Դարեր), Երեւան, 2002:*

[13] *Ռ. Ս. Ղազարեան, Հ. Աւետիսեան, Գրաբարի Ձեռնարկ, Երեւան, 1992:*

[14] *Լ. Շ. Ցովհաննիսեան, Հայերէնի Իրանական Փոխառութիւնները, Երեւան, 1990.*

ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԼՈՎԱԿԵՐՏՈՒՄԸ ԳՐԱԲԱՐԻ ԵՒ ԱՒԵԼՑԱԾԻ ՄԷՋ

(Ամփոփում)

ՄՈՀԱՄՄԱՏ ՄՈՀԱՄՄԱՏԻ
ՄԵՀՏԻ ՃԱՖԱՐԶԱՏԷ
Malek_m@yahoo.com

Հնդեւրոպական լեզուներուն մէջ գոյական անունը կը թեքի/կը հոլովուի ըստ իր չարահիւսական պաշտօնին, թիւին՝ եզակի, երկակի կամ յոգնակի, եւ ըստ սեռին՝ արական, իգական կամ չէզոք։

Կը թուի թէ Հնդեւրոպական լեզուներու գոյական անունը ունէր քերականական ութ հոլովներ։ Այսօր Հնդեւրոպական լեզուները տարբեր չափերով պահպանած են սկզբնական այդ ութ հոլովները։

Հոլովակերտման այս գործընթացին մէջ, Հնդեւրոպական կարգ մը լեզուներ կցական են՝ գոյական-անունին սկիզբին կամ վերջաւորութեան կ՚աւելցուին յօդեր, կապեր։ Հնդեւրոպական այլ լեզուներ, ինչպէս գրաբարն ու հին պարսկերէնը թեքական են, որով հոլովակերտումը տեղի կ՚ունենայ բառի ներքին թեքումով։ Ասիկա այդ լեզուներուն կարեւորագոյն յատկանիշերէն է։

Ընդհանուր այս մեկնակէտէն ելլելով հեղինակները կը բաղդատեն գրաբարի եւ հին պարսկերէնի՝ Աւեստայի լեզուի գոյականի չարահիւսական պաշտօններուն եւ հոլովակերտման երեւոյթներուն միջեւ։ Անոնք կը մատնանշեն որ գոյականի թիւն ու սեռը, ինչպէս նաեւ վերջաւորութիւնը պատճառ կը դառնան տարբեր հոլովակերտումներու։

Հուսկ, անոնք կ՚եզրակացնեն որ հին պարսկերէնի մէջ երեք համակարգեր կ՚ազդէին թեքումին վրայ.- գոյական անուան թիւը՝ եզակի, երկակի կամ յոգնակի, սեռի ըմբռնումը՝ արական, իգական, կամ չէզոք, եւ հոլովակերտման ութ տարբերակ։ Ի տարբերութիւն հին պարսկերէնի, գրաբարը չունէր թիւի երկակիութիւնը, չունէր նաեւ սեռի ըմբռնումը, իսկ հոլովակերտման համակարգին մէջ չունէր կոչականը։ Միւս կողմէն, հեղինակները կը նշեն որ հին պարսկերէնի եւ գրաբարի հոլովակերտումը առնչուած էր գոյական անուան, ու կ՚աւելցնեն սակայն, որ գրաբարի պարագային թեքումի կողքին գոյականին սկիզբը աւելցող յօդեր եւս հոլովակերտման դեր կը խաղային։

Հեղինակները, սակայն, չեն տեսներ այս երկու լեզուներու գոյականի վերջաւորութեանց թեքումներուն միջեւ նմանութիւններ, հակառակ անոր որ պարսկերէն իգական եւ երկակի համակարգերը կապուած են սեռականի թեքական վերջաւորու-թեան եւ գրեթէ հաւասար ու նոյնն են՝ գրաբարին համեմատ։

ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՕՐՀՆԵՐԳՈՒՆԵՐԸ

ՀԵՆՐԻԿ ԲԱԽՋԻՆԵԱՆ
litart.yerevan@gmail.com

Ե. դարում սկզբնաւորւում է հայ ազգային եկեղեցական երգ-երաժշտութիւնը՝ նախ թարգմանական, ապա նաեւ ինքնուրոյն բնագրերի հիման վրայ: Ըստ այդմ ծնունդ է առնում հայ պաշտօնական օրհներգութիւնը (կցուրդներ, ապա՝ շարականներ), որը նշանաւորում է վաղ միջնադարի հայ անհատական բանաստեղծութեան սկզբնաւորումը[1]:

Հայերէն առաջին օրհներգերը կամ կցուրդները ստեղծել են Մեսրոպ Մաշտոցը եւ Սահակ Պարթեւը՝ իրենց իսկ արարած ձայնեղանակների, իրենց իսկ կազմած Մաշտոցի եւ հայ եկեղեցական տօնացոյցի հիման վրայ:

Մեսրոպ Մաշտոցի վարքագիր Կորիւնի եւ Ոսկեդարի խոշոր պատմիչներ Մովսէս Խորենացու եւ Ղազար Փարպեցու վկայութիւններից մակաբերւում է, որ մեծ ուսուցչապետը զբաղուել է նաեւ երգ-երաժշտութեամբ, այն ուսուցանել է իր սաներին եւ գրերի գիւտից յետոյ մեծապէս նպաստել «հասարակաց աղօթք»ի եւ եկեղեցական ծիսակարգի հայացմանն ու ճոխացմանը:

Յետագայ սկզբնաղբիւրներն արդէն որոշակիօրէն վկայում են, որ Մաշտոցը (Սահակ Պարթեւի հետ) կարգաւորել է հայ եկեղեցական երգերի ձայնեղանակները, հեղինակել է ինքնուրոյն հոգեւոր երգեր, եւ նրան են պատկանում Պահոց կամ Ապաշխարութեան կարգի օրհներգերը:

Հայ եկեղեցու ընդունած Շարակնոց ծիսարանի ցանկում ասուած է հետեւեալը՝ «Նախ՝ սուրբն Իսահակ եւ սուրբն Մեսրովպ՝ ասացին զութն եղանակատր ձայնսն, եւ երկու ձայն ստեղիս:

Ա. Ապա՝ սուրբն Իսահակ՝ զՂազարում, եւ զկարգն Աւագ շաբաթուն:

Բ. Եւ սուրբն Մեսրովպ՝ զկարգն Ապաշխարութեան»[2]:

Մի շարք ուսումնասիրողներ, այդ թւում նաեւ Մանուկ Աբեղեանը, գտել են, որ Ապաշխարութեան կարգի բոլոր երգերը չեն կարող մէկ հեղինակի գործ լինել, քանի որ դրանք ունեն լեզուաոճական բաւականին տարբերութիւններ: «Եթէ Ս. Մեսրոպը հեղինակ է ապաշխարութեան շարականների, նա առանձին երգեր միայն յօրինած պիտի լինի եւ ոչ

մի ամբողջ կանոն»[3]։ *Եւ քանի որ Ե. դարում օրհներգերի համար կանոնը տակաւին սահմանուած չի եղել, ուստիեւ Ապաշխարութեան կարգին պատկանող երգերի թուաքանակն ու դասաւորութիւնը ուրիշ են եղել։*

Ասատուր Մնացականեանը եւ Նիկողոս Թահմիզեանը ձեռագրական տուեալների հիման վրայ քննել են Մաշտոցին վերագրուած երգերի ու դրանց թուաքանակի խնդիրը՝ կատարելով արժէքաւոր ճշտումներ[4]։ Ըստ այդմ, Մաշտոցի յօրինած օրհներգերը պիտի փնտռել Շարակնոցի Ապաշխարութեան կարգի ութ երգաշարքերի մէջ[5]։ Դրանցում երգերի քանակը կազմում է 157 միաւոր։ Սրանց պիտի աւելացնել այն ութ երգերը, որոնք յետագայում ինչ-ինչ պատճառով դուրս են մնացել կանոնական ծիսարանից եւ դարձել պարականոններ։ Ըստ այսմ, մաշտոցեան օրհներգերի ընդհանուր թիւը կազմում է 165 միաւոր, աւելի ստոյգ՝ 164, քանի որ պարականոններից մէկը («Ուրախացի՛ր, Աստուածածի՛ն» Մեծացուսցէն) վստահաբար Մաշտոցի հեղինակածը չէ։

Այս օրհներգերից 44ը Հարցներ են, 46ը՝ Ողորմեաներ, 46ը՝ Տէր Ցերկնից, 10ը՝ Մանկունքներ, 11ը՝ Համբարձին, եւն.։

Բանասիրական ու երաժշտագիտական հիմնաւոր քննութիւնը Թահմիզեանին բերել է այն եզրայանգման, որ Ապաշխարութեան կարգի Ողորմեաների մէջ «համեմատաբար աւելի շատ կաս ձեւով ու բովանդակութեամբ հնութեան դրոշմ կրող եւ լեզուական տեսակէտից էլ համեմատաբար անաղարտ վիճակում պահպանուած երգեր»[6]։ *Ահա թէ ինչու Աբեղեանը Մաշտոցին վերագրուող երգերից անդրադարձել է (թէեւ խիստ վերապահումով) միայն Ողորմեաներին՝։*

Անշուշտ, չի կարելի պնդել, որ Ապաշխարութեան կարգի յիշեալ ութ երգաշարքերի բոլոր Ողորմեաները եւ միւս երգերը, Մնացականեանի խօսքերով ասած, «ամբողջապէս եւ նոյնութեամբ Մեսրոպ Մաշտոցի գրչի արդիւնքն են։ Հնարաւոր է, որ ժամանակի ընթացքում նրանց մէջ մտած լինեն որոշ թուով ուշ շրջանի երգեր, հներից մի քանիսը դուրս մնացած լինեն, փոփոխութիւն կրած լինի նրանց լեզուն եւ այլն»[8]։

Այս ամէնով հանդերձ, մենք համոզուած ենք, որ նշուած օրհներգերը հիմնականում ստեղծուած են Ե. դարում, եւ դրանց մեծագոյն մասի հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է։ Մաշտոցին վերագրուած երգերն, այս վերապահութեամբ, ճիշտ ենք համարում կոչել մաշտոցեան օրհներգեր։

Պահքի կամ Ապաշխարութեան կարգը, բաժանուած է ութ երգաշարքերի եւ նուիրուած է քրիստոնէական եկեղեցու ամենամեծ տօնի՝

ծարութեան համար սահմանուած Մեծ Պահքի քառասնօրեայ ապաշխարութեան շրջանին։ «Սահակն ու Մեսրոպը,- գրում է Գրիգոր Ծակօրեանը,- երբ ձեռնարկեցին հայացնելու եկեղեցու ժամերգութիւնը, հենց այդտեղից՝ Մեծ պահքից էլ սկսեցին: Մաշտոցը գրեց Մեծ պահքի վեց շաբաթների ապաշխարութեան բազմաթիւ շարականներ, մնացած վերջին շաբաթի շարականները... վերագրւում են Սահակին»[9]։

Մաշտոցի օգտագործած երգատեսակները թէեւ տարբեր են իրենց կազմութեամբ ու բովանդակութեամբ, սակայն դրանք բոլորն էլ այս կամ այն չափով ունեն ապաշխարական բնոյթ, ինչը Պահոց կարգի պահանջն է։

Մաշտոցեան երգերը, ինչպէս բնորոշ է առհասարակ հայ օրհներգութեանը, բաժանուած են տների, ինչը հայ քրիստոնէական մշակոյթի կառուցիկութեան արտայայտութիւններից է։ Ըստ երեւոյթին, Սուրբ Երրորդութեան գաղափարաբանական հիմքի վրայ հայ առաջին օրհներգերը բաժանուած են երեք տների։ Մաշտոցեան երգերում պատահում են նաեւ չորս տներ. դա, կա՛մ յետագայ միջամտութեան արդիւնք է, կա՛մ էլ հեղինակը հետեւել է քրիստոնէական մէկ այլ խորհրդանշական թուի՝ չորսին (քառաթեւ խաչ, չորս աւետարանիչներ, քառակերպ քերովբէներ եւն.)։

Մաշտոցեան օրհներգերն ունեն 1-2 բառից մինչեւ 1-2 տող կազմող կրկնակներ (դարձեր), որոնք աւելի հնչեղ, աշխոյժ ու ազդեցիկ են դարձնում ասելիքը, թեւադրուած լինելով նաեւ երգային եղանակաւորումներից։ Նշենք նաեւ, որ երգերի տները բաղկացած են տարբեր քանակութեամբ (մէկ եւ աւելի) եւ ազատ տաղաչափութեամբ անհաւասար տողերից, որոնցից իւրաքանչիւրը, սովորաբար, մի ամբողջական շարահիւսական միաւոր է։

ՄԱՇՏՈՑԵԱՆ ՕՐՀՆԵՐԳԵՐ

Շարակնոցում Պահոց կարգի ութ երգաշարքերը սկսւում են մէկական Հարցներով եւ Գործքերով, որոնց կայուն հերթականութեամբ յաջորդում են միւս երգատեսակների մէկական օրինակներ, եւ այդպէս՝ մինչեւ տուեալ երգաշարքի աւարտը։ Շարակնոցում ամփոփուած մաշտոցեան օրհներգերից 44ը Հարցներ են՝ իրենց յաջորդող համապատասխան Գործքերով։

Մաշտոցեան Հարցները մեծ մասամբ, այս կամ այն չափով, յարաւում են կամ ակնարկում Դանիէլի մարգարէութեան մէջ ընդգրկուած Երից Մանկանց զրոյցը (Գլ. Գ.), ուստի եւ ունեն պատմողական կամ վի-

պական բնոյթ։ Սակայն կան նաեւ մի շարք մաշտոցեան Հարցներ, որոնք ամենեւին չեն առնչւում այդ գրոյցին։ Դրանք կա՛մ յետագայ հեղինակների գործեր են, կա՛մ էլ Մաշտոցն ինքը արդէն իր այդ երգերն անկախացրել է աստուածաշնչեան պատումից։

Մաշտոցեան Գործքերը յաջորդելով Հարցներին եւ վերջիններիս աղերսուելով ներքին իմաստով ու տրամադրութեամբ, հիմնականում կրում են օրհնաբանական-ապաշխարական բնոյթ։ Ընդ սմին կան նաեւ մի շարք Գործքեր, որոնց մէջ եւս այս կամ այն չափով յարատեւում կամ ակնարկւում է երից Մանկանց գրոյցը։ Այսինքն՝ մաշտոցեան Հարցները եւ Գործքերը թէ՛ պատմողական եւ թէ՛ աղօթքային երգատեսակներ են։

Աստուածաշնչեան նշուած գրոյցի մէջ պատմւում է, թէ ինչպէս Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը մի ոսկեձոյլ կուռք է կանգնեցնում եւ ստիպում, որ բոլորը երկրպագեն կուռքին։ Բաբելոնեան գերութեան մէջ գտնուող հրեաներից երեք հաւատաւոր պատանիներ (մանկունք)՝ Սեդրաքը (Անանիան), Միսաքը եւ Աբեդնագովը (Ազարիան), չուրանալով իրենց հաւատը՝ հրաժարւում են ենթարկուել թագաւորի կամքին։ Վերջինս հրամայում է վառուող հնոցը նետել նրանց։ Սակայն իրենց հաւատով տոգորուած մանուկներն անվնաս են մնում թեժ կրակի մէջ, եւ նրանցից մէկը՝ Ազարիան, ջերմեռանդ աղօթում է Աստծուն։ Աստուած ուղարկում է իր հրեշտակին, որը մանկանց զերծ է պահում այրող բոցերից, եւ այդժամ անձնուրաց երեք մանուկները միաբերան օրհնաբանում են Տիրոջը։ Տեսնելով այդ հրաշքը, Նաբուգոդոնոսորը նրանց հանել է տալիս հնոցից, մեծարում է նրանց եւ ինքն էլ օրհնաբանում է Իսրայէլի Աստծուն։

Այս գրոյցն, ինչպէս երեւում է, չափազանց գրաւել է Մաշտոցին, որն այդ թեմայով յօրինել է 44 Հարցն եւ նոյնքան Գործք երգեր՝ կցորդելով դրանք հայկական Մաշմոսարանում ընդգրկուած երեք մանկանց «Օրհնեալ ես, դու, Տէ՛ր Աստուած հարցն մերոց» *սկսուածքով օրհնութեանը եւ վերջինիս* «Օրհնեցէ՛ք ամենայն գործք Տեառն» *սկսուածքով հաւատաւածին։*

Արդեօ՞ք քրիստոնէական հաւատի հայ մեծ քարոզչին գրաւել է այդ գրոյցի սոսկ կրօնական-վկայաբանական գաղափարաբանութիւնը։ Մ՛չ, այստեղ կայ մէկ այլ կարեւոր հանգամանք, որը մատնացոյց է արել Մնացականեանը՝ վկայակոչելով Ազարիայի աղօթքի հետեւեալ տողերը։

Օրհնեա՛լ ես, Տէ՛ր Աստուած հարցըն մերոց...
Եւ մատնեցեր ըզմեզ ի ձեռըս թըշնամեաց մերոց՝

Անօրինաց խստաց եւ ապստամբողաց,
Եւ թագաւորի անիրաւի եւ չարի, քան զամենայն երկիր...
Եւ եմք տառապեալք յամենայն երկրի այսօր...
Եւ ոչ գոյ... ո՛չ ողջակէզք եւ ո՛չ զոհք...
Այլ անձամբք բեկելովք եւ հոգւովք տառապանաց
Ընդունելի լիցուք իբրեւ զողջակէզըս...
Եւ յամօթ լիցին ամենեքեան, ոյք ցուցանեն չարիս ծառայից քոց.
Եւ ամաչեսցեն յամենայն բռնութեան իւրեանց,
Եւ զօրութիւն նոցա խորտակեսցի...[10]

Մնացականեանը սա իրաւամբ համարել է «գերուած եւ հալածուած մի ամբողջ ժողովրդի ողբ՝ իր դառն վիճակի եւ վրէժխնդրութեան մասին: Ի՞նչը կարող էր աւելի համահնչուն լինել մաշտոցեան օրերի քաղաքական իրականութեանը, քան այդ զրոյցը՝ իր ամբողջութեամբ: Այդ զրոյցի եւ համապատասխան երգերի ընթերցումը եկեղեցիներում ու հասարակական հաւաքոյթներում՝ բաւական կը լինէր, որ հայ մարդիկ նրա մէջ տեսնէին նաեւ իրենց բաբելոնեան գերութիւնը եւ դրանով իսկ բորբոքէին ատելութեան, վրէժխնդրութեան եւ ազատութեան կրակն իրենց սրտերում: Մաշտոցը, սակայն, չբաւականացաւ լոկ դրանով. նա ձգտեց ստեղծել ի՛ր Երից մանկանց երգերը»[11]:

Իր այդ երգերում Մաշտոցն էլ դիմելով Տիրոջը, աղաչել է.

... Փըրկեա՛ եւ ըզմեզ, մարդասէր Տէ՛ր...[12]
Ըստ ողորմութեան Քում կեցո՛ զմեզ, Փրկի՛չ...
...եւ փըրկեա՛ զապաւինեալքըս Քեզ...

... Մի՛ մատներ ըզմեզ ի սպառ...
Վասն ուխտի Քո առ հարսըն,
փըրկեա՛ զմեզ ի հրոյն
եւ ի բորբոքեալ բոցոյն ապրեցո՛ զմեզ...

Այս դիմումները կարելի է ընկալել թէ՛ իբրեւ մեղաւոր մարդու, հաւատացեալի աղերսներ, որպէսզի Աստուած փրկի իրեն եւ իր հաւատակիցներին ահեղ դատաստանից, եւ թէ՛ իբրեւ հայ մարդու աղաչանք, որպէսզի Տէրը փրկի իր հայրենակիցներին երկրի բռնակալներից ու նեղիչներից: Երգերից երկուսի մէջ ասուած է հետեւեալը, որը կարելի է ընկալել իբրեւ հայութեան ծանր քաղաքական-տնտեսական վիճակի արձանագրում.

... Նուաղեցաք մեք յամենայնի...

Քանզի նուաղեցաք մեք, քան զամենայն հեթանոսըս...

Իսկ ստորեւ բերուող տողերը նեղիչներից ժողովրդի փրկութեան համար Տիրոջն ուղղուած որոշակի աղերսներ են.

... օգնեա՛ մեզ ի նեղութեան մերում...

... փրկեա՛ զմեզ ի նեղչաց մերոց...

Ի նեղչաց մերոց փրկեա՛ զմեզ
եւ մի՛ ի սպառ մատներ,
զի գինք արեան Քո եմք...

... եւ մի՛ ցրեր զուխտըս Քո:

Մաշտոցեան Հարցներն, ուրեմն, խիստ արտայայտուած կրօնական բովանդակութիւնից զատ, ունեն նաեւ ազգային-հայրենասիրական բովանդակութիւն, որն առաւելապէս արտայայտուել է ենթախորքում, երբեմն էլ դուրս եկել խօսքի մակերես:

Նշենք նաեւ, որ երից Մանկանց նուիրուած Հարցներում պատկերուած բաբելոնեան հուրը, որ աստուածաշնչեան զրոյցի մէջ իրական այրող կրակ է, ձեռք է բերել փոխաբերական նշանակութիւն՝ մերթ իբրեւ մարդու հոգին այրող մեղք, դժոխային կրակ, մերթ իբրեւ ժողովրդին խանձող նեղիչների պատուհաս: Փոխաբերական իմաստ են ստացել նաեւ երեք մանուկները, որոնք յաճախ մարմնաւորում են Տիրոջն ապաւինող մարդկութեանը, մերթ էլ՝ ողջակիզուող բայց եւ երկնային փրկութիւնն ակնկալող հայութեանը:

Յատկանշականէ նաեւ, որ մաշտոցեան Հարցներում եւ Գործքերում գտնում ենք աստուածաշնչեան զրոյցից հետեւեալ չեղումը եւս: Զրոյցում երեք մանուկներին սատարելու համար Աստուած առաքում է իր հրեշտակին: Մինչդեռ մաշտոցեան մի շարք երգերում հրեշտակին երբեմն փոխարինում է ինքը՝ Հայր Աստուած կամ աւելի յաճախ՝ Քրիստոսը, որն առաքւում կամ իջնում է երկնքից եւ փրկում երեք մանուկներին, փոխաբերաբար՝ մարդկութեանը: Այսինքն՝ հայ օրհներգուն չեչտել ու կարեւորել է Յիսուսի փրկչական առաքելութիւնը:

Այսպիսով, մաշտոցեան Հարցն եւ Գործք երգերը աստուածաշնչեան զրոյցի սոսկական յարաստութիւն չեն, այլ բանաստեղծական մշա-

կումներ, որ արտայայտում են ժամանակի հայ մարդու կրօնական յոյզերը, գաղափարներն ու հայրենասիրական-ազատասիրական իղձերը։ Եւ դա արուած է երգ-բանաստեղծութեան ազգային ինքնատիպ ձեւի մէջ, ինչը դարձեալ մատնանշել է Մնացականեանը։ Ինչպէս նկատել է նա, «Աստուածաշնչում Երից մանկանց օրհներգութիւնը մի ընդարձակ, միապաղաղ բանաստեղծութիւն է՝ նոյնական կրկնակներով. մինչ Մաշտոցի մօտ ամէն երգ բաղկացած է վեց տնից եւ կիսուած է երկու մասի (*Նկատի ունի 3 տնից բաղկացած միացեալ Հարցները եւ Գործքերը - Հ.Բ.*)։ Այնուհետեւ, եթէ Աստուածաշնչում նշուած երգը ծայրից-ծայր հիւսուած է միալար եղանակով եւ, հիմնականում, երկու կրկնակի օգնութեամբ (որոնք կազմում են երգի ողջ կէսը), ապա Մաշտոցի մօտ ամէն փոքրիկ երգ ունի իր ինքնուրոյն կառուցուածքը, իր կրկնակները, որով եւ նրանք աւելի թարմ ու աւելի բովանդակալից են, մանաւանդ, երբ նկատի ենք առնում բանաստեղծի հայրենասիրական բաղձանքները»[13]։

Եթէ այս ամէնին աւելացնենք նաեւ այն, որ յաճախ ուրիշի ուղղակի խօսքեր պարունակող այդ աշխոյժ ու կառուցիկ պատմողական-վիպական բանաստեղծութիւնները նաեւ երգուել են հայ անզուգական հոգեւոր եղանակներով, ապա դժուար չի լինի պատկերացնել այն խոր ազդեցութիւնը, որ ունեցել են դրանք ինչպէս ժամանակակիցների ու յետնորդների կրօնական եւ հայրենասիրական զգացումների, այնպէս էլ յետագայ հայ բանաստեղծութեան, մասնաւորապէս շարականագրութեան վրայ...։

Մաշտոցեան Ողորմեաները կազմում են 46 միաւոր։ Այս երգերը կցորդուել են Ծ սաղմոսին («Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ, ըստ մեծի ողորմութեան քում»)։ *Ինչպէս Հարցներում եւ Գործքերում, այնպէս էլ Ողորմեաներում առկայ են աստուածաշնչեան համապատասխան բնագրերի որոշ, գրեթէ բառացի կրկնութիւններ։ Սակայն, ինչպէս նախորդ երգերը, մաշտոցեան Ողորմեաները եւս նշուած բնագրերի յարաւութիւններ չեն, այլ ինքնատիպ գողտրիկ բանաստեղծութիւններ, ուր յիշեալ սաղմոսի ապաշխարական ոգին արտայայտուած է հայ բանաստեղծի անհատական յոյզերով ու խոհերով։ Հետեւաբար միանգամայն ճիշտ է նկատել Յակոբեանը, որ մաշտոցեան Ողորմեաները* «վերջին հաշուով, սրտաբուխ, անկեղծ, հոգեյոյզ երգեր են, որտեղ առաջին անգամ երեւում է անհատն իր ներքին ապրումներով ու խնդրուածք-

ներով»[14]: Աւելի վաղ, Աբեղեանն էլ նշել է, որ այդ կարգի երգերը «սրտայոյզ ողբեր են եւ ամէնից գեղեցիկներն են»[15]:

Մաշտոցեան Ողորմեաներին առաւել բնորոշ է անձնական-քնարական հնչերանգը, առանց որոշակի սիւժէի: Այսինքն՝ դրանք բացառապէս պատկանում են հայ օրհներգութեան աղօթքային (ստատիկ) ենթատեսակին, հիմնականում ապաչխարական-աղերսական բովանդակութեամբ:

Ահա օրհներգու-բանաստեղծի անձնական խնդրուածքներից մէկը.

Ի նենգաւոր շղթանց փըրկեա՛ զիս Տէ՛ր
եւ յարենէ ապրեցո՛,
եւ ողորմեա՛:

Ողորմեաներն էլ երբեմն ձայնակցելով Հարցներին, արտայայտում են որոշ ազատասիրական տրամադրութիւններ.

Տո՛ւր մեզ, Տէ՛ր, զխաղաղութիւն
եւ փըրկեա՛ ի նեղչաց մերոց...:

Մաշտոցեան Ողորմեաները ձայնակցում են միմեանց թէ՛ ապաչխարական ոգով եւ թէ՛ համանման կառուցուածքով, մակդիրներով, համեմատութիւններով ու փոխաբերութիւններով: Այս երգերն ամբողջութեամբ վերցրած կարելի է համարել Գրիգոր Նարեկացու Մատեան Ողբերգութեանի «նախատիպը» եւ գլխաւոր ներշնչարաններից մէկը: Այստեղ էլ զուգադրուած են Աստուած եւ մարդը: Եթէ Աստուած բազումողորմ է, ամենակալ, բազմագութ, մարդասէր, բարերար, փրկիչ, ապրեցուցիչ, քաւիչ յանցանաց, յոյս ապաչխարողաց, ապա մարդը մոլորեալ է, մեղուցեալ, բազմամեղ, ամենամեղ...:

Այս ընդհանրական բնութագրումներից զատ երգաշարքում կան նաեւ թէ՛ Աստուածաշնչից եկող եւ թէ՛ ինքնահնար փոխաբերական մակդիրներ ու համեմատութիւններ, որոնք երգերը դարձնում են առաւել պատկերաւոր ու ազդեցիկ:

Աստուած հոգեւոր լոյսի կրողն է, ուստի եւ հանդէս է գալիս իբրեւ «Արեգակն արդարութեան». մի փոխաբերութիւն, որ տարածուել է հայ միջնադարեան քերթուածեան մէջ, դարձել լուսերգութեան հիմքերից մէկը: Դիմելով Արդարութեան արեգակին, օրհներգի հեղինակը հայցում է.

... ծագեա՛ ի հոգիս մեր ըզլոյս ճըշմարտութեան...

Աստուած հանդէս է բերուած նաեւ իբրեւ «Թագաւոր խաղաղութեան», *ահեղ կամ արդար Դատաւոր, յաճախ նաեւ իբրեւ հոգիների Բժիշկ։ Վերջինիս գուգադրւում է մեղքերի հիւանդութեամբ տառապող կամ յանցանքներից ու չարի, բանսարկուի նետերից վիրաւորուած մարդը։ Ուստի եւ դիմելով* «հիւանդաց Բժիշկ» *եւ* «աղբիւր բժշկութեան» *Աստծուն, բանաստեղծը հայցում է.*

... բըժըշկեա՛ եւ զիմ զհիւանդութիւնս...

... բըժըշկեա՛ զհոգւոյ իմոյ զհիւանդութիւն...

Հա՛յր բարեգութ, բըժըշկեա՛ զվիրաւորեալս...

Մաշտոցեան Ողորմեաներում յաճախադէպ է նաեւ Աստծոյ, որպէս բանաւոր հօտի Հովիւի, եւ մարդու, որպէս մոլորեալ ոչխարի, փոխաբերութիւնը.

... որ Հովիւդ ես բանաւոր հօտի,
խընդրեա՛ եւ զիս՝ ըզմոլորեալս...

... որ խընդրողդ ես մոլորեալ ոչխարիս:

Մոլորեցայ ես, որպէս զոչխար կորուսեալ.

... խընդրո՛ղ գերելոց, խընդրեա՛ զիս՝ ըզմոլորեալս...
Ոչխար եմ բանաւոր հօտի Քո
եւ առ Քեզ ապաւինեմ, Հովի՛ւ բարի,
խընդրեա՛ զիս՝ ըզմոլորեալս...

Ողորմեաներում աւելի մեծ տեսակարար կշիռ ունեն ծովի ու նաւի փոխաբերական պատկերներին առնչուող մակդիրներն ու համեմատութիւնները։ Մեղքերը ներկայացւում են իբրեւ անօրէնութեան կամ թշնամու յարուցած հողմերից ալեկոծուող ծով, որտեղ լողորդի կամ նաւի նման տարուբերւում է մարդը. որի մեղքերը ծովի աւազի պէս բազում են ու «յոյժ ծանր»։ *Մերձ է մեղքերով ծանրաբեռնուած լողորդի կամ նաւի խորտակումը, բայց նա ապաւինում է փրկարար* «քարի Նաւապետ»*ին, որ Աստծոյ մէկ այլ փոխաբերութիւնն է.*

Ալեկոծիմ հողմով անօրէնութեան իմոյ...
Ի խորըս մեղաց ծովու տարաբերեալ՝ ծըփիմ.
Նաւապե՛տ բարի, փըրկեա՛ զիս:

Մերձ եմ յընկղմիլ, օգնեա՛ ինձ, Նաւապե՛տ բարի,
քանզի ծանրացան ի վերայ իմ բեռինըք մեղաց:
Աստուա՛ծ, յօգնել ինձ փութա՛,
քանզի խորք չարեաց ընկղմեն զիս յանդունդս.
այլ Դու, Նաւապե՛տ, լե՛ր եւ ի՛նձ ձեռընտու:
Փըրկեա՛ ի վըտանգէ ըզնաւաբեկս ի յալեաց ծովէ...

Ալիք յանցանաց զիս ալեկոծեն...

Ի ծովու մեղաց ալեկոծեալ եմ
Եւ առ Քեզ աղաղակեմ, Նաւապե՛տ բարի,
փըրկեա՛ զիս ի վըտանգէս...

Այս կարգի պատկերներում կան իսկապէս բանաստեղծական ընտիր գոհարներ: Այդպիսին են յատկապէս հետեւեալ տողերը.

Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ:

Մըրըրկեալ ալիք թըշնամին ինձ յարուցանէ:

Նաւապե՛տ բարի, լե՛ր անձին իմոյ ապաւէն:

կամ՝

Ծով մեղաց իմոց զիս ալեկոծէ. որ ես Նաւապետ բարի,
շնորհեա՛ ինձ նաւահանգիստ, Հա՛յր ամենակալ:

Խորք պատրանաց զիս կորուսանեն. այլ դու, Նաւապե՛տ բարի,
շնորհեա՛ ինձ նաւահանգիստ, Հա՛յր ամենակալ:

Ծովի եւ նաւի նմանօրինակ փոխաբերական պատկերները, որ հայ օրհներգութեան մէջ, ըստ էութեան, սկիզբ են առնում մաշտոցեան երգերից, նոյնպէս լայնօրէն տարածուել են հայ միջնադարեան բանաստեղծութեան մէջ եւ իրենց լաւագոյն դրսեւորումը գտել Նարեկացու Մատեանում:

Ողորմեաններում, ըստ հարկի, կատարուած են նաեւ բազմաթիւ համեմատութիւններ քնարական հերոսի եւ Նոր Կտակարանի մի շարք գործող անձանց միջեւ: Այդ երգերը, համադրուելով Հարցներին ու Գործքերին (որոնց յաջորդում են անմիջաբար), դրանց վիպականութիւնն ընդմիջում են ողբական-քնարական շնչով...:

Մաշտոցեան Տէր Ցերկնիցները եւս կազմում են 46 միաւոր։ Այդ երգերը կցորդուել են ՃԽԸ. սաղմոսին («Օրհնեցէ՛ք զՏէր յերկնից, օրհնեցէ՛ք զնա ի բարձանց»)։ Այս երգերը եւս իրենց կառուցուածքով, տրամադրութեամբ ու բանարուեստով կազմում են մի առանձին տեսակ, որը հիմնականում թրծուած է օրհնաբանական-փառաբանական չնչով։ Այսինքն՝ այս անգամ էլ գործ ունենք օրհներգութեան աղօթքային տարատեսակի հետ։

Տէր Ցերկնիցներում պաշտողը (հեղինակը) կա՛մ ուղղակիօրէն ինքն է կատարում գովերգութիւնը կա՛մ էլ այլոց է կոչ անում գովերգելու Աստծուն։ Այստեղ մեծ թիւ են կազմում յատկապէս Սուրբ Երրորդութեանը բարեբանող երգերը, որտեղ Հայր Աստուած, Որդի Աստուած եւ Սուրբ Հոգին եռատող տներում գովերգւում են առանձին-առանձին եւ միասնութեան մէջ։ Բերենք բազում օրինակներից մէկը.

Օրհնեմք ըզՔեզ, Հա՛յր սուրբ,
ի յամենայն ժամ:

Գովեմք ըզՔեզ, Որդի՛ Միածին,
ի յամենայն ժամ:

Բարեբանեմք ըզՔեզ, Հոգի՛ ճշմարիտ,
ի յամենայն ժամ:

Բնականաբար, պաշտողն իր հայեացքը աւելի շատ սեւեռում է Քրիստոսին, մարդկութեան Փրկչին եւ Ահեղ Դատաստանը վարողին, որին փառաբանում է արդէն կայունացած մակդիրներով։

Որոշ Տէր Ցերկնիցների մէջ, ինչպէս նկատել է Յակոբեանը, «ապաշխարական տաբրը ուժեղացնելով՝ դուրս է մղել փառաբանական ոգին եւ դարձել խնդրանքների, զղջման եւ աղաչանքների բանաստեղծութիւն, որտեղ արդէն երեւում է շարականի հեղինակն իր ներքին, խռովայոյզ ապրումներով, ողբով ու յոյսով»[16]։ *Ի հաստատումն բերենք հետեւեալ տողերը.*

Ի համբառնալ իմում առ Քեզ զաչս իմ,
օգնեա՛ ինձ, Տէ՛ր:

Յորժամ գայցես բազում հրեշտակօք, Տէ՛ր,
ի դատել զերկիր,

Յայնժամ շարժին զօրութիւնք երկնից, Տէ՛ր,
ի յահէ Քումմէ:
Եւ յայնմ աւուր լէ՛ր իմ օգնական,
Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ:

Ահա վաղ առաւօտեան աղօթքի ելած բանաստեղծի անկեղծ ու անմիջական խօսքը.

Ընդ առաւօտս կանխեցից յանդիման լինել Քեզ,
Թագաւո՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ:

Ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում, Տէ՛ր,
Թագաւո՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ:

Ես ըզՔեզ աղաչեմ, Տէ՛ր, ննայեա՛ յաղօթս իմ,
Թագաւո՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ:

Սակայն, ընդհանուր առմամբ, Տէր Ցերկնից երգերն, ինչպէս նշեցինք, ունեն օրհնաբանական-փառաբանական բնոյթ եւ ներհիւսուելով վիպական Հարցներին ու Գործքերին, ողբական-քնարական Ողորմեաներին (որոնց յաջորդում են անմիջաբար), ընդհանուր խօսքին հաղորդում են ներբողական-պաթետիկ հնչերանգ:

Քննուած տարաբնոյթ, բայց բովանդակութեամբ ու տրամադրութեամբ իրար շահեկանօրէն լրացնող երեք երգատեսակներից զատ Մաշտոցն ստեղծել է նաեւ համեմատաբար փոքր թիւ կազմող Մանկունքներ եւ Համբարձիներ: Դրանք նոյնպէս աղօթքային ենթատեսակներ են: Նման երգերը մաշտոցեան օրհներգերի ուղի շարքերում կատարում են մի տեսակ ամփոփիչ, եզրափակիչ դեր:

Մանկունքները կցորդուել են ՃԺԲ. սաղմոսին («Օրհնեցէ՛ք, մանկո՛ւնք, զՏէր եւ օրհնեցէ՛ք զանուն Տեառն»), *իսկ Համբարձիները՝ ՃԻ. սաղմոսին* («Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն»): *Այս անգամ էլ, ինչպէս նախորդ երգատեսակների պարագայում, մաշտոցեան երգերն աւելի հնչեղ ու ազդեցիկ են իրենց աստուածաշնչեան նախօրինակներից:*

Մաշտոցեան 10 Մանկունքները հիմնականում օրհնաբանութիւններ են՝ զուգակցուած հեղինակի անձնական կամ անանձնական աղերսանքներին: Այսինքն՝ համանման են Տէր Ցերկնիցներին, որոնց եւ յաջորդում են Շարակնոցում: Ահա մի օրինակ, որը մէկ այլ գեղեցիկ «առա-

ւօտու աղօթք» է՝ ողողուած այգաբացի լոյսով, որ մարմնաւորում է աստուածային լուսակերպութիւնը։

Լո՜յս փառաց, Բա՜նդ Աստուած,
որ ծագեցեր ի մեզ ըզլոյս գիտութեան,
կարդամք առ Քեզ, Տէ՜ր,
առաւօտու աղօթք մեր հաճոյասցին Քեզ։

Յանմարմնոց վերօրհնեալ, ի մարդկանէ երկրպագեալ
Բնակեա՜լդ ի լոյս անմատոյց,
կարդամք առ Քեզ, Տէ՜ր,
առաւօտու աղօթք մեր հաճոյասցին Քեզ։

Երեքսըրբեան Տէրութի՜ւն, միասնական Աստուածութի՜ւն,
Բնակեա՜լդ ի լոյս անմատոյց,
կարդամք առ Քեզ, Տէ՜ր,
առաւօտու աղօթք մեր հաճոյասցին Քեզ։

Մաշտոցեան Մանկունքները հայ լուսերգութեան առաջին նմուշներն են։ Այստեղ էլ Աստուած բնութագրուած է իբրեւ «Արեգական արդարութեան», *որը* «Ծագմամբ լուսոյ զարդարեաց զազգըս մարդկան»։ *Եւ լուսոյ երգիչը կոչ է անում.*

Որդի՜ք Լուսոյ, տո՛ւք ըզփառըս Հօրըն Լուսոյ...

Մանկունքներում էլ երբեմն փառաբանութիւնը տեղի է տալիս պաշտողի անձնական յոյզերին ու ապրումներին։ Շատ ազդեցիկ է յատկապէս հետեւեալ երգը, որ նոյնպէս մեր քերթուածեան առաջին գոհարներից է։

Յո՜յս իմ, ի մանկութենէ իմմէ,
մի՛ թողուր զիս, Տէ՜ր Աստուած իմ։

Յո՜յս իմ, ի ժամանակի ծերութեան իմոյ,
մի՛ թողուր զիս, Տէ՜ր Աստուած իմ։

Յո՜յս իմ, ի միւսանգամ գալըստեան Քո,
մի՛ անտես առներ զիս, Տէ՜ր Աստուած իմ։

Մաշտոցեան 11 Համբարձինները, որ յաջորդում են Մանկունքներին, ի տարբերութիւն վերջիններիս, հիմնականում աղերսական բնոյթի զգացմունքային երգեր են։ Ահա հեղինակի՝ Տիրոջն ուղղուած մի աղեր-

սանք, որտեղ դարձեալ կրօնական բովանդակութեան ենթաշերտում կարելի է լսել նաեւ տառապող հայութեան հոգու ճիչը.

Տո՛ւր մեզ, Տէ՛ր, զօգնութիւն ի նեղութեան,
զի օրհնեսցուք հանապազ զահաւոր անուն Քո սուրբ:

Պահեա՛, զմեզ, Տէ՛ր, յամենայն փորձութենէ
յաներեւոյթ թշնամւոյն եւ ի գաղտնի նետից նորա:

Դու՝ Յոյս մեր եւ Ապաւէն յամենայն ժամանակի,
որ օրհնիս հանապազ ի Քոյոց արարածոց:

Նման հայցումներ կան նաեւ այլ Համբարձիներում, որոնք ասես արձագանգում են Հարցների աղերսանքներին եւ դրանով էլ իւրովի եզրափակում մաշտոցեան օրհներգերի բուն ասելիքը: Այդ օրհներգերը, յիրաւի, ի խորոց սրտի ասուած թէ՛ առաւօտեան եւ թէ՛ երեկոյեան աղօթքներ են առ Աստուած, որոնք միտուած են ինչպէս առհասարակ մարդկութեան, այնպէս էլ՝ մասնաւորապէս հայութեան փրկութեանը:

Մաշտոցեան երգերի ներշնչարանն, ինչ խօսք, առաջին հերթին Աստուածաշունչն է՝ սաղմոսները, օրհնութիւնները ու աղօթքները: Ինչպէս նկատել է Մնացականեանը, այս կամ այն չափով ազդեցութեան աղբիւրներ են հանդիսացել նաեւ հայկական մեհենական երգերն ու աղօթքները, հին գուսանական եւ ժողովրդական, ինչպէս նաեւ առաւել հին ժամանակների հեթանոսական բանաստեղծութիւնը[17]:

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻԵԱՆ ՕՐՀՆԵՐԳԵՐԸ

Նշեցինք, որ Մեսրոպ Մաշտոցը եւ Սահակ Պարթեւը միաժամանակ են ստեղծել հայերէն առաջին ինքնուրոյն օրհներգերը: Սահակ Պարթեւը գրել է Ղազարի յարութեանը, Մաղկազարդին եւ Աւագ (Մեծի) Շաբաթի նուիրուած կարգերը: Ըստ այսմ մեզ յայտնի են նրա հեղինակած 59 կանոնական եւ պարականոն երգեր:

Փաստօրէն, Մեսրոպ Մաշտոցը եւ Սահակ Պարթեւը իրագործել են մի միասնական ծրագիր՝ ստեղծել երգեր՝ նուիրուած Յարութեան համար սահմանուած Մեծ Պահքի քառասնօրեայ շրջանին եւ դրան անմիջապէս յաջորդող Ղազարի յարութեանը, Մաղկազարդին եւ Աւագ Շաբաթի օրերին, որոնք նոյնպէս պահքի օրեր են:

Ղազարի յարութիւնը, ի պատիւ Յիսուսի հրաշագործութեան, մեր եկեղեցին նշում է Մեծ Պահքի վերջին չաբաթ օրը, որպէս Տէրունական

ոն։ Այդ եւ միւս կարեւոր եկեղեցական ոներները հաստատել է ինքը՝ Սահակ Պարթեւը, որպէս հայոց հայրապետ եւ հայ եկեղեցու ինքնութեան ու բարգաւաճման նախանձախնդիր գործիչ։ Նրա հաստատած արարողակարգով ու ոնացոյցով են նշուել ոները, որոնցից մի քանիսի համար նա ինքը հարկ է համարել յօրինել հոգեւոր երգեր։ Պատահական չէ, որ Սահակ Պարթեւը հեղինակել է այն օրհներգերը, որոնք թեմատիկայով առնչւում են Նոր Կտակարանին, որի հիմնական թարգմանիչն է եղել նա։

Ըստ Արեղեանի, Սահակ Պարթեւն ունեցել է «մի պարզ նպատակ... երգի միջոցով սովորեցնել Աւետարանի պատմութիւնը»[18]։ *Կարծում ենք, մեծ դիտնականը չափից աւելի «պարզեցրել է» օրհներգուի նպատակը։ Վերջինս ոչ միայն ձգտել է սովորեցնել աւետարանական պատմութիւնները, այլեւ, ինչպէս կը տեսնենք՝ վեր հանել դրանց գաղափարաբանութիւնը, արտայայտել իր վերաբերմունքը՝ աղերսանքների ու յոյզերի մթոցով։*

Ղազարի յարութեան պատմութիւնը չարադրուած է Յովհաննու Աւետարանում (Գլ. ԺԱ.)։ Այս պատումի հիման վրայ Սահակ Պարթեւն իր իսկ կատարած թարգմանութեան լեզուով ու ոճով ստեղծել է ինը երգերից բաղկացած մի կարգ, որը աւետարանական պատմութեան մի իւրօրինակ բանաստեղծական մշակում է։

Կարգն սկսւում է երեք Օրհնութիւններով, որոնցից երկուսը երգւում են նոյն, միւսը՝ այլ ձայնեղանակով։ Օրհնութիւնը նախապէս կցորդուել է «Օրհնեսցուք զՏէր, զի փառաւորեալ» *սկսուածքով մարգարէական տասը օրհնութիւններին, որոնք ընդգրկուել են հայկական Մաշտոցարանի մէջ։ Շարականոցային կարգերը (կանոնները), ուր երգատեսակների (կամ դրանց մի մասի) առկայութեան պարագայում, սկսւում են Օրհնութիւններով։ Այս երգատեսակը, ինչպէս գրում է Յակոբեանը,* «միւս եօթ տեսակին գաղափար եւ ուղղութիւն տուող շարականն է, որին իրենց ձայնով եւ ոգով հետեւում են մնացածները»[19]։ *Այդպէս է նաեւ Ղազարի յարութեան կարգում, որտեղ Օրհնութիւնները ներկայացնում են հիմնական պատումը եւ արտայայտում այն գաղափարը, որ Քիստոսի հրաշագործութեամբ պարտւում են մահը եւ դժոխքը* («Դողացաւ մահ, դժոխք պարտեցաւ», «սարսեցին դողալով կարապետք դժոխոց»[20]),

Ըստ շարականոցային կարգի, Օրհնութիւն երգատեսակին յաջորդում է Հարցն։ Այդպէս է նաեւ սոյն երգաշարքում։ Հարցնին ծանօթացանք մաշտոցեան երգերը քննելիս։ Այդ երգատեսակի նախնական

թեման հանդիսացող Երից Մանկանց պատմութիւնը Սահակ Պարթեւի խնդրոյ առարկայ կարգի Հարցնում տեղի է տուել այլ նիւթի՝ Ղազարի յարութեան պատմութեանը: Պահպանուել է միայն երգատեսակի նախնական կառուցուածքը (երեք տուն Հարցն եւ երեք տուն Գործք՝ որոշ կայուն դիմումներով եւ արտայայտութիւններով):

Հարցներին յաջորդում են Ողորմեա, Տէր Ցերկնից, Մանկունք եւ Ճաշու երգերը: Ճաշու երգը նախապէս կցորդուել է տարբեր սաղմոսների (հիմնականում՝ ՃԺԴ. եւ ՂԲ.) եւ երգուել է կէսօրուայ (ճաշու) ժամերգութեան ընթացքում: Բոլոր այս երգատեսակներն առկայ են Ղազարի յարութեան կարգում եւ արձարձում են նոյն նիւթն ու գաղափարը: «Կենդանութեանց բաշխող», «Աղբիւր կենաց» Քիսուսի միջոցով կեանքը յաղթում է Մահին...:

Այստեղ ուզում ենք նշել նաեւ մի ուշագրաւ հանգամանք: Թէ՛ Աւետարանում եւ թէ՛ Սահակ Պարթեւի երգերում Ղազարը հանդէս է գալիս որպէս Քիսուսի սիրելի: Դրա բուն պատճառն այն է, որ Քիսուսը Ղազարի մէջ տեսել է (կամ նախապատրաստել է) իր իսկ յարութեան նախօրինակը, Աստուածային Քարութեան նախանշանը: Այդ է ասուած առաջին օրհնութեան երկրորդ տան մէջ.

Այսօր գոլով ի Բեթանիա՝
զՔո աշխարհակեցոյց Սուրբ Յարութիւնդ
յառաջագոյն ծանուցեր՝
անապականաբար կոչմամբ զչորեքօրեայն ի թաղմանէ.
կենդանարա՛ր Քրիստոս, կեցո՛ զմեզ:

Ահա թէ ինչու է այդպէս կարեւորուել Ղազարի յարութիւնը, որը կատարուել է Աստուածորդու յարութիւնից մէկ շաբաթ առաջ եւ դարձել այդ ամենանշանակալից եկեղեցական տօնի այսպէս ասած՝ նախատօնակը:

Նշենք նաեւ մէկ այլ հանգամանք: Սահակ Պարթեւի ստեղծած այս կարգում, թերեւս աւելի, քան որեւէ այլ տեղ, Քիսուսը ներկայացուած է միաժամանակ թէ՛ իբրեւ կարեկից մարդ եւ թէ՛ իբրեւ մարդասէր Աստուած: Նա անտարբեր չի մնում Ղազարի քոյրերի՝ Մարիամի եւ Մարթայի արտասուքին եւ ինքն էլ «տնօրինաբար արտասուելով»՝ ողբակցում է նրանց.

Եւ որպէս մարդ՝ հարցանէր. «Ո՞ւր եդիք զՂազարոս»:
Եւ որպէս զԱստուած՝ բարբառով յարուցանէ
ի մեռելոց զչորեքօրեան...

Աւելացնենք, որ այս եւ միւս կարգերում օրհներգուն փառաբանել է նաեւ Աստծոյ կենսատու էութիւնը, անուանելով նրան «կենդանաբար», «կենդանութեանց բաշխող», «Աղբիւր կենաց եւ անմահութեան» եւն.: Ինչպէս Մաշտոցը, Սահակ Պարթեւը եւս Աստծուն օրհներգել է նաեւ իբրեւ հոգեւոր լոյսի կրողի, համարել նրան «Աղբիւր լուսոյ եւ ճառագայթ», «անշիջանելի Լոյս», Հօր ծոցից ծագած Լոյս եւ Ճառագայթ, լոյսն իբրեւ թիկնոց կրող:

Ղազարի տօնին անմիջապէս յաջորդում է Ծաղկազարդը (Ծառազարդար), որը նշանաւորում է Քիստոսի մուտքը Երուսաղէմ: Ըստ Աւետարանի (Յովհաննու ԺԲ.), ժողովուրդը լսելով Ղազարի յարութեան հրաշքը, արմաւենու ճիւղեր առած՝ ընդառաջ է գնում Քիստոսին՝ աղաղակելով. «Ովսաննա՛, օրհնեալ որ գայ յանուն Տեառն, Թագաւո՛ր Իսրայէլի»:

Ծաղկազարդը տօնուել եւ տօնւում է նաեւ Համբարձմանը յաջորդող Կիրակի օրը, ի յիշատակ Քիստոսի՝ Երուսաղէմ երկրորդ մուտքի: Այդ երկու նոյնական տօների համար Սահակ Պարթեւը ստեղծել է երկու կարգ[21]: Դրանք նոյն նիւթի բանաստեղծական մշակումներ են եւ արձարծում են նոյն գաղափարը՝ Քիստոսի մարդեղացման, աստուածային էութեան եւ փրկչական առաքելութեան հաստատումը:

Առաջին կարգն սկսւում է երկու նոյնաձայն Օրհնութեամբ, որոնք ընդհանուր նիւթի եւ գաղափարի կրողներն են: Նրանց յաջորդող Հարցնը պարականոն է դարձել: Այստեղ երեք մանուկների նիւթի համանմանութեամբ ներկայացուած է նոր՝ ծաղկազարդեան իրողութիւնը:

Ցնծագին տրամադրութեամբ են համակուած Ծաղկազարդին ձօնուած բոլոր երգերը, այդ թւում նաեւ՝ երկրորդ կարգի:

Ինչպէս նկատել է Ցակոբեանը, Ծաղկազարդին նուիրուած բոլոր երգերը գրուած են «պարզ ու մատչելի լեզուով, խոր յուզականութեամբ, որտեղ պարզ երեւում է Դաւթի սաղմոսների թողած ազդեցութիւնը»[22]:

Ծաղկազարդին յաջորդում է Մեծ կամ Աւագ Շաբաթը, Քիստոսի Յարութեանը նախորդող վեց օրերը՝ Երկուշաբթիից մինչեւ Շաբաթ օրը: Այդ օրերին են կատարուել Քիստոսի մատնութիւնը, դատապարտումը, խաչելութիւնը, մահը եւ թաղումը:

Սահակ Պարթեւը հաստատել ու կարգաւորել է նաեւ այդ օրերի եկեղեցական ծիսակարգը եւ իւրաքանչիւր օրուայ համար ստեղծել համապատասխան բովանդակութեամբ ու տրամադրութեամբ երգերի կարգեր: Դրանք, ըստ էութեան, ամբողջութեամբ վերցրած, ներկայացնում են վեց դրուագներից բաղկացած մի գեղեցիկ օրհներգութիւն:

Աւենք, որ այս կարգերից, մեր կարծիքով, պակասում են Սահակ Պարթեւի հեղինակած որոշ երգեր, որոնք նախորդ կարգերի մի քանի երգերի նման պարականոն են դարձել, սակայն չեն պահպանուել ձեռագրերում: Բացառուած չէ, որ նախորդ կարգերում էլ եղել են երգեր, որոնք նոյնպէս պարականոն դառնալով՝ չեն հասել մեզ:

Այսօրուայ վիճակով Աւագ Շաբաթի առաջին կարգն սկսւում է մէկ Օրհնութեամբ: Այդ երգը կրում է վեց կարգերի հիմնական գաղափարը, այն է՝ Քիստոսը իր գալստեամբ եւ մահուամբ փրկեց մարդկութիւնը նախահայր Ադամի մեղքից եւ բացեց անմահութեան դուռը:

Ինչպէս նկատել է Հայր Գաբրիէլ Աւետիքեանը, «Ի մեծի երկուշաբաթին յիշատակ առնեմք արարչագործութեան աշխարհի, իբրեւ հիման երկրորդ արարչութեան», որ Քրիստոսիւ կատարեցաւ... Ի սոյն խորհուրդ հայիմ բանք շարականիս»[23]: *Քանի որ Ադամը մեղքի պատճառով մերկացաւ եւ* «զգեցաւ զքզենւոյն ծածկոյթ փոխանակ անճառ լուսոյն», *ուստի եւ երկրորդ արարչագործութիւնը կատարող Քրիստոսը չորացրեց հին մարդու խորհրդանիշ անպտուղ թզենին (Մատթէոս ԻԱ.*, 18-22):

Այստեղ էլ, իր ժողովրդի փրկութեանը նախանձախնդիր հայ օրհներգուն մարդու բնութիւնը նորոգող Աստուածորդուն աղերսում է.

Եւ ըզմե՛զ ի հնացեալ մեղաց
նորոգեա՛ ի կեանս անմահ:

Համանման աղերսներ են արւում նաեւ այս եւ միւս կարգերում.

Շնորհեա՛ եւ մեզ, Տէ՛ր, կալ ի յաջմէ Քումմէ:

... Եւ մեք աղաչեմք,
զի դասեացես ընդ սուրբսն Քո:
... արժանի՛ արա ըզմեզ ընմպել
զբաժակ պատուիրանի կենաց Քոց, Տէ՛ր,
որով կացցուք յաջմէ Քումմէ՝
ի հանդերձեալ Քում գալըստեան:

Շնորհեա՛ մեզ...
զԱրքայութիւն Քո, Քրիստո՛ս:

Աւագ Երեքշաբթիի կարգը խարսխուած է Ձիթենեաց Լեռան ստորոտին քարոզող Քրիստոսի կանխասացութիւնների ու առակների վրայ (Մատթէոս ԻԴ.-ԻԵ.)։ Ակնարկելով տասը կոյսերի առակը՝ օրհներգուն աղաչում է.

Շնորհեա՛ մեզ, Տէ՛ր, արթնութիւն
ընդ իմաստուն կուսանացըն,
եւ զհոգւոց մերոց լապտերըս պայծառացո՛:

Աւագ Չորեքշաբթիի կարգի հիմնական թեման Յուդայի մատնութիւնն է եւ քահանաների դաւադրութիւնը։ Անհրաժեշտ է նշել, որ հեղինակը կարեւորել է այն, որ Քիսուան ինքն է կամովին ենթարկւում այդ մահաբեր մատնութեանը։ Ինչպէս ասուած է կարգի Ողորմեայում.

ԸզՔեզ, որ Թագաւորըդ թագաւորաց, ի ծառայէ դատապարտեալ,
զի ըզմեզ փըրկեսցես ի յանիծիցն Ադամայ:

Այս միտքը հեղինակն առաւել յստակօրէն ու բանաստեղծական գեղեցիկ ձեւի մէջ արտայայտել է յաջորդ՝ Տէր Յերկնից երգում, որը բերում ենք ամբողջութեամբ.

Այսօր եկեալ կամաւ Փըրկիչն՝
առ ի մատնիլ յանօրէն ժողովըրդէն,
վասըն փըրկութեան հեթանոսաց:

Այսօր մատնի Քանն ի բանաւոր հօտէ
եւ յառաջնոց դատապարտի յանօրինաց ժողովըրդէն,
վասըն փըրկութեան հեթանոսաց:

Այսօր հողն ըզՏէրըն դատապարտէ,
եւ արծաթոյ վաճառի Արարիչն արարածոց,
վասըն փըրկութեան հեթանոսաց:

Աւագ Հինգշաբթիի կարգի հիմնական թեման Քիսուսի խորհրդաւոր ընթրիքն է, երբ նա խոնարհութեան աննախադէպ օրինակ ցոյց տալով, լուանում է աշակերտների ոտքերը (Յովհաննու ԺԳ.) եւ խորհրդաբար բաշխում նրանց իր մարմինն ու արիւնը (Մատթէոսի ԻՋ.)։

Աւետարանական այս պատումները բանաստեղծօրէն վերաշարադրելով, Սահակ Պարթեւը, դարձեալ ըստ առիթի, հեղում է իր աղերսանքները թէ՛ իր անձի եւ թէ՛ իր համայնքի համար։

Մաքրեա՛ ի մէնջ ըզմէգ խաւարին խորհըրդոյ
եւ լուսաւորեա՛ զմեզ։

Եւ զի՛ս լուա, Քրիստո՛ս, ի մեղաց իմոց...
զի եւ մեք հաղորդեացուք սըրբութեամբ
ընդ սըրբոց Քոց առաքելոցն այսօր ի սուրբ Վերնատունըն...

Բըժըշկեա՛ զհոգւոյ իմոյ զհիւանդութիւն։

Յաջորդ երկու կարգերի թեման է Յուդայի մատնութեամբ Յիսուսի կալանքը, չարչարանքները, մահը եւ թաղումը։

Օրհներգուն որքան փառաբանում ու պանծացնում է մարդկութեան փրկութեան համար ինքնակամ մահուան գնացող Յիսուսին, այնքան սուր ու անողոք ձաղկում է մատնիչ Յուդային։ Աւագ Ուրբաթի կարգի առաջին իսկ Օրհնութեան մէջ ասուած է.

Արծաթասիրութեամբ մոլեալ Յուդա
Չիւր ըզմեծ ըզՎարդապետն ընդ երեսուն արծաթոյ

հըրէիցըն մատնէր։

«Ընդ որում ես համբուրեցից, ասէ, ըզնա կալարո՛ւք».
Ո՞վ համբոյր նենգութեան, նըշան եւ առիթ մահու։

Մերկացաւ յինքենէ զաստուածային Սուրբ Հոգին
եւ ըզգեցաւ ըզՍատանայ, որպէս զհանդերձ արկաւ զիւրեաւ։

Այս վերջին կարգերի օրհներգերից չատեր կառուցուած են հակադրութիւնների վրայ։ Յիսուսը, որից դողում են երկնային հրեշտակները, խաչ է հանւում եւ խոցւում գեղարդով։ Նա, որ թագաւորների թագաւորն է, դատապարտւում է ծառայի կողմից։ Նա, որ պարգեւատուն է բոլորի, այժմ պարգեւ է խնդրում Պիղատոսից։ Նա, որ կենդանատուն է բոլորի, այժմ դրւում է գերեզման։ Նա, որին օրհնում են երկնային զօրքերը, այժմ գերեզմանում փակուած հսկւում է զինուորների կողմից։ Նա, որ լոյսն էր որպէս թիկնոց նետում իր վրայ, այժմ պատանքով է պատւում...։

Ցիրաւի, հրաշալի եւ ահեղ է այն տեսարանը, որ ասես ականատեսի տպաւորութեամբ պատկերել է Սահակ Պարթեւը՝ ստեղծելով իր ամենայուզիչ օրհներգը, որը մեզ յիշեցնում է Քրիստոսի խաչելութիւնը պատկերող լաւագոյն կտաւները.

Ո՜վ ըսքանչելի եւ տեսիլ ահաւոր,
զԱրարիչն երկնի եւ երկրի այսօր տեսաք ի խաչի:

Տեսեալ ըզՏէրն ի խաչին՝ խաւարեցաւ արեգակըն,
եւ վարագոյր տաճարին ցելոյր վերուստ մինչ ի վայր:

Անարգաբար խաչեցաւ Տէրն ի մէջ յանօրինաց,
զի լըցցի գիրն, որ ասէ, թէ ընդ անօրէնս համարեցաւ:

Սա արդէն իսկ ազդեցիկ է իբրեւ զուտ բանաստեղծութիւն. բնականաբար աւելի ազդեցիկ է երգուելիս եւ էլ աւելի ազդեցիկ է համապատասխան արարողութեան մթնոլորտում: «Պէտք է երեւակայել,- գրում է Արեղեանը,- մոմերը հանգցրած մութ եկեղեցին, լի արտասուող ժողովրդով, կէս գիշերային ժամին, որ հասկացուի, թէ ինչ սարսուռ էր անցնում հաւատացեալ աղօթաւորի հոգով, երբ այս սրտաճմլիկ ազդու երգն էր հնչում»[24]:

Սահակ Պարթեւի օրհներգերը մեծ մասամբ լինելով աւետարանական պատմութիւնների բանաստեղծական վերաշարադրանքներ, հիմնականում ունեն վիպական կամ պատմողական բնոյթ: Դրանով հանդերձ այդ երգերում առկայ են նաեւ փառաբանական, օրհնաբանական ոգին ու ջերմ յուզական շունչը...

Սահակ Պարթեւը եւ Մեսրոպ Մաշտոցը իրենց օրհներգերը ստեղծել են ամենաուշը 420ականներին: Այդ ժամանակ հայ քրիստոնէական մշակոյթը, այդ թւում նաեւ երգ-երաժշտութիւնը, գտնւում էր իր խանձարուրում: Դրանով է բացատրւում, բառի նախնական ու ամենադրական իմաստով, այն պրիմիտիւիզմը, որ բնորոշ է այդ երգերին: Գրեթէ անզարդ, պարզ ու անմիջական խօսք, որ վարակում է՝ լինելով հենց այդպիսին: Խօսքի նման պարզութիւնն, անշուշտ, բացատրւում է նաեւ լայն լսարանին ըստ ամենայնի հասկանալի լինելու հեղինակային մտահոգութեամբ:

Հայ առաջին օրհներգերը թէեւ ինչ-որ չափով դեռեւս լեզուաոճական կախուածութեան մէջ են աստուածաշնչեան բնագրերից, սակայն, ընդհանուր առմամբ, ինքնուրոյն բանաստեղծութիւններ են, ինչպէս

ինքնուրոյն են դրանց ձայնեղանակները։ Ցիրաւի, Մեսրոպ Մաշտոցը եւ Սահակ Պարթեւը միջնադարեան հայ առաջին երաժիշտ-բանաստեղծներն են, հայ անհատական երգ-երաժշտութեան կերտիչները։

Հաւատով, յոյսով, լոյսով, մարդասիրութեամբ ու հայրենասիրութեամբ տոգորուած նրանց երգերը այն խտացուած միջուկն են, որից պիտի ճառագէր ու դարերի հոլովոյթում պիտի գնալով յորդանար համաշխարհային քնարերգութեան գանձարանում իր ուրոյն ու մնայուն տեղն ունեցող հայ միջնադարեան բանաստեղծութիւնը։

ՏԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Հենրիկ Բախչինեան, «Հայ Օրհներգութեան Սկզբնաւորումը», Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԻԸ-, Պէյրութ, 2008, էջ 45-60։*

[2] *Շարական Հոգեւոր Երգոց, Կ. Պոլիս, 1853, էջ Ա։*

[3] *Մանուկ Աբեղեան, «Ս. Գրքի եւ Կանոնի Ազդեցութիւնը Շարականների Վրայ», Արարատ, 1912, թիւ 10-11, էջ 1006։*

[4] *Ասատուր Մնացականեան, «Մեսրոպ Մաշտոցը Որպէս Բանաստեղծ», Բանբեր Մատենադարանի, թիւ 7, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ., 1964, էջ 127. նաեւ՝ Նիկողոս Թահմիզեան, «Մեսրոպ Մաշտոցն Ու Հայոց Հոգեւոր Երգարուեստը», Բանբեր Մատենադարանի, թիւ 7, էջ 191։*

[5] *Շարակնոցում դրանք ԻԸ-, Լ-, ԼԲ-, ԼԳ-, ԼԶ-, ԼԹ-, ՄԲ- երգաչարքերն են՝ էջ 133-142, 149-158, 163-180, 186-199, 212-222, 244-255։ Մաշտոցեան երգաչարքերը Շարակնոցում ընդմիջարկւում են Մեծ Պահքի շրջանին վերաբերող որոշ տօների առթիւ ստեղծուած երգերով կամ կանոններով։*

[6] *Թահմիզեան, էջ 195։*

[7] *Մանուկ Աբեղեան, Երկեր, Հտր. Գ-, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., 1968, էջ 545-548։*

[8] *Մնացականեան, էջ 138։*

[9] *Գրիգոր Ցակոբեան, Շարականների ժանրը Հայ Միջնադարեան Գրականութեան Մէջ (V-XV դդ.), Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., 1980, էջ 72։*

[10] *Դանիէլ, Գ-, 26, 32, 37-45։*

[11] *Մնացականեան, էջ 143-144։*

[12] *Մնացականեան, էջ 145։*

[13] *Մաշտոցեան օրհներգերի մէջբերումները կատարուած են Շարակնոցի 1853ի Կ. Պոլսի հրատարակութիւնից (էջ 133-255)։*

[14] *Ցակոբեան, էջ 78։*

[15] *Աբեղեան, Երկեր, էջ 545։*

[16] *Ցակոբեան, էջ 77։*

[17] *Մնացականեան, էջ 139։*

[18] *Աբեղեան, Երկեր, էջ 548։*

[19] *Ցակոբեան, էջ 34։*

[20] *Սահակ Պարթեւի կանոնական օրհներգերի մէջբերումը եւս կատարուած է Շարակնոցի 1853ի Կ. Պոլսի հրատարակութիւնից (էջ 255-315)։*

[21] *Սահակ Վրդ. Ամատունի, Հին եւ Նոր Պարակաձոն կամ Անվաւեր Շարականներ, Վաղարշապատ, Ելեքտրաշարժ Տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1911, էջ 87։ Ժբ. դարուն Գրիգոր Փոքր Վկայասէրը ստեղծել է երկրորդ Մաղկազարդին նուիրուած նոր կարգ, իսկ Սահակ Պարթեւի հեղինակած կարգը կցել Առաջին Մաղկազարդի կարգին։*

[22] *Յակոբեան, էջ 67։*

[23] *Հայր Գաբրիէլ Ասեմիքեան, Բացատրութիւն Շարականաց, Վենետիկ, Ս. Ղազար, 1814, էջ 216-217։*

[24] *Աբեղեան, Երկեր, էջ 549։*

THE FIRST ARMENIAN HYMNOLOGISTS

(Summary)

HENRIK BAKHCHINYAN
litart.yerevan@gmail.com

Early medieval Armenian poetry was formed in the first half of the fifth century in the form of church hymnography.

The first original Armenian hymns, which were later on called *Sharakans*, were authored by Mesrop Mashtots and Catholicos Sahak Partev. Both based these hymns on the musical scores they composed for the psaltry which they had compiled based on the Armenian church calendar of feasts (*tonatsuyts*).

Mashtots wrote the repentance *sharakans* of lent, while Sahak Partev wrote the holy week hymns. Both in terms of phrasing and style these were dependent on the biblical texts. Generally, however, they were original both as poems and as musical scores.

Alongside religious themes and concepts, the first Armenian hymns expressed the thoughts, emotions and sentiments of the contemporary individual, as well as his/her human and humane feelings. As such, Mashtots and Sahak Partev were the initiators of Armenian medieval self-authored poetry. This poetry anchored itself on the poetic heritage of Mashtots and Sahak Partev and established its own niche in world poetry.

ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԹԵՄԱՆ ԶԱՔԱՐԻԱ ԱՒԱՆՑՈՒ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

(Ըստ «Մատենադարան»՝ Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի Գիտահետազօտական Ինստիտուտի Ձեռագրատնի)

ԱՒԵՏ ԱՒԵՏԻՍԵԱՆ
avetavetisyan@yahoo.com

Հայկական մանրանկարչութեան պատկերագրական ու ոճական բազմազանութեան մէջ իր ուրոյն տեղն ունի Վասպուրականը։ Մի քանի հարիւրամեակ (ԺԳ.-ԺԶ. դդ.) վասպուրականցի մանրանկարիչների վրձնած անկրկնելի պատկերներն էապէս տարբերւում են պատմական Հայաստանի միւս աշխարհների գրչակենտրոնների համանման ստեղծագործութիւններից՝ աստուածաշնչական պատումների պատկերաբանական վերարտադրումի իւրօրինակութեամբ։

Սակայն ԺԵ. դարում Մինաս Ծաղկողը[1] արմատապէս փոխեց վասպուրականեան աւանդական ոճն ու պատկերագրութիւնը՝ ներմուծելով կիլիկեան մանրանկարչութեանը յատուկ գեղարուեստական մտածելակերպն ու պատկերացումները։ Նրան հետեւող ժամանակակակից եւ յետագայի վասպուրականցի վարպետներն աշխատում էին նկարազարդ ձեռագրի ստեղծման նոր սկզբունքներով[2] եւ միայն մանրանկարների յօրինուածքների մանրամասներում էին քիչ թէ շատ հետեւում նախնեաց ժառանգութեանը։

Մինասի նորամուծութիւնների հետեւողն էր նաեւ Զաքարիա Աւանցին[3]։ Այս բազմարդիւն արուեստագէտը ոչ միայն մանրանկարիչ էր, այլեւ կազմող ու գրիչ։ Նա ներկայացնում է ԺԶ. դարի վերջի-ԺԷ. դարի առաջին քսան տարիների վասպուրականի մանրանկարչութիւնը։

Զաքարիան ծնուել է վանին մերձակայ Աւանց գիւղաքաղաքում, հաւանաբար ԺԶ. դարի երկրորդ կէսին[4]։ Նրանից մեզ հասած վաղ շրջանի առաջին երկու ձեռագրերը աւետարաններ են, որոնք մանրանկարիչը նկարազարդել է 1595ին[5]։ Մինչ շահ Աբասեան բռնագաղթը՝ նա ստեղծագործել է Աւանցում։ 1604ին տարագրուելով Պարսկաստան՝ Զաքարիան շարունակել է իր աշխատանքը Նոր Ջուղայում, Սպահանում, Քադաքում։ Վանեցի այս վարպետն իր մահկանացուն կնքել է օտարութեան մէջ, 1617ին[6]։

Ընդհանուր հաշուով Զաքարիա Աւանցուց պահպանուել են 19 նկարազարդ Աւետարան, 2 Մաշտոց, 1 Աղօթամատոյց եւ 2 հատակտոր։ Այս պատկառելի ձեռագրական-մանրանկարչական ժառանգութեան զգալի

մասը գտնւում է «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի Գիտահետազօտական Ինստիտուտում: 10 նկարազարդ աւետարաններն[7] ամբողջական ու սպառիչ պատկերացում են տալիս Զաքարիայի մանրանկարչական արուեստի մասին, ի յայտ բերում նրա նախասիրած պատկերագրական տիպը, պատկերի յօրինուածքային, գունային, ոճական ու խորհրդաբանական առանձնայատկութիւնները:

Մատենադարանի հաւաքածուում պահուող Զաքարիա Աւանցու նկարազարդած աւետարաններից ցաւօք ոչ բոլորն են պահպանել մանրանկարների նախնական չարքերը: Մասնաւորապէս պակասում է թիւ 6503 (1595 թ.), 5345 (1611 թ.), 10220 (1601 թ.), 4981 (ԺՉ. դարասկիզբ) ձեռագրերի թեմատիկ մանրանկարների հիմնական մասը: Ամբողջական են թիւ 5507 (1595 թ.)[8], 5794 (1599-1600 թթ.), 2804 (1600 թ.), 4101 (1603 թ.), 7755 (1603 թ.)[9] եւ 4838 (1604 թ.) ձեռագրերի մանրանկարները: Հետեւաբար Զաքարիայի արուեստին բնորոշ պատկերագրական տիպը պէտք է զատորոշել հիմնուելով մանրանկարչական ամբողջական չարքը պահպանած ձեռագրերի վրայ:

Հետեւելով Վասպուրականի մանրանկարիչների հնամենի սովորութեանը, որը դարերի ընթացքում կանոնական էր դարձել, Զաքարիան իր մանրանկարները նկարում է ձեռագրի առաջին թերթերի վրայ[10]: Սկսած 1595ին նկարազարդած Աւետարանից[11], Զաքարիան յետագայ բոլոր ձեռագրերում օգտագործում է միեւնոյն պատկերագրական տիպը, որը ներառում է պատկերներ Հին եւ Նոր Կտակարաններից:

Մանրանկարների այս պատկերագրական չարքը սկսւում է Աստուածաշունչի «Մննդոց» գրքից՝ աստուածային արարչագործութեան պատկերներով, որոնք եօթն են եւ ներկայացնում են արարածոց ծննդաբանութիւնն ըստ արարչագործութեան եօթ օրերի:

Հերթականութեամբ, ձեռագրի իւրաքանչիւր թերթին համապատասխան բացատրագրով Զաքարիան առանձին-առանձին նկարում է պատկերը եւ գրում. «Ա օր «Երկինք եւ երկիր, ջուրք եւ անջրպետութի[ւն]ք», Բ օր «Հաստատեցաւ երկինք եւ երկիր, ջուր եւ հուր աստիճանաց», Գ օր «Ժողովեցաւ ջուրն ի մի կողմն եւ երեւեցաւ ցամաք, բոյսք եւ բանջարք, ծառք եւ պտղաբերք», Դ օր «Արեգակն եւ լուսինն եւ աստեղք գիշերոյ, փառք անեղին Ա[ստուծո]յ», Ե օր «Հոչուն թեւո[ո]րք եւ ձուկն Լեւիաթան, եւ հօն կայտառ որ ասի Արմաւ: Եւ Հայրն Ա[ստուա]ծն ի վ[ե]ր[այ] անպատում աթոռոյ, եւ հր[ե]շտ[ակ]ք գոյացեալին ի լուսոյ եւ փառս տալին Ա[ստուծո]յ», Զ օր «Գազան եւ անասուն եւ արար մարդ ըստ պատկերի իւրում» եւ Է օր «Հանգիս[տ] ա[մ]ենայն] գործոց զոր արար Ա[ստուա]ծ»[12]:

Հայր Աստծոյ հանգիստը ներկայացնող մանրանկարին անմիջապէս յաջորդում է «Եզեկիէլի տեսիլքը» պատկերը («Տեսիլն Եզեկիէլի զոր ե-

տես ի գետն Քորար. զանիւն եւ զխորհուրդ չորէք կերպ[եա]ն աթոռոյ. եւ Ք[րիստո]ս ի վ[ե]ր[այ] ն[ո]ր[ա] բազմեալ»), *որը կարծես հակասում է պատկերագրական շարքի յաջորդականութեան տրամաբանութեանը, քանի որ դրանից յետոյ Զաքարիան պատկերել է «Եւայի ստեղծումը Ադամի կողից. դրախտ»* («Ստեղծումն Եւա[յ]ի ի կողէն Ադամա[յ]. եւ լանեն ղ գետք ի դրախտէն Ադամա[յ]. Եփրատէս. Տիգրիս. Փիսոն. Գեհոն») *եւ «Արգելուած պտղի ճաշակումը. մեղսագործութիւն»* («Աւծն խաւսի ի յուկն Եւայի եւ պտուղն զոր կերաւ եւ մերկացաւ եւ ձայնեալ Ա[ստուա]ծոյ[ն] Ադամա[յ] թէ ուր ես») *տեսարանները, որոնք նոյնպէս վերաբերում են «Մննդոց» գրքին: Սակայն սա թուացեալ չեղում է պատկերների յաջորդականութեան տրամաբանութիւնից: «Եզեկիէլի տեսիլքը» (ինչպէս կը տեսնենք յետագայում) միջանկեալ մանրանկարը աստուածաբանութեան տեսանկիւնից սերտօրէն առնչւում է Ադամի եւ Եւայի թեմային:*

Այդպիսով «Եւայի ստեղծումը Ադամի կողից. դրախտ» եւ «Արգելուած պտղի ճաշակումը. մեղսագործութիւն» մանրանկարներով Զաքարիան եզրափակում է հին կտակարանեան շարքը եւ անցնում նոր կտակարանեան թեմաներին:

Զորս աւետարանների կարեւորագոյն իրադարձութիւնները ներկայացնող մանրանկարների շարքը Զաքարիան սկսում է «Աւետում» տեսարանով. «Աւետիքն Գաբրիէլի որ ետ սրբոյ Կուսին Մարիամու ս[ուր]ք Ա[ստուա]ծածնին որ յղացաւ զբանն Ա[ստուա]ծ» *եւ իւրաքանչիւր պատկերի համապատասխան մասում յօրինուածքի աւետարանական կերպարներն ու իրադարձութիւնը մեկնաբանող բացատրագիր թողնելով շարունակում. «Մննդեան եւ մոգերի երկրպագութիւն»* («Ծնունդն Ք[րիստոս]ի ի յայրին. Հովիւքն. ոչխարք: Թ[ա]գ[աւո]ր մ[ո]գք Մելքոն ծեր. Գազա[ա]ր թուխ մ[օ]ր[ու]ք. Բաղդ[ա]ս[ա]ր տղայ: Հրեշտակք: Յովսէփ: Էշն. եզն: Անբանի[ց] մսուրն:»), *«Տեառնընդառաջ»* (Գալուստ քառասնաւրեա[յ] ի տաճարն զոր ընկալեալ Սիմէովն ի գիրկն իւր: Յովսէփ. Ա[ստուա]ծածինն: Աննա դուստրն Փանուելի:), *«Մկրտութիւն»* («Մկրտութի[ւն] Ք[րիստոս]ի ի Յորդանան: Վիշապն անդընդայինն: Աջն Հայրակ(ա)ն եւ աղօնակ[ե]րպ Հոգին: Ս[ուր]ք Յով[հաննէ]ս: Հրեշտակք: Դեւն:»), *«Պայծառակերպութիւն»* («Պայծառակերպութի[ւն] ի Թաբուրական լեառն: Պետրոս. Յովհաննէս. Յակոբոս: Եղիայ. Մովսէս:»), *«Ղազարոսի յարութիւն»* («Յ[իսուս]ս Ք[րիստո]ս Յարուցանէ զՂազարոս: Քուրք Ղազ[ա]րու. Մարթա. Մարիամ: Ա-ո[ա]ք[եա]լն: Գեր[ե]զմ[ա]նն Ղազարու: Ի բաց արարէք զվէմդ:»), *«Մուտք Երուսաղէմ»* («Գալուստ Տ[եառ]ն մերոյ Յովանակաւն ի Ս[ուր]ք քաղաքն Յե[րուսաղ]էմ: Տղայն ոստս հատանի: Առ[ա]ք-ե[ա]լքն: Ծերքն: Հանդերձ տարածանի:»), *«Ոտնլուայ»* («Յ[իսուս]ս

Ք[րիստո]ս բազմեալ լուա[յ] զոտս առաքելոց. նախ զՊետրոսի եւ ապա զայլոց: Առ[ա]ք[եա]լքն:»), *«Խաչելութիւն»* («Խաչելութի[ւնն] Ք[րիստոս]ի ամենազաւր Թագաւորին: Հաւն Հաւալսան որ զարիւն կաթուցանէ յօրինակ Ք[րիստոս]ի եւ զձագսն կենդանացուցանէ: Ա[ստուա]ծածինն: Յոհաննէս:»), *«Խաչից իջեցում»* («Պատանումն Ք[րիստոս]ի ամենազաւր Թագաւորին: Հրեշտակք: Նիկոդիմոս: Կանայքն: Յովսէփ:»), *«Դժոխքի աւերում»* («Աւերումն դժոխոց որ Ք(րիստո)ս ըմբռնեալ է զԱդամ եւ ազատէ: Եւայ: Աղամ: Աւձք: Ս[ուր]բ Յովհաննէս: Դաւիթ: Սողովմոն: Դրունք դժոխոց խորտակեալ: Վիշապն անդնդա[յ]ին:»), *«Յարութիւն»* («Յարութի[ւնն] Ք[րիստոս]ի. լուսափայլ հրեշտ[ա]կն ի վ[ե]ր[այ] վիմին բազմեալ: Կանայքն իւղաբ[ե]րք: Գերեզմանն Ք[րիստոս]ի: Պահապանքն:»), *«Համբարձում»* («Համբարձումն Ք[րիստոս]ի յերկինս առ Հայրն: Յ[իսու]ս Ք[րիստո]ս: Հր[ե]շտ[ակ]ք: Առաքեալքն: Ա[ստուա]ծածինն:»), *«Հոգեգալուստ»* («Երկոտասան առ[ա]քեալքն ի վերնատունն եւ աղօնակ[ե]րպ Հոգին: Ներքնատ[ո]ւն. պարթեւք. մարք. իլամացիք: Վերնատունն: Առ[ա]ք[եա]լքն:»), *«Երկրորդ գալուստ»* («Փողն Գաբրիէլի զոր հնչեն հրեշտ[ա]կք»)[13], *«Վերջին դատաստան»* («Չորէքկերպ[եա]ն աեղատիպ աթոռն անմահ Արքային: Կըշեռն դատաստանին: Ողորմութե[ան] հրեշտ[ա]կն: Դեւք:»):

Այսպիսով, Զաքարիա Աւանցու նախընտրած մանրանկարչական չարքը բաղկացած է 26 պատկերներից: Դրանցից 10ը վերաբերում են Հին, իսկ 16ը Նոր Կտակարաններին:

Աւետարանական պատկերաշարում Զաքարիան ամբողջովին հետեւում է Մինաս Թաղկողի պատկերագրական թեմաներին, որոնք նա կիրառել է իր ձեռագրերում[14]*: Նոյնիսկ յօրինուածքների կառուցման եւ նկարադաշտում կերպարների դասաւորութեան մէջ զգացնել է տալիս Մինասի հեռաւոր ազդեցութիւնը: Սակայն Հին Կտակարանի պատկերաշարում Զաքարիա Աւանցին ոչ միայն ինքնատիպ է իր ստեղծագործութեամբ, այլեւ եզակի ու անկրկնելի՝ մանրանկարների պատկերագրութեամբ: Հին Կտակարանեան թեմաներից Մինաս Թաղկողի նկարազարդած աւետարաններում հանդիպում է առաւելապէս «Աբրահամը զոհաբերում է Իսահակին»*[15] *պատկերը: Մինչդեռ Զաքարիա Աւանցու արուեստում Աւետարանի նկարազարդման համակարգ է բերուած ամբողջական ու կուռ մի չարք, որը խորհրդաբանական-նշանակային պատկերի սկզբունքին զուգահեռ աւելացնում է մի նոր սկզբունք՝ խորհրդաբանական-պատմողականը:*

Մինչ Զաքարիա Աւանցին, հայկական մանրանկարչութեան մէջ հին կտակարանեան պատկերներն աւետարաններում ի յայտ են գալիս Ժ.-ԺԱ. դարերում, մասնաւորապէս «Աբրահամը զոհաբերում է Իսահակին» տեսարանը[16]*, «Աբրահամի հիւրասիրութիւնը»*[17] *եւն.:*

ԺԳ. դարից սկսած, հին կտակարանեան մանրանկարներ են հանդիպում նաեւ հայերէն նկարազարդ Աստուածաշունչերում եւ ծիսական մատեաններում՝ Սաղմոսարաններում, Մաշտոցներում, Ճաշոցներում[18]: Ինչ վերաբերում է «Արարչագործութիւն» ամբողջական շարքին, ապա այն հայկական մանրանկարչութիւն է մուտք գործել ԺԴ. դարում[19]: Շարքի հնագոյն եւ առաւել հետաքրքրական օրինակը զետեղուած է Թորոս Տարօնացու պատկերազարդած Աստուածաշունչում[20]: Սիւնեաց մեծ մանրանկարիչն արարչագործութեան փոքրադիր պատկերները նկարել է «Մննդոց» գրքի անուանաթերթի ի գլխատառի երկայնական առանցքի մէջ, վերից վար, ուղղահայեաց յաջորդականութեամբ: Փոքրիկ օւալների մէջ նա հերթականութեամբ պատկերել է արարչագործութեան վեց օրերը եւ եօթերորդ օրը որպէս Աստծոյ հանգիստ[21]:

«Արարչագործութիւն» շարքի մէկ այլ պատկերագրական տարբերակ է օգտագործել Ղրիմի հայերէն Աստուածաշունչի նկարիչը[22]: Նա թեման ներկայացրել է արդէն մէկ ամբողջական թերթի վրայ՝ համադրելով արարչագործութեան բոլոր օրերն Ադամի ու Եւայի ստեղծման, անկման ու դրախտից վտարուելու պատմութեան հետ[23]: Այս մանրանկարի վերին եւ ձախակողմեան եզրաչերտը զբաղեցնում են արարման առաջին հինգ օրերի պատկերները, իսկ կենտրոնական մասը բաժանուած է վեց քառակուսիների, որոնց մէջ յաջորդաբար ներկայացուած է Ադամի ու Եւայի պատմութիւնը:

ԺԴ. դարից մեզ է հասել եւս մէկ ուշագրաւ պատկերագրական տարբերակ: Աւետարանում, որը նկարազարդել է Գրիգոր Գծողը (Սիւնիք), ներկայացուած են մանրանկարներ, որոնք վերաբերում են Մննդոց գրքին[24], «Եւայի ստեղծումը», «Ադամն ու Եւան դրախտում», «Մեղսագործութիւն» եւ «Արտաքսում դրախտից»[25] թեմաներին: Հետաքրքրական է, որ «Մննդոց» շարքի մանրանկարները, որոնք յատուկ են ձեռագիր Աստուածաշունչերին, դառնում են Աւետարանի պատկերազարդման մի մաս: Այս ձեռագրում նորոյթն այն է, որ «Մննդոց» պատկերները ներկայացուած են առանձին, ամբողջ էջով մէկ, նախորդ օրինակներից բոլորովին այլ յօրինուածքով ու պատկերագրութեամբ: Թէեւ արարչագործութեան վեց օրերի, Աստծոյ հանգստի եւ Ադամի ստեղծման պատկերներն այս Աւետարանում բացակայում են, ամենայն հաւանականութեամբ դրանք եղել են, սակայն կորսուել են ժամանակի ընթացքում, քանի որ պատկերագրօրէն անհաւանական եւ անտրամաբանական է «Մննդոց» շարքը սկսել «Եւայի ստեղծումը» մանրանկարով:



Եզեկիէլի տեսիլքը



Ջրային կենդանիների ու թռչունների արարումը

«Արարչագործութիւն» մանրանկարների յաջորդ նմոյշն արդէն ԺԶ. դարից է: Դրանց հեղինակն Առաքել Գեղամեցին է, Զաքարիա Աւանցու ժամանակակիցը: 1587ին նրա նկարազարդած Աւետարանում[26] կայ մեզ հետաքրքրող մանրանկարների ամբողջական շարքը, որը սկսւում է չորեքկերպեան աթոռին բազմած Աստծոյ պատկերով իսկ մնացած մանրանկարներն ունեն հետեւեալ յաջորդականութիւնը՝ «Կամարն յերկնային եւ հող»[27], «Ծառ, տունկ, աղբիւր եւ գետք», «Արեգակ», «Լուսին», «Թռչունք եւ անասունք ծովու եւ ցամաքի», «Ադամ եւ Եւայ», «Զարդք աշխարհիս» եւ «Արտաքսումն ի դրախտէն»[28]:

Այսպիսով, «Արարչագործութիւն» թեմայի նախընթացը հայկական մանրանկարչութեան մէջ ներկայացուած է չորս պատկերագրական տարբերակներով: Սակայն միայն Առաքել Գեղամեցու մանրանկարներն են, որ շարքի ամբողջականութեան եւ պատկերները էջով մէկ ներկայացնելու տեսանկիւնից առաւել մօտ են Զաքարիա Աւանցու ստեղծագործութեանը[29]:

Այժմ տեսնենք, թէ ինչպիսին են «Արարչագործութիւն» շարքի մանրանկարները Զաքարիա Աւանցու ձեռագրերում: Շարքի յօրինուածքային ընդհանուր սկզբունքը հետեւեալն է. արարչագործութեան եօթ օրերի մանրանկարները Զաքարիան պատկերել է խորանատիպ ու խիստ ճաւորուած մանրանկարչական կառոյցների մէջ, որոնց տարբեր ուղղութիւններով միահիւս զարդագօտիները սահմանազատում են պատկերները՝ նկարազարդուող թերթի ընդհանուր մակերեսից եւ ստեղծում մանրանկարների ոչ միայն արտաքին, այլեւ ներքին շրջանակը: Արժանայիշատակ է, որ այդ մանրանկարների թէ՛ ընդհանուր յօրինուածքը, թէ՛ զարդագօտիների գեղարուեստական յարդարանքը ոչ մի ձեռագրում նոյնութեամբ չեն կրկնւում: Զաքարիայի վրձնած այդ իւրօրինակ խորանները վերից վար ունեն երկմաս, իսկ երբեմն էլ՝ եռամաս բաժանում: Դրանց վերնամասը աստուածութեան ոլորտն է, իսկ ստորինը՝ բուն արարչագործութեան: Արտաքինից այդ խորանները վերնամասում երիզւում եւ աւարտւում են գմբէթակիր խոյականման ելուստներով, խաչերով, երկրաչափական զարդագօտիներով եւ այլ զանազանակերպ զարդապատկերներով: Խորանների յարդարման այս ձեւից առանձնանում է միայն արարչագործութեան երրդ օրը ներկայացնող պատկերը, որտեղ յօրինուածքի վերնամասը իւրատեսակ կամար կազմելով՝ զբաղեցնում է հրեշտակների դասը:

Բոլոր մանրանկարներում կենտրոնականը Աստծոյ պատկերն է, ում Զաքարիան ներկայացնում է Յիսուս Քրիստոսի կերպարանքով: Այս շարքի գրեթէ բոլոր մանրանկարներում Զաքարիան նրան պատկերել է անմօրուք պատանու տեսքով (Քրիստոս Էմմանուէլ), բացառութեամբ Աստծոյ հանգստի օրուայ եւ Եւայի ստեղծման պատկերների: Զաքարիան Քրիստոսին ներկայացնում է շապիկով, թիկնոցով, երկար

մազերով եւ խաչազարդ, ոսկէ լուսապսակով[30]։ Ցիսուսը պատկերուած է ծալապատիկ նստած կամ կիսանդրի։ Նա ձեռքի տիրական շարժումով օրհնում է իր ստեղծագործութիւնը։

«Արարչագործութիւն» չարքի մանրանկարների յօրինուածքի առանձնահատկութիւնն այն է, որ ամեն մանրանկարում ներկայացուած է ոչ թէ մի, այլ մի քանի տեսարան։ Արարչագործութեան առաջին երեք օրերի տեսարանները ոճաւորուած են եւ արտայայտուած են զարդապատկերների տեսքով։ Ակնյայտ է, որ Զաքարիան իր ստեղծագործութիւններում մեծ դեր է յատկացնում զարդապատկերին։ Այս գեղարուեստական եւ խորհրդաբանական սկզբունքն արդարացուած է յատկապէս արարչագործութեան մանրանկարներում։ Պատճառն այն է, որ անհնար է բացայայտ առարկայօրէն պատկերել անարտայայտելին, այն, ինչ վեր է մարդկային պատկերացումներից, որը տուեալ պարագայում աստուածային արարումն է։ Եւ Զաքարիան դիմում է զարդի, զարդանկարչութեան, խորհրդապատկերի եւ խորհրդաբանութեան միջոցին[31]։ Մի փոքր այլ է յաջորդ երեք մանրանկարների՝ «Արեգակն ու լուսինը», «Ջրային կենդանիներն ու թռչունները», «Ցամաքային կենդանիների ու Ադամի ստեղծումը» պատկերների պարագան։ Պահպանելով վերը նշուած սկզբունքը՝ Զաքարիան միաժամանակ աւելի առարկայական է դարձնում յօրինուածքը, փորձելով տեսարանի մտաւոր հայեցողութեանը զուգահեռ տալ նաեւ դրա զգայական-տեսողական ընկալման հնարաւորութիւնը։ Այսպէս. Լուսինն ու Արեգակը պատկերուած են դէմ-յանդիման եւ իրարից բաժանուած են ալիքաձեւ գօտիներով, որոնց կենտրոնում նկարիչը զարդանշան է տեղադրել։ Լուսինը մարդադէմ է, միաժամանակ յստակ ուրուագծւում է երկնային լուսատուի ոսկէ մահիկը, իսկ արեգակի ճաճանչազարդ կիսագնդի մէջ Զաքարիան պատկերել է բազմաթիւ մարդկային դէմքեր։ Եւ՛ լուսինը, եւ՛ արեգակը ներկայացուած են իրենց հարազատ միջավայրում՝ աստղազարդ խորքի վրայ։

Ջրային կենդանիների ու թռչունների արարման մանրանկարում (նկ. 1) Զաքարիան երկու ալիքաձեւ գօտիներով եռամաս սահմանազատել է ջուրը, օդը եւ հողը ներկայացնող պատկերատարածքները՝ համապատասխանաբար պատկերելով ջրային աշխարհի ներկայացուցիչ հսկայ մի ձուկ, կենտրոնական պատկերադաշտում՝ մի մեծ թեւատարած թռչուն եւ ջրակողմում՝ ցամաքային թռչուններ, հիմնականում սիրամարգեր։

Ադամի ու ցամաքային կենդանիների արարման մանրանկարում, իր պատկերագրական լուծումով չատ հետաքրքիր է Ադամի ստեղծման դրուագը։ Մարդու արարումը նկարիչը առանձնացրել է ընդհանուր արարչագործութիւնը ներկայացնող պատկերադաշտից՝ մանրանկարի ստորին հատուածից եւ տեղափոխել վերին պատկերադաշտ՝ աստուածութեան բնակատեղի։ Դրանով Զաքարիան ընդգծել է Ադամի՝ մարդու, նախապատիւ ու գերակայ դերը ողջ արարածի նկատմամբ։

Ադամը պատկերուած է կիսանդրի, մերկ, երկնային հատուածի մէջ, Արարչի աջ կողմում։ Մանրանկարների այս շարքի խորհրդաբանութեան տեսանկիւնից շատ կարեւոր է հատուածի կիրառումը Զաքարիայի կողմից։ Հատուածը, որ Աստծոյ անմատոյց լոյսի խորհրդանիշն է, միակը չէ «Արարչագործութիւն» շարքի մանրանկարներում։ Արարչագործութեան առաջին օրուայ եւ «Մեղսագործութիւն» պատկերներում Արարիչը՝ Յիսուս Քրիստոսը, նոյնպէս նստած է հատուածի մէջ։ Ակնյայտ է, որ Զաքարիան ակնարկում է առաջին եւ երկրորդ արարչագործութիւններին (աշխարհի արարում եւ աշխարհի փրկագործում), պատկերի լեզուով ճօնում է Փրկչին եւ Նրա փրկագործութեանը։ Այն առաքելութիւնը, որին կանչուած էր Ադամը մեղսագործութեան պատճառով մնում է անկատար։ Ադամը ստեղծուել էր, որպէսզի թագաւորէր մնացած ողջ արարածի վրայ եւ աստուածացնէր այն։

Առաքելութիւնը իրագործում է Նոր Ադամը՝ Աստծոյ Որդին, Յիսուս Քրիստոսը, ով իր տնօրինական գործերով ու քաւչարար մահով փրկում ու մաքրագործում է ողջ արարչագործութիւնը։ Երկրորդ արարչագործութիւնը մի ժամանակային, պատմական ու վերպատմական ընթացք է, որը նախախնամութեան կամքով աւարտուելու է աստուածային փառքի յայտնութեամբ։ Եւ փրկագործութեան թեման է, որ սկզբից մինչեւ վերջ արծարծուում է Զաքարիա Աւանցու մանրանկարներում։ Փրկչի ու փրկաբանութեան գաղափարը ընդգծելու համար նա օգտագործում է թէ՛ առանձին պատկերները, թէ՛ խորհրդանշաններն ու պատկերագրական մանրամասները եւ թէ՛ բացատրագրերը։

Արդէն նշել ենք, որ արարչագործութեան չորրորդ օրուայ մանրանկարում Զաքարիան արեգակի մէջ պատկերել է մարդկային բազմաթիւ դէմքեր։ Արեգակի գործառոյթը միայն արարածին լոյս ու ջերմութիւն տալը չէ, քանի որ այս մանրանկարում այն ունի նաեւ հոգեւոր նշանակութիւն եւ խորհրդանշում է Յիսուսին՝ Արդար Արեգակին[32]։ Եւ արեգակի մէջ պատկերուածները, ըստ Աւետարանի խօսքի, հենց այդ արդարներն են, որոնք փրկուել են Յիսուսի արեամբ[33]։

Հինգերորդ օրուայ մանրանկարում փրկաբանութեան թեման ներկայացուած է շատ աւելի ակնառու։ Սակայն մանրանկարի ծածուկ իմաստը բացայայտւում է Զաքարիա Աւանցու թողած բացատրագրի շնորհիւ։ Յիշեցնենք, որ խնդրոյ առարկայ մանրանկարում Զաքարիան պատկերել է մի մեծ ձուկ եւ մի մեծ թեւաւորած թռչուն։ Առաջին հայեացքից տպաւորութիւն է ստեղծւում, որ նկարիչը պատկերազարդել է ըստ Աստուածաշունչի՝ ձեռքի տակ ունենալով Մննդոց գրքի համապատասխան հատուածը[34]։ Սակայն բացատրագիրը այլ բան է ասում. «Հոչուն (թռչուն - Ա.Ա.) քեւօ[ո]րք (թեւաւորք - Ա.Ա.) եւ ձուկն Լեւիաթան, եւ հօն (հաւն - Ա.Ա.) կայտառ որ ասի Արմատ։ Եւ Հայրն Ա[ստուա]ծն ի վ[ե]ր[այ] անպատում աթոռոյ, եւ հր[ե]շտ[ակ]ք գոյանային ի

լուսոյ եւ փառս տալին Ա[ստուծո]յ»։ *Աստուածաշնչեան «Մննդոց» գրքի արարչագործութեանը վերաբերող բնագրում խօսք չկայ ո՛չ Լեւիաթանի, ո՛չ էլ Արմաւի մասին։ Աստուածաշնչում Լեւիաթանի մասին յիշատակւում է մասնաւորապէս Ցոբի գրքում*[35]*, Դաւթի սաղմոսներում*[36] *եւ այլ տեղերում։ Լեւիաթանը (երրայերէնից թարգմանած նշանակում է ահռելի վիշապ), ըստ սուրբգրային բնագրերի, Աստծոյ արարածն է, սակայն առանձնայատուկ ու տարբեր բոլոր մնացածներից։ Նա ահռելի ու սարսափազդու է, անխոցելի է զէնքերից, ջրային տարերքը նրա բնակատեղին է։ Լեւիաթանը ծովերի թագաւորն է։*

Այս աներեւակայելի արարածի էութիւնը հասկանալուն օգնում է մեկնողական գրականութիւնը։ Ս. Գրիգոր Տաթեւացին այս հրէշին ներկայացնում է որպէս օրինակ իմանալի վիշապի, այսինքն՝ սատանայի[37]*։ Իսկ Դաւթի սաղմոսների մեկնիչներն աւելի են ամբողջացնում Լեւիաթանի պատկերը։ Մասնաւորապէս 73րդ սաղմոսը մեկնաբանելիս՝* «Դու քո զօրութեամբ ծովը հաստատեցիր, եւ վիշապների գլուխը խորտակեցիր ջրերում։ Դու վիշապի գլուխը փշրեցիր եւ որպէս կերակուր տուիր հնդիկների զօրքերին», *տրւում է հետեւեալ բացատրութիւնը։ Ծով-ջուրը մեղսագործ աշխարհի խորհրդանիշն է, Լեւիաթան-վիշապը՝ սատանայի, իսկ հնդկաց զօրքը սատանայի արբանեակների՝ դեւերի, որոնց պարտութեան է մատնում Յիսուս Քրիստոսը*[38]*։*

Սակայն որտե՞ղ է մեր պատկերում Յիսուս Քրիստոսը։ Նրան խորհրդանշում է Արմաւ թռչունը։ Արմաւ-Փիւնիկի[39]*՝ մեռնող ու յարութիւն առնող թռչունի պատմութիւնը յայտնի է մարդկութեանը անյիշելի ժամանակներից եւ բնական է, որ քրիստոնէական ժամանակներում արուեստում եւ գրականութեան մէջ այն պէտք է դառնար Քրիստոսի խորհրդանշան-օրինակը։ Եթէ մինչքրիստոնէական արուեստում Փիւնիկը յաւիտենութեան խորհրդանիշն էր, ապա քրիստոնէականում դարձաւ նշանակը յարութեան*[40]*։*

Փիւնիկը քրիստոնէական արուեստում պատկերւում է առաւելապէս արծուի տեսքով։ Նրա երանգներն էին ոսկեգոյնն ու կրակագոյնը։ Այդպիսին է նաեւ Զաքարիա Աւանցու Փիւնիկը[41]*։ Նա թեւատարած դիմաւորում է Լեւիաթան-վիշապին ու պաշտպանում արարածին*[42]*։*

Փրկագործութեան թեման շարունակւում է նաեւ յաջորդ մանրանկարներում, Հայր Աստծոյ հանգստեան պատկերում։ Աստուած ներկայացուած է չորեքկերպեան աթոռին՝ յար եւ նման Յիսուս Քրիստոսի երկրորդ գալստեան պատկերագրական ընդունուած կերպին։ Այս մանրանկարից յետոյ նկարիչը պատկերում է «Եզեկիէլի տեսիլքը» (նկ. 2)։ *Մենք արդէն նշել էինք, որ այս մանրանկարը կարծես խախտում է ողջ շարքի ներքին տրամաբանութիւնը, քանի որ այն որեւէ առնչութիւն չունի «Մննդոց» գրքի հետ։ Սակայն այս մանրանկարն իր բովանդա-*

կութեամբ անմիջականօրէն առնչւում է փրկագործութեան աստուածաբանութեան եւ խորհրդի հետ:

«Եզեկիէլի տեսիլքը» մանրանկարը հայերէն ձեռագիր Աստուածաշունչերում պատկերւում է ԺԳ. դարից[43], իսկ Ամեսարաններում առաջին անգամ հանդիպում է ԺԵ. դարում: Այդ առաջնեակ պատկերը պատկանում է Մինաս Մաղկողին եւ գտեղուած է 1455ին նրա նկարազարդած Ամեսարանում[44]:

Ցայտնի է, որ Աստուածաշունչ Մատեանում Եզեկիէլի մարգարէական գիրքը ամենախորհրդաւորներից է: Եզեկիէլի տեսիլքներն այնքան խրթին են մարդկային հասկացողութեան համար, որ հնում հրեաները նոյնիսկ արգելում էին ընթերցել այն երեսունը չբոլորած անձանց[45]: Սակայն քրիստոնեայ աստուածաբանները, մեկնաբանելով քոքարական տեսիլքը[46], հակուած են այն մտքին, որ դրանում արտայայտուած է Աստծոյ Փառքի յայտնութեան, չորս աւետարանիչների եւ ողջ աշխարհում Քրիստոսի թագաւորութեան տարածման կանխատեսումը[47]:

Իսկ Զաքարիան իր մանրանկարում տեսնում է հենց Ցիսուս Քրիստոսին, որ բազմած է չորեքկերպեան աթոռին. «Տեսիլն Եզեկիէլի զոր ետես ի գետն Քոբար. զանիւն եւ զխորհուրդ չորէք կերպ[եա]ն աթոռոյ. եւ Ք[րիստո]ս ի վ[ե]ր[այ] ն[ո]ր[ա] բազմեալ»: Նա Եզեկիէլին պատկերում է վաստուրականում ընդունուած պատկերագրութեան համաձայն:

Շարքի յաջորդ երկու մանրանկարները ներկայացնում են նախաստեղծների՝ Ադամի ու Եւայի պատմութիւնը:

Եւայի արարման եւ մեղսագործութեան պատկերների յօրինուածքը գրեթէ նոյնն է: Արժանայիշատակը առաջին մանրանկարում՝ դրախտը ոռոգող գետերն են: Զաքարիան գետերը պատկերել է չրջանակից դուրս: Գեհոնը, Փիսոնը, Եփրատն ու Տիգրիսը կարծես դուրս են յորդում պատկերի չրջանակից դէպի թերթի արտաքին մակերես: Սա ոչ միայն կոտրում է մանրանկարի անչարժութիւնը, այլեւ խորհրդաբանօրէն ազդարարում է գալիք իրադարձութիւնների սկիզբը, դրանց փրկարանական բնոյթը: Չորս գետերը չորս աւետարանների նչանակներն են: Ցիսուս Քրիստոս, աւետարանիչներ եւ աւետարաններ, այս խորհրդաբանութեամբ էլ իրար են կապւում «Եզեկիէլի տեսիլք» եւ «Եւայի արարում» մանրանկարները:

«Մեղսագործութիւն» մանրանկարում փրկագործութեան թեման հասնում է իր կիզակէտին: Եւան ու Ադամը կանգնած են դէմ-յանդիման չարի ու բարու գիտութեան ծառի աջ ու ձախ կողմերում: Եւան արդէն մերկ է, քանի որ պատուիրանազանց է եղել, իսկ Ադամը պատկերուած է լուսապսակով ու հանդերձներով, նա դեռ չի ճաչակել արգելուած պտուղը: Զաքարիան այս մանրանկարում միատեղել է նախատեղծների մասին աստուածաչնչական պատմութեան մի քանի

դրուագ, որոնք ժամանակագրօրէն հետեւում են իրար։ Թեւաւոր օձը (բանասարկուն) արտաքինից (այսինքն՝ պատկերի շրջանակից դուրս գտնուող նկարադաշտից) ներթափանցել է դրախտ եւ շշնջում է Եւայի ունկին իր թունալից ու կործանարար խօսքերը[48], Եւան արդէն ճաշակել է պտուղն ու առաջարկում է այն Ադամին[49], Յիսուս Էմմանուէլը (Փրկիչը), որին Զաքարիան պատկերել է յօրինուածքի վերնամասում երկնային հատուածի մէջ, աջը ուղղել է դէպի Ադամը[50]։

Այս տեսարանից յետոյ Զաքարիա Աւանցին շարունակելով ու զարգացնելով փրկաբանական թեմայի բացայայտումը՝ մանրանկարչական անցում է կատարում դէպի Նոր Կտակարան։

Նոր շարքը սկսւում է «Աւետում» պատկերով։ Այստեղ առաջնային է Փրկչի աշխարհ գալու աւետիսը, որ տալիս է Գաբրիէլ հրեշտակը Մարիամին։ Գաղափարական կառոյցը, որ օգտագործել է Զաքարիան, շատ յստակ է։ Հրեշտակի բերած լուրը, որ Մարիամը (երկրորդ Եւան) պիտի դառնայ Փրկչի մայրը, մարգարէացուած է «Մննդոց» գրքում, որպէս Աստծոյ խոստում մարդուն։ Մեղսագործ Ադամին Աստծոյ ուղղած «Ո՞վ ես» հարցադրումը բարոյաբանական բնոյթի է եւ նպատակ ունի ի պատասխան լսելու Ադամի զղջումը։ Սակայն սխալը ընդունելու փոխարէն Ադամը մեղադրում է Եւային, իսկ Եւան իր հերթին մեղադրում է օձին[51]։

Պատուիրանազանց մարդիկ եւ բանսարկու օձը (սատանայ) Աստծուն անհնազանդ լինելու պատճառով դատապարտւում են, սակայն օձի դատավճիռը արձակելիս Աստուած միաժամանակ փրկութեան յոյս է տալիս Ադամին ու Եւային։ Դիմելով օձին՝ Նա ասում է. «...Եղից թշնամութիւն ի մէջ քո եւ ի մէջ կնոջդ, եւ ի մէջ զաւակի դորա. նա խորտակեսցէ զգլուխ քո, եւ դու խորտակեսցես զգարշապար նորա...»[52]։

Եկեղեցու շատ հայրեր, քննելով Աստուածաշունչը, եկել են այն եզրակացութեան, որ այս մարգարէութիւնը ուղղուած է Երկրորդ Եւային՝ Սուրբ Կոյս Մարիամին, ով ծառայեց փրկագործութեանը՝ աշխարհ բերելով մարդեղացած Փրկչին։ Առաջին Ադամի կինը պատճառ դարձաւ անկման, իսկ Երկրորդ Ադամի Մայրը դարձաւ փրկագործութեան գործիք[53]։ Աստուած խոստանում է Փրկիչ եւ կատարում է խոստումը։

Նոր կտակարանեան մանրանկարներն ընդհանրապէս պատկերագրում են աստուածային խոստումի կատարման պատմութիւնը։ Բայց Զաքարիա Աւանցու պատկերներում այդ թեման աւելի առարկայօրէն է արտայայտուած, յատկապէս «Մկրտութիւն» եւ «Խաչելութիւն» մանրանկարներում։ Առաջինում Յիսուսը ջախջախում է օձի գլուխը։ Նա պատկերուած է կանգնած անմիջապէս անդնդային վիշապի գլխին։ Երկրորդում ընդգծուած է փրկագործութեան կերպը՝ Յիսուս Քրիստոսի զոհաբերական մահը՝ որպէս միակ միջոց փրկագործութեան։ Զա-

քարիան ընտրել է «Խաչելութիւն» տեսարանի այն տարբերակը, որտեղ խաչափայտից վեր պատկերում է հաւալուան թռչունը՝ Ցիսուսի արեամբ փրկուած հանրութեան՝ Եկեղեցու խորհրդանիշը[54]։

Ամփոփենք։ Զաքարիա Աւանցու հին կտակարանեան չարքի մանրանկարները իւրատեսակ նախադուռ են դէպի Աւետարան եւ պատկերագրօրէն նախապատրաստում ու օգնում են ընթերցողին աւելի դիւրին դարձնելու աւետարանական բնագրի ընկալումը՝ ուշադրութիւն հրաւիրելով սուրբգրային առաւել կարեւոր ու վճռորոշ իրադարձութիւնների վրայ։ Իսկ Զաքարիայի ստեղծած մանրանկարների ամբողջական չարքը գեղարուեստական արտայայտչականութեան ու աստուածաբանական ենթախորքի մեկնաբանման միաճոյլ եւ կուռ համակարգ է, որում միաբանուած աստուածաշնչեան կերպարներն ու թեմաները միաւորուած են մէկ առանցքի շուրջ, որը Ցիսուս Քրիստոսն է՝ Փրկիչը եւ նրա փրկագործութիւնը[55]։ Եւ այդ գաղափարն այս մանրանկարներում արտայայտուած է ոչ միայն ընդհանուր պատկերագրութեան, այլեւ յօրինուածքների մանրամասների մէջ, առանձին խորհրդապատկերներով ու խորհրդանշաններով, որոնց միջոցով էլ բացայայտւում է պատկերագրական չարքի գլխաւոր միտքը, եւ առաջին հայեացքից անկախ ու ինքնաբաւ թուացող պատկերները միաբերան վկայում են Փրկչի ու փրկագործութեան մասին։

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Վասպուրականցի այս մանրանկարիչը ստեղծագործել է 1432-1483ի ընթացքում։ Եղել է Մեծոփավանքի սան, աշակերտել է Թովմա Մեծոփեցուն։ Նա ձեռագրեր է նկարազարդել Արճէշում, Վանում, Արծկէում, Մեծոփավանքում, Արգելանի Վանքում, Սոխարավանքում, Կտուց եւ Լիմ անապատներում եւն.։

[2] Այդ նորամուծութիւնների արդիւնքում փոխւում էր ոչ միայն մանրանկարի պատկերագրութիւնը, այլեւ յօրինուածքների տեսարանների կազմն ու գեղարուեստական մեկնաբանութիւնը։

[3] Զաքարիա Աւանցու կեանքի եւ ստեղծագործութեան մասին տե՛ս՝ Մեսրոպ Արք. Տէր-Մովսիսեան (Մագիստրոս), «Զաքարիա Նկարչի Ձեռագիրը եւ Դաւիթ Բէկի Մասին Ցիշատակարան», *Բանբեր Հայաստանի Գիտական Հնաստիտուտի*, գիրք Ա. եւ Բ., Վաղարշապատ, Լուսաժողկոմատի տպարան, 1921-1922, էջ 127-137. Նաեւ՝ Հրաւարդ Ցակոբեան, *Հայկական Մանրանկարչութիւն, Վասպուրական*, Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1978, էջ 247. Նաեւ՝ Նորայր Արք. Ծովական (Պողարեան), *Հայ Նկարողներ (ԺԱ.-ԺԷ. դար)*, Երուսաղէմ, 1989, էջ 171-174. Նաեւ՝ Աւետ Աւետիսեան, «Զաքարիա Երէց Աւանցու Ձեռագրական Ժառանգութիւնը», *Էջմիածին*, 1998, Զ., էջ 90-98. Նոյնի՝ «Ցննդոց» Պատկերաշարը Զաքարիա Աւանցու Ձեռագրերում (16-17 դդ.)», *Աստուածաշնչական Հայաստան*, Երեւան, Նոյեան Տապան Հրատ., 2005, էջ 708-714. Նոյնի՝ «Միջնադարեան Խորհրդապատկերներ. Լեւիաթան Ձուկն Ու Արմաւ (Փիւնիկ) Թռչունը», *Հայ Արուեստ, Հատ. 3, «Մոմիկ» Հայ Մշակոյթի Կենտրոնի Հրատ.*, 2005, էջ 34-36։

[4] Նորայր Արք. Պողարեանը ենթադրում է, որ Զաքարիան ծնուել է 1555ին (*Հայ Նկարողներ (ԺԱ.-ԺԷ. դար)*, էջ 171)։

[5] «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի Գիտահետազոտական Ինստիտուտ (այսուհետեւ՝ ՄՄ), ձեռագրեր թիւ 5507, 6503։

[6] Զաքարիա Աւանցու մահուան թուականը ճշտուում է նրա աշակերտներից մէկի՝ Յովհաննէս Սարկաւագի թողած յիշատակարանի շնորհիւ (*Յուցակ Հայերէն Ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ Վանքի, Հատ. Ա.*, կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, Մխիթարեան Տպ., 1970, էջ 126-127)։

[7] ՄՄ 5507, 6503, 5794, 2804, 10220, 4101, 7755, 4838, 5345, 4981։ Այս վերջինը յայտնաբերել ենք շնորհիւ արուեստաբան Աստղիկ Գէորգեանի Անանուն Հայ Մանրանկարիչներ. Մատենագիտութիւն 9-17 դդ. աշխատութեան, Գահիրէ, «Մաթենիկ Զագրը» Հիմնադրամի Հրատարակչական Ճանճախումբ, 2005, էջ 422։

[8] Այս ձեռագրի մանրանկարները, անկասկած, պատկանում են Զաքարիա Աւանցուն, սակայն իրենց ոճով ու պատկերագրութեամբ էապէս տարբեր են նոյն թուականին ստեղծուած թիւ 6503 ձեռագրի մանրանկարներից։ Հաւանաբար Զաքարիան այդ ձեռագրերն ընդօրինակելիս օգտագործել է երկու տարբեր գաղափար օրինակներ, կամ էլ 6503 ձեռագրի մանրանկարները պատկանում են նրա նկարչական գործունէութեան վաղ շրջանին եւ 1595ին Զաքարիան հրաժարւում է այդ պատկերագրութիւնից ու ոճից եւ սկսում ստեղծագործել նորովի։

[9] Ձեռագրի նկարազարդմանը, որն, ըստ յիշատակարանի, «գրեցաւ եւ աւարտեցաւ» Առինջում (252 բ), գործուն մասնակցութիւն է ունեցել Զաքարիայի աշակերտներից Մարտիրոս Արեղան։ Աւետարանի մանրանկարների պատկերագրութիւնն ու ոճը թէեւ լիովին հետեւում են Զաքարիայի արուեստին, սակայն ակնյայտօրէն զգացւում է անվարժ ձեռքի միջամտութիւնը։

[10] Ձեռագիր մատեանի նկարազարդման այդ առանձնայատկութիւնը վաստուրականում է յայտ է գալիս ԺԹ. դարից (Հ. Յակոբեան, *Ձեռագիր Մատեանների Պատկերազարդման Արուեստը Վաստուրականում*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 1997, էջ 9)։

[11] ՄՄ 6503, 1ա, 2ա։ Այս Աւետարանում ուրիշ թեմատիկ պատկերներ չկան։ Մնացել է արարչագործութեան շարքի միայն երկու մանրանկար։

[12] Մանրանկարները բացատրագրերով օժտելը շատ բնորոշ է յատկապէս վաստուրականցի վարպետներին։ Սա ոչ միայն օգնում է պատկերը ճիշտ հասկանալուն, այլեւ երբեմն այդ գրութիւններն ունեն աստուածաբանական, դաւանաբանական ու ծիսական բովանդակութիւն։

Մենդոց եւ դրան յաջորդ մանրանկարների բացատրագրերը տալիս ենք ըստ 2804 ձեռագրի։ Թէեւ միւս երեք ձեռագրում բացատրագրերը մի փոքր այլ ձեւակերպումներ ունեն, սակայն չեն խաթարում բուն ասելիքը։

[13] «Վերջին դատաստանն» տեսարանում Զաքարիա Աւանցին գրեթէ միշտ պատկերում է պատուիրատուին։ Նկարիչը գրութեամբ ծանուցում է պատուիրատուի ով լինելը, պատկերի տակ թողնում է նաեւ սեփական գաղտնագիր յիշատակագիրն ու դրա վերծանութիւնը։ Բնականաբար այդ գրութիւնները վերաբերում են պատուիրատուի եւ նկարչի մեղքերի թողութեանը։ Այսպէս. «Ջստացող Ս[ուր]բ աւետար[ա]նիս գ'Դ-օիթն ոյուն ոյ ունի ի ձեռին եւ խնդրէ զթ[ող]ութի[ւն] մեղ[ա]ց իւրոց» եւ «Ջմեղապարտ Զաքար[ի]այ նկարողս մի բերան յիշեայ եւ Ա[ստուա]ծ զքեզ յիշեայ. ամէն», ձեռ. 2804 (22բ)։ Սակայն Աւետարանի յիշատակարաններից (104ա, 265բ) պարզ է դառնում, որ ձեռագրի իրական ստացողը չուռթիցի կին Շահալամն է իսկ Դաւիթը նրա որդին է։ Հաւանաբար Դաւիթը մահացել է, եւ մայրը այդպիսով յաւերժացրել է նրա յիշատակը։

[14] Աւետարան 1483 թ., ՄՄ 6879, Աւետարան ԺԵ. դար, ՄՄ 5519։

[15] Աւետարան 1475 թ., ՄՄ 5013, 1բ, Աւետարան 1483 թ., ՄՄ 6879, 3բ։

[16] «Էջմիածնի Աւետարան», 989 թ., ՄՄ 2374, 8ա։

[17] «Վազգէն Կաթողիկոսի Աւետարան», ժ.-ժԱ. դար, ՄՄ. 10780, 5բ։

[18] Դրանցից առաւել յայտնին Հեթում Բ-ի Ճաչոցն է. 1286 թ., ՄՄ. 979։

[19] Ցամենայնդէպս, աւելի վաղ չրջանի նմուշներ մեզ յայտնի չեն։

[20] 1317 թ., ՄՄ. 353, 8ա։

[21] Արարչագործութեան օրերի պատկերումը անուանաթերթի գլխատառի մէջ, ըստ Սիրարփի Տէր-Ներսէսեանի, յատուկ է արեւմտեան պատկերագրութեանը։ Մասնաւորապէս յատիճական Աստուածաշունչերում ընդունուած էր այդ կարգը (Sirarpie Der Nersessian, *L'Art Armenien des Origines au XVII Siècle*, Paris, Arts et Métiers Graphiques, Flammarion, 1977, էջ 224)։

[22] 1367-1371 թթ., ՄՄ. 352, 3բ։

[23] «Արարչագործութիւն» շարքի պատկերագրական այս տարբերակը թեման ներկայացնում է նախորդից տարբեր ու աւելի ամբողջական։

[24] Աւետարանը (ՄՄ. 6503) նկարազարդուել է Հերմոնի վանքում 1340ից առաջ (Աստղիկ Գէորգեան, «Վայոց Ձորի Մանրանկարները 14-15րդ դդ.», *Էջմիածին*, 2000, Ա., էջ 142-155. նաեւ՝ նոյնի *Վայոց Ձորի եւ Որոտանի Մանրանկարչութիւնը 13-17-րդ դդ.*, Երեւան «Զանգակ 97» Հրատ., 2003, էջ 37-66. նաեւ նոյնի՝ *Անանուն Հայ Մանրանկարիչներ. Մատենագիտութիւն 9-17րդ դդ.*, էջ 160. նաեւ՝ *Հայկական Մանրանկարչութիւն. Գրիգոր Տաթեւացի եւ Անանուն Միւնեցի*, կազմեց, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները գրեց Ալվիդա Մէլքոյեանը, Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1987)։

[25] ՄՄ. 6503 11ա, 12ա, 13բ, 14ա։

[26] ՄՄ. 10805։

[27] Մանրանկարների անուանումները տալիս ենք ըստ Առաքել Գեղամեցու բացատրագրերի։

[28] ՄՄ. 10805, 1բ, 2բ, 3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա։ Ձեռագրի 10բ եւ 11ա թերթերին «Գուշակումն մարգարէից» եւ «Մարիամ, Քրիստոս եւ մարգարէք» մանրանկարներն են, որոնք խորհրդաբանօրէն առնչւում են «Արարչագործութիւն» թեմային։

[29] 1601ին Առաքել Գեղամեցին նկարազարդել է նաև մէկ Աւետարան (ՄՄ. 7634), որն ունի «Արարչագործութիւն» թեմայի պատկերներ. «Արարչութե[ան] առաջի կիրակէի զոր արար Ա[ստուա]ծ ի դաս հրեղինաց որ տան փառաբանութ[իւն] Ա[ստուծո]յ» 1բ, «Արարչութե[ան] երկու շաբաթի. Ջուրն ու հողն մէկ մէկէ բաժանեաց» 2ա, «Արարչութե[ան] երեք շաբաթի» 3բ, «Արարչութե[ան] չորեք շաբաթի. Արեգակն եւ լուսինն ստեղծ» 4ա, *սրան հետեւող մանրանկարը բացատրագիր չունի, սակայն ըստ հերթականութեան պէտք է, որ ներկայացնի հինգերորդ օրը «Հինգ շաբաթին»* 5բ, «Ուրբաթ աւուրն Ադամ ստեղծ եւ Եւայ ի կողէն քաշեց» 6ա, «Դրախտն Ադամայ. Ա[ստուա]ծ եկեալ տեսութե[ան] Ադամայ եւ պատուիրէր չուտել պտղոյն» 7բ, «Ա[ստուա]ծ եկեալ եւ ասէ Ադամ եւ Ադամ թաքեալ ի տերեւս թզենոյ վ[ա]ս[ն] մերկութե[ան]» 8ա, «Այսէ զարդ աշխարհիս» 9բ։

[30] *Փաստօրէն Զաքարիա Աւանցին Հայր Աստծուն՝ Արարչին, նոյնացնում է Յիսուսի՝ Աստուածորդու հետ։ Մանրանկարիչն այդպիսով հետեւում է հնադարեան մի կանոնի։ Աստծոյ նմանատիպ պատկերումն ընդունուած եւ կանոնացուած պատկերագրական ձեւ էր միջնադարեան արուեստում։ Դա բացատրւում է նրանով, որ Հայր Աստուած աննկարագրելի է իր էութեամբ, եւ միջնադարեան արուեստագէտները Նրան պատկերում էին կամ Յիսուսի՝ մարդացեալ Աստծոյ նմանողութեամբ կամ էլ զուտ խորհրդանշօրէն։*

[31] *Զարդը եւ գարդարուեստը նուիրական իմաստ ու դերակատարութիւն ունեն քրիստոնէական արուեստում։ Զարդն է, որ խորհրդաբանում է աստուածայինի եւ երկնային էութիւնների մասին։*

[32] Տե՛ս «Երգ Աղօթական Տեառն Ներսիսի Շնորհալւոյ Հայոց Կաթուղիկոսի՝ Ի Դէմս Սրբոյ Երրորդութեանն...», *Ժամագիրք Հայաստանեայց Մ. Եկեղեցւոյ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին*, 2004, էջ 41։

[33] «Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն յարքայութեան երկնից», *Աւետարան ըստ Մատթէոսի* (ԺԳ, 43), *Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց Ըստ Ճշգրիտ Թարգմանութեան Նախնեաց Մերոց Համեմատութեամբ Երբայական եւ Յունական Բնագրաց*, Կոստանդնուպոլիս, Տպ. Գ. Պաղտատլեան, 1895։

[34] *Աստուածաշունչ Մատեան*, Գիրք Մննդոց, (Ա 20-23)։

[35] *Յովբ*, (Ա 20-28։

[36] *Սաղմոսաց* (ՀԳ/ՀԴ 14, ՃԳ/ՃԴ 27)։

[37] *Ս. Գրիգոր Տաթեւացի, Լուծմունք Յորայ*, ՄՄ. 1115, 110ա։

[38] *Տե՛ս՝ Մեկնութիւն Սաղմոսաց, Հար. Զ.*, Վենետիկ, 1819, էջ 82։

[39] *Արմաւի գրաբարեան նշանակութիւններից մէկը փիւնիկ թռչունն է (Հ. Գաբրիէլ Աւետիքեան, Հ. Յակոբոս Սիւրմէլեան, Հ. Մկրտիչ Աւգերեան, Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, Հար. Առաջին, Մ-Կ, Վենետիկ, Ս. Ղազար, 1836, էջ 369)։*

[40] N. B. Pokrovski, *Ocherki Pamyatnikov Khristianskogo Iskusstva I Ikonografii* (*Քրիստոնէական արուեստի եւ սրբանկարչութեան յուշարձանների ակնարկներ*), Սանկտ Պետերբուրգ, Ս. Սինոդի Հրատ., 1910, էջ 18։

[41] *Փիւնիկի մասին տե՛ս՝ Երանելւոյն Կիւրղի Երուսաղէմայ Հայրապետի Կոչումն Լեզուացն*, Վիեննա, 1832, էջ 404։

[42] *Ի դէպ, արարչագործութեան հինգերորդ օրուայ մանրանկարում Զաքարիան չատ նուրբ կերպով անդրադարձել է նաեւ չորս տարրերի խնդրին՝ պատկերելով Լեւիաթանին (ջուր), Փիւնիկին (օդ եւ հուր), ցամաքային թռչուններին՝ սիրամարգերին (հող)։*

[43] *Մանանաւորապէս՝ 1269ին նկարազարդուած Աստուածաշունչում, Երուսաղէմ, թիւ 1925։ Եզեկիէլի տեսիլքի հնագոյն պատկերը հայկական արուեստում Լմբատավանքի Ս.Ստեփանոս եկեղեցում գտնուող օրմնանկարն է (է. դար)։*

[44] *Սիրարփի Տէր-Ներսէսեանը գրում է, որ դա իրեն յայտնի առաջին օրինակն է հայերէն աւետարանների մէջ (Սիրարփի Տէր-Ներսէսեան, «Մինաս Նկարող եւ Իր Մագկած Նկարները», Միտք, 1951, Մայիս, էջ 146)։*

[45] *Bibleysko-Biograficheski Slovar* (*Աստուածաշնչային-կենսագրական բառարան*), Սանկտ Պետերբուրգ, Վասիլի Պոլիակովի Հրատ., 1849, էջ 13։

[46] *Տե՛ս՝ Եզեկիէլի մարգարէութեան Ա 1-28 հատուածը։*

[47] *Tolkovaya Bibliya Ili Kommentariy Na Vse Knigi Sv. Pisaniya Vetkhogo I Novogo Zaveta* (*Բացատրական Աստուածաշունչ կամ Հին եւ Նոր կտակարանների սուրբ գրոց բոլոր գրքերի մեկնաբանութիւններ*), Հար. 9, Սանկտ Պետերբուրգ, 1913, էջ 227. Նաեւ՝ *Mifi Narodov Mira*, (*Աշխարհի ժողովուրդների միֆոսներ*), Մոսկուա, «Սովետական Հանրագիտարան» Հրատ., 1980, Հ. 1, էջ 482.

[48] *Գիրք Մննդոց*, (Գ 1-5)։

[49] *Նոյն*, 6-7։

[50] *Սա ներկայացնում է այն դրուագը, երբ Աստուած կանչում է անկեալ Ադամին՝ «Ո՞ւր ես»։ Տե՛ս՝ Նոյն*, 9-10։

[51] *Նոյն*, 12-13։

[52] *Նոյն*, 15-16։

[53] *Տես՝ Tolkovaya. Հար.* 1, 1904, էջ 27։

[54] «Խաչափայտի գլխին, ուր ցուցանակն է լինում սովորաբար, թեւատարած հաւալուսինը կերակրում է իր ձագերին կրծքի արիւնով. եկեղեցու նշանակն է այդ...»

(Գարեգին Արք. Յովսէփեան, *Մի էջ Հայ Արուեստի եւ Մշակոյթի Պատմութիւնից*, Հալէպ, Տպագր. «Արաքս», Բ. Յ. Թօփալեան, 1930, էջ 47)։

[55] *Փրկութեան գաղափարի վրայ այսօրինակ կենտրոնացումը պատահականութիւն չէ։ Պէտք է պարզապէս յիշել, թէ ինչ ողբերգական իրավիճակում էին Հայաստանն ու հայերը Զաքարիա Աւանցու ապրած ժամանակաշրջանում։*

THE THEME OF REDEMPTION IN THE MINIATURE PAINTINGS OF ZAKARYA AVANTSI

(Summary)

AVET AVETISYAN
avetavetisyan@yahoo.com

The author analyses certain characteristics of Zakarya Avantsi's Matenadaran miniatures and assesses them based on the achievements of the miniature painters who preceded him. The author shows how Zakarya developed and improved such types of pictures in both structure and content.

Zakarya created his paintings in the late 16th and early 17th centuries, mostly in Vaspurakan and Persia. His art work counts 19 miniature *Avetarans* (gospels), 2 *Mashtots*, 1 *Aghotamadiyts*, and two pieces. A significant part of this heritage is preserved in Matenadaran, Yerevan. The 10 miniature and complete gospels give a full view of Zakarya's miniature art, verify his painting style, his way of constructing the miniature and coloring it. Besides, these miniatures enable the author to highlight the style and symbolic peculiarities of Zakarya's miniatures.

His sequence of miniature paintings starts with pictures inspired by the description of God's seven days of creation in the Book of Genesis. Eventually these Old Testament miniatures lead to Zakarya's gospel miniatures. However, Zakarya prioritized the concept of the redemption of Jesus. His preference becomes obvious through both a holistic view of his miniatures and the specific symbolism he used. This becomes more obvious in the miniature of the 5th day of creation, where the Leviathan (Satan) encounters the Phoenix (Jesus the saviour).

ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ՝ ՇԱՄԱԽԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅ ԿՐԹԱՐԱՆՆԵՐԻ ՎՐԱՅ (ԺԹ. ԴԱՐ)

ԳԷՈՐԳ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Շամախի քաղաքի հայութեան պատմութիւնը դարեր չարունակ գոյատեւած մի հարուստ ու ինքնատիպ հայկական ոստանի պատմութիւն է։

Տարիներ չարունակ աղրբեջանական պատմագրութիւնը (Զիա Բունիաթով[1], Ֆերիդա Մամեդովա[2], Հ. Ջիդդի[3] եւ շատ ուրիշներ) հետեւողականօրէն քօղարկել է Շամախի քաղաքում հնուց ի վեր, ինչպէս նաեւ՝ ԺԹ. դարում ստուարաթիւ հայութեան գոյութեան փաստը։ Միտումնաւոր կերպով լռութեան քօղով է պատուել, կամ էլ ծայրայեղ դէպքում խիստ նուազեցուել է այդ քաղաքի սոցիալ-տնտեսական, հասարակական, հոգեւոր-մշակութային կեանքում հայերի ունեցած ծանրակշիռ ներդրումը։

Պատմութեան մէջ բազմիցս յիշատակուող հինաւուրց Շամախի քաղաքը տարածուած է Կովկասեան լեռնապարի հարաւ-արեւելեան ճիւղերի ստորոտին, փոքրիկ բլրաշարի վրայ՝ փռուած Ս. Սահակ եւ Զագալաա գետակների խառնուելու տեղում։ Քաղաքին ամենամօտիկ լեռներն են դէպի հիւսիս-արեւմուտք ձգուող Ղզղարասին եւ Փեդրաքունը[4]. «Խոր ձորեր են Շամախու արեւելեան եւ արեւմտեան կողմերն։ Արեւմտեան ձորով հոսում է Մէյսարու վտակն եւ արեւելեան ձորով մի փոքրիկ առու։ Երկու ջրերս միանում են պարսից քաղի ստորոտում եւ խառնւում Փիր-Սահաք գետակին։ Քաղաքիս վերնամասն հարթ է, միջնամասն՝ լանջ, ստորին մասն՝ հովտահարթ»[5]՝ գրում է Մակար եպիսկոպոս Բարխուտարեանցը։ Շամախիի մեծ զաւակ Ալեքսանդր Շիրվանզադէն գմայլանքով է նկարագրել իր ծննդավայր Շամախիի բնութիւնը. «Այնտեղ երկինքը կապոյտ է, ինչպես Փիրուզա, երկիրը բոյսերով, ծաղիկներով փարթամ, ինչպէս մի սքանչելի պարտէզ։ Այնտեղ ձմեռը եղանակը մեղմ է, դիւրեկաց, ոչ քամի, ոչ փոթորիկ։ Իսկ գարնանը եւ ամռանը բարձրագագաթ ծառերի վրայ գիշեր-

ցերեկ երգում են անթիւ սոխակներ: Եւ ինչ համեղ մրգեր կան այնտեղ, եթէ գիտենաք, ինչ հոտաւէտ պտուղներ»[6]:

Պատմական յիշատակութիւնները վկայում են, որ հայ բնակչութիւնը Շամախիում բնակուել է վաղնջական ժամանակներից սկսած: Հայ էթնիկ տարրի վաղեմութիւնը փաստող ապացոյցներից խիստ բնորոշ է Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանցի վկայակոչումը. «Այսորիկ գիտօրայք ինն են, եւ բնակիչքն (*իմա՝ հայերը - Գ.Մ.*) բնիկ շամախեցիք...»[7]: *Համաձայն կովկասագէտ Ն. Զէյդլիցի վկայութեան՝* «Շամախի քաղաքի շրջակայքում սփռուած հայկական բնակավայրերը ամենայն հաւանականութեամբ կազմում են միջին դարերում առաւել մեծ քանակութեամբ եղած բնակավայրերի մնացորդները»[8]:

Աղբիւրները վկայում են, որ տակաւին վաղ ժամանակներից Շամախիի հայութիւնը ուսումնակրթական սերտ կապեր է ունեցել Սիւնեաց մետրոպոլիտական Աթոռի հետ: Զեռագիր յիշատակարանի վկայութեան համաձայն՝ Յովհան Որոտնեցու մահուանից յետոյ (1382), *երբ Տաթեւի Համալսարանը գլխաւորում էր նրա աշակերտ Գրիգոր Տաթեւացին* (1346-1411), *Ջուղայից, Թաւրիզից, Սիւնիքից եւ այլ վայրերից ուսանելու եկած 12 աշակերտներից մէկը, որի անունն էր Յունան, Շամախիից էր: Զեռագիր յիշատակարանում ասւում է.* «Այլ մեք դարձցուք ի վեր ի մեծ Գրիգոր Տաթեւացին, որ ի վրդովմաց վերին աշխարհին առեալ զաշակերտս իւր ԲԺ (12)-ան... որ էին վարդապետք՝ Մխիթար Տաթեւու, Յովհաննէս ի վանից Հերմոնի, Գալուստ ի Վաղընդեցու, Յունան ի Շամախու...»[9]:

Շամախիի հայ բնակչութեան վերաբերեալ հետաքրքիր տեղեկութիւններ են հաղորդում եւրոպացի մի շարք ճանապարհորդներ: Այս առումով ուշագրաւ տեղեկութիւն է հաղորդում ԺԵ. դարի երկրորդ կէսի իտալացի դիւանագէտ, ճանապարհորդ ու վաճառական Ջոզեֆօ Բարբարօն, որը 1471-1473*ին եղել է Վենետիկի դեսպանը Իրանի այդ ժամանակուայ տիրակալ Ակ-Կոյունլու Ուզուն-Հասանի արքունիքում: Վենետիկ վերադառնալու ճանապարհին Բարբարօն Թաւրիզից յետոյ լինում է նաեւ Շամախիում: Նկարագրելով Շամախին՝ նա գրում է.* «Այս (*Շամախին - Գ.Մ.*) շատ լաւ քաղաք է, ունի չորս հազարից հինգ հազար տուն եւ շինում է մետաքս, կտաւ եւ ուրիշ բաներ իրենց եղանակով: Գտնւում է Մեծ Հայաստանում[10], եւ բնակիչների մեծ մասը հայ են»[11]: *Հարցի վերաբերեալ յոյս է սփռում նաեւ Իսրայէլ Օրու՝ եւրոպական տիրակալներին* 1699 *Սեպտեմբերի 22ին յղած զեկուցագրում տեղ գտած հետեւեալ վկայակոչումը.* «Հարուստ եւ առեւտրական քաղաք է Շամախին-

...մենք այնտեղ ունենք եօթը հայ ծխական համայնքներ, եւ քաղաքի բոլոր վաճառականները եւ առեւտրականները հայ են»[12]: *Շամախահայերի վերաբերեալ ուշագրաւ տեղեկութիւններ է թողել 1780ականների սկզբներին երկրամաս այցելած Ֆրանսիացի ուղեգիր Լուի-Ֆրանսուա Ֆերիէ-Սովբէֆը: Նա գրում է, որ* «Շամախիում բնակւում էին շատ հայեր»[13]:

Շամախիում ԺԹ. առաջին դարակէսին վաճառականութեան, կրթամշակութային բնագաւառներում եւ հասարակական կեանքում հայ բնակչութեան դերի յետագայ բարձրացման չնորհիւ, այն դիտուել է նաեւ իբրեւ հայկական քաղաք: 1828ին, երբ Ռուսաստանը առեղծում էր Հայկական Մարզը, Լազարեաններն իրենց առաջադրած ծրագրով, հայկական թագաւորութեան սահմաններում ընդգրկել էին նաեւ պատմական Հայաստանից դուրս գտնուող Շամախին եւ Շաքին: «Շատ մարզեր,- *ասուած էր ծրագրում,* - ինչպէս Հին Նախիջեւանի, Երեւանի, Ղարաբաղի, Շաքու եւ Շամախու մարզերը՝ Էջմիածնի նախագահ վանքով կազմում են Հայաստանի վաղեմի թագաւորութեան ընդհանուր կորիզը եւ գլխաւոր հիմքը»[14]: *1832ի տուեալներով քաղաքում հայապատկան տների թիւը հասնում էր 279ի*[15]: *Մարգիս Արք. Ջալալեանցի հաղորդած տուեալների համաձայն Շամախիում 1850ին կար 4000 տուն, որից հայապատկան էր 600ը.* «Քնակիչք են Հայք եւ Մահմետականք, տունք չորս հազար, յորոց վեց հարիւրն են Հայք...»[16]:

Շամախի քաղաքի ազգաբնակչութեան բնական աճի վրայ խիստ բացասական ազդեցութիւն են թողել յաճախակի կրկնուող աւերիչ երկրաշարժերը: Շամախիում 1859ին տեղի ունեցած աղէտալի երկրաշարժի պատճառով, նոյն թուականի վերջերին նահանգային կենտրոնական վարչութիւնը տեղափոխւում է Բաքու[17]*, որի հետեւանքով Շամախին աստիճանաբար կորցնում է երբեմնի փառքը եւ նիւթական բարեկեցութիւնը: Այդուհանդերձ, Բաքուի հետ անհաւասար մրցակցութեան պայմաններում Շամախին փորձում էր պահպանել իր հնամենի չուքն ու փայլը՝ երկրամասի հայութեան համար նախկինի պէս մնալով որպէս հոգեւոր-եկեղեցական եւ մշակութային կենտրոն: Շամախուց 1880 Յուլիսի 20ին Մշակին յղած մի թղթակցութիւնում ասւում է, որ քաղաքն ունէր 900 տուն հայ*[18]: *1886ի տուեալներով, քաղաքի ազգաբնակչութեան թիւը 22.139 էր (13.286 արս., 8.853 իգ.)*[19]*, որից հայերի թիւը արտագաղթի հետեւանքով 3.962 էր (2.690 արս., 1.272 իգ.)*[20]*, կազմելով ամբողջ բնակչութեան 17,90%ը*[21]: *Նոյն թուականի տուեալներով ռուս բնակչութեան թիւը հասնում էր 668ի (512 արս., 156 իգ.), իսկ կովկասեան թա-*

թարներինը (աղրբեջանցիներ - Գ.Մ.)՝ 17.509ի (10.084 արս., 7.425 իգ.)[22]: Շամախու գաւառային վարչութեան կողմից 1894ին անցկացուած վիճակագրութեան համաձայն՝ քաղաքի ընդհանուր բնակչութեան թիւը 22.293 էր (13.552 արս., 8.741 իգ.), որից հայերի թիւը 4.042 էր (2.624[23] արս., 1.418 իգ.)[24]: Ըստ դաւանանքի՝ հայ բնակչութիւնը բաղկացած էր առաքելականներից եւ լութերականներից[25]. առաքելական էին 3.641 (2.369 արս., 1.272 իգ.), լութերական՝ 401 (255 արս., 146 իգ.) հոգի[26]: 1897ի մարդահամարի տուեալներով քաղաքի ազգաբնակչութիւնը կազմում էր 20.007 (10.463 արս., 9.544 իգ.), որից հայ՝ 2.515 (1.274 արս., 1.241 իգ.)[27]:

Արեւելեան Այսրկովկասի՝ Ռուսաստանի տիրապետութեան տակ անցնելը հնարաւորութիւն ընձեռեց արեւելեան բռնակալութիւնից ազատագրուած ժողովուրդներին, այդ թւում եւ հայերին, վարել աշխոյժ հասարակական-քաղաքական կեանք: Տարանցիկ առեւտրական ճանապարհների վրայ գտնուող Շամախի քաղաքը ԺԹ. դարում եւս չարունակում էր մնալ մետաքսի արտադրութեան համաշխարհային նշանակութիւն ունեցող կենտրոններից մէկը[28]: 1849ի տուեալների համաձայն, քաղաքում կար 217 գործարան, որից միայն 187ը մետաքսագործական էր[29]: ԺԹ. դարավերջին քաղաքում գործարանների թիւը հասնում էր 500ի[30]: Շամախիում գործուած մետաքսն այնքան նուրբ էր, որ չուկաներում հռչակ էր վայելում «Շամախու մետաքս» անունով[31]:

Հնուց ի վեր Շամախիի առեւտրի եւ արդիւնաբերութեան մէջ ազդեցիկ դեր ունէր հայ բնակչութիւնը[32]: Ընդհանրապէս, շամախահայերն առաջնակարգ մասնակցութիւն ունէին քաղաքի տնտեսութեան բոլոր ճիւղերի զարգացման գործում, որի գրեթէ ամբողջ դրամագլուխը գտնուում էր նրանց ձեռքին[33]: Արտադրական այլ ճիւղերի (կաշեգործութիւն եւն.) համեմատութեամբ, շամախահայերը յատկապէս զբաղուում էին մետաքսաթելի արտադրութեամբ եւ ունէին գործարաններ[34]: Ուշագրաւ է այն փաստը, որ տակաւին ԺԵ.-ԺԶ. դդ. հայ վաճառականները մրցակցել են բրիտանական առեւտրական զօրեղ ընկերութիւնների հետ եւ պահպանել հում մետաքսի արտահանման մենաշնորհը: «Անգլիացիները,- գրում է Ճարութիւն Քիւրտեանը,- 1561ին մտան Կովկասեան Հայաստան, Շամախի, Շիրվանի եւն. կողմերը առեւտուրի՝ մասնաւորապէս հում մետաքսի համար, սակայն հազիւ քանի մը տարի վերջ սկսան ինքզինքնին անգօր գտնել Հայոց հետ մրցակցելու գործի մէջ»[35]: Շամախիի հայ առեւտրականները զբաղուում էին մեծածաւալ առեւտրով եւ կապ էին պահպանում հեռաւոր երկրների հետ, իրենց ձեռքին էին կենտրոնացրել տարանցիկ առեւտուրը: Նրանց գոր-

ծունէութեան սահմանները ձգւում էին Ռուսաստանից, Պարսկաստանից, Եւրոպայից մինչեւ կենտրոնական եւ Միջին Ասիայի երկրներ[36]: Հնուց ի վեր նրանց էր պատկանում Շամախու հում մետաքսի արտահանման առաջնութիւնը[37]:

Շամախահայ վաճառականները առեւտրական կենտրոններ էին հաստնում նաեւ արեւելեան ամենաբազմապիսի ապրանքներ (համեմունքներ, կաշուեղէն, բուսական ներկեր, գորգեր եւն.), իսկ ներկրում էին տնային իրեր, պերճանքի զանազան առարկաներ եւն.[38]: Շամախիի հայ տորօնավաճառները[39] կարմիր ներկի համար տորօն էին մատակարարում Մոսկուայի, Մարսէլի, Մանչեստրի ձեռնարկատէրերին[40]:

Քաղաքում հայերը զբաղւում էին 27 տարբեր արհեստներով, կային հայապատկան 97 ձեռնարկութիւն, 121 վարպետ եւ 109 ենթավարպետ ու աշկերտ[41]: Հայերի շրջանում տարածուած եւ զարգացած արհեստներից էին՝ ջուլհակութիւնը, ոսկերչութիւնը, արծաթագործութիւնը, գինագործութիւնը, դերձակութիւնը, փականագործութիւնը, ձեռագործը, հրուշակագործութիւնը եւն., որոնք բաւական եկամտաբեր արհեստներ էին[42]: Տնային արդիւնագործութեան մէջ առաւել տարածուած էր ձեռագործը, յատկապէս առաջնակարգ տեղ էր գրաւում մետաքսէ գործուածքի արտադրութիւնը[43]: Շամախիում պատրաստուած գլխաշալը մեծ պահանջարկ եւ կիրառութիւն է ունեցել ինչպէս տարածաշրջանում, այնպէս էլ Հայաստանի տարբեր շրջաններում[44]:

Շամախին յայտնի էր իր այգիներով եւ վարդաստաններով, որը արդիւնք էր բնակլիմայական նպաստաւոր պայմանների եւ բարեբեր հողի[45]: Քաղաքը շրջապատուած էր գեղեցիկ այգիներով[46]: Շամախու շրջապատում եղած այգիների մէջ նշանաւոր էին Լալայեաններին, Քալանթարեաններին, Տէր-Յովհաննիսեաններին եւ Թառանեաններին պատկանող այգիները[47]:

Շամախիի շրջակայքն ունէր նաեւ նաւթային հարուստ անմշակ հողեր: Օրինակ՝ քաղաքից ոչ հեռու գտնուող Ալ. Սերեբրեակեանցի կալուածքում 1898 Հոկտեմբերի սկզբներին հողի վերին շերտերում յայտնաբերուել էր մեծ քանակութեամբ նաւթ, որից օգտուել են նաեւ շրջակայ հայկական գիւղերը[48]:

Սոցիալ-դասային կառուցուածքի առումով՝ Շամախիի հայ բնակչութիւնը բաղկացած էր ազնուական, քաղքենիական, վաճառական, պատուաւոր քաղաքացիների եւ գիւղացիական դասերից[49]:

Շամախիում լայն ճանաչում ունէին Քալանթարեան, Դոլուխանեանց, Աւշարեանց, Շահնազարեանց եւ Լալայեանց տոհմերը: Նշանա-

ւոր հայերից էին Նիկողայոս Ախվերդեանը, Մովսէս Ներսէսեանցը, Մեժլում Շահնազարեանցը, Գէորգ Տէր-Սահակեանցը, Սարգիս Տէր-Յովհաննիսեանցը[50] եւ ուրիշներ։

Շամախիի հայ մելիքական տոհմերից առանձնայատուկ դերակատարութիւն է ունեցել Լալայեան գերդաստանը։ Այդ գերդաստանի շառաւիղներից Շամախիում եւ Բաքւում ծաւալած իրենց բարերարութեամբ յատկապէս մեծ ճանաչում էին ձեռք բերել Մարկոս բէկ Լալայեանի որդի Պօղոս բէկը եւ նրա 8 որդիները (Աթանաս, Յովհաննէս, Մկրտիչ, Մարգար, Գէորգ, Յակոբ, Մարկոս եւ Կարապետ)[51]։ Լալայեանները Շամախիում ունէին չքեղ տներ, քարւանատներ, բաղնիք, քաղաքից դուրս կալուածներ որոնց թւում թաթարաբնակ երկու նշանաւոր գիւղ (Ղարաղալլի, Արաբ Սարուն), ջրաղացներ, վարելատեղեր, արօտատեղեր, այգիներ, ամառանոցներ, ձմեռանոցներ, որսատեղեր եւ բազմաթիւ ծառաներ[52]։ Կարապետ բէկ Լալայեանը մշտապէս նուիրատուութիւններ է կատարել յօգուտ Շամախու թեմական դպրոցի[53]։ Նա իր նիւթական միջոցներով 1840-1841ին Շամախիում կառուցում է չքեղ մի տուն եւ այն նուիրում ռուսական կառավարութեանը, ուր եւ յետագայում տեղաւորուում են նահանգային հիմնարկութիւնները[54]։ Բաքուում բնակուող Գէորգ բէկը միշտ նիւթապէս աջակցել է Մարդասիրական Ընկերութեանը եւ Եկեղեցական Աղքատախնամ Հոգաբարձութեանը[55]։ Իրենց հօր գործերը շարունակել են նաեւ որդիները։ Օրինակ, Բաքուում բնակուող Աթանասի որդի Ալեքսանդրը, իր ժամանակի աչքի ընկնող գործիչներից էր։ Բարեգործական իր ձեռնարկումների համար Ռուսաստանի ցար Ալեքսանդր Գ-ի կողմից արժանացել էր մի շարք պարգեւների (Աննայի 3րդ, Ստանիսլաւի 2րդ աստիճաններ եւ մեդալներ)[56]։ Հայկական Աշխարհի վկայութեամբ. «Մեծապատիւ Պ. Լալայեան եղբայրները հայազգի հարստականների մէջ առաջնակարգ տեղ են բռնում Աստուծուց շնորհուած նիւթական ապահովութեամբ»[57]։

Այդ շրջանում, Բաքուում առեւտրի եւ արդիւնաբերութեան բնագաւառներում լայն գործունէութիւն էին ծաւալել նաեւ բնիկ շամախեցիներ Ադամեան եղբայրները՝ Արգարը[58], Ալեքսանդրը, Յովհաննէսը եւ Դաւիթը, որոնք հիմնել էին «Եղբ. Ադամեան» առեւտրական ընկերութիւնը։ Նշանաւոր եւ չնորհազարդ այդ գերդաստանի նահապետն էր ԺԹ. դարի վերջերին Շամախիից Բաքուում մշտական բնակութիւն հաստատած վաճառական Սահակ Ադամեանը[59]։

Շամախին ծննդավայրը է հայ մեծանուն մի շարք մտաւորականների։ Այդտեղ են ծնունդ առել երկու քոյրերի զաւակները Շիրվանզադէն եւ Յով-

հաննէս Արելեանը, վերջիններիս մօր մօրաքրոջ որդի Կոստան Զարեանը[60], գրականագէտ, թատերագիր եւ թարգմանիչ, Լայպցիգի Համալսարանի փիլիսոփայութեան դոկտոր Սեդրակ Թառայեանը, բանաստեղծ, արձակագիր Վահան Գալֆայեանը, դեղեցկատես դերասանուհի Եւգինէ Սեբարը[61], պարուհի, դերասանուհի, գրող եւ գրականագէտ, Իրանում եւրոպական տիպի առաջին թատրոնի հիմնադիր Սոֆիա Փիրբուդաղեանը, Արմէն Օհանեանը[62], Ս. Պետերբուրգի Գեղարուեստի Ակադեմիայի շրջանաւարտ, Ռուսաստանի Վիբորգ քաղաքի դպրոցներից մէկում 1892ին նկարչութիւն դասաւանդած Ստեփան Ներսէսովը (Ներսէսեան, 1859-1894)[63], Բաքուում ճանաչուած երդուեալ առեներակալ եւ փաստաբան Սահակ Տէր-Ստեփանեանց Գուրգէնեանը (Աղուանից)[64] եւ շատ ուրիշ նշանաւոր գործիչներ։

Շամախիի հայութիւնը մեծ դերակատարութիւն ունէր նաեւ հասարակական կեանքում։ Շամախու քաղաքային հասարակական վարչութիւնը գործել է 1896 Դեկտեմբերի 28ից[65]։ Քաղաքային վարչութիւնը բաղկացած էր 12 հոգուց։ Հայ վաճառականներից լիազօրներ են ընտրուել Մարտին Ղազարեանը, Քրիստափոր Մինասեանը եւ Յարութիւն Յատուրեանը[66]։ Շամախու քաղաքային աւագ էր ընտրուել տեղի ազդեցիկ հայերից, մեծահարուստ Ալեքսանդր Լալայեանը, որի օգնականն էր վաճառական Անտոնեանը։ Լալայեանն այդ պաշտօնը զբաղեցրեց մինչեւ 1899ի Յունիսը եւ ազատուեց Բաքուի նահանգապետին յղած իր դիմումի համաձայն՝ Բաքու մշտական բնակութեան մեկնելու պատճառով[67]։ Աւելի ուշ՝ 1901-1902ին քաղաքային աւագի պաշտօնակատարն է եղել ազդեցիկ հայերից Ղազարեանը[68]։ 1895ին, Շամախու գաւառային վարչութեան տարբեր գրասենեակներում պաշտօնավարող 64 հոգուց ռուսներ էին 26ը, հայեր՝ 18ը, իսկ կովկասեան թաթարներ՝ 10ը, այդ թւում՝ գրասենեակային ծառայողներից ռուսներ էին 12ը, հայեր՝ 17ը եւ կովկասեան թաթարներ՝ 9ը[69]։ Շամախիում գործում էր Բաքուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան մասնաճիւղը[70]։

Շամախիի հայերի կենցաղը տարբերւում էր բուն Հայաստանում բնակուող հայերի կենցաղից ոչ էութեամբ, այլ առանձին մանրամասնեբով։ Իսկ հիմնականում չամախահայերի կեանքը այնպիսին էր, ինչպէս Այսրկովկասի միւս ոչ-մեծ քաղաքներում։ Նոյն ծէսերն ու սովորոյթները, միայն՝ երբեմն շատ գունեղ։ Այսպէս, ժամանակի մամուլում հրատարակուած նիւթերից տեղեկանում ենք, որ չամախահայերը կենցաղում տարբեր առիթների (հարսանիք, նշանդրէք, թաղում, մկրտութիւն, եկեղեցական ծոներ եւն.) ժամանակ իրենց ծախսումների մէջ ե-

ղել են չափազանց շռայլ: Եւ ահա այդ սովորութիւնը վերջ տալու նպատակով, Շամախու հայոց թեմը, յանձինս նրա առաջնորդների, ժամանակ առ ժամանակ մշակել է հասարակական կեանքի առաջընթացը ապահովող կանոնադրութիւններ: Թեմի առաջնորդ Դանիէլ Արք. Շահնազարեանցը (Տարօնեցի, 1863-1868) 1865 Փետրուարի 25ին մշակում է մի կանոնադրութիւն, որը չամախահայերին յետ պէտք է պահէր այդ աւելորդ ծախսումներից[71]*: Ինչպէս ասուած է կանոնադրութիւնում.* «...մեծք թէ փոքունք, տեսանելով մեր քաղաքի մի շռայլ արարողութիւնները ներս մտած մեր մէջ ունայն ծախքերով եւ սնոտի սովորութիւններով, որից որ օր ըստ օրէ ծագում է եւ սաստկանում զանազան անկարգութիւններ եւ վնասներ մեր հասարակաց կենցաղավարութեան մէջ, հաստատեցինք այս յետագայ կանոնները, որպէս օրէնք յաւիտենական հասարակութեան օգտի համար»[72]*: Շամախիի հայերն անգամ ստորագրութեամբ հաստատում են այդ կանոնադրութիւնը, որը որպէս օրէնք պէտք է կիրառուէր իւրաքանչիւր շամախեցու կողմից: Դժուար է ասել թէ որքան ժամանակ են կիրառուել կանոնադրութեան այդ կէտերը, մանաւանդ որ շամախահայերը իրենց կենցաղում հնուց ի վեր եղել են խիստ աւանդապահ եւ հիմնականում սովորոյթներով առաջնորդուող ժողովուրդ : Ցաւոնի է սակայն, որ ԺԹ. դարի 80ականներին այդ բարքերը դարձեալ շարունակուել են նրանց կենցաղում*[73]*:*

Ըստ ԺԹ. դարի վերջի վկայութիւնների՝ Շամախին համարուում էր քաղաքաշինութեան ժամանակի պահանջներին համապատասխան կառուցուած երկյարկ-եռայարկ տներով քաղաք: Քաղաքի կառուցապատման համար զգալի աշխատանք են կատարել յատկապէս հայ արհեստաւորներն ու ճարտարապետները: Շամախին ԺԹ. դարի վերջերին հիմնականում բաժանուած է եղել երկու մեծ թաղամասերի[74]*: Հայերից բացի, քրիստոնէական թաղամասում ապրել են նաեւ ռուս պետական պաշտօնեաները*[75]*: Հայերի բնակելի տները եղել են միայարկ, երկյարկ ու եռայարկ, սիւնաշար պատշգամբներով ու նախասրահներով: Գաբրիէլ Քաջբերունու վկայութեամբ.* «Այնուհետեւ դէպի վեր, լանջի վերայ շարունակւում են քաղաքի հայկական թաղը եւ բազարի մի մասը իրենց տներով, փողոցներով, աղբիւրներով եւ այլն: Իսկ վերի՝ երկրորդ հարթավայրի վերայ տարածուած է քաղաքի նոր մասը, աւելի գեղեցիկ եւ կանոնաւոր մասը, հայոց եւ խառն ռուսների հետ քրիստոնեայ թաղը, լայն՝ խաչաձեւ փողոցներով...: Նոր թաղումն են հայ եւ ռուս բնակչութեանց աչքի ընկնող տները. զոր օրինակ հանգուցեալ Ալեքսանդր Լալաեւի տունը իւր պարտէզով որ խիստ բարձրութիւնից նայում է

ներքի բազարի՝ թաթարների թաղի եւ մեչիտների վերայ: Նա շինած է պետութեան կողմից Շամախին նահանգական քաղաք եղած շրջանում եւ այդ տան մէջ բնակւում էր նահանգապետը: Հայոց եկեղեցուց քիչ ցած բարձրանում է Նազարեանների եռայարկ սրբատաշ ամուր տունը, որ իրեն գոյութիւնը անսասան պահել է երկրաշարժերի դէմ: Ապա գալիս են Խճաւածկ փողոցի վերայ Քալանթարեանների երկյարկանի քարաշէն տունը, Սարգսեանի եւ այլոց տները: Միւս փողոցների վերայ Տէր-Ստեփանեանի, Արզումանեանի, Եգանեանի, Գեանջեցեանի եւ այլոց բազմաթիւ տներ: Ապա գալիս են փողոցների վերայ հայոց խանութներ...»[76]: *Քաղաքում հայապատկան տներն իրենց ճարտարապետական յօրինուածքով եւ չքեղութեամբ զգալիօրէն տարբերուել են թաթարների տներից*: «Շամախու հայ եւ թուրքի հին բնակարանը միմեանց նման է, իսկ նոր շինութիւնների մէջ հայինը գերազանց է: Վերջին ժամանակներս անհատների տան կտուրները ծածկւում են կուպրով, որ բերւում է Բաքուից: Բոլոր թէ հին եւ թէ նոր տները քարաշէն են»[77], *գրում է Մշակը*:

Հայերը նկատելի վերելքի էին հասել նաեւ Շամախիի մշակութային կեանքում, որով եւ իրաւամբ Շամախին համարւում էր հայկական մշակոյթի կենտրոն: 1870ին հիմնուել է Շամախու երկսեռ դպրոցների գրադարանը[78]: *1870ականների վերջերին մի խումբ թատերասէրների կողմից կազմակերպուել են ներկայացումներ*[79]: *Այդտեղ տարբեր տարիներին թատերական հիւրախաղերով հանդէս են եկել Բաքուի հայկական եւ ռուսական թատերախմբերը*[80]: *Այնտեղ զարգացած էր Ասիական Պարարուեստի Դպրոցը. դեռեւս 1876ին Ֆրանսիացի գրող կոմս Դը Գոբինօն իր «Շամախեցի Պարուհին» վերտառութեամբ պատմուածքում գրել է*. «Քաջ յայտնի է, որ Շամախի քաղաքը նշանաւոր է իր հաճոյքների նուրբ ընտրութեամբ: Այնտեղ կար պարուհիների դպրոց, որոնք ամէն երկրում հիացում էին պատճառում եւ նշանաւոր էին մինչեւ պարսկական նահանգները: Բնականաբար, մարդիկ զանգուածաբար գնում էին այս նուրբ տեղը՝ ըմբոշխնելու համար այդքան գեղեցիկ հոգիների տեսարանը»[81]: *Այդ դպրոցի լաւագոյն սաներից է եղել Շամախեցի պարուհի, վերոյիշեալ Արմէն Օհանեանը*[82]:

Շամախիի հայութիւնն ունեցել է ժողովրդական հարուստ բանահիւսութիւն: Գրականութեան ակունքը եղել է աշուղական պոեզիան, որն սկսած ԺԸ. դարից զարգացում էր ապրում Շամախիում[83]: *Շամախիում արմատաւորուած գուսանա-աշուղական արուեստի չօշափուկները հասնում էին մինչեւ Դաղստան եւ Ասորախան*[84]: *Բնութագրուող*

ժամանակաշրջանում Շամախում հանդէս եկան մի շարք երգիչ-դուսաններ, որոնցից նշանաւոր են եղել՝ Շամախի քաղաքում գործած, մասնագիտութեամբ ոսկերիչ Աբրահամ Մարտիրոսեանը (աշուղական անունը՝ Զարգեար, վերցրել է իր հօր արհեստի անուանումից (1824-1874)[85]: Նա գրել է հայերէն բանաստեղծութիւններ եւ աշուղական երգեր: Բաքուում 1886ին ապա 1890ին լոյս են տեսել նրա երգերը «Զարկեարի Քնարը» վերնագրով[86]: Շամախիում գործում էր կոյր երգիչ Յարութիւն Յովհաննիսեան-Ալեքսանդրեանը (աշուղական անունը՝ Մայիմ (1825-1901)[87]: Հանդէս գալով ոչ միայն որպէս ստեղծագործողներ, այլեւ կատարողներ, Շամախիի հայ աշուղները յօրինել են այնպիսի երգեր, որոնք լինելով իրենց ժամանակակիցների մտքերի ու յոյզերի արտայայտութիւնը, սիրուել են նրանց կողմից, մտել երաժշտական կենցաղի մէջ, իրենց ստեղծած երգերով զգալի չափով հարստացրել հայրենի աշուղական գրականութիւնը: Շամախիի հայ աշուղներն իրենց երաժշտարուեստը ցուցադրում էին Բաքուում յաճախակի կազմակերպուող «արեւելեան» համերգերի ժամանակ, ուր հանդէս էին գալիս նաեւ օտարազգի աշուղները[88]: Այդ երեկոները մեծ ժողովրդականութիւն են վայելել բաքուահայերի շրջանում: Շամախիում շաբաթը մէկ անգամ կազմակերպւում էին նաեւ գրական երեկոներ, ուր քննարկւում էին ժամանակակից գրողների ստեղծագործութիւնները[89]:

Գրագիտութեան մակարդակով չամախահայերն անհամեմատ բարձր դիրքում էին կովկասեան թաթարների նկատմամբ: Տարբեր տարիներին չամախահայերը մշտապէս բաժանորդագրուել են հայատառ լրագրերի եւ ամսագրերի, այդ թւում՝ Արարատ, Մեղու Հայաստանի, Բազմավէպ, Նոր-Դար եւն.: Ուշագրաւ է այն, որ քաղաքում գործող երկու գրասենեակները, որոնք կատարում էին վճարովի տարաբնոյթ ծառայութիւններ (խնդրագրերի եւ նամակների գրութիւն, թարգմանութիւններ եւն.) պատկանում էին հայերին[90]: Մշակի Շամախիի թղթակցի «Հ. Ղ.» ծածկանունով հանդէս եկող Գարեգին Քհնյ. Ղուկասեանի թղթակցութիւնում այս առիթով ասւում է. «Շամախու թուրքերի մէջ չկայ ոչ մի հատ բարեգործական կամ ուրիշ հասարակական ընկերութիւն»[91]:

Շամախիում զարգացած էր նաեւ հրատարակչական գործը: 1849ին Մովսէս Զոհրապեանցին, Մարգար Ղուլիեանցին եւ Մինաս Տարոնիլէեանցին պատկանող տպարանում տպագրւում է շուրջ 265 էջանոց Գիրք Սաղմոսաց Դաւթի աշխատանքը, որի յիշատակարանում ասուած է. «Ի հայրապետութեան տեառն Ներսէսի Ե. կաթողիկոսի Ամենայն հայոց

եւ զանազան նշանաց ասպետի. Հրամանաւ վիճակային Հայոց Կոնսիստորիային Շիրվանու. Շամախի, ի տպարանի երից ընկերացն՝ Մովսիսի Զոհրապեանց, Մարգարէի Ղուլիեանց եւ Մինասի Տարոիլիջեանց»[92]: *Շամախում 1856ին ումն Աթա Գրիգորեան Մոսկուայից բերած հայկական տառերով հիմնում է մի համեստ տպարան, ուր տպագրում է տեսնում Մովսէս Զոհրաբեանի Պարապոյ ժամք բանաստեղծութիւնների ժողովածուի Ա. հատորը: Այդ ժողովածուում զետեղուած էր նաեւ Զորջ Բայրոնի «Շիլոնի կալանաւորը» ստեղծագործութիւնը*[93]:

Անդրադառնալով Շամախի քաղաքի համընդհանուր զարգացման գործում հայերի ունեցած մեծ դերակատարութեան փաստին՝ «Շամախեցի» ծածկանունով հանդէս եկող Յարութիւն Բարաղամեանը գրում է. «Եւ շամախեցիներից ոչ ոք չի կարող ուրանալ հայերի մեծագործութիւնները թէ՛ քաղաքին ջուր մատակարարելու խնդրում, թէ՛ դպրոցական եւ թէ այլ հանրօգուտ ասպարէզներում, որոնցից հաւասարապէս օգտւում էին բոլորը, առանց ազգի խտրութեան: Մինչդեռ թուրքերի մէջ քաղաքակրթութիւնը կասեցնող երեւոյթներից դուրս՝ սպանութիւններից, աւազակութիւններից բացի այլ բան մենք չենք կարող ցոյց տալ, ուր մնաց հանրօգուտ գործ կամ բարեգործութիւն...»[94]:

Հայերի ու կովկասեան թաթարների հասարակական կեանքի սոցիալ-բարոյական նկարագրի համեմատական բնութագիրը ներկայացնելու համար մէջբերենք Մշակում Շամախիի թաթարների վերաբերեալ արուած հետեւեալ դիտարկումները. «Տեղւոյս թուրք ազգաբնակչութիւնը, եթէ ասեմ աշխարհակալ Չինկիզխանի եւ Լանկ-Թամիրի օրերից մինչեւ այսօր իր վայրենի եւ արիւնարբու բնաւորութիւնից մի կորեկի չափ քողած չէ, բոլորովին չեմ սխալուի... Բայց մեր տեղուոյս մահմետական տարրը, չնայելով իր, համարեա թէ, մի ամբողջ դար ռուսաց ողորմած Կայսրութեան օրէնքներով կառավարուելուն, դարձեալ իր արիւնասէր եւ սպանիչ բնաւորութիւնից մի մանանխոյ հատի չափ չէ կորցրած: Թաղը թաղի վրայ կը յարձակուեն: Այդ դէպքում ոստիկանութիւնը եւ քաղաքիս կառավարութիւնը անկարող կը լինի նրանց խաղաղեցնելու: Յայտնի է 1866 թ. կոտորածը, երբ մի վարունգի առիթով 76 թուրք մարդ սպանուեցին»[95]:

ԿՐԹԱԿԱՆ ՄԱՐԶԸ

Այսրկովկասը Ռուսաստանին միաւորելուց յետոյ, չնայած ցարիզմը վարում էր հպատակ ժողովուրդների գաղութացման եւ ուծացման քաղաքականութիւն, այդուհանդերձ ԺԹ. դարի սկզբին եւ յաջորդ տաս-

նամեակների ընթացքում սոցիալ-տնտեսական վիճակի բարելաւմանը զուգընթաց որոշակի աշխուժացում նկատուեց Շամախիի հայերի կրթական կեանքի բնագաւառում: Դպրոցը՝ աճող սերնդի կրթութեան եւ լուսաւորութեան գործը, նահանգի հայ բնակչութեան առաջնահերթ եւ հրատապ խնդիրն էր: Մահմեդական հոծ զանգուածով շրջապատուած հայ բնակչութեան համար ուծացումից խուսափելու եւ ազգային-ինքնագիտակցութիւնը պահպանելու գործում աւելի էր մեծացել ազգային լեզուով գործող դպրոցների դերը: Եւ այդ էր պատճառը, որ Շամախու թեմի առաջնորդներն ու բարեգործական ընկերութիւնները իրենց ուշադրութիւնը մշտապէս բեւեռում էին այդ խնդրի վրայ:

Նախքան հայկական դպրոցների բացումը Շամախիում հայ երեխաները իրենց ուսումը ստացել են արքունի ուսումնարաններում: Ցարական արքունիքի կողմից 1829 Օգոստոսի 2ին հրապարակուած «Անդրկովկասեան Ուսումնարանների Կանոնադրութեան» հիման վրայ ուսումնարաններ բացուեցին նաեւ Շամախիում, Ղուբայում, Բաքուում եւ Դերբենդում: 1838ին ուսումնարան է հիմնուում նաեւ Շամախիում, ուր 1858ի դրութեամբ 144 սովորողներից հայեր էին 81ը[96]: Ընդհանուր առմամբ, 1866ի դրութեամբ Շամախի քաղաքում գործող երկու ուսումնարաններում սովորում էր 169 (117 արական, 52 իգական) հայ աշակերտ եւ դասաւանդում էր 9 ուսուցչուհի[97]: 1877ին Շամախի քաղաքում Բաքու-Դերբենդի վարչական տնօրինութեան իրաւասութեան ներքոյ բացուեց քաղաքային ուսումնարանը: 1895ին այն ունեցել է 138 աշակերտ, որից հայ՝ 86 (20 գիւղաբնակ, 66 քաղաքաբնակ), 37ը՝ թաթար եւ 15ը՝ ռուս[98]: Ուսումնարանն ունեցել է գրադարան՝ 1343 կտոր գրքով, որից հայերէն՝ 24[99]: Ինչպէս երեւում է բերուած օրինակներից, կովկասեան թաթարների յետամնացութիւնը ակնառու էր նաեւ կրթութեան բնագաւառում: Այն աւելի ակնառու է դառնում ամբողջ բնակչութեան թուի հետ նրանց տուեալների համադրման դէպքում: Հարցի առթիւ հետաքրքրական դիտարկում է անում ականաւոր արեւելագէտ եւ գրող Ագաֆանգէլ Կրիմսկին՝ նշելով. «Կովկասում ոչնչացած թիւրքական ռասան այնքան էլ առաջադէմ չէր...»[100]:

Քննուող ժամանակահատուածում Շամախիում գործել են հայկական թեմական, ծխական եւ մասնաւոր դպրոցներ: Ըստ այդմ՝

Թեմական Դպրոց կամ Սեմինարիա

Ի տարբերութիւն ռուսահայոց այն թեմերի, որոնք նիւթապէս գտնւում էին առաւել բարուօք վիճակում եւ կարճ ժամանակամիջո-

ցում ստեղծեցին թեմական հոգեւոր դպրոցներ, Շամախիում այդ գործընթացը տեւականօրէն ձգձգուեց։ Հիմնական պատճառն այն էր, որ թեմը գտնուելով նիւթական սուղ պայմանների մէջ, միջոցներ չէր կարողանում հայթայթել թեմական դպրոցի բացման համար, ուստի եւ սկզբնական շրջանում բացուեց միայն տարրական եկեղեցական դպրոց[101]։ Այս առումով հետաքրքրական է Ալեքսանդր Երիցեանի բնութագրումը Շամախու թեմի վերաբերեալ. «Այդ միջոցներում շատ խեղճ ու անբարեկարգ էր նաեւ Շամախու կամ Շիրվանի թեմը... ոչ մի ուսումնարան կար եկեղեցական հասոյթների սակաւութեան պատճառով»[102]։ Թէեւ 1838ին թեմական իշխանութեան կողմից դպրոցի համար արդէն վարձուել էր շէնք, սակայն, համապատասխան ուսուցիչների բացակայութեան պատճառով դպրոցի բացումը յետաձգուեց մինչեւ 1840 երբ արդէն գտնուել էին 2 ուսուցիչ, որոնցից մէկն անգամ համաձայնուել էր աշխատել ձրիաբար։ Սակայն, միջոցների պակասութեան պատճառով դպրոցը գործեց մինչեւ 1842[103]։ Թեմական դպրոցի բացումը տեղի ունեցաւ 1844 Մայիսի 28ին (այլ աղբիւրների տուեալներով՝ 1843) թեմի առաջնորդ Մատթէոս Եպս. Վեհապետեանի (Երեւանցի, 1841 - 1847) ջանքերով եւ եկեղեցական մարմինների ու բնակչութեան հայթայթած միջոցներով[104]։ Դպրոցում դասաւանդել են հայերէն եւ ռուսերէն ընթերցանութիւն, վաղեղագրութիւն, քերականութիւն, ճարտասանութիւն, երգեցողութիւն, թուաբանութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն եւ սրբազան պատմութիւն։ Դպրոցը թէեւ գտնւում էր վատթար պայմաններում, այդուհանդերձ այն շարունակել է իր գործունէութիւնը եւ փակուել 1851ին[105]։ Դպրոցի գործունէութեան երկրորդ շրջանը սկսւում է 1858ին, սակայն ոչ որպէս թեմական, այլ՝ ծխական հոգեւոր ուսումնարան[106]։ Դպրոցի գործունէութիւնը որոշակի կանոնակարգուած հիմքի վրայ է դրել թեմի առաջնորդ Դանիէլ Արք. Շահնազարեանցը, որի օրօք առաջին անգամ կազմուել է դպրոցի կանոնադրութիւնը, ընտրուել են հոգաբարձուներ, հրաւիրուել են համապատասխան ուսուցիչներ[107]։ 1877ին դպրոցն ունեցել է 3 ուսուցիչ եւ 79 աշակերտ[108]։ 1881ին դպրոցաշէնքի այրուելու պատճառով, դասերն անցկացուել են թեմի կոնսիստորիայի շէնքի վերնայարկում։ Դպրոցը գործել է ծանր եւ սուղ պայմաններում ուստի եւ չի կարողացել բարձրանալ ծխականի մակարդակից։ 1885ին դպրոցը դարձեալ փակուել է եւ վերաբացուել 1886ին, որից յետոյ այն ամբողջովին եւ պաշտօնապէս դասուել է ծխական դպրոցների շարքին եւ շարունակել է գոյութիւնը թեմի աղքատիկ եկամուտների հաշուին[109]։ 1888-89 ուսումնական տարուայ վի-

ձակագրական տեղեկագրերում դպրոցը նշուած է ոչ թէ որպէս թեմական, այլ՝ տղայոց երկդասեան ծխական դպրոց՝ 147 աշակերտով[110]: Այսպիսով, թէեւ Շամախու դպրոցը կրում էր թեմական անունը, սակայն, աննպաստ պայմանների թելադրանքով այդպէս էլ երբեք չհասաւ թեմականի մակարդակին:

Թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանցի (1887-1894) նախաձեռնութեամբ եւ առենադպիր Աբրահամ բէկ Շահվերդեանցի օժանդակութեամբ դպրոցի նախկին տեղում 1890ին կառուցւում է նոր շէնք[111]: Այդ շրջանում դպրոցն ունեցել է իր գրադարանն ու ընթերցարանը, ուր պահուել են 6 ձեռագիր եւ 450 հայերէն եւ ռուսերէն տպագիր գրքեր[112]: Տարբեր տարիների ընթացքում թեմական դպրոցին նուիրատուութիւններ են կատարել բարերարներ Կարապետ Լալայեանցը, Կարապետ Քալանթարեանցը, Նիկոլայ Կաճկաճեանցը, Բաղդասար Նազարեանցը եւ Մարտիրոս Միրզաբեկեանցը[113]: Դպրոցին իր կտակով նիւթական միջոցներ է տրամադրել (300ռ.) նաեւ Բաքուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու քահանայ Թադէոս Բուդաղեանցը[114]: 1890ին դպրոցում սովորել են 80 աշակերտ, որից 47ը՝ վճարովի, 33ը՝ ձրի հիմունքներով[115]: Յետագայ ժամանակներում, երբ դպրոցը յայտնուել էր նիւթական անմխիթար վիճակում, Մեսրոպ Արք. Սմբատեանցը ծրագրում է թեմական դպրոցը Շամախուց տեղափոխել Բաքու եւ այդտեղ բացել թեմական նոր դպրոց, որի մասին 1893 Դեկտեմբերի 20ին գրել էր Մկրտիչ Ա. Վանեցի կաթողիկոսին: Սակայն, մտավախութիւն ունենալով, որ Շամախուց երեխաները ի վիճակի չեն լինելու՝ գալ Բաքու եւ ուսում ստանալ, խնդիրն այդպէս էլ մնում է առկախ: 1895ին դպրոցն ունեցել է 5 ուսուցիչ եւ 127 աշակերտ[116]: Նոյն թուականին դպրոցի գրադարանն արդէն ունէր 772 անուն գիրք[117]:

1896ին դպրոցը դարձեալ փակուել է[118]: Մտահոգ դպրոցի վերաբացմամբ, Մկրտիչ Ա. կաթողիկոսը 1896 Հոկտեմբերի 27ի կոնդակով դիմում է Բաքուի հայ մեծահարուստներին եւ ակնկալում վերջիններիս նիւթական աջակցութիւնը[119]: Կաթողիկոսը մտադրուել էր վերաբացուող թեմական դպրոցը Շամախուց տեղափոխել Բաքու: Դպրոցի վերաբացման կազմակերպչական աշխատանքները գործի դնելու նպատակով կաթողիկոսի հրահանգով Բաքու է մեկնում եկեղեցական-կրթական գործի եռանդուն գործիչ Խորէն Եպս. Ստեփանէն: Նոյն թուականին չամախահայերը 400ից աւելի ստորագրութեամբ նամակով դիմում են Մկրտիչ Ա. կաթողիկոսին, խնդրելով նրանից դպրոցը վերաբացել ոչ թէ Բաքուում այլ Շամախում. «Ամէնիս սրտագին բաղ-

ճանքն է,- գրում էին չամախահայերը,- մեր ճգնաժամի օրերում գէթ բացուած տեսնել Շամախում մեր միակ մխիթար լոյս ու ապաւէն թեմական դպրանոցը հենց տարուոյս Սեպտեմբերից սկսած»[120]: Պէտք է նկատել այն հանգամանքը, որ թեմական դպրոցը Շամախուց Բաքու տեղափոխելու խնդիրն այդ օրերին լայն քննարկման առարկայ էր դարձել նաեւ մամուլում: Աւետիք Արասխանեանցը Մուրճ ամսագրում մի առանձին յօդուածով հանդէս գալով հարցի առնչութեամբ, առաջարկում է դպրոցը Շամախուց տեղափոխել Բաքու, այդ քայլը պայմանաւորելով նրանով, որ խիստ նուազել էր Շամախի եւ Գէօքչայ գաւառների հայ աշակերտների թիւը, մինչդեռ Բաքուում կարող էին սովորել նաեւ այդտեղ հաստատուած չամախեցիների եւ գէօքչայեցիների երեխաները. «Ինչ է Շամախու հասարակութիւնը,- գրում է Արասխանեանցը,- եթէ ոչ մի յետամնաց ժողովուրդ, որի ամենակենդանի ուժերի առաջին գործ է լինում թողնել այդ քաղաքը եւ հաստատուել Բաքուում: Ինչ ունի Շամախու հայ հասարակութիւնը, համեմատութեամբ Բաքուի»[121]: Թեմական դպրոցը Շամախուց՝ Բաքու տեղափոխելը նպատակայարմար է համարել նաեւ Շիրվանզադէն[122]:

Դպրոցը վերաբացելու եւ այն թեմականի աստիճանի բարձրացնելու ուղղութեամբ քայլեր է ձեռնարկել նաեւ թեմի առաջնորդ կարապետ Եպս. Այվազեանը (1896-1898): Նրա կողմից 1898ին կազմւում է դպրոցի ծրագիրը եւ ներկայացւում էջմիածնի Սինոդին, որպէսզի վերջինս ներկայացնի կառավարութեանը՝ ի հաստատում: Մկրտիչ Ա. կաթողիկոսը 1899 Փետրուարի 24ին թիւ 267 կոնդակով «առաջադրել է փութով առաջարկել Բարձրագոյն հաստատութեան Շամախու թեմական դպրանոցի կանոնադրութիւնը»[123]: Դպրոցը վերաբացուեց Շամախում միայն 1905ին, եւ գործեց որպէս երկսեռ դպրոց:

Ամփոփելով նշենք, որ թեմական դպրոցը հայ հոգեւոր-մշակութային կեանքում իւրովի եւ հաստատուն տեղ է ունեցել: Թեմական այդ դպրոցում են ուսանել եւ թեմում յետագայում հոգեւոր ծառայութեան անցել մեծ թուով քահանաներ եւ եկեղեցական-ծխական դպրոցների ուսուցիչներ[124]:

Ս. Սանդուխտ Օրիորդաց Դպրոց

Հիմնուել է 1867ին թեմի առաջնորդ Դանիէլ Արք. Շահնազարեանցի օրօք[125]: Այլ աղբիւրներով հիմնուել է 1869ին[126]: Այդտեղ աւանդուել է կրօն, հայոց պատմութիւն, աշխարհագրութիւն եւ բնագիտութիւն, գծագրութիւն, ռուսաց լեզու, թուաբանութիւն, ազգային եւ եկեղեցա-

կան երգեցողութիւն, հայոց եւ ռուսաց վայելչագրութիւն եւ ձեռագործութիւն[127]:

Հարկ է նշել, որ ուսումնական գործում չամախահայերը մեծ տեղ են յատկացրել կանանց կրթութեան հարցերին: Շամախուց Յովհաննէս Միրզաբեկեանի Հրաբաշտ ամսագրին տուած թղթակցութիւնում ասւում է. «Յուսալի է եւս Շամախուոյ հայ ժողովուրդից, որ պէտք է զբաղի ժամանակիս պահանջման համեմատ ուշադրութեան արժանաւոր այն հասարակաց խնդրոյն, որ կը վերաբերի իրանց օրիորդական ուսումնարանին, անտարակոյս լինելով, թէ՝ պատրաստելու է նա ողջախոհ, եւ զաւակաց բարոյապէս եւ բնականապէս օգուտը եւ վնասը ճանաչող Աստուածապաշտութեամբ սնուած մայրեր»[128]: 1868ին դպրոցը նիւթական անհրաժեշտ միջոցների բացակայութեան պատճառով գտնուել է վատթար պայմաններում: Դպրոցին նիւթական անհրաժեշտ օգնութիւն ցուցաբերելու նպատակով Շամախու թեմի առաջնորդ Անդրէաս Արք. Անդրէասեանը (Պոլսեցի, 1869-1874) 1869 Յունիսի 22ին թեմական դպրոցի դահլիճում տեղի հասարակութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ հրաւիրում է ժողով: Այնտեղ որոշւում է Շամախում կազմակերպել մի ընկերութիւն, որը պէտք է նիւթապէս ապահովէր օրիորդական ուսումնարանի գոյութիւնը. «...ուստի անցեալ 1869 թուականում բացեց (Անդրէաս Արք. Անդրէասեանը - Գ.Մ.) մի թեթեւ եւ դիւրին եղանակ ժողովրդեան ձեռնատու եւ նպաստամատոյց լինելու յիշեալ դպրոցին, որով ինքեանք աւելի ծանրութիւն չզգալով կարողանան գէթ գոյութեան մէջ պահել իրանց ուսումնարանը իրանց լուսաւորութեան առիթը»[129]: Հրաբաշտ ամսագրում հրատարակուած ցուցակից հետեւում է, որ 1870 Փետրուարի 7ի տուեալներով դպրոցի օգտին նուիրատուութիւն են կատարել 89 հոգի, իսկ հանգանակուած գումարը կազմել է 521ռ.[130]: Այդ գումարով հնարաւոր է եղել ապահովել դպրոցի ուսումնական գործընթացը: Դպրոցն ունեցել է իր երգչախումբը, որի ղեկավարն է եղել Բաղդասար սարկաւագը[131]: 1873ին դպրոցն ունեցել է մէկ նախապատրաստական եւ մէկ առաջին դասարան, 4 ուսուցիչ եւ 41 աշակերտ[132]. 1874ին՝ 61 աշակերտ՝ 2 ուսուցիչ[133]: Նոյն թուականին դպրոցի նախնական դասարանն ունեցել է 65 աշակերտ՝ 1 ուսուցիչ[134]: 1875ին դպրոցի աշակերտների թիւը դարձեալ նուազել է՝ հասնելով 58ի, ուսուցիչների թիւը մնացել է նոյնը՝ 2 հոգի[135]: 1877ին դպրոցն ունեցել է 4 ուսուցիչ՝ 53 աշակերտ[136]: Դպրոցի շէնքը խարխուլ լինելու պատճառով 1879ին ձեռնարկւում է նոր շինութեան կառուցման աշխատանքների: Նոր շինութիւնը նախաձեռնել է Շամախու թեմի առաջնորդ Թադէոս

Արք. Զիւնականը (Սպահանցի, 1876-1880), որին օժանդակել են Համազասպ Վրդ. Համազասպեանցը, դպրոցի վերակացու եւ հոգաբարձու Յովհաննէս Խալաֆեանցը[137] եւ շամախեցի մեծահարուստ Պաւէլ Շամիրի Մելիք-Բեգլարեանցը: Վերջինիս միջնորդութեամբ գաւառապետ Ստարցեւը յատկացրել է չինութեան համար նոր հողատարածք: Շինարարական աշխատանքներին նիւթապէս աջակցել են Լալայեան եղբայրները եւ Քալանթարեանները[138]: Դպրոցը չի ունեցել իր սեփական գրադարանը եւ օգտուել է թեմական դպրոցի գրադարանից[139]: 1885ին այն արդէն երկդասեան էր: Սակայն, նոյն թուականին փակուել է եւ վերաբացուել 1886ին: 1890ին դպրոցում սովորել են 49 աշակերտուհի, որից 46ը՝ վճարովի, 3ը՝ ձրի հիմունքներով[140]: Նոյն թուականի դրութեամբ, թէ՛ արական եւ թէ՛ իգական ուսումնարանները միասին ունեցել են 1 աւագ ուսուցիչ, 4 ուսուցիչ, 1 վարժուհի[141]: 1895ին դպրոցն ունեցել է 78 աշակերտուհի[142]: Դպրոցին պարբերաբար նիւթապէս օժանդակել է Բաքուի Հայոց Մարդասիրական Ընկերութիւնը[143]: 1887-1895ին Մարդասիրական Ընկերութիւնը դպրոցին տարեկան տրամադրել է 1500ռ. օգնութիւն, իսկ աշակերտուհիներին՝ նպաստ[144]: 1895ին դպրոցն ունեցել է 78 աշակերտուհի, 1 ուսուցչուհի եւ թեմական դպրոցի 3 ուսուցիչ[145]: 1896ին դպրոցը դարձեալ փակուել է: Վերաբացուել է միայն 10 տարի անց՝ 1905ին[146]:

Հայ Աւետարանականների Արական Դպրոց

Հիմնուել է 1842ին, բողոքական Սարգիս Համբարձումեանի կողմից: Դպրոցի աշխատանքների կազմակերպմանը օժանդակել է Շամախու գաւառական ուսումնարանի չրջանաւարտ ոմն Զախմախսազեանը[147]: Դպրոցը բաղկացած է եղել մէկ դասարանից, ուր դասաւանդուել է հայերէն, ռուսերէն, քերականութիւն, կրօնաբարոյական խրատաբանութիւն, թուաբանութիւն եւ Ս. Գիրք: Գործել է նաեւ մեծահասակ աշակերտներից բաղկացած երգչախումբ: Աղքատների համար ուսումը եղել է ձրի, իսկ մնացածն ամսական վճարել են 50 կոպէկ: Աշակերտների թիւը հասել է 150ի: Դպրոցի գործունէութեանը օժանդակել է Շամախու նահանգապետ, ազգութեամբ գերմանացի բարոն Վրանգէլը[148]: Նկատենք, որ իշխանութիւնները եւս բարձր են գնահատել Համբարձումեանի գործունէութիւնը: Այդ է վկայում Շամախու գաւառական ուսումնարանների տեսչի հաշուետուութիւնը, ուր բարձր գնահատական է տրուած նրան եւ դպրոցին: Անգամ 1847 Յունիսի 13ին այսրկովկասեան ուսումնարանների տնօրինութեանը ներկայացրած զեկուցագրում,

գաւառական ուսումնարանների տեսուչը առաջարկել է Համբարձումեանին չնորհել ոսկեայ կամ արծաթեայ մեդալ, որը բացառիկ է եղել մասնաւոր ուսումնարանների տնօրէնների նկատմամբ[149]: Շուշիում եւ Շամախիում բացուած բազէլեան քարոզիչների դպրոցները պատճառ դարձան, որպէսզի ցարական կառավարութիւնը այդ դպրոցների օրինակով Այսրկովկասի հայաշատ այլ վայրերում բացի պետական դպրոցներ[150]: Ա. Պետիկեանը բազելեան քարոզիչների՝ կրթական բնագաւառում ունեցած դերակատարութեան վերաբերեալ, գրել է. «Սխալ է ըսել, թէ միակ լաւագոյն դպրոցները Աւետարանական դպրոցներն էին, բայց շիտակ է ըսել, լաւագոյն ազգային դպրոցներ մէջտեղ եկան, որովհետեւ լաւագոյն Աւետարանական դպրոցներու կամ օրինակը կար կամ՝ մրցակցութիւնը»[151]:

Հարկ է նշել, որ դպրոցի գոյութեան հենց առաջին տարիներից, Շամախու հայոց թեմի հոգեւորականութեան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից սկսւում է ուժեղ պայքար Համբարձումեանի եւ նրա հիմնած ուսումնարանի դէմ: Հոգեւոր իշխանութիւնները պնդում էին, որ այդ դպրոցում սովորող աշակերտութեան մէջ տարածւում էր հայ եկեղեցու վարդապետութեանը խորթ բողոքականութիւն: Այդ է վկայում 1843 Նոյեմբերին Շամախու եկեղեցու բարեկարգիչ Միքայէլ ՔՀՆՅ. Վարչամեանի՝ Համբարձումեանի դէմ ուղղուած բողոք-նամակը, որում ասւում էր, թէ Համբարձումեանը մոլորեցնում է ժողովրդին, որը գնալով հեռանում է հայ եկեղեցուց: Թեմի առաջնորդ Դանիէլ Արք. Շահնազարեանցի, հոգեւորականութեան եւ տեղի առաքելական համայնքի բողոքների հիման վրայ, Բաքուի նահանգապետի կարգադրութեամբ 1863ին դպրոցը փակւում է: Սակայն, երեք տարի անց, 1866 Օգոստոսին, երբ օրինապէս ճանաչւում է Շամախու հայ-բողոքական համայնքը, 1867ին հայ-բողոքական Աբրահամ Ամիրխանեանը Շամախիում վերաբացում է դպրոցը[152]:

Շամախիի աւետարանականների ուսումնարանը գտնւում էր Կովկասի Ուսումնական Շրջանի Հոգաբարձուի Տեսչութեան ներքոյ: Տղաներին եւ աղջիկներին դասաւանդել է Ռեւէլի (Տալին) գերմանական դպրոցում ուսանած Լեւոն Ղարախանեանը, իսկ մեծահասակ օրիորդներին՝ Համբարձումեանը[153]: Վերջինս աջակցել է նաեւ Շամախիում գրադարան-ընթերցարան ստեղծելու գործին, իր հարուստ գրադարանից մի քանի հարիւր գիրք նուիրելով գրադարանին[154]: Ուշագրաւ է այն, որ Այսրկովկասի ժողովրդական ուսումնարանների Բաքուի տնօրէնի տեղակալ Բ. Ստեփանեանը, որը ներկայ է գտնուել Համբարձումեանի ա-

չակերտների քննութիւններին, իր դրական կարծիքն է յայտնել վերջիններիս ուսման առաջադիմութեան վերաբերեալ[155]: Նշելի է, որ հայ աւետարանականների դպրոց է յաճախել հայ մեծ թատերգու Շիրվանզադէն, որը հետեւելով ընկերների օրինակին, ինքնակամ գնացել էր սովորելու այդտեղ: Երկու տարի այդտեղ սովորելուց յետոյ Շիրվանզադէն անցել է Շամախու թեմական դպրոցը, ուր եւս երկու տարի սովորելով, մտել է գաւառական ռուսական դպրոցը: Շիրվանզադէն իր յուշերում նկարագրելով դպրոցն ու նրա հիմնադրին գրում է. «Վեց տարեկան էի, երբ մի օր, առանց իմ ծնողներին հարցնելու, վազեցի մեր դրացի Սարգիս վարպետի ուսումնարանը: Այդտեղ էին ոմանք իմ հասակակիցներից...Սարգիսը բողոքականների պարագլուխն էր: Դա մի հեզահամբոյր ծերունի էր, բարձրահասակ, առոյգ, ժպտուն: Երբ նա փողոցով անցնում էր, մի տարօրինակ հաճոյք էի զգում, նայելով նրա ճերմակ մօրուքով զարդարուած բարի դէմքին: Ինձ թւում էր, որ նա մի առանձին սէր է զգում դէպի մանուկները, քէեւ ինքը չունէր զաւակներ, ամուրի լինելով: Նա յարգուած էր ամէնքից, նոյնիսկ ոչ բողոքականներից»[156]: Դպրոցի գործունէութիւնը յիշատակւում է նաեւ 1891ին, որպէս խառը երկսեռ դպրոց[157]: 1895ին դպրոցն ունեցել է 2 ուսուցիչ՝ 22 աշակերտ, որից 5ը եղել են հայ առաքելականների երեխաներ[158]: Դպրոցն ունեցել է իր գրադարանը, որտեղ եղել է 399 կտոր գիրք (202 հայերէն, 197 ռուսերէն)[159]:

Հայ Աւետարանականների Օրիորդաց Դպրոց

Հիմնուել է 1884 Փետրուարի սկզբներին Շամախիի հայ աւետարանականների նախաձեռնութեամբ[160]: Դպրոց ընդունւում էին տեղի երկսեռ դպրոցը վերջացրած օրիորդները եւ այն առաքելականները, ովքեր իրենց ուսման չրջանն աւարտել էին տեղի, կամ այլ օրիորդաց դպրոց: Դպրոցը եղել է նաեւ գիշերօթիկ, ուր կարող էին սովորել նաեւ հարեւան քաղաքներից եւ գիւղերի հայ օրիորդները: Ձեռագործ առարկայից բացի, մնացեալ առարկաները դասաւանդել է Շուէյցարիայում ուսնած եւ երկար տարիներ Բերդեանսկի Օրիորդաց Գիմնազիայում ուսուցչութիւն արած հայ մանկավարժը[161]: Դպրոցի յետագայ գործունէութեան վերաբերեալ այլ տեղեկութիւններ յայտնի չեն:

Տէր-Աւանէսի Ուսումնարան

Հիմնադրութեան վերաբերեալ ստոյգ տեղեկութիւններ չեն պահպանուել: Ցայտնի է, որ 1866ին այդ ուսումնարանում սովորել է նաեւ

Շիրվանզադէն[162]։ Դպրոցի յետագայ գործունէութեան վերաբերեալ այլ տեղեկութիւններ յայտնի չեն։

Հաքեալ վարժապետի Ուսումնարան

Հիմնադրութեան վերաբերեալ ստոյգ տեղեկութիւններ չեն պահպանուել։ Յայտնի է միայն, որ այն գործել է 1860ականներին, Հաքեալ անունով վարժապետի տան կից սենեակներից մէկում. «Նա հաստատել էր ուսումնարանը իր բնակարանին կից սենեակներից մէկում, ուր գետնին շարան-շարան նստոտում էին աշակերտները, իրանց տանից բերած կապերտի կտորների վրայ»[163]։ Դպրոցում հիմնականում սովորել են տառաճանաչութիւն, գրել, կարդալ եւ մի քանի շարականներ։ Այդ դպրոցում է իր նախնական կրթութիւնը ստացել նաեւ ապագայ մեծ դերասան Յովհաննէս Աբելեանը[164]։ Թէ՛ Տէր-Աւանէսի եւ թէ՛ Հաքեալ վարժապետի դպրոցները աչքի են ընկել դաստիարակութեան իրենց խստաբարոյ օրէնքներով։ Այս դպրոցներում գործում էր ծեծը եւ ֆալախկայի «զօրութիւնը»[165]։ Հաքեալ վարժապետի վերաբերեալ պահպանուել է հետեւեալ վկայութիւնը. «Ո՛չ, նա բաւականանում էր՝ ճիպոտի եւ երբեմն էլ իր չիբուխի գգուանքներով։ Իսկ, եթէ հարկը պահանջում էր մի այնպիսի պատիժ տալ, որ «օրինակ» լինէր աշակերտութեան, երեւան էր գալիս ահա՛ «օրհնուած» ֆալախկան»[166]։

Հայ Առաքելականների Կիրակնօրեայ Դպրոց

Հիմնուել է 1881ին Շամախու թեմական դպրոցին կից, տեղի դպրոցի ուսուցիչ եւ տեսուչ Ա. Գալստեանի նախաձեռնութեամբ։ Այդտեղ չաբաթը երեք անգամ հանրութեան համար դասախօսութիւններով հանդէս են եկել թեմական դպրոցի ուսուցիչները[167]։ Դպրոցը գործել է երկու տարի։

Հայ Աւետարանականների Կիրակնօրեայ Դպրոց

Հետեւելով Գալստեանի օրինակին, աւետարանականների երիտասարդ սերնդի ներկայացուցիչ, ուսուցիչ Էմանուէլ Փիրբուդաղեանը 1881ին հիմնում է համանման դպրոց։ Դպրոցը գործել է մինչեւ 1884 եւ գտնուել է բարուօք վիճակում[168]։ Մշակի Շամախու թղթակիցը հայ առաքելականների կիրակնօրեայ դպրոցի փակման հարցում իր վրդովմունքը յայտնելով հայ առաքելական երիտասարդութեան հանդէպ, գրում է. «Ու՞ր են Շամախու այն երիտասարդները, որոնք միայն իրանց են հայեր համարում. քող երկար խօսելը, ի կողմը դնեն ու մրցու-

թիւն աւետարանական հայ-երիտասարդների հետ»[169]: *Դպրոցի յետագայ գործունէութեան վերաբերեալ այլ տեղեկութիւններ յայտնի չեն:*

Այսպիսով, ինչպէս վկայում են մատենագրական, արխիւային եւ վիճակագրական աղբիւրները, ինչպէս պատմութեան բոլոր ժամանակներում, այդպէս էլ ԺԹ. դարում Շամախի քաղաքը համարուել է Արեւելեան Այսրկովկասի հայաշատ կենտրոններից մէկը: Տեղի հայութիւնն իր ստեղծագործ աշխատանքով եւ գիտամշակութային բարձր մակարդակով ոչ միայն ապրում էր համախմբուած, սոցիալ-տնտեսական, հասարակական եւ կրթամշակութային աշխոյժ կեանքով, այլեւ նշանակալից դեր է խաղացել երկրամասի համընդհանուր զարգացման գործում:

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Ziya Bunyatov, *Azerbaydjan V VII-IX vv.* (*Ադրբեջանը Է.-Թ. դարերում*), Բաքու, 1965:

[2] Farida Mamedova, *Politicheskaya Istoriya I Istoricheskaya Geografiya Kavkazskoy Albanii (III v. Do Nashey Eri.-VIII v. n.e.)* (*Կովկասեան Ադուանքի քաղաքական պատմութիւնը եւ պատմական աշխարհագրութիւնը (Մ.Թ.ա. Գ. դար-Մ.Թ. Ը. դար)*, Baku, 1986; նոյնի՝ *Kavkazskaya Albaniya I Albantsi* (*Կովկասեան Ադուանք եւ ադուանցիք*), Բաքու, 2005:

[3] G. Djiddi, *Srednevekovoy Gorod Shemakh (IX-XVII veka). Istoriko-Arkheologicheskoe Issledovanie* (*Միջնադարեան Շեմախ քաղաքը (Թ.-ԺԷ. դարեր). պատմա-հնագիտական ուսումնասիրութիւն*), Բաքու, 1981.

[4] Հ. Ղ., «Նամակ Շամախուց», *Մշակ*, 20.07.1872:

[5] *Մակար Բարխուտարեանց, Ադուանից երկիր եւ Դրացիք (Միջին Դաղստան)*, Երեւան, Գանձասար Աստուածաբանական կեդրոն, 1999, էջ 86:

[6] Ալեքսանդր Շիրվանզադէ, «Իմ կեանքից», *Հասկեր*, N 11, 1910, էջ 320-321:

[7] *Սարգիս Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Մասն Բ., Տփխիս*, 1858, էջ 394:

[8] *Spiski Naselennikh Mest Rossiyskoy Imperii Po Kavkazskomu Krayu, LXV, Bakinskaya Guberniya. Spisok Naselennikh Mest Po Svedeniyam 1859 po 1864 God* (*Ռուսական կայսրութեան բնակավայրերի ցուցակ՝ ըստ Կովկասեան երկրամասի. Բաքուի նահանգ. բնակավայրերի ցուցակ ըստ 1859-1864 թուականների*), կազմեց Ն. Զէյդլիցէմը, Թիֆլիս, 1870, էջ 93:

[9] *Մանր ժամանակագրութիւններ (XIII-XVIII դդ.)*, *Հատ. Բ.*, կազմեց՝ Վազգէն Յակոբեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1956, էջ 352:

[10] Ենթադրելի է, որ Ջ. Բարբարոյին չփոթեցրել է Շամախի քաղաքում ստուար հայութեան առկայութեան հանգամանքը, ուստիեւ քաղաքը ներկայացրել է Մեծ Հայքում:

[11] *Յովհաննէս Յակոբեան, Ուղեգրութիւններ. Ադրբեջանի եւ Անդրկովկասի Պատմութեան, Հատ. Ա., ԺԹ.-ԺՋ. Դարեր*, Երեւան, ՀՍՍՀ Լուսժողկոմ, Հրատ. *Մելքոնեան Ֆոնդի*, Պետհրատ տպարան, 1932, էջ 199:

[12] Լէօ, *Հայոց Պատմութիւն. Երկերի ժողովածու*, Հատ. Գ., Գիրք Բ., Երեւան, «Հայաստան» Հրատ., 1973, էջ 53։

[13] L. F. Ferrières-Sauvebef, *Mémoires Historiques, Politiques Et Géographiques Des Voyages Du Comte De Ferrières - Sauvebef, Faits En Turquie, En Perse Et En Arabie, Depuis 1782 Jusqu'en 1789* (*Պատմական, քաղաքական եւ աշխարհագրական յուշեր կոմս Ֆերիէր-Սովբէֆի՝ Թուրքիայում, Պարսկաստանում եւ Արաբիայում կատարած իր ճամբորդութիւնների մասին*), Tome première, Maestricht, 1790, էջ 228։

[14] Վալտէր Դիլօյեան, *Արեւելեան Հայաստանը XIX Դարի Առաջին Երեսնամեակին եւ Հայ-Ռուսական Յարաբերութիւնները*, Երեւան, 1989, էջ 308։

[15] *Obozrenie Rossiyskikh Vladenii Na Kavkaze (V Statisticheskom, Etnograficheskom, Topograficheskom I Finansovom Otnosheniyakh (Talishinskoye Khanstvo)* (*Տեսութիւն կովկասում ռուսաստանեան տիրոյթների՝ վիճակագրական, ազգագրական, տեղագրական եւ ֆինանսական առումներով (Թալիշական խանութիւն)*, Սանկտ Պետերբուրգ, 1836, գլուխ III (Շիրվանի նահանգ), էջ 155։

[16] Ջալալեանց, Բ. մաս, էջ 400։

[17] *Ves Kavkaz. Promishlennost, Torgovlya I Selskoe Khozaistvo Severnogo Kavkaza I Zakavkazya* (*Ամբողջ Կովկաս։ Հիւսիսային Կովկասի եւ Անդրկովկասի արդիւնաբերութիւնը, առեւտուրը եւ գիւղատնտեսութիւնը*), կազմեց եւ հրատարակեց Մ. Ս. Շապշովիչը, Բաքու, 1914, էջ 21։

[18] *Հայ-լուսաւորչական*, «Նամակ Բագուից», *Մշակ*, 15.08.1880։

[19] *Svod Statisticheskikh Dannikh O Naseleniya Zakavkazskogo Kraya, Izvlechennikh Iz Posemeinikh Spiskov 1886 g., Bakinskoy Gubernii* (*Անդրկովկասեան երկրամասի բնակչութեան վերաբերեալ վիճակագրական տուեալների ժողովածու, քաղուած 1886ին Բաքուի նահանգի ընտանեկան ցուցակներից*), Թիֆլիս, 1893 (առանց էջակալման)։

[20] Նոյն։

[21] Նոյն։

[22] Նոյն։

[23] *Ստեփան Զելինսկու վկայակոչած տուեալում արականների թիւը 2.620ի փոխարէն սխալմամբ տպագրուած է 2.924։*

[24] Stepan Zelinskiy, *Opisanie Goroda Shamakha* (*Շամախի քաղաքի նկարագրութիւն*), Թիֆլիս, 1896, էջ 22։

[25] *Շամախի քաղաքի հայութեան մէջ առաքելականներից բացի եղել են նաեւ աւետարանական եկեղեցու հետեւորդներ։ Եկեղեցին կոչւում էր բողոքականութեան հիմնադիր, բարեկարգման ականաւոր գործիչ Մարտին Լութէրի (1483-1546) անունով՝ լութերական։ Աւետարանական քարոզչութիւնը Շամախի ներթափանցեց 1828ից սկսած՝ Շուէյցարիայի Բազէլ քաղաքից եկած քարոզիչներ Ֆ. Զարեմբայի, Աւգուստ Դիտրիխի եւ Միրզա Ֆարուխի (Յարութիւն Գալուստեան) միջոցով։*

Շամախում աւետարանականների առաջնորդն էր Սարգիս Համբարձումեանը (Եղիա Քասունի, Հուսաչաւիղ, Պատմութիւն Հայ Աւետարանական Շարժման (1846-1946), Պէյրութ, Լիբանան, Հրատարակութիւն Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան, 1947, էջ 230), որի անուան հետ է կապուած Շամախիում նրանց յետագայ գործունէութեան բեղուն ժամանակաշրջանը։ Աւետարանական քարոզչութիւնը, որն ինքնին եկեղեցական-բարեկարգչական բնոյթ ունէր եւ համապա-

տասիան նպատակ էր հետապնդում, այնքան ընդլայնուեց Բաքուի նահանգում, որ 1840-60ականներին Շամախին եւ Բաքուն դարձան արեւելահայ առեւտրանականութեան կենտրոններից (Հ. Ղուկասեանց, *Բողոքականութիւն կովկասու Հայոց Մէջ (Պատմական Նիւթեր)*, Թիֆլիս, 1886. Նաեւ՝ Աբրահամ Զամինեան, *Հայոց Եկեղեցու Պատմութիւն*, Բ. մաս, Նոր Նախիջեւան, 1909, էջ 217)։ Եթէ 1851ի տուեալների համաձայն՝ Շամախում առեւտրանական հայերի թիւը 24 էր (11 ար-, 13 իգ-՝ *Kavkazskii Kalendar Na 1852 g.* (1852 թուականի կովկասեան օրացոյց, Թիֆլիս, 1851, էջ 429), ապա մէկ տարի անց, այդ թիւը հասել էր 177ի (142 ար-, 135 իգ-, տե՛ս՝ Zelinskii, էջ 23)։ Ալեքսանդր Ալեքսանդրեանը Մշակին 1873 Փետրուարի 24ին յղած թղթակցութիւնում գրում է, որ Շամախում կար 100 տուն հայ առեւտրանական (ՀԱԱ, Ֆ. 234, ց. 1, գ. 40, թ. 6)։

ԺԹ. դարի կէսերին Շամախիից նկատւում է առեւտրանականների մեծ հոսք դէպի Բաքու։ 1897ի մարդահամարի տուեալներով, Շամախում կար ընդամէնը 14 (12 ար-, 2 իգ-) լութերական (*Pervaya Vseobshchaya Perepis Naseleniya Rossiiskoy Imperii, 1897, LXI. Bakinskaya Guberniya* (Ռուսական կայսրութեան առաջին համընդհանուր մարդահամար, 1897, Բաքուի նահանգ, PVPNRI-1897), Ն. Ա. Իրոյնիցկու խմբագրութեամբ, Սանկտ Պետերբուրգ, 1905, աղիւսակ XIV, էջ. 68)։ Ախալկովկասի Առեւտրանական եկեղեցու պատմութեան հանգամանալից քննութիւնը տե՛ս՝ Արտաշէս Ղազարեան, Ռուբէ Ներսէս Լեւոնեան, *Հայաստանեայց Առեւտրանական Եկեղեցի (Հայաստան-Կովկաս)*, Երեւան, «Հայկական Հանրագիտարան» Հրատ., 1999։

[26] Zelinskii, էջ 22։

[27] PVPNRI-1897, t. 61, էջ 1։ *Տե՛ս նաեւ՝* tablitsa XIII, էջ 53։ Շամախի քաղաքի հայ բնակչութեան ԺԹ. դարի տեղաշարժի մանրամասն քննութիւնը տե՛ս՝ Գէորգ Մտեփանեան, «Շամախի Քաղաքի Հայ Ազգաբնակչութեան Շարժընթացը (XIX դ.)», *Հայոց Պատմութեան Հարցեր (Գիտական Ժողովածուների Ժողովածու)*, Հտր. 9, Երեւան, 2008, էջ 108-123։

[28] Yu. Gagemeyster, *Zakavkazskie Ocherki. Yestestvennie Proizvedeniya Kraya Po Tsarstvu Rastitelnomu* (Անդրկովկասեան ակնարկներ։ Երկրամասի բնական արտադրանքները բուսականութեան թագաւորութեան մէջ), Սանկտ Պետերբուրգ, 1845, էջ 21։

[29] *Kavkazskii Kalendar Na 1850 g.* (1850 թուականի կովկասեան օրացոյց), Թիֆլիս, 1849, էջ 94։

[30] P. Nadejdin, *Opit Geografii Kavkazskogo Kraya* (Կովկասեան երկրամասի աշխարհագրութեան փորձը), Տուլա, 1891, էջ 240։

[31] *Հորիզոն*, Թիֆլիս, 31.07.1914։

[32] Ս. Սարգիսբէկեան, «Շամախին», *Մշակ*, 21.03.1902։

[33] P. Cherepanov, "Statisticheskoe Opisanie Shemakhinskoy Gubernii. Shemakha" (Շամախու մարզի վիճակագրական նկարագրութիւն. Շամախա), տե՛ս՝ 1852 թուականի կովկասեան օրացոյց, էջ 428)։

[34] N. Dubrovin, *Istoria Voyni I Vladichestva Ruskikh Na Kavkaze* (Կովկասում ռուսների պատերազմի ու տիրակալման պատմութիւնը), T. I, Kn. III, Սանկտ Պետերբուրգ, 1871, էջ 146.

[35] Յարութիւն Քիւրտեան, «Հայ Ազատագրական Փորձ Մը ԺԶ. Դարուն (Հատուած Մը Իմ «Հումմ Մետաքսի Վաճառականութիւնը Եւ Հայերը» Գործէն)», *Ազատիս*, Փարիզ, Ը. տարի, N 5-6, Յուլիս-Դեկտեմբեր 1937, էջ 60։

[36] V. Leviatov, *Ocherki Iz Istorii Azerbaydjana A XVIII Veke* (Ակնարկներ Ադրբեջանի ԺԸ.դ. պատմութիւնից), Բաքու, 1948, էջ 53։

[37] *Մշակ*, 27 Յունուարի 1884, N 17։

[38] Շամախահայերի՝ միջազգային առեւտրի մասնակցութեան վերաբերեալ ուշագրաւ տեղեկութիւն է հաղորդում Շամախում 1915ի ամռանը չրջագայած կովկասագէտ Ա. Ֆիտունը։ Նրա տեղեկացմամբ, Շամախիի բնակիչ Գրիգոր Գուրգէնեանի տանը պահպանւում էին Չինաստանից բերուած յախճապակեայ երկու չքեղ սպասքներ։ Վերջինիս տեղեկացմամբ այդ սպասքները նրան են յանձնել Շամախիի հնարնակներ Ներսիսեաններները, որոնց պատմելով դրանք սերնդէ սերունդ փոխանցուելով արդէն մի քանի հարիւր տարի է ինչ գտնւում են իրենց մօտ (A. Fituni, *Istoriya Posledney Stolitsi Shirvana (Istoriko-Etnograficheskii Ocherk)* (Վերջին մայրաքաղաք Շիրվանի պատմութիւնը (պատմա-ազգագրական ակնարկ), *Izvestiya Azerbaydjanskogo Komiteta Okhrani Pamyatnikov Starini, Iskusstva I Prirodi* (Հին յուշարձանների, արուեստի եւ բնութեան պահպանման Ադրբէջանի կոմիտէի տեղեկագիրը), պրակ 3, Բաքու, 1927, էջ 102)։

[39] Երկար տարիներ Ղուբայում տորոնի առեւտրով է զբաղուել նաեւ Շիրվանզադէի հայրը՝ Մինասը։ Իր յուշերում Շիրվանզադէն գրում է, որ իր հայրը սկզբում դերձակ էր, սակայն չուտով դէն նետեց ասեղը, միանալով չամախեցի բազմաթիւ «տորօնչիների» խմբին։ Տարուայ զգալի մասը հայրն անց էր կացնում շրջակայ գիւղերում ու քաղաքներում՝ տուն վերադառնալով գրեթէ միայն ձմռան ամիսներին։ Մինչեւ անանկանալը, բաւական շահաւէտ առեւտրի շնորհիւ մի քանի տարի Մովսիսեանների ընտանիքը վարել է բարւօք կեանք (Ալեքսանդր Շիրվանզադէ, *Իմ կեանքից*, «Հասկեր», Թիֆլիս, դ. 11, 1910,էջ 319-320)։ Տորօնի չահութաբեր առեւտուրը Ղուբայում շարունակւում է մինչեւ 1878 եւ նուազում «ալիզարինի» էժանագին քիմիական ներկի գիւտից յետոյ (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 70)։

[40] Zelinskii, էջ 31-32։

[41] Նոյն, էջ 34։

[42] Նոյն, էջ 32-33. տե՛ս նաեւ՝ *Մշակ*, 3 Օգոստոսի 1874, N 30։

[43] *Մշակ*, 27.01.1884։

[44] Ստեփան Լիսիցեան, *Զանգեզուրի Հայերը*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1969, էջ 161։ Զանգեզուրում, օրինակ, Շամախում գործուած չալը մեծ յարգ է ունեցել։ Այն սովորաբար նուիրուել է հարսանիքների ժամանակ եւ մտել է աղջկայ օժիտի կազմի մէջ (Է. Կարապետեան, *Օժիտը Հայոց Մէջ* (Պատմաազգագրական Ուսումնասիրութիւն), Երեւան, 1978, էջ 23)։

[45] Մեսրոպ Սմբատեանց, *Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի Վանաց Սաղիանի եւ Միւս Վանօրէից եւ Ուխտատեղեաց Նմա եւ Քաղաքացն եւ Գիւղօրէից Որք ի Շամախւոյ Թեմի*, Տփխիս, 1896, էջ 281։

[46] T. Mamaladze, "Sadovie Kulturi I Promishlennie Zanyatiya V Shemakhe I Ego Uezde" (Այգու մշակոյթները եւ արդիւնաբերական զբաղմունքները Շեմախում), *Sbornik Materialov Dlya Opisaniya Mestnostey I Plemen Kavkaza* (Նիւթերի ժողովածու՝ կովկասի տեղանքի եւ ցեղերի նկարագրութեան համար), Թիֆլիս, 1908, պրակ. XXXIX, բաժին 1, էջ 35։

[47] Գաբրիէլ Քալբերունի, «Բազմամիլիոն ժառանգութիւն», ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 439, թ. 8)։

[48] *Տարազ*, N 40, 18 Հոկտեմբերի 1898։

[49] PVPNRI-1897, tablitsa XXIV, էջ 154-161 տուեալների, հաշուարկը մերն է։

[50] *Մեղու Հայաստանի*, 27.12.1858, էջ 416։

[51] Պօղոս բէկը մահացել է 107 տարեկան հասակում՝ 1847ին։ Նա զբաղուել է առեւտրա-արդիւնաբերութեամբ։ Շամախիում եւ Բասխալ գիւղում ունէր մետաքսաթելի գործարան, որի արտադրանքը հիմնականում արտահանւում էր Ռուսաստան, Թուրքիա, Իրան եւ Հնդկաստան (Fituni, էջ 124)։ Պօղոսի որդին՝ Մարկոսը, ունեցել է երեք որդի՝ Պետրոս, Ներսէս եւ Պօղոս (ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 309, թ. 1-12)։

[52] Նոյն, թ. 10։

[53] *Արարատ*, Յուլիս 1871, էջ 51։

[54] Fituni, էջ 144-145.

[55] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 309, թ. 10, 12։

[56] Նոյն, թ. 11։

[57] *Հայկական Աշխարհ*, թիւ 10-11-12, 1878, էջ 302։

[58] Վաճառական Արգար Ադամեանի ընտանիքում կրթուել ու դաստիարակուել են չորս նշանաւոր դէմքեր։ Աւագ որդին՝ Յովհաննէսը (1879-1932), որ սեւ-սպիտակ ու գունաւոր հեռուստատեսութեան եւ լուսահեռագրութեան իր գիւտով նոր դարագլուխ է բացել գիտութեան եւ տեխնիկայի պատմութեան մէջ։ Նրա տասնեակ տարիներ առաջ կատարած գիտական յայտնագործութիւնները ունեցան համաշխարհային նշանակութիւն եւ դարձան ժամանակակից գունաւոր հեռուստատեսութեան ու լուսահեռագրութեան հաստատուն հիմքը (Ց. Յակոբեան, *Յովհաննէս Արգարի Ադամեան*, Երեւան, «Միտք» Հրատ., 1968)։ Հեղինէ եւ Եւգինէ դուստրերը դարձան բացառիկ դաշնակահարներ, որոնք երկար տարիներ գրաւել էին Եւրոպայի երաժշտական հասարակութեան ուշադրութիւնը։ Նրանց կրտսեր եղբայրը՝ պրոֆեսոր Արշակ Ադամեանը, եղել է գեղագէտ, երաժշտագէտ, Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի տնօրէնը։ Նրա նախաձեռնութեամբ Երեւանում կազմակերպուել է սիմֆոնիկ նուագախումբ, որի առաջին համերգը կայացել է 1924 Դեկտեմբերի 10ին, որով եւ սկզբնաւորուել է սիմֆոնիկ երաժշտութեան կատարումը Հայաստանում (Յակոբեան, *Ադամեան Քոյրեր*)։

[59] Magda Neyman, *Armyane. Kratkii Ocherk Ikh Istorii I Sovremennogo Polojeniya* (Հայերը։ Համառօտ ակնարկ նրանց պատմութեան եւ արդի վիճակի), Սանկտ Պետերբուրգ, 1899, էջ 51։

[60] Արծրուն Աւագեան, «Ջուակի Վտարանդին (Կոստան Զարեանի կեանքի Տարեգրութիւնը)», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Հրատ., N 1, Յունուար-Ապրիլ 1997, էջ 51-52։

[61] Գրականագէտ, հասարակական-քաղաքական գործիչ Պօղոս Մակինցեանի կինը, որը 1927ին Փարիզում յաղթող է ճանաչուել աշխարհի տարբեր երկրների (ԱՄՆ, Գերմանիա, Անգլիա, Իտալիա, Յունաստան, Թուրքիա) միջեւ գեղեցկուհի կինօդերասանուհու համար կազմած մրցոյթում (Եւգինէ Սեբուր, *Հարազատ Ձեռնեներ*, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1970, էջ 94-95)։

[62] *Արծուի Բախչինեան, Վարդան Մատթէոսեան, Շամախեցի Պարուհին. Արմէն Օհանեանի կեանքն ու գործը*, Երեւան, Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի Հրատ., 2007։

[63] *Արարատ Աղասեան, Հայ կերպարուեստի Զարգացման Ուղիները XIX-XX Դարերում, Երեւան, 2009, էջ 232։*

[64] *Սահակ Տէր-Ստեփանեանց Գուրգէնեանն իր կենսագրականում գրում է «Աղուանցի եմ Շամախի կամ Շիրվան քաղաքէն» (Մ. Գուրգէնեան, Պանդուխտ կամ կեանք Աղուանցւոյ, Կոստանդնուպոլիս, 1864, էջ 56)։ Նրա հայրը՝ Մահտէսի Գրիգոր բէկը տոգորուած ազատասիրական-հայրենասիրական մղումներով, հայ ժողովրդի վիճակին մտահոգուելու նպատակով 1838-42 ճանապարհորդել է ասիական մի շարք երկրներում. «1838 թուականին Գրիգոր պէյը բաղձալով որ Հայոց վրայօք տեղեկութիւններ ժողովէ, իրեն ազատասիրական եռանդը դրդեց զինքը երթեւեկել ի հնդիկ, Ասիոյ ու Ափրիկէի մէջէն անցաւ ի Կ. Պոլիս եւ անկէց իր հայրենիքը. այս ճամբորդութիւնը տեւեց չորս տարի» (նոյն)։ 1850ականներին հօր քայլին է հետեւում նաեւ Սահակը՝ «կամքս ինձի ստիպեց որ իրեն հետեւիմ, սանձս տուի բաղդին ձեռքը» (նոյն, էջ 57. նաեւ՝ Գուրգէնեան Մ., Պանդուխտ կամ Բագուայ Դաստատանական Թեմի Փաստաբան Սահակ Բէկ Գուրգէնեանի կեանքէն Մի Քանի Էպիզոտներ, Բագու, 1882)։*

[65] *Մուրճ Քաղաքական, Հասարակական, Գրական Ամսագիր, N 1, Յունուար 1897, էջ 163. նաեւ՝ Milman A., Politicheskoy Stroy Azerbaydjana V XIX-Nachale XX Vekov (Administrativnii Apparat I Sud, Formi I Metodi Kolonialnogo Upravleniya) (Ադրբեջանի քաղաքական կառոյցը ԺԹ.-Ի. դարի սկզբին (վարչական ապարատը եւ դատարանը, գաղութային վարչութեան ձեւերը եւ մեթոդները), Բաքու, 1966, էջ 236։*

[66] *Մուրճ, N 7-8, 1899, էջ 933. նաեւ՝ Kavkazskii Kalendar Na 1900 g. (1900 թուականի կովկասեան օրացոյց), Թիֆլիս, 1899, էջ 178։*

[67] *Նոյն։*

[68] *Ս. Սարգիսբէկեան, «Շամախին», Մշակ, 21.03.1902։*

[69] Zelinskii, էջ 24։

[70] *Տեղեկագիր Եւ Հաշիւ 1914 Թ. Գործունէութեան Հայոց Մարդասիրական Ընկերութեան Յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի, Բագու, 1916, էջ 4։*

[71] *Մեղու Հայաստանի, 27.03.1865։*

[72] *Նոյն, էջ 86։*

[73] *Մեղու Հայաստանի, 6.10.1883։*

[74] *Քաղքերունի, Թ. 5-6։*

[75] *Նոյն։*

[76] *Նոյն, Թ. 5-6։*

[77] *Մշակ, 3.08.1874։*

[78] *Գրասէր, «Շամախիի Գրադարանի Մնդիրը», Արժագանք, 3.06.1894։*

[79] *Նոր-Դար, 11.03.1892։*

[80] *Մեղու Հայաստանի, 14.08.1876. նաեւ՝ Նոր-Դար, 1.02.1891։*

[81] *Բախչինեան, Մատթէոսեան, էջ 9-10։*

[82] *Նոյն, էջ 9։ 1918ին Օհաննեանը Ֆրանսերէն լեզուով հրատարակել է Շամախեցի Պարուհին ինքնակենսագրական վէպը, որի առաջաբանը գրել է Ֆրանսիացի հանրայայտ գրող Անատոլ Ֆրանսը (նոյն, էջ 127-128)։*

[83] *Ուշագրաւ է, որ դեռեւս ԺԸ. դարում, Շամախու Մուստաֆա խանի պալատական աշուղն է եղել մեծ դերասան Յովհաննէս Արելեանի պապը՝ ծնունդով Արցախի Դիզակ գաւառի Շամձոր գիւղից՝ աշուղ Սամուէլը, որին երկարահասակ լինելու պատ-*

ճառով անուանել են երկար-բալա (Ֆ. Մարդանեան, *Յովհաննէս Աբելեան (կենսագրական տեղեկութիւններ)*, Թիֆլիս, 1907, էջ 2)։

[84] *Գարեգին Լեւոնեան, Աչուղները եւ նրանց Արուեստը*, Երեւան, Հայպետհրատ, 1944, էջ 41։

[85] *Սոխակ Հայաստանի. Լիակատար երգարան, խմբագիր-հրատարակիչ Աւագ Գրիգորեանց*, Հար. Դ., Բագու, 1878, էջ 21։

[86] *Հայ Նոր Գրականութեան Պատմութիւն*, Հար. 4, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1972, էջ 703։

[87] *Լեւոն Մելիքսէթ-Բէկ, «Թուրքերէն Ասող Հայ Աչուղներ» (ձեռագիր վիճակում), Ցուցակ Ձեռագրաց Վրաստանի Կենտրոնական Պատմական Արխիւի, Բանբեր Մատենադարանի*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., N 4, 1958, էջ 417-418)։

[88] *Սարիբ Ռիզաեւ, Անդրկովկասի Ժողովուրդների Արուեստների Փոխյարաբերութիւնները (Թատրոն, կինօ)*, Երեւան, 1976, էջ 25։

[89] *Հորիզոն*, 17.12.1913։

[90] Zelinskii, էջ 33։

[91] *Հ. Ղ., «Նամակ Եամախուց»*, *Մշակ*, 17.08.1872։

[92] *Յակոբ Անասեան, Հայկական Մատենագիտութիւն, Ե.-ԺԸ. դդ., Հար. Բ.*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1976, էջ 427-428։

[93] *Գարեգին Լեւոնեան, Հայ Գիրքը եւ Տպագրութեան Արուեստը (Պատմական Տեսութիւն Սկզբից Մինչեւ XX Դարը)*, Երեւան, Հայպետհրատ, 1958, էջ 229։

[94] *Եամախեցի, Թրքահայրութի՞ւն, թէ Թրքամոլութիւն։ Ընդդիմախոսական Եղիչէ Ա. Ք. Գեղամեանի «Տաճիկները կովկասում եւ Բագուի Անկումը» Գրքի Առթիւ*, Թիֆլիս, 1920, էջ 20-21։

[95] *Հայ-լուսաւորչական, «Նամակ Բագուից»*, *Մշակ*, 15.08.1880։

[96] *Մ. Սանթրոսեան, Առեւելահայ Դպրոցը XIX Դարի Առաջին Կէսին*, Երեւան, Հայպետուսմանկհրատ, 1964, էջ 62։

[97] *Փորձ*, Ա. տարի, 1876, էջ 156։

[98] Zelinskii, էջ 25։

[99] Նոյն։

[100] A. Krimskii, *Shkola, Obrazovannost I Literatura U Rossiiskikh Musulman (Kulturno-Etnograficheskii Ocherk)* (*Դպրոցը, կրթուածութիւնը եւ գրականութիւնը ռուսական մահմեդականների մէջ (մշակութա-ազգագրական ակնարկ)*, Մոսկուա, 1905, էջ 16։

[101] *Սանթրոսեան*, էջ 283։

[102] *Ալեքսանդր Երիցեանց, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք XIX Դարում*, Մասն Բ., Թիֆլիզ, Տպարան Մ. Շարաձէ, 1895, էջ 477։

[103] ՀԱԱ, Ֆ. 56, ց. 7, գ. 516, թ. 647-648։

[104] Ղուկասեանց, էջ 44։

[105] *Մատենադարան, Կաթողիկոսական Դիւան*, թղթ. 124, վաւ. 359. նաեւ՝ Սանթրոսեան, էջ 284։

[106] Zelinskii, էջ 26։

[107] Ղուկասեանց, էջ 103։

[108] *Արարատ, Նոյեմբեր-Դեկտեմբեր*, 1878, էջ 455։

[109] *Վահան Երկանեան, Գաղթար Հայկական Նոր Դպրոցի Համար Անդրկովկասում (1870-1905)*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1970, էջ 54։

[110] *Վիճակագրական Տեղեկութիւնք Եկեղեցական-Միսիական Ուսումնարանաց Հայոց, Ըստ Թուոյն 1887-88 Ուսումնական Ամի*, Վաղարշապատ, 1889, էջ 113։
[111] *Սմբատեանց*, էջ 297։
[112] Նոյն, էջ 296։
[113] *Արարատ, Ամսագիր Կրօնական, Գաւառական, Բանասիրական, Բարոյական եւ Ազգային*, *Մայիս* 1871, էջ 52։
[114] *Արժագանք*, Յուլիսի 21, N 3, 1885, էջ 38։
[115] *Բարխուտարեանց, Աղուանից Երկիր եւ Դրացիք*, էջ 162։
[116] Zelinskii, էջ 26։
[117] Նոյն։
[118] *Ս. Խուդոյեան, Արեւելահայ Դպրոցները 1830-1920 ԹԹ. (Ժամանակագրութիւնը Քաղերիայ Մանրամասնեերով)*, Երեւան, 1987, էջ 458։
[119] *Աւետիք Արտխանեանց, «Նոր Թեմական Դպրանոցների Խնդիրը»*, *Մուրճ*, N 10-11, 1896, էջ 1386. նաեւ՝ *Մշակ*, 9.11.1896։
[120] *ՀԱԱ*, Ֆ. 56, ց. 3, գ. 350, Թ. 65-66. նաեւ՝ *Մուրճ*, N 10-11, 1896, էջ 1386։
[121] *Մուրճ*, N 10-11, Հոկտ.-Նոյեմբեր 1896, էջ 1387։
[122] *Տարազ*, N 46, 1896, էջ 726-727։
[123] *ՀԱԱ*, Ֆ. 57, ց. 2, գ. 1921, Թ. 75։
[124] Շամախու հայոց Թեմական դպրոցի հանգամանալից քննութիւնը տե՛ս՝ Գէորգ Ստեփաննեան, «Համառօտ Ակնարկ Շամախու Թեմական Դպրոցի Պատմութիւնից (XIX դ.-XX դ. Սկիզբ)», *Հայոց Պատմութեան Հարցեր (Գիտական Բազմաժնների Ժողովածու)*, *Հատ. 7*, Երեւան, 2006, էջ 67-74։
[125] *Մեղու Հայաստանի*, 1.10.1869, էջ 330-331։
[126] Zelinskii, էջ 26։
[127] *Արարատ, Մարտ* 1876, էջ 117-118։
[128] *Արարատ, Փետրուար* 1870, էջ 277։
[129] Նոյն, էջ 276։
[130] Նոյն, էջ 277-278։
[131] Նոյն, էջ 283։
[132] *Արարատ, Մայիս* 1873, էջ 189-190։
[133] *Արարատ, Ապրիլ* 1874, էջ 147։
[134] Նոյն։
[135] *Արարատ, Փետրուար* 1875, էջ 155։
[136] *Արարատ, Նոյեմբեր-Դեկտեմբեր* 1878, էջ 455։
[137] *Սմբատեանց*, էջ 297։
[138] *Մշակ*, 27.08.1880։
[139] Zelinskii, էջ 26։
[140] *Բարխուտարեանց, Աղուանից Երկիր եւ Դրացիք*, էջ 162։
[141] Նոյն։
[142] *Kratkii Istoricheskii Ocherk Sostoyaniya I Deyatelnost Bakinskogo Chelovekolyubivogo Obshchestva Vo Imya Sv. Grigoriya Prosvetitelya Armenii S 1854 Po 1896 gg.* (*Համառօտ պատմական ակնարկ Բաքուի Հայասատանի Լուսաւորիչ Գրիգորի Մարդասիրական Ընկերութեան իրավիճակի եւ գործունէութեան 1854-1896 թուականներին*), կազմող Ա. Կալուստեանց, Բաքու, 1896, էջ 24։

[143] *Արարատ, Մարտ* 1876, էջ 117։
[144] *Kratkii Istoricheskii Ocherk...*, էջ 23-24։
[145] Zelinskii, էջ 26։
[146] *ՀԱԱ*, Ֆ. 56, ց. 3, գ. 572, թ. 4։
[147] *Աբրահամ Զամինեան, Հայոց Եկեղեցւոյ Պատմութիւն, Բ. մաս*, Նոր Նախիջեւան, 1909, էջ 217։
[148] *Ղուկասեանց*, էջ 47։
[149] *Սանթրոսեան*, էջ 285։
[150] *Ղազարեան, Լեւոնեան*, էջ 85։
[151] *Երուանդ Քասունի, Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցին*, Պէյրութ, Հրատ. *Հայ Աւետարանական Հիմնարկի*, 1986, էջ 34։
[152] *Սանթրոսեան*, էջ 286։
[153] *Ղուկասեանց*, էջ 131, 137։
[154] *Մուրճ*, N 2, 1893, էջ 306։
[155] *Մշակ, Յուլիսի* 20, 1882, N 119։
[156] *Շիրվանզադէ, «Կեանքի Բովից», Երկերի ժողովածու, Հտր. 8*, Երեւան, *Հայպետհրատ*, 1961, էջ 10։
[157] *Խուդոյեան*, էջ 459։
[158] Zelinskii, էջ 26։
[159] *Նոյն*։
[160] *Մշակ*, 4.02.1884 եւ 6.02.1884։
[161] *Մշակ*, 4.02.1884։
[162] «Հին Թուղթեր։ Նիւթեր Շիրվանզադէի Մասին», *ՎՀմ, ԺԲ., Փարիզ*, 1935, Դ. տարի, *Սեպտեմբեր-Դեկտեմբեր, Թիւ* 4, էջ 90. նաեւ՝ Հրանտ Թամրազեան, *Շիրվանզադէ. Կեանքը Եւ Գործը*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1978, էջ 9։
[163] *Մարդանեան, Յովհաննէս Արծրեան*, էջ 2։
[164] *Նոյն*։
[165] *Ֆալախկա կամ փալախա՝ հին դպրոցում աշակերտներին պատժելու գործիք։ Երկու ծայրերը մի ձողի վրա ամրացուած թոկ, որի մէջ կապելով պատժուողի ոտքերը՝ վեր էին բարձրացնում՝ ճիպոտներով հարուածելու համար։ Շաբաթ օրերը բոլոր աշակերտներն անխտիր, մեղաւոր թէ անմեղ, ֆալախկայի էին ենթարկւում, որը կոչւում էր հերթական ֆալախկա (Հայերէն Բացատրական Բառարան, Հտր. IV, կազմեց՝ Ստեփանոս Մալխասեանց, Պէյրութ, 1956, Հրատ. Սեւան մատենաշարի, Թիւ 2, Տպարան Սեւան, 1945, էջ 478)։*
[166] *Մարդանեան, Յովհաննէս Արծրեան*, էջ 3։
[167] *Մշակ*, 9.06.1882։
[168] *Մշակ*, 2.02.1884։
[169] *Նոյն*։

A BRIEF VIEW ON THE HISTORY OF THE ARMENIANS IN SHAMAKHI (19TH C.)

(Summary)

GEVORG STEPANYAN

Rich historical, archival and statistical data and information give ample evidence that Shamakhi, the oldest city in the Eastern Caucasus was inhabited by Armenians from time immemorial.

In the 19th century the Armenians of Shamakhi had an active social, economic and cultural-educational life.

The author assesses the contribution the Shamakhi Armenians made to the growth and development of the economic and socio-cultural aspects of the city, which lost its role after the regional administration was relocated in Baku.

The article names the Armenian figures of the city who held high administrative positions, and highlights particularly the school network of the Armenians of Shamakhi and their endeavour to maintain these Armenian schools.

ADANA AND BEYOND: REVOLUTION AND MASSACRE IN THE OTTOMAN EMPIRE SEEN THROUGH DANISH EYES, 1908/9

MATTHIAS BJØRNLUND
matthiasb@webspeed.dk

INTRODUCTION

5 February 1909, American missionary Dr. H. N. Barnum, of the *American Board of Commissioners for Foreign Missions* (ABCFM) *Euphrates College* in Harput (Kharpert), wrote a letter to Baroness Sigrid Kurck, member of the *Armenia Committee* of the Danish organization *Women Missionary Workers* (*Kvindelige Missions Arbejdere*; KMA).[1] The subject of the letter was partly to praise Danish KMA nurse Maria Jacobsen in her capacity as a member of the ABCFM staff, and partly to express hope for the situation in the Ottoman Empire after the Young Turk (*Committee of Union and Progress*; CUP) revolution of 1908: "Of course, we all rejoice in the new regime. There are many difficulties in the way to the full realization of the new liberties which have been granted, but I hope that these will be overcome gradually. The prejudices of centuries, along with the want of preparation among the people for self-government, will require much time and patient effort, but the beginning is most hopeful."[2]

Many of Barnum's contemporaries, including many of his colleagues, made similar expressions of hope and rejoicing. During the reign of Sultan Abdülhamid II, Protestant missionaries in particular had been viewed as subversive elements, but now they could suddenly experience being called 'pioneers of progress' by Young Turks, as well as being invited as speakers at meetings in Young Turk clubs in places like Harput,[3] a town where people, Armenians and Turks, Christians and Muslims, were singing in the streets when the Sultan was overthrown in 1908, as recalled by Armenian genocide survivor Sarkis Khachatrian.[4]

But one series of event in particular would shake the faith in the Young Turk project of many among groups ranging from missionaries and relief workers to Ottoman Armenians. That was the 1909 Adana massacres or pogroms, also known as the 'Cilician Vespers' (an allusion to the 'Sicilian Vespers,' the massacre of thousands of French in 1282),[5] the 'Adana holocaust,'[6] or simply, as some who witnessed or survived the blunt and numbing trauma of murder and plunder would call it: 'When the

buffalo went mad."[7] It was a shocking series of events marked by the utmost brutality that ensured they were widely noticed, commented on, and analyzed around the world, including in Denmark.[8]

Although, for instance, cooperation between the Armenian *Dashnak* (*Tashnag*) Party (*Armenian Revolutionary Federation*; ARF) and the CUP continued,[9] the two waves of massacres in and around Adana, Cilicia, in April 1909 came to signify a notable and ominous development after the 1908 Young Turk revolution that had restored the liberal 1876 Constitution and promised justice, fraternity, and equality, and had seemed to many to herald a new age of brotherhood and peaceful coexistence. Some 20-30.000 Armenians,[10] mainly adult males, together with two US missionaries, were slaughtered or burned to death by mobs of Turks and Kurds with the participation of the local authorities and the army, massacres that were initiated but not completed during the brief spell between the 'reactionary' countercoup of 13 April to 24 April when the Young Turks took back power.[11]

It still does not seem clear if, or to what extent, (parts of) the CUP leadership were (co-) responsible for the massacres.[12] Local Muslim-Christian tensions and antagonism, economic motives (i.e., the looting of Armenian property), as well as an 'Armenian rebellion,' have at times been blamed.[13] But many, if not most contemporary observers and present-day scholars tend to underline that the main culprits were Sultan Abdülhamid and/or elements among the 'counter-revolutionaries.'[14] They organized the 1909 massacres as a means to, among other things, provoke outside intervention and discredit or humiliate the CUP in the eyes of the general population and the Western world by killing Armenians who were widely seen as representing the ideas behind and benefitting from the 1908 revolution.[15] Also, the aim was to "diminish the number of,"[16] "teach a lesson to,"[17] or simply crush the Christian Armenians who were viewed by many Islamists and conservatives ('Old Turks') as well as by Turkish nationalists as a particularly assertive, prosperous, or subversive group.[18] A British February 1909 report actually describes how such an Islamist reaction to liberalism and religious equality had been taking shape since the autumn of the previous year, resulting in disturbances and widespread rumors of impending massacres.[19]

But despite the fact that many saw Armenians as a group as supporters or even symbols of the liberal constitution that was re-introduced by the Young Turks in 1908, there is also strong evidence that at least partly implicates local, perhaps also national, CUP members, cadres, and police and regular armed forces loyal to the CUP.[20] This seems especially to have been the case during the second round of massacres. In the words of British historian Christopher Walker.

During the period of the killings of 13-16 April the Young Turks had been ousted from power in Constantinople, and the reactionary regime had been reinstated. But on 24 April, as a result of the march on the capital by the 'Action Army' headed by Mahmud Shevket, the parties loyal to the constitution again seized power, and compelled sultan Abdul Hamid (whom they suspected of complicity in the counter-revolution) to go into exile in Salonika. One of the first actions of Mahmud Shevket was to order two regiments of Rumeliot troops – crack Young Turk soldiers – from Beirut and Damascus to Adana. But shortly after their arrival, at dusk on 25 April, further bloodshed and fire began in the city, perpetrated in a more thorough and brutal manner than before. A Turkish version held that the initial firing of the second outbreak came from the Armenian quarter on the troops' encampment. But on inspection this was found to be physically impossible. An alternative explanation for the outbreak was that some Turks dressed up as Armenian revolutionaries, and, declaring that a revolution had begun, opened fire. What followed was that the Rumeliot troops opened fire on the Armenian quarter, and, in the words of H. Charles Woods (who visited Adana soon after these events), 'for a time at any rate took part in the looting of houses and the killing of innocents'.[21]

Interestingly, newly published German diplomatic reports, containing a wealth of important, detailed information on central aspects of the countercoup and the Adana massacres, strongly support the assertion that troops deployed by the CUP were crucial perpetrators, even instigators, of the wave of massacres that took place 24-27 April.[22]

NEWSPAPER COVERAGE IN DENMARK

In Denmark, newspapers and periodicals covered the 1908/9 events quite closely. Humorous papers would print caricatures of the sultan, an ever popular object of ridicule and contempt, especially since the 1890s massacres of 100.000 Armenians or more. One of the caricatures, from 1909, depicts the now deposed despot as a tired, beaten man, thrown out of his palace, with skulls at his feet, surrounded by his harem and leaning against a portrait of the German *Kaiser* Wilhelm II, his old ally.[23] Generally, most welcomed the 1908 revolution and the defeat of the counter-revolution, with the exception of, for instance, the more cynical among conservative observer who saw in the CUP but another example of the triumph of idealistic, but incompetent and dangerous, liberal nationalist theoreticians.[24]

Often, the revolution, counter-revolution, ensuing massacres, and their aftermath made it to the front page of the daily newspapers, with a predominance of sometimes conflicting or confusing news agency

telegrams during or immediately after the April massacres, supplemented with more in depth analyses, reports, and eyewitness accounts over the following months.[25] While there would eventually be little if any doubt expressed in the Danish press about the scope and severity of the Adana massacres, and little doubt that Armenians were the sole or main victims[26] and Turks/Kurds/Muslims the perpetrators, interpretations of other fundamental aspects of the events could vary widely, quite often in accordance with the paper's fundamental values or political affiliations. The following brief analysis of the coverage by two very diverse, but (to various degrees) ideologically committed dailies will serve to illustrate that point.

As was the case during the 1890s Hamidian massacres as well as the Armenian genocide, *Kristeligt Dagblad* (*Christian Daily*) tended to emphasize religious aspects of the persecution and destruction of Armenians – a tendency that was of course to some extent related to the paper's explicit and predominant Christian values.[27] But this did not exclude nuanced analyses, or, for instance, the publication of eyewitness accounts by neutral observers who might emphasize other aspects. 11 June 1909, a lengthy article based on an account by German *Berliner Tageblatt*'s special correspondent described in grueling detail the slaughter of Armenians in Adana, with an emphasis on mob rule, desperate resistance, and troops deployed by the CUP as co-perpetrators,[28] while this 27 August 1909 article with new information on the scope and background of the massacres made it to the front page, describing a well-planned political assassination on a big scale:

> The number of dead seems to be much larger than what was originally believed. According to the exact calculation 1.000 Mohammedans and 21.000 Armenians have been killed, including 5.000 in Adana and the rest in the surrounding region where many villages and farms have been destroyed. Although the bloodbath has not been as encompassing as in 1895, it is, however, horrible enough to create outrage in every compassionate heart. This is because one must not be deceived by the allegations that are raised against the Armenians after each such bloodbath, namely that they have brought their misery upon themselves. This time they were accused of having rejoiced too noisily over the introduction of constitutionalism, something that should have awoken the anger of the Turks. But were not people rejoicing over the Constitution everywhere in the Turkish Empire? One should simply recall how the Jews in Jerusalem celebrated the introduction of the new form of government. [...] To this it can be added that what happened in

> Adana was not a sudden outburst of passion among the people. The massacres were meticulously prepared; several weeks in advance the Kurds, posing as 'harvesters,' had travelled to the Armenian towns, and with the help of coded telegrams from Yildiz [Yildiz Kiosk, the Sultan's palace in Constantinople, MB] the day of the bloodbath had been decided, that which had not only been planned for the Armenians but also for the Young Turks leaders, and which they only avoided by happy coincidence. It was political assassination on a big scale, this the final great bloody accomplishment of the old regime, in every sense a parallel to the 1895 bloodbath.[29]

The socialist daily *Social-Demokraten* (*The Social Democrat*) had been generally positive toward the 1908 CUP revolution like most other Danish papers at the time, including *Kristeligt Dagblad*.[30] In the case of *Social-Demokraten*, the paper's support for the Young Turks was sometimes merely lukewarm, not just because of, for instance, what was explicitly seen as the excessive brutality the CUP used to suppress opposition in the wake of the countercoup – like when a 4 May 1909 article described public mass executions that were part of the "horribly barbaric methods with which the Young Turks continue their cleansing operation among the reactionaries." The article concluded with the cautionary note that "[t]his spectacle reeks of the darkest Middle Ages in the middle of the Young Turk regime's preparations for the march of Western European culture into Turkey."[31]

Social-Demokraten was far from being alone in detecting such early signs of a reversal to the brutal era of Abdülhamid or worse.[32] But what was indeed more pronounced in the paper's coverage of the 1908/9 events was a basic criticism of the CUP that was based on particular socialist analyses. Such analyses led the paper to view the Young Turks as (relatively) 'progressive,' but, after all, not 'true' but only 'bourgeois' revolutionaries who roughly belonged to the same category as the instigators of the 1789 French Revolution.[33]

The socialist worldview of *Social-Demokraten* also thoroughly influenced the paper's explicit and fundamental anti-clericalism in the tradition of much of the contemporary left-wing press. This was clearly expressed 16 April 1909, in a front page attack on the counter-revolutionaries who had declared full implementation of Muslim *Sharia* (*Şeriat*) law one of their main goals[34]: "In good harmony with the actions of the clergy all over the world and of all religions, the Mohammedan priesthood has enthusiastically given assistance of the lowest kind to the forces of reaction." According to the paper,

besides from the Muslim clergy the 'forces of reaction' consisted mainly of "the darkest elements of the Sultanate and of capitalism," crucially aided by what seems to be regarded here as sort of an Ottoman equivalent to the Marxist human category *lumpenproletariat* ('raggedy' or 'rabble' proletariat), the allegedly ignorant, marginalized, often criminal bottom of society that has no class consciousness and can thus be easily manipulated and used as a power base by those very 'forces of reaction.'[35]

Even the variant of Armenophobia expressed on the front page of *Social-Demokraten*, 30 April 1909, seems to have been an early example of a racist negative stereotype-made-'scientific' that was at least partly influenced by a certain branch of Marxist thinking – the widespread variant of the *comprador* or 'middleman' thesis which tends to brand groups like Jews, Greeks, and Armenians as unscrupulous, provocative, parasitic, bourgeois categories of people who allegedly act as agents of international capitalism and imperialism, thus preventing (a certain 'progressive') economic development from taking place in, for instance, the Ottoman Empire.[36] In a background article on *Turkey, the Motley Empire*, Armenians and other Ottoman Christian 'races' were once again designated as cold, calculating, dishonest business-minded people, this time with the twist that they belonged to an economic class who exploited what was described as the "honest" and "easygoing" Turks. But Armenophobia did not keep *Social-Demokraten* from publishing reports and cables describing in no uncertain terms the fate of Armenians, like the following on *Horrible Massacres in Asia Minor*, from the same 30 April 1909 edition:

> Mersina, 29 April. On Saturday, 2 Turkish regiments were disembarked. The soldiers immediately marched to Adana. During the night between Sunday and Monday they have instigated a horrible bloodbath of the local Armenians and set their houses on fire – 1,000 Armenians have been burned alive, and the fleeing Armenians were shot down by the soldiers. In the Adana province it has been estimated that 30,000 people have been killed. The material losses are enormous.

MASSACRES AVERTED

Besides from the massacres that did take place in the Adana region, a number of Danish and other eyewitnesses asserted that these massacres were to be part of a far more widespread scheme concocted by 'counter-revolutionaries.' Apparently, atrocities were carried out, prepared, averted through self-defense, prevented, anticipated, or feared from Konia and Cesarea (Kayseri) to Kessab, Urfa, Alexandretta (Alexandrette; Iskenderun), and beyond.[37] A main leader of the troops loyal to the CUP,

Այս ծաւալուն յետնախորքի վրայ Բարրը մեկնաբանում է Հայկական Խնդրի միջազգայնացման խրթին հարցը, որը պայմանաւորում է 1877-1878ի ռուս-թուրքական պատերազմին յաջորդած բանակցութիւններով եւ հայերի՝ իրենց անմխիթար կացութիւնը բարելաւելու ուղղութեամբ գործադրած ջանքերով: Սակայն, ի տարբերութիւն արեւմտահայութեան կացութեան հանգամանքների մանրազնին եւ համակողմանի քննարկմանը, Հայկական Հարցի ծագման առնչութեամբ նրա մեկնաբանութիւնները խիստ թերի են եւ հեռու՝ սպառիչ լինելուց: Ակնարկելով Սան Ստեֆանոյի պայմանագրում՝ Օսմանեան կայսրութիւնում հայ ժողովրդի իրավիճակի բարելաւում նախատեսող 16րդ յօդուածին, Բարրը շրջանցում է դրա ամենակարեւոր դրոյթը՝ Բարձր Դուռն բարեկարգութիւնների իրականացման գործընթացի շուրջ Ռուսաստանի առջեւ հաշուետու լինելը: Ուստի, օրինաչափ է, որ նա յանգում է պատմական իրականութեանն ակնյայտօրէն հակասող անընդունելի եզրակացութեան. Բարրը պնդում է, որ տէրութիւնները այս յօդուածով յոյսեր էին կապում Թուրքիայի բարի կամքի դրսեւորման հետ, ինչը, նրա կարծիքով, «հաւասարազօր էր բարենորոգումների յուղարկաւորութեանը»[14]: Իրականում պատկերը փոքր-ինչ այլ էր, քանզի 16րդ յօդուածով սահմանուած՝ օսմանեան վարչակարգի հանդէպ Ռուսաստանի վերահսկողութեան կիրառման պայմաններում, նախատեսուած գործընթացը կարող էր յանգեցնել չօչափելի արդիւնքների:

Փոխարէնը, Բարրի գնահատականները միանգամայն ընդունելի են Բեռլինի վեհաժողովին նախորդած ժամանակաշրջանում տէրութիւնների դիրքորոշման առնչութեամբ, որոնք դէմ էին Օսմանեան կայսրութիւնում Ռուսաստանի ազդեցութեան աճին: Որքան տարօրինակ է, այս հարցում արդէն Բարրն արժեւորում է 16րդ յօդուածի նշանակութիւնը, որը, ինչպէս նա նշում է, Հայկական Նահանգներում ապահովում էր Ռուսաստանի գերակշռող ազդեցութիւնը[15]:

Հեղինակը մանրամասն նկարագրում է Բեռլինի վեհաժողովի գումարումն ու ընթացքը եւ գտնում, որ հայերի գործունէութիւնն անհետեւանք չի անցել. «Սան Ստեֆանոյի պայմանագրի 16րդ յօդուածը դարձել է Բեռլինի պայմանագրի 61րդ յօդուածը»,- նշում է նա[16], չընդունելով դրանց միջեւ առկայ էական զանազանութիւնները, որոնք կապուած են Բարձր Դուռն նկատմամբ վերահսկողութեան սահմանման: Այս փաստն, ինքնին, վկայում է, որ նա, ըստ էութեան, չի ըմբռնել ծագման փուլում Հայկական Հարցի իրական իմաստը, ամբողջութեամբ չի կողմնորոշուել դրա առաջացման պատմական հանգամանքներում: Այս պայմաններում, պատահական չէ, որ 1870ականների

դիւանագիտական յարաբերութիւնների քննարկման առնչութեամբ նա նոյնիսկ չի օգտագործում «Հայկական Հարց» արտայայտութիւնը, ինչն արդէն նրա մօտեցման ակնառու թերութիւնն է։ Ի դէպ, հեղինակն առաջին անգամ այն օգտագործում է միայն հայկական կուսակցութիւնների գործունէութեան վերլուծութեան առնչութեամբ[17]։

Բարենորոգումների խնդիրը եւս Բարրը քննարկում է սահմանափակ կտրուածքով, ցաւով մատնանշելով, որ Բեռլինի վեհաժողովից երկու տարի անց Բարձր Դուռն «իրական» բարենորոգումների իրականացման ուղղութեամբ ոչ մի քայլ չի ձեռնարկել եւ սոսկ պահպանել է status quoն։ Այս առնչութեամբ Բարրը փաստում է սոսկ Բարձր Դռան խորամանկ քաղաքականութեան ելեւէջները, չբացայայտելով, սակայն, դրանց իրական պատճառները։ Իրականութեանն ամբողջութեամբ համապատասխանող նրա որոշ մեկնաբանութիւնները յանգում են հետեւեալին՝ Բարձր Դռան վարած քաղաքականութիւնը պարզորոշ վկայում է, որ համիդեան վարչակարգի իրական ծրագրերը համահունչ չեն եղել 61րդ յօդուածի ոգուն։ Օսմանեան կառավարութեանը նա մեղադրում է ցուցադրական զիջումների դիմելու մէջ, որի նպատակը երկրում խառնաշփոթի պահպանումն էր՝ բացառապէս ձեւական փոփոխութիւնների քօղի տակ։ «Բարենորոգումները զուտ պատրանքային բնոյթ ունէին»՝ եզրակացնում է նա[18]։ Այդուհանդերձ, նրա մեկնաբանութիւնները պարզորոշ վկայում են, որ Արեւմտեան Հայաստանի համար նշուած միջազգային պայմանագրերով նախատեսուած բարենորոգումների տապալման հանգամանքները նրա համար մնացել են անհասանելի։

Բացայայտօրէն եւ անհարկի գերագնահատելով Բրիտանիայի հայամէտ քաղաքականութեան նշանակութիւնը, նա կարծիք է յայտնում, թէ իբր յանձինս Բեռլինի վեհաժողովի եւ 1878 Յունիսի 4ին Բրիտանիայի եւ Օսմանեան կայսրութեան միջեւ կոստանդնուպոլսում կնքուած պայմանագրերի՝ հայերն ունէին Արեւմտեան Հայաստանում բարենորոգումների իրականացման երկու երաշխիք[19]։ Բարենորոգումների ձախողումը նա մեկնաբանում է գլխաւորապէս երկրորդական բնոյթի պատճառներով, ինչպիսիք են հայերի՝ վերոյիշեալ կարծեցեալ երկու երաշխիքի գոյութիւնը, կամ կրօնական մոլեռանդութիւնը, որի հետեւանքով մահմեդականները եւրոպական պետութիւնների միջամտութիւնները դիտել են իբրեւ իրենց կրօնական աւանդոյթների դէմ ուղղուած բացայայտ ոտնձգութիւն[20]։ Արդիւնքում, Բարրը չրջանցում է բարենորոգումների ձախողման հիմնական պատճառը՝ եւրոպական տէրութիւնների չահերի մրցակցութիւնը։

Փոխարէնը, սակայն, սուլթանի եւ մեծ տէրութիւնների փոխյարաբերութիւնների վերլուծութեան հարցում նրա մեկնաբանութիւնները չատ աւելի ընդգրկուն են եւ արժանի՝ ուշադրութեան։ Այս հարցում նա ծաւալւում է Աբդուլ Համիդի դիրքորոշման չուրջ, որը 1880ականների

երկրորդ կէսին համաօրէն օգտագործում էր տէրութիւնների անվճռականութիւնը, քանզի գիտակցում էր իր գործած ճիգերների անպատժելիութիւնը։ Ուստի, նա վճիռ է կայացնում կազմակերպել «զայնածաւալ կոտորածներ, որոնք արժանի են կայսրին»[21], հեգնաբար եզրակացնում է հեղինակը։ Այս իրողութիւնը Բարրը համարում է, փաստօրէն, Հայոց Ցեղասպանութեան նախադրեալներից, որի պատասխանատուութիւնն անուղղակիօրէն բարդում է սուլթանից զատ նաեւ եւրոպական պետութիւնների իշխանութիւնների վրայ։

Ընդգծելով ստանձնած պարտաւորութիւնների կատարման հարցում օսմանեան գահակալի յապաղումները, Բարրը նման դիրքորոշումը մեկնաբանում է իբրեւ գիտակցուած քայլ, որը միտուած էր մեծ տէրութիւնների միացեալ գործողութիւնների ջլատմանը։ Այս առումով, հեղինակը գտնում է, որ սուլթանը յիրաւի հասել է իր նպատակին, քանզի Բարձր Դուռն արեւմտահայութեան համար բարենորոգումների իրականացման քայլերի չի դիմել[22]։

Բարրի չարադրանքում Հայկական Հարցին առնչուող հիմնախնդիրների քննարկումը ակնյայտօրէն դրսեւորւում է պատճառակցական կապի մէջ, որը նրա մօտեցման դրուատելի կողմերից է։ Նա հիմնաւորապէս հերքում է հայերի վրայ յաճախ բարդուող՝ իրականութեանը չհամապատասխանող այն զրպարտութիւնը, թէ՝ հայերը ձգտել են անկախութեան։ Փոխարէնը նա պարբերաբար ընդգծում է տասնամեակներ չարունակ նրանց անտրտունջ պահուածքը[23]։ Ապացուցելու համար, որ հայերի պահանջները յեղափոխական բնոյթ չեն կրել, նա հրապարակում է 1878 Յունիսի 13/25ին Բեռլինում Խրիմեան Հայրիկի՝ տէրութիւնների ներկայացուցիչներին յանձնած խնդրագիրը, ինչպէս նաեւ երկու այլ փաստաթղթեր՝ «Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանեան Հայաստանի» եւ «Վիճակագիր Օսմանեան Հայաստանի», որոնք հայ պատուիրակները յանձնել էին վեհաժողովի նախագահին[24]։ Ելնելով արեւմտահայութեան համար ստեղծուած կացութեան առանձնայատկութիւններից, նա յանգում է միակ հնարաւոր հետեւութեան, պնդելով, որ հայերին երկընտրանքի առջեւ կանգնեցրել են տէրութիւնների անպատուղ գործողութիւնները. «Ազգերի կողմից լքուած՝ Հայաստանն այսուհետեւ կարող էր յոյսեր կապել միայն սուլթանի բարեացակամութեան վրայ կամ յենուել իր սեփական ուժերի վրայ»՝ գրում է նա[25]։ Ուստի, 1880ականների կէսերին նոր սերնդի կողմից «յեղափոխական մարտավարութեան» որդեգրումը նա գերադասում է մեկնաբանել սոսկ պայքարի խաղաղ ձեւերի անարդիւնաւէտութեամբ[26]։

ՍԴՀ եւ ՀՅԴ կուսակցութիւնների կազմաւորումը հեղինակը պայմանաւորում է բացառապէս հայերի, մասնաւորապէս երիտասարդութեան՝ ինքնապաշտպանութիւն կազմակերպելու անհրաժեշտութեան գիտակցմամբ։ Նա բացառում է Ցեղասպանութեան ժխտողների հիմ-

նական տեսակէտներից մէկը՝ յեղափոխական գաղափարներին՝ հայերի տուրք տալու հաւանականութիւնը։ Երկու կուսակցութիւնների հիմնական նպատակը Բարրը համարում է օսմանեան վարչակարգի բռնութիւնների չուրջ քաղաքակիրթ աշխարհին հաւաստի տեղեկութիւնների հաղորդումը եւ ըմբոստութիւնների հրահրումը Հայաստանում, սակայն, էական մի վերապահութեամբ՝ եւրոպական ազդեցիկ միջամտութեան ակնկալութեամբ[27]։

Այդուհանդերձ, Բարրը եւս մէկ անգամ ընդգծում է, որ հայերը, կանխազգալով վերահաս կոտորածների անխուսափելիութիւնը եւ նախքան յեղափոխական գործողութիւնների հարկադրաբար դիմելու վճռի կայացումը, ջանացել են հայցել Մեծն Բրիտանիայի աջակցութիւնը, որը ոչնչի չի յանգեցրել[28]։

Մեծն Բրիտանիայի քաղաքականութեանը տուած անկողմնակալ այս գնահատականը, ըստ էութեան, հակասում է նրա նախորդ դիտարկումին եւ վկայում, որ հեղինակը այս հարցում եւս յստակ կողմնորոշում դեռեւս չի ունեցել։ Իսկ ինչ վերաբերում է արեւմտահայութեանը, Բարրն իրաւացիօրէն փաստում է, նոյնիսկ այս պայմաններում, հնչակեանների՝ հարուածին հարուածով պատասխանելու հարցում գրաւած ժխտական դիրքորոշումը։ Այդուհանդերձ, մատնանշելով հայերի՝ բռնակալութեան վրայ խաղաղ միջոցներով ներգործելու ապարդիւնութեան փաստը, նա յանգում է միակ հնարաւոր տրամաբանական հետեւութեան. «Այսօր, ինչպէս եւ նախկինում, միայն յեղափոխութիւնն է շնորհում կեանքի իրաւունքը»[29]։

Հեղինակը մանրամասն քննարկում է Սասունի ապստամբութեան հանգամանքները, սակայն, այս հարցում եւս ցուցաբերում է փոքր-ինչ անհետեւողականութիւն։ Օրինակ, ակնարկելով հայկական ըմբոստութիւններին, նա ոչ միայն չի մեկնաբանում դրանց անմիջական դրդապատճառները, այլեւ, յանիրաւի, դրանք բնորոշում է իբրեւ անողոք ճնշման յանգեցրած յեղափոխութիւն։ Փոխարէնը, Սասունի ապստամբութեան առնչութեամբ Բարրը իրաւացիօրէն մեկնաբանում է ամենաէական տուեալը՝ Աբդուլ Համիդի ղեկավար դերը դրա ճնշման հարցում։ Արդարեւ, սուլթանը անձամբ կարգադրել էր օսմանեան զօրքերի հրամանատար Զեքի փաշային՝ արեան մէջ խեղդել հայկական ապստամբութիւնը։ Ապստամբների աննախադէպ խոշտանգումների, սպանութիւնների ծաւալի հիման վրայ, Բարրը մատնանշում է օսմանեան զօրքերի հիմնական նպատակը, որ՝ «հայկական կոտորածները ոչնչով չզիջեն պատմութեան մէջ արձանագրուած մեծ կոտորածներին»[30]։

1895 Սեպտեմբերի 30ին Կոստանդնուպոլսում հայերի կազմակերպած՝ բարենորոգումների գործադրման ուղղուած ցոյցը Բարրը պատճառաբանում է բարենորոգումների «մայիսեան» ծրագրի գործադր-

ման հարցում Բարձր Դուռն ցուցաբերած չկամութեամբ[31]: *Անկողմնակալ դիրքերից մեկնաբանելով հնչակեանների հիմնական նպատակը՝ տեղեկացնել օսմանեան իշխանութիւններին, որ հայերն այլեւս ցանկութիւն չունեն խաբուել դատարկ խոստումներով, հեղինակն այս պարագայում եւս անուշադրութեան չի մատնում նրանց մօտ ապստամբելու կամ խառնակչութիւններ կազմակերպելու մտադրութեան բացակայութիւնը*[32]:

1895ի ցոյցին յաջորդած իրադարձութիւնների առնչութեամբ (տէրութիւնների միջամտութիւն, սուլթանի՝ Հոկտեմբերի 17ի հրովարտակով բարենորոգումների իրականացման սին խոստումների չդայլում), Բարրին յաջողուել է ամբողջ խորութեամբ բացայայտել Աբդուլ Համիդի հայատեաց քաղաքականութեան իրական դիմագիծը: Տէրութիւններին խաբելով, ինչպէս նա հիմնաւորապէս ապացուցում է, սուլթանն ամբողջ կայսրութեան տարածքում գաղտնաբար կազմակերպում էր յայնածաւալ հայկական կոտորածներ, տարբեր վայրեր ուղարկում իր բանագնացներին՝ տեղերում գտնուող իր ներկայացուցիչներին կարգադրելով կոտորել հայերին: Աբդուլ Համիդի բանագնացները՝ «ոճրի պատգամաւորները»[33], գրգռում էին թուրք եւ քուրդ մահմեդականների առելութիւնը «գեաւուրների»ի նկատմամբ, բորբոքում նրանց կրօնական մոլեռանդութիւնը, պաշտօնեաներին կարգադրում իրականացնել քրիստոնեայ հպատակների համընդհանուր կոտորած[34]: Թէ՛ այս եւ թէ՛ տարատեսակ այլ փաստերի վկայակոչմամբ Բարրը բացայայտում է հայ ժողովրդի դէմ ցեղասպանութեան կազմակերպումը իբրեւ պետական քաղաքականութիւն: Սա նրա ամենամեծ արժանիքն է:

Հեղինակը մասնաւորապէս ընդգծում է օսմանեան տեղական իշխանութիւնների դերը հայերի բնաջնջման կազմակերպման գործընթացում. «Ամէնուր իշխանութիւնները դրդում են մահմեդականներին՝ գործել քրիստոնեաների դէմ: Որոշ վայրերում դրանք նոյնիսկ դիմում են քրդական հրոսակախմբերի օգնութեանը»՝ *նշում է նա*[35]: *Իսկ Դիարբեքիրում տեղի ունեցած կոտորածների հիման վրայ, Բարրն արդէն յանգում է չատ աւելի հատու եզրակացութեան, հաւաստելով, որ հայկական ջարդերը վկայում էին* «թէ ինչ չափով են իշխանութիւններն օժանդակում մարդասպանների գործողութիւններին»[36]:

Բարրի մօտեցման առանձնայատկութիւններից է Աբդուլ Համիդի գահակալութեան օրօք Հայոց Ցեղասպանութեան գործընթացի յարատեւութեան փաստումը 1890ականների յայնածաւալ կոտորածներին յաջորդած ժամանակահատուածում: Անդրադառնալով Արեւմտեան Հայաստանումեւ կից գանազան բնակավայրերում (Ուրֆա, Էրզրում եւ այլուր) մինչեւ 1904 տեղի ունեցած կոտորածներին, հեղինակը հայերի մարդկային կորուստները չի համեմատում 1894ի Սասունում եւ դրան յաջորդած իրադարձութիւնների ընթացքում նրանց տուած մարդկային

ահռելի կորուստների հետ։ Այդուհանդերձ, նա մանրամասն քննարկում է ոչ միայն 1904ի Սասունի կոտորածները, այլեւ արեւմտահայութեան դէմ ուղղուած ցեղասպանային բնոյթ կրող՝ օսմանեան վարչակարգի քաղաքականութեան այլեւայլ դրսեւորումները (մարդկանց խոշտանգումներ, անօրինականութիւններ բանտերում եւն.)[37]։

Շրջանցելով Հայոց Ցեղասպանութեան պատճառների դերակշռող մասը (մասնաւորապէս, Հայկական Հարցին լուծում տալու անհրաժեշտութիւնը, բռնի օսմանացման քաղաքականութեան ձախողումը), ինչը նրա վերլուծութեան խոցելի կողմերից է, Բարրը հիմնաւորապէս բացայայտում է, փաստօրէն, դրանցից միայն մէկը՝ Արեւմտեան Հայաստանի հայաթափումը։ Այս առումով նա նշանակում է Աբդուլ Համիդի վարած քաղաքականութիւնը։ Հեղինակը հաստատում է որ կոտորածների եւ անօրինակ հալածանքների պատճառով հայերի արտագաղթը տարբեր երկրներ հետեւանք է հայերին համակած յուսալքութեան։ Նա միաժամանակ մատնանշում է սուլթանի ջանքերը՝ հայերին պատկանող պատմական տարածքները մահմեդականներով բնակեցնելու[38]. մի փաստ, որը նրա ժամանակակից Ֆրանսիացի պատմաբաններից չատերի ուշադրութիւնից վրիպել է։

Ի վերջոյ, Բարրը մարդասպանների անկաշկանդ գործողութիւնները իրաւամբ մեկնաբանում է մահմեդականների մօտ արմատացած անպատժելիութեան զգացումով, ինչն, անտարակոյս, եւս մէկ անգամ հարեւանցիօրէն հաւաստում է Հայոց Ցեղասպանութեան իրականացումը պետական մակարդակով[39]։

Հայ ժողովրդի ողբերգութեան հարցում Բարրը խստագոյնս դատապարտում է եւրոպական մեծ տէրութիւնների անտարբեր դիրքորոշումը։ Նա առանձնացնում է յատկապէս պատմական այս ժամանակաշրջանում Ֆրանսիայի ամենի հակառակորդ կայզերական Գերմանիային, որը - ինչպէս պատկերաւոր ձեւով նշում է - «իր սրով պատսպարում է թուրքերի յանցանքները»[40]։ Նրա մտորումներում բացայայտօրէն նկատելի է հակագերմանական տրամադրուածութիւնը, ինչն Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին միանգամայն բնորոշ է Ֆրանսիացի բոլոր հեղինակներին։ Միւս կողմից, հեղինակը ձեռնպահ է մնում Ֆրանսիայի Գ. Հանրապետութեան ղեկավարների բացայայտ թրքամէտ քաղաքականութեան քննադատութիւնից։ Ըստ նրա անիրատես հաշուարկների՝ 100.000ի հասնող հայերի մարդկային կորուստները հետեւանք են դիւանագիտութեան հետ կապուած նրանց ունայն յոյսերի։ Իրականութեանը մասամբ համապատասխանող նրա այս եզրայանգումը պարունակում է միաժամանակ չափազանցութեան տարրեր։ Տէրութիւնները ունեն իրենց պատասխանատուութեան մեծ բաժինը։ Առիւծի բաժինը, սակայն, այս հարցում բարդւում է օսմանեան գահակալի վրայ, որի մշակած հայ ժողովրդի բնաջնջման ծրագիրը իրակա-

նացուում էր պետական մակարդակով։ Ինչպէս տեսնում ենք, թէեւ Բարրը բազում փաստերով հաւաստել է նման քաղաքականութեան կիրառումը, այդուհանդերձ, անկարող է գտնուել խուսափելու չափազանցութիւններին տուրք տալուց։

Բարրի մօտեցումն ակնյայտ առաւելութիւնների հետ մէկտեղ ունի նաեւ խոցելի կողմեր։ Նա մանրազնին մեկնաբանում է արեւմտահայութեան կացութիւնը ԺԹ. դարի երկրորդ կէսին, հիմնաւորապէս բացայայտում Հայոց Ցեղասպանութեան իրականացումը պետական քաղաքականութեամբ, հերքում հայերի կարծեցեալ ապստամբութեան վարկածը, սակայն դիւանագիտական յարաբերութիւնների վերլուծութեան եւ, մասնաւորապէս Հայկական Հարցի ծագման նրա մեկնաբանութիւնները խիստ թերի են։ Ամէն դէպքում նրա գիրքը ոչ միայն նպաստել է Հայոց Ցեղասպանութեան շուրջ հաւաստի տեղեկատուութեան տարածմանը, այլեւ նշանակալից ներդրում է, իր ժամանակի գիտութեան չափանիշների կտրուածքով, հարցի գիտական ուսումնասիրութեան ասպարէզում։

L'ABBÉE GRISELLE, *UNE VICTIME DU PANGERMANISME : L'ARMÉNIE MARTYRE*[41]

Համիդեան կոտորածների պատմութեանը մանրամասնօրէն անդրադարձել է նաեւ հոգեւոր գործիչ Աբբա Գրիզէլը, որն ի տարբերութիւն Բարրի, չեչտն ակնյայտօրէն դնում է իրադարձութիւնների նկարագրական կողմի վրայ։ Այդուհանդերձ, նրա որոշ մեկնաբանութիւններն արժանի են ուշադրութեան։

Հեղինակը հիմնւում է հաւաստի, մասնաւորապէս ֆրանսիական սկզբնաղբիւրների վրայ, յաճախակի յղում Ֆրանսիայի Արտաքին Գործերի Նախարարութեան արխիւի վաւերագրերն ամփոփող Դեղին Գիրքը, որից մէջբերում է ընդարձակ քաղուածքներ։

Աբբա Գրիզէլն ընդգծում է «ստրկացման քաղաքականութեան շարունակականութիւնը, որը հետեւողականօրէն իրականացուել է յոգուտ գերազանցութեան յաւակնող ազգութեան» եւ, *ինչպէս Բարրը, փաստարկում է հայ ժողովրդի բնաջնջման գործընթացի յարատեւութիւնը*[42]։

Հայոց Ցեղասպանութեան պատմագրութեան մէջ բուռն բանավէճեր յարուցած այս հիմնախնդրի[43] հանդէպ նման մօտեցումը բխում է Հայկական Հարցի շուրջ հեղինակի որդեգրած իրատես հայեցակարգից։ Հայկական Հարցի ծագումը նա չաղկապում է 1870ականներին տեղի ունեցած դիւանագիտական բանակցութիւններին։ Ի տարբերութիւն մեծաթիւ ժամանակակիցների, ներառեալ՝ Բարրի, հեղինակը թափանցում է հարցի ծագման ակունքներին։ Նա յատակօրէն մատնանշում է Սան Ստեֆանոյի եւ Բեռլինի վեհաժողովների պայմանագրերի՝ արեւ-

մտահայութեանն առնչուող յօդուածների էական տարբերութիւնը։ Մասնաւորում որ բարենորոգումների երաշխաւորումը՝ ըստ երկրորդ փաստաթղթի Ռուսաստանի փոխարէն ստանձնում էին վեց մեծ տէրութիւնները[44]։ Դրանից ելնելով Աբբա Գրիգէլը Հայոց Ցեղասպանութիւնը միանգամայն իրաւամբ մեկնաբանում է իբրեւ սուլթանի որդեգրած՝ Հայկական Հարցին լուծում տալու տարբերակ[45], ինչը պարզորոշ վկայում է, որ նրան յաջողուել է բացայայտել արեւմտահայութեան բնաջնջման հիմնական պատճառը։

Մահմեդականներին բնորոշ մոլեռանդութեան հենքի վրայ, Աբբա Գրիգէլը փաստում է հայերի հանդէպ թուրքերի ունեցած աւանդական ատելութեան նշանակութիւնը հայկական կոտորածներում։ Սա նպաստել է թէ՛ թուրքերի եւ թէ՛ յաճախ նրանց իսկ գոհը դարձած քրդերի համախմբմանը, քանզի այս պարագայում արդէն վերջիններս վերածուել էին իրենց իսկ դահիճների օժանդակ ուժի[46]։ Այս հարցում, սակայն, նրա մեկնաբանութիւնները սպառիչ չեն, քանզի կայսրութեան տարածքում բնակուող քրդերի որոշ մասի մասնակցութիւնը հայերի ոչնչացմանը պայմանաւորուած էր այլեւայլ դրդապատճառներով, նաեւ՝ Աբդուլ Համիդի՝ վերջիններիս միջոցով հայկական կոտորածների իրականացման ցանկութեամբ[47]։

Արեւմտահայութեան հանդէպ հարստահարիչների ատելութիւնն Աբբա Գրիգէլը պատճառաբանում է նաեւ հայերի այնպիսի արժանիքներով, ինչպիսիք են աշխատասիրութիւնը, տարբեր ասպարէզներում բանիմացութիւնը, որոնք աննկատ չեն մնացել օսմանեան իշխանութեան եւ դրա գործակալների կողմից[48]։ Այս պայմաններում, հաշուի առնելով պատմական Հայաստանի բաժանման հանգամանքը եւ ելնելով հայ ժողովրդի չահերից, նա դրական է գնահատում Արեւմտեան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հնարաւոր տարբերակը[49]։

Բեռլինի վեհաժողովին յաջորդած ժամանակաշրջանում արեւմտահայութեան հալածանքները (չարաշահումների սաստկացում, արդարադատութեան կատարեալ բացակայութիւն, համիդիէ զօրամիաւորումների բռնութիւններ) Աբբա Գրիգէլը քննարկում է՝ ըստ Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնի զեկուցագրերի։ Նա հայերի համար ստեղծուած իրավիճակը պատճառաբանում է գլխաւորապէս Եւրոպայի անտարբերութեամբ[50]։

Աբբա Գրիգէլը չի թաքցնում իր հիմնական նպատակը՝ Հայոց Ցեղասպանութեան ապացուցումը՝ սոսկ պաշտօնական եւ անառարկելի վկայութիւններից քաղուած փաստերի վկայակոչմամբ[51]։ Ըստ այդմ՝ ձեռնպահ մնալով Ցեղասպանութեան առաջին փուլի պատմութեան հիմնահարցերի գիտական մեկնաբանութիւնից, նա սահմանափակւում է 1894-1896ի հայկական կոտորածների բազմաթիւ մանրամասների թուարկմամբ։ Ուստի՝ յղելով ֆրանսիական սկզբնաղբիւրներ, մասնա-

ւորապէս, Դեղին Գիրքը եւ Սվագում (Սերաստիա) Ֆրանսիայի փոխհիւպատոս Կարլիէի տիկնոջ օրագիրը[52]*, իր առջեւ դրուած խնդիրը նա, ըստ էութեան, կատարել է: Ըստ այս սկզբնաղբիւրներից մէջբերուած ընդարձակ քաղուածքների՝ նա ուրուագծում է Արեւմտեան Հայաստանի տարբեր նահանգներում կատարուող կոտորածների հաւաստի պատկերը*[53]*:*

Այնուամենայնիւ, Աբբա Գրիգէլի շարադրանքում նկատւում են նաեւ սակաւաթիւ հեղինակային միջամտութիւններ, որոնք մասամբ վերաբերում են օսմանեան իշխանութիւնների յանցագործ քաղաքականութեան բացայայտմանը: Հեղինակը նշում է օսմանեան իշխանութիւնների կրաւորական ընթացքը, որով լռութիւն էին պահպանում, պատասխանատուներին թաքցնում կամ որոշ տեղական բարձրաստիճան պաշտօնեաներ պաշտօնի բարձրացում էին ունենում՝ իբրեւ հայկական կոտորածների ծաւալման համար գործադրած ջանքերի վարձատրութիւն[54]*:*

Առաւել արժէքաւոր են, սակայն, Հայկական Հարցում մեծ տէրութիւնների որդեգրած քաղաքականութեանն առնչուող Աբբա Գրիգէլի մեկնաբանութիւնները: Իր գործընկերների նման, նա եւս խստիւ նշաւակում է Գերմանիայի հակահայ քաղաքականութիւնը, Վիլհելմ Բ. կայսրին անուանում Կարմիր Սուլթանի «բարեկամ ու շողոքորթ» եւ խարազանում Ֆրանսիայի ախոյեանին այն «ամօթալի աջակցութեան» համար, որը նա ցուցաբերել է քրիստոնեայ ժողովրդի դահիճներին՝ նրա կատարեալ բնաջնջման ընթացքում[55]*: Միաժամանակ որոշ հայեցակարգային հարցերում նա չեղւում է ԺԹ. դ. վերջի եւ Ի. դ. սկզբի իր նախորդների տեսակէտներից եւ առաջադրում շատ աւելի ընդգրկուն մեկնաբանութիւններ:*

Այս առումով, հարկ է առանձնացնել Ռուսաստանի քաղաքականութեան գնահատականը, քանզի այս հարցում Աբբա Գրիգէլը զուսպ, այդուհանդերձ, ի տարբերութիւն շատ ուրիշների, քննադատում է ցարին, որը երկար ժամանակ չի ցանկացել զբաղուելու Հայկական Հարցով[56]*: Քննարկուող ժամանակաշրջանում Ֆրանսիացի պատմաբանները եղնելով ռուս-ֆրանսիական դաշինքի ամրապնդման անհրաժեշտութիւնից՝ ձեռնպահ են մնացել Ֆրանսիայի դաշնակցի հասցէին քննադատական բնոյթի եզրայանգումներից*[57]*: Հեղինակի անկողմնակալ եւ բացայայտող այս դիտարկումը կարելի է մեկնաբանել սոսկ այն բանով, որ նրա գիրքը թղթին է յանձնուել Առաջին Համաշխարհային Պատերազմի սանձազերծումից յետոյ, երբ դաշնակցին հաճոյանալու կարիքը Ֆրանսիան այլեւս չունէր*[58]*:*

Հեղինակը, սակայն, շրջանցում է ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարի սկզբին Ռուսաստանի արեւելեան քաղաքականութեանը համահունչ Ֆրանսիայի թրքամէտ արտաքին քաղաքականութեան վերլուծութիւնը

եւ խարազանումը։ Ի դէպ, այդ քաղաքականութիւնը մեծապէս նպաստել է Հայոց Ցեղասպանութեան առաջին փուլի իրականացմանը։ Փոխարէնը, նա մեծ տեղ է յատկացնում Օսմանեան կայսրութեան տարածքում հաւատարմագրուած ֆրանսիացի դիւանագէտների՝ կամբոնի, Դիարբեքիրում փոխհիւպատոս Մէյրիէի անձնուրաց գործունէութեան դրուատմանը, բնորոշելով նրանց վարքագիծն իբրեւ հերոսական եւ մատնանշելով, որ առանց նրանց միջամտութեան կոտորածներն աւելի սաստիկ կը լինէին[59]։ Այս պարագայում, մեր կարծիքով, նրան որեւէ չափազանցութեան մէջ մեղադրել ճիշդ չէ։

E. DOUMERGUE, *L'ARMÉNIE. LES MASSACRES ET LA QUESTION D'ORIENT. CONFÉRENCE, ÉTUDES ET DOCUMENTS*

Աբբա Գրիզէլի նման Մոնտոբոնում Բողոքական Աստուածաբանութեան Ֆակուլտէտի դեկան Էմիլ Դումերգին եւս յաջողուել է բացայայտել Հայկական Հարցին լուծում տալու անհրաժեշտութեանը յանգող Հայոց Ցեղասպանութեան հիմնական պատճառը։ Համիդեան կոտորածների պատմութիւնը նա հպանցիկ քննարկել է 1916 Յունուարի 16ին Փարիզում՝ Հայկական Հարցին եւ Հայոց Ցեղասպանութեանը նուիրուած հրապարակային դասախօսութիւնում[60]։ Հայոց Ցեղասպանութեան առաջին փուլի պատմութիւնը նա մեկնաբանում է ելնելով գլխաւորապէս Հայկական Հարցի ծագման ակունքներից։

Նախ հայ ժողովրդի պատմական զարգացման յետնախորքի վրայ մի քանի անկողմնակալ հպումներով նա ուրուագծում է Օսմանեան կայսրութեան կազմաւորման ընթացքը։ Թուրքերին բնորոշելով իբրեւ կենտրոնական Ասիայի անծայրածիր անապատներից եկած հորդաների, Դումերգն իրաւամբ նրանց համեմատում է Իրանի եւ Հայաստանի վրայով անցած փոթորկի հետ, որոնք գրաւելով կոստանդնուպոլիսը, կազմաւորել են աւելի քան կայսրութիւն. «Նրանք ստեղծել են ասիական ոգմամոլութեան աշխարհը»[61]։ Ինչպէս տեսնում ենք, նա իւ սկզբանէ ընդգծում է Օսմանեան կայսրութեան ոգմամոլ բնոյթը։ Դրա վրայ է խարսխւում նրա հայեցակարգը։

Դումերգը ըստ պատշաճի բացայայտում է թուրքերի առանձնայատկութիւնը՝ իբրեւ Օսմանեան կայսրութիւնում տիրապետող ժողովրդի։ Ըստ այդմ, իւ վիճակի չլինելով հանրօգուտ աշխատանքի, նրանք գոյատեւում էին քրիստոնեայ հպատակներին չահագործելու միջոցով։ Օսմանեան կառավարութիւնը բնորոշելով իբրեւ վատթարագոյնը բոլոր կառավարութիւնների թւում, նա իրաւամբ նշում է, որ բոլոր ոչթուրք ժողովուրդներին այն վերաբերւում էր իբրեւ «կթան կովեր»ի եւ միայն դրանով է բացատրում թուրքերի հանդուրժողականութիւնը քրիստոնեաների հանդէպ[62]։

Օսմանահպատակ քրիստոնեաների թւում հեղինակն առանձնացնում է հայերին եւ նրանց հակադրում թուրքերին: Ըստ նրան, եթէ թուրքերը ռազմամոլ են, գիտութիւնների, արուեստների եւ առեւտրի հետ առնչութիւն չունեցող, ապա հայերն առեւտրի ասպարէզում ունեն բացառիկ ունակութիւններ եւ քանի որ խաղաղասէր են՝ յեղափոխական տրամադրուածութիւնները նրանց բնորոշ չեն[63]: Հայոց Ցեղասպանութեան ժխտողական ուղղութեան ներկայացուցիչների կողմից առ այսօր շահարկուող այս էական հիմնախնդրի շուրջ Դումերգը, ի տարբերութիւն Բարրի, սահմանափակւում է սոսկ այս ընդհանուր բնոյթի յիշատակմամբ: Դումերգը հերքում է այն թիւր թեզերը թէ հայերի հանդէպ բռնութիւնների պատճառը արեւմտահայութեան կարծեցեալ յեղափոխական գործունէութիւնն է:

Հայկական Հարցի ծագման խնդիրը Դումերգն ուսումնասիրում է պատմական Հայաստանի բաժանման հենքի վրայ, որին մեծ նշանակութիւն է յատկացնում: Ընդգծելով, սակայն, Արեւմտեան Հայաստանի բաժանումը վեց վիլայէթի, նա յատկօրէն չի մատնանշում այն պատմական հանգամանքները, որոնց հետեւանքով 1555ին Ամասիայի եւ 1639ին Կասրէ-Շիրինի պայմանագրերով տեղի է ունեցել Հայաստանի մասնատումը Թուրքիայի եւ Պարսկաստանի միջեւ, ինչն արդէն նրա բացթողումներից է[64]:

1870ականներից սկիզբ առած եւ մինչեւ իր օրերը յարատեւած միջազգային ճգնաժամի գլխաւոր պատճառները, որոնք յանգեցրել են Առաջին Համաշխարհային Պատերազմին, Դումերգը պայմանաւորում է 1878ի Բեռլինի վեհաժողովի ընդունած որոշումներով: Բեռլինի պայմանագրում՝ ըստ նրա պատկերաւոր համեմատութեան, «հազիւ տեսանելի տառերով դեւն ուրուագծել էր 1876-1916ի իրադարձութիւնների ամբողջ ծրագիրը»[65]: Ժթ. դարի վերջին տասնամեակներում միջազգային յարաբերութիւնների ընթացքը քննարկել՝ նման խիստ նեղ տեսանկիւնից, մենք անընդունելի ենք համարում: Մանաւանդ որ (պայմանագիրը չէր ուրուագծում հակամարտ դաշինքների ձեւաւորումը Եւրոպայում), նա համեմատական քննութեան է ենթարկում Սան Ստեֆանոյի՝ «արդարութեան եւ ազատագրման», ինչպէս նաեւ միաժամանակ՝ «Ռուսաստանի համար խիստ շահաւէտ» եւ Բեռլինի «անարդար ու նողկալի» պայմանագրերը: Դումերգը թէեւ, ըստ էութեան, չի մեկնաբանում այդ պայմանագրերում ամփոփուած՝ հայ ժողովրդի ճակատագրին առնչուող յօդուածների տարբերութիւնը, այդուհանդերձ, առնուազն բաւարարւում է այդ էական հանգամանքին առնչուող հպանցիկ ակնարկով, մատնանշելով, որ վերջինն անվաւեր էր դարձնում Ռուսաստանի ստանձնած բոլոր պարտաւորութիւնները[66]: Ըստ այդմ, այս պարագայում, միանգամայն իրաւամբ նա եզրակացնում է. «Թուրքիան փրկուած էր»[67]:

Միջազգային ասպարէզում իրադարձութիւնների ծաւալման նկատմամբ Դումերգի հայեցակարգի հիմնական առանցքը մեծ տէրութիւնների՝ բարենորոգումների իրականացման հարցում օսմանեան կառավարութեան հանդէպ վերահսկողութեան սահմանման հիմնախնդիրն է։ Նա իրաւամբ մեծ նշանակութիւն է տալիս Բեռլինի պայմանագրով եւրոպական պետութիւնների ստանձնած պարտաւորութիւններին՝ սուլթանի ներքին գործերին վերահսկողութեան սահմանմանը։ Այս վերահսկողութիւնը կանխորոշել է տէրութիւնների եւ Օսմանեան կայսրութեան փոխյարաբերութիւնների զարգացման ընթացքը, եւ ըստ նրա մեկնաբանութեան՝ վերածուել վերջինիս համար ստորացուցիչ իրողութեան։ Ակնյայտօրէն չափազանցելով հոգեբանական այս գործօնի նշանակութիւնը եւ անհարկի խտացնելով գոյները, Դումերգը տէրութիւնների վերահսկողութեան սահմանումն անիրաւացիօրէն ներկայացնում է իբրեւ սադրանք, ինչը համահունչ է նրա հայեցակարգին։ Իրականում, սակայն, մեծ տէրութիւնների՝ Օսմանեան կայսրութեան ներքին գործերին միջամտելու եւ վերահսկողութիւն սահմանելու հեռանկարը, անտարակոյս, չիկացրել է մթնոլորտն օսմանեան պետութեան ղեկավար շրջանակներում, բորբոքել սուլթանի եւ նրա համախոհների կրքերը, մեծապէս նպաստել երկրում ազգայնամոլութեան վերելքին։ Այդուհանդերձ, մեր համոզմամբ, դրանից նման ծայրայեղ, չափազանցուած հետեւութեան յանգելը ճիշտ չէ։ Առաւել եւս Դումերգի իսկ ուրուագծած՝ կայսրութիւնում տիրող իրավիճակի յետնախորքի վրայ, վերահսկողութեան սահմանումը կարելի է գնահատել սոսկ իբրեւ 1880-90ականներին իրավիճակի գերլարման առիթ, բայց ոչ սադրանք։

Ինչպէս ցոյց տուեց իրադարձութիւնների յետագայ ընթացքը, արեւմտահայութեան հանդէպ տէրութիւնների ստանձնած պարտաւորութիւնները, յիրաւի, կրում էին ձեւական բնոյթ։ Միայն այս առումով արդէն կարելի է համաձայնուել Դումերգի հիմնական հետեւութիւններից մէկի հետ, թէ՝ Բեռլինի պայմանագիրը լինելով աւելին, քան սխալ՝ «յանցանք էր»[68]։ Մասնաւորապէս արեւմտահայութեան համար այն, իրօք, ունեցել է ճակատագրական նշանակութիւն, ինչը փաստել է նաեւ հեղինակը. «Հայաստանի եւ աշխարհի վիճակը ներտուած էր»[69]։

Դումերգը, սակայն, ոչնչով չի հիմնաւորում մեծ տէրութիւնների՝ Հայկական Հարցում որդեգրած քաղաքականութեան պատճառները։ Նա, ըստ էութեան, խուսափում է մեկնաբանել արեւմտահայութեան ճակատագիրը կանխորոշած, մասնաւորապէս Օսմանեան կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանութեան հաւատարիմ մնալու նրանց անսասան դիրքորոշումը։

Դումերգի առաջադրած՝ Հայկական Հարցի մեկնաբանութեան կապակցութեամբ նախ, հարկ է նշել, որ նա չի մանրամասնում դրա ծագ-

ման հանգամանքները։ Փոխարէնը, ելնելով իր հայեցակարգից, նա ծաւալւում է Աբդուլ Համիդի՝ եւրոպական տէրութիւնների վերահսկողութիւնից եւ յետագայ ստորացումներից ու սպառնալիքներից ձերբազատուելու մտադրութեան շուրջ։ Միայն այս առնչութեամբ արդէն առաջին անգամ նա յիշատակում է «Հայկական Հարց»ի գոյութիւնը, որի լուծման «ամենայուսալի միջոցը», ինչպէս նա մեկնաբանում է՝ ըստ սուլթանի մտայնութեան, յանգում էր հայերի ոչնչացմանը[70]։ Թէեւ նրան հասու է, ինչպէս տեսնում ենք, Հայոց Ցեղասպանութեան գլխաւոր պատճառը, այդուհանդերձ, ըստ էութեան, նա այն հիմնաւորապէս չի մեկնաբանում։ Հետեւաբար, ժամանակաշրջանի պատմութեանն անհրաժեշտ պատմաբանի համար մնում է անհասկանալի, թէ ի՛նչ հանգամանքներում է ծագել Հայկական Հարցը եւ առաւել եւս ի՛նչ է այն։ Քանզի այս խնդիրների շուրջ արդէն նա գերադասում է ձեռնպահ մնալ մեկնաբանութիւններից։

Հայոց Ցեղասպանութեան առաջին փուլի սանձազերծման մասին, հեղինակը սոսկ հպանցիկ յիշատակում է Աբդուլ Համիդի նախապատրաստական միջոցառումները։ Նա անդրադառնում է մասնաւորապէս 1890ի համիդիէ զօրամիաւորումների կազմաւորման, որոնց անդամներին անուանում է «դաժան կողոպտիչներ», մանրամասնում, որ սուլթանը նրանց չնորհել էր արտօնութիւններ, իսկ նրանց զոհերին զրկել նոյնիսկ «բողոքելու իրաւունքից»[71]։

1894ին սուլթանի կարգադրութեամբ տեղի ունեցած Սասունի կոտորածի մասին եւս հեղինակը յիշատակում է թռուցիկ[72]։ Դրան յաջորդած եւրոպական պետութիւնների միջամտութեանն առնչուող նրա դիտարկումները խիստ մակերեսային են։ Այս կապակցութեամբ, սակայն, մենք համաձայն ենք նրա հիմնական մեկնաբանութիւններից մէկի հետ, թէ՝ այդ միջամտութիւնն ընդամէնն արագացրել է սուլթանի ծրագրի իրականացումը եւ նպաստել 1895ի հայկական վեց վիլայէթներում կոտորածների ծաւալմանը[73]։

Ինչպէս տեսնում ենք, Հայոց Ցեղասպանութեան պատմութեան խնդիրների թւում Դումերգն ուշադրութիւնը կենտրոնացնում է գլխաւորապէս մեծ տէրութիւնների միջամտութեան հանգամանքի վրայ։ Կոտորածների առնչութեամբ նա սահմանափակւում է սոսկ մի քանի, սակայն, խիստ կարեւոր մանրամասների թուարկմամբ։ Նա պարբերաբար, այդ թւում, ըստ Լեփսիուսի տուեալների, փաստում է սուլթանի ղեկավար դերը եւ դրանով իսկ առնուազն ակնարկում թէ Հայոց Ցեղասպանութիւնն իրականացել է պետական մակարդակով[74]։ Հարկ է մատնանշել, որ Դումերգը չի նպատակադրել իրադարձութիւնների մանրամասներին թափանցել։ Նա հաւաստի տուեալներ չի ունեցել անգամ 1894-1896ի արեւմտահայութեան զոհերի քանակի շուրջ, այլ պարփակելով 200.000ի սահմանում[75]։ Իսկ կոտորածների առնչութեամբ

եւրոպական տէրութիւնների՝ ըստ էութեան դիտողի դերում հանդէս գալու մասին, հեղինակը բաւարարւում է քննադատական մի քանի անշան դիտարկումներով[76]:

Ջնայած ընդհանուր բնոյթի դիտարկումներին եւ յաճախ ոչ-սպառիչ մեկնաբանութիւններին, Դումերգին, այդուհանդերձ, յաջողուել է ցուցաբերել վերլուծական մօտեցում, բացայայտել Աբդուլ Համիդի՝ Հայկական Հարցում որդեգրած քաղաքականութեան դիմագիծը եւ յանգել թէպէտ ոչ-ընդգրկուն, այդուհանդերձ, ընդհանուր առմամբ, անկողմնակալ եւ իրատես հետեւութիւնների:

JOSEPH DENAIS, « LA TURQUIE NOUVELLE ET L'ANCIEN RÉGIME »

Դումերգի դասախօսութեան նախորդել է գիտական նշանակութեան առումով նուազ կարեւոր՝ գրող եւ լրագրող Ժոզէֆ Դենէի (1851-1916)՝ 1908ի երիտթուրքական յեղափոխութեանը յաջորդած ժամանակաշրջանում Թուրքիայում տեղի ունեցող խմորումներին նուիրուած, 1908 Մարտի 8ին Փարիզում կայացած, «Նոր Թուրքիան Եւ Հին Վարչակարգը» հրապարակային դասախօսութիւնը, որի ընթացքում նա մակերեսայնօրէն քննարկել է նաեւ 1894-1896ի կոտորածների պատմութեանն առնչուող որոշ խնդիրներ[77]:

Հեղինակն, աւելի քան Դումերգը խուսափում է իրադարձութեան մանրամասներին թափանցելուց: Դենէի մօտեցման հիմնական արժանիքը Հայոց Ցեղասպանութեան առաջին փուլի իրականացման փաստումն է պետական քաղաքականութեան մակարդակով: Նա մէջբերում է առ այդ արեւմտահայութեան բնաջնջման գործընթացում օսմանեան կենտրոնական իշխանութիւնների, մասնաւորապէս Երիտթրքի Պալատի[78] ղեկավար դերը բացայայտող տարբեր հաւաստի փաստեր[79]:

Հայոց Ցեղասպանութեան սանձազերծման պատասխանատուութիւնը Դենէն բարդում է Օսմանեան Պետութեան ղեկավարների վրայ, որոնք յղացել են արեւմտահայութեան ոչնչացման ծրագիրը: Միաժամանակ, սակայն, նա շրջանցում է թուրքերի եւ քրդերի մասնակցութիւնն այդ իրադարձութեան վրայ եւ նսեմացնում Ցեղասպանութեան գործընթացի վրայ իր էական դրոշմը թողած՝ նրանց խիստ բնորոշ կրօնական մոլեռանդութեան նշանակութիւնը, ինչն արդէն բացայայտ շեղում է պատմական իրականութիւնից: Մատնանշելով կայսրութեան տարբեր վայրերում արձանագրուած մահմեդականների՝ հայերին ցուցաբերած օժանդակութեանն առնչուող փաստեր, որոնք անառարկելիօրէն վկայում են գթասիրտ մահմեդականների՝ իրենց դաւանանքը չընդունող անձանց հանդէպ ցուցաբերած օգնութեան մասին[80], նա, ըստ այդմ, մահմեդականների մոլեռանդութիւնը, յանիրաւի, բնորոշում է ընդամէնն իբրեւ «կարծեցեալ»[81]: Հարկ է նշել, որ այս պարագայում

Դենէն անտեսում է մահմեդականների կրօնական մոլեռանդութեանն առնչուող՝ ֆրանսիական բազմաթիւ փաստաթղթերի ժողովածուներում, այդ թւում Դեպքին Գիրքում, հրապարակուած անհամար արժանահաւատ փաստերը[82], որոնց նա, հաւանաբար, չէր կարող անտեղեակ լինել։ 1890ականների պատմութիւնը Դենէն մեկնաբանում է գլխաւորապէս ամբողջական իրականութեանն արդէն ամենեւին չհամապատասխանող այս հենքի վրայ։

Պետական քաղաքականութեան մակարդակով Հայոց Ցեղասպանութեան իրականացման փաստը հաւաստող Դենէի ցուցաբերած նման անընդունելի մօտեցման առնչութեամբ հարկ է հաշուի առնել այն պատմական ժամանակաշրջանը, երբ նա հանդէս է եկել այս զեկուցմամբ։ Երիտթուրքական յեղափոխութեամբ՝ 1876ի օսմանեան սահմանադրութեան վերահաստատումից յետոյ, նա եւ իր ժամանակակիցները, անտարակոյս, մեծ յոյսեր են կապել, մասնաւորապէս կայսրութեան քրիստոնեայ հպատակներին ազատութիւններ չնորհելու՝ երիտթուրքերի չդայլած սին խոստումների հետ։ 1908ի յեղափոխութիւնից յետոյ մասնաւորապէս թուրք մահմեդականների՝ քրիստոնեաների հետ խաղաղ գոյակցելու անիրատես հեռանկարը նրան կարող էր միայն ապակողմնորոշել։ Մեր կարծիքով այդ հեռանկարը դարձել է Ցեղասպանութեան իրականացման վրայ կրօնական մոլեռանդութեան թողած դրոշմի ոչ-սպառիչ գնահատման հաւանական պատճառներից։ Բացի դրանից, հնարաւոր է եւս մէկ պատճառ, որը եւս սերտօրէն առնչւում է 1908ի յեղափոխութեան հռչակած՝ կայսրութեան ժողովուրդների թէական իրաւահաւասարութեանը։ Չի բացառւում, որ հաշուի առնելով ստեղծուած նոր իրավիճակի առանձնայատկութիւնները, նման կողմնակալ մօտեցում Դենէն ցուցաբերել է գիտակցաբար՝ հայերի եւ երիտթուրքերի միջեւ հաշտութեան եզրերի հաստատմանը նպաստելու մտադրութեամբ։

E. LEMONON, *L'EUROPE ET LA POLITIQUE BRITANNIQUE (1882-1911)*[83]

Ինչպէս եւ 1890ականներին, այս ժամանակաշրջանում եւս Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան առաջին փուլի պատմութեանն առնչուող խնդիրներին անդրադարձել են նաեւ որոշ ֆրանսիացի իրաւաբաններ։ Նրանք արեւմտահայութեան ճակատագրին առնչուող հիմնահարցերը վերլուծել են միջազգային յարաբերութիւնների հենքի վրայ։

Մասնաւորապէս, Էռնեստ Լեմոնոնը՝ 1882-1911ի Բրիտանիայի արտաքին քաղաքականութեանը նուիրուած գրքում համառօտակի քննարկել է նաեւ Հայկական Հարցի պատմութիւնը՝ Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի հակամարտութեան յետնախորքում[84]։

Առանց խորամուխ լինելու հայկական կոտորածների պատմության մանրամասներում, Լեմոնոնն ուշադրությունը բեւեռում է գլխաւորապէս 1890ականներին Հայկական Հարցում մեծ տէրությունների շահերի բախման ուսումնասիրության վրայ, եւ ցուցաբերում ակնյայտ միտումնաւոր մօտեցում: Նրա հիմնական նպատակը Ֆրանսիայի արեւելեան քաղաքականության հիմնաւորումն է եւ ջատագովումը, մասնաւորապէս՝ Օսմանեան կայսրության տարածքային ամբողջականության պահպանության հարցում:

Տուրք տալով ծայրայեղությիւնների, հեղինակը մեծապէս չափազանցում է Բրիտանիայի արտաքին քաղաքականության չարագուշակ հետեւանքները Մերձաւոր Արեւելքում, ինչը միանգամայն համահունչ է պատմական այս ժամանակաշրջանում Ֆրանսիական պատմագրության ընդհանուր ոգուն: Հայկական Հարցում այդ երկրի քաղաքականության մեկնաբանության ասպարէզում Լեմոնոնի ընդգծուած միակողմանի դիրքորոշումը դրսեւորում է երկու հիմնական կտրուածքներով: Անթաքոյց չեղուելով պատմական իրականությիւնից, նա նախ մեծապէս գունազարդում է «Մշուշապատ Ալբիոն»ի չահագրգռուածությիւնն արեւմտահայության համար նախատեսուող բարենորոգումների իրականացման հարցում: 1878 Յունիսի 4ի պայմանագրի կապակցությեամբ հեղինակը պնդում է, որ Հայաստանում նախատեսուող բարենորոգումների հարցը Բրիտանիան իբր վերածել էր «անգլիական գործ»ի. չահագրգռուած էր դրանց իրականացման հարցով եւ դրանցով միայն իբր ինքն էր զբաղուում, քանզի միջազգային պայմանագրերը նրան ընձեռել էին բացառիկ հնարաւորությիւն Հայաստանը հիմնաւորապէս իր ազդեցությեան ոլորտ ընդգրկելու համար[85]: Այս խիստ չափազանցուած հետեւությեամբ հեղինակը ցանկանում է առարկայական դարձնել Բրիտանիայի կարծեցեալ նպատակը՝ Օսմանեան կայսրության տարածքում իրավիճակի գերլարումը, որով ակնյայտ կը դառնար Աբդուլ Համիդ Բ-ի թուլությիւնը եւ հնարաւորությիւն կ՝ընձեռէր բրիտանական կառավարությեանը սուլթանի ներքին գործերին զինուած ճանապարհով միջամտելու նպատակայարմարության, ինչն «Անգլիային թում էր անհրաժեշտ»[86]:

Լեմոնոնը խնդիր է դրել Բրիտանական կառավարությիւնն իբրեւ Օսմանեան կայսրության տրոհման կողմնակից անարդարացիօրէն ներկայացնել, ինչը պայմանաւորուած է Բրիտանիայի կողմից Եգիպտոսի բռնագրաւմամբ: Իրականում, տուեալ ժամանակաշրջանում, Բրիտանիայի քաղաքականությիւնը ըստ էութեան, միտուած էր գլխաւորապէս կայսրության տարածքային ամբողջականության պահպանությեանը[87]:

Իր համոզմամբ, Ֆրանսիայի ռազմավարությեանն անյարիր՝ Բրիտանիայի քաղաքականությեանը նա հակադրում է Գ. Հանրապետու-

թեան եւ Ռուսաստանի ղեկավար շրջանակների խոհեմ քաղաքականութիւնը, որոնք հետամուտ լինելով Օսմանեան Կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանման, սուլթանին խորհուրդ էին տալիս վարել «զգոյշ եւ չափաւոր» քաղաքականութիւն, իրականացնել բարենորոգումներ եւ լիցքաթափել իրավիճակը: Լեմոնոնը դրուատում է Բրիտանիայի զինուած միջամտութիւնը խափանելու խնդրում՝ 1894-95 եւ 1896-98ին Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարար Գաբրիէլ Հանոտոյի ջանքերը: Վերջինս, Օսմանեան կայսրութեան ներքին գործերին չմիջամտելու սկզբունքին հաւատարիմ[88], պարտադրել է նրան դիմել հայերի օգտին զիջումների, ինչպիսին է օրինակ համաներումը[89]:

Միջազգային յարաբերութիւնների պատմութեանն առնչուող հիմնախնդիրները Լեմոնոնը քննարկում է խիստ միտումնաւոր դիրքերից, ինչը չի նպաստում իրադարձութիւնների շուրջ հաւաստի պատկերացումների ձեւաւորմանը: Դա պայմանաւորուած է գլխաւորապէս Ֆրանսիայի արտաքին քաղաքականութեանը արդարացիութիւն տալու անհրաժեշտութեամբ: Միաժամանակ, նրա չարադրանքում զգալի են ԺԹ. դարի վերջի եւ Ի. դարի սկզբի ֆրանսիական պատմագրութեանը բնորոշ հակաանգլիական միտումները:

F. SURBEZY, *LES AFFAIRES D'ARMÉNIE ET L'INTERVENTION DES PUISSANCES EUROPÉENNES (DE 1894 À 1897)*

Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան առաջին փուլի պատմութեան որոշ հիմնախնդիրներ վերլուծել է նաեւ մէկ այլ իրաւաբան՝ Ֆրանսուա Սուրբեզին: Նա 1911ին Մոնպելիէի Համալսարանում պաշտպանել է «Հայաստանի Գործերը եւ Եւրոպական Տէրութիւնների Միջամտութիւնը (1894-1897 թթ.)» դոկտորական ատենախօսութիւնը[90]: Հիմնուելով գլխաւորապէս Դեղին Գիրքում ամփոփուած վաւերագրերի վրայ, հեղինակն անկողմնակալ դիրքերից քննարկում է Հայկական Հարցին եւ Հայոց Ցեղասպանութեան առաջին փուլին առնչուող մի շարք էական հիմնախնդիրներ: Իբրեւ իրաւաբան, նա չեչտը դրել է Հայկական Հարցի հանդէպ եւրոպական տէրութիւնների որդեգրած քաղաքականութեան մեկնաբանութեան վրայ՝ իր ժամանակի միջազգային իրաւունքի չափանիշների կտրուածքով:

Սուրբեզին նախ համառօտակի անդրադառնում է հայ ժողովրդի պատմական անցեալին, Հայաստանի ռազմակալմանը՝ թուրքերի կողմից, որի հետեւանքով հայերը հեծել են օսմանեան լծի տակ: Թուարկելով օսմանահպատակ հայերի հարստահարմանը վերաբերող փաստեր, նա ոչ միայն նրանց կացութիւնն է բնորոշում իբրեւ ողբալի, այլեւ պարզորոշ ընդգծում է նման իրավիճակի առկայութիւնն «իրենց (հայերի - Վ.Պ.) սեփական երկրում» (ընդգծումը մերն է - Վ.Պ.), դրանով իսկ ակնարկելով պատմական Հայաստանի ռազմակալման փաստին:

Սուրբեզին, սակայն, հանդէս չի գալիս սոսկ իբրեւ իրադարձութիւնների ականատես. նա հաշուի է առնում արեւմտահայութեան եւ արեւելահայութեան պատմական զարգացման առանձնայատկութիւնները։ Ցետադարձ հայեացքով, նա 1878ի հայկական որոշ տարածքների՝ Օսմանեան կայսրութեան կողմից Ռուսաստանին զիջելու առնչութեամբ, հայ ժողովրդի անվտանգութեան չահերին նպատակայարմար է գտնում Հայաստանի՝ Ռուսաստանի կազմում ընդգրկուելը։

1880ականներին հայկական զարթօնքի կապակցութեամբ եւս Սուրբեզին ցուցաբերում է նոյնքան անկողմնակալ մօտեցում։ Նա հաւաստում է, որ հայերը ցանկանում էին սոսկ իրականութեան վերածել Բեռլինի վեհաժողովի պայմանագրով Բարձր Դռան ստանձնած պարտականութիւնների հիմամբ իրենց իրավիճակի բարելաւումը։ Ի տարբերութիւն Հայոց Ցեղասպանութեան պատմութեան՝ ժամանակի ֆրանսիացի կեղծարարների (Ռ. Դէ Կուրսոն, Պ. Աբդոն Բուաստոն եւ այլք) նա հնչակեաններին չի մեղադրում Օսմանեան կայսրութիւնում ազգամիջեան խռովութիւններ հրահրելու մէջ[91]։ Նրանց գործունէութիւնը Սուրբեզին մեկնաբանում է իբրեւ հայ ժողովրդի մօտ ազգային ինքնագիտակցութեան եւ ազատութեան գաղափարներ ներարկելու, ինչպէս նաեւ եւրոպական տէրութիւնների միջամտութիւնը հայցելու ձեւ։

1894ի Հայոց Ցեղասպանութեան առաջին փուլի սանձազերծման առնչութեամբ Սուրբեզին առաջադրում է ընդունելի մեկնաբանութիւններ։ Բազում փաստերի վկայակոչմամբ, նա հաստատում է, որ արեւմտահայութեան բնաջնջումը տեղի է ունեցել պետական քաղաքականութեան մակարդակով։ Անդրադառնալով Սասունի կոտորածներին, նա մատնանշում է զօրքերի՝ օսմանեան կառավարութեան գաղտնի համաձայնութեամբ գործելու հանգամանքը։ Միւս կողմից, հետաքննութիւնը վարած միջազգային յանձնաժողովի զեկուցագրի առնչութեամբ ընդգծում է, որ դա չափազանցութիւններ չի պարունակում[92]։ Արեւմտեան Հայաստանի այլ տարածաշրջաններում (Էրզրում, Երզնկա, Բաբերդ, Բիթլիս, Սվազ, Մալաթիա եւ այլուր) տեղի ունեցած հայկական կոտորածները եւս նա պայմանաւորում է օսմանեան վարչակարգի «յանցաւոր անտարբերութեամբ»[93]։ Սուրբեզին խարազանում է յատկապէս օսմանեան տեղական պաշտօնեաներին՝ վիլայէթների վալիներին եւ նրանց ենթականերին, որոնք հայերի ոչնչացման ընթացքում յաճախ նոյնիսկ քաջալերել են թուրք եւ քուրդ բնակչութեանը։ Ի վերջոյ, նա հաւաստում է, որ օսմանեան իշխանութիւնները ուրախ էին տեղի ունեցածով, քանզի յոյս էին տածում այդպիսով ձերբազատուել հայերից եւ նրանց գանգատներից։ Սուրբեզին հաւաստում է նաեւ Բարձր Դռան յանցակցութիւնը 1896ի Օսմանեան Բանկի գրաւմանը յաջորդած՝ Կոստանդնուպոլսում կազմակերպուած հայկական կոտորածներին,

մասնաւորապէս ընդգծելով, որ ջարդարարներին «զինել էր օսմանեան կառավարութիւնը»[94]։

Իրրեւ իրաւաբան, Սուրբեզին առանձնայատուկ ուշադրութեամբ վերլուծում է Հայկական Հարցի հանդէպ մեծ տէրութիւնների որդեգրած քաղաքականութիւնը։ Սա նրա մօտեցման անկիւնաքարն է։ Նա միջազգային իրաւունքի սկզբունքներով մանրամասնօրէն վերլուծում է մեծ տէրութիւնների՝ այս կամ այն պետութեան ներքին գործերին միջամտելու եւ չմիջամտելու իրաւասութիւնները։ Սուրբեզին ելնելով միջպետական փոխյարաբերութիւններից, հաւաստում է, որ տէրութիւնները որդեգրել էին այլ պետութիւնների գործերին չմիջամտելու սկզբունքը։ Փոխարէնը, նա առանձնացնում է Օսմանեան կայսրութեան պարագան, յատկապէս՝ տէրութիւնների, ի նպաստ հայերի սուլթանի ներքին գործերին միջամտելը։ Այս բացառութիւնը նա բնորոշում է իրրեւ չմիջամտելու սկզբունքին անյարիր «ամենահրաշալի»[95] օրինակը, քանզի մեծ տէրութիւնները պարբերաբար միջամտել են կայսրութեան գործերին թէ՛ սուլթանի համաձայնութեամբ եւ թէ՛ նրա կամքին հակառակ։ Ընդհանուր առմամբ, 1878ի Հայկական Հարցի ծագումից ի վեր, Հայաստանի գործերին Եւրոպայի միջամտութեան իրաւունքը նա իրաւամբ համարում է «անառարկելի»[96], եւ այն հիմնաւորում է նախ եւ առաջ Սան Ստեֆանոյի եւ Բեռլինի վեհաժողովների պայմանագրերով Բարձր Դուռան կողմից այդ իրաւունքի ճանաչմամբ։

Հայկական Հարցի քննարկումը տեղափոխելով միջազգային իրաւունքի հարթութիւն եւ փաստելով Եւրոպայի իրաւասութիւնը՝ Օսմանեան կայսրութեան ներքին գործերին միջամտելու, Սուրբեզին, այդուհանդերձ, քննադատում է եւրոպական պետութիւններին, քանի որ ըստ էութեան նրանք ցանկութիւն չէին դրսեւորում պարտադրելու օսմանեան կառավարութեանը՝ կենսագործելու Բեռլինի վեհաժողովի պայմանագրով ստանձնած պարտականութիւնները։ Միանգամայն իրաւամբ, նա ընդգծում է դրա հետեւանքով քրիստոնեայ հպատակների կացութեան վատթարացումը 1880ականներին, ինչն առիթ է տուել նրանց բողոքներին, որոնք եւ, վերջին հաշուով, 1894ի Սեպտեմբերին յանգեցրել են Սասունի կոտորածին։ Ակնյայտ է, որ հեղինակը Հայոց Ցեղասպանութեան սանձազերծման պատասխանատուութիւնն Օսմանեան կայսրութեան ղեկավարներից զատ անուղղակիօրէն բարդում է նաեւ մեծ տէրութիւնների՝ Հայկական Հարցում իրականացրած անարդիւնաւէտ քաղաքականութեան վրայ։

Այդուհանդերձ, Սուրբեզին շատ աւելի մեծ տեղ է յատկացնում արեւմտահայութեան համար բարենորոգումների կենսագործման հարցում Բարձր Դուռան դրսեւորած չկամութեան բացայայտմանը եւ նշանակմանը։ Նա մանրամասնօրէն մեկնաբանում է Կոստանդնուպոլսում հաւատարմագրուած օտարերկրեայ դեսպանների մշակած՝ պատմու-

թեան մէջ «մայիսեան» անուամբ յայտնի բարենորոգումների ծրագիրը[97], որը բնորոշում է թէ՛ իբրեւ «բաւական չափաւոր» եւ թէ՛ հայերի ցանկութիւնները մեծապէս բաւարարող ու թուրքերից մեծ զիջումներ չպահանջող։

Մաւալուելով այս կարեւոր հարցի շուրջ, Սուբերզին մանրամասնօրէն քննարկում է նաեւ Բարձր Դռան՝ 1895 Յունիսին եւ Օգոստոսին դեսպաններին յղած պատասխանները[98]։ Դրանք պարզորոշ վկայում են արեւմտահայութեան անվտանգութեան հարցում որեւէ բարենորոգումի իրականացումից խուսափելու Բարձր Դռան հաստատակամութեան մասին. «Այս ոգով ոչինչ չի արուել»[99], եզրակացնում է նա։

Հայերի երբեմն ծայրայեղ արարքները (Օսմանեան Բանկի գրաւում եւն.) Սուրբեզին պատճառաբանում է նրանց նկատմամբ «օսմանեան կառավարութեան անտարբերութեամբ եւ չկամութեամբ»։ Մասնաւորապէս, 1895 Սեպտեմբերին Կոստանդնուպոլսում հայերի կազմակերպած բողոքի ցոյցը նա չաղկապում է բարենորոգումների իրականացման հարցում Բարձր Դռան որդեգրած կոչտ դիրքորոշմանը, ինչն իր հերթին առիթ է դարձել լայնածաւալ կոտորածների սանձազերծման։ Դրանով իսկ հեղինակը մէկ անգամ եւս հուժկու հակահարուած է տալիս Հայոց Ցեղասպանութեան պատմութեան տարբեր կեղծարարների, որոնք հայերի ցոյցը պայմանաւորում են հնչակեանների կարծեցեալ խառնակիչ գործունէութեամբ։

Սուրբեզին խստագոյնս նշաւակում է օսմանեան վարչակարգի երկդիմի քաղաքականութիւնը, մասնաւորապէս 1895 Հոկտեմբերին Բարձր Դռան մշակած բարենորոգումների թէական ծրագրի հիման վրայ[100]։ Այս առիթով նա մատնանշում է, որ դրա ընդունումից ի վեր հայերի կացութիւնը որեւէ փոփոխութիւն չի կրել, քանզի նրանց կոտորել են ոչ միայն այդ ձեւական փաստաթղթի ընդունումից առաջ՝ 1895 Սեպտեմբերին Կոստանդնուպոլսում, այլեւ դրանից յետոյ՝ Արեւմտեան Հայաստանի գրեթէ բոլոր նահանգներում։

Դիւանագիտական յարաբերութիւնների պատմութեան ելեւէջներում ճիշտ կողմնորոշումներ ունեցող հեղինակը հանգամանալից անդրադառնում է նաեւ եւրոպական մեծ տէրութիւնների՝ Հայկական Հարցում վարած քաղաքականութեան առանձնայատկութիւններին (խօսքը վերաբերում է մասնաւորապէս Օսմանեան Կայսրութեան ներքին գործերին միայն խաղաղ ձեւերով միջամտութեանը նախապատուութիւն տալուն), վերհանում դրանց միջեւ առկայ տարակարծութիւնները։ Չինուած միջամտութեան հարցում տէրութիւնների դրսեւորած անբարեացակամ վերաբերմունքը նա իրաւամբ պատճառաբանում է Օսմանեան կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանութեան սկզբունքի խախտման՝ նրանց համար անցանկալի հետեւանքներից խուսափելու հանգամանքով, ընդգծում դրան միտուած ու-

սական ինքնակալութեան եւ Ֆրանսիայի Գ. Հանրապետութեան որդեգրած համահունչ քաղաքականութիւնն Արեւելեան Հարցում։

Ընդհանուր առմամբ, Սուրբեզին յանգում է միակ հնարաւոր հետեւութեան, թէ՝ տէրութիւնների չհամաձայնեցուած գործողութիւնները Բարձր Դուռը հնարաւորութիւն են ընձեռել օսմանահպատակ հայերի հետ վարուել ըստ իր հայեցողութեան։

Ընդհանուր գծերով, չնայած Սուրբեզիի առաջադրած ընդունելի մեկնաբանութիւններին, հարկ է նշել, որ նրա մօտեցումը որոշ առանցքային հարցերում զերծ չէ խոցելի «գարշապարներից»։ Ժամանակի Ֆրանսիացի պատմաբաններից շատերի նման, Սուրբեզին եւս, վերը նշուած պատճառով, առիթը բաց չի թողնում չափազանցելու Բրիտանիայի քաղաքականութեան դերը Մերձաւոր Արեւելքում իրավիճակի շիկացման հարցում։ Նա, անհարկիւորէն Բրիտանիային է վերագրում 1895-96ի Օսմանեան կայսրութիւնում սկիզբ առած խառնաշփոթի պատասխանատուութիւնը, նոյնքան չափազանցուած դիրքերից մեկնաբանում Օսմանեան կայսրութեան ներքին գործերին զինուած միջամտութիւն ցուցաբերելու հարցում բրիտանական կառավարութեան ակնկալութիւնները։

Սուրբեզին խիստ չափաւոր է քննադատում եւրոպական տէրութիւններին եւ, մասնաւորապէս Ֆրանսիային. նա բաւարարւում է սոսկ ընդհանուր բնոյթի դիտողութիւններով։ Լեմոնոնի նման, նա ձեռնպահ է մնում Հանոտոյի ընդգծուած թրքամէտ քաղաքականութեան՝ հայերի համար չարագուշակ հետեւանքների քննարկումից։ Միւս կողմից, փաստօրէն, հակասելով իրեն, անվարան մատնանշում է իր իսկ հաւաստած, սոսկ խուսափողական բնոյթ կրող, արեւմտահայութեան հանդէպ սուլթանի կրաւորական դիրքորոշման փոփոխութիւնները, Հանոտոյի՝ օսմանեան գահակալի վրայ ունեցած ազդեցութեան հետեւանքով։ Այս հարցում, ի դէպ, առանց քննադատական մօտեցման, նա բաւարարւում է սոսկ Լեմոնոնի փաստարկների վերաշարադրմամբ։

Ի շարս Հայոց Ցեղասպանութեան գործընթացի իրականացման զանազան ձեւերի, Սուրբեզին ընդգծում է, բնաջնջումից բացի, նաեւ բռնի կրօնափոխութեան երեւոյթը։ Այս հարցում, սակայն, նրա մեկնաբանութիւնները տեղիք են տալիս առարկումների, քանզի կրօնափոխութիւնը նա համարում է ոչ այնքան հայերի ոչնչացման նպատակ հետապնդող երեւոյթ, որքան Օսմանեան կայսրութիւնը քրիստոնէութեան ազդեցութիւնից դուրս բերելու եւ դրանով իսկ Եւրոպայի վերահսկողութիւնից խուսափելու յուսալի միջոց։ Այս դէպքում արդէն իրեն զգալ է տալիս իրադարձութեան պատմութիւնը գլխաւորապէս դիւանագիտական յարաբերութիւնների տեսանկիւնից մեկնաբանելու նրա միտումը։

Սուրբեզիի աշխատութիւնը հիմնաւորապէս հաւաստում է Համիդեան վարչակարգի կողմից պետականօրէն իրականացուած հայ ժողովրդի բնաջնջման փաստի արժանահաւատութիւնը։ Սակայն, նրա հիմնական արժանիքը քննարկուող հարցադրումների վերլուծութեան ինքնատիպութեան մէջ է, քանզի նրա գրչին պատկանող թեզը միակն է ֆրանսիական ընդարձակ պատմագիտական գրականութեան մէջ, որտեղ Հայկական Հարցին առնչուող հիմնախնդիրները քննարկուում են միջազգային իրաւունքի հարթութեան վրայ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ինչպէս տեսանք, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Համիդեան կոտորածների հիմնահարցերի քննութիւնը ոչ միայն նիւթի ընդգրկմամբ, այլեւ գիտական վերլուծութեան խորութեամբ, անտարակոյս, զիջում է նախորդ ժամանակաշրջանի պատմաբանների աշխատանքներին։ Նախ 1890ականներին, ի տարբերութիւն Ի. դարի 10ականների, Հայոց Ցեղասպանութեան գործընթացի եւ յարակից հարցերի քննական վերլուծութեանն անդրադարձել են անուանի պատմաբաններ՝ Ալբէր Վանդալը, Էդուարդ Դրիօն, Անատոլ Լերուա-Բոլիօն եւ ուրիշներ[101], որոնց պատմագիտական ներուժն իր խոր դրոշմն է թողել նրանց աշխատանքների գիտական բարձր մակարդակի վրայ։ Այս ժամանակահատուածում նման խոշոր դէմքեր նկատելի չեն։

Ջնայած դրան, այստեղ քննարկուած հեղինակների աշխատութիւնները եւս արժանի են ըստ պատշաճի արժեւորումի։ Դրանց, ընդհանուր առմամբ, բնորոշ են միեւնոյն թերութիւնները եւ առաւելութիւնները։ Հեղինակներից ոմանք ամբողջութեամբ չեն կողմնորոշուել Հայոց Ցեղասպանութեան առաջին փուլի պատմութեանն առնչուող հիմնահարցերում (Հայկական Հարցի առաջացման, Ցեղասպանութեան պատճառների բացայայտման), երբեմն առաջադրել են նոյնիսկ հակասական մեկնաբանութիւններ (փաստելով հանդերձ պետական քաղաքականութեամբ հայկական կոտորածների իրականացումը, ծանրութեան կենտրոնը տեղափոխել են կրօնական առճակատման հարթութիւն եւն.), բաւարարուել եւրոպական պետութիւնների, մասնաւորապէս Ֆրանսիայի քաղաքականութեան չափաւոր քննադատութեամբ, Բրիտանիայի քաղաքականութիւնը մեկնաբանել կողմնակալ դիրքերից։

Այդուհանդերձ, ֆրանսիացի հեղինակները, յաճախ խորամուխ չլինելով հանդերձ իրադարձութիւնների մանրամասների թուարկման մէջ, համիդեան կոտորածները մեկնաբանել են իբրեւ պետական քաղաքականութեամբ իրականացուած իրադարձութիւն, ընդգծել գործընթացի շարունակական բնոյթը, բացայայտել այն անտանելի պայմանները, որոնք առկայ էին օսմանեան լծի տակ հեծող արեւմտահայութեան համար, միաժամանակ չեչտել նրանց՝ իրավիճակի սոսկ փոփոխութեա-

նը միտուած քայլերը եւ հիմնաւորապէս հերքել հայերի՝ կարծեցեալ ապստամբութեան վարկածը։ Ըստ այս ամէնի՝ մենք հակուած ենք բարձր գնահատելու այն աւանդը, որը նրանք ներդրել են Հայոց Ցեղասպանութեան առաջին փուլի պատմութեան գիտական մեկնաբանութեան ասպարէզում։

ՏԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Ռ. Սահակեան, «Հայկական Ցեղասպանութեան Պատմութիւնը Ֆրանսիական Հրատարակութիւններում», Ցեղասպանութեան Պատմութիւնից, Ռուբէն Սահակեան (խմբ.), Երեւան, Հայաստան, 1990, էջ 223-239. Նաեւ՝ Մուրատ Կարապետեան, Հայոց 1915-1916 Թուականների Ցեղասպանութեան Հարցերը Հայ Պատմագրութեան Մէջ, Երեւան, Գիտութիւն, 1999. Նոյնի՝ Հայոց 1915-1916 Թուականների Ցեղասպանութեան Հիմնահարցերը Ցեխորհրդային Հայ Պատմագրութեան Մէջ, Երեւան, Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ, 2005. Նաեւ՝ Նիկոլայ Ցուվհաննիսեան, Հայոց Ցեղասպանութիւնը Արաբական Պատմագիտութեան Քննական Լոյսի Ներքոյ, Երեւան, Զանգակ, 2004։*

[2] *Վարուժան Պօղոսեան, Հայոց Ցեղասպանութեան Առաջին Փուլը Ֆրանսիական Պատմագրութեան եւ Հասարակական Մտքի Գնահատմամբ (XIX դ. վերջ-XX դ. սկիզբ), Երեւան, Գիտութիւն, 2005. Նոյնի՝ 1909ի Հայկական Կոտորածները Կիլիկիայում Ֆրանսիական Պատմագրութեան Գնահատմամբ, Երեւան, Նահապետ, 2009։*

[3] A. Barre, *L'Esclavage Blanc. (Arménie et Macédoine)*, Paris, Louis Michaud, [1909], էջ 23։

[4] *Նոյն*, էջ 25, 27-28։

[5] *Նոյն*, էջ 27։

[6] *Նոյն*, էջ 26։

[7] *Նոյն*, էջ 29։

[8] *Նոյն*, էջ 30։

[9] *Նոյն*։

[10] *Նոյն*, էջ 32-34։

[11] *Նոյն*, էջ 37։

[12] *Նոյն*։

[13] *Նոյն*, էջ 38։

[14] *Նոյն*, էջ 40։

[15] *Նոյն*։

[16] *Նոյն*, էջ 57։

[17] *Նոյն*, էջ 65 ։

[18] *Նոյն*, էջ 62։

[19] *Նոյն*, էջ 59։

[20] *Նոյն*, էջ 26։

[21] *Նոյն*, էջ 65։

[22] *Նոյն*, էջ 63։

[23] *Նոյն*, էջ 29։

[24] *Նոյն*, էջ 42-43, 44-48։ *Այդ մասին տե՛ս՝ Է. Կոստանդեան, Մկրտիչ Խրիմեան. Հասարակական-Քաղաքական Գործունէութիւնը, Երեւան, Զանգակ-97, 2000, էջ 253-255։*

[25] Barre, էջ 54։

[26] *Նոյն*։

[27] *Նոյն*, էջ 65։

[28] Նոյն, էջ 67։
[29] Նոյն, էջ 87։
[30] Նոյն, էջ 67։
[31] Նոյն, էջ 69։
[32] Նոյն, էջ 73-74։
[33] Նոյն, էջ 75։
[34] Նոյն, էջ 76։
[35] Նոյն։
[36] Նոյն։
[37] Նոյն, էջ 84-85։
[38] Նոյն, էջ 86։
[39] Նոյն։
[40] Նոյն։
[41] *Պանգերմանիզմի գոհ. նահատակ Հայաստանը։*
[42] L'Abbé E. Griselle, *Une Victime Du Pangermanisme. L'Arménie Martyre*, Paris, Bloud & Gay, 1916, էջ 99։
[43] *Պատմաբանների եւ Ցեղասպանութեան՝ իբրեւ երեւոյթի մասնագէտների գերակշռող մասը գտնում է, որ Հայոց Ցեղասպանութիւնը տեղի է ունեցել 1915ին, որին յաջորդել եւ նախորդել են համապատասխանաբար՝ համիդեան եւ քեմալական կոտորածները։ Այլք, այդ թւում Մկրտիչ Ներսիսեանը, Եուրի Բարսեղովը, Մ. Պրանսը, Ի. Լ. Հորովիցը, այն դիտում են իբրեւ շարունակական գործընթաց, որը սկիզբ է առել 1890ականներին եւ աւարտին հասել 1920ականների սկզբին։*
[44] Griselle, էջ 35։
[45] Նոյն, էջ 83։
[46] Նոյն, էջ 17-19։
[47] *Հայոց Ցեղասպանութեանը քրդերի մասնակցութեանն առնչուող հարցերի մասին մանրամասն տե՛ս՝ Ցովհաննիսեան, էջ 97-111։*
[48] Griselle, էջ 21։
[49] Նոյն, էջ 16։
[50] Նոյն, էջ 35։
[51] Նոյն, էջ 40։
[52] *Այդ մասին տե՛ս՝ Պօղոսեան, Հայոց Ցեղասպանութեան Առաջին, էջ 45-47։*
[53] Griselle, էջ 41-67։
[54] Նոյն, էջ 49, 62։
[55] Նոյն, էջ 99։
[56] Նոյն, էջ 83։
[57] *Այդ մասին մանրամասն տե՛ս՝ Պօղոսեան, Հայոց Ցեղասպանութեան Առաջին։*
[58] *1890ականներին Ֆրանսիան սիրաշահում էր Ռուսաստանին, նրան համարում իր միակ ապաւէնը, որը կարող էր օգնել Պրուսիայից վրէժխնդիր լինելու համար։ 1914ից յետոյ նրան սիրաշահելու կարիք Ֆրանսիան այլեւս չունէր, Ռուսաստանն արդէն պատերազմում էր իր հետ միասին Գերմանիայի դէմ։*
[59] Griselle, էջ 40, 50, 65-67։
[60] E. Doumergue, *L'Arménie. Les Massacres Et La Question d'Orient. Conférence, Etudes Et Documents*, Paris, Foi et vie, 1916։ *Դժբախտաբար այդ դասախօսութեան մասին այլ տուեալներ չունենք։*
[61] Նոյն, էջ 6։
[62] Նոյն, էջ 7։
[63] Նոյն, էջ 8-9։

[64] Նոյն, էջ 8։
[65] Նոյն, էջ 11։
[66] Նոյն։
[67] Նոյն։
[68] Նոյն։
[69] Նոյն։
[70] Նոյն, էջ 11-12։
[71] Նոյն, էջ 12։
[72] Նոյն։
[73] Նոյն, էջ 13։
[74] Նոյն, էջ 14։
[75] Նոյն, էջ 15։
[76] Նոյն, էջ 16։
[77] Joseph Denais, « La Turquie Nouvelle Et l'Ancien Régime », Conférence faite par M. Joseph Denais à Paris le 17 Novembre 1908. Annotée le 8 Mars, Paris, Marcel Rivière, 1909:
[78] *Խօսքը վերաբերում է, ի տարբերութիւն Բարձր Դուռը, Աբդուլ Համիդ Բ-ի գաղափարներն ընդունած ու նրա չուրջ համախմբուած համախոհների խմբաւորմանը, որը հաստատուել էր Ելդըզի պալատում եւ 1890ականների կէսերից ի վեր իր ձեռքում կենտրոնացրել Օսմանեան Պետութեան ղեկավարման գլխաւոր լծակները։ Այդ մասին մանրամասն տե՛ս՝* F. Georgeon, *Abdülhamid II. Le Sultan Calife (1876-1909)*, Paris, Fayard, 2003, էջ 148-152։
[79] Denais, էջ 21։
[80] Նոյն, էջ 20, 21։
[81] Նոյն, էջ 18։
[82] *Տե՛ս՝ Պօղոսեան, Հայոց Ցեղասպանութեան Առաջին, գլուխ Ա.։*
[83] *Եւրոպան եւ բրիտանական քաղաքականութիւնը* (1882-1911)։
[84] E. Lémonon, *L'Europe Et La Politique Britannique (1882-1911), Deuxième Édition, Revue Et Corrigée*, Paris, Félix Alcan, 1912 (*գիրքն առաջին անգամ հրատարակուել է* 1909*ին*)։
[85] Նոյն, էջ 152։
[86] Նոյն, էջ 154։
[87] *Մանրամասն տե՛ս՝ Ա. Կիրակոսեան, Բրիտանական Դիւանագիտութիւնը եւ Արեւմտահայութեան Հնդիրը (XIX դարի 30ական թթ.-1914 թ.), Երեւան, Գիտութիւն,* 1999, էջ 184, 189, 199։
[88] *Պօղոսեան, Հայոց Ցեղասպանութեան Առաջին, էջ* 232-233. *նաեւ՝* V. Poghosyan, « La Discussion de la Question Arménienne Dans la Chambre des Députés aux Années 1890», *Բազմավէպ, Հտր. Ճ՟կԵ.*, 2007, էջ 472։
[89] *Այդ մասին տե՛ս՝ Décret. Réformes en Arménie.– Documents Diplomatiques. Affaires Arméniennes. Projets de Réformes dans l'Empire Ottoman. 1893-1897*, էջ 155։
[90] F. Surbezy, *Les Affaires d'Arménie et l'Intervention des Puissances Européennes (de 1894 à 1897)* http:// www.imprescriptible.fr/documents/surbezy/.
[91] *Այդ մասին տե՛ս՝ Պօղոսեան, Հայոց Ցեղասպանութեան Առաջին, էջ* 239-242։
[92] *Բնագիրը տե՛ս՝ Rapport Collectif des Délégués Consulaires Adjoints à la Commission d'Enquête sur l'Affaire de Sassoun.– Documents Diplomatiques. Affaires Arméniennes. Projets de Réformes dans l'Empire Ottoman. 1893-1897*, Paris, L'imprimerie nationale, *էջ* 96-111։
[93] Surbezy։

[94] Նոյն։
[95] Նոյն։
[96] Նոյն։
[97] Բնագիրը տե՛ս՝ « Mémorandum », էջ 45-48. Նաեւ՝ *Projet de Réformes Administratifs à Introduire dans les Provinces Arméniennes*, էջ 48-56։
[98] Տե՛ս՝ Նոյն, էջ 71-75, 80-81, 87-94։
[99] Surbezy։
[100] *Décret. Réformes en Arménie*, էջ 156-162։
[101] Տե՛ս՝ Պօղոսեան, *Հայոց Ցեղասպանութեան Առաջին*, գլուխ Բ.։

THE MASSACRES OF SULTAN ABDUL HAMID AS EXAMINED BY EARLY 20TH CENTURY FRENCH HISTORIOGRAPHY

(Summary)

VARUJAN POGHOSSYAN
varuzhan_poghosyan@yahoo.com

The article is dedicated to the first phase of the Armenian Genocide, namely the period that extends from 1894 to 1908. It assesses the input French historiography had on shedding light on the massacres committed during Sultan Abdul Hamid's reign.

Poghossyan analyses the very few French authors who - during the era of the Young Turks - wrote about the massacres of 1894-1896 and examined their basic causes. Poghossyan assesses the writings of A. Barre, J. Denais, and Abbé E. Griselle, as well as lawyers E. Lémonon and F. Surbezy, and others who approached to the mass killings planned and organized by Hamid while writing on the Armenian genocide and/or the history of international relations. These works fall short of whatever had been achieved previously by late 19th century French historiography on both scientific analysis and the contents they cover. Nevertheless, the works discussed in this article are worth being properly discussed and evaluated accordingly. Generally these works have similar weaknesses and strengths. Some of the authors were not able to orient themselves as to how to react to the core questions of the first phase of the Armenian Genocide – particularly those which had to do with the start of the Armenian Question and the reasons of the Genocide. In certain cases they had contradicting interpretations – on the one hand they brought evidence that the massacres were the result of state policy, yet on the other hand, they put the weight of the causes on religious motives. At times they criticised French foreign policy mildly and interpreted British foreign policy in biased terms.

Having said that the French authors interpreted the Hamid massacres as a state-sponsored act, underlined the continuous nature of the process, and disclosed the impasse which the Western Armenians encountered living and suffering under the Ottoman yoke. In addition, they stressed the superficial steps taken to change these conditions and refuted the alleged rebellions of the Armenians.

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱ-ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 1910-1917ԻՆ

ԱՒԵՏԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Աբդուլ-Համիդեան բռնապետութեան տապալումը եւ սահմանադրական կարգերի հաստատումը Օսմանեան կայսրութիւնում 1908ի ե-րիտթուրքական յեղաշրջումից յետոյ բաւարար հնարաւորութիւններ ընձեռեցին արեւելագէտ-հայագէտներին՝ պատմա-հնագիտական, ազգագրական եւ բանասիրական հետազօտութիւններ կատարելու Վանի նահանգի տարածքում։

1910-1911ին Թիֆլիսի Հայոց Ազգագրական Ընկերութեան[1] կողմից Վան-Վասպուրական է գործուղուում հայ նշանաւոր ազգագրագէտ, բանագէտ, հնագէտ, հայ գիտական ազգագրութեան հիմնադիր, Թիֆլիսի Ազգագրական Ընկերութեան վարիչ՝ Երուանդ Լալայեանը, որը մանրամասն տեղեկութիւններ է գրանցում տուեալ շրջանի պատմա-աշխարհագրական միջավայրի, տնտեսական կեանքի, ամուսնական, հարսանեաց, ծննդեան, թաղման եւ այլ սովորոյթների, ծէսերի, ինչպէս նաեւ հաւատալիքների, անոտիապաշտութիւնների, ժողովրդական բժշկութեան եւն.ի մասին։ Նրա նպատակն էր կազմել մի առանձին հատոր՝ նուիրուած Հայաստանի այդ հնագոյն նահանգի ազգագրութեանը։ Միաժամանակ նա ձեռնարկում է գրել առանձին մի ուսումնասիրութիւն՝ նուիրուած Շատախին եւ Մոկսին։ Այդ նպատակով, նոյն թուականին նա լինում է Հայոց Ձորում, շրջում է նահանգի բոլոր գաւառներում ու վանքերում եւ հաւաքում մեծ քանակութեամբ ազգագրական հարուստ նիւթեր[2]։ Լալայեանը ուսումնասիրում է նաեւ հին ձեռագրերը, կազմում դրանց ցուցակները։ Ուղեւորութեան վերջում նա Վանի Շամիրամի թաղամասում կատարում է պեղումներ, յայտնաբերում նախապատմական շրջանի՝ քարի դարի յատուկ հնութիւններ[3]։

Այն, որ Լալայեանը մեծ հետաքրքրութիւն էր ցուցաբերում եւ կարեւորում Վանի նահանգի պատմա-մշակութային արժէքների ուսումնասիրումը, երեւում է Բաքուի Հայոց Բարեգործական Ընկերութեան գրադարանապետ Երուանդ Թաղիանոսեանին ուղղած իր նամակից, որտեղ նա նշում է. «Եթէ յաջողուի ինձ… այլեւս չեմ նստիլ Թիֆլիսում, կ'երթամ դարձեալ Վասպուրական… Որքա՜ն գործ կայ…»[4]։

Լալայեանը Վան-Վասպուրականում կատարած իր գիտական հետազօտութիւնների ժամանակ մեծ օժանդակութիւն է ստանում Մոկսի կառավարիչ, ազգութեամբ քուրդ՝ Մուրթուլլա բէկից եւ նրա եղբօրորդի Ալի բէկից, որոնց միջեւ ստեղծւում են ջերմ բարեկամական կապեր[6]:

Այդ տարիներին Լալայեանը Վան-Վասպուրականի մասին մի շարք արժէքաւոր աշխատութիւններ է տպագրում Ազգագրական Հանդէսում, իսկ այդ ամէնի հանրագումարն է լինում 1913ին հրատարակուած նրա «Վասպուրական. Ազգագրութիւն Վասպուրական, Նշանաւոր վանքեր, Ա. Պրակ» վերտառութեամբ ուսումնասիրութիւնը[8]:

Ընդհանրապէս Լալայեանը նախատեսել էր Վասպուրականի մասին աշխատութիւն հրատարակել մի քանի հատորով, սակայն դա նրան չի յաջողւում: Այն մնացել է անտիպ: Հրատարակուած աշխատութիւնը բաղկացած էր մի քանի մասերից՝ նուիրուած Վասպուրականի ազգագրութեանը, բանահիւսութեանը, ասորիներին, տնայնագործութեանը եւ նշանաւոր վանքերին: Վանի բարբառով նա հաւաքում եւ գրի է առնում «Սասնայ Տուն», «Ոստանայ Տուն եւ Թլոլ-Դաւիթ», «Ռոստամէ Զալ», «Աղեքսանդրի կեսէն», «Ոսկէ Կանթեղ», «Ոսկէ Մամ», «Դալի Տոպան», «Խէք», «Նազիկ Պատան», «Քաւորանց Շունը», «Բլրուլ Կուշ» եւ բանահիւսական այլ ստեղծագործութիւններ:

Շատախի բարբառով նա թղթին է յանձնում «Ալօ», «Կատուի կռիւ», «Եուսէփ», «Մմբատ Ու Սենեակ Թագաւորներ», «Թագաւոր», «Տխմար Մարդ», «Քուն-Քընքաւուս Թագաւոր», «Դիքին Խրատը», «Պառաւ Ու Աղուէս» եւ այլ ստեղծագործութիւններ:

Լալայեանը ձեռնամուխ է լինում Վան-Վասպուրականի չուրջ 28 վանքերի եւ եկեղեցիների ուսումնասիրմանը: Նա անդրադառնում է ոչ միայն վանքերի նկարագրութեանը, այլեւ խօսում է վանական ծէսերի մասին, տալիս է վանքերի եւ դրանց շրջակայ տապանաքարերի վրայի արձանագրութիւնների վերլուծութիւնը:

Վասպուրականի վերաբերեալ ուսումնասիրութիւնը մի ամբողջական եւ արժէքաւոր աշխատութիւն է, որն արդիւնք է հեղինակի մի քանի տարիների յամառ աշխատանքի[7]:

Յետագայում, երբ Առաջին Աշխարհամարտի տարիներին արեւմտահայութեան դժնդակ բախտին արժանացան հայ ժողովրդի բազմադարեան հոգեւոր մշակոյթի գանձերը՝ վանքերը, եկեղեցիները, մատենադարանները եւ ձեռագիր մատեանները, Թիֆլիսի Հայոց Ազգագրական Ընկերութիւնը 1915ի Յունիսի 15ին լսելով Ընկերութեան քարտուղար Երուանդ Լալայեանի զեկուցումը արժէքաւոր ձեռագրերի ոչնչացման մասին, նրա իսկ ղեկավարութեամբ վան ուղարկեց գիտական արշաւախումբ, որը ձեռնարկեց նիւթական մշակոյթի յուշարձանների ուսումնասիրութիւնը[8]: Աշխատանքի կազմակերպումը դիւրացնելու եւ անցանկալի դժուարութիւնները չրջանցելու համար, Լալայեանը 1916 Օ-

գոստոսի 9ին խնդրագրով դիմում է Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե-ին, ուր մասնաւորապէս ասուած է. «Ամենախոնարհ խնդիր. Ձերդ վեհափառութեան բարձր հովանաւորութեան ներքոյ ծաղկող Հայոց Ազգագրական ընկերութեան նախաձեռնութեամբ ցանկանալով կազմել Հայոց բոլոր վանքերի մանրամասն նկարագրութիւնը՝ պատմական յիշատակագրութիւնների եւ արձանագրութիւնների հետ միասին, ակնածօրէն խնդրում եմ Ձերդ վեհափառութեան բարեհաճել տնօրինել, որ հայ վանահայրերը մասնաւորապէս եւ հայ հոգեւորականութիւնն ընդհանրապէս աջակցեն ինձ եւ թոյլ տան նկարագրելու եւ լուսանկարելու ինչպէս վանքերը, այնպէս եւ նրանց մէջ գտնուած արքութիւններն ու ձեռագրերը:

Երուանդ Լալաեան»:[9]

Լալայեանի 1916 Օգոստոսի 9ի խնդրագրին կաթողիկոսական դիւանը տալիս է դրական պատասխան եւ նոյն ամսի 12ին, թիւ 1837 գրութեամբ Լալայեանին արտօնւում է հայկական բոլոր եկեղեցիներում կատարել իր կողմից նախատեսուած նկարագրութիւնները[10]:

Ցանկանալով լրացնել ու կորստից ազատել Վասպուրական նահանգի ազգագրութեանը վերաբերող նիւթերը, Լալայեանը որոշում է ճանապարհորդութիւն կատարել նաեւ այն վայրերում, ուր կային այդ ընդարձակ նահանգից դուրս եկած գաղթականական օջախներ: Այդ նպատակով նա լինում է Ալեքսանդրապոլում, Կարսում, Կաղզուանում, Երեւանում եւ Վաղարշապատում[11]:

Լալայեանից յետոյ Վան է մեկնում նշանաւոր արեւելագէտ, հնագէտ, հասարակական գործիչ եւ գիտութեան կազմակերպիչ Յովսէփ Օրբելին:

Յովսէփ Օրբելին Պետերբուրգի Համալսարանի աւարտական դասարանում էր, երբ 1910 Սեպտեմբերի 22ին Ռուսաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Պատմա-Բանասիրական Բաժանմունքի նիստում մեծանուն արեւելագէտ-հայագէտ Նիկոլայ Մառը առաջարկում է Վանի շրջան գործուղել մի մասնագէտի, որը կը կարողանար զբաղուել այնտեղի հնութիւններով եւ ձեռնամուխ լինել բարբառագիտական նիւթերի հաւաքմանը:

Մառի կարծիքով դա կարող էր լինել Օրբելին, որն ունակ էր կատարել «նախատեսուած աշխատանքի մի մասը՝ բարբառագիտականը, պատմա-բանասիրականը՝ ըստ սուրբ գրքի բնագրերի, հնագիտականը՝ ըստ քրիստոնէական հնութիւնների եւ հաշուետուութիւն տալ մնացած մասերի նիւթերի վերաբերեալ...»[12]:

Մառի առաջարկութիւնն ընդունւում է: «1911թ. ամռանը,- *ինչպէս կարէն Իւզբաշեանն է նշում,-* նա (*Օրբելին - Ա.Յ.*) մի ճանապարհոր-

դութիւն ձեռնարկեց, որն ամբողջ կեանքում տպաւորուեց նրա յիշողութեան մէջ եւ ազդեց նրա գիտական հայեացքների վրայ»։[13]

Օրբելին առանձնայատուկ պատասխանատուութիւն էր ցուցաբերում այդ ուղեւորութեանը։ Մնողներին գրած իր 1910 Դեկտեմբերի 12ի նամակում (որը պահւում է Պետերբուրգում՝ Ցովսէփ Օրբելու անձնական արխիւում), նա նչում է. «Իհարկէ, ստիպուած եմ շատ պարապել եւ պատրաստուել այդ ուղեւորութեանը, որովհետեւ ինչպէս իր պայմաններով, այնպէս էլ ըստ իր էութեան դա շատ պատասխանատու աշխատանք է»[14]։

1911ին Պետերբուրգի Համալսարանի Պատմա-Բանասիրական եւ Արեւելեան Լեզուների երկու Ֆակուլտէտները յաջողութեամբ աւարտելուց յետոյ, Օրբելին, որն ունէր արդէն հրատարակուած 9 աշխատութիւն, մնում է Համալսարանի Հայ-Վրացական Բանահիւսութեան Ամբիոնում։

Նոյն՝ 1911ի ամռան վերջին Պետերբուրգի Գիտութիւնների Ակադեմիան Օրբելուն գործուղում է Արեւմտեան Հայաստան, գլխաւորապէս Վանի վիլայէթ՝ նրա առջեւ խնդիր դնելով հետազօտել եւ նկարագրել նահանգի հեթանոսական, քրիստոնէական եւ մահմեդական ճարտարապետական յուշարձանները, վիմագրութիւնը, ուսումնասիրել հայկական բարբառներից մէկը եւ տեղեկութիւններ հաւաքել վանական մատենադարանների ձեռագրերի վերաբերեալ[15]։

1911 *Յուլիսի 1ին Օրբելին կնոջ հետ միասին (որի ուղեւորութեանը դէմ էր Մառը)*[16] *բաթումից մեկնում է Կ. Պոլիս եւ Տրապիզոնի, Բայբուրդ/Բաբերդի, էրզրումի եւ Ադիլջեւազ/Արծկէի վրայով Օգոստոսի 14ին հասնում Վան՝ որտեղ էլ վերջնականապէս որոշում է կենտրոնանալ Մոկսի հայկական բնակչութեան բարբառի ուսումնասիրման վրայ։ Օրբելին ձիով ուղեւորւում է Մոկս եւ այնտեղ մնալով հինգ շաբաթ, ձեռնամուխ է լինում Մոկսի հայերի բարբառին վերաբերող նիւթերի հաւաքմանը եւ բարբառագիտական յատուկ բառարանի կազմմանը։ Շատ չուտով Օրբելին իր համար մշակեց գրառումների որոշակի մեթոդաբանութիւն։ Առաջնահերթ խնդիր դարձաւ տառադարձութեան մշակումը՝ տեղական բարբառի առանձնայատկութիւնները դիպուկ արտացոլելու համար։ Նիւթեր հաւաքելու նպատակով նա լինում է Մոկսի 10 գիւղերում՝ Արինջ, Արնանց, Լիւլենց, Սիպկանց, Կիտրիզ, Կիւմիր, Սիպ, Լիչան, Ցապանց եւ Խրէբ։*

Բառարանը բաղկացած էր ոչ-հաւասար երեք մասերից։ «Բառարան մտան առօրեայ կենցաղի բոլոր այն բառերն ու արտայայտութիւնները, որոնք վերաբերում էին դաշտային աշխատանքներին, արհեստներին, անասունների ու բոյսերի անուններին, մի խօսքով այն ամէնին, ինչը կարելի էր տեսնել շուրջը...- *նչում է Օրբելին եւ աւելացնում,*- ինձ արժէքաւոր ծառայութիւն մատուցեցին երեխաները, որոնք

իմ աշխատանքը իրենց համար դիտում էին որպէս զուարճալիք եւ ամէն րոպէ վազում էին հարցնելու, ես գրե՞լ եմ արդեօք այս կամ այն բառը, թէ՞ ոչ»[17]: *Այդ ցուցակում տեղ էին գտել նաեւ մեծ դժուարութեամբ ձեռք բերուած, Ոզիմ եւ Արնանց գիւղերում գրի առնուած չուրջ 200 բառեր լրուանների (թաղիքագործների եւ բուրդ գզողների) գաղտնի լեզուից, որոնք ապրում էին Մոկսի մի քանի շրջաններում եւ ամէն աշուն մեկնում էին աշխատելու: Ընդհանուր առմամբ Օրբելուն յաջողուեց հաւաքել Մոկսի բարբառի չուրջ 4500 բառեր: Նրան յաջողուեց կազմել նաեւ աւելի քան հարիւր անունների հոլովման յատուկ աղիւսակներ եւ աւելի քան քառասուն բայերի խոնարհման ցանկեր:*

Մոկսի բարբառի բառարանը, հնչոյթային եւ ձեւաբանական որոշակի յատկանիշների առանձնացումը, ինչպէս նաեւ բանասիրական, բանագիտական եւ այլ կարգի նիւթերը, հաւաքուած եւ ինչ-որ չափով դասակարգուած էին երիտասարդական աւիւնով լցուած ներհուն հետազօտողի, յետագայում համաշխարհային ճանաչում ստացած գիտնականի ձեռքով: Այսօր այդ նիւթերը գրեթէ անփոխարինելի եւ շատ կողմերով վստահելի տուեալներ կարող են տրամադրել ոչ միայն ստոյգ այդ բարբառի, այլեւ առհասարակ հայերէնի բարբառների գիտական աւելի լայն, նոր սկզբունքներով ուսումնասիրութեան համար[18]:

Այսպէս, առաւել մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում այդ բարբառի ձայնաւորների, երկբարբառների եւ բաղաձայների համակարգերը, որոնք ի յայտ են բերում ոչ միայն հնչիւնախօսական, այլեւ առհասարակ հնչիւնաբանական որոշակի առանձնայատկութիւններ՝ կապուած այսպէս կոչուած քմայնացման (աւանդական բնութագրումով՝ հասկանալի եւ սովորական, մէկ այլ դէպքում՝ դեռեւս ոչ-այնքան պարզ, ուստի եւ արտասովոր), տարբերակիչ այլ յատկանիշների պարունակման, արտասանական տարբերակման եւ այլ երեւոյթների հետ[19]: *Օրբելին ժամանակին կարողացել է ըստ ամենայնի մանրամասն եւ ճիշտ գրանցել բարբառի հնչիւնական-հնչիւնաբանական երեւոյթները՝ արտասանական տարբերութիւնները, վերջիններիս նրբերանգները եւն., սակայն այդպէս էլ չի կարողացել գիտական վերջնական տեսքի բերել հնչիւնական գրանցումների տառադարձման համակարգը:*

Ցաւոնի է, որ Մառի նախաձեռնութեամբ 1914-15ին երկու անգամ որոշւում է տպագրել այդ բառարանը, սակայն հարցը մնում է անհետեւանք: Միայն 2002ին ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Ինստիտուտը՝ Պարոյր Մուրադեանի աշխատասիրութեամբ հրատարակում է այն[20]:

Օրբելին միաժամանակ ծանօթանում է Մոկսի հայերի բանահիւսութեանը եւ գրի առնում բազմաթիւ բանահիւսական նիւթեր (10 առակ, 32 ծիծաղելի պատմուածք, 10 հեքիաթ, 2 բալլադ, 7 երգ, 5 ոտանաւոր, 163 ասոյթ, 51 հանելուկ), որոնց մէջ Մոկսի «քաղաքացիները» հումորով

(երբեմն բաւականին թունոտ) են արտայայտւում «գիւղացիների» բարքերի մասին[21]։

Օրբելին հնարաւորութիւն չի ունենում հնագիտական լուրջ պեղումներ կատարելու, քանի որ ո՛չ միջոցներ ունէր եւ ո՛չ էլ թոյլտուութիւն՝ Օսմանեան կառավարութիւնից։ Նա միայն հետախուզական աշխատանքներ եւ ոչ-մեծ հնագիտական պեղումներ է կատարում ուրարտական բնակավայր Թոփրակ Կալէում, որտեղ դրանից ոչ-չատ առաջ աշխատել էր գերմանացի հնագէտ Վ. Բելքը։ Պեղումների ժամանակ նա յայտնաբերում է խճանկար եւ փորագրուած մարմարի ֆրիզի բեկորներ՝ կենդանիների (ցուլերի) ու ծառերի խմբանկարի պատկերներով[22], որոնք յետագայում Բ. Վ. Ֆարմակովսկուն հնարաւորութիւն տուեցին ենթադրելու, որ գոյութիւն է ունեցել հնագիտական մշակութային կապ առաջաւորասիական՝ խեթա-վանեան աշխարհի եւ Հիւսիսային Կովկասի ու Հարաւային Ռուսաստանի միջեւ[23]։

Բացի դրանից, Օրբելին տեղական բնակիչներից եւ հնավաճառներից՝ (անթիքաջիներից) ձեռք բերեց չատ առարկաներ՝ գրիֆոնի (առիւծի մարմնով, արծուի թեւերով, առիւծի կամ արծուի գլխով առասպելական կենդանու) պատկերով փոքրիկ կնիք, սեպաձեւ արձանագրութեամբ կարասի եւ քարէ արձանիկի բեկորներ, ուրարտական նետերի բրոնզէ եւ երկաթէ սլաքներ, ուլունքներ եւն.[24]։

Յովսէփ Օրբելու հետազօտութիւնները ծառայեցին որպէս հիմք Մոկսի նիւթերի՝ Մոկսի ազգագրական ակնարկի հրապարակման առթիւ գրուած չատ հետաքրքիր ներածական յօդուածի համար[25]։ Երկրամասի բնակչութեան ազգագրական չատ սովորութիւններ եւ կենցաղը հնագոյն ծագում ունէին։ Այսպէս, ե՛ւ Մոկս քաղաքում, ե՛ւ Զեւաստան (Մշոտան) գիւղում Օրբելին կարողացաւ դիտել հսկայական սալերից պատրաստուած շինութիւններ, որոնց ներսում միչտ առկայ էին կարծրը քարից պատրաստուած հսկայական անիւներ, որոնց չրջագծի եզրերը գլորուելուց ստացել էին սեղանաձեւ հատուածի տեսք։ Դրանք ձիթհաններ էին, որոնք միեւնոյն ժամանակ կարող էին ծառայել որպէս դինգ՝ հացահատիկը թեփահան անելու սարած՝ վարսանդ։ Այդպիսի անիւներ յայտնաբերուել էին Անիում եւ Մրէնում, իսկ աւելի ուշ՝ 1936ին, Յովսէփ Օրբելին դրանցից յայտնաբերեց Ամբերդ ամրոցի պեղումների ժամանակ։ Սակայն տարբերութիւնն այն էր, որ միայն Մոկսում նա դրանք տեսաւ իրական գործողութեան մէջ[26]։

Զմեռն անցկացնելով Վանում, 1912ի գարնանը, ճանապարհները բացուելուն պէս, Օրբելին կրկին ուղեւորուեց Մոկս։ Հիմնականում աւարտելով Մոկսի բարբառի ուսումնասիրութիւնը, Օրբելին աղերսներ գտաւ այդ բարբառի եւ քրդերէն լեզուի միջեւ։ Այդ էր պատճառը, որ երկրորդ ուղեւորութեան ժամանակ, որը սկսում է 1912 Ապրիլին եւ տեւում 10 չաբաթ, Օրբելին ուսումնասիրում է Մոկսի քրդերի լեզուն եւ

ազգագրութիւնը։ Մոկսում նրան հիւրընկալում է Մուրթուլլա բէկը։ Ինչպէս նշում է Վանի ռուսական փոխհիւպատոս Մ. Օլֆերեւը, Մուրթուլլա բէկի տանը Օրբելին ընդունւում է ջերմութեամբ։ Նրա համար ստեղծւում են հնարաւոր բոլոր պայմանները, որպէսզի նա կարողանայ զբաղուել իր հետազօտութեամբ։ Խօսելով Մուրթուլլա բէկի հայասիրութեան մասին, Օրբելին գրում է. «Մուրթուլա բէկը մի առանձնայատուկ մարդ է, կիրք, բարի, լայնախոհութեան տիպար։ Նա խօսում է լաւ հայերէնով եւ բարեկամական, անշահադիտական կրքով է մօտենում հայերին... Նա բաւականին կրթուած, շատ կարդացած անձնաւորութիւն է եւ հետաքրքրւում է բոլոր հարցերով։ Նա հազիւ 50 տարեկան կը լինի։ Նայելով նրան, ես աւելի եմ համոզւում, որ քրդերի ներքին աշխարհը շատ հարուստ է, եւ եթէ կառավարութեան կողմից մի փոքր հոգատարութիւն լինի, նա շատ արագ առաջ կ'ընթանայ եւ անտարակոյս կ'անցնի քուրք ֆանատիկից»[27]։

Անդրադառնալով հայ-քրդական յարաբերութիւններին եւ Մուրթուլլա բէկի գործունէութեանը, Օրբելին 1911 Սեպտեմբերին իր ծնողներին գրած նամակում նշում է. «Ապրում եմ քրդական բէկերից մէկի տանը, այն մարդու տանը, որ հայկական կոտորածների ժամանակ եղել է հայերի պաշտպանը, նա ունի ռուսական կողմնորոշում։ Ես շատ հազուագիւտ եմ հանդիպել մի այդպիսի հաճելի, սիրուն ծերուկի։ Գլխաւորն այն է, որ նա մեծ քաղաքավարութեան տէր մարդ է, չնայած որ Վանից այն կողմ չի գնացել։ Նա շատ սիրալիր է իմ նկատմամբ»[28]։

Երեք ամիս ապրելով Մուրթուլլա բէկի տանը, Օրբելին հնարաւորութիւն է ունենում հետեւել քրդերի ամէնօրեայ կեանքին, նրանց բարքերին, սովորութիւններին եւ ծէսերին։

Մուրթուլլա բէկի տանը գիտնականը ուշադրութիւն դարձրեց քառակուսի հարթ բարձերին, որոնք ըստ էութեան փափուկ ներքնակներ էին։ Երեկոյեան տան տիրոջն էին այցելում շատ հիւրեր՝ քրդեր ու հայեր եւ Օրբելին տեսնում էր, թէ ինչպէս են այդ բարձերը դրւում յատակին եւ ինչպէս էին պատուաւոր հիւրերը նստում դրանց վրայ։ Առաւել մեծանունը կարող էր ստանալ երկրորդ բարձը։ Այդ բարձերը դրւում էին մեհմանդարի (հիւրընկալի) կողմից, ընդ որում, մի դէպքում տանտէրն էր նշան տալիս, իսկ միւս դէպքում մեհմանդարն էր բերում բարձերը՝ չսպասելով նշանի։ Այն բարձերը, որոնք նախատեսուած էին ամենապատուաւոր հիւրերի համար, տանտէրը մատով չօշափում էր։ Հիւրերը յատակին էին նստում ըստ աւագութեան ու անուանիութեան, եւ դա շատ էր յիշեցնում աստիճանակարգութեան այն սովորութիւնը, որը գոյութիւն ունէր ինչպէ՛ս պարսկական, այնպէ՛ս էլ հայկական թագաւորական արքունիքներում[29]։

Օրբելու գործուղման հիմնական նպատակներից էր ծանօթանալ Մոկսի քրդերի բարբառին, կազմել քուրդ-ռուսերէն բառարան եւ քրդերէն լեզուի քերականութիւն։ Երեք ամիս Մոկսում նա զբաղւում է այդ հարցերով, սակայն, ժամանակի բերումով, չի աւարտում այդ աշխատանքը։ Այս անգամ Մուրթուլլա բէկը իր բարեկամին՝ Ալի աղային ուղարկում է Վան, որպէսզի տեղում օգնի Օրբելուն՝ իր քրդագիտական աշխատանքներն աւարտելու գործում։ Ազատ տիրապետելով հայերէնին եւ ծանօթ լինելով քրդական ժողովրդական բանահիւսութեանը, Ալի աղան ամէն կերպ աջակցում է Օրբելուն, եւ երբ վերջինս իր կնոջ հետ մեկնում է արձակուրդի, նրանց ուղեկցում է Թիֆլիս եւ մնում Օրբելու տանը։ Այս կապակցութեամբ Օրբելին գրում է. «Ես Մոկսում մի քանի մարդկանց անմիջական օգնութեամբ զբաղուեցի քրդերէնի ուսումնասիրութեամբ, յատկապէս ինձ օգնել է Ալի աղան՝ Եուսուֆի տղան։ Ալի աղան բացարձակ տիրապետում էր տեղի հայկական բարբառին»[30]։

Օրբելուն յաջողւում է գրառել մի հատուած քրդական «Մամ Եւ Ջին» պոէմից եւ կազմել երեք մասից բաղկացած 434 էջանոց քուրդ-ռուսերէն եւ ռուս-քրդերէն բարբառագիտական բառարան, որը գիտական լուրջ ուսումնասիրութիւնների արդիւնք էր[31]։

Բառարանը կազմելիս Օրբելին օգտւում է մի շարք աշխատութիւններից, որի մասին նա գրում է. «Այս բառարանը կազմելիս օգտուել եմ Ժաբայի, Եուստի, Եղիազարովի աշխատութիւններից...»[32]։

Այսօր Օրբելու անձնական արխիւում պահւում են անտիպ նիւթեր Մոկսի քրդական եւ հայկական բարբառագիտութեան վերաբերեալ[33]։

1911-1912ին Օրբելին զբաղւում է նաեւ հայ միջնադարեան ճարտարապետութեան խնդիրներով՝ ուսումնասիրելով Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին եւ նրա բարձրաքանդակները, Արծրունիների արքունական պալատը, Ոստան քաղաքը եւն.[34]։

Այսպիսով, Օրբելին շուրջ մէկ տարի ուսումնասիրում է Մոկաց երկիրը Մոկսի հայերի եւ քրդերի կենդանի բարբառը, բանահիւսութիւնը եւ ազգագրութիւնը, Վանի բերդը, Թոփրակ կալէն, Հայկաբերդը եւ Աղթամարի ճարտարապետական յուշարձանները։ Այդ ամէնը յետագայում տեղ են գտնում նրա *Մոկսը Եւ Նրա Բնակիչները* աշխատութեան մէջ, որտեղ հեղինակը ներկայացնում է Մոկսի բնակավայրերի ցուցակը 1911-12ին։ Ըստ այդ ցուցակի Մոկսի շրջանում կար 70 բնակավայր։ Մոկս քաղաքը, որը բաղկացած էր 5 թաղերից, ունէր 672 տուն հայ եւ 640 տուն քուրդ ազգաբնակչութիւն, ինչպէս նաեւ 4-5 տուն գնչու-բոշաներ եւ 3-4 տուն թուրք պաշտօնեաներ[35]։

Մոկսի ուղեւորութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ Օրբելու աշխարհայեացքի վրայ։ Վերադառնալով Ռուսաստան, նա իր ուղեւորութեան եւ Վանի շրջանի ուրարտական յուշարձանների ուսումնասիր-

ման վերաբերեալ հանգամանալի զեկուցում կարդաց նախ Գիտութիւնների Ակադեմիայի Պատմա-Բանասիրական Բաժանմունքում 1912 Հոկտեմբերի 3ին, ապա Ռուսական Հնագիտական Ընկերութեան (ՌՀԸ) Արեւելեան Բաժանմունքի նիստում՝ 1912 Դեկտեմբերի 20ին,[36] *նա ցուցադրեց նաեւ իր կողմից յայտնաբերուած եւ Վանի հնավաճառներից գնուած հնագիտական որոշ իրերի հաւաքածուն*[37]:

Ներկայացնելով Վանի թագաւորութեան յուշարձանների տեսութիւնը եւ մասնաւորապէս Վանի մօտակայքում գտնուող բերդում հնագիտական պեղումներ կատարելու անհրաժեշտութիւնը, Օրբելին նշում է. «այդ հրաշալի եւ ընդարձակ բերդերը, ինչպէս օրինակ Հայկաբերդը, բացարձակապէս ձեռք չեն տրուել եւրոպացի հետազօտողների կողմից եւ՝ որ պեղումներից կարելի է սպասել որոշակի արդիւնքներ»[38]:

1915ի Ցեղասպանութիւնից յետոյ, երբ Մոկսի տարածքը հայաթափուում է, Օրբելու ուսումնասիրութիւնները չուտով ձեռք են բերում յատուկ նշանակութիւն: Նա առաջին եւ միակ հետազօտողն էր, որ տեղեկութիւններ հաւաքեց Մոկսի վերաբերեալ հենց Մոկսի տարածքում, դաշտային պայմաններում, իսկ հաւաքած նիւթերը (250 լուսաթիթեղներ-նեգատիւներ եւ 62 ձայնագրուած գլանիկներ) ձեռք բերեցին գիտական մեծ արժէք՝ քերականութեան, բառագիտութեան, հնչիւնաբանութեան, ինչպէս նաեւ ազգագրութեան ուսումնասիրման գործում: Տարիներ անց, աւարտելով Մոկսի Հայկական Տեքստերը աշխատութեան ներածականը, Օրբելին ցաւով գրում էր, որ 1915ի Եղեռնից փրկուեցին միայն մի քանի հայ ընտանիքներ, հայերի ճակատագրից չխուսափեց նաեւ քուրդ բնակչութիւնը, որի մի մասը բնաջնջուեց, մի մասը փախուստի դիմեց եւ Մոկսը անմարդաբնակ դարձաւ. «Իսկ 1911-1912թթ. երբ ես եղայ Մոկսում,- *նշում է Օրբելին*,- այնտեղ շատ մարդ էր ապրում, կեանքը աշխատանքային էր, իրաւազուրկ, ծանր, բայց եւ կեանքի փոքր ուրախութիւններից ոչ բոլորովին զուրկ: Եւ դրա համար էլ առանձնապէս ցաւալի է գիտակցել, որ այն քիչը, որը ես կարողացայ գրառել Մոկսում՝ եւ նիւթերի այդ փոքր ժողովածուն, եւ՛ հայկական, եւ՛ քրդական բառարանները հանդիսանում են հազիւ թէ ոչ վերջին վկայութիւնը հայերի եւ քրդերի, երկու ժողովուրդների մի քանի հազար զաւակների լեզուի, կացութաձեւի, սովորութիւնների, աշխատանքի եւ ուրախութեան մասին»[39]:

Ռուսաստան վերադառնալուց յետոյ Օրբելու ՌՀԸ Արեւելեան Բաժանմունքի 1912 Դեկտեմբերի 20ի նիստում ներկայացրած Վանի նահանգում իր գործուղման արդիւնքների զեկոյցը առաջ բերեց Վանում հնագիտական նոր հետազօտութիւններ կատարելու անհրաժեշտութիւնը:

1913 Մարտի 27ին ՌՀԸի նոյն բաժանմունքում Բ. Վ. Ֆարմակովսկու զեկուցումից եւ Մառի առաջարկութիւնից յետոյ որոշւում է յանձնաժողով ստեղծել՝ Թոփրակ Կալէում հնագիտական պեղումները շարունակելու համար։

1914 Ապրիլին ՌՀԸի Արեւելեան Բաժանմունքում նորից քննարկւում է Վանում հնագիտական պեղումներ կատարելու հարցը։ Մառը կարեւորելով Վանի թագաւորութեան յուշարձանների բացայայտումը՝ Ռուսաստանի հնավայրերի ուսումնասիրման համար, առաջնահերթ է համարում Վանում հնագիտական ուսումնասիրութիւնների վերսկսումը[40]։

Արդէն յաջորդ՝ 1914 Ապրիլի 24ի նիստում ներկայացւում է Բ. Ա. Տուրաեւի՝ «Վանի եւ Ցարակից Շրջանների Հնութիւնների Մասին» զեկոյցը։ Ըստ այդմ էլ մի փոքր ուշ՝ 1914 Նոյեմբերի 27ին որոշւում է Վան գործուղել Կովկասեան Ռազմաճակատի Արեւելեան Հնութիւնների Պահպանութեան ղեկավար Մառին (ղեկավար), Օրբելուն, Ի. Կնեազնիցկուն (ճարտարապետ) եւ Արամ Վրոյրին (լուսանկարիչ)։ Նախատեսւում է նաեւ այդ նպատակով պետական գանձարանից բաց թողնել 7000 ռուբլի գումար։

Սակայն պատերազմական անբարենպաստ վիճակը պատճառ դարձաւ որ այս պեղումները յետաձգուեն մինչեւ 1916։

ՌՀԸի 1916 Մայիսի 7ի գրութիւնից պարզւում է, որ երբ 1915 Մայիսին ռուսական զօրքերը գրաւեցին Վանը, ակադեմիկոս Մառը եւ նրա օգնական Օրբելին թոյլտուութիւն ստացան իրենց արշաւախմբով հնագիտական պեղումներ կատարել Վանի բերդում, Վանի շրջանի Թոփրակ Կալէ, Զըմզըմ Մաղարա եւ Բոլ Դաղի/Հայկաբերդ կոչուող վայրում[41]։ Այդ ժամանակներից էլ սկսած ուրարտերէնը դառնում է Մառի յատուկ հետաքրքրութիւնների առարկան։

Հնագիտական ուսումնասիրութիւնների ընթացքում յայտնաբերւում են մի շարք հնագիտական նիւթեր, սեպագիր ու ձեռագիր յուշարձաններ։ Վանի միջնաբերդի հիւսիսային փեշին՝ «Հազինէ Կապուսի» որմնախորշում Օրբելին կատարեց հնագիտական մեծ յայտնագործութիւն եւ յայտնաբերեց 2 մետր բարձրութեամբ քարի մեծ հողակոթող՝ Սարդուրի Բ.ի 265 տողանոց տարեգրութիւնը, որն իր նշանակութեամբ եւ չափերով կարող էր համեմատուել միայն Վանի բերդի հարաւային փեշին փորագրուած Արգիշտի Ա.ի խորխորեան արձանագրութեան հետ[42]։ Մառը պատճէնաւորեց այն, իր հետ տարաւ Ռուսաստան եւ վերծանելուց յետոյ հրատարակեց առանձին գրքով[43]։ Այս յայտնագործութիւնը մեծ փառք բերեց ռուսական հնագիտական դպրոցին։ Միաժամանակ արձանագրութեան վերջին տողի տակ յայտնաբերուեցին նաեւ ինչ-որ տառեր։ Ոչ-մեծ հետախուզական աշխատանքներից յետոյ պար-

գուեց, որ հանելուկային այդ տառերը պատկանում էին հայկական արձանագրութեանը[44]:

Հնագիտական ուսումնասիրութիւնները շարունակուեցին նաեւ յետագայում:

Հնագիտական արշաւախումբը Մառի գլխաւորութեամբ 1916 Յունիսի 11-Յուլիսի 16ը պեղումներ կատարեց Թուփրակ Կալէում, իսկ Յունիսի 22-Յուլիսի 16ը՝ Օրբելու գլխաւորութեամբ՝ Վանի բերդում[45]:

1915-1916ին Կովկասեան Թանգարանի տնօրէն գնդապետ Ա. Ն. Կազնակովը թոյլտուութիւն է ստանում հնագիտական պեղումներ եւ գիտա-թանգարանային հետազօտութիւններ կատարել Թուրքիայից պատերազմի իրաւունքով գրաւուած շրջաններում: Նա Թիֆլիսի Կովկասեան Թանգարան է հասցնում ոչ միայն լուսանկարներ եւ քանդակագրոշմներ, այլեւ սեպագիր 25 արձանագրութիւններ, որոնցից 18ը՝ Վան-Վասպուրականից, այդ թւում՝ 3ը՝ Ջեւաստան (Մվստանից) (Իշպուինիի), 8ը՝ Վանից (5ը՝ Մենուայի, 2ը՝ Արգիշտի Ա.ի, 1ը՝ Ռուսա Ա.ի), 1ը՝ Վարագից (Մենուայի), 4ը՝ Սղգայից (Մենուայի), 1ը՝ կարմրաւոր վանքից (Մենուայի), 1ը՝ Թուխմանից (կեղծ արձանագրութիւն): Փրկւում եւ Թիֆլիս է տեղափոխւում նաեւ Վանից յայտնաբերուած ուրարտական թագաւորի արձանիկ եւ մի երկան (ջրաղացքար)՝ ընդհանուր առմամբ 20 միաւոր[46]: Կազնակովի լուսանկարներն իրականացւում էին Բ. Շախովսկու կողմից, որոնք 1917ին ամբողջութեամբ փոխանցւում են Մոսկուայի Հնագիտական Ընկերութեանը[47]:

Վանի թագաւորութեան յուշարձանները էր լուսանկարում նաեւ Ա. Վ. Լեադովը, որը 1916ին ուղեկցում էր Ա. Ա. Բոբրինսկուն[48]: Վերջինիս լուսանկարները (Մենուայի արձանագրութիւնը Վարագից, Մենուայի արձանագրութիւնը Աղթամարից, Իշպուինիի եւ Մենուայի արձանագրութիւնը Աղթամարից, քարէ սալիկների արձանագրութիւնը Հայկաբերդից եւն.) յետագայում տպագրուեցին Մառի աշխատութեան յաւելուածում[49]:

Ռ.Հ.Ը.ի կողմից ակադեմիկոս Մառի անմիջական ղեկավարութեամբ հնագիտական հետազօտութիւններ (պեղումներ, նկարագրութիւն, յատակագծում, լուսանկարում, ճարտարապետական յուշարձանների, ամրոցների, քարանձաւների, ստորգետնեայ անձաւների, դամբարանների, արձանագրութիւնների եւն.ի ուսումնասիրութիւններ եւ հաւաքում) էր կատարում նաեւ Ռուսաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Ասիական Թանգարանի տնօրէն-գիտնական, հայ նշանաւոր հայագէտ, հնագէտ եւ պատմաբան Անդրանիկի գրագիր՝ Աշխարհբէկ Անդրէեւիչ (Աղալոյի) Լորիս-Մելիք-Քալանթարը (1884-1942)[50]:

Դեռեւս 1915ին Քալանթարը մեծ ջանքեր էր գործադրել եւ թոյլտուութիւն ստացել մասնակցել Անդրանիկ Օզանեանի հայ կամաւորական

գնդի ռազմական գործողութիւններին[51]: Մարտերի միջակայքում Քալանթարը հնարաւորութիւն է ունենում ուսումնասիրել Ճանապարհի մօտակայքում գտնուող հայկական պատմական յուշարձանները: Մասին ուղղուած նրա 1915 Մայիսի 12ի նամակում կարդում ենք. «Ամսի երեքին անցանք Վանք գիւղով, որտեղ գտնւում է U. Բարդուղիմէոսի վանքը: Շինութեան ոճը VII-VIII դարերի է, մուտքը՝ IX-X դարերի: Եկեղեցու յատակագիծը խաչանման է, արձանագրութիւնները՝ բացառապէս ուշ դարերի, կան հետաքրքիր գարդաքանդակներ: Կը գրեմ մանրամասն»[52]:

Ըստ ականատեսների վկայութիւնների, մի իրադէպի ընթացքում Անդրանիկը փրկում է գիտնականի կեանքը[53]: 1915 Ապրիլին ռուսական զօրքերը եւ հայ կամաւորները գտնւում էին Խոյից հարաւ: Յանկարծ լուր է ստացւում, թէ Աչխարհբէկ Քալանթարը, գեներալ Ջերնոզուբովի հրամանով ձերբակալուել է եւ պէտք է գնդակահարուի՝ ռազմական գծից դուրս ուսումնասիրութիւններ կատարելու համար: Գեներալ Նազարբեկովի եւ ուրիշների միջնորդութիւնները՝ գիտնականին ազատ արձակելու վերաբերեալ, որեւէ արդիւնք չէին տուել: Միայն Անդրանիկի խելամիտ միջամտութիւնից յետոյ նա ազատ է արձակւում: Յետագայ արշաւանքների ընթացքում գեներալներ Ջերնոզուբովը, Նազարբեկեանը եւ Անդրանիկը ժամանակ էին գտնում զրուցելու Քալանթարի հետ պատմութեան եւ պատմական յուշարձանների մասին[54]:

1917 Յունիսի 22ին Քալանթարը թոյլտուութիւն է ստանում Մառի անմիջական ղեկավարութեամբ մասնակցել Ռուսաստանի Կայսերական Ակադեմիայի ՌՀԸի կողմից կազմակերպուած Վանի երկրորդ հնագիտական արշաւախմբին, որը պեղումներ է կատարում Վանում՝ Թոփրակ Կալէում եւ Բոլղաղ լեռան[55] վրայ գտնուող Հայկաբերդում: Նրան յաջողւում է յայտնաբերել եւ ուսումնասիրել ուրարտական սեպագիր որոշ արձանագրութիւններ, որոնց մի մասը նա փրկում եւ իր հետ բերում է Արեւելեան Հայաստան[56]:

Քալանթարը ուսումնասիրում, լուսանկարում, պատճէնահանում է չուրջ 50 ուրարտական սեպագիր արձանագրութիւններ, որոնցից 10ը՝ նորայայտ[57]: Այդ մասին նա Թիֆլիս հասնելուն պէս հեռագրում է Մառին՝ Սանկտ Պետերբուրգ. «Շտապում եմ, գոնէ հեռագրային համառօտութեամբ տեղեկացնել, որ մեր արշաւախումբը, բարեյաջող աւարտելով իր աշխատանքները, երէկ՝ Օգոստոսի 29ին ժամանեց Թիֆլիս: Ծրագիրը հնարաւորինս կատարուել է ամբողջութեամբ: Շրջագայել եւ հանգամանօրէն հետազօտել ենք Վանի շրջանը (քաղաքը, միջնաբերդի մերձակայքը, Արճակը, Թիմարը, Բերկրին եւ Բայազէտը): Հաւաքուել է մեծ քանակութեամբ նիւթ՝ 250 լուսաթիթեղներ»[58]:

1916ին Էջմիածնից Էրզրում եւ Մուշ է ուղեւորւում նաեւ Նիկողայոս Ադոնցը, որը 1917ին միանում է ՌՀԸին եւ մասնակցում Վանի հնագիտական արշաւախմբի կազմակերպած պեղումներին[59]:

Վանի 1915ի գրաւումից անմիջապէս յետոյ ռուսական բանակը ձեռնամուխ է լինում նաեւ փրկելու պատմական եւ հնագիտական կարեւոր յուշարձանները: Այսպէս, ռուսական կովկասեան բանակի շտաբը յատուկ գրութեամբ տեղեկացնում է գեներալ Ջերնոգուբովին, որ Ուշնուէ-Շէյխան-Ռեւանդուզ ճանապարհին Քելիշինի լեռնանցքում յայտնաբերուել է քարէ հնագոյն մի յուշարձան՝ սեպագիր արձանագրութեամբ, որը հնագիտական արժէք է ներկայացնում եւ որը թուագրւում էր Ք.ա. Թ. դ.: Գերմանացիները փորձել էին այդ յուշարձանը տեղափոխել եւրոպական որեւէ թանգարան: Սակայն Կովկասեան Բանակի գլխաւոր հրամանատարը հրամայում է, որ ձեռնարկուեն բոլոր միջոցները, որպէսզի այդ յուշարձանը չյայտնուի Բեռլինում, այլ անվնաս եւ մեծ հոգատարութեամբ հասցուի Թիֆլիս, որտեղից էլ այն տեղափոխուի Ռուսաստանի որեւէ գիտական հաստատութիւն[60]:

Կովկասեան ճակատի շտաբի պետ գեներալ Բոլխովիտինովին ուղարկած իր պատասխան հեռագրում գեներալ Ջերնոգուբովը տեղեկացնում էր, որ Քելիշին-Ուշնուէի լեռնանցքում 1365 սաժէն[61] բարձրութեան վրայ իրօք գտնուում է Վանի Թագաւորութեան գահակալ Իշպուինիի Ք.ա. Թ. դ. կառուցած յուշարձանը՝ խալդական կամ ասորական գրութեամբ: Նոյն Ջերնոգուբովի վկայութեամբ մէկ այլ յուշարձան էլ յայտնաբերուել էր Սիդեկից ոչ հեռու՝ Թալաւուզում, որը կանգնեցրել էր Ռուսա Ա.ն՝ Ք.ա. 714ին: Ջեռնոգուբովը յայտնում էր նաեւ, որ դէպի յուշարձաններ տանող կածանները դժուարանցանելի են եւ հենց առաջին հնարաւորութեան դէպքում՝ մասնաւորապէս Ապրիլի վերջերին, կարգադրութիւնը ի կատար կ՚ածուի եւ 30-40 փութ[62] քաշ ունեցող սեպագիր արձանագրութեան յուշարձանը կը տեղափոխուի[63]:

Միաժամանակ Ռուսաստանի Գիտութիւնների Ակադեմիայի լուսանկարիչ Ն. Կ. Գլուկէին յանձնարարւում է Կովկասեան բանակի գործողութիւնների վայրերում կատարել հնութիւնների եւ արուեստի յուշարձանների հաւաքում եւ պահպանում:[64]

Ա. Ա. Ֆլորենսկին, բացի լուսանկարներից Մոսկուա հասցրեց Վանի շրջանի Լեսկ գիւղից յայտնաբերուած սեպագիր մի արձանագրութիւն, որն այժմ պահպանւում է Ռուսաստանի Դաշնութեան Ալեքսանդր Ս. Պուշկինի անուան կերպարուեստի Պետական Թանգարանում[65]:

Բացի դրանից, Ռուսական Թանգարանի Ազգագրութեան Բաժնի վարիչ Ա. Ա. Միլլէրի ղեկավարութեամբ, որի օգնականն էր Պօղոս Մակինցեանը, կազմակերպուեց նաեւ ազգագրական արշաւախումբ[66] դէպի Վան:

Վասպուրականի 1915 յուլիսեան գաղթի ժամանակ, մեծ չափով մնասւում են վանքերի եւ եկեղեցիների թանկարժէք եկեղեցական առնօթները, իրերն ու ձեռագրերը, իսկ մի մասն էլ թալանւում են ու ոչնչացւում։ Գէորգ Ե. Վեհափառ Կաթողիկոսի կարգադրութեամբ որոշւում է արժէքաւոր իրերը եւ ձեռագրերը փոխադրել Էջմիածին։

Մոսկուայի Հնագիտական Ընկերութեան իսկական անդամ, Պատմութեան եւ Ազգագրանութեան Հայկական Ընկերութեան հիմնադիր անդամ եւ գիտական-քարտուղար, Կովկասեան Թանգարանի Հնագիտութեան Բաժնի աւագ թանգարանապահ Սմբատ Վ. Տէր-Աւետիսեանը[67] Ռուսաստանի Գիտութիւնների Ակադեմիայի յանձնարարութեամբ 1916 Ապրիլին Պետրոգրադից գործուղւում է Կովկասեան ճակատ՝ մշակութային յուշարձանների, մասնաւորապէս սալաքարէ արձանագրութիւնների հաշուառման եւ պահպանման համար[68]։

Վեհափառի դիւանապետին ուղղուած նամակում նա գրում է. «Գիտութեան ճեմարանի որոշման համաձայն եւ S. Փոխարքայի հրամանով երկու օրից ճանապարհուելու եմ Կովկասեան պատերազմաբեմը, առանձնապէս Վանի շրջանը, յատուկ հրահանգ ունենալով զեկուցագիր կազմել պատմական-կուլտուրական յիշատակարանների վիճակի եւ այն մասին, թէ ինչքան նոքա վնասուել են ու աւերուել ներկայ պատերազմի ժամանակ, տեղնուտեղը կարգադրել նոցա պահպանութեան մասին եւ միջոցներ ձեռք առնել այդ յիշատակարանների գոյութիւնը ապահովելու համար»[69]։

Կաթողիկոսի կարգադրութեամբ հնագիտական հետազօտութիւնների եւ որոնումների ժամանակ եկեղեցու ներկայացուցիչ է նշանակւում Լիմ անապատի վանահայր Յովհաննէս վարդապետ Հիւսեանը։ Նախատեսւում է, ցուցակագրել, կնքել-ապահովել՝ գտնուած հնագիտական իրերը, ձեռագրերը, եկեղեցական-հնագիտական արժէք ունեցող սպասներն ու զարդերը, եւ իրերի ցուցակի հետ տեղափոխել Էջմիածին եւ ոչ թէ Թիֆլիս[70]։ Յովհաննէս վարդապետ Հիւսեանի անմիջական ջանքերով անխուսափելի կորստից փրկուեցին եւ Կովկաս փոխադրուեցին երկու տասնեակից աւելի սեպագիր արձանագրութիւններ, չուրջ 1300-1400 ձեռագիր մատեաններ, Մշոյ Առաքելոց վանքի դուռը եւն.։

Այսպիսով, երիտթուրքական 1908ի յեղաշրջման եւ հռչակուած օսմանեան սահմանադրութեան բարենպաստ պայմանների հետեւանքով, ինչպէս նաեւ Ա. Աշխարհամարտի ընթացքում ռուսական յառաջխաղացքի շնորհիւ 1910-1917ին հնարաւորութիւններ ընձեռուեցին պատմա-հնագիտական, ազգագրական եւ բանասիրական հետազօտութիւններ կատարելու Վանի նահանգի տարածքում, որոնց արդիւնքները յետագայում ձեռք բերեցին գիտական մեծ արժէք։

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Ընկերութիւնը հիմնադրուել է 1906ին Թիֆլիսում՝ ազգագրագէտ Երուանդ Լալայեանի նախաձեռնութեամբ։ Իր գոյութեան չուրջ 10 տարիների ընթացքում Ընկերութիւնը կազմակերպել է գիտական եւ հնագիտական արշաւախմբեր Անդրկովկասում եւ Արեւմտեան Հայաստանում։ Ընկերութեան կողմից հրատարակուել է Ազգագրական Հանդէս ամսագիրը։

[2] Ա. Ե. Սամուէլեան, «Երուանդ Լալայեան», *էջմիածին*, թիւ 12, 1964, էջ 7։

[3] Համբարձում Երամեան, *Ծուշարձան, Հտր. Բ., Աղեքսանդրիա, Տպագր. Արամ Ստեփանեան*, 1929, էջ 137։

[4] Հայաստանի Ազգային Արխիւ (այսուհետեւ՝ ՀԱԱ), ֆոնդ 27, ցուցակ 1, գործ 160, թերթ 42։

[5] Կառլէնէ Զաչանի, *Հայ Մտաւորականութեան Դերը Քրդական Մշակոյթի Զարգացման Գործում*, Երեւան, 1987, էջ 14։

[6] Երուանդ Լալայեան, «Վասպուրականի Նշանաւոր Վանքեր» եւ «Վասպուրականի Բանահիւսութիւնից», *Ազգագրական Հանդէս, Տասնչորսերորդ Տարի, Գիրք 22*, No. 1, 1912, Թիֆլիս, 1912. Նաեւ՝ «Վասպուրականի Աւորիները» եւ «Վասպուրականի Բանաւոր Գրականութիւնից», *Ազգագրական Հանդէս, Գիրք 24*, No. 1, 1913, Թիֆլիս, 1913. Նաեւ՝ «Վասպուրականի Բանահիւսութիւնից» եւ «Տնայնագործութիւնը Վասպուրականում» եւ «Վասպուրական. Հաւատք», *Ազգագրական Հանդէս, Տասնուհինգերորդ Տարի, Գիրք 25*, No. 2, 1913, Թիֆլիս, 1914. Նաեւ՝ Արտաշէս Մ. Նազինեան, «Երուանդ Լալայեանը Բանահաւաք-Բանագէտ», *Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Տեղեկագիր, Հասարակական Գիտութիւններ*, 1965, թիւ 8, էջ 65։

[7] Կարապետ Վ. Մելիք-Փաշայեան, «Երուանդ Լալայեան (ծննդեան 100ամեակի առթիւ)», *Պատմաբանասիրական Հանդէս*, թիւ 3(26), 1964, էջ 34։

[8] ՀԱԱ, Ֆ. 57, ց. 5, գ. 54, թ. 26։

[9] ՀԱԱ, Ֆ. 53, գ. 45, թ. 1։

[10] ՀԱԱ, Ֆ. 53, գ. 45, թ. 2։

[11] Սամուէլեան, էջ 7։

[12] "Izvlechenie Iz Protokolov Zasedanii Akademii. Istoriko-Filologicheskoe Otdelenie. Zasedanie 22 Sentyabrya 1910 g." (*Քաղուածք Ակադեմիայի նիստի արձանագրութիւնից։ Պատմաբանասիրական Բաժանմունք։ 1910 Սեպտեմբերի 22ի նիստ*), *Izvestiya Akademii Nauk* (*Գիտութիւնների Ակադեմիայի տեղեկագիր*), 1910, էջ 1411-1412. Նաեւ՝ Կարէն Ն. Իւզբաշեան, *Ակադեմիկոս Յովսէփ Արգարի Օրբելի*, Երեւան, 1971, էջ 35։

[13] Իւզբաշեան, էջ 34։

[14] Նոյն, էջ 35։

[15] I. V. Megrelidze, *Iosif Orbeli*, Թբիլիսի, 1987, էջ 29։

[16] Նոյն, էջ 157-158։

[17] I. Orbeli, "Predvaritelniy Otchet O Komandirovke V Aziatskuyu Turtsiyu V 1911-1912 gg., Petrograd, 1912" (*Նախնական հաշուետուութիւն 1911-1912ի Ասիական Թուրքիա գործուղման վերաբերեալ, Պետերբուրգ, 1912*), *Izvestiya Akademii Nauk* (*Գիտութիւնների Ակադեմիայի Տեղեկագիր*), 1912, պրակ VI, թիւ 15, էջ 918։

[18] *Ակադեմիկոս Նիկողայոս Մառ, Մննդեան 140 Եւ Մահուան 70ամեակների Տարելիցի Ժողովածու*, խմբ. Պարոյր Մ. Մուրադեան, Երեւան, 2005, էջ 93։

[19] Մ. Հ. Մուրադեան, *Շատախի Բարբառը*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 1962, էջ 28-64։

[20] I. A. Orbeli, *Izbrannie Trudi V Dvukh Tomakh* (*Ընտիր երկեր երկու հատորով*), Հտր. 2, Երեւան, 2002, էջ 197-358։

[21] Նոյն, էջ XII։

[22] *Կովկասի Լրաբեր, Թիֆլիս*, 29.12.1912։ Նաեւ՝ Orbeli, "Predvaritelniy...", էջ 922-923։

[23] I. A. Orbeli, *Izbrannie Trudi* (*Ընտիր երկեր*), Երեւան, 1963, էջ XVII։

[24] N. Marr, *Materiali Po Kholdskoy Epigrafii Iz Komandirovki I. A. Orbeli V Turetskuyu Armeniyu* (*Նիւթեր Յ. Ա. Օրբելիի՝ Թուրքահայաստան կատարած գործուղման խալդական արձանագրութիւնների*), ZVO, Հտր. XXIV, Պետրոգրադ, 1917, էջ 97-124։

[25] *Տե՛ս՝ աւելի ետք։*

[26] *Իւզբաշեան*, էջ 37։

[27] *Ռուսական կայսրութեան Արտաքին Քաղաքականութեան Արխիւ* (*Ռուսաստանի Դաշնութիւն*), «*Կ. Պոլսի դեսպանութիւն*», 1912, գ. 1603, թ. 84-85։

[28] K. N. Yuzbashyan, *Akademik Iosif Abgarovich Orbeli* (*Ակադեմիկոս Յովսէփ Աբգարի Օրբելի*), *Մոսկուա*, 1964, էջ 33։

[29] *Իւզբաշեան*, էջ 38։

[30] *Ջաչանի*, էջ 14-15։

[31] Orbeli, *Izbrannie Trudi*, էջ 188-195. Նաեւ՝ Yuzbashyan, էջ 30-35, I. A. Orbeli, *Folklor I Bit Moksa* (*Մոկսի ազգագրութիւնը եւ կենցաղը*), *Մոսկուա*, 1982, էջ 3-8։

[32] *Ջաչանի*, էջ 117։

[33] Orbeli, *Izbrannie Trudi V Dvukh*, *Հտր. Բ.*, էջ XV։

[34] Orbeli, *Izbrannie Trudi V Dvukh*, *Հտր. Ա.*, *Մոսկուա*, 1968։

[35] Orbeli, *Folklor*, էջ 3, 136։

[36] Orbeli, "Predvaritelniy":

[37] Orbeli, *Izbrannie Trudi V Dvukh*, *Հտր. Ա.*, էջ 1, 10. Նաեւ՝ N. Marr, *Materiali*, էջ 97. Նաեւ՝ Orbeli, "Predvaritelniy", էջ 917-926։

[38] N. Marr, I. Orbeli, *Arkheologicheskaya Ekspeditsya 1916 Goda V Van, Raskopki Dvukh Nish Na Vanskoy Skale I Nadpisi Sardura Vtorogo Iz Raskopok Zapadnoy Nishi* (*1916ին Վան կատարուած հնագիտական արշաւախումբը, Վանի ժայռի երկու խորշերի պեղումները եւ Սարգուրի Բ.ի արձանագրութիւնները արեւմտեան խորշից*), Պետերբուրգ, 1922, էջ 1։

[39] Orbeli, *Folklor*, էջ 3. Նաեւ՝ *Իւզբաշեան*, էջ 39-40։

[40] B. B. Piotrovskii, *Arkheologiya Zakavkazya* (*Անդրկովկասի Հնագիտութիւն*), Լենինգրադ, 1949, էջ 9։

[41] *Ռուսական կայսրութեան Արտաքին Քաղաքականութեան Արխիւ* (*Ռուսաստանի Դաշնութիւն*), ֆ. 2100, ց. 1, գ. 335, թ. 112. Նաեւ՝ *Գաղափար, Թիֆլիս*, 11.09.1916, Նաեւ՝ Piotrovskii, *Arkheologiya*, էջ 9. Նաեւ՝ *Աչոտ Արզումանեան, Օրբելի Եղբայրներ, Գիրք Առաջին, Թարգուն, Երեւան, 1986, էջ 517։*

[42] Orbeli, *Izbrannie Trudi V Dvukh*, *Հտր. Ա.*, էջ 10։

[43] *Հրաչեայ Աճառեան, «Մաոր եւ հայագիտութիւնը», Գրական Թերթ*, 2.04.1965. Նաեւ՝ *Նիկողայոս Եակովլեւիչ Մառ (Մէնդելեան 100-ամեակի Առթիւ), Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ.*, 1965, էջ 57։

[44] *Իւզբաշեան*, էջ 54։

[45] N. Marr, I. Orbeli, էջ 1-3։

[46] I. I. Meshchaninov, *Khaldovedenie* (*Խալդագիտութիւն*), Բաքու, 1927, էջ 208. Նաեւ՝ G. V. Tsereteli, *Urartskie Pamyatniki Muzeya Gruzii* (*Վրաստանի Թանգարանի ուրարտական յուշարձանները*), Թբիլիսի, 1939, էջ 33-41, 45-52, 60-64։

[47] I. I. Meshchaninov, *Die Neuen Ergebnisse Der Chaldischen Forschungen. Archiv Für Orientforschung*, 1931, VI, Heft 4/5, էջ 204. Նաեւ՝ Tsereteli, էջ 12. Նաեւ՝ B. B. Piotrovskii, *Vanskoe Tsarstvo (Urartu)* (*Վանի թագաւորութիւնը. Ուրարտու*), *Մոսկուա*, 1959, էջ 15։

[48] Piotrovskii, *Vanskoe*, էջ 15:

[49] N. Marr, *Materiali Po Kholdskoy Epigrafii Iz Komandirovki*, էջ 97-124:

[50] *Աշխարհբէկ Քալանթար, «Հայաստան, Քարէ Դարից Մինչև Պատմութիւն», Երկերի Ժողովածու, Երեւան, 2007, էջ 31-34:*

[51] *Զօրավար Անդրանիկի Կովկասեան Ճակատի Պատմական Օրագրութիւնը 1914-1917, Օրագրուած Զօրավարին Թիֆլիսապահ Զինուորէն, «Պայքար», Պոսթոն, 1924, էջ 30:*

[52] *Քալանթար, «Հայաստան», էջ 17:*

[53] *Վ. Յովհաննիսեան, Դժուարին Տարիներ. Յուշեր, Երեւան, «Հայաստան», 1988:*

[54] *Զօրավար Անդրանիկի Կովկասեան, էջ 30:*

[55] *Այն գտնւում է Հայկական Տաւրոսի արեւելեան կողմում, Մոշաբ գետի հովտում: Նիկողայոս Ադոնցը ենթադրաբար այն նոյնացնում է Կիշտէիր լեռան հետ:*

[56] *Բարկէն Ն. Առաքելեան, «Աշխարհբէկ Քալանթար (Մենդեան 100ամեակի Առթիւ)», Պատմաբանասիրական Հանդէս, թիւ 3 (106), 1984, էջ 3:*

[57] *Աշխարհբէկ Քալանթարի սեպագիր արձանագրութիւնների ապակեայ լուսաթիթեղների (նեգատիւների) հաւաքածուն յայտնի է եղել մասնագէտների շրջանում, օգտագործուել նշանաւոր ուրարտագէտ Իւան Մեշչանինովի կողմից եւ որոշ հրատարակութիւններում: Յաւօք, այդ հաւաքածուի միայն չնչին մասն է փրկուել: Գիտնականի ձերբակալումից յետոյ նրա այրին՝ Թամարան, դրանք յանձնել է Երեւանի Պատմութեան Թանգարանին (Քալանթար, Երկերի Ժողովածու…, էջ 17):*

[58] *Յաւօք Քալանթարի կողմից հրատարակութեան պատրաստած Վանի արշաւախմբի նիւթերը ոչնչանում են Նեւայի 1924ի վարարման ժամանակ Լենինգրադի Ակադեմիայի տպարանում (Քալանթար, «Հայաստան», էջ 18):*

[59] *Կարէն Ն. Իւզբաշեան, «Նիկողայոս Ադոնցի Գիտական Ժառանգութիւնը», Պատմաբանասիրական Հանդէս, 1962, թիւ 4(19), էջ 117:*

[60] *Ռուսական կայսրութեան Արտաքին Քաղաքականութեան Արխիւ, ֆ. 2100, ց. 1, գ. 648, թ. 2-3:*

[61] *Երկարութեան հին ռուսական չափ. 1 սաժէնը=2,134 մետր:*

[62] *Ծանրութեան ռուսական միաւոր. 1 փութը=16,3 կգ.:*

[63] *Ռուսական կայսրութեան Արտաքին Քաղաքականութեան Արխիւ, ֆ. 2100, ց. 1, գ. 648, թ. 5:*

[64] *Նոյն, թ. 15:*

[65] N. Ya. Marr, "Khaldskaya Klonoobraznaya Nadpis Iz Sela Leska Vanskogo Okruga" (*Խալդական սեպագիր արձանագրութիւն Վանի շրջանի Լեսկ գիւղից*), *Izvestiya Akademii Nauk*, 1915, էջ 1731-1733:

[66] *Ռուսական կայսրութեան Արտաքին Քաղաքականութեան Արխիւ, ֆ. 2100, ց. 1, գ. 335, թ. 3-35:*

[67] *ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Արխիւ, ֆ. 1, ց. 1, գ. 1205, թ. 6:*

[68] *Նոյն, ֆ. 2100, ց. 1, գ. 648, թ. 1-12. նաեւ՝* Marr, Orbeli, էջ 3:.

[69] *Արարատ, Էջմիածին, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1915, էջ 861:*

[70] *Նոյն, էջ 861-862:*

HISTORICAL-ARCHAEOLOGICAL, ETHNOGRAPHICAL AND PHILOLOGICAL EXPLORATIONS IN VAN-VASPOURAKAN DURING 1910-1917

(Summary)

AVETIS HARUTUNYAN

The article is based on the archive documents, periodical press and historical literature that elucidate the historical-archaeological, ethnographical and philological explorations in Van-Vaspourakan during 1910-1917.

This field work included the exploration of the citadel of Van, Toprak Kala, and Haykaberd, and the study of the newly found cuneiform inscriptions, the dialect of Moks and the customs and traditions of the Kurds of the region.

This scientific research was conducted by well-known experts of both Armenian and Oriental studies, such as Yervand Lalayan, Hovsep Orbeli, Nicholai Marr, Ashkharbek Kalantar, Nikolai Adonts and others.

THE SOCIOECONOMIC LIFE OF MUSA DAGH ARMENIAN MIGRANTS IN THE MIDDLE EAST DURING THE 1920s-1930s

VAHRAM L. SHEMMASSIAN
shemmassian@yahoo.com

The Armenian society of Musa Dagh, although perched on uplands, was not isolated and/or static; people moved in and out for various reasons. Aspiration for post-elementary and higher education, marriage, family reunification, repatriation, tourism and estivation, and fear of the uncertain political future of the Sanjak of Alexandretta, all contributed to this ebb and flow. But the single most important cause of migration between the two World Wars was economic. Limited cultivable land and income, the demise of natural silk production and resultant unemployment, and poverty in general compelled many a Musa Daghian to leave the patrimony in search of better opportunities. This study chronicles their socioeconomic life in rural and urban localities in the Middle East, as the migrants, whether temporary or permanent, sought to ameliorate their lot while maintaining compatriotic bonds amongst themselves and with the native soil. The narrative also aims to fill some lacunae within the larger Armenian diasporic construct.

SANJAK OF ALEXANDRETTA

Svedia: As residents of the Sanjak of Alexandretta, it was natural for a number of Musa Daghians who wanted to stay close to home to seek their fortunes elsewhere within the boundaries of that autonomous county in northwest Syria. The nearest destination was the contiguous plain of Svedia/al-Swaidiyya to the south. In October 1924 a newspaper reported that some fifteen to twenty families (from Yoghunoluk, Kheder Beg, and Vakef) had established themselves at the Greek Orthodox village of Zeituniye/Zutenen, purchasing land and houses. A few other families and individuals had chosen Levshiye/Levshek, the administrative center of Svedia *nahiye* (subdistrict) inhabited mostly by Alawis, as their destination, as well as Magharajik/Mughayrun/Magharnen in the environs of Seleucid ruins, adjacent to Kabusiye and the Mediterranean.[1] In April 1925 the number of Armenian settlers at Zeituniye was estimated to be about thirty families, who were in the process of forming a village cluster with a distinct, albeit informal name (Nor/New Nakhichevan).[2] In 1938 the

[7] Misak Bllutian, untitled list of Vakef inhabitants with their nicknames, occupations, and political affiliations, prepared for the author, Hollywood, California; interview with Dajad Antablian, 1 July 1977, Anjar, Lebanon.

[8] Interview with Nubar Boghigian, 9 May 2009, Glendale, California; Babigian, "Husher," p. 172.

[9] Babigian, pp. 168-69, 171-72.

[10] AGBU Cairo, Binder 134, "Vakef" section, Membership Roster of AGBU Vakef Chapter, 15 July 1924.

[11] M.A. Varbedian, "Jebel Musan" [Musa Dagh], *Husaper*, 30 May 1932, p. 2; Babigian, p. 168.

[12] Boghos Madurian and Mardiros Kushakjian, eds., *Hushamadean Musa Leran* [Memorial Book of Musa Dagh] (Beirut: Atlas, 1970), p. 588; Babigian, pp. 177, 235.

[13] Babigian, pp. 168, 172, 177.

[14] Khacher Madurian, "Vakef," in *Hushamadean*, p. 103.

[15] Ibid.; Babigian, p. 169.

[16] Garabed S. Tilkian, *Musa Dagh Boy: Story of Survival and Service* (Los Angeles: Abril, 1992), p. 79.

[17] AGBU Cairo, Binder 134, "Zeituniye" section, Mihran Ashkarian and Arakel Penenian to AGBU Egypt Regional Committee Chair, stamped 6 September 1937; idem, Binder 167, untitled, includes sections on Yoghunoluk, Bitias, Nor Zeitun, Kirik Khan, Soghukoluk, Abdal Hiuyiuk, and Soghuksu, as well as interspersed information on Zeituniye, etc., Y. Yaghubian and P, Geokjian, Accounts of 1935-1936 2nd Trimester of Zeituniye National Coeducational School, 21 May 1936 (income, in Syrian piasters: tuitions, 370, raffle tickets, 365, AGBU, 1.140, total, 1.875; expenses: teacher's salary for January, February, and March 1936, 625 per month, total, 1,875); idem, Y. Yaghubian and H. Ashkarian, Accounts of 1936-1937 1st Trimester of Zeituniye National Coeducational School, 10 January 1937 (income: tuitions 578, donations 350, AGBU 1,572, total, 2,500; expenses: teacher's salary for October, November, and December 1936, 700 per month, and

miscellaneous 400, total 2,500); idem, Y. Yaghubian, A. Penenian, H. Geokjian, Accounts of 1936-1937 2nd Trimester of Zeituniye National Coeducational School, 8 April 1937 (income: tuitions 400, AGBU, 2,100, total 2,500; expenses: teacher's salary for January, February, and March 1937, 700 per month, school rent 400, total 2,500); idem, M. Ashkarian and H. Geokjian, Accounts of 1936-1937 3rd Trimester of Zeituniye National School, 29 August 1937 (income: tuitions 600, AGBU 1,900, total 2,500; expenses: teacher's salary for April, May, and June 1937, 700 per month, expenses 400, total 2,500); idem, Y. Yaghubian, M. Ashkarian, and H. Geokjian, Accounts of (1937-1938?) 1st Trimester of Zeituniye (Svedia) Armenian School, no date, (income: tuitions 1,250, AGBU 2,196, total 3,446; expenses: teacher's salary total 3,196, miscellaneous 250, total 3,446).

[18] Hajian, pp. 84-86.

[19] AGBU Cairo, Binder 167, Yesayi Yaghubian, chairman, Arakel Penenian, secretary, and Hovhannes Geokjian, treasurer of the Zeituniye school Board, Accounts of 1936-1937 2nd Trimester of Zeituniye National Coeducational School, 8 April 1937.

[20] Hajian, pp. 83-90.

[21] AGBU Cairo, Binder 134, "Zeituniye" section, ten Zeituniye School parents to AGBU Egypt Regional Committee Chair, 12 July 1936. The parents were: Isgender Hergelian, Peniamin Geokjian, Antranig Geokjian, Hovhannes/Vanes Geokjian, Yesayi Yaghubian, Khacher Vanaian, Mihran Ashkarian, Yesayi Kabakian, Andon Andonian, and Panos Shannakian.

[22] Hajian, p. 89.

[23] AGBU Cairo, Binder 181, *Grt. Desuch yev Grt. Hantznakhump Surio yev Lipanani 1 Mard 1937 en 31 Hulis 938* [Education Superintendent and Education Committee of Syria and Lebanon from 1 March 1937 to 31 July 1938], Mikael Natanian to AGBU Egypt Regional Committee Chair, 8 July 1938; idem, copy of letter with two illegible signatures on behalf of the AGBU Egypt Regional Committee to Mikael Natanian, 15 July 1938.

[24] Hajian, p. 89.

[25] For the number of students, see AGBU Cairo, Binder 178, untitled, includes AGBU Cairo Executive Council documents for the period 22 June 1932-31 August 1934, M. Natanian to AGBU Egypt Regional Committee Chair, 9 December 1933; idem, Binder 181, M. Natanian to AGBU Egypt Regional Committee Chair, 8 July, 1938. For the Christmas program, see, Binder 134, "Zeituniye" section, Vagharsh B. Oflazian to AGBU *Monthly Report* Editor, 11 February 1938.

[26] Ibid., Binder 134, "Zeituniye" section, Yesayi Yaghubian to AGBU Egypt Regional Committee Chair, 2 March 1937; idem, copy of letter from the AGBU Egypt Regional Committee Chair to Y. Yaghubian, 10 March 1937, 11 March 1938; idem, copy of letter from Y. Yazejian and Janig Chaker on behalf of the AGBU Egypt Regional Committee to AGBU Zeituniye Chapter Chair, 29 March 1938; idem, copy of letter from B. Giragosian and illegible name on behalf of AGBU Egypt Regional Committee to AGBU Zeituniye Chapter Chair, 26 August 1938; idem, V. Oflazian and Y. Yaghubian to AGBU Egypt Regional Committee Chair, 5 March 1939, 8 March 1939, 12 March 1939, 15 March 1939, 7 May 1939; idem, copy of letter from illegible signatures on behalf of AGBU Egypt Regional Committee to AGBU Zeituniye Chapter Chair, 15 March 1939, 20 March 1939, 17 May 1939; idem, copy of letter from illegible signatures on behalf of AGBU Egypt Regional Committee to AGBU Beirut Chapter Chair, 29 March 1939; idem, Binder 181, M. Natanian to AGBU Egypt Regional Committee Chair, 18 March 1937.

[27] Ibid., Binder 134, "Vakef" section, Report on the Formation of AGBU Chapters, 1 May 1924, attachment "Vakef" Section, 1st Membership Roster of Vakef Chapter, 15 July

1924. The members from Levshiye were: Dr. and Mrs. Mihran and Yevkine Varbedian, Mr. and Mrs. Kegham and Araksi? Anbarjian, Khosrov Arabian, and Aram D. Torosian, all of whom were not natives to Musa Dagh. For the AGBU Vakef Chapter, see also AGBU, *Vosgemadean Haygagan Parekordzagan Enthanur Miutean – Ardzatea Hopelean – 1906-1931* [Golden Book of the Armenian General Benevolent Union – Silver Jubilee – 1906-1931] (Paris: Masis, 1935), p. 164.

[28] AGBU Cairo, Binder 178, M. Natanian to AGBU Egypt Regional Committee Chair, 26 September 1933, 9 December 1933.

[29] Ibid, Binder 134, "Zeituniye" section, Yesayi Yaghubian to AGBU Egypt Regional Committee Chair, 7 October 1936.

[30] Ibid., Membership Roster of AGBU Zeituniye Chapter, 27 September 1936. The original nineteen members were, as listed: Boghos Oflazian, miller; Karun Oflazian, housewife; Yester Oflazian, student; Vagharsh Oflazian, student; Vartuhi Nakulian, teacher; Apraham Nakulian, student; Sahag Nakulian, student; Mihran Ashkarian, farmer; Yesayi Yaghubian, farmer; Nubar Yaghubian, student; Peniamin Geokjian, farmer; Antranig Geokjian, farmer; Hovhannes Geokjian, farmer; Panos Shannakian, farmer; Khacher Silahlian, farmer; Arakel Penenian, farmer; Movses Kerteshian, farmer; Boghos Kiurdian, farmer; and Yesayi Kabakian, farmer.

[31] Ibid.

[32] Ibid., Y. Yaghubian, H. Geokjian, and illegible to AGBU Egypt Regional Committee Chair, 10 April 1938; idem, copy of letter from three illegible signatures on behalf of the AGBU Egypt Regional Committee to AGBU Zeituniye Chapter Chair, 16 April 1938.

[33] Ibid., Y. Yaghubian, A. Penenian, H. Geokjian to AGBU Egypt Regional Committee Chair, 7 January 1938; idem, copy of letter from illegible signature on behalf of the AGBU Egypt Regional Committee to AGBU Zeituniye Chapter Chair, 12 January 1938, 27 June 1939; idem, Y. Yaghubian and V. Oflazian to AGBU Egypt Regional Committee Chair, 16 June 1939; idem, Binder 181, M. Natanian to AGBU Egypt Regional Committee Chair, 16 January 1938; idem, Janig Chaker and illegible signature on behalf of the AGBU Egypt Regional Committee to M. Natanian, 19 January 1938.

[34] Ibid., Binder 134, "Zeituniye" section, copy of letter with no signature on behalf of the AGBU Egypt Regional Committee to AGBU Zeituniye Chapter Chair, 24 December 1936, 18 February 1937, 10 March 1937; idem, Y. Yaghubian and Arakel Penenian to AGBU Egypt Regional Committee Chair, 2 March 1937; idem, Vagharsh B. Oflazian to AGBU *Monthly Report* Editor, 11 February 1938.

[35] Raymond H. Kévorkian and Vahé Tachjian, eds., *The Armenian General Benevolent Union: One Hundred Years of History*, vol. I, *1906-1940*, translated from French by G.M. Goshgarian (Cairo, Paris, New York: AGBU Central Board of Directors, 2006), pp. 262-263. See also, AGBU Cairo, Binder 181, copy of letter with no signature on behalf of AGBU Egypt Regional Committee to M. Natanian, 30 July 1937.

[36] Armenian Catholicosate of Cilicia (ACC) Archives, Antelias, Lebanon, File 22/1, *Jebel Musa-Svedia 1920-1940*, Vagharsh B. Oflazian to Archbishop Bedros Sarajian, 15 November 1937, 27 September 1938.

[37] AGBU Cairo, Binder 134, "Zeituniye" section, Vagharsh B. Oflazian and Yesayi Yaghubian to AGBU Egypt Regional Committee Chair, 5 March 1939, and 15 March 1939.

[38] Ibid., copy of letter with illegible signature on behalf of AGBU Egypt Regional Committee to AGBU Zeituniye Chapter Chair, 15 March 1939.

[39] Ibid, Vagharsh B. Oflazian and Yesayi Yaghubian to AGBU Egypt Regional Committee Chair, 29 March 1939. See also idem, V. Oflazian to AGBU Egypt Regional Committee Chair, 30 March 1939.

[40] Ibid., copy of letter with illegible signature on behalf of the AGBU Egypt Regional Committee to AGBU Zeituniye Chapter Chair, 1 April 1939. See also idem, 7 April 1939; idem, letter to V. Oflazian, 13 April 1939.

[41] The history of that exodus has not yet been written in a substantiated manner.

[42] ACC, File 22/1, Vagharsh B. Oflazian to Archbishop Bedros Sarajian, 29 July 1937.

[43] S.S. Manoogian, "A Week in Antioch," *The Friend of Armenia*, n.s., III: 106 (1928): 15; Jacques Weulersse, "Antioche. Essai de géographie urbaine," *Bulletin d'Études Orientales* IV (1934): 27; Pierre Bazantay, *Enquête sur l'artisanat à Antioche* (Beirut: Imprimerie Catholique, 1936), p. 4. There is not a definitive figure pertaining to the pre-WWI Armenian population in Antioch. The counts given for the period following the 1909 masscres fall within the same range as the post-WWI period. It must be noted, however, that those who settled in Antioch after the Genocide were not all necessarily native residents; survivors from other areas of the Ottoman Empire similarly lived in Antioch during the 1920s and 1930s.

[44] Weulersse, p. 50.

[45] Paul Jacquot, *Antioche. Centre de tourisme* (Beirut: Imprimerie Catholique, 1931), vol. II, pp. 208-09.

[46] Bazantay, pp. 8-10. See also G. Besnard, "Antioche," *L'Asie Française* no. 299 (April, 1932): 130-31.

[47] For Armenian community affairs in Antioch, consult ACC, File 23/1, *Andiok 1914-1940* [Antioch 1914-1940]; AGBU Cairo, Binder 195, "Antioch" section.

[48] Interview with Asdghig Urfalian Chaparian, 12 July 2009, Anjar, Lebanon.

[49] Bedros Torosian, *Husher* [Memoirs] (Glendale, California: Abril, 2009), p. 35.

[50] Harutiun Sherbetjian, untitled list of Kheder Beg inhabitants with their nicknames and occupations, prepared for the author, North Hollywood, California; Serop Sherbetjian, "Kheder Beg," unpublished genealogical survey, 1974, North Hollywood, California, pp. 7-8, 20, 28.

[51] The murder of Chaparian (and others) was the result of animosity between inhabitants from Haji Habibli and Bitias, with no political/party origins, although this limited conflict could have degenerated into a widescale ARF-Hnchakian clash engulfing Musa Dagh as a whole, which fortunately did not occur.

[52] Telephone interview with Alberta Magzanian, 8 October 2009, Granada Hills, California-Olney, Maryland.

[53] Interview with Helen Sherbetjian Makhian, 3 April 2009, Pasadena, California.

[54] Some of the Musa Dagh students attending schools in Antioch were: At the French state *Lycée*, Hagop Keshishian of Kabusiye, Hagop Chaparian of Yoghunoluk, and Nazareth Bidanian of Yoghunoluk; at the St. Pierre Capuchin school, Harutiun/Artin Sherbetjian of Kheder Beg. Movses Keshishian, private papers, Los Angeles, California, picture of Hagop Keshishian as a student in Antioch, 13 May 1927; telephone interview with Nazareth Bidanian, 10 February 2010, Granada Hills, California-Fresno, California; Harutiun/Artin Sherbetjian, private papers, North Hollywood, California, picture of him as a student in Antioch, 1930s. Among Musa Dagh soldiers in the French army, Hapet Aprahamian ("Sallanints") of Kheder Beg served as the secretary of the French colonel at Antioch. Telephone interview with Bidanian. To be sure, there were other soldiers from Musa Dagh, but information is lacking about their post(s) of service.

[55] Armenian Prelacy of Aleppo (APA) Archives, Aleppo, Syria, Section III, File 3, *1939 Hulis 10en Arach Haleb Hasdadvadz Sanjaktsi Hay Kaghtaganneru Anvanatsange* [The Roster of Armenian Refugees from the Sanjak Established in Aleppo before 10 July 1939], information on Arakel Der Arakelian.

[56] Ibid., Roster of Armenian Refugees Who Came from the Sanjak to Aleppo during the Period from 1 July 1938-10 July 1939, dated 29 August 1939, entry no. 207.
[57] Interview with Victoria Giuzelian, 23 February 2009, Glendale, California.
[58] Hovhannes Amoghlian, letter to the author, received 29 October 2008.
[59] Interview with Moves Sherbetjian, 6 January 2002, Thousand Oaks, California.
[60] Apraham Kasamanian, taped autobiography, cassette no. 6, Glendale, California. See also Urfalian, *Geanki*, p. 70.
[61] Urfalian, *Geanki*, p. 87.
[62] Sherbetjian, untitled list.
[63] League of Nations (LN) Archives, United Nations Library, Geneva, Switzerland, Sanjak d'Alexandrette, Commission de la S.D.N., C 1058, no. 3/37, File *Djebel Moussa 2* [Musa Dagh 2], Liste de tout les électeurs du Yoghoun Olouk inscrit dans les listes électorales revisées au debut de 1937 qui ont perdu le benefice de leurs droits civiques.
[64] Nazareth Emlikian, private papers, Huntingdon Valley, Pennsylvania, Sarkis Boyajian, letter to brother-in-law Kapriel Emlikian, 18 January 1929.
[65] Vahram L. Shemmassian, private papers, address on envelope (letter missing) sent from the United States to Jabra al-Mshati (Kapriel Shemmassian) in Hama, Syria in 1925.
[66] LN, C 1058, no. 3/37, File *Djebel Moussa* 2, Liste de tout les électeurs du Yoghoun Olouk.
[67] Bllutian, untitled list.
[68] LN, C 1058, no. 3/37, File *Djebel Moussa 2*, Liste de tout les électeurs du Yoghoun Olouk/Khidr Bek/Haji Habablie.
[69] Interview with Sirvart Tashjian-Hajian, 3 January 2009, Pasadena, California.
[70] Setrag Haygazian, "Setrag Haygaziani Husherits," [From the Memoirs of Setrag Haygazian], unpublished MS, Musa Ler Monument-Museum, Musa Ler Town, Armenia, Notebook I, n.p.
[71] Serop Sherbetjian, "Yoghun Oluk," unpublished genealogical survey, 1974, North Hollywood, California, p. 37. Boghos Dmlakian had four sons: Shafik, Karim, Abd al-Masih, and Hovhannes. For Shafik and Karim, see section on Egypt in this study. Hovhannes died at a young age.
[72] For the partly-assimilated Armenians in Aleppo, consult Varti Keshishian, *Halebi Haygagan Kaghtojakhi Hasaragagan-Mshagutayin Gazmagerbutiunnere(1846-1915)* [The Social-Cultural Organizations of the Armenian Colony of Aleppo (1846-1915)], Catholicosate of the Great House of Cilicia Press, Antelias, Lebanon 2001, pp. 24-25, 36.
[73] Alberta Magzanian, letter to the author, received 6 April 2009.
[74] Ibid.
[75] APA, Section III, File 1, *Sanjaki Kaghtaganats Esdatsvadz Namagner 1939-1940* [Incoming Correspondence from Sanjak Refugees 1939-1940], Hovhannes Vanaian, Movses K. Keshishian, and Tovmas Abdenurian to Aleppo Prelate Archbishop Ardavazt Surmeian, 14 August 1939.
[76] Ibid., File 2, *Anvanatsang yev Adenakrutiun [Sanjaki Kaghtaganats]1939-1940* [Roster and Minutes of Meetings (Pertaining to Sanjak Refugees) 1939-1940], The Roster of Armenian Nationals Who Migrated to Aleppo before the Annexation of the Sanjak to Turkey.
[77] Ibid., files 1 and 2, The Roster of Musa Dagh Armenian Refugees Who Came to Aleppo after 17 July 1939.
[78] For the temporary stay of Musa Dagh refugees at Ras al-Basit, consult M. Kushakjian, "Musa Lertsik Ainjari Mech" [Musa Daghians in Anjar], in *Hushamadean*, pp. 497-500; Torosian, *Husher*, pp. 46-61.

[79] APA, Section III, File 1, Vanaian, Keshishian, and Abdenurian to Archbishop Surmeian, 14 August 1939; idem, File 2, Ardavazt Archbishop Surmeian to Bedros Archbishop Sarajian, Vicar General of the Catholicosate of Cilicia and President of the Armenian National Union in Lebanon, 29 August 1939.

[80] Ibid., File 2, Archbishop Ardavazt Surmeian to the Central Committee for the Settlement of Musa Dagh Refugees in Anjar, 15 September 1939.

[81] Ibid., Archbishop Ardavazt Surmeian in a letter to Mardiros Kushakjian, 23 September 1939, maintains that twenty-eight families totaling ninety persons were ready to be entrained. But refugees waiting to be transported to Anjar stated that, although twenty families had received permission to go, only seventeen had shown up at the train station. See idem, File 1, Maritsa Stambulian, Mari Keosheian, and Mari Karageuzian to Archbishop Ardavazt Surmeian, 28 September 1939. For the list of Musa Daghians who actually left, see idem, File 5, *Artzanakrutiun. Sanjaki Kaghtaganats Khnamadarutiun. Comité d'Assistance aux Réfugiés ALEP, 1939-1940* [Record. Caretaking Agency for Sanjak Refugees. Refugees Assistance Committee Aleppo, 1939-1940], Roster of Sanjak Refugees Sent to Homs-Anjar via Rayaq and to Beirut by a Special Train at 2:30 p.m. on 26 September 1939.

[82] Rosine Shemmassian Koundakjian, letter to the author, received 29 November 1996; interview with Rosine Shemmassian Koundakjian, 30 January 2010, Fresno, California.

[83] Gaidzag Zeitlian, email to the author, 15 May 2009.

[84] Interview with Varujan Mardirian, 10 July 2009, Anjar, Lebanon.

[85] Bllutian, untitled list.

[86] Torosian, pp. 25, 35.

[87] For the orphans from Yoghunoluk, see ibid., pp. 19-36; for the boy from Bitias, telephone interview with Haig Antranig Kendirjian, 3 February 2010, Granada Hills, California-Beirut, Lebanon.

[88] Alberta Magzanian, letter to the author, 6 September 2009.

[89] Manuel Giuzelyan, written statement titled "Krikor Keghunu Dndesagan Hasaragagan Kordzuneutyune" [The Economic Public Activity of Krikor Keghuni], prepared for the author, Van Nuys, California.

[90] AGBU Cairo, Binder 180, *Grt. Desuch yev Grt. Hantznakhump Surio yev Lipanani 22 Okosd. 1935en 26 Pedr. 1937* [Education Superintendent and Education Committee of Syria and Lebanon from 22 August 1935 until 26 February 1937], Giragos Giragosian and Movses Melidonian to AGBU Egypt Regional Committee Chair, 24 May 1936.

[91] Interview with Mikael Mikaelian, 2 April 2009, Hollywood, California.

[92] Ibid.

[93] France, Archives du Ministère des Affaires Étrangères, Nantes, Mandat Syrie-Liban, Beyrouth: Cabinet Politique 1926-1941, carton 513, Le Délégué-Adjoint du Haut-Commissaire pour le mohafazat de Lattaquié à Monsieur l'Ambassadeur de France Haut-Commissaire de la République en Syrie at au Liban, 15 June 1938, attachment titled "Declaration" and signed by Avedis Magarian, (no first name) Ignatossian, and Garabed Kirikian, 14 June 1938.

[94] Telephone interview with Zakar Garabedian, 25 October 2009, Granada Hills, California-Corona, California.

[95] Interview with Mikaelian.

[96] Mikael Mikaelian, private papers, André Métailler, *Certificat* to Mikael Mikaelian, 14 July 1947, Hôtel Saint Georges, Beirut.

[97] "Jebel Musayi Hayrenagtsagan Miutiun 1931-1970" [Compatriotic Union of Musa Dagh 1931-1970], in *Hushamadean*, pp. 843-44.

[98] For the various locations of the fights, see Vahram L. Shemmassian, "The Armenian Villagers of Musa Dagh: A Historical-Ethnographic Study, 1840-1915," Ph.D. dissertation, University of California, Los Angeles, 1996, pp. 201-10.
[99] *Ararad* (Beirut), 18 January 1939.
[100] Ibid., 21 September 1938.
[101] *Joghovurti Tzayn* [People's Voice] (Beirut), 16 October 1938, 23 October 1938.
[102] "Jebel Musayi," in *Hushamadean*, pp. 844-45. For Hapet Iskenderian's literary and public life, see Hapet M. Isgenderian, *Kertvadzner yev Artzag Echer* [Poems and Prose Pages] (Beirut: G. Donigian, 1959); Manuel Beylerian, "Hapet M. Isgenderiani Geankn u Kordzuneutiune" [Hapet M. Isgenderian's Life and Activity], in *Trvakner Svedio Antsealen (1893-95 Heghapokhagan Shrchanen)* [Episodes from Svedia's Past (From the 1893-95 Revolutionary Period)], *Ararad* Newspaper Book Series no. 22 (Beirut: Ararad, 1957), pp. 275-307.
[103] *Ararad*, 29 July 1938.
[104] France, Mandat Syrie-Liban, carton 513, Magarian, Ignatossian, and Kirikian, "Declaration," 14 June 1938.
[105] Telephone interview with Aurora Adajian Lehman, 20 January 2010, Granada Hills, California-Chatsworth, California; Shemmassian, "The Armenian Villagers," p. 57.
[106] For the rescue operations, see Georges Kévorkian, *La flotte française au secours des Arméniens en 1909 et* 1915 (Rennes, France: Marines Éditions, 2008), pp. 71-89; Shemmassian, "The Armenian Villagers," 210-223. For the Port Said refugee camp, see M. Salpi, ed., *Aleagner yev Khleagner: Hay Vranakaghakin Darekirke* [Little Waves and Wrecks: The Yearbook of the Armenian Tent City] (Alexandria, Egypt: A. Kasabian, 1919).
[107] *Arev* [Sun] (Alexandria, Egypt), 6 December 1915, 28 January 1916, 4 February 1916, 18 February 1916; *Hayrenik* [Fatherland] (Boston), 18 February 1916, 27 January 1917.
[108] Sherbetjian, "Yoghun Oluk , pp. 13, 54; idem, "Kabusiye," p. 19; idem, "Kheder Beg," p. 25.
[109] Aghavni/Vani Keshishian-Tashjian, email to the author, 4 April 2009.
[110] Alice Bursalian-Markarian, email to the author, 7 February 2009.
[111] Ibid.; Telephone interviews with Marie Hadjian-Chitdjian, 6 February 2009, 4 March 2009, Granada Hills, California-North Haven, Connecticut.
[112] Nairi Dmlakian-Souvalian, email to the author, 9 March 2009.
[113] Keshishian-Tashjian, email.
[114] Bursalian-Markarian, email.
[115] Telephone interviews with Hadjian-Chitdjian.
[116] Keshishian-Tashjian, email.
[117] Berjouhie Oflazian-Devejian, email to the author, 20 April 2009.
[118] Bursalian-Markarian, email.
[119] Ibid.
[120] See *Husaper* and *Arev* [Sun] (Alexandria/Cairo), 1920s-1930s issues.
[121] Consult the AGBU Archives in New York, File 14 D, and in Cairo, binders 134, 167, and 195.
[122] Armenian Prelacy of Cairo Archives, Binder 2,031, *Surio Hay Kaghut* [Armenian Community of Syria], miscellaneous letters.
[123] Vahram L. Shemmassian, "Armenian Musa Dagh as a Summer Resort in the Sanjak of Alexandretta during the 1920s-1930s," *Haigazian Armenological Review*, Vol. 28, 2008, pp. 209, 214.
[124] Telephone interviews with Hadjian-Chitdjian.
[125] Dmlakian-Souvalian, email.

ՄՈՒՍԱ ԼԵՌՑԻ ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱՑԻՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ՝ 1920-30ԱԿԱՆՆԵՐՈՒՆ

(Ամփոփում)

ՎԱՀՐԱՄ ՇԵՄՄԱՍՍԵԱՆ
shemmassian@yahoo.com

Հեղինակը հիմնուելով բանաւոր տուեալներու վրայ կը գծէ մուսալեռցի պանդուխտներու աշխարհագրական քարտէսն ու կը վերականգնէ անոնց ընկերային-տնտեսական վիճակը Միջին Արեւելքի մէջ։ Շեմմասեան կը բացայայտէ այն պարագաները ու պայմանները որոնք պանդխտութիւն պարտադրեր էին մուսալեռցիներուն։

Յօդուածը կարելի մանրամասնութեամբ կը ներկայացնէ 1920-30ականներուն մուսալեռցի պանդուխտներու հաստատուած վայրերը՝ Ալեքսանտրէթի Սանճաքէն ու Սուրիոյ միւս քաղաքներէն մինչեւ Պէյրութ եւ Եգիպտոս։ Միաժամանակ ան կը նկարագրէ անոնց աշխատանքային վիճակը։ Հեղինակը կը ներկայացնէ նաեւ պանդուխտներուն ընկերային կեանքը՝ նոր միջավայրին մէջ եւ թէ ինչ բնոյթի կապերով անոնք կապուած կը մնային իրենց պապենական բնակավայր՝ Մուսա Լեռան։ Յօդուածը կը խօսի նաեւ նոր միջավայրին մէջ պանդուխտ մուսալեռցիներու ազգային-հայրենակցական գործունէութեան, ինչպէս նաեւ տեղի հայ համայնքին հետ անոնց հաստատած շփումներուն մասին։

Ընդհանուր այս հենքին վրայ, յօդուածագիրը առանձին հատուածներով կը ներկայացնէ նաեւ այս պանդուխտներուն համարկումը նոր միջավայրին, անոնցմէ ոմանց տնտեսական ձեռնհասութիւնը եւ տեղաշարժերը։ Տեղաշարժերու այս ընթացքին մէջ, հեղինակը կ՝անդրադառնայ նաեւ մուսալեռցիներու Այնճար հաստատումին, անոնց մէկ մասին ներգաղթին եւ արտագաղթին, ինչպէս նաեւ այնճարցիներու մէկ մասի ցրուումին՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն։

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ. ՋԱՐԵՀ ԽՐԱԽՈՒՆԻՆ՝ ՇԱՐԺՄԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

(Խորհրդանիշների Նորագոյն Համակարգի կէսդարեայ Հանգրուանին)

ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
spyurksd@netsys.am

1915ի *Մեծ Եղեռնը կասեցրեց արեւմտահայ գրի մշակների քաղաքամայր Իսթանպուլում* «...գրեթէ առասպելական դիմագծութիւն»[1] *պարզած արեւմտահայ գրականութեան ընթացքը։* 1915-1923՝ *հայաչատ քաղաքը նկատելիօրէն կորցրեց իր հայ բնակիչներին։*

Չինադադարից յետոյ՝ 1918-1922*ին, արեւմտահայ գրական կեանքը կարծես նորից կենդանութեան նշաններ ցոյց տուեց. փախուստից ու աքսորից վերադարձան Կոստան Զարեանը* (1885-1969), *Վահան Թէքէեանը* (1878-1945), *Շահան Պէրպէրեանը* (1891-1956), *Յակոբ Օշականը* (1883-1948), *Երուանդ Օտեանը* (1869-1926), *չատ կարճ շրջան հրատարակուեց Բարձրավանքը*[2], *լոյս տեսան վերապրող գրողների գործերը, օրինակ՝ Օշականի Խոնարհներ* (1921), *Խորհուրդներու Մեհեանը* (1922) *պատմուածքների ժողովածուները։ Հրապարակ իջաւ դարասկզբի արեւմտահայ խոշորագոյն բանաստեղծ Դանիէլ Վարուժանի* (1884-1915) *Հացին Երգը յետմահու ժողովածուն* (1921), *սակայն գրական նոր շրջադարձեր այլեւս չարձանագրուեցին։*

1923*ին քեմալական չարժման հետեւանքով այս անգամ ընդերկար լուեց Պոլսոյ գրական ձայնը։ Ճիշդ է, Մատթէոս Զարիֆեանը* (1894-1924) *հրատարակեց իր Տրտմութեան եւ Խաղաղութեան Երգեր* (1921), *մէկ տարի անց՝ Կեանքի Ու Մահուան Երգեր քերթողագրքերը, սակայն նա, ըստ էութեան, բանաստեղծական նոր բարձունքներ չնուաճեց. պարզապէս լաւագոյն միջնորդ օղակ դարձաւ նախաեղեռնեան եւ* 1922*ից յետոյ հրապարակ իջած գրական սերունդների համար։*

Այս շրջանում որոշ գրողներ եւ մտաւորականներ փորձեցին չունչ հաղորդել գրական ոստանին, սակայն Իսթանպուլը չուրջ քառորդ դար (1923-1940*ականներ*) «ոչ եւս է իրրեւ Հայ մշակութային կեդրոն, այլ խոպան մը՝ ուր տեղ տեղ կանանչութիւններ կ'ընձիւղին հին սերմերէ, վատոյժ եւ անգոյն»[3], *ինչպէս նշել է արձակագիր Վարդան Կոմիկեանը* (1915-1998)։ *Վերջինս յայտնի է արձակ երկու ժողովածուներով՝ Բարի եկար, Մ'ր...* (1958) *եւ Համրիչի Հատիկներ* (1993)։

Գրամշակութային հորիզոնում երեւացող այս «կանանչութիւնները»ը՝ Յակոբ Մնձուրի (Տեմիրճեան, 1886-1978), Գուրգէն Թրենց (Թուրսարգիսեան, 1888-1972), Մկրտիչ Հաճեան (1915-1985), խոշորագոյն լեզուաբան եւ թուրքական հանրագիտարանի գլխաւոր խմբագիր Յակոբ Մարթայեան (1895-1979), Բագարատ Թեւեան (1893-1967), Եդուարդ Սիմքէշեան (1906-1979), Արեգ Տիրազան (Օննիկ Պասմաճեան, 1902-1987) մնում էին հին աւանդների ծիրում, իսկ նոր աշխարհի պայմաններում այս գրական «բեռ»ով դժուար էր քննութիւն բռնել: Այս շրջանում գրեթէ «աննկատ» Մնձուրին դեռ լիաձայն չէր հնչում:

Գրական ամլութեան պատճառներից մէկը Թուրքիայում ազգային փոքրամասնութիւնների հանդէպ աւանդոյթ դարձած հալածական քաղաքականութիւնն էր՝ ծանօթ հին ձեռագրով:

Այս մասին ահա թէ ինչ է գրում Եղիշէ Չարենցը (Սողոմոնեան, 1897-1937) 1925 Յունուարին Ալեքսանդր Միասնիկեանին (1886-1925) Խաթթանպուլից յղած նամակում. «...Եւ զարմանալի չէ, որ այսպիսի մի մթնոլորտում հայ գաղութը կորցրել է հասարակական կազմակերպութիւն լինելու ամենատարրական ատրիբուտներն անգամ. ո՛չ ժողով, ո՛չ դասախօսութիւն, կուսակցական կազմակերպութիւններ ունենալու մասին աւելորդ է խօսել... Ես այստեղ հանդիպեցի մի շարք 'մտաւորականների' հետ. խեղճ, ծեծուած, ստուերային գոյութիւններ են դրանք, որոնց աչքերում սարսափն ու քծնութիւնը պսպղում են ու հայցում, հայցում հայցում...»[4]:

Լոզանի Դաշնագրով (1923) Թուրքիան որոշ զիջումների գնաց եւ մշակութային փոքր արտօնութիւններ ապահովեց հայերի կեանքում: 1940ականների Բ. կէսին վերստեղծուեցին Էսայեան, կեդրոնական եւ Մխիթարեան վարժարանների սանուց միութիւնները, որոնք, իրենց շուրջը համախմբելով երիտասարդ ուժերի, կարեւոր նշանակութիւն ձեռք բերեցին արթնացող գրական կեանքի կազմակերպման գործում:

1959ին, Զարեհ Խրախունին (Արթօ Ճիւմպիւշեան, ծն. 1926) Վարդերես Գարակէօզեանի (ծն. 1938) Թօ հանդէսում լոյս ընծայած «Մայր Գիծը» յօդուածում առաջինը նկատեց գրական շարժմանը յատուկ ուրուագծեր եւ անմիջապէս տուեց բնորոշում՝ առարկաների եւ իրերի ներքին խորհրդանիշների խաղարկման պայմանական արուեստ՝ նոր խորհրդանշանների շաղախով (առարկայական խորհրդանշապաշտութիւն, symbolisme objectif), եւ յայտնաբերեց, որ շարժումը, ըստ էութեան, գալիս է Վարուժանից, Թէքէեանից, Զարիֆեանից եւ «ուղղակի կը կազմէ բարեշրջումի շղթային վերջին օղակը»[5]:

Պոլսահայ գրական նոր շարժումը հրապարակ իջաւ այն ժամանակ, երբ Սփիւռքում իրենց ամրագրել էին նրա ակունքներում կանգնած գրական զոյգ շարժումներ՝ Կարօտի գրականութիւնը, որի առաջնորդն էր Համաստեղը (Համբարձում Կելէնեան, 1895-1966), եւ սրան իրրեւ հա-

կադարձութիւն հանդէս եկած Նահանջի գրականութիւնը՝ Շահան Շահնուրի (Շահնուր Քերեսթէճեան, 1903-1974) գլխաւորութեամբ։

Երբ այսօր հայեացք ենք նետում Սփիւռքում գրական այս նոր շարժումի ընթացքներին, գիտակցում ենք, որ թէեւ ազգային բովանդակութեամբ ու «փիչ մը տարբեր» գեղարուեստական առաջադրութիւններով այն չէր տեղաւորւում նախորդ գեղագիտական կաղապարների մէջ, բայց լսելի ու ընկալելի էր Սփիւռքի տարբեր միջօրէականներում։

Գրական «նորեկների»ի հաւատամքը տարբեր էր նախորդների՝ բանաստեղծութեան արժէքը չափի ու յանգի պարտադրանքի մէջ տեսնելու մտայնութիւնից։ Հրաժարուելով քերթուածի կազմութեան աւանդական սկզբունքներից՝ Խրախունին, Զահրատը (Զարեհ Եալտըզճեան, 1924-2007) փորձում էին դուրս գալ «պերճաշուք», ցցուն բառերի հանդէսից եւ բանաստեղծութեան դաշտ բերել առօրեան «ղեցնող» մարդկանց, առանին փիլիսոփայութեան եզրերը՝ ոգեկոչելով, հիւսելով ազատութեան, կամքի՝ փոքր-ինչ անտես մեկնակէտերը՝ յաճախ նաեւ իւրացուած եւրոպական մտածողութեան աւազանից։

Այս գրական որակների ձեւաւորման մասին խօսելիս անհնար է չրջանցել երկու անուն՝ կարպիս Ճանճիկեան (1920-1946) եւ Հայկազուն Գալուստեան (1920-1985), որոնք էապէս ուղղորդեցին նոր սերնդի հայեացքը դէպի գորշ կեանքի գեղարուեստական վերացարկումները։ Նրանք դեռեւս 1942ին Թրքերէն լեզուով հրատարակեցին Պաչքրա գրքոյկը՝ միաժամանակ աշխատակցելով Թուրք գրող Օրհան Վելիի (1914-1950) գերիրապաշտ Շափրաք թերթին, որը, ինչպէս յայտնի է, առանձնանում է նորարարական կեցուածքով։ Նրանք Օքթայ Ռըֆաթի (1914-1988) եւ Մելիհ Ջեւդէթ Անդալի (1915-2002) հետ էապէս փոխեցին թուրք ժամանակակից բանաստեղծութեան դիմագիծը՝ չրջելով դէպի առօրէական ճշմարիտ յածումներ։

Ճանճիկեանի եւ Գալուստեանի գրական գործունէութիւնը չարժման չվերածուեց. առաջինը մահացաւ ընդամէնը 26 տարեկանում, նրա բանաստեղծութիւնների ժողովածուն՝ Օրէ Օր, լոյս տեսաւ յետմահու միայն՝ 1950ին, իսկ երկրորդը յետագային՝ 1965ին, փոխադրուեց Հայաստան եւ գրական դաշտում չերեւաց։

Նկատենք, որ նրանց յաջողուեց պոլսահայ նորագոյն բանաստեղծութեան մէջ «կայծ բռնկել». ինչպէս Մարմարա օրաթերթի խմբագրապետ Ռոպէր Հատտէճեանն (ծն. 1926) է ընդգծում՝ «...Ճանճիկեանով բան մը փոխուած էր իսթանպուլահայ գրականութեան, մա՛նաւանդ բանաստեղծութեան մէջ»[8]։

Առարկայական խորհրդանշապաշտութեան՝ իբրեւ գրական ուղղութեան էութիւնը բխում էր կամքի եւ ազատութեան խորհուրդներից, որոնց սկզբունքները դաւանում էր ֆրանսիացի մեծ իմաստասէր Անրի Բերգսոնը (1859-1941)։ Այդ սկզբունքները յետագայում վճիտացան

Խրախունու երգարուեստում: Հետաքրքիրն այն էր, որ չարժման համակիրները նիւթի բացայայտման ճանապարհին գեղարուեստական ճշմարտութիւնները փորձում էին երեւան հանել ամէնից «անբանաստեղծական» թուացող առարկաների ընտրութեամբ, ինչպէս ասենք Խրախունու մօտ «աղամանը», «ծխամորճը», «ափսէն», «աքլորը», «սաւառնակը» եւն.: Քերթուածի «անչքացման» արդիական «պահանջը» իւրովի էր ձեւակերպւում արեւելահայ իրականութեան մէջ. «Մայր Գ-ծ»ից մի տասնամեակ անց Պարոյր Սեւակը (1924-1971)՝ «Ինչ-ը, Ինչ-պէս-ը եւ Որպէս-ը» յօդուածում՝ (1970) առանց ծանօթ լինելու Խրախունու տեսաբանական գինանոցին պնդում է. «...Անկշիռ ու անարժէք բառերի կոյտն է, որ տարիներ շարունակ համարուել է բանաստեղծական, սպանելով ճիշտ ու ճշմարիտ բանաստեղծութիւնը եւ խցելով բանաստեղծութեան ընկալման ունկերն ու ակունքները: 'Անբանաստեղծական բանաստեղծութեան' իմ պահանջը, այսպիսով, այլ բան չէ, քան ճշմարիտ բանաստեղծութեան պաշտպանութիւն՝ ընդդէմ փուչ ու ճոճուան, գանգրահեր ու ուռուցիկ բառերի ոտանաւորչութեան»[7]:

Խրախունու պատկերային ենթակառոյցների առնչութեամբ՝ չեչտենք մի օրինաչափութիւն, որը ժամանակին նկատել է հայրենի գրականագէտ Սուրէն Դանիէլեանը (ծն. 1948). «Որքան 'առարկան' առտնին է, 'գէշ', այնքան զօրանում է գեղագէտի երեւակայութիւնը, այնքան մեծանում է գեղարուեստական յայտնութեան ակնկալութիւնը»[8]: Դա իսկապէս այդպէս է. ինչքան առարկան բանաստեղծութեան տողերի ներթաքոյց իմաստների յայտնաբերման ճանապարհին հեռանում է իր բուն նշանակութիւնից, այնքան քերթուածը շահում է գեղագիտական ընկալման, իմացական խորութեան առումով:

Պատմականութեան տեսակէտից հետաքրքիր է, որ այս նոր քերթողութիւնը միարժէք ծափահարութիւնների չարժանացաւ սփիւռքահայ շրջանակներում. հալէպահայ Թորոս Թորանեանի (ծն. 1928) դիպուկ հայեացքով՝ «...մշակուեցաւ գրականութիւն մը, քիչ մը դասական ձեւերէ հեռու, որուն խորք աչքով նայեցան դասականութեան պահակները»[9]: Բանաստեղծական այս եղանակի ընդդիմախօսներից ոմանք գտնում էին, որ այն անպայմանօրէն կապ ունէր թրքական գրականութեան մէջ ծաւալուող աւօրէական չարժման հետ, գտնւում էր նրա ազդեցութեան ոլորտում: Իրականում աւանդոյթի արմատը պէտք էր որոնել եւրոպական՝ յատկապէս ֆրանսիական գրականութեան ակունքներում, որ գալիս էր Պոլ Էլուարից (1895-1952), Անդրէ Բրետոնից (1896-1966), Լուի Արագոնից (1897-1982), իսկ թրքական շրջանակներում «հոսում էր» Օրհան Վելիի հունով: Հայ գրական միջավայրի վրայ ազդեցութիւնների առումով, թուրք գրականութիւնը, պարզապէս ակամայ միջնորդի դեր էր ստանձնում ելնելով միջավայրի հանգամանքից:

«Դժգոհութիւնների» առումով առաջինը թերեւս Յակոբ Մարթայեանն էր, որ ուղիղ կէս դար առաջ հենց այս դիրքերից առարկաների ու իրերի խոտութեան այլաբանական ենթախորքերի համակարգումը դիտեց իբրեւ «նորատարազ քերթողութիւն»[10]: «Միշտ յղկուած մարմարիոններու վրայէն»[11] *քայլող, քերթողութեան դասական ձեւերին փարած բանաստեղծուհի Սիրվարդ Կիւլպենկեան-Գուններաքճեանը* (1916-2003) *անվերապահ յայտարարեց, թէ* «նորութիւնները արուեստի մէջ միշտ գեղեցկութեան հայելին չեն»[12]:

Հրապարակախօս Վահրամ Բարունեանը ազգային արմատների պաշտպանութիւնը դարձրեց իր գերակայ խնդիրը, սակայն Ռոպէր Համտէճեանը, յետոյ նաեւ Զաւէն Պիպէռեանը (1921-1984) «կարողացան ապացուցել նորերի հայկական 'արմատը', գրական նոր հայեացքի, ճաշակի ինքնութեան իրաւունքը եւ ստիպել Գոչերի[13] 'ժամանակ' ընտանեկան թերթի էջերից նախատինքներ թափող հրապարակախօս Վ. Բարունեանին՝ փոխելու թունոտ, ծաղրական լեզուն»[14]:

Պոլսահայ մէկ այլ մտաւորական՝ Նուպար Ազարեանը (1913-1991) *այս գրականութիւնը օտարոտի համարեց ժողովրդի հոգուն ու գեղագիտական ճաշակին, հեռու արուեստի սահմաններից.* «Այս ձայնը չէ՛ երաժշտականացած, չէ՛ դաշնաւորուած, չունի՛ յօրինումի կատարելութիւն, արուեստի կարգապահութիւն: Այս ձայնը կը սնանի մերօրեայ գրական կարգ մը տեսութիւններով, որոնք՝ ձեւի ու խորքի տարբեր դատողութիւններով կը մերժեն գեղագիտական հին տարազները բոլոր...»[15]:

Հների եւ նորերի այս պայքարի սուր ծայրերը կոկելու, ինչ-որ չափով հաւասարակշռելու ուղղութեամբ կարեւոր դերակատարութիւն ունեցան Մարմարա օրաթերթի «Գրական էջեր»ը, որոնք իսթանպուլահայ գրողների ժամադրավայրը դարձան եւ ապահովեցին գրական տարբեր սերունդների «խաղաղ գոյակցութիւնը»: Թերթի հիւրընկալութեան չնորհիւ էր, «...որ Զահրատեան գերարդիաշունչ ստեղծագործութիւններու քով հանգիստ կը շնչէր Գուրգէն Թրենցի մը, Եդուարդ Սիմքէշեանի մը քերթողութիւնը: Հատտէճեանի արդիական պատմուածքներուն եւ արդի գրականութիւնը ծանօթացնող աշխատասիրութիւններուն քով Մնձուրի կ՛երգէր իր զմայլելի Արմտանը եւ գիւղագրութեան իր համբուրելի վաստակին անկորուստ գանձերը կը հրամցնէր մշտանորոգ խանդավառութեամբ մը»[16]: *Կարեւորն այստեղ ամբիոնի առկայութիւնն էր. ընկալումը չատ չէր ուշանայ:*

Խորհրդային իրականութեան մէջ, անհաշտ վերաբերմունքի արժանացան 60-70ականների իրենց առաջին քայլերն անող խորհրդահայ այն բանաստեղծները, որոնք դիտուեցին իբրեւ աւանգարդիստներ: Սուրէն Աղաբաբեանի (1922-1986) *նման գերզգայուն գրականագէտը «Բանաստեղծութեան ճակատագիրը» յօդուածում իր բնորոշմամբ՝ Գարուն*

ամսագրի շուրջը կենտրոնացած այդ խմբին (Յովհաննէս Գրիգորեան (ծն. 1945), Հենրիկ Էդոյեան (ծն. 1940), Արմէն Մարտիրոսեան (1943-2009) եւ ուրիշներ) սկսեց մեղադրել «ճաշակ»ից զուրկ լինելու մէջ, թէ իբր այդ «...սերունդը առ այսօր արել է գործի կէսը միայն՝ մոռացութեան է տուել մնացած ճաշակը, բայց չի ստեղծել իր երգը»[17]: Այս հենքի վրայ նա չի շրջանցում նաեւ պոլսահայ նորագոյն բանաստեղծներին՝ ընդհանրապէս համաշխարհային գրական նոր տեղաշարժերի շրջանակը համարելով «մոդայի» առժամեայ արտայայտութիւններ. «Բաւական է, որ Ֆրանսիայում յայտնուի մի Ժակ Պրեւէր[18], Ստամբուլում երեւայ մի Չահրատ կամ Խրախունի, Լատվիայում հռչակուի մի Վացիետիս[19],- անմիջապէս սկսում է ճեպընթաց ուխտագնացութիւնը «առ դուռն սրբոյ», եւ կարդացած առաջին բանաստեղծը դառնում է արուեստի վերջին գործողութիւնը»[20]:

Հայրենի գրականագէտ Ալեքսանդր Թոփչեանը (ծն. 1939) Բառի Մահմանները գրքում առանձին գլուխներ է նուիրել Չահրատին եւ Խրախունուն՝ հակադրուելով ժամանակի մէջ ժխտականին մօտեցող յայտնի մտայնութիւններին: Նա հանդէս է գալիս «նոր»երի պաշտպանութեամբ, նրանց իւրատեսակ կենսագիրն է, ընդգծում է ենթակայական զգայութիւններից հեռու գնահատումների անհրաժեշտութիւնը. «Այդ քննադատների (Ֆելիքս Մելոյեան, Գէորգ Հատիտեան եւ ուրիշներ - Ք.Ա.) ամենամեծ թերացումը գիտակցութեան բացակայութիւնն էր, իսկ այնտեղ, ուր պակասում է գիտակցութիւնը՝ ծայր է առնում «առասպելը», խորացումը նիւթի մէջ փոխարինւում է միֆակացացումով, բացատրութիւնը՝ գուշակումներով, իսկ աւելի յաճախ՝ չար եւ ծայր աստիճան աչառու գնահատումներով»[21]:

Փաստն այն է, սակայն, որ 1950ականներին եւ դրանից յետոյ իսթանպուլահայ գրականութիւնը «...այլեւս հասունցած, ազնուացած, յղկուած ու տաշուած, հաստատաքայլ եւ արագընթաց կը յառաջանայ գրականութեան կալուածին մէջ՝ արուեստի պատմուճան հագած»[22]: Երեւանում չուտով այդ ճանապարհով փորձեցին ընթանալ Թոփչեանի «խմբի» տղաները:

Ինչ վերաբերում է իսթանպուլահայ գրական չարժման բնութագրումին, ընդգծենք, որ այստեղ չարունակում է պատնէշի վրայ մնալ չարժման առաջնորդ Խրախունին: Նրա քերթողական արուեստի իմաստասիրական ակունքները, ինչպէս նշեցինք, պէտք է փնտռել Բերգսոնի յայտնատեսութեան համակարգում (l'intuition), որն իր տեսական որոնումներում առանձնացնում էր իմացութեան երկու տարբեր եղանակ՝ դատողական եւ ինտուիտիւ, այսինքն՝ ներքնատեսական (չատերը այն կոչում են նաեւ ներհայեցողական, ներատեսական): Մերժելով դատողական իմացութեան արդիւնաւէտութիւնը՝ նա հակւում է իրերի ու երեւոյթների ճանաչման նոր աղբիւրին՝ ներքնատեսութեանը (Խրա-

խունին նախընտրում էր գործածել «յայտնատեսութիւն» բառը), որը թոյլ է տալիս արուեստագէտին թափանցել իրերի ու երեւոյթների մակերեսից դէպի խորքը: «Ինտուիտիւ» ճանաչողութեան ամէնից բնորոշ օրինակը, ըստ Բերգսոնի, գեղարուեստական ստեղծագործութիւնն է:

Նմանօրինակ փիլիսոփայական մեկնակէտից է ելնում նաեւ պոլսահայ քերթողը բանաստեղծութեան սահմանները որոշելիս. «...Բանաստեղծութիւնը գերազանցապէս իմացական արուեստ մըն է, որ կը խօսի ուղղակի մտքին: Ի՞նչ ըսեր են Անտրէ Պրըտոն եւ Փոլ Էլիւառ. «Բանաստեղծութիւնը պէտք է իր մէջ այն չափով գաղափար պարունակէ, որքան խնձորը՝ սնունդ: Օր պիտի գայ, որ բանաստեղծութիւնը միայն գլուխով պիտի կարդացուի...»[23]: *Խրախունին աներեր համոզում ունի, որ այդ օրը հեռուում չէ:*

Բառի ընտրութիւնը կատարւում է մեծագոյն պատասխանատուութեամբ, նրա իմաստային ու բանաստեղծական արժէքին հետամուտ արուեստագէտի բծախնդրութեամբ, թէեւ խորհրդանշապաշտ բանաստեղծի համար նախընտրելի կամ արհամարհելի առարկաներ, հետեւաբար՝ նաեւ բառեր գոյութիւն չունեն: Ահա թէ ինչպէս է պատկերացնում բանաստեղծական յղացքի պահը Արթօ Ճիւմպիւշեան-տեսաբանը իր «Պար՝ Բառի Շուրջ» յօդուածում. «Իմաստային ծրագրի մը կամ նախակազմուած մտապատկերի մը վրայ,- որ ոսկերիչին հնարած մոտելն է կամ շինած կաղապարը,- յարմարագոյն բառերը գտնել, նպատակայարմար կերպով շարել զանոնք տողերու ձեւով, ու յետոյ զօդել զանոնք իրարու, ամրացնել, աւելորդ մասերը մաքրել, քանի մը պատշաճ ածականով փայլեցնել եւ իբր աւարտուն գործ՝ դնել հիւրընկալ թերթի մը լայնաբաց պատուհանին մէջ՝ ի վայելումն «այդ կողմերը» բնակող անցորդներու աչքերուն: Անտարակոյս՝ ա՛յն տեղուանքը չեղողներուն ոչինչ կ'ըսեն այս բոլորը. ապակեփեղկին առջեւէն կ'անցնին կ'երթան անտարբեր, էջը կը դարձնեն՝ փնտռելով ոտնագնդակի, ձիարշաւի կամ բամբասանքի բաժինը...»[24]:

Եւ իսկապէս, միայն գրականութեան «կողմերը» բնակուողներին է տրուած բանաստեղծին հասկանալու չնորհը. ընթերցողից՝ պատրաստուածութիւն, գիտելիքների որոշակի պաշար է պահանջւում նման քերթուածի ներքին ծալքերի ու աստիճի խորութեան մէջ թափանցել կարողանալու համար:

Խրախունու գրականութեանը հետամուտ ընթերցողի համար դժուար չէ նկատել, որ նրա ըմբռնումները ժամանակի ընթացքին գրեթէ փոփոխութիւններ չեն կրել: Նա ունի գեղագիտական յստակ առաջադրութիւն, որին հաւատարիմ է սկսած հեռաւոր 1964ին լոյս տեսած առաջին՝ Քար Կաթիլներ գրքից մինչեւ 2007ին լոյս տեսած Հարցարան ժողովածուն: Նա այն բանաստեղծներից չէ, որոնց հասունութիւնը չափում ենք այս կամ այն ժողովածուի մուտքով:

Խորհրդանշաններով տպաւորելու արուեստագէտի առաւելութիւնն աւելի առարկայօրէն պատկերացնելու համար բնագրական վերլուծութեան ենթարկենք դեռեւս 1963ին գրուած ծրագրային «Լեռն ի Վեր» քերթուածը։

Ընդհանրապէս, հայ ընթերցողին դժուար է գարմացնել Արարատի մասին գրուած ստեղծագործութիւններով։ Դրա արտայայտութիւնները այնքան շատ են, որ դրեթէ բացառելով մրցակցութեան հնարաւորութիւնը, միաժամանակ գայթակղութեան քար են դառնում բանաստեղծների համար, ինչի արդիւնքում երկի մէջ «անհրաժեշտ բոցը փոխարինւում է բենգալեան կրակներով»[25]։ *Իսկ եթէ Խրախունին յանդգնել է մօտենալ նիւթին, ուրեմն կայ նոր ասելիք, կայ գեղարուեստական ներգաղացողութիւն։*

Ճիւմպիւշեան-Խրախունին յետպատերազմեան շրջանի խոթանպուլահայ գրականութեան սկզբունքների մասին չարադրելիս չափաւոր մօտեցում էր պահանջում ազգային նիւթին. «Ջուսպ ու կշռուած ըլլալ ամէն նիւթի մէջ։ Ազգասիրութիւնը չլղրճել հնչեղ ու փայլուն խօսքերու կամ տողերու մէջ, մանաւանդ շահագործումի նիւթ չդարձնել նուիրականացած ազգային, կրօնական եւ պատմական ըմբռնումներն ու խորհրդանշանները»[26]։

Բանաստեղծութիւնը հայրենասիրութեան բերած ներքին տառապանքից ձգտում էր ազատագրուած տեսնել նաեւ Սեւակը՝ հայ բանաստեղծներին մեղադրելով, որ պարզապէս թերագնահատում էին ընթերցողի՝ մտաւոր բարձր զարգացածութիւն ունենալու հնարաւորութիւնը. «Այս «մեր»ի, «հայկական»ի անվերապահ գովերգումը այսօր էլ մեր բանաստեղծութեան խոցերից մէկն է. Մասիսներն ու Արագածը եթէ լեզու ունենային՝ վաղուց էին որոտացել. «Հանգի՛ստ թողէք մեզ»։ Հրազդանը, թերեւս, հենց այդ է անվերջ գոռգոռում»[27]։

«Լեռն ի Վեր» բանաստեղծութեան մէջ, ինչպէս Դանիէլեանն է նկատում՝ «չափի, միտումի սթափ եւ ներքաքոյց պատկերումը ապահովել է խօսքի սլացքը, ուր յաղթահարուած է մեզ քաջածանօթ ազգայնականութեան յաճախանքը», *Խրախունին չրջանցում է աւանդական մօտեցումները եւ ընկնում փիլիսոփայութեան, խոհի հզօր հոսանքի մէջ եւ* «ուղղակիօրէն շարունակում է թումանեանական աւանդոյթը»[28], *իրական մրցակցութեան գնալով միւս մեծերի՝ Յովհաննէս Թումանեանի* (1869-1923), *Աւետիք Իսահակեանի* (1975-1957), *Յովհաննէս Շիրազի* (1914-1984), *Սիլվա Կապուտիկեանի* (1919-2006) *հետ։*

Բանաստեղծութեան՝ առաջին հայեացքից «սովորական» բնոյթի վրայ է սեւեռում ընթերցողի ուշադրութիւնը գրականագէտ Գեղամ Սեւանը (1926-1991) *եւ միաժամանակ գգուշացնում այդ թուացեալ*

տպաւորութիւնից, «որ ուշիմ ընթերցողին յուշում է նրա անմիջական, թէկուզ թաքուն միտումը, առանց նոյնիսկ հասցէի ու անուան»[29]:

Առարկաների համուտ խաղարկումով մեր առջեւ պարզւում է սրբազան լեռան բնութագիրը՝ որպէս գոյատեւման, մաքառման, ազգայինի խորհրդանիշ: Թւում է, թէ ընդհանուր կերպով է ներկայացուած պատկերը. քերթուածը մնում է բնութեան եւ մարդու փոխյարաբերութիւնների ծիրի մէջ, ինչը թոյլ է տալիս բանաստեղծին ընկալելի լինել աշխարհի այլ ժողովուրդների համար եւս: Այս իմաստով բնութագրական է բանաստեղծուհի Հիլդա Գալֆայեան-Փանոսեանի (ծն. 1942) խօսքը. «Արդարեւ, քերթուածը իր այս ընդհանրական իմաստով կրնայ հաւասարապէս խօսիլ ոչ միայն Հայ ընթերցողին, այլ նաեւ՝ Ճափոնացի, Մեքսիկացի, Ափրիկեցի եւ այլ ընթերցողներու ալ, որոնցմէ ամէն մէկը վստահաբար պիտի մտածէ իր Ֆուժիեամային, իր Փոփոքաթէփէքլին, իր Քիլիմանճարոյին մասին, սակայն եւ պիտի լեցուի՝ նոյն բանաստեղծական ապրումներով»[30]:

Իրականում, թրքական միջավայրի առթած զգուշաւորութեան պայմաններում, սահելով դէպի խորհրդանիշների «փրկարար գիրկը» *եւ ապաւինելով* «անոնց բազմիմաստութեան»[31], *քերթողը բացայայտում է ոչ միայն լեռան իմաստը մարդու համար, այլ նաեւ լեռան հանդէպ մարդու կեցուածքը: Ոչ միայն լեռն է, որ վերլուծումի է ենթարկւում, այլ նաեւ լեռան տէրը՝ հայութիւնը: Այս առումով մի դիտարկում կատարենք. կարծես հակադիր ծայրաբեւեռներում են գտնւում անտարբեր մարդն ու իր քմահաճոյքներով մեր առջեւ կանգնող լեռը.*

Լեռը նախկին դշխոյ մըն է ծերացած
Հարուստ - տկար - առանձին
Հոգին կ՛ուզէ - մահիկն իբրեւ ծամակալ
ձիւնասպիտակ իր մազերուն կ՛անցընէ
Հոգին կ՛ուզէ - կ՛առնէ արեւն իբրեւ թագ
հերատ գլխուն կը դնէ ...

Ան կ՛ուզէ որ
Միշտ դարպասեն իրեն շուրջ

Մինչդեռ մենք
Կը յօրանջենք լեռն ի վեր[32]:

Դժգոհ դարաւոր համակերպումից, սովորական դարձած գրական լալկանութիւնից՝ լեռը անընդհատ կամքի, ուժի, վճռական քայլերի է սպասում, բայց մենք, դարպասելու փոխարէն, ձեռնածալ յօրանջում կամ անզօր հառաչանքներ ենք արձակում:

Լեռան խորհուրդը հեղինակը ի յայտ է բերում շատ անսպասելի, բայց հատու պատկերներով. այն մե՛րթ «անկեալ Աստուած մըն է», *որ*

«մարդոց գլխուն քար կը թափէ», *մե՛րթ ծերացած դչխոյ, որ երբեմն մահիկն է իբրեւ ծամակալ մազերին անցկացնում, երբեմն էլ արեւն է իբրեւ թագ գլխին առնում։ Մեր կարծիքով, մահիկը խորհրդանշում է Թուրքիայի առժամեայ գերիշխանութիւնը լեռան վրայ, իսկ արեւը՝ հայութեան յորդ սիրոյ եւ իրաւունքի վկայութիւնը։ Սա համակում է մեզ խորունկ ջերմութեամբ դէպի բանաստեղծը, որը «սրտի խօսքը» ուղիղ իմաստներով մեզ հասցնելու բանաստեղծական «գիւտ» է արել։*

Սակայն ամէն բանից առաջ լեռը նստած է մեր մէջ՝ իբրեւ էութիւն, իբրեւ իրականութիւն, իբրեւ առասպել։ Նրա սիրական ուժը մեզ հետ է ամէնուր. որքան հեռանում ենք, այնքան ընդգծւում է նրան մեր պատկանելիութիւնը. իսկ մօտենալիս աւելի խորն ենք զգում մեր ինչ լինելը։

Այս այն լեռն է
Որմէ որքան կը հեռանանք այնքան կը զգանք թէ իրն ենք
Որուն որքան կը մօտենանք այնքան կը զգանք թէ ինչ ենք ...[33]։

Բայց միեւնոյն ժամանակ այն դարձաւ զոհաբերման սեղան, երկնումի վայր։ Խորհրդաւոր չէ «երկնումը». մեր կարծիքով, այն 1915ից յետոյ ժողովրդի վերյառնումն է, յարութիւնը, ապրելու նուաճած իրաւունքը՝ «մորթուած աղաւնիներու» պատկերով, որոնք կարծես Ցեղասպանութեան ժամանակ մորթուած երեխաներն են։

Ահա այսպէս, Աղէտից չուրջ յիսուն տարի անց, առաջին անգամ պոլսաբնակ քերթողը խօսում է կատարուածի մասին, գեղագիտական գնահատման ենթարկում այն եւ ընթերցողին բերում համոզման, որ կարելի է այլաբանութեամբ տալ նաեւ գրեթէ անհնարինը իր պարագայում։ Եւ լաւ է, որ նիւթը մերկապարանոց չի ներկայացւում, սքօղուած է, ձերբազատ «ամաչ եւ հնչեղ»[34], ինչպէս Զարենցն է Նայիրիի առիթով նշում, «չամիչի պէս գործածական դարձած»[35] խօսքերից, ինչն աւելի գրաւչութիւն է հաղորդում քերթուածին։

Այստեղ է հենց բանաստեղծի ուժը։

Զորս ու կէս տասնամեակ անց Խրախունին նորից է ձեռք զարկում լեռան խորհրդանշական նիւթին, նոյն՝ ազգայինի ներթաքոյց ծալքերի բացայայտման նշանաւութեամբ, սկզբունքներին հաւատարիմ, սակայն ոչ նոյնական՝ իմաստների հետապնդման տեսանկիւնից։ Թէպէտ քննուող «Ճեպանկար» քերթուածում (2008) ոչ մի անգամ «լեռ» բառը չի նշւում, բայց հմուտ նկարիչ-քերթողի վրձնահարուածները ստիպում են տեսնել Մասիսների ուրուագիծը.

Իրար գրկած երկու անկիւն
վրան ամէն հագուստի
որ քովդ է լոկ մորթիդ պէս,
լուսապայծառ ու քրտնաթոր ճակատի,
Շոգի բռնած լուսամուտի՝

սառած օդով տաք շունչի մը ակնկալ
կամ տրոփիւն բորբ սրտի…[36]։

Յաջորդող տողերուն, պահելով լեռան խորհուրդը, պատկերը մեզ միաժամանակ առաջնորդում է դէպի Միջեռնակաբերդի բարձունք, ուր երկինք է միտում երկու՝ Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանների խորհրդանշական կոթողը.

Երկու պարզ գիծ, երկու անկիւն
անխզելի իրար զօդուած
Անխախտելի խարիսխ բռնած
երկրի խորքէն յաւերժական որպէս կոթող վեր ցցուած
լուսագծեալ երկու տեսիլք կամ հրաշք…[37]։

Եթէ «Լեռն Ի Վեր»ի վերջին հատուածը ազգային խորհուրդը վերանուաճելու, ինքնաճանաչման հասնելու ակնարկ է՝

Այս լեռը մեծ
Անմահութեան սանդուխն է
Ու ես կամաց - երկիւղած
Կը բարձրանամ լեռն ի վեր[38]։ *Ապա, «Ճեպանկար»ում ինքնաճանաչման լրումին հասած, բարձունքը նուաճած բանաստեղծը դէպի նոյն ճամբան է ուղղորդում նաեւ նորահաս սերնդին.*

Եթէ ինծի հարցնէք՝
Մեր մանուկներն այբուբէնէն ալ առաջ
Պէտք է սորվին ճեպանկարն այս արագ…[39]։

Բանաստեղծութիւնն աւարտում է, բայց ընթերցողի՝ խորհրդանշանների մեկնութեան փորձերը նոր իմաստների յայտնաբերման նոր հորիզոններ են խոստանում։ Այսինքն՝ գրասէրը հնարաւորութիւն է ստանում բանաստեղծական գիւտի շարունակողը դառնալու։ Այս առումով բնորոշ է Դանիէլեանի գնահատականը. «Զարեհ Խրախունին մեր այն զտարիւն իմացական բանաստեղծներից է, որոնց համար ասում են, թէ նրանց ընթերցողները ներքնապէս արդէն բանաստեղծ են զգում իրենց, որոշակի նախապատուութեամբ «ընտրեալներ» են»[40]։

Ամփոփելով աւարկայական խորհրդանշապաշտութեան կէս դարը՝ նկատենք, որ չարժումը ժամանակի ընթացքին կարողացաւ բանաստեղծական դպրոցի արժէք ձեռք բերել եւ ունեցաւ հետեւորդների մեծ բանակ ոչ միայն սփիւռքահայ շրջանակներում՝ Իրմա Ահէմեան-Թոքատ (1936-1990), Գալֆայեան-Փանոսեան, Գարակէօզեան, Արմենուհի Թերզեան (1910-1992), Գալուստ Խանենց (1910-1998), Արսէն Ճանեան (ծն. 1938), Իգնա Սարըասլան (ծն. 1945), այլեւ Հայաստանի մէջ՝ Յովհաննէս Գրիգորեան, Հենրիկ Էդոյեան, Արտեմ Յարութիւնեան (ծն. 1945)։

Շրջելով բանաստեղծական քարացած աւանդոյթները՝ պոլսահայ նոր քերթողութեանը յաջողուեց յետագիծ ձգել հայ բանաստեղծութեան ընդհանուր ուղղութեան վրայ եւ դառնալ ի· դարավերջի ուշագրաւ երեւոյթներից մէկը։

ՏԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Համայնապատկեր Հանրապետական Շրջանի Իսթանպուլահայ Գրականութեան*, խմբ.՝ Վ. Կոմիկեան, Վ. Ս. Մովակ, Ռ. Հատտէճեան, Իսթանպուլ, Հրատ. Արամեան Սանուց Միութեան, 1957, էջ 3։

[2] Թէպէտ Բարձրամանքը երկար կեանք չունեցաւ (1922ի Յունուարից մինչեւ Յունիս, ընդամէնը՝ 5 թիւ), սակայն իր չուրջ համախմբեց գրական ու մտաւորական արդիւնաւոր ուժերի՝ Զարեան, Թէքէեան, Պէրպէրեան, Օշական, Գաւաճեան։

[3] *Համայնապատկեր*, էջ 3։

[4] Եղիշէ Զարենց, *Երկերի ժողովածու*, Հտր. 6, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1967, էջ 413-414։

[5] Արթօ Ճիւմպիւշեան, *Նշմարներ Միւս Երեսէն*, Իսթանպուլ, 1991, էջ 75։

[6] Ռոպէր Հատտէճեան, «Համառօտ Ակնարկ Իսթանպուլահայ Գրականութեան Վրայ», *Ժամանակակից Իսթանպուլահայ Գրողներ*, կազմեց՝ Կարօ Աբրահամեան, Ա. Հտր., Անթիլիաս, 2004, էջ 252։

[7] Պարոյր Սեւակ, *Երկերի Ժողովածու 6 Հատորով*, Հատոր 5. Գրականագիտութիւն, Քննադատութիւն, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1974, էջ 407։

[8] Սուրէն Դանիէլեան, *Զարեհ Խրախունի. Բանաստեղծութեան Ազատագրումը*, Ս. Էջմիածին, 1999, էջ 143։

[9] Թորոս Թորանեան, *Իսթանպուլահայերը կը կանչեն*, Իսթանպուլ, 1997, էջ 13։

[10] *Կամք/Հանդէս Վերլուծական*, թիւ 3-4, Փարիզ-Պոսթըն-Թորոնթօ, Դեկտեմբեր, 1986, էջ 15։

[11] Օ. Պ. Բալուեան, «Իսթանպուլահայ Արձակագիր Գրագէտներ», *Շողակաթ Տարեգիրք 1973 / Մ. Խաչ Դպրեվանուց Պատրիարքութեան Հայոց Թուրքիոյ, Կրօնա-Բարոյական եւ Պատմա-Բանասիրական*, Իսթանպուլ, 1974, էջ 6-25։

[12] Նոյն։

[13] Խօսքը իսթանպուլահայ Գօչ ընտանիքի մասին է, որ 1908 թուականից հրատարակում է *Ժամանակ* օրաթերթը։

[14] Դանիէլեան, էջ 108։

[15] Նուպար Ազարեան, «Իսթանպուլահայ Բանաստեղծութիւնը», *Հանդիպումներ*, Իսթանպուլ, 1996, էջ 22-23։

[16] Մաքրուհի Յակոբեան, «Մարմարայի Գրական Էջերը», *Ժամանակակից Իսթանպուլահայ Գրողներ*, էջ 47։

[17] Սուրէն Աղաբաբեան, *XX Դարի Հայ Գրականութեան Ջուգահեռականներում*, Գիրք II, «Սովետական Գրող» Հրատ., Երեւան, 1984, էջ 14։

[18] Ֆրանսիացի հեղինակ (1900-1977)։

[19] Լատվիացի հեղինակ (1933-1983)։

[20] Աղաբաբեան, էջ 12։ Խօսքը վերաբերում է Ֆրանսիացի գերիրապաշտ բանաստեղծ Ժաք Փրեւէրին եւ լատվիացի Օժարս Վացիետիսին, որոնք մեծ ազդեցութիւն են ունեցել հայրենի բանաստեղծութեան նորագոյն զարգացումների վրայ։

[21] Ալէքսանդր Թոփչեան, *Բառի Սահմանները*, Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1978, էջ 64։

[22] *Հիլտա Գալֆայեան-Փանոսեան, Պոլսահայ Նոր Բանաստեղծութիւնը, Անթիլիաս*, 1998, էջ 102։
[23] *Ճիւմպիւշեան, Նշմարներ*, էջ 74։
[24] *Արթօ Ճիւմպիւշեան, Անդրադարձումներ, Իսթանպուլ*, 2004, էջ 75։
[25] *Ադաբաբեան, Գիրք II*, էջ 26։
[26] *Ճիւմպիւշեան, Անդրադարձումներ*, էջ 184։
[27] *Սեւակ, Հատոր Հինգերորդ*, էջ 61։
[28] *Դանիէլեան*, էջ 59։
[29] *Գեղամ Սեւան, «Ժամանակակից Սփիւռքահայ Գրականութիւնը», Բ. Հատուած (պոեզիա), Քննադատական Տարեգիրք - 1985, Երեւան*, 1985, էջ 173։
[30] *Գալֆայեան-Փանոսեան*, էջ 179։
[31] *Նոյն*, էջ 174։
[32] *Զարեհ Խրախունի, Քար կաթիլներ, Իսթանպուլ*, 1964, էջ 18։
[33] *Նոյն*, էջ 19։
[34] *Գալֆայեան-Փանոսեան*,էջ 179։
[35] *Եղիշէ Զարենց, Երկերի ժողովածու, Հտր. 5, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ.*, 1966, էջ 272։
[36] *«Սուրէն Դանիէլեանի Անձնական Ֆոնդ», թիւ 193, «Ճեպանկար» բանաստեղծութիւնը՝ «Նկարահանդէս» չարքից», 19 Հոկտեմբեր*, 2008 (ձեռագրերը գտնւում են «Սփիւռք» Գիտատուսումնական կենտրոնում)։
[37] *Նոյն*։
[38] *Խրախունի, Քար կաթիլներ*, էջ 19։
[39] *«Սուրէն Դանիէլեանի Անձնական Ֆոնդ», «Ճեպանկար»*։
[40] *Զարեհ Խրախունի, Տօնազանգ, Երեւան*, 2007, էջ 4 (տե՛ս՝ Ս. Դանիէլեանի առաջաբանը)։

OBJECTIVE SYMBOLISM: ZAREH KHRAKHUNI AT THE SOURCE OF THE MOVEMENT (ON THE OCCASION OF THE 50TH ANNIVERSARY OF THE MOVEMENT)

(Summary)

KNARIG ABRAHAMIAN
spyurksd@netsys.am

The article highlights the novel trend in post World War II Western Armenian literature which was coined as objective symbolism.

The author notes that the roots of this movement are to be found in European literature, particularly French poetry (Paul Eluard, Luis Aragon, André Breton, Jacque Prévert) and the philosophical works of French philosopher Henry Bergson. The movement penetrated Turkish poetry too. Turkish poets like Orhan Vely, Oktay Rifat and Jevdet Anday were influenced by this movement, which subsequently influenced young Armenian Istanbul poets too, specifically Zareh Khrakhouni, who became a champion of this school, gave impetus to the movement and had an impact on its Armenian track for some 50 years.

The author argues that, though it was Western at the beginning, the Istanbul Armenain poets found some of its poetic characteristics in early 20th century Western Armenian poetry, which made it sound a natural continuation of that early period's poetic output.

Khrakhouni is considered to be the leader and the theorist of this movement, which had an independent development in Soviet Armenia led by Baruyr Sevag. The author notes, however, that in both literary spaces this movement was not raedily accepted by a number of literary critics.

ԱՑԼԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ ՀԱՑԿԱԿԱՆ ԽԱՂԱՐԿԱՑԻՆ ԿԻՆՈՑՈՒՄ

ՍԻՐԱՆՈՑՇ ԳԱԼՍՏԵԱՆ
siranush2002@yahoo.com

Երբ հանդիպում ենք մեր ընկալման համար անսովոր, դժուարամատչելի երեւոյթի, կարիք ենք զգում յենուելու մինչ այդ մեզ արդէն յայտնի բաների վրայ։ Իսկ կինօն՝ որպէս առարկաները փաստացի պատկերող, «նիւթեղէն» արուեստ, անսահման հնարաւորութիւններ է ընձեռում ստեղծագործական մտքին. օրինակ, բարդ երեւոյթները պատկերել, արտայայտել պարզ ու ծանօթ առարկաների միջոցով՝ այլաբանական իմաստ որոնելով ու յայտնաբերելով նրանցում։ Այլաբանութեան՝ փոխաբերութեան կամ խորհրդանշանի առարկայական որոշակիութիւնն է ամրագրւում մեր գիտակցութեան մէջ, իսկ վերացականութիւնը մարդու միտքը տանում է դէպի անսահմանութիւն։

Հարկ է նշել, որ կինօպատկերն ինքնին ունի ուղղակի՝ բացայայտ եւ անուղղակի՝ թաքնուած նշանակութիւն, այսինքն՝ ի սկզբանէ փոխաբերական է։ Փոխաբերութեան չնորհիւ տուեալ տեսարանի շրջանակում յայտնուած առարկան յաճախ ձեռք է բերում լրացուցիչ նշանակութիւն, երկակի՝ փոխաբերական իմաստ, իսկ որոշ դէպքերում՝ ուղղակիօրէն ընկալւում որպէս խորհրդանշան։ Սակայն պէտք է նկատի ունենալ, նախ, կինօպատկերի իրատեսական, աւելին՝ բնապաշտական բնոյթը՝ որպէս կինեմատոգրաֆի ամենաէական՝ նախադրեալ յատկութիւն, եւ յետոյ միայն՝ կինօպատկերին բնորոշ փոխաբերականութիւնը։

Այլաբանութեան անցած ուղին քննելիս խիստ կարեւոր է հետեւեալ հարցը. այն ծառայում է ընդամէնը որպէս արտայայտչամիջո՞ց, թէ՞ ընդհանրացման յաւակնող երեւոյթ, մեթոդ։ Այլ խօսքով, այլաբանութիւնը գեղարուեստական միջոցներից մէ՞կն է, թէ՞ յաւակնում է աւելին, ասենք՝ գեղարուեստական նպատակ, արդիւնք լինելուն։ Այս տեսական խնդիրներն իհարկէ նոր չեն, դրանք ժամանակ առ ժամանակ ծագում են նորովի վերաիմաստաւորուելու պահանջով եւ կոչուած են նաեւ բնութագրելու, ընդհանրացնելու տուեալ ժամանակի, դարաշրջանի գեղագիտական հայեացքները։

ԱՑԼԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՑԿԱԿԱՆ ՀԱՄՐ ԿԻՆՈՑՈՒՄ

Այլաբանութեան ելակէտից դիտարկելով հայ կինոյի համր շրջանը՝ առնչւում ենք հետեւեալ փաստի հետ. առաջին իսկ ֆիլմից՝ Համօ Բեկնազարեանի (1892-1965) «Նամուս»ից (1925) սկսած, հայկական ֆիլմար-

ուեստում հանդիպում ենք թէ՛ իրատեսական ճշտութիւն ու հաւաստիութիւն ունեցող կտորների (օրինակ՝ երկրաշարժի դրուագը), թէ՛ առարկայական մետաֆորի՝ փոխաբերութեան (օրինակ՝ պտտուող իլիկի, հիւսող ձաղերի միջոցով ստեղծուած «քայլող» բամբասանքի կերպարը կամ երկու հարեւան ընտանիքների միջեւ սկզբում՝ ի նշան բարեկամութեան քանդուող, այնուհետեւ՝ վերստին կառուցուող պատը), թէ՛ գրոտեսկի՝ չափազանցութեան, որ նոյնպէս այլաբանական մտածողութեան դրսեւորում է (օրինակ՝ հարսանիքի գրեթէ ազգագրական տեսարանը լի է չափազանցութեամբ, ինչի շնորհիւ համադրուել են դրամատիկն եւ կատակերգականը)։ Եւ բոլոր այս տարաբնոյթ արտայայտման եղանակները հանդէս են գալիս բնականօրէն, կողք-կողքի՝ կազմելով օրգանական միասնութիւն եւ ամբողջութիւն։

Դժուար չէ նկատել, որ յատկապէս համր ֆիլմերում բնոյթով իրապաշտական գրական գործերը (Ալեքսանդր Շիրվանզադէի «Նամուս», «Ջար Ոգի», Յովհաննէս Թումանեանի «Գիքորը») հարստացել են առարկայական փոխաբերութիւններով։ Նախ, համր կինոյի պոէտիկան շատ առումներով խորհրդանշական բնոյթ ունի, ինչն ամէնից առաջ պայմանաւորուած է հնչիւնի, ձայնի բացակայութեամբ, այսինքն՝ համր կինոյի նախադրեալ պայմանականութեամբ։ Միւս կողմից, կինոպատկերին բնորոշ փոխաբերականութեան շնորհիւ, իւրաքանչիւր պատկերի շրջանակում (յատկապէս, խոշոր պլանով) յայտնուած առարկան յաճախ ընկալւում է որպէս խորհրդանշան, այն դէպքում, երբ վիպակի սահմաններում նոյն առարկան կիրառուած է իր որոշակի նշանակութեամբ։

Դրա հետ մէկտեղ, նոյնիսկ իրապաշտական երկերում հանդիպում ենք փոխաբերական խօսքերի՝ արտայայտութիւններ, որոնք պարզապէս կոչուած են հեղինակի միտքն առաւել պատկերաւոր լեզուով արտայայտելու։ Օրինակ, Շիրվանզադէի «Ո՞վ էր մեղաւորը... Մի՞թէ այն ներքին փտած որդը, այն թունաւոր օձը, որ «նամուս» է կոչւում» համեմատութեան եւ նմանօրինակ այլ տողերի պատճառով, կամ Թումանեանի «բուքը... աղքատ ու տկլոր է մանգալիս» փոխաբերութեան եւ նման այլ արտայայտութիւնների պատճառով ոչ մէկի մտքով չի անցնի, դրանցից ելնելով, այլաբանական ստեղծագործութիւն համարել Նամուսն ու «Գիքորը»։ Այստեղ գործ ունենք գեղարուեստական կերպարի այն խորհրդանշականութեան հետ, որի շնորհիւ է նա կայանում, կերպար դառնում՝ զատուելով իր իրական պատճէնից։ Եւ պարզապէս անհեթեթ կը լինէր, եթէ կինոստարբերակների հեղինակները նման դէպքերում գրողի փոխաբերական խօսքը նկարագարդելու, ուղղակիօրէն պաստառի վրա «փոխադրելու» փորձ անէին (ասենք, եթէ շարժանկարում որդեր յայտնուէին նամուսը խորհրդանշելու համար,

առաւել եւս անհնար կը լինէր ցոյց տալ «աղքատ ու տկլոր մանկ եկող բուքը»)։

Այսպիսով, թէ՛ դրական գործում, թէ՛ կինօնկարում առանձին փոխաբերութիւնների կամ խորհրդանշանների առկայութիւնը միշտ չէ, որ այլաբանական բնոյթ է հաղորդում ողջ ստեղծագործութեանը։

Վերադառնալով մեր այն դիտարկմանը, որ կինոյում յաճախ մանրամասնը կամ առարկան այնպէս են խաղարկւում, որ ընկալւում են որպէս խորհրդանշան, բերենք հետեւեալ օրինակները.- անմեղ կնոջ՝ Սուսաննի կուրծքը մխրճուող դաշոյնը առանձին, խոշոր պլանով, նոյն կերպ՝ քննիչի զմռսի կնիքը Բեկնազարեանի «Նամուս»ում. գետում խեղդուած Մանուշակի տիկնիկը Պատուական Բարխուդարեանի (1898-1948) «Ջար Ոգի» ֆիլմում (1927) եւն.։ Տիկնիկի հետ կապուած դրուագը լիովին հնարուած է, ընդ որում, «տիկնիկ»ի մասին վիպակում չկատակւում է միայն մէկ անգամ եւ շատ իմիջիայլոց, իսկ Գիժ Դանէլի (Գելովանի) աղջնակն այնտեղ երկրաշարժի զոհ է[1]։ Այնինչ, ֆիլմի հեղինակների մտայղացմամբ (բեմագիրի հեղինակ՝ Բեկնազարեան), պատկերաշարում ընդգծուած՝ խոշոր պլանով յայտնուած տիկնիկը դարձել է խորհրդանշան՝ առարկայական յուշ, որ մնացել է աղջկայ խեղդուելուց յետոյ։

Հայկական այլ համր ֆիլմերի մէջ եւս կարելի է հանդիպել պլաստիկ պատկեր-փոխաբերութիւնների։ Բեկնազարեանի «Տունը Հրաբխի Վրայ» (1928) ֆիլմում փոխաբերական բազմաթիւ հնարքներ կան, որոնցից յատկապէս աչքի է ընկնում առարկաների փոխարինումը ստուերներով. օրինակ, թաղման տեսարանում՝ դագաղների կտրուկ ուրուագծուած ստուերները, մահապատժի տեսարանում՝ սեւ ստուերագծերն ու լոյսի ցոլքերը։

Ամասի Մարտիրոսեանի «Գիքոր» (ըստ Թումանեանի համանուն պատմուածքի, 1934) փայլուն ֆիլմում, որ հայկական համր ֆիլմի «կարապի երգն» է, քաղաքում ծառայութեան մէջ գտնուող տղայի դժուարին կեանքը հակադրւում է շան կեանքին, երբ տեսնում ենք, թէ ինչպէս է նա կիսամերկ, յորդ անձրեւի տակ փայտ կոտրում, մինչդեռ շունը պատսպարուած է իր տնակում։

Բարխուդարեանի ստեղծած լաւագոյն ֆիլմի՝ «Կիկոս»ի փայլուն դրուագներից մէկում գլխաւոր հերոսը (Համբարձում Խաչանեան) քուէարկում է նաեւ իր աւանակի փոխարէն, իսկ աւանակը ծամում է ընտրաթերթիկը։ Սա այլաբանական հնարք է։ Ֆիլմում նաեւ առարկայ-փոխաբերութիւններ կան, օրինակ՝ գիւղացիների առաջ «ճառ ասող» սպայի համար որպէս «ամբիոն» է ծառայում նրա ոտքի տակ փուլ եկող խախուտ արկղը եւն.։

ԱՁԼԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆՁՈՒՆ ՖԻԼՄԵՐՈՒՄ

Հայկական առաջին հնչուն կինօնկարում՝ Բեկնազարեանի «Պէպօ» (ըստ Գաբրիէլ Սունդուկեանի համանուն պիեսի, 1935) ֆիլմում այլաբանութեան հիանալի օրինակ է եկեղեցուց փողոց դուրս եղած, աստիճաններով մագլցող, պատշգամբից՝ պատշգամբ «ցատկող» բամբասանքի «պտտահողմը»։ Իսկ նրա չարժման յետագիծն արտապատկերւում է կանանց դէմքերին՝ նրանց չափազանցուած դեմքիկ կերպարներում։ Այլաբանական «տարածուող» բամբասանքի առաջին պատկերը տեսնում ենք «Նամուս»ի մէջ։

«Պէպօ»ում Զիմզիմովի խոչորակերպ չափազանցուած կերպարի ստեղծմանը, Աւետ Աւետիսեանի անզուգական խաղի հետ միասին, մեծապէս նպաստել է ստուերախաղի հմուտ օգտագործումը, որ նոյնպէս փոխաբերական է բնոյթով։ Ֆիլմի սկզբում նրա ստուերը ահռելի չափերի է, որի համեմատ ինքը Զիմզիմովը շատ փոքր է, մինչեւ որ վերջում, իսկապէս, նրա ստուերն այնքան է փոքրանում, որ կծկւում, դառնում է մի բուռ։ «Պէպօ»ում իրապաշտութեան եւ չափազանցութեան (նաեւ հումորի, երգիծանքի, որ նոյնպէս այլաստացութեան, այլաբանութեան ձեւեր են) ներդաշնակ զուգակցումը բարձրակէտի են հասցնում բեկնազարեանական բեմադրարուեստի ձեւաւորումը։

Բեմադրիչը տարիներ անց ստացել է փոխաբերական մէկ ուրիշ պատկեր, որ Գրիգոր Զախիրեանն անուանել է «պատկերային ենթատեքստ»՝ չրջանառութեան մէջ դնելով կինօգիտական նոր հասկացութիւն։ «Դաւիթ-Բէկ» (1943) պատմական ֆիլմում գլխաւոր հերոսը (Հրաչեայ Ներսիսեան) թնդանօթի փողը զննելիս յանկարծ մի պահ, ինչ-որ անորոշի բանով նմանւում է Պետրոս Ա.-ին։ Բեմադրական այս հնարքը փոխաբերական համեմատութիւն, զուգահեռ է տանում պատմական երկու անհատների միջեւ։ Այն աւելի շուտ ակնարկում է նրանցից իւրաքանչիւրի՝ իր ժողովրդի համար ունեցած միաւոեսակ նշանակութեան, դերի մասին, քան թէ «տեղափոխում հանդիսատեսին ԺԸ. դարասկզբի Արեւելեան Հայաստանի լեռներից, ուր ռազմիկները միջնադարեան զրահաւորում ունէին, այն ժամանակի Պետերբուրգ, որ խորհրդանշում էր նոր Ռուսաստանը»[2]։

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ հայկական համր ֆիլմերը, ինչպէս նաեւ հնչուն շրջանի շատ ֆիլմեր (յամենայնդէպս, մինչեւ 1960ականների նշանակալից գործերը) չենք կարող այլաբանական կինոյի նմոյշ համարել։ Թէեւ դրանցում խաղարկուած են որոշ փոխաբերութիւններ եւ խորհրդանշաններ, դրանք կինոպատումն առաւել պատկերաւոր լեզուով կառուցելու միջոց են հանդիսացել։ Ոչ մի դէպքում չենք կարող ասել, թէ այդ հեղինակները այլաբանական կինօ (ֆիլմ-պարաբոլ, ֆիլմ-ալեգորիա) ստեղծելու նպատակ են հետապնդել։

Այստեղ սկզբունքային ենք համարում այն դրոյթը, որ չպէտք է չփոթել, այլ ընդհակառակը, պէտք է իրարից զատել ամբողջովին այլաբանական ստեղծագործութիւնը՝ ֆիլմը, առանձին փոխաբերութիւններ կամ խորհրդանշաններ պարունակող գործից, ուր դրանք զուտ որպէս գեղարուեստական միջոց են հանդէս գալիս, այլ ոչ թէ՝ իբրեւ նպատակ։

Անցում կատարելով հայկական կինօարուեստի վերելքի տարիներին՝ տեսնում ենք, որ առակին յատուկ փոխաբերական խորքն առկայ է դեռեւս Արման Մանարեանի (ծն. 1929) «Ժժվժիկ» (ըստ Աւրպետի համանուն պատմուածքի, 1961) կարճամետրաժ կատակերգական ֆիլմում, որի գլխաւոր հերոսի՝ Ներսէս աղբարի համբերութիւնը ժժվժիկի նման «բարակ-բարակ, մանր-մանր» կտրատւում է ընդհուպ մինչեւ վերջնական պայթիւնը։ Ընդ որում բացի այն, որ ողջ պատումն ունի այլաբանական հնչերանգ, ֆիլմում օգտագործուած են առանձին առարկայ-փոխաբերութիւններ՝ օրինակ, բերնէբերան դեգերող խօսքը «պտտւում» է ինչպէս բրուտանիւ, «փրփրում» է մէկ վարսաւիրի ձեռքի տակ, մէկ՝ բաղնիքում եւն.։ Ճշմարտացիօրէն պատկերուած արեւմտահայ իրականութեան նիւթը, հաւաստի մթնոլորտը, ժամանակի հետ համաքայլ կինեմատոգրաֆիական խօսքն ու փայլուն դերակատարումները (Հրաչեայ Ներսիսեան, Ծոլակ Ամերիկեան, Արման Կոթիկեան), ինչպէս նաեւ անկրկնելի երաժշտական լուծումը (Էդուարդ Բաղդասարեան), յիրաւի, ապահովել են ֆիլմի «արտաժամանակային» չհնացող բնոյթն ու մնայուն գեղարուեստական արժէքը։

Այդուհանդերձ, փոխաբերական պայմանականութեան նշանը հայ կինոյում խարսխուեց յատկապէս «Եռանկիւնի» ֆիլմով (1967), երբ բեմագիրի հեղինակ Աղասի Այվազեանը եւ կինօբեմադրիչ Հենրիկ Մալեանը (1925-1988) գեղագիտական խնդիր դրեցին իրենց առջեւ՝ ստեղծել առականման կինօպատում՝ բաղկացած հերոսների «անձնական» առասպելներից։ Այս ինքնատիպ ֆիլմի մասին գրուել է արդէն սոյն Հանդէսի էջերում[3]։ Իսկ այլաբանական մտածողութեան բարձրակէտը հայ կինոյում եղաւ Սերգէյ Փարաջանովի եւ Արտաւազդ Փելեշեանի ֆիլմարուեստը։ Համաշխարհային կինոյի խոշորագոյն դէմքերի շարքը դասուած այս արուեստագէտների ստեղծագործութեան մասին բաւական մանրամասն նոյնպէս գրել ենք սոյն Հանդէսում[4]։

Իր կերտուածքով, անցեալ դարի 60ականներին «չափազանց արժանի» Ֆրունզէ Դովլաթեանի (1927-1997)՝ «Բարեւ, ես եմ» ֆիլմով (բեմագիրի հեղինակ՝ Առնոլդ Աղաբաբով, 1965) նշանաւորուեց հայկական կինեմատոգրաֆի զարթօնքը, կարեւորուեց «անցեալի» տեղը եւ դերը հայի գիտակցութեան մէջ եւ առհասարակ, մարդու կեանքում։ Այս մասին բազմիցս խօսուել է եւ գրուել հայ կինօգիտութեան մէջ (Գրի-

դոր Զախիրեանի, Սաբիր Ռիզաեւի, Սուրէն Յասմիկեանի, Դաւիթ Մուրադեանի, Սուետլանա Գուլեանի յօդուածներում, գրքերում)։

Սակայն ֆիլմը միայն «անցեալի» մասին չէ, այլ նաեւ «սպասման», առաւելապէս մարդու սպասելու ունակութեան մասին է։ Իւրաքանչիւր դրուագ ներթափանցուած է «սպասում»ով։ «Սպասում»ն է այն առանցքը, որի շուրջ հաւաքուած է ֆիլմը, նրա պատկերաշարն ու դիպաշարը՝ առաջին իսկ (վաւերագրական) պատկերներից, որոնցում տեսնում ենք այն օրերի երեւանցիներին՝ համախմբուած, Տիգրան Պետրոսեանի յաղթանակին սպասելիս։ Այնուհետեւ՝ Արտիմը (Արմէն Զիգարխանեան), որ պիտի սպասէր Լիւսիային (Իրինա Ֆատէեւա), Տանիայի մայրը, որ պիտի սպասէր ամուսնուն, բայց հանդիպել էր ուրիշի...։ Վերջապէս, «սպասման» անփոփոխ վայրում՝ բայց արդէն նոր «Մանկական Աչխարհ» հանրախանութի դիմաց, տարիներ անց Տանիան (Մարգարիտա Տերեխովա) կը հանդիպի Արտիմին ու նրա սպասելու ունակութեամբ երջանկացած՝ կը հարցնի. «Դուք դեռ սպասու՞մ էք»։

Ֆիլմի հեղինակները անդրադարձ դիմում են նաեւ որոշ առարկայական այլաբանութիւնների. Արտիմը Լիւսիայի խնդրանքով չարժման մէջ է դնում կարուսէլը, ու այդ «օդանաւերը» սկսում են պտտուել անամպ երկնքում։ Յաջորդ դրուագում, արդէն մութ երկնքում չարագոյժ սահում են օդապարիկները... Այդկերպ, պատերազմը նաեւ ֆիլմի տարածք է ներխուժում անսպասելի։ Ֆիլմի հերոսների, ինչպէս եւ ֆիլմի գործողութեան համար նոյնքան անսպասելի պահին (երբ սպառազինութեան մրցավազքի՝ գիտական առաջընթացի «մարտիկ» ֆիզիկոսները՝ Արտիմը եւ Պոնոմարը, բաճկոնները հագին անվրդով գնդակի հետ են խաղում) հնչում է՝ «Իսկ յետոյ Հիրոսիման էր» որոշակի պատմական, տուեալ դէպքում նաեւ խորհրդանշական արժէք ունեցող տեղեկութիւնը եւ հերոսների անհոգ տեսքն իրականում ահազանգում է մոլորակի ցանկացած վայրում տեղի ունեցող իրադարձութեան համար իւրաքանչիւրի պատասխանատուութեան մասին։

«Բարեւ, ես եմ»ի գլխաւոր նկարահանող Ալբերտ Եաւուրեանի (1935-2007) պատկերային ձեռագրում նոյնպէս բանաստեղծական փոխաբերութեան ձգտում կայ. երբ սիրահարած հերոսները զբօսնում են, աշնանային մերկ ծառերն աւելի արագ են անցնում պատուհով, ասես այդ անկենդան ճիւղերի մէջ խտացած ժամանակը չտապում է մարդկանցից, կեանքից առաջ անցնել։ Տարիներ յետոյ Արտիմը, չգիտես որտեղից յայտնուած հեծանուորդներից առաջ կ՝անցնի՝ վազելով, իրենից վեր ինչ-որ ոյժ, գուցէեւ «ժամանակը» յաղթահարելու յուսահատ մի փորձով։

Այժմ վերյիշենք Դովլաթեանի «Երկունք» (բեմագրի հեղինակ՝ Արմէն Զուրաբով, 1976) ֆիլմի աւարտական տեսարանը. Ալեքսանդր Մի-

ասնիկեանը (Խորէն Աբրահամեան) գալիս է դիմաւորելու Մարտիրոս Սարեանին (Գէորգ Սարգսեան)։ Գնացքը կանգ է առել ամայի տարածքում։ Այդ «տարածքում» ոչնչից «երկիր» է կերտուելու։ Ի դէպ, ֆիլմը նոյնատիպ պատկերով էլ սկսւում է (նման տարածքով սլացող գնացք, որի միջից մտախոհ դուրս է նայում Միասնիկեանը)։ Եւ վերջին տեսարանում, երկու մեծ հայորդիները «գնում են» դէպի Արարատի՝ կինոխցիկի օգնութեամբ հետզհետէ «մօտեցող» գագաթը. բնապատկերի «ենթախորքն» ակնյայտ է։ Իրապաշտական ոգով նկարահանուած այս ֆիլմի խորհրդանշական աւարտը օրգանապէս բխում է հերոսների կերպարների ծաւալաչափից։ Եւ սա այն եզակի դէպքերից է, երբ «բիբլիական» լեռը չահարկուած չէ, այլ ընդհակառակը, իր «ճիշտ տեղում» է։

Վիգէն Չալդրանեանի (ծն. 1956) նկարահանած «Ապրիլ» (բեմագրի հեղինակ՝ Ռուբէն Ցովսէփեան, 1985) ֆիլմը, որ անդրադառնում է հայ ժողովրդի պատմութեան եղերական էջերին, սկսւում է «բռնկուած ծառ»ի այլաբանական պատկերով։ Ճիշտ է, չի լինի ասել, թէ նկատելի բնազանցական տարածականութիւն ու խորք կայ այդ դրուագում, բայց որպէս նախադրութիւն այն անհրաժեշտ հնչերանգ է հաղորդում ֆիլմին, չի կտրւում պատումից, այլ՝ ներհիւսւում եւ ներհիւսում է այն։ Ծառի ճիւղերին կապուած են գունաւոր ժապաւէնի կտորներ (այդ հնագոյն սովորոյթը իղձերի իրականացման խորհուրդ ունի տարբեր ժողովուրդների հաւատալիքներում), եւ պատկերն անբնական վառ, ընդգծուած գունաւոր է։ Այնուհետեւ ֆիլմը շարունակւում է սեւ-սպիտակ։ Դրուագներից մէկում գլխաւոր հերոսներից մէկը (Հաւոն Ներսիսեան) նոյն ծառից սեւ կտոր է կապում։ Չնայած արարքի բացայայտ ընդգծուած պայմանականութեանը, նոյնիսկ, կարելի է ասել, թատերայնութեանը, ֆիլմի գործողութիւնն, այնուամենայնիւ, չի կորցնում կինեմատոգրաֆիական հաւաստիութիւնը։ Հեղինակները վստահօրէն շարունակում են գնալ իրենց իսկ առաջադրած՝ իրականի եւ այլաբանականի սահմանի վրայով, մինչեւ որ վերջին տեսարանում երեխաները յայտնւում են աւանակներ հեծած ու «խաղում» գիւղի աւագանու անդամների «դերերը»։ յուրահատութիւն այդ ծերունիների, որ չարունակ «փորփրում են հայոց հարցը»՝ իրենց փոխարինող կայ։ Այդ յոյսից աւարտի տեսարանում ծնւում է արտասովոր վառ գոյների մէջ ընկղմուած «բնական» Արարատը։

Գունային ընդգծուած վառ երանգները՝ որպէս տագնապի զգացողութիւն առաջացնող միջոց բաւական ազդեցիկ գեղարուեստական տպաւորութիւն են թողնում Հենրիկ Մալեանի «Նահապետ» (ըստ Հրաչեայ Քոչարի համանուն վիպակի, 1977) ֆիլմում։

«Նահապետ» ֆիլմում Արտամետի ցնցուղ խնճորենին ու Վանայ ծովը գլորուող նրա պտուղները եւ՛ փոխաբերութիւն են, եւ՛ այլաբա-

նութիւն, եւ անձնաւորում, եւ խորհրդանշան։ Այդտեղ կինօխցիկը կլանել եւ արձանագրել է ոչ-այնքան ֆիզիկական (ընդհակառակը՝ այն նոյնիսկ «ձեռակերտ» է թւում), որքան ոգեղէն իրականութիւնը։ Այն, ինչ կրում է բանաստեղծական-այլաբանական այս պատկերը՝ ի՞նչ բառերով կարելի կը լինէր արտայայտել։

Վանայ լճի ափին «մնացած» արեւմտահայ գողտրիկ գիւղի՝ Արտամետի խնձորների «փրկութեամբ» ու «յարութեամբ» այս երկի մէջ նիւթականացել է նահատակուած ժողովրդի յարութեան, վերածննդի գաղափարը։ Այդ առարկայական այլաբանութիւնը «տեսանելի» գործողութեան է վերածել ասես դիւցազնավէպի միջից դուրս եկած, հաւաքական հերոսի՝ Նահապետի (որի անունն իր հերթին խորհրդանշական է), ներաշխարհի յառնման պատմութիւնը։ Խնձորենիների վերընձիւղումը եւ Նահապետի (Սօս Սարգսեան) ու Նուբարի (Սոֆիկ Սարգսեան) նոր, վերստին կազմուած ընտանիքում աշխարհ եկած մանկան ծնունդը յաջորդում են միմեանց՝ ուժեղացնելով ֆիլմում հնչող ապրելու, կեանքի կոչը։ Այդ կենսական ոյժն արտացոլուած է նաեւ ֆիլմի գաղաթնակէտային տեսարանների ընդգծուած վառ գունապնակում։ Ողբերգական հերոսի պատմութիւն՝ արուած գոյների անբնական, տագնապալի առատութեամբ։ Պոէտական մտածողութեանը վայել այս պայմանականութեամբ է նկարահանուած եւ ֆիլմի ամենաողբերգական տեսարանը՝ «խնձորենիով թագաղրուած եւ թիթեռնիկի թեւերի գոյների պէս նուրբ հագուստներով, պայծառ, ամուր ընտանիքի» կերպարը, ինչպէս 1986ին գրել է *Cahier du Cinema*ն[5]։ Այդ բանաստեղծական փոխաբերական պատկերի մէջ խտացել են թէ՛ «երջանկութիւնը», թէ՛ «կորուստը», որոշակի եւ վերացական իմաստով։ Մարդկային կեցութեան երկու ծայրերի միաժամանակեայ արձարձում է դա։

Դմիտրի Կեսայեանցի (1931-2000) «Աւդոյի Աւտոմեքենան» կարճամետրաժ ֆիլմում (ըստ Վալտէր Արամեանի համանուն պատմուածքի, 1966) «բուրժուական անցեալ»ին պատերազմ յայտարարած «ակտիւիստուհի, կոմերիտուհի» Նուարդը այնպիսի եռանդով էր ջարդուփշուր անում այդ «անցեալի» փոխաբերութիւն հանդիսացող ինքնաեռները, որ սրամիտ, չափազանցուած տեսարանն ափսոսանքի զգացում էր առաջացնում։ Պատահական չէ, որ յատկապէս այդ հատուածը ճակատագրական եղաւ թէ՛ ֆիլմի, թէ՛ հեղինակի համար[6]։

1960ականներին համաշխարհային պատառը հեղեղուել էր այսպէս կոչուած՝ «ենթագիտակցականի հոսքով». երազ, տեսիլք, յիշողութիւն։ Մարդու երեւակայութիւնն ու ներաշխարհը լցնող այս պատկերաւոր այլաբանական «տարրերը» գտան իրենց «երեւանեան» մարմնաւորումը Ֆրունզէ Դովլաթեանի (բեմագրի հեղինակ՝ Պերճ Զէյթունցեան, 1973) «Երեւանեան Օրերի Քրոնիկա» ֆիլմում, որի գլխաւոր հերոսը՝ Արմէնը (Խորէն Աբրահամեան) ընդվզում, կուում էր դարձեալ «անց-

եալի», նրա անարդարութեան դէմ, անգամ «պաշտօնապէս» լինելով այդ «անցեալի»՝ արխիւի պահապանը, պատրաստ էր այրել, ոչնչացնել այն։

Իր երկու կանանց պահանջով «անցեալից» ամէն գնով ուզում էր ազատուել նաեւ Ալբերտ Մկրտչեանի (ծն. 1937)՝ իտալական նորիրապաշտութեան պոէտիկայով նկարահանուած՝ «Մեր Մանկութեան Տանգօն» ֆիլմի (1984) հերոս Ռուբէնը (Մհեր Մկրտչեան)։ Գլխաւոր հերոսի հետ միասին, ֆիլմում իր «չարչրկուած» ուղին է անցնում եւ իր տիրոջ պէս ուժասպառ եղած «կոմոդը»՝ պահարանը։ Սակայն հերոսի անցեալը «մարմնաւորող» այդ առարկայական այլաբանութիւնը ոսկորի պէս խրուել էր նրա կոկորդում, մինչեւ որ, նրա իսկ ջանքերով յայտնուեց գնացքի անիւների տակ... Դարձեալ Մկրտչեանի «Ուրախ Աւտոբուս» (2000) ողբերգակատակերգութիւնում աւերուած Գիւմրիի փողոցներով անցնում է «ուրախ» աւտոբուսը՝ իբրեւ ծիծաղելու ընդունակութիւնը երբեք չկորցնող մարդկանց հաւաքական խորհրդանիշ։ Իսկ նրա «Շնչառութիւն» ֆիլմի (1988) աւարտում փորձ է արուել ստեղծել փոխաբերական կերպար, որը զուգորդութիւն է մարդկանց եւ աղէտեալ վիճակում յայտնուած լճի «շնչառութեան» միջեւ։ Իր «հողից», մանկութիւնից ու իդեալներից հեռացած հերոսը՝ Արամը (Խորէն Աբրահամեան), վերջում վերադառնում է այն վանքը, որի պատերի ներսում դեռ «ապրում» է իր մօր աղօթքը, նաեւ ինքը, բայց «մանուկ մնացած», սակայն չի կարողանում ներս մտնել։ Ասես ինչ-որ անտեսանելի, բայց առկայ «ուժեր» նրան թոյլ չեն տալիս։ Ցետոյ նա յուսահատ վազում է դէպի հինաւուրց գերեզմանատուն, խաչքարերի արանքում անընդհատ տեսնելով իրեն հետապնդող մանչուկին՝ իրեն, սակայն փոքր հասակում (այլաբանութիւն)։ Յաջորդ դրուագում տեսնում է նրան (դարձեալ ինքն իրեն)՝ սպաննուած, այն ձկների նման, որոնք ափ են նետուել բնապահպանական աղէտի՝ լիճ արտանետուած արդիւնաբերական աղբի հետեւանքով։ Գրկում է եւ վազում ալեկոծուած եզերքով՝ ձուլուելով բնապատկերին, եւ աւաղ, մեծ ուշացումով «վերագտած» ինքն իրեն...

Այս այլաբանական տեսարանն, անշուշտ, աւելի հնչեղ կը լինէր, եթէ ողջ ֆիլմի ոճից, գեղագիտութիւնից բխէր, եթէ ձեռք բերուէր տեսարանից տեսարան, դրուագից՝ դրուագ, այն էլ՝ ոչ թէ բովանդակութեան դիպաշարի տրամաբանութեամբ, այլ՝ գեղարուեստական։ Ճիշտ է, դէպի Արամի՝ լեռներում արձագանգուող ճիչն «անցում կատարելու» համար կինօբեմադրիչը կիրառել է «կամրջող» մի հնարք. իրեն մերկացնող «ժողովից» դուրս գալով՝ ֆիլմի հերոսը՝ գործարանի տնօրէնը, յայտնւում է մեզ չատ ծանօթ իրականութեան՝ հանրահաւաքի տարածքում։ Թատերական հրապարակ՝ որպէս ազգային զարթօնքի «նշան» ընթերցուող փաստագրութիւն, բնապահպանական խնդիր

բարձրացնող հնչիւնաշար. «Մեր բոլորի տունն է մոլորակը»: Սակայն աւարտական տեսարանին նախորդող այս կտորը, կարելի է ասել, չի թաքցնում ֆիլմի ընդհանուր հիւսուածքում տեղ գտած գեղագիտական «կարկատանները»: Արդիւնքում ստացուել է հետեւեալը. եզրափակիչ տեսարանը թէեւ բովանդակութեան առումով «հարազատ» է հերոսին, նրա ներքին էութեանը, սակայն կինօլեզուի իմաստով «օտար» է գրեթէ «արտադրական գեղագիտութեան»[7] իրատեսական ոճով նկարահանուած ֆիլմին:

Բագրատ Ծովհաննիսեանի (1929-1990) «Տէրը» (ըստ Հրանտ Մաթեւոսեանի համանուն վիպակի, 1983) ֆիլմում յաջողուել է ստեղծել մաթեւոսեանական «կենդանի կանգնած» դարաւոր անտառի կերպարը: Այն նմանւում է գեղանկարչական երփնագիր բնանկարի: Անտառն այստեղ, ինչպէս եւ գրական հիմքում, խորհրդանշական կերպար է: Բնապատկերն այդտեղ չնչում է, ապրում իր կեանքով, արձագանգում է, նաեւ լի է տագնապով՝ իւրօրինակ հնչիւնաշարի օգնութեամբ կինօբեմադրիչը, կարծես, թոյլ չի տալիս «վայելել» բնութեան անխռով գեղեցկութիւնը, ներդաշնակութիւնը: «Խազէինի»՝ (տիրոջ) Ռոստոմի (Խորէն Աբրահամեան) անհանգստութիւնը փոխանցուած է բնանկարին. նա յօժարակամ իր վրայ է վերցրել այդ ամէնը յանուն ապագայի պահպանող նահատակի դերը: Ըստ էութեան, Տէրը ողբերգական հերոս է, որոշ առումով նման անտիկ հերոսներին. նրա ճշմարտութեանը դէմ առ դէմ կանգնած է ուրիշ հաւասարազօր ճշմարտութիւն՝ իրեն հակադրուող «ժողովրդի» անժխտելի ճշմարտութիւնը, բնութեան բարիքների հաշուին ապրելու նրա իրաւունքն ու կամքը: Տէրը՝ այդ անկործան, անխորտակելի դիւցազներգական հերոսը, որ ապրում է մեր օրերում, «առանձին սոցիալական շերտ չի ներկայացնում եւ ոչ էլ որեւէ սերունդ, այլ՝ ժողովրդին. նա ամենայնի Տէրն է ու ոչ սկիզբ ունի, ոչ վերջ: (...) առաջին անգամ հայ կինոյում առաջ է գալիս հերոս, որն իր ողջ էութեամբ հակադրւում է, եթէ կարելի է այդպէս արտայայտուել, այլասերուած ամբոխին»[8]:

Այս հերոսն ազատ է առօրեական կեանքի կարիքներից. նրան ոչինչ հարկաւոր չէ: Այդ պայմանականութեան միջոցով բացայայտւում է համընդհանուրը, համամարդկայինը: Նման հերոսները յայտնուելուն պէս ազդարարում են իրենց խորհրդանշական, գերբնական եւ միտամնայ գոյութեան մասին: Այդպէս օրինակ, Ֆելինիի հերոսներից ոմանք (Զելսոմինայի, Զամպանոյի, Մաստրոյի ծաղրածուական դիմակները «Ճանապարհ» ֆիլմում, Սարագինան՝ «8 1/2»ում, Պաոլան՝ «Քաղցր կեանք»ում եւն.) նոյնպէս շատ առումներով զուրկ են սոցիալական որոշակիութիւնից: Բանահիւսութեան, գրականութեան մէջ, թատերգութիւնում առաւել յաճախ են հանդէս գալիս խեղկատակները, չքաւորները՝ «ոչինչ չունեցող մարդիկ», եւ արքաները՝ «ամէն ինչ ունեցող

մարդիկ»։ Ֆրանսիացի քննադատ Ժան-Լուի Թալենայը, խօսելով նման կերպարների մասին, ասել է, որ «նրանք ազատ են հասարակական բոլոր պայմանականութիւններից, որոնց ենթարկւում են մարդիկ։ Հենց այդ էլ նրանց մէջ բացայայտում է համընդհանուրը։ Այդ հերոսներն օրէնքից դուրս են»[9]։ Այսպիսով, «թագաւորներն ու կայսրերը» օրէնքից բարձր են, «յատակի» մարդիկ՝ օրէնքից ցածր։ Աւելացնենք, որ բոլոր այդ կերպարները գալիս են «նախնական ժամանակներից», այսինքն՝ այն հեռաւոր ժամանակներից, երբ ամէն ինչ «այնպէս չէր», ինչպէս հիմա։

Տէրը՝ Ռոստոմը, նոյնպէս ազատ է ընկերային պայմանականութիւններից։ Սահման չճանաչող էութիւն է, իսկ նրա արմատները ամենահեռաւոր անցեալում են։ Միթոսը սովորաբար համատեղում է երկու երեսակ՝ պատմութիւն հեռաւոր անցեալի մասին եւ ներկայի՝ երբեմն նաեւ ապագայի իմաստաւորման եղանակ, ինչը նկատելի է եւ դիտարկուող՝ «Տէր» ստեղծագործութեան մէջ։ Այստեղ հերոսը դիցաբանական նախանիւթ էութիւն է, արքետիպ։ Թէ՛ գրական հիմքում, թէ՛ ֆիլմում այս կերպարի մէջ յաղթահարուած է տարածութիւնը, հեռաւորութիւնը կենդանի բնաւորութեան եւ խորհրդանշանի միջեւ։ Սակայն կինօվիպակում Մաթեւոսեանը հասել է նաեւ «տէր»ի եւ նրա «տիրոյթների» անտրոհելի ամբողջութեան, միասնական նախանիւթին։ Ինքն իր մասին յոգնակի թուով խօսող («մենք», «մեր անտառը»...) Ռոստոմ Սարգսեանը իր «տիրոյթները» ժառանգել է «աւազակի դէմ աւազակ եւ խոնարհի առաջ հնազանդ, մշտապէս եափնջաւոր-ծիաւոր-հրացանաւոր» իր «անտառապահ հէրացու»ից։ Ինքը Ռոստոմն էլ միշտ իր սպիտակ, ասես դիւցազնավէպից դուրս եկած ձին հեծած է չրջում՝ «զօրքը կորցրած, (...) կենտ ծիաւոր» է։ Եւ ինչպէս վայել է դիցաբանական հերոսին, ունի առասպելական ծագում. հէրացուն նրան գտել է անտառում՝ «մատուռի մութ ներսում (...) Եւ քանի որ աստուածամօր խամրած պատկերից զատ այդտեղ ուրիշ մարդ-մարդաշունչ չի եղել, ուրեմն կարելի է համարել, որ մենք աստծու ծնունդ ենք»[10]։ Ռոստոմը միեւնոյն ժամանակ է՛ւ դիցաբանական, է՛ւ առասպելազերծուած հերոս է՝ թէեւ ունի «աստուածային» ծագում, որոշ առումով խոցելի, անպաշտպան է, զուրկ այն մոգական ուժերից, որ յատուկ են դիցաբանական հերոսին։ «Առասպելազերծուած հերոսին ընդհանրացնում են ազգակիցները ու հարեւանները, բայց ոգիները նրան պաշտպան են կանգնում, (...) որպէս կանոն, նա քշուառ, ընչազուրկ է, ձգտում է սոցիալական բնոյթի ձեռքբերումների»[11]։ Այնինչ Ռոստոմն իր կամքով է հրաժարուել ընկերային բարիքներից, այսինքն՝ նրա նկրտումներն ունեն տիեզերական նշանակութիւն, իսկ դա յատուկ է «դիցաբանական» հերոսին։ Լինելով առասպելական, դիւցազնական հերոս, միեւնոյն ժամանակ, նա ընդունակ է հեգնանքի. մի բան, որ հակասում է

դիւցազնավէպի պայմանականութեանը. «Կողմնակի անտառապահ մարդ ենք, խնդրում ենք ... Մեռած ենք, բայց էնքան էլ մեռած չենք...»[12]: Դիտարկուող գործի սահմաններում հերոսի բնաւորութեան այս գիծը նրան դարձնում է առաւել համոզիչ, իրական կերպար:

Փիլիսոփայական վերացականութիւնը պիտի հող ձեռք բերած լինի, վերածուած լինի հաւաստիութեան, որոշակիութեան՝ կինօժապաւէնի վրայ երեւակուելու համար: Մի կողմից՝ առասպելական, յաւերժականի կրող ու արտացոլող, միւս կողմից, որոշակի, «կոլխոզի» դարաշրջանի հայ գիւղացին՝ ծմակուտեցի, հողեղէն, ծանրաքաշ ու ծանրաշարժ, ամէն քայլափոխին ոտքերի տակ հողը չօշափող. այսպիսին է ներկայանում հանդիսատեսին «Տէրը» ֆիլմի գլխաւոր հերոս Ռոստոմը՝ Խորէն Աբրահամեանի դերակատարմամբ: Իսկ «թշնամիների» մէջ, սովորական մարդկանց կողքին կան «ժամանակակից» բանահիւսական կերպարներ՝ «թզուկ պետ», «վիթխարի կին»: Այստեղ հարկ է նշել, որ ֆիլմում, ի տարբերութիւն գրական հենքի, չաղթահարուած չէ այն սահմանը, որը նաեւ այս կերպարները կը փոխադրէր դիցաբանական, ոչ-իրական հարթութիւն:

Այս առումով, վիճայարոյց կարգավիճակում յայտնուեց եւ Ֆ. Դովլաթեանի «Մենաւոր Ընկուզենին» (ըստ Վարդգէս Պետրոսեանի համանուն վէպի, 1986) ֆիլմը: Բեմագրի հեղինակ Աղաբաբովը եւ Դովլաթեանը փորձել էին դիցաբանական տարրեր մտցնել կինօնկարի գեղազանցապէս իրատեսական պատումի հիւսուածքի մէջ:

Գուցէեւ առանձին յաջողուած՝ «անիրական, դիցաշունչ» դրուագներ կան ֆիլմում[13], սակայն դրանք ոճական իմաստով տարանջատ են, օրգանական ամբողջութիւն չեն կազմում ընդհանուր առմամբ, բնախօսութեամբ՝ իրատեսական կինօնկարի հետ, այն դէպքում, երբ հերոսուհու՝ Սոնայի մէջ ապրող մենաւոր ընկուզենու առասպելը բնականոն կերպով տարրալուծուած է վէպի տարածութեան մէջ. «երկնքից էլ բարձր»՝ Տխուր, Համր, Խուլ լեռներն ու Գեղեցկուհի ջրվէժը, Լեռնասարի երեք դարբինները, հին ու լքուած դարբնոցը՝ իր առաջ աճած եղէգ «տապանաձառերով»՝ ընկուզենիներով, «իր չեղած զանգերով հեծկլտացող» Մենաւոր զանգակատունը եւ, ի վերջոյ, «կանաչ խարոյկ» թուացող մենաւոր ընկուզենին՝ «իր վրայից ճշմարտութիւններ բարբառող» ծեր իմաստունի հետ միասին խօսքի վերացականութեան՝ գրական այլաբանութեան հզօր միջոցներով ստանում են դիւցազնավէպին յատուկ անիրական չափումներ: Մինչդեռ այդ փոխաբերական պատկեր-կերպարների ուղղակի կինեմատոգրաֆիկ փոխանցումը, մեկնութիւնը անհեթեթ կամ անհնար կը լինէր: Օրինակ՝ պաստառին ինչպէ՞ս պատկերել մենաւոր զանգակատան «չեղած զանգերը», առաւել եւս՝ նրանց «հեծկլտալը»: Անշուշտ, գործ ունենք մաքուր գրական

այլաբանութեան հետ։ Իր հերթին, դարձեալ անդրադառնալով կինոպատկերի «ուղղակի» եւ «փոխաբերական» իմաստներին, բերենք Ֆիլմից մի դրուագ, որ վէպում չկայ եւ շատ «կինեմատոգրաֆիական» է. ընկուզենու տակ, սիրելիի հետ անցկացրած գիշերուանից յետոյ, արմատների երկայնքով մեկնուած Սոնային «արթնացնում է» ծառի պտուղը՝ ընկոյզը։ Եւ օրինաչափ է, որ այն չի ընկնում Լեւոնի վրայ, քանի որ վերջինս «չի հաւատում» Սոնայի առասպելին։

Ուղղակի եւ փոխաբերական բովանդակութիւն ունի նաեւ Ֆիլմի վերջը, որ այս էկրանացման ամենատպաւորիչ դրուագներից է. Ռազմիկը՝ Արմէն Ջիգարխանեանի փայլուն մարմնաւորմամբ (որ Ֆիլմի իսկական «պրոտագոնիստն» է եւ գլխաւոր հերոսի՝ Կամսարեան-Դովլաթեանի լուրջ մրցակիցը), կնոջ եւ որդու հետ միասին, աշխարհի անցուդարձից անկախ, բայց անդնդի վրայ կախուած (ճիշտ է, պարաններով «ապահով կապուած»), հունձ են անում դիւցազնական անխռով տեսքով...

Կարելի է ասել, «գրականութեան հասանելիքը՝ գրականութեանը, կինոյինը՝ կինոյին»։ Բոլոր դէպքերում, Բ. Ցովհաննիսեանի «Տէրը» եւ Դովլաթեանի «Մենաւոր Ընկուզենին» 1980ականների նշանակալից հայկական ֆիլմերից են եւ արժանի տեղ են զբաղեցնում հայ ազգային կինոյի պատմութեան մէջ։

Հայկական կինեմատոգրաֆում այլաբանական եւ քնարավիպերգական չնչով նկարուած եզակի նմուշներից է Ադասի Այվազեանի (1925-2007) «Լիրիկական երթ» ֆիլմը (համաբեմադրիչ՝ Լեւոն Իսահակեան, 1981)։ Ուսումնասիրելով այլաբանական մտածողութեան փորձը հայկական կինոյում՝ դժուար է չհամաձայնուել կինոգէտ Սուրէն Յասմիկեանի հետ։ Նա խօսելով այս ֆիլմի մասին, իր Մեղմ կադր գրքում ընդհանրացնում է. «հեղինակներին յաջողուել է բարձրանալ պայմանականութեան այն աստիճանին, որը դեռ չէր իրացուել հայկական կինոյում»[14]։

«Լիրիկական երթ»ը ինքնամոռաց սիրով տոգորուած կնոջ անցնելիք ճանապարհի պատմութիւն է։ Ճանապարհի այլաբանութիւնը, Հոմերոսից մինչեւ մեր օրերը՝ գրականութեան մէջ միշտ նորանոր դրսեւորումներ է վերագտել։ Կինեմատոգրաֆիական դինամիկայի տեսանկիւնից այն ուղղակի անփոխարինելի է կինոյի համար, եւ յաճախ է կիրառւում իբրեւ փոխաբերական հնարք։ Դա «տեսանելի» ճանապարհորդութիւն է դէպի մարդու ներաշխարհ, դէպի «ինքն՝ իրեն»։ 1991ին Վիգէն Զալդրանեանը պաստառ բարձրացրեց Ա. Այվազեանի Մինիոր Մարտիրոսի Արկածները այլաբանական վիպակը, ինքնաճանաչման մի կինոպատում՝ վերնագրուած «Զայն Բարբառոյ...»։ Աշխարհով մէկ բարութիւն սփռող՝ քրիստոնէական կարեւորագոյն արժէքը քարոզող հայ վանականի դեգերումները Ֆիլմի ֆիզիկական եւ հոգեւոր տա-

րածքներում, ուր նա «փորձութիւնների անապատի» միջով անցնում է պայմանական «Գողգոթայի» իր սեփական ուղին, աւարտւում են վերջինիս՝ հայրենի տուն վերադարձով։ Ֆիլմի պատկերային լուծման մէջ «պատկերային ենթախորքի» կիրառման հետաքրքրական մի օրինակ է հետեւեալ այլաբանութիւնը. երբ փորձութիւնների չարանը Մարտիրոսին նաեւ «դժոխքի» միջով է տանում, խաւարի ու կրակի խառնարանի «բնակչութիւնը» պատառաւին ներկայանում է իբրեւ հրավառութեան ներքոյ խրախճանքի տրուած մարդկային ամբոխ։ Իսկ անապատը, որտեղ ծաւալւում է ֆիլմի գործողութեան առաւելագոյն մասը, թէ՛ իրական, թէ՛ այլաբանական տարածք է։ Այսպիսով, Ճշմարտութեան որոնման վերացական գաղափարն այս ֆիլմում որոշակիանում ու իր կերպաւորումն է գտնում՝ ճանապարհի վաղեմի այլաբանութեան միջոցով։

Ինչպէս ուխտագնացութիւնը՝ սինխոր Մարտիրոսի (Զալդրանեան), այնպէս էլ «Լիրիկական երթ»ը Մարիամիկի (Սաթենիկ Տէր-Սահակեանց) համար դառնում է իսկական ինքնաճանաչման ճանապարհ։ Ֆիլմի յարուցած յուզական կշռոյթները պայմանաւորուած են յատկապէս պատկերային ենթախորքի (դեկորների) եւ հերոսուհիների արտաքին նկարագրի միջեւ անհամապատասխանութեամբ, աւելի ստոյգ՝ հակադրութեամբ։ Պանդոկում սեղանի ներքոյ՝ կանանց ոտքերի կողքով հոսող առուակը, այնուհետեւ՝ նրբագեղ մեքենան (վրան ծածանուող անգլիական դրօշով) եւ վայրի տեղանքը, վերջապէս, կանանց բարեվայելուչ, աշխարհիկ հագուկապը եւ ամայի, քարքարոտ բնապատկերը սուր հակադրութիւն են ստեղծում։ Դրա չնորհիւ ընդգծւում է ֆիլմում ծաւալուող գործողութեան պայմանականութիւնը, չնայած, թէ՛ միջավայրը, թէ՛ պատմական ժամանակաշրջանը (Կովկաս, 1918, քաղաքացիական կռիւներ) ստոյգ են, իրական։ Այվազեանը ֆիլմը նկարել է իր իսկ գրած «Կովկասեան էսպերանտօ» պատմուածքի հիման վրայ։

«Լիրիկական Երթ»ի պատումը մի քանի անգամ ընդհատւում է հերոսուհու դանդաղեցուած «երագ-վազքը» դէպի իր ամուսինը, որն ամենեւին էլ այնպիսին չի, ինչ որ թւում է հերոսուհուն (դա բացայայտւում է ֆիլմի վերջում)։ Եւ «լիրիկական» անուանուած երթի բանաստեղծական խտացում հանդիսացող վերոյիշեալ վազքի տեսլապատկերը «կրկնատողի» նման չաղ է տրուած կինօկտաւի տարածքով մէկ։ Այդ բեկորները կինօդիպաշարի օրէնքներով հաւաքւում են մեր մտապատկերում՝ ներհիւսուելով ֆիլմի պատմողական բովանդակութեանը։ Բայց քանի դեռ Մարիամիկը երջանիկ անգիտութեան մէջ է՝ ոգեշնչուած ինքն իր սիրով ու նուիրուածութեամբ, վտանգի եթարկելով թէ՛ իր, թէ՛ մօրաքրոջ կեանքը, նա երեւակայութեան մէջ սրտատրոփ առաջ է ընթանում դէպի սիրելի ամուսնու՝ իր մտապատկերում ամրագրուած կերպարանքը։ Դեռատի կնոջ հաւատարմութիւնից դէպի հիաս-

թափուրթիւն տանող ճանապարհի՝ անձնական պատմութեան միջոցով ֆիլմն ընդհանրացնում է անցեալի տուեալ ժամանակահատուածը, գտելով ժամանակի չապիկին կպած գաղափարները, թողնում եւ ամփոփում է արտաժամանակայինը, համամարդկայինը։ Յեղափոխական կործանիչ, ապամարդկայնացուած գաղափարները վերացարկւում են, նոյնիսկ փոխակերպւում եւ ձեռք բերում համամարդկային բնոյթ, երբ «Լիրիկական երթ»ի վերջում հերոսուհին, հասնելով իր «իդեալ-տղամարդ»ուն եւ համոզուելով, որ նրա համար չկայ ոչ մի սրբութիւն, յանկարծ հասկանում է, թէ ու՛մ պիտի փրկի։ Այն միւս տղամարդը՝ Սաւելին (Միխայիլ Շիրոկով), որ կարող է, ընդունակ է ինչ-որ բանի, ինչ-որ մի գաղափարի (տուեալ դէպքում էական չէ, թէ ինչպէս է փոխուել այդ «գաղափարի» պատմական գնահատականը)։ Ազնուօրէն ծառայել, անգամ նուիրաբերել իր կեանքը՝ այ, նա՛ է փրկութեան արժանի։

Հերոսների պահուածքը, խօսելակերպը ե՛ւ առօրեական են, ե՛ւ այլաբանական. նրանք ժամանակ առ ժամանակ խօսում են «բանաստեղծական այլաբանութիւններով»ով։ Առօրեականն ու բանաստեղծականը՝ բնականօրէն համատեղուած՝ գոյակցում են մէկը միւսի մէջ արտացոլուելով, մէկը միւսին հաւասարակշռելով։ Այդպէս, խիստ վտանգաւոր ուղեւորութիւնից սաստիկ յոգնած մօրաքոյրը՝ Անահիտը (Վիա Էլիաւա) բողոքում է. «Ո՜ր հանճարն է ստեղծել չորս պատը, դա շատ աւելի լաւ է, քան անիւը...»։ Մէկ ուրիշ դրուագում՝ անգլիական մեքենան փոխարինուել է սայլանիւով. տեղի գիւղացու համար սովորական բան է դարձել կրակոցը, իսկ քաղաքից, քաղաքացիական պատերազմի թոհուբոհից փախչող կոստիայի (Էդոնիդ Սարկիսով) համար անհասկանալի է, որ սարերում ամէն ինչ այլ կերպ է։ Նա լսում է չորս կրակոց, իսկ գիւղացին անվրդով առարկում է. «Ո՛չ, մէկը, բայց հեռուից»։ Վերջապէս տեղ են հասնում՝ ամայի տարածք, ուր հերոսներից մէկի խօսքերով ասած՝ «հայեր չկան, իսկ եղածներն էլ իրար չեն սիրում», եւ ինչպէս ասում է ձերբակալուածներից մէկը՝ բժիշկը (Եւգենի Լեբեդեւ). «Այստեղ չեն սիրում սկզբունքային մարդկանց՝ լինեն Աստուած, թէ՝ սատանա»։ Բժշկին հարցաքննող Օսիկ Օսիպովը (Վլադիմիր Քոչարեան), գայրանալով այդ ըմբռստ հոգու աննկունութեան վրայ, ասում է. «Դու այնպէս ես նստել գետնին, ասես կանգնած ես»։

Ամենաանսպասելին այն է, որ այս տեսարանը, ինչպէս եւ ֆիլմում առկայ այլաբանական հնչեղութեամբ երկխօսութիւնները, մօտենալով գրեթէ թատերական պայմանականութեան, բայցեւ պահպանելով կինոլեզուն, ստեղծում են իրական կեանքի պատկերներ։ Անդրադառնանք նաեւ այն դրուագներին, որտեղ ֆիլմի հեղինակ Այվազեանին յաջողուել է ստեղծել առանց խօսքի մասնակցութեան՝ մաքուր կինեմատոգրաֆիական միջոցներով արտայայտուած այլաբանութիւններ։

Այդպիսին է օրինակ՝ այն տեսարանը, երբ պահակակէտում, ամայի կիսաւեր շինութեան շեմին կանգնած յեղափոխական նաւաստիները, զէնքը հպարտ բռնած, իրականում պահպանում են «դատարկութիւնը»։

Մէկ ուրիշ օրինակ. գիւղացիները ոտքի են կանգնել՝ պատրաստ քանդելու, կրակի տալու հարուստների համար իրենց իսկ հայրերի կառուցած տները։ Մի քիչ էլ՝ ու, եթէ չլինէր իրենց հանդարտեցնող իմաստուն, հեռատես մէկը, կործանարար ոգին կը յաղթէր։ Բայց ահա կրակները հանգցրին, որ գիւղում ապրել լինի։ Ջահերը մէկը միւսի ետեւից մարում են, ու պատկերը սեղմուելով հեռանում է, դառնալով լամպի ճրագ՝ պատուհանում։

Մէկ ուրիշ դրուագ. հարցաքննութեան ժամանակ մօրաքրոջ հետ անպատիւ են վարուում՝ տեսարանն ակնարկւում է միայն եւ սահուն անցնում բանտարկեալներին։ Հետեւում են կրակոցներ՝ հաւասարազօր մինչ այդ կնոջ անարգումն ակնարկող տեսարանին. առանց դատ ու դատաստանի գնդակահարւում են մարդիկ։ Եզրափակիչ տեսարանը, թէեւ դրամատիզմով է յագեցած, լիրիկական եւ փոխաբերական չունչ ունի. մարիամիկը յամառօրէն չարունակում է քարշ տալ բանտից իր ազատած «ուրիշ» մարդուն, որն արդէն... մահացած է։

Այսպիսով, «Լիրիկական երթ» կինօնկարում փոխաբերականն առաջադրուած է որպէս եղանակ ու լեզու, միաժամանակ չատ իրական, փաստացի դէպքերը բարձրացել են այլաբանութեան մակարդակի։ Ֆիլմի կարեւոր առանձնայատկութիւններից է նաեւ այն, որ այն բաւականին «լուռ» է, չնայած նրանում ծաւալուած իրադարձութիւնների աւերիչ թափին։

«Լիրիկական երթ» ֆիլմում խաղաղուած գիւղի տներից մէկում վառած լամպը, որ կեանքի չարունակութիւն է ենթադրում, նոյն Այվազեանի «Վառած Լապտեր» (1983) ֆիլմում արդէն վերացարկւում է՝ դառնալով ամէն մարդու հոգու ճրագ, առաքելութիւն։ «Ամէն մարդ պիտի իր ֆանարը վառի»՝ սա արդէն փողոցի լապտերները վառող ու լուսադէմին դրանք հանգցնող Մկրտիչ Մկրտումեանի (Աւետաւոր Լորիա[15])՝ Թիֆլիսի «պոէտի» հաւատամքն է, որի բացայայտ, բայց միամիտ «գրագողութիւնը» հանդիսատեսի ներողամտութիւնն է միայն հայցում։ «Վառած Լապտեր»ն իր դեղագիտական կառուցուածքով կինօաւակ է՝ նուիրուած Թիֆլիսցի նկարիչ Վանօ Խոջաբեկեանին (Վլադիմիր Քոչարեան)։ Ֆիլմն ամբողջովին բանաստեղծութիւն է, երաժշտութիւն եւ հնչում է որպէս մահերգ-մահախօսական։ Նրանում այդ քաղաքի համար ոչ-բնորոշ լռութիւն կայ, թէեւ պատկերաշարում ժամանակ առ ժամանակ կինօոներ են յայտնւում, ձկնորսներ, եւ հնչում է ուրախ մեղեդի։ Ընդ որում, կուր գետի վրայ նկարահանուած ձկնորսների դրուագը ինչ-որ տեղ հակադրւում է «Պեպօ»ի համանման

տեսարանին, ուր Թիֆլիսը կենսախինդ է, տօնական։ Այստեղ այն աւելի տխուր քաղաք է ներկայանում։ Թւում է՝ եթէ Թիֆլիսի փողոցները լայն պողոտաներ լինէին այն օրերին, միեւնոյն է, ֆիլմում պիտի նեղ երեւային[16]*։ Տարածութիւնը սեղմուած է, ինչպէս արուեստագէտի հոգին, որին ոչ մի կերպ չի յաջողւում «բոլորի նման» լինել։ Ու երբ նկարիչը փորձում է հաճոյանալ հարուստ, «պատուաւոր» մարդուն (Հենրիխ Ալավերդեան)՝ յանուն կնոջ (Վիոլետա Գէորգեան) ու երեխաներին, նկարելով քաղքենիների ճաշակին վայել նկար, այդժամ սեղանի մօտ են յայտնւում տանտիրոջ աղջիկները, որոնք այդ տեսարանում չատ նման են կտաւի վրայ պատկերուած դեկորատիւ, կեղծ կարապներին։ Նրանց կողքին է նաեւ ասես «համր կինոյի աստղ» յիշեցնող տանտիրուհին (ոճազարդում)։*

Ֆիլմ-առակապատումը տրոհուած է մասերի. «Վանօն գնում է դրախտ», «Վանօն գնում է դժոխք», «Թէ ինչպէս Վանօն մնում է Վանօ»։

«Դրախտ» նա մտնում է Քրիստոսի նման՝ աւանակի վրայ նստած։ Այստեղ մարդիկ ապրում են նախաստեղծ ազատութեան մէջ՝ մի տեսարան, որ արձագանգում է թափառաշրջիկների կեանքին։

«Դժոխքը» այս ֆիլմում ոչ այլ ինչ է, քան մարդկանց խաբելով՝ գեղծարարութեամբ փող աշխատողների աշխարհը։ Նրանց սարքած ներկայացումը ձեւաւորուած եւ բեմադրուած է տիպական թիֆլիսեան տարբերակով։ Արտասովոր «գրագիտութեամբ» աչքի ընկնող ծիծաղելի ցուցանակներն անմոռանալի բներանգ են ստեղծում։ Իսկ «դժոխքի առաքեալները» ոգեւորուած են իրենց գտած գանձով. «Էս տեսակ դէմք Թիֆլիսում էլ չես ճարի, տեղով դաւերիա (վստահութիւն - Ս.Գ.) է» (խօսքն, իհարկէ, Վանոյի դէմքի մասին է)։ Երբ Վանօն դարձեալ չի բարեւում՝ «մնում է Վանօ», արհամարհուած «պատուաւոր» մարդու հրամանով, կողպէքը նորից է յայտնւում խանութի դռանը՝ այս անգամ անդառնալիօրէն։ Պատկեր-շրջանակում ընդգրկուած կողպէքը տարողունակ առարկայ-այլաբանութիւն է այս երկի ենթախորքում՝ ներկայացնելով այն դրութիւնը, որի մէջ յայտնուել է Վանօն։

Վերջում էլի «Վանօն մնում է Վանօ» եւ աւանդում հոգին։ Այստեղ ձուլւում են առաջին եւ վերջին դրուագները՝ փակւում է շրջանը։ Առաջին տեսարանում քաղաքի բակերից մէկի ամայի բնապատկերը լցւում է դուդուկահարներով ու գուռնաչիներով։ Պարբերաբար հնչող մահերգը ժամանակ առ ժամանակ փոխարինւում է «չարմանկա» կոչուող գործիքի թեթեւութիւն բերող մեղեդիով։ Այդ չարմանկա նուագողն այցելում է բակերը, ասես մարդկանց համոզելու, թէ «աշխարհը ծիծաղելի բան է»՝ ֆիլմի հերոսներից մէկի խօսքերով ասած։ Վերջին տեսարանում, կինօնկարի նախադրութիւնից մեզ ծանօթ պատարագ մատուցողները, որ անտիկ երգչախմբի են նման, ձուլւում են Վանօ

Խոջաբեկեանի գծանկարային ստեղծագործութիւնների հարթութիւններից պոկուող, կենդանացող կերպարների՝ Թիֆլիսի բնակիչների հետ, այնուհետեւ առաջ գալիս թափանցիկ կրկնապատկերով՝ ասես, իրենց հոգիներով լցնելով թիֆլիսեան պատշգամբները։

Չնայած որ ֆիլմը, Խոջաբեկեանի նկարչութեան նման, չեչտակիօրէն պայմանական է, իսկ նրա տարածութիւնը՝ ներփակ, այդուհանդերձ, կինոյի իրապաշտական միջոցներով է արտայայտում արուեստագէտի յաւերժական դրաման՝ ոգեղէնի եւ նիւթականի բախումը։ Ա. Այվազեանի այս երկու կինօնկարներն առանձնանում են հայկական սինեմարուեստի աւանդոյթներից՝ միաժամանակ կրելով դրանք իրենց ներսում։

Հետաքրքիր եւ ինքնատիպ է նաեւ կինօրեժադրիչ Սուրէն Բաբայեանի (ծն. 1950) մուտքը հայ կինո։ Նրա «Արարման Ութերորդ Օրը» (ըստ Ռ. Բրեդբերիի պատմուածքների, 1980) փաստօրէն հայ կինոյում ֆանտաստիկայի՝ մոտապատրանքի սեռով ֆիլմ ստեղծելու առաջին յաջողուած փորձն է։ Իսկ այդ սեռն ինքնին, ըստ էութեան, այլաբանական է։ Այդօրինակ ստեղծագործութեան հեղինակը, խօսելով այլ աշխարհների, այլ արարածների մասին, վերջիվերջոյ, խօսում է մարդկային յարաբերութիւնների՝ մե՛ր աշխարհի ու մե՛ր մասին, սակայն այլաբանօրէն։ Բաբայեանն իր յետագայ գործունէութեան ընթացքում եւս շարունակեց գնալ կինեմատոգրաֆիական այդ լեզուի իւրացման ճանապարհով։ Իր յաջորդ, «Սիրամարգի ճիչը» (Միքայէլ Դովլաթեանի (ծն. 1958) հետ համատեղ, 1982) ֆիլմի պատկերակարգը, ոճն այնպիսին էր, որ որոշակի իրերը ճեռք էին բերում փոխաբերական երանգ, ասես, պատմում էին իրերի դրութեան մասին՝ արար աշխարհում։ Նման ընդհանրացման գնալ թոյլ էր տալիս եւ ֆիլմի բովանդակութիւնը՝ պատմութիւնը երիտասարդ բժշկի մասին, որ կեանքը նուիրել է ծանր, անբուժելի հիւանդութեան դէմ պայքարի միջոցների որոնմանը։ Ֆիլմի հնչիւնաշարում չեչտուած «սիրամարգի ճիչը» ոչ-այնքան յուսահատութեան ճիչ է, որքան՝ աշխարհում ներդաշնակութեան կորստեան ազդարար։ Իսկ այդ ենթախորքին արդէն անողոք հիւանդութիւնն ընկալւում է իբրեւ համատարած աղէտի հետեւանք, եւ ոչ թէ՝ պատճառ։ Այդուհանդերձ, չնայած իր արժանիքներին, ֆիլմի գործողութիւնը կրում է վերացական, փոքր-ինչ վերամբարձ բնոյթ։ Հեղինակներին չի յաջողուել հասնել կինօփոխաբերական այն ցանկալի մակարդակին, որի հարթութեան վրայ ոչ միայն անիրականը դառնում է իրական, այլեւ՝ իրականն է դառնում անիրական։

1987ին Բաբայեանը վերադառնում է Բրեդբերիի ստեղծագործութիւններին՝ նկարահանելով «13րդ Առաքեալը»։ Դա փիլիսոփայական առակ է այն մասին, թէ ո՞ւր կարող է հասնել բարոյականի սահմաններից անդին ծաւալուող գիտութիւնը։

Բաբայեանի յաջորդ՝ «Արիւն» (ըստ Վահագն Գրիգորեանի «Փակ Սենեակ» վիպակի, 1990) հոգեբանական ֆիլմի հերոսին հնարաւորութիւն է ընձեռւում ասես նորից ապրել սեփական կեանքը։ Իսկ 1988ին նկարահանուած՝ Ա. Այվազեանի «Գաղտնի խորհրդականը» երեւակայական պատմութիւն է գաղտնի խորհրդականի մասին, որ վերակենդանացել եւ յայտնուել է մեր ժամանակներում։ Այս երկու ֆիլմերի մտայղացումը, գրական հենքը թերեւս աւելի հետաքրքիր էր եւ այլաբանական կերպաւորման աւելի մեծ ներոյժ ունէր, քան ունեցաւ կինեմատոգրաֆիական մարմնաւորումը։

1995ին Միքայէլ Դովլաթեանը նկարահանում է «Լաբիրինթոս» ֆանտասմագորիան՝ ուրուացնորքը (բեմագիրի հեղինակ Էդուարդ Խալդ-Ասոյեան, 1995)։ Պոկուել է ժամանակի շղթան. հետապնդող եւ հետապնդուող մարդիկ՝ այն բաց թողած՝ դարձել են լաբիրինթոսում մոլորուած ուրուականներ։ Սակայն այս ֆիլմում եւս ձեռք չի բերուել իրականի եւ անիրականի վերոյիշեալ դիմադարձումը։

Այլաբանական հունի մէջ են նկարուած նաեւ Բաբայեանի «Խենթ Հրեշտակ» (որը յետոյ վերանուանուեց «Ցիտուսին Որոնելիս», 1993), Էդգար Բաղդասարեանի «Սեւ Պատ» (1997), Լիւդմիլա Սահակեանցի «Նախաչեմին» (2002) ֆիլմերը, ինչպէս նաեւ Նարինէ Մկրտչեանի եւ Արսէն Ազատեանի «Պահապան Հրեշտակ» (1990), Էդգար Բաղդասարեանի «Խաղեր» (1990), Արթուր Սարգսեանի «Թիրախ» (1991), Ա. Բոյաջեանի «Անդրճայնութիւն» (1992), Տիգրան Խզմալեանի «Դաս» (1992), «Սեւը եւ Սպիտակը» (1996), Սուրէն Բաբայեանի «Յ.Գ.» (1993) կարճամետրաժ ֆիլմ-առակները (ֆիլմ-պարաբոլ)։

Բոլոր այս կինօնկարները, գեղարուեստական տարբեր մակարդակներ ունենալով հանդերձ, կրում են այլաբանական կինեմատոգրաֆի տարրեր, որով եւ հիմնականում բնորոշւում է 1980ականների վերջի եւ մանաւանդ 1990ականների՝ յետխորհրդային ժամանակաշրջանի առաջին տասնամեակի հայ կինօն։

Վերոյիշեալ ֆիլմերի մէջ իր ձեռագրով եւ ժամանակի ոգու անուղղակի արտայայտմամբ առանձնանում է Էդգար Բաղդասարեանի (ծն. 1964) «Սեւ Պատ» ֆիլմը, որի նախնական վերնագիրը «Հոսք» էր։ Սեւ-սպիտակ ժապաւէնով նկարահանուած այս ֆիլմում գերակշռում է երկխօսութեան, առհասարակ մարդկային շփման անհնարինութեան թեման։ Դեռեւս Բեքէթի թատրոնում լռութիւնը դարձել էր երկխօսութեան գոյակերպ։

Ֆիլմում, ինչպէս եւ մեր ժամանակներում, հաղորդակցման մէջ մտնելու անհնարինութիւնը հիւանդագին բնոյթ է կրում։ Նոր հազարամեակի չեմին յայտնուած մարդը շփոթահար է, ահաբեկուած՝ տարերային իրարայաջորդ աղէտներից ու հասարակական անկայուն քաղաքական իրավիճակներից։ Նա կորցրել է ներդաշնակութիւնը, բնու-

թեան հետ ունեցած կապը, վստահութիւնը վաղուայ օրուայ նկատմամբ։ Գերմանական արտայայտչապաշտութեան օրինակն ապացուցում է, որ կինոյում իրականութիւնից փախուստն անգամ կարող է արտայայտել ժամանակի սոցիալ-քաղաքական, հոգեբանական մթնոլորտը, իսկ որոշ դէպքերում, է՛լ աւելի ցայտուն պատկերել այն։ Այդպէս, պայմանական մի տարածքում, «Մեւ Պատ»ի առաջ յայտնուած հերոսները (տղամարդ եւ կին) ունեցել են ներդաշնակ, աշխոյժ մանկութիւն, նկարահանուած դրուագներն էլ (ինչպէս եւ հմտօրէն օգտագործուած ժամանակագրութիւնը, որտեղ յառնում է 1960ականների Երեւանը) շարժունակ են։ Ամենակարեւորը, սիրոյ ներկայութիւն կայ այդ տեսարաններում։ Հաստնութիւնը պատկերուած է առաւելապէս անշարժ պատկերներով։ Եթէ ներկան անխուսափելիօրէն բախւում է անցեալի հետ, ապա այդ ժամանակային բախումը ֆիլմի կառուցուածքում արտայայտուել է նաեւ կինօլեզուի առումով. մանկութիւնն ու հասունութիւնն, ասես, երկու տարբեր գեղագիտութեամբ, տարբեր ժամանակների պատկանող ֆիլմերից լինեն վերցուած, իսկ դրանց պայմանական սահմանագիծ դարձել է աղէտը՝ տղայի մօր կորուստը։ Այդ ոչինչ չունեցող հերոսները յայտնուել են տարածութիւնից եւ ժամանակից դուրս՝ «Մեւ Պատ»ի առաջ, սեւ անօդ դատարկութեան մէջ, ուր իրենց իսկ պնդմամբ ոչինչ տեղի չի ունենում։ Զկայ լինելութեան պայմանը։ Իսկ դրսում անտարբեր անցնում, երեւի «ապրում» է մարդկային հոսքը։ Այդ «հոսք» կոչուածը տարօրինակ «օրգանիզմ» է, մարդկանց հոսող զանգուած, որ արտաքին աշխարհի փոխաբերական, վերացական կերպար-պատկերն է՝ արտայայտուած կինոյի որոշակի առարկայական լեզուով։ Ֆիլմի տարածքում բացառւում է ոչ միայն չփումը երկու սիրող էակների միջեւ, այլեւ՝ նրանց եւ արտաքին աշխարհի հաղորդակցումը։

Մեկուսացած աշխարհները չփման մէջ մտնել չեն կարող, միմեանց օգնել չեն կարող։ Երկուսի առջեւ (թէ՛ միջեւ) սեղանին դրուած ջրով լի բաժակը հերոսների անզօրութեան պայթիւնից ցնցւում է, պոկւում, մի փոքր վեր թռչում։ Այդ թռիչքի «մասնատումից» մոնտաժուած ջրի շիթերի տրոհման անընդհատութիւնը, որ ընդմիջւում է սեղանին խփուող ձեռքի յուսահատ հարուածով, դառնում է ժամանակի խզումների եւ յուսալքման այլաբանական մոտալ կերպար՝ մեխուելով հանդիսատեսի մտապատկերում։

Թէպէտ ակնյայտ է բեմադրիչի «կինոյի զգացողութիւնը», ինչպէս եւ ժամանակի՝ «դարաշրջանի զգացողութիւնը», ֆիլմում առկայ է նաեւ մարդկային յուզական, զգայական շերտը, պէտք է ասել՝ ֆիլմը որոշ առումով մտահայեցողական կառոյցի ճանապարհով է ստեղծուած։ Կեանքի, ժամանակի ցաւոտ կէտերի կողքին չօշափւում է նաեւ

կինոյի համար այդքան անհրաժեշտ կենսականութեան պակասը, որի արդիւնքը կեանքի արհեստական «վերակառուցումն» է։

Նոյնը կարելի է ասել Տիգրան Խզմալեանի (ծն. 1963) «Սեւ Եւ Սպիտակը» կարճամետրաժ ֆիլմ-առակի մասին, որն առանց երկխօսութիւնների՝ ինչ-որ տեղ համր կինոյի խորհրդանշական միջոցներով է պատմում պատերազմի ողբերգական հետեւանքների մասին։ Գիւղում ապրող եօթ կանանցից միայն մէկի ամուսինն է վերադառնում։ Այրիացած կանանց նման «այրիացել» է նաեւ հողը... Վերնագիրը յուշում է հեղինակի համար այստեղ սկզբունքային հանդիսացող՝ սահմանազատող անխառն պայմանականութեան մասին։ Ֆիլմի հերոսների համար կեանքն իսկապէս կորցրել է իր գուներանգները՝ դառնալով սահմանազատուած ուժերի սեւ-սպիտակ աշխարհ։ Իր այլաբանական պատումն առանց խօսքի, զուտ տեսողական արտայայտչամիջոցներով կառուցելու կարողութիւնը գուցէ ինչ-որ տեղ արդարացնում է հեղինակի՝ մարդկային փոխյարաբերութիւնների աշխարհի այդչափ վերացական պատկերումը։ Սակայն ակնյայտ է նաեւ, որ այսօրինակ ֆիլմերը ոչ այնքան կեանքն են պատկերում, որքան՝ նրա մօտաւոր, խիստ պարզեցուած պայմանական գծապատկերն են վերարտադրում։ Ամէն դէպքում, «Սեւ Եւ Սպիտակը» ամբողջական է, աչքի է ընկնում ոճի միասնութեամբ։

[9] Նոյն, էջ 97։ Մալատիյան (Մելիտինէ) արաբագիր այլ մատենագիրներ նոյնպէս տեղադրում են Ա-Սուղուր Ալ-Ջազարիյա սահմանային գօտում (օրինակ՝ *Biblioteca*, P. VII, էջ 106-107)։ Պատմական Փոքր Հայքի հիւսիսային բոլոր գաւառները Բիւզանդիայի կազմում էին։ Իբն Խուրդադբհը Ա-Ռումի քաղաքների թուում յիշատակում է Կուլունիյան (Կոլոնիա) ու Սաբաստիյան (Սեբաստիա, տե՛ս՝ ibid, P. VI, էջ 108 եւ 117)։

[10] Նոյն, P. I, էջ 180-181, P. II, էջ 237։ Այս եզրը կարելի է հանդիպել նաեւ միւսների մօտ։

[11] Նոյն, P. VI, էջ 76, 95։ Մայյաֆարկինը (Նփրկերտ) ու Կարդան (Կորդուք) յօդուածում յիշատակուած միւս մատենագիրները նոյնպէս տեղադրում են Ալ-Ջազիրա նահանգում (օրինակ՝ ibid. P. VII, էջ 106)։

[12] Ադրբայջանը Արաբական Խալիֆայութեան կազմում ինքնուրոյն նահանգ էր, որն զբաղեցնում էր այսօրուան Իրանական Ադրբեջանի (պատմական Ատրպատականի) տարածքը։

[13] Նոյն, P. VI, էջ 119։

[14] Իբն Ռուստայի (ibid, P. VII, էջ 106), Կուդամայի (ibid, P. VI, էջ 244) Իբն Ալ-Ֆակիհի (ibid, P. V, էջ 284-285), Ալ-Իսթախրիի (ibid, P. I, էջ 181-182) եւ Իբն Հաուկալի (ibid, P. II, էջ 239) մօտ։

[15] Նոյն, Vol. V, էջ 296։

[16] كتاب الفتوح لابن محمد احمد بن اثم الكوفي - *Kitabu'l Futuh by Abu-Muhammad Ahmad Ibn Atham Al-Kufi*, ed. by Abdu'l Muid Khan, Sayid Abdu'l Wahhab Bukhari, 8, Hyderabad, 1395 A.H. / 1976 A.D., էջ 82. Ինչպէս շատ կայսրութիւններում, Խալիֆայութեան վարչական բաժանման հիմքում էթնիկ սահմանները հաշուի չեն առնուել։ Խալիֆները առաջնորդուել են զուտ պետական շահերից։ Դրա վառ ապացոյցն է այն, որ հայաբնակ մի շարք գաւառներ յայտնուեցին հարեւան Ադրբայջան, կամ Ալ-Ջազիրա նահանգների կազմում։

[17] Claude Mutafian & Eric Van Lauwe, *Atlas Historique de l'Arménie. Proche-Orient et Sud-Caucase du VIIIe siècle av. J.-C. au XXIe siècle*, Paris, 2001, էջ 45։

[18] Յարութիւնեան, էջ 56-57 եւ 58-59։

[19] *Այն, որ Արգանը Արմինիյայի կազմում էր, նշում է ոչ միայն Իբն Ռուստան, այլեւ՝ Իբն Հաուկալը (տե՛ս՝ Biblioteca,* P. II, *էջ* 344)։

[20] كتاب فتوح البلدان تاليف الامام ابي العبّاس احمد بن يحيى البلاذرى — *Liber Expugnationis Regionum Auctore Imamo Ahmed Ibn Jahja Ibn Djabir al-Beladsori,* ed. M. de Goeje, Lugduni Batavorum, 1866, *էջ* 194։

[21] *Biblioteca,* P. VI, *էջ* 122։

[22] *Նոյն,* P. V, *էջ* 286, 287. *Նաեւ՝* Nekatoriye Neopublikovanniye Glavy Truda Ibn Al-Fakikha "Akhbar Al-Buldan" po Meshkhedskoi Rukopisi *թրգմ՝ Ա. Ժամկոչեան, Երեւան,* 1979, *էջ* 100a (89)։

[23] *Biblioteca,* P. VII, *էջ* 364։

[24] *Ահա թէ ինչ է այդ մասին վկայում Իբն Ալ-Ֆակիհ՝ Ահմադ Իբն Վադիհ (Ալ-Եա՛կուբի).* «... յայտնեց [ինձ այն մասին], որ ևս երկար տարիներ է ապրել Հայաստան երկրում (*այսինքն Արմինիյայում - Ա.Շ.*) եւ ատենադպիր եղել նրա չատ արքաների (*այսինքն՝ իշխանների - Ա.Շ.*) ու կառավարիչների մօտ...» (*Biblioteca,* P. V, *էջ* 290-1)։

[25] *Տե՛ս՝* تاريخ احمد بن ابى يعقوب بن جعفر بن وهب ابن واضح الكاتب العبّاسىّ المعروف باليعقوبى *Ibn Wadhih Qui Dicitur Al-Ja'qubi, Historiae,* ed. M. Houtsma, 2, Lugduni Batavorum, 1883, p. 378.

[26] تاريخ خليفة بن خيّاط \ حققه وقدّم له اكرم ضياء العمرى - *The History of Khalifah ibn Khayyat,* ed. by Akram Diya' al-Umari, Nagav, 1386–1387 A.H. / 1967 A.D. *էջ* 436.

[27] *Ի դէպ, Զորբորդ Հայք եզրը հանդիպում է տուեալ ժամանակաշրջանի ոչ միայն արաբական մատենագրութիւնում, այլեւ՝ ասորական եւ բիւզանդական։*

[28] Ter-Gevondian, *էջ* 166 *եւ քարտէզ։*

[29] Garsoian, *էջ* 119 (*քարտէզ թիւ* 8)։

[30] *Biblioteca,* P. V, *էջ* 290-91։

[31] *Նոյն, էջ* 291։

[32] *Սուրէն Երեմեան, Հայաստանը Լատ «Աշխարհացոյցի» (Փորձ VII Դարի Հայկական Քարտէզի Վերակազմութեան Ժամանակակից Քարտէզագրական Հիմքի Վրայ), Երեւան,* 1963, (*Յատկուած Բ.*), *էջ* 116-120։

THE ADMINISTRATIVE AND TERRITORIAL DIVISION OF THE ARAB PROVINCE OF *ARMINIYA* AND ITS FRONTIERS ACCORDING TO ARABIC SOURCES

(Summary)

ARSEN K. SHAHINYAN
a_shaginyan@mail.ru

According to the first Arabic geographers and historians (9th-10th centuries), Armenia (arab. *Arminiya*), Eastern Georgia/Kartli (arab. *Jurzan*) and Caucasian Albania (arab. *Ar-Ran*) constituted the single province of *Arminiya* in the Arab Caliphate (701–886).

On the north *Arminiya* bordered the Khazar Khaganate (delimited by the Great Caucasian Mountain range). It coincided with the state borders of the Arab Caliphate. In the north-west and the west *Arminiya*'s neighbor was the Byzantine Empire (delimited by the Likh, Meskheti and Lazistan mountain ranges). In the south-west *Arminiya*'s frontiers reached to the fortified Arab border zone of As-Sughur (near the city of Arshamashat). The Arab province of al-Jazira (Upper Mesopotamia) flanked its southern border (delimited by the Armenian Taurus and Kurdish mountains). The Arab province of Adharbayjan (delimited by the Kotur-Zagros mountain range and the Kotur, Araxes and Kur rivers) constituted its south-eastern neighbor, and on the east *Arminiya* was washed by the Caspian Sea.

Basing his suggestions on Arabic sources, the author suggests certain modifications to the maps, which are currently in circulation. He recommends including the Arzan region in the *Arminiya* province, while excluding the five upper regions of Persoarmenia and the three eastern regions of Vaspurakan. He notes, however, that the Caliphate had not divided its conquered areas according to ethnic criteria. Rather he underlines that several areas which were populated by ethnic Armenians were combined with non-Armenian areas.

On another note, the author refutes the long-standing view that *Arminiya* consisted of four administrative units, namely *Arminiya I* (i.e. Albania), *Arminiya II* (i.e. Kartli), *Arminiya III* and *Arminiya IV* (i.e. Armenia). The author supports his argument by referring to the distinguished Arab historian and geographer Al-Ya'kubi (d. 897). The latter was very familiar with Armenia, as his grandfather, Wadih 'Abbas, had been its governor in 775 and he himself had served there during his youth. Al-Ya'kubi testifies that *Arminiya* consisted of three administrative units, namely *Arminiya I* (i.e. Armenia) with Dabil/Dvin as its capital, *Arminiya II* (i.e. Albania) with Bardha'a/Partav as its capital and *Arminiya III* (i.e. Kartli) with Tiflis/Tbilisi as its capital.

Finally, the author calculates the area of the province of *Arminiya*, which sums up to 271,032 sq. kms.

ՆԻԲԵԼՈՒՆԳՆԵՐԻ ԵՐԳԸ ՀԱՅԵՐԷՆ

ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ
vachik_grigorian@mail.ru

Գերմանական էպոսի՝ Das Nibelungenliedի վերնագիրն առաջացել է առասպելական գանձերը հսկող դիցաբանական արարածների անունից: Այն գրուել է մօտաւորապէս 1200ին, առաջին անգամ հրատարակուել՝ 1757ին:

Նիբելունգների Երգի առաջացման հարցում ընդունուած է Անդրէաս Հէօսլէրի տեսակէտը, թէ փոքրածաւալ դիւցազնական երգերն ընդարձակուելով ի վերջոյ ստեղծում են ծաւալուն դիցաբանական պատմութիւններ:

Այսօր հայ ընթերցողն ունի Նիբելունգների Երգը բնագրային թարգմանութեամբ[1], ինչը նրան հնարաւորութիւն է տալիս աւելի հանգամանօրէն ծանօթանալու արեւմտեան քաղաքակրթութեան բացառիկ երկերից մէկին:

Ի՞նչն է այն առանցքային իւրայատկութիւնը, որ տարբերում է Արեւելքն Արեւմուտքից: Այսօր առաւել քան ակնյայտ է, որ Արեւելքն ընդհանրական մտածողութեան եւ հոգեբանութեան կրողն է՝ ի հեճուկս Արեւմուտքի անհատապաշտ մտածողութեան: Գերմանական մշակոյթը՝ որպէս անհատապաշտական մեծագոյն ոգորումների արդիւնք, առանձնանում է արեւմտեան քաղաքակրթութեան մէջ հենց այդ որակով: Անհատապաշտական մտածողութիւնը նրանց հասցրեց միասնական պետականութեան անհրաժեշտութեան գիտակցութեանը. նրանք ստեղծեցին կենտրոնաձիգ իշխանութիւն: Այսօր դժուար է միանշանակ պնդել, թէ միայն ԺԹ. դարն էր, որ Գէօթէի, Հեգէլի, Վագնէրի ստեղծագործութիւններով որոշակի հիմքեր ստեղծեց Ի. դարի նացիստական Գերմանիայի առաջացման համար: Գերմանացի գրողը, երաժիշտը, բոլորը միտուած էին միասնութեան գաղափարին, նրանք աշխատում էին Գերմանիայի միաւորման համար. ազգային եսակենտրոնութեան համար մշակոյթը բաւականաչափ ջանքեր էր ի գործ դրել: Արդիւնքում իրականութեան մէջ այս ամէնն այլ մարմնաւորում ստացաւ. ողջ գերմանական մշակոյթը երկար ժամանակ ջանքերի գործադրմամբ ի վերջոյ ձեւաւորեց մի երկիր, որտեղ կայացաւ ֆաշիզմը: Բայց այդ մշակոյթի նպատակը իհարկէ ֆաշիզմը չէր, այլ մարդասիրութիւնը, հումանիզմը եւն.: Այդ մշակոյթը չէր կարող եւ չկորցրեց հիմնական որակները. Գերմանիան ընդունեց ֆաշիզմի սխալները, չուրացաւ իր պատմութիւնը, որպէսզի կարողանայ ճիշտ ապրել եւ հետու մնալ ապագայի սխալներից:

Այս ամէնի հետ ակնյայտ է, որ ազգային միասնութեան գաղափարը կարեւոր գործօն էր գերմանացիների համար դեռեւս միջնադարում։ Բանն այն է, որ գերման (ֆրանկներ, գոթեր, բուրգունդներ եւն.) եւ սկանդինաւեան ժողովուրդների շրջանում տարածուած Նիբելունգեան ասքերի բաւականաչափ հարուստ համակարգը ձգտում էր միասնականացման-ամբողջացման։

Երգը բաղկացած է երկու հաւասար մասերից։ Առաջինում պատմւում է բուրգունդական արքայ-եղբայրների՝ Գունտէրի, Գերնոտի, Գիզելհէրի եւ նրանց քրոջ՝ Քրիմհիլդի, նաեւ Զիգֆրիդի մասին։ Վերջինս Վորմս է եկել եւ Քրիմհիլդին կնութեան առնելու նպատակով ամէն ինչ անում է արքայեղբայրների մտերմութիւնը շահելու համար։ Ի վերջոյ խորամանկութեամբ կարողանում է իրագործել Գունտէրի եւ Իսլանդայի թագուհի Բրունհիլդի ամուսնութիւնը։ Դրա դիմաց Զիգֆրիդը հնարաւորութիւն է ստանում կնութեան առնել արքայաքոյր Քրիմհիլդին։ Զիգֆրիդի կործանման պատճառը երկու թագուհիների՝ կնոջ՝ Քրիմհիլդի եւ վերջինիս հարսի՝ Բրունհիլդի վէճն է, որտեղ պարզւում է Զիգֆրիդի ի գործ դրած խարէութիւնը։ Վիրաւորուած Բրունհիլդի համար վրէժխնդիր է լինում ասպետ Հագէնը։ Երգի երկրորդ մասում պատմւում է ամուսնուն կորցրած Քրիմհիլդի սարսափելի վրէժի պատմութիւնը։ Նա ամուսնանում է հոների արքայ Էցէլէլի հետ, իր մօտ է կանչում եղբայրներին, բուրգունդ ասպետներին եւ սպանում նրանց։ Վրէժի զոհ են դառնում բոլոր ասպետները, հոնաց իշխանները, գինուորները, նաեւ՝ Քրիմհիլդը։

Այդ պատմութիւնները ծաւալւում էին երկու հիմնական թեմաների շուրջ։ Զիգֆրիդի եւ Բրունհիլդի սիրոյ պատմութիւն - հերոսի եղերական մահ եւ՝ բուրգունդական արքայական տան կործանում։ Զիգֆրիդի հետ կապուած կախարդական թեմաներն աւելի ամբողջական են սկանդինաւեան տարբերակներում եւ գերմանական «Երգ Եղջիւրաւոր Զիգֆրիդի Մասին» ասքում։

Նիբելունգների Երգը այս սիւժէտային ծաւալումների միասնութեան արդիւնքն է, որին ձգտել է Երգի անյայտ բանաստեղծը։ Ամենահին ձեռագրերը կապւում են ԺԳ. դարի սկզբի, ամենաուշ ձեռագիրը՝ ԺՉ. դարի հետ։ Թէեւ հեղինակը միասնական տաղաչափութեամբ կարողացել է ստեղծել ամբողջական պատմութիւն, աւանդական պատումը հարստացնելով նոր կերպարներով ու դէպքերով, այսուհանդերձ ազգի միաւորման խնդիրը իրականացուել է մասամբ, ինչի արդիւնքում այդ միաւորման մէջ բացակայում է «մէկ միասնական ազգային գաղափարը»։ Վերջին հաշուով սա եւս կապւում է միջնադարեան Գերմանիայի աւատատիրական մասնատուածութեան հետ։

Այս ամէնի արդիւնքում՝ որպէս ամենաբնորոշ որակ, Նիբելունգների Երգում կարեւորւում է հերոսների անհատական կեանքը։ Իրակա-

նում այս դիւցազնավէպը հենց անհատական ապրումների, մղումների, վրիժառութեան զգացողութեան մասին է։ Այն առնչւում է անհատա-պաշտական աշխարհայեացքին։

Եթէ հոմերոսեան Իլիականը կարող էր ծնունդ առնել Աքիլլէսի զայրոյթի պատմութիւնից, իսկ Նիբելունգներում կնոջ վրէժի պատմութիւնը կարող է դառնալ գերակայ խնդիր, ապա Սասնայ Ծռերում ժողովրդի ընկալման անպարագիծ լայնութիւնը չէր հանդուրժի նման «նեղ», «անհատական» խնդիրներ։ Դրանք հայկական դիւցազնավէպի համընդհանուր ժամանակի հոսքում պարզապէս առանձին գծեր կարող էին լինել եւ ոչ թէ կը դառնային գործողութիւնն առաջ մղող ազդակ եւ կամ հիմնական նպատակ։

Ամէն պարագայում Նիբելունգները, Ռոլանդի Երգ[2], Երգ Իմ Սիդի Մասին[33] դիւցազնավէպերից տարբերւում է հարուստ դիւցազնական միջավայրով, որտեղ առկայ են ժամանակային մի քանի շերտեր՝ դիցաբանական, պատմական ենթաշերտերով։ Միմեանց են չաղախուած հեթանոսականն ու քրիստոնէականը։ Այսպէս, եթէ գանձասիրութիւնը եւ խրախճանասիրութիւնը հեթանոսական բնոյթ ունեն (Երգը խրախճանքը համարում է պալատական կենցաղի բարձրակէտ), ապա եկեղեցու հանդէպ դրսեւորուած վերաբերմունքը քրիստոնէական բնոյթ ունի։

Սասնայ Ծռերում նախնական առասպելների հիմքի վրայ ձեւաւորուել են գրեթէ բոլոր ճիւղերը։ Սանասարն ու Բաղդասարը կապուած են ջրային տարերքի հետ, իրենց գէնքն ու զրահը ձեռք են բերում ծովի յատակից։ Նոյնը կարող ենք ասել նաեւ Դաւիթի ճիւղի մասին, որի հիմքում ընկած է ամպրոպային կռուի հնագոյն առասպելը։ Այս հերոսն իր հրեղէն ձիով ու կայծակէ թրով անձնաւորում է տիեզերական լուսաւոր ու արդար հերոսին։ Մեծ եւ Փոքր Մհերի ճիւղերի հիմքում եւս հին հայկական ու նաեւ հնդիրանական երկնային լոյսի եւ արեգակի աստուած Միհրի առասպելական թեմաներն են։ Հայոց դիւցազնավէպում հերոսների անպարտելի հերոսականութեան ոգին «ամէնից առաջ սերում ...[են] նրա վաղ առասպելաբանական նախահիմքերից, Սասնայ հերոսների առասպելական նախատիպերից, որոնք եղել են իրենց հակոտնեաների դէմ մաքառող եւ միշտ յաղթանակող աստուածներ կամ դիւցազուններ»[4]։ Դիցաբանական շերտը Սասնայ Ծռերում աւիշաւորում է ողջ դիւցազնավէպը. այն երկն անմիջականօրէն առնչւում է մեր նախնական պատկերացումներին, մարդկային մտածողութեան հիմքերին, ինչն ուսումնասիրութիւնների անսպառ աղբիւր է։ Գերմանական դիւցազնավէպում դիցաբանական շերտը միջնորդաւորուած է Երգի հեղինակի անհատական մտածողութեամբ, այս դէպքում նախնական շերտերն առաւելաբար ստանում են գեղագիտական՝ քան թէ զուտ բովանդակային արժէք։

Գեղարուեստական կառոյցին բնորոշ որակ է հերոսականութիւնը։ Հենց սա է ներքին տրամաբանութեամբ կապում Երգի բոլոր հերոսներին։ Գլխաւոր ու երկրորդական հերոսներն ունեն հերոսականութեան իրենց չափաբաժինն ու նաեւ այն գործադրելու իմաստը, ինչն էլ նրանցից իւրաքանչիւրի համար տեղ է ապահովում գեղարուեստական կառոյցի աստիճանակարգում։

Առանձնայատուկ որակ է աւատատիրական վերնախաւի միջավայրի, սովորոյթների նկարագրութիւնը։ Բուրգունդական արքունիքի նրբաճաշակ կենցաղը շլացնում է ճոխութեամբ, իսկ հանդերձների, հագ ու կապի հանգամանալից նկարագրութիւնները «մօտենում» են միջինասիական Մանանի[6] մանրամասն նկարագրութիւններին։ Նման նկարագրութիւններ կասեցնում են գործողութեան զարգացման ընթացքը, բայց ստեղծում են որոշակի մթնոլորտ ու վկայում են հեղինակի անհատական ճաշակի կամ երեւակայութեան մասին։ Պարզապէս դժուար է պատկերացնել նման մի դիւցազնավէպ, որտեղ ոսկենկար վրանի վրայ եղած դրուագները ներկայացուեն երկարաշունչ նկարագրութիւններով, իսկ ասպետների հագուստների նկարագրութիւնները աւելի կարեւոր տեղ գրաւեն՝ քան առանձին հերոսների ներաշխարհի, հոգեբանութեան բացայայտումները։

Սա, ինչպէս եւ խիստ աստիճանակարգով ներկայացուող հասարակութեան վերնախաւի ցուցադրումը վկայում են Երգի զուտ անհատական ստեղծագործութիւն, երեւակայութեան արդիւնք լինելու հանգամանքը։

Բայց իհարկէ այս երկը բացառիկ արժէք է մարդկային անհատական ճակատագրերի, հոգեբանութեան բացայայտման առումով։ Սա, անշուշտ, ինքնագիտակցութեան նոր աստիճան է եւ խորքում թաքցնում է «եսակենտրոն» մշակոյթի նախնական ծիլերը։

Այս առումով հետաքրքիր զարգացում են ստանում Քրիմհիլդը եւ Հագէնը։ Մնացած կերպարներն աւելի միագիծ են ու կանխատեսելի։ Այդ թւում Զիգֆրիդը եւ Բրունհիլդը։ Քրիմհիլդն անցնում է հոգեկան վերափոխումների տարբեր աստիճաններ։ Իր գեղեցկութեամբ ինքնավստահ արքայադուստրը դառնում է մեծամիտ թագուհի, նրա եսասիրական որակներն ամրակայւում են հասարակութեան կողմից նրան տրուած իրաւունքներով։ Նա ներքուստ համոզուած է, որ ինքն իր անհատական որակներով արժանի է թագուհի լինելու։ Բայց շուտով հասարակութեան, միջավայրի կողմից նրան առանձնաշնորհուած իրաւունքը մղւում է յետին տարածք, քանի որ խօսքն այլեւս կանացի զուտ անհատական հոգեբանութեան տեղաշարժերին է վերաբերում։ Այստեղ այլեւս թէ՛ ընկերային մոտիւները եւ թէ՛ արտաքին, կենցաղային նկարագրութիւնները դառնում են անկարեւոր կամ երկրորդական, եւ հաւատարիմ կնոջ հոգում փոթորկուող վրիժառութեան ոգին է դառնում

դէպքերը շարժող ուժը: Նա դառնում է սեփական նպատակին հասնելու ներքին միտումով առաջնորդուող դիւային ոյժ, որ արտաքին քնքշութեան, բարեացակամ վերաբերմունքի տակ թաքցնում է մտադրութիւնը: Հերոսուհին ձեռք է բերում գրեթէ առասպելական համբերութիւն: Նա ընտրում է երկար, դժուարընթաց մի ճանապարհ, որն ուելի սեփական մտադրութիւնը թաքցնելու նպատակ է հետապնդում, իսկ իրականում դրան հասնելու անխուսափելիութիւնն է դառնում համբերութիւնը չթուլացնող ոյժ: Ինչպէս ասուեց, Քրիմհիլդը ամուսնանում է Հոների արքայ հեթանոս Էցէլի հետ՝ յաղթահարելով անգամ իր եւ նրա միջեւ եղած կրօնքների տարբերութիւնները: Նա բարեպաշտ քրիստոնեայ է, որ առանձնակի չուքով ու պատրաստակամութեամբ է յաճախում եկեղեցի, նա կարգը պահողն է, հետեւապէս հանդէս է գալիս որպէս օրինակ՝ միջավայրի համար: Բայց այս ամէնը միայն կեղեւ է. կնոջ էութիւնն իր առաջին ու վերջին սիրոյ իրաւունքն ու Զիգֆրիդի հանդէպ ունեցած հաւատարմութիւնը պահելն է:

Բաւականաչափ դաժան արարքները թէեւ այս հերոսուհուն որոշակիօրէն համայթափ են անում, այդուհանդերձ մնում է կարեւորագոյնը՝ կնոջ հաւատարմութեան մասին պատմութիւնը դառնում է այս Երգի հիմնական ասելիքը: Եւ սա արդարացուած ու նաեւ ճիշտ է հոգեբանօրէն: Կնոջ սիրոյ մէջ է ներառուած իր ընտրեալի հանդէպ ունեցած հաւատարմութեան զգացումը, իսկ տղամարդուն անհրաժեշտ է կնոջ հենց նման սէրը, հաւատարի՛մ սէրը: Այնպէս որ Նիբելունգները հետաքրքիր է ոչ այնքան դիւցազնական միջավայրով, ժամանակով եւն., որքան՝ մարդկային անհատական հոգեբանութեան դրսեւորմամբ: Եւ առաջին հերթին՝ կնոջ հոգեբանութեան բացայայտմամբ:

Բայց եւ չի կարելի անտեսել Երգում առկայ դիւցազնական միջավայրը: Թերեւս սա մէկն է այն դիւցազնավէպերից, որոնք առանձնանում են իրենց պատմական, էթնիկական, տարածքային որոշակիութեամբ: Այլ բան է, որ զուտ դիւցազնական պատումը սեփական տրամաբանութեամբ ու արտայայտման կերպով «վերակրկնում» է պատմութիւնը՝ առաջնութիւնը վերապահելով իրեն՝ որպէս «իրականութիւն», իրադարձութիւն կամ պատմութիւն: Անցեալի պատմութիւնը հեղինակը վերակենդանացնում է սեփական հայեացքով, պատումի մատուցման ուրոյն ձեւով. ի վերջոյ, այդպիսով նա ստեղծում է մի նոր պատմութիւն, ինչն հանդէս է գալիս որպէս «իրականութիւն», եւ ճշմարիտը հենց իր պատմածն է համարում, ոչ թէ արդէն տեղի ունեցածը:

Զուտ գործողութեան ժամանակի առումով շատ բան այստեղ որոշակի է, քանի որ դիպուածներն անմիջականօրէն կապուած են գրեթէ մէկ սերնդի ճակատագրի հետ: Եթէ Մասնայ Մոռերում դիւցազնական ժամանակը տարբեր սերունդների ու տարբեր ժամանակների պատմու-

թիւն է ներկայացնում, ապա Երգը նման կառուցուածք չունի, թէեւ այստեղ եւս դիւցազնական պատմութեան ժամանակը որոշակիօրէն «կարեւորում» է սեփական կեանքի, անկրկնելիութեան, անդառնալիութեան որակները։

Խիստ կարեւոր է, թէ դիւցազնավէպում ներկայացուող հասարակութիւնը ի՞նչ բնոյթ ունի։ Խօսքն ազնուական դասին է վերաբերում։ Հասարակական կեանքը խստօրէն աստիճանակարգուած է, աւելին՝ դրա խախտումը կամ սեփական իրաւունքների ենթադրուելիք սահմանների խախտումը յղի է ծանր հետեւանքներով։ Վերջին հաշուով ընդունուած «կարգի» խախտումն է պատճառ դառնում ողբերգութեան։ Բրունհիլդի համար անհասկանալի եւ անընդունելի է Զիգֆրիդի՝ իրենց «հպատակի» կեցուածքը։ Զիգֆրիդը պիտի իրեն «վասալի» պէս պահի, բայց այդ պահանջն էլ իր հերթին անհանդուրժելի է Քրիմհիլդի համար. նրա ամուսինն աւելին է, քան դիմացինն է կարծում։

Դէպքերի վերապատման այս տրամաբանութիւնը եւս պայմանաւորուած է «եսակենտրոն» աշխարհայեացքով։ Սասնայ Ծռերում հերոսները պահելով իրենց արժանապատուութիւնը, իրականում կարեւորում են ընդհանուրի, քան՝ սեփական շահը։ Եւ որպէս կարեւոր առանձնայատկութիւն՝ Սասնայ հերոսներն իրենց չեն տարանջատում միջավայրից. Դաւիթը գառնարած է եւ դրանից վատ չի զգում, նա կարող է առասպելական ուժի չնորհիւ եօթ օրուայ վարը կէս ժամում անել եւն.։ Նման բան դերմանական մտածողութիւնն իր ընտրեալ հերոսների համար պարզապէս բացառում է։ Այնպէս որ գրեթէ նուաստացնող երեւոյթ է Զիգֆրիդի համար ուրիշի ձին նաւից իջեցնելը. դա ծառաների գործն է եւ ոչ նրա նման ասպետի։

Պատուի, արժանապատուութեան խնդիրը բաւականաչափ ինքնատիպ դրսեւորում է ստանում Սասնայ Ծռերում։ Ինչպէս Նիբելուգներում, այնպէս էլ Ռոլանդի Երգում պատուի խնդիրը դառնում է ցուցադրական։ Այն արարողակարգային բնոյթ ունի, առանձին դէպքերում էլ թւում է՝ ինքնանպատակ ասպետին վայել չէ կասկածի տակ դնել սեփական արժանապատուութիւնը։ Երբ այլեւս ակնյայտ էր վերջապահի կործանման վտանգը, Ռոլանդը հրաժարուեց փչել կախարդական փողը, որի հնչիւնները կը հասնէին թագաւորին եւ օգնութիւնն էլ չէր ուշանայ։ Օգնութիւն խնդրելը ասպետը համարում է խիստ վիրաւորական ու անարժանապատիւ, ինչն էլ դառնում է ճակատագրական՝ նրա զօրքի համար։ Նա թագաւորի յանձնարարութիւնն է կատարում, եւ այս հանգամանքը նրա համար առաջնային է։

Նոյնը վերաբերում է եւ Երգի հերոսներին։ Նրանց համար կարեւորը իրենց առաջնորդների պատուախնդրութիւնն ընդգծելն է՝ «Ինչպէս որ մեր արքաները են պատուախնդիր, քաջանուն»[6]։

Ընդհանուր առմամբ եթէ փորձենք ձեւակերպել Երգի հեղինակի եւ Սասնայ Մռեղի առաջ քաշած հարցադրումը, ապա կարող ենք ասել, որ եթէ մի դէպքում պատուախնդրութիւնը օտարուած է անհատից եւ այն «ինքնուրոյն» արժէք է եւ արժէ դրա համար պայքարել, ապա Սասնայ Մռեղում պատիւը՝ իբրեւ բարոյական հասկացութիւն, օտարուած չէ հերոսներից, այն «նրանցից դուրս» գոյութիւն չունի, նրանք պարզապէս պատուախնդիրներ են: Հետեւապէս, եթէ մի դէպքում հերոսներն վայելում են պատիւ, միւսները մարդկային արժանապատուութիւնը կրողներն են: Վայելել ինչ-որ որակ եւ լինել դրա իրական կրողը՝ նշանակում է խօսել միանգամայն տարբեր որակների մասին: Սրանք տարբեր հասկացութիւններ են, բայց եւ միաժամանակ երեւոյթների մատուցման միանգամայն հակադիր ճանապարհների արտայայտութիւն: Սասնայ Մռեղում գործող հերոսները կենդանի բնաւորութիւններ են, հետեւապէս անհրաժեշտութիւն չկայ՝ նրանց ինչ-որ բան վերագրել:

Սասնայ հերոսները բացառում են արժանապատուութեան ցուցադրականութիւնը, նրանք «հետեւում են առաջին հերթին եւ գլխաւորապէս իրենց ներքին ձայնին»[7]*: Սա ճիշտ դիտարկում է, եթէ ընդունենք որ «ներքին ձայնը» մարդկային խիղճն է, որ իրենով է պարագծում ամէն մի հերոսի գործելակերպի սահմանները: Նրանք գործարքի մէջ չեն մտնում սեփական խղճի հետ եւ որեւէ բան չեն ձեռնարկում իրենց յայտնի անունը մէկ անգամ եւս փառաւորելու համար: Եթէ արժանապատուութեան մէջ ցուցադրականութիւն կայ, ապա կասկածելի է դրա մարդասիրական բնոյթը:*

Վրիժառուութեան թեման Նիբելունգներում դառնում է դէպքերն առաջ չարժող ամենակարեւոր զսպանակ: Ընդ որում՝ կնոջ վրիժառուութեան զգացումը մնում է տարիներ շարունակ. նա հանգամանօրէն նախապատրաստւում է հակառակորդներից վրէժ առնել: Ընդհանուր առմամբ դա իրականացուող դաւի մասին պատմուքիւն է: Հերոսուհին ընտրում է ոլորապտոյտ մի ճանապարհ. էցթէլի հետ ամուսնութիւնը նրան աւելի է մօտեցնում նպատակին: Դրան հասնելու համար միջոցների մէջ խտրութիւն չի դնում:

Վրիժառուութեան թեման, առանձին դէպքերում, յայտնւում է նաեւ Սասնայ Մռեղում. սակայն դա աւելի միամտութեան, քան՝ չարութեան արդիւնք է.

«Դաւիթ ծառ պահե՛ց, պահե՛ց,
Իր ձեռ շատ որ դաղրաւ՝ գոռաց.
- Ցա՛ծ իջէք, ցա՛ծ, իմ ձեռ դաղրաւ:
Տղէքներ ականջ չարին, չիջաւ:
Էդ վախտ Դաւիթ ծառի կատար էթող»[8]:

Դաւիթը երեխայ է, եւ չի կարող կանխազգալ վտանգը։ Այստեղ հարց թէ կարելի է նրան մեղադրել անխղճութեան մէջ։

Առաւել վրէժխնդիր է Փոքր Մհերը։ Նա ոչնչացնում է նրանց, ովքեր պատճառ դարձան հօր կործանման։ (Սպանում է Ջմշկիկ սուլթանին, աւերում է Խլաթը եւ Մատղավանքը՝ այն վերանուանելով Մատնավանք)։ Բայց քանի որ տուեալ պարագայում խօսքը աւելի արդարութիւնը ինչ-որ կերպ վերականգնելուն է ուղղուած եւ ոչ թէ նպատակադրուած գործողութեան, որի նպատակը կործանումն է, ուստի Փոքր Մհերի ձեռնարկումների մէջ չի ծրագրւում ոչնչացնելու գործողութիւնը։ Փոքր Մհերի պարագայում դրսեւորուած դաժանութիւնը տարբերւում է Ծրգում իրագործուող հետեւողական դաժանութիւնից։ Սասնայ Ծռերում աւելի անարդարութեանը ներքին հակազդեցութեամբ մերժելու, պատասխանելու, քան թէ «բանականութեամբ կործանելու» մղումներ են, ինչ տեսնում ենք գերմանական դիւցազնավէպում։ Կարելի է ասել, որ Ծրգի հեղինակը սրանով իր գործն աւարտած է համարում. սիւժէի կառուցման տրամաբանութիւնը հասնում է իր լրումին։ Ճիշտ է՝ կործանւում են մեղաւորները, սակայն կործանւում է նաեւ սուր բարձրացնողը կամ այս արիւնահեղութիւնը նախապատրաստողը։

Սասնայ Ծռերը չունի սիւժէի կառուցման միագիծ տրամաբանութիւնը։ Աւելին՝ հայկական դիւցազնավէպի չորրորդ ճիւղը ներքին փիլիսոփայական ուղղուածութեամբ միանգամայն նոր հարթութիւն է տեղափոխում երեւոյթները։ Հրանտ Մաթեւոսեանի դիտարկմամբ, ժամանակի մէջ աւելի կարեւորուել է Դաւթի կերպարը՝ որպէս հերոսականութեան դրսեւորում եւ դա, անշուշտ, ունեցել է իր դրական ազդեցութիւնը ազգային հոգեբանութեան վրայ. «Դաւիթն էր անհրաժեշտ ազգային զարթօնքի մեր իրականութեանը. իրական Դաւիթ, իրական թշնամի, իրական յաղթանակ։ Դրանով գրականութեան բուն էութիւնից հեռացաւ հայ գեղարուեստա-փիլիսոփայական միտքը, չնայած, ակնյայտօրէն Սիների վիճակն էր կրկնւում՝ եւ առանձին, նոյնիսկ խոշոր անհատականութիւնների, եւ կուսակցութիւնների ու ողջ հայ իրականութեան ճակատագրերում»[9]։

Փոքր Մհերը թէեւ Սասնայ Տան անկման խորհրդանիշն է, այդուհանդերձ նա նաեւ մի նոր ժամանակի՝ լաւ կեանքի, արդարութեան յաղթանակի սպասման խորհրդանիշն է։ Հայոց դիւցազնավէպը տեւական, երբեւէ չընդհատուող ժամանակի մէջ է տեսնում երեւոյթների զարգացումը։

Այս ամէնով հանդերձ դժուար չէ նկատել Սասնայ Ծռերի մարդասիրական ոգին, հարցադրումների ողջ լայնութիւնը։ Եթէ Ծրգում մարդիկ հակառակորդների հանդէպ հետեւողականօրէն դաժան են, ապա հայկական դիւցազնավէպում՝ հանդուրժողականութիւնը ոչ թէ հերոս-

ների համար նկարագրի որակ է, այլ բնաւորութիւն է, այս հանգամանքը տարածւում է նրանց գործունէութեան բոլոր ոլորտների վրայ։

Այս առումով կարելի է յիշել Ե. Մ. Մելետինսկու դիտարկումը. «հասարակական այն իդէալները, որոնց ենթարկուած է «Սասնայ Ծռեր»ի հերոսականութիւնը, ոչ միայն ազգային եւ եկեղեցական-քաղաքական բնոյթ ունեն: Նրանց մէջ զգացւում է որոշակի ժողովրդական-բարոյական միտում: Այս միտումի հետ է կապուած սասունցի դիւցազունների հրաժարումը զօրքից, բարեկամութեան եւ եղբայրութեան նրանց ընդունակութիւնը, անկախ ազգութիւնից, գերիներին ազատելու ոգին, տուժածներին պաշտպանելը: Ջուտ դեմոկրատական բարոյականութիւն է զգացւում Մսրայ Մելիքին եւ հասարակ զինուորներին հակադրելու մէջ»[10]։

Երգում բաւական մեծ տեղ են գրաւում խորհրդանիշերը՝ բազէի, երազի, կախարդական թիկնոցի մոտիւները, գօտին, մատանին, որ Ջիգիրխդը բերում է կնոջը եւն.։ Դրանք դիւցազնավէպի մարմնի անբաժանելի մասերն են, որ ամբողջական են դարձնում ասելիքը եւ միաժամանակ պատումի ենթախորքը մատնանշող միջոցներ են։ Դրանք սովորաբար ի յայտ են գալիս այն պահին, երբ սիւժէի զարգացման ընթացքի մէջ ի յայտ են գալիս սահմանագծային իրավիճակներ, երբ այս կամ այն հերոսի կեանքում սկսւում է չրջադարձային իրադարձութիւն։

Երգի տաղաչափութեան առումով, այսօր յայտնի նիբելունգեան տունը կառուցւում է չորս տողերից, որոնցից իւրաքանչիւրը կիսւում է երկու հաւասար մասի, կիրառւում է յանգաւորման aa bb տարբերակը։

Երգի թարգմանիչ Արա Առաքելեանը բնականաբար պահպանել է նիբելունգեան տան կառուցուածքային իւրայատկութիւնը, ինչն անշուշտ կարեւոր է, բայց սա դեռ ամէնը չէ, քանի որ թարգմանիչը տեխնիկական խնդիր չի լուծել, այլ՝ բովանդակային։ Ընդհանրապէս չափածոյի թարգմանութիւնը կապուած է բարդութիւնների հետ, քանի որ դժուար է բնագրի «ձայնային հոսքը» ճշգրտօրէն փոխադրել այլ լեզուի։ «Ինչ կորած է սովորական, լաւ կամ կատարեալ թարգմանութիւնների մէջ,- ասում է Ֆ. Շլեգէլը,- հանդիսանում է ամենալաւը»[11]։ Եթէ չափածոն անհնար է ամբողջութեամբ փոխադրել մէկ այլ լեզուի, ապա գերակայ խնդիր է դառնում բնագրի ամբողջական ընկալումը։ Իսկ նման պարագայում կարեւորւում է թարգմանչի անհատականութիւնը։ Վերջինս որոշակի մշակոյթի, լեզուամտածողութեան, փորձի կրողն է, ինչը վերջին հաշուով ձեւաւորում, ամբողջացնում է թարգմանութեան ոճը։ Եթէ այն զուրկ է անհատականութիւնից, ինքնատիպութիւնից, թարգմանութիւնը մնում է այսպէս ասած «չափի» սահմաններում։ Նման դէպքերում դժուար է ակնկալել գեղագիտական, յուզական ներգործութեան անհրաժեշտ աստիճան։ Սրա կողքին թարգմանչի անհա-

տական ոճն անխուսափելի է դարձնում կորուստները, որոնք միայն բնագրի սեփականութիւնն են։ Բայց այս դէպքում թարգմանութիւնն իրականում դառնում է ապրող, կենդանի գրական խօսք, որ հաղորդակցութեան եզրեր է փնտռում ընթերցողի ներաշխարհի, նրա ընկալումների հետ։

Բաւական է Նիւթեւունգների Երգի տողային թարգմանութիւնը համեմատել արդէն այսօր մեր սեփականութիւնը դարձած Երգի հետ, որպէսզի պարզուի, թէ ինչ ծաւալի աշխատանք է իրականացրել թարգմանիչը։

Շատ կարեւոր է սկիզբը։ Երգի տողացի թարգմանութիւնն այսպիսին է.

«Շատ հրաշքներ են պատմում մեզ հին ժամանակների հեքիաթները,
Մեծամեծ հերոսներից, մարտերից ամեհի,
Ուրախ տօնահանդէսներից, արցունքից ու ողբից,
Քաջ ասպետների կռիւներից կարող էք դուք հիմա հրաշքներ լսել այստեղ»։

Թարգմանութիւնն այսպիսի տեսք ունի.

«Շատ են շռայլ ասքերն հնոց, որ պատմում են մեզ բազում
Հրաշք անցքեր քաջաց կեանքից փառաբանուած, դիւցազուն
Խինդից նրանց, խնջոյքներից ու ցաւերից սրտկեղէք,
Նաեւ դաժան կռիւներից՝ արդ, ունկ դրէք ու լսէք»[12]։

Տուեալ դէպքում մեզ համար ոչ-այնքան կարեւոր է, թէ որքանով է բնագրային իմաստն ու տրամադրութիւնը փոխանցուել թարգմանութեանը (այս խնդիրը իրականացուած է յաջողութեամբ), այլեւ ա՛յն՝ ինչը կարելի է պարզապէս անուանել «մշակութային բեռ», իհարկէ, լա՛ւ իմաստով։ Թարգմանիչը հայրենական աւանդների կրողն է, հետեւապէս նա չէր կարող հեռու մնալ այն ձեռքբերումներից, հայ լեզուամտածողութեանը բնորոշ լաւ որակներից։

Թումանեանական քառեակի կառուցման ձեւը («Բարձր է հընոց աշխարհքն Հայոց...») որոշակի ազդակ է հանդիսացել Երգի ընդհանուր տրամադրութեան ու վսեմ ոճով պատումն սկսելու եւ շարունակելու համար։ Բայց եթէ սա կապւում է այսպէս ասած ընդհանուր հնչողութեանը, ապա չի կարելի անտեսել եւ խօսքի մատուցման ձեւը, ինչն առնչւում է թարգմանչի ու ընթերցողի միջեւ ստեղծուած անմիջական կապին։ Եթէ բնագրում բանաստեղծի եւ ունկնդիրների միջեւ եղած կապը թէական է («Քաջ ասպետների կռիւներից կարող էք դու հիմա հրաշքներ լսել այստեղ»), ապա թարգմանութեան մէջ այն անմիջական է ու անխախտ. այդ խօսքն ուղղուած է շրջապատի մարդկանց, որոնք ոչ միայն հետաքրքրուած են պատմութեամբ, այլեւ իրենց մէջ ունեն

պատմողի խօսքի կարեւորութեան զգացողութիւն-պարտադրանքը։ («Արդ ունկ դրէք ու լսէք»)։ Սա եւս թումանեանական պատումին բնորոշ որակ է («Հէ՛յ, պարոննե՛ր, ականջ արէք...»)։

Դժուար է միանշանակ պատասխան կամ սահման գտնել թարգմանչի ազատութեան եւ բնագրի ինքնակայ գոյութեան միջեւ։ Եւ լաւ է, որ այդ սահմանը պարզապէս գոյութիւն չունի։ Այս իրականում հակադիր ոլորտները փոխներթափանցման արդիւնքում ստեղծում են մի որակ, որի նպատակը բնագրի էութիւնը, ոգին ընթերցողին փոխանցելն է։ Թարգմանչի ոճին բնորոշ առանձնայատկութիւն կարելի է համարել «զպուած դրամատիզմը», որ առկայ է ողջ ստեղծագործութեան մէջ։ Սա խօսքին հանդիսաւորութիւն է հաղորդում եւ բնական է, որ նման ոճով «հեքիաթ» չի պատմուի։ Երգի հեղինակը պատումն աւարտում է հետեւեալ կերպ. «Այստեղ աւարտում է հեքիաթը։ Սա նիբելունգների ողբն էր»[13]։

Առաքելեանի թարգմանութիւնը ներքին տրամաբանութեան մէջ չի կարող հեքիաթ լինել, այն ասք է եւ աւարտում է հանդիսաւորութեամբ.

«Էլ չեմ կարող պատմել ես ձեզ՝ ինչ պատահեց այդուհետ,
Գիտեմ միայն, որ դեռ երկար տիկնայք, այրեր քաջասպետ,
Վասն աղէտի ծնկակոտոր թափում էին արտասուք,
Եւ ասքն է աւարտում աստ՝ ողբը զարմի նիբելունգ»[14]։

Եթէ թարգմանչին համեմատենք ռեժիսորի հետ, ապա աւելի պարզորոշ կը դառնայ նրա կատարած աշխատանքի բնոյթը։ Ինքնատիպ ռեժիսորական լուծումներն աւելի են հանդիսատեսին մօտեցնում հեղինակի բնագրային մտադրութեանը, քան չափից աւելի դրան հարազատ մնալու ճիգերը։

Չի կարելի անտեսել եւ Արկադի Բաղդասարեանի (Արկօ) նկարազարդումները։ Արեւելեան վառ գոյները համադրուած են գերմանական խստակեացութեանը, հերոսների հոգեբանական առանձնայատկութիւններին։

Ամփոփելով, Առաքելեանի թարգմանութեամբ Նիբելունգների երգը հարստացնում է հայկական մշակոյթը։

ՏԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Վեննափկում, 1925ին հայերէն տպագրուել է Նիբելունգներուն Երգը, թարգմանութեամբ Հ. Արսէն Ղազիկեանի։ 2007ին, «Նայիրի» Հրատարակչութիւնը տպագրեց Նիբելունգների Երգի ամբողջական թարգմանութիւնը։ Թարգմանիչը՝ Արա Առաքելեանը, ծնուել է 1948ին։ Նրա թարգմանութեամբ լոյս են տեսել Ֆրանց Կաֆկայի Միրճինների Հուսիկը (1993, «Նայիրի»), Կոնֆիցիուսի Ջրոյցներ (1995, ԵՊՀ Հրատ.), Էլիաս Կանետտիի Ջանգուած Եւ Իշխանութիւն (2002, «Ապոլոն»), Հերման Հեսսէի Տափաստանի Գայլը (2004, «Նաիրի») ստեղծագործութիւնները։

[2] Ֆրանսիական հերոսական դիւցազնավէպ, մեզ հասած ամենահին հրատարակութիւնը Օքսֆորդեանն է, մօտաւորապէս 1170ին։ Երգը Փարիզում տպագրուել է 1837ին։

[3] Իսպանական դիւցազնական պոէմ։ Ստեղծուել է մօտաւորապէս 1140ին, պահպանուել է 1307ի ձեռագրում՝ ոչ-ամբողջական տեսքով։

[4] Հայ ժողովրդական Հերոսավէպ. Սասունցի Դաւիթ, Երեւան, «Լոյս» Հրատ., 1981, էջ 11։

[5] Կիրգիզական հերոսական դիւցազնավէպ։ Ցայտնի են նրա 18 տարբերակներ, որոնք ժԹ.-ի. դարի երկրորդ կէսի թուագրում ունեն։

[6] Նիբելունգների երգը, Երեւան, «Նայիրի» Հրատ., 2007, էջ 290։

[7] Ա. Եղիազարեան, «Սասնայ Ծռեր» էպոսի Պոէտիկան, Երեւան, 1999, էջ 112։

[8] Սասունցի Դաւիթ. Հայկական ժողովրդական էպոս, Երեւան, «Նայիրի» Հրատ., 2000, էջ 127։

[9] Հ. Մաթեւոսեան, Սպիտակ Թղթի Առջեւ, Երեւան, 2004, էջ 51։

[10] E. M. Melitinskii, *Proiskhojdeniye Geroicheskogo Eposa* (Հերոսական էպոսի առաջացումը), Մոսկուա, 1963, էջ 246 247։

[11] F. Chlegel, *Kriticheskie Fragmenti v. Kn. Literaturniye Zapadnoevropeiskikh Romantikov* (Քննադատական հատուածներ արեւմտաեւրոպական ռոմանտիկների գրական մանիֆեստները գրքում), Մոսկուա, 1980, էջ 53։

[12] Նիբելունգների երգը, էջ 33։

[13] *Das Nibelungenlied*, Koln, Parklend, 2003, էջ 719։

[14] Նիբելունգների երգը, էջ 335։

DAS NIBELUNGENLIED IN ARMENIAN
(Summary)

VACHAGAN GRIGORIAN
vachik_grigorian@mail.ru

The article highlights aspects of the translation of *Das Nibelungenlied* from the original text and underlines the modes, style, symbols and skills the translator has put into action to transmit the epic and poetic mood of the original work.

The author draws broad comparisons between the Armenian poem, *Sasna Dzerer* and its German counterpart and notes that both reflect facets of the culture, world perception and social perspective of the nations they speak about.

In broad terms the author narrates the two epic poems, highlights their mythical, historical and religious sources and the setting in which the events take place. The author discloses the diverse facets of tolerance and humanism of the main characters of the poems. He underlines that *Das Nibelungenlied* reflects the individualistic aspects of German social culture, in contrast to *Sasna Dzerer*'s communitarian dimension. Besides, *Das Nibelungenlied* is based on a love story which involves different nations, unlike the Armenian epic which is a story about oppression and national freedom and involves several generations. Unlike the German poem's self-centeredness, the events in *Sasna Dzerer* are more about collective pride and society. Besides, vengeance is a personal issue in *Das Nibelungenlied* while it is both a personal issue and the result of naivity in *Sasna Dzerer*.

However, the basic difference between the two is the fact that *Das Nibelungenlied* was written by a single author, unlike *Sasna Dzerer*, which had several variants and was recited by various minstrels/troubadours.

ԵՐԻՏԹՈՒՐՔ-ՀԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՕՍՄԱՆԵԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՈՒԺԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

ԵՂԻԿ ՃԷՐՃԷԱՆ
yeghjerj@dm.net.lb

ՄՈՒՏՔ

1880ականներուն, Օսմանեան կայսրութեան քաղաքական կեանքին մէջ հրապարակ կու գայ սուլթան Ապտիւլ Համիտի (1842-1918) վարչակարգին (1876-1909) ընդդիմադիր չարժում մը, որ ընդհանուր անունով կը կոչուի Երիտասարդ Թուրքերու (երիտթրքական) Շարժում։

Երիտթրքական չարժումը միատարր չ՚ըլլար։ Ան կ՚ունենայ գաղափարական եւ մարտավարական բնոյթի ներքին տարակարծութիւններ, որոնց մէջ նկատառելի դեր կը խաղան նաեւ ղեկավարութեան մէջ յառաջացած անհատական հակակրութիւնները։

Երիտթրքական չարժման ծնունդին ու աչխուժացման տարիներուն զուգընթաց կ՚ընթանայ Օսմանեան կայսրութեան բաղկացուցիչ ազգութիւններուն եւ յատկապէս արեւմտահայութեան ազգային-ազատագրական պայքարի զարթօնքը, նոյնպէս ուղղուած Ապտիւլ Համիտի վարչակարգին դէմ։

Երիտթրքութեան տարբեր թեւերուն եւ ազգային-ազատագրական չարժումներուն միջեւ համագրութիւն յառաջացնելու, զանոնք գործունէութեան նուազագոյն ծրագրի մը չուրջ համախմբելով սուլթանին դէմ միասնական ճակատ կազմելու համար, երիտթրքական չարժման ղեկավարները՝ Ահմէտ Ռըզա, իչխան Սապահէտտին, Թունալը Հիլմի, Ահմէտ Սիւքութի եւ ուրիչներ, կը նախաձեռնեն երկու խորհրդաժողովներ, որոնք տեղի կ՚ունենան Փարիզի մէջ 1902ին եւ 1907ին։ Այդ ժողովներուն կը մասնակցին նաեւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչները, ինչպէս նաեւ անկուսակցական հայեր։

Հայ նորագոյն պատմութեան համար որոշակի հետաքրքրութիւն կը ներկայացնեն մինչեւ 1908ի սահմանադրական յեղաշրջումը երիտթուրք-հայ յարաբերութիւններն ու այդ ծիրէն ներս օսմանեան ընդդիմադիրներու փարիզեան զոյգ խորհրդաժողովները, հոն քննարկուած նիւթերն ու հայ ներկայացուցիչներուն մասնակցութիւնը անոնց։

Սոյն ուսումնասիրութիւնը կ՚ընդգրկէ երիտթուրք-հայ յարաբերութիւնները մինչեւ 1902 եւ հայերու մասնակցութիւնը օսմանեան ընդդիմադիր ուժերու Ա. խորհրդաժողովին։

Հաւանաբար մեր մէկ այլ ուսումնասիրութիւնը ընդգրկէ 1902-1908 ժամանակաշրջանը եւ հայերու մասնակցութիւնը Բ. խորհրդաժողովին։

ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐԻՏԹՐՔԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԷՋ

1878ին սուլթան Ապտիւլ Համիտ կ՚առկախէ սահմանադրութիւնն ու խորհրդարանը եւ կը դառնայ բացարձակ միապետ։ Ան բիրտ ուժով կը փորձէ լուծցնել իր իշխանութեան բոլոր ընդդիմադիրները՝ թէ՛ տարբեր ազգութիւններու ազգային-ազատագրութեան ձգտող գործիչներ եւ թէ՛՝ վարչակարգի բարեկարգման կողմնակիցներ։ Ընդդիմադիր գործիչները կ՚ապաստանին արտասահմանեան մայրաքաղաքներ՝ Փարիզ, Ժընեւ, Լոնտոն, Պերլին, Գահիրէ, Աթէնք, եւն.։ Անոնք կը կազմեն փոքր խմբակցութիւններ ու գլխաւորապէս կը զբաղին թերթերու հրապարակումով. 1879էն 1907 արտասահմանի մէջ լոյս կը տեսնեն մօտաւորապէս 120 ընդդիմադիր թերթեր[1], հրապարակ կու գայ օսմանեան քաղաքական վտարանդիութիւնը՝ երիտթրքական շարժումը։

Շարժման յետագայ զարգացման մէջ նշանակալից դեր կը խաղայ Պոլսոյ Կայսերական Զինուորաբժշկական Ակադեմիայի ուսանողներուն մէջ ալպանական ծագումով Իպրահիմ Թեմոյի 1889 Յուլիսին հիմնած ընդդիմադիր խմբակցութիւնը՝ Օսմանեան Միութեան Ընկերակցութիւն (Իթթիհատի Օսմանլը Ճեմիյէթի)։ Խմբակցութիւնը չի սահմանափակուիր ուսանողական շրջանակներու մէջ, այլ կ՚ընդգրկէ նաեւ պետական պաշտօնեաներ[2]։

Փարիզ ապաստանած ընդդիմադիր գործիչ, Իթթիհատի յայտնի եւ երկարամեայ ղեկավարներէն Տոքթ. Նազըմ, հանդիպումներ կ՚ունենայ 1889էն Փարիզ գտնուող եւ իր ընդդիմադիր հրապարակագրութեամբ հանրայայտ Ահմէտ Ռըզայի հետ եւ վերջինիս կ՚առաջարկէ ստանձնել ընկերակցութեան Եւրոպայի բաժնին ղեկավարութիւնը։ Ռըզա կ՚ընդառաջէ եւ անոր առաջարկով կազմակերպութիւնը կը կոչուի Օսմանեան Միութիւն Եւ Ցառաջդիմութիւն Ընկերակցութիւն (Օսմանլը Իթթիհատ վէ Թերաքքի Ճեմիյէթի)։

1894-95ին Ընկերակցութեան Պոլսոյ կառոյցը Բ.Դուռն կողմէ կը բացայայտուի։ Կը ձերբակալուին շարժման ղեկավարներէն չատեր, որոնց չարքին Ապտուլլահ Ճեւտէթ, Էխրէմիլի Շեւքէթ, Շերաֆէտտին Մայմումի եւն.[3]։ Տեղի կ՚ունենան բազմաթիւ ձերբակալութիւններ։ Շարժման չարք մը ղեկավարներ խոյս կու տան արտասահման։ Թեմօ կ՚ապաստանի Ռումանիա։ Ձերբակալութիւնները, հալածանքներն ու երկրէն փախուստը կը տկարացնեն կազմակերպութեան Պոլսոյ մասնաճիւղը եւ հակառակ անոր որ ընկերակցութեան կանոնագրութեամբ

հաստատագրուած էր թէ անոր ղեկավար մարմինը Պոլսոյ վարչութիւնն է, իրողապէս այդ դերը կը ստանձնէ Փարիզի վարչութիւնը։ Աւելի ուշ, չարք մը մասնաճիւղերու առաջարկով, այդ հարկադրական իրողութեան կը տրուի նաեւ կանոնագրային հանգամանք։ Կազմակերպութեան ղեկավարը կը դառնայ Ռըզա։ Անոր խմբագրապետութեամբ 1895 Դեկտեմբեր 1էն Փարիզի մէջ կը սկսի լոյս տեսնել *Մեշուերյէթ* (խորհուրդ) պաշտօնաթերթը իր ֆրանսերէն յաւելուածով։ Կը սկսի լոյս տեսնել նաեւ երիտթրքական շարժման մէջ իր ազդեցութիւնը ունեցող *Շուրայի Իւմմէթ* (ազգային խորհուրդ) թերթը։

Կայսրութեան տարածքին եւ անկէ դուրս կը ծաւալի Իթթիհատի կազմակերպչական ցանցը։ Կը վերակազմաւորուի նաեւ Պոլսոյ մասնաճիւղը։ Իթթիհատի գօրացման զուգահեռ կը յառաջանան նաեւ տարակարծութիւնները։ Պրիւքսէլի մասնաճիւղի ղեկավար Խալիլ Ջիա կ՚առաջադրէ պետական հարուածով իշխանափոխութիւն կատարելու տեսակէտը, զոր կը պաշտպանէ եւրոպական մամուլի էջերէն։ Այս տեսակէտը կը պաշտպանէ նաեւ Պոլսոյ ղեկավարութիւնը։ Ռըզա կտրականապէս կը մերժէ այս տեսակէտը։

Այդ շրջանին Եւրոպա ապաստանած ընդդիմադիր գործիչներուն մէջ հեղինակութիւն կը դառնայ Մուրատ պէյը։ Ըլլալով Ապտիւլ Համիտի գործակիցներէն, Մուրատ պէյ սուլթանին առաջարկած էր վերականգնել սահմանադրութիւնը։ Սուլթանէն մերժուելով ան կ՚ապաստանի Փարիզ ու կը համալրէ Իթթիհատի շարքերը։ Մուրատ պէյ կը պաշտպանէ արտաքին ուժերու միջամտութեամբ Ապտիւլ Համիտի վարչակարգը տապալելու տեսակէտը։ Ռըզա վճռականապէս կը հակադրուի նաեւ այս տեսակէտին։ Մուրատ պէյ 1895 Դեկտեմբերին կը մեկնի Գահիրէ, կը ստանձնէ տեղւոյն Իթթիհատի ղեկը եւ իր խմբագրապետութեամբ լոյս տեսնող *Միզան* (կշիռք) թերթին մէջ (որ շրջան մը չուքի մէջ կը ձգէ *Մեշուերյէթը*) կը պաշտպանէ արտաքին միջամտութեան եւ պետական հարուածի գոյգ տեսակէտերը։ 1896 Յուլիսին Մուրատ պէյ կը վերադառնայ Փարիզ, ուր կը շարունակէ հրատարակել *Միզանը*։

Պետական հարուածի եւ օտար միջամտութեան դէմ Ռըզայի անդրդուելի կեցուածքներուն պատճառով, կտրուկ քայլերով իշխանափոխութեան կողմնակիցները կը հակադրուին անոր։ Յեղափոխական գործունէութիւն ծաւալելու կողմնակիցներէն խումբ մը, Թունալը Հիլմիի գլխաւորութեամբ կը հիմնէ նոր կազմակերպութիւն մը՝ Օսմանեան Յեղափոխականներու Խմբակցութիւնը (Օսմանլը Իհթիլալ Ֆըրքասը), որ Ժընեւի մէջ կը սկսի հրատարակել *Էջան* թերթը։ Ռըզա կը հակադրուի նաեւ յեղափոխական գործունէութեան կողմնակիցներուն։ Ան, իր կուսակիցներէն կը մեղադրուի անգործնականութեան մէջ։ 1896 Նոյեմբերին կայացած արտակարգ ժողովի մը ընթացքին, Իթթիհատի կեդրոնական վարչութեան նախագահ կ՚ընտրուի Մուրատ պէյ։ Ռըզա կը

մնայ Մեշուերէթի Ֆրանսերէն յաւելուածին խմբագրապետը՝ որ կը նկատուի անոր անձնական հրատարակութիւնը։ Կուսակցութեան պաշտօնաթերթ կ՚ընդունուի Միջաւը, որ պէտք է հրատարակուէր հաւասքական խմբագրութեամբ։ Յեղափոխական գործունէութեան կողմնակիցները, քանի մը առիթներով կը ծրագրեն Ապտիւլ Համիտի ահաբեկումը, որ չ՚իրագործուիր։

1897 Փետրուարին Իթթիհատի ղեկավարութիւնը կը հաստատուի Ժընեւ։ Մուրատ պէյի առաջարկով Փարիզի մասնաճիւղին ղեկավարութիւնը կը յանձնուի Ռըզային, սակայն երկու հոսանքներուն եւ անոնց ղեկավարներուն միջեւ վէճերը չեն հանդարտիր։

Վէճերը կը սրին մասնաւորապէս Կրետէ կղզիի տագնապի օրերուն, որուն մասին աւելի հանգամանալի պիտի անդրադառնանք աւելի ետք։ Մուրատ պէյի մօտ յոյսեր կը ծագին որ Մեծն Բրիտանիան օգտագործելով առիթը միջամտութիւն կը կատարէ եւ միջազգային վեհաժողովի մը ընթացքին ընդհանրապէս կը քննարկուի Օսմանեան կայսրութեան ճակատագրին հարցը։ Ժընեւի եւ Փարիզի մասնաճիւղերուն միջեւ վէճը գագաթնակէտին կը հասնի երբ Մեշուերէթի Ֆրանսերէն յաւելուածին մէջ լոյս տեսած յօդուած մը անընդունելի կը նկատուի Ժընեւի կեդրոնին կողմէ, որ կը հրահանգէ նոյն թերթին մէջ տպել գրութիւն մը, ուր ըսուի թէ այդ յօդուածին հրատարակութիւնը արդիւնք էր սխալմունքի մը։ Երբ Ռըզա չ՚անսար կեդրոնի հրահանգին, Մուրատ պէյ հարցը կը բարձրացնէ կեդրոնական վարչութեան եւ կը պահանջէ Ռըզայի հեռացումը կուսակցութենէն[4]։ Կ. Վարչութիւնը դժուարութեամբ կը կայացնէ այդ որոշումը, որ չրջանային վարչութիւններուն կողմէ խանդավառութեամբ չ՚ընդունուիր։ Բոլորն ալ կը գիտակցէին որ այդ որոշման մէջ դեր խաղցած էր անձնական հակակրութիւնը եւ հակառակ Ռըզայի անձնակեդրոն բնաւորութեան, բոլորն ալ անոր մտաւորական արժանիքները բարձր կը գնահատէին։

«ԱՐՇԱԿԱԻԱՆԸ»...

Երիտթրքական շարժման եւ Իթթիհատ վէ Թերաքքի Կուսակցութեան բնորոշ գիծերէն կ՚ըլլայ շարժման տարբեր հանգրուաններուն անոր ղեկավար դէմքերէն շատերուն կաշառուիլը սուլթանէն։ Կաշառուողները կը լքեն իրենց ընդդիմադիրի դիրքերը եւ կը վերադառնան երկիր։ Նման քայլի կը դիմեն Օսմանեան Բարեկարգչական Կուսակցութեան հիմնադիր եւ Հիւրրիյէթ (ազատութիւն) թերթի խմբագիր Հալիմ Ֆարիսը՝ որ ձգելով Լոնտոնը կը ստանձնէ Պէյրութի ջրամատակարարման մենաշնորհը։ Միւս կողմէ, ընդդիմադիր Խալիլ Ղանէմ (1877ի օսմանեան երեսփոխանական ժողովի անդամ), արաբերէն իր հրատարակած Ալ Պաշիր (աւետաբեր) թերթը կը ծախէ Փարիզի օսմանեան դեսպա-

նատան։ Ասոնց չարքին էին նաեւ Իպրահիմ Ալ Մաուայլին, Վասիֆ պէյը, Նիքոլայտիսը եւն.։

Ժամանակի քաղաքական կեանքի աչխոյժ մասնակիցներէն, Մդ Հնչակեան Կուսակցութեան ղեկավարներէն Ստեփան Սապահ Գիւլեան դիպուկ ձեւով նկարագրելով երեւոյթը կը գրէ.- «Փարիզը դարձել էր ուխտատեղի, մի տեսակ թուրք արշակաւան. ո'վ պաշտօն էր ուզում կամ պաշտօնի բարձրացում եւ չէր կարողանում իր առաջադրած նպատակին հասնել, վազում, գալիս էր Փարիզ եւ իրեն 'Երիտասարդ' յայտարարում: Քաւականութիւն ստացողը խղճի ամենայն հանդարտութեամբ վերադառնում էր: 'Երիտասարդ թրքութիւնը' մի տեսակ միջոց էր դարձել սուլթան Համիտի կառավարութիւնից պաշօններ, դրամներ, առաւելութիւններ կորզելու եւ անձնական վրէժխնդրութիւններ յառաջ մղելու»[5]։

Մուրատ պէյ եւս զերծ չի մնար այս փորձութենէն։ 1897 Յունիսին, Օսմանեան գաղտնի ոստիկանութեան տնօրէն Ահմէտ Ճելալէտտին փաչա եւ կայսրութեան Փարիզի դեսպան, նախկին լրտեսապետ Միւնիր պէյ Contrexeville աւանին մէջ կը բանակցին անոր հետ։ Գոյացած համաձայնութիւնը կը կոչուի Contrexevilleի Համաձայնութիւն։ Այս բանակցութիւններուն ընթացքին, սուլթանին ներկայացուցիչները կը հաւաստիացնեն, թէ սուլթանը որոշած է բարեկարգութիւններ կատարել, ուստի կ'առաջարկէ երիտթուրք ղեկավարներուն, որ վերադառնան երկիր, նիւթական վարձատրութիւն եւ պաշտօններ խոստանալով անոնց։ Այս մասին Մուրատ պէյ կը զեկուցէ Կ. Վարչութեան, բայց առանց հաւաքական որոշումի սպասելու կը յայտնէ թէ որոշած է վերադառնալ հայրենիք։

Կը բացայայտուի որ սուլթանին բանագնացները նման հանդիպումներ ունեցած են նաեւ Ռըզայի հետ, որ մերժած է համաձայնիլ։ Սա կը բարձրացնէ Ռըզայի հեղինակութիւնը եւ անոր կ'ապահովէ «ղեկավարը զոր սուլթանը չի կրնար գնել»[6] մակդիրը։ Անյաջող բանակցութիւններէ յետոյ, օսմ. իշխանութիւնները Փարիզի իրենց դեսպանատան միջոցով դատ կը բանան Ռըզայի դէմ։ Դատավարութիւնը կ'ըլլայ ազմկայարոյց. «Քլեմանսոյի օրինակէն ոգեւորուած շատ մը ֆրանսացի մտաւորականներ կը շտապեն պաշտպանել Ահմէտ Ռըզան. այդ պատճառով դատարանը կը վերածուի քաղաքական քննարկումներու հրապարակի մը»[7]։ Դատավարութիւնը կ'աւարտի Ռըզայի յաղթանակով. Մեչեերչի կ'ենթարկուի 16 ֆրանքի չնչին տուգանքի մը։[8] Ռըզա կը դառնայ երիտթրքական շարժման կեդրոնական դէմքը։ 1897 Մեպտեմբերէն Ռըզա կը սկսի վերահրատարակել Մեչեերչիի ընթացիկ թիւերը՝ որպէս Իթթիհատի պաշտօնաթերթ։ Մուրատ պէյի հեռանալէն ետք ժրնեւի թուլցած Կ. Վարչութիւնը այս կապակցութեամբ դժգոհութիւն կ'արտայայտէ եւ կ'առաջադրէ կուսակցութենէն հեռացուած ըլ-

լալու պարագան, սակայն կատարուած իրողութեան դիմաց անզօր կ՚ըլլայ գործնական քայլեր առնելու։ Միւս կողմէ, Մեչերլէքի վերահսկողութիւնը սուլթանը կը նկատէ Contrexevilleի Համաձայնութեան խախտում։ Իր կարգին Ժընեւի Կ. Վարչութիւնը սուլթանը կը մեղադրէ խոստացուած բարեկարգութիւնները չգործադրելու եւ նոր ձերբակալութիւններ կատարելու մէջ։ կը ձեւաւորուի նոր Կ. Վարչութիւն, որուն վերահսկողութեան տակ կը սկսի լոյս տեսնել Օսմանլը թերթը իր անգլերէն եւ ֆրանսերէն յաւելուածներով։ Նոր Կ. Վարչութիւնը կ՚առաջարկէ Ռըզային չնորհել այն կարգավիճակը որ ան ունէր նախքան կուսակցութենէն հեռացումը։ Ռըզա կ՚ընդունի առաջարկը, կը դադրեցնէ Մեչերլէքի ընթացիկ թիւերուն լոյս ընծայումը եւ փոխադարձաբար կ՚առաջարկէ «միացնել Փարիզի եւ Ժընեւի ճիգերը ընդհանուր ոչ-յեղափոխական, կրաւորական ծրագրի մը շուրջ»։ այս առաջարկը Կ. Վարչութեան կողմէ կը մերժուի[9]։ Փարիզի եւ Ժընեւի յարաբերութիւնները կը մնան պրկուած։

1898 Ապրիլ-Նոյեմբեր ամիսներուն, սուլթանի գործակալներուն եւ Ժընեւի կեդրոնին միջեւ տեղի կ՚ունենան նոր բանակցութիւններ։ Իթթիհատի ղեկավարները այդ բանակցութիւնները կը պատճառաբանեն իբրեւ իրենց բանտարկուած ընկերները ծանր դրութենէն դուրս բերելու ստիպողութեան տակ կատարուած քայլեր՝ վերջիններուս ցանկութեամբ։ Սակայն, իրականութեան մէջ, անոնց փնտռածը նիւթական աղբիւրներ էին[10]։ Իթթիհատ կը գտնուէր տնտեսական տագնապալի վիճակի մէջ ու ինչպէս անոր ղեկավարներէն Խալիլ Մուաֆֆաք իր կուսակիցին՝ Իսհաք Սիւքութիին յղած նամակին մէջ կը գրէ, ստեղծուած էր այնպիսի անհեթեթ կացութիւն մը երբ Ապտիւլ Համիտի դէմ անհնար էր «ընդդիմադիր գործունէութիւն ծաւալել՝ առանց Ապտիւլ Համիտէն ֆինանսաւորուելու»[11]։ Ի. Թեմօ եւս իր կուսակիցներուն կ՚առաջարկէ ընդառաջել սուլթանի առաջարկներուն, մէկ տարուան համար պաշտօններ զբաղեցնել պետական վարչամեքենային մէջ եւ գանձուած աշխատավարձերը տրամադրել կուսակցութեան։ Ռըզա կտրականապէս դէմ կ՚արտայայտուի որեւէ ձեւի համաձայնութեան։ Լարուած եւ ձգձգուած բանակցութիւններէ յետոյ Իթթիհատի պարագլուխներէն Սիւքութի, Ապտիւլլահ Ճեւտէթ եւ Թունալը Հիլմի երկրորդ կարգի դիւանագիտական պաշտօններ կը ստանձնեն համապատասխանաբար Հռոմի, Վիեննայի եւ Մատրիտի դեսպանատուներուն մէջ։ (Իթթիհատի պարագլուխները իրենց խոստումները չեն յարգեր ու կը շարունակեն անստորագիր յօդուածներով աշխատակցիլ Օսմանլըին եւ գրաղիլ Իթթիհատի կազմակերպչական հարցերով)։

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՓԱՓԱՔՆԵՐ

Երբ տակաւին Իթթիհատի ղեկավարներուն եւ սուլթանի գործակալներուն միջեւ բանակցութիւնները կը շարունակուէին, 1899 Օգոստոսին, Իթթիհատը ներքին ճգնաժամէն դուրս բերելու եւ երիտթրքական շարժման տարբեր թեւերուն միջեւ համագրութիւն ստեղծելու նպատակով Հիլմի կ՚առաջադրէ ընդդիմադիր բոլոր ուժերով խորհրդաժողով գումարելու գաղափարը, եւ այս ուղղութեամբ կը նախաձեռնէ որոշ աշխատանքներ։ Սուլթան Ապտիւլ Համիտ, դիւանագիտական միջոցներով, եւրոպական շարք մը պետութիւններ կը համոզէ նման խորհրդաժողովի մը կայացումը չարտօնելու։ Խորհրդաժողովը կը ձախողի. սակայն այդ գաղափարը կը մնայ կենդանի։

1899 Դեկտեմբերին, մինչ Իթթիհատ կը գտնուէր ներքին պառակտումներու եւ ճգնաժամի մէջ, Եւրոպա կ՚ապաստանի երիտթրքական շարժման երրորդ մեծ դէմքը՝ Տամատ Մահմուտ փաշան իր երկու որդիներով՝ իշխան Սապահէտտինի եւ Լութֆուլլահ պէյ։ Սուլթան Ապտիւլ Համիտի քեռայրը եւ Արդարադատութեան Նախարարի պաշտօն վարած Տամատ Մահմուտ ծանօթ էր իր ազատախոհութեամբ եւ անգլիամէտ հակումներով։ Սուլթանը լաւ գիտէր անոր կարողութիւնները, ուստի կը փորձէ կաշառել զայն։ Տ. Մահմուտ կը մնայ անդրդուելի եւ գործակցութեան առաջարկ կը ներկայացնէ Ռըզային։ Գործակցութիւնը չ՚իրականանար՝ արտաքին միջամտութեան հարցով Ռըզայի անզիջող կեցուածքին պատճառով։ 1900 Մարտին, Տ. Մահմուտ կը մեկնի Ժընեւ, կը հանդիպի Կ. Վարչութեան հետ ու կը սկսի աշխատակցիլ Օսմանլըին։ Իր ղեկավարութեամբ կը կազմէ նոր վարչութիւն մը, որուն կու տայ Օսմանեան Ազատականներ անունը։ Միւս կողմէ, Իթթիհատի գործող Վարչութեան մէջ կը կատարուին փոփոխութիւններ։ Երկու վարչութիւնները իրենց գործունէութիւնը կը շարունակեն համակեցութեամբ. տնտեսական առաւելութիւնը ըլլալով Տամատ Մահմուտ փաշայի կողմը, վերջինս կ՚ունենայ գերիշխող դիրք։ Ջոյգ Վարչութիւնները եւ Օսմանլըն կը տեղափոխուին Լոնտոն։ Տ. Մահմուտ կը յաջողի գործակցութեան լուրջ կապեր ստեղծել ալպան յեղափոխականներուն հետ։ Անոր կը միանան յոյն յեղափոխականները։

Այս բոլորը սակայն Իթթիհատը եւ ընդհանրապէս երիտթրքական շարժումը դուրս չեն բերեր ներքին տարակարծութիւններէն։ Ռըզայի եւ Տ. Մահմուտի անջատ գործունէութիւններուն զուգահեռ կը պառակտուի նաեւ Եգիպտոսի մասնաճիւղը։ Գահիրէի մէջ Պահրիյէլի Ռիզա կը հիմնէ նոր կազմակերպութիւն մը՝ Օսմանեան Միութեան Արշալոյս Ընկերակցութիւնը (Օսմանլը Շաֆաք Իթթիհատ Ճեմիյէթի), որ կը դաշնակցի Ռըզայի։ Կը պառակտուի նաեւ Իթթիհատի Կ. Վարչութիւնը[12]։ Անկէ դուրս կու գան «գործունեաները» եւ կը հիմնեն իրարմէ անջատ գործող չարք մը խմբակցութիւններ, ինչպէս՝ Հայրենիքի Եւ Ազգի

Ազգային Համար Օսմանեան Ընկերակցութիւն (Վաթան Վէ Միլլէթ Իսթիքպալ Ճեմիյէթի Օսմանիյէսի), Վրէժխնդիր Երիտասարդ Օսմաններու Ընկերակցութիւն (Ինթիքամճը Ենի Օսմանլըլար Ճեմիյէթի), Հատուցման Ընկերակցութիւն (Իսթիրտատ Ճեմիյէթի), եւն.։

Տարակարծութիւններն ու ներքին պառակտումները աւելի կը չեչտեն տարբեր խմբաւորումներու միջեւ գործակցութիւն ստեղծելու համար խորհրդաժողովի մը անհրաժեշտութիւնը։

ԵՐԻՏԹՈՒՐՔ-ՀԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԵՐԸ ՄԻՆՉԵՒ 1902Ի ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

[1] Transylvania was an integral part of the Hungarian Kingdom in the Middle Ages. Due to the Ottoman occupation beginning in the early 16th century, the Hungarian Kingdom was divided into three parts until the end of the 17th century: Habsburg Hungary (in other words Upper-Hungary) in the North-western regions; Ottoman Hungary in the centre; and finally the Transylvanian Principality in the East, which functioned as a satellite state with widespread autonomy paying annual taxes to the Ottoman Empire. Transylvania was governed by princes till the very end of the 17th century. They were elected by the Diet of Transylvania but were confirmed (by an *ahdname-i hümayun*) by the Sultans in Constantinople (Istanbul). Therefore, Transylvania, as a satellite state, was a semi-independent political entity in Central East Europe. Since the peace treaties in Paris following World War I (1920), Transylvania has been part of Romania. For further details see *Litterae Missionariorum de Hungaria et Transilvania (1572-1717)*, vol. 1, Ed. István György Tóth, Roma-Budapest, 2002, pp. 52-53, 56-58, 91-92, 95-97; István György Tóth, "Political Culture in Hungary: One Kingdom in Two World Empires (16th–17th Centuries)" in *Political Culture in Central Europe (10th–20th Century), Vol. 1, Middle Ages and Early Modern Era*, Halina Manikowska, Jaroslav Pánek, Martin Holý (eds.), Prague, 2005, pp. 333–347.

[2] György Hölvényi, "Hevenesi Gábor Útmutatásai a Történeti Forrásanyag Gyűjtéseihez (Gábor Hevenesi's Instructions on Collection of the Historical Documents in Hungary)," in *Az Egyetemi Könyvtár Évkönyve* (Annual of the ELTE University Library) VI, Budapest, 1972, pp. 147-152; László Nagy Szelestei, "A Jezsuiták Forrásgyűjtésének Kezdetei Magyarországon (The Beginning of the Jesuits' Source-Collecting Activity in Hungary)," in *Magyar Könyszemle* (Hungarian Book Review), 103 (1987), pp. 161-172; Kornél Nagy, "The Catholisation of the Armenians in Transylvania (1685-1715)," in *Association Internationale des Études Arméniennes* (= AIEA), Newsletter No. 45 Décembre/December (2008), pp. 67-68.

[3] Antal Molnár, *Lehetetlen Küldetés? Jezsuiták Erdélyben és Felső-Magyarországon a 16-17. Században* (Mission Impossible? Jesuit Fathers in Transylvania and Upper-Hungary in the 16th and 17th Centuries), Budapest, 2009, pp. 213-215.

[4] The ELTE University itself was initially founded by Cardinal Péter Pázmány (1570-1637), Archbishop of Esztergom, Primate of Hungary, and the Hungarian Jesuits in Nagyszombat (Tirnava, now in Slovakia) 1635. Following the Jesuit order's dissolution under the orders of Pope Clement XIV (1705-1774) in 1774, the University was obliged to move out to Pest (later on Budapest) at the end of the 18th century. See : Borbála Benda-Balázs Dicső-Erdődi, *"Erdődy György Peregrinációja (1631-1635)* (The Peregrination of György Erdődy, 1631-1635)", in. Századok (Centuries), 143 (2009), p. 919.

[5] Molnár, pp. 213-215.

[6] APF SC FM. Vol. 1. Fol. 168r-169r, Fol. 233r-236/v, Fol. 257r-259/v, Fol. 358/r-v, Fol. 525r-526/v, Fol. 602r-610/v; ELTE EKK CH. Vol. 16. p. 33; Minas Bžškeanc', *Čanap'arhordut'iwn i Lehastan*, Venetik, 1830, pp. 193-209.

[7] Molnár, pp. 218-222.

[8] Christophorus Lukácsy, *Historia Armenorum Transsilvaniae a Primordiis Usque Nostram Memoriam e Fontibus Authenticis et Documentis Antea Ineditis Elaborata*, Viennae, 1859, pp. 17-18; Yakobos Dašean, *C'uc'ak Hayerēn Dzeŗagrac Matenadaranin Mxitareanc' i Vienna*, Vienna, 1895, p. 116; Grigor Govrikean, *Elizabēt'opol. Dransilwanioy Hayoc' Metropolisē*, Vienna, 1896, pp. 8-12; Gregorio Petrowicz, *La Chiesa Armena in Polonia e Nei Paesi Limitrofi. Parte Terza*, Roma, 1988, p. 81; Molnár, p. 223.

[9] Govrikean, pp. 14-15; Ašot Abrahamyan, *Hamaṛot Urvagic Hay Galt'avayreri Patmut'yan,* vol. 2, Yerevan, 1964, pp. 142-145; K'olanjian, p. 361.

[10] APF SC FA. Vol. 3. Fol. 380/v-381r; APF SC FM. Vol. 2. Fol. 126r-127r, Fol. 134r-135/v.

[11] APF ASCPF. Vol. 57. Fol. 114r; APF SOCG. Vol. 493. Fol. 30r-31/v, Fol. 376r-378/v; APF SOCG. Vol. 497. Fol. 335/r-v; APF SC FA. Vol. 3. Fol. 417r, Fol. 462/r-v, Fol. 464r, Fol. 465r, Fol. 488r, Fol. 490r; APF SC FM. Vol. 1. Fol. 41r-46/v; Tihamér Aladár Vanyó, *Püspöki Jelentések a Magyar Szent Korona Országainak Egyházmegyéiről. 1600-1815* (Bishopric Reports on the Countries of the Hungarian Holy Crown. 1600-1815), Pannonhalma, 1933, p. 113; *Step'anos Ṛošk'ay Žamanakagrut'iwn Tarekank' Ekełec'akank'*, Ašx. Hamazasp Oskean, Vienna, 1964, p. 186.

[12] APF SC FA. Vol. 3. Fol. 468r-469/v.

[13] ELTE EKK CH. Vol. 16, p. 32; ELTE EKK CH. Vol. 21, p. 82; ELTE EKK CH. Vol. 29, p. 346; Andreas Ilia, *Ortus et Progressus Variarum in Dacia Gentium et Religionum,* Claudiopoli, p. 67; Lukácsy, p. 68; Ɫewond Ališan, *Kamenic'. Taregirk' Hayoc' Lehastani ew Ṛumenioy*, Venetik, 1896, p. 17; Antal Hodinka, *A Munkácsi Görög Katolikus Püspökség Története* (History of the Greek-Catholic Bishopric in Munkács), Budapest, 1909, pp. 2-3; Suren K'olanjian, "Les Arméniens en Transylvanie en Xe-XVIIIe siècle," in *Revue des Études Arméniennes*, 4 (1967), pp. 362-363; Zsolt Trócsányi, "Transilvaniayi Hayeri Iravakan Kac'ut'iwnĕ Leopoldyan Hrovartaki Šrjanum (1690-1848)," in Vladimir Barxudaryan yev Antal Vörös, *Hay-Hungarakan Patmakan yev Mšakuyt'ayin Kaperi Patmut'yunic,' Yerevan*, 1983, p. 173; Petrowicz, p. 78; Molnár, pp. 222-223.

[14] APF SC FA. Vol. 3. Fol. 434/r-v, Fol. 498r; APF SC FA. Vol. 4. Fol. 374r-375/v; Ṛošk'ay, p. 186.

[15] APF SOCG. Vol. 532. Fol. 456r-457r; ASV ANV. Vol. 196. Fol. 219r-220r.

[16] APF SC FA. Vol. 3. Fol. 468r.

[17] "*Sparsi per Transilvania, ho ripigliato da essi tre chiese scacciando da esse il vescovo loro Minas vartabied (hora morto) con sette sacerdoti schismatici, et in più interdicendegli l'esercitio ecclesiastico, non solo nelle chiese dette, ma nelle case ancora.*": APF SC FA. Vol. 4. 13/r-v; "*Il vescovo heretico Minas è morto, perciò prego a mandare qualcun quanto posto, per occupare quel posto poichè adesso è il tempo opportuno interim come obbedientissimo e devotissimo figlio della Chiesa Romana [Cattolica] e della Sacra Congregazione resto anchè di Vostra Signoria Illustrissima e Reverendissima.*": APF CU. Vol. 3. Fol. 472/r-v; Kornél Nagy, "*Az Erdélyi Örmény Egyházi Unió Vitás Kérdései (1685-1715)* (The Controversial Questions of the Armenians'Church-Union in Transylvania, 1685-1715)," in Történelmi Szemle (Historical Review), 1 (2009), pp. 100-112.

[18] APF ASCPF. Vol. 59. Fol. 165r-169r; APF SOCG. Vol. 504. Fol. 103r; APF SOCG. Vol. 506. Fol. 66r; APF CP. Vol. 29. Fol. 644r. Fol. 645r; ELTE EKK CH. Vol. 15. p. 251; ELTE EKK CH. Vol. 16. p. 34; ELTE EKK CH. Vol. 21. p. 82; ELTE EKK G. Vol. 522. Fol. 96r., Fol. 137/r-v; GYÖKPKK. No. I/1.

[19] APF SOCG. Vol. 532. Fol. 282r; APF CP. Vol. 647/r-v, Fol. 648/r-v, Fol. 651r.

[20] APF ASCPF. Vol. 60. Fol. 14/v-19/v; APF LDSC. Vol. 79. Fol. 134/v-135r.

[21] ELTE EKK CH. Vol. 24. p. 83-86, 199-202, 259-260, 267-272; *Symbolae ad Illustrandam Historiam Ecclesia Orientalis in Terris Coronae S. Stephani*, vol. 1, Ed. Nicolaus Nilles, Oeniponte, 1885, pp. 263-269.

[22] This is a specific term used at the Roman Catholic Church in the ecclesiastical Latin language in the 17th and 18th centuries. The term *in partibus infidelium* roughly means a

bishop sent out on a mission by the Holy See among the infidels in order to convert them to Catholicism.

[23] APF SOCG. Vol. 512. Fol. 180r; APF CP. Vol. 29. Fol. 612r-617/v, Fol. 628r-629/v, Fol. 630r–631r, Fol. 636r; APF SC FA. Vol. 4. Fol. 140r, Fol. 146/r-v, Fol. 224r; APF LDSC. Vol. 79. Fol. 134/v-135r; APF LDSC. Vol. 80. Fol. 64/v-65r; PLE AEV SPSZ. No. 273/2; ELTE EKK CH. Vol. 15. p. 252; ELTE EKK CH. Vol. 16. p. 34; ELTE EKK CH. Vol. 21, p. 83; ELTE EKK CH. Vol. 29, p. 346; ELTE EKK G. Vol. 522. Fol. 173/r-v; Lukácsy, p. 70; Ališan, p. 128; Ṛošk'ay, pp. 186-187; Petrowicz, pp. 94-97.

[24] APF SOCG. Vol. 510. Fol. 94r+101/v; Antal Jakab, *Az Erdélyi Római Katolikus Püspöki Szék Betöltésének Vitája a XVII. Században* (The Controversy on the Roman Catholic Bishopric Seat's Vacancy in Transylvania in the 17th Century), Kolozsvár, 1944, pp. 13-17; János Temesváry, *Erdély Választott Püspökei* (The Elected Roman Catholic Bishops in Transylvania), Vol. 2, Szamosújvár, 1913-1914, pp. 52-57, 108-109; István György Tóth, "Az Első Székelyföldi Katolikus Népszámlálás (Szalinai Isván Bosnyák Ferences Jelentése 1638-ból)" (The First Roman Catholic Conscription in Szeklerland, Transylvania. The Franciscan István Szalinai, of Bosnia's Report from 1638), in *Történelmi Szemle*, 60 (1998) No. 1, pp. 68-69; Ferenc Galla, *Ferences Misszionáriusok Magyarországon: a Királyságban és Erdélyben* (Franciscan Missionaries in Hungary: in the Kingdom and Transylvania), Szerk. István Fazekas, Budapest-Róma, 2005, pp. 189-256, 264-272.

[25] APF ASCPF. Vol. 61. Fol. 84r-87/v; APF SOCG. Vol. 510. Fol. 97r-98r; APF SC FA. Vol. 4. Fol. 219r, Fol. 233r, Fol. 265r; APF SC FMPR. Vol. 2. Fol. 386/r-v+388/v; *Litterae Episcoporum Historiam Ucrainiae Illustrantes*, Vol. 4, (1681–1710), ed. Athanasius Welikyj, Romae, 1976, pp. 79-80.

[26] APF SOCG. Vol. 512. Fol. 181r; ELTE EKK CH. 21, p. 84.

[27] APF SC FUT. Vol. 4. Fol. 86; Hodinka, pp. 253-255; Greta Monica Miron, *Biserica Greco-catholică din Transilvania. Cler şi Enoriaşi (1697-1782)* (The Greek-Catholic Church in Transylvania. Clergy and Laymen), Cluj-Napoca, 2004, pp. 57-74.

[28] APF SC FA. Vol. 4. Fol. 267/r-v.

[29] Ibidem. Fol. 261r-262r, Fol. 263r.

[30] Ibidem. Fol. 266/r-v.

[31] APF SC FA. Vol. 4. Fol. 265/v.

[32] Ibidem. Fol. 268/r-v.

[33] PLE AEV SPSZ. No. 273/2.2; ELTE EKK G. Vol. 522. Fol. 96r.

[34] PLE AEV SPSZ. No. 274/8.3.

[35] Ibidem. No. 274/4.1.

[36] PLE AEV SPSZ. No. 274/8.4; ELTE EKK CH. 21. p. 77-80.

[37] Moldavian Principality.

[38] Kamenec-Podolsk (*Kameniec-Podolski, Kamenec'*), capital of the province Podolia, in Poland, in this period, now in Ukraine.

[39] Poland.

[40] Szeklerland, found in the eastern Province of Transylvania, now in Romania.

[41] Bistriţa.(*Beszterce, Bistritz, Pist'ric'*), a German-Saxon city in Transylvania, now in Romania.

[42] Ottoman Turks.

[43] Correction in the text.

[44] Principality of Wallachia.

[45] Gheorgheni (*Gyergyó*), north-eastern part of Szeklerland, Transylvania, now in Romania.

[46] Ciuc (*Csík*), eastern part of Szeklerland, Transylvania, now in Romania.

[47] Correction in the text.

[48] Correction in the text.
[49] Minas Zilifdarean T'oxat'ec'i (?-1686), Armenian Apostolic Bishop of the Armenians in Moldova, later in Transylvania.
[50] Bertalan Szebelébi (1631-1708), the Roman Catholic Vicar of the Bishopric Office in Transylvania.
[51] Interpolation in the text.
[52] Addendum in the text.
[53] *Tricesima* verbally means the 'Thirtieth part of the incomes', a set of taxes paid annually in Transylvania.
[54] Gheorgheni (*Gyergyószentmiklós, Niklasmarkt, Ĵurĵov*), city in Transylvania, now in Romania.
[55] Frumoasa (*Csíkszépvíz, Sipkic'*), village in Transylvania, now in Romania.
[56] Remetea (*Gyergyóremete, Ŗēmēdē*), village in Transylvania, now in Romania.
[57] Petelea (*Petele, Birk, Bēdēlē*), village in Transylvania, now in Romania.
[58] Gurghiu (*Görgényszentimre, Görgen, Ĵurĵin*), city in Transylvania, now in Romania.
[59] Suseni (*Marosfelfalu, Pränzdorf, Felfalō*), village in Transylvania, now in Romania.
[60] Batos (*Bátos, Botsch, Padōš*), German-Saxon village in Transylvania, now in Romania.
[61] Botoşani (*Botusán. Boč'an*), city in the Moldavian Principality, now in Romania.
[62] Luca Virziresco (*Łukas Vrzarean*) (1614-1661), rich Armenian merchant in Moldova. The Attorney of the Armenian community in Botoşani. Bishop Oxendio Virziresco's father.
[63] Oxendio Virziresco (1654-1715), Armenian Uniate missionary and bishop of the Armenians in Transylvania.
[64] Armenian College (*Collegium Armenum, Collegio Armeno, Dpratun Hayoc'*), Seminary for the Uniate Armenian Clergy, founded by the Italian Theatine fathers in 1664, Lemberg, at the behest of the Holy See.
[65] Interpolation in the text.
[66] Cardinal Francesco Martelli (?-1708), Apostolic Nuncio at Warsaw between 1673 and 1681. Titular Archbishop of Corinthus.
[67] Urbanian College (*Collegium Urbanum, Collegio Urbano, Dpratun Urbanean*), Seminar of the Holy Congregation for the Propagation of the Faith, founded in 1627, Rome.
[68] Holy Congregation for the Propagation of Faith (*Sacra Congregatio de Propaganda Fide, Sacra Congregazione de Propaganda Fede, Hawatacman Taraceloy Surb Miabanut'iwn*), the Missionary Institute of the Holy See, founded in 1622, Rome.
[69] Vardan Hunanean (1644-1715), Armenian Uniate Archbishop of Lemberg between 1686 and 1715. Titular Bishop of Epiphania between 1675-1686.
[70] Cardinal Giacomo Cantelmi (?-1703), Apostolic Nuncio at Warsaw between 1688 and 1690. Titular Archbishop of Caesarea.
[71] Correction in the text.
[72] Pope Innocent XI (1611-1689).
[73] Leopold I of Habsburg (1657-1705), Emperor of the Holy German-Roman Empire and King of Hungary.
[74] Cardinal Opizio Pallavicini (?-1700), Apostolic Nuncio at Warsaw between 1681 and 1688. Titular Archbishop of Ephesus.
[75] Reference in the text to Apostle Saint Paul's Corinthians. I. 13. 1: "Though I speak with the tongues of men and of angels, and have not charity, I am become as sounding brass, or a tinkling cymbal."
[76] Addendum in the text.
[77] Correction in the text.
[78] Addendum in the text.

[79] Vardan Martinus Potoczky (1640-1702), Vardapet, Armenian Uniate priest and monk, lived in Transylvania.
[80] Nestor Xŏčay Serikean (1630-1699), rich Armenian merchant, lived in Bistriţa, Transylvania.
[81] Mihály (Michael) Apafi I (1661-1690), Prince of Transylvania.
[82] Dumbraveni (*Ebesfalva, Ebbeschdorf, Pešp'alōv*, later from 1733: *Elisabethopolis*), city in Transylvania, now in Romania.
[83] Addendum in the text.
[84] Correction in the text.
[85] Mihály (Michael) Apafi II (1690-1713), Prince of Transylvania.
[86] Oxendio Virziresco was, in fact, consecrated as a Bishop by Archbishop Vardan Hunanean on 30th of July, 1691, in Lemberg (Ղošk'ay, p. 187).
[87] Lemberg (*Lviv, L'vov, Łwów, Lemburga, Leopolis, Ilov, Lewonopol, Ilyvó*), city (capital of the province Galicia) in Poland in this period, now in the Ukraine.
[88] Comte Federico (Frederick, Friedrich) Veterani (1650-1695), an Italian-born General at the service of the Habsburg's Court. He was employed for the Habsburg's Court as a Military Commander-in-Chief in Transylvania.
[89] Correction in the text.
[90] Higher Court of the Roman Catholics in Transylvania, founded in 1640, Cluj-Napoca.
[91] Cluj-Napoca (*Kolozsvár, Clausenburg, Claudiopolis*), city in Transylvania, now in Romania.
[92] Correction in the text.
[93] Correction in the text.
[94] Comte Miklós (Nicholas) Bethlen (1642-1716), Chancellor of Transylvania.
[95] Interpolation in the text.
[96] Comte György (George) Bánffy (1660-1708), Governor of Transylvania.
[97] Addendum in the text.

1693Ի *FIDELIS RELATIO* ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ԵՒ ԹՐԱՆՍԻԼՎԱՆԻՈՑ ՀԱՅԵՐԸ (ՑՈՒՇԱԳԻՐ ՄԸ ԹՐԱՆՍԻԼՎԱՆԻՈՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ)

(Ամփոփում)

ԿՈՐՆԷԼ ՆԱԿԻ
kornel73@yahoo.com

Ժէ. դարը նկատուած է Հունգարիոյ եւ Թրանսիլվանիոյ պատմութեան ամէնէն յատկանշական շրջաններէն մին։ Այդ դարուն մղուեցաւ Օսմանեան գրաւումին դէմ ազատագրական պայքարը եւ Թրանսիլվանիոյ կիսանկախ բազմահամայնք իշխանապետութիւնը համարկուեցաւ Հունգարիոյ։

Հրատարակուող յուշագիրը կ՚անդրադառնայ այդ համարկումի գլխաւոր դերակատար կալվինական աւագանիին դերին, ինչպէս նաեւ կաթոլիկ եկեղեցւոյ հետ յառաջացած տագնապին մասին, մանաւանդ որ կաթոլիկ եկեղեցին կը փորձէր վերականգնել իր տեղն ու դերը Թրանսիլվանիոյ մէջ։

Ահա ներթախորքին վրայ յուշագիրը կը ներկայացնէ հայ առաքելական եկեղեցւոյ ճակատագրուած վիճակը՝ իբրեւ կուսախնճոր՝ երկու ազդեցութիւններու։

Փաստաթուղթէն կը պարզուի որ սխալ է տարածուած այն վերագրումը թէ Թրանսիլվանիոյ հայ առաքելական եկեղեցւոյ առաջնորդ Մինաս Եպս. Թոխաթեցին ընդունած է Հռոմի հաւատամքը եւ թէ ան վախճանած է իբրեւ միաբնակ կրօնաւոր։ Իրականութեան մէջ, Թոխաթեցի եպիսկոպոս բանակցութիւններ վարած էր կաթոլիկ եկեղեցիին հետ։ Եւ հակառակ անոր որ այդ եկեղեցւոյ պատուիրակ-բանագնաց Վիր-

զիրեսքօ եպիսկոպոս չէր կրցած տարհամոզել Թոխաթեցին՝ ընդունիլ կաթոլիկութիւնը, յամենայնդէպս կրցած էր համոզել վերջինս գալու Լեմպերկ՝ բանակցութեան։ Հուսկ, Թոխաթեցիի մահէն ետք արդէն տարածուած էր այդ անճիշդ լուրը, որով կարելի էր հետեւցնել որ եթէ առաքելական եկեղեցւոյ առաջնորդը ընդունած էր կաթոլիկութիւնը, ապա իր հօտը եւս պարտ էր ընդունիլ զայն։

Փաստաթուղթը կը մանրամասնէ այս քաշքշուկը, ապա կ՚անդրադառնայ նաեւ Թոխաթեցիի Եպս-ի մահէն ետք հայ առաքելական հօտին վիճակուած կացութեան։ Թէ՝ ինչպէս անիկա պատակուեցաւ կալվինական աւագանիին քաջալերանքով, թէ ինչպէս անոր մէկ մասը վերադարձաւ հայ առաքելական եկեղեցւոյ գիրկը եւ թէ ինչպէս այս խումբը հետացաւ ու բնակութիւն հաստատեց այլուր՝ առաւել նօսրացնելով հայ համայնքը։

ԱԲՐԱՀԱՄ ԱՐՔ. ՔԻՒԲԷԼԵԱՆ-ԵԿԷՆԵԱՆԻ ՁՈՅԳ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՆՈՒԻՐՈՒԱԾ՝ ՀԱԼԷՊԻ 1813Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ
mihran.min@aya.sy

Հալէպի պատմութիւնը «հարուստ» է օսմանեան բռնատիրութեան դէմ տասնեակ ապստամբութիւններով ու ժողովրդական յուզումներով, որոնցմէ առաւել ծանօթ են 1655, 1734, 1791, 1804-1805, 1813 եւ մանաւանդ՝ 1819-1820ի ըմբոստացումները։

Իւրաքանչիւր ապստամբութիւն, բնականաբար, ունեցած է իր ուղղակի եւ անուղղակի պատճառները։ Անոնք ընդհանրապէս հետեւանք էին կա՛մ օրուայ իշխանաւորներուն ու մանաւանդ՝ կուսակալներուն կիրառած բռնութիւններուն ու պահանջած ծանր տուրքերուն, եւ կամ՝ քաղաքի երկու մեծ ուժերուն՝ ենիչէրիներուն ու Հշրաֆներուն[1] միջեւ ստեղծուած հակամարտութեանց ու շահերու խաչաձեւումին։ Որպէս անուղղակի պատճառ, միշտ առկայ եղած է անշուշտ քաղաքական ու տնտեսական ճգնաժամը, որ ընդհանուր դժգոհութեան մթնոլորտ ստեղծած է ժողովրդային խաւերուն մօտ։ Վերջիններս, ամէն առիթով պատրաստ էին բարձրացնելու իրենց ձայնը եւ պարզելու ապստամբութեան դրօշը։

Ցիշեալ մեծ չարժումներէն մէկն է 1813ի ապստամբութիւնը, որ սկսած է իշխանութիւններուն դէմ՝ ենիչէրիներու ըմբոստացումով, կուսակալ Ռաղէպ Փաշայի[2] իշխանութեան օրերուն, եւ շարունակուած է անոր յաջորդին՝ Մուհամմէտ Ճալալուտտին Փաշայի[3] ժամանակ (վերջինս Հալէպ մտած է 23 Յունիս/5 Յուլիս 1813ին)։

Ճապպար Ջատէն փոխարինած է Ռաղէպ Փաշան, որովհետեւ ան իր վարուելակերպով աւելի խիստ էր ու դաժան եւ աւելի հեշտութեամբ կրնար ճնշել ապստամբութիւնը, մանաւանդ որ Հալէպ գալէ առաջ, այլ նահանգներու մէջ պատուհաս եղած էր ենիչէրիներուն, այնքան՝ որ իր Հալէպ հասնելէն առաջ իսկ, անոնք իրենց հարստութիւնը թաքցուցած էին եւրոպացի վաճառականներու եւ հիւպատոսներու մօտ, որպէս նախազգուշական քայլ։

Ջոպան Օղլի, ժողովուրդին մօտ սարսափի մթնոլորտ ստեղծելու համար, Հալէպ մտնելէ անմիջապէս ետք, գլխատած է հինգ ենիչէրի, ապա բարեկարգութիւն կեղծած անոնց հետ ու մանաւանդ, անոնց ղեկավարներէն՝ Իպրահիմ Իպն Խալասի հետ, մինչեւ որ յաջողած է շահիլ անոր վստահութիւնը եւ վերջինիս միջոցով ենիչէրիներու մեծամեծներէն 18 հոգի խնճոյքի հրաւիրելով, ձերբակալած ու գլխատած է զանոնք եւ գէթ ժամանակաւորապէս քաղաքը հանգստացուցած անոնց ոտնձգութիւններէն։

Ենիչէրիներու 1813ի ապստամբական ա՛յս չարժումին առիթով է, որ գրուած են հոս հրատարակուող զոյգ բանաստեղծութիւնները։ Թէեւ անոնց վերնագիրերուն մէջ յստակօրէն չէ յիշուած, թէ քաղաքի ո՛ր թուականի ապստամբութեան առիթով գրուած են անոնք, բայց առաջինին մէջ, չարժման

գլխաւոր դերակատարներէն՝ կուսակալ Զոպան Օղլիի, Իպրահիմ Հարպըլիի[4], Հասան Խալասի[5] անուններուն եւ հիճրէթի 1228ի (23 Դեկտեմբեր 1812/4 Յունուար 1813-11/23 Դեկտեմբեր 1813) առկայութիւնը կասկած չեն ձգեր, որ ան կը վերաբերի 1813ի ապստամբութեան։

Երկրորդ բանաստեղծութեան մէջ կրկին յիշուած է Հասանի մը անունը. կայ նաեւ պատմական դէպքի մը մասին ակնարկութիւն մը՝ «Սպան զՀասան հանդէպ իմ աչաց» տողով։ Եթէ վերոյիշեալ տողը չըլլար բանաստեղծութեան մէջ, թերեւս տարուէինք կարծելու, թէ այս երկրորդ բանաստեղծութիւնը յօրինուած է 1819-1820ի ապստամբութեան առիթով, որովհետեւ քիչ մը զարմանալի կը գտնենք, որ նոյն հեղինակը նոյն դէպքերուն առիթով գրած ըլլայ երկու տարբեր բանաստեղծութիւններ, մանաւանդ որ 1819-1820ի ապստամբութեան գլխաւոր դեկավարը եւս կը կոչուէր Հասան (Մուհամմէտ աղա Իպն Հասան Քըճճէ)[6]։

* * *

Հրատարակութեան տրուող առաջին բանաստեղծութեան համար նկատի ունեցած ենք հեղինակին բանաստեղծութիւններու երկու ձեռագիր ժողովածուները, որոնք կը գտնուին մեր տրամադրութեան տակ։

Առաջին օրինակը թերի է եւ ունի վերջին եօթը համարները միայն։ իսկ երկրորդը՝ ամբողջական է, բայց ժամանակով համեմատաբար աւելի ուշ է քան առաջին օրինակը։ Ամբողջական օրինակը ԺԹ. դարակէսի գրչութիւն է, իսկ թերին՝ ԺԹ. դարասկիզբի։ Ամբողջական օրինակին տողերը չեն անջատուած երկու մասի, ի տարբերութիւն թերի օրինակին։ Մենք հետեւած ենք թերի օրինակին եւ իւրաքանչիւր տող բաժնած ենք երկու մասի, քանի որ նոյն ձեռագրին մէջ իր միւս բանաստեղծութիւնները եւս բաժնուած են տողային երկու մասի։

Բնագիրը կազմելու ժամանակ բնականաբար հիմք ընդունած ենք ամբողջական օրինակը։ Երկու օրինակներուն միջեւ տարբերութիւնները թէեւ չնչին՝ տողատակին յիշատակած ենք զանոնք։ Զանց ըրած ենք միայն բառասկիզբին յաճախ հանդիպող Ը տառը եւ բառերուն մէջ աւելցուած Ըերու տարբերութեանց յիշատակումը։

Հրատարակուող երկրորդ բանաստեղծութեան համար ձեռքի տակ ունեցած ենք միայն մէկ օրինակ, որ հեղինակին ինքնագիրն է եւ ընդօրինակուած է 1810-1830ի իր գրառումները պարփակող ձեռագրին մէջ (թերթ 82-բ), որ կը պահուի Հալէպի Հայ Կաթոլիկ Առաջնորդարանի գրադարանին մէջ։

Մեզի համար դժուար եղաւ հրատարակուող երկրորդ բանաստեղծութեան վերծանումը, որովհետեւ մեր տրամադրութեան տակ եղած օրինակը հեղինակային սեւագիր օրինակն էր, բաւական դժուարընթեռնելի ու լի՝ յապաւումներով, մանաւանդ որ ան, ինչպէս նախորդը, յօրինուած է բաւական խրթին գրաբարով։

Յատկանշական է Քիւրէլեանի՝ օրուան քաղաքական դէպքերուն հանդէպ ցուցաբերած հետաքրքրութիւնը։ Հեղինակը անտարբեր չէ քաղաքին մէջ պատահած անցուդարձերուն նկատմամբ։ Ան բանաստեղծութիւն մը գրած է նաեւ 1818 Ապրիլի 16ին, Հալէպի մէջ կուսակալ Խորշիտ Փաշայի[7] կողմէ սպանուած 11 կաթոլիկներու նահատակութեան առիթով («Վ[ա]ս[ն] հալածանաց որ եղեւ ՚ի Բերիա յամին 1818», տես՝ իր ձեռագիրը, թերթ 81-Ա)։ Նախապէս

իրեն վերագրած ենք նաեւ Հալէպի 1822ի մեծ երկրաշարժին նուիրուած «Ողբ» մը[8]։

Քիւբէլեան ունի նաեւ զանազան եկեղեցականներու ընտրութեան եւ օծման առիթով յօրինուած բանաստեղծութիւններ եւ այլեւայլ անցուդարձերու առիթով գրուած այլ գործեր եւս։

Որքան ծանօթ է մեզի, պատմական դէպքերու վրայ հիւսուած Քիւբէլեանի այս բանաստեղծութիւնները մեր մատենագրութեան պատմութեան մէջ եզակի երեւոյթ են։ Արդարեւ, յատկանշական է երբ հայ բանաստեղծ մը Հալէպի պատմութեան ու հոն պատահած դէպքերուն առիթով ստեղծած ըլլայ նոյնանման գրական գործեր։ Հետեւաբար մենք դէմ յանդիման կը գտնուինք քաղաքացիական գիտակցութեամբ օժտուած անձի հետ։

Բանաստեղծութիւններուն հեղինակը՝ Աբրահամ Արք. Քիւբէլեան-Եկէնեան ծնած է Քիլիս, 1786ին։ Փոքր տարիքին անցած է Հալէպ, ապա ղրկուած է Զմմառու Վանքը, ուր կուսակրօն քահանայ ձեռնադրուած է 1809ին։ 1823ին ստացած է եպիսկոպոսական աստիճան ու նշանակուած է Հալէպի հայ կաթոլիկ համայնքի առաջնորդ, նոյն պաշտօնին վրայ մնալով մինչեւ իր մահը՝ 15/27 Յուլիս 1832։

Հեղինակ է գրաբարով գրուած քանի մը տասնեակ բանաստեղծութիւններու, որոնց մեծ մասը նուիրուած է Աստուածամօր։ Ան իր ձեռագիր օրատետրին մէջ նախ հայերէնով, ապա՝ արաբերէնով ամենայն բարեխղճութեամբ օրագրած է նաեւ 1819-1820ի Հալէպի մեծ ապստամբութեան մանրամասնութիւնները։ Իր տեսակին մէջ եզակի այս գործը Տէր Պետրոս Արք. Միրիաթեանի եւ տողերուս հեղինակին համատեղ աշխատանքով 2008ին լոյս տեսաւ առանձին հատորով[9]։

Հայերէնի ու արաբերէնի թարգմանած է նաեւ բազմաթիւ գիրքեր[10]։

Մատրէ՝ Աբրահամ Արք. Քիւբէլեան-Եկէնեանի առաջին բանաստեղծութիւնը, նուիրուած՝ Հալէպի 1813ի ժողովրդական ապստամբութեան։

Վ[ա]ս[ն] Անցից Ապստամբացն Քերիոյ

Արի՛ անցաւոր — յասպարէզ կենաց,
Ընթա՛ ը[նդ]առաջ — յայս վայր մրցանաց,
Արձակերասան — յեղյեղ եզերաց,
Նոր լուր թակարդել — յուռկան լըսելեաց։

Ահ մեծ է ասէ — փող հեթանոսաց,
Ի ձեռս անկանիլ — հաստչին հասակաց,
Սուր Ս[ուր]բ Ա[ստուծո]յ — ի մէջ կոհակաց,
Հանէ յընթերաց — ըզշունչ վիշապաց։

Աչք իմ ո՛չ տեսցէ — դրօշակ պարծանաց,
Առե[ա]լ վերամբարձ — ի յաջ վատթարաց,
Յանկարծ եղանիւն — ճարակ որսորդաց
Թէ եւ փախնուցուն — ի բռիչըս արծուեաց։

Ձեռագիր էջ մը «Վասն Անցից Ապստամբացն Բերիոյ» բանաստեղծութենէն

Թէ վա՜շ կարդացից առ խոր խարանաց,
Զոր յիս կ՛արեէր նոցուն գործ ազդեաց,
Այլ զիս առ ի պար խմբի լալակցաց,
Յաշխար հրաւիրեն նոր տիք պատանեաց:

Ո՞ւր են անձկագեղք ո՞ւր գոյն երեսաց,
Ահա՛ լըրացաւ պ[ատ]գամ կանխասաց,
Դէմք են ի դեղին եւ մէջք ցաւագգեաց,
Հաս ահ արհաւիրք սրտի եւ աչաց:

Արդեօք կամակար արդեօք ըստ դիպաց,
Սիրտն ճէպ ի ճէպ բաղխէ ի լանջաց,
Հա՛րց զայդ պատահար այդ իսկ փորձողաց,
Մեկնել ո՛չ գօրեն առ քստմնել հերաց:

Որչափ մակաղիս ի սէր քո կենաց,
Նոյնչափ ճարակես ըզքոյն ի յաստեաց,
Կա՛ց ու հեռացե[ա]լ նանիր պատրանաց,
Չի՛ք ինչ սառնորակ ի սիկ յորձանաց:

Երկիր ի լինել յանդիմանակաց,
Ահեղ ատենին պարտեօք յանցանաց,
Յայնժամ ո՛չ հնարք ոչինչք գոյու[թ]ե[ան]ց,
Ճառեն փրկու[թ]ե[ան] ի դատաստանաց:

Ո[ր]պ[էս] զայս քաղաք վայր ապստամբաց,
Ոչնինչ եւ կորով ի պատժոյ թափեաց,
Զոր ի շատ ամաց ո՛չ ոք նըւաճեաց,
Բայց Չափան Օղլի սաստիւք սպառնալեաց:

Լարեա՛ զաղեղունս քոյոց հայելեաց
Տե՛ս զի հօրամոյն մանկիկ խուն ամաց
Ո[ր]պ[էս] ո՛չ ՛ի հուր ո[ր]պ[էս] ո՛չ ի սուր,
Լակով երկիւղիւ տիրէ քաղաքաց:

Տեսիլք նախընթաց ազդումն լըսելեաց,
Եւ նախ է փայլակ քան ձայն որոտմանց,
Փայլակ հոչակի գործ մեծ վճարեաց,
Միոչ չեւ արարե[ա]լ գնդից ճամբարաց:

Սա հաս ժամանեալք հեռուստ ի վայրաց,
Ի ջահ բարկացայտ գիշեր ճեմագընաց,
Գիշեր համարեալ անփոյթ վըտանգաց
Այն ինչ օրհասին հանգիստ պաշարեաց:

Հասեալ սա ըզմեօք ի մէնջ բացակաց,

Զաւաճ ապստամբ
Վեցեակ անը[նդ]հատ
Եհար ի յաւար

անդուլ պաշարեաց,
ամսովք մարտու[թ]ե[ան]ց,
ի սայր սուսերաց:

Ապա դէմ եդեալ
Զակառ մեր խնդրէր
Այլ մեր բռնաւորք
Անգործ ի պատուէր

մերոց նահանգաց,
զոր նախ պահանջեաց,
խ[որ]հ[ուր]դ զիւր կամաց,
կարգին հրամանաց:

Իսկ նա ըզզայրոյթ
Պահէր լըրու[թեամ]ք
Եւ ի հիւս վարմին
Ըզտիւ ըզգիշեր

խորին այդ վիրաց,
ներքոյ պատանաց,
մօտալուտ չարեաց,
անդուլ դեգերեաց:

Գայ պատրաստու[թեամ]ք
Խումբ խումբ խառնիխուռն
Ը[նդ] իւր բերելով
Հանդէպ քաղաքին

ճոխ հանդերձանաց
բազմու[թեամ]ք զօրաց,
ճամբար ինչ գերեաց,
բանակ յարդարեաց:

Նոր ամպ ձեռագործ
Ջերկնիւք տարածե[ա]լ
Այնպ[էս] ահագին
Մինչ զի ի կանանց

ծուխ դնբաւօթաց,
հովանի զօրաց,
մուտք այս բանակաց
մահու վընասեաց:

Բարբառ հրապարակ
Անդէն ընթանայր
Անյոյզ աներկիւղ
Այլ գործ ի ծածուկ

ի գլուխ մեսրոսաց,
դքսին ի դիմաց,
կալ ի վըտանգաց,
հնարէր դաւանաց:

Յառաջ մեծագին
Ըզդաւ թագուցեալ
Կիսոյ ըզպաշտօն
Այլոց ըզպատիւ

ձըրիւք պարգեւաց,
ի սէր կախարդեաց,
ետ գործակալաց,
խորհրդականաց:

Հասան Խալասեան
Կարգեալ հրոսպետ
Սոյն սա հպատակաց
Սաստիկ հարուածովք

մին յերեւելեաց,
զիշխանս խրամատեաց
տոյժըս տուգանաց,
բարդե[ա]լ կուտակեաց:

Կարծէր յապաղել
Ըզդուքս պատաղեալ
Այլ ել ի դերեւ
Քանզի նախագրաւ

զօրհաս իւր վշտաց,
յայն գործ դառնու[թ]ե[ան]ց,
խ[որ]հ[ուր]դ իւր կամաց,
մահու ժամանեաց:

Սա ժառանգ թըւէր
Ի գործ ի խորհուրդ

բարեմասնու[թ]ե[ան]ց,
քան զայլս ի պետաց

Այլ լեալ հրոսապ[ետ] եղեւ գիշախաւճ,
Գոգցես այդ պաշտօն ըզնա փոփոխեաց:

Պատիր են ազդմունք ըզգայարանաց,
Թէ դատ արասցեն լոկ ըստ երեսաց,
Արդյր շպարի ի տիպ դենարաց
Զոսկւոյն իսկ կեղծեալ յաչըս տեսողաց:

Ունայն են պարծանք արի կորովեաց,
Ունայն եւ ըսքանչ յաւերժ կերտելեաց
Ունայն են մըթերք ոսկւոյ մեծատանց,
Ունայն են խորհուրդք հին խորագետաց:

Այն ինչ անզգոյշք հինից յարուցմանց,
Առնոյր կուսակալն ըսկիզբն դաւանաց,
Յետ պառակտելոյ զիշխանս ի միմիանց,
Զհիւրպլի Խպրահիմ խնդրէր ի պետաց:

Այս այր ծարաւի ոսկւոյ եւ փառաց,
Բռնի նըւաճէր զայս մայր քաղաքաց,
Նըմին հակառակ ո՛չ ոք յիշխանաց,
Իշխէր ը[նդ]խառնիլ ի դատ հպ[ատա]կ[ա]ց:

Ահեղ ծերունի խոժոռահայեաց,
Ունէր ներկանայ ըզհերըս մօրուաց
Յուժկու ի հագագ կոպիտ ըստ դիմաց,
Խոշոր անդամովք գոգ դեւ մարմնազգեաց:

Յորժամ կուսակալն զայն զիւր կամս յայտնեաց,
Երկիւղ անհնարին ըզմեզ պաշարեաց,
Քանզի կարծէաք թէ մարտ դառնու[թ]ե[ան]ց,
Կըլանել զհամայնս ը[նդ] հուպ ժամանեաց:

Յանյժամ համօրէն խումբ զօրավարաց,
Ը[նդ] մէջ քաղաքին լինէր զինագգեաց,
Անդէն եւ փութով ելք ճանապարհաց,
Եւ դրունք աղխեցան ի քաղաքացեաց:

Դիմեն դիմագրաւ քաջք շահատակաց
Խմբին ի Քարլըք[11] առ մարտ թշնամեաց,
Խուճապ առ խուճապ խառնին երերաց
Ը[նդ] ձայն հրացանից ձայնք դնքանօթաց:

Երկիւղ պաշարման դողդող վարանաց,
Հասին առ ժամայն սրտի եւ ծնգաց,
Ուր եւ փախնուցուն բնակիչք եզերաց,

Կարծեն թէ սուսերք ինքեան յետընթաց:

Ամպրոպ ամբարձաւ խուժան դաժանաց,
Գոգ շարժ անդնդոց ի խիտ փոթորկաց,
Ի յութ վայրկենի քաղաք հեստողաց,
Առաւ ապստամբ քսան եւ ութ ամաց[12]:

Ի խոան ամբոխին Հասան ժամանեաց,
Զիւրոց խորհրդոց դէմ տերազերծեաց,
Վստահ բարբառ[աւ] ը[նդ] իւր ընկերաց
Մատնել զԻպրահիմ իւրոց թշնամեաց:

Զի՞ է ձեզ եղբարք ասէր զինակրաց,
Փոխել ը[նդ] միոյ զոգիս մեր բազմաց,
Զի՞նչ պէտք են մարտի արեան հեղու[թ]ե[ան]ց,
Լինել թշնամի մերոց սիրելեաց:

Ո՛չ ոք առ ի մէնջ դիպող է չարեաց,
Կամ մի՛ կորուսցէ գլխոյն ի հերաց,
Մի՛ լոկ հրովարտակ սաստիկ հրամանաց,
Փակե[ա]լ ըզմիոյն գլխոյ խնդրանաց:

Յայն բան հրապուրեալ վատ[եա]լ տրգէտաց
Խնդրեն զԻպրահիմ տալ արեանարբուաց,
Յայնժամ կորացաւ այս մայր քաղաքաց,
Պոտիւք անխընայ վատթար լլկանաց:

Թէ կայր յիմ սրտի նշմար ինչ կարեաց,
Հանդէպ նըկարեմ սոցուն գործ վատաց,
Այլ իմ պատաղեալ յեղերերգու[թ]ե[ան]ց,
Ի վերջ նահանջեմ ի կարետրաց:

Զեղաւ լիացաւ չափ այդ[13] յանցանաց,
Տ[է]ր ո՛չ համբերէ ժամ տալ ուղղու[թ]ե[ան]ց,
Ծերոց հեկեկանք այրեաց ջուր աչաց
Լըցին ըզմիջոց օդոց սահմանաց:

Անցիք անողորմ անտէր տընանկաց,
Ցցե[ա]լ ի ն[ո]ս[ա] ըզտէգ նիզակաց,
Հանգոցք հրապարակք այս մօր քաղաքաց
Զանպարտ վկայեն զարեան հեղու[թ]ե[ան]ց:

Ահա՛ փոխ առնուք դաւաճանու[թ]ե[ան]ց,
Կրկին տոկոսիւ արծաթսիրու[թ]ե[ան]ց,
Նաւք ձեր ո՛չ հասցեն ի կայս նաւաստեաց,
Հողմք ձեր ի կարթել ի խեղդ պըտուտկաց:

Զարթի՛ք ի քընոյ — որդիք տիտանաց,
Ահա՛ առաքուր — զարդք[14] ձեր պըսակաց,
Արբեալք եւ անկեալք — ՚ի սայր սուսերաց,
Պարանոցաբուղխ[15] — արեան վըտակաց:

Դարձցուք մեք ի յոճ — վիպող զըրուցաց,
Զանցից Հիւրպլւոյն — զոր Հասան խնդրեաց,
Որ եւ ի լըսել — զայնց հրապուրանաց,
Դարձե[ա]լ զիւր օրհաս — անշուշտ հաստատեաց:

Ելեալ ի նըժոյգ — իւր երիվարաց,
Ճեպէր ի խուսել — յիւրոց ատելեաց,
Ծունկ իւր լեալ անտոկ — ըղձի հրամանաց,
Անկեալ ընթանայր — հետի կորագընաց:

Մտորեւ՝ Աբրահամ Աբք. Քիւբէլեան-Եկէնեանի երկրորդ բանաստեղծութիւնը, նուիրուած՝ Հալէպի 1813ի ժողովրդական ապստամբութեան։

Ս[ա]կս Ապստամբու[թ]ե[ան] Քերիոյ

Ո՞հ հուր փաղաղեալ — ՚ի մէջ ընթերաց
Առե[ալ] նիւթ այրման — յանշէջ դուրսակսաց
Զիարդ փոյթ զատաւ — սիւգ անդորրաննաց
Փոխե[ա]լ առ ՚ի յոյզ — անսանձ մրրկաց:

Յորդան ներկեցան — լճակք ջրմղաց
՚Ի գաւիթ դքսին — յարիւն ճապաղեաց
՚Ի լեշ ելեւէջ — թափե[ա]լք ՚ի դ[ա]հճ[ա]ց
Գլ[ու]խ առանձին — քեցե[ա]լք ՚ի յանճնեաց

Թ[ա]փ[ո]ւր թրստանի — ՚ի դրնփ[ա]կ[ա]ց
Պրծե[ա]լք հովանոցք — ՚ի մած տ[ա]խտ[ա]կ[ա]ց
Հողմունք համ[ա]խ[ո]ւմբիւ — յ[ա]րձ[ա]կի խորխընթք[ա]ց
Զեղերց դիպելոց — սուլեն տաղասաց:

Ծառքն բերեքեւ — շարժին կորագնաց
Հրաւէր ակնարկին — ՚ի մուտ պ[ա]րտիզաց
Բայց ո՛չ ՚ի զուարթ — այլ գոլ լալագգե[ա]ց
Զի որդեկորոյս — կան ՚ի վաղերաց:

Ձայնք ՚ի ք[ա]ղ[ա]քէն — ձայնք ՚ի դրաճէ
՚Ի մռայլ գիշերին — ազդեն լսելեաց
Ճիչ եւ նուագմունք — խ[ա]ռն[եա]լք ՚ի միմիանց
Հրճուանք եւ աղէտք — ձեռնակցորդք իր[ե]ր[ա]ց:

Մեր միտք շլացան — ՚ի բաք ընտր[ա]ն[ա]ց

Այլ ո՛չ որոշեն
Մ[ա]հ[ո]ւ նշ[ա]ն[ա]կ
Կարծեմք հ[ա]ն[ա]պ[ա]զ

Ջերկիտ առաքես
Գոգ փոյթ զմարդ
Քոյդ երեվարիկք
Սուր սուր սլանան

՛Ի տարապարհակ
Վարեն հր[ա]պ[ա]ր[ա]կի
Տանել յայլ ք[ա]ղ[ա]ք
Կ[ամ] գոլ բեռնակիրք

Կ[ամ] աւելածու
Յայց բոնի վարին
՛Ի բ[ե]ռնալ գյարդ
Լքանին տնանկ

Ողբան չորեքին
Ընդ պէսպ[էս] արկածք
Չի մարտք եւ մարտիկք
Խռիւ անկանայ

Նորամպ ձեռագործ
Ջերկնիւք տարածե[ա]լ
Այնպ[էս] ահագին
Մինչեւ ՛ի կանանց

Զպեյզ քաջ ընդ փոյթ
Շրթամբք արձակե[ա]լ
Վա՞ղ ձեզ ասելով
Երթայք առանձին

Քան ինչ կար ասել
Մինչ չեւ է ելե[ա]լ
Լցե[ա]լ զփ[ա]փ[ա]ք
Ներեն գալ հանդէպ

Անպ[ա]րտ ես ասէ
Չիմ գոյս ոչ խնդրեմ
Միայն թէ յ[ա]ռ[ա]ջ
Սպան զՀասան

հանդէս ՛ի կարե[ա]ց
գոչ քնդանօթաց
թեպ[ետ] զաւետեաց:

լանջաց թշնամե[ա]ց
նախ մահ ժամանե[ա]ց
հեծելազօրաց
յորսալ հզօրաց:

բոնու[թեամ]ք բրոց
ը[նդ] որբանեկաց
զոյտս երիվարաց
աղի ծանրու[թ]ե[ան]ց:

բնակարանաց
գումարք բն[ա]կչաց
եւ զկեր չորեաց
զիւրեանց գործ ձեռաց:


եղ[ա]ն[ա]կք ամաց
ինքեանց դիմակաց
ոխք եւ արհ[ա]միրք
զզարդ դեմետրայ:

ծուխ քընդանօթաց
հովանի զօրաց
մուտ այս բանակաց
մահու վնասեաց:

լինէր յետագնաց
տէգոց գտանաց
մեր բ[ա]ր[ե]կ[ա]մ[ա]ց
՛ի ճաշ խրախճ[ա]ն[ա]ց:

զիշխան իշխանաց
շունչ իմ յընթերաց
վերջին իւր կ[ա]մ[ա]ց
դքսին երեսաց:

յիմոց մեղանաց
եւ ոչ զարեւն կենաց
զանարժան կենաց
հանդէպ իմ աչաց[16]:



Ձեռագիր էջ մը «Սակս Ապստամբութեան Բերիոյ» բանաստեղծութենէն

Ո[ր]պ[էս] եւ կամէր
Յ[ա]ո[ա]ջ զՀասան
Անդէն առն միճ
Երկուց դիակունք

այնպ[էս] յաջողեաց
զրաւէր 'ի յաստեաց
միւսոյն պատահեաց
յերկիր հոտոտե[ա]ց:

Արդեօք եզերիս
Յերկբայս զմերոյս
Շիջե[ա]լ քէ կպցեալ
Մ[ա]տ[ա]մբ դաւադիր

կարծեօք յերկոսանց
սիրոյ սլացմանց
յիւր զճաճ[ա]ն[ա]ց
աւուրց շրջանաց:

Չիք կիրք կարեւէր
Ք[ան] չար վճարել
Ք[ան] զայդ յոռեգոյն
Լինել տեսազերծ

ազդարար կ[ա]մ[ա]ց
փ[ո]խ[ա]ն երախտեաց
'ի մէջ սիրելեաց
բանից եւ գաղտնե[ա]ց:

Մեկնե[ա]լ հեռացիր
Չի աւարառուք
Հազիւ քէ գտցես
Զոք հ[ա]յ[ա]տ[ա]րիմ

ով դու յայնպիսեաց
ըս[տ] աւազակաց
յետ ժ[ա]մ[անա]կ[ա]ց
'ի բարեկամաց:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Անոնք ծանօթ էին նաեւ «Սայէտ» կամ «Սիյատա» անունով, ընկերութեան մէջ կը կազմէին յատուկ դասակարգ եւ մեծ թիւ կը ներկայացնէին մանաւանդ՝ Հալէպի մէջ: *Էշրաֆ*ները կը սիրէին կարծել, որ իրենք սեռած են Մուհամմէտ Մարգարէի սերունդներէն եւ ունէին պետութեան կողմէ իրենց տրուած բազմաթիւ մենաշնորհներ: Անոնք զերծ կը կացուցուէին որոշ տուրքերէ, զինուորագրութենէ եւ կը վայելէին անձեռնմխելիութեան իրաւունք: Այս բոլորով, կրցած էին գրաւել յատուկ դիրք՝ հալէպեան ընկերութեան մէջ:

[2] Հալէպի կուսակալ նշանակուած է հիճրէթի 1226ին (14/26 Յունուար 1811-3/15 Յունուար 1812):

[3] Ան ծանօթ է նաեւ Չապան Օղլի - Չոպան Օղլի կամ Ճապպար Զատէ անուններով (محمد جلال الدين باشا المعروف بجبان أوغلي- جوبان أوغلي أو جبّار زاده): Քնիկ պոզաուքցի է: 1805ին նշանակուած է կուսակալ Սեբաստիոյ, 1808ին՝ Տիարպեքիրի, 1813ին՝ Հալէպի, 1816ին՝ Կարնոյ, ապա՝ Ատանայի, Մարաշի (2 անգամ), հուսկ՝ կրկին Սեբաստիոյ, եւն.: Մասնակցած է ռուսերու եւ պարսիկներու դէմ օսմանցիներու մղած պատերազմներուն: Հալէպի պատմութեան նուիրուած գրականութեան մէջ յիշուած է որպէս քաղաքին ամէնէ՛ն բռնատէր ու ամէնէ՛ն արիւնարբու կուսակալներէն մէկը: Սպանուած է բազմաթիւ անմեղներ ու գրաւած՝ անոնց ունեցուածքը, այնքան՝ որ շատեր, փրկելու համար իրենց կեանքն ու ինչքը, ստիպուած հեռացած են քաղաքէն: Մահացած է 7/19 Նոյեմբեր 1846ին:

[4] Հալէպի մեծահարուստ վաճառականներէն ու եղիչերիներու մեծատուններէն Իպրահիմ Աղա Հարպըլի (إبراهيم آغا حربلي): Կուսակալ Չոպան Օղլի իմանալով անոր հարստութեան մասին, ձերբակալած է զայն ու բանտարկած իր մօտ, թուրք կուսակալներու նստավայր՝ Շեխօ Պաքըր անունով ծանօթ վայրին մէջ ու հրամայած է չարչարել զայն օրն ի բուն: Չինք մերկացնելով՝ նստեցուցած են տաքցուած պղնձեղէններու վրայ, այնքան՝ որ մարմնին իւղերը սկսած են հալիլ: Շեծի տակ խոստովանած է իր հարստութեան թաքստոցները եւ երբ կուսակալին զինուորները

համոզուած են, որ տիրացան անոր ամբողջ հարստութեան՝ գլխատած են զայն: Սպանութեան հիճրէթի 1228ին (23 Դեկտեմբեր 1812/4 Յունուար 1813-11/23 Դեկտեմբեր 1813), եղած է 75 տարեկան (محمد راغب الطبّاخ الحلبي، *إعلام النبلاء بتاريخ حلب الشهباء*, Մուհամմէտ Ռաղէպ Ալ Թապպախ Ալ Հալապի, Գ. Հտր., Բ. տիպ, Հալէպ, 1988, էջ 305), մինչ Ալ-Շէյխ Քամէլ Ալ-Ղզզի (الشيخ كامل الغزّي، *نهر الذهب في تاريخ حلب*, Գ. Հտր., Բ. տիպ, Հալէպ, 1993, էջ 249) սպանութեան թուական ցոյց կու տայ հիճրէթի 1229ը (12/24 Դեկտեմբեր 1813-1/13 Դեկտեմբեր 1814):

[5] Նկատի ունի ենիչէրիներու Հալէպի մեծամեծներէն՝ Հասան Աղա Իպն Հուսէյն Աղա Խալաս Ջատէն: Հալէպի պատմութեան նուիրուած գիրքերու մէջ կան անոր գործած չարիքներուն ու բռնութիւններուն մասին բազմաթիւ մանրամասնութիւններ (տե՛ս, օրինակ՝ Եուսէֆ Իպն Տիմիթրի Իպն Ճըրճոս Ալ Խուրի Ապպուտ Ալ Հալապիի يوسف بن ديمتري بن جرجس الخوري عبود الحلبي، *حوادث حلب اليومية ١٧٧١–١٨٠٥، المرتاد في تاريخ حلب وبغداد*-ի հատորը, հրատարակութեան պատրաստեց՝ Ֆաուուազ Մահմուտ Ալ-Ֆաու-ուազ, Հալէպ, 2006, էջ 321-322): Յիշեալը իր ծագումով կը պատկանէր *էշրաֆ*ներու դասակարգին, բայց 1804-1805ի ապստամբական շարժումներուն կռուած է ենիչե-րիներու կողքին:

Հիճրէթի 1229ին (12/24 Դեկտեմբեր 1813-1/13 Դեկտեմբեր 1814) սուլթանական հրովարտակ (ֆերման) մը հասած է Հալէպ, որ կը հրահանգէր իր եւ երկու երեւելի ենիչէրիներու սպանութիւնը: Մահապատիժներու գործադրութենէն ետք, անոնց կալուածները վաճառքի հանուած են Պոլիսէն յատուկ ժամանած՝ Իպրահիմ Աղա Սալհըղոր անուն պաշտօնեայի մը կողմէ (Ալ-Ղզզի, նոյն):

[6] Մուհամմէտ աղա Իպն Հասան Քըճճէ: Հալէպի 1819-1820ի պատմական ապստամբութեան գլխաւոր դեկավարն է: Եղած է նաեւ Հալէպի 1804-1805ի ժողովրդական ապստամբութեան դեկավարներէն: 1820 Յունուար 21-Փետրուար 2ին, ապստամբութեան աւարտէն եւ օսմանեան զօրքերու քաղաք մուտքէն ետք, հինգ այլ դեկավարներու հետ ձերբակալուելով, գլխատուած է: Անոնց գլուխները ի ցոյց մարդկանց դրուած են Հալէպի բերդին առջեւ, ապա կուսակալ Խորշիտ Փաշա զանոնք դրկած է Պոլիս՝ սուլթանական պալատ:

[7] Խորշիտ Ահմէտ Փաշա, ծագումով վրացի թուրք քաղաքական եւ զինուորական գործիչ: Ծնած է Թիֆլիս, մօտաւորապէս 1758ին: 7 տարեկանին առեւանգուելով, որպէս ստրուկ ծախուած է թաթարի մը: Քանի մը «տէր»եր փոխելէ ետք, տիրացած է ազատութեան ու մտնելով զինուորական ասպարէզ՝ վարած է բազմաթիւ բարձրաստիճան պաշտօններ, հասնելով մինչեւ սատրազամութեան (մեծ վեզիր, 1812-1815): Տարբեր ժամանակներու եղած է կուսակալ Եգիպտոսի, Մորայի, Պոսնիայի, Սելանիկի, Ռումելիի, Եանիայի, եւն.: Եղած է նաեւ 1821ի յունական ապստամբութիւնը բռնութեամբ ճնշող ու ահաւոր կոտորածներ կազմակերպող Օսմանեան բանակին ընդհանուր հրամանատարը:

Անոր մահուան մասին աղբիւրները կու տան տարբեր թուականներ: Անոնցմէ մէկը կը յիշէ, որ ան մահացած է յունական ապստամբութեան միջոցին, Հոկտեմբեր 1821ին. այլ աղբիւրներ կու տան 1822 եւ 1823 թուականները:

[8] Միհրան Մինասեան, «Ողբ Ի Վերայ Քերիա Քաղաքին», *Հասկ Հայագիտական Տարեգիրք*, Նոր Շրջան, Թ. Հտր., Անթիլիաս, 1997-2001, էջ 417-421:

[9] ثورة الحلبيّين على الوالي خورشيد باشا العثماني (١٨١٩–١٨٢٠) *يوميّات المطران إبراهام كويلان*، تحقيق وتقديم المطران بطرس مرعاتي ومهران ميناسيان: (Հալէպցիներու ապստամբութիւնը կուսակալ Խորշիտ Փաշային դէմ (1819-1820), Աբրահամ Արք. Քիւրէլեանի օրագրութիւնը), Բնագիրի հրատարակութիւն, յառաջաբան եւ ծանօթագրութիւններ՝ Պետրոս Արք. Միրիաքեանի եւ Միհրան Մինասեանի, Հալէպ, 2008, 240+8 էջ:

[10] Իր ընդարձակ կենսագրականը տրուած է վերոնշեալ արաբերէն հատորին մէջ, իսկ հայերէն կենսագրականը տուած ենք *Հասկ Հայագիտական Տարեգիրքի* Նոր Շրջանի Ժ. հատորին մէջ, Անթիլիաս, 2002-2006, էջ 226-230:

[11] Հալէպի թաղամաս՝ ԱլՄըշաթիէ եւ Մասլախ ԱլՄըսուաք թաղամասերուն միջեւ, Պանքուսա թաղամասի հարեւանութեամբ: Վերջինս եղած է ենիչերիներու կեդրոնը:

[12] Նկատի ունի հիճրէթի 1228ը (23 Դեկտեմբեր 1812/4 Յունուար 1813-11/23 Դեկտեմբեր 1813), որ յիշեալ ապստամբութեան թուականն է:

[13] Ը.՝ թերի օրինակը՝ այդց:

[14] Ը.՝ թերի օրինակը՝ զարդ:

[15] Ը.՝ թերի օրինակը՝ պարանոցաբուղբ:

[16] Ակնարկութիւնը կ'երթայ կուսակալ Չոպան Օղլիի կողմէ կազմակերպուած եւ վերեւ յիշատակուած խնճոյքին, երբ ան իր մօտ հրաւիրելով ենիչերիներու 18 ղեկավարներ, կը ձերբակալէ զանոնք ու մէկ առ մէկ կը գլխատէ: ԱլՂըզզի կը պատմէ (էջ 247-248), որ կուսակալը նախապէս իրեն մտերիմ դարձուցած է ենիչերիներու ղեկավարներէն՝ Իպրահիմ աղա Իպն Խալաս անուն մարդ մը, որ կը հպարտանար, թէ ինք բարեկամն ու սիրելին էր կուսակալին: Կուսակալը երբ վստահ կ'ըլլայ, որ Իպն Խալաս կուրօրէն կը հաւատայ իրեն, անոր միջոցաւ խնճոյքի կը հրաւիրէ ենիչերիները ու կը գլխատէ զանոնք: ԱլՂըզզի կ'աւելցէ, որ Իպն Խալասի մտերիմ ենիչերիներէն մէկը յաճախ կը զգուշացնէր զինք Չոպան Օղլիէն ու կ'ըսէր, որ անոր ցուցաբերած սէրը կեղծ է, բայց ան չէր անսար իրեն տրուած նախազգուշական խրատներուն: Երբ զինք նախազգուշացնող մարդը եւս կը մտնէ խնճոյքին վայրը ու կը տեսնէ աւազանին շուրջ շարուած իր ընկերներուն գլուխները, կը գիտակցի խաբէութեան եւ իրեն ու ընկերներուն վիճակուած ճակատագրին, կը մօտենայ կուսակալին եւ ցոյց տալով անոր կողքին կանգնած Իպրահիմ Իպն Խալասը հարց կու տայ, թէ այս է՞շն ալ պիտի սպաննուի միւսներուն նման, եւ կուսակալին դրական պատասխանէն ետք, կը խնդրէ, որ ան իր աչքերուն առջեւ նախ սպաննէ Իպն Խալասը եւ յետոյ միայն սպաննէ զինք: Ու այդպէս ալ կ'ըլլայ: Այս դէպքին է, որ կ'ակնարկէ Քիւրէղեան *«Մպան զՀասան հանդէպ իմ աչացդ»* նախադասութեամբ:

ARCHBISHOP APRAHAM KUPELIAN-YEGENIAN'S TWO POEMS DEDICATED TO THE POPULAR UPRISING OF ALEPPO IN 1813

(Summary)

MIHRAN MINASIAN
mihran.min@aya.sy

Two original unpublished poems of Archbishop Apraham Kupelian-Yegenian (Kilis, 1876-Aleppo, 1832), which are dedicated to the 1813 popular uprising of Aleppo, are put into circulation for the first time. The poems describe the events and decry the huge losses and sufferings that the "mother city", Aleppo, underwent.

The first poem has 43 four-line verses. The second consists of 18 verses, both written in complicated grabar.

Two handwritten copies of the first poem have survived (the second copy is incomplete and has the last 7 verses only). The second poem survives only as a handwritten draft copy of the author.

Based on historic events, these two poems are unique phenomena in Armenian medieval literature, as one rarely comes across cases where an Armenian poet writes a poem on events that took place in Aleppo.

In his introduction, Minassian provides certain details regarding the uprising and the author of the poems.

ԷՋԵՐ ՀԲԸ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹԵՆԷՆ

ՎԱՉԷ ՂԱԶԱՐԵԱՆ
mayrenipublishing@comcast.net

Աւելի քան հարիւրամեայ ազգանուէր ծառայութեամբ հայ ժողովուրդին ներկայացող Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պատմութիւնը դարձած է անբաժանելի մասնիկը հայ ժողովուրդի ընդհանուր պատմութեան եւ դեռ կը սպասէ իր պատմագրողներուն եւ ուսումնասիրողներուն։

Անցնող քանի մը տարիներուն որոշ աշխատանքներ կատարուեցան այդ ուղղութեամբ Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ, սակայն իրենց ծրագրումով, տարողութեամբ կամ բնոյթով անոնք մնացին մասնակի։

Կը յուսացուէր որ 1906ին Գահիրէի մէջ ծնունդ առած միութեան կեդրոնական Վարչական Ժողովին պատուէրով ու հոգածութեամբ կատարուած պատմագրական ճիգը, որուն արդիւնքը լոյսին տրուեցաւ «Դար Մը Պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան» խորագիրը կրող երկհատորեակով,- այլապէս ալ չնորհակալ ու չնորհաւորելի աշխատանք,- ըլլար աւելի պարփակուն։ Բայց չէր։

Ցաւալի էր նաեւ լեզուական եւ խմբագրական անփութութիւնը՝ ընկողմանած զոյգ հատորներու ամբողջ տարածքին, կողքէ կողք[1]։

Կազմակերպութիւնը, ինչպէս իր առաջին ատենագրութիւնն իսկ կը նշէր յատակօրէն, կեանքի կոչուած էր «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անունով[2], մինչ երկհատորեակը լոյսին բերուած է «Հայ Բարեգործական...» անունին տակ։ Իսկ Միութեան գերագոյն ղեկավար մարմինը, որուն պաշտօնական անուանումն էր առաջին օրէն «Կեդրոնական Վարչական Ժողով»[3], իբրեւ երկհատորեակին հրատարակիչ ներկայացուած է «Կեդրոնական Վարչութիւն» տարազումով։

Կողքէն սկսած այս զոյգ թերացումները կարծէք խորհրդանշական նախատուտքն են հատորը լեցնող լեզուական եւ յատուկ անուններու սխալներուն եւ ուրիշ թերիներու, որոնց ուղղումը կը կարօտի առանձին գրքոյկի մը եւ որոնք անհրաժեշտ կը դարձնեն երկհատորեակին վերահրատարակումը բծախնդիր սրբագրութենէ ետք։

Այդ թերիներու սրբագրումը հաւանաբար կատարենք այլ առիթով։ Նպատակադրուածը, հո՛ս, հրապարակումն է կարգ մը փաստաթուղթերու, յուսալով որ անոնք ծառայեն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պատմարժան գործունէութեան կարգ մը մոռցուած էջերու լիչեցումին եւ ուրիշ էջերու աւելի խոր ուսումնասիրութեան։

Բոլոր փաստաթուղթերուն բնագրերը կը գտնուին Կեդրոնական Վարչական Ժողովին տրամադրութեան ներքեւ[4]։

Հրատարակութեան տրուող նիւթերը կարելի է խմբել երեք դասակարգումով։ Առաջին խումբին կը պատկանին գրութիւններ, որոնք կը յուշեն թէ քանանականներուն, երբ տակաւին հայ մտաւորականներ, գրողներ, ուսուցիչներ, նահատակ գրագէտներու կողակիցներ չէին թօթափած նիւթաբարոյական հաշմիչ հետեւանքները Ցեղասպանութեան, ինչպէս նաեւ Զմիւռնիոյ, Կիլիկիոյ

եւ այլ աղիտալի իրադարձութիւններու, Միութեան կեդրոնական Վարչական ժողովը գնահատելի նախաձեռնութեամբ մը հիմը կը դնէր Հայ Մտաւորականներու Օգնութեան Յանձնաժողովի մը, որ նախատիպարը պիտի ըլլար տասնամեակներ ետք ստեղծուած Ալեք Մանուկեան Մշակութային Հիմնադրամին։

Բազմաթիւ նամակներէն հոս ներկայացուցած ենք քանի մը հատ միայն։ Նամակներուն ամբողջութեան վրայ հակողներ անոնց մէջ պիտի գտնեն էջ առ էջ քակուող ողբերգութիւնը հայրենազրկուած մտաւորականներու եւ պիտի հաստատեն ՀԲԸՄի վարիչներուն փրկարար հոգածութիւնը։ Այդ հոգածու վերաբերումին արտայայտութեան կը հանդիպինք արդէն Զօպանեանէն հոս ներկայացուող նամակներուն մէջ։

Հետաքրքրուողները նաեւ առատ նիւթ պիտի գտնեն ուսումնասիրելու համար խնդրագրերու լեզուաոճական առանձնայատկութիւնները, բայց մանաւանդ հոգեբանական գիծերը վերապրած հայորդիներու, որոնք յատակօրէն կը զգացնեն թէ այլապէս անելանելի դրութեան մը հարկին տակ է որ կը դիմեն յատկացումի համար եւ թէ բնաւ պիտի չուզէին բեռ ըլլալ հայ ժողովուրդին ցաւերը ամոքելու սահմանուած Միութեան վրայ, երբ ան կանգնած էր գաղթական հայերու եւ վերաշինութեան կարօտ հայրենիքի բազմաթիւ ու բազմաբնոյթ կարիքները հոգալու մարտահրաւէրին դիմաց։

Փաստաթուղթերու երկրորդ խումբը կը ծառայէ վերբերելու համահայկական դիմագիծը ՀԲԸ Միութեան, որուն ոամկավար ընդհանուր տնօրէնը դաշնակցական Սիմոն Վրացեանի գլխաւորած «Նահատակ Գրագէտներու Բարեկամներ»ուն կ՚ընծայէր նիւթական քաջալերանք՝ հայ մշակոյթի պահպանութիւնն ու զարգացումը գերիվեր նկատելով հատուածական նկատումներէ։

Վերջին, երրորդ խումբի փաստաթուղթերը կ՚առնչուին ներգաղթին, հայրենաշինութեան, Խորհրդային Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն եւ իրարմէ տարբեր մտայնութիւններէ, հոգեխառնութիւններէ եւ դեռ ուրիշ բաներէ մեկնարկ կատարող մօտեցումներու։ Թէեւ ներգաղթին եւ հայրենաշինութեան բաւական տեղ յատկացուած է վերը նշուած երկհատորեակին մէջ, իսկ Է. Մելքոնեան մեր 4րդ ծանօթագրութեան մէջ յիշատակեալ հատորով տուած է հատուածներ այդ նամակներէն (էջ 221-222), հոս ներկայացուող փաստաթուղթերը կրնան լրացուցիչ լուսաբանութիւններու դերակատարը դառնալ։

Փաստաթուղթերու լեզուն նախընտրած ենք վերարտադրել ամենայն հարազատութեամբ, որպէսզի լեզուաբանական թեքումով ուսումնասիրողները անոնց մէջ գտնեն հեղինակներուն լեզուամտածողական հարազատ պատկերը, ինչպէս նաեւ իրենց տուեալ ժամանակահատուածին բնորոշ լեզուամշակութային շերտեր, որոնց մէջ իրենց դերը ունին հայրենաբնակներու համար Հայաստանի խորհրդայնացումը, իսկ հայրենազրկեալներու համար՝ համապատասխան երկիրներու տեղական պայմանները։

Ա.

Յարգելի պարոն Քարտուղար[5],

Ստացած եմ Ձեր 2 թուակիր նամակը եւ ներփակ 400 ֆրանքի մանտաբօսքը[6] ուղղուած անուան եւ յանձնելի Տիկին Եարճանեանի[7] Մտաւորականներու Օգնութեան Յանձնախումբի կողմէ, եւ ներկայ նամակաւս կը հաստատեմ Տիկին Եարճանեանի 400 ֆր. յանձնած ըլլալս որու կողմանէ անհունապէս շնորհակալ եմ Ձեր Միութեան:

Յարգանքներով՝

[Լ.] Համբարձումեան[8]

Poisy
6-7-25

Բ.

25 Յունվար 1926
Պիւքարէսթ

Edouard Colangian
5, Strada Rumeoara 9
(Roumanie) Bucharest

Ազնուաշուք S. Լեւոն Բաշալեան
Փարիզ

Մեծանուն բարեկամ,

Անցեալ տարի, ի դիմաց Հ.Մ.Օ.[9] պատ. Յանձնաժողովին, ձեր 2 Ապրիլ 1925 թուակիր նամակով, տարեկան օժանդակութիւն մը հասցէիս ղրկելու առթիւ, կը գրէիք ինձ հետեւեալ տողերը. «Պարտք կը համարինք յայտնել թէ մինչեւ տարւոյն վերջը (1925ի) կարելի պիտի չըլլայ մեզ նոր օգնութիւն մը ընել ձեզի:», ատով անշուշտ վերապահելով ինձ 1926 ներկայ տարուան առթիւ տարեկան անհրաժեշտ օգնութիւն մը:

Ուրախ եմ յայտարարելով թէ առողջական խանգարուած վիճակս, մարմնոյս վրայ կատարուած վիրաբուժական երկրորդ գործողութենէ մը ի վեր, զգալապէս բարւոքած է, շնորհիւ ինձ համար շա՛տ բանկ արժող մասնագիտական ելեքտրաբուժական խնամքներու (rayon X ultraviolet եւ radium)[10] զորս դեռ մէկ քանի ամիս շարունակել տալու ստիպողական հարկին մէջն եմ, բոլորովին ապահով ըլլալու համար sarcom-իս[11] անհետացմանը կամ անհետեւանք մնալուն մասին եւ իբր cellulaire եւ localisé[12] զայն բոլորովին չեզոքացած եւ անվնաս դիրքի մէջ դնելու համար: Այս առթիւ, այսօ՛ր իսկ մեծայարգ Տիար S. Կամսարականի[13] ուղարկած նամակիս մէջ ներփակած եմ իմ մասնագէտ բժիշկիս Sopp. Սէվէռիանուի՝ ինձ յատկացուած carnet de traitementu[14], որ երեք ամիս առաջ օրինական ընդհատումէ մը վերջ՝ պէտք էր ցայսօր արդէն իսկ կրկնուած ըլլար. բայց երկրորդ եւ վերջին սոյն անհրաժեշտ դարմանումը շատ բանկ արժելով ինձ համար՝ ստիպուած եղայ յապաղեցնել՝ հակառակ կամքիս:

Հ.Մ.Օ. պատ. Յանձնաժողովը արդարեւ իր տարեկան համեստ օգնութեամբ դարձեա՛լ ճշմարիտ մօր մը պաշտելի ձեռքը կարկառած պիտի ըլլայ ինձ, վերջին անգամ մըն ալ, թեթեւցնելու համար մասնագիտական անհրա-

ժեշտ խնամքներէ առթուած իմ ծախքերուս ծանր բեռը: Երեք զաւակաց հայր ըլլալով, իրե՛նց ապագային սիրոյն, ստիպուած եմ իմ առողջութիւնս իրե՛նց իսկ առողջութիւնը նկատել: Կը յուսամ թէ, նկատի առնելով իմ ծանր եւ պատասխանատու պարագաս, Հայութեան մեծագոյն պարծանքն եղող անաչառ եւ անբասիր եւ ճշմարտապէս մե՛ծ Բարեգործականին այս տարուան գրական ֆօնտէն՝ անցեալ տարուընէ աւելի լուրջ օգնութիւն մը պիտի տրամադրուի ինձ, եւ ասիկա վերջին անգամ ըլլալով, քանի որ, վերջնական ապաքինման մը ճամբուն վրայ, մօտիկ ապագայիս մասին մեծ ակնկալութիւններ ունիմ:

Իմ անկեղծ մեծայարգ բարեկամներս՝ Տիարք Ա. Չօպանեան[15], Վ. Մալէզեան[16] եւ Ա. Ճապուռով[17] եւ ուրիշներ, վերջին լուրջ օգնութեան մը մասին՝ կը բաժնեն իմ հաստատ յոյսս եւ ձայնակից են ինծ՝ զգածուած սրտով:

Ներփակ՝ պիտի գտնէք Թէոդիկի[18] այս տարուան *Ամենուն Տարեցոյց[ը]*-ին[19] 334 էջին մէջ արտատպուած «Բանուորական Առաւօտը» խորագրով քերթուածս զոր բարի կ՚ըլլաք յանձնելու մեծայարգ Տիար Ս. Բիրումեանի[20], rue de Grenelle, 79, յղելու համար զայն Երեւան, Կամսարական Մրցանակի Ժիւրիին: Շա՛տ հպարտ պիտի զգամ ինքզինքս եւ ուրախ պիտի ըլլամ եթէ ձեր անձնական եւ թանկագին կարծիքն ունենամ սոյն գրութեանս մասին. միակ անպատեհութիւնը, երեւոյթապէս, սա՛ է որ քրքահայ լեզուով գրուած է, եւ ես անշուշտ չպիտի ուզէի բնաւ կեղծել ծննդավայրիս չպատկանող լեզու մը:[21] Եթէ անպատեհութիւն կը տեսնուի պ. Ս. Բիրումեանի յանձնուելուն մէջ, չէ՞ կարելի որ դուք յանձն առնէիք հոգը՝ գրութիւնս *ուղղակի* Երեւան ուղարկելու առ որ անկ է: Շնորհապարտ պիտի մնամ ձեզ:

Նոյնպէս պիտի խնդրէի ձեր սիրելութենէն որ հաճէիք մղում տալ ամենապատիւ Զաւէն Սրբ.ի[22] հաւանութեան, ըստ որում, ուսուցիչ Տօք. Լ. Թաշճեանի[23] եւ Թէոդիկի թախանձանաց եւ անկեղծ փափաքին վրայ՝ խոստացած է զիս նաեւ՝ իբրեւ մասնագէտ ֆրանսերէնի՝ ուսուցչական պաշտօնի կոչել Նիկոսիայի Մելքոնեան երկսեռ Որբանոցին[24] յարկին տակ, բայց որ դեռ պաշտօնական հրաւէր մը չէ յղած ինծ՝ որքերուն ժամանումէն իսկ առաջ:

Կը ներէք որ նամակս բաւականէն աւելի երկարեցաւ ինծ համար ստիպողական մէկէ աւելի խնդրանքներով:

Սպասելով անձկագին ձեր լաւագոյն լուրերուն, հաճեցէք ընդունիլ, մեծաւնուն բարեկամ, իմ խորին յարգանաց եւ երախտագիտական անհուն զգացմանցս հաւաստիքը:

Ձերդ անձնուէր՝

Եդ. Գօլանճեան[25]


Գ.

Փարիզ, 4 Մարտ 1927

Վսեմ Տիար Գաբրիէլ Նորատունկեան[26]
Փոխ-Նախագահ Հ.Բ.Ը. Միութեան
Փարիզ

Տէր Նախագահ,

Հայ Մտաւորականներու Օգնութեան Յանձնաժողովը, շնորհիւ Բարեգործական Միութեան վեհանձն առատաձեռնութեան, 1926ին եւս կրցաւ իր



եղբայրական օժանդակութիւնը ընծեռել կարեւոր քուով մը հայ մտաւորականներու, որոնք, առանց այդ օգնութեան, անտանելի եւ նոյն իսկ եղերական կացութեան մը մէջ պիտի գտնուէին:

Նպաստէն օգտուողներուն մէջ կը գտնուին այնպիսի անուններ որոնք մաս կը կազմեն ազգային ժառանգութեան. այսպէս նպաստներ ստացած են այրի Տիկին Մամուրեան[27], եւ Պէշիկթաշլեանի[28] ազգական համանուն երիտասարդ բանաստեղծը[29], դարմանուելու համար, ինչպէս եւ ծանօթ բանաստէր Մարկոս Աղաբէգեանցի[30] որդին: Յանձնաժողովս օգնութեան հասած է նահատակուած մտաւորականներու այրիներուն եւ զաւակներուն, եւ կարգ մը հին ուսուցիչներու որոնք ազգային ծառայութեանց ամբողջ անցեալ մը ունին իրենց ետեւ:

Մեր հաստատ համոզումն է որ մեր Յանձնաժողովը իրական պէտքի մը կը համապատասխանէ, հետեւաբար կը խնդրենք որ Բարեգործական Միութեան Կեդրոնական Վարչութիւնը բարեհաճի շարունակել իր այնքան ազնուօրէն սկսած գործը եւ այս տարի ալ գումար մը քուէարկէ Մտաւորականներու Օգնութեան Յանձնաժողովիս համար:

Մնամք անկեղծ յարգանօք

Ընդհանուր Քարտուղար
Լ. Բաշալեան

Նախագահ
Տիգրան Կամսարական

Դ.

18 Մարտ 1927

Տիկին Գոհար Մելքոն Կիւրճեան[31]
Կ. Պոլիս

Յարգելի Տիկին,

Հայ Մտաւորականներու Օգնութեան Յանձնաժողովս նկատի առնելով ձեր դժնդակ կացութիւնը եւ փափաքելով օգնութեան հասնիլ ձեզ, որոշեց ձեզ յատկացնել միանուագ հինգ հարիւր (500) ֆրանք, զոր կը ստանաք ներփակ

չէքով քաղաքիդ Գրէտի Լիոնէ Պանքին վրայ: Խնդրելով որ առ այդ ստացագիր մը ղրկէք մեզ,


Մնամ անկեղծ յարգանօք

ՀՄՕՅ-ի ընդհ. քարտուղար

Ե.

1928 Յունր. 8

Կ. Պոլիս



Ազնուաշուք

Տ. Վահան Մալէզեան

Տնօրէն Հայ Բարեգործական Միութեան

Ազն. Տիար

Ձեր ազնուութեանը դիմում մը կատարելու հարկադրանքին տակ կը գտնուիմ, զորս կը յուսամ որ պիտի հաճիք գոհացում տալ, նիւթական շատ անճուկ պայմաններս նկատի ունենալով:

Ազն. Տէր, կարդալով Բարեգործական Միութեան այն յայտարարութիւնը, որով որոշած է կարգ մը կարօտ մտաւորականներու անհրաժեշտ օժանդակութիւնը ընել, ներկայիս կը փութամ խնդրել Ձեզմէ, որ հաճիք զիս եւս նկատի ունենալ, երկար ատենէ ի վեր արդէն հիւանդ ըլլալով, եւ ներկայիս նոր գործողութեան մը պէտքը ունենալով մասնագէտ բժիշկի մը կողմէ:

Ազն. Տիար, չեմ կարծեր որ մերժումի մը հանդիպի իմ այս խնդրանքս պատ. Միութեանդ առջեւ, քանի որ զանազան առիթներու մէջ միշտ պարզած եմ իմ համակրութիւններս այս մասին, վեր առնելով անոր օգտաշատ գործունէութիւնը, մեր հասարակական կեանքին մէջ:

Ասոնցմէ միայն մէկը ունենալով [անընթեռնելի] այժմ ի ձեռին, կուղարկեմ Ձեզ ներկայիս, գաղափար մը տալու համար այն անսահման համակրութիւնս, որ միշտ ունեցած եմ Միութեանդ մասին:

Յուսալով որ չըպիտի ուզուի զիս տառապիլ այսպիսի անտանելի հիւանդութեան մը մէջ, կը խնդրեմ որ ընդունիք թանկագին շնորհակալութիւններս եւ յարգանքներս Ձերդ միշտ անկեղծութեամբ

Ա. Տէր Միհասեան[32]

Հասցէ «Նոր Լուր»[33]

Զ.

Փարիզ, 28 Փետրվար 1928

Վսեմ Գաբրիէլ Էֆ. Նորատունկեան

Փոխ-Նախագահ Հ.Բ.Ը. Միութեան

Բարիզ

Վսեմաշուք Տէր,

Հայ Մտաւորականներու Օգնութեան Յանձնաժողովը, շնորհիւ Բարեգործական Միութեան վեհանձն առատաձեռնութեան, 1927ին կրցաւ իր եղ-

բայրական օժանդակութիւնը ընծեռել կարեւոր թուով մը հայ մտաւորականներու, որոնք, առանց այդ օգնութեան, դժնդակ եւ նոյն իսկ եղերական կացութեան մը մէջ պիտի մնային:

Նպաստէն օգտուողներուն մէջ կան մեր ճահատակուած մտաւորականներու այրիներ եւ որդիներ, եւ կարգ մը հին ուսուցիչներ որոնք ազգային ծառայութեան ամբողջ անցեալ մը ունին իրենց ետեւ: Յանձնաժողովս միանգամայն իր աջակցութիւնը ընծեռեց Կ. Պոլսոյ կարգ մը հայ ուսուցիչներու որոնց կացութիւնը հետզհետէ կը դժուարանայ:[34]

Մեր երեք տարուան փորձառութեամբ համոզում գոյացուցած ենք թէ այս Յանձնաժողովը իրական պէտքի մը կը համապատասխանէ, հետեւաբար կը խնդրենք որ Բարեգործական Միութեան Կեդր. Վարչութիւնդ բարեհաճի շարունակել իր այնքան ազնուօրէն սկսած գործը եւ 1928ին ալ գումար մը քուէարկէ Մտաւորականներու Օգն. Յանձնաժողովիս համար:

Մնամք անկեղծ յարգանօք

Ատենադպիր[35]
Լ. Բաշալեան

Ատենապետ[36]
Տիգրան Կամսարական

Է.

Գերազնիւ
Տիար Վ. Մալէզեան
Տնօրէն Հայ Բարեգործականի
Քարիզ

Համաճարակին ենթարկուած՝ անկողնոյ կը ծառայեմ, վիճակս տագնապալի ըլլալով, գոնէ կը յուսամ անողոք հիւանդութեան դիմադրել: Քիչ ատենէն արդէն ֆիզիքականս կորսնցնելով, բախտին ձգուած եմ:

Առ այժմ, Հայ Բարեգործականին գթութեան կ'ապաւինիմ: Մտաւորականներու հանդէպ ձեր օգնութիւնը չէք զլանար, գտնելով դուք անոր գլուխը:

Խիստ բացառիկ տագնապ մըն է որ եկաւ Աթէնքի համաճարակէն: Հիւծեալ եւ անօգնական՝ ձեր գերազնուութեան գրել առաջադրեցի:

Հայ Բարեգործական Միութեանը մօտ, անշուշտ արձագանգ պիտի գտնէ հայ մտաւորականի մը դիմումը, առաջին անգամ ըլլալով:

Յուսալով եւ սպասելով ձեր օգնութեան

Մնամ ակնդէտ
Լեւոն Էսաճանեան[37]

928-9-8
Քօքինիա

Հասցէ՝ L. Essajanian
c/o Pharmacie Socrate
Kokinia-Pirée
(Grèce)

Ը.

17 Սեպտ. 1928

Մեծայարգ Տ. Լ. Էսաճանեան
Քօքինիա-Բիրէա

Յարգելի Տիար,

Ստացայ ձեր 9 ամսաթիւ նամակը, որուն պարունակութիւնը իմծի անկեղծ ցաւ պատճառեց, քանի որ թէ ֆիզիքապէս եւ թէ տնտեսապէս կը տառապիք:

Միութեանս մտաւորականներու հիմնադրամը իր նուազագոյն սակին զեղչուեցաւ այս տարի, եւ գրեթէ սպառած ըլլալուն հազիւ 600 ֆրանքի գումար մը կրնամ փութացնել ձեզի ներփակ չէքով: Կը յուսամ թէ այս փոքրիկ օգնութիւնը կ'ամոքէ ձեր վիճակը՝ իբրեւ համակրանքի արտայայտութիւն մը:

Անկեղծ յարգանքով

Վ. Մալէզեան

Թ.

Գերազնիւ
Տիար Վ. Մալէզեան
Վարիչ-Պատուիրակ Հայ Բարեգործականի
Բարիզ

17 Սեպտմ. 1928 թուակիր եւ Ձեր ստորագրութեամբ Հայ Բարեգ. Ընդհ. Միութեան պաշտօնագիրը եւ ներփակ 600 (վեց հարիւր) ֆրանքի չէքը ստացած եմ, իբր անմիջական օգնութիւն:

Հակառակ Միութեանդ մտաւորականներու հիմնադրամը իր նուազագոյն սակին զեղջուած եւ սպառած ըլլալուն՝ Ձեր փութկոտ եւ համակրանքի վերաբերումը գոհունակութիւն առթած է տագնապեալիս համար:

Այս առթիւ, Հայ Բարեգործական Միութեան եւ Ձեզ խորին շնորհակալիք:

Անկեղծ յարգանքով
Լեւոն Էսաճանեան

1928-10-5
Քօքինիա (Բիրէա)
(Յունաստան)

Ժ.

27 Յունիս 1928

Մեծայարգ Տ. Ռ. Զարդարեան[38]
Նիս

Յարգելի Տիար,


Միութեանս Բրոքականտի Յանձնաժողովի[39] մեր պաշտօնակից Տ. Չօպանեանէ իմացանք որ հիւանդութեան պատճառաւ անձուկ դրութեան մէջ կը գտնուիք, եւ ի յարգանս ձեր ողբացեալ հօր[40] յիշատակին պարտք սեպեցինք Մտաւորականներու հիմնադրամէն փոքր օգնութիւն մը ընծեռել ձեզի:

Ներփակ ձեզի ուղարկելով 700 ֆրանքի գումար մը, շուտափոյթ ապաքինում կը մաղթենք ձեզի:

Անկեղծ յարգանքով
Վարիչ-Պատուիրակ եւ Ընդհ. Տնօրէն
Վ. Մալէզեան

ԺԱ.

12 Յունիս 1929



Յարգամեծար
Տիար Վահան Մալէզեան
Տնօրէն Հ.Բ.Ը. Միութեան
ՓԱՐԻԶ

Մեծանուն Տէր,

Երէկ տեղւոյս պետական հիւանդանոցէն վերադարձիս՝ պատիւն ունեցայ ստանալու Ձեր գրութիւնն ու ներփակեալ (500) հինգ հարիւր ֆրանսական ֆրանքի չէք մը: Անշուշտ է որ այս օգնութեան համար կը պակսի ինծի երախտագիտական բառ մը, որովհետեւ այնպիսի՛ ժամանակի մը կը հասնի զոր չեմ կրնար բացատրել:

Գիտե՞մ, շատ լաւ կը մտաբերեմ թէ Հ.Բ.Ը. Միութեան այս բացառիկ օգնութիւնը, որ կ'ըլլայ ինծի մեծ զոհողութիւն մըն է եւ թէ չափազանց ծանր ու դառն է ինծի համար այդ զոհողութենէն նպաստաւորուիլ... բայց ի՛նչ ընեմ որ այսօր զրկուած եմ աշխատելու կարողութենէ, գրեթէ կազմալուծուած վիճակի մը ենթարկուած եմ եւ օրապահիկ մը չ'ունիմ: Չեմ մոռնար յիշելու թէ իմ այս աղիողորմ վիճակս տեսնելով՝ տեղւոյս Աւետարանչական Ընկերութեան Վերապատուելի Բասթէօրը՝ Խուհաննէս Էհման՝ գրեց Ֆրանքֆօրդի «Բարեսիրաց Ընկերութեան» եւ անկից 12,000 Լէվայի օգնութիւն մը հասցուց ինծի եւ ես այդ գումարով մօտ վեց ամիս ապրեցայ: Նոյնպէս՝ չեմ մոռնար յիշատակելու թէ այդ Ընկերութեան պատկանող երկու Բասթէօրները – Serus եւ Bauch – փութացին յայտնելու թէ երկուքը մէկտեղ 1 անգլիական ոսկի կը յատկացնեն ինծի մինչեւ մահս: Այդ մէկ անգլիական ոսկին զոր ամէն ամիս կը ստանամ կանոնաւորապէս, յատկացուցած եմ տանս վարձքին: Կը մնայ ապրուստիս հոգը: Այդ ալ պիտի սպասեմ մեր բարեսէր ազգայիններէ: Շուրջ քառասուն տարի կրթական գործին նուիրուող մշակ մը եւ 20 կտոր հեղինակութիւններ ազգին զաւակաց տուող չքաւոր վաստակաւոր մը, անշուշտ է որ պիտի չը մնայ լքուած, եւ *անօթի պիտի չը մեռնի:*

Չը գիտե՞մ... եթէ հնարաւոր է ամսական փոքրիկ գումար մը քո՛ղ Հ.Բ.Ը. Միութիւնն ընէ: Տարիքս 60-ի կը մօտենայ... եւ կազմալուծեալ վիճակովս շատ պիտի չը կրնամ ապրիլ: Անո՛նք որ կրթական հոյակապ տաճարներ կը կա-


ռուցանեն, թո՛ղ անտես չ'առնեն այդ տաճարներու մէջ երկար տարիներ ծառայող եւ այսօր անոնց սիւներուն անկիւնը գթութեան կարօտ վիճակի մը հասած գրական ու կրթական մշակի մը թշուառութիւնը:

Ընդունեցէ՛ք իմ անկեղծ յարգանքներս!

Դժբաղդ գրական ու կրթական
մշակ
Ա. Շիտանեան[41]

Յ.Գ.- Կը ներէք որ անվերապահ կերպով բովանդակ թշուառութիւնս Ձեզ պարզելու համարձակութիւնը կունենամ:
Կը սպասեմ Ձեր պատասխանին:- Նոյն[42]

ԺԲ.



Սիրելի Մալէզեան,

Նամակի մը մէջ զոր վերջերս ինծի գրած է Վենետիկէն, Կոստան Զարեան[43] կ'ըսէ թէ կեանքը այնքան սղած է հոն եւ իր միջոցներն այնքան նեղ են, որ ստիպուած է իր ընտանիքին մէկ մասը Թրանսիլվանիա փոխադրել, որովհետեւ կեանքը հոն աւելի աժան է[44]...

Այդ տողերը վրաս գէշ ազդեցին. Զարեան մեր լաւագոյն գրագէտներէն մէկն է այս րոպէիս, եւ կարելի չէ անտարբեր մնալ իր այս դժուար կացութեան հանդէպ. թէպետեւ ինք ոեւէ օգնութիւն չէ ուզած եւ իր վիճակը բացատրած է *Անահիտի*[45] երկրորդ թիւին յօդուած մը հասցնել կրցած չըլլալուն պատճառը ցոյց տալու համար, բայց կարծեմ թէ լաւ կ'ըլլայ որ «Մտաւորականներու Ֆօնտ»էն գումար մը ղրկել հաճիս իրեն: Ինչ ալ ըլլայ գումարը, Բարեգործականի կողմէ այսպիսի ժեսթ մը,- իր գրական ընկերներուն կողմէ նախաձեռնուած,- սփոփանք մը կ'ըլլայ իրեն, թեթեւացում մը իր հոգեկան անձկութեան:

Իր հասցէն է.
Mr. Constant Zarian
Via Sentari 9 a.
Lido
(Italie) Venise

Սիրալիր բարեւներով
քոյդ
Ա. Չօպանեան

Փարիզ, 9 Օգոստ. 1929[46]

ԺԳ.

Hotel du Parc, Stella Plage

18 Օգոստ. 1929

Սիրելի Մալէզեան,

Նամակդ ստացայ: Այս իրիկուն Փարիզ մեկնող բարեկամի մը ձեռքով կը ղրկեմ պատասխանս, յուսալով որ ձեռքդ կը հասնի մեկնելէդ առաջ:

Նամակս քեզ գոհ ձգեր է, բայց քուկինդ զիս գոհ չձգեց:

Զարեանին շատ սրտաշարժ պարագան երբ բացատրեցի քեզի եւ առաջարկեցի որ բացառութիւն մը ընենք եւ գումար մը ղրկենք գէթ իբր համակրութեան ժէտք, բոլորովին համաձայն եղար, միայն ղրկուելիք գումարին չափին համար որոշումդ վերապահեցիր, տեսնելու թէ ինչ մնացած է ֆօնտէն:

Ատոր վրայ, պատասխանելով Զարեանի նամակին, գրեցի որ Վ. Մալէզեան, ինձմէ իմանալով Զարեանի դժուարին կացութիւնը, Մտաւորականներու Ֆօնտի գումարիկ մը պիտի ղրկէ. հիմայ թէ չստանայ, ես *ptփwզէ*[47] կ'ըլլամ: Եթէ վարանում ցոյց տուած ըլլայիր խօսած միջոցիս, բնականաբար ոչինչ կը գրէի Զարեանին:

Իր դիմում ըրած չըլլալը փաստ չէ – ոչ Չերազը[48], ոչ Շիրվանզադէն[49], ոչ տիկին Եսայեանը[50] դիմում ըրին. մենք ընդ առաջ գացինք իրենց պէտքերուն. Զարեանը մեր առաջնակարգ բանաստեղծներէն եւ գրագէտներէն մին է. դիմում չեն ըներ այդպիսի մարդիկ, եւ դիմում ընել չկրցողներուն համար է գլխաւորապէս որ այս ֆօնտը հաստատուեցաւ: Եկուր, եղբայր, գոնէ 5-600 ֆրանք մը ղրկէ եւ Պէրպէրեանին[51] յանձնարարէ որ նամակով մը ղրկէ [անընդհեռնելի] այս պատասխանատու եւ փափուկ առաքելութեան միջոցին: Ապա թէ ոչ ես գրպանէս պիտի ղրկեմ 500 ֆրանք, որովհետեւ չեմ կրնար հոս հանգիստ ընել գիտնալով որ մեր ամէնէն թանկագին պաշտօնակիցներէն մին դժուար կացութեան մէջ է եւ բան մը չենք ըրած իրեն համար: Prècident[52] ալ չըլլար Բարեգործիդ տրցակէն, քանի որ դուրսը մարդ չիմանար: Յուսալով որ զիս յուսախաբ չես ըներ, սիրով կը բարեւեմ քեզ:

Քոյդ Ա. Չօպանեան[53]

ԺԴ.

Սիրելի Պ. Պէրպէրեան

Չէքը ղրկած էի Պ. Զարեանին: Ներփակ կը ղրկեմ ձեզի ստացագիրը զոր ստորագրելով դարձուցած է ինծի:

Ես Փարիզ պիտի դառնամ Սեպտ. 9ին, Երկուշաբթի:

Երեքշաբթի կուգամ Բարեգործականի գրասենեակը:

Սիրով ձերդ

Ա. Չօպանեան

Սթելլա Փլաժ, 1 Սեպտ. 1929

ԺԵ.

Գահիրէ – 18 Օգոստոս 1929

Մեծայարգ
Տիար Տիգրան Պէյ Կամսարական
Ատենապետ «Հայ Մտաւորականներու Օգնութեան Յանձնախումբ»ին
ի Բարիզ

Մեծայարգ Տիա՛ր,

Ստորագրեալս, Արամ Մասեհեան, բնիկ պոլսեցի վկայեալ ուսուցիչ Կ. Պոլսոյ Կեդր. Վարչութեան Ուսումնական Խորհուրդէն՝ թուրք բռնակալ րէժիմի հալածանաց եւ ցկեանս աքսորի տառապանքներու ենթարկուելէ յետոյ՝ թուրք սահմանադրութեան հռչակմամբ[54] Եգիպտոս ապաստանած եմ:

Քսան տարիներէ ի վեր Գահիրէ համազգիներուս քով ասպնջականութիւն վայելած լինելով, 12 տարիներ եւս շարունակաբար Թաշճեան քոյրերու վարժարանին[55] մէջ քրտնաջան աշխատած եմ իբր ուսուցիչ լեզուաց ջանալով իմովսանն օգտակար հանդիսանալ մանկտւոյն:

Վերջին Ապրիլ ամսոյ 23ին երբ վարժարանէն տուն կը վերադառնայի, ճակատագրական դժբաղդութեամբ մը քանի մը ժամերու մէջ տեսողութիւնս եւ ապա առողջութիւնս եւս խանգարուեցաւ, որով հարկադրուեցայ այդ թուականէն սկսեալ դադրիլ աշխատանքէ:

Այս դժբաղդութիւնս բարւոքելու համար դիմեցի տեղւոյս Հայ. Բարեգ. Ընդհ. Միութեան որպէսզի ինձ տեւական հասոյթ մը տրամադրէին. ցաւ ի սիրտ կը յայտնուիմ ինձ ըսելով որ նման պարագաներ մեզ չեն պատկանիր եւ կստիպեն ինձ ուղղակի դիմել Հայ Մտաւորականներու օգնութեան յանձնախումբի վարչութեան ի Բարիզ:

Ուստի կը խնդրուի Ձեր բարեսիրտ զգացումներէն, Տիար Ատենապե՛տ, որ լրջօրէն նկատի առնէք այս խնդրագիրս եւ վայրկեան առաջ փութաք պէտք եղած օգնութիւնները ինձ յատկացնել:

Անձկանօք սպասելով Ձեր խղճամիտ յանձնախումբէն գրութեանս գործադրութեանը զոր կը յուսամ անպայման պիտի կարենայ փրկել տեսողութիւնս եւ կեանքս միանգամայն:

Մնամ ձերդ երախտապարտ
Արամ Մասեհեան[56]

Յ.Գ.- Ներփակ պիտի գտնէք երկու նամակներ Հայ. Բարեգ. Ընդհ. Միութեան կողմէ ղրկուած իմ հասցէիս:
Թիւ 35011/268 – 17 Յուլիս 1929
Թիւ 35002/289 – 30 Յուլիս 1929
Հասցէ՝
Aram Massehian
chez Mr. Ardache Papazian
No 3 Rue Ibn Idris, 3
Daher
(Egypte) Le Caire

ԺՉ.

Hermitage Hotel
Esplanade du Casino
La Baule

Լապօլ 3 Սեպտ 29

Սիրելի Բարեկամս [Պէրպէրեան],

Ներփակ կը ղրկեմ քեզի սրտաճմլիկ նամակ մը[57]:

Մալէզեանը բացակայ է. չեմ գիտեր թէ մտաւորականներու համար ինչ տրամադրելի գումար ունինք, եւ եթէ ունինք՝ ինչպէս կրնանք մաս մը յատկացնել անկէ դժբաղդ խնդրարկուին, ի բացակայութեան վարիչ պատուիրակին:

Թերեւս Տիար Սիմապեան[58] եղանակ մը կրնայ ցոյց տալ մեզի, եւ կամ պարզապէս ինքը պատուիրակին տեղ տնօրինէ ամէն ինչ:

Ամէն պարագայի մէջ հաճիս քու սովորական energiendդ[59] հետապնդել խնդիրը, խեղճ մարդուն քիչ մը օգնելու համար:

Սիրով քոյդ

Տիգրան Կամսարական

ԺԷ.

ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ
ՀԻՄՆՈՒԱԾ ՓԱՐԻԶ 1929
ՀԱՍՑԷ
M. BARSAMIAN 121, Rue Marcadet, Paris (18°)

Փարիզ, 1 Հոկտեմբեր 1934

Ազնուամեծար
Տիար Վ. Մալէզեան



Վարիչ-Պատուիրակ Հ.Բ.Ը.Մ.
Աստ

Ազնուամեծար Տեարք,

1929-ին էր, որ հիմը դրուեցաւ *Նահատակ Գրագէտներու Բարեկամներ* հրատարակչական ընկերակցութեան, նպատակ ունենալով, «հաւաքել ու հրատարակութեան տալ արեւմտահայ նահատակ կամ մեռած գրողներու երկերը, կցելով անոնց Գրողին կեանքին ու գործին շուրջ ուսումնասիրութիւն մը»:

Հակառակ անոր որ ոեւէ հիմնադրամ չունէինք այս նպատակը իրականացնելու համար, սակայն շնորհիւ նախածեռնողներուն անձնուէր գործունէութեան եւ ազնիւ ու գրասէր անձերու բարեացակամութեան եւ նուիրատուութեան, որուն համարատուութիւնը ըրած ենք տարուէ տարի, յաջորդաբար լոյս ընծայել հետեւեալ ութը հատորները.

Ռուբէն Զարդարեան, Մելքոն Կիւրճեան (Հրանդ), Գեղամ Տէր Կարապետեան[60], Գեղամ Բարսեղեան[61], Արփիար Արփիարեան[62], Գրիգոր Զohրապ[63], Տիգրան Չէօկիւրեան[64] եւ Օհան Կարօ[65]:

Տնտեսական ներկայ տագնապը մեր գործունէութեան վրայ ալ ազդեց դժբախտաբար: Որոշած ենք սակայն ամէն գնով շարունակել այս նուիրական պարտականութիւնը, որ միեւնոյն ատեն հայ մշակոյթին, գիրին ու գրականութեան մեծապէս նպաստելու բնոյթն ունի գաղութահայութեան մէջ:

Մեր մատենաշարին 9րդ հատորը, Երուանդ Օտեանէն[66] ընտրուած էջեր, շուտով տպագրութեան պիտի յանձնուի: Անոր պիտի յաջորդեն ուրիշ սիրուած եւ նահատակ գրագէտներու երկերը, ինչպէս Երուանդ Սրմաքէշխանլեան[67], Արտաշէս Յարութիւնեան[68], Ռուբէն Սեւակ[69] եւ Տիրան Չրաքեան[70]:

Այս նուիրական ձեռնարկը, որ վստահ ենք, ամէն հայու սրտին կը խօսի, կը կարօտի գործակցութեան եւ բարոյական եւ նիւթական աջակցութեան: Թոյլ տուէք հետեւաբար, խնդրել Հայ. Բարեգ. Ընդհ. Միութեան վարչական խորհուրդէն, որ անհրաժեշտ ուշադրութիւնը ընծայելով անոր, իբրեւ լրացուցիչ մէկ մասը իր յառաջադրած ու արդէն գործադրած նպատակներուն, հաճի նիւթական օժանդակութեամբ մը սատարել անոր զարգացման եւ տեւականացման:

Եւ որպէս զի մեզի ընծայուած նպաստը ոեւէ ձեւով փոխարինուի, յանձն կ'առնենք, փափաքուած քանակութեամբ գիրքեր, ձեր տրամադրութեան տակ դնել, ձեր հսկողութեանը ենթակայ կրթական հաստատութիւններու մատենադարաններուն իբրեւ նուէր, տրուած ըլլալով, որ մեր հրատարակած եւ հրատարակելիք հատորները գերազանցապէս գրական գիրքեր են եւ ընթերցանութեան համար ա՛յնքան օգտակար:

Խորապէս կը հաւատանք, որ մեր այս դիմումը անհետեւանք պիտի չմնայ, եւ Հայ Բարեգ. Ընդհ. Միութեան բարձր խորհուրդը գնահատելով մեր ազգօգուտ ձեռնարկը, պիտի փութայ իր քաջալերութեան դրական ապացոյցը տալ[71]:

Կանխաւ յայտնելով ձեզ մեր սրտագին շնորհակալութիւնը, կը խնդրենք որ ընդունիք մեր յարգանաց հաւաստիքը:

ի դիմաց Նահատակ Գրագէտներու
Բարեկամներու Վարչութեան

Գանձապահ — Ատենապետ

Մկրտիչ Պարսամեան[72] — Ս. Վրացեան[73]

ԺԸ.

ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ
ՀԻՄՆՈՒԱԾ ՓԱՐԻԶ 1929
ՀԱՍՑԷ՝ M. BARSAMIAN 121, Rue Marcadet, Paris (18°)

Փարիզ, 3 Նոյեմբեր 1938

Ազնուայարգ
Պարոն Նախագահ եւ
Պատ. Անդամներ
Հ.Բ.Ը.Մ. Կեդր. Վարչութեան
Փարիզ

Ազնուայարգ պարոն Նախագահ,

Հայ Գրագէտներու Բարեկամներ Հրատարակչական Մարմինը, որ ինը տարիներէ ի վեր ծանօթ էր *Նահատակ Գրագէտներու Բարեկամներ* անունով, գործունէութեան նոր շրջան մը կը թեւակոխէ, լոյս ընծայելով իր մատենաշարին 11րդ հատորը, *Արդի Հայ Գրականութիւն*, ժողովածու մը, ուր քով



քովի եկած են երկու տասնեակ արտասահմանեան գրողներ, իրենց արձակներով, քերթուածներով, կենսագրական նօթերով եւ լուսանկարներով:

Կը հաւատանք որ ծանօթ էք արդէն մեր գործին: Առիթէն օգտուելով Ձեր ուշադրութեան կը յանձնենք օրինակ մը մեր վերջին հրատարակութենէն, որպէս զի գաղափար մը կազմէք ինք տարիներէ ի վեր անընդհատ տարուած աշխատանքին լրջութեան եւ յարատեւ ոգիին համար, որուն նպատակն է եղած հայ գրականութեան անցեալ եւ ներկայ արժէքները գիրքերու մէջ ամփոփել, զանոնք կորուստէ փրկել, ժողովուրդին տալով ընթերցանութեան ընտրուած հատորներ:

Չենք մոռցած քանի մը տարիներ առաջ Հ.Բ.Ը. Միութեանդ նիւթական քաջալերութեան արժէքը, որ հակառակ իր համեստութեան, մեզի համար բարոյական խթան մը ըլլալէ չի դադրեցաւ: Ինչպէս նաեւ մեր մատենաշարին նախորդ տասը հատորներէն գնումը 200 օրինակ գիրքերու, որոնցմով ձեր հսկողութեան տակ գտնուող վարժարաններուն եւ երիտասարդական ակումբներուն գրադարանները ճոխացուցիք:


Աւելորդ է բացատրել մեր մշակոյթի արժէքները ինչպէս նաեւ գաղութահայ նորահաս սերունդները փրկելու անյետաձգելի աշխատանքին կարեւորութիւնը, որուն լծուած ենք նաեւ մենք, մեր ուժերուն ներած չափով եւ անշահախնդրութեամբ մը, որուն ապացոյցը տուած ենք տարիներէ ի վեր:

Հրատարակչական այս ձեռնարկը պիտի շարունակենք այն հաւատքով եւ խանդավառութեամբ, որով սկսանք: Պէտք ունինք սակայն նորանոր զոհողութիւններու եւ նիւթական քաջալերութեան:

Կը սիրենք յուսալ, որ ինչպէս անցեալին մէջ, նոյնպէս ներկայիս, ձեր հետաքրքրութեան առարկան պիտի դարձնէք այս նուիրական գործը, եւ պիտի հաճիք բերել ձեր դրական քաջալերութիւնը:

Ընդունեցէք այս առթիւ, Ազնուաշուք պարոն նախագահ, մեր յարգանքին ջերմ հաւաստիքը:

Ի դիմաց՝ Հայ Գրագէտներու Բարեկամներու
Քարտուղար Նախագահ
Մկրտիչ Պարսամեան Ս. Վրացեան



ժ֊Թ.

7-22-35
61 Av. d'Orleans
Paris XIV

Մեծյարգոյ Պարոն
Մալէզեան
Շատ երախտապարտ պիտի լինեմ Ձեզ, եթէ հաճէիք իմ թեկնածութիւնը դնել Հայաստան վերադարձողների ցուցակի մէջ, որ կառավարութիւնը ձեռնարկած է կազմել մօտակայ ներգաղթի[74] համար: Յոյս ունիմ չէք մերժել այս իմ խնդիրս, որի համար իմ շնորհակալութիւններս կը յայտնեմ Ձեզ:

Խորին յարգանօք
Երուանդ Քոչար[75]

Ի.

5 Նոյեմբեր 1935
Մեծայարգ
Քաղաքացի Դ. Շահվերտեան[76]
Հայաստանի Ներգաղթի Լիազօր Պատուիրակ
ԲԱՐԻԶ
Յարգելի Լիազօր,
Երէկ ՀՕԿ-ի[77] գրասենեակէն հեռախօսով մեզի յայտարարուեցաւ թէ ներգաղթողներու ցանկագրութիւնը փակուած է:
Մենք կը յուսայինք որ վերջին խորհրդակցութենէ մը վերջ այս գործողութիւնը կը լրացուէր: Երեւանի Կառավարութիւնը, թէ նախորդ եւ թէ ներկայ Վարչապետին օրով[78], մեզի հաւաստած էր որ մեզի հետ պիտի խորհրդակցիք եւ գործակցիք ներգաղթի խնդիրներուն նկատմամբ, եւ սակայն մեր դերը շատ սահմանափակուեցաւ, եւ կը վախնանք որ ոչ իսկ մեր յանձնարարեալներուն համար մեր ձայնը լրիւ լսելի ըլլայ:
Մասնաւորապէս պիտի [չ]կարենայինք համակերպիլ որ Նուպարաշէնի[79] մէջ թաղ եւ շէնք ունեցող Հայրենակցականներուն զրկանք ըլլայ. առնուազն 100 ընտանիքի տեղ կայ ղրկուած ցուցակներուն համաձայն: Կը փափաքէինք գիտնալ թէ Հապուսիի, Խուլու-Թլկատինի[80], Բալուի, Հաճընի, Չնգուշի, Չմշկածագի, Մէօրփէ[81] եւ Խօշմաք գիւղերու, ինչպէս նաեւ Թոքատի հայրենակցականներէն[82] քանի՞ ընտանիք եւ հոգի արձանագրուած եւ ընդունուած են:
Նոյնպէս շատ ցաւ պիտի զգայինք եթէ ցուցակէն դուրս ձգուած ըլլան քանի մը արժանաւոր անհատներ, զոր յատկապէս յանձնարարած ենք, ըստ ներ-

փակ ցուցակի: Ատոնց առաջին գիծին վրայ կու գան Մելգոնեան 19 սաները (Սուրիայէն), որ արդէն Կառավարութեան կողմէ առաջին օրէն ընդունուած են: Յետոյ, քաղ. Լեւոն Արապեանի զաւակը՝ Կայծակ, Տօքթ. Էնֆիէճեանէ[83] եւս ջերմօրէն յանձնարարուած Պերժ (Էօժէն) Բաբազեան, Նուպարեան մասնագէտ սաներ Մ. Թալեան եւ Ա. Տարագճեան, Տ. եւ Տիկ. Էքշեան, եւ վերջապէս ուրիշներու կարգին գլխատրաբար Տեսիմէն Մ. Յակոբեան (կնոջը եւ երեք զաւակներուն հետ), որ խոստացած է 1000 ֆր. ճանապարհածախս վճարել եւ բաց աստի մեզի յանձնած է 9000 ֆրանք պայմանաւ որ իր ընտանիքին բնակարան մը տրամադրուի: Թէեւ առաջիններուն հարցարանները դեռ չենք ստացած, բայց հեռագրով ուզեցինք եւ մինչեւ քանի մը օր ձեզի կը յանձնենք:
Մեզի կը թուի որ ամէն թիւրիմացութեան առաջքը առնելու համար անհրաժեշտ է որ գումարում մը ունենանք, կամ գէթ հանդիպում մը, որպէս զի կատարուած իրողութեան մը առջեւ չի գտնուինք, երբ այլեւս ուշ է:
Խորին յարգանքով
ՎԱՐԻՉ-ՊԱՏՈՒԻՐԱԿ

ԻԱ.

31 Յունվար 1936
Մեծայարգ
Քաղաքացի Դ. Շահվերտեան
Ներգաղթի Լիազօր Պատուիրակ
ԲԱՐԻԶ

Յարգելի Քաղաքացի,
Ժընեվէն Նանսէնեան Օֆիսը[84] մեզի կը գրէ թէ Մարսէյլէն մեկնող շոգենաւերը առառաւելն 900 գաղթական միայն կրնան ընդունիլ, որով կամ պէտք է մեկնողներուն թիւը իջեցնել 1800ի (երկու շոգենաւ), ինչ որ շատ ցաւալի պիտի ըլլար, եւ կամ ամէն ջանք ընել եւ բարձրացնել 2700ի, ինչ որ, հարկ է ըսել, մեծ խանդավառութիւն յառաջ պիտի բերէր գաղութահայութեան մէջ:
Այս մասին եւս կը սպասեմ ձեր շուտափոյթ պատասխանին, որպէս զի ըստ այնմ Ժընեվի եւ Բարիզի պաշտօնական շրջանակները այժմէն գիտակ ըլլան դրութեան եւ ըստ այնմ հետապնդեն սկսուած կարգադրութիւնները:
Խորին յարգանքով
ՎԱՐԻՉ-ՊԱՏՈՒԻՐԱԿ

ԻԲ.

Բարիզ, 14 Ապրիլ 1936
Մեծայարգ
Քաղաքացի Դ. Շահվերտեան
Ներգաղթի Լիազօր Պատուիրակ
ԲԱՐԻԶ

Յարգելի Քաղաքացի,
Պատիւ ունինք հաստատելու մեր 13 Մարտ ամսաթիւ նամակը, հայրենակցականներու գանգատներուն նկատմամբ, եւ կը ցաւինք որ հարկադրուած

ենք արձագանգը ըլլալու անվերջ տրտունջներու եւ բողոքներու որ մեզի կը ներկայացուին, ուղղակի կամ մեր ներկայացուցիչներուն միջոցաւ:
Ոմանք կը գանգատին որ իրենց խնդրանքին հետեւանք տրուած չէ որովհետեւ Հօկի անդամ չեն կամ Հօկի անդամ ըլլալով վերջերս բողոքողներուն կողմը անցած են, եւ ոմանք ալ որ չեն կրցած Հօկիին նուիրատուութիւն մը ընել այդ առթիւ:
Մեր կրած տպաւորութիւնն է, արդարեւ եւ տպաւորութիւնը շատերունն ալ, թէ ընդհանրապէս ներգաղթի գործը կազմակերպուած է եւ կը կարգադրուի այնպէս որպէս թէ ըլլար Հօկի ձեռնարկ, անոր ազդեցութեան եւ բրօբականտի մէկ միջոցը, եւ այդ նկատողութիւնը այնքան արմատ գտած է որ շատեր Հօկիին կ'անդամագրուին ներգաղթի իրաւունք ձեռք բերելու ակնկալութեամբ, եւ կամ կը թելադրուին նուէրներ ընելու նախընտրութիւն ապահովելու համար: Այդ կարծիքին ընդհանրացման մեծապէս սատարած է անշուշտ ձեր ներկայութիւնը Հօկի գրասենեակներուն մէջ եւ Հօկի ներկայացուցիչներուն ալ ձեզի հետ գործակցութիւնը եւ գաւառներու մէջ ընկերակցութիւնը, ներգաղթի բոլոր գործողութեանց առթիւ:
Ամէն պարագայի մէջ, չէինք կրնար բոլորովին լուռ մնալ այդ հարցին հանդէպ եւ կը ներէք որ ամէն կողմէ մեզի ուղղուած դիտողութեանց ճնշումին տակ մեր վերապահումին մէջ ամփոփուած չենք մնար այլեւս:
Միւս կողմէ նկատի ունենալով որ մեր Միութիւնը ներգաղթի գործին մէջ համագործակցութեան կապեր ունի ձեզի հետ, ինչպէս նաեւ Հօկիին, պիտի առաջարկէինք, մեր պատասխանատուութեան զգացումէն եւս թելադրուած, որ ոչ միայն մեզի հաղորդուին ներգաղթի առթիւ ներգաղթողներու կողմէ եղած այլազան վճարումներուն եւ նուիրատուութեանց ցանկերը, այլ, ինչպէս սովորութիւն է, անոնք հրատարակուին թերթերու մէջ, ինչ որ վերջ կուտայ նաեւ այլընդայլոց զրոյցներուն: Մեզի կը թուի, մինչեւ անգամ, որ այդ գումարները պէտք է յանձնուին Ներգաղթի Ֆօնտի Յանձնաժողովին, որուն մօտ պէտք է կեդրոնանան ներգաղթի անուններ կամ պատճառաւ տրամադրուած գումարները, իրենց նպատակներուն յատկացուելու համար:
Լիայոյս թէ մեր թելադրութիւնները կը հաճիք բարեացակամ ոգիով նկատի առնել, կանխաւ կը յայտնենք մեր շնորհակալիքը:
Խորին յարգանքով
ՎԱՐԻՉ-ՊԱՏՈՒԻՐԱԿ

ԻԳ.

15 Մայիս 1936
Մեծայարգ
Քաղաքացի Դ. Շահվերտեան
Ներգաղթի Լիազօր Պատուիրակ
ԲԱՐԻԶ

Յարգելի քաղաքացի,
Երբ ֆրանսահայ ներգաղթողները խանդավառօրէն կ'ուղղուին դէպի մեր սիրելի հայրենիքը՝ Խ. Հայաստան, հաճելի պարտականութիւն մը կը կատարենք Հ.Բ.Ը.Միութեան կողմէ ձեզի ուղղելով մեր սրտագին խնդակցութիւնը եւ շնորհակալիքը կատարուած արդիւնաշատ աշխատանքին համար, որ ան-

գամ մը եւս նուիրագործեց ձեր գնահատելի դերը վտարանդի աշխատաւորներու փրկութեան գործին մէջ:
Մաղթելով որ ձեզի տրուի տակաւին բազմաթիւ կարաւաններ փոխադրել «Աւետեաց երկիր» զոր հազարաւոր հայրենաբաղձներ կ'երազեն, կը համարձակինք ամենայն անկեղծութեամբ ձեր ուշադրութեան յանձնել քանի մը դիտողութիւններ, որպէս զի յառաջիկայիս աւելնք նկատի առնուին նոյն իսկ այս կենսական գործին սիրոյն:
Քանիցս արդէն արձագանգը եղանք մեր Միութեան գործակցող Հայրենակցականներու գանգատներուն, գլխաւորաբար Հապուսիի եւ Բալուի, որ առաջինները եղած են ամբողջովին հատուցանելու իրենց յանձն առած գումարները, ապահովելու Նոր Հապուսիի եւ Նոր Բալուի թաղամասերուն կառուցումը, Նուպարաշէնի մէջ:
Սակայն պարտաւորուած ենք նաեւ արձագանգը ըլլալ ուղղակի կամ մեր ներկայացուցիչներուն միջոցաւ մեզի հաղորդուած տարբեր դիտողութիւններու եւս, քանի որ մեր վրայ պարտք դրած են բողոքողներէն ոմանք որ անոնք ներկայացնենք ձեր բարեացակամ նկատողութեան:
Քիչ չէ արդարեւ թիւը արձանագրուածներու[85] որ կը գանգատին, փաստարկութիւններով, թէ իրենց ներգաղթի խնդրանքին հետեւանք չէ տրուած, ՀՕԿ-ի տեղական վարիչներու անբարեացակամ վկայութեանց վրայ, պարզապէս այն պատճառաւ որ ՀՕԿ-ի անդամ չեն, կամ անդամագրուած ըլլալով վերջերս բողոքած կամ հեռացած են, եւ կամ ուրիշներու նման չեն կրցած ՀՕԿ-ի նուիրատուութիւն մը ընել, ներգաղթի համար:
Թէեւ չենք կրնար առանց ոեւէ քննութեան հաւատ ընծայել այլընդայլոյ գանգատներու, որ անխուսափելի են զտումի գործողութեանց ատեն, սակայն թոյլ տուէք մեզի յայտնել թէ շատերու տպաւորութիւնն է որ ընդհանրապէս ներգաղթի գործը կազմակերպուած է եւ կը կարգադրուի այնպէս որ թէ ըլլար ՀՕԿ-ի ձեռնարկ, եւ ստուգիւ այդ ըմբռնումը այնքան արմատ ձգած ըլլալ կը թուի որ ներգաղթի իրաւունք ձեռք բերելու յոյսով յաճախ ՀՕԿ-ին կ'անդամագրուին եւ կամ որպէս զի նախընտրելի նկատուին կը թելադրուին նուէրներ ընելու: Այդ կարծիքին ընդհանրացման սատարած է գուցէ ձեր ներկայութիւնը եւ ներգաղթի գործերուն կեդրոնացումը ՀՕԿ-ի գրասենեակներուն մէջ, որուն անպատեհութիւնը դուք իսկ ինքնաբերաբար յայտնեցիք առթիւ մը, ինչպէս եւ ձեր մշտական գործակցութիւնը ամէն տեղ ՀՕԿ-ի ներկայացուցիչներուն հետ միասին, ներգաղթի գործողութեանց ընթացքին:
Անտարակոյս այդպիսի դիտողութեանց բնաւ տեղի պիտի չի տրուէր, եթէ ներգաղթը կազմակերպուէր որպէս պետական գործ, ձեր հեղինակաւոր ղեկավարութեան ներքեւ, կազմութեամբը ներգաղթի մարմիններու, որոնց ձեր իրաւունքն է անշուշտ հրաւիրել այն գաղութահայ կազմակերպութիւնները միայն որոնց գործակցութեան պէտքը կը զգացուի:
Մենք կը կարծենք նաեւ որ կարգ մը անտեղի դիտողութեանց եւս առաջքը կ'առնուի, եթէ գանազան ձեւերու եւ անուններու տակ գանձուած նուիրատուութեանց մասին ըլլայ բանաւոր կարգադրութիւն մը:
Նկատելով որ Հ.Բ.Ը.Միութիւնը ներգաղթի ձեռնարկին մէջ ձեզի հետ գործակցութեան կապեր ունի, եւ վերջերս ալ ՀՕԿ-ի հետ ներգաղթի ֆոնտի հանգանակութեան գործին մէջ կապ հաստատած է, այդ իսկ պատճառաւ մեր պատասխանատուութեան զգացումէն եւս թելադրուած, պիտի առաջարկէինք

որ ոչ միայն մեզի հաղորդուի ներգաղթի առթիւ ներգաղթողներուն կողմէ եղած այլազան վճարումներու եւ նուիրատուութեանց ցանկը, այլ, ինչպէս սովորութիւն է, անոնք հրատարակուին թերթերու մէջ ալ: Աւելի ճիշդ պիտի ըլլար, մեր ըմբռնումովը, որ այդ գումարները յանձնուէին Ներգաղթի Ֆոնտի Յանձնաժողովին, քանի որ որոշում կայացած էր անոր մօտ կեդրոնացնել ներգաղթի անունով եւ ներգաղթի առթիւ տրամադրուած գումարները, բնականաբար իրենց նպատակներուն յատկացուելու համար:
Կը սիրենք յուսալ որ մեր սրտցաւ թելադրութիւնները կը հաճիք բարեացակամ եւ ներողամիտ ոգիով նկատի առնել, այն վստահութեամբ թէ մեր լաւագոյն ջանքերը կը ձգտին առաւելագոյն ծառայութիւնը մատուցանելու մեր հայրենիքին եւ հայրենակիցներուն, եւ թէ այդ ուղղութեամբ միշտ հաճոյքով պիտի տրամադրենք ձեզի մեր սրտագին աշխատակցութիւնը, առանց փոյթ ընելու թէ մեր Միութեան դերը կը նսեմացուի ընդհանրապէս եւ նոյն իսկ կը քննադատուի ոմանց կողմէ, հակառակ որ անիկա ներգաղթի գործին միշտ բերած է ամենալայն օժանդակութիւն:
Խորին յարգանքով
ՎԱՐԻՉ-ՊԱՏՈՒԻՐԱԿ

ԻԴ.

18 Մայիս 1936
Մեծայարգ
Քաղաքացի Ա. Եսայեան[86]
Նախագահ Ժողկոմխորհի Կից Ներգաղթի Կոմիտէի
ԵՐԵՒԱՆ
Յարգելի Նախագահ,
Պատիւ ունինք ներփակ ձեզի յղելու, առ ի գիտութիւն, պատճէնը դիտողագրի մը զոր ցաւ ի սիրտ հարկադրուեցանք ուղղելու Ներգաղթի Լիազօր Քաղ[աքացի] Շահվերտեանի, եւ որ ինքզինք կը բացատրէ:
Մեզի կը թուի թէ փափկանկատ լռութիւն մը ներելի պիտի չըլլար մեր կողմէ, երբ այնքան մեծ կարեւորութիւն կ'ընծայենք ներգաղթին, որպէս գաղութահայ աստանդական ու հալածական աշխատաւորներուն փրկութեան միակ միջոցը:
Հետեւաբար կը խնդրենք թոյլատու գտնուիլ որ չուզեցինք ծածկել թէ ներգաղթին որպէս ՀՕԿ-ի ձեռնարկ, եւ ոչ թէ պետական ձեռնարկ կատարուելուն երբեք չենք կրնար մեր համամտութիւնը յայտնել, որովհետեւ չենք կրնար ընդունիլ որ ներգաղթը ըլլայ այս կամ այն կազմակերպութեան բրոբականտի եւ ազդեցութեան միջոց մը, այլ միայն եւ միայն մեր սիրելի հայրենիքին, անոր [ժողովուրդին ու ղեկավարներուն] պանծացումին պատեհութիւնը:
Այս տխուր երեւոյթին մէկ նոր եւ ցաւալի արտայայտութիւնը կը նկատենք նաեւ այն տարօրինակ ցոյցը որ կատարուած է «Սինայիա» շոգենաւին մեկնումի պահուն, երբ նախապէս որոշուած եւ բանաձեւուած հեռագիրներէն դուրս, ներգաղթողներու կողմէ շնորհակալութեան հեռագիր մը կարգադրուած է[87] միմիայն ՀՕԿ-ի Ֆրանսայի Կեդր. Վարչութեան հասցէին, քաղ. Շահվերտեանի ստորագրութեամբ կարծես հրապարակային ցոյց մը ընելու համար Հ.Բ.Ը.Միութեան դէմ, ցոյց մը որ առնուազն ներգաղթողներուն ապե-


բախտութեան եւ վարիչներուն անփափկանկատութեան ցուցադրումը կրնար ըլլալ:
Անշուշտ մենք ցոյցի եւ փառքի համար չէ որ կը կատարենք մեր պարտականութիւնները, եւ գիտենք որ ոմանք ամէն ջանք կ'ընեն նսեմացնելու մեր դերը եւ ուրանալու իսկ մեր օժանդակութիւնները, բայց ուրիշներ շատ կարեւորութիւն կ'ընծայեն այդ երեւոյթին, երբ գիտեն թէ ինչ զոհողութիւններ ըրաւ մեր Միութիւնը այս ներգաղթին առթիւ եւս, ծախսեց աւելի քան 2000 անգլ. ոսկի ներգաղթի յարակից անհրաժեշտ ծախքերու համար, մինչդեռ ոչ մէկ հայ կազմակերպութիւն դոյզն մասնակցութիւն մը չի բերաւ:
Այս սրտցաւ նկատողութիւնները ձեզի ներկայացնելով ուրիշ նպատակ չունինք բայց եթէ խնդրել որ յառաջիկայ ներգաղթի ձեռնարկները կազմակերպուին այլապէս, եւ մեր Միութեան չընծայուի լոկ արկղակալի մը դերը, որ կը կայանայ ամենայետին ծախքն իսկ վճարելու համակերպութեան մէջ:
Մենք վստահ ենք նաեւ որ ձեր յստակատեսութեամբը եւ կորովամտութեամբը պիտի յաջողիք փութացնել յառաջիկայ ներգաղթը, որ անյետաձգելի կարիք մըն է գաղութահայութեան համար, եւ կարգադրել այնպէս որ արձանագրութիւնները եւ ձեւակերպութիւնները երկար ամիսներ չի տեւեն, սրտատրոփ սպասցնելով բազմահազար արձանագրուողներ որ հեւ ի հեւ կը սպասեն մեկնումի ազդանշանին երբ իրենցմէ մաս մը միայն այդ բախտին արժանացած է:
Խորին յարգանքով
ՎԱՐԻՉ-ՊԱՏՈՒԻՐԱԿ

ԻԵ.

Հ.Ս.Հ.Խ.
ՆԵՐԳԱՂԹԻ ԼԻԱԶՈՐ
9 Rue Bourdaloue, 9
Paris IX

Paris, le 19 Մայիս 1936
Téléphone: Trudaine 79-68

Մեծայարգ Պր. Վ. Մալէզեան
Վարիչ-Պատուիրակ Հ.Բ.Ը.Միութեան
Փարիզ
Յարգելի Պր. Վ. Մալէզեան,
Խնդրում եմ ընդունիք եւ հաղորդէք ձեր Միութեան Կեդր. Վարչական Ժողովին իմ շնորհակալիքը այն ջերմ զգացումների համար, որոնցմով ձեր խնդակցութիւնն էք արտայայտում ներգաղթի գործում ձեռք բերուած բարեդէպ արդիւնքների վերաբերեալ: Ուրախ եմ յայտնելու որ այդ հարցում, ինչպէս Միութեանդ հաւաքական ջանքերը, նոյնպէս եւ ձեր անձնական բարեկամեցողութիւնը մեծապէս դիւրացուցին իմ աշխատանքները եւ սատարեցին գործի յաջողութեանը:



Ձեր Միութեան գործակցող Հապուսի[ի] եւ Բալուի Հայրենակցականների գանկատները, թերեւս ընդհանուր տեսակէտով իրաւացի, արդիւնք են, իմ կարծիքով, ներգաղթի նման զուտ պետական գործում նրանց ունեցած հասկացողութեան պակասին եւ այն միակողմանի մօտեցումին, որոնցմով նրանք եւ առհասարակ այլ Վերաշինականները[88] չեն կարողացել դեռ եւս ըմբռնել թէ բազմապիսի ի՛նչ պայմանների բերումով է որ կարելի չէ եղել հարիւր տոկոսով բաւարարել նրանց պահանջները: Ես յոյս ունեմ որ այս հարցում ձեր ունեցած աւելի ճեռնհաս հասկացողութիւնը՝ նրանց կը պարզաբանի եւ կը լուսաբանի իրերի դրութիւնը:

Մի անգամ ընդ միշտ յայտարարում եմ, որ եթէ ՀՕԿ-ի տեղական եւ Կեդրոնական վարիչների աշխատակցութիւնը ինձ հետ՝ ներգաղթի կազմակերպչական ու թէքնիք աշխատանքների մէջ, դրական մեծ նշանակութիւն է ունեցել, որի համար նրանք շնորհակալութեան ու շնորհաւորութեան միայն արժանի են, բայց ներգաղթի խնդրանքներին հետեւանք տալու, կամ ընտրութիւններ կատարելու հարցում՝ նրանք ոչ մի ժամանակ ո՛չ մի դէպքում դեր չեն ունեցել: Հետեւաբար անտեղի եմ գտնում ձեր արձագանգը նմանօրինակ անհիմն գանկատների մէջ:

Ձեզ անծանօթ պէտք չէ որ լինի թէ ՀՕԿ-ի նպատակների մէջ, առաջին հերթին, մտնում է ներգաղթին աջակցելու հարցը: Այս տեսակէտէն, ոչ միայն բնական, այլեւ պարտաւորիչ էր որ ՀՕԿ-ը իր մասսայական լայն կազմակերպութեամբ, առաջաւոր դիրքերի վրայ լինէր ներգաղթի կազմակերպման ու կարգաւորման գործում, համաձայն իմ ցուցմունքներին եւ հրահանգներին: ՀՕԿ-ը որպէս Խորհրդային Հայաստանի նիւթական ու բարոյական շահերի պաշտպանութեան նուիրուած օգնութեան մեծ կազմակերպութիւն, պարզ է որ ներգրաւելու էր այն բոլոր տարրերը, որոնք անկեղծօրէն եւ անվերապահօրէն բարեկամ են Հայաստանին: Ներգաղթի իրականութեան փաստը ՀՕԿ-ին տալիս էր, շատ բնականօրէն, աւելի լայն ժողովրդականութիւն եւ նոր ներգրաւումների հնարաւորութիւններ: Դա չի նշանակում սակայն որ ՀՕԿ-ին անդամ լինելը անհրաժեշտօրէն պայման է դառնում նախընտրելիութեան իրաւունքի՝ ներգաղթի հարցում: Փաստ՝ որ 1800 ներգաղթողների մէջ ՀՕԿ-ի ակտիւ անդամների թիւն է 150 միայն, չը նայած որ արձանագրուած Հօկեան միլիտանների թիւը՝ 1000-ից աւելի է: Տեսնում էք որ այս ուղղութեամբ էլ ձեզ հասած տեղեկութիւնները ճիշտ չեն:

Վճռականապէս յայտարարում եմ որ ներգաղթողներից - Հօկեան կամ ո՛չ Հօկեան - *ոչ մի սու*[89] *նէր չէ եղել ՀՕԿ-ին:* Այս հարցում ձեզ հասած գանկատները բղխել են, անտարակոյս, ՀՕԿ-ին եւ Խորհրդային Հայաստանին

թշնամի՝ կամ առ նւազն՝ անհարազատ տարրերից: Ես ճիշտն ասած, ցաւում եմ որ դուք ոչ միայն հատատ էք ընծայում եւ նկատի էք առնում, այլեւ պաշտօնական գրութիւնների նիւթ էք դարձնում այդ կարգի թշնամական ասէ-կոսէները, որոնց աղբիւրների դէմ բողոքողների դիրքում միայն ցանկանում էի տեսնել ձեզ:

Ինչ վերաբերում է ներգաղթողների կողմից Խորհրդային Հայաստանին եղած կամաւոր նւիրատուութիւններին եւ Խորհրդային քաղաքացիութեան ու վիզայի ծախքերի համար *ունեւորներից միայն* գանձւած գումարներին, դրանց հաշիւը ես պարտաւոր եմ տալ իմ Կառավարութեանը: Ոչ ձեր Միութիւնը եւ ոչ էլ Ներգաղթի Ֆօնտի Կեդր. Մարմինը, որոնց հետ ես սիրով համագործակցել եմ ներգաղթի ընդհանուր գործին մէջ, խառնւելու չեն իրենց չը պատկանող հարցերին:

Ես միշտ էլ հաճոյքով նկատի եմ առել ինձի եղած առողջ թելադրանքները, ինչպէս դուք էլ առիթներ էք ունեցել տեսնելու, բայց խնդրում եմ, առհասարակ, զգաւոլել այն խնդիրներով՝ որոնք ձեր իրաւասութեան սահմաններից դուրս չեն ելնում եւ չեն դժւարացնում մեր փոխադարձ սիրալիր աշխատակցութիւնը, որից միայն կարող է օգտւել մեր աշխատաւոր ժողովուրդը:

Ընդունեցէք, յարգելի Պր. Մալէզեան, իմ յարգալիր զգացումները:

Հ.Ս.Խ.Հ.ի ներկայացուցիչ եւ
Ներգաղթի Լիազօր Պատւիրակ
Դ. Շահվերդեան

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Մեր խօսքը կը վերաբերի հայերէնով լոյս տեսած երկհատորեակին, որ ձախող փոխադրութիւն մըն է ֆրանսերէնով կամ անգլերէնով պատրաստուած բնօրինակէն: Առաւասիկ բովանդակութիւնը առաջին հատորին ներքին անուանաթերթին եւ անոր հանդիպակաց էջին. «*Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Հատոր առաջին*, 1906-1940, *Գահիրէ-Փարիզ-Նիւ Եորք*, 2006: *Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան հարիւրամեակին* (1906-2006) *առիթով հրատարակուած երկ՝ նախաձեռնութեամբ ՀԲԸՄ-ի կեդրոնական վարչութեան, ղեկավարութեամբ Յարութիւն Ռ. Գէորգեանի եւ Վահէ Թաչճեանի (ՀԲԸՄ-ի Նուպարեան գրադարան, Փարիզ), հայերէնի թարգմանեցին Գրիգոր Շահինեանը եւ Շաղիկ Արծրունին*»: Էջը յաւելուածաբար կը տեղեկացնէ. «*Այս հատորները* [?] *հրատարակուեցան Նազար եւ Արտեմիս Նազարեաններու (ԱՄՆ) մեկենասութեամբ*»: Հաւանաբար գրաշարական վրէպով մը «*հատորը*» դարձած է «*հատորները*»: Աշխատութեան երկրորդ հատորը, որ կը վերաբերի միութեան 1941-2006 տարիներու գործունէութեան, հրատարակուած է մեկենասութեամբը Պերճ եւ Վերա Սեդրակեաններու (ԱՄՆ):

[2] *Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան – Ամերիկայ Յոբելեան – 1906-1931, Ա. Հատոր*, Բարիզ, 1935, էջ 17: Հատորին պատրաստութեան աշխատանքները ղեկավարած է միութեան վարիչ-պատուիրակ եւ ընդհանուր տնօրէն Վահան Մալէզեանը, գլխաւոր աշխատակից ունենալով գրադարանապետ Արամ Անտոնեանը եւ գործակիցներուն մէջ հաշուելով Լեւոն Բաշալեանը, Արշակ Չօպանեանը, Վահան Թէքէեանն ու այլ նուիրեալներ:

[3] Նոյն, էջ 9, 45, եւն.:

[4] ՀԲԸՄի Կեդրոնական Վարչական Ժողովի արխիւներուն մէկ մասը տողերը գրողիս նախաձեռնութեամբ եւ Միութեան ղեկավարութեան հաւանութեամբ 1990ին Փարիզի Նուպարեան Մատենադարանի պահեստանոցէն փոխադրուեցաւ Նիւ Ճըրզի՝

դասաւորման եւ ուսումնասիրման նպատակով: Դոկտ. Էդուարդ Լ. Մելքոնեան հո՛ն էր որ հակեցաւ դասաւորման ենթարկուող արխիւային նիւթերուն վրայ եւ անոնց մէկ մասը հիմք ծառայեցուց ՀԲԸՄի պատմութեան նուիրուած առաջին լուրջ աշխատասիրութեան՝ *Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պատմութիւն*, Երեւան, 2005, հրատարակութիւն Կարպիս Լ. Նազարեան Հիմնադրամի:

[5] Լեւոն Բաշալեան (1868-1943): Արեւմտահայ պատմուածագրութեան գողտրիկ էջեր պարգեւած այս գիրի ու գրականութեան մարդը, որ նոյնքան մըն ալ տէր էր հասարակական ջիղի, Փարիզ հաստատուելէ ետք ՀԲԸՄի եւ Հայ Ազգային Պատուիրակութեան ծիրին մէջ ունեցաւ նկատառելի գործունէութիւն: Ինչպէս այս եւ յաջորդ նամակներէն ի յայտ կու գայ, ան վարած է Հայ Մտաւորականներու Օգնութեան Յանձնաժողովին քարտուղարութիւնը կամ ատենադպրութիւնը, առ այդ ստորագրելով (ոչ միշտ) յատկացումներու մերժումը իմացնող կամ ընծայումը աւետող նամակները:

[6] Վճարագիր (ֆր.):

[7] Սիամանթոյի կամ Ատոմ Եարճանեանի (1878-1915) այրին:

[8] Վստահ չենք, բայց կը թուի թէ այս նամակին հեղինակն է շարք մը պարբերականներու հրատարակիչ ու խմբագիր ֆրանսաբնակ Լեւոն Համբարձումեանը (1885-1970):

[9] Յապաւումը Հայ Մտաւորականներու Օգնութեան Յանձնաժողովին: Կը հանդիպի նաեւ ՀՄՕՅ տարբերակով:

[10] Գերմանիշակագոյն Ք ճառագայթ եւ ռատիում (ֆր.):

[11] Շարակցական հիւսուածքի չարորակ ուռուցք (ֆր.):

[12] Բջիջներու մէջ արգելափակեալ եւ տեղափակեալ (ֆր.):

[13] Տիգրան Կամսարական (1866-1941), որ իր *Վարժապետին Աղջիկը* նորավէպով (Պոլիս, 1888) նոր հուն բացաւ արեւմտահայ արձակագրութեան մէջ, Եգիպտոս ծխախոտի արտադրութեամբ զբաղելէ ետք անցած էր Փարիզ եւ կը գլխաւորէր Հայ Մտաւորականներու Օգնութեան Յանձնաժողովը: Ան նաեւ իր անունով հաստատած էր գրական մրցանակ մը Երեւանի մէջ:

[14] Դարմանումի ժամանակացոյցը ներկայացնող տետր:

[15] Արշակ Չօպանեան (1872-1954), որ Ֆրանսայի մէջ նկատուած էր «Հայ մշակոյթի դեսպան», առաջին օրէն մօտիկ կանգնած էր ՀԲԸՄի եւ անդամակցած անոր զանազան մարմիններուն:

[16] Վահան Մալէզեան (1871-1966): Մասնագիտութեամբ իրաւաբան, Մալէզեան երկար տարիներ գործեց իբրեւ ՀԲԸՄի Ընդհանուր Տնօրէն եւ Վարիչ Պատուիրակ, իր անձնական դրոշմը դնելով Միութեան շարք մը կարեւոր իրագործումներուն վրայ:

[17] Անձանօթ:

[18] Թէոդիկ կամ Թէոդորոս Լապճինճեան (1873-1928) այս նամակներուն մէջ յիշատակուած է երկու դերով՝ հրատարակիչ *Ամենուն Տարեցոյցը* եզական տարեգիրքերուն եւ դաստիարակ ՀԲԸՄի Մելգոնեան Կրթական Հաստատութեան:

[19] Թէոդիկի հրատարակած *Ամենուն Տարեցոյցը* տարեգիրքը հայ պարբերական մամուլի մարզին մէջ կը մնայ բացառիկ երեւոյթ: Գալուստ Կիւլպենկեան Հիմնադրամը վերջին տարիներուն նախաձեռնարկ եղաւ տարեգիրքերու շարքին վերահրատարակութեան Հալէպի մէջ, Սուրիա:

[20] Սիմոնիկ Քիրումեան կամ Փիրումեան կը վարէր Փարիզի մէջ Խորհրդային Միութեան Լիազօր Ներկայացուցչութեան քարտուղարի պաշտօնը:

[21] Յստակ է թէ երեւութապէս անպատեհութիւն նկատուածը քերթուածին արեւելահայերէնով գրուած չըլլալն է:

[22] Ջաւէն Պատրիարք Տէր-Եղիայեան (1868-1947) իբրեւ կտակակատարը Մելգոնեան Կտակին, հիմնական դերակատարութիւն մը ունէր խնդրոյ առարկայ շրջանին Մելգոնեան Կրթական Հաստատութեան յանձնաձոմին մէջ:

[23] Լեւոն Թաշճեան (1872-1942), կրթական մշակ, որ առաւելապէս պաշտօնավարած է Եգիպտոսի մէջ, բայց 1925-1926 կրթական տարեշրջանին եղած է տնօրէն Մելգոնեան Կրթական Հաստատութեան:

[24] Մելգոնեան Կրթական Հաստատութեան հիմնադիրներուն անունը շատեր գրած են ու կը գրեն «Մելքոնեան» տարբերակով: Պաշտօնական ձեւն է «Մելգոնեան»:

[25] Եդուարդ Գօլանճեան (1880-1957), բանաստեղծ, ուսուցիչ, հրապարակագիր եւ թարգմանիչ:

[26] Գաբրիէլ Նորատունկեան (1852-1936): Օսմանեան Կայսրութեան մէջ իբրեւ պետական դէմք ծանօթ այս դիւանագէտը, որ նաեւ ունեցած է բանասիրական հակումներ, վարած է Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահութիւնը Պօղոս Նուպարէն ետք եւ զբաղեցուցած է ՀԲԸՄի փոխ-նախագահի պաշտօնը:

[27] Կարելի չեղաւ ճշդել ինքնութիւնը տիկին Մամուրեանի, թէեւ հաւանական է որ ան կողակիցն ըլլայ *Արեւելեան Մամուլի* հիմնադիր Մատթէոս Մամուրեանին (1830-1901): Մատթէոսի որդի Հրանտը (1875-1935), որ հօր մահէն ետք շարունակած էր խմբագրել վերոյիշեալ թերթը, փրկուելով 1922ի Զմիւռնիոյ աղետէն, հաստատուած էր Յունաստան:

[28] Մկրտիչ Պեշիկթաշլեան (1828-1868), բանաստեղծ, որ իր համազգային համբաւը կը պարտի Զէյթունի հերոսական ապստամբութիւնը շօշափող չափածոյ տողերուն:

[29] Նշան Պեշիկթաշլեան (1896-1972), առաւելապէս ծանօթ իբրեւ երգիծագիր:

[30] Մարկոս Ազաբէգեանց (1830-1908), կրթական, հասարակական եւ թատերական գործիչ, հրապարակագիր:

[31] Այրին նահատակ գրող Մելքոն Կիւրճեանի (1859-1915): Թերեւս տեղին ըլլայ նշել թէ տակաւին 1909ին, Հրանդ հրաւէր կարդացած էր Պօղոս Նուպարի՝ հասնելու գաւառահայութեան կարիքներուն, ի միջի այլոց ըսելով. «*Ճո՛ւտ հասէք, Փաշա՛, Թող երկննայ թխագոյն ակօսը աշնան մշուշին ու անձրեւին կաթիլներուն տակ. Թող կենսատու հատիկը աւանդ դրուի մեր հողերուն տաքուկ ծոցին մէջ...։ Ահաւասիկ կը դիմեմ ձեզի, բարձապատի՛ւ Փաշա, մեր հողերուն ժայռովը, մեր տուներուն հեւքովը*» (*Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն, 75 Տարի Սէր, Ծառայութիւն, Երազ,* հրատարակութիւն ՀԲԸՄ Կեդր. Վարչ. Ժողովի, 1981, Սետըլ Պրուք, Նիւ Ճըրզի, ԱՄՆ: Հատորը քաղած ու ծանօթագրած է բանաստեղծ, կրթական մշակ Զարեհ Մելքոնեանը եւ խմբագրած է իրաւաբան Միսաք Հայկենցը՝ Ընդհանուր Տնօրէն ՀԲԸՄի):

[32] Պոլսոյ *Նոր Լուրի* աշխատակից, որուն կենսագրական տուեալները ծանօթ չեն մեզի:

[33] *Նոր Լուր* ամէնօրեայ, Պոլիս, հրատարակուիլ սկսած 1924ին՝ Վարդան Թովմասեանի արտօնատիրութեամբ եւ Վահան Թոշիկեանի խմբագրումով:

[34] Հետաքրքրական հաստատում մը, որ կը յուշէ Թուրքիոյ մէջ հայ կրթական գործին դիմագրաւած դժուարութիւնները՝ առկայ անբարենպաստ պայմաններու հետեւանքով:

[35] 4 Մարտ 1927 թուակիր նամակին մէջ Բաշալեան ստորագրած է իբրեւ Ընդհանուր Քարտուղար ՀՄՕՅի:

[36] 4 Մարտ 1927 թուակիր նամակին մէջ Կամսարական ստորագրած է իբրեւ Նախագահ ՀՄՕՅի:

[37] Լեւոն Էսաճանեան (1885-1935), բանաստեղծ, որ նաեւ կատարած է գրադատական փորձեր ու քեմալական շարժումէն ետք պահ մը զբաղած է Յունաստան ապաստանած հայ որբերու հոգատարութեամբ:

[38] Րաֆայէլ կամ Ռաֆայէլ Զարդարեան (1896-?), որդին նահատակ գրող Ռուբէն Զարդարեանի, ի՛նք ալ զբաղած գրականութեամբ:

[39] Քսանականներուն ՀԲԸՄը կեանքի կոչած էր քարոզչական յանձնախումբ մը Արշակ Չօպանեանի ատենապետութեան ներքեւ, յատկապէս Եւրոպայի քաղաքական շրջանակներուն մօտ յառաջ տանելու համար հայ ազգային շահերուն վերաբերող քարոզչական գործունէութիւն մը:

[40] Ռուբէն Զարդարեան (1874-1915), նահատակ գրող եւ հրապարակագիր:

[41] Արմէն Շիտանեան (1870-1932), վիպասան եւ ուսուցիչ, հեղինակ ժողովրդական վէպերու, որոնք անյագօրէն ընթերցուած են իրենց ատենին:

[42] Նամակը գրուած է «Յոբելեանական Յանձնախումբ "Ա. Շիտանեան" 35-ամեայ Գրական Կրթական Գործունէութեան - Comitè Jubileé "Armen Chidanian"» վերտառութիւնը կրող նամակաթուղթի մը վրայ եւ իբրեւ թղթակցութեան հասցէ հեղինակը նշած է՝ Վասիլէվսքի No 11, Վառնա:

[43] Կոստան Զարեան (1885-1969), բանաստեղծ եւ արձակագիր, որ սերունդներու յիշողութեան մէջ կը մնայ յատկապէս իր խնդրայարոյց *Նայը Լերան Վրայ* վէպին ողիսականով:

[44] Այդ մասին տե՛ս նաեւ՝ այս հատորին մէջ տեղ գտած Վարդան Մատթէոսեանի հրապարակումը:

[45] *Անահիտ*, Արշակ Չօպանեանի հիմնած ամսաթերթը, որ շուրջ երկու տասնամեակի դադարէ ետք, 1929ին վերստին յայտնուած էր ընթերցողներուն:

[46] Մալէզեան նամակին առաջին էջի վերի ձախ անկիւնին ունի հետեւեալ գրանցումը. *«Դժուար կ՛ըլլայ նոր նպաստ մը կարգադրել, նախ որ ինք չէ դիմած, յետոյ արդէն անգամ մը ստացած է նպաստ?»*:

[47] Խայտառակ (թրք.):

[48] Միհաս Չերազ (1852-1929), բանաստեղծ եւ հասարակական ու մշակութային գործիչ, որ 1912ին գործակցեր է Պօղոս Նուպարի հետ իբրեւ անդամ 1912ին կեանքի կոչուած Ազգային Պատուիրակութեան եւ 1914ին վերջնականապէս հաստատուեր է Փարիզ:

[49] Շիրվանզադէ կամ Ալեքսանդր Մովսիսեան (1858-1935), արձակագիր եւ թատերագիր, որուն ՀՄՕՅն յատկացում կատարած պէտք է ըլլայ անոր հերթական անգամ Փարիզ բնակած շրջանին (1919-1926):

[50] Զապէլ Եսայեան (1878-1943), խիզախ գրագիտուհի, որ 1933ին պիտի երթար հաստատուիլ Երեւան՝ ընդառաջելով Խորհրդային Հայաստանի կառավարութեան հրաւէրին:

[51] Հայկ Պէրպէրեան (1887-1978), բանասէր, հրատարակիչ խմբագիր *Revue des Études Arméniennes* հանդէսին: Վարած է Հայ Ազգային Պատուիրակութեան քարտուղարի պաշտօնն ու մօտէն գործակցած Պօղոս Նուպարի եւ ՀԲԸՄի ղեկավար մարմիններուն հետ:

[52] Նախադէպ (ֆր.):

[53] Վահան Մալէզեան այս նամակին վերի աջ անկիւնին արձանագրած է. *«Մտաւորականներու հիմնադրամէն 600 ֆր. կը ղրկէք Կոստան Զարեանի Չօպանեանի միջոցաւ»*:

[54] Հայ պատմագրութեան մէջ իբրեւ կեղծ յորջորջուած Օսմանեան [երկրորդ] սահմանադրութեան հռչակումը կատարուած է 24 Յուլիս 1908ին:

[55] Վարդուհի եւ Մաքրուհի Թաշճեան քոյրերը իրենց անհատական միջոցներով Գահիրէի մէջ հիմնած են երկսեռ կրթարանը, որ գործած է 1917էն մինչեւ 1937:

[56] Ստորագրութիւնը կը յայտնէ երկու բան: Նամակը գրուած է օգնող անձի մը ձեռագրով, որ տարբեր է ստորագրողին ձեռագրէն, իսկ ստորագրութիւնը կատարուած է ակնյայտ ճիգով, պարզելով ենթակային տեսողութեան իրապէս խանգարուած ըլլալը:

[57] Ակնարկութիւնը վերը բերուած թիւ 15 նամակին:
[58] Գրիգոր Սինապեան կը վարէր ՀԲԸՄի Կեդրոնական Վարչական Ժողովի ատենադպիրի պաշտօնը:
[59] Եռանդովդ (ֆր.):
[60] Գեղամ Տէր Կարապետեան (1866-1919), ծանօթ իբրեւ Մշոյ Գեղամ, զբաղած է ուսուցչութեամբ, յեղափոխական գործունէութեամբ եւ գաւառի կեանքը պատկերող գրականութեամբ:
[61] Գեղամ Բարսեղեան (1883-1915), որ նախորդին նման ունի գաւառական կեանքը պատկերող գրական փորձեր, եղած է Պոլսոյ *Ազատամարտ* օրաթերթի օգնական խմբագիր եւ *Մհեան* գրական պարբերաթերթի խմբագրական կազմի անդամ:
[62] Արփիար Արփիարեան (1851-1908), ի տարբերութիւն յիշեալ գրողներէն ոմանց, զոհ գացած էր ոչ թէ Ցեղասպանութեան, այլ՝ «եղբայրասպան» մահափորձի: Իր հրապարակագրական էջերով ան ջատագոված է հայկական ընդհանուր միութեան մը ստեղծման գաղափարը եւ կը նկատուի հոգեւոր հայրերէն մին ՀԲԸՄի:
[63] Գրիգոր Զohրապ (1861-1915): Արեւմտահայ արձակի ինքնատիպ վարպետ, խմբագիր, հիմնադիր *Մասիս* գրական շաբաթաթերթի եւ 1908ին՝ Օսմանեան երկրորդ սահմանադրութեան հռչակումէն ետք՝ երեսփոխան Օսմանեան խորհրդարանի:
[64] Տիգրան Չեօկիւրեան (1884-1915), արձակագիր, համահրատարակիչ *Ոստան* գրական հանդէսին եւ ուսուցիչ:
[65] Օհան Կարօ կամ Յովհաննէս Կարապետեան (1890-1933), ինչպէս իր մահուան թուականէն կը տեսնուի, նահատակ գրող մը չէր, բայց հաւանաբար առանձին հատորով մը իր տեղը գրաւած է հրատարակուած գործերու տուեալ շարքին մէջ Նահատակ Գրագէտներու Բարեկամներ ընկերակցութեան անդամակցած ըլլալուն հանգամանքով:
[66] Երուանդ Օտեան (1869-1926) երգիծագիրը նահատակ գրող մը չէր, բայց իր ժողովուրդի զաւակներուն նահատակութիւնն ու սփիւռքացումը ամէնօրեայ ներկայութիւն մը դարձած էին իր հրապարակագրական թէ վիպագրական էջերուն մէջ ահաւոր Ցեղասպանութենէն ետք:
[67] Երուանդ Սրմաքէշխանլեան կամ Երուխան (1870-1915) հայ գրականութեան տրուած է անոր գլուխ-գործոցներէն *Ամիրայիին Աղջիկը* վէպը: Զբաղած է ուսուցչութեամբ եւ խմբագրութեամբ:
[68] Արտաշէս Յարութիւնեան (1873-1915), բանաստեղծ եւ գրադատ:
[69] Ռուբէն Սեւակ (1885-1915): Մասնագիտութեամբ բժիշկ Ռուբէն Չիլինկիրեան կամ Սեւակ հայ գրականութեան տուած է չափածոյ եւ արձակ գողտրիկ էջեր:
[70] Տիրան Չրաքեան կամ Իւնտրա (1875-1921) հանճարեղ արձակագիրն ու բանաստեղծը կենդանի նահատակներէն մին կարելի է նկատել Ցեղասպանութեան՝ իր մտային խանգարման բերումով, ինչպէս էր պարագան հայ երգի եւ երաժշտութեան հանճարին՝ Կոմիտասի:
[71] *Մալէզեան այս նամակին ի պատասխան, 5 Հոկտեմբերին, ի միջի այլոց կը յայտնէ.* «... մեր գնահատումը համեստ մասնակցութեամբ մը արտայայտելու բաղձանքով, ներփակ կը դրկենք 500 ֆրանքի չէք մը, խնդրելով որ ցարդ հրատարակուած գիրքերէն համարժէք քանակութեամբ մեզի տրամադրէք Միութեանս հաստատութեանց համար»:
25 Հոկտեմբեր թուակիր նամակով մը Մ. Պարսամեան կը յայտնէ թէ ստացուած 500 ֆրանքին փոխարէն ՀԲԸՄի պիտի տրամադրուի 36 հատոր գիրք (երեքական հատ հրատարակեալ հատորներէն եւ երեքական օրինակ «Հետզհետէ լոյս տեսնելիք հատորներէն», ընդհանուր «750 ֆրանք արժէքով»): Կցեալ ցուցակ մը կը պարզէ թէ հրատարակուած եւ հրատարակելի հատորներէն իւրաքանչիւրին համար որպէս փոխարժէք նշանակուած է 20 ֆրանք, բացի Գեղամ Տէր Կարապետեանին նուիրուած հատորէն, որուն փոխարժէքն է 30 ֆրանք:

Այս նամակին վրայ Մալէզեանի կատարած մակագրութիւնը կը յուշէ թէ ստացուած հատորներէն մէկական օրինակ պիտի տրամադրուի Փարիզի [Նուպարեան] Մատենադարանին, Նիկոսիոյ [Մելգոնեան Կրթական Հաստատութեան], Նուպարաշէնի Մատենադարանին։

13 Մարտ 1937 թուակիր եւ հազար չորս հարիւր ֆրանքի դիմաց տրուած ստացագիր մը՝ Մերուժան Պարսամեանի ստորագրութեամբ, կը ներկայացնէ հետեւեալ ցանկը, որուն ճակատին Մալէզեան արձանագրած է. «Երիտասարդաց ակումբներուն համար»:

ՄԱՏԵՆԱՇԱՐ	
1. ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ	20 օրինակ
ԱՐՁԱԿ ԷՋԵՐ ԵՒ ՀԵՔԻԱԹՆԵՐ	
2. ՀՐԱՆԴ (ՄԵԼՔՈՆ ԿԻՒՐՃԵԱՆ)	15
ՊԱՆԴՈՒԽՏԻ ԿԵԱՆՔԷՆ	
3. ԳԵՂԱՄ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ	20
ՏԱՐՕՆԻ ԱՇԽԱՐՀ	
4. ԳԵՂԱՄ ԲԱՐՍԵՂԵԱՆ	10
ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՈՐԾԸ	
5. ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ	30
ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ ԵՒ ՎԻՊԱԿՆԵՐ	
6. ԳՐԻԳՈՐ ՉՕՀՐԱՊ	30
ԾԱՆՕԹ ԴԷՄՔԵՐ, ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ	
7. ՏԻԳՐԱՆ ՉԷՕԿԻՒՐԵԱՆ	10
ՎԱՆՔԸ-ՀԵՐՈՍԸ	
8. ՕՀԱՆ ԿԱՐՕ	10
ԽՐՃԻԹՆԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ	
9. ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ	40
ԸՆԿԵՐ ՓԱՆՋՈՒՆԻ	
10. ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	15
ԱՐՁԱԿ ԷՋԵՐ ԵՒ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ	
	---
	200 7 ֆրք.էն ֆրանք 1400.-

[72] Սկրտիչ Պարսամեան (1886-1966), արձակագիր, գրադատ եւ խմբագիր, հիմնադիրներէն մին Նահատակ Գրագէտներու Բարեկամներ ընկերակցութեան:

[73] Սիմոն Վրացեան (1882-1969), դաշնակցական գործիչ եւ խմբագիր, վերջին վարչապետ Հայաստանի (առաջին) Հանրապետութեան (1920):

[74] 10 Օգոստոս 1931ին Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը որոշում կայացուցած էր երկրին սահմանները բանալու արտասահմանի «աշխատաւոր հայերու» զանգուածային նոր ներգաղթի մը առջեւ, բայց Ֆրանսայէն ներգաղթել փափաքողներու առջեւ դուռները բաց յայտարարուած էին միայն 1935ին:

[75] Համաշխարհային գեղանկարչութեան եւ քանդակագործութեան մէջ ինքնուրոյն դպրոց մը հաստատած երուանդ Քոչար (1899-1979) ներգաղթի շարժումէն օգտուելով Հայաստան պիտի հաստատուէր 1936ին: Տեղին է նշել թէ նամակին վրայ կը հանդիպինք հետեւեալ արձանագրութեան.

«Նկարիչ երուանդ Քոչար եւ կինը - պաշտպանեալ Մարիամ Նուպար պէչի մօրաքրոջ տիկին Գաբամաճեանի»: Նոյեմի Գաբամաճեան (մեռ. 1947ին) քոյրն էր Պօղոս Նուպարի:

[76] Համայնավար կուսակցական եւ պետական գործիչ Դանիէլ կամ Դանուշ Շահվերդեան (1882-1941) զանազան ներկայացուցչական պաշտօններ վարած է Խոր-

հրդային Հայաստանէն դուրս եւ եղած՝ հիմնական դերակատարներէն մին ներգաղթի կազմակերպման աշխատանքներուն:

[77] Հայաստանի Օգնութեան Կոմիտէն ստեղծուած էր 1921 Սեպտեմբեր 18-23ին Երեւանի մէջ, պետական մտայղացումով, գլխաւորաբար արտասահմանի հայութենէն օժանդակութիւններ ապահովելով հայաստանաբնակ հայութեան նիւթական պայմաններուն բարելաւման եւ երկրաշինութեան նպաստելու նպատակով: Ան հետզհետէ ստանձնած էր նաեւ ներգաղթի կազմակերպման աշխատանքները համադրելու պարտականութիւնը: Անոր հիմնադիր անդամներուն մաս կը կազմէին գրող Յովհաննէս Թումանեանը, պատմաբան Լէօն, բառարանագիր Ստեփանոս Մալխասեանցը եւ ուրիշ ականաւոր դէմքեր: ՀՕԿի Կեդրոնական Վարչութեան առաջին նախագահն էր Խորհրդային Հայաստանի Երկրագործութեան Նախարար (Հողժողկոմ) Արամայիս Երզնկեանը: Կազմակերպութիւնը շուտով պիտի դառնար նաեւ համայնավար գաղափարախօսութիւնը հայկական գաղութներու մէջ տարածող գործիք: Ընթացք մը, որ պիտի առաջնորդէր արտասահմանի զանազան երկիրներու իշխանութիւններուն մօտ գաղթահայութեան շահերու վտանգման եւ հայկական կազմակերպութիւններու միջեւ այլապէս անհարկի պայքարներու:

[78] Նկատի ունի Հայաստանի Ժողկոմխորհի Նախագահ Սահակ Տէր-Գաբրիէլեանը (1886-1937) եւ 1935ին անոր յաջորդած Աբրահամ Գուլոյեանը (1898-1938):

[79] Նուպարաշէնը, զոր խորհրդային իշխանութիւնները պիտի վերանուանէին Սովետաշէն, սկզբնապէս կը նպատակադրէր Հայաստանի մէջ աւանի մը կառուցումով հնարաւոր դարձնել տասնեակ հազարաւոր գաղթական հայերու ներգաղթը հայրենիք: Ծրագիրը պաշտօնապէս առաջարկուած էր ՀԲԸՄի 14րդ տարեկան Ընդհանուր Ժողովին մէջ, գումարուած Ֆիլատելֆիա, ԱՄՆ, եւ զանազան ձգձգումներէ ետք, Հայաստանի իշխանութիւնները 1930ի Մայիսին վերջապէս հաւանած էին որ ձեռնարկուի անոր իրականացման:

[80] Վահէ Հայկի աշխատասիրութեամբ հրատարակուած *Խարբերդ Եւ Անոր Ոսկեղէն Դաշտը* մեծահատոր յուշամատեանին մէջ (Նիւ Եորք, 1959), Թլկատին գիւղը ներկայացուած է նաեւ Խուլու եւ ոչ թէ Խուլու անունով (էջ 791):

[81] Վերը յիշուած հատորը կը յիշատակէ Մէօրէկ կամ Մէօրփէ գիւղը եւ ոչ թէ Մէօլփէ (էջ 943): Մեքենագրական վրէպի արդիւնք է «Մէօրփէ»ն:

[82] Ցեղասպանութենէն փրկուած տարագիր հայութեան մասնիկները հետզհետէ հիմնեցին իրենց հայրենի բնակավայրերուն անունով հայրենակցական միութիւններ, օգնութեան հասնելու կարօտեալ հայրենակիցներու եւ վառ պահելու հաւատքը հայրենի հող վերադարձի: Այդ հայրենակցականներէն գէթ յիշեալները իրենց հանգանակած գումարները յանձնեցին ՀԲԸՄի, Նուպարաշէն աւանին մէջ իրենց բնակավայրերուն անունով թաղամասեր ունենալու համար:

[83] Աբէնքաբնակ բժիշկ Տիգրան Էնֆիէճեան եղած է Ռամկավար Ազատական Կուսակցութեան ակնառու դէմքերէն մին:

[84] Իր մարդասիրական աշխատանքներով Խաղաղութեան Նոպէլեան Մրցանակին արժանացած Ֆրիտիոֆ Նանսէնի անունը կրող Գաղթականներու Միջազգային Գրասենեակը 1930ի աշնան Ազգերու Լիկային կողմէ լիազօրութիւն ստացած ըլլալով, իր աշխատանքներուն պաշտօնապէս լծուած է 1 Ապրիլ 1931ին, կեդրոնատեղի ունենալով Ժընեւը: Խորքին մէջ, այս գրասենեակը, իր նոր անուանումով, կու գար շարունակել Նանսէնի գլխաւորութեամբ եւ Ազգերու Լիկային հովանաւորութեամբ նախապէս գործող Գաղթականներու Բարձր Քոմիսէրութեան աշխատանքները, որոնց կարեւոր դաշտերէն մին էր Հայաստանը:

[85] Մելքոնեանի յիշեալ աշխատութեան մէջ (էջ 221) այս բառը մեքենագրական սխալի հետեւանքով վերարտադրուած է իբրեւ *«արձանագրութիւններուն»*:

[86] Արսէն Եսայեան (1898-1938), համայնավար կուսակցական եւ պետական գործիչ, որ իր վարած կարգ մը կարեւոր պաշտօններու շարքին, իր մահէն քիչ առաջ կոչուած էր ՀՕԿի Նախագահի պաշտօնին:

[87] Մելքոնեանի յիշեալ աշխատութեան մէջ (էջ 222), դարձեալ մեքենագրական վրէպով մը, վերարտադրեալ բնագրէն դուրս մնացած են այս էական բայը եւ, քանի մը բառ անդին, *«ցոյց մը ընելու համար Հ.Բ.Ը.Միութեան դէմ»*, բառախումբը:

[88] Ակնարկութիւն այն հայրենակցական միութիւններուն, որոնք իրենց սկզբնական ծրագրերն ընդարձակելով, ներգաղթի շարժումէն ետք ընդգրկած էին նաեւ Հայաստանի վերաշինութիւնը իբրեւ ծրագրային կամ նպատակային կէտ, առաւելապէս լծուելով կորսուած արեւմտահայկական քաղաքներու եւ աւաններու անունով Հայաստանի մէջ նոր աւաններ հաստատելու աշխատանքին:

[88] Ֆրանսական մանրադրամ:

PAGES FROM THE AGBU CHRONOLOGY
(Summary)

VATCHE GHAZARIAN
mayrenipublishing@comcast.net

In 2006 the Armenian General Benevolent Union celebrated its 100th anniversary. Though some books were published on the occasion and the history of the AGBU was written, there is a lot to be done to unearth the full picture of AGBU contribution and input both to the Diaspora and to the Armenian state.

By publishing twenty-six letters, Vatche Ghazarian brings to the limelight some aspects of the second and third decades of AGBU history.

Due to the dire conditions of the Armenian refugees and Genocide survivors, alongside international philanthropic organizations, AGBU embarked on a project to address their social, hygienic and cultural needs.

In 1925 AGBU initiated a support project for the needy remaining Armenian intellectuals who had survived the massacres during the Genocide. The project intended to extend yearly financial allocations both to the families of the massacred intellectuals and to other intellectuals who were facing financial hardships in their newly adopted countries.

Along with the sixteen letters that shed light on this project, Ghazarian publishes two letters addressed to the AGBU and written by a literary group called "friends of martyred authors". The group, established in 1925, aimed at publishing the literary works of the massacred authors as a way of disseminating awareness and preserving Armenian heritage among the forthcoming generations. These letters asked for financial support from AGBU to maintain the aims and objectives of the group, and the response was positive.

The third bunch of letters deals with repatriation. AGBU was financially involved in the repatriation project that was initiated by the Soviet Armenian authorities. Ghazarian publishes seven letters which shed light on some aspects of the ins and outs of the process including the organization of repatriation, registration of names of families to be repatriated, donations collected, the not-so-smooth cooperation of the representative of the Soviet Armenian authorities with the AGBU officers, and the extensive collaboration of the Soviet Armenian representative with the *Hayasdani Okmutian Gomide* (Armenia Aid Committee) activists.

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆԻՆ (1922-1931)

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
varny1@yahoo.com

Հայկազեան Հայագիտական Հանդէսի Իէ. հատորին մէջ հրատարակած էինք Կոստան Զարեանի եւ Արշակ Չօպանեանի նամակագրութիւնը[1]*։ Հոն ակնարկած էինք Զարեանի 1922-1931 շրջանի նամակներուն, որոնց պատասխանները մեզի յայտնի չէին։ Սոյն հրապարակումը լոյսին կը բերէ այդ ինը տարիներու նամակագրութեան ամբողջութիւնը (33 նամակ ու երկտող)։*

Վերջերս մեզի յայտնի դարձաւ, որ Երեւանի Եղիշէ Զարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի (ԳԱԹ) ձեռագրական բաժնի նախկին վարիչը՝ այժմ հանգուցեալ Գոհար Ազնաւուրեանը, 1975ին հրատարակած էր ստորեւ հրատարակուող ԺԱ., ԺԴ. ԺԷ., ԺԹ. եւ ԼԲ. նամակները, «Նոր» (խորհրդահայ) ուղղագրութեամբ եւ առանց ծանօթագրութիւններու, յապաւումներով ու թիւրընթերցումներով[2]*։ Այս բոլորը սրբագրուած են ներկայ հրապարակումով։ Կը վերահրատարակենք մեր կողմէ նախապէս հրապարակուած ԺԴ., ԺԵ., ԺԷ. նամակները*[3]* բնագրային մանր ճշգրտումներով, շարքին ամբողջութիւնը չխախտելու նպատակով։*

Այս շարքը կը ներկայացնէ Զարեանի կեանքէն քանի մը հանգրուաններ.

1922, Պոլիս-- Զարեան՝ գործօն մասնակիցն է գրական նոր շարժում մը յառաջացնելու ճիգերուն, կը բացայայտէ պոլսահայ աննպաստ մթնոլորտը՝ մտաւորական լուրջ աշխատանքներու նկատմամբ։

1924-25, Փարիզ-- Զարեան՝ մէկուկէս տարուան կեցութենէ ետք Հայաստանէն նոր մեկնած, որոշ մանրամասնութիւններ կու տայ իր ժամանակին եւ La Tour de Babel հանդէսի հրատարակութեան մասին։

1929-31, Փարիզ-Վենետիկ-- Ժամանակաւորապէս Փարիզ կեցութենէն ետք, Զարեան, որուն մանչերը Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան Վարժարանը կը յաճախէին, կրկին կը հաստատուի Վենետիկ իր ընտանիքով։ Ան կը բանակցի Չօպանեանի հետ՝ Ազնիւրի ծրագրուած մատենաշարով հրատարակելու Երեք Երգչեր վիպերգին հայերէն բնագիրը։ Կարեւոր մանրամասնութիւններ կու տայ այդ վիպերգին իտալերէն թարգմանութեան եւ այլ արձագանգներու մասին։ Նաեւ կ'անդրադառնայ Ազնիւրի վերահրատարակութեան, հայ գրական ու հանրային կեանքին, Հայաստանի իրավիճակին, անձնական կացութեան, ի մասնաւորի՝ աւագ որդիին համալսարանական կրթաթոշակին ի խնդիր կատարած դիմումներուն։

Նամակները պահուած են ԳԱԹի Արշակ Չօպանեանի Ֆոնտի (ԱՉՖ) Ա. բաժնին մէջ։ Նոյնութեամբ կը հրատարակենք զանոնք, պահպանելով Զարեանի լեզուական եւ ուղղագրական կարգ մը առանձնայատկութիւնները (միայն դասական ուղղագրութեան վերածած ենք 1922ի ուղղագրութեամբ գրուած կարգ մը նամակներ)։ Ջանացած ենք ժամանակագրական կարգը պահել՝ անթուակիր գրութիւններն ալ տեղադրելով ըստ բովանդակութեան։ Նամակները

օժտած ենք անհրաժեշտ ծանօթագրութիւններով, որքան որ մեր պայմանները թոյլատրած են մեզի։

Ա.[4]

20 Ապրիլ 1922
Rue Iasmadji Avedis 3,
Scutari

Սիրելի Չօպանեան,

Ղրկում եմ ձեզ «Օրերի Պսակը»[5], որի մէջ տպուած են նաեւ այն ոտանաւորները[6] որ դուք ժամանակին այնքան սիրով հիւրընկալեցիք «Վերածնունդի» մէջ[7]:

Այստեղ դեռ շատ քիչերը արտայայտուեցան գրքիս մասին. Կավոշից[8] եւ Շաւիղից[9], այդ մտաւորական պոռնկատուներից զատ[10], Օշականը[11] միայն գրեց[12]: Արդի պայմանների մէջ, երբ լաւագոյնները մերոնցից մեծ մասամբ մեռած են եւ միւսներն էլ հեռու են Պոլսից, ստիպուած ենք ապրիլ անտանելի, դժնդակ միջավայրի մէջ: Արտասահմանից [յ]ետոյ գալ ընգնել այսպիսի մի վայր ուր ամենատարրական բաները պէտք է երկարօրէն բացատրել, ուր 20-30 տարիէ ի վեր ընդունուած ձեւերը լոյսից եկած տարօրինակութիւնների տպաւորութիւն են թողնում, ուր այսպէս ասած գրագէտները եւ արուեստագէտները տգէտ են վարուցքի նման — ի՞նչ կ[՛]ուզէք որ լինի: Այդ ամէնը գրում եմ ձեզ, որովհետեւ յիշում եմ որ խորհուրդ էիք տալիս ինձ Պարիզ կամ արտասահման մնալ եւ գրական շարժումը հաւաքաբար այստեղ սկսել: Իրաւունք ունէիք...

«Բարձրավանքը»[13] տեսած էք անշուշտ. նա էլ ընդհանուր տխմարութեան կենդանայիին ոխն է շարժում միայն... Թէքէեանը[14] կարդաց ինձ ձեր վերջին նամակներից մէկը ուր փափաք էք յայտնում բոլորովին գրականութեան նուիր[ո]ւիլ: Կ՛ուզէի ասել ձեզ որ մինչեւ որ բարոյապէս չը կազմակերպուենք երբէք այդ չպիտի լինենք եւ այդ բարոյական միութիւնը միայն արուեստը եւ գրականութիւնը կարող է առաջ բերել: - Խորապէս համոզուած եմ դրա մէջ: Ուստի ողջունում եմ ձեր այդ որոշումը:

Տիկին Եսայ[ե]անի[15] հասցէն չը գիտեմ. թոյլ եմ տալիս ինձ նրան եւս ղրկել մի գիրք ձեր միջոցով - ներեցէ՛ք:

Արուեստի Տան[16] մի մասնաճիւղ բանալն էլ շատ լաւ գաղափար է. ահա վերջապէս մի հող որի վրայ հայ մտաւորականութիւնը կարող է միանալ առանց կուսակցութիւնների եւ կազմակերպութիւնների կնիքով:

Մնամ ձեր
Կ. ԶԱՐԵԱՆ

Բ.[17]

2-IX-24 (Վենետիկ)

Սիրելի պ[արոն] Չօպանեան,

Ֆրանսական Հիւպատոսարանը յայտնեց ինձ, որ նախարարութիւնից արտօնութիւն ստացած է visé[18] տալու ինձ[19]: Ձեր նամակից հասկացայ, որ այդ արտօնութիւնը ձեր արած քայլերի արդիւնքն է: Յայտնում եմ ձեզ խորին շնորհակալութիւն:

Դժբախտաբար Փարիզ գալս մի քիչ պիտի ուշանայ, Փիրումեան[20] եւ Շահվերդեան[21] պիտի գան այստեղ ամսոյս 9-ին եւ մի քանի հարցերի շուրջ

խորհրդակցութիւն պիտի ունենանք[22], կամ կարող է պատահել, որ նախ Վիեննա յայտնուենք նրանց հետ: Ուստի ամսոյս 15-20[ից] առաջ դժուար որ կարողանամ Փարիզ լինել: Ամենայն դէպս գնալուց առաջ կը գրեմ:

Մնամ ձեր
Կ. ՉԱՐԵԱՆ

Գ.[23]

[Փարիզ, անթուակիր]

Սիրելի Չոպանեան,

Վաղը ժամը 10-ին, առաւօտեան կու գամ ձեզ տեսնելու:

Կ. ՉԱՐԵԱՆ

Դ.[24]

[Փարիզ, անթուակիր]

Սիրելի Չոպանեան,

Կ՛ուզէի տեսնուել ձեզ հետ այս երեկոյ: Պիտի սպասեմ «Շոպ պարիզիէն» [ժամը] 8-9-[ին]: Կարեւոր է:

Կ. ՉԱՐԵԱՆ

Ե.[25]

8-VIII-25
[Փարիզ]

Սիրելի պ. Չոպանեան,

Թերթիս[26] հրատարակութեան հարցով կ՛ուզէի ձեզ հետ տեսնվիլ: Ուզում եմ մտցնել հայկական մաս[27] եւ լաւ կ՛լինէր միասին խորհրդակցէինք: Ե՞րբ պիտ[ի] գաք քաղաք:

Չեր
ԿՈՍՏԱՆ ՉԱՐԵԱՆ

Զ.[28]

5-IX-25
[Փարիզ]

Սիրելի պ[արոն] Չոպանեան,

Արդե՞օք վերադարձաք: Եթէ շատ զբաղ[ո]ւած չէք, բարի եղէք, երկուշաբթի ամսի 7-ին, ժամը 5-ի մօտերը անցնել խմբագրատուն, խօսելու համար հանդիսի հայկական բաժնի մասին:

Չեր Կ. ՉԱՐԵԱՆ

Է.[29]

[Փարիզ, անթուակիր]

Վաղը 6-ին կարելի՞ կ[ը] լինի ձեզ տեսնել:

Մնամ ձեր
ՉԱՐԵԱՆ

Ը.[30]

[Փարիզ, անթուակիր]

Սիրելի Չոպանեան,

Երեկոյեան *ժամը 6-ին,* եթէ կարելի է պիտի գամ տանելու *խալիճ*[31]. վաղը առաւօտ պիտի տանեն Ամստերդամ: *Վաղը առաւօտ 9-ին:*

Կ. ՉԱՐԵԱՆ

Թ.[32]

[Փարիզ, աւքթուակիր]

Սիրելի Չոպանեան,

Այս վայրկեանիս իմացայ ձեր դասախօսութեան մասին[33]. դժբախտաբար կանխաւ ժամադրութիւն ունեմ եւ ստիպ[ո]ւած եմ բացակայել: Սա ի՞նչ կազմակերպութիւն է...

Շատ ցաւում եմ, հաւատացէք: Մնամ ձեր

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

Ժ.[34]

30-XII-25
Rue Malleville, 49
Enghien

Սիրելի պ[արոն] Չոպանեան,

Ներեցէք որ մինչեւ այժմ չեմ կարողացած գալ ձեզ տեսնելու: Յոյս ունէի, որ միջոցներս շուտով ինձ պիտի ներեն ձեր պարտքը վճարելու եւ սպասում էի... Դժբախտաբար նիւթական դրութիւնս աւելի վատթարացաւ եւ այսօր գտնւում եմ ուղ[ղ]ակի սոսկալի դրութեան մէջ, աչքի առաջ ունենալով մանաւանդ այն ծանր բեռը որ ուսերիս վրայ է[35]: Առ այժմ ոչ մի տեղից էլ ոչ մի յոյս չ՛ունեմ: Քայլեր առի որեւէ գործ ճարելու համար[.] նա էլ չ՛յաջող[ո]ւեց: Այնպէս որ խնդրում եմ ներէք, որ ժամանակին չկարողացայ տալ պարտքս եւ բարի եղէք սպասելու մինչեւ որ մի տեղից մի լոյս ծագի:

Ձեզ մօտ էի թողել մի ձեռագիր, բարի եղէք ինձ դրկելու, գուցէ պէտք կայ ուրիշ որեւէ յօդուածի համար:

Ընդունեցէք սիրալիր բարեւներս:

Կ. ԶԱՐԵԱՆ

ԺԱ.[36]

La Coupole
Café Restaurant
Bar Americaine
102, Boul. du Montparnasse
Paris

7-8-28
Central Hotel
1 bis, Rue du Marne

Սիրելի պ[արոն] Չոպանեան,

Մի քանի օրով Փարիզ եմ եւ չէի ուզել մեկնել առանց ձեզ հետ տես-ն[ո]ւելու: Լսեցի որ այժմ գիւղում էք եւ որ քաղաք էք գալիս երբեմն միայն: Կ՛ուզէի՞ք ինձ «նշան անել» եւ ժամադրութիւն տալ:

Մնամ ձեր
Կ. ԶԱՐԵԱՆ

ԺԲ.[37]

4-12-28
Via Scutari, 9a Lido
Venezia

Սիրելի պ[արոն] Չոպանեան,

Արդեօք պատ[ո]ւիրեցի՞ք որ ինձ «Ապագա[յ]»[38] ղրկեն: Խնդրեմ՝ մի մոռանաք. բարեւներ խաղաղ այս Վենետիկից:

Ձեր
Կ. ՉԱՐԵԱՆ

ԺԳ.[39]

[Վենետիկ, 29-12-28][40]

Բարեւներ եւ շնորհաւորութիւններ[:] «Ապագան» ինչո՞ւ չեն ղրկում:

Կ. ՉԱՐԵԱՆ

ԺԴ.[41]

8-1-29
Via Scutari, 9a Lido
Վենետիկ

Սիրելի Չօպանեան,

"Roseraie"-ի երրորդ հատորը[42] հոյակապ է եւ նոր տար[ո]ւայ աւելի գեղեցիկ ե[ո]ւէր չէի կարող ստանալ: Շնորհաւորութիւններս ու շնորհակալութիւններս եմ յայտնում ձեզ:

Ստացայ «Ապագաները» եւ կարդացի ձեր ծրագիրը «Անահիտի»[43] վերահրատարակման համար[44]: Լայն եւ գեղեցիկ ծրագիր, մեծ եւ ա՛յնքան անհրաժեշտ գործ մեր տարաբախտ այս շրջանում: Վախում եմ միայն ծրագրի չափազանց լայնութիւնից: Մեր հայ հանդէսները մինչեւ հիմայ մի տեսակ գրական տոպրակներ եղած են ուր ամէն ինչ մտած է: Այդ վտանգից իմ կարծիքով պէտք է խուսափել: Ամէն բանից մի կտոր, մի նմոյշ, մի պատառ բաւարարելու համար բոլոր ճաշակները. դա եղել է մեր տարեցոյցների ոճրագործ եւ դժբախտ սիստեմը: Ըստ իս աւելի լաւ է քիչ, բայց ամբողջական գործեր տալ, ինչպէս անում էին մասամբ ռուսահայ ալմանախները[45]: Օր. մի բանաստեղծից տալ 10 կտոր, մի վէպ, մի թատր[ոն] եւ այլն: Այդ անհրաժեշտ է մանաւանդ մի հանդէսի համար որը երկու ամիսը մի անգամ լոյս պիտի տեսնէ. ուստի պիտի ունենայ աւելի շուտ գրքի տեւական արժէք, քան հանդէսի թռուցիկ եւ ժամանակաւոր բնոյթ:

Եթէ այդ իմ տեսակէտիս հետ համաձայն էք այն ժամանակ պիտի առաջարկեմ ձեզ եթէ ոչ միանգամից, գուցէ մաս-մաս - 3-4 անգամից - հրատարակել իմ «Խորհուրդները»[46], որ ես մտաղիր էի «Հայրենիքին»[47] տալ: Ժամանակին «Բարձրավանքը» հրատարակեց *երկու* մաս[48] (ընդամէնը *վեց* է) բայց դժբախտաբար քաղաքական դէպքերը արգելք եղան շարունակելու[49]: Դուք գիտէք իտալական թարգմանութեան[50] յաջողութիւնը եւ այս օրերս ինձ գրում են որ Ամերիկա լոյս պիտի տեսնի նոյն գործի *անգլերէն* թարգմանութիւնը[51]: Աւելցնեմ, որ հրատարակուած մասերը *վերամշակ[ո]ւած* են, ուստի գրեթէ նոր: Թէպէտ վաղուց գր[ո]ւած գործ[52], այն ու ամենայնիւ ծիծաղելի է, որ օտար թարգմանութիւնները լոյս տեսնեն եւ հայերէն բնագիրը մնայ անտիպ: Դուք կարող էիք, նոյնիսկ - թղթի դրամը չնչին է - մի 300 օրինակ առանձին տպել, ինչպէս սկսել էր առել «Արզուման» տպարանը Պօլսում[53] եւ գիրքը մտցնել ձեր «Մատենաշարի» մէջ[54]: Ես ինձ համար կարեւոր եմ համարում այս գործի հրատարակութիւնը - յառաջաբանով - որովհետեւ այս րոպէիս գրում եմ ուրիշ գործեր, որոնք թատերական բնոյթ ունեն եւ իմ հին քեր-թ[ո]ւածների եւ ե[ո]ւաճումների շարունակութիւնն են:

Գրեցէք ինձ այդ մասին, որպէսզի սկսեմ արտագրել եւ, եթէ ընդունելի էք գտնում, ե՞րբ պէտք է ձեզ ղրկեմ եւ ի՛նչ պայմաններով:

Ձեր
Կ. ՉԱՐԵԱՆ

ԺԵ.[55]

23-I-29
[Վենետիկ]

Սիրելի Չօպանեան,

Ձեր նամակին անմիջապէս չկարողացայ պատասխանել, որովհետեւ մի քիչ հիւանդ էի: Ներողութիւն:

Այն ամէնը ինչ որ գրում էք հանդէսի մասին շատ լաւ է. վստահ եմ, եւ ի սրտէ ցանկանում եմ որ յաջողէք: Առաջին թ[ո]ւի համար կ'ղրկեմ - մի 10 օրից - մի արձակ, իսկ ինչ վերաբերում է «Խորհուրդներին» կարելի չէ [՞]ր գոնէ երկրորդ թ[ո]ւից սկսել նրանց հրատարակութիւնը, աչքի առաջ ունենալով որ երրորդը պիտի լոյս տեսնի եկող աշնան՝ 8-9 ամիսից!

Վարձատրութեան համար ոչ մի դիտողութիւն չեմ անում[56], աչքի առաջ ունենալով նոր գործը, քէպէտ «Հայրենիք»ը ինձ վճարում է 1 եւ 1/2 տալեր[57] եւ այս վարձատրութիւնները իմ ապրելու միակ միջոցներն են:

Կարդացի որ հանդէսը լոյս պիտի տեսնի Ապրիլին[58], ուստի եթէ իմ գրուածքս ղրկեմ մինչեւ Փետրուար 15-ը, ժամանակին կ'հասնի՞մ:

Ձեռքիս տակ կարեւոր մի գործ ունեմ եւ չեմ կարող կիսատ թողնել ուրիշը սկսելու համար. ա՛յդ է պատճառը որ մի քիչ պիտի ուշանամ:

Շուտով Փարիզ պիտի գայ իբրեւ մեծաւոր Հայր Գաբրիէլ Նահապետեանը[59]: Շատ լաւ մարդ է. վերին աստիճանի[ի] հայրենասէր եւ հակավատիկանական: Յիշո՞ւմ էք. Ֆլօրանոից ժամանակին ձեզ ղրկած էի նրա մի նամակը վանքի դրութեան մասին[60]: Նրա հետ կարող էք ամէն բանի մասին խօսել եւ պնդել խնամակալների հարցը - որ ես գտնում եմ շատ կարեւոր - լուծելու համար:

Մնամ ձեր
Կ. ՉԱՐԵԱՆ

ԺԶ.[61]

7-3-29
[Վենետիկ]

Սիրելի Չօպանեան,

Գր[ո]ւածքս 3-4 օրից անպատճառ կ'ղրկեմ. ուստի ինձ համար տեղ պահեցէք:

Ջերմ բարեւներ
Կ. ՉԱՐԵԱՆ

ԺԷ.[62]

11-3-29
Վենետիկ

Սիրելի Չօպանեան,

Ղրկում եմ «Անահիտի» առաջին թիւի համար «Քարը»[63]: Յոյս ունեմ որ գոհ կ[ը] մնաք, չնայած որ ստիպ[ո]ւած մի քիչ ուշացայ: Աշխատում էի մի երկար պօէմա[յ]ի վրայ - Տատրագոմի Հարսը[64] - որը անկարելի էր կիսատ թողնել եւ ուրիշ բան սկսել: Հիմայ որ վերջացրի, աւելի ազատ եմ:

Դուք ինձանից նաեւ ուզում էիք տեղեկութիւններ «Խորհուրդների» մասին, թերթերի կարծիքներ եւ այլն: Ես միշտ խուսափած եմ այդ կարծիքները հայերէն թարգմանել տալու, շուրջս աւելորդ ոէկլամ չ'անելու համար եւ Հ[րանտ] Նազարեանցի[65] ծիծաղելի դրութեան մէջ չ'ընկնելու համար[66]: Սակայն, ահա մի քանի տեղեկութիւններ[67].-

«Երեք երգեր ասելու համար վիշտը երկրի եւ վիշտը երկ[ի]նքների»[68] - հրատարակ[ո]ւած է առաջին անգամ Միլանի[69] "Eroica"ի կողմից[70]: Մի քանի ամիս յետոյ լոյս է տեսած երկրորդ հրատարակութեամբ եւ առանձին[71]: 1916-ին, Lanciano-ի Carabba հրատարակիչը[72] մտցրել է իր օտար եւ իտալացի դասական գրողների մատենաշարի մէջ[73], ուր անընդ[հ]ատ վերահրատարակւում է[74]: 1920-ին[75], Ottorino Respighi[76], հռչակաւոր երաժշտագէտը, երաժշտութեան է վերածել (choeurs, orchestre, soli)[77], [համերգեր] տ[ո]ւել են Հռոմ, Լայպցիկ, Չինչինատի եւ ուրիշ տեղեր[78] ու առաջին մասը՝ թարգման[ո]ւած չորս[79] լեզուների՝ հրատարակ[ո]ւած է Բերլինի "Universal Edition"-ի[80] կողմից[81]:

Երբ «Երեք երգերը» լոյս տեսան, գրեթէ բոլոր իտալական մեծ թերթերը մօտ *24* յօդուածներ ն[ո]ւիրեցին[82]: "Il Popolo d'Italia"ն[83], որ այն ժամանակ խմբագրում էր ինքը Մուսօլինին[84], գրեց որ վերջին տարիներին լոյս տեսած բանաստեղծական գրքերից «Երեք երգերը» ամէնարժէքաւորն է եւ որ մի ազգ որ այդպիսի բանաստեղծներ ունի արժանի է իր ճակատագրի տէրը դառնալու եւ այլն[85]:

Աղա Նեգրին[86] գրեց որ «մասեր կան որոնք հասնում են աստուածային գեղեցկութեան եւ պէտք է երախտապարտ լինել հեղինակին մարդկութեան տւած իր ն[ո]ւերի համար» - (Carabba-ն իր հրատարակութեան յառաջաբանի մէջ այդ խօսքերը յիշում է)[87]:

Bologna-ի Համալսարանում, Կարդուչիի[88] եւ Պասկօլիի[89] ամբիոնը յաջորդող Alf[redo] Galletti[ն][90] գրեց, որ «միայն Շէյլին[91] կարող էր հասնել այդ զգայնութեան եւ այդքան մաքուր (pura) բանաստեղծութեան»:

Գրեթէ նոյն իմաստով արտայայտուած են Miguel de Unamuno-ն, սպանեացի յայտնի գրողը[92], Լուտօսլավսկի՝ Սօրբօնի սլաւ գրականութեան] դասախօսը, այժմ Վիլնայի Համալսարանի recteur-ը[93], որ մի մասը թարգմանած է լեհերէն լեզ[ո]ւով[94]:

Օր. Իրէն Ալեքսանդեր[95], ամերիկուհի բանաստեղծուհի եւ Նիւ Իօրկի թատրոններից մէկի վարիչը, թարգմանել է անգլիերէնի եւ շուտով պիտի հրատարակ[ո]ի:

Շարքը կարող եմ շատ երկարել, բայց այդքանն էլ բաւական է: Արէք ինչ կ'ուզէք: Եթէ այդ մասին խօսք իսկ չ'անէք՝ ça ira quand même[96].

Մնամ ձեր
Կ. ՉԱՐԵԱՆ

- Երգերը, սկսում եմ արտագրել: Ամսի վերջին կ'ղրկեմ առաջի մասերը:

ԺԸ.[97]

7-7-29
[Վենետիկ]

Սիրելի Չօպանեան,

Վենետիկից մի քանի օրով բացակայ էի եւ այդ պատճառով չկարողացայ ժամանակին ձեզ գրել: Գլուխս շատ խառն է. պատրաստւում եմ ընտանիքս (մի մասը) տեղափոխել Տրանսիլվանիա[,][98] ուր ասում են ապրելու միջոցները աւելի դիւրամատչելի են քան այստեղ, ուր ամէն ինչ սղած է: Հիմա էլ անցագրի դժուարութիւններ ունեմ[99] եւ չգիտեմ այդ տակնուվրայութիւնը երբ պիտի վերջանայ: Պէտք է զոհել ժամանակ[,] աշխատանք՝ ի խնդիր հացի, նա էլ շատ անորոշ: Հայ գրող լինել եւ այդպիսի բեռ կրել՝ շատ դժուար է: Ցաւը նրանումն է, որ սկսած աշխատութիւններս էլ կիսատ մնացին եւ ե՞րբ պիտի կարողանամ վերսկսել՝ անորոշ է:

«Անահիտը» ժամանակին ստացայ: Առատ բովանդակութիւն ունի՝ չափազանց առատ: Կան բաներ որոնք կարող էին եւ դուրսը մնալ, մանաւանդ կանայք[100]. Պօլսից ժայթքած անուշ այդ թուքը[101]: Բոլոր այդ Անա[յ]իսները[102] եւ այլն՝ խոտով լեց[ո]ւած դութակների գրականութիւն են մշակում, որոնցից պէ՛տք է ազատագր[ո]ւել: Ի զուր չէ որ Օսմանեան Կայսրութիւնից մնացել է Պերա[յ]ի ցեխը եւ «Հայ Կինը»[103]: Ու թող մնա՛ն, ի՞նչ պէտք կայ նրանց գաղութահայութեան ետեւից քարշ տալ... Մնաց որ ձեր գործը ամէն տեսակով դժ[ո]ւարին է, մանաւանդ սկզբի շրջանում եւ կասկած չ՛ունեմ որ հանդէսը քանի գնայ պիտի լաւանայ, սեղմ[ո]ւի, ամփոփ[ո]ւի եւ ստանայ վերջնական այն դիմագիծը որը կազմում է ուրոյն ուղղութիւն ունեցող հանդէսների պսակը: Ցանկանում եմ ձեզ յաջողութիւն:

Չեմ կարծում, վերը յիշ[ո]ւած պատճառներով, որ կարողանամ երկրորդ թիւին մի բան ղրկել, բայց հազիւ տեղ հասած, յուսամ որ կարելիութիւնը պիտի ունենամ աշխատելու, ուստի եւ աշխատակցելու «Անահիտին»:

Մնամ սիրով ձեր
Կ. ԶԱՐԵԱՆ

ԺԹ.[104]

15-8-29
Վենետիկ

Սիրելի Չօպանեան,

Ներեցէք որ չկարողացայ անմիջապէս պատասխանել ձեր շատ սիրալիր եւ իսկապէս բարեկամական նամակին: Մեր իրականութեան մէջ վարժ[ո]ւած չենք այդպիսի բարեկամական վերաբերմունքին, այլ ընդհակառակը ամէն մարդ ճիգ է անում դեռ աւելի դժ[ո]ւարացնել արդէն դժ[ո]ւարին մեր կեանքը: Շնորհակալ եմ որ մտածեցիք նիւթական օգնութեանս գալ ինձ. թեպետ երբէք չէի [մտ]ածում դիմել յայտնի ֆոնդին[105]. գու[ցէ եւ] կարող եմ լինել ուրիշ հայ [գրողներ], որոնք ինձանից աւելի վատ դրութեան մէջ են գտնւում: Բայց [մինչ այդ] դուք այդ մասին դիմում ա[ռել էք]. [պ[արոն] Մա]լեզեանի[106] նամակը դեռ չստացած որոշ[ում եմ] ընդունել եւ առ այժմ մնալ այստեղ. [նոր] մի երկրի անյայտութեան չմատնելու համար ինձ եւ ընտանիքիս:

«Խորհուրդների» մի մասը արդէն արտագրած եմ եւ 4-րդ թիւին անպայման կ՛հասցնեմ[107]: Անցեալ անգամ մոռացայ ձեզ գրել որ լաւ կ՛լիներ կողքի թուղթը փոխել՝ հանդեսների արտաքին զգեստաւորումը շատ մեծ նշանակութիւն ունի. աւելի հաստ թուղթ եւ [աւելի] պարզ տառեր ըստ իս աւելի գեղեցիկ պիտի լինի:

Եթէ միջոցներս ներեն պիտի ուզեմ այս ձմեռը գոնէ մի ամիսով Փարիզ գալ. այն ժամանակ կ՛տեսնե[ո]ւենք եւ երկար կ՛խօսենք:

Խնդրում են շնորհակալութիւններս յայտնէք նաեւ պ. Մալեզեանին:

Մնամ ձեր
Կ. ՉԱՐԵԱՆ

Ի.[108]

28-8-29
[Վենետիկ]

Սիրելի Չօպանեան,

Ահաւասիկ ստացագիրը: Նորից յայտնում եմ ձեզ իմ շնորհակալութիւնները: Երկար մտածելուց յետոյ, որոշեցինք, նաեւ կնոջս հիւանդութեան պատճառով, որ ընտանիքս առայժմ գնա[յ] Տրանսիլվանեայ իսկ ես ընդունեմ օտար բարեկամներիս սիրալիր հրաւէրը[՛] գնալ մի երկու երեք ամսով Փարիզ: Ուրեմն այդ դրամը ճիշտ ժամանակին կ՛ուգայ յոգալու ճամբու ծախսերը: Երբ տեսնե[ն]ենք, կ՛պատմեմ ձեզ այն պատճառները որոնք գրեթէ անկարելի են դարձնում կեանքը Վենետիկում:

Պ[արոն] Մալեզեանին ուզեցի գրել, բայց մտածեցի որ աւելի լաւ կ՛լինի երբ գամ Փարիզ անձամբ այցելեմ նրան եւ յայտնեմ շնորհակալութիւնները: Փարիզում կ՛լինեմ Սեպտեմբերի վերջերը: Մի քանի ծրագիրներ ունեմ՝ այդ մասին պիտի ուզեմ ձեզ հետ խորհրդակցել:

Մնամ սիրով ձեր
Կ. ՉԱՐԵԱՆ

ԻԱ.[109]

5-XI-29
27, Bd. Raspail
Paris

Սիրելի Չօպանեան,

Ձեր նամակը, հասցէս փոխած լինելով, միւս օր, կիրակի ստացայ - չկարողացայ ձեր տ[ո]ւած ժամադրութեան գալ:

Անցեալ օր Օր[հորդ] Մարգարիտը[110] եւ մայրը ինձ ասացին որ ձեզ հետ խօսած են իրենց ճաշի գնալու համար: Կ՛ուզէ՞ք շաբաթ կամ կիրակի երեկոյ[ե]ան ընթրիքի նրանց գնանք. այդ պարագային բարի եղէք առաջ[ո]ւանից նրանց եւ ինձ իմաց տալ:

Մնամ ձեր
Կ. ՉԱՐԵԱՆ

ԻԲ.[111]

12-XI-29
Փարիզ

Սիրելի Չօպանեան,

Շատ լաւ. երկուշաբթի ժամը 4-4 1/2 կը գամ Մալեզեանը տեսնելու. սակայն մոռացել էք ինձ *հասցէն* տալ: Բարի եղէք երկտողով ինձ յայտնելու այդ:

Մնացածի մասին կ՛ասեմ:

Մնամ ձեր
Կ. ՉԱՐԵԱՆ

ԻԳ.[112]

Փարիզ, 5-XII-29
27, Bd. Raspail

La Coupole

Cafè Restaurant
Bar Americaine
102, Boul. du Montparnasse
Paris

Սիրելի Չոպանեան,

Ներեցէք որ անցեալ կիրակի չկարողացայ գալ. զանազան պատճառներ արգելք եղան եւ ժամանակին չկարողացայ ձեզ այդ մասին գրել:

Եկող Կիրակի՝ սիրով, միայն թէ աւելի լաւ չէ[՞]ր լինի այս կողմերում տես-ն[ո]ւէինք: Ամենայն դէպս այս անգամ կը գամ ձեզ մօտ ժամը 6-7-ի կողմերը:

Տոմսակ չեմ վերցնի:

Մնամ ձեր
Կ. ՉԱՐԵԱՆ

ԻԴ.[113]

27-XII-29
Փարիզ

Սիրելի Չոպանեան,

Լաւ, եկող կիրակի: Երկու բան պիտի խնդրեմ եթէ կարելի է[.] «Անահիտ» վերջին գիրքը[114] ղրկել տ[ո]ւէք կնոջս. Mme Takouhi Zarian, Str Castelului 2, Brasov (Roumanie)[,] եւ առաջին թիւը, ուր «Քարը» կայ, ինձ:

«Խորհուրդների» առաջին երկու մասերը *պատրաստ են*. պէ՞տք է ձեզ ղրկել, թէ [՞] կարելի է սպասել մինչեւ եկող կիրակի:

Մնամ ձեր
Կ. ՉԱՐԵԱՆ

ԻԵ.[115]

30-I-30
[Փարիզ]

Սիրելի Չոպանեան,

Մինչեւ վերջին վայրկեանը դեռ յոյս ունէի որ Կիրակի օր պիտի կարողանամ ձեզ հետ ճաշել. բայց դժբախտաբար պայմանները այնպէս դասաւոր-ն[ո]ւեցին, որ շաբաթ օրը պիտի մեկնեմ եւ ժամադրութիւնը յարգել չպիտի կարողանամ: «Նոր Ուղին»[116] ղրկում եմ ձեզ փոստով:

Երբ վերջապէս հասցէ ունենամ կ՛ղրկեմ ձեզ: Գնում եմ առանց վստահ ըլլալու ուր խարիսխ պիտի նետեմ...

Մնամ ձեր
ԿՈՍՏԱՆ ՉԱՐԵԱՆ

ԻԶ.[117]

22-5-30
Փարիզ

Սիրելի Չոպանեան,

Ներեցէք որ անմիջապէս չկարողացայ պատասխանել ձեր նամակին. անհանգիստ էի եւ զբաղ[ո]ւած: Այս կիրակի դժբախտաբար չպիտի կարողանամ ձեզ հետ միասին ճաշել. յաջորդ կիրակի յուսամ ազատ կ[ը] լինեմ - մեկնելէս առաջ կ[ը] տեսն[ո]ւենք:

Մնամ ձեր
Կ. ՉԱՐԵԱՆ

ԻԷ.[118]

[Թուականը պատռուած է][119]
[Calle General] Chinotto, 11
S. Elena
Վենետիկ

Սիրելի Չօպանեան,

«Անահիտի» վերջին թիւերը չստացայ[120]: Հասցէս չէի կարող ձեզ ղրկել այն պարզ պատճառով որ բնակարան չ՛ունէի եւ ես էլ չէի իմանում ո՞ւր եմ: Հիմա ընտանիքս եկաւ եւ նորից տեղաւոր[ո]ւեցինք Վենետիկ, այլեւս մնայուն բնակարանով եւ տեւական հասցէով: Ուստի բարի եղէք հանդէսը ինձ ղրկել, ինչպէս առաջ: Շատ շնորհակալ պիտի լինէի եթէ կարողանայիք «Ապագայի» մասին էլ կարգադրութիւն անել, քէ չէ հայ կեանքի զանգի մի ձայնը ստիպ-[ո]ւած եմ լսել[121] եւ ձեր յօդ[ո]ւածներն էլ առիթ չ՛ունեմ կարդալ[ու]:

Մնամ ձեր
Կ. ԶԱՐԵԱՆ

ԻԸ.[122]

20-3-31
Վենետիկ

Սիրելի Չօպանեան,

Նախ, նորից յայտնում եմ ձեզ իմ շնորհակալութիւնները ձեր[՝] զաւակիս[123] համար առած քայլերու համար: Այդ պ[արոն] Միհրդատեանի[124] անունը լսած եմ եւ գիտեմ որ Փիրումեանի միջոցով զանազան վաճառականական գործեր էր անում: Բայց ես անձամբ իրեն հետ հանդիպած չեմ եւ չեմ հասկանում ինչո՛ւ ինձի դէմ պիտի լինի ու մանաւանդ ինչո՛ւ զաւակիս դէմ պիտի լինի... Տեսնենք: Հայ իրականութեան մէջ արդէն ամէն բան շատ տարօրինակ է. երբ մարդ ինձ նման ապրում է քաշ[ո]ւած եւ հեռ[ո]ւից դիտում՝ զարմանալի տեսարաններ են պարզւում - ամենաոգեւոր[ո]ւած լաւատեսութիւնն իսկ չքանում է: Միշտ յիշում եմ Կիլիկիոյ մէջ ձեր իսկ պատմած դէպքերի մասին[125]. մարդ չգիտի ծիծաղի թէ լայ: Նոյնը շարունակւում է այսօր, ամեն տեղ ուր մի քանի հայեր կան, ու այդ՝ բոլոր հարցերի մէջ, լինի կրօնք, թէ գրականութիւն, թէ քաղաքականութիւն:

Ուրախ եմ որ վերջապէս պիտի կարողանաք Հայաստան գնալ[126] եւ իբրեւ ազնիւ եւ գիտակից դիտող պիտի տեսնէք այն ժամանակ որ «Անցորդի»[127] նկարագրութիւնները բնաւ չափազանցութիւններ չեն, այլ մէկը պատմած եմ եւ տասը լռած[128]: Ու այդ տասը գրած եմ մղ[ո]ւած զուտ հայրենասիրական զգացումից: Նոր եկած, բոլորովին չեզոք անձնաւորութիւններ, պատմում են ինձ որ իմ տեսածներս «բախտաւոր» շրջանի երեւոյթներ էին[129] եւ այսօր Հայաստանի բնակիչները (բուն ժողովուրդը եւ բուն մտաւորականութիւնը) շատ բան կ[ը] տար այդ շրջանին վերադառնալու համար:

Այն ինչ որ վտանգաւոր է եւ միանգամայն սպանիչ մեզ համար, այդ այն ստրկական ոգին է որ մտել է նոյն իսկ երիտասարդ գրողների ոգու մէջ: Այդ տղէքը ստիպ[ո]ւած են հաջող շինկների դեր խաղալ մի կտոր հացի համար: Աչքի առաջ ունեցէք որ բոլոր այդ Մահարիները[130] եւ այլն կոմունիստ չեն եւ գրում են մեզ դէմ[131] Կարինեանի[132] հրամանով[133]: Երբ ես մեկնում էի Հայաստանից, Թոթովենցը[134] եկաւ մօտս եւ ասեց. «Սիրելի Զարեան, գիտենք որ չպիտի վերադառնաս եւ պիտի գրես այն ինչ որ մենք ամենքս մտածում ենք:

Երբ վաղը մեզ ստիպեն քեզ դէմ գրել, կ՛ներես, գիտես դրութիւնը...»[:] Եւ այդ[՝] բոլորի աւունից[135]: Ահա ինչու, ինչ որ էլ այնտեղ գրեն ինձ համար նշանակութիւն չ՛ունի եւ երբէք էլ պատասխան չեմ տալ:

Դուք կարծում էք որ այնտեղ կայ հասարակական միտք, հետաքրքրութիւն տեղական գրականութեան շուրջը եւ այլն.- սխալւում էք: «Նորքը»[136] ձրի էին բաժանում եւ *տասը* ընթերցող չ՛ուներ: Նրա քարտուղարը[137] ինձ ասում էր որ *երեք* հատ է ծախ[ո]ւած միայն գոյութեան օրից ի վեր: Իսկ «Անցորդը» աւելի է կարդաց[ո]ւել այնտեղ (ծածուկ) քան արտասահմանում: Նոյնը «Անահիտի» վերաբերմամբ: Պատմեմ ձեզ մի դէպք: Ժամանակին դուք Լէօ-[յ]ին[138] մի հատոր "Roseraie"[139] ղրկած էիք *Թիֆլիս.* արդ, մի օր Աշօտ Յով-[հ]աննէսեանը[140] այդ գիրքը բերաւ ինձ խնդրելով մի բան գրել - ու արտայայտ[ո]ւեցի այդ առիթով իրենց մասին այնպէս ինչպէս ոչ ոք չէր համարձակ-[ո]ւած արտայայտ[ո]ւել[141]: Քիչ յետոյ Լէօն եկաւ Երեւան եւ ես հարցրի իրեն գրքի մասին. տեղեկութիւն չ՛ուներ: Ամէն բան այդպէս է: Նոր Նախ[ի]ջ[ե]ւանում դրութիւնը տարբեր է. ռ[ու]սները շատ բան չեն հասկանում եւ գրքերն էլ կարող են տեղ հասնել, բայց Հայաստանում... Իմ ժամանակ «Ապագայ» էր գալիս կամ Կոչնակ[142]. բայց ո՞վ էր տեսնում. շատ շատ «Խորհրդային] Հայաստ[անի]»[143] խմբագրատուն: Նրանք վախում են դրսի ազատ մտքից եւ ո-րովհետեւ այդ միտքը ծածկաբար ներս է մտնում՝ կարծում են որ հայհոյանքներով կարող են առջեւը առնել: Ճիշտ դրա հակառակը՝ տեղացիները գիտեն կարդալ տողերի մէջ եւ ժողովրդականութիւն ստացողը ա՛յն է որին հայհոյում են: Հայաստան գնացողը նախ հրապուրւում է. մեր հողը, մեր երկիրը, ցոյց տ[ո]ւած ճարպիկ ընդունելութիւնը եւ այլն, եւ անտեսում է շատ բան: Սակայն ամէն բան պարզւում է ա՛յն ժամանակ երբ ստիպ[ո]ւած է այնտեղ ապրել եւ աշխատել: Առիթը կ՛ունենաք անշուշտ մտերիմ խօսակցութիւններ ունենալ զանազան անձնաւորութիւնների հետ եւ կ՛տեսնէք:

Չնայած դրան, ես եւս ձեզ նման կարծում եմ որ եղածը նիւթապէս ամէն բանով պէտք է պաշտպանել. խուսափել արկածներից եւ ուժ տալ «շինարարութեան»: Բայց նաեւ պէտք է փրկել հայ անհատի ազատ ոգին, թէ չէ վաղը, մանաւանդ մեծամասնական սիստեմի յաջողութեան պարագային, մենք իրրեւ ինքնուրոյն տարր, իրրեւ ազգ կը կորչենք, ինչպէս կորչում ենք Ամերիկայում: Վաղը Ռուսաստանը պիտի դառնայ աւելի կլանող քան Ամերիկան եւ ոչ մի վերացական սահման մեզ չպիտի կարողանայ պաշտպանել, եթէ ազատ ոգին, խոր ազգային գիտակցութիւնը մեռնի մեր մէջ:

Գալով այդ երանելի եւ «բէյխաբար»[144] Աբելեանին[145], ասեմ անմիջապէս որ իսկապէս Շամախի ծն[ո]ւած եմ: Նա շատ լաւ ճանաչում է իմ ընտանիքս եւ Զարեան աւունն է որ շփոթեցնում է նրան: Գրեցէք նրան որ Խաչատուր Բէկի տղան է[146]: Ինքը մօտ ազգական է Շիրվանին[147], իսկ Շիրվանը իմ մայրիկիս[148] մօրաքրոջ տղան է: Իր եղբայրները[149] այդ շատ լաւ գիտեն: Ոչ Զարեան այլ Եղիազարեան:

Աչքի առաջ ունեցէք, որ Հայաստանից դուրս ապրողները՝ Բագու, Թիֆլիս եւ Ռ-[ու]սաստանի ուրիշ վայրերում՝ նոյնքան տեղեկութիւն ունեն Հայաստանի մասին ինչքան մենք: Նրանք եւս մեզ նման կարծում են, որ Հայաստանում «ուրիշ բան է», որ Ռ-[ու]սաստանի մէջ տեղի ունեցած դէպքերը այնտեղ չեն կրկնւում, որ հայը հայ է եւ այլն: Եւ չնայած դրան երկիր չեն գնում: Ես յի-

չում եմ որ Թիֆլիս ուղղակի զարմացած էին որ ես ուզում եմ բնակ[ու]ել Երեւան. նոյնը Բագւում: Հայրենասիրութիւն, այո՛, բայց գնալ ընկնել այն ծակը...

Մի խօսքով, մեր այս Արմենիան... Չգիտես որ կողմդ նայես. ազգը փշուր փշուր է եղել եւ ինչ որ մի բան մէջը մեռել է:

Մի քանի օր առաջ իմացայ - թող այդ մեր մէջ լինի, թէ չէ տղաքս կ՛հալածեն - որ նոր այս Մխիթարեան վանքի աբբահայրը[150] եւ իր կլիքը[151] Մուրադ-Ռաֆա[յ]ելեան դպրոցի դրամներից 11.000.000 լիրեք գողացել են: Պադովայի պրոֆ. Ասլանը[152] զայրացած Հռոմ վազել է, քննութիւն պահանջել եւ այլն: Ամբողջ նամակագրութիւնը ցոյց տ[ո]ւին ինձ. դժբախտաբար այդ իրողութիւն է: Երկար բանակցութիւններից եւ սպառնալի[ք]ներից յետոյ - մէջը կաշառ[ո]ած կարդինալներ[153] կան - վերջապէս նշանակ[ո]ած է մի յանձնախումբ, բաղկացած երեք իտալացի տնտեսագէտներից, հաշիւները նայելու համար: Տեսնենք ինչ պիտի լինի: Աւելացնեմ, որ այդ նամակագրութիւնը ղրկ[ո]ած է նախկին Մուրադեան աշակերտների Փարիզի ընկերակցութեան[154], ուր Շահինի[155] միջոցով կարող էք ամէն բան իմանալ:

Մի խօսքով, մեր այս Արմենիան...

Մնամ սիրով
Կ. ՉԱՐԵԱՆ

Պիտի խնդրէի, եթէ կարելի է, «Երեք երգերի»[156] համար մի փոքրիկ յայտարարութիւն դնել «Անահիտի» մէջ: Գինը 3 դօլ[ար][157]:

ԻԹ.[158]

26-3-31
Վենետիկ

Սիրելի Չօպանեան,

Յիշում էք անշուշտ, անցեալ տարի միասին գացինք Մալեզեանի մօտ զաւակս Նուպարեան սաներու ֆօնտին[159] արձանագրելու համար եւ Մալեզեանը մեզ ասեց, որ դեռ կանուխ է[,] երբ ժամանակը գայ մեզ իմաց կ[ը] տայ եւ առհասարակ պէտք եղածը կ՛անի: Արդ, վերջերս նրան գրած նամակիս այս առթիւ, ահա ինչ է պատասխանում: - «Ինձի կը յանձնարարէք ձեր զաւակը, որուն համար սիրայօժար կ՛ընեմ պէտք եղած յանձնարարութիւնը Նուպարեան սաներու վարչութեան, որ Պրիւսէլ կը գտնուի եւ մեծ մասամբ կը բաղկանայ Պելժ ականաւոր բրոֆէսէօրներէ[160]: Միայն պէտք է ըսեմ[՝] յիսուն եւ աւելի թեկնածուներ արձանագր[ո]ած են որոնց մասին յառաջիկայ Յունիսին միայն վարչութիւնը իր որոշումը պիտի տայ, ճշդելէ վերջ տրամադրելի թոշակներու քիւը: Բաց աստի, ըստ կանոնագրի, բժշկական, ինչպէս նաեւ իրաւագիտական, հողագործական եւ գեղարուեստական ուսանողներուն չէ որ կը տրուի նախապատ[ո]իութիւնը, այլ գլխաւորաբար երկրաչափներու, մեքենագէտներու, ելեքտրագէտներու, քիմիաբաններու եւ դասախօսներու:

Ի՛նչ որ ալ ըլլայ, վստահ եղէք որ անձնապէս պիտի ընեմ ինչ որ ձեռքէս կուգայ»:

Այդ տողերից պարզ երեւում է, որ թոշակի հարցը այնքան էլ վստահ չէ: Նախ, եթէ այսօր 50ից [աւելի] արձանագր[ո]ածներ կան, Մալեզեանը մոռանում է որ իմ զաւակս առաջիններէն էր: Ապա, ես փաստացի գիտեմ որ երբ Քարեգործականի վարչութիւնը ուզո՛ւմ է՝ իր թեկնածուների թոշակը միշտ էլ յաջողացնում է: Գրած էի որ տղաս բժշկութիւն պիտի սովորի, այդ իր սիրած

առարկան է, սակայն, այն պարագային եթէ այդ հանգամանքը ներկայանայ իբրեւ միակ արգելքը, նա պատրաստ է ընտրել ուրիշ, կանոնագրին առելի համապատասխան մի ճիւղ:

Չեմ ուզում երեւակայել իսկ որ կարող են իմ զաւկիս մերժել. այդ կ[ը] լինէր մի հար[ո]ւած ուղղ[ո]ւած իմ անձիս դէմ: Դուք շատ լաւ գիտէք իմ նիւթական դրութիւնս. ամէն զոհողութիւն անում եմ այդ մասին ոչ ոքի անհանգստութիւն չտալու համար, բայց զաւակիս կրթութեան բեռը ուղ[ղ]ակի իմ ուժերէս վեր է եւ եթէ թոշակի հարցը չ՛յաջող[ո]ւի՝ անել դրութիւն պիտի ստեղծ[ո]ւի: Անցեալ տար[ո]ւայ ձեր պնդումը իրաւացի էր. չ՛ուզեցին լսել, ի՞նչ պատճառով...

Առ այժմ, ուրիշ բան չեմ կարող անել Բարեգործականին մօտ եղող բարեկամներիս դիմելէ զատ եւ նախ եւ առաջ ձեզ: Բարի եղէք այդ մասին խօսել Մալեզեանի հետ եւ հարցը կտրուկ կերպով դնել: Պիտի ուզէի ժամ առաջ մի բան իմանալ. որպէսզի ըստ այնմ դասաւորեմ իմ կեանքս. օր[ինակի] համար մնա՞մ Վենետիկ թէ տեղափոխ[ո]ւեմ ուրիշ տեղ եւ այլն...

«Երեք երգերի» տպագր[ո]ւած օրինակը անշուշտ ստացած էք[161]: Իմ մասիս ձեր գրած յօդ[ո]ւածը, որի համար շնորհակալութիւններս եմ յայտնում, ուշի ուշով կարդացի. միակ լուրջ քննադատականն է որ մինչեւ հիմա երեւցած է[,] թէպէտ մի քանի կէտերի մէջ ես համաձայն չեմ ձեզ հետ[162]:

Մնամ սիրով
Կ. ՉԱՐԵԱՆ

Բրիւսէլի կոմիտէին ոչինչ չեմ գրել. չգիտեմ իսկ անհրաժե՞շտ է այդ անել թէ կ՛բաւէ Մալեզեանին արած իմ դիմումներով...

Լ.[163]

24-4-31
[Վենետիկ]

Սիրելի Չօպանեան,

Այսօր Հ[այր] Երեմեանը[164] ինձ իմաց տ[ո]ւեց որ Մալեզեանից նամակ ստացած է թոշակի հարցի մասին, ուր ասում է որ երեք տարուց ի վեր ուրիշ սպասողներ կան եւ շատ յոյսեր չի տալիս տղիս յաջողութեան համար: Ի՞նչ ասել է այդ եւ ինչո՞ւ անցեալ տարի նա պնդում էր որ դիմումը վերջին րոպէին անենք...: Իբր թէ նաեւ ինձանից առելի գէշ նիւթական վիճակի մէջ գտն[ո]ւողներ կան եղել. կարծես Մալեզեանը լաւ գիտի իմ դրութիւնս:

Ինչ որ է. պարտք եմ համարում ձեզ իմաց տալ այդ մասին. ձեզանից դուրս ուրիշ յոյս չկայ: Եթէ չ՛յաջող[ո]ւի[,] ամէն բան կրկնապէս պիտի դժ[ո]ւարանայ ինձ համար եւ ստիպ[ո]ւած Վենետիկն էլ պիտի լքեմ:

Բարի եղէք. տեսէք ինչ կարելի է անել: Դա էլ Կիպրոս գնալու նման մի հարց դարձաւ[165]:

Մնամ սիրով
Կ. ՉԱՐԵԱՆ

ԼԱ.[166]

[Թուականը պատռուած է]

Սիրելի Չօպանեան,

[...] տակաւին հաշիւների հարցը եւ մարդիկ կան որոնք փոքրհոգութիւնը ունեն զաւակներս պատասխանատու բռնելու իմ գաղափարների համար: Այդ

մասին ես շատ աւելին գիտեմ քան նրանք կարծում են եւ կը գայ օրը երբ այդ մասին կ[ը] խօսենք հրապարակով:

Յաւում եմ տղոյս համար. ես անձամբ վարժ եմ հայ կեանքի այդ կոշտութիւններին եւ անարդարութիւններին: Գիտեմ այնպիսի թոշակ ստացողներ որոնք մերժում են իսկ իրենց հայ ասել եւ այնպիսիներ նաեւ որոնց համար ոչ թէ մէկ այլ եռեակ թոշակ սահմանո[ր]ած է մէկ նամակով...: Ի՜նչ որ է... ձեր ջանքերն էլ ապարդիւն անցան:

Մնամ սիրով
Կ. ՋԱՐԵԱՆ

ԼԲ.[167]

5-6-31
Վենետիկ

Սիրելի Չօպանեան,

Նամակը ստացայ թէ չէ ղրկեցի վանք որպէսզի բարեկամներից մէկը գրէ կոմսուհուն[168]: Շատ զգաց[ո]ած եմ ձեր այդ իրական բարեկամական ընթացքի համար եւ Վահէն[169] էլ խնդրում է ինձ յայտնել ձեզ իր խորին շնորհակալութիւնները: Յուսանք որ այդքան ջանք ապարդիւն չի անցնի: Իմ գործերս շատ խառն են եւ քանի գնում աւելի վատանում են: «Երեք երգերը» թողել եմ Մխիթարեաններին, Վիեննա, եւ ինչ կ[ը] լինի[՞] կ[ը] լինի: Ես անձամբ ի՞նչ կարող եմ անել ծախելու համար ու յայտնի է ինչպէս են առհասարակ ծախւում հայ գրքերը:

Փուշմանը[170] գրել էր ինձ որ պիտի գայ Վենետիկ, բայց մինչեւ հիմա չէ եկած: Արդեօ՞ք որեւէ տեղեկութիւն ունիք նրա մասին. Փարի՞զ է թէ դեռ Ամերիկայումն է:

Շիրուանզադէի հիւանդութեան լուրը շատ ցաւալի է: Չնայած իր բոլոր թերութիւններին, իրական գրական մեծ ուժ է եւ նրա կորուստը շատ զգալի պիտի լինի աղքատացող մեր հայ գրականութեան համար: Ի՜նչ գեղեցիկ գլուխ ունի եւ վերջերս գրած իր յիշողութիւնները, որ [մի] քիչ կարդացի ձեզ մօտ, վարպետի գործ էին[171]:

«Անահիտի» վերջին թիւը լեփ լեցուն էր կարեւորագոյ[ն] էջերով եւ հրատարակութիւնը քանի գնում շքեղանում է, մանաւանդ իր ուսումնասիրական մասի մէջ: Մտածե՜լ, որ մենք դեռ ոչինչ չգիտենք մեր անցեալ արո[ւ]եստի, մեր երաժշտութեան եւ բանահիւսութեան մասին: Պարապ գլխով մեր երիտասարդութիւնը ջուր է ծեծում, լրջօրէն աշխատութեան լծո[ւ]ելու տեղ[172]: Այդ տեղ էլ սպասում են որ օտարները աշխատեն եւ իրենք փառաբանեն: Մախլաս[173]...

Արդեօ՞ք այս տարի չպիտի ուզէիք Վենետիկ գալ. այստեղ էլ ծովը գեղեցիկ է եւ լռութիւնը հանդարտեցուցիչ: Եթէ Փուշմանն էլ գար, միասին լաւ ժամանակ կ՛անց[ը]նէինք:

Մնամ սիրով
Կ. ՋԱՐԵԱՆ

ԼԳ.[174]

28-6-31
Վենետիկ

Սիրելի Չօպանեան,

Շնորհակալ եմ ձեր տ[ո]ւած բարեկամական տեղեկութիւնների համար: Ես եւս մինչեւ վերջին վա[յ]րկեանը յոյս ունէի որ զաւակիս թոշակը չեն մերժեր. չէի ուզում մտածել որ այդքան դժ[ո]ւարութիւններին պիտի գան աւելանան նոր դժ[ո]ւարութիւններ եւս որոնք ինձ համար ուղ[ղ]ակի անել մի դրութիւն են ստեղծում: Սոսկալին այն է, որ եկող տարի միւս զաւակս էլ պիտի ա-ւարտի[175] եւ նրա համար եւս ոչ մի յոյս չկայ գոնէ Բրիւսէլից: Զարմանալի է անշուշտ նրանց որոշումը թոշակ տալ միմիայն նրանց որոնք Կովկաս են ա-ւարտել իրենց դպրոցական շրջանը: Թէ[՝] Հայաստանը եւ թէ[՝] Կովկասը ունեն համալսարաններ. բացի դրանից թէ[՝] Հայաստանի կառավարութիւնը եւ թէ[՝] Կովկասինը[176] ունեն արտասահմանում թոշակաւոր ուսանողներ, մինչ այդ ամենից զրկ[ո]ւած է արտասահմանի հայութիւնը: Ո՞վ պիտի նրանց մտածի: Ու ի՞նչ է վերջապէս արտասահմանում ապրող հայ գրագէտի դրութիւնը.- իր աշխատանքը չի վճարւում, իր գրքերը չեն ծախւում եւ իր զաւակները չեն կարող օգտ[ո]ւել փոքրիկ այն աջակցութիւններից որոնք տրւում են ամեն տեսակ վանեցիներին[177]: Զանազան Միհրդատեաններ ինձ դէմ են, ո-րովհետեւ ուզում են սիրաշահել սովէտական հայ միջավայրը որի հետ ծխախոտի եւ ուրիշ ապրանքների վաճառականութիւն են անում եւ իրենց քաղաքական եւ բարոյական սկզբունքները ամբողջովին կախ[ո]ւած են իրենց շահած ռուբլիներից: Դա արդարութի՞ւն է...

Ինչ որ է. հիմա տեսնենք Մարկոսեան կտակի[178] թոշակը ինչ պիտի լինի: Ամենայն դէպս այդ գումարը ինչպէս գրում էք այնքան քիչ է որ տղաս մինակ Միլան չպիտի կարողանայ ապրել, ուստի ստիպ[ո]ւած եմ ամբողջ ընտանիքով տեղափոխ[ո]ւել այնտեղ, ինչ որ նորից կապ[ո]ւած է շատ ծախսերի հետ[179]: Այստեղ, իտալացի գրական շրջանակներում ուղ[ղ]ակի զայրացած են. ուզում էին նոյնիսկ հայ թերթերին բողոքի մի նամակ գրել. անշուշտ ես դէմ եղայ, առարկելով որ իմ հայ եղբայրակիցներս այդ ուղղութեամբ արդեն որոշում տուած են...

Ինչ որ գրում էք գրքերի տպագրութեան մասին՝ ճիշտ է, բայց այդպէս ուզեց Փուշմանը: Ինքը գնաց Վիեննա եւ ամեն ինչ կարգադրեց[180]: Մինչեւ հիմա մի սանտիմ չեմ ստացած: Հարուստը աղքատին չի հասկանում... Ինչ վերաբերւում է այն հարցին թէ պէտք է անձամբ ղրկել. ո՞ւմ, ես ոչ ոքի չեմ ճանաչում եւ ոչ մի հասցէ էլ չ՛ունեմ: Ահարոնեանը[181] գրում է, որ հայ գրական միջավայրումն էլ մի տեսակ complot[182] արած են գրքի շուրջը լռութիւն պահելու... Ի՜նչ խեղճ ազգ եւ ի՜նչ ստորին միջավայր:

Ընդհանրապէս կեանքս ուրախ չէ - քանի գնում բարդանում է:

Ես էլ կարծում եմ որ Փուշմանը եթէ մինչեւ հիմա չ՛եկաւ էլ չպիտի գայ: Ուրախ եմ որ Շիրվանը լաւանալու վրայ է:

Նորից յայտնում եմ ձեզ իմ շնորհակալութիւններս ձեր արած քայլերի համար եւ ցաւում եմ որ չպիտի կարողանաք Վենետիկ գալ:

Մնամ սիրով
Կ. ՉԱՐԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Վարդան Մատթէոսեան, «Կոստան Զարեանի Եւ Արշակ Չօպանեանի Նամակներէն», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. ԻԷ., 2007, էջ 377-396:

[2] Գոհար Ազնաւուրեան, «Կոստան Զարեանի Նամակներից», *Սովետական Գրականութիւն*, 7, 1975, էջ 145-147:

[3] Վարդան Մատթէոսեան, «Կոստան Զարեանի Նամակները "Երեք Երգեր"ու Առիթով», *Հանդէս Ամսօրեայ*, Հտր. 1-12, 1993, էջ 245-247:

[4] ԱՃՖ, թիւ 2131:

[5] Կոստան Զարեան, *Օրերի Պսակը*, Կ. Պոլիս, Տպ. «Սահակեան», 1922:

[6] Տե՛ս՝ Կոստան Զարեան, «Մանրանկարներ», *Վերածնունդ*, 1/14 Յունուար 1918, էջ 18-19. նաեւ՝ «Աղօթք», *Վերածնունդ*, 1 Մարտ 1918, էջ 106. նաեւ՝ «Ձմեռային», *Վերածնունդ*, 15 Մարտ-1 Ապրիլ 1918, էջ 133. նաեւ՝ «Սուգի Երգ», *Վերածնունդ*, 14 Ապրիլ 1918, էջ 180-181. նաեւ՝ «Գիշերը Տունս Պատել Է...», *Վերածնունդ*, 14 Սեպտեմբեր 1918, էջ 360. նաեւ՝ «Մռայլ Այս Միգում», *Վերածնունդ*, 14 Հոկտեմբեր 1918, էջ 403. նաեւ՝ «Պատկեր», «Ջինջ Օդումը», *Վերածնունդ*, 1-14 Նոյեմբեր 1918, էջ 424:

[7] *Վերածնունդ*, (Փարիզ, 1917-1921)՝ հասարակական-գրական երկշաբաթաթերթ: Արշակ Չօպանեան զայն խմբագրած էր 1918-1919ին:

[8] *Կաւոշ* (Կ. Պոլիս, 1908-1926. Փարիզ, 1927-1936)՝ երգիծական պարբերաթերթ, խմբագիր՝ Երուանդ Թոլայեան:

[9] *Շաւիղ* (Կ. Պոլիս, 1919-1922)՝ երգիծական պարբերաթերթ, խմբագիր՝ Երուանդ Օտեան:

[10] Մեզի ծանօթ են նամակը կանխող քանի մը գրութիւններ *Շաւիղի* մէջ («Տարօրինակ Գիրք Մը», *Շաւիղ*, 3 Ապրիլ 1922, էջ 3. նաեւ՝ «Բանալի Օրերի Պսակի», *Շաւիղ*, 10 Ապրիլ 1922. նաեւ՝ Երուանդ Օտեան, «Իգնատ Աղա Գրական Քննադատ (Ինչ Օրերու Հասանք)», *Շաւիղ*, 10 Ապրիլ 1922, էջ 4): Նամակին յաջորդող օրերուն լոյս տեսած է գրախօսական մը՝ Վարդան Գէորգեան, «Օրերի Պսակը», *Շաւիղ*, 1 եւ 8 Մայիս 1922:

[11] Յակոբ Օշական (Քիւֆէճեան, 1883-1948)՝ արեւմտահայ վիպասան ու գրական քննադատ:

[12] Տե՛ս՝ Յակոբ Օշական, «Օրերի Պսակը», *Ճակատամարտ*, 9 Ապրիլ 1922, էջ 1-2:

[13] *Բարձրավանք* (Պոլիս, 1922)՝ գրական հանդէս՝ Զարեանի, Օշականի, Թէքէեանի, Շահան Ռ. Պէրպէրեանի եւ Գեղամ Գաւաֆեանի խմբագրութեամբ:

[14] Վահան Թէքէեան (1878-1945)՝ արեւմտահայ բանաստեղծ ու քաղաքական գործիչ:

[15] Զապէլ Եսայեան (1878-1942)՝ արեւմտահայ վիպասանուհի:

[16] Հայ Արուեստի Տան Պոլսոյ մասնաճիւղը բացուած էր Դեկտեմբեր 1921ին եւ յարատեւած՝ մինչեւ 1922ի վերջերը: Ըստ երեւոյթին, Չօպանեան ակնարկած է Փարիզի մէջ մասնաճիւղի ստեղծումին:

[17] ԱՃՖ, թիւ 2132: Նամակը գրուած է 1922ի ուղղագրութեամբ:

[18] Անցագիր, վիզա (ֆր.):

[19] Հմմտ.՝ մօտ երեք շաբաթ ետք հրատարակուած հետեւեալ լրատուութիւնը. «*Բանաստեղծ Կոնստան Զարեան, որ Երեւանի կառավարութեան կողմէն պաշտօնով մը ղրկուած էր եւ մտադիր էր Փարիզ այցելել, Ֆրանսական կառավարութեան կողմէն թոյլտուութիւն չ[ի] կրնար ստանալ*» («Թոյլտուութիւն Չկայ», *Հայրենիք*, 26 Սեպտեմբեր 1924, էջ 2): Կարելի է ենթադրել, որ Զարեանի մինչ այդ Փարիզ հասած չըլլալը առիթ տուած էր դաշնակցական շրջանակին այս տարածայնութիւնը տարածելու: Ինչպէս կը տեսնենք, նամակին բովանդակութիւնը կը հերքէ զայն:

[20] Սիմոն Փիրումեան (1889-1937)՝ Խորհրդային Միութեան Փարիզի դեսպանատան քարտուղար եւ Անդրկովկասեան Դաշնակցութեան ներկայացուցիչ:

[21] Դանուշ Շահվերդեան (1879-1938)՝ Հայաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդի (Ժողկոմխորհ) Ներգաղթի Լիազօր:

[22] Ըստ Զարեանի տուած տեղեկութիւններուն, «*իբրեւ անդամ Հայաստանի Օգնութեան Կոմիտէին (ՀՕԿ), եւ իբրեւ գրականութեան դասախօս Հայաստանի համալսա-*

բանին Եւրոպա կ'երթամ՝ ՀՕԿի յանձնախումբերուն հետ խորհրդակցութիւններ կատարելու եւ համալսարանին պէտքերը հոգալու համար։ Առաջին առթիւ Իտալիա պիտի երթամ եւ կիներս հոն ձգելով պիտի անցնիմ Ֆրանսա ու Անգլիա։ Կը յուսամ թէ աշնան արդէն Հայաստան վերադարձած կ'ըլլամ» («Տեղեկութիւններ Հայաստանի Մասին», *Հայրենիք*, 22 Յուլիս 1924, էջ 4):

[23] ԱՉՖ, թիւ 2152: Երկտողը գրուած է 1922ի ուղղագրութեամբ:

[24] ԱՉՖ, թիւ 2154: Երկտողը գրուած է 1922ի ուղղագրութեամբ:

[25] ԱՉՖ, թիւ 2133: Երկտողը գրուած է *La Tour de Babel* հանդէսի այցետոմսին վրայ՝ La Tour de Babel - Revue Mondiale de synthèse artistique et litteraire:

[26] Կ'ակնարկէ *La Tour de Babel* հանդէսին, որուն միակ թիւը լոյս տեսած է Նոյեմբեր 1925ին: Անհիմն է այն մեկնաբանութիւնը, թէ «*1925.8.8 տարեթուով հարցնում է խորհուրդ օրաթերթի հրատարակելու նպատակով (...)*» (Ալմաստ Զաքարեան, *Եղիշէ Չարենց. Կեանքը, Գործը, Ժամանակը*, գիրք 3, Երեւան, «Ֆենոմէն» Հրատ., 2008, էջ 120):

[27] Հանդէսը առանձին հայկական մաս ունեցած չէ, սակայն հեղինակին ֆրանսերէն բարգմանութեամբ հրատարակած է Չոպանեանի մէկ պատմուածքը (Archag Tchobanian, "L'oubli Final", *La Tour de Babel*, Novembre 1925, էջ 50-53):

[28] ԱՉՖ, թիւ 2134:

[29] ԱՉՖ, թիւ 2156: Երկտողը գրուած *La Tour de Babel*ի այցետոմսին վրայ:

[30] ԱՉՖ, թիւ 2155:

[31] Գորգ (թրք.):

[32] ԱՉՖ, թիւ 2153: Երկտողը գրուած է երկլեզու (Կոստան Զարեան - Constant Zarian) այցետոմսի վրայ:

[33] Թուականի չգոյութեան պատճառով կարելի չէ պարզել, թէ ի՞նչ դասախօսութեան մասին է խօսքը:

[34] ԱՉՖ, թիւ 2135: Նամակը յղուած է հետեւեալ հասցէին՝ A. Tchobanian, Grand Hotel de la Plage, Le Trèport, Seine Inférieure:

[35] Նկատի ունի ընտանիքին ապրուստը եւ երկու որդիներուն կրթութիւնը, որոնք գիշերօթիկ էին Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանին մէջ:

[36] ԱՉՖ, թիւ 2136:

[37] ԱՉՖ, թիւ 2137 (վենետիկեան տեսարան ցոյց տուող բացիկ):

[38] *Ապագայ* (1920-1939, 1944-1950)՝ ֆրանսահայ պարբերաթերթ, հրատարակութիւն՝ Ռամկավար Ազատական Կուսակցութեան: 1926-1931ին հրատարակուած է եռանդամ խմբագրական մարմնի մը կողմէ՝ Չոպանեան, Արտակ Դարբինեան եւ Աւետիս Թերզիպաշեան (Յովիկ Էօրտեքեան, *ՌԱԿ-ի Մամուլի Խմբագիրները*, Երեւան, «Տիգրան Մեծ» Տպ., 2005, էջ 29):

[39] ԱՉՖ, թիւ 2138:

[40] Թուականը ճշդած ենք ըստ դրոշմակնիքին:

[41] ԱՉՖ, թիւ 2139:

[42] *La Roseraie d'Arménie*, traduction precedée d'une étude et suivie des notes par Archag Tchobanian, tome 3, Paris, Ernest Leroux, 1929:

[43] *Անահիտ* (1898-1911, 1929-1940, 1946-1949)՝ ֆրանսահայ գրական-մշակութային հանդէս, Արշակ Չոպանեանի խմբագրութեամբ:

[44] Արշակ Չոպանեան, «Անահիտ Հանդէսի Նոր Շրջանը. Արշակ Չոպանեան Իր Ծրագիրը Կը Կազմէ», *Ապագայ*, 2 եւ 5 Յունուար 1929:

[45] Նկատի ունի, օրինակ, *Գարուն* ալմանախի (Մոսկուա, 1910-1913) փորձը:

[46] Նկատի ունի «Երեք Երգեր Ասելու Համար Վիշտը Երկրի Եւ Վիշտը Երկնքի» վիպերգը (ըստ 1931ի հրատարակութեան խորագրին), որուն առաջին մասը՝ «Սիրվարդ», ենթախորագրուած էր «Խորհուրդ Չորս Մասով Ըստ Եղանակների Թաւալման»:

[47] *Հայրենիք* (1922-1970)՝ ամերիկահայ ամսագիր, ապա՝ եռամսեայ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հրատարակութիւն: Ջարեան անոր աշխատակցած է ընդմիջումներով՝ 1925-1955ին:

[48] Կոստան Ջարեան, «Երեք Երգեր Ասելու Համար Վիշտը Երկրի Ու Վիշտը Երկինքների. Սիրվարդ՝ Երկրի Աղջիկը», *Բարձրավանք*, Մարտ 1922, էջ 73-81, եւ Մայիս 1922, էջ 140-149:

[49] *Բարձրավանք* հանդէսը դադրած էր Յունիս 1922ին՝ քեմալական շարժումին առթած անորոշութեան պատճառով:

[50] Costant Zarian, *Tre Canti Per Dire I Dolori Della Terra E I Dolori Dei Cieli*, tradotto di T. A. Rosso, Lanciano, Carabba Editore, 1920.

[51] Անգլերէն թարգմանութիւնը լոյս տեսած չէ:

[52] Գրուած է 1915ին:

[53] Ակնարկուած առանձնատիպը կ՚ընդգրկէր *Բարձրավանք*ի մէջ լոյս տեսած երկու մասերը: Տե՛ս՝ Կոստան Ջարեան, *Երեք Երգեր Ասելու Համար Վիշտը Երկրի Ու Վիշտը Երկինքների. Սիրվարդ՝ Երկրի Աղջիկը*, Կ. Պոլիս, Տպ. «Արգուման», 1922:

[54] *Անահիտ*ի մատենաշարը նիւթական պատճառներով իրականացած չէ:

[55] ԱՃՖ, թիւ 2140:

[56] Ըստ Չօպանեանի՝ Աւետիք Իսահակեանին ուղղած 1 Յունուար 1929 նամակին, *Անահիտ*ի պատուագինն էր «(...) *մէկ տպագիր էջին մէկ տոլար, առաջիմ աւելի չեմ կրնար* (...)» (Արշակ Չօպանեան, *Նամականեր*, հատորը կազմեց եւ ծանօթագրեց Գոհար Ազնաւուրեանը, Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1980, էջ 177):

[57] Dollar (անգլ.):

[58] Առաջին թիւը լոյս տեսած է Մայիս-Յունիս 1929 թուագրումով:

[59] Հ. Գաբրիէլ Նահապետեան (1857-1939)՝ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան անդամ, դաստիարակ ու բանասէր, 1929-32ին՝ Փարիզի Սամուէլ-Մուրատեան Վարժարանի հոգեւոր հայր:

[60] Տե՛ս՝ Ջարեանի 2 Փետրուար 1918ի նամակը Չօպանեանին (Մատթէոսեան, «Կոստան Ջարեանի Եւ Արշակ Չօպանեանի», էջ 382)

[61] ԱՃՖ, թիւ 2141:

[62] ԱՃՖ, թիւ 2142:

[63] Կոստան Ջարեան, «Քարը», *Անահիտ*, Մայիս-Յունիս 1929, էջ 8-13 (հմմտ.՝ նոյն, *Նաւատոմար*, Երեւան, «Սարգիս Խաչենց», 1999, էջ 302-308):

[64] Կոստան Ջարեան, «Տատրագոմի Հարսը», *Հայրենիք Ամսագիր*, Ապրիլ 1930: Նոյնը առանձին գիրքով՝ Կոստան Ջարեան, *Տատրագոմի Հարսը*, Պոստըն, «Հայրենիք» Տպ., 1930:

[65] Հրանտ Նազարեանց (1884-1962)՝ իտալահայ բանաստեղծ:

[66] Ջարեան կ՚ակնարկէ այն իրողութեան, որ Նազարեանցի գործերուն շուրջ իտալացի գրագէտներու չափազանցուած անդրադարձները համապատասխան չէին հայ գրականութեան մէջ ունեցած դիրքին:

[67] Այս տեղեկութիւններէն քաղուածք մը տե՛ս՝ Արշակ Չօպանեան, «Քրոնիկ», *Անահիտ*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1930, էջ 107:

[68] Constant Zarian, "Tre Canti Per Dire I Dolori Della Terra E I Dolori Del Cieli", poema tradotto dall'Armeno da Alessandro Rosso, *L'Eroica*, VIII-X, 1915 [1916], էջ 310-389: Համարը նուիրուած էր Հայաստանի եւ կը սկսի խմբագիր Էթթորէ Քոցանիի ներածական յօդուածով՝ «Արեւելքի Հռոմէացիները»: Ամսագրի կողքին վրայ գրուած է, թէ *Հայս հատորը, պատերազմի պատճառով, ուշացումով լոյս կը տեսնէ Յունիս 1916ին*»: Այս միացեալ համարին կողքը Ջարեանի վիպերգին մէկ նկարազարդումն էր, գործ՝ պելճիքացի նկարիչ Շարլ Տուտըլէի: Վիպերգը նկարազարդուած էր իտալացի արուեստագէտներ Ամերիկօ Պարթոլիի եւ Էնրիքօ Փրամփոլինիի փորագրութիւններով:

[69] Ամսագիրը իր առաջին շրջանին լոյս տեսած է Լա Սպեցիայի մէջ, իսկ երկրորդ շրջանին փոխադրուած է Միլանօ:

[70] *L'Eroica* (1911-1921, 1924-1944)՝ իտալական գրական-գեղարուեստական ամսագիր: Խմբագիր՝ Էթթորէ Քոցանի:

[71] Constant Zarian, *Tre Canti Per Dire I Dolori Della Terra E I Dolori Del Cieli*, La Spezia, L'Eroica, 1916.

[72] Ճիւօ Քարապպա (1876-1944)՝ իտալացի հրատարակիչ: Տե՛ս՝ *La Casa Editrice Carabba E La Cultura Italiana Tra Otto E Novecento*, a cura di Gianni Oliva, Roma, Bulzoni, 1999:

[73] Մատենաշարը կը կոչուէր "Scrittore Italiani E Stranieri" (Իտալացի եւ օտար գրողներ) եւ կ՚ընդգրկէր նշանաւոր հեղինակներու գործեր: 1921ին այդ մատենաշարէն լոյս տեսած է *Canti Popolari Armeni* հատորը (Հայ ժողովրդական երգեր - a cura di Domenico Ciampoli, Lanciano, Carabba Editore, 1921): Թարգմանիչը՝ յայտնի սլաւագէտ Տոմենիքօ Չամփոլին (1852-1929), Չօպանեանի բարեկամ էր ու հատորը թարգմանած էր վերջինիս՝ 1903ին ֆրանսերէն լոյս տեսած համանուն հատորէն (տե՛ս՝ Aldo Ferrari, *L'Ararat E La Gru: Studi Sulla Storia E La Cultura Degli Armeni*, Milano, Mimesis, 2003, էջ 219-226):

[74] Այս տեղեկութիւնը թիւրիմացութիւն մըն է. 2 Ապրիլ 1932ին Չարեանին ուղղուած իր նամակին մէջ, հրատարակչատան սեփականատէր Ճիւօ Քարապպան կը մատնանշէր. "Dopo la prima edizione del 1920 fatta da me dei suoi 'Tre canti', il volume non venne più ristampato. (...) Non è esatto quello che ella mi scrive di aver io '*continuata in diverse riprese la pubblicazione del volume*" (*«Ձեր 'Երեք Երգեր'ու՝ 1920ին իմ կատարած առաջին հրատարակութենէն ետք, հատորը այլեւս վերատպուած չէ: (...) Ճիշդ չէ ինչ որ կը գրէք, որ ես տարբեր առիթներով շարունակած եմ հատորին հրատարակութիւնը»* (ԳԱԹ, Կոստան Չարեանի ֆոնտ, թիւ 45. ընդգծումը՝ բնագրային):

[75] Ճիշդը՝ 1921ին, ըստ Ռեսփիկիի 28 Մայիս 1921 թուակիր նամակին, ուղղուած՝ Չարեանին (Vartan Matiossian, "Ottorino Respighi E Gostan Zarian. Lettere Inedite", *Բազմավէպ*, ՃԾԹ. տարի, թիւ 1-4, 1996, էջ 297. հոս հրատարակուած են Ռեսփիկիի հինգ անտիպ նամակները Չարեանին):

[76] Օթթորինօ Ռեսփիկի (1879-1936)՝ իտալացի երգահան: Չարեանի եւ Ռեսփիկիի յարաբերութեան մասին, տե՛ս՝ Եռուր Խաչատրեան, «Օտտորինօ Ռեսպիգին Եւ Կոստան Չարեանը», *Նորք*, 4, 1997, էջ 100-112 (ներառած է Ռեսփիկիի չորս նամակներու հայերէն թարգմանութիւնը, կատարուած՝ Արմէն Չարեանի կողմէ). Վարդան Մատթէոսեան, *Կոստան Չարեանի Շուրջ (Ուսումնասիրութիւն)*, Անթիլիաս, Տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի, 1998, էջ 141-149:

[77] «Երգչախումբ, նուագախումբ, մեներգեր» (ֆրանս.): Ռեսփիկիի ստեղծագործութիւնը՝ «Գարուն», միայն կ՚ընդգրկէ վիպերգին առաջին մասը:

[78] Ըստ մեր հաւաքած տեղեկութիւններուն, 1923-1926ին «Գարուն»ը ներկայացուած էր միայն Հռոմի, Էնն Արպըրի (Միչիկըն, ԱՄՆ) եւ Պերլինի մէջ (Մատթէոսեան, *Կոստան Չարեանի Շուրջ*, էջ 148): Չինչինաթի ու Լայփցիկ կայանալիք համերգներու լուրը բխած է Ռեսփիկիի 1921ի վերոյիշեալ նամակէն, բայց այդ համերգները չեն կայացած:

[79] Ռեսփիկիի գործը լոյս տեսած է իտալերէն բնագրով եւ գերմաներէն թարգմանութեամբ:

[80] Երաժշտական հռչակաւոր հրատարակչատուն (հիմնուած՝ 1901ին, Վիեննա): Անոր անփոփոխ կեդրոնները եղած են Վիեննան եւ Նիւ Եորքը:

[81] Ottorino Respighi, *La Primavera*, poema lirico per soli, coro, orchestra ed organo / *Frühling*, lyrische dichtung für Solo, Chor, Orchester und Orgel. Dichtung von Constant Zarian, Deutsche Übertragung von R. St. Hoffman, Wien-New York, Universal Edition A. G., 1922.

[82] Ահա մասնակի ցանկ մը այդ յօդուածներուն. Renzo Levi Naim, "Come Fu Che Cercando Un Pittore Belga Trovai Un Poeta Armeno", *Il Nuovo Giornale*, 25 luglio 1916. "Un Grand Poète Arménien. Constant Zarian", *L'Italie*, 31 juillet 1916. նաեւ՝ "L'Armenia Nel Canto Del L'Eroica", *Giornale dell'Isola*, 2 agosto 1916. "Per l'Armenia", *Il Popolo d'Italia*, 8 agosto 1916. V. "All'Armenia", *L'Idea Nazionale*, 9 agosto 1916. Charles Doudelet, "Un Poeta Armeno: Constant Zarian", *Il Piccolo*, 22 agosto 1916. Angelo Piccioli, "La Sinfonia Delle Anime", թերթն ու թուականը յայտնի չեն. Tigi, "La Musa Insanguinata", թերթն ու թուականը յայտնի չեն (երկուքն ալ 1916էն են): Յօդուածներուն կտրօնները կը գտնուին Կոստան Զարեանի անձնական արխիւին մէջ (ժառանգներուն մօտ):

[83] Իլ Փոփոլօ տԻթալիա *Il Popolo d'Italia* (1914-1943)՝ Պ. Մուսոլինիի հիմնած ու խմբագրած օրաթերթը, որ 1918էն ետք Իտալիոյ Ֆաշական Կուսակցութեան պաշտօնաթերթը դարձաւ:

[84] Պենիթօ Մուսոլինի (1883-1945)՝ Իտալիոյ ֆաշական մենատէր՝ 1922-1943: «*(...) որ այն ժամանակ խմբագրում էր ինքը Մուսոլինին (...)*» խօսքը կրճատուած է Ազնաւուրեանի հրապարակումէն (Ազնաւուրեան, «Կոստան Զարեանի», էջ 146):

[85] Կ՛ակնարկէ հետեւեալ հաստատումին. «*Մարդիկ որոնք կոստան Զարեանի նման բանաստեղծներ ունին՝ հասուն են իրենց ճակատագիրը տնօրինելու համար*» ("Per l'Armenia", *Il Popolo d'Italia*, 8 agosto 1916):

[86] Ատա Նեկրի (1870-1945)՝ իտալացի բանաստեղծուհի:

[87] Ըստ յառաջաբանին, Նեկրի գրած էր Զարեանին. «*Մէկ տուն մը, ո՛չ բառ մը, ո՛չ ներդաշնակութիւն մը կարելի է մոռնալ հրաշալի այն վիպերգէն, զոր դուք տուած էք մարդոց՝ իրենց տիեզերական սէրն ու խորհրդապաշտ ծարաւը անուշցանելու համար։ «Գարունը», «Զայներ եկեղեցւոյ», «Աստղերի Քերթուածը» աստուածային մաքրութեան գեղեցկութիւններ կը նուաճեն*» (Zarian, *Tre Canti*, p. 1): «*(...) եւ պէտք է երախտապարտ լինել հեղինակին մարդկութեան տուած իր նուէրի համար*» խօսքերը մէջբերուած չեն յառաջաբանին մէջ (հմմտ.՝ Խաչատրեան, «Օտտորինօ Ռեսպիգիի» էջ 104, որ լման պարբերութիւնը թարգմանած է, ընդգրկելով այս խօսքերը որպէս անոր մէկ մասը):

[88] Ճոզուէ Քարտուչի (1835-1907)՝ իտալացի բանաստեղծ, 1906ի Նոպէլեան մրցանակակիր: 1859-1903ին Պոլոնիոյ Համալսարանի Գականութեան Ամպիոնի վարիչ եղած է:

[89] Ճովաննի Փասքոլի (1855-1912)՝ իտալացի բանաստեղծ, Քարտուչիի աշակերտ եւ անոր յաջորդը՝ Պոլոնիոյ Համալսարանի Գրականութեան Ամպիոնին մէջ (1903-1912):

[90] Ալֆրետօ Կալեքքի (մահ. 1962)՝ իտալացի գրականագէտ: 1914ին յաջորդած է Ճովաննի Փասքոլիին որպէս Պոլոնիոյ Համալսարանի Գրականութեան Ամպիոնի վարիչ: 1918ին մաս կազմած է Զարեանի կազմակերպած Հայաստանի անկախութեան կոմիտէին:

[91] Փըրսի Պիշի Շելլի (1792-1822)՝ անգլիացի վիպապաշտ բանաստեղծ:

[92] Միկէլ Տէ Ունամունօ (1864-1936)՝ սպանացի վիպասան, համալսարանի դասախօս ու հրապարակագիր: Զարեանի եւ Ունամունոյի յարաբերութեան մասին, տե՛ս՝ Մատթէոսեան, *Կոստան Զարեանի Շուրջ*, էջ 326-349:

[93] Տեսուչը (ֆրանս.):

[94] Վինցենթի Լութոսլաւսկի (1863-1954)՝ լեհ փիլիսոփայ ու լեզուաբան: 1916-1919ին դասախօս եղած է Փարիզի Համալսարանին մէջ, իսկ 1920-1933ին՝ Վիլնայի (Լիթուանիա) Համալսարանի ամպիոնի վարիչ:

[95] Իրէն Ալեքսանտր՝ ամերիկացի արձակագիր ու բանաստեղծուհի:

[96] Միեւնոյնն է (ֆրանս.):

[97] ԱՉՖ, թիւ 2143:

[98] Կ՛ակնարկէ կնոջ՝ Թագուհիին (1887-1962), ու աղջկան՝ Նուարդին (1917-2005), որոնք 1929-1930ին Թրանսիլվանիա ապրած են:

[99] Զարեան պարսկական անցագիր ունէր:

[100] Կ՛ակնարկէ պոլսահայ երեք գրագիտուհիներու արձակ գործերուն, որոնք տեղ գտած են առաջին թիւին մէջ. Անայիս, «Շարժանկար», *Անահիտ*, Մայիս-Յունիս 1929, էջ 19-20. Զարուհի Գալէմքեարեան, «Թոռնիկիս Հետ», էջ 23-24, եւ՝ Մանիկ Պէրպէրեան, «Արձակ Քերթուածներ», էջ 27-28:

[101] Հմմտ.՝ հետեւեալ ակնարկութիւնը *Անցորդը եւ Իր Ճամբան*ի մէջ. «*Ահա ինչու, Պոլսում, կանայք գրականութիւն են մշակում, եւ զգում են իրենց ինչպէս Սիոնում՝ / Քաղաքը կին է՝ օրգանապէս թերի, մշտնջենապէս վիրաւորուած եւ գերազանցօրէն սիրական՝ / Ուսո՛ւ ստորին*» (Կոստան Զարեան, *Երկեր*, Անթիլիաս, Տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի, 1975, էջ 39):

[102] Անայիս (Եւփիմէ Աւետիսեան, 1872-1950)՝ պոլսահայ բանաստեղծուհի, ապա տեղափոխուած Ֆրանսա:

[103] *Հայ Կին* (1919-1933)՝ պոլսահայ կիսամսեայ հանդէս, խմբագիր՝ Հայկանոյշ Մառք: «*(...) մանաւանդ կանայք՝ Պօլսից ժայթքած անուշ այդ թուքը՝ Բոլոր այդ Անա[յ]իները եւ այլն՝ խոտով լեց[ո]ւած դութակների գրականութիւն են մշակում, որոնցից պէ՛տք է ազատագր[ո]ւել՝ ի զուր չէ որ Օսմանեան կայսրութիւնից մնացել է Պերա[յ]ի ցեխը եւ «Հայ Կինը»* հատուածը կրճատուած է Ազնաւուրեանի հրապարակումին մէջ (Ազնաւուրեան, էջ 146):

[104] ԱՉՖ, թիւ 2144: Նամակին մէկ մասը պատռուած է, ուստի փակագիծերով նշած ենք մեր վերականգնած բաժինները:

[105] Այդ մասին տե՛ս նաեւ՝ այս հատորին մէջ տեղ գտած Վաչէ Ղազարեանի հրապարակումը:

[106] Վահան Մալէզեան (1871-1966)՝ արեւմտահայ բանաստեղծ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան երկարամեայ վարիչ-քարտուղար:

[107] Զարեանի «Երեք Երգեր»էն որեւէ հատուած լոյս տեսած չէ *Անահիտի* մէջ: Հանդէսի չորրորդ թիւին մէջ տպուած է «*Հրատարակ[ո]ւելիք պոեմից ցրդ երգի մի հատ[ո]ւած*» ծանօթագրութեամբ բանաստեղծութիւն մը, որ սակայն կապ չունի «Երեք Երգեր»ուն հետ (Կոստան Զարեան, «Նոտր Դամի Քիմերաս (հատուած)», *Անահիտ*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1929, էջ 37-38):

[108] ԱՉՖ, թիւ 2145:

[109] ԱՉՖ, թիւ 2146:

[110] Ամենայն հաւանականութեամբ կ՛ակնարկէ երաժշտագէտ ու դաշնակահարուհի Մարգարիտ Բաբայեանին (1874-1968):

[111] ԱՉՖ, թիւ 2147:

[112] ԱՉՖ, թիւ 2148:

[113] ԱՉՖ, թիւ 2149:

[114] Այսինքն՝ հանդէսի չորրորդ՝ Նոյեմբեր-Դեկտեմբեր 1929ի թիւը:

[115] ԱՉՖ, թիւ 2151:

[116] *Նոր Ուղի* (1929-1932)՝ խորհրդահայ գրական-գեղարուեստական, քաղաքական ամսագիր:

[117] ԱՉՖ, թիւ 2150:

[118] ԱՉՖ, թիւ 2157:

[119] Նամակը պէտք է գրուած ըլլայ 12 Հոկտեմբեր 1930էն առաջ, երբ վենետիկեան յիշեալ հասցէէն Զարեան ցարդ յայտնի իր առաջին նամակը գրած է Յովսէփ Փուշմանին, առանց ակնարկելու ընտանեկան հարցերու (Մատթէոսեան, «Կոստան Զարեանի Նամակները», էջ 249):

[120] Տե՛ս՝ Արշակ Չօպանեան, «Քրոնիկ», *Անահիտ*, Յուլիս-Օգոստոս 1930, էջ 111: Քրոնիկին վերջին պարբերութիւնն է, որպէս նախաբան յաջորդ թիւին մէջ աւոր շարունակութեան՝ «Տատրագոմի Հարսը»ի մասին. «*[Հ]զօրագոյն արտագրութիւնն է որ մեր ժամանակակից քերթուհեան մէջ կը յայտնուի Միամանթօի եւ Վարուժանի արուեստ մեծահունչ քնարներուն լուկէն ի վեր*»:

[121] Կ՛ակնարկէ այն իրողութեան, որ դաշնակցական տեսակէտերուն կը ծանօթանար՝ Պոստընի *Հայրենիք* օրաթերթի միջոցաւ:

[122] ԱՉՖ, թիւ 2158:

[123] Խօսքը կը վերաբերի անդրանիկ զաւակին՝ Վահէ Զարեանին (1913-1985), որ 1931ին Մուրատ-Ռափայէլեան Վարժարանը պիտի աւարտէր եւ որուն համար համալսարանական կրթաթոշակ կը փորձէր ապահովել: Վ. Զարեան հետեւած է քաղաքական գիտութիւններու, ապա՝ բժշկութեան եւ արուեստի:

[124] Մաքսուտ Միհրդատեան (1874-1956)՝ ճարտարապետ, ՀԲԸՄի անդամ:

[125] Չօպանեան Կիլիկիա այցելած էր 1920-21ին՝ Ազգային Պատուիրակութեան հետ կապուած առաքելութեամբ:

[126] Չօպանեան Հայաստան այցելած է Դեկտեմբեր 1932ին՝ որպէս պատգամաւոր կաթողիկոսական ընտրութիւններուն:

[127] Կոստան Զարեան, «Անցորդը եւ Իր Ճամբան», *Հայրենիք Ամսագիր*, Հոկտեմբեր 1926-Փետրուար 1928 (հմմտ.՝ նոյն, *Երկեր*, էջ 9-360):

[128] Հաւանաբար կ՛ակնարկէ Չօպանեանի՝ *Անցորդը եւ Իր Ճամբան*ի մասին կատարած հետեւեալ քննադատութեան. «*Երգիծական բաժինը, ինչ. Հայաստանի քաղաքական ու մտաւոր գրեթէ բոլոր ղեկավարներուն - եւ ամբողջ բեժիմին - դէմ ուղղուած, կրքոտ կողմնակալութեամբ առգորուած էր եւ անարդարութիւններով լի, ինչքան որ զուտ գրական ձեւի տեսակէտով չահեկան. Հայաստանի այժմեան բեժիմին ու վարիչներուն թերութիւնները չափազանցուած էին, եւ դրական կողմերը բոլորովին անտեսուած*» (Չօպանեան, «Քրոնիկ», էջ 108):

[129] Զարեան Հայաստան ապրած էր Նոյեմբեր 1922էն մինչեւ Յունիս 1924:

[130] Գուրգէն Մահարի (Աճէմեան, 1903-1969)՝ խորհրդահայ բանաստեղծ եւ արձակագիր:

[131] Գուրգէն Մահարի 1929ին Փարիզի *Երեւան* երկօրեայիին մէջ Զարեանի դէմ նամակ մը գրած էր՝ *Անահիտի* առաջին թիւին «Քարը»ի առիթով, ուր մասնաւորապէս կ՛ըսուէր. «*Գրականագէտ Արշակ Չօպանեանն իր «Անահիտ» ամսաթերթում, «երկրի գրողներու ձայնն ալ խառնած ըլլալու համար պանդուխտ հայութեան ձայնին», «Նոր Ուղի» ամսագրի էջերից արտատպել է մեր բանաստեղծութիւնները:*

«Երկրի գրողները» երբեք դէմ չեն եղել «իրենց ձայնը խառնելու» արտասահմանեան ձայնին, բայց հրաժարուելով հրաժարւում են ձայնակցել մի այնպիսի «պանդուխտ հային», որպիսին է տխրահռչակ կ. Զարեանը, որը նոյնպէս մեծահոգաբար հիւրընկալուել է «Անահիտ»ի էջերում:

«Զարեանի հերթական խուլիգանական ելոյթը «Անահիտ»ի էջերում Խորհրդային Հայաստանի դէմ՝ ամէնեւին չի ապահովում «երկրի գրողներու» բարեկամական յարաբերութիւնները այդ ամսաթերթի հետ, որն առանձնել է անյաջող միջնորդի դեր «երկրի գրողներուն» եւ «պանդուխտ հայութեան» անուան տակ - արտասահմանեան հայ բուրժուազիայի լակէյ կ. Զարեանի միջեւ: Մի ժամանակ իր բուռ գրիչով Խորհրդային Հայաստանի անունով երդուող, իսկ այժմ, արտասահմանի հայկական դեղին մամուլի չուկաներում նո՛յն այդ գրիչի վաճառքով զբաղած Կոստան Զարեանի անունը չի կարող համատեղուել եւ ոչ մի մամուլում»:

Մէջբերելով այս հատուածը, *Հայրենիք* օրաթերթը խմբագրականի մը մէջ կը նշէր, թէ «*կ. Զարեանը երբեմն իր «բուռ» գրիչով Խորհրդային Հայաստանի անունով կ՛երդուէր, իսկ այժմ ազատ աշխարհի մէջ Հայաստանի վարիչներուն կատարած*

խեղկատակութիւնները կը ձաղկէ։ Ու ասիկա անհամատեղելի է Չեկայի առջեւ բարեւի կեցողներուն համար» («Ի Պէտս Զարգացելոց...» (խմբագրական), *Հայրենիք*, 27 Օգոստոս 1929, էջ 4):

Մահարի *Խորհրդային Հայաստան* օրաթերթի գրական-գեղարուեստական յաւելուածին մէջ (Գուրգէն Մահարի, «Էպիգրամներ», *Արուեստի ֆրոնտ*, 15 Նոյեմբեր 1930, թիւ 1) նաեւ հրատարակած էր Կոստան Զարեանին դէմ ուղղուած կծու էպիգրամ մը, իսկ նոյն թերթի թիւ 3ին մէջ (15 Դեկտեմբեր 1930)՝ «Արշակ Չօպանեան» էպիգրամը, ուր յարձակում կար թէ՛ Չօպանեանի եւ թէ՛ Զարեանի դէմ. *«Կոստան Զարեան/ Իր ուղին ունի,/ Նորենցը ի՛ր, / Ալեհեր պատանի,/ Դու էլ քո՛ ուղին։ / Լաւ է տգէտ լինել,/ Լինել անմիտ,/ Անուս,/ Քան փոթորկոտ/ Մեր այս դարում/ Գիտնական եանուս»* (տե՛ս Գուրգէն Մահարի, *Երգիծանք եւ Հումոր*, աշխատասիրութեամբ Գրիգոր Աճէմեանի, Երեւան, «Ապոլոն» Հրատ., 2004, էջ 79-80): Զարեանի դէմ գրուած էպիգրամին մասին, որ նախապէս արտատպուած էր նոյն թերթին մէջ, տե՛ս *Յառաջ*, 7 Դեկտեմբեր 1930:

Ըստ դերասան Մանուէլ Մարութեանի վկայութեան, որ 1921էն ետք այլեւս արտասահման էր, բայց որուն եղբայրը՝ թարգմանիչ Լէմուէլ Մարութեանը, Հայաստան կ՛ապրէր. *«Զարեանը երբ գրեց «Տատրագոմի հարսը», Մահարին գրեց հետեւեալը. «Ասում են թէ մտել ես, Զարեան Կոստան / Դաշնակցութեան քանդուած պոստան,/ Գրել ես Տատրագոմի հարսի մասին,/ Դու դատարկ գոմի փեսայ,/ Կարդացի այդ ու տեսայ...»* (Մանուէլ Մարութեան, *Նայիրի*, Դեկտեմբեր 1947-Յունուար 1948, էջ 618): Մահարիի այս էպիգրամին աղբիւրը չենք կրցած գտնել:

[132] Արտաշէս Կարինեան (1886-1982)՝ խորհրդահայ կուսակցական գործիչ եւ գրականագէտ:

[133] Տե՛ս նաեւ Դրաստամատ Սիմոնեան, «Մի Քանի Դիտողութիւններ «Անահիտ» Հանդէսի Մասին», *Երեւան*, 31 Յուլիս 1929, էջ 2, ուր յատկապէս քննադատուած է Չօպանեանը իր կարծիքին համար, թէ՛ *«կարող է հաշտեցնել անհաշտելին եւ իր հանդէսին մէջ մերձեցնել իրար բացասող բեւեռները»*: Որպէս օրինակ տրուած են Վահրամ Ալազանն ու Թէքէեանը եւ Ազատ Վշտունին ու Կոստան Զարեանը, որ այլեւայլ քննադատական սլաքներու ենթարկուած է նաեւ:

[134] Վահան Թոթովենց (1889-1938)՝ խորհրդահայ գրագէտ:

[135] Հմմտ.՝ «Կ. Զարեանի մի գրութիւնը» վերապատմող հետեւեալ մէջբերումը, որուն աղբիւրը թերեւս հրատարակուող սոյն նամակը ըլլայ. «... 1925ին [իմա՛ 1924ին - Վ.Մ.], *երբ ինքը մեկնում էր Հայաստանից, նրան հրաժեշտ տալու է գալիս Թոթովենցը եւ ասում՝ Կոստան, գնում ես, գիտեմ, որ չես վերադառնալու։ Մի բան եմ խնդրում եւ խնդրում եմ, որ լաւ յիշես· մեր անունից ինչ էլ կարդաս քո հասցէին, չզարմանաս ու չհաւատաս։ Դու լաւ գիտես, թէ ինչ երկրում եւ ինչ պայմաններում ենք ապրում»* (տե՛ս Նորայր Ադալեան, *Թոթովենց*, Երեւան, [առանց հրատարակիչի], 1994, էջ 261, որ կը յղէ Եուրի Խաչատրեանի յօդուածին, *Ազատամարտ*, 1993, թ. 4.):

[136] *Նորք* (1922-1928, ընդմիջումներով)՝ խորհրդահայ գրական-գեղարուեստական, քաղաքական հանդէս:

[137] Կ՛ակնարկէ թարգմանիչ ու բանասէր Մամիկոն Գէորգեանին (1877-1962):

[138] Լէօ (Առաքել Բաբախանեան, 1870-1935)՝ արեւելահայ պատմաբան ու գրականագէտ:

[139] *La Roseraie d'Arménie*, traduction precedée d'une étude et suivie des notes par Archag Tchobanian, tome 2, Paris, Ernest Leroux, 1923.

[140] Աշոտ Յովհաննիսեան (1887-1972)՝ խորհրդահայ պատմաբան եւ կուսակցական գործիչ: 1923-1924ին *Նորք*ի խմբագրութեան անդամ էր:

[141] Տե՛ս՝ Կոստան Զարեան, «Վարդաստան», *Նորք*, գիրք 4, 1924, էջ 285-290 (հմմտ.՝ Նոյն, *Դէպի Արարատ*, Երեւան, «Սարգիս Խաչենց», 2001, էջ 281-288):

[142] *Հայաստանի Կոչնակ* (1899-1968)՝ ամերիկահայ շաբաթաթերթ (1960ականներուն՝ ամսաթերթ), հայ աւետարանական հրատարակութիւն: Լոյս տեսած է «Կոչնակ», «Կոչնակ Հայաստանի» եւ «Հայաստանի Կոչնակ» անուններով:

[143] *Խորհրդային Հայաստան* (1921-1990)՝ Հայաստանի Համայնավար Կուսակցութեան օրաթերթ: 1940-1989ին անուանուած է «Սովետական Հայաստան», իսկ 1989-1990ին վերստին դարձած է «Խորհրդային Հայաստան»: 1990էն ետք կոչուած է «Հայաստան» ու 1992ին վերածուած՝ անկախ օրաթերթի:

[144] Անտեղեակ (թրք.):

[145] Ամենայն հաւանականութեամբ կ՛ակնարկէ դերասան ու բեմադրիչ Ալեքսանդր Աբէլեանին (1865-1936):

[146] Կ՛ակնարկէ իր հօր՝ Խաչատուր բէկ Եղիազարեանին (մահ. 1890ին), որուն անունը յաճախ տրուած է իբրեւ Քրիստափոր (տե՛ս՝ Մատթէոսեան, *Կոստան Զարեանի Շուրջ*, էջ 23-24:

[147] Ալեքսանդր Շիրվանզադէ (Մովսիսեան, 1858-1935)՝ արեւելահայ վիպասան եւ թատերագիր: Աբէլեան եղբայրներն ու Շիրվանզադէ երկու քոյրերու զաւակներ էին:

[148] Զարեանի մօր անունը Սոնա Ստեփանեան (Քամալեան) էր (տե՛ս՝ Մատթէոսեան, *Կոստան Զարեանի Շուրջ*, էջ 24-25):

[149] Կ՛ակնարկէ Աբէլեանի եղբայրներուն՝ հաւրային գործիչ Ներսէս Աբէլեանին (1855-1933) եւ թատերագիր Յովհաննէս Աբէլեանին (1858-1940):

[150] 1928-1935ին Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան ընդհանուր աբբահայրն էր Հ. Յովհան Վրդ. Աւգերը (1877-1947):

[151] Խմբակ (ֆրանս. clique):

[152] Երուանդ Արսլան (1865-1948)՝ իտալահայ բժիշկ, Մուրատ-Ռափայէլեան Վարժարանի շրջանաւարտ:

[153] Շիրանաւորներ (իտալ. cardinale):

[154] Մուրատ-Ռափայէլեան Վարժարանի Սանուց Միութիւն:

[155] Էտկար Շահին (Շահինեան, 1874-1947)՝ ֆրանսահայ գեղանկարիչ:

[156] Կոստան Զարեան, *Երեք Երգեր Ասելու Համար Վիշտը Երկրի Եւ Վիշտը Երկնքի*, Վիեննա, Մխիթարեան Տպ., 1931:

[157] Տե՛ս՝ «Ստացանք», *Անահիտ*, Յունուար-Ապրիլ 1931, էջ 192:

[158] ԱՃՖ, թիւ 2159:

[159] ՀԲԸՄի տնօրինումին տակ գտնուող ու Միութեան հիմնադիրներէն Պօղոս Նուպար փաշայի կողմէ 1924ին հաստատուած ուսանողական հիմնադրամ, որուն կեդրոնը Պրիւքսէլ է:

[160] Ըստ *Ապագայի* լրատուութեան, տնօրինումը կը կատարէր հինգ հոգինոց խումբ մը, որ կազմուած էր ՀԲԸՄի երկու ներկայացուցիչներէ, Պ. Նուպարի հաստատած Համալսարանական Հիմնարկութեան երկու ներկայացուցիչներէ եւ Նուպար ընտանիքի մէկ ներկայացուցիչէ (արտատպումը տե՛ս՝ «Պ. Պօղոս Նուպարի Համալսարանական Հիմնարկութիւնը», *Հայրենիք*, 18 Մայիս 1924, էջ 2):

[161] Տե՛ս՝ Արշակ Չօպանեան, «Քրոնիկ», *Անահիտ*, Յունուար-Ապրիլ 1931, էջ 186:

[162] Կ՛ակնարկէ Չօպանեանի արդէն յիշուած ու *Անահիտի* Նոյեմբեր-Դեկտեմբեր 1930ի թիւին մէջ լոյս տեսած այն քրոնիկին, որուն մէկ կարեւոր մասը (էջ 105-122) նուիրուած էր «Տատրագոմի Հարսը» վիպերգին:

[163] ԱՃՖ, թիւ 2160:

[164] Հ. Սիմէոն Վրդ. Երեմեան (1871-1938)՝ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան անդամ, գրականագէտ:

[165] 1926ին Զարեան դիմած էր Թէքէեանին՝ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ ուսուցչական պաշտօնի մը ի խնդիր (Վահան Թէքէեան, *Նամականեր*,

կազմեց, խմբագրեց եւ ծանօթագրեց՝ Աւետիս Գ. Սանճեան, Լոս Անճելըս, Հրատ. Թէքէեան Մշակութային Միութեան, 1983, էջ 539): Յայտնի չէ, եթէ ուրիշ փորձ մը կատարած է եւ ակնարկութիւնը այդ մասին է:

[166] ԱՃՖ, թիւ 2161: Նամակին աջ կողմը պատռուած է, որուն հետեւանքով առաջին վեց տողերը կորսուած են:

[167] ԱՃՖ, թիւ 2162:

[168] Կոմսուհիին ինքնութիւնը կարելի չէ պարզել: Արդեօք Չօպանեանի բարեկամ կոմսուհի տը Վիլնէօ՞վն էր, որ 1919ի Յունուարին ծրագրած էր հայանպաստ ձեռնարկ մը կազմակերպել Նիսի մէջ (տե՛ս՝ Մատթէոսեան, «Կոստան Զարեանի Եւ Արշակ Չօպանեանի», էջ 385-386):

[169] Այսինքն՝ Վահէ Զարեանը:

[170] Յովսէփ Փուշման (1877-1966)՝ ամերիկահայ գեղանկարիչ:

[171] Տե՛ս՝ Շիրվանզադէ, *Կեանքի Բովից, Առաջին Մաս*, Երեւան, Պետհրատ, 1930: Երկրորդ մասը լոյս տեսած է 1932ին:

[172] Կ՛ակնարկէ ֆրանսահայ երիտասարդ գրագէտներուն, որոնք այդ շրջանին խմբուած էին *Մենք* հանդէսին շուրջ եւ նախօրօք արդէն քանի մը բախումներ ունեցած Զարեանի ու այլ երէց գրողներու հետ:

[173] Մէկ խօսքով (բարբառային):

[174] ԱՃՖ, թիւ 2163:

[175] Խօսքը կը վերաբերի երկրորդ մանչ զաւակին՝ ճարտարապետ Արմէն Զարեանին (1914-1994):

[176] Կ՛ակնարկէ Անդրկովկասի Դաշնակցային Հանրապետութեան կառավարութեան:

[177] Թերեւս կ՛ակնարկէ այն իրողութեան, որ Խորհրդային Հայաստանի կուսակցական-կառավարական վերնախաւին մէջ վանեցիները զգալի տարր կը հաշուէին (օրինակ՝ Աղասի Խանջեանը):

[178] ՀԲԸՄին յանձնուած Ռափայէլ Մարկոսեանի անունով կտակը հաստատուած է 1922ին:

[179] 1932ին Զարեան փոխադրուած է Միլանօ:

[180] *Երեք Երգեր*ը լոյս տեսած է Փուշմանի մեկենասութեամբ:

[181] Աւետիս Ահարոնեան (1866-1948)՝ արեւելահայ արձակագիր ու քաղաքական գործիչ:

[182] Դաւադրութիւն (ֆր.):

KOSTAN ZARIAN'S LETTERS TO ARSHAG TCHOBANIAN (1922-1931)
(Summary)

VARTAN MATIOSSIAN
varny1@yahoo.com

We published the letters exchanged by writers Kostan Zarian (1885-1969) and Arshag Tchobanian (1872-1954) in 1917-1919, 1945-1946, and 1950 in the *Haigazian Armenological Review* of 2007. At the time we made reference to Zarian's letters from 1922-1931, kept in the Museum of Literature and Art "Eghishe Charents" of Erevan. Herewith, we publish those letters in their entirety (33 letters and messages). The whereabouts of Tchobanian's answers is so far unknown.

A few letters (numbers XI, XIV, XIX, XX, and XXXII) were first published in Soviet Armenian orthography by Gohar Aznavourian in 1975. That publication had various abridgements and misreadings and did not contain footnotes of any kind. We republish those letters, as well as letters XIV, XV, and XVII, which we previously published in 1993, with textual corrections.

This series of letters presents several periods of Zarian's life. In 1922 the writer was living in Constantinople, and his letters give some insights into the efforts to start a new cultural and literary movement. After leaving Armenia (1922-1924), he went to Paris, where he launched the international literary journal *La Tour de Babel* (one issue, 1925), and tried to secure Tchobanian's collaboration. From 1929-1931 Zarian was in talks with the French-Armenian writer for the publication of the Armenian original of his poem "Three Songs." The lettes give important details about the Italian translation of that poem, first published in 1916. He also makes remarks about the relaunching of Tchobanian's literary journal, *Anahit,* in 1929, Armenian literary and political life, the situation in Soviet Armenia, and his private life, especially his efforts to secure a college scholarship for his elder son.

ԴԵՐԱՍԱՆԻ ՎԱՐՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԷՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

ԳՐԻԳՈՐ ՕՐԴՈՅԵԱՆ
gregor6712@rambler.ru

Քսաներորդ դարասկզբի հայ թատերական գործիչ Մկրտիչ Ջանանը (1892-1938) նշանակալի հետք է թողել հայ թատերական արուեստի ասպարէզում ոչ միայն իր բացառիկ արուեստագէտի նկարագրով ու թատերագրի տաղանդով, այլեւ բեմարուեստի զանազան հարցերին նուիրուած տեսական ուսումնասիրութիւններով[1], որոնց բնագրերի մեծ մասը գտնուում է Երեւանի Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանում: Ջանանի ձեռագրին պատկանող աշխատութիւններից մէկն ուղղակի վերաբերում է դերասանական արուեստի դասաւանդմանը, ուստիեւ շարադրուած է ուսումնական ձեռնարկի պահանջներին համապատասխան՝ դասախօսութիւնների ձեւով[2]: Աշխատութեան վեց գլուխներից պահպանուել են միայն հինգը՝ Բ., Գ., Դ., ե., Զ. գլուխները: Ընդ որում Դ. եւ ե. գլուխները ժամանակի ընթացքում այնքան են խամրել եւ գունաթափուել, որ տեղ-տեղ դարձել են պարզապէս ա-նընթեռնելի:

Ձեռագիր վիճակում մեզ հասած այս աշխատութիւնը երբեք տպագրութեան չի ներկայացուել. գրուած է արեւմտահայերենով, եւ յետագայում էլ, երբ հեղինակը վարժուել է արեւելահայերէնին, հաւանաբար այլեւս հարկ չի համարել անդրադառնալու սկսած գործին, քանի որ ստալինեան վարչակարգի պայմաններում, երբ ամէն ինչ չափուել է «սոցիալիստական իրապաշտութեան» դիրքերից, այդ աշխատութեան տպագրութեան մասին մտածելն առնուազն միամտութիւն կը լինէր:

Պէտք է ենթադրել, որ «Դասախօսութիւնները»ը գրուել են 1920ականների սկզբին, իսկ աւելի ստոյգ՝ 1922ին, Պոլսում, երբ Ջանանը նոր էր վերադարձել Փարիզից (1921) եւ անմիջապէս լծուել տեղի Հայ Տրամաթիկ Ընկերութեան[3] աշխատանքներին: Այդ ենթադրութեանն են մեզ մղում երկու ուշագրաւ ակնարկ: Առաջինը վերաբերում է Մոսկուայի Գեղարուեստական Թատրոնում 1909-1911ին բեմադրուած Շեքսպիրի Համլէտ ողբերգութեանը, որը Ստանիսլաւսկու հրաւէրով Մոսկուայում իրականացրել է անգլիացի աշխարհահռչակ բեմադրիչ Գորդըն Կրէգը (1872-1966), իսկ գլխաւոր դերում հանդէս է եկել ռուս անուանի դերասան Վասիլի Կաչալովը (1875-1948): Այդ կապակցութեամբ ձեռագրում յիշատակւում է մի իրական դիպուած, որ տեղի է ունեցել բեմադրական աշխատանքների ժամանակ՝ Ուրուականի հետ Համլէտի հանդիպման տեսարանը փորձելիս: «Այդ թուականին ես ալ (Շահխաթունի) միասին կը պարապէի»՝ կարդում ենք ձեռագրի 7րդ էջում: Արդեօք ի՞նչ կարող էր նշանակել այս ակնարկը: Գիտենք, որ Ջանանը մինչ այդ երբեք չի եղել Ռուսաստանում, առաւել եւս՝ Մոսկուայի Գեղարուեստական Թատրոնում: Իհարկէ,

Փարիզում ուսանած տարիներին նա կարող էր լսած լինել եւ հանգամանօրէն ծանօթանալ այդ հանրայայտ թատրոնի նորարար բեմադրիչների գործունէութեանը[4]։ Այդուհանդերձ, դժուար թէ Համլէտի բեմադրութեանը վերաբերող իրադարձութիւնները Ջանանը նկարագրէր իբրեւ ականատես։ Կարծում ենք, այդ պատմութիւնը նա միայն կարող էր լսած լինել Արշաւիր Շահխաթունուց, որը 1920ականների սկզբին նոյնպէս յայտնուել է Պոլսում եւ աչխոյժ մասնակցութիւն է ունեցել տեղի հայ թատերական խմբի գործունէութեանը։ Ահա թէ ինչու, փակագծերում էլ յիշատակւում է նրա ազգանունը։

Հայ թատրոնի պատմութեան մէջ Շահխաթունին (1885-1957) առանձնայատուկ տեղ է զբաղեցնում ոչ միայն իր դերասանական արուեստի ինքնատիպութեամբ, այլեւ ստեղծագործական անհանգիստ կեանքով, որով ապրել է թ՛ւ հայրենիքում, թ՛ւ նրա սահմաններից դուրս[5]։ Նրա առաջին իսկ քայլերը բեմական ասպարէզում չափազանց խոստմնալից են եղել։ Ահա թէ ինչու նրան սկզբից եւեթ վստահել են անձնաւորել այնպիսի լուրջ եւ իրենց խառնուածքով տարբեր կերպարներ, ինչպիսիք են Ռոմէօն (Շեքսպիր՝ *Ռոմէօ Եւ Ջուլիէթ*), Սէյրանը (Շիրվանզադէ՝ *Նամուս*), Օթարեանը (Շիրվանզադէ՝ *Պատուի Համար*), Ֆինը (Դիւմա-Հայր՝ *Ֆին Կամ Հանճար Եւ Անառակութիւն*), Աբեղան (Շանթ՝ *Հին Աստուածներ*)։ Կարճ ժամանակամիջոցում Շահխաթունին տաղանդաւոր արուեստագէտի ճանաչում է ձեռք բերել թէ՛ երիտասարդ դերասանների, թէ՛ աւագ սերնդի նշանաւոր վարպետների շրջապատում։ Բաւական է ասել, որ նրան չատ բարձր է գնահատել եւ մայրաբար հովանաւորել է Սիրանոյշը, երբ 1912ին Թիֆլիսի հայկական թատերախմբով հիւրախաղերի էր Մոսկուայում եւ Պետերբուրգում։ Ահա, հենց այդ ժամանակ էլ Շահխաթունու խաղին ականատես է եղել անուանի թատերագիր Ա. Եուժին-Սումբատովը՝ Մոսկուայի Փոքր Թատրոնի վարչութեան նախագահը, որն էլ, ոգեւորուած նորայայտ դերասանի աւիւնքնող արուեստով, ամէն կերպ օժանդակել է նրա յետագայ առաջընթացին։ Կարճ ժամանակ անց, Շահխաթունին մուտք է գործել մոսկովեան արտիստական արուեստի միջավայր, հրաւիրուել է կինօ-նկարահանումների եւ չուտով դասուել ռուսական կինեմատոգրաֆի աստղերի շարքին, մտերմութիւն է հաստատել ռուս թատրոնի ականաւոր գործիչներ Վախթանգովի, Միխայիլ Չեխովի, Սուլերժիցքու հետ, իսկ 1913ին ընդունուել է Գեղարուեստական Թատրոնի Ստուդիան։ Այս շրջանում էլ նա սկսել է տեսականօրէն եւ գործնականում ուսումնասիրել Ստանիսլաւսկու «Սիստէմ»ը՝ դերասանի վարպետութեան ուսմունքը, եւ այդ գործում հասել է մեծ յաջողութիւնների։ Բայց եւ այնպէս, յետագայում նրա ճակատագիրն անսպասելիօրէն շրջաբեկուել է։ Վրայ է հասել Առաջին Աշխարհամարտը, յետոյ էլ՝ Հայաստանի Առաջին Հանրապետութեան օրօք, նա յայտնուել է զինծառայողի կարգավիճակում, որի պատճառով 1920ականների վերջին ստիպուած է եղել վտարանդուել արտասահման. նախ՝ Պոլիս, ապա Բալկաններ, եւ ի վերջոյ՝ Փարիզ։

Այնպէս որ, 1922ին Շահխաթունին եւ Ջանանը Պոլսոյ Հայ Տրամաթիկ Ընկերութեան կենտրոնական դէմքերից էին։ Նրանց համագործակցութեանն էլ վերաբերում է «Դասախօսութիւններ»ում տեղ գտած երկրորդ ուշագրաւ ակնարկը։ Ե. գլխում, ուր լուսաբանւում են դերասանի ստեղծագործական երկունքի առանձնայատկութիւնները (էջ 14-15), մասնաւորապէս կարդում ենք. «Ես Ձեզ կարող եմ տալ օրինակ մը, որ չափազանց նոր է եւ թարմ մեր

յիշողութեան մէջ: Անցեալ օրը՝ Կիրակի, մենք կը ներկայացնէինք «Սիմոս Արքայ» թատերախաղը, Պ. Ջանան ստանձնած էր գահաժառանգի դերը, որը կապ ունէր իմ եւ ամոր հետ» (*ընդգծումը մերն է - Գ.Օ.*)[6]: *Այստեղ, նախ՝ ուշադրութեան է արժանի այն, որ ասուած է «մեր յիշողութեան մէջ», այլ ոչ թէ՝ «իմ յիշողութեան մէջ», եւ երկրորդ՝ Ջանանը՝ իբրեւ հեղինակ, դժուար թէ իր մասին ասէր. «Պ. Ջանան ստանձնած էր»: Այստեղից պարզորոշ հետեւում է, որ Ջանանը միայնակ չի գրել «Դասախօսութիւնները», այլ նրան համահեղինակել է Շահխաթունին: Այդ եզրակացութեան օգտին է խօսում նաեւ այն, որ «Միմոս Արքայ» (հեղինակ՝ Ֆր. Լուտար, բեմադրիչ՝ Ջանան) բեմադրութեան մէջ, որը Պոլսոյ Հայ Տրամաթիկ Ընկերութեան թատերախումբը ներկայացրել է 1922 Ապրիլի 9ին (կրկնութիւնը՝ Ապրիլի 16ին), գլխաւոր հերոսների դերերում հանդէս են եկել Շահխաթունին՝ Աուլեքին, եւ Ջանանը՝ Բոհեմունդ[7]:*

Ուրեմն ակնյայտ է, որ Համլէտի բեմադրութեան հետ կապուած պատմութիւնը նոյնպէս միանշանակ պատկանում է Շահխաթունուն[8], որն այստեղ հանդէս է գալիս որպէս լիիրաւ համահեղինակ:

Բովանդակային առումով ամենանշանակալիցն այն է, որ մօտ հինը տասնամեակ առաջ գրուած «Դասախօսութիւնները»ն այսօր էլ կարող են լուրջ հետաքրքրութիւն ներկայացնել: Հեղինակները փորձել են պարզ ու հակիրճ պարզաբանել այն հիմնորոշ սկզբունքները, որոնցով պէտք է առաջնորդուի սկսնակ դերասանն ուսումնառութեան ընթացքում: Ընդ որում, աւելորդ չէ նաեւ նշել, որ այս ձեռնարկն աւելի շուտ է ասպարէզ եկել՝ թէկուզ եւ հրապարակային ընթերցումների ձեւով, քան Ստանիսլաւսկու «սիստէմ»ը. նրա «Իմ կեանքը Արուեստում» աշխատութիւնն առաջին անգամ տպագրուել է 1926ին, իսկ «Դերասանի Աշխատանքն Ընդ Ինքեան»ը՝ 1938ին[9]: Բացի այդ, «Դասախօսութիւնները»ի հեղինակները նաեւ առաջին անգամ փորձել են համադրել Ի. դարասկզբի եւրոպական՝ ի դէմս Ջանանի, եւ ռուսական՝ ի դէմս Շահխաթունու, դերասանական դպրոցները, որ չափազանց կարեւոր էր՝ հայ ազգային թատերարուեստում դերասանական խաղի նոր որակ ձեւաւորելու համար:

Այդ որակն առանձնապէս դրսեւորուեց հենց Ջանանի յետագայ ստեղծագործական կեանքում, երբ 1922ին նա եկաւ Խորհրդային Հայաստան եւ աշխատանքի անցաւ Երեւանի Առաջին Պետական Թատրոնում: Պահպանուել են մի շարք գրառումներ, յօդուածներ ու նոթագրումներ, ուր խօսք է գնում հենց այն որակական առանձնայատկութեան մասին, որով աչքի է ընկել Ջանանի արուեստը: Այս առումով շատ բնութագրական են Սարգիս Մելիքսէթեանի հետեւեալ տողերը. «Երբ նա (*Ջանանը - Գ.Օ.*) Վահրամ Փափազեանի հետ առաջին անգամ Սունդուկեանի թատրոնում[10] հանդէս եկաւ Դիմաճշի[11] դերում, թատերասրահի համար շատ հաճելի անակնկալ եղաւ: Մեզնից ոչ ոք չէր մտածի, թէ այդ փոքրիկ, պարզապէս էպիզոդիկ դերից կարելի կը լիներ ստեղծել այդքան ուռուցիկ եւ այդքան հիւթեղ մի կերպար: Դիմաճշը եկել է Դոն Ժուանից իրեն հասանելիք պարտքը պահանջելու: Եւ ամէն անգամ, երբ ուզում էր Դոն Ժուանին յիշեցնել իր այցելութեան նպատակը - «Ես եկել եմ», «Ես ուզում եմ», «Ես եկել եմ, որպէսզի...», եւ չէր կարողանում իր գալու պատճառը յայտնել անզուգական վարպետութեամբ խաղացող Փափազեան-Դոն Ժուանի կենտրոնախոյս եւ սլացիկ ռեփլիք (réplique)-հարցումների տա-

րափի տակ, մենք շշմում էինք Ջանանի ռեփլիքների առոգանման ձեւերի ու երանգների, ինչպէս եւ շարժման կերպերի բազմազանութիւնից: Այդ փոքրիկ, բայց խտացած պատկերից մենք զգացինք դերասանի ստեղծագործական պարունակութեան երկայնքը: Սակայն շատ չանցած զգացինք նաեւ լայնքը, երբ նա խաղաց Արգանը («Երեւակայական Հիւանդ»), Եագօն, Պետրուչիօն («Կամակոր Կնոջ Սանձահարումը»), Վանգամպերտաֆը («Վարժապետ Բուբուս»), Ֆիէսկօ («Ֆիէսկոյի Դաւադրութիւնը»), Օգսէնը («Պաղտասար Աղբար»), Աբիսողոմ աղան («Մեծապատիւ Մուրացկաններ») եւ այլն»[12]:

***

Իսկ հիմա տեսնենք, թէ ընդհանուր առմամբ, ի՞նչ են այդ «Դասախօսութիւնները»:

Արդէն ասուեց, որ ձեռնարկն ի սկզբանէ բաղկացած է եղել վեց գլուխներից (դասախօսութիւններից), որոնցից ներկայումս միայն հինգն է պահպանուել: Այնուամենայնիւ, երրորդ գլխում, ուր հեղինակներն անդրադառնում են բեմական ուշադրութեան խնդրին, անուանելով այն՝ «օղակ», այսպիսի մի յղում է արուում, որից իմանում ենք, թէ ինչի մասին է խօսուել առաջին գլխում. «Կայ եւ օղակէն դուրս ելնելու ուրիշ կերպ մը. այդ այն պարագան է, որ խաղարկութեան ընթացքին չէք գտնուիր օղակի մէջ, ձեր ջղերը եւ ուղեղը բաժան բաժան են այլեւայլ կողմերու մէջ՝ րոպէական ազդեցութեանց ենթակայ: Այդ հետեւանք է անշուշտ մկանները լարումին, որու մասին խօսեցանք մեր Ա. դասախօսութեան մէջ» (ընդգծումը մերն է - Գ.Օ.):

Ահաւասիկ, ձեռնարկում զետեղուած յաջորդ գլուխների համառօտ բովանդակութիւնը.

Բ. դասախօսութիւնը նուիրուած է գաղափարի զուգորդութեան կամ, այլ կերպ ասած՝ հոգեկան հաղորդակցութեան խնդրին, որն ըստ էութեան յուզական յիշողութեան իւրովի մեկնութիւնն է:

Գ. դասախօսութիւնը լուսաբանում է գտնուել օղակի մէջ հասկացութիւնը՝ բեմական ուշադրութեան իմաստն ու խաղարկային ձեւերը:

Դ. դասախօսութեան մէջ հեղինակներն անդրադառնում են կապի, այսինքն՝ բեմական շփման տեսակներին:

Ե. դասախօսութեան մէջ մեկնաբանւում են դերի ձեւակերտման եղանակները եւ առանձնայատուկ կարեւորւում են դերասանի ստեղծագործական տանջանքներն ու երկունքը:

Զ. դասախօսութիւնը բացայայտում է բնաւորութիւն կերտելու ստեղծագործական միջոցներն ու բեմական արտայայտչականութեան առանձնայատկութիւնները:

Այսպիսով, «Դասախօսութիւններ»ի համառօտ բովանդակութեան ընթերցումն իսկ պատկերացում է տալիս, թէ հեղինակներն ի՞նչ չափով են համադրել եւրոպական եւ ռուսական դերասանական դպրոցները: Առաջին, երկրորդ, երրորդ եւ չորրորդ գլուխներում առաջադրուած հիմնական դրոյթները չատ համահունչ են Ստանիսլաւսկու ուսմունքին, ուր համապատասխանաբար օգտագործուած են մկանների ազատում (osvobojdenie mishc), *յուզական յիշողութիւն* (emotsionalnaya pamyeat), *բեմական ուշադրութիւն* (stsenicheskoe vnimanie) *եւ շփում* (obshenie) *եզրերը*[13]: *Անշուշտ, դրանց ներկրողը Շահխաթունին էր, որի տեսական ըմբռնումները, ինչպէս արդէն ասուեց, ձեւաւորուել*

են դեռեւս Մոսկուայի Գեղարուեստական Թատրոնի Ստուդիայում ուսանելու տարիներին։ Թէպէտ նոյն այդ շարքում օգտագործւում են նաեւ այնպիսի հասկացութիւններ, որոնք միանգամայն նորովի են լուսաբանում դերասանի ստեղծագործական ներաշխարհը, ինչպէս՝ օղակ, կապ, գաղափարի զուգորդութիւն, հոգեկան հաղորդակցութիւն, ստեղծագործական տանջանք, երկունք եւն.։ Ակնյայտ է, որ այստեղ արդէն աշխատել է Ջանանն իր ֆրանսիական դպրոցի կողմնորոշումներով ու չափանիշներով։ Բայց միեւնոյն ժամանակ, անհրաժեշտ ենք համարում յատուկ ընդգծել, որ հեղինակների ընդհանուր շարադրանքին բնորոշ է ներդաշնակութիւնն ու գեղագիտական հայեացքների համերաշխութիւնը, ինչը սովորաբար հազուադէպ է պատահում այս կարգի աշխատութիւններում։

Ուշագրաւ է, որ Բ. գլխում դիմելով ընթերցողներին՝ հեղինակները սկզբում կարեւորում են չսովորեցնելու սկզբունքը։ Արդեօ՞ք սա հակասութիւն չէ։ Ըստ էութեան, իհարկէ՝ ոչ, քանի որ սովորեցնել հասկացութեան տակ նրանք ենթադրում են այնպիսի ուսումնական գործընթաց, որն ունի սկիզբ եւ աւարտ, ինչպէս դա յատուկ է արհեստներին, մինչդեռ արուեստում անհնար է սահմանափակուել վարպետութեան որեւէ մի աստիճանով. արուեստը, ի վերջոյ, արուեստագէտի ստեղծագործական ներքին մղումի, Փափազեանի խօսքերով ասած՝ «ստեղծագործական քնազդի»[14] արդիւնքն է, իսկ արհեստը՝ զուտ հմտութեան։ Բայց եւ այնպէս, արուեստում էլ, մասնաւորապէս դերասանական արուեստում, նրանց համոզմամբ, անհրաժեշտ է իւրացնել գործնական այն միջոցները, որոնց օգնութեամբ միայն, դերասանը կարող է ֆիզիկապէս առարկայացնել իր արուեստը՝ ձայնի մշակում, թոքերի զօրացում, ջղերի մարզում, վերլուծական մտքի վարժանք եւն.։ Ի դէպ, այդպիսին է ընդհանրապէս եւրոպական դերասանական դպրոցներում դասաւանդուող գործնական առարկաների ցանկը։

Հարկ է նշել, որ Ի. դարի 10ականների վերջերին ձեւաւորուած արեւելահայ դերասանական ստուդիաներում նոյնպէս անցել են բեմական շարժման, ձայնի եւ խօսքի, կշռոյթի եւ պլաստիկայի դասեր։ Ընդ որում, այսօր էլ ուսուցման այդ համակարգը պահպանուել է գրեթէ անփոփոխ ոչ միայն Հայաստանում, այլեւ արեւմտաեւրոպական ու արեւելաեւրոպական երկրներում։ Իհարկէ, տարբեր են թէ՛ ուսումնական ծրագրերը, եւ թէ՛ դասաւանդման եղանակները։ Բանն այն է, որ դրանց միջեւ ի սկզբանէ ձեւաւորուել է ստեղծագործական չափանիշների ըմբռնման եւ գնահատման տարակարծութիւն։ Այս է հիմնական խնդիրը։

Եւ այսպէս, շարադրելով իրենց կանխադրոյթները, Ջանանն ու Շահխաթունին անցնում են դերասանական խաղի ձեւաբանական հարցերին, որոնք էլ դասախօսութիւնների հիմնական առանցքն են կազմում։ Դիմելով ԺԸ. դարավերջի եւ ԺԹ. դարասկզբի դերասանական արուեստին՝ ի դէմս Սառա Սիդընսի (1755-1831) եւ Էդմընդ Քինի (1787-1833), նրանք անդրադառնում են կեանքից եկող յոյզերով բեմում վարակուելու այն տեսութեանը, որ շրջանառութեան մէջ են դրել «հին ժամանակներ»ի առաւել նուազ տաղանդի տէր դերասանները։ Այդ շրջանի խոշոր դերասանները, անշուշտ, ստեղծել են իրենց Մեծ Արուեստը, եւ հեղինակներն էլ, իհարկէ, դա չեն ժխտում։ Քինը մինչեւ Անգլիայի մայրաքաղաք մտնելը, երկար տարիներ շրջել էր երկրի գաւառներով եւ

անկասկած ձեռք էր բերել որոշակի համոզիչ, որի կիրառումը, թերեւս, հասու էր միայն իրեն։ Ցայտնի է, որ նա ոչ մի համակարգուած տեսութիւն չի ստեղծել, սակայն շատերն են հետեւել նրան՝ ձգտելով նմանուել, իսկ յաճախ պարզապէս ընդօրինակել են։ Ի դէպ, նոյնպիսի նուազ տաղանդի տէր հետեւորդներ է ունեցել նաեւ Պետրոս Ադամեանը, որոնցից մէկն էլ ի վերջոյ յայտնուել է հոգեբուժարանում[15]։

Հետեւաբար, հեղինակների սովորեցնել-չսովորեցնելու հարցադրումը շատ տրամաբանական է եւ արդարացի, քանի որ միտուած է բացայայտելու թատերարուեստի խորքային բնոյթը։ Եթէ դերասանը պէտք է վերապրի իր կերպաւորած դերի իրական ապրումները, ապա դրանց ամենաճշգրիտ վերարտադրութեան դէպքում անգամ, խաղի գեղարուեստական արտայայտչաձեւի մասին խօսելն աւելորդ է դառնում։ Առաւել եւս անհեթեթ է խօսել իրական ապրումներին գեղարուեստական ձեւ տալու մասին, որով սովորաբար զբաղուած են բեմի արհեստաւորները։ Իրականում կեանքից եկող ապրումներն անհնար է տեղափոխել բեմ, այլապէս խախտւում է բեմարուեստի լեզուն՝ նրա պայմանական աշխարհը։ Եւ հեղինակներն էլ հենց այս են պնդում, երբ Բ. գլխի երկրորդ էջում գրում են. «Ընդհակառակը մեր ուղղութիւնը կ'ըսէ, կրքերը մաքրօրէն արտայայտելու համար, դուք պէտք է զերծ ըլլաք աւոնցմէ»[16]։ Սա նշանակում է, որ Ջանանի եւ Շահխաթունու գեղագիտական հայեացքներն այս կէտում արմատապէս հակառակ էին, այսպէս կոչուած, «վերապրման արուեստ»ի սկզբունքներին։ Այստեղ նրանք ուղղակի հետեւում էին Դիդրոյի տեսութեանը, որի համաձայն, «բեմում կեանքը ենթարկուած է պայմանականութեան կանոններին»[17]։ Ցայտնի է, որ թատրոնի վերաբերեալ, գրեթէ նոյն ժամանակաշրջանում, գրեթէ նոյն հայեացքների ջատագովն է եղել նաեւ Սոմըրսէթ Մոամը (1874-1965), որի նշանաւոր մի վէպի հերոսուհին, բեմական արուեստին յատուկ պայմանական ապրումների չափազանց ուշագրաւ մեկնութիւնն է տալիս. «Դու չես ուզում հասկանալ, որ դերասանի խաղը կեանքը չէ, դա արուեստ է, իսկ արուեստն այն է, ինչ ստեղծագործում ես։ Իսկական վիշտը տգեղ է. դերասանի խնդիրն է ներկայացնել այն ոչ միայն ճշմարտացի, այլեւ գեղեցիկ։ Եթէ ես իսկապէս մահանայի, ինչպէս մահացել եմ մի քանի անգամ տարբեր պիէսներում, կարծում ես շատ պէ՞տքս կը լինէր՝ շարժումներս վայելչագեղ են թէ ոչ, կամ արդեօ՞ք իմ վերջին բառերը լսելի են վերնասրահի վերջին շարքում։ Եթէ դա կեղծիք է, ապա աւելի մեծ կեղծիք չէ, քան Բէթհովէնի սոնատը, իսկ ես նոյնպիսի մի կեղծարար եմ, որպիսին դաշնակահարն է, որը նուագում է այն»[18]։

Այստեղ յստակ արտայայտուած է նաեւ Ժ-Թ. դարում Ֆրանսուա Դելսարթի (1811-1871) հիմնադրած ֆրանսիական դերասանական դպրոցի ազդեցութիւնը, որը մերժում էր կեանքից եկող ամէն մի ապրում եւ փոխարէնը պահանջում էր մանրաքննօրէն մշակել իւրաքանչիւր բեմավիճակ՝ կառուցելով յուզական ապրումների եւ մարմնական արտայայտչաձեւերի ներդաշնակ ու հաւասարակշիռ խաղ։ Մինչդեռ հոգեբանական դպրոցի ներկայացուցիչները՝ ի դէմս Ստանիսլաւսկու եւ նրա հետեւորդների, առաջնահերթ կարեւորում էին հոգեվերլուծութեան եղանակով ենթագիտակցօրէն արթնացած բնական ապրումները։

Սա է այն սկզբունքային տարակարծութիւնը, որ յատկապէս Ի. դարասկզբին ի յայտ եկաւ արեւմտահայ եւ արեւելահայ դերասանական դպրոցների միջեւ: Ընդ որում, պէտք է նկատել, որ այդ տարակարծութեան հետեւանքով վիճելի դարձաւ նաեւ դերասանի վարպետութեան դասաւանդման հիմնահարցերից մէկը՝ ինչի՞ց սկսել, թատերախաղի ճեւակերտման սկզբունքները իւրացնելու՞ց, թէ՞ ենթագիտակցօրէն բնական ապրումներ արթնացնելու վարժանքներից: Իհարկէ, որեւէ այլ արուեստի կապակցութեամբ այսպիսի հարց չէր ծագի. ոչ ոք չէր փորձի պարզաբանել, ասենք՝ ի՞նչ է ամէնից առաջ անհրաժեշտ սկսնակ երաժշտին՝ սովորել solfeggio[19] *եւ* harmonia[20]*, թէ՞ կարողանալ յուզուել եւ յուզել:*

Ստորեւ ներկայացնում ենք «Դասախօսութիւններ»ն ամբողջութեամբ, որի հեղինակները փորձել են լուծել թատերական արուեստում առկայ հենց այս խնդիրը: «Դասախօսութիւններ»ն այստեղ հրատարակում ենք ուղղագրական հպումներով:

Բ. Դասախօսութիւն

Նախ եւ առաջ պարտաւոր կը զգամ նախազգուշացնելու ձեզ, թէ մեր այս դասախօսութիւններու վրայ պէտք չէ նայել այնպէս, իբրեւ թէ ան դպրոց մը ըլլար կամ արուեստանոց մը, ուր կարելի է սորվեցնել: Դերասան դառնալը կարելի չէ սորվեցնել, արուեստի մէջ չկայ սորվեցնել, եւ մենք ինչ ուղղութեան որ պիտի հետեւինք, դէմ ենք ադոր, որովհետեւ մեր ուղղութիւնը հակառակ է ադոր: Մեր ուղղութիւնը, շքոլան[21], մեզ կ'ըսէ. այո՛ դարբինին կարելի է սորվեցնել եւ որոշ ժամանակ յետոյ հասցնել զայն դարբինի վարպետ, բայց դերասանին չենք կարող, որովհետեւ երբ կը սորվեցնենք, պէտք է աւարտենք, եւ երբ որ աւարտենք կը նշանակէ արդէն պարտուեցանք եւ դատապարտուեցանք փչանալու:

Ուրեմն ինչո՞վ է, որ մենք գեղարուեստական աշխատարաններու մէջ կարող ենք պարապիլ կամ պէտք է պարապինք: Պատասխանելով այդ հարցին, կ'ըսենք, թէ մենք կարող ենք մշակել ձայնը, զօրացնել թոքերը, մարզել ջղերը, տալ պրպտումներու միջոցներ եւ այլն: Այժմ տեսնենք, թէ ինչպէ՞ս կարող ենք փնտռել եւ գտնել զգայականութեան այն զանազան կերպերը, որոնք գոյութիւն ունին մեր հոգեկան աշխարհի մէջ, եւ ինչպէս կարող կ'ըլլանք այլազան ձեւերու տակ որոնել ու գտնել անոնց արտայայտութեան միջոցները:

Հին ժամանակ ամենայայտնի դերասաններ, ինչպէս Քին, Միս Սիտընս եւ առաւելապէս անոնց շրջանի նուազ տաղանդաւոր դերասանները, ունէին որոնումի այլ ըմբռնում: Անոնց համար արտայայտել կարեւնալու պայմանը, ապրիլն էր այն վիճակը, որը պէտք էր վերապրէին բեմի վրայ, ուրեմն կարեւնալու համար հարթեցող մը ցոյց տալ, անոնք պէտք է անպայման գիւետուներ երթային, գիւովնայիին, խաղամոլի հետ թղթախաղ խաղային եւ այլն: Ահաւասիկ այս էր անոնց ուղղութիւնը:

Բայց երբ վերլուծումի մը ենթարկենք այդ ուղղութեան հիմունքը, կը տեսնենք, որ մեր առջեւ անելը կը գտնենք, ուր իրագործելը անհնարին պիտի ըլլար: Այսպէս, եթէ ոճրագործ մը ներկայացնել պէտք ըլլար, պիտի ստիպուէինք ոճիր մը գործել, զայն կարենալ ներկայացնելու համար: Հիւծախտաւոր մը ներկայացնելու համար՝ թոքախտ ստանալ եւ այլն, եւ այլն, որոնք ան-

կարելի էին: Հնարաւոր ըլլալու պարագային անգամ, անոնք զուրկ պիտի ըլլային այն զգլխիչ յատկութենէն, որը արուեստին է վերապահուած միայն, ո-րովհետեւ այդպիսով անոնք պիտի ստեղծէին պարզապէս արհեստ մը:

Ընդհակառակը մեր ուղղութիւնը կ'ըսէ, կրքերը մաքրօրէն արտայայտե-լու համար, դուք պէտք է գերծ ըլլաք անոնցմէ. սրահը լցուած ունկնդիրներով, պէտք է հաւատք ունենայ ձեր հոգիի մաքրութեան, որպէսզի հաղորդակցուի հոն իջնող իւրաքանչիւր լոյսի ճառագայթէն, որոնք յուզումներն իսկ են:

Թէ մեր ուղղութիւնը ինչե՞ր կը պահանջէ դերասանէն.

Ա. Հոգեկան պայծառութիւն: - Ան պէտք է գերծ ըլլայ կեղտոտութիւններէ. մոլորութիւններէ՝ անաղարտ հոգի մը, ընդունակ մարդկային ցաւերով տա-ռապելու եւ ուրախութիւններով հրճուելու:

Բ. Պէտք է զարգացած ըլլայ: - Ան պէտք է ունենայ այն մտաւոր պաշա-րը, որու շնորհիւ պիտի թափանցէ հեղինակներու արտայայտութեանց գրելու ձեւին, եւ գտնէ տառերու տակ պահուած իմաստը:

Գ. Պէտք է հետաքրքրուի բժշկութիւնով: - Որովհետեւ ֆիզիկական հի-ւանդութիւններ մարմնի որոշ մասերու արտայայտութիւնը կը փոխեն. եւ նոյ-նիսկ կարող է պատահիլ, որ հեղինակը նշմարած կամ շեշտած չըլլայ հեղի-նակի մը քառաքթէռը[22], եւ ձեր բժշկական պրպտումները կարող են բերել ձեզ այն եզրակացութեան, որ ենթական արտակարգ քառաքթէռ մըն է՝ արդիւնք վեներական հիւանդութեան եւ զանազան ժառանգականութեանց:

Դ. Պէտք է պատմութիւն գիտնայ: - Որպէսզի կարողանայ զանազանել բարքերը իրենց դարերով, հագուելակերպը որոշել, շարժումները դասաւորել:

Ե. Դերասանը պէտք է լինի անվերջ դիտող: - Ահաւասիկ այստեղ մենք նստած կը տեսնենք ունկնդրութեան զանազան արտայայտութիւններ, որոնք կապ ունին անհատներու հոգեկան եւ ֆիզիկական խառնուածքին հետ. դի-տեցէք երկու գրողներ, նոյն բանը միեւնոյն ատեն, եւ դուք կը տեսնէք մեծ տարբերութիւններ անոնց միջեւ, որոնք դիտել գիտցողին համար գրեթէ կը խօսին եւ ցոյց կու տան տարբեր նպատակներ եւ հոգեվիճակներ:

Զ. Դերասանի սիրտը պիտի նման լինի սինեմայի ընդունարան գործիքի մը, որուն ժապաւէնը պէտք է գրեթէ անվերջ ըլլայ, որպէսզի կարող ըլլայ մարդկային ամէն տեսակի յոյզեր եւ յուզումներ իր մէջ ստանալ: - Ըսինք ա-մէն տեսակի, այժմ կարելի է հարց տալ. հապա ամբլուա՞ն[23], թատերական սե՞ռը: Ինչպէ՞ս կարելի է, որ ծիծաղի արտայայտութիւններու մէջ մարգուած դերասանը ողբերգութիւն խաղայ: Բայց մեր ուղղութիւնը կ'ըսէ ու կը կրկնէ. ամէն տեսակի յոյզեր ու յուզումներ, որովհետեւ լաւ դերասանին համար չկան սեռեր, անոր հոգին նման պէտք է ըլլայ Պոն Մարշէի[24] վաճառատան, ուր կան ամէն տեսակի ապրանքներ, որոնք տրամադրելի են հասարակութեան:

Այժմ գանք այն հարցին, թէ ինչպէ՞ս կարելի է դիտողութեան միջոցով մթերուած զգայութիւններ պէտք եղած պարագային անմիջապէս երեւան բե-րել եւ ցուցադրել:

Ենթադրենք, որ սենեակի մը մէջ նստած էք առանձին, բոլորովին հան-դարտ մկաններով: Գիշեր է, եւ կը լսէք հեռուէն ջութակի մը նուագը: Եղա-նակը կարող է ձեզ յիշեցնել, որ այդ եղանակը լսել էք X տեղը եւ այդ տեղը կը պատկերանայ ձեր առջեւ. դուք անմիջապէս կը յիշէք Xը, որուն պատահե-ցաք հոն, X նստարանը, որուն վրայ նստեցաք, X սեղանը, որուն վրայ փո-րագրած անուն մը կար, նոյպէս կը յիշէք, որ Xը այսինչ գոյնի հագուստ էր

հագած, եւ տակաւին կը յիշէք ուրիշ զարմանալի մանրամասնութիւններ: Հոգիի եւ մտքի այս դրութիւնը կ'անուանենք գաղափարի զուգորդութիւն կամ հոգեկան հաղորդակցութիւն:

Այն դերասանը, որ ունի այդ պատկերացումները եւ յիշողութիւնները, անպայման լաւ արթիստ է: Եւ ով որ ունի այդ կարողութիւնը, պէտք է զարգացնէ զայն:

Ենթադրենք, որ տարիներ առաջ, երբ դուք կը գտնուէիք հեռու ձեր հայրենիքէն, ձեր ընտանեկան յարկէն, եւ առանձնութեան կամ այդ վիճակի մէջ, ստացաք նամակ մը: Բացիք շատ պարզ կերպով, եւ կարդալով նամակը, տեղեկացաք ձեր շատ սիրելի հօր, մօր կամ ազգականի մահը, որը ձեզ մեծ վիշտ պատճառեց, յուզուեցաք, եւ այդ յուզումը տիրեց մինչեւ ձեր սրտի խորերը: Տարիները կ'անցնին, բայց պահարանի մը պատռուելու ձայնը, նամակի մը բացումը եւ ընթերցումը, կարող է ձեր մէջ արթնացնել այն մեծ վշտին յուզումները, որոնք ունեցած էիք տարիներ առաջ:

Ուրիշ առիթ մը. ճաշարանի մը մէջ նստած էք, կայ խառներամ բազմութիւն, սպասաւորներ կ'երթան ու կու գան, եւ յանկարծ կը տեսնէք, որ երկու սպասարկողներ, նոյն կէտի վրայ հակառակ ուղղութեամբ մէջք-մէջքի գալով իրար կը բախուին, պնակներ կ'երերան, կերակուրներ կը թափին հագուստներու վրայ, ամբողջ ճաշարանը կը լեցուի խնդալու ձայնով, դուք եւս չափազանց կը խնդաք, եւ զուարճալի կը գտնէք այդ պատկերը: Այդ ծիծաղը կարող է մնալ ձեր հոգիին մէջ, եւ փոքրիկ անձեռոց մը կարող է երեւան բերել զայն:

Ուրեմն, երբ պատահեցաւ, որ ստիպուած էք խաղալ դեր մը, ուր անհրաժեշտ է զօրաւոր յուզում մը, որը պէտք է վերջանայ ծիծաղով: Այս պարագային նամակի պահարանը եւ անձեռոցը կարող են ձեզ մեծապէս նպաստել՝ րոպէապէս վերյիշել այն երկու պատկերները մանրամասնօրէն, եւ այդպիսով ձեռք բերել անսպասելի յաջողութիւն:

Արուեստի մէջ կան անհասկնալի գաղտնիքներ, ինչպէս բնութիւնը լեցուն է անոնցմով: Լեցուն լուցկիի տուփին շարժումը Մոսկուայի Գեղարուեստական Թատրոնի հիմնադիր եւ ամենամեծ բեմադիր Ստանիսլաւսկիին կը յիշեցնէր ճնճղուկներու ճոռողիւնը: Նոյն բանը կարող է ձեզ յիշեցնել գիւղ մը, պարտէզ մը եւ ձեր մանկութիւնը: Ապուր մը կարող է ձեզ յիշեցնել ձեր զինուորութիւնը, եւ անմիջապէս ձեր երեւակայութեան առջեւ բերել Հայաստանը, լեռներ, կոհակներ եւ այլն:

Կարելի է առաջ բերել այն առարկութիւնը, թէ ամէն մարդ չէ կարող վիշտ կրած ըլլալ: Խնդրական է այդ առարկութիւնը, որովհետեւ մարդ իր կեանքի մէջ անպայման ունեցած է գոնէ փոքրիկ վշտեր: Թողունք այդ եւ չուզենք օգտուիլ այդ պարագայէն: Բայց մի՞թէ մարդ չի կրնար դիտել ուրիշին վիշտը, եւ կամ մի՞թէ չէ կարող այդ վիշտը իր մէջ ծնցնել, ստեղծել, կեանք տալ անոր: Պատասխանելով այդ հարցականին՝ կ'ըսենք դերասանը պէտք է մեծ ֆանթեզի[25] ունենայ իր հոգիին մէջ եւ հաւատք դէպի այդ ֆանթեզին, որ իր ստեղծագործութիւնն է. պէտք է հաւատացնել ինքզինքը, որ այդ այդպէս է եւ այսինչ բանը այնպէս:

Դիտեցէք երախաները եւ պիտի տեսնէք, թէ անոնք են ամենամեծ ստեղծագործողները, որոնք իրենց խաղերը կը խաղան: Անոնց մէջ այնքան զօրաւոր է ֆանթեզին եւ երեւակայութիւնը, որ երախան թղթէ նաւակը կը սարքէ, կը հաւատացնէ ինքզինքին, թէ ան իսկական նաւ է. կ'երեւակայէ իր առջեւը ծո-

վը, կը հաւատայ անոր, եւ նոյնիսկ, եթէ պատահի, որ իր առջեւ անցնիք, իր պզտիկ ձայնով ահազանգ կու տայ՝ սարսափը երեսին, թէ մի անցնիք այդտեղէն՝ ծով է: Ահաւասիկ ամենատաղանդաւոր դերասանը:

Որով պէտք է հետեւիլ երախայի ուղղութեան. երեւակայութեան մէջ ստեղծել դէպքեր, պարագաներ եւ պատահարներ, եւ ապրիլ առաջ բերած հոգեվիճակները:

Անյաջողութիւններ պիտի պատահին փորձերու ժամանակ՝ պէտք չէ յուսահատիլ, եւ շարունակել փորձերը, եւ անոնք, որոնք կ'առարկէին, թէ վշտեր կարող են ունեցած չըլլալ, իրենց փորձերու անյաջողութիւնը բաւականին վիշտ պիտի պատճառէ արդէն: Եւ ի՞նչ կայ աւելի մեծ վիշտ, քան անյաջողութիւնը: Ես կը յիշեմ, թէ ինչպէս մեծ տաղանդի տէր Քաչալոֆը (ռուս դերասան Մոսկուայի Գեղարուեստական Թատրոնի) կը չարչարուէր, երբ չէին յաջողեր Համլէթի պատրաստութեան ժամանակ Ուրուականի տեսարանին փորձերը: Պարագան հետեւեալն էր:

Մոսկուայի Գեղարուեստական Թատրոնը պիտի բեմադրէր Համլէթը: Համլէթի դերը յանձնարարուած էր Քաչալոֆին: Փորձերը սկսան շատ լաւ կերպով: Քաչալոֆի համար յաջողութիւնը լաւ էր, բայց երբ եկաւ ու հասաւ Ուրուականի տեսարանին, Քաչալոֆը ըրաւ եւ գործածեց այն կաղապարէ եղած ձեւերը, որոնք թատրոնական շուկաներու մէջ կան եւ ծախու են: Իհարկէ, Քաչալոֆը այդ սարսափը առաւ ոչ հասարակ շուկայէն, այլ անոր ապրանքը կը ծախուէր մեծ, արիստոկրատ շուկայի մէջ, որով գեղեցիկ էին ձեւերը եւ սարսափը, բայց բեմադրիչները այդտեղ կեցուցին զինքը, եւ պարտադրեցին թողուլ այդ գնած ապրանքը, եւ դիմել իր սեփական ստեղծագործութեան: Քաչալոֆը շատ փորձեց, եւ չյաջողեցաւ: Կ'առարկէր խեղճը, թէ ինքը, որ երբեք ուրուական չէ տեսած, ինչպէ՞ս կարող է երեւակայել զայն: Փորձերը դադրեցան եւ երկար ժամանակ փորձուեցան միւս դերասանները:

Օր մը, ծանօթ հոգեբան Սուլլեժիտցքի[26] լրագիր մը բռնած, ցոյց տուաւ, թէ տարօրինակ բան մը կայ գրած լուրերու բաժնին մէջ, իբր թէ տան մը մէջ ուրուականներ են երեւցեր եւ այլն: Մի քանի օր անցած նոյն լուրը արձագանգ գտաւ զանազան ձեւերով ուրիշ թերթերու մէջ: Սուլլեժիտցքի բեմադիրներուն եւ այլոց ստիպեց որպէսզի ինչ որ ալ ըլլայ օգտուին պարագայէն, եւ հետաքրքրութեան համար՝ Քաչալոֆին տանին այդտեղ: Այդ թուականին ես ալ (Շահխաթունի) միասին կը պարապէի. գացինք այդ տունը, դուռը բացաւ ծերունի կին մը, սպիտակ մազերով, դողդոջուն ձայնով հարց տուաւ, թէ ի՞նչ է մեր այցելութեան նպատակը: Ըսինք, թէ կ'ուզենք տունը վարձել, միայն նախ քան այդ մեզ անհրաժեշտ է գիշեր մը տան մէջ անցընել: Պառաւը պատմեց մեզ, թէ ինչպէս ընտանիքին մեծ պարոնը սպանել է իր աղջկան, եւ այժմ աղջկայ ուրուականը ժամը գիշերուայ մէկին ատենները կու գայ կը պտտի տան մէջ: Անցանք տան ընդարձակ ու դատարկ սենեակները, սպասեցինք բաւական, եւ իսկապէս ժամը մէկի մօտ, գիշերուայ լռութեան մէջ, սկսաւ լսուիլ տարօրինակ քրխկոց, քիչ յետոյ, յանկարծ երեւաց սպիտակ աղջկան մը լուսաւոր ուրուականը: Զանազան մարդիկ էինք այնտեղ, բոլորս սարսափած էինք: Քաչալոֆը տափէն բարձրացած եւ տեղն ու տեղը պատին էր կպած՝ շշմած վիճակի մէջ, մի ուրիշը վախէն կը ծիծաղէր (եւ ամենաշատ վախեցողը այդ էր իրաւ):

Համլէթի փորձերը կը շարունակուէին: Նոյն միջոցին բեմադիրները օգտագործեցին րոպէն եւ սկսան փորձել ուրուականի տեսարանները: Քաչալոֆը ազատուած էր կաղապարուած սարսափի ձեւերէն, եւ տուաւ պարզ ու բնական, բայց այնքա՜ն տպաւորիչ յուզումը սարսափին:

Տեղի ունեցաւ ներկայացումը: Քաչալոֆ իր յաջողութեան բարձրագոյն աստիճանի հասած էր. մեծագոյն ովասիոններ[27], թերթերու մէջ գովեստներ, քննադատներու գնահատականներ: Քանի մը օր յետոյ թատրոնի բեմադիրները շնորհակալութիւն կը յայտնէին ուրուականի լուրը հրատարակող թերթերուն, ոստիկանապետին եւ այլն, որոնք հաւանած էին իրենց առաջարկութեան, եւ հնարաւորութիւն տուած, որ իրենց սարքած այդ խաղը լաւ արդիւնք տայ:

Ահաւասիկ օրիորդներ եւ պարոններ, թէ ինչպիսի աշխատանք է, որ կը կատարուի գեղարուեստի աշխարհին մէջ:

Բայց կեանքի մէջ եւ մարդկային հոգու մէջ կայ մեծ չափով ֆանթեզի, եւ միշտ կարելի է զայն գտնել, որով այդ մեծ դէպքերուն պէտք է դիմել շատ հազուագիւտ կերպով: Նոր սկսողներու հոգին մաքուր է, սպիտակ ու անաղարտ եւ գեղեցիկօրէն ճկուն, որով պէտք չէ ծանրաբեռնել այդ հոգին, այլ պէտք է սկսիլ փոքրիկ աշխատանքներով, եւ աստիճանաբար զարգացնել զանոնք:

Կը կրկնեմ դարձեալ, ձեր հոգին թող ունենայ անհամար արկղիկներ, լեցուն բազմազան յոյզերով եւ զգացողութեամբ, որոնց մէջէն դուք կարողանաք հանել եւ տալ այն ինչ որ անհրաժեշտ է:

Իհարկէ, ձեր արտայայտութեան ձեւերը պիտի ունենան եւ պէտք է աշխատիլ, որ ունենան իրենց գեղեցկութիւնը: Այդ բանին պիտի օգնէ ձեզ պարելը, մարզանքը եւ այլն: Բայց վերջացնելէ առաջ կ'ըսեմ. պիտի վանէք եւ հեռացնէք կաղապարները, պիտի հետեւիք հոգիի հաղորդակցութեան եւ գաղափարուց զուգորդութեան՝ միակ ապահով ճանապարհը պարզ ու բնական խաղարկութեան, որը կը խօսի հոգիներուն եւ մեզ կ'առաջնորդէ գեղարուեստի սանդուխներով դէպի կատարելութիւն:

Գ. Դասախօսութիւն

Բեմական կեանքի մէջ գոյութիւն ունի այս տեսակ բացատրութիւն մը, ոճ մը, որն է «օղակի մէջ» ըսուածը:

Երբ դերասանը կը խաղայ, պէտք է գտնուի օղակի մէջ, ուրկէ պէտք չէ, որ դուրս ելնէ:

Ի՞նչն է այդ օղակը արդեօք. ռա՞մբը, թելով քաշած գի՞ծը, կաւիճով որոշուած տեղե՞ր, պատե՞րը: Ոչ, այդ օղակը՝ դերի օղակն է: Այսինքն դերասանը իր խաղարկութեան ընթացքին պէտք է զրկուի արտաքին կապերէն, պարզ խօսքով՝ պէտք չէ զբաղի հասարակութեան հետ:

Անշուշտ, որ հասարակութեան եւ դերասանին մէջ գոյութիւն ունի հաղորդակցութեան ուղի մը, բայց այդ միայն յուզումի ուղին է, յուզումի կապը, որոնցմով ան կը յարաբերուի ունկնդիրներու հետ: Բայց այդ չի նշանակեր, ծանօթութեան կապ հաստատել ունկնդիրներու հետ, դիտել, թէ օթեակի մէջ նստած X պարոնը ի՞նչ կ'ընէ, Xը ի՞նչ հագած է եւ այլն: Որովհետեւ այն դերը, որ դուք կը կատարէք, ունի այլազան յուզումներ եւ ապրումներ, եւ երբ

սկսուի ծանօթութեան կապ հաստատուիլ ժողովրդի հետ, այն ժամանակ կարելի չէ մնալ օդակի մէջ:

Մեր դասախօսութիւններու մէջ մասնաւոր տեղ պիտի ունենայ արդարացումի բաժինը: Արդարացումը մասնաւոր կապ ունի օդակի հետ:

Կը պատահի երբեմն, որ դերասանը ակամայ դուրս կ'ելնէ օդակէն: Օրինակ. խաղարկութեան ընթացքին օտար ձայն մը կարող է յանկարծական ուշադրութիւնը գրաւել դերասանին, որը դուրս կարող է ելնել դերի օդակէն:

Ի՞նչ պէտք է ընել վերստին մտնելու համար օդակի մէջ, եւ ինչե՞ր են միջոցները:

Ենթադրենք, որ բեմի վրայ եմ խաղի մէջ, նստած եմ բազկաթոռի վրայ եւ կը գրեմ: Քուլիսի մէջ երկու դերասան կը վիճին, ձայները կը բարձրանայ: Եթէ ես անտարբեր մնամ, կը զրկեմ ժողովուրդը այն պատրանքէն, որը պիտի ստանայ անբնականութեամբ, իսկ երբ ես դարձայ եւ նայեցայ դէպի ձայնի կողմը, այդ կը նշանակէ, դուրս ելնել օդակէն, բայց արդարացնել եւ տալ ժողովրդին բնականութեան պատրանքը:

Եւ կամ ենթադրենք, թէ բեմը հին ժամանակուայ նման կը ներկայացնէ քարիւղի լուսաւորութիւն, եւ յանկարծ, սիրային տեսարանի մը ընթացքին կը սկսի լամբը բարձրանալ, ծխալ: Դերասանը, եթէ առարկէ, թէ իր դերին մէջ լամբը վար իջեցնել չկայ, եւ եթէ չուզէ դուրս ելնել իր օդակէն, այն ժամանակ ունկնդիրները դուրս կը հանէ օդակէն: Իսկ երբ ամենայն բնականութեամբ, վար առնէ լամբը եւ շարունակէ իր խօսակցութիւնը, այդ կ'ըլլայ արդարացում, եւ բնական:

Իհարկէ, պէտք է ամէն կերպով աշխատիլ, որպէսզի այս տեսակ բաներ չպատահին, բայց պատահելու պարագային, պէտք է գիտնալ, թէ իսկական թատրոնը կը պահանջէ, որ ամէն բան ըլլայ այնպէս, ինչպէս որ կեանքն է՝ ի բաց առեալ հակագեղարուեստական բաներէն, որոնցմէ պէտք է մաքրել բեմը:

Կայ եւ օդակէն դուրս ելնելու ուրիշ կերպ մը. այդ այն պարագան է, որ խաղարկութեան ընթացքին չէք գտնուիր օդակի մէջ, ձեր ջղերը եւ ուղեղը բաժան բաժան են այլեւայլ կողմերու մէջ՝ րոպէական ազդեցութեանց ենթակայ: Այդ հետեւանք է անշուշտ մկանաներու լարումին, որու մասին խօսեցանք մեր Ա. դասախօսութեան մէջ: Ուրեմն մնալու համար օդակի մէջ՝ դուք պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնէք մկանաներու լարումին եւս: Իհարկէ, ազատուիլ անկէ դժուար է, որուն համար պէտք է փորձութիւն, եւ ադոր համար մենք կը կատարենք փորձեր:

[Կատարուեցան փորձեր.

Ա. Այնպէս մը ընել, որ զանազան պատճառով ես ստիպուած ըլլամ ձեզ ձեռք տալ:

Բ. Գալ եւ աճապարանքով ինձ լուր մը յայտնել: <...>

Դ. Դասախօսութիւն

Մենք պէտք է խօսինք կապի մասին:

Յաճախ կը տեսնենք բեմի վրայ, որ դերասան մը կ'արտայայտուի ուժեղ կերպով եւ դիմացի դերասանը եւս կ'արտայայտուի նոյն ուժգնութեամբ: Յաճախ կը տեսնենք, որ դերասանը կ'արտասանէ եւ կը սպասէ պատասխանի,

այսինքն՝ րեփլիքին[28], եւ երբեմն կը պատահի, որ դիմացինը կը պատասխանէ, բայց մինչեւ իր պատասխանը ժամանակ մը կ'անցնի: Այդ դադարը կրնայ ըլլալ երկու պատճառով. կամ դերը չի գիտեր եւ կամ կը սպասէ, որ րեփլիքը տրուի բառացիօրէն: Օրինակ, դուք կ'ըսէք. «Վաղը պիտի գամ Ձեզ X տեղը տեսնելու՝ կարեւոր հարցի մը մասին խօսակցելու համար, խնդրեմ, ինծ սպասեցէք ժամը 2ին»: Րեփլիքը կը կազմէ ուրեմն՝ «ժամը 2ին»: Եթէ պատահի, որ դուք սխալ մը ըսէք՝ «ժամը 2ին, խնդրեմ, ինծ սպասեցէք», րեփլիքի փոփոխութիւնը կարող է շփոթեցնել եւ առաջ բերել ակնարկուած դադարը, եւ այդ կը նշանակէ, որ Ձեր դիմացինը չի խաղար, այլ միայն կ'արտասանէ: Մեր թատրոնը դէմ է այդ բանին: Մեր թատրոնը կ'ընդունի ընդհանուր կապը, որ պէտք է գոյութիւն ունենայ բեմի վրայ բոլոր դերասաններու մէջ: Երբ մէկը կը խաղայ խօսքերով, միւսները պէտք է խաղան լուռ, որպէսզի պահուի ընդհանուր կապը:

Երբ ես այժմ կը խօսիմ, դուք բոլորդ ինծ մտիկ կ'ընէք, բոլորդ ունիք այլազան դիրքեր, տարբեր ապրումներ, տարբեր տպաւորութիւններ: Ձեր մէջէն ոչ մէկը չի սպասեր եւ չգիտէ, թէ ես ինչպէս պիտի վերջացնեմ, եւ այդ շատ բնական է: Ուրեմն միեւնոյն բանը պէտք է փոխադրել եւ իրագործել բեմի վրայ, իւրաքանչիւրը պէտք է երեւան բերէ իր ապրումը եւ այդպիսով պէտք է ստեղծել ու պահպանել ընդհանուր կապը: Ամենամեծ սխալը կ'ըլլայ, երբ անխօս դերասանը ըսէ, թէ ես դեր չունիմ, այլ ընդհակառակը նա պէտք է խաղայ գլխաւոր դերասանի հետ միասին: Այս րոպէին, երբ ես կը խօսիմ, ուրիշ բան չէք ըներ, եթէ ոչ, կ'արտասանեմ երկար մոնոլոգներ եւ դուք ալ ձեր ունկնդրութեան ձեւով կը մասնակցիք ինծ, սա տեսակ մը բեմ է, խաղարկութիւն է ուրեմն, եւ երբ դուրսէն մէկը գայ եւ մեզ դիտէ, պիտի անպայման ըսէ. սքանչելի է անսամպլը:

Դարձեալ կը կրկնեմ. պէտք է պահպանուի կապը եւ երբ պատասխան տուող պէտք ըլլայ, այդ ոչ թէ անոր համար պիտի ըլլայ, որ պատասխան կայ գրուած, այլ անոր համար, որ ըսուած խօսքէն հասունացած է պատասխանը, իր լրումին հասած, որմէ յետոյ անպայման պէտք է յաջորդէ պատասխանը: Կայ [նաեւ] պառւզան՝ դիտումնաւոր լռութիւնը, որու մասին մենք կը խօսինք յետագայում:

Կապը սերտ առնչութիւն ունի օղակի հետ: Երբ կապը կտրուեցաւ, այդ կը նշանակէ օղակը եւս քանդուեցաւ, եւ պէտք է երեւակայել թէ ինչ խառնակութիւն առաջ կու գայ, երբ բեմի վրայ չորս դերասաններ չպահպանեն կապը: Այդ կը դառնայ ոչ թէ թատրոն, ոչ թէ կեանք, այլ տեսակ մը դատարանի նման բան, ուր ամէն ինչ միօրինակ, կաղապարուած եւ պարտադրիչ ճնշողականութիւն մը ունին:

Ամենափոքր դերերը, ունին իրենց ուսումնասիրութեան աղբիւրները, որոնք նոյնքան խորութիւն եւ աշխատանք կրնան պարունակել:

Մտնելով ոեւէ մեծ ճաշարանէ ներս, կը տեսնենք բազմաթիւ ծառայողներ, անոնցմէ իւրաքանչիւրը ունի իր բնորոշող որոշ գծերը՝ անոնց քալելը, անոնց գլուխ տալը, մատիտը բռնելը եւ այլն, ունին յատկանշող տարբերութիւններ: Իհարկէ, ընդհանուր գիծն է պաշտօնի գիտակցութիւնը, բայց կը տարբերուին արտայայտութիւնները, անոնց մէջ որոնք ամսականով են, եւ անոնց մէջ որոնք նուէրներով կը վարձատրուին: Ահաւասիկ, Ձեզի աղբիւրներ ուսումնասիրութեան:

Կապը ընդհանուր հանգամանք մը կը ներկայացնէ. ան գոյութիւն կ'ունենայ ոչ միայն դերասաններու մէջ, այլ շատ անգամ բեմէն դուրս գործողներու մէջ: Այսպէս, կապը կայ րեժիսէօրի[29] հետ, որուն միասնական որոնումներով դերասանը կու տայ իր ստեղծագործութեան տիպարը: Կապը կայ աքսէսուարի[30], էլեքտրական վարիչի եւ այլնի հետ: Կապ կայ հեղինակի, նկարիչի հետ:

Երբ դերասանները բեմի վրայ են, պէտք է պահեն կապը նոյնպէս լռութեան ժամանակ, նոյնպէս եւ երբ կոնակ են դարձուցած հասարակութեան, եւ շատ անգամ այդ աւելի դժուար է, որովհետեւ, երբ յանկարծ երեսը դարձուց, հասարակութեան սպասումը պէտք է ըլլայ, ոչ թէ նոր սկիզբ, այլ շարունակութիւնը, հակառակ պարագային առաջ կու գայ ծիծաղելի անբնականութիւն:

Կապը, որով նոյնքան կարեւոր հարց է, եւ թերեւս, աւելի, ինչքան մկաններու լարումը, գաղափարաց զուգորդութիւնը, օդակը եւ այլն: Որով ընդհանուր հիմքը մեր թատրոնին՝ կապերն են, որոնց անձնաւորութիւնն է դերասանը: Առանց ընդհանուր կապերու ներդաշնակութեան, կարելի չէ ի յայտ բերել ճշմարիտ գեղարուեստը, ինչքան ալ ըլլաք տաղանդաւոր:

Ե. Դասախօսութիւն

Մեր դասախօսութիւններու ընթացքին, մենք անցանք 4 պարագաներ, այժմ մենք կարող ենք կատարելապէս ծանօթ ըլլալ այդ պարագաներուն, բայց չենք կարող ոեւէ բան ընել, եթէ մեր մէջ չկայ այն, ինչ որ կը կոչուի Աստուածային հուր: Այս նախամուտէն յետոյ մենք կ'անցնինք շատ կարեւոր խնդրի մը, որը կը կոչուի դեր:

Ինչպէ՞ս կը պատրաստուի դերը:

Դերը կարելի է առնել, անգիր ընել, մի քիչ գաղափար կազմել քառաքթէռի մասին եւ խաղալ: Բայց այս կ'ըլլայ չափազանց թեթեւ վերաբերմունք եւ լի թերիներով:

Ուրեմն ի՞նչ պէտք է ընել: Մենք կը պատասխանենք հարցին այսպէս. դերասանը պարտաւոր է ծանօթանալ եթէ ոչ ամբողջ հեղինակին, գոնէ ամբողջ թատերախաղին, պէտք է ծանօթանայ այն բոլոր տիպարներուն հետ, որոնք գոյութիւն ունին փիէսին մէջ, եւ որոնց հետ իր դերը կապակցութիւն ունի, եւ նոյնիսկ պէտք է այնքան լաւ գիտնայ իր դիմացիններուն դերը, ինչքան իրենը:

Երբ կը վերցնենք թատերախաղը, ուրեմն մենք պէտք է գծենք հոն գտնուող երեւակայական կարմիր գիծ, որ կ'անցնի խաղին մէկ ծայրէն միւսը: Այսպէս, մենք կը պրպտենք, թէ ի՞նչ է հեղինակի գլխաւոր նպատակը, ի՞նչ միջավայր կայ հոն, ի՞նչ տիպարներ կը գործեն այդտեղ, ի՞նչ գիծեր ունին անոնք, ի՞նչ չափով առաջացած են վատ գիծերը, ի՞նչ ախտանք ունին անոնք եւ այլն:

Յետոյ մենք կը սկսինք շատ կարեւոր գործողութիւն մը, որը պէտք է անուանել՝ հարց-պատասխան: Օրինակ. - Դերի մէջ կայ տանջանքի տեսարան մը, որով դուք պէտք է տաք հարցը՝ ի՞նչ է պատճառը այդ տանջանքին, եւ պէտք է գտնէք պատասխան: Երբ դերը կը բաժնէք այդպէս հարցերու եւ կը փնտռէք ու կը գտնէք պատասխանները, այդ արդէն կը նշանակէ, թէ դուք սկսած էք հասկնալ ձեր դերը: Յաջողութեան համար, կը սկսի հոգեկան ուրիշ երեւոյթ մը, որ կը յաջորդէ որոշ ժամանակ յետոյ դերը ստեղծելէն: Այդ երե-

ւոյթը կ'անուանուի ստեղծագործական տանջանքներ կամ երկունք, առանց որուն չկան յաջողութիւններ: Դերասանը կը գտնուի տարօրինակ դրութեան մէջ, անոր շուրջ շատ անգամ կը դաղրին մարդիկ եւ իրեր գոյութիւն ունենալ, ան կ'ապրի իր դերին զանազան երեւոյթներուն մէջ, մոլեգնօրէն կը տարուի որոնումներով եւ հարցերու լուծումով: Ամենավտանգաւոր շրջանն է այդ, որովհետեւ ոգեւորութեան մէջ կը պատահիք մարդու մը, որ կը կարծէք, աւելի ճիշտ ձեր վառ երեւակայութիւնը կարծել կու տայ, քէ ան իսկական տիպարն է ձեր դերին, եւ այսպէսով կարող էք սխալի մէջ իյնալ: Որով պէտք է չափազանց զգոյշ ըլլալ ընտրողութեան մէջ:

Երկունքը կը կարօտի որոշ ժամանակի մը, որպէսզի իր արդիւնքը տայ եւ երբեմն կը պատահի, որ յանկարծական շարժում մը, կեցուածք մը, դիրք մը, կ'առնէ բանալիի հանգամանքը, որով կը բացէք դուք ձեր դերի բարդ հանգոյցը:

Ես Ձեզ կարող եմ տալ օրինակ մը, որ չափազանց նոր է եւ թարմ մեր յիշողութեան մէջ: Անցեալ օրը՝ Կիրակի, մենք կը ներկայացնէինք «Միմոս Արքայ» թատերախաղը, Պ. Ջանան ստանձնած էր գահաժառանգի դերը, որը կապ ունէր իմ եւ անոր հետ: Մենք միասին կը կատարէինք մեր որոնումները, եւ ամբողջ շաբաթը մենք չարչարուեցանք գտնելու համար դերին բանալին: Երկուքս ալ կ'ունենայինք ստեղծագործական տանջանքներ, եւ կ'ուշանար մեզ յաջողութիւնը: Կիրակի օրը, ներկայացման հազիւ քանի մը րոպէ մնացած, յանկարծ Պ. Ջանան եկաւ ինձ մօտ ըսելու, թէ ուսերու ցնցումը արդեօք լաւ չ'ըլլա՞ր: Անմիջապէս հաւանեցայ՝ երկունքը տուած էր իր արդիւնքը՝ գտած էինք բանալին: Այդ շարժումի վրայ նա կերտեց իր ամբողջ խաղարկութիւնը, շարժումները, ձայնը եւ այլն: Ուրեմն անհրաժեշտ էր, որ անցնէին որոշ օրեր, որպէսզի հարցը լուծուէր:

Ամենամեծ դերասանները, ինչպէս Տիկ. Սիրանոյշ եւ այլք, ունեցեր են այդ երկունքի ցաւերը: Մեծ հանճարներ միայն, ինչպէս Ադամեան, Սալվինի եւ այլն, ունեցեր են կարողութիւն արագ ստեղծագործումի, եւ նախքան դերի մէջ մտնելը ունեցեր են այդ երկունքը:

Երբ դերասանը դէպի ստեղծագործումը անտարբեր է եւ չի գտնուիր յուզուած դրութեան մէջ, որ մօտ է տեսակ մը կիսարբեալ վիճակի, նա չէ կարող լաւ խաղալ:

Ուրեմն դերասանը պէտք է իր դերի հանդէպ ունենայ երկիւղածութիւն, եւ մտնէ բեմ այնպէս, ինչպէս քրիստոնէական հին շրջաններուն քահանան կը մտնէր պատարագի, իր խուցին մէջ ապաշխարելով, եւ ջերմեռանդ վերացումով մը՝ մտնելով դէպի իր ծիսակատարութիւնը:

Դերասանի տրամադրութիւնը նման է բաժակի մը, ուր ջուրը կաթիլ առ կաթիլ կը լեցուի մէջը, եւ որոշ ժամանակ յետոյ լիանալով կը յորդի: Այդ յորդումի պահուն ահա, պէտք է մտնէ դերասանը բեմ: Դերասանը տրամադրուելու համար պէտք ունի արտաքին որոշ պայմաններու. իր մասնասեռեակի խորհրդաւոր լուսաւորութիւնը, տեսակ մը լռութիւնը եւ այլն կու գան հասունցնելու այդ տրամադրութիւնը, որ ունի իր տեւողութեան շրջանը: Պէտք չէ անցնիլ այդ շրջանը, եւ ճիշտ այդ պատճառով է, որ մեծ թատրոններուն մէջ, ուր կապերը շատ մը տեսակէտներով խզուած են հասարակութեան եւ բեմին հետ, դարձեալ կը հետապնդեն ճիշտ յայտարարուած ժամին ներկայացման գործադրութիւնը:

Դերասանները, դիտուած է, որ ունին կարգ մը աւելորդապաշտութիւններ: Աւելորդապաշտութիւնը կարեւոր գործօն մըն է խաղարկութեան մէջ: Այսպէս, օրինակ. կան դերասաններ, որ առանց խաչակնքումի բեմ չեն մտներ, ուրիշներ իրենց [քրիմ][31] չեն քսեր աջ ձեռքով եւ այլն, եւ այլն: Ինչքան շատ է այդ աւելորդապաշտութիւնը գրգռում, այնքան շատ է խաղարկութեան մէջ խանգարում յարաբերութեանը: Բայց պէտք է զգուշանալ այդ աւելորդապաշտութիւնը հասցնել մինչեւ հիւանդութիւն: Մոսկուայի թատրոնի յայտնի դերասան Իւանոֆը եղաւ այնպէս, որ ստանալով հիւանդագին վիճակ, այժմ չէ կարող խաղալ:

Մեր դասախօսութիւններու հետ միասին լաւ կ'ըլլար, որ մենք սկսէինք նաեւ փորձերը: Բայց այդ փորձերը ցանկալի էր, որ ըլլային ոչ թէ սովորական թատրոնական փորձերու նման, այլ այնպէս, ինչպէս որ Մոսկուայի աշխատարանի մէջ կը կատարուին: Դուք գիտէք, որ խաղացուած փիէս մը ունի որոշ հեղինակ մը, իսկ մեր փորձերու ընթացքին մենք պիտի աշխատինք, որ փիէսը ըլլայ հաւաքական աշխատանքի արտադրութիւն եւ արդիւնք մեր իսկ ստեղծագործութեան: Այդպէսով մենք կ'ըլլանք փիէսին կրկնակ ստեղծագործողները, եւ կրնանք ձեռք բերել աւելի շուտ բնականութիւն մեր խաղին մէջ:

Մոսկուայի մէջ այս փորձերը տուին զմայլելի արդիւնք: Աշխատանքին մասնակցեցաւ Մաքսիմ Կորքիի նման մեծ գրող <...>

Այստեղ եւս մենք Արուեստի Տան մէջ ունինք գրագէտներ, որոնք կը սրբագրեն մեր սխալները եւ ցանկալի է, որ մենք մեր առաջին ջանքերով կարողանայինք տալ թատերախաղ մը, շատ պարզ, բնական, հազիւ 15 վայրկեան տեւող, եւ մենք Արուեստի Տան առաջին հաւաքոյթին խաղայինք մեր ուժերով, մեզ համար: Եւ չէ՞ որ, այդպիսով մենք հասած պիտի ըլլայինք Թատրոնի բուն նպատակի իրագործման, որն է անվճար ներկայացում եւ հաւաքական ստեղծագործութիւն:

Զ. Դասախօսութիւն

Ամէն դեր ունի իր քառաքթէռը: Թատերախաղ մը ամբողջութեան մէջ ունենալով իր ուղղութիւնը, նոյն ատեն կը պարունակէ զանազան անձնաւորութիւններ, որոնց իւրաքանչիւրը ունի որոշ բնաւորութիւն: Բնաւորութիւններ կան, որոնք գաղտնի են: Իմ մասին, ով որ կը խօսի, կարող է ըսել եւ վերագրել զանազան բնաւորութիւններ, բայց դժուար է ըսել թէ ի՞նչ է իմ իսկական բնաւորութիւնը, քառաքթէրիսթիկը: Այսպէս. երեւութապէս Xը տեսնելով առատաձեռն, կ'եզրակացնենք, թէ նա բարի է, բայց ան կարող է չար լինել, նկատելով, որ այդ բոլորը ցոյցի եւ ռեքլամի[32] համար է, որ կ'ընէ: Եւ կամ Xը, որ միշտ կիներէ շրջապատուած է, կամ կնամեծար է, կը փութանք հետեւցնել, թէ կնամոլ է, այնինչ ընդհակառակը՝ կարող է շատ մաքուր մարդ լինել:

Հեղինակը գրած եւ ուղղակի մէջտեղ է դրած տիպարը, բայց ո՞րն է, որ տիպարի մէջ կը կազմէ գլխաւոր բնաւորութիւնը: Ահա՛ ինչ որ պէտք է փնտռել: Այդ կէտէն է, որ կը բղխի ամէն ինչ, որ մենք կ'անուանենք բեմական լեզուով, դերի միջուկը կամ հունտը:

Օթելլօն նախանձոտ է. ուրկէ՞ է, որ առաջ կու գայ իր նախանձը: Եթէ գտնենք, այն կը կազմէ հունտը, որը հեղինակի եւ այլ ցուցմունքներով պէտք է գտնենք եւ սկսինք ուռճացնել:

Առնենք ծիրանի հումտը եւ բանանք կորիզը. ո՞վ կարող է երեւակայել, որ այդ ահագին ծառը արդիւնք է այդ աննշան հումտին: Նոյն պարագան է դերի վերաբերմամբ. երբ դերասանը գտաւ դերի հումտը, այլեւս նա գիտութեամբ կը զարգացնէ դերի խառնուածքը:

Երբ դերասանը ստիպուած է նոյն տեսակ դերեր խաղալ սեզոնի[33] մէջ, նա պարտաւոր է մէկ ուրիշ բանի եւս ուշադրութիւն դարձնել: Այսպէս, բարկութիւնը կամ լացը, նոյն պարագաներով, տարբեր մարդոց վրայ կ'երեւայ տարբեր արտայայտութեամբ: Մէկը բարկանալով՝ փոթորիկ կը դառնայ, միւսը՝ հանդարտ կը գունատի, կամ կու լայ: Պէտք է օգտուիլ այլապէս նոյնքան տպաւորիչ այս այլազանութիւններէն, իսկ այդ այլազանութիւնները գտնելու համար՝ մեզ կը ծառայէ հումտը:

Ներկայ դարուս, իտէալ առողջութեան տէր մարդիկ շատ քիչ են: Ընդհակառակը, մեր շատ մը առողջ կարծած մարդոց սերունդին մէջ, ալքոլը, վեներական ախտերը, քոքայինը եւ այլն, սարսափելի արդիւնքներ են թողեր: Աւելին, սեռմիրաները, բարձր կրունկներ եւ այլն, տեղափոխելով աղջկայ կոնքը, սերունդի ուղեղի վրայ ազդեցութիւններ կ'ունենայ: Այսպէս, արտաքնապէս մեզ առողջ երեւցողը ունի փոքրիկ թերութիւններ, որոնք չեն խուսափիր խղճամիտ դերասանին ուսումնասիրութենէն:

Երբ մեզ յայտնի է դերի բնաւորութիւնը, պէտք չէ, որ զայն արտայայտենք մէկ անգամէն, այլ պէտք է զայն հասունցնենք, ուռճացնենք, տանք աւելոր փոխանցման շրջանները: Ինչպէս որ դերը ունի իր բարձրագոյն գագաթը, այնպէս ալ ունի իր ելեւէջը: Եթէ մէկ անգամէն նա կենայ բարձրագոյն գագաթի վրայ այդ կ'ըլլայ անբնական եւ ձանձրացուցիչ:

Ես ձեզ կ'ըսեմ երկու կարեւոր բան, որ միշտ պէտք է ի նկատ ունենալ: Թատրոնը, ինչքան որ կեանքի հայելին է, այնուամենայնիւ նա քիչ մը գեղեցիկ ցոյց տուող հայելի պէտք է ըլլայ: Իսկ ամենակատարեալ դերասանին յաջողութիւնը պէտք է կայանայ երեք վայրկեանին մէջ: Եթէ ան կարողացաւ ժողովուրդը յուզել եւ առիւքնել երեք վայրկեան, նա արդէն յաջողեցաւ: Ով որ շատ երեք վայրկեաններ ունի բեմի վրայ, նա է ամենամեծ դերասանը[34]:

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Մինչ այդ՝ 1924ին, Վահան Թոթովենցի հետ միասին Ջանանը բեմականացրել է Յակոբ Պարոնեանի *Մեծապատիւ Մուրացկանները*, 1929ին Երեւանի Բանուորական Շրջիկ Թատրոնում բեմադրել է երեխաների համար իր նոր գրած *«Բանուոր Քեռին Արեւելքից»* կատակերգութիւնը, իսկ 1931ին բեմականացրել է Գեղամ Սարեանի *«Այբ»* պատմուածքը: 1932ին վաստակաւոր դերասանուհի Արուս Ոսկանեանի համար Ջանանը գրել է *«Միրելն Արուեստ է»* պիէսը, որն երբեք չի խաղացուել: 1935ին գրել է *«Շահնամէ»* պիէսը, որ խորհրդային պիէսների համամիութենական մրցոյթում շահել է Բ. մրցանակ եւ բեմադրուել Երեւանում, թարգմանուել ռուսերէն...: Բացի այդ, եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան Եւ Արուեստի Թանգարանում (ԳԱԹ) պահւում են նրա գրչին պատկանող բազմաթիւ անտիպ յօդուածներ եւ գրառումներ:

[2] ԳԱԹ, Սկրտիչ Ջանանի Ֆոնդ (այսուհետեւ՝ ԳԱԹ ՍՋՖ), թիւ 54:

[3] Ջանանի ինքնակենսագրութեան մէջ կարդում ենք. «1918ին, *պատերազմից յետոյ, մէկն է լինում* (խօսքն իր մասին է - Գ. Օ.) *Պոլսոյ Հայ Տրամաթիկ Ընկերութեան հիմնադիրներից։ Այդ թատերախմբում լինում է և՛ դերասան, և՛ ռեժիսոր, եւ ամե-*

Նայն ինչ։ Խաղում է առաջնակարգ մի չարք դերեր եւ յանկարծ հռչակւում եւ մեծ ժողովրդականութիւն վայելում։ Զգալով իր մէջ կատարելագործուելու մեծ պահանջ, 1919 թուի վերջերին մեկնում է Փարիզ՝ սովորելու...1921ին վերադառնում է Պոլիս, մասնակցում Հայ Տրամաթիկ Ընկերութեան մի քանի ներկայացումներին» (ԳԱԹ ՄՋԲ, թիւ 54):

[4] Ռուսական արուեստի, մասնաւորապէս թատերարուեստի վերաբերեալ, Ջանանն անշուշտ կարող էր գաղափար կազմել ոչ միայն տեսականօրէն՝ գրականութիւնից ու պատմութիւնից, այլեւ գործնականում՝ իրրեւ ականատեսը ֆրանսիական թատրոնի այն ստեղծագործական որոնումներին, որոնք շատ համահունչ էին դարասկզբի ռուսական բեմարուեստում դիտուող նորորակ երեւոյթներին: Ֆրանսիայի ժամանակակից արուեստագէտների միջավայրին մօտ կանգնած լինելով՝ նա, իհարկէ, տեղեակ էր, թէ ինչպիսի ակնածանքով են վերաբերւում ոչ միայն ռուս բեմի ականաւոր վարպետներին՝ Ստանիսլաւսկուն, Մէյէրխոլդին, Վախտանգովին, Կոմիսարժեւսկայային, այլեւ ռուս գրականութեան մեծութիւններին՝ յատկապէս Դոստոեւսկուն ու Չեխովին: Այդ մասին բազմիցս են խոստովանել եւ Ֆիրմէն Ժեմիէն, եւ Ժաք Կոպօն: Սակայն առանձնակի շեշտադրումով ռուսական խաղարուեստի նորամուծութիւններն ի յայտ եկան ֆրանսահայ նշանաւոր բեմադրիչ Ժորժ Փիքոեւի (1884-1957) արուեստում, որին նոյնպէս Ջանանն առիթ է ունեցել մօտիկից ծանօթանալու: Այսպէս. Շիրվանզադէի գրական գործունէութեան քառասնամեակը նշելու կապակցութեամբ, Փարիզի հայ մտաւորականութիւնը նախաձեռնել է անցկացնել յոբելեանական հանդիսութիւն. *«Կազմ-յանձնաժողովի մէջ մտել են Թուրքիայի արտաքին գործերի նախկին մինիստր Գաբրիէլ Նորատունկեանը, ծագումով հայ՝ ռեժիսոր Ժորժ Փիքոեւը, գրողներ Լ. Բաշալեանը, Տ. Կամսարականը եւ մի քանի այլ դէմքեր։ 1921 թ. Մայիսի 15ին «Փարիզահայ երիտասարդ ուժերու կողմէ» եւ «Մ. Ջանանի ղեկավարութեամբ» ներկայացուել է «Պատուի Համարը»* (Գառնիկ Ստեփանեան, *Ակնարկներ Սփիւռքահայ Թատրոնի Պատմութեան, Հտր. I, Ֆրանսահայ Թատրոն*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1982, էջ 38):

[5] Շահխաթունու մասին մանրամասն տե՛ս՝ Արծուի Բախչինեան, *Հայերը Համաշխարհային Կինոյում*, Երեւան, Գրականութեան Եւ Արուեստի Թանգարանի Հրատ., 2004, էջ 353-365:

[6] ԳԱԹ ՄՋԲ, թիւ 54:

[7] Տե՛ս՝ Բ. Յարութիւնեան, *XIX-XX Դարերի Հայ Թատրոնի Տարեգրութիւն (1801-1922), Հտր. Բ.*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1981, էջ 552:

[8] Այստեղ տարակուսանք է առաջացնում ժամանակագրական անճշտութիւնը: Ինչպէս նշեցինք, Կրէգի այդ բեմադրութիւնը հանդիսականի դատին է ներկայացուել 1911ի Դեկտեմբերի 23ին, երբ Շահխաթունին Ռուսաստանի մայրաքաղաք դեռեւս ոտք չէր էլ դրել: Հաւանաբար, այս յիշարժան դրուագի մասին նա պարզապէս լսել է 1912ին՝ մոսկովեան ընկերների միջավայրում, կամ էլ՝ 1913ին, երբ արդէն Գեղարուեստական Թատրոնի Ստուդիայի սան էր:

[9] Konstantin S. Stanislavski, *Rabota Aktera Nad Soboy* (Դերասանի ինքնաշխատութիւնը), Հտր. 2, Մոսկուա, «Իսկուսստվո», 1954, էջ 407:

[10] Խօսքն Հայաստանի Առաջին Պետական Թատրոնի մասին է, որը 1937ին՝ 15ամեակի առթիւ կոչուեց Գաբրիէլ Սունդուկեանի Անուան Պետական Թատրոն:

[11] Մոլիէրի *Դոն Ժուան* պիէսում գործող անձերից մէկը:

[12] Սարգիս Մելիքսէթեան, «Իբրեւ Հիմնադրման Ականատես», *Սովետական Արուեստ* 1962, N 6, էջ 10:

[13] Stanislavski, էջ 96, 131, 212, 249:

[14] Վահրամ Փափազեան, *Յետադարձ Հայեացք, Հտր. I*, Երեւան, *Հայպետհրատ*, 1956, էջ 193:

[15] «Ադամեանի առասպելի գոհերի»՝ Մատթէոս Աղայեանի (1861-1932), Նիկողայոս Յովհաննիսեանի (1876-1918), Կարապետ Գալֆայեանի (1877-1945) մասին մանրամասն տե՛ս՝ Հենրիկ Յովհաննիսեան, *Հայ Թատրոնի Պատմութիւն. ԺԹ. Դար*, Երեւան, «Նայիրի» Հրատ., 1996, էջ 510-518:

[16] ԳԱԹ ՄՋՖ, թիւ 54:

[17] Դենի Դիդրօ, *Պարադոքս Դերասանի Մասին*, Երեւան, «Սարգիս Խաչենց» Հրատ., 1992, էջ 182:

[18] Սոմըրսէթ Մոամ, *Թատրոն*, թարգմ. Ջ. Յովհաննիսեան, Երեւան, «Հայաստան», Հրատ., 1985, էջ 233:

[19] Նոթագիտութիւն:

[20] Ներդաշնակութիւն:

[21] Schola, gimnassium՝ դպրանոց, դպրոցատուն. այստեղ ուսումնական ուղղութիւն իմաստով գործածուած:

[22] Character՝ բնաւորութիւն. մարդու հոգեբանական առանձնայատկութիւնները, որոնք արտայայտւում են նրա արարքներում, վարքագծում:

[23] Emploi՝ *յարմարեցում*. դերատեսակ, որեւէ դերասանի բեմական տուեալներին սազող համաբնոյթ դերերի շարք (այս կամ այն *ամպլուային* պատկանող դերեր), ինչպէս նաեւ դերասանի մասնագիտացումը համաբնոյթ դերերում (այս կամ այն *ամպլուային* պատկանող դերասան):

[24] Հեղինակները նկատի ունեն Եւրոպայում յայտնի մի վաճառատուն, որն իր գրասենեակն է ունեցել նաեւ Կ. Պոլսում եւ ճանաչուած է եղել հասարակութեանը տրամադրուող ապրանքների բազմազանութեամբ:

[25] Երեւակայութիւն:

[26] Պէտք է լինի Սուլերժիցքի: Նա բեմադրիչ էր, ոչ հոգեբան:

[27] Ovatio՝ ցնծութիւն, բուռն ծափահարութիւններ, որոնք ուղեկցւում են ուրախ բացականչութիւններով:

[28] Բեմական երկխօսութեան կարեւորագոյն տարրը՝ դարձուածք, խօսք, որ դերակատարն ասում է ի պատասխան խաղընկերոջ խօսքի:

[29] Régisseur՝ բեմադրիչ:

[30] Accessoire՝ թատերական բեմադրութեան մէջ օգտագործուող իրերը:

[31] Շպար:

[32] Գովազդ:

[33] Թատերաշրջան:

[34] ԳԱԹ, N 54 (բնագրում բոլոր ընդգծումները պատկանում են հեղինակներին):

THE FIRST ARMENIAN HANDBOOK OF LEARNING SKILLS FOR ACTORS
(Summary)

GRIGOR ORDOYAN
gregor6712@rambler.ru

Early twentieth century Armenian theater activist Megerditch Djanan (1892-1938) had a significant input to Armenian theater, not only as a talented actor and playwright, but also through his theoretical contribution and studies of the art of the stage.

The author singles out one such study and analyses its structure and content.

The study is written to highlight the basics of the art of acting and is co-authored by Arshavir Shahkhatuni. It was written in 1922 in Constantinople, where they had become the central figures of the theater group of *Hay Dramatic Enkerutiun*. Their work still raises interest as they tried to convey in a very simple and brief way the basic principles which the actor needs to start his/her performing career.

Both authors had received a professional education. Shahkhatuni had studied in Moscow and Djanan in Paris, and they tried to integrate the early 20th century Russian and European styles of acting. They believed such an integration would put Armenian theater on a different level qualitatively and help in initiating a new acting style.

ԶԱՊԷԼ ՊՕՅԱՃԵԱՆ. ՆԱՄԱԿՆԵՐ

ՄԵԼԱՆԻԱ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

«...Հայ արուեստագէտներու շարքին մէջ կը գտնենք կարգ մը փայլուն անուններ, որպէս են Այվազովսքի, Էտկար Շահին, Վարդան Մախոխեան, Թէրլէմեզեան եւն., որոնք կրցած են եւրոպական վարպետներու համաստեղութեան մէջ ուրոյն տեղ գրաւել. բայց՝ որքան որ մեզի ծանօթ է՝ գեղեցիկ սեռէն գեղարուեստի հետեւող եւ եւրոպական հրապարակի վրայ անուն շահող միայն մէկը ունինք, որ է օր[դ.] Զապէլ Գ. Պօյաճեան:

...Դէմք մըն է Զապէլ Պօյաճեան, զոր ամէն հայ ճանչնալու է, եւ ճանչնալով՝ անով հպարտ զգալու է:

Բազմակողմանի կարողութիւններով օժտուած անձնաւորութիւն մըն է ան: Նոյն ատեն նկարիչ է, գրագէտ է, բանաստեղծ է, խոր բազմին ուսանող եւ իմաստասէր»[1]:

Ահա այս եւ չատ ուրիշ գովասանքներով էր ժամանակի մամուլը գնահատում այս ճանաչուած հայուհուն՝ Զապէլ Պօյաճեանին (1872-1957), որն իր գործունէութեամբ հաստատել էր մի կարծիք-գնահատանք իր մասին՝ «գէթ ներկայ ժամանակիս մէջ իրրեւ գրագիտուհի անոր զոյգը չունինք մեր մէջ»[2]: Թերեւս այսօր էլ անդրադառնալով անգլիահայ գաղութի պատմութեանը՝ կարող ենք կրկնել եւ վերստին հաստատել վերը նշուած գնահատականը: Զապէլ Պօյաճեանը 1890ականների վերջից մինչեւ Ի. դարի կէսը Լոնդոնի հայ համայնքում աչքի ընկած փայլուն մտաւորական էր՝ իր ազգային-մշակութային գործունէութեամբ, գեղանկարչական, գրական, թարգմանչական բազում յաջողութիւններով, որը մինչեւ իր կեանքի վերջը մնաց կապուած, սրտցաւ եւ աջակից հայոց դատին ու աշխարհին:

Զապէլ (ծնեալ Իզաբէլ) Պօյաճեանը ծնուել է 1872ին Դիարբեքիր քաղաքում: Հայրը՝ Թովմաս Պօյաճեանը, պատուաւոր մի անձնաւորութիւն էր, որը երկար տարիներ, մինչեւ իր մահը՝ 1895, վարել է անգլիական հիւպատոսի պաշտօնը: Մայրը՝ Քեթրին Պօյաճեանը (ծն. Ռոջըրզ, մահացել է 1923ին), անգլուհի էր, սերում էր բանաստեղծ Սեմուըլ Ռոջըրզի գերդաստանից: Նա կարճ ժամանակում տիրապետում է հայերէնին եւ սահուն հայերէն է խօսել ու կարդացել:

Մնողների ջանքերի չնորհիւ Զապէլը ձեռք է բերել լեզուագիտական հարուստ պաշար, որի հիմքի վրայ տարիներ անց հիանալի տիրապետում է մի քանի լեզուների: 1895ին սկսուել է Հայոց Ցեղասպանութեան առաջին հանգրուանը: Սպանուել է Զապէլի հայրը: Մայրը որդու եւ դստեր հետ, իրենց հովանու տակ վերցնելով հինգ հայերի՝ իրրեւ ծառաներ, բազում չարչարանքների գնով փախել է Թուրքիայից ու հասել Անգլիա: 1896ի վերջերին 24ամեայ Զապէլը հաստատուել է Լոնդոնում մօր եւ եղբօր հետ: Այստեղ արդէն ձեւաւորուած էր հայկական համայնքը, որն աշխոյժ կեանքով էր ապրում: Այդ գոր-

ծում յատկապէս նշանակալից էր մեծ վիպասան Րաֆֆու ընտանիքի՝ կնոջ եւ երկու զաւակների դերը։ 1898ին վերջիններիս ջանքերով հիմնուել է «Լոնդոնի Հայ Գործաւորների եւ Ուսանողների Միութիւն»ը, որը համախմբել է Անգլիայի մայրաքաղաքում ապաստան գտած տարբեր խաւերի մօտ 400 հայերի։ Այդ տարիներից ի վեր Զապէլ Պօյաճեանի ընտանիքը եւ յատկապէս հայասէր հայուհին բարեկամական բազում թելերով կապուում է Րաֆֆու ընտանիքի հետ[3]։

Սոյն հրապարակմամբ առաջին անգամ լոյս են ընծայւում Երեւանի Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի պահոցներում գտնուող Զապէլ Պօյաճեանից 17 նամակ։ Դրանք գրուել են 1914-1954ի ընթացքում եւ հասցէագրուած են բանասէր, արուեստաբան Գարեգին Լեւոնեանին (1872-1947), բանասէր Արշակ Զօպանեանին (1872-1954), բանաստեղծ Աւետիք Իսահակեանին (1875-1957), բանասէր, թարգմանիչ, մշակութային գործիչ Միհրդատ Թիրեաքեանին (1885-1979) եւ գրող, մշակութային գործիչ Լեւոն Մեսրոպին (1880-1960)։ Հրապարակում ենք նաեւ երկու լուսանկար՝ Պօյաճեանի դիմանկարը եւ մի խմբանկար՝ Պօյաճեանը Րաֆֆու ընտանիքի հետ։

Հրապարակուող նամակներն ու նրանց լուսաբանող ծանօթագրութիւնները վկայում են այն բազմաբնոյթ հայանպաստ գործունէութեան մասին, որ մինչեւ կեանքի վերջը վարել է անգլիահայ գրագիտուհին։ Նամակները պատմում են նրա կեանքի, ցուցահանդէսների, հրատարակած գրքերի եւ յօդուածների, քաղաքական հայեացքների մասին։ Մենք այդ էջերից տեսնում ենք աշխոյժ, գործունեայ, առողջ մտքի եւ զգայուն արուեստագէտի գեղեցիկ կերպար։ Հրապարակուող նամակների արժէքը բազմապատկուում է յատկապէս Րաֆֆու ընտանիքի կեանքին առնչուող թանկագին վաւերագրերով եւ վկայութիւններով։

Նամակներից մի քանիսը ներկայացուած են որոշ կրճատումներով՝ յատկապէս նամակագրի կենսագրութեանը վերաբերող կրկնութիւններից խուսափելու համար։ Հեղինակային ընդգծումները թողել ենք անփոփոխ, կատարել ենք կէտադրական եւ ուղղագրական չտկումներ. ծանօթագրութիւնները կազմել եւ օտար բառերն ու արտայայտութիւնները թարգմանել է բանասիրական գիտութիւնների թեկնածու Արծուի Բախչինեանը։ Ծանօթագրուել են անձնանունները (բացառութեամբ մի քանիսի, որոնց ինքնութիւնը չի յաջողուել ճշտել), աշխարհագրական անունները չեն ծանօթագրուել։

Ա. Գարեգին Լեւոնեանին[4]

Ա.

St. Johns Wood
London N. W.
Փետր. 6. 1914

Յարգելի Պրն. Լեւոնեան,

Ձեր Moscov-էն գրած քարտը ուրախութեամբ ստացայ, եւ կը սպասեմ մինչեւ Tiflis վերադարձած լինէիք պատասխանելէ առաջ։

Ուրախ եմ, որ այնքան հետաքրքիր եւ յաջող ճանապարհորդութիւն ունեցաք, մեզ համար մեծ հաճոյք էր Ձեզ նման գեղարուեստ սիրող եւ գնահատող

հայ խմբագրի մը հետ ծանօթանալ եւ միշտ ուրախութեամբ պիտի յիշեմ միասին անցուած ժամերը:

Ձեր պատկերը, որ վայրկենական արագութեամբ նկարել փորձեցի, ստորագրեցի եւ կ'ուղարկենք Ձեզ իբրեւ յիշատակ: Իսկ ինչ որ խօսեցանք Oscar Wilde-ին[5] մէկ թարգմանութիւն ունենալու մասին, եթէ կը փափաքիք՝ այն ալ կ'ընեմ, թէեւ իմ հայերէնս շատ թերի է:

Դուք ուզեցիք նաեւ իմանալ այդ block-ներուն[6] մասին, որ գերմանական հանդէս մը շինած էր իմ նկարածս մէկ պատկերէն՝ «Հայ Պարուհին Կրակի Լոյսով»: Գրեցի հանդէսին եւ ստացածս պատասխանը Ձեզի կ'ուղարկեմ, որ տեսնէք պայմանները:

Հիմա մի ուրիշ հանդէսի համար կ'ուզեն հրատարակել «Մայր Հայաստանի» պատկերը, իսկ չեն կարող գունաւոր block շինելու ծախս ընել: Կը հարցնեն, թէ արդեօք «Գեղարուեստի»[7] համար գործածելու պայմանաւ ծախսին մէկ մասը դուք կ'անէի՞ք: Բայց ասոր նկատմամբ կը կարծեմ, թէ իրենք Ձեզի կը գրեն, եթէ մի բան որոշեն:

Ձերդ յարգանօք՝ Զ. Կ. Պօյաճեան

Բ.

33 Marlborogh Hill
St. Johns Wood
London N. W.
Մայիս 10, 1914

Յարգելի Պրն. Լեւոնեան,

Ձեր նամակը ասկէ բաւական ժամանակ առաջ ստացած եմ, բայց մէկ կամ ուրիշ պատճառաւ պատասխանել ուշացուցի: Գիտէք, թէ Լօնտօնի կեանքը ինչ է, շարունակ գործ, շարժում եւ աղմուկ, այնպէս որ շատ անգամ մարդիկ իրենց ընել փափաքածը չեն կարող ժամանակին ընել:

Շատ ուրախացայ՝ լսելով, թէ Ձեր ճանապարհորդութենէն գոհ մնացիք, աշխարհը տեսնելը միշտ հետաքրքիր փորձառութիւն է խորհող մարդուն համար, մանաւանդ Ձեզի պէս գեղարուեստով զբաղուած մէկին համար:

Մենք շատ անգամ կը յիշենք միասին անցուցած ժամանակները, որոնք շատ կարճ եղան: Երանի թէ իրաւ կարենայի Կովկաս գալ այս ամառ, այնքան մեծ փափաք ունիմ մանաւանդ Էջմիածին, Անի եւ ուրիշ հին հայկական կեդրոններ տեսնել, բայց այլեւայլ պատճառներու համար յոյս չունիմ այս մօտերս գալ, թէեւ մի օր անպատճառ կը տեսնեմ[8]: Եղբայրս[9] Հնդկաստան վերադարձաւ, երթալէն առաջ նշանուեցաւ մի անգլիացի օրիորդի հետ, որ աշունը Հնդկաստան կ'երթայ եւ այնտեղ կը պսակուին: Երթալէն առաջ չսպասկուեցաւ, որպէսզի այնտեղի տաք օդին մէջ չտանի օրիորդը ուղղակի անգլիական ձմեռէն, թէեւ ուրիշ անգամ Հնդկաստան եղած է եւ արդէն վարժ է այն տեղի կլիմային:

Ձեր պատկերը, որ նկարեցի առանց ուրիշ որեւէ բան աւելացնելով, տուի պարոն Գալստեանին, որ Ձեզի ուղարկէ: Երանի թէ աւելի լաւ բան մը լինէր, բայց մէկ ժամէն եղածը այնքան կը լինի:

Պարոն Գալստեանը Ձեր վրայով շատ անգամ կը խօսի, եւ Ձեզ պէտք է որ գրէ, բայց կը կարծեմ, թէ նամակագրութեան շատ քիչ ժամանակ ունի, որովհետեւ դասերուն հետ շատ զբաղուած է եւ քննութիւններուն համար կը պատրաստուի: British Museum[10]-ի պատկերները դեռ չլուսանկարեց, թէեւ

շատ անգամ կ'ըսէ թէ պիտի ընէ այս շաբաթ կամ գալ շաբաթ: Oscar Wilde-էն մի քանի էջ պիտի թարգմանենք Ձեզի համար, գեղարուեստի նկատմամբ շատ հետաքրքիր գրութիւններ են, որոնց վրայով արդէն խօսեցանք ձեր հոս եղած ատենը:

Ձեզմէ խնդիրք մը ունիմ. արդեօք կարող էք ինծի մի լուսանկար ուղարկել այն պատկերին, որ չեմ գիտեր ո՞ր հին հայկական եկեղեցիի մէջ գտնուած է, եւ հայերէն թերթերը վերջերս գրեցին, թէ Leonardo da Vinci-ին[11] նկարը կը կարծուի[12]: Պրն. Արամ Րաֆֆին[13] Da Vinci-ի կենսագրութիւնները զգուշութեամբ քննելով համոզուած է, թէ Հայաստան եկած ըլլալու է, թէեւ այդ մասին մինչեւ իսկ վերջնական ապացոյց չկայ: Հոս մէկ բարեկամուհի ունիմ, որուն հայրը, Jean Paul Richter,[14] միջնադարեան իտալական գեղարուեստի նկատմամբ ամենայայտնի critic-ներէն[15] մին է, եւ Da Vinci-ի մասին գրած ամէնէն կարեւոր գիրքերէն մէկին հեղինակը: Այս գիրքին մէջ հրատարակուած են Da Vinci-ի նամակները, ոմանք որպէս թէ Հայաստանէն գրուած, եւ մէկ գծագրութիւն կայ, որ հեղինակը կը կոչէ «Երեք Հայկական Գլուխներ»[16] եւ իրաւ ճիշտ հայկական տիպարներ են, վերջին աստիճան հետաքրքիր է, եւ եթէ ուզէք գիրքէն որեւէ բան արտատպել «Գեղարուեստ»-ին մէջ, ես ուրախութեամբ արտօնութիւն կ'առնեմ Ձեզ համար, լուսանկարը կ'ուզեմ որպէսզի Richter-ին ցոյց տամ եւ իր գաղափարը գիտնամ:

Աւելորդ է ըսել որ եթէ որեւէ կերպով կարող եմ Ձեզի օգնել Լօնտօն լինելով՝ մեծ ուրախութեամբ կ'ընեմ:

Ձերդ յարգանօք
Զապէլ Կ. Պօյաճեան

Բ. Արշակ Չօպանեանին[17]

Գ.

33 Marlborogh Hill
St. Johns Wood
London N. W.
Oct. 5. 1916

Յարգելի Պրն. Չօպանեան.

Ձեր նամակը ասկէ մի քանի օր առաջ ստացայ: Շատ ուրախ եմ, որ Փարիզի տիկինները յանձն առած են հայ կանանց արուեստներուն համար ցուցահանդէս մը սարքել: Չէք ըսեր, թէ այդ ցուցահանդէսը ո՞ր թուականին տեղի կ'ունենայ, իսկ երբ իմացնէք, կը տեսնեմ, թէ ինչով կարող եմ օգնել: Դժբախտաբար ես միայն մէկ երկու կտոր ստեղծագործութիւն ունիմ ինձ մօտ. հին, գունաւոր օձուներէն[18], որոնք մեր նոր «լուսաւորուած» գործողները հիմա հին կամ անճաշակ բան կը նկատեն, եւ իրենց «եւրոպականացած» ճաշակով միայն սպիտակ dentelle-ներ[19] կը շինեն ասեղով: Ես շատ կը փափաքիմ այդ օձուները վերակենդանացնել, որովհետեւ հիանալի գործ եւ ճաշակ է եւ շատ original[20], բայց արդէն գրեթէ մոռցուած է: Այստեղ ես Մայիսին սարքեցի փոքրիկ հայկական exposition[21] մը, եւ շատ գնահատուեցան օձուները: Նոյեմբերի 23-ին, 24-ին դարձեալ պիտի սարքեմ, Women's Freedom League-ի[22] bazaar-ին[23] հետ:

Տիկին Րաֆֆին[24] շատ գեղեցիկ ասեղնագործութիւններ ունի, բայց այնքան հին եւ բանկագին են, որ չ[ի] սիրեր փոխ տալ: Եթէ կ'ուզէք, փորձեցէք ուղղակի իրեն գրեցէք եւ հարցուցէք: Եթէ նկարներ ալ կ'ուզէք ցոյց տալ, ես

ունիմ Փարիզի մէջ չորս հատ aquarelle-ներ[25], Նորվեկիոյ եւ Japonie-ի[26] տեսարաններ, որոնք Փարիզ գացած էին exposition-ի մը համար ճիշտ պատերազմին սկսելէն առաջ, եւ այնտեղ մնացին: Կարող եմ գրել, որ Ձեզի ուղարկեն: Իսկ հայկական զարդանկար միայն գիրքիս պատկերները ունիմ, որոնց decoration-ներու[27] motif-ներէն[28] շատերը Ձեր «Հայ էջերին»[29] մէջ տրուած պատկերներէն յարմարացուցած եմ: Այս պատկերները "Fine Art Society's Gallery"-ներուն[30] մէջ պիտի ցուցադրուին, երբ գիրքը լոյս տեսնէ, իսկ գիրքէն մէկ օրինակ կարող եմ ուղարկել ձեզի, որմէ, եթէ փափաքող լինի, կարելի է commande[31] ընել:

Գիրքին[32] հրատարակութիւնը բաւական բանկ եղաւ, իսկ ծախսերը գոցուելէն վերջը բոլոր հասոյթը հայ կարօտեալներուն պիտի նուիրուի, "Lord Mayor's Fund For Armenian Refugees"-ի միջոցաւ: 750 օրինակ տպուած է 21 շիլինկ գնով, եւ շատ ուրախ կ'ըլլամ, եթէ կարողանաք Գաղղիայի մէջ որեւէ հետաքրքրութիւն շարժել այս մասին: Արդէն Lord Bryce-ը[33] գրած յառաջաբանին մէջ կ'ըսէ, թէ «Անգլիացիներ եւ Գաղղիացիներ» պէտք է հետաքրքրուին: Գրքին նպատակը նախ բարոյական է, քան ողորմական. այսինքն՝ հայերը ծանօթացնել իրրեւ հին ժամանակներէ ի վեր զարգացում եւ գրականութիւն ունեցող ազգ մը: Գիտեմ, որ այս Ձեր ալ նպատակը եղած է միշտ, այնպէս որ վստահ եմ, թէ պիտի ընդունիք տեսակէտս: Հայոց հին եւ նոր գրականութեան որքան ճոխ ըլլալը մարդ միայն այն ժամանակ կ'իմանայ, երբ սկսի այսպէս գործ մը ձեռնարկել: Եւ որովհետեւ ուզեցի գիրքիս աւելի classique[34] երեւոյթ մը տալ, աւելի տեղ տուի հին գրողներուն եւ ժողովրդական երգերուն: Պարոն Արամ Րաֆֆին գրած է յաւելուած մը[35] "Armenia: Its Epics and Medieval Poetry"[36], յիշելով, որ նոր բանաստեղծութիւնը այնքան մեծ է, որ առանձին գործ մը յատկացնելու է անոր: Ժամանակակից նորերէն հազիւ կարողացայ մէկ-մէկ կտոր դնել՝ ի բացառեալ Իսահակեանը, որ հայ գիտական պատկերներ տալուն համար երկու-երեք հատ դրի: Գիրքը ներկայացուցիչ չէ, գեղարուեստական է միայն, եւ մասնաւորապէս հետաքրքիր բաներ ուզեցի, որ պարունակէ, ոչ թէ նմոյշներ: Ձեր «երջանկութիւնը» ընտրեցի եւ թարգմանութիւնը կը ներփակեմ: Հայաստանի վրայ Ձեր գրած հիանալի ոտանաւորն ալ թարգմաներ եմ, որ կը յուսամ, թէ ուրիշ հատորի մը մէջ պիտի մտնէ:

Ձերդ Զ. Պօյաճեան

Գ.

33 Marlborogh Hill
St. Johns Wood
London N. W.
Oct.16. 1916

Յարգելի պարոն Չօպանեան,

Ձեր վերջի նամակը ստացած եմ, եւ այս երկտողը կը գրեմ՝ ըսելու, որ կը ցաւիմ՝ գիրքը արդէն տպուած եւ այս շաբաթ լոյս տեսնելու վրայ ըլլալով, անհնարին է, որ ձեր առաջարկին պէս «Հայաստանի Օրօրը» դնեմ, փոխանակ «Երջանկութիւնը»: Սկիզբէն «Երջանկութիւնը»[37] ընտրեցի, որովհետեւ փափաքեցայ մեր ժամանակակից հայ բանաստեղծները ներկայացնել իրրեւ ամէն նիւթով հետաքրքրեալ եւ ոչ թէ միայն ազգային: Ինչպէս որ ըսի, այս գիրքը հայ բանաստեղծները ծանօթացնելու pretension-ներ[38] չունի, որովհետեւ

արդէն անկարելի էր այդ ընել՝ մէկ-մէկ փոքրիկ նմոյշներ տալով եւ շատեր երբէք չյիշելով: Նպատակն է ընդհանուր հայութեան ոգին եւ mentalité-ն[39] ցոյց տալ՝ գեղեցիկ գրութիւններու ընտրութիւն մը ցոյց տալով: Արդէն յառաջաբանին մէջ բացատրեր եմ, թէ գիրքը ներկայացուցիչ չէ հայ բանաստեղծութեան: «Օրօրն»[40] ալ արդէն թարգմաներ եմ անգլիերէնի եւ վստահ եմ որ շատ չանցած ուրիշ առիթ մը կ'ունենանք հրատարակելու:

Ձերդ յարգանօք
Զապէլ Կ. Պօյաճեան

Ե.

Hotel de Londres
Venezia,
Հոկ. 24. 1923

Յարգելի պարոն Չօպանեան,

Չեմ իմանում, թէ ինչ պիտի մտածէք իմ վրայ՝ այսքան ուշացնելուս համար Ձեզի գրելս: Ձեր գեղեցիկ հրատարակութիւնը ասկէ չորս ամիսի չափ առաջ ձեռքս հասաւ, եւ անմիջապէս պիտի գրէի՝ շնորհակալութիւնս յայտնելու, բայց մեծ դժբախտութիւն մը ունեցայ, սիրելի մայրիկիս ճիշտ այն օրերը կորսնցուցի, եւ այլեւս ամէն բան յետաձգուեցաւ: Երեք ամիսէ ի վեր ճամբորդութեան մէջ եմ բարեկամուհիի մը հետ, բայց Ձեր հասցէն չունենալով՝ չկարողացայ գրել մինչեւ այստեղ եկայ եւ վարդապետներէն խնդրեցի: Ուրեմն կը խնդրեմ որ ներէք այսքան երկար լռութեանս:

Ձեր գիրքը[41] մեծ հետաքրքրութեամբ թերթեցի եւ աւելի երկար ուշադրութեամբ պիտի ուսումնասիրեմ, երբ Լօնտօն վերադառնամ: Մեծ ծառայութիւն է հայ ազգին մեր գրականութիւնը այսպէս ծանօթացնել օտարներուն: Ես ինքս այնքան քիչ գիտեմ, որ մեծ բան մը չեմ կարող անել, հրատարակածս ալ Արամ Րաֆֆիի օգնութեամբ էր, որովհետեւ մինչեւ անգամ այդքանը ես առանձին չեմ կարող գտնել եւ ձեռք բերել: Լօնտօնի մէջ հայկական կեանքէն բոլորովին կտրուած կ'ապրիմ, եւ արդէն հայկական գրականութեան վրայ բան գիտցող ալ չկայ Լօնտօն: Բայց Դուք այնքան խոր ուսումնասիրութիւն ըրած էք, որ բոլորովին հետաքրքիր են Ձեր հրատարակութիւնները: Ես շատ կը ցաւիմ, որ այնպէս կ'ապրինք, հայկական մտաւորական շարժումներէ հեռու:

Մեր խեղճ ազգը անգամ մը եւս խաբուեցաւ եւ մատնուեցաւ[42], բայց ես միշտ կ'ըսեմ, որ եթէ քաղաքական արդարութիւն մը չենք կրնար յուսալ Եւրոպայէն, գոնէ ցոյց տալու է իրենց, որ այսպէս իբրեւ ողջակէզ զոհած իրենց ազգը, իրենց ձեւացնել ուզածնին պէս բարբարոս կամ վաճառականական ազգ մը չէ, ապա ազգ մը, որ մտաւորական անցեալ մը ունեցած է եւ ներկայ մը ունի:

Երեք ամիսէ ի վեր կը ճամբորդեմ եւ միայն հոս գտայ քիչ մը մտաւոր հանդարտութիւն եւ գոհացում: Նախ Գերմանիա այցելեցինք՝ Nürnberg, Munchen եւ այլն, յետոյ եկանք Աւստրիա, Insbruck եւ Gastein, յետոյ այստեղ: Գերմանիա հրաւիրուած եմ նկարներս ցուցադրել գլխաւոր քաղաքներուն մէջ: Բայց այնքան դրամական նեղութիւն ունին, որ իրենց ստակովը չէ կարելի յուսալ մինչեւ անգամ ծախսերը հանել: Այստեղ երբեմն վանքը[43] կ'երթամ հին մանրանկարներ ուսումնասիրելու համար: Կը փափաքիմ նաեւ նկարել

վանքը, գեղեցիկ տեսք ունի, եւ եթէ չեմ կարող իսկական Հայաստանը նկարել, գոնէ այս փոքրիկ կեդրոնը ընեմ:

Մտադիր եմ դեռ ամիս մը այստեղ մնալ, քէեւ Անգլիա գործերս բոլորովին խառն եւ անորոշ դիրքի մէջ ձգեցի: Գիրք մ'ալ ունիմ մամուլին մէջ[44], որ բոլորովին պատրաստ է հրատարակուելու, բայց դեռ լոյս չէ տեսեր, չեմ գիտեր ինչու կ'ուշացնեն: "Armenian legends"-ի[45] դիրքով 15 գունաւոր պատկերներով, բաբելոնական հին լեգենդ մ'է, որ ոտանաւորով գրեր եմ իբրեւ drama[46]: Իբրեւ շատ կարեւոր գործ մը, ընդունուած է Անգլիա շատ մը յայտնի գրագէտներէ, ամենալաւ հրատարակիչներէն երկու-երեքը առաջարկեցին ձրի տպել եւ հրատարակել, եւ British museum-ի բաբելոնական մասի director-ը[47] շատ գեղեցիկ յառաջաբան մը գրած է, բայց դեռ կը յետաձգուի, կ'երեւի ժամանակներուն վատութեանը համար:

Ընդունեցէք յարգանքներս եւ դարձեալ շնորհակալութիւններս:

Ձերդ Ջ. Կ. Պօյաճեան

Գ. Աւետիք Իսահակեանին[48]

Ջ.

Grove End Road
London N. W. 8
Jan. 19th 1925

Յարգելի բարեկամս,

Ասկէ մի քանի շաբաթ առաջ ստացայ Ձեր նամակը[49] եւ մի քանի օր առաջ ուղարկեցի Ձեզ մի համար Contemporary Theories-ից[50], որին մէջ տպուած էր Ձեր վրայ գրածս յօդուածը: Վանքի հասցէին ուղարկեցի ապահովուած post-ով[51], յոյս ունեմ, որ շատոնց ստացաք, եւ եթէ թարգմանի մը միջոցով կարդացիք, գոհ մնացիք Ձեր վրայ գրածներովս: Արդէն այս տեղի թերթերէն մի քանիսը արտագրեցին յօդուածէն, միսը Ձեզ ուղարկում եմ ներփակեալ: Դժբախտաբար կտրած էին մի քիչ յօդուածը, եւ թէպէտ իրենք ըսին, որ շատ երկար լինելուն համար էր, բայց քաղաքական բաները կտրած լինելով եւ յօդուածին ետեւը գրեթէ կէս երես պարապ մնալով, այնպէս չ'երեւիր, որ երկարութեանը համար կտրած էին: Ինչ է նէ: Վեց ոսկի եւ վեց շիլինկ ստացայ!.. աւելի կը լինէր, բայց մի քանի փոքրիկ սրբագրութիւններ ըրած էին, որոնց համար փող առին: Հիմա պէտք է գրեմ Ձեր տասը առածներուն վրայ մէկ յօդուած:

Վերջապէս «Գիլգամէշ»ը Փետրուարի առաջին շաբաթը լոյս պիտի տեսնէ, շատ անհամբերութեամբ կ'սպասեմ տեսնելու, թէ ինչպէս պիտի ընդունուի: Երանի թէ ձեր ըսածին պէս իրաւ թարգմանուի հայերէնի: Արդեօք ըսե՞մ հրատարակիչին, որ օրինակ մը ղրկէ վանքը[52]: Թանկ գիրք ըլլալուն համար շատ չեմ ուզեր պահանջել, որ ասդին անդին ղրկէ, մանաւանդ որ ինք ալ կը գոջայ հրատարակելուն, եթէ լաւ չծախուի: Մեծ պատուէրներ խոստացող երկու հայերու տարի, բայց դեռ բառ մը չիմացայ իրենցմէ: Mrs. Moscheles-ը անշուշտ ըսաւ ձեզի այս տեղի եկեղեցիին համար պատուիրած նկարածս «Աստուածածին եւ Մանուկ»-ին հետ պատահած խայտառակութիւնը[53]: Այս է վարձատրութիւնը հայոց համար աշխատելուն եւ այսչափ տարի երեսնին ճերմակցնելուն: Հոս կայ հայ ջութակահար եւ compositeur[54] մը, Հայկ Գիւտէնեան[55] անունով, որին հետ ալ խայտառակ կերպով վարուեցան: Ծանօթացուցի զինքը այստեղի երաժշտական շրջանին, որոնք մեծ գնահա-

տում ցոյց կու տան, բայց դարձեալ խնդիրը փողի խնդիրի կուգայ եւ այսպէս մարդիկ, որոնք ազգին ամէնէն մեծ պատիւը եւ propaganda-ն[56] են, չեն գտներ պէտք եղած օգնութիւնը, որ գործերնին ընեն: Վենետիկ շատ կարօտցած եմ, փող ունենայի կու գայի: Շատ բարեւներ ամէնուդ.

Ձերդ միշտ Զապէլ Պօյաճեան

[լուսանցքում] Abu Lalayէն թարգմանութիւնը շատ սիրեցին անգլիացիք: Կարո՞ղ էիք օրինակ մը ղրկել, վարձը փողը ինչ է նէ կը վճարեմ:

Է.

c/o Mrs. Moscheles
84 Fellow's Road N. W. 3
Feb. 16. 1925

Յարգելի Պարոն Խսահակեան

Ձեր նամակը ստացայ ասկէ մի քանի օր առաջ: Շատ ուրախ եմ, որ գոհ մնացիք յօդուածէն:

Վաղը առաւօտ "Gilgamesh"-ը լոյս կը տեսնէ!.. Կարող էք երեւակայել, թէ որքան ոգեւորուած եմ... այստեղ բաւական հետաքրքրութիւն յառաջ բերած է, եւ առաջնակարգ գրավաճառները գներ են եւ իրենց պատուհաններուն մէջ պիտի ցուցադրեն: Գրեցի հրատարակչին, որ մի օրինակ Սբ. Ղազար ուղարկեն, որ վարդապետները կարենան ծանօթացնել հայ ժողովրդին եւ յայտարարեն իրենց գիրքերուն ցանկին մէջ:

Խնդրում եմ Դուք էլ նայեցէք այդ գործին եւ ստիպեցէք, որ մի բան անեն: Կը փափաքէի նաեւ, որ Դուք գրէիք հայկական մամուլին մէջ «Գիլգամէշի» վրայով, գիտեմ, որ Անգլիերէն չիմանալնիդ շատ դժուարացնում է:

Կարգադրեցի նաեւ մի exposition իմ նկարներուս Մայիս ամիսին համար: «Գիլգամէշի» original[57] նկարները եւ portrait-ներս[58] պիտի ցուցադրեն, ձրի, մի լաւ galerie-ի[59] մէջ, 100-ին 25 տոկոս առնելով, եթէ ծախեն մի բան: Այնպէս որ շատ զբաղուած պէտք է լինեմ:

Նոյն ժամանակ դժբախտաբար ստիպուեցայ studio-ս[60] ձգել, արդէն տարիէն աւելի էր, որ ուզում էին իրենց գործին համար եւ չկարողացայ այլեւս պահել: Նկարներս եւ ուրիշ ունեցածներս փոխադրեցի 20, Stafford Road, London N. W. 6: Մի հայ բժշկի տուն է, դեռ կահաւորուած չլինելուն սենեակները դատարկ են, եւ իմ նկարներս վերէն վար լեցուցին տունը!.. մինչեւ ուրիշ յարմար studio մը գտնեմ: Բժիշկը շատ բարի է եւ թոյլ կը տայ, որ ուզածս անեմ: Իսկ ես առայժմ Mrs Moscheles-ին մօտ եմ ապրում: Ձեր ցաւակցութիւնը յայտնեցի իրեն, եւ ասաց, որ բարեւ անեմ Ձեզ:

Յուսամ, որ այժմ Ձեր ամէնուն առողջութիւնը լաւ է:

Յարգանօք եւ ողջոյններով, Ձերդ միշտ,

Զապէլ Կ. Պօյաճեան

Ը.

c/o H. S. Rogers Boyagian
Esq. re, «Eastway»
Sutton Road
Seaford, Sussex
England

Հոկ. 12. 1945

Մեծ Վարպետ
Աւ. Իսահակեան
Երեւան

Սիրելի եւ յարգելի բարեկամս,

Երբ պարոն Քիւրքճեան Լօնտօն վերադարձաւ եւ Ձեր վրայ տեղեկութիւններ տուաւ ինձի, չեմ կարող ասել, թէ որքան հաճոյք զգացի: Միշտ յիշում եմ մեր Վենետիկ ծանօթանալը Սբ. Ղազար շոգենաւին վրայ եւ այնտեղ միասին մեր անցկացրած հաճելի ժամանակները, բարեկամուհիիս Mrs. Moscheles-ին հետ, որ սրանից 15 տարի առաջ վախճանեցաւ: Այս նամակիս հասցէն ալ Պրն. Քիւրքճեանին խնդրեցի, որ գրէ. առաջի նամակն է որ հայերէն հասցէով գրում եմ:

Դժբախտաբար Պրն. Քիւրքճեան Երեւան գացած ժամանակը չէր իմանում, որ Ձեր գեղեցիկ բանաստեղծութիւնը՝ «Աբու-Լալա Մահարին»[61] անգլիերէնի թարգմանում էի, դեռ վերջացրած ալ չէր. եթէ ոչ՝ մի օրինակ իրեն հետ Ձեզ կ'ուղարկէի: Կը յուսանք մօտերս այստեղ կը հրատարակուի: Նոյն չափերովը եւ հանգերովը թարգմանեցի, իմաստը ճիշտ պահելով, եւ կարծում եմ, որ անգլիերէնով էլ շատ գեղեցիկ դուրս է եկել: Մի գործ, որ ինձ համար ոչ միայն հետաքրքիր էր, այլ նաեւ մխիթարական, որովհետեւ այժմեան զգացմունքներս ճշտութեամբ նկարագրում է:

Պատերազմէն ի վեր երկու գիրք արդէն ունիմ հրատարակուած: Միւն սանսքրիթ ոտանաւորներու թարգմանութիւններ, որ անգլիացի գիտնականի մը գործն է, իսկ ինծ պատուիրեցին նկարներ անել, եւ հին հնդկական ոճով պատկերազարդեցի, իսկ միւսը՝ "Etchmiadzin"[62], որ Ագաթանգեղոսի պատմութեանը վրայ հիմնուած թատրոնի խաղ է, ամբողջը չափերով եւ հանգերով, հին անգլիերէն ոճով գրուած է, Ամերիկա հրատարակուեցաւ, Առաջնորդարանին միջոցով: Այժմ դեռ երկու գիրք ունիմ հրատարակելու եւ մէկ-երկու խաղ բեմադրելու: Րաֆֆիի "Harem"-ը, որ անգլիերէն գրած եմ թատրոնի համար, իսկ միւսը, "The Death of Tiberius"[63], որ պատերազմէն առաջ Լօնտօն ուզում էին բեմադրել: Իսկ գիրքերէն միւն երեխաներու համար թատրոնի խաղեր են, դարձեալ ոտանաւորով գրուած եւ միւսը՝ կարճ պատմութիւններ, քիչ շատ անբնական կամ գերբնական: Սրանց միւն "The Curse of Artavasd" (Արտաւազդին անէծքը)[64] Խորենացիէն առնուած: Նկարչութիւնով էլ շատ զբաղուած եմ եղել վերջերս, մանաւանդ դիմագիծներ (portrait) նկարելու բաւական պատուէրներ ստացայ:

Պատերազմէն ի վեր Լօնտօն բնակած չեմ, իսկ այժմ կարգադրում եմ դարձեալ այնտեղ վերադառնալ: Ձեզ տալիս եմ եղբօրս հասցէն, որ միշտ գտնում է ինձ:

Խորին յարգանօք՝
Ձերդ անկեղծութեամբ
Զապէլ Կ., Պօյաճեան

Թ.

29, St. Mary Abbot's Terrace
High Street Kensington
London, W. 14
Օգ. 28, 1946

Մեծ բանաստեղծ
Աւետիս Իսահակեան
Երեւան

Շատ սիրելի եւ յարգելի բարեկամս,

Երկար ժամանակէ ի վեր փափաքում էի Ձեզ գրել իսկ օրէօր յետաձգում էր, որովհետեւ այնքան բաներ ուզում էի ասել՝ չէի իմանում ո՞ր տեղից սկսել: Իսկ անցեալ օր տիկին Րաֆֆիի[65] իմ վրայ տխուր պարտականութիւն դրեց իր ամուսնին, Արշակ Րաֆֆիին[66] մահուան ցաւալի լուրը Ձեզ հաղորդել, որ տեղի ունեցաւ այս ամսուայ 12-ին, իրանց տունին մէջ, 1 Colin Gardens, Hendon, London, N. W. 9:

Յուղարկաւորութիւնը շատ պատշաճ կերպով կատարուեցաւ հայկական եկեղեցիին մէջ, ուր ներկայ կային նաեւ իր համալսարանական ուսուցիչ ընկերներէն, որոնցմէ մին գեղեցիկ դասախօսութիւն մը ըրաւ Արշակ Րաֆֆիին համալսարանական գործին վրայ իբրեւ ռուսերէնի եւ սլաւոնական նիւթերու վրայ ուսուցիչ եւ դասախօս: Յետոյ դագաղը տարուեցաւ տիկին Աննա Րաֆֆիին եւ Արամ Րաֆֆիին մօտ տեղաւորուեցաւ, որպէսզի երեքը միասին մի օր Հայաստան փոխադրուին[67]:

Այսպէս ընտանիքը վերջացաւ, ի բաց առեալ Արշակին կինը, Ալեքսանտրա, որ դեռ երտասարդ, բայց շատ լուրջ եւ ազնիւ տիկին է, արժանի այդ անունը կրող վերջինը լինելու: Ինձ ասեց, որ Ձեզ իմացնեմ մտադրութիւնը Րաֆֆիին եւ տիկին Րաֆֆիին ձեռագիրները Երեւանի թանգարանին նուիրել[68]: Ինձ նման նա կէս հայ եւ կէս անգլիացի է, կամ աւելի ճիշտ աւելի՝ իրլանտացի. բայց հայերէն եւ ռուսերէն լաւ իմանում է:

Այս մահը ինձ էլ շատ ցաւալի է, որովհետեւ Անգլիա գալէս ի վեր Րաֆֆիի ընտանիքին հետ շատ մօտ բարեկամ եղած եմ, թէեւ վերջին տարիները Արշակին հետ շատ տեսնուած չեմ, բայց հայկական բաներով զիս հետաքրքրող իրանք էին ամէնէն շատ եւ "Armenian Legends and Poems" գիրքս Արամին թելադրութեամբ եւ գրեթէ ստիպումով պատրաստեցի:

Իմացայ, որ Հոկտեմբերին մի գրական հանդէս կամ ժողով[69], պէտք է լինի եւ Լեւոն Մեսրովպ՝ իմ ուրիշ լաւ բարեկամս, ինձ իմացուց, որ ինք էլ հրաւիրուած է, եւ ասեց, եթէ որեւէ բան ուզում եմ Ձեզ ուղարկել՝ ինք կը տանի: Ուղարկեցի պատերազմէն մի տարի առաջ հրատարակուած գիրքս՝ "In Greece With Pen and Palette", որ այս տեղի լրագիրներուն մէջ շատ լաւ գրախօսուեցաւ եւ "Etchmiadzin" drama-ս, որ երէք տարի սրանից առաջ Ամերիկա՝ Պատրիարքարանին կողմէն հրատարակուեցաւ: Յոյս ունեմ, որ կ'իմացնէք ինծի ձեր տպաւորութիւնները: Իսկ դեռ չյաջողեցանք «Աբու Լալայի» հրատարակութիւնը կարգադրել թուղթի սակաւութեանը համար: Բայց ետեւէն եմ, եւ յոյս ունեմ, որ շատ չանցած կը յաջողի: 7-րդ սուրայի մէջ Ձեր յիշած տողը նայեցայ, թէեւ սխալ տպագրութիւնը ունիմ, բայց շիտակ թարգմանած էի: Շատ գեղեցիկ բանաստեղծութիւն է, եւ անգլիերէնն ալ շատ գեղեցիկ դուրս եկած է, նոյն չափերովը եւ նոյն շեշտերովը, ամէն կարդացող հիանում է

եւ իմ այժմեան զգացմունքներս կատարելապէս արտայայտում է!.. թարգմանելը միևչ իսկ հաճոյք էր: Manchester արեցի, գիշերուայ ժամը 1, 2, 3-ին, պզտիկ, լաւ անկողնաբաւումս, կրակի մօտ նստած մի քանի լաւ, բարեկամներու հետ թուղթ խաղալէ յետոյ, այնպէս որ գործին յիշատակն էլ հաճելի է! Իմ գործերէս եւս մի կարգ գիրքեր ունեմ հրատարակելու, drama-ներ, եւ կարճ պատմութիւններու մի հատոր: Վերջինները գերբնական անկարելի բաներ են. մի խօսքով խենթ! Միւն Արտաւազդին պատմութիւնն է, իմ երեւակայութիւնովս գրուած: Սրանք էլ թուղթի են սպասում:

Իսկ նկարչութեան մասին. Մայիսին հրաւիրուեցայ մեծ գրադարանի մը մէջ ցուցահանդէս տալու եւ այժմ նկարում եմ Ձեզի ծանօթ պրն. Քիւրքճեանին մի որդին, 13 տարեկան, թերեւս յետոյ միւսն էլ նկարեմ: Manchester, Scotland եւ Oxford բաւական դիմագիծներ նկարելու պատուէրներ ստացայ: Պատերազմի ամբողջ միջոցին Լօնտօնից դուրս էի, իսկ մի տուն, որին մէջը ութ տարի բնակած էի Լօնտօնում, մինչեւ յատակը ռմբակոծուած է, այնպէս որ բոլոր հանդիպածս ծանօթները կարծում են, որ ոգիս են տեսնում!

Ձեր խորին յարգանօք՝

Զապէլ Կ. Պօյաճեան

Խնդրեմ իմ կողմից ողջունեցէք տիկին Աղաւնիին[70], եթէ տեսնէք: Նամակը շատ հաճոյքով ստացայ եւ շուտով կը պատասխանեմ:

Դ. Միհրդատ Թիրեաքեանին[71]

Ժ.

THE STUDIO
43 Leicester square,
London, W. C. 2
Հոկ. 11, 1938

Յարգելի պարոն Թիրեաքեան,

Թոյլ կուտա՞ք, որ շնորհաւորեմ Ձեզ եւ անկեղծ հիացումս յայտնեմ Կոչնակին մէջ ձեր գրած յօդուածներուն համար «Հայերէն եւ Անգլերէն Լեզուները» խորագրին տակ[72]: Կոչնակին մէջ լոյս տեսնող յօդուածներուն լաւագոյններէն են, մի քանի տեսակէտով:

Նախ՝ ինչպէս որ կ'ըսէք, երբ ամէն գրիչ շարժողը գիտնական նիւթերու վրայ բան մը կը գրէ, «զաւեշտութիւն» կը դառնայ: Մեր գրողներուն շատերը մեծ պէտք ունին այսպէս ցնցում մը ստանալու, թերեւս աչքերնին քիչ մը բացուի եւ զգան, թէ գիտութիւնը որչափ մեծ եւ վսեմ բան է, որչափ աշխատութիւնով պէտք է ձեռք ձգել. Ձեր մեղմ, բայց նոյն ժամանակ ուժեղ յանդիմանութիւնները կրնան թերեւս իրենց մէջ քիչ մը պատկառանք ստեղծել դէպի իրենց չհասկցած բաները:

Երկրորդ կէտը, որ գնահատեցի, շեշտելնիդ էր, որ Անգլիացոց այնչափ սիրահարած ըլլալուն համար էր, որ Եաղուպեանը[73] ինքզինքը նետած է այս տգէտ եւ անհիմն պայքարին մէջ՝ անոնց հետ անկարելի կապ մը փաստելու յոյսովը: Այս տեսակ օտարամոլութիւն ինծի շատ զզուելի է, մանաւանդ երբ հայերը ուղղակի խաբող եւ գիրենք կրկին եւ կրկին վնասող ազգերու դէմ քծնիլ կը նշանակէ: Ես ինքս կէս անգլիացի եմ, եւ կրթութիւնով գրեթէ բոլորովին անգլիացի, բայց այդ պատճառ չէ, որ մօրս ազգին ըրած սխալ եւ գռեհիկ

բաները պաշտպանեմ եւ գովեմ: Ընդհակառակը, թերեւս երկու ազգի պատկանելուս համար է որ բառին ճիշտ նշանակութեամբը ազգասիրութիւն ի՞նչ է, չեմ գիտեր: Համոզուած եմ, որ ինչպէս անհատներու, այնպէս ալ ազգերու մէջ, եթէ ամէն մէկը իր յանցանքները իմանայ՝ փոխանակ կոպիտ կերպով դիմացինը հայհոյելու, աւելի յոյս կ'ըլլայ որ ժողովուրդները հանդարտին եւ արդարութիւն տիրապետէ այս խելագար աշխարհին մէջ: Խնդիրները ամէն կողմէ ուսումնասիրել պէտք է:

Երրորդ գովասանքս Ձեր գրելու կերպին մասին է: Թեթեւ եւ անվնաս հեգնանք մը, որ անգլիերէն "dry humour" կը կոչուի, բայց դիմացինի ըսածներուն ամէնէն ջախջախիչ ոյժն է, եւ քիչ անգամ հայերը գործածել գիտեն իրենց գրածներուն մէջ: Բայց որչափ խնդացի, ժամերով զուարճացուց զիս "ostrich" ալ (Justrich գրուած, չեմ գիտեր բնագրի թէ տպագրական սխալ է) իբր «ուղտ-թռիչ», նոյն ձեւով կրնանք cartridge-ն[74] ալ մեկնել «կոր-թռիչ» (ի՛նչ բան կ'արգիլէ), իսկ "mule" ջորին կը վերածուի «ամ-ուլ»-ի առանց բացատրութեան, եւն.: Ի՛նչ հիանալի երեւակայութիւն է թռչող ուղտ մը! եւ այսպէս Ձեր ամբողջ քննադատութիւնը ինծի մեծ զուարճութիւն եւ բաւականութիւն պատճառեց: Գրած ատենս կը խնդամ!

Ձեր ուր բնակիլը չգիտնալով՝ Կոչնակին կ'ուղարկեմ նամակս որ Ձեզի հասցնէ:

Ձեր յարգանօք
ստ. Զապէլ Կ. Պօյաճեան

Ե. Լեւոն Մեսրոպին[75]

ԺԱ.

"Eastway"
Sutton Road Seaford
England
Դեկ.1.1949

Յարգելի պարոն Մեսրոպ,

Վերջապէս կրցանք իրարու հանդիպիլ!.. Բայց ատ ալ հրաշք էր, որովհետեւ Ձեր նամակին վրայ քաղաքին անունը գրած չէիք՝ միայն տունին եւ փողոցին: Sussex մեծ գաւառ է: Post office-է[76] մը մէկը ձեր պահարանին վրայ գրած[է] «Seaford փորձեցէք»: Եղբօրս կնոջը գրած նամակնիդ չպահեցինք, ըսի՝ «արդէն պիտի գրեմ, հարկ չկայ որ պատասխանես»: Բայց երբ եկայ պատասխանելու՝ տեսայ, որ Ձեր նոր հասցէն չունիմ, Հրաչին[77] ղրկած էի Ձեր վերջին նամակները: Գրեցի, ուզեցի հասցէն, հինը ղրկեց: Երբ լսեցի, որ Քիւրքճեանցներուն հարցուցեր էք զիս, իրենցմէ ուզեցի հասցէն, հինը ղրկեցին: Registered[78] նամակ մը ուղղեցի հինին, ձայնը չելաւ: Վերջապէս յուսահատուած՝ քանի մը օր առաջ Տիլպերին գրեցի, հարցուցի, դեռ պատասխան չառի:

Դուք Ձեր գիրքը անձամբ կը տպագրէք, կը հրատարակէք, ես պէտք է սպասեմ, որ հրատարակիչ մը յանձն առնէ եւ հիմա օտար անուն չեն ուզեր, ամէն տեսակ յիմար բաներ կը հրատարակուի[ն], գանգատներ կ'ըլլան լրագիրներուն մէջ, եւ գործեր, որոնք ամէնէն մեծ մասնագէտները այնչափ գոված են, մէկ կողմ նետուած են: Սիրտս այնչափ կոտրած է ասոր համար, որ այսօր չեմ կրնար Ձեր ուզած տեղեկութիւնները տալ. «յաջողութիւններու» մասին ուրիշ անգամ կը գրեմ: Արդէն ատ մեծ յաջողութիւններն են, որ զիս այնչափ կը տանջեն՝ անարդարութիւնը: Կիւլպէնկեանին[79] գործակատարը,

որ "Armenian Legends"-ի բոլոր նկարները ինք գնեց ժամանակին (Աւետում Յակոբեանը) "Gilgamesh"-ը փոխ ուզեց՝ կարծեմ Կիւլպէնկեանին ղրկելու, ձայնը դեռ չելաւ: Եկեղեցիին mosaic-ներուն[80] design-ը[81] ընել տուաւ եւ լաւ վճարեց Կիւլպէնկեանը, երկու architect-ներու[82] design-ները մերժելէ վերջը եւ ուզեց, որ Կիւլպէնկեանի մէկ լուսանկարը իղաներկով օրինակեմ: Ըսի, որ լուսանկարէ օրինակելը արժէք չունի, գիս Lisbon ղրկեցէք՝ իրմէ նկարեմ: Այնչափ զբաղ է, ըսաւ séance[83] չ[ի] տար: Ըսի երկու séance-ով աւելի լաւ գործ մը կ'ընեմ, քան լուսանկարը օրինակելով, չեղաւ: Հայերը չեն հասկնար, բայց Կիւլպէնկեանը ինք գիտէ: Յունական գիրքիս[84] արժէքը միայն Դուք գիտցաք հայերուն մէջ, միւսները միայն իրենց վերաբերուածովը կը հետաքրքրուին: Չեն գիտեր, որ աւելի դժուար բան է միջազգային գովեստ ստանալ եւ եթէ <u>Հայ միտք</u> մը ըրած ըլլայ, ատով պէտք է պարծենան:

Քալիֆօրնիայի Հայերը վերջերս հետաքրքրուած են (գլխաւորապէս Ա-բու-Լալայիի համար, որ ես կորսուած աշխատանք կը սեպեմ այնպէս հրատարակելուն): Բան մը կ'ընեն ինծի համար, չեմ գիտեր ճիշտ ինչ: Ես առաջարկեցի exhibition[85] մը ընեն, քանի մը նկար ծախեն եւ քանի մը portrait-ի պատուէր ձեռք ձգեն, որ երթամ հոն ընեմ: Զգուեր եմ այս տեղէն:

Չորրորդ աստիճանի նկարիչներ, քանդակագործներ՝ Խաչատուրեաններ, Խորէն քանդակագործներ, տիկին Վաւաներ[86] մէջտեղ են, մենք անկիւն մը նետուած կը սպասենք: Այսօր այսքան: Գրեցէք ինծի եւ դարձեալ կը գրեմ: Խեղճ Հրաչն ալ նոյն ցաւերէն կը տառապի: Հոս Seaford բարեկամ մ'ալ չունիմ, որուն հետ խօսիմ, քիչ մը մխիթարուիմ:

Ձերդ միշտ
Զապէլ Գ. Պօյաճեան

Հրաչի հասցէն՝ 8 Gardens, London, W8: Չեմ գիտեր՝ որչափ ատեն հոն կը մնայ: Գրեցէք իրեն ալ:

ԺԲ.

"Eastway"
Sutton Road Seaford
England

Դեկ. 31, 1949

Սիրելի պարոն Մեսրոպ.

Չեզմէ ուզածս «մխիթարական» <u>երրորդ</u> նամակը դեռ չեկաւ, ուրեմն կը ստիպուիմ ես Չեզի գրելու, մխիթարական երկրորդ աստիճանը ձեռք առնել: Հոս մէկը չունիմ գաղափարակից կամ հասկցող, եւ երբեմն խենթ ըլլալու աստիճան կը տանջուիմ: Ծնունդը փառաւոր կերպով անցաւ, եղբօրս կնկան բոլոր ազգականները եկան, կերանք, խմեցինք՝ առանց մէկը գիտնալուն, թէ իմ միտքս ինչեր կը դառնան: Հրաչն ալ եկաւ, եւ ան խեղճը ինձմէ աւելի տանջուած եւ յուսահատուած է: Անոր համար ապրուստի խնդիր ալ է: Գրեցէք իրեն 8, Abbey Gardens, Abbey Road, London, N. W. 8: Ան ալ յուսահատուած եւ զգուած է, իրեն պէս առաջնակարգ արուեստագէտ մը բոլոր հասկցողներու վկայութեամբը, մէկ կողմ նետուած եւ անօթի, քանի որ երրորդ աստիճանի մարդիկ մէջ կը բերուին եւ կը փառաւորուին: Երբ Դուք եւ ես Հայաստան երթանք, ինք ալ պիտի գայ. եթէ շուն շանորդիները աշխարհը նորէն տակն ու վրայ չընեն եւ մարդկութիւնը բոլորովին անյայտացնեն: Առանց տառապան-

քի մահ մը ամէնէն մեծ փափաքս եղած է: Իմ վրայ գրելու շատ սիրելի փափաքը արտայայտած էք, բայց ինչ օգուտ: [...]

Ճիշտ կէս գիշեր է եւ նոր տարի, ուրեմն շնորհաւորեմ Ձեր Նոր Տարին, ամէն բարեմաղթանքով: Կը յուսամ, որ ամբողջ աշխարհին աւելի երջանկութիւն եւ խաղաղութիւն կը բերէ: Այս սրբազան վայրկեանին սկսիմ իմ գովեստներս գրելու հաճելի գործը:

1. Ծնած եմ Տիարպէքիր (ոչ Տիգրանակերտ, որ հայերուն գործածած սխալ անունն է, Տիարպէքիր հին Amida-ն է, Տիգրանին ժամանակը գոյութիւն չունէր): Մայրս անգլիացի էր, հայրս, թէեւ հայ՝ անգլիական հիւպատոս: Մեր տան լեզուն անգլիերէնն էր: Մայրս կ'ըսէր, որ եթէ տունը չխօսին պզտիկները՝ վերջը կը ստիպուին իրենց օտար լեզու սորվիլ, որ թէ՛ աւելի դժուար կ'ըլլայ իրենց եւ թէ՛ այնչափ լաւ չեն սորվիր: Բայց ինք շատ հայասէր էր, հայերէն սորվեցաւ եւ միշտ կը խօսէր բազմաթիւ հայ բարեկամներուն հետ: Երբ հայոց դէմ եղած անարդարութիւնը հասկցաւ, իր ազգը քննադատեց, թէ՛ խօսքով եւ թէ՛ հրապարակաւ, բեմերէ: Եղբայրս շատ խելօք էր եւ հնազանդ: Բայց ես՝ վայրենի: Ամէն ամառ Խարբերդ կ'երթայինք, ուր հօրաքոյրս այգի ունէր, ամբողջ ժամանակս ծառերուն վրայ կ'անցնէի՝ պտուղ ուտելով կամ անհնազանդութիւններ ընելով:

Իբրեւ հիւպատոս հայրս առաջինը եղաւ Սասունի կոտորածին[87] վրայ Եւրոպա լուր տուող: Ինք քիչ վերջը մեռաւ, բայց մենք 95-էն վերջի կոտորածները վայելեցինք: Վերջը մայրս մեզ Անգլիա բերաւ, հետերնիս չորս-հինգ հայ իբրեւ «ծառայ» անգլիական pasport-ին[88] վրայ Եփրատ գոլլեճի պրոֆեսօր, ուսանողներ եւ պատուելի, որոնք այլապէս չպիտի կրնային գալ ան ատեն...

Անգլիա գալուս Slade School of art գեղարուեստական ամէնէն լաւ դպրոցը հինգ տարի ուսանեցայ, ամէն օր եօթը ժամ: "Yestere"[89] գիրքս հոն եղածս առաջին տարին գրեցի, եւ հրատարակուեցաւ անմիջապէս: «Վարդենի» անունը առի, որ մեր Պոլիս եղող ազգականները չվնասուին: Այդ գիրքէն սկսելով անգլիական մամուլը մեծ գովեստ տուած է գրական աշխատութեանս: Մէկ լրագիր գրած էր. «Ո՞վ է աս: Թէ որ անգլիացի է, հայկական կեանքին վրայ ինչպէ՞ս այսչափ գիտէ: Թէ որ հայ է, ինչպէ՞ս կրնայ ասանկ անգլիերէն գործածել»: Գիրքը գերմաներէնի թարգմանեցին եւ Leipzig հրատարակեցին: Ան մինակ երեք-չորս տարի առաջ լսեցի:

Գրեթէ նոյն ժամանակը, որ մենք Անգլիա եկանք, տիկին Բաֆֆիի իր երկու որդիներովը եկաւ եւ հոս մնացին: Հետերնին անմիջապէս բարեկամացայ՝ Բաֆֆիին վէպերը կարդացած եւ շատ սիրած ըլլալով: Արամ Բաֆֆիի գրագէտ էր, ոչ միայն հայկական գրականութիւնով, այլ հոս University, college-ի[90] շրջանաւարտ եղաւ, անգլիական գրականութեան մէջ անանկ որ ատով ալ ինծի օգտակար եղաւ: Թատրոն շատ կը սիրէր ինծի պէս, միասին կ'երթայինք, կ'ուսումնասիրէինք: Ռուսերէնի ուսուցիչ էր, ինծի ռուսերէն սորվեցուց, այնպէս որ Pushkin, Lermontoff, Tchekhoff, Turgenieff եւ այլ բնագրին մէջ կը կարդամ: Ես թարգմանութիւն չեմ սիրեր, թէեւ ուրիշներու համար կ'ընեմ: Եւրոպական գրեթէ բոլոր լեզուները սորված եմ կարդալու համար, բայց շատերը չեմ կրնար խօսիլ: Բաֆֆի եղբայրները հոս հայկական ընկերութիւն հաստատեցին, դասախօսութիւններ, հանդէսներ[91] եւ բեմադրութիւններ տուին, եւ այս գործերուն մէջ էր, որ Ձեր քոյրերը մեզի կ'աջակցէին: Աղաւնին[92] այն ժամանակէն ճանչցած եմ:

Արամ Րաֆֆիին նաեւ կը պարտիմ իբր նկարիչ դուրս գալս: Մեր ուսումնարանին մէջ այնչափ բարձր էր սեպուած գեղարուեստը, որ յանդգնութիւն էր ցուցահանդէս ընել: Ինք ոչ միանակ ստիպեց, որ ընեմ՝ կամքիս հակառակ, մամուլն ալ բերաւ, եւ առաջի լրագրական յօդուածը ծրարով ղրկեց, վրան գրելով՝ «շնորհաւորում եմ», որպէսզի չվախնամ բանալ: "Armenian Legends"ն ալ իր ստիպումովը պատրաստեցի, ոտանաւորներուն մեծ մասը իր միջոցովը գտայ: Բայց ընտրութիւնը իմս էր, եւ քանի անգլիական անհատներ եւ լրագիրներ նկատեցին, որ մէկ հատ չկայ մասնաւոր գեղեցկութիւն մը չունեցող:

Արամին շատ կը պարտիմ գործս քաջալերելուն, բայց հայերուն մեծամասնութեանը պէս, հայկական չեղած գործովս չէր հետաքրքրուեր: Չեն հասկնար, որ շատ աւելի փառք է հայոց, եթէ օտարներ գնահատեն հայ միտք մը:

Կենսագրական գլխաւոր գիծերս ասոնք են: Ճամփորդել շատ կը սիրեմ, ուսանող ատենս վագանսներս[93] Haute Savoie[94] կ'անցնէի, ուր բժիշկ խորթ եղբայր մը ունէի: Շատ կը սիրեմ լեռներ բարձրանալ, վտանգաւոր տեղերէ եւ Club Alpin Francais-ին[95] անդամ էի: Ֆրանսա ամէն կողմ եղած եմ, ի բաց առեալ Bretagne եւ Nice: Իտալիա ծակ չկայ, որ կրկին եւ կրկին այցելած չեմ՝ երբեմն ամիսներ մնալով, գեղարուեստական գործերը ուսումնասիրելով: Իսահակեանին հետ Վենետիկ ծանօթացայ անգամ մը, երբ երեք ամիս մնացի հոն: Յունաստան՝ նոյն բանը: Աւստրիոյ Ալպեան լեռները մնացած եմ, Salzburg, Mozart-ի[96] տեղը, Insbruck, գերմանական Ալպեանները, Danube-ի մէկ եզերքէն միւսը ցատկած եմ, Zurich, Frankfurt, Goethe-ին[97] տեղը, Nürnberg ամիս մը կեցած, Cologne եւ Rhine, Նորվեկիա, Շուէտ եւ Lapland: Ահաւասիկ կենսագրութիւնս!

2. Քաղաքական սկզբունքներուս գլխաւորը հակապատերազմութիւնն է: Ան ձեռք ձգենք նէ՝ թող ազգերը իրենց երկրին մէջ, մեծամասնութեամբ ինչ ձեւ կառավարութիւն ուզեն՝ հաստատեն: Այս նիւթին վրայ շատ դասախօսեր եմ եւ գրածներուս մէջ միշտ կը մտնէ. եթէ այս վայրենի անգթութիւնները պիտի ընեն, թող քրիստոնեայ անունը չկրեն: Ես կրօնք չունիմ, բայց համոզուած եմ, որ եթէ Քրիստոսի պատուէրները պահեն՝ գոնէ այս կեանքին մէջ կը գտնեն փրկութիւն: "Gilgamesh"-ին բնաբանը աս է. The Eternal Quest-ը[98] անմահութիւն փնտռել է եւ որուն վրայ բնաւ բան մը չենք գիտեր, քանի որ այս կեանքը գիտենք եւ կը ջարդենք, կը զոհենք զիրար:

Feminism-ի[99] միշտ հակառակ եղած եմ: Եթէ դասակարգ մը ըլլար, առաջի պաշտպանողը կ'ըլլայի: Կիներու հասկացողութեանը վրայ ընդհանրապէս շատ բարձր գաղափար չունիմ: Ամէն ճամբայ բաց ըլլալու է իրենց, բայց քիչերը կը յաջողին հաւասարիլ [այր] մարդոց հետ մտաւորական բաներու մէջ: Ուրիշ գործի եւ պարտականութեան համար յարմարուած են: Երբ հոս ատ աղմուկները հանեցին եւ Velasquez-ի[100] գեղեցիկ նկարը ջարդեցին, ատեցի զիրենք: Միւս կողմէն, եթէ կին մը կարենայ մարդոց հետ մրցիլ դժուար բաներու մէջ, ինչպէս՝ բժշկութիւն, փաստաբանութիւն, engineering[101], գեղարուեստները, չափազանց կը գնահատեմ, եւ կը հպարտանամ իրենցմով:

Գալով նկարչութեանս, դիմագծի մէջ ամէնէն շատ գովուած է գործս այս տեղի լրագիրներուն մէջ (portrait) թէ նմանութեան եւ թէ կենդանութեան համար: Շունի մը վկայութիւնը գիս աւելի հպարտացուց, քան լրագիրները: Sir Frederic Canyon-ի նկարը նոր վերջացած, պատին դէմ դրուած էր, կապուած շուն մը բերին, որ նկարը տեսնելով, ուզեց կապը կտրել եւ մօտենալ: Զարմա-

ցայ, որովհետեւ չուներ նկարի conscious[102] չեն: Երբ արձակուեցաւ, գնաց առջեւը նստաւ, փորձեց ձեռքերը առնել եւ հետը խօսելու ձայներ ընել: Sir Frederic-ին պատմեցի, ըսաւ. «չատ խելացի չուն ըլլալու է, չուն չատ սիրող մը ճանչցաւ»: Աչքս բաց մնաց: Ի՞նչ դրեր էի մէջը՝ այնչափ անշօշափելի յատկութիւն մը դուրս բերելու: Ուրիշ չուներ ալ նկատեր են գործս, եւ մինչեւ իսկ կատուներ:

Քանի մը բառ ալ գրական գործիս մասին, եւ վերջացնեմ աս անտանելի երկար նամակը: Գիրքերս գիտէք: "Armenian Legends"- ի վրայ ամէն լրագիր գովեստով գրեց: "Gilgamesh"-ի հրատարակուած օրը "Morning Post"-ը[103] առաջին երեսին սիւնակը "Book of the Day"[104] անունով նուիրեց, Լօնտօնի մեծագոյն գրավաճառը պատուհանին մէջ պատուոյ տեղը դրաւ մինչեւ քանի մը ամիսէն սպառուեցաւ: "Contemporary Review"-ն[105] 10-15 տող մը արտատպեց եւ ոճը Միլտոնի[106] «Դրախտ Կորուսեալ»-ին նմանեցուց: Հիմա collector-ի[107] գիրք է եւ գինը բարձրացած: "Gilgamesh"-ն ալ Sir Israel-ի յանձնարարութեամբ հրատարակուեցաւ ըսել էր՝ ներկայ գրողներուն մէջ չատ քիչ կան ասանկ անգլիերէն գրել կրցող: Ինք անգլիերէնի Professor[108] էր Լօնտօնի եւ Cambridge-ի համալսարանները:

"Contemporary Review"-ի յօդուածներս՝ 1. "Raffi, The Armenian National Writer"[109]; 2. "Avetis (sic) Isahakian"; 3. "Wit and Wisdom from the Near East"[110] (առածներ); 4. "Armenian and English Poetry: some parallels"[111]; 5. "War and Peace in Shakespeare"[112] (զարմանքով յիշուած լրագրութեան մէջ): 6. "Missolonghi"[113], Byron-ին վրայ, Յունաստանի գիրքէս: Եւ ամէնէն չատ գիս ուրախացնող բանը, որ Shakespeare-ի 300-ամեակը տօնելու հրատարակած գիրքին համար հայոց կողմէն բան մը գրել հրաւիրուեցայ եւ Sir Israel Golanezը գրեց. «ամէնէն գեղեցիկ բաներէն մէկն էր, որ ստացանք գիրքին համար, կ'ուզենք հետդ ծանօթանալ»: Երբ ազգային հանդէսը կատարուեցաւ, ամբողջ կառավարութիւնը եւ օտար դեսպանները բեմին վրայ, ամբողջ սրահը լեցուած անուանի անձինքներով՝ երկու բան կարդացուեցաւ ահագին հատորէն, որուն մէջ ամէն ազգ գրութիւններ ունէր: Մէկը Thomas Hardy-էն[114], որ Poet Laureate[115] էր ան ատեն, միւսը <u>իմս</u>[116]: Կեանքիս ամէնէն երջանիկ օրն էր, որովհետեւ Shakespeare-ը միշտ չատ սիրած եմ:

Ալ ինչ ըսեմ: «Էջմիածինը» գերմաներէն թարգմանած են եւ կ'ուզեն.... բեմադրել: Հագուստները չեն կրնար ձեռք ձգել: Րաֆֆիի «Հարեմը» play[117] շինած եմ, դեռ բան մը ըրած չեմ: Չորս fairy story[118] պզտիկներու համար գրած եմ, երկուքը տպուած "Girl's Own Paper"-ին[119] մէջ եւ չատ անգամ բեմադրուած, եւ հիմա վէպ մը կը գրեմ, որ երկինք եւ երկիր կը պարունակէ[120]... Ի՛նչպէս տպուի...

Կը յուսամ համբերութիւն կ'ունենաք աս անտանելի ինքնագով նամակը կարդալու:

Շատ սիրով բարեւներով՝

Ձերդ Զ. Գ. Պօյաճեան

ԺԳ.

"Eastway"
Sutton Road Seaford
England
Յուն. 23, 1950

Սիրելի պարոն Մեսրոպ.

Ձեր վերջին նամակը եւ գիրքը[121] ասկէ բաւական ժամանակ առաջ ստացած եմ, բայց Լօնտօն գացած էի երկու շաբաթէ ի վեր, մինչեւ հիմա չկրցի գրել: Հրաչին ցոյց տուի իրեն գրածնուդ համար եւ ինք պատասխանեց, բայց մոռցաւ նամակը ետ տալ, այնպէս որ կարելի է աս նամակովս չկարենամ ձեր բոլոր հարցումներուն պատասխանել: Վերջը դարձեալ կը գրեմ: Գիրքը կարդալու եւ մինչեւ անգամ նայելու դեռ ժամանակ ունեցած չեմ, բայց նուիրումը շատ հետաքրքրեց զիս եւ ուրախացուց, այնքան աննպաստ եւ պախարակող բաներ կը կարդանք եւ կը լսենք, որ միւս կողմը լսել մարդու սիրտը կը պաղեցնէ: Զգուեր եմ այս չար աշխարհէն եւ խօսած սուտերէն:

Այս օրերը մեր այս տեղի ընտրութիւններուն[122] համար շատ իրարանցում կայ, ուրախ եմ գոնէ, որ շունշաւորդի եկեղեցապուրէն[123] յոյս չկայ: Պահպանողականները անունին փոխել մինչեւ անգամ կը մտածեն, ոմանք նոր անուն ստեղծել, ուրիշներ՝ «ազատական» կոչել ինքզինքնին. ոչխարի մորթ հագած գայլեր: Ժողովուրդը այնչափ տգէտ է, որ չ[ի] հասկնար, թէ իրենց կայսրութիւնը կործանեցին եւ Ամերիկայի միլիոնատէրերուն գերի ըրին: Միայն ան է մխիթարութիւնը, որ իրենց ալ յոյս չկայ: Բայց աշխարհն ալ տակնուվրայ ըրին, Սամսոնին[124] պէս, ինքզինքնին սպանելով: «Եսքեր» գիրքիս վերջի երեսին մարգարէութիւնն է:

Դարձեալ հարցուցեր էք դէպի feminism ունեցածս դրութիւնը: Կ'երեւի չէք կրնար հաւատալ, որ ինծի պէս անկախ մտածում ունեցող կին մը, եւ իմ ըրած գործերս գլուխ հանող (!!), ինչպէս կրնայ կանանց քաղաքական իրաւունքներ չպահանջել: Բայց ճիշտ այդ պատճառին համար այնպէս էր: Հոս երկու feminist ընկերութիւն կար, մէկը, որ խանութներու պատուհաններ կը կոտրէին, արժէքաւոր նկարներ կը ջարդէին, Parliament Square-ի[125] երկաթներուն ինքզինքնին շղթաներով իշու պէս կը կապէին, անոնց բարեւ անգամ տուած չեմ: Միւս ընկերութիւնը "The Women's Freedom League"[126] աւելի վայելուչ վարմունք ունէին եւ օր մը հրաւիրեցին զիս "Women of the Near East"[127] նիւթին վրայ խօսելու: Իրենց նախագահը mss Despard[128], general French-ի[129] քոյրն էր: Եւ ահ ու դողով գացի՝ խորհելով, որ պատերազմին վրայ բաներ պիտի լսեմ: Բայց առաջի խօսքերը, որ ըսաւ, պատերազմին հակառակ էին, անանկ որ հանգիստ սրտով խօսեցայ եւ ուզածս ըսի: Անգլիացի մահմետական մարդ մը եկած էր, որ հարցուց՝ ինչու ըսի, որ մահմեդականները կիներ չեն յարգեր: Ընդհակառակը, "Mohammed said that men must be kind to women, and if possible, marry them"[130]: Ասանկ խօսք մը feminist ժողովի մը մէջը, կիները մեղուներու պէս վրան յարձակեցան, դուրս ըրին: "Kind[131]! Հետերնին ամուսնանալ kind-ութիւն է եղեր!!!": Ես բեմին վրայ առանձին մնացի եւ խնդալէն ջարդուեցայ: Անկէ վերջը երբեմն հետերնին կ'ըլլայի եւ կը խօսէի, քանի որ հակապատերազմական էին:

Ուրիշ feminist բարեկամուհի մը, ֆրանսացի Madame Rudler, որուն ամուսինը հոս Kings College-ի ֆրանսերէնի professeur[132] էր, "Jus suffragii"[133]

անունով լրագիր մը ունէր, որուն մէջ յօդուած մը գրել տուաւ ինծի՝ "La femme arménienne"[134]: Անոր համար ալ քանի մը անգամ խօսեր եմ: Շատ սիրելի եւ զարգացած տիկին էր, ան ալ հակապատերազմական, ատ Հայոց մասին, խօսելու համար է, որ իրենց հետ եղած եմ, ոչ feminism-ի: Կիներու մեծամասնութիւնը պակաս խորունկ կը մտածեն, քան մարդիկ, եւ այս պատերազմէն ի վեր լրագիրները լեցուն են իրենց թեթեւ խենթ դէմքերովը եւ ըրած անկարգութիւններովը: Միւս կողմէն, եթէ կին մը հաւասարի մարդուն եւ անոր ըրած դժուար գործերը ընէ, թէ՛ գիտութեան մէջ, թէ՛ գեղարուեստի, այնչափ աւելի կը յարգեմ եւ կը հպարտանամ իրենցմով: Բան մ'է, որ feminism կանչել աղաղակելով չ'ըլլար: Կինը բնականէն ուրիշ պաշտօն ունի: Եթէ երեխաներ պիտի ունենայ, եւ զանոնք պէտք եղածին պէս մեծացնէ աշխարհին օգտակար ըլլալու, ժամանակ քիչերը կ'ունենան ուրիշ գործով զբաղելու, իսկ այն քիչերը որոնք մասնաւոր ձիրք կամ մղում ունին գեղարուեստի կամ գիտութեան համար՝ բող ընեն ինծի պէս!!! բայց մարդուն գործը դուրսն է եւ աւելի բնականօրէն կրնայ մտաւորական գործերու հետեւիլ: Կինը եթէ ընէ, բնութեան դէմ կ'երթայ, որ ընդհանուր առմամբ լաւ չէ: Կան բացառութիւններ, ինչպէս Mme Curie եւ աղջիկը[135], որոնցմով շատ կը հպարտանամ իբրեւ կին, բայց քիչ են:

[նամակի լուսանցքում] Ուրիշ մը, որով շատ հպարտացած եմ, հայ աղջիկ մ'էր, որ Bruxelle engineering սորված էր՝ Օր. Օհանճանեան: 1914 պատերազմին հոս եկաւ, տեսայ: Աբէնք եղած ատենս օր մը սենեակս մտաւ խնդալով: «Պէլճիական ընկերութեան մը հետ եկած եմ հոս՝ նոր շոգեկառքի գիծ մը շինելու», ըսաւ: Երկու օրը անգամ մը կու գար խնդալով կ'ըսէր. «մեծ engineer-ի կամուրջը մերժեր են, իմս ընդունուեցաւ!», կամ ասանկ բան մը: Չհպարտանա՞ս:

Լօնտօնէն վերադառնալուս 15-16 կարեւոր նամակներ գտայ պատասխանելու, այնպէս որ շատ պէտք չէ երկարեմ ասոնք:

[...] Երբ Ձեր գիրքը կարդամ, դարձեալ կը գրեմ եւ տպաւորութիւններս կ'ըսեմ: Նոյն ժամանակ Դուք ալ ինծի գրեցէք:

Շատ բարեւներ Ձեզի եւ Երեւան ալ ղրկելու:

Ձերդ անկեղծութեամբ՝
Զապէլ Պօյաճեան

ԺԴ.

"Eastway"
Sutton Road Seaford
England
Jan. 28, 1950

Սիրելի պարոն Մեսրոպ,

Հրաչը Ձեր նամակը վերադարձուց, ուրեմն շարունակեմ իմ անվերջանալի գրութիւնս եւ աւելի երկարեմ՝ հարցնելով, թէ ինչու գրական մասին այնչափ երկար կը ծանօթացնէք զիս, եւ ոչ նկարչութեան: Ես նախ նկարիչ եմ, վերջը գրող, եւ հայերուն մէջ միակ նկարիչը որ կատարելապէս ուսանած եւ ձեռք ձգած է նկարչութիւնը: Հինգ տարի օրը եօթը ժամ Slade School of art[136] (լաւագոյնը) աշխատած եմ մերկ մարմիններ գծագրելով եւ նկարելով, anatomy[137] սորվելով: Այս բոլորին համար վկայականներ եւ diplom-ներ[138] ունիմ: [...]

Երկու գեղարուեստներու մէջ որեւէ երկրի մէջ ինծի չափ բարձր գովեստ ստացող եղած չէ, միջազգային, բայց մէկը չ[ի] ճանչնար զիս, նոր բան մը չեմ

կրնար հրատարակել, portrait-ի պատուէր չեմ ստանար, նկար չեմ կրնար ծախել, ստակ չունիմ, տուն, atelier[139] չունիմ, ասոր եւ Լօնտօնի մէջտեղ ճամբաները կը չափեմ, քաղցած կը սատկիմ:

Բաֆֆիներուն վրայ ուրիշ բան չկայ ըսելիք: Տիկին Աննան շատ տխուր եւ նեղսիրտ էր: Ամուսինին կենսագրութիւնը կը գրէր, բայց չեմ կարծեր վերջացուց[140]: Աղուոր կերակուրներ կը պատրաստէր եւ երբ քիչ մը ուրախ ըլլար՝ զուարճալի պատմութիւններ կ'ընէր իր երկու կեսուրներուն վրայ: Արամի մահը շատ զգաց, թէեւ առաջ այնչափ չէր գնահատեր զինքը, որչափ Արշակը եւ կը յանդիմանէր: Արամը շատ հանդարտ եւ «խեղճ» էր, թէեւ տակէն զօրաւոր կամք եւ խելք աւելի ուներ, քան Արշակը եւ աւելի սիրտ եւ քնքշութիւն: Արշակը King's College-ի ռուսերէնի պրոֆէսօր եղաւ, եւ մօրը մահէն վերջը ամուսնացաւ կէս հայ կէս իռլանտացի աղջկայ մը հետ: Լօնտօնէն քիչ դուրս աղուոր պզտիկ տուն մը գնեց պարտէզով: Ասկէ երկու եւ կէս տարի առաջ մեռաւ:

Իմ հրատարակած գործերս գիտէք

1. Yestere: The Romance of the Life. By "Vartenie."
2. Armenian Legends and Poems (թարգմանութիւններ).
3. Gilgamesh: A Dream of the Eternal Quest.
4. In Greece with Pen and Palette.
5. Contemporary Review 1. Raffi: the Armenian National Writer; 2. Avetis (sic) Isahakian: an Armenian Poet; 3. Wit and Wisdom from the Near East; 4. Armenian and English Poetry: Some Parallels; 5. War and peace in Shakespeare. 6. Missolonghi (Պայրընին Յունաստանի կեանքը).
6. Etchmiadzin.
7. Sanscrit-էն անգլերէնի թարգմանուած գիրք մը, որ պատերազմին առաջի տարին պատուիրուեցայ պատկերազարդել՝ "Bhartrihari Says."[141]
8. Abu Lalla (sic) Mahari.
9. Book of Homage to Shakespeare-ին մէջ ոտանաւոր մը, որ ամէնէն մեծ յաջողութիւնս է:
10. "Horses" by Balmont and "The Treasures of Solitude" by Brusov. Both translated form Russian and printed in "The Soul of Russia" during the war of 1914.[142]

Առաջինը հինգ sonnet-ներով[143] գրուած էր, եւ այնչափ դժուար, որ մարդ չէր համարձակեր ձեռնարկել: Ինծի եկաւ եւ Բաֆֆիները օգնեցին լաւ հասկանալու, թարգմանեցի: Շատ գեղեցիկ բան է, վայրենի ձիերու վրայ: Sir Israel տեսած էր եւ գրեց, հրաւիրեց զիս Book of Homage to Shakespeare-ին համար հայոց կողմէն ոտանաւոր մը գրելու: Ահագին գիրք մ'է, որուն մէջ ամէն ազգի մեծ գրողներէն գիտնական յօդուածներ կամ ոտանաւորներ կան: Sir Israel-ը ինծի գրեց. "it was one of the most beautiful things we received for the book. We should like to make your acquaintance, come and see us."[144] Գեղարուեստական յաջողութիւնը վերջի նամակիս մէջ գրեցի ձեզի: Երբ ազգային հանդէսը կատարուեցաւ 300-ամեակը տօնելու, կառավարութիւնը եւ օտար դեսպանները բեմի վրայ՝ սրահը խռնուած Անգլիոյ անուանի մարդիկներովը, գիրքէն երկու բան կարդացուեցաւ: Thomas Hardy-էն (որ ան ատեն Poet Laureate էր) եւ իմս: Կեանքիս ամէնէն երջանիկ օրն էր, որովհետեւ Shakespeare-ը միշտ պաշտած եմ: Sir Israel վերջը ուզեց "Gilgamesh"-ի typescript-ը[145] տեսնել: Իրիկուն մը

ճաշի հրաւիրեցին զիս, յետոյ ձայնով կարդաց երկու ժամ, երթալէն ոգեւորուելով: Լմնցուց, վար նետեց եւ ըսաւ. "I congratulate you. It's a very ambitious piece of work and a very successful piece of work. I'll take it to a publisher myself."[146] կնոջն ալ ըսեր էր. «մեր հիմակուայ գրողներէն շատ քիչերը կրնան ասանկ անգլիերէն գործածել», եւ ինք անգլիերէնի փրոֆէսօր էր King's College, London եւ Cambridge:

Գեղարուեստական յաջողութիւնը վերջի նամակիս մէջ գրեցի ձեզի: Գացի British Museum-ը եւ Sir Ernest Budge-ին[147] խնդրեցի, որ յառաջաբանը գրէ, առաջ մերժեց, բայց կարդալէ վերջը սքանչելի բաներ գրեց[148]: Հրատարակուելուն փառաւոր տունի մը մէջ մեծ հաւաքոյթ մը կայ եղեր, եւ գիրքը ձեռքէ ձեռք անցուցեր են: Sir Frederic Kenyon[149], British Museum-ի նախագահը, չէր կրնար վար դնել, եւ կը հարցնէր. «Ո՞վ է աս: Ինչպէ՞ս կրնայ ասանկ անգլիերէն գրել, եթէ բոլորովին անգլիացի չէ: Ինչպէս կ'ըլլայ, որ անունը լսած չենք, եթէ ասանկ կը գրէ»: Ան լսած ըլլալով Յունաստանի գիրքին համար իրեն գացի, խնդրեցի որ յառաջաբանը գրէ: Այնպէս որ երկու գիրք ունիմ, որոնց «կնքահայրերը» British Museum-ի ամէնէն մեծ պետերը եղած են, որով շատ կը հպարտանամ»:

Կը զարմանամ, որ "Gilgamesh" տեսած չէք. մոռցած ըլլալու էք: Ձեր Լօնտօն վերջի անգամ գալէն շատ առաջ հրատարակուած է 1924-ին, "Armenian Legends"-ի դիրքովը, բայց պակաս հաստ: Հին յունական ձեւովը գրուած է (Aeschylus, Sophocles[150]), երեք act[151], ոմանք երկու երեք տեսարաններով եւ ամէն act-է առջեւ Prologue[152] մը: Blank verse (առանց հանգերու), որ անգլիերէն գրելու ամէնէն դժուար եւ յանդուգն ոճը կը սեպուի: Պատմութիւնը cuneiform brick-երու[153] վրայ է, որ անշուշտ չեմ հասկնար, միայն ուսումնասիրութիւները կարդացած եմ: Ջրհեղեղի պատմութիւնը մէջը կու տայ, Սուրբ Գիրքէն աւելի հին, եւ այդ առիթով հայոց խնդիրը հոն ալ մտցուցեր եմ!! – իբր պայման աշխարհին խաղաղութեան: Ուրիշ նոյն ժամանակին պատմութիւններ ալ կան, որոնք մէջը բերեր եմ: "Eternal Quest"-ը մարդուն միշտ անմահութեան ձգտումն է, եւ Կիլկամէշի փնտռածը՝ ամէն սոսկալի տեղ թափառելով եւ չգտնելով, հրէշներ տեսնելով, մահուան ջուրերը անցնելով. սոսկալի բաներ կան մէջը: Նպատակը այն է, որ ուրիշ կեանքի վրայ պէտք չէ մտածել, հապա այս կեանքը կարելի եղածին չափ երջանիկ ընել, թէ՛ մեզի եւ թէ՛ ուրիշներու համար: Կիլկամէշը անգութ յաղթող մ'էր: Ժողովուրդներ աստուածներուն կանչեցին, որ ազատեն զիրենք: Անոնք հրէշ մը ստեղծեցին, La-Bani-ն, որ ոչնչացնէ զինքը, բայց Կիլկամէշ որոշեց զինքը բարեկամ ընդունիլ եւ երկուքը միասին այնչափ զօրացան որ Իշթար (Ishtar, Eshtar) աստուածուհին եկաւ, ամուսնութիւն առաջարկեց Կիլկամէշին, որ յաղթելով մերժեց: Իշթար անիծեց զիրենք, եւ La-Bani-ն սատկաւ: Անկէ Կիլկամէշը վախցաւ մահէն, եւ այս սոսկալի ճամբորդութիւնը յանձն առաւ՝ անմահութեան ծաղիկը գտնելու: Կը գտնէ, բայց քաղած ատենը ահագին օձ մը կ'ելլէ, եւ ձեռքէն կը խլէ: Յուսահատ՝ La-Bani-ին ոգին կը կանչէ, բայց ան ալ իրեն երջանկութեան յոյս չ[ի]տար, եւ կը թելադրէ, որ այս կեանքին վրայ կեդրոնանայ: Այս է պատմութիւնը: Բայց մէջը բերած եմ նաեւ իրենց creation epic-ի[154] զարմանալի պատմութիւնը, ինչպէս նաեւ Իշթարի մեռածներուն աշխարհը երթալը՝ մեռած ամուսինը գտնելու. ամբողջը symbollical[155] է եւ կը նշանակէ աշխարհին դէպի գարուն դառնալը:

"Contemporary Review"-ն մէկ եւ կէս երեսի յօդուած մը գրեց, 12 տող արտագրելով եւ ըսաւ. "It's like Milton's glorious line"[156]: Ասկէ քանի մը տարի առաջ Liverpool մէկը տեսած էր, չեմ գիտեր ինչպէս զիս հոս գտաւ, գրեց, բեմադրելու հրաման ուզեց, երաժշտութիւնով: Ըսի, որ բեմադրութեան համար գրած չեմ, speech-երը[157] շատ երկար են եւ characterization[158] չկայ, ճամբորդութիւն մըն է, բայց թէ որ կրնաք բան մը ընել՝ ըրէք: Երեք ամիս աշխատեցան եւ գրեցին. "You were right, and it's so beautiful that it would be a crime to cut any of it, it's unfathomable"[159]: 16 գունաւոր նկար կայ մէջը, պապելոնական ձեւի վրայ հիմնուած, ասոնք ալ շատ գովուեցան: Գերմանիա եւ Իտալիա ահագին յօդուածներ գրուեցան վրան, քանի մը լեզուներով ալ, որոնք չեմ հասկնար:

Գալով միւս գործերուս, "Etchmiadzin"-ը New York բեմադրեցին, լաւ ձեւ կայելով՝ շատ վատ[160]: Saint Agnes[161] Հռիփսիմէին ժամանակակից էր, եւ մէջ բերած եմ, որպէսզի հայերը կապեմ Եւրոպա գիտցուած եւ շատ սիրուած անձի մը եւ ժամանակի մը հետ: Կտրեր-հաներ են, «որովհետեւ հայ չէ»: Advertise[162] ըրին, "The original story by Zabelle C. Boyadjian, adapted for the stage by"[163] իրենց Hollywood-ի էշերէն մէկը: Այնչափ կատղեցայ, որ դատ պիտի բանայի իրենց դէմ: Բայց «Հայրենիք» լրագիրը պէտք եղածը գրեց, ալ բան չըրի: Մինչեւ անգամ "Contemporary Review"-ն վրան գրեց, ըսելով՝ "it would act well"[164]: Գերմաներէնի թարգմաներ են, Hannover-ի եպիսկոպոսին եւ քաղաքապետին հովանաւորութեան տակ բեմադրելու, հագուստները չկրցան գտնել:

Չորս fairy play[165] ունիմ պզտիկներու համար՝ "Cinderella," "Snow White," "Puss in Boots" (գլուխ գործոցս!), "Blue Beard,"[166] երկու առաջինը "Girl's Own Paper"-ին մէջ տպուած, բոլորը չափերով եւ հանգերով:

Կարգ մը կարճ պատմութիւններ, ամէնն ալ անբնական, բայց ո՛չ ghost story[167]: Մէկը «Արտաւազդ»-ն է, իմ ձեւովս գրուած, ամէնը անտիպ:

Հիմա կ'աշխատիմ նոր երկար վէպի մը վրայ աշխարհային պատմութեան վերջի յիսուն տարիներուն: Առաջի մասը գրեր եմ, կարծեմ շատ յաջող, երկինքին[168] մէջ է եւ շատ զուարճալի: Բայց ի՞նչ քաջալերութիւն կայ այնչափ աշխատանք տալուս, գլուխ գործոց մը ստեղծելու, կրակին մէջ նետելու համար:

"The Death of Tiberius" այնչափ գովուեցաւ երկու drama-յի պրոֆեսորներէ, մէկը աշխատեցաւ հոս բեմադրել, միւսը Գերմանիա տարաւ, ոչ մէկը յաջողեցաւ: Վերջերս հոս դարձեալ ուզեցին տեսնել, հետաքրքրուեցան, բայց չկրցին բեմադրել: Հիմա միեւնոյն ապուշ բաներ կ'ուզէ ժողովուրդը: Ունիմ նաեւ Րաֆֆիին "Harem"-ը play-ի վերածուած, որ շատ զուարճալի է:

Գերմաներէնէ Աբու Լալային կէսին չափ երկար ոտանաւոր մը թարգմաներ եմ Nürnberg-ի հրատարակիչի համար, որուն նոյնչափ ոգեւորուած են հոն, որչափ հայերը Աբու Լալայէն: Կ'ուզէին երեք լեզուով հրատարակել՝ անգլերէն, ֆրանսերէն եւ գերմաներէն, բայց երեւի չկրցին, կամ հրաման չտրուեցաւ, կամ պէտք եղածը չկար: "Das Nachtgesicht" – "The Vision of the Night,"[169] սոսկալի բան մ'է պատերազմին վրայ, շատ աւելի ուժեղ, քան Աբու Լալան: Շատ կ'ուզեմ, որ Nürnberg երթամ եկող ամառ, բայց ինչ օգուտ, գեղեցիկ քաղաքը բանդուած տեսնել, արդէն եղած եմ, գիտեմ, բայց հոն մարդ

չեմ ճանչնար անձամբ: Այս թարգմանութիւնը Չեզի պիտի ղրկեմ ռուսերէն ըրածներուս հետ:

Գալով լեզուներու. ֆրանսերէն երեխայութենէս սորված եմ: Ռուսերէն տարիներ սորված եմ, բայց շատ դժուար լեզու է: Իտալերէն դիւրութեամբ կը կարդամ, քիչ մը կը խօսիմ, գերմաներէն կը կարդամ, քիչ կրնամ խօսիլ եւ գրել, սպանիերէն կը կարդամ, նորվեգերէն եւ Swedish[170] բառարանի օգնութեամբ կրնամ կարդալ: Յունարէն նոր կտակարանը եւ թարգմանութիւնը հետս ունենալով հին classic-ներուն[171] կրնամ հետեւիլ եւ esperanto գիտեմ: Լեզուներ կը սորվիմ կարդալու համար, որովհետեւ թարգմանութիւն չեմ սիրեր, թէեւ կ'ընեմ:

Երբ Brest-Litovsk-ի դաշինքով[172] Հայաստանը դաշնակցական գաւառ մը հաստատուեցաւ, Յակոբեանը շնորհաւորեցի, ըսաւ «մենք ռուսերուն եւ գերմանացոց տուածը չենք ուզեր: Դաշնակիցները մեզի ամբողջ փոքր Ասիան պիտի տան»: Ըսի «անուշ ըլլայ»: Երբ Lausanne ժողովը իրենց իշու պոչ ալ չտուին, "what do you think now, Mr. Hacobian"[173], ըսաւ՝ խօսքով չ[ի] բացատրուիր զգացածս, եւ դարձեալ այն փոքր Հայաստանը քանդել փորձողը մեր «եկեղեցաբլուրն» էր: Հայերը à la longue[174] քիչ մը խելք սորված էին, եւ սովիէք դարձան: Արամ Րաֆֆին շատ աշխատեցաւ այն տարիները՝ 1918-1920, ասոնց բան մը ընել տալու, բայց իզուր: Առողջութիւնը բոլորովին կորսնցուց գործը շարունակելով՝ բժիշկներուն պատուէրին հակառակ եւ զոհ գնաց:

Կը կարծեմ, թէ աս անգամ գլուխնիդ բաւական ցաւցուցի! Եթէ ուրիշ բան կ'ուզէք, դարձեալ կը գրեմ: Գիրքը նայելու դեռ ատենն չեղաւ:

Չերդ՝ Զապէլ Պօյաճեան

ԺԵ.

at "Eastway"
Sutton Road
Seaford, Sussex
England
Փետ. 11. 1950

Սիրելի պարոն Մեսրոպ.

Կարդացի Չեր գիրքը[175], եւ առաջի անգամ ըլլալով՝ կարդացի կոտորածներու եւ պատերազմի վրայ մանրամասնութիւններ, որովհետեւ Չեր գրածն էր: Ինչ ըսեմ: Դարձեալ պէտք է իմ վրայ գրեմ, որ կարենամ բացատրել տպաւորութիւնս: Ես կոտորած տեսեր եմ, եւ մօր ու եղբօրս հետ հազիւ թուրքերուն գնդակներէն եւ սուրերէն ազատուեցանք: Տունէն դուրս գալէ առաջ իրար համբուրեցինք եւ հրաժեշտ տուինք: Երբ Անգլիա եկայ, եւ հասկցայ, որ 1850 թուականէն ի վեր մօրս ազգին քաղաքականութիւնն է եղեր հօրս ազգին այնչափ տառապանք պատճառող, "Yestere" գիրքը հրատարակեցի իբրեւ բողոք: Երբ երկու եւրոպական պատերազմները եղան, եւ ինքզինքնին քրիստոնեայ կոչող ազգերը թուրքերուն չափ կամ աւելի ոճիրներ գործեցին, նոյնպէս անպաշտպան կիներու եւ երեխաներու վրայ bomb[176] ձգելով, հարիւր հազարներով ջարդեցին, միտքս այնչափ վիրաւորուեցաւ, ալ չկրցայ լրագիրներուն մէջ մէկ բառ կարդալ վերջին պատերազմին ամբողջ ընթացքին: "Yestere" գիրքէս 30 տարիէ ի վեր օրինակ մը չունիմ, ասկէ քիչ առաջ Manchester-էն մէկը ինծի համար մը ղրկեց, ան ալ չկրցի կարդալ: Միտքիս մէջ մէկ բան հաստատուեր է, որ պատերազմներուն իրական պատճառը ժո-

դովուրդներուն ըսուածը չէ, մարդկութիւնը ամէն երկրի մէջ զոհ կ'երթայ սուտերու, ես գործ ըրած եմ տակէն եղածները ուսումնասիրել: Մեծ քանակութիւնով փաստեր հաւաքեր եմ, որոնց վրայ հիմնելով շատ դժուար վէպ մը սկսած եմ: Բայց առանց հրատարակելու յոյսով:

Գալով Ձեր գիրքին, լաւ գրուած է, մանաւանդ մէջտեղի մասը, ներգաղթը: Շատ գեղեցիկ կերպով նկարագրած էք գնացքին Հայաստան մտնելը եւ տեսարանները, չնայած որ արդէն երեւակայեր էի եւ անգամ մը գրեցի Ձեզի որ մինչեւ անգամ կայարաններուն անունները հայերէն գրուած տեսնելու կը փափաքիմ: Ձեր նկարագրութիւնը կարդալուս աչքերս արցունքով լեցուեցան: Բայց գիրքին մէջ ամէնէն շատ սիրուն բանը ... Մարջանն էր! Որքան գեղեցիկ կերպով նկարագրեր էք ներգաղթող կինին նրբութիւնը, զգայունութիւնը, ազնուականութիւնը, հասկացողութիւնը, սէրը իր եւ Րաշիտին մէջ: Երբեք չեմ կարդացած ձեւի մէջ այնչափ կատարեալ եւ սիրուն բառերով ներկայացուած պատկեր եւ մինչեւ վերջի վայրկեանը կը վախնայի, որ սպաննել պիտի տաք կռիւին մէջ: Ուրախ եմ, որ չըրիք:

Ձեր feminism-ը գիրքին մէջ յայտնի է, բայց զիս չը համոզեր: Կինը մարդուն հաւասար ըլլալու չէ, բայց աւելի բարձր զգացումով՝ իմաստութիւնով (ոչ intellectually[177], բայց feelingly, understandingly[178]): Ասոնք յատկութիւններ են, որ մարդիկ կիներու չափ չունին, բայց անհրաժեշտ են աւելի լաւ աշխարհ մը ստեղծելու: Կին մը, որ զաւակը, եղբայրը կամ ամուսինը յօժարութեամբ կու տայ սպաննելու, վիրաւորուելու եւ ջախջախելու՝ արդէն [անընթ.] եղած է: Իմ գիրքիս մէջ առաջարկներէս մէկը պիտի ըլլայ, որ կիները մերժեն երեխաներ աշխարհ բերել, մինչեւ որ աշխարհին խնդիրները առանց պատերազմի կարգաղրուին: Երկրորդ, որ ամէն երկիր միաժամանակ օրէնք մը անցուի, որ ինչ նախարար որ պատերազմ հռչակէ՝ չարաչար կերպով սպաննուի, ինչպէս որ աւելի ոճրագործութիւններու համար կը կախեն: Անգլիացւոց միշտ կ'ըսեմ որ կոմունիզմի դէմ չէք կրնար պատերազմիլ, որովհետեւ ազգ չէ, գաղափար է: Ամէն երկրի մէջ կայ, եւ եթէ Ռուսիոյ դէմ պատերազմիք՝ ամէն տեղ կը բռնկի:... Ժողովուրդին բան մը տուէք, որ աւելի սիրեն:

Սիրտս շատ նեղ է հոս, մէկ բարեկամ, գաղափարակից չունիմ, որուն հետ կրնամ խօսիլ: Եղբօրս կինը շատ բարի եւ սիրով է ինծի հետ, բայց այս խնդիրներովը ոչ կը հետաքրքրուի, ոչ ալ համաձայն է ինծի:

[...] Միւս անգամ '14-ի պատերազմին սկիզբները կը գրեմ, եթէ չէք ձանձրանար: Գիրքը, որ կը գրեմ, ասանկ պատմուածք չէ, վէպ է եւ առաջի գլուխը, որ արդէն գրած եմ, շատ զուարճալի եւ անսովոր է...

Կը խնդրեմ երկտող մը գրեցէք ինծի զիս զուարճացնելու: (....)

Զ. Կ. Պօյաճեան

ԺԶ.

"Eastway"
Sutton Road Seaford
England
Մայիս 18, 1950

Սիրելի պարոն Մեսրոպ,

Ձեր նամակը ստացայ եւ կը տեսնեմ որ դարձեալ չկրցի ինքզինքս բացատրել: Անգամ մը եւս փորձեմ! Ոչ Անգլիացի եմ, ոչ Հայ, ըսելս երկու ազգերս ուրանալ չէր, ապա patriotism[179] չունենալս այն տեսակէտով, որ մինչեւ

անգամ իմ ազգս եւ ժողովուրդս կոտորել տամ, որ ուրիշ ազգ մը ջնջեմ: Communism-ի[180] սկզբունքն ալ ատ է: Ես միշտ եղած եմ անոնց համար դժբախտաբար, որոնք դժուարացեր, կոտորուեր են ուրիշ ազգերու patriotismի (որկրամոլութեան) համար, այս պատճառով ձեռքէս եկածը ըրեր եմ հայերուն համար, մինչեւ ինքզինքս վնասել: Իմ անունս Zabelle չէ, Isabella Catherina է: Հայ ձեւը առի, ըսելով եթէ լաւ գործ անեմ, պատիւը աւելի հայ կողմիս թող երթայ, անոնք աւելի պէտք ունին: Բայց հայերը հոս սիրուած չեն. մէկ երկու լրագիր գործիս վրայ գրելով ըսին ալ, սիրուած չեն, որովհետեւ անգլիացւոց քաղաքականութիւնը թուրքերուն հետ բարեկամ ըլլալ եղած է: Այսօրուան պէս կը յիշեմ երբ, առաջի կոտորածներուն[181] խնդիրը փակեցին, Lord Salisbury-ն[182] ըսաւ. "We have higher interests to consider than the wretcheds who perished in these massacres"[183] (շեշտերը ես դրի): Ան խօսքը "Yestere" գիրքիս վերջի երեսներուն մէջ դրի: Եթէ մականունս անգլիացնելու փոխանակ անուններս հայացուցած [ըլլայի], հոս շատ աւելի յաջողութիւն կ'ունենայի: Բայց չեմ զղջար, գոնէ բոլոր անգլիական մամուլին մէջ գովել տուի հայոց գրականութիւնը [...]:

Բայց խնդիրը իմ գերմանացիս սիրելուս կամ Ձեր չսիրելուն վրայ չէ: Ես հետերնիս եղած, ճանչցած եմ զիրենք ներսէն: Դուք դուրսէն, իբրեւ թշնամի կը նայիք: Ես որեւէ ազգ չեմ սիրեր, բայց ամէնը տարբեր յատկութիւններ ունին, որ հետաքրքիր են: Բայց ամէն ժողովուրդ լաւ է, կառավարութիւններն են որոնք ատել եւ չարութիւն ընել կը սորվեցնեն սուտերով: Իրական պատճառները ժողովուրդներէն գաղտնի են: Ասոնք հասկնալով զբաղուեր եմ, եւ գաղափարակից շատ յայտնի մարդոց հետ բարձր դիրք ունեցող, ինչպէս Ramsay Macdonald, Lord Noel Buxton[184] եւ ուրիշներ, աշխարհը միայն այն ժամանակ կը «փրկուի», ո՛չ մէկ կողմին յաղթելովը եւ միւսը ոտնակոխ ընելով: Ապացուցուած է, որ '14-ի պատերազմն ալ աս կողմէն սարքուած էր, մինչեւ անգամ arch-duke-ի[185] սպանութիւնը, եւ ռուսերը (ցարական) առաջի արշաւողներն էին: Անգլիան Պաղտատի շոգեկառքէն[186] վախցաւ, Հնդկաստանի համար: Հիմա Հնդկաստանն ալ գնաց[187], եւ ամբողջ աշխարհը եռացումի մէջ է:

Դարձեալ կը կրկնեմ, որ հայերը շատ սխալ ըրին դաշնակիցները օգնելով. որեւէ ազգ չ[ի] թոյլ տար պատերազմի ժամանակ թշնամիին օգնել, եւ Nansen-ին[188] պէս մեծ եւ չէզոք մարդուն ըսածին աւելի կարեւորութիւն կու տամ, քան որեւէ մէկուն, թէ գերմանացիք տեղահանութեանը համաձայնեցան, բայց կոտորածներուն բողոքեցին, ասկէ աւելին չէին կրնար ընել առանց անմիջապէս պատերազմը կեցնելու եւ պարտուելու: Երանի թէ ընէին, բայց ո՞ր ազգը կ'ընէ: Չնայած ասոր Brest-Litovsk-ի դաշնադրութեամբը գերմանացիք էին, որ ռուսերուն հետ (Kerensky-ին[189]) առաջի անկախ Հայաստանը հաստատեցին, 500 տարիէ ի վեր, ասոնք էին որ Soviet դարձան, երբ Churchill-ը վրանին արշաւեց, եւ երբ դաշնակիցները Lausanne-ի (Լոզան) ժողովին ամբողջ խնդիրները իրենց կամքին տակ ունէին, մնացած Հայաստանը դարձեալ թուրքերուն պարգեւեցին...

Եւ հիմա դաշնակից եւ communist հայերը զիրար նոյնչափ կ'ատեն, որչափ որ ամերիկացիք եւ ռուսերը: Armenian Affairs-ին[190] մէջ այնչափ թշնամական յօդուած մը տեսայ, որ կը մտածեմ գրել եւ անունս հանել տալ իրենց ցանկին մէջէն: Առաջ Անդրանիկը հերոս կը նկատէին, հոս եղած ատենը

նկարեցի զինքը, եւ նկարս National Portrait society-ին[191] մէջ ցուցադրուեցաւ: Քանի մը անգլիական լրագիրներ գովեստով գրեցին գործիս վրայ, եւ Manchester-ի հայերը գնեցին, եկեղեցիին տունը կախեցին: Հիմա անյայտացեր է. իբր թէ մէկը չ[ի] գիտեր՝ ուր է եւ ինծի կ'ըսեն «կարելի է երբեք հոն եղած չէ»: Գեղեցիկ գործս անյայտացուցեր են, ով գիտէ, այրած կամ կտորկտոր արած: Գեղարուեստը այսչափ կը հասկնան: Սարսափելի բարկացած եմ. գեղարուեստը ի՞նչ գործ ունի իրենց աղտոտ քաղաքականութիւններուն հետ:

Ուրիշ առաջնակարգ հայ մը, որ գերմանական կրթութեան արդիւնք է, Գարեգին արքեպիսկոպոսն[192] է, հիմա Սիսի պատրիարք, անճամբ ճանչցայ զինքը: Իսկ Եւրոպայի մէջ հիմակուայ պատահածը անգլիական առածն է՝ "When thieves fall out then comes the tug of war"[193]:

Ըսելիք շատ բան կայ, բայց նամակով չ[ի] պատմուիր: Կը յուսամ, թէ քիչ մը կրցի դիրքս եւ կարծիքներս, սկզբունքներս բացատրել: Մէկ բան եւս: Ձիւնորական պարտութիւնը իրական պարտութիւն չէ: Հայերը ատ ապացուցեցին՝ Վարդանանցը ազգային տօն ընտրելով: Անգլիան երեք անգամ պարտուեր է, այսօր երեքովը կը պարծենան, 1. հռովմայացիք, որոնք իրենց քաղաքակրթութիւնը բերին, 2. Saxon-ները, որ այն չափ սիրուած Alfred թագաւորը տուին՝ Oxford համալսարանի հիմնադիրը, եւ 3. Norman-ները, որոնք չկրցին Անգլիան ֆրանսացնել, իրենք անգլիացան: Հայը մինչեւ հիմա մնացեր է, թէեւ այնչափ կոտորուեր է, իսկ Անգլիոյ այս վերջի յաղթելը կայսրութիւնը կոտրեց:

Աշխարհը այն ատեն կը փրկուի միայն, երբ <u>առանց</u> պատերազմի լուծուին խնդիրները: La Fontaine-ի[194] իշուն ըսածն է՝ "Notre ennemie c'est notre maitre, je vous le dis en bon francais!"[195]...

Բարեւներով՝ Զ. Պօյաճեան

ԺԷ.

at "Eastway"
Sutton Road
Seaford, Sussex
England
Sep. 7, 1954

Սիրելի պրն. Մեսրոպ,

Վերջապէս Ձեզմէ նամակ ստանալուս ուրախացայ, բայց երբ Աղաւնիին մահը կարդացի, շատ ցաւեցայ: Զինքը անճամբ շատոնց տեսած չեմ, բայց այնչափ համակիր [համակրելի] էր, եւ իր վրայ Ձեր գրածները այնչափ մօտ բերած էին զինքը ինծի, որ կ'զգայի թէ երեկ տեսած եմ:

Արշակ Բաֆֆիի մահէն վերջը կինը մեր գիտցած տունը ծախեց եւ հիմա վարձուած սենեակի մը մէջ կ'ապրի Լօնտօնի աւելի մօտ: Ես հասցէն չեմ գիտեր, բայց Հրաչ Գասպարեան, ջութակահար բարեկամս գիտէ: Կը հարցնեմ իրեն եւ Ձեզի կը ղրկեմ: Հրաչը Լօնտօն ուսուցիչ է ջութակի քանի մը դպրոցներու մէջ, նոյն կողմը, ուր տիկին Բաֆֆին կ'ապրի:

Գալով Իսահակեանին, զարմացայ որ «Աբու Լալայի» թարգմանութիւնս չունի[196]: Որչափ որ կը յիշեմ, իրեն անմիջապէս օրինակ մը ղրկեցի «Տարեկան ձեռնարկէն»[197], որուն մէջ տպեր էին: Արդէն նեղացած էի անոր մէջ տպուելուն, որովհետեւ ան ձեռնարկը միայն հայերը կը կարդան եւ ես ժամա-

նակս չեմ վատներ հայկական գործեր անգլիերէնի թարգմանել, որպէսզի հայերը կարդան, թող իրենք բնագիրը կարդան: Իմ գործս ըրած եմ հայկական գրականութիւնը անգլիացւոց ծանօթացնել ինչպէս "Armenian Legends and Poems" գիրքովս ըրի, ամէն լրագիր վրան գրեց եւ մէկ երկուքը ըսին՝ ով գիտէր որ հայերը ասանկ գրականութիւն մը ունին:

Աղաւնիին լսածներէն ամէնէն շատ սիրածներէս մէկն էր. «Ախ, մեր գրականութիւնը անգլիացւոց ծանօթացուցիր»:

«Չեռնարկէն» երկու օրինակ ունիմ. մէկը աս նամակին հետ Չեզի կը ղրկեմ, որ Իսահակեանին հասցնէք, ինծմէ շատ բարեւներով: Տգէտ հայ ամերիկացիները շատ մը սխալներ ըրած են տպագրութեանը մէջ, որոնք սրբագրած եմ. նկարներէս ալ երկու լուսանկար կը երեւակեմ նրա համար:

«Աստուածածին» եւ կատու նկարել շատ կը սիրեմ... երկուքն ալ դժուար են, քիչ նկարիչներ կը յաջողին ընել: Կը ներփակեմ նաեւ «Աւարայր»-ի նկարը (3 ոտքx4 ոտք) [90x120 սմ.], որ Պօսթօնի հայերը գնեցին: Հիմա «Էջմիածինը» կը նկարեմ, գրեթէ նոյն մեծութեամբ:

Գալ շաբաթ Լօնտօն պիտի երթամ, որովհետեւ "The Death of Tiberius" drama-ս Ealing-ի[198] թատրոնը կը բեմադրեն: Աս խաղը պատերազմէն առաջ յայտնի դերասան մը ուզեց տալ: "Բայց, ըսաւ, մեծ play է եւ մեծ բեմ եւ թատրոն կ'ուզէ": Անանկ որ մնաց՝ պատերազմին մօտ ըլլալուն համար:

Ան այժմ այսքան, երբ տիկին Բաֆֆիի հասցէն գիտնամ, դարձեալ կը գրեմ: Եթէ կ'ուզէք, աս նամակն ալ պրն. Իսահակեանին ղրկեցէք գիրքին եւ լուսանկարներուն հետ:

Շատ բարեւներով՝
Չերդ Զ. Պօյաճեան

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Մէջբերումները վերցուած են սփիւռքահայ մամուլում լոյս տեսած անյայտ հեղինակի «Օր. Զապէլ Գ. Պօյաճեան» եւ Ա. Պետիկեանի «Մեծ Հայուհի Մը» Զապէլ Պօյաճեան» յօդուածներից: Ցաւօք, սկզբնաղբիւրում, որտեղից վերցրել ենք սոյն կարծիքները (ԳԱԹ Աղաւնի Աշոտեանի կտրօնների հաւաքածուի ալբոմ, էջ 44), սոյն յօդուածների կտրօնների վրայ նշուած չէին պարբերականի անունը եւ հրատարակման թուականը:

[2] Այս հատուածը նոյնպէս քաղուած է Պետիկեանի վերոյիշեալ յօդուածից:

[3] Պօյաճեանի մասին մանրամասն տե՛ս՝ Տիգրան Խորշիդեանի *Զաբէլ Բօյաջեան* (sic) մենագրութիւնում (Երեւան, «Հայաստան» Հրատ., 1990):

[4] ԳԱԹ, Գարեգին Լեւոնեանի Ֆոնդ, թիւ 1736-1737:

[5] Օսքար Ուայլդ (1854-1900), անգլիացի գրող:

[6] Այստեղ՝ փայտէ տպագրական կաղապար (անգլ.):

[7] Նկատի ունի Գարեգին Լեւոնեանի խմբագրութեամբ հրատարակուող *Գեղարուեստ* հանդէսը, որ լոյս է տեսել1908-1921ին Թիֆլիսում:

[8] Պօյաճեանը այդպէս էլ Կովկաս եւ Հայաստան չի այցելել:

[9] Ճարտարապետ Հենրի Պօյաճեան (1875-1947):

[10] Բրիտանական Թանգարան (անգլ.):

[11] Լէոնարդօ Դա Վինչի (1452-1519), իտալացի նկարիչ:

[12] Նկատի ունի Նախիջեւանի Ս. Երրորդութեան կամ Երեք Խորանի Եկեղեցում յայտնաբերուած աստուածամօր նկարը: Այն վերագրում է Լէոնարդօ Դա Վինչիին կամ նրա աշակերտ Կորրէջոյին: Այս մասին վկայել է Նախիջեւանի հոգեւոր ա-

ռաջնորդ Սիոն վարդապետը թիֆլիսահայ մամուլում հրատարակած յօդուածներում («Լէոնարդօ Դա Վինչիի Մի Նկարը Հին-Նախիջեւանում», *Հորիզոն*, 21.01.1914 եւ «Մի Նոր Ջիօկօնդա Հին-Նախիջեւանում», *Մշակ*, 24.01.1914): Յայտնաբերուած գեղանկարի լուսանկարը 1921ին առանց մեկնաբանութիւնների Գարեգին Լեւոնեանը հրատարակել է իր խմբագրած *Գեղարուեստ* ամսագրում: Այս մասին տե՛ս՝ Արգամ Այվազեան, *Նախիջեւանի Որմնանկարչական Արուեստը*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 1998, էջ 66, 105-106: Ցաւօք, սրբանկարի յետագայ ճակատագիրն անյայտ է:

[13] Արամ Րաֆֆի (1875-1919), վիպասան Րաֆֆու աւագ որդին, որը Լոնդոնում աւարտել էր համալսարանի անգլիական գրականութեան դասընթացները եւ դարձել գրականագէտ, հասարակական գործիչ:

[14] Ժան Պոլ Ռիխտէր, արուեստաբան, պատմաբան, որն առաջինն է գրել Լէոնարդօ Դա Վինչիի Հայաստան ճամփորդութեան մասին (1884): Տե՛ս՝ Կոստան Զարեան, *Դէպի Արարատ*, Երեւան, «Սարգիս Խաչենց Այբբէնգիմ» Հրատ., 2001, էջ 227, 242:

[15] Քննադատ (անգլ.):

[16] Դա Վինչիի «Երեք Հայկական Գլուխներ» գծանկարի վերատպութիւնը տե՛ս՝ Արմէն Զարեան, *Հայ Ճարտարապետութեան Տարածումը եւ Լէոնարդօ Դա Վինչիի Հայկական Վարկածը*, Երեւան, «Ապոլոն», 1994, ներդիր, էջ III:

[17] ԳԱԹ Արշակ Չօպանեանի Ֆոնդ թիւ 6368-6371:

[18] Այս բառը չկարողացանք պարզել:

[19] Ժանեակ (ֆրանս.):

[20] Ինքնատիպ (անգլ.):

[21] Ցուցադրութիւն (անգլ.): Նամակը վկայում է, որ 1916 Մայիսին Պօյաճեանը Լոնդոնում կազմակերպել է հայ կանանց ձեռագործների ցուցահանդէս, որի յաջողութիւնից դրդուած՝ փորձել է նման ցուցահանդէս կազմակերպել նաեւ Նոյեմբեր ամսին:

[22] Կանանց Ազատութեան Միութիւն (անգլ.), հիմնուել է 1907ին, Լոնդոնում:

[23] Այստեղ՝ բարեգործական վաճառք (անգլ.):

[24] Աննա Րաֆֆին՝ վիպասան Րաֆֆու կինը, 1895ին երկու որդիների հետ Թիֆլիսից տեղափոխուել էր Լոնդո՝ նպատակ ունենալով զաւակներին տալ եւրոպական բարձրագոյն կրթութեան ազգային գործունէութիւն ծաւալելու երազանքով եւ ուխտով:

[25] Ջրանկար (ֆրանս.):

[26] Ճապոնիա (ֆրանս.):

[27] Զարդանկար (անգլ.):

[28] Մոտիւ (անգլ.):

[29] Նկատի ունի Արշակ Չօպանեանի *Հայ Էջեր. Մեր Նախնեաց Բանաստեղծութիւնը եւ Արուեստը* գիրքը (Փարիզ, տպագրութիւն Կ. Ներսէսեան, 1912):

[30] Գեղարուեստի Ընկերակցութեան Ցուցասրահ (անգլ.):

[31] Պատուէր (ֆրանս.):

[32] Խօսքը *Հայկական Աւանդութիւններ եւ Բանաստեղծութիւններ* ժողովածուի մասին է, որը լոյս է տեսել 1916ի վերջին: Գրքի ողջ հասոյթը հեղինակը տրամադրել է 1915ին հիմնուած «Հայ Գաղթականներին Օգնելու Լորդ Մայորի Հիմնադրամ»ին:

[33] Անգլիացի քաղաքական եւ հասարակական ականաւոր գործիչ, իրաւաբան, պատմաբան Ջէյմս Բրայսը (1838-1922) յայտնի է որպէս «Անգլօ-Հայկական Ընկերութեան» հիմնադիր եւ իր *Անդրկովկասն Ու Արարատը, Հայերի Վիճակը Օսմանեան Կայսրութիւնում 1915-1916թթ.* աշխատութիւններով:

[34] Դասական (ֆրանս.):

[35] Վերը յիշուած ժողովածուում ընդգրկուած էին հատուածներ Րաֆֆու *Սամուէլ* վէպից՝ *Հարէմ*ից եւ «Ձայն Տուր, Ով Ծովակ» բանաստեղծութիւնից: Վերջինս պատկերում է Պօյաճեանի նկարած Վանայ լճի գունաւոր տեսարանը:

[36] *Հայաստան. Աւանդավէպերը եւ Միջնադարեան Գրականութիւնը* (անգլ.):
[37] Տե՛ս՝ Arschag Tchobanian, "Happiness", in Zabelle C. Boyajian (comp.), *Armenian Legends and Poems*, 1916, London, էջ 118:
[38] Նկրտում (անգլ.):
[39] Մտածելակերպ (ֆրանս.):
[40] Որքանով հնարաւոր եղաւ պարզել, Պօյաճեանի թարգմանած Չօպանեանի «Օրօրը» յետագայում չի տպագրուել:
[41] Խօսքը Արշակ Չօպանեանի *La Roseraie d'Armenie* եռահատոր ժողովածուի մասին է, որը լոյս է տեսել Փարիզի "Leroux" հրատարակչութիւնում, 1918-1929:
[42] Նկատի ունի Լոզանի Դաշնագիրը որտեղ հայկական պահանջները մերժուեցին եւ որի արդիւնքում Թուրքիան փաստօրէն իրացրեց Արեւմտեան Հայաստանի տարածքները եւ մերժեց տարագիր հայերի վերադարձը հայրենիք:
[43] Խօսքը Սուրբ Ղազար կղզում հիմնուած Մխիթարեանների վանքի մասին է:
[44] Խօսքը *Գիլգամէշ* չափածոյ աւանդավէպի մասին է, որ 1924ին հրատարակուել է Լոնդոնում 15 գունաւոր նկարազարդումներով եւ որի առաջաբանը գրել է Բրիտանական Թանգարանի Ասորական Բաժնի տնօրէն սըր Էրնեստ Ուոլիս Բաջը:
[45] Հայկական աւանդութիւններ (անգլ.): Նկատի ունի *Armenian Legends and Poems*, compiled and illustrated by Zabelle C. Boyadjian, London, J. M. Dent & Sons LTD, New York, Columbia University Press հատորը:
[46] Այստեղ՝ չափածոյ աւանդավէպ (անգլ.):
[47] Տնօրէն (անգլ.):
[48] ԳԱԹ, Աւետիք Իսահակեանի Ֆոնդ, թիւ 1599: Պօյաճեանն Իսահակեանի հետ ծանօթացել է 1923ին, Վենետիկում: Նրանց ծանօթութիւնը յիշել է նաեւ բանաստեղծի որդին իր յուշերում (տե՛ս՝ Վիգէն Իսահակեան, *Հայրս*, Երեւան, 2000, «Գիտութիւն» Հրատ.,էջ 147):
[49] Իսահակեանի՝ Պօյաճեանի գրած նամակները հաւանաբար գտնւում են վերջինիս Անգլիայում մնացած արխիւում: Իսահակեանի նամականիում (Աւետիք Իսահակեան, *Երկերի ժողովածու Վեց Հատորով, Հատոր 6*, Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1979) չկայ Զապէլ Պօյաճեանի գրած որեւէ նամակ:
[50] Լոնդոնեան պարբերական:
[51] Թղթատար (անգլ.):
[52] Նկատի ունի Սուրբ Ղազարը:
[53] Տե՛ս՝ Տիգրան Խորշիդեանի *Զաբէլ Բօյաջեան* աշխատութեան մէջ (էջ 150-151): Ցաւօք, չյաջողուեց պարզել, թէ ինչ խայտառակութեան մասին է խօսքը:
[54] Երգահան (անգլ.):
[55] Ջութակահար Հայկ Կիւտենեանին (1886-1972) Պօյաճեանը նկարել է 1926ին եւ իր միւս աշխատանքների հետ ցուցադրել Լոնդոնում կազմակերպուած անհատական ցուցահանդէսում: Դիմանկարը նրա յաջողուած գործերից է: Բացի այդ, գրել է Կիւտենեանի մասին յօդուած, որ հրատարակուել է անգլիական մամուլում եւ *Հայաստանի Կոչնակում* (Զապէլ Կ. Պօյաճեան, «Հայկ Կիւտենեան. Հայ Երաժիշտն Ու Ջութակահարը», *Հայաստանի Կոչնակ*, 24.01.1925, էջ 114):
[56] Քարոզչութիւն (անգլ.):
[57] Բնագիր, սկզբնական (անգլ.):
[58] Դիմանկար (անգլ.):
[59] Ցուցասրահ (ֆրանս.):
[60] Արուեստանոց (անգլ.):
[61] Իսահակեանի «Աբու-Լալա-Մահարի» վիպերգի անգլերէն թարգմանութիւնը լոյս է տեսել 1948ին, ամերիկահայ առաջնորդարանի աջակցութեամբ, վերահրատարակուել 1958ին թարգմանչուհու մահուան տարելիցի առիթով եւ 1970ին՝ 3րդ անգամ Իսահակեանի ծննդեան 95ամեայ տարեդարձի առիթով նորից ԱՄՆում:

[62] "Etchmiadzin" ողբերգութիւնը հրատարակել է Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Հրատարակչութիւնը 1943ին, բեմադրուել է 1946ին, Նիւ Եորքում:

[63] Տիբերիուսի մահը (անգլ.): Որքան հնարաւոր եղաւ պարզել՝ այս թատերախաղը մնացել է անտիպ:

[64] Այս գործը մնացել է անտիպ:

[65] Խօսքը Ալեքսանդրա Եմիկոլոպեան-Քորմիքի մասին է: Ալեքսանդրայի մայրը ուներ հայկական ծագում: Ալեքսանդրան բժիշկ Քորմիքի հինգ զաւակներից մէկն էր: Բժիշկը գործել էր իր մասնագիտութեամբ Սուլթանաբադում՝ Իրան, ապա անցել Թաւրիզ եւ գործել այնտեղ իբրեւ Մեծ Բրիտանիայի հիւպատոսի բժիշկը: Այս մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Նոյեմբեր 2010ին լոյս ընծայուելիք Ara Ghazarians, *Raffi: The Five Armenian Melikdoms of Karabagh (Khamsayi Melikut'iwnnere)* գրքում:

[66] Արշակ Րաֆֆի (1879-1946), վիպասանի կրտսեր որդին:

[67] Րաֆֆիների ընտանիքի կտակն է եղել յուղարկաւորուել իրենց հօր երազած անկախ Հայաստանում:

[68] Ալեքսանդրայի շնորհիւ այսօր Երեւանի ԳԱԹում պահւում են Րաֆֆու արխիւային մասունքները:

[69] Նկատի ունի հայ գրողների համաժողովը, որ կայացել է 1946ին, Երեւանում:

[70] Աղաւնի Մեսրոպեան (1891-1954), դաշնակահարուհի, նկարչուհի:

[71] ԳԱԹ, Միհրդատ Թիրեաքեանի Ֆոնդ, թիւ 375:

[72] Թիրեաքեանի այդ յօդուածաշարը լոյս է տեսել Նիւ Եորքի *Հայաստանի Կոչնակ* հանդէսում, 1938ին (Սեպտեմբերի 10, էջ 871-872, Սեպտեմբերի 17, էջ 899-900, Սեպտեմբերի 24, էջ 924-925):

[73] Նկատի ունի իր լեզուաբանական մտավարժանքներով յայտնի Ասպետ Եաղուպեանին (1885-1951):

[74] Փամփուշտ (անգլ.):

[75] ԳԱԹ, Լեւոն Մեսրոպի Ֆոնդ, թիւ 46-57:

[76] Փոստատուն (անգլ.):

[77] Հաւանաբար լոնդոնահայ ջութակահար Հրաչ Գասպարեան:

[78] Ապահովագրուած (անգլ.):

[79] Գալուստ Կիւլպենկեան (1869-1955), նշանաւոր մեծահարուստ, բարեգործ:

[80] Խճանկար (անգլ.):

[81] Միաւորում (անգլ.):

[82] Ճարտարապետ (անգլ.):

[83] Այստեղ՝ այցելութիւն նկարելու համար (ֆրանս.):

[84] Խօսքը Պօյաճեանի *In Greece With Pen and Palette*՝ (Յունաստանում գրչով եւ ներկապնակով) ուղեգրական մեծածաւալ աշխատութեան մասին է, որ 1938ին հրատարակուել է Լոնդոնում եւ նկարազարդուած է նկարչուհու 16 աշխատանքներով:

[85] Յուշահանդէս (անգլ.):

[86] Սարգիս Խաչատուրեան (1886-1947), Վաւա Խաչատուրեան (1896-1984)՝ նկարիչներ, Խորէն Տէր Յարութիւնեան (1909-1991), քանդակագործ: Չնայած այս մտքին՝ Զապէլ Պօյաճեանը 1924ին Սարգիս Խաչատուրեանի մասին գրած իր յօդուածում բարձր է գնահատել նկարչի ստեղծագործութիւնը (տե՛ս՝ Զապէլ Պօյաճեան, «Սարգիս Խաչատուրեանի Յուշահանդէսը», *Հայաստանի Կոչնակ*, 26.07.1924, էջ 944-945):

[87] Հաւանաբար նկատի ունի 1894ի կոտորածը:

[88] Անծնագիր (անգլ.):

[89] *Yestere* վէպը լոյս է տեսել 1901ին Լոնդոնում, անգլերէն՝ "Vartenie" ծածկանունով:

[90] Համալսարան, քոլէջ (անգլ.): Լոնդոնի Համալսարանի Քինգզ Քոլէջի մասին է խօսքը, որը հիմնուել է 1829ին:

[91] Այդ հանդէսներին Պօյաճեանը միշտ աշխուժօրէն մասնակցել է. յատկապէս նշանակալից է եղել 1913ի Րաֆֆու ընտանիքի կազմակերպած յուշ-երեկոն վիպասանի մահուան 25ամեակի առթիւ: Պօյաճեանը կարդացել է «Րաֆֆու Կեանքը Եւ Ստեղծագործութիւնները» դասախօսութիւնը, ապա ընթերցուել են նրա թարգմանած գործերը. երեկոն եզրափակուել է Րաֆֆու երկերի հիման վրայ բեմադրուած «Նորոգուող Հայաստան» ներկայացմամբ: Առաջին անգամ ցուցադրուել է Պօյաճեանի նկարած Րաֆֆու իղձաներկ դիմանկարը եւ թատերախաղի համար արուած նկարազարդումները: Երեկոյին արձագանգել են անգլիական շատ թերթեր:

[92] Տե՛ս՝ ծանօթ 67:

[93] Ֆրանսերէն vacance՝ արձակուրդ:

[94] Վերին Սաւոյա (ֆրանս.), Ֆրանսայի մի շրջան:

[95] Ալպեան-ֆրանսիական ակումբ (ֆրանս.):

[96] Վոլֆգանգ Ամադէուս Մոցարտ (1756-1791), աւստրիացի երաժիշտ:

[97] Եոհան Վոլֆգանգ Գէօթէ (1749-1832), գերմանացի գրող:

[98] Յաւերժական որոնում (անգլ.):

[99] Ֆեմինիստական շարժում (անգլ.):

[100] Դիեգօ Վելասկէզ (1599-1660), իսպանացի նկարիչ:

[101] Ճարտարապետութիւն (անգլ.):

[102] Գիտակից (անգլ.):

[103] Առաւօտեան փոստ (անգլ.), անգլիական օրաթերթ:

[104] Օրուան գիրքը (անգլ.):

[105] Ժամանակակից հանդէս (անգլ.), անգլիական թերթ:

[106] Ճոն Միլթոն (1608-1674), անգլիացի գրող, նշանաւոր՝ իր *Paradise Lost* երկով:

[107] Հաւաքորդ (անգլ.):

[108] Ուսուցչապետ (անգլ.):

[109] Րաֆֆի. հայ ազգային գրողը (անգլ.):

[110] Սրամտութիւն եւ իմաստութիւն Մերձաւոր Արեւելքից (անգլ.):

[111] Հայ եւ անգլիական բանաստեղծութիւն. որոշ զուգահեռներ (անգլ.):

[112] Պատերազմը եւ խաղաղութիւնը Շեքսպիրի մօտ (անգլ.):

[113] Միսոլոնգի. յունական այն քաղաքը, որտեղ մահացել է բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնը (1788-1824):

[114] Թոմաս Հարդի (1840-1928), անգլիացի գրող:

[115] Դափնեկիր բանաստեղծ (անգլ.):

[116] Նկատի ունի իր «Հայաստանի Սէրը Շեքսպիրին» բանաստեղծութիւնը:

[117] Թատերախաղ (անգլ.):

[118] Հեքիաթ (անգլ.):

[119] *Girl's Own Paper* (աղջկայ սեփական թերթը), բրիտանական պարբերաթերթ, հրատարակուել է 1880-1956ին:

[120] Խօսքը *Պատմամենութը երկնքում* վէպի մասին է, որը մնացել է անտիպ:

[121] Հաւանաբար նկատի ունի Լեւոն Մնսրոպի 1949ին հրատարակած *Կախարդող Լեռը եւ Ներգաղթող Ձին* հատորը, որը լոյս է տեսել Փարիզում:

[122] Հաւանաբար նկատի ունի տեղական խորհրդարանական ընտրութիւնները:

[123] Եկեղեցաբլուր ասելով Պօյաճեանը հեգնաբար նկատի ունի Ուինսբըն Չըրչիլին՝ բառախաղի ենթարկելով նրա անունը՝ (church hill):

[124] Նկատի ունի *Աստուածաշունչի* Սամսոնին:

[125] Խորհրդարանի հրապարակ (անգլ.): Գտնւում է Լոնդոնի թագաւորական Ուեսթմինսթըրի պալատի մօտ:

[126] Կանանց Ազատութեան Լիգա:

[127] Մերձաւոր Արեւելքի Կանայք (անգլ.):

[128] Շարլոթ Դէսփարդ (1844-1939), վիպասանուհի, հանրային գործիչ:

[129] Ջոն Ֆրենչ (1852-1925), բրիտանական ռազմական գործիչ:
[130] «Մուհամմէդն ասում է, որ տղամարդիկ պէտք է ազնիւ լինեն կանանց հանդէպ, եւ եթէ հնարաւոր է, ամուսնանան նրանց հետ» (անգլ.):
[131] Բարի (անգլ.):
[132] Ուսուցչապետ (ֆրանս.):
[133] Միջազգային կանանց շարժման ամսաթերթ, հրատարակուել է 1914-1919ին:
[134] Հայ կինը (ֆրանս.):
[135] Նկատի ունի մայր եւ դուստր բնագէտներ Մարիա Սկլադովսկայա-Կիւրիին (1867-1934) եւ Իրէն Ժոլիօ-Կիւրիին (1897-1956):
[136] Լոնդոնի Սլէյդ Գեղարուեստի դպրոցը, հիմնուած 1871ին:
[137] Կազմախօսութիւն (անգլ.):
[138] Վկայագիր (անգլ.):
[139] Արուեստանոց (անգլ.):
[140] Աննա Բաֆֆու հեղինակութեամբ Բաֆֆու կենսագրութիւնը չի պահպանուել:
[141] Քհարթրիհարին ասում է (անգլ.): Քհարթրիհարին Է. դարի հնդիկ բանաստեղծ է:
[142] Բալմոնտի «Չիները» եւ Բրիւսովի «Առանձնութեան Գանձերը»: Երկուսն էլ թարգմանուած ռուսերէնից եւ հրատարակուած «Ռուսաստանի Հոգին» ժողովածուում 1914ի պատերազմի ժամանակ (անգլ.): Կոնստանտին Բալմոնտ (1867-1942), Վալերի Բրիւսով (1873-1924), ռուս բանաստեղծներ:
[143] Հնչեակ (անգլ.):
[144] Գրքին համար մեր ստացած ամենագեղեցիկ բաներից մէկն էր:Պիտի ուզենայինք ծանօթանալ ձեզ հետ. հանդպէք մեզ:
[145] Մեքենագիր բնագիր (անգլ.):
[146] Շատ փառասէր գործ է եւ շատ յաջող երկ է: Հրատարակչին անձամբ պիտի տանեմ:
[147] Էրնեստ Բաջ (1857-1934) Բրիտանական Թանգարանի Եգիպտական Բաժնի տնօրէն:
[148] «Գիլգամէշ»ի առաջաբանում Բաջը մասնաւորապէս գրել է. *«այս ներկայ հատորը ինձ թուում է, թէ մէկն է այն հազուագիւտ գործերից, ուր բանաստեղծութիւնն ու գեղարուեստը որպէս իրար նաժիշտ գործում են ակնյայտ յաջողութեամբ»* (Zabelle Boyadjian, *Gilgamesh*, London, G. W. Jones, 1924, p. 85):
[149] Ֆրեդերիք Ջորջ Քենիըն (1862-1952), անգլիացի հնագրագէտ, հելլէնագէտ, Բրիտանական Թանգարանի տնօրէն:
[150] Էսքիլէս, Սոփոկլէս, անտիկ թատերագիրներ:
[151] Գործողութիւն (անգլ.):
[152] Նախաբան (անգլ.):
[153] Սեպագիր աղիւս (անգլ.):
[154] Այստեղ՝ արարչագործութեան մասին դիւցազնավէպ (անգլ.):
[155] Խորհրդապաշտական (անգլ.):
[156] Նման է Միլթոնի փառայեղ տողին (անգլ.):
[157] Այստեղ՝ խօսակցական բաժին (անգլ.):
[158] Կերպարատորում (անգլ.):
[159] Դուք ճիշտ էիք, եւ այնքան գեղեցիկ է, որ յանցանք կը լինի կրճատելը, այն անպարփակելի է (անգլ.):
[160] Այս բեմադրութեան մասին տե՛ս՝ Յովհաննէս Աւագեան, «Էջմիածին», *Հայաստանի Հանրագիտարան*, 9.11.1946, էջ 1062-1064:
[161] Սրբուհի Ագնէս (մօտ 291-մօտ 304), կաթոլիկ սրբուհի, երիտասարդ աղջիկների պահապան սուրբը:
[162] Ծանուցեցին (անգլ.):
[163] Բուն պատմութիւնը՝ Ջապէլ Մ. Պոյաճեանի, բեմականացումը... (անգլ.):

[164] Պէտք է լաւ խաղացուէր (անգլ.):
[165] Հեքիաթ թատերախաղ (անգլ.):
[166] «Մոխրոտը», «Գիւնաթոյրը», «Կօշկաւոր Կատուն», «Կապտամօրուսը» (անգլ.):
[167] Ցնորապատում (անգլ.):
[168] Նկատի ունի *Պառլամենտը Երկնքում* վէպը:
[169] Գիշերային տեսիլք (գերմ. եւ անգլ.):
[170] Շուէդերէն (անգլ.):
[171] Դասական (անգլ.):
[172] Նկատի ունի 1918ի Բրեստ-Լիտովսկի հաշտութեան պայմանագիրը որով Թուրքիային անցան Արեւմտեան Հայաստանը եւ Կարսի ու Արդահանի մարզերը եւ ցրուեցին հայկական կամաւորական ջոկատները:
[173] Հիմա ինչ էք մտածում, պարոն Յակոբեան (անգլ.):
[174] Վերջիվերջոյ (ֆրանս.):
[175] Տե՛ս՝ ծանօթ 118:
[176] Ռումբ (անգլ.):
[177] Մտաւորապէս, իմացականութեամբ (անգլ.):
[178] Զգացականօրէն, հասկացողաբար (անգլ.):
[179] Հայրենասիրութիւն (անգլ.):
[180] Համայնավարութիւն (անգլ.):
[181] Նկատի ունի 1894ի համիդեան կոտորածները:
[182] Լորդ Սալզբըրի (լորդ Ռոբերթ Սեսիլ, 1830-1903), Մեծ Բրիտանիայի վարչապետ:
[183] Մենք շատ աւելի բարձր շահեր ունենք, քան այս թշուառները, որոնք զոհուեցին այս կոտորածների ժամանակ (անգլ.):
[184] Ջէյմս Ռամսէյ Մաքդոնալդ (1866-1937), Նոէլ Էդուարդ, Նոէլ Բաքսթոն (1869-1948), բրիտանացի քաղաքական գործիչներ:
[185] Մեծ դուքս (անգլ.): Նկատի ունի Աւստրօ-Հունգարիայի գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանութիւնը 1914ին, Սարայեւոյում, որը Առաջին Համաշխարհային Պատերազմի սկիզբը հանդիսացաւ:
[186] Նկատի ունի Բեռլին-Բաղդադ երկաթգծի շինարարութիւնը, որը որոշ չափով սպառնում էր Մերձաւոր Արեւելքում եւ Հնդկաստանում Մեծ Բրիտանիայի շահերին:
[187] Նկատի ունի Հնդկաստանի անկախացումը Մեծ Բրիտանիայից, երբ 1949ի սահմանադրութեամբ Հնդկաստանը հռչակուեց հանրապետութիւն:
[188] Ֆրիտիոֆ Նանսէն (1861-1930), նորվեգացի բեւեռախոյզ եւ մարդասէր:
[189] Ալեքսանդր Կերենսկի (1881-1970), ռուս քաղաքական գործիչ:
[190] ԱՄՆում հրատարակուած խորհրդային կողմնորոշմամբ հանդէս լոյս է տեսել 1949–1950ին, Նիւ Եորքում:
[191] Ազգային դիմանկարի ընկերակցութիւն (անգլ.):
[192] Գարեգին Յովսէփեան (1867-1952), բանասէր, արուեստաբան, Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց կաթողիկոս: Կրթութիւնն ստացել է Լայպցիգի եւ Հալլէի համալսարաններում:
[193] Երբ գողերը գժտւում են, սկսւում է պարանաքաշութիւնը (անգլ.):
[194] Ժան դը Լա Ֆոնտէն (1621-1695), ֆրանսիացի առակագիր:
[195] Մեր թշնամին մեր տէրն է, ես սա ձեզ ասում եմ հասկանալի ֆրանսերէնով (ֆրանս.):
[196] Ի դէպ Աւետիք Իսահակեանը այս թարգմանութիւնը ստացել է 1957ին Լեւոն Մնացականեանի միջոցով, որին եւ գրել է նոյն թուականի Սեպտեմբերի 6ի նամակում. *«Սիրելի եւ յարգելի բարեկամ։ Ձեր վերջին երկու նամակներն էլ չնորհակալութեամբ ստացել եմ։ Իսկ երեկ ստացայ նաեւ յաւերժ անմոռանալի Զապէլ Պօյաճեանի «Էջմիածինը» եւ «Աբու Լալայի» անգլերէն թարգմանութիւնը։ Շատ ուրախ եմ եւ չատ չնորհակալ*

Ձեզնից, Ձեր թափած աշխատանքի համար, որով կարողացայ վերջիվերջոյ ունենալ «Աբու Լալա Մահարին» (ԳԱԹ, Կարապետ Սիտալի Ֆոնդ, թիւ 139):

[197] Նկատի ունի Ամերիկահայ առաջնորդարանի «Տարեկան ձեռնարկ»ը, որտեղ 1948ին առաջին անգամ հրատարակուել է «Աբու Լալա Մահարի»ի անգլերէն թարգմանութիւնը:

[198] Նկատի ունի Իլինգում (Արեւմտեան Լոնդոն) գտնուող Քուեսթըրզ (The Questors) թատրոնը:

LETTERS BY ZABELLE BOYADJIAN
(Summary)

MELANYA YEGHIAZARYAN

17 letters of the London-based Armenian painter and writer Zabelle Boyadjian, addressed to various Armenian intellectuals are presented in this publication.

Boyadjian, a survivor of the Armenain massacres of 1890s, escaped with her family to Britain after her father was killed during the massacres.

The letters shed light on her views, literary and artistic activities, exhibitions and books, which were highly appreciated by contemporary British specialists. The letters unearth aspects of her social life as well as of the family of the eminent Armenian novelist Raffi.

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Հայ Նուագարանային Երաժշտութիւն. Պարեղանակներ (կազմող՝ Աշոտ Մուրադեան, մասնագիտական խմբագիր՝ Խաչիկ Մարտիրոսեան, մատենաշարի գլխաւոր խմբագիր՝ Կարինէ Խուդաբաշեան-Սարգսեան), «Հայ Աւանդական Երաժշտութիւն» մատենաշար, Հտր. Ա., եւ Գ., Երեւան, «Ամրոց» Հրատ., 2008:

Արամ Քոչարեան, *Հարկանային եւ Շնչական Նուագարանները Հայաստանում*, աշխատասիրութեամբ Կարինէ Խուդաբաշեանի, Հռիփսիմէ Պիկիչեանի, Ժասմէն Մեհրաբեանի, Անահիտ Բաղդասարեանի, Երեւան, «Ամրոց» Հրատ., 2008:

Նորութիւն չէ, որ ցանկացած ազգի ինքնութեան պահպանման երաշխիքը առաջին հերթին պետականութիւնն է: Սակայն ոչ-պակաս կարեւոր են լեզուն եւ հոգեւոր մշակութային ժառանգութիւնը: Այսօր համաշխարհայնացման պայմաններում գրեթէ բոլոր ազգերը կանգնած են մի խնդրի առջեւ՝ պահպանել եւ սերունդներին փոխանցել ազգային նկարագիրն ու ինքնութիւնը: Խնդրի լուծման տարբեր ուղիներ են փնտռում մասնագէտները եւ բերում նորանոր առաջարկներ: Մի բան պարզ է՝ նախեւառաջ պէտք է պահպանել, անաղարտ ներկայացնել եւ զարգացնել մշակութային ժառանգութիւնը:

Իւրաքանչիւր ժողովրդի մշակոյթը, մասնաւորապէս բանահիւսութիւնը, երաժշտութիւնն ու պարը ժամանակների միջեւ լաւագոյն բնականոն կապուղին են: Ունենալ ազգային աւանդական երաժշտութեան ձայնաղարան՝ կը նշանակի ունենալ ազգի պատմութեան տարբեր շրջանների մասին բազմակողմանի տեղեկատուութիւն ստանալու բացառիկ հնարաւորութիւն եւ միջոց: Մշակութային հարուստ ժառանգութեան տէր ժողովուրդն այսօր իրաւունք չունի սահմանափակուել միայն պահպանուած աւանդական երգերն ու նուագները հնչեցնելով ու յղկելով: Նման երաժշտական, պատմա-գեղարուեստական արժէք ներկայացնող նիւթը անբաւ շտեմարան է ոչ միայն երաժիշտների, այլ նաեւ արուեստաբանների, պատմաբանների, հնագէտների, ազգագրագէտների ու հայագիտութեամբ զբաղուող տարբեր մասնագէտների համար:

ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի Արամ Քոչարեանի Անուան ձայնաղարանը աւանդական (գեղջկական, քաղաքային, աշուղական երգեր ու նուագներ, երաժշտական պատումներ, ժողովրդական եւ ժողովրդապրոֆեսիոնալ կատարումներ) երաժշտական մշակոյթի մի իւրայատուկ գանձարան է: Ձայնագրուած նմուշները ներկայացնում են պատմական Հայաստանի գրեթէ բոլոր խոշոր մարզերի ժողովրդական երաժշտարուեստը: Ձայնագրութիւնների թիւը շուրջ 20 հազար է եւ ներառում է 1927ից մինչեւ մեր օրերն ընկած ժամանակաշրջանը: Աւելորդ է ասել, թէ այս երգերի ու նուագների լոյսընծայումն ինչպիսի ներդրում կը լինի հայ ժողովրդի մշակութային կեանքում եւ որքան լիարժէք պատկերացում կը ստեղծի ժողովրդական երաժշտութեան տարբեր

սեռերի ու թեմատիկ առանձնայատկութիւնների ու կատարողական արուեստի մասին:

Դեռեւս 1985ին Արուեստի Ինստիտուտի Ժողովրդական Երաժշտութեան Բաժնի Վարիչ Կարինէ Խուդաբաշեան-Սարգսեանն առաջարկեց ձայնադարանի հիման վրայ 30 հատորանոց մատենաշար ստեղծել: Տարիների ընթացքում բաժնի գիտաշխատողների կողմից հրատարակման պատրաստուեց ժողովրդական երգերի ու նուագների 8 ժողովածու: Վերջապէս 2008ին պետական պատուէրով ՀՀ Մշակոյթի Նախարարութեան հովանաւորութեամբ իրականացուեց «Հայ Աւանդական Երաժշտութիւն» բազմահատոր մատենաշարի առաջին հատորի հրապարակումը՝ *Հայ Նուագարանային Երաժշտութիւն. Պարեղանակներ* վերտառութեամբ:

Հայոց աւանդական նուագների ամբողջական հաւաքածուի ստեղծման անդրանիկ փորձը պատկանում է ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի նախկին գիտաշխատող, երաժշտագէտ-բանագէտ Աշոտ Մուրադեանին, որը վերծանել, ուսումնասիրել եւ դասակարգել է աւանդական նուագարաններով (դուդուկ, զուռնա, պարկապզուկ, սրինգ, շուի, դհոլ, քառ, քամանչա, քեմանի եւ քեմոնա) հնչող հայոց պարեղանակների ընտրանին: Նուագարանային հատորներ կազմելիս Աշոտ Մուրադեանը նպատակ է ունեցել մասնագէտներին եւ սեռի երկրպագուներին ներկայացնել Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս բնակուող հայերի կեանքում հնչող գործիքային նուագների ամբողջական պատկերը:

Գրախօսուող հատորը հիմնուած է 1957-1959ին հայ բանահաւաք-երաժշտագէտներ Մատթէոս Մուրադեանի, Ալեքսանդր Թադէոսեանի ձայնագրած գիտարշաւային նիւթերի, ինչպէս նաեւ Աշոտ Մուրադեանի՝ 1986ին Աբխազիայում համշէնահայերից ձայնագրած նմուշների վրայ: Վաղաժամ հեռանալով կեանքից՝ (2003) Աշոտ Մուրադեանը չհասցրեց տեսնել իր բազմամեայ աշխատանքի արդիւնքը: Վերջնական խմբագրման եւ սրբագրման աշխատանքները կատարել են Ժողովրդական Երաժշտութեան Բաժնի աշխատակիցներ Ջաւէն Թագակչեանը, Հռիփսիմէ Պիկիչեանը եւ Ժասմէն Մեհրաբեանը:

Հատորը կազմուած է չորս բաժնից եւ ընդգրկում է Հայաստանի Վայքի եւ Շիրակի մարզերի, ինչպէս նաեւ Արցախի եւ Աբխազիայում բնակուող համշէնահայերի պարային-նուագարանային երաժշտութեան 53 նմոյշ: Իւրաքանչիւր բաժնում պարեղանակները դասդասուած են ըստ նուագարանների՝ փողային, լարային (մենակատարային եւ նուագախմբային կատարումներ): Բոլոր նմուշները նոտագրուած են պարտիտուրի տեսքով, պահպանուած է առանձին նուագարանների եւ նուագախմբի (դաստա) ինքնատիպութիւնը: Հատորը համալրուած է նախաբանով, հայոց բազմադարեան երաժշտական աւանդոյթում տեղ գտած ժողովրդական նուագարանների վերաբերեալ պատմական համառօտ ակնարկով, նիւթի եւ այն վերարտադրող նուագարանների մասին մանրակրկիտ տուեալներով, ծանօթագրութիւններով եւ ցանկով: Այս ամէնը ներկայացուած է երեք լեզուով՝ հայերէն, անգլերէն եւ ռուսերէն:

Մատենաշարի երկրորդ հատորը, որի հեղինակը եւս Աշոտ Մուրադեանն է, ամփոփում է նուագարանային երաժշտութեան մնացեալ սեռերը եւ նախատեսւում է հրատարակել 2010ին:

***

2008ին լոյս է տեսել նաեւ մատենաշարի երրորդ հատորը, որտեղ առաջին անգամ հրապարակուել են ականաւոր երաժշտագէտ-բանահաւաք, Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) երաժշտանոցի ուսուցչապետ Քրիստափոր Կուշնարեանի ղեկավարած գիտարշաւների նիւթերը՝ գրանցուած 1927-1929ին. Հայաստանում եւ Վրաստանի հայաշատ վայրերում: Այդ գիտարշաւներին մասնակցել են նաեւ ֆոլկլորագէտներ Եւգենի Գիպպիուսը, Զինաիդա Էալոյը, երաժշտագէտ Եուրի Տիւլինը, կոմպոզիտորներ Յարօ Ստեփանեանը եւ S. Տէր-Մարտիրոսեանը: Երեք գիտարշաւների ընթացքում ֆոնոգրաֆով ձայնագրուել է շուրջ 550 նմոյշ, որոնք ինչ-ինչ պատճառներով երկար ժամանակ մնացել են Լենինգրադի ԳԱ Ռուս Գրականութեան Ինստիտուտում եւ միայն 1960ականներին Երեւանի Պետական երաժշտանոցի ուսուցչապետ Ռոբերտ Աբայեանի շնորհիւ պատճէնագրուել են ձայներիզի վրայ եւ փոխանցուել ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի Արամ Քոչարեանի Անուան Ձայնադարանին: Տարիների ընթացքում քայքայուած ձայնագրման գլանիկներից հնարաւոր եղաւ վերածայնագրել միայն 487ը: Այդուհանդերձ, մեզ հասած նիւթը բացառիկ հետաքրքրութիւն ու արժէք է ներկայացնում՝ իբրեւ Ի. դարի սկզբների հայկական երաժշտական կեանքի վաւերագիր:

Ներկայ ժողովածուում ընդգրկուել է գիտական-գեղարուեստական բարձր արժէք ներկայացնող 143 նմոյշ, որոնք նոտագրել, խմբագրել եւ դասակարգել են Ժողովրդական երաժշտութեան բաժնի աշխատակիցներ Դաւիթ Դերոյեանը եւ Զաւէն Թագակչեանը: Ընտրանու դասակարգումը կատարուել է ժանրային-թեմատիկ սկզբունքով՝ օրօրերգեր, աշխատանքային, կենցաղային-պատմողական, զինուորագրութեան երգեր, մաներգեր, սիրերգեր, կատակերգեր, պարերգեր, զուգերգեր, հոգեւոր երգերի ժողովրդական տարբերակներ, պարեղանակներ եւ նուագներ:

Ակնառու է Դերոյեանի, Զաւէն Թագակչեանի կատարած նոտային վերծանութիւնների, ինչպես նաեւ Հռիփսիմէ Պիկիչեանի տեքստային վերծանութիւնների մասնագիտական բարձր որակը: Նրանք հնարաւորինս հարազատ են մնացել արդի ֆոլկլորագիտութեան մէջ ընդունուած սկզբունքներին՝ միաժամանակ չդաւաճանելով բանասացների աւանդական երաժշտական մտածողութեանն ու կատարման կերպին:

Հատորն ունի նախաբան, ծանօթագրութիւններ, բարբառային եւ անհասկանալի բառերի բառարան, ռուսերէն եւ անգլերէն ամփոփագրեր:

***

2008ին ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի Ժողովրդական Երաժշտութեան Բաժնի գիտաշխատողներ Կարինէ Խուդաբաշեանի, Հռիփսիմէ Պիկիչեանի, Ժասմէն Մեհրաբեանի եւ Անահիտ Բաղդասարեանի աշխատասիրութեամբ լոյս տեսաւ եւս մէկ աշխատութիւն՝ Արամ Քոչարեանի *Հարկանային եւ Շնչական Նուագարանները Հայաստանում* ուսումնասիրութիւնը, որի հիմքում ընկած է հեղինակի՝ 1963ին պաշտպանած թեկնածուական ատենախօսութիւնը: Սոյն աշխատութիւնն իր տեսակի մէջ եզակի է՝ նշուած նուագարանների համակողմանի եւ խորը հետազօտման ու ներկայացման առումով:

Ուսումնասիրութիւնը բաղկացած է առաջաբանից, երկու գլխից, վերջաբանից, ծանօթագրութիւններից եւ օգտագործուած գրականութեան ցանկից, ինչպէս նաեւ ուսումնասիրուող նուագարաններով հնչող նիւթերի նոտային վերծանութիւններից, չափագրութիւններից (Արամ Քոչարեան) եւ լուսանկարներից:

Առաջաբանում հեղինակը համառօտ ներկայացնում է նուագարանների ծագման եւ զարգացման փուլերը՝ սկսած Հին Քարէ Դարի շրջանից մինչեւ Ի. դարի կէսերը: Իւրաքանչիւր գլխում մանրամասն դիտարկւում են նուագարանի տուեալ ընտանիքի ծագումնաբանական, զարգացման, գործառութային, կենցաղավարման միջավայրն ու փոխառնչութիւնները: Առաջնորդուելով համեմատական երաժշտագիտութեան մեթոդներով՝ հեղինակը բացայայտում է նուագարանների պատրաստման հումքի, կառուցուածքի, հնչարտաբերման, ձայնածաւալի, գրական, ժողովրդախօսակցական եւ օտարալեզու եզրաբանութեան օրինաչափութիւնները ու տարբերութիւնները աշխարհի տարբեր ժողովուրդների մշակոյթներում: Այս խնդիրները զուգորդւում են դիցաբանութեան, ազգաբանութեան, հնագիտութեան, մանրանկարչութեան եւ կիրառական արուեստի տուեալների համադրութեամբ:

Գրքում զետեղուած են նաեւ անուանի երաժշտագէտի կեանքն ու գործունէութիւնը ներկայացնող (Կարինէ Խուդաբաշեան-Սարգսեան) եւ հետազօտութիւնն արժեւորող (Հռիփսիմէ Պիկիչեան) յօդուածներ:

Հայոց աւանդական նուագարանների երկու ընտանիքներին նուիրուած այս աշխատութիւնն անգնահատելի նուէր է երաժշտագէտների եւ հայոց երաժշտական մշակոյթով բոլոր հետաքրքրուողների համար:

ՄԱՐԳԱՐԻՏ ՍԱՐԳՍԵԱՆ

Հայկ Դեմոյեան, *Հայկական Սպորտը եւ Մարմնակրթութիւնը Օսմանեան Կայսրութիւնում*, Երեւան, Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ, 2009, 220 էջ:

Հայ իրականութեան սակաւ ուսումնասիրուած բնագաւառներից է հայ մարմնակրթութեան պատմութիւնը: Թէեւ հրապարակի վրայ են Բիւզանդ Թորիկեանի՝ հայ մարմնակրթական եւ սկաուտական շարժման պատմութեանը նուիրուած քառահատոր ուսումնասիրութիւնը[1], Տիգրան Սարաֆեանի *Հայ Մարմնամարզական Միութեան Պատմութեան Հետքերով...* հատորը[2], եւ մի քանի այլ, աւելի մասնակի բնոյթի աշխատութիւններ, սակայն հայ մարմնակրթութեան ընդհանուր պատմութիւնը տակաւին մնում է չգրուած եւ մեծ մասամբ քիչ-ծանօթ:

Հայ ժողովրդի ինքնաճանաչման եւ ազգային առողջ հպարտութեան մեծագոյն աղբիւրներից կարող է լինել հայ մարզարուեստի պատմութեան բազմահատորեակի ստեղծումը, ինչպէս նաեւ հայ մարզամշակոյթի թանգարանի հիմնադրումը:

Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի Գիտական Խորհրդի որոշմամբ տպագրուած Հայկ Դեմոյեանի *Հայկական Սպորտը Եւ Մարմնակրթութիւնը Օսմանեան Կայսրութիւնում* մենագրութիւն-պատկերագիրքը հազուագիւտ աղբիւրների եւ լուսանկարների հաւաքածուների օգտագործմամբ ի յայտ է բերում հայ մարզարուեստի անյայտ, սակայն ուշագրաւ, անգամ յուզիչ դրուագներ, որոնք վերաբերում են արեւմտահայոց մարզական մշակոյթին՝ ԺԹ. դարի վերջից մինչեւ 1920ականների սկիզբը, այսինքն՝ մինչեւ Թուրքիայի Հանրապետութեան հիմնադրումը:

Մինչեւ սոյն գրքի հրատարակումը Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտը 2008ի Սեպտեմբերին կազմակերպեց նոյն թեմայով ցուցահանդէս: Թուում է, թէ կապ չպիտի լինի Հայոց Ցեղասպանութեան եւ մարմնակրթութեան պատմութեան միջեւ: Սակայն ինչպէս ցոյց է տալիս ողջ մենագրութիւնը, արեւմտահայերի մէջ մարմնակրթական շարժման երեւան գալը նոյնպէս ոչ-անմիջականօրէն հող է նախապատրաստել յետագայ ողբերգական զարգացումների համար, քանի որ մարզական մրցակցութեան մէջ, առաւել՝ քան որեւէ այլ տեղ, ակնյայտ են դառնում կողք-կողքի ապրող ժողովուրդների մարմնական առաւելութիւնները, եւ հպատակների առաւելութիւնների դէպքում առաջանում է տիրող ժողովրդի նախանձ եւ չարակամութիւն: Այդպէս, յամենայնդէպս, պատահեց հայերի եւ թուրքերի միջեւ:

Հեղինակը նշում է, որ «*Կայսրութեան մարմնակրթական շարժման զարգացումը, չնայած քրիստոնեայ հպատակների դէմ կիրառուող խտրականութեանը եւ բռնութիւններին, արդիւնք էր առաջին հերթին հայ եւ յոյն ազգաբնակչութեան չրջանում տեղի ունեցող արդիականացման գործընթացներով եւ թելադրուած էր որոշակի ներհամայնքային պահանջներով*» (էջ 6): Յայտնի է, որ Ի. դարի սկզբին արեւմտահայութիւնը, մասնաւորապէս Կ.Պոլսի եւ Զմիւռնիայի հայութիւնը, հոգեւոր վերելքի մէջ էր: Յատկապէս 1908ի երիտթուրքերի յեղաշրջումից յետոյ արեւմտահայութիւնը բռնել էր արդիական հասարակարգ կերտելու ուղին, ուստիեւ միանգամայն իրաւացի է Դեմոյեանը, երբ հայկական մարզարուեստի զարգացումը դիտարկում է օսմանեան հայերի հանրային-մշակութային զարթօնքի ծիրի մէջ: Անշախընթաց զարգացում

էր ապրում հայ կրթութիւնը, մշակոյթը, գիտութիւնը, միտքը, արծարծում էին ազգային երաժշտանոց, ազգային ակադեմիա հիմնելու գաղափարները... եւ այս ամէնի հետ մէկտեղ լայն թափ էր առել նաեւ մարմնակրթական շարժումը: Ըստ Դեմոյեանի՝ «*Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրէին միայն Պոլսում գործում էին չուրջ քառասուն հայկական մարմնամարզական ակումբներ*» (էջ 44): Մարզարուեստն օսմանահպատակ հայերի մէջ ազգային ինքնագիտակցութեան, մրցակցութեան եւ ազգային ինքնահաստատման կարեւոր ասպարէզ էր: Ազգային զարթօնք ապրող եւ եւրոպական լուսաւորականութեան ձգտող հասարակութեան համար հրամայական էր դարձել նաեւ մարմնապէս առողջ եւ ուժեղ լինելու խնդիրը: Ինչպէս նշուած է «Մուտքի Խօսք»ում. «*...այդ ազգային առաջադիմութիւնն ու արդիական արժէքներ որդեգրելու հակումը որոշակիօրէն ուժեղացրեց անհանդուրժողականութեան դրսեւորումները երիտթուրք իշխանաւորների կողմից, ովքեր փորձեցին ազգային այս առաջընթացին ընդդիմանալ հայ բնակչութեան դէմ իրագործուած ցեղասպանութեամբ*» (էջ 7): Եւ իսկապէս, հայերի գերակայութեան ապացոյցներից է, որ երբեմն թուրքական իշխանութիւնները դիմել են հայ մարզիչներին՝ թուրք երիտասարդների մէջ մարզական միջոցառումներ կազմակերպելու խնդրանքով (էջ 81): Այս առաջատար դերակատարութեան փաստը, բնականաբար, հաշտ աչքով չպէտք է դիտուէր թուրքական մարզարուեստի պատմագրութեան կողմից, որն անտեսել կամ, ըստ էութեան, չի արժեւորել հայերի դերը թուրքական մարմնակրթութեան պատմութեան մէջ: «*Հայկական հետքը» թուրքական թատրոնի, սպորտի, մամուլի, գրահրատարակչական ու միւս բնագաւառներում հանրապետութեան շրջանում ձեւաւորուած թուրքական պատմագրութեան կողմից դիտուել է անցանկալի ու վտանգաւոր, հետեւաբար՝ յիշատակութեան համար ոչ արժանի*» (էջ 9):

Արեւմտահայոց ինքնագիտակցութեան զարթօնքի հետ մէկտեղ առաջ է մղուել նաեւ մարմնապէս առողջ եւ ուժեղ սերունդներ կրթելու, անհատական գործունէութիւնից վերանալու եւ որպէս ազգային հաւաքականութիւն հանդէս գալու, ազգի մարմնական հնարաւորութիւնները բացայայտելու, օտարներին ներկայացնելու եւ նրանց հետ արժանապատուօրէն մրցելու հարցը: Այս առումով յատկանշական է գրքում մէջբերուած Շաւարշ Միսաքեանի՝ Կարինի *Յառաջ* թերթում արտայայտած միտքը. «*Հարկ է ֆիզիքապէս չտկել մէջքերը, որպէսզի դիւրանայ, լրանայ մտքի եւ սրտի ծառութիւններուն ալ սրբագրութիւնը*» (էջ 65): Այսինքն, հարցը սոսկ մարմնապէս առողջ սերունդ հասցնելը, տղաներին զինուորական ծառայութեանը եւ ինքնապաշտպանութեանը նախապատրաստելը չէ, այլ առաւել հեռահար նպատակներ, ապագայի քաղաքակիրթ հայորդիներ դաստիարակելը: «*...Հայ մարմնակրթական շարժման ջատագովներն ունեցել են ստոյգ ծրագիր եւ այդ նպատակներին հասնելու տեսանելի ռազմավարութիւն եւ գործելակերպ*»,– գրում է Դեմոյեանը (էջ 79) եւ ողջ գրքի էջերում ցոյց տալիս այն նպատակամղուած ջանքերը, որոնք հետեւողականօրէն կիրառել են Օսմանեան Կայսրութեան հայ մարզաշխարհի գործիչները:

12 գլխից բաղկացած այս գրքում առաջին անգամ համադրուել եւ ներկայացուել են Օսմանեան Կայսրութիւնում հայկական մարմնակրթութեան ձեւաւորումը եւ զարգացման ընթացքը, առաջին հայ մարմնամարզական ա-

կումբների գործունէութիւնը, հայ մարզական մամուլը, առանձին իրողութիւններ: Հայ մարզական մամուլը եւ հայկական արխիւները դառնում են օսմանեան սպորտի պատմութեան անգնահատելի եւ յաճախ միակ սկզբնաղբիւրներ: Նկատենք սակայն, որ առկայ որոշ իրողութիւնների վերաբերեալ (որքան էլ որ դրանք վերաբերուեն ոչ-վաղ անցեալին), միշտ չէ, որ սպառիչ պատասխան է տրւում: Այսպէս, Դեմոյեանը նշում է, որ *«հայկական առաջին մարզական կազմակերպութիւնների ստեղծման ստոյգ ժամանակաշրջանի մասին սկզբնաղբիւրներում առկայ են իրարամերժ տուեալներ»* (էջ 24, 29): Եւ իսկապէս, սոյն միտքը յայտնելով՝ նա որպէս այդպիսիք նշում է 1900ին Զմիւռնիայում հիմնուած «Արմենիա» եւ «Վասպուրական» ոտնագնդակի խմբերը, իսկ մի քանի էջ անց որպէս հայկական առաջին ոտնագնդակի խումբ յիշատակում «Բանքալիմանը» (էջ 36): Նմանատիպ փաստերը տակաւին կարիք ունեն ճշտուելու լրացուցիչ աղբիւրներով:

Գրքի Ա. գլուխը՝ «Սպորտի Եւ Մարմնակրթութեան Զարգացումը Օսմանեան Կայսրութիւնում», ընդհանուր գծերով տալիս է այն պատմական-ընկերային եւ հասարակական միջավայրը, որտեղ ծնունդ առաւ հայկական մարմնամարզական շարժումը: Օսմանահպատակ հայերը միւս ազգային փոքրամասնութիւնների եւ Կայսրութիւնում ապրող եւրոպացիների հետ մէկտեղ տակաւին համիդեան ժամանակներում մասնակցութիւն են ունեցել առաջին մարզական խմբերի ստեղծմանը, հանդէս եկել մասնաւորապէս ոտնագնդակի առաջին խմբերում: Հեղինակը ներկայացրել է յատկապէս երիտթուրքերի՝ ազգային մարզարուեստը խթանելու ջանքերը եւ զուտ թուրքական մարզական կազմակերպութիւնները՝ որպէս թուրքական նոր ինքնութիւնը եւ ազգայնականութիւնը կերտող կարեւոր գործօններ. *«...չուտով սպորտն ու սպորտային մրցակցութիւնը դառնալու էին թուրքական ազգայնականութեան ուժգնացման կարեւոր բաղադրիչներից մէկը»* (էջ 17): Ուշագրաւ է, որ մինչ երիտթուրքերի իշխանութեան գլուխ գալը թուրքերի շրջանում մարզական գործը եղել է առանձին անհատների մակարդակով, այն դէպքում երբ ազգային փոքրամասնութիւնների ներկայացուցիչներն ունեցել են աշխուժօրէն գործող եւ զարգացած մարզական միութիւններ: Կարեւոր է նաեւ այն վկայութիւնը, որ առաջին թուրքական մարզական հանդէսը հրատարակուել է հայկական *Մարմնամարզի* օրինակին հետեւելով (թուրքական բանակի սպայ եւ յայտնի իթթիհատական Սելիմ Սըրը Թարջանը եղել է *Մարմնամարզի* աշխատակիցը):

Բ. գլուխը («Հայկական Սպորտի Եւ Մարմնակրթութեան Զարգացումը Օսմանեան Կայսրութիւնում») ներկայացնում է հայ մարմնամարզական շարժման սկզբնաւորումը եւ զարգացումը՝ նախ որպէս կրթական համակարգի մի մաս, ապա որպէս ներհամայնքային գործունէութեան բաղադրիչ: Տակաւին 1845ին տպագրուած պոլսահայ մի հրատարակութեան մէջ կարեւորուել է մարմնական կրթութեան նշանակութիւնը: Այս գլխում Դեմոյեանը ներկայացրել է ուսումնական ծրագրերում եւ տպագիր հրատարակութիւններում մարմնակրթութեանն առնչուող տարբեր փաստեր, առաջին հայկական կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ առաջին մարմնամարզիկներին: Հայ մարզարուեստի ռահվիրաներն են Շաւարշ Քրիսեանը, Գրիգոր Յակոբեանը եւ Վահան Չերազը: Ֆրանսիական մարմնամարզական դպրոց անցած այս փայլուն եռեակի եւ նրանց համախոհների շնորհիւ է սկզբնաւորուել եւ զար-

գացել պոլսահայ մարմնակրթական շարժումը: Եղեռնամահ մարզիկ, մարզական գործի անխոնջ կազմակերպիչ, հայ առաջին մարզաթերթ *Մարմնամարզի* (1911-1914) հիմնադիր-խմբագիր Շաւարշ Քրիսեանը (1886-1915) սոյն հատորի գլխաւոր «հերոսներից» է: Նրա խմբագրականների եւ յօդուածների լուսապատճէնները գաղափար են տալիս այս եզակի գործչի ազգանուէր գործունէութեան, մարմնակրթութեան վերաբերեալ հայեացքների եւ մօտեցումների վերաբերեալ: Այս գլխում մի առանձին ենթագլուխ է կազմում «Հայկական Ֆուտբոլի Ծնունդը»՝ ներկայացնելով տակաւին 1900ականներին համիդեան բռնապետութեան պայմաններում ստեղծուած տարբեր ոտնագնդակի խմբերը (լաւագոյններից է եղել «Արաքս»ը), որոնք, սեփական մարզահագուստով եւ տարբերանշաններով, յաջողապէս մասնակցում էին Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաքում գործող մի քանի լիգաների խմբային եւ միջազգային մրցաշարերին, ինչպէս նաեւ առանձին մարզիկների անուններ (ինչպէս, «Տորք» ակումբի դարպասապահ Վ. Մատթէոսեանը, որը համարուել է Պոլսի ակումբների լաւագոյն դարպասապահներից մէկը):

Մի առանձին ենթագլուխ էլ կազմում է «Մարմնամարզի» Ծնունդը», որ ներկայացնում է առաջին հայ մարզական հանդէսի անցած կարճ (քառամեայ), սակայն խիստ բովանդակալից ուղին, գաղափարական ուղղուածութիւնը, պատմական նշանակութիւնը, որը եղաւ հայ պատանիների եւ երիտասարդների աննախադէպ խորհրդատուն եւ ուղեցոյցը: Նախապէս ստեղծուած որպէս պատկերազարդ ամսաթերթ՝ *«Օրկան ազգային ֆիզիքական վերածնութեան»*, այնուհետեւ այն դարձել է *«Օրկան ազգային ֆիզիքական կրթութեան»՝ «դրանով իսկ չեշտադրելով իր իրական կոչումը եւ վերածուելով Օսմանեան կայսրութեան հայ բնակչութեան չրջանում մարզական կեանքը խթանող կարեւորագոյն գործիքի ու միջոցի»* (էջ 50-51): Քրիսեանի հիմնած սոյն հանդէսը չի եղել սոսկ պոլսահայութեան մարզական կեանքի լրատուն եւ առաջնորդը. այն ունեցել է թղթակիցներ կայսրութեան տարբեր կէտերից (ի դէպ, գաւառներում տարածուել է նուիրատուութեան կարգով), ինչպէս նաեւ արտերկրից:

Գ. գլուխը նուիրուած է հայ մարզական կեանքին՝ Օսմանեան Կայսրութեան երկրորդ խոշոր քաղաք՝ Զմիւռնիայում («Մարզական Եւ Մարմնակրթական Շարժումը Զմիւռնիայում»):

Նոր անակնկալներ է բացայայտում Դ.՝ «Սպորտի Եւ Մարմնակրթութեան Զարգացումը Արեւմտեան Հայաստանում Եւ Կիլիկիայում» գլուխը: Արեւմտեան Հայաստանի եւ Կայսրութեան այլեւայլ մեծ ու փոքր քաղաքներում (Կարին, Վան, Սեբաստիա, Աղաբազար, Պարտիզակ, Խարբերդ, Ուրֆա, Կեսարիա, Երզնկա, Մարզուան) եւ կամ առանձին միութիւններով զարկ էին տալիս ինչպէս տարածում գտած մարզաձեւերի (մարմնամարզութիւն, ոտնագնդակ), այնպէս էլ պակաս տարածուածների (լող, չմշկավազք, մինչեւ անգամ բէյսբոլ) զարգացմանը: Աւելի քան ուշագրաւ է, որ մարզական շարժումը ներթափանցել է նաեւ նահապետական հայ գիւղերը (ինչպէս՝ Կովտուն գիւղը, որտեղ գործել է «Զաւարեան» ոտնագնդակի ակումբը): Այս գլխում մասնաւորապէս ուշադրութիւն է դարձուել կիլիկիահայութեան մարզական կեանքին, որն այն աստիճան աշխոյժ է եղել, որ 1914ի Ապրիլին տեղի է ունեցել կիլիկեան ողիմպիական խաղեր եւ մարզահանդէս:

Ե. գլուխը՝ «Հայ Կինը Եւ Մարմնակրթութիւնը», ներկայացնում է հայ իգական վարժարաններում սկզբնաւորուած մարզական դաստիարակութիւնը: Սա կարեւոր հանգամանք է, քանի որ սկզբնապէս նոյնիսկ արական վարժարաններում է մարմնամարզի դասաժամերը պերճանք համարուել, բայց ահա կարճ ժամանակաշրջանում դրանք սկսել են մուտք գործել նաեւ իգական դպրոցներ ինչպէս Պոլսում, այնպէս էլ գաւառներում: Եւ ապա՝ հայ տղամարդ մարզիկների ջանքերի շնորհիւ 1910ականներին ստեղծուել են կանանց մարմնամարզական ակումբները (դարձեալ Քրիսեանի հիմնած «Էսայեան Սանուց Միութիւն»ը): Յիրաւի ճշմարտացի է *Մարմնամարզ*ում տպագրուած եւ այս գլխի բնաբան դարձած միտքը, թէ *«Այր մը կրթել, միայն մարդ մը պատրաստել է, իսկ կին մը կրթելը՝ ամբողջ սերունդներ»* (էջ 90):

Զ. գլուխը ներկայացնում է հայ մարզական կեանքի պատմութեան քերեւս առաջին ամենափառահեղ էջերը՝ «Հայկական Օլիմպիական Խաղերը (1911-1914 թթ.)»: Ընդամէնը երեք անգամ կեանքի կոչուեցին այդ խաղերը (1911ի Մայիս, 1913ի Յունիս, 1914ի Յունիս), սակայն տեղի ունեցան ժամանակի բարձր չափանիշներին համապատասխան, դրանց մասնակցեցին հայկական մարմնամարզական ակումբներ եւ խմբակներ, ներկայացուեցին տարբեր մարզաձեւեր (մարմնամարզութիւն, հեռացատկ, վազք, գնդի հրում, սկաւառակի նետում, հեծելարշաւ), սահմանուեցին մրցանիշներ, յաղթողներն արժանացան արծաթեայ կամ ոսկեայ մեդալների եւ պարգեւների: Հայ մարմնակրթութեան տարեգրութեան նախնական փուլի այս աւելի քան ուշագրաւ էջերը յիրաւի իւրօրինակ են ողջ արեւմտահայութեան եւ առհասարակ հայ անցեալի պատմութեան մէջ:

Է. գլուխը վերնագրուած է «Հայ Մարզիկների Մասնակցութիւնը Միջազգային Օլիմպիական Խաղերին»: Հայն Արեւելքի առաջին ազգն է եղել, որ մասնակցել է ողիմպիական խաղերին՝ ի դէմս 1906ին Աթէնքում կայացած ոչ-պաշտօնական ողիմպիականի մասնակից Յարէք Փափազեանի: Իսկ պաշտօնապէս հայերն ողիմպիական խաղերի մասնակցել են 1912ին Ստոկհոլմում կայացած ողիմպիականի ժամանակ: Քանի որ թուրքերը մարզիկ չեն ունեցել ողիմպիականին մասնակցելու, հայերը որոշել են ուղարկել իրենց ներկայացուցիչներին: Համահայկական հանգանակութեամբ եւ սեփական միջոցներով Շուեդիա են ուղարկուել պոլսահայ երիտասարդ մարզիկներ Վահրամ Փափազեանը եւ Մկրտիչ Մկրեանը[3]: Սոյն գլխում մանրամասն ներկայացուել է այդ մասնակցութեան հետաքրքրաշարժ իրողութիւններով լի պատմութիւնը: Դեմոյեանի տեղեկատուութեանն աւելացնենք նաեւ, որ Շուեդիայի ողիմպիականի մասին Փափազեանը թղթակցութիւններ է ուղարկել Կ. Պոլսի *Ազատամարտ* օրաթերթին, իսկ շուեդական մամուլը մի քանի անգամ հրատարակել է նրա եւ յատկապէս գեղամարմին Մկրեանի լուսանկարները: Ու քէեւ հայ մարզիկների շնորհիւ է օսմանեան դրօշը ծածանուել Ստոկհոլմի մարզադաշտում (եւ առաջին անգամ՝ ողիմպիական խաղերի պատմութեան մէջ), շուէդները եւ միւս ազգերի ներկայացուցիչները նրանց ճանաչել են որպէս հայերի, մամուլում նրանց մասին գրելիս մշտապէս յիշել նրանց ազգութիւնը[4]:

Առանձնակի հետաքրքրութիւն է ներկայացնում հատորի Ը.՝ «Սպորտը Եւ Ազգայնական Մրցակցութիւնը» գլուխը: Պատմական իրողութիւնների հիման վրայ Դեմոյեանը ցոյց է տուել օսմանեան ազգայնական անհանդուրժո-

ղական միջավայրը եւ դրանց ենթախորքում՝ *«Հայ եւ թուրք մարզական կեանքի համընթաց զարգացման ընթացքում երեւան եկած հակասութիւնները ու բախումները»* (էջ 126): Պատմաբանը մարզական իրողութիւնների ետեւում յաջողապէս դիտարկում է դրանց հոգեբանական ենթաշերտերը: Գլխում առկայ են ընդարձակ մէջբերումներ, որոնք ի յայտ են բերում թուրք-հայ մարզական մրցակցութեան բազմաթիւ դրուագներ, որոնցում առաւելութիւնը յաճախ եղել է հայկական կողմում: Այս բոլոր նշուած յաջողութիւններով հանդերձ, նոյն Քրիսեանը խիստ գնահատական է տալիս իրենց գործունէութեանը. 1914ին նա նշել է, որ չնայած *«...առաջին անգամ մենք՝ Հայերս էինք, որ սբօրի, ֆութպոլի նման արեւմտեան գաղափար մը Թուրքիա ներմուծեցինք, բայց ազգային մարմինները չի կարողացան անոր չուրջ բոլորուիլ եւ անով զօրանալ, մեր գործունէութիւնը մնաց շատ սահմանափակ»* (էջ 134-135):

Թ. գլուխն ամենափոքրն է, սակայն ամէնից տխուրը՝ «Հայկական Սպորտի Կորուստը Մեծ Եղեռնի Տարիներին»: Եւս մէկ ողբերգական դրուագ հայ տարագրութիւնից. անգամ Այաշում աքսորեալ մտաւորականների ճակատագիրը կիսած Քրիսեանը հաւատարիմ է մնացել իր նկարագրին՝ ամէն առաւօտ ստիպելով մտաւորական աքսորեալներին մարզանք կատարել:

Գրքի վերջին գլուխներն են «Հայկական Սպորտը Յետպատերազմեան Տարիներին (1918-1922): Հ.Մ.Ը.Մ.Ի Ստեղծումը», «Մարմնակրթութիւնը Հայկական Որբանոցներում» եւ «Հայկական Սկաուտական Շարժման Ծագումն Ու Զարգացումը», որոնցում դարձեալ փաստական եւ պատկերային հարուստ նիւթի հիման վրայ տրւում է Մեծ Եղեռնից յետոյ արեւմտահայութեան մարզական գործունէութեան պատմութիւնը: Գոյատեւելու հայկական անընկճելի բնազդն ի յայտ է եկել այս ասպարէզում նոյնպէս. անգամ միլիոնաւոր զոհեր տալուց յետոյ հայ երիտասարդութիւնն իր մէջ ոյժ եւ կորով է գտել համախմբուելու եւ զարգացնելու իր մարմնական կարողութիւնները, այս անգամ՝ որբանոցների միջոցով: Գրեթէ բոլոր որբանոցներն ունեցել են ոտնագնդակի խմբեր: Մինչեւ անգամ Պոլսում տեղի են ունեցել որբանոցային ողիմպիական խաղեր: Յիրաւի աննախադէպ երեւոյթ՝ մարզարուեստի պատմութեան մէջ: Նուազ աննախադէպ եւ արտասովոր չէ մարզակումբների եւ սկաուտական խմբերի ստեղծման փաստը նոյնիսկ չարաղէտ Տէր Զօրում: Իսկ 1920ականների սկզբին պոլսահայութեան մէջ սկսուած սկաուտական շարժման նպատակը դարձաւ հայ ազգի հաւաքական եւ համագործակցող ոգու կերտումը՝ *«ցեղը ազնուացնելու»* տեսլականով, որը յետագայում պիտի անգնահատելի դերակատարութիւն ունենար սփիւռքահայ գրեթէ բոլոր մեծ համայնքների կրթական եւ հանրային կեանքում:

Անշուշտ, ժամանակի մամուլը, յուշագրական գրականութիւնը եւ այլ արխիւների ուսումնասիրութիւնը նորանոր փաստեր ի յայտ կարող է բերել հայ մարզական կեանքի լիակատար պատմութեան համար:

Հայկական Սպորտը Եւ Մարմնակրթութիւնը Օսմանեան Կայսրութիւնում պատկերագրքի ընթերցանութիւնը հաճելի եւ յուզիչ անակնկալներ է մատուցում ընթերցողին, յատկապէս հայ մշակոյթի տարբեր գործիչների՝ մարզական կեանքին մասնակցութեան վերաբերեալ: Այսպէս, պարզւում է, որ հանրային-քաղաքական գործիչ Միհաս Չերազն է անուանակոչել 1908ին կազմաւորուած «Տորք» ակումբը. Կոմիտաս Վարդապետն է նախագահել 1913ի հայկական ողիմպիական խաղերի բացումը՝ եզրափակիչ մասում կատարե-

լով նաեւ մրցանակաբաշխութեան արարողութիւնը: Իսկ մեծատաղանդ բանաստեղծ Մատթէոս Զարիֆեանը յաջողութիւններ է ունեցել նաեւ մարմնամարզութեան ասպարէզում: Այստեղ կը ցանկանանք մեր կողմից աւելացնել, որ հայ բանասէր-մատենագէտ Արմենակ Սալմասլեանը եւս ակտիւ է եղել մարզական կեանքում: Նա եղել է Կ.Պոլսի Ռոպերթ Քոլէջի բասկետբոլի խմբի անդամ (պահպանուել է այդ խմբի 1908ի լուսանկարը, մարզիչն ամերիկացի է, իսկ խաղացողները՝ յոյն, բուղարացի եւ երեք հայ), իսկ 1919ին ՀՄԸՄ ողիմպիական խաղերի ժամանակ եղել է մրցավար[5]:

Եւ վերջապէս գիրքը կարեւորում է պատմական լուսանկարների առատութեամբ: Խմբանկարներ եւ լուսանկարներ՝ անցեալի հայ մարզիկների համեստ, լրջախոհ, արժանապատիւ, առանց ցուցադրականութեան եւ պաթոսի, մտաւորական դէմքեր, ինչպէս նաեւ քաղաքների, մարզադաշտերի պատկերներ (հիմնականում՝ տուեալ ժամանակաշրջանի բացիկներից), գրքերից եւ մամուլից բազմաթիւ էջեր եւ այլազան պատկերներ (խաղադաշտերի յատակագծեր, ոտնագնդակի մրցախաղերի խաղացանկը, վարժանքների ուղեցոյցներ, գրքերի շապիկներ եւ նկարազարդումներ, մարզական պարգեւներ) եւ քարտէզներ: Հայկ Դեմոյեանը մինչեւ անգամ կազմել է իր տեսակի մէջ եզակի քարտէզ՝ «Սպորտը Արեւմտեան Հայաստանում Եւ Օսմանեան Կայսրութեան Հայաբնակ Վայրերում (1900-1922 թթ.)» (էջ 64), որից տեղեկանում ենք, որ Արեւմտեան Հայաստանում եւ Կ.Պոլսում եղել են 40ից աւելի մարմնակրթական ակումբներ եւ միութիւններ, ոտնագնդակի 17 ակումբներ եւ խմբեր, 10ից աւելի սկաուտական խմբեր:

Տպագրական բարձր որակը, ճաշակով՝ գեղագիտական եւ ակնահաճոյ ձեւաւորումը, բնոյթով՝ թէ՛ պատմագիտական եւ թէ՛ հանրամատչելի, բովանդակութեամբ՝ թէ՛ պայծառ եւ թէ՛ տխուր այս հատորիկը դարձնում են իր տեսակի մէջ յիրաւի եզակի մի հրատարակութիւն, որ հարստացնում է մեր պատկերացումներն արեւմտահայութեան անցեալի մի չափազանց ուշագրաւ կողմի վերաբերեալ: Միանգամայն փափաքելի եւ անհրաժեշտ է սոյն հրատարակութիւնը տեսնել անգլերէն եւ թուրքերէն լեզուներով թարգմանուած:

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Բիւզանդ Թորիկեան, *Պատմութիւն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, Հտր. Առաջին, Սկիզբէն Մինչեւ 1939 թ.*, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1995. *Հտր. Երկրորդ՝ 1940-1974*, Պէյրութ, Տպ. Կ. Գապազագլեան, 1999. *Հտր. Երրորդ՝ 1975-1990*, Պէյրութ, Տպ. Կ. Գապասագլեան, 2003, *Հտր. Չորրորդ՝ 1991-2007*, Պէյրութ, Տպ. Կ. Գապասագլեան, 2007:

[2] Տիգրան Սարաֆեան, *Հայ Մարմնամարզական Միութեան Պատմութեան Հետքերով...*, Մատենաշար եւ խմբագրում «Նայիրի» շաբաթաթերթի, Լիբանան, 2007:

[3] Ի դէպ, շուեդական գրականութեան մէջ ստոկհոլմեան ողիմպիականին հայ մարզիկների մասնակցութեան փաստն արձանագրուել է արդէն 1912ին (տե՛ս՝ Gustaf G:son Uggla, *Olympiska Spelen I Stockholm*, Stockholm, 1912, էջ 386-388, 397-400):

[4] Ինչպէս յետագայում վկայել է Վահրամ Փափազեանը, *«Շուեթացիներու կողմէ հայերուս հանդէպ ցոյց տուած ջերմ վերաբերմունքը մեզի զարմանք պատճառեց: Ուր*

որ կ'երթայինք, «դուք հերոս, ազնուական ազգ մըն էք, յաճախ մենք ալ մասնակից եղած ենք ձեր տառապանքներուն», կը կրկնէինն (Վահրամ Փափազեան, *Մէր, Մէր, Մէր, Բարձրացիր Բարձրացուր*, Պէյրութ, Տպ. Սեւան, 1962, էջ 59):

[5] Տե՛ս՝ Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարան, Արմենակ Սալմասլեանի ալբոմ:

ԼԵՒՈՆ Ա. ԹԱԳԱՒՈՐԻՆ ՔԱՌՈՐԴ ԵՐԿԴՐԱՄՆԵՐՆ ՈՒ ԲԻԼԼՈՆՆԵՐԸ

ԵՂԻԱ ՆԵՐՍԷՍԵԱՆ
ArmNumSoc@aol.com

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Կիլիկիոյ Հայոց Թագաւորութեան Լեւոն Ա. (1198-1219) *թագաւորի դրամահատութիւնը կ՚ընդգրկէ բազմատեսակ դրամներ*[1]*։ Անոր՝ ոսկեայ չքադրամներուն կողքին, քառորդ երկդրամներն ու բիլլոնները (արծաթի ցած տոկոսով արծաթապղինձ դրամ) չափազանց հազուագիւտ՝ "10R" հազուագիւտութեան աստիճանի դրամներ են*[2]*։*

Քառորդ երկդրամը մաս կը կազմէ մէկ առիւծով արծաթեայ դրամական համակարգին[3]*, որ թողարկուած է կամ Լեւոնի արքայական իշխանութեան սկիզբը կամ օծման ու թագադրութեան արարողութենէն առաջ*[4]*։ Երկդրամներն ու կէս երկդրամները՝ մէկ առիւծով դրամական համակարգին մէջ կը նկատուին սակաւաթիւ դրամներ։*

Լեւոնի բիլլոնները՝ հայատառ ու լատինատառ, թողարկուած են Անտիոքի խաչակիր իշխանապետութեան մէջ շրջանառութեան համար։ Զարեհ Պ. Պտուկեան մանրամասն քննարկած է պատմական այն շարժառիթները, որոնք պատճառ հանդիսացած են այս երկու հայատառ եւ լատինատառ բիլլոններու թողարկումներուն, նման՝ խաչակիրներու բիլլոն դէնիէր դրամներուն, որոնք շրջանառութեան մէջ էին Անտիոքի մէջ[5]*։*

Այս չափազանց հազուագիւտ դրամներուն մասին տեղեկութիւններ հրապարակուած են առաւելաբար բանասիրական աշխատութիւններու եւ աճուրդի ցուցակներու մէջ։ Սոյն յօդուածին նպատակն է համախմբել բոլոր ծանօթ տեղեկութիւնները՝ քառորդ երկդրամներու, հայատառ ու լատինատառ բիլլոններու մասին, միաժամանակ պատրաստել կաղապարներու ուսումնասիրութիւն մը՝ Լեւոն Ա. թագաւորին կողմէ թողարկուած այս գոհարներուն շուրջ։

ՔԱՌՈՐԴ ԵՐԿԴՐԱՄՆԵՐ

1962ին Պտուկեան ցուցակագրեց երեք հատ քառորդ երկդրամներ *Կիլիկեան Հայաստանի Դրամները* գիրքին մէջ*[6]*։ Այս կոթողային աշխատանքին բարեփոխուած հրատարակութեան մէջ, ծանօթ քառորդ երկդրամներու քանակը մնաց նոյնը։ Գիրքին 1962ի ու 1979ի (անգլերէն), եւ 1963ի (հայերէն) հրատարակութեանց մէջ միայն մէկ քառորդ երկդրամին քաշը տեղեկագրուած է*[7]*։*

1995ին սոյն տողերուն հեղինակը հրատարակեց իր *Հայկական Դրամներն Ու Իրենց Արժէքները* գիրքը, ուր հաւաստեց թէ ծանօթ քառորդ երկդրամներու քանակը չորս է*[8]*։ Քառորդ, ու վերոյիշեալ մենագրութեան մէջ պատկերազարդուած օրինակը կը պատկանէր ձէք Կեւրէքեանին*[9]*։ Մենք զայն գնած ենք* Classical Numismatic Group*ի «Արարատեան Հաւաքածոյ» աճուրդէն*[10]*։*

2002ին, Տիկ. Մ.-Լ. Կարապետեան հրատարակեց Պ. Վ. Զուբովի հաւաքածոն[11], ուր Լեւոն Ա.ի դրամներու բաժնին մէջ ցուցակագրեց անտիպ քառորդ երկդրամ մը[12], հինգի բարձրացնելով ծանօթ երկդրամներու քանակը։ Զուբովի հաւաքածոն պահպանուած է Մոսկուայի Պատմութեան Թանգարանին մէջ։

2007ին հրատարակեցինք Կիլիկիոյ հայկական դրամներու չափագիտութեան նուիրուած մեր գիրքը, ուր հաւաստեցինք թէ ծանօթ քառորդ երկդրամներու քանակը վեց է[13]։

1971ին հրատարակած իր *Միջնադարեան Հայկական Դրամներ* աշխատութեան մէջ, Պտուկեան քառորդ երկդրամ մը կը յղէ Էրմիթաժի Թանգարանին՝ գրելով՝ «Միայն երեք ծանօթ օրինակներ գոյութիւն ունին՝ Բրիտանական Թանգարանին, Էրմիթաժի Թանգարանին եւ հեղինակին հաւաքածոյին մէջ» ("only three specimens are known to exist – in the British Museum, the Hermitage Museum, and in the author's collection")[14]։ *Կիլիկեան Հայաստանի Դրամներուն*[15] երեք հրատարակութեանց մէջ, էջ 137, թիւ 68, «Քառորդ Երկդրամներ» ենթախորագրին ներքեւ (Quarter Double Trams), Պտուկեան հաստատած էր թէ գոյութիւն ունեցող երկդրամները են. «1.27g., (92%), PB[16]; ER[17] (I); *BM[18] (I)»։ Այս նախադասութեամբ կը հաւաստէր, թէ մէկ օրինակ պահպանուած է "ER" Թանգարանին մէջ։ Նոյն երեք գիրքերու էջ 130ին մէջ՝ "ER" կրճատումը կը փոխարինէ՝ «Հայաստանի Պատմութեան Թանգարան, Երեւան, Հայաստան (State Historical Museum, Erivan, Armenia)» արտայայտութեամբ։ Հետեւաբար, մեր կարծիքով, երբ Պտուկեան կը չարադրէր *Միջնադարեան Հայկական Դրամներ* աշխատութիւնը, ենթադրեց թէ "ER" կը նշանակէ Էրմիթաժ։ Այլապէս ինչպէ՞ս կրնայ ըլլալ, որ Երեւանի Թանգարանին ունեցածը մոռցուած է նման կարեւոր աշխատութեան մը մէջ։

Երեւանի օրինակին գոյութիւնը մեծ աղմուկով հրապարակուեցաւ Պերճ Կարապետեանի[19] գոյդ յօդուածներով։ Երեւանի երկդրամը մաս կը կազմէր դրամագիւտի մը, որ յայտնաբերուած էր 1936ին՝ հին Դաֆնիքի մէջ (Անտիոքի մօտ)։ Հոս տեղին է յիշատակել որ պէյրութահայ Արմենակ Փոլատեանը գնեց ամբողջ Դաֆնիքի դրամագիւտը եւ զայն նուիրեց Հայաստանի Պատմութեան Թանգարանին[20], Երեւան, 1947ին։ Ապա Խաչատուր Մուշեղեան[21] հրապարակեց այդ հաւաքածոն փոքր յօդուածով մը։ Պտուկեան համառօտագրեց ու անգլերէնի թարգմանեց Մուշեղեանի գրածը եւ հրատարակեց Ամերիկեան Դրամագիտական Ընկերակցութեան դրամագիտական գրականութեան նուիրուած պարբերագիրքին մէջ՝ P.Z.B. ստորագրութեամբ[22]։ 1976ին, Պտուկեան վկայակոչեց Դաֆնիքի դրամագիւտը յօդուածի մը մէջ, ուր ցուցակագրեց միայն երկդրամներն ու կէս երկդրամները, ու չանդրադարձաւ քառորդ երկդրամներուն. սակայն *Selected Numismatic Studies* Ի մէջ, Երեւանի քառորդ երկդրամը պատկերազարդուած է[23]։ Պտուկեան հայացած ձեւը գործածելով՝ Էրմիթաժի (Er[mitage]) Թանգարանին նշանակեց քառորդ երկդրամ մը, փոխանակ զայն յատկացնելու Երեւանի Թանգարանին (Er[evan])։ Դժբախտաբար այս չփոթը ստեղծեց «նոր» քառորդ երկդրամ մը, որ գոյութիւն չունէր։

1892ին, Հայր Կղեմէս Սիպիլեան իր յետմահու հրատարակուած գիրքին[24] մէջ լոյս ընծայեց Լեւոն Ա. Թագաւորի քառորդ երկդրամին գրչանկարը՝ նկար 43 (ԳՆԱ)։ Նոյն տեղը Սիպիլեան գրեց. «Գործոյս առաջին թերթերը տպագ-

րուելէն ետեւ՝ ծանօթացաւ ինձ միւս եւս դրամ Լեւոն Բ., զոր այստեղ յիշատակել անհրաժեշտ կը համարիմ: Ասիկայ է արծաթի փոքրիկ կիսադրամ մը, սեպհականութիւն Հայ դրամիգիտին, որուն տեղեկացոյց զիս Կ. Շլումպէրկէր: Ահա ասոր ստորագրութիւնը: ...»[25]: *Սիպիլեան մահացաւ 23 Մայիս 1878ին: Ուրեմն, Շլումբերժէ զինք տեղեկացուցած ըլլալու է 1878էն առաջ: Սիպիլեան չափագիտական տուեալ չի տար Սերովբէ Ալիշանի քառորդ երկդրամին մասին:*

Պտուկեան[26] բաղդատելով իր քառորդ երկդրամը Սիպիլեանի քառորդ երկդրամի գրչանկարին հետ կը գրէ թէ իր երկդրամը՝ Մարգար Ալիշանի նախկին հաւաքածոյին մաս կազմած է: Մարգար Ալիշան հայրն էր Հայր Ղեւոնդ Ալիշանի եւ դրամագէտ Սերովբէ Ալիշանի: 1930ականներուն, Պտուկեան բազմաթիւ դրամներ գնած է իսթանպուլաբնակ Քերոբ Քելէկեանէն: Շատ հաւանաբար Պտուկեան իր քառորդ երկդրամը ձեռք բերած է այս ժամանակամիջոցին[27]: Սակայն, տեղեկութիւն չի տրուիր, թէ ի՛նչպէս Ալիշանի դրամը Քելէկեանի ձեռքը անցած է:

2000ին, Պտուկեանի դրամագիտական հաւաքածոն[28], աւելի քան 4300 կտոր հայկական դրամներ ու որոշ հազուագիւտ մեդալներ, ինչպէս նաեւ իր դրամագիտական գրադարանը, նուիրուեցան Մեսեչուսէց նահանգի Ուոթըրթաուն քաղաքին մէջ գտնուող «Ամերիկայի Հայկական Գրադարան եւ Թանգարան»ին (Armenian Library and Museum of America – ALMA, Watertown, MA):

1936ին, Կ. Ց. Բասմաջեան նկարագրեց Լեւոն Ա. Թագաւորի կիսադրամէն տարբերակ մը իր գիրքին մէջ[29]: Բասմաջեան, սակայն չտպեց դրամին պատկերը: Բայց հիմնուած դրամի նկարագրութեան եւ երեսի ու կռնակի խորագրութեանց վրայ, կրնանք անկասկած ըսել թէ անիկա քառորդ երկդրամ մըն է: Սերտելով դրամին խորագրութիւնը եւ զարդերը, կարելի է եզրակացնել թէ Սիպիլեանի քառորդ երկդրամին գրչանկարը ծառայած է որպէս աղբիւր Բասմաջեանի նկարագրութեան: Վերջինիս նկարագրութեան մէջ չափագիտական տուեալ չկայ եւ դրամին ուր գտնուիլը անյայտ կը մնայ:

Հիմնուելով իր փորձառութեան ու ստացած տեղեկութեանց վրայ, Պտուկեան կ՝եզրակացնէ թէ քառորդ երկդրամներու հաւանական առաւելագոյն քանակը ութ է[30]: Մենք կ՝երկրորդենք այս եզրակացութիւնը[31]:

ՅՈՒՑԱԿ ՔԱՌՈՐԴ ԵՐԿԴՐԱՄՆԵՐՈՒ

Երես. *Լեւոն Թագաւորը հանդիպահայեաց բազմած է առիւծազարդ գահին վրայ, Թագակիր է եւ ուսերուն վրայ արքայական թիկնոց կը կրէ: Ան ալ ձեռքով խաչակիր գունդ մը կը բռնէ, իսկ ձախով՝ չուշան մը: Իր ոտքերը կը հանգչին ոտնաթոռակի մը վրայ: Շրջագրութիւնը՝ ԼԵՒՈՆ ԹԱԳ (չարունակութիւնը՝ միւս կողմը)*

Կռնակ. *Հանդիպահայեաց Թագակիր առիւծ մը դէպի ձախ դարձած, ալ թաթով կը բռնէ կրկնաթեւ խաչ մը: Շրջագրութիւնը՝ +ԱՒՈՐ ՀԱՅՈՑ*

*Ք1** *ԱՐ 1.39գ-17.,6մմ-9ժ, Երեւանի հաւաքածոյ, գոյքամատեանի թիւ 15447/63, կաղապար՝* 1 2

*Ք2** *ԱՐ 1.37գ-19մմ-1ժ, Ներսէսեանի ժողովածու, գոյքամատեանի թիւ 5178, կաղապար՝* 1 2

ԳՆԷ* Հ. Կ. Սիպիլեան, Դասաւորութիւն Ռուբէնեան Դրամոց, նկար 43, կաղապար՝ 3 4

Ք3* ԱՐ 1.27գ-17մմ, նախկին Պտուկեանի ժողովածու, կաղապար՝ 3 4

Ք4* ԱՐ Բրիտանական Թանգարանի ժողովածու, կաղապար՝ 3 4[32]

Ք5 ԱՐ 1.33գ-17մմ-1ժ, Մոսկուայի Պատմութեան Թանգարանի հաւաքածոյ (նախկին Զուբովի հաւաքածոյ)[33], գոյքամատեանի թիւ 552968, կաղապար՝ անծանօթ

ԲԻԼԼՈՆՆԵՐ ՀԱՑԵՐԷՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ

1962ին Պտուկեան տեղեակ չէր որեւէ հայատառ բիլլոնի գոյութենէն։ 1979ին, Կիլիկեան Հայկական Դրամներ գիրքին բարեփոխուած հրատարակութեան մէջ[34], Պտուկեան ցուցակագրեց երկու հայատառ բիլլոններ, որոնցմէ մէկը կը պատկանէր իրեն, իսկ միւսը՝ իր փեսային, Թորգոմ Տեմիրճեանին, որ այն ատեն թղթակցութեամբ հայկական դրամներ ու գիրքեր վաճառելով կը զբաղէր։

Պտուկեանի հայատառ բիլլոնը խաչակիրներու դրամագիւտի մը մասն էր, յայտնաբերուած՝ 1966ին, Անտիոքի շրջակայքը[35]։ Այս գանձը կը պարունակէր 845 բիլլոններ, բոլորն ալ պատկանած Անտիոքի Բոհեմունդ Դ. իշխանին (1189-1232՝ Թրիփոլի, եւ 1213-1232՝ Անտիոք), ի բացառեալ մէկ հատ բիլլոնէ՝ վերագրուած Լեւոն Ա.-ին[36]։ Հալէպահայ Միածին Հաւանճեան ծախեց ամբողջ դրամագիւտը Պտուկեանին՝ հայատառ բիլլոնը ներառեալ[37]։ Դրամագիւտը ստանալէ ետք, Պտուկեան ծայրաստիճան ուրախացաւ առաջին ծանօթ հայատառ բիլլոնը ունենալուն համար, եւ գրեց. «Ա՛յս, հրատարակութեան արժանի բացառիկ յայտնաբերում մըն էր»[38]։ Հուսկ՝ անգլերէն[39] եւ հայերէն[40] յօդուածներ գրեց նոր ձեռք բերուած այս դրամին մասին ուր քննարկեց Լեւոն Ա. Թագաւորին բոլոր ծանօթ լատինատառ բիլլոնները։

1997ին, Լոնտոնի մէջ, Սլոքումի հաւաքածոն աճուրդով[41] վաճառուեցաւ Սոթպիզ Ընկերութեան կողմէ[42]։ Այս հաւաքածոն կը պարունակէր խաչակրութեան շրջանի դրամներ, նաեւ՝ Կիլիկեան Հայաստանի դրամներ։ Աճուրդի ցուցակին հայկական բաժնին մէջ ցուցակագրուած էր Լեւոն Թագաւորի չատ սիրուն հայատառ բիլլոն մը։ Սոթպիզին ցուցակը ցուցակագրող պաշտօնեան փորձած էր յիշատակել դրամին տոհմագրութիւնը եւ աւելցուցած. «Գնուած Թ. Տեմիրճեանէն, Նիւ Եորք, Նոյեմբեր 1978»։ Սակայն, Թորգոմ Տեմիրճեանի հրատարակած ցուցակները այս բիլլոնին յիշատակումը չունէին իրենց մէջ։ Հաւանաբար ձեռք բերուած էր իր վաճառականի պահեստին մէջ եղողներէն։

2007ին, մեր Կիլիկիոյ հայկական դրամներու չափագիտութեան նուիրուած գիրքին մէջ, տեղեկագրեցինք թէ ծանօթ են երկու հայատառ բիլլոններ[43]։ 2008ին յատուկ անձէ մը գնեցինք Լեւոնի հայատառ բիլլոն մը (կրկնադրոշմուած)՝ ծանօթ հայատառ բիլլոններու թիւը բարձրացնելով երեքի[44]։

Ցիշատակութեան արժանի է որ հայատառ բիլլոնի երեսի-կռնակի խորագրութիւնը կը յիշեցնէ Լեւոն Ա. Թագաւորի պղնձեայ դանգ դրամին չրջագրութիւնը (ՀԱՅՒՈՑ փոխանակ ՀԱՅՈՑի)։ Տառերն ալ հաւատարիմ են դանգերու ոճին։ Կռնակի խորագրութիւնն է. «ՇԻՆԵԱԼ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ»։

Հիմնուած մեր փորձառութեան եւ բարեկամներէ, հաւաքորդներէ, դրամագէտ վաճառականներէ քաղած տեղեկութեանց վրայ, կը հաւաստենք թէ հայատառ բիլլոններու հաւանական առաւելագոյն քանակը չորս է[45]։

ՑՈՒՑԱԿ ՀԱՑԱՏԱՌ ԲԻԼԼՈՆՆԵՐՈՒ

Երես. Լեւոն Թագաւորի հանդիպահայեաց գլուխը։ Շրջագրութիւնը՝
+ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ

Կռնակ. Խաչ, կէտ առաջին ու երկրորդ քառեակներու մէջ։
Շրջագրութիւնը՝ +ՇԻՆԵԱԼ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ

ԲՀ1* Բի 0.70գ-17մմ նախկին Պտուկեանի ժողովածու[46], կաղապար՝ 5 6

ԲՀ2* Բի 0.71գ-16մմ նախկին Սլոքումի ժողովածու, կաղապար՝ 5 7

ԲՀ3* Բի 0.69գ-17մմ-4ժ, Ներսէսեանի հաւաքածոյ, գոյքամատեանի թիւ 5928, կաղապար՝ 5 8

Երեսի խորագրութիւն. +ԼԵՒՈՆ ԹԱԳՈՐ .. ԳԱՂԱԳ
Ներքնադրոշմ, տեսանելի ժամի 10ին, կռնակի խաչին վարի թեւը եւ «ԳԱՂԱԳ» բառը։ Խաչ, կէտ երրորդ (?) եւ չորրորդ քառեակներուն մէջ։
Կռնակի խորագրութիւն. [+Շ]ԻՆԵԱԼ Ի ԳԱՂԱԳ .. ԼԵՈՆ Թ
Ներքնադրոշմ, տեսանելի, թագին վերի ալ կողմը, ալ յօնքը, մասնակիօրէն՝ ալ կախազարդի չորս կէտերը։

ԲԻԼԼՈՆՆԵՐ ԼԱՏԻՆԵՐԷՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ

1962ին Պտուկեան իր Կիլիկեան Հայկական Դրամները գիրքին մէջ ցուցակագրեց Լեւոն Ա. Թագաւորի չորս լատինատառ բիլլոնները[47]։ Բարեփոխուած 1979ի հրատարակութեան մէջ լատինատառ բիլլոններու թիւը բարձրացաւ հինգի[48]։ Վերոյիշեալ գիրքի երեք հրատարակութիւններէն ոչ մէկուն մէջ բիլլոններու չափագիտական տուեալներ կան։

1995ին հրատարակեցինք մեր հայկական դրամներու գիրքը, ուր հաւաստեցինք թէ գոյութիւն ունեցող լատինատառ բիլլոնները եօթ հատ են[49]։ 2007ին, Կիլիկեան Հայաստանի դրամներու չափագիտութեան նուիրուած մեր գիրքին մէջ տեղեկագրեցինք վեց ծանօթ լատինատառ բիլլոններ[50]։ Ցարդ բիլլոններու քանակը չէ փոխուած, նորայայտ դրամներ չեն հրապարակուած։

Կեւրէքեան[51] իր կենդանութեան սկսաւ ծախել իր հաւաքածոյին դրամները։ 1995ի վերջաւորութեան, Նիւ Եորքի մէջ, Կեւրէքեանի հաւաքածոյին ընտրանին աճուրդով[52] վաճառուեցաւ Classical Nunismatic Group Ընկերութեան կողմէ[53]։ Այս հաւաքածոյէն երկու կտորներ ընդգրկուած են այս ուսումնասիրութեան մէջ։ Առաջինը՝ արդէն վերը յիշատակուած քառորդ երկդրամ մըն է. իսկ երկրորդը՝ լատինատառ բիլլոն մը, որ չէր ցուցակագրուած Պտուկեանի Կիլիկեան Հայաստանի Դրամները գիրքի քորփուսին մէջ, բայց Հայկական Դրամներն Ու Իրենց Արժէքները մենագրութեան ցուցակին մէջ գրանցուեցաւ եւ գործածուեցաւ տախտակներու պատկերազարդումին համար[54]։

Լեւոն Ա. Թագաւորի վերոյիշեալ լատինատառ բիլլոններէն զատ, 1875ին եւ 1878ին Շլումբերժէ տեղեկագրեց այլ կտոր մը[55]։ Սիպիլեան իր գիրքին մէջ

հայերէնի թարգմանեց Շլումբերժէի 1875ի յօդուածը ու տպեց նոյն լատինատառ բիլլոնին գրչանկարը[56]: Շլումբերժէի 1875ի յօդուածի գրութեան առեն, խնդրոյ առարկայ դրամը կը գտնուէր իշխան Ֆիւրսթենպերկի (Fürstenberg) ժողովածուին մէջ, Գերմանիոյ Տոնաուշինկէն (Donaueschingen) քաղաքը: Նոյն դրամը նկարագրուած է նաեւ Բասմաջեանի գիրքին մէջ ու նկարն ալ տպուած[57]: Բասմաջեան իր գրչանկարը ընդօրինակեց Ժագ Դը Մորգանի Հայ ժողովուրդի պատմութիւնը գիրքէն[58], ուր միայն գրչանկարը տպուած է առանց բացատրութեան: Բասմաջեանի գրչանկարին վրայ կարելի է նշմարել "JM" սկզբնատառերը: Շլումբերժէ, Միպիլեան, Դը Մորգան եւ Բասմաջեան ընծայեցին միայն այս դրամին գրչանկարը մեր ուսումնասիրութեան համար: Դժբախտաբար, Բասմաջեան չվկայակոչեց իր աղբիւրը, սակայն տուաւ բիլլոնին տրամագիծը՝ 19մմ:

Ֆիւրսթենպերկի բիլլոնին մակերեսը բաղդատելէ ետք միւս երկու լատինատառ բիլլոններու նկարներուն հետ, որոնք ունին խորագրութեան նոյն տարբերակը (Պտուկեանի եւ Կեւրէքեանի լատինատառ բիլլոններու համար տե՛ս՝ վարը, ԲԼ1 եւ ԲԼ2), համոզիչ կերպով կարելի է եզրակացնել, թէ Ֆիւրսթենպերկի օրինակին ամէնէն մօտիկ բիլլոնը Պտուկեանինն է: Իր յօդուածին մէջ, ուր Պտուկեան կը նկարագրէ նորայայտ բիլլոնը եւ կը քննարկէ ծանօթ լատինատառ բիլլոնները, վկայակոչելով Շլումբերժէն՝ Ֆիւրսթենպերկի բիլլոնին վերաբերեալ, ծանօթագրութեան մէջ կ՛ուելցնէ. «Այս յօդուածիս մէջ պատկերացեալ արծաթապղինձը կ՛երեւի թէ Շլումբերժէի նկարագրած դրամն է: Այս կտորը ներկայիս հեղինակիս հաւաքածոյին մէջն է»[59]: Նոյն յօդուածին մէջ Պտուկեան կը նշէ թէ ինք գնեց բիլլոնը 1965ին, Մունզէն Ունտ Մեռայլէնի Աճուրդի Ընկերութեան վաճառքէն, Ջուիցերիայէն[60]: Աճուրդի ցուցակին մէջ դրամը ցուցակագրուած է «Ջուիցերիացի Արուեստասէրի Հաւաքածոն, Լատին Արեւելքի Դրամներ» վերնագրին ներքեւ: Աճուրդի ցուցակի էջ 61ին մէջ կան երկու այլ դրամներ, որոնց կցուած է իրենց տոհմագրութիւնը: Ասոնց մէջ կը յիշուի, թէ դրամները նախապէս պատկանած են իշխան Ֆիւրսթենպերկին: Բայց նման տեղեկութիւն մը չէ կցուած այն ազնուատոհմ լատինատառ բիլլոնին համար, զոր Պտուկեան գնեց: Մ՛վ էր արուեստասէր զուիցերիացի հաւաքորդը: Ի՞նչ պատահեցաւ 1875էն մինչեւ 1965: Դժբախտաբար, Պտուկեանի բիլլոնին տոհմագրութիւնը լրիւ չենք գիտեր. ան ընդհատուած է:

Նուարդ կամ Նատիա Գափամաջեան մահացաւ 1978ին: 1983ին, Մ. Բուրիին դասաւորեց անոր հաւաքածոն, ներառեալ՝ հայկական դրամները[61]: 1992ին, Փարիզի մէջ, Է. Բուրժէ[62] Հաստատութիւնը աճուրդով[63] վաճառեց Գափամաջեանի հաւաքածոն: Հայկական դրամներու բաժինին մէջ ցուցակագրուած էր Լեւոն Ա. Թագաւորի ուշագրաւ եւ չատ սիրուն լատինատառ բիլլոն մը: Պտուկեան իր գիրքի քորփուսին մէջ ցուցակագրեց Գափամաջեանի բիլլոնը որպէս Կիլիկեան Հայաստանի Դրամները գիրքի թիւ 9[64]: Բուրժէի աճուրդի ցուցակին նկարներէն (թիւ 887) եւ մանաւանդ Բուրիինի նկարագարդուած տախտակներէն (թիւ 1223), յստակօրէն ընթեռնելի է լատինատառ բիլլոնի խորագրութիւնը որպէս "REX ARMENOR": Բուրիինի նկարները քիչ մը աւելի մթագոյն են քան՝ Բուրժէինը: Սակայն, Բուրիինի նկարներուն վրայի չուքը բացայայտօրէն կը ցուցնէ "ARMENOR" բառը եւ անկասկած "I" տառը չկայ խորագրութեան մէջ: Ու-

բեմն, այս պէտք է դասաւորուի որպէս Պտուկեանի Կիլիկեան Հայաստանի... գիրքի թիւ 10 եւ խորագրութիւնը՝ թիւ 2 տարբերակ։

1905ին Շլումբերժէ հրատարակեց յօդուած մը Revue Numismatique հանդէսին մէջ, ուր քննարկեց Լեւոն Ա. թագաւորին երկու արծաթեայ բիլլոնները[65]։ Շլումբերժէ անգամ մը եւս քննեց Ֆիւրսթենպերկի բիլլոնը (ԳՆ3) բաղդատութեան համար եւ նկարագրեց իր նոր ձեռք բերած լատինատառ բիլլոնը (ԲԼ4)։ Ան լոյս ընծայեց նոր պատրաստուած, բայց քիչ մը աւելի մթագոյն գրչանկարներ բիլլոններու երկու տարբերակներուն համար[66]։ 1929ին Շլումբերժէի հաւաքածոն, ներառեալ Լեւոնի լատինատառ բիլլոնը, նուիրուեցաւ Ֆրանսայի Ազգային Մատենադարանի Դրամագիտութեան Բաժնին։

1936ին Բասմաջեան նկարագրեց դրամ մը՝ իբրեւ երկրորդ տարբերակ լատինատառ բիլլոններու[67]։ Ան չվկայակոչեց իր աղբիւրը, ոչ ալ տպեց գրչանկարը, բայց տուաւ բիլլոնի տրամագիծին չափը՝ 18մմ։ Այս կրնայ ըլլալ Շլումբերժէի լատինատառ բիլլոնը, պահպանուած Ֆրանսայի Ազգային Մատենադարանի Դրամագիտութեան Բաժնին մէջ, ինչպէս նշուեցաւ։ Բասմաջեանի տրամագիծին տուեալը կը համաձայնի Ամանդրիի չափածին հետ՝ 18/19մմ։

Զարմանալի կարեւոր է այն, որ երկու տարբեր գրչութիւններ ունենալէ զատ, յստակ ու ակներեւ տարբերութիւններ կան Լեւոն Թագաւորի հայատառ ու լատինատառ բիլլոններուն միջեւ։ Հայատառ բիլլոնը իր երեսին վրայ ունի թագաւորին գլուխը եւ ստորագրութիւնը. ետին՝ խաչ եւ դրամահատարանին անունը՝ ՍԻՍ քանդակուած է շրջագրութեան մէջ։ Մինչդեռ լատինատառ բիլլոնի երեսին պատկերուած են թագաւորին գլուխն ու տիտղոսը. ետին՝ խաչ եւ թագաւորին ստորագրութիւնը։ Դրամահատարանին անունը երբեք չէ արձանագրուած Լեւոն Թագաւորի լատինատառ բիլլոնին վրայ։

Լատինատառ բիլլոններու քննարկման առթիւ, Պտուկեան իր աշխատութեան մէջ, կը գրէ. «Այս խորագրութեան չորս տարբերակները կան, ներկայացուած վեց օրինակներու կողմէ»[68]։ *Պտուկեանի Կիլիկեան Հայաստանի... գիրքին մէջ լատինատառ բիլլոններու խորագրութեանց տարբերակներն են թիւ 9, 10՝ որպէս առաջին, թիւ 11՝ որպէս երկրորդ, թիւ 12՝ վերջին ու երրորդ տարբերակ[69]։ Իր յօդուածին մէջ, ուր ցուցակագրուած են իրեն ծանօթ լատինատառ բիլլոնները, Պտուկեան գրած է.* «Այս դրամէն հինգ օրինակ ծանօթ են երեք զանազանութիւններով»[70]։ *Ծոգնեցուցիչ եւ սպառիչ հետազօտութիւն կատարուեցաւ այս ուղղութեամբ եւ դրամագիտական այլ նիւթ չմնաց հետազօտելու համար։ Ցարդ՝ մենք միայն երեք խորագրութեաց տարբերակները գտած ենք, որոնք քանդակուած են հրապարակուած վեց բիլլոններուն վրայ ու դասաւորուած սոյն ուսումնասիրութեան մէջ։*

Հիմնուելով մեր փորձառութեան եւ մեզի ծանօթ դրամագէտ բարեկամներէ եւ հաւաքորդներէ քաղած տեղեկութեանց վրայ, մենք կիսադրամներու վերաբերեալ մեր յօդուածին մէջ կ՚եզրակացնենք, թէ լատինատառ բիլլոններու հաւանական առաւելագոյն քանակը տասն է[71]։

ՑՈՒՑԱԿ ԼԱՏԻՆԱՏԱՌ ԲԻԼԼՈՆՆԵՐՈՒ

Տարբերակ (1)

Երես. *Լեւոն Թագաւորի հանդիպահայեաց գլուխը։ Շրջագրութիւնը՝* +REX ARMENIOR

Կռնակ. *Խաչ առանց կէտի։ Շրջագրութիւնը՝* +LEO DEI GRATIA

*Գ2** *Շլումբերժէ, Revue Archeologique*, Vol. XXX (1875), էջ 345-349. *Նաեւ՝ Numismatique de l'Orient Latin* (Paris, 1878), էջ 40, *տախտակ* III, *թիւ* 10

*Գ3** *Շլումբերժէ, Revue Numismatique*, IV *շրջան*, Vol. IX (1905), էջ 355-356

*Բ1** *Բի* 1.06գ-19*մմ, նախկին Պտուկեանի հաւաքածոյ*[72]*, կաղապար* 9 10

*Բ2** *Բի* 0.7գ-18*մմ, նախկին Կեւրէքեանի հաւաքածոյ, կաղապար* 11 12

Տարբերակ (2)

Երես. *Լեւոն թագաւորի հանդիպահայեաց գլուխը։ Շրջագրութիւնը՝* +REX ARMENOR

Կռնակ. *Խաչ առանց կէտի։ Շրջագրութիւնը՝* +LEO DEI GRATIA

*Բ3** *Բի* 0.87գ-17*մմ, նախկին Գափամաջեանի հաւաքածոյ, կաղապար՝* 13 14

*Բ4** *Բի Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան հաւաքածոյ*[73]*, ըստ Կիւրիկեան Հայաստանի Դրամները գիրքի կաղապար՝* 15 16

*Բ5** *Բի Մարտիկեան Թանգարանի*[74] *հաւաքածոյ, (ներկայիս՝ Կիլիկիա Թանգարան, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ) (միայն խորագրութեան "LEO DEI..." մասը ընթեռնելի), ըստ Կիւրիկեան Հայաստանի Դրամները գիրքի*[75] *կաղապար՝* 17 18

Տարբերակ (3)

Երես. *Լեւոն թագաւորի հանդիպահայեաց գլուխը։ Շրջագրութիւնը՝* +ARMENOR

Կռնակ. *Խաչ առանց կէտի։ Շրջագրութիւնը՝* +LEO REX

*Գ4** *Շլումբերժէ, Revue Numismatique*, IV *շրջան*, Vol. IX (1905), էջ 355-356

*Բ6** *Բի* 1.09գ-19*մմ, Ֆրանսայի Ազգային Մատենադարանի հաւաքածոյ*[76]*, գոյքամատեանի Շլումբերժէի թիւ* 1391 *կաղապար՝* 19 20

ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

Այս բաժինին համար միայն մեր հաւաքածոյին մէջ եղող երկու կտոր դրամները ուղղակիօրէն քննել կարելի եղաւ։ Բոլոր միւս քառորդ երկդրամներու եւ հայատառ ու լատինատառ բիլլոններու օրինակները ուսումնասիրեցինք իրենց լուսանկարներէն։ Դժբախտաբար, սակայն, այդ լուսանկարներէն ոմանք վատորակ էին։ Այս պատճառը եւս նկատի առնուեցաւ նախապէս հրատարակուած ծանօթ գրչանկարները կցեալ տախտակներուն ներառելու համար։

Քառորդ երկդրամներ. Հիմնուած լուսանկարներու եւ հրատարակուած դրամագիտական գրականութեան վրայ, եւ ըստ մեզի հասած տեղեկութեանց, ծանօթ քառորդ երկդրամներու քանակը հինգ է։ Մենք լուսանկարը կամ գրչանկարը չունինք Զուբովի քառորդ երկդրամին, հակառակ անոր որ Տիկ. Կարապետեան ալիւմինիում նմանահանութիւն ունի Զուբովի հաւաքածոյին դրամներուն համար։ Սակայն, դժբախտաբար, Կարապետեանի Զուբովի քա-

ուրդ երկդրամին ալիւմինիումէ թուղթէ նմանահանութիւնը կորսուած է։ Մանօթ չորս երկդրամները կոխուած են երկու երեսի եւ երկու կռնակի տարբեր կաղապարներով։

Բիլլոններ հայերէն արձանագրութեամբ. Հայատառ բիլլոններէն ծանօթ են միայն երեք օրինակ։ Հիմնուած մեզի հասած նկարներուն ու տեղեկութեանց վրայ, բոլորն ալ կոխուած են երեսի նոյն կաղապարով եւ կռնակի երեք տարբեր կաղապարներով։ Երրորդ հայատառ բիլլոնի երեսն ու կռնակը կրկնադրոշմուած է նոյն դրամի հակառակ կողմի կաղապարով։

Բիլլոններ լատիներէն արձանագրութեամբ. Ցարդ հրապարակուած լատինատառ բիլլոններու քանակը վեց է։ Սակայն, առաջին տարբերակին մէջ ունինք "Rex Armenior/Leo Dei Gratia" (2 օրինակ), երկրորդ տարբերակին մէջ՝ "Rex Armenor/Leo Dei Gratia" (3 օրինակ), երրորդ ու վերջինին մէջ՝ "Armenor/Leo Rex" (1 օրինակ)։ Իւրաքանչիւր լատինատառ բիլլոնը կոխուած է տարբեր երեսի ու կռնակի կաղապարով, այսինքն վեց կտոր դրամի համար ունինք վեց երեսի կաղապար եւ վեց կռնակի կաղապար։

Ձենք գիտեր թէ քանի քառորդ երկդրամ, հայատառ բիլլոն, եւ լատինատառ բիլլոն կոխուած են 20 կաղապարներով (1-4՝ քառորդ երկդրամ, 5-8՝ հայատառ բիլլոն, 9-20՝ լատինատառ բիլլոն)։ Միջնադարեան ձեռագիր մատեանները մեզի որեւէ տեղեկութիւն չեն հայթայթած Սիսի, Տարսոնի, Այասի հայ դրամահատարաններու գործունէութեանց մասին։ Դրամագէտներ փորձեր կատարած ու հաշուարկած են, թէ քանի կտոր դրամ կրնայ կոխուիլ հին ու միջնադարեան կաղապարներով եւ հասած են որոշ եզրակացութեանց[77]։

Եթէ որդեգրենք նուազագոյն եւ ամէնէն պահպանողական կարծիքը[78], որուն վրայ դրամագէտները համաձայնած են՝ 2.000 կտոր դրամ իւրաքանչիւր երեսի կաղապարին համար (ենթադրելով որ դրամ կոխելու ընթացքին կաղապարը չէ կոտրած), կրնանք ենթադրել, որ նուազագոյնը անոնք կոխած են 4.000 կտոր քառորդ երկդրամներ, 2.000 կտոր հայատառ բիլլոններ եւ 12.000 կտոր լատինատառ բիլլոններ։

Եթէ նոյնիսկ այս ենթադրութիւնները մօտաւոր կերպով ճիշդ են, քառորդ երկդրամներէն փրկուածները 0.1 առհարիւր են (4/4.000 - Ռուսական Թանգարանի մէջ եղող մէկ կտորը հաշուարկումէն դուրս ձգուած), հայատառ բիլլոններէն՝ 0.1 առհարիւր (2/2000 - կրկնադրոշմուած կտորը հաշուարկումէն դուրս ձգուած), լատինատառ բիլլոններէն՝ 0.05 առհարիւր (6/12.000)։

Հաշուարկուած այս թիւերը գաղափար մը կու տան՝ թէ՛ Հայկական կիլիկիոյ այս փրկուած դրամներուն շատ փոքր քանակին եւ թէ՛ հայութեան կորուստի ահաւորութեան մասին։

ՁԱՓԱԳՐՈՒԹԻՒՆ

Հոս քննարկուած բոլոր դրամներուն համար (տե՛ս՝ Աղիւսակ 1) չափագրական տուեալները մատչելի չեն եւ ծանօթ դրամներու քանակը չափազանց քիչ է, չափագիտական ուսումնասիրութեան համար։

Չորս քառորդ երկդրամները ունին 1.34 գրամ միջին քաշ եւ 17.65 մմ միջին տրամագիծ։



Ք1



Ք2



ԳՆ1 Ք3 Ք4


Ֆառորդ երկդրամներ



ԲՀ1 ԲՀ2 ԲՀ3

Բիլլոններ արձանագրուած հայերէնով

Լեւոն Ա. թագաւորին ֆառորդ երկդրամներն ու բիլլոնները



Բիլլոններ արձանագրված լատինատիպով

Լեւոն Ա. թագաւորին ֆառորդ երկդրամներն ու բիլլոնները

Երեք հայատառ բիլլոնները ունին 0.70 գրամ միջին քաշ։ Եթէ տպուած նկարներէն տրամագիծերը չափել ընդունելի է[79], կրնանք հաշուել, թէ երեք օրինակներուն համար միջին տրամագիծը 16.67մմ է։

Աղիւսակ 1. Զափագիտական Տուեալներ

Քառորդ երկդրամներ			Հայատառ Բիլլոններ			Լատինատառ Բիլլոններ		
Դրամ	Քաշ	Տրմգծ.	Դրամ	Քաշ	Տրմգծ.	Դրամ	Քաշ	Տրմգծ.
Ք1	1.39գ.	17.6մմ	ԲՀ1	0.70գ.	17մմ	ԲԼ1	1.06գ.	19մմ
Ք2	1.37գ.	19մմ	ԲՀ2	0.71գ.	16մմ	ԲԼ2	0.74գ.	18մմ
Ք3	1.27գ.	17մմ	ԲՀ3	0.69գ.	17մմ	ԲԼ3	0.87գ.	17մմ
Ք4	---	----				ԲԼ4	--	--
Ք5	1.33գ.	17մմ				ԲԼ5	--	--
						ԲԼ6	1.09գ.	19մմ
Միջին	1.34գ.	17.65մմ	Միջին	0.70գ.	16.67մմ	Միջին	0.94գ.	18.25մմ

Մեզի ծանօթ են վեց լատինատառ բիլլոններ, բայց ասոնց միայն չորս օրինակներուն քաշը մատչելի է՝ 0,94 գրամ միջին քաշ։ Դրամներէն ու նկարներէն չափուած չորս տրամագիծերու միջինն է 18.25մմ։

Առանցքային ուղղութիւնները մատչելի չեն դրամներու մեծամասնութեան համար։ Անոնք որ մատչելի են անկանոն կ՝երեւին. իւրաքանչիւրը ունի տարբեր ուղղութիւն եւ չեն հետեւիր կարգաւոր դրութեան մը։

ՏՈՀՄԱԳՐՈՒԹԻՒՆ

Ժամանակակից աճուրդի ցուցակներու վկայութեամբ, եթէ անձի մը հաւաքածոյին դրամին անցեալի պատմութիւնը տեղեկագրուած է, ապա այդ կտորը նկատուած է որպէս տոհմագրութիւն ունեցող դրամ։ Իսկ եթէ այդ դրամը պատկանած է նշանաւոր անձի մը հաւաքածոյին, ապա այդ դրամը նկատուած է ազնուատոհմ դրամ։ Ներկայիս սովորութիւն դարձած է որ աճուրդի ընկերութիւններէն չատեր ծախուող դրամին կցեն նախորդ վաճառքի պահարանները եւ այդպէս ալ ուղարկեն նոր յաճախորդին։

Ստորեւ ներկայացուող տոհմագրութիւնը պատրաստուած է հոս ցուցակագրուող դրամներու անցեալը հետազօտելով։ Անոնք կարելի մանրամասնութեամբ կ՝երեւին Աղիւսակ 2ա, 2բ, 2գի մէջ։

Երեք կտոր ազնուատոհմ դրամներ կան, որոնց տեղը ներկայիս անյայտ կը մնայ։ Անոնցմէ առաջինը հայատառ բիլլոնն է Սլոքումի (ԲՀ2), իսկ միւսները՝ լատինատառ բիլլոններն են Կեւրէքեանի (ԲԼ2) եւ Գափամաջեանի (ԲԼ3)։ Եթէ մեր ընթերցողները յաւելեալ տեղեկութիւն ունին այս ուղղութեամբ, կը խնդրուի որ մեզի գրեն։

Ընդհանրապէս հաւաքորդներ կը հետաքրքրուին իրենց դրամներու անցեալի պատմութեամբ։ Եթէ այս տեղեկութիւնը մատչելի է, կը տեղեկագրուի ու կը պահուի հաւաքածոյի դրամին հետ։ Օրինակի համար, Պտուկեան ժամանակ տրամադրեց եւ իր գնած քառորդ երկդրամին եւ զոյգ հայատառ[80] եւ լատինա-

տառ[81] բիլլոններուն[82] տոհմագրութիւնը տեղեկագրեց իր հրատարակութեանց մէջ։ 1995ին, «Արարատեան Ժողովածոյի աճուրդին մէջ կար Լեւոն Ա. թագաւորին ոսկեայ կէս դահեկանը[83]։ Անիկա յայտնաբերուած էր դրամագիւտի մը մէջ, ուր կային բազմաթիւ այլ ոսկեդրամներ։ Աճուրդին ւսարտէն առաջ, Պեռնհարտ Շուլթ, Մունզէն Ունդ Մետայլէն աճուրդի ընկերութեան նախագահը, որ գնած էր վերոյիշեալ դրամագիւտը եւ որուն մէջ էր նաեւ հայկական ոսկեայ կէս դահեկանը, նամակ մը գրեց Classical Numismatic Groupի նախագահ[84] Վիքթոր Ինկլենտին (Լենքեսթըր, Փենսիլվանիա), տուաւ անոր անհրաժեշտ տեղեկութիւն դրամագիւտի մասին, ըրաւ թելադրութիւններ, ապա աւելցուց. «այս տեղեկութիւնը պէտք է կցուի դրամին, որովհետեւ շատ կարեւոր է։ Ուրեմն ես համաձայն եմ, որ դուն այս տեղեկութիւնը տաս դրամը գնողին, եթէ գնող մէկը ըլլայ, ինչպէս որ կը յուսամ»։

Աղիւսակ 2ա. Տոհմագրութիւն Քառորդ Երկդրամներու

Դրամ	Պատմութիւն
Ք1	1947՝ Հայաստանի Պատմութեան Թանգարան-1940ականներ՝ Արմենակ Փոլադեան-1936՝ Դաֆնիքի դրամագիւտ
Ք2	1995՝ Ե. Թ. Ներսէսեան-1995 Դեկտեմբեր 5-6՝ Classical Numismatic Group "Araratian Collection" Auction I-1980ականներ՝ Ճ. Կեւրէքեան
Ք3	2000՝ Armenian Library and Museum of America-1930ականներ՝ Զ. Մ. Պտուկեան-1930ականներ՝ Յակոբ Քելէկեան-1870ականներ՝ Ալիշան ընտանիք
Ք4	British Museum
Ք5	1955?՝ Մոսկուայի Պատմութեան Թանգարան-1903?՝ Պ. Վ. Զուբով

Աղիւսակ 2բ. Տոհմագրութիւն Հայատառ Բիլլոններու

Դրամ	Պատմութիւն
Բ21	2000՝ Armenian Library and Museum of America-1996՝ Զ. Մ. Պտուկեան-1966՝ Միածին Հաւանճեան-1966՝ Խաչակիրներու դրամներու գանձ գտնուած Անտիոքի մօտերը
Բ22	1997 Մարտ 6-7՝ Sotheby's Auction-1978 John Slocum
Բ23	1978՝ Թորգոմ Տեմիրճեան-2008՝ Ե. Թ. Ներսէսեան-2008՝ վաճառք յատուկ անձէ

Երբ կ'աշխատէինք մեր Արտաշէսեան Հարստութեան Դրամահատութիւնը. Արծաթեայ Դրամներ գիրքին վրայ[85]*, մեզի համար մեծ մարտահրաւէր մըն էր տեղեկագրել դրամներուն անցեալի պատմութիւնը՝ տոհմագրութիւնը, կարելիութեան սահմանին մէջ։*

Ցուսալի է որ վերոյիշեալ երեք օրինակները համոզեցին դրամներուն տոհմագրութիւնը տեղեկագրելու եւ պահելու անհրաժեշտութեան[86]։

Դրամ	Պատմութիւն
ԲԼ1	2000՝ Armenian Library and Museum of America-1965՝ Զ. Մ. Պաուկեան-1965 Նոյեմբեր 5-6՝ Munzen und Medaillen Auction 30-1875 Prince Furstenberg
ԲԼ2	1995 Դեկտեմբեր 5-6՝ Classical Numismatic Group "Araratian Collection" Auction I-1980ականներ, Ճ. Կեւրէքեան
ԲԼ3	Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւն
ԲԼ4	1992 Հոկտեմբեր 27-29՝ Bourgey Auction-1970ականներ՝ Նուարդ Գափամաջեան
ԲԼ5	Մարտիկեան Թանգարան (Կիլիկիա Թանգարան, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ)
ԲԼ6	1929՝ Bibliotheque Nationale de France-1905 Gustave Schlumberger

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Զարեհ Պ. Պաուկեան, *Կիլիկեան Հայաստանի Դրամները*, Վիեննա, 1963, էջ 130-226, թիւ 5-6, 9-770. Նաեւ՝ Y. T. Nercessian, *Armenian Coins and their Values*, Armenian Numismatic Society, Special Publication No. 8, Լոս Անճելըս, 1995, էջ 109-122, թիւ 253-314։

[2] Nercessian, *Armenian Coins*, էջ 214։

[3] Paul Z., Bedoukian, "The Double Tram Series of Levon I of Cilician Armenia," *Numismatic Chronicle*, VII period, Vol. XVI (1976), էջ 98-108, տախտակ 18-25։ Վերահրատարակութիւն՝ *Selected Numismatic Studies [I]*, Լոս Անճելըս, 1981, էջ 279-97։

[4] Լեւոն Ա.ի օծման ու թագադրութեան վերաբերեալ պատմական դէպքերու ուսումնասիրութեան մը համար տե՛ս՝ Paul Z. Bedoukian, "A Large Hoard of Coronation Trams of Levon I," *Հանդէս Ամսօրեայ*, Հտր. Ղ/XC (1976), թիւ 1-12, էջ 409-440։ Վերահրատարակութիւն՝ *Selected Numismatic Studies [I]*, էջ 302-317։

[5] Paul Z. Bedoukian, "Cilician Armenia and Crusader Antioch," *Հանդէս Ամսօրեայ*, Հտր. CI (1987), էջ 815-832։ Վերահրատակութիւն՝ *Selected Numismatic Studies II*, Լոս Անճելըս, 2003, էջ 170-200։

[6] Paul Z. Bedoukian, *Coinage of Cilician Armenia*, Նիւ Եորք, 1962, էջ 137, թիւ 68։ Գիրքին բարեփոխուած հրատարակութիւնը կատարուեցաւ 1979ին, Դենըըրի, Քըննեք-թիքըթ։ Գիրքը հրատարակուեցաւ նաեւ հայերէն՝ Զարեհ Պ. Պաուկեան, *Կիլիկեան Հայաստանի Դրամները*, Վիեննա, 1963։

[7] Նոյն։

[8] Nercessian, *Armenian Coins*, էջ 114։

[9] Նոյն, էջ 114, տախտակ 276։

[10] Classical Numismatic Group, Inc., Auction 36: A Public & Mail Bid Sale (Լինքոլնթըր, Փենսիլվանիա եւ Լոնտոն, Անգլիա, 5-6 Դեկտեմբեր 1995, վաճառուած՝ Նիւ Եորք քաղաքի մէջ), "The 'Araratian Collection' of Armenian Coins" վերնագրի տակ, էջ 51-80, թիւ 529-918. քառորդ երկդրամի համար տե՛ս՝ էջ 69, թիւ 739, ծախուած $2.860։

[11] Մ.-Լ. Կարապետեան, «Պ. Վ. Զուբովի Ռուբինեան Դրամներու ժողովածուն, (Մասն I, Լեւոն Ա.)», *Armenian Numismatic Journal*, հրկան I, Vol. XXVIII (2002), No. 3, էջ 67-84։

[12] Նոյն, էջ 73, թիւ 48։ Դժբախտաբար, Տիկ. Կարապետեանի մօտ եղած քառորդ երկդրամի ալիմինիումէ նմանահանութիւնը կորսուած է։

[13] Y. T. Nercessian, *Metrology of Cilician Armenian Coinage*, Լոս Անճելըս, 2007, էջ 11։

[14] Paul Z. Bedoukian, *Medieval Armenian Coins*, Փարիզ, 1971, էջ 69, տախտակ 12, յատկապէս էջ 17, տախտակ II, թիւ 13, արտատպուած՝ *Revue des Etudes Arméniennes*, նոր շրջան, Vol. VIII (1971), էջ 379. Նաեւ՝ վերահրատարակութիւն՝ *Selected Numismatic Studies [I]*, էջ 191-268, յատկապէս էջ 206, 260, թիւ 13։

[15] Bedoukian, *Coinage of Cilician Armenia* (1962, 1963, 1979), էջ 137, թիւ 68։

[16] Պատուկեան հաւաքածոյ։

[17] Historical Museum, Erivan Armenia:

[18] British Museum:

[19] Պերճ Մ. Կարապետեան, «Դափնիէքի Դրամագիւտը» Բազմավէպ, Հատ. ՃԺ-/LVI, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1948, թիւ 11-12, էջ 260-263. Նաեւ՝ նոյնի «Տաֆնէքի Դրամագիւտը», Հասկ Հայագիտական Տարեգիրք, Բ., Տարի, 1949-1950, էջ 16-21։

[20] Մ.-Լ. Կարապետեան, «Հայաստանի Պատմութեան Թանգարանի Նուիրատուները», *Armenian Numismatic Journal*, շրջան II, Vol. 5(35), Յունիս 2009, էջ 47-53։

[21] Խաչատուր Մուշեղեան, «Հայկական Դրամների Մի Նոր Գանձ», Պատմաբանասիրական Հանդէս, թիւ 1(4), 1959, էջ 293-294։

[22] K. Mousheghian, "Haykakan Tramneri Mi Nor Kants (A New Hoard of Armenian Coins)," American Numismatic Society *Numismatic Literature*, No. 53, October 1960, էջ 302։

[23] Paul Z. Bedoukian, "The Double Tram Series of Levon I of Cilician Armenia," *Numismatic Chronicle*, շրջան VII, Vol. XVI (1976), էջ 98-108, տախտակ 18-25. վերահրատարակութիւն՝ *Selected Numismatic Studies [I]*, էջ 279-297, մանաւանդ էջ 294։

[24] Հայր Կղեմէս Սիպիլեան, Դասաւորութիւն Ռուբինեան Դրամոց, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1892, էջ 78, նկար 43։

[25] Հայր Սիպիլեան կ՚ակնարկէ դրամագէտ Սերովբէ Ալիշանին։

[26] Bedoukian, *Coinage* (1962, 1963, 1979), էջ 137, ծանօթ. 1։

[27] Զարեհ Պատուկեան, «Ծիսուն Տարի Հայ Դրամագիտութիւն (Ինքնակենսագրութիւն)», Բազմավէպ, Հատ. ՃՄԵ-/CLV, թիւ 1-4, 1997, էջ 132-152. վերահրատարակութիւն՝ *Selected Numismatic Studies II*, էջ 18-38, Քերոբ Քելէկեանի համար տե՛ս՝ Բազմավէպ, նոյն, էջ 137 եւ *Selected Numismatic Studies II*, էջ 23։

[28] Armenian Library and Museum of America, "Bedoukian Donates His Coin Collection to Armenian Library and Museum of America," *Armenian Numismatic Journal*, շրջան I, Vol. XXVI, թիւ 2, Յունիս 2000, էջ 22-23։

[29] Կ. Յ. Բասմաջեան, Հայկական Ընդհանուր Դրամագիտութիւն եւ Հայաստանի Վերաբերեալ Դրամներ, Վիեննա, Տպ. Ս. Ղազարու, 1936, էջ 146-147։

[30] Paul Z. Bedoukian, "Half Trams of Oshin and Levon IV of Cilician Armenia," *Revue des Etudes Arméniennes*, նոր շրջան, Vol. XVIII, 1984, էջ 471-474. վերահրատարակութիւն՝ *Selected Numismatic Studies II*, էջ 165-169։

[31] Ե. Թ. Ներսէսեան, «Կիլիկեան Հայաստանի Թագաւորներուն Կիսադրամները», *Armenian Numismatic Journal*, շրջան I, Vol. XXIX, թիւ 2, Յունիս 2003, էջ 35-52. վերահրատարակութիւն՝ *Armenian Numismatic Studies II*, Լոս Անճելըս, 2009, էջ 417-446, տախտակ 49-52։

[32] Bedoukian, *Coinage of Cilician Armenia* (1962, 1963), էջ 131, տախտակ IV, թիւ 68։

[33] Կարապետեան, թիւ 48։

[34] Bedoukian, *Coinage of Cilician Armenia* (1979), էջ 131, թիւ 12a։

[35] *Հայկական Կիլիկիոյ եւ խաչակիր Անտիոքի համար տե՛ս՝* Bedoukian, "Cilician Armenia and Crusader Antioch," էջ 815-832. *Նաեւ՝* *Selected Numismatic Studies II*, էջ 170-200։

[36] *Զարեհ Պտուկեան, «Լեւոն Ա. Թագաւորին եզակի Մէկ Դրամը եւ Անոր Պատմական Նշանակութիւնը», Հանդէս Ամսօրեայ, Հտր. ՁԱ/LXXXI, Ապրիլ-Յունիս 1967, սիւնակ 171-184. վերահրատարակութիւն՝* *Selected Numismatic Studies [I]*, էջ 389-395, *յատկապէս՝ Հանդէս Ամսօրեայ, սիւնակ 171,* *Selected Numismatic Studies [I]*, էջ 389։

[37] *Պտուկեան, «Քիսուն Տարի», Բազմավէպ, էջ 147. Նաեւ՝* *Selected Numismatic*, էջ 33։

[38] *Նոյն*։

[39] Paul Z. Bedoukian, "A Unique Billon of Levon I of Cilician Armenia and Its Historical Significance," *Numismatic Chronicle*, VII շրջան, Vol. VII, 1967, էջ 189-197, *տախտակ* XIV. *Նաեւ՝ վերահրատարակութիւն՝* *Selected Numismatic Studies [I]*, էջ 108-112։

[40] *Պտուկեան, «Լեւոն Ա. Թագաւորին», սիւնակ 171-184. Նաեւ՝ վերահրատարակութիւն՝* *Selected Numismatic Studies [I]*, էջ 389-395։

[41] Nercessian, *Armenian Coin Auctions*, *Լոս Անճելըս*, 2006, էջ 66-69։

[42] Sotheby's The John J. Slocum Collection of Coins of the Crusades, *Լոնտոն*, 6-7 *Մարտ* 1997, էջ 59-66, *թիւ* 471-555, *եւ տախտակներ։ Հայատառ բիլլոնին համար տե՛ս՝* էջ 61, *թիւ* 501։ *Ծախուած* £1.430/- (£1.00=$1,61)։

[43] Nercessian, *Metrology*, էջ 6։

[44] *Ցատուկ վաճառք. ծախուած* $3.500/-։

[45] *Ներսէսեան, «Կիլիկեան Հայաստանի Թագաւորներուն կիսադրամները»*։

[46] Bedoukian, "Medieval Armenian Coins." *Նաեւ՝* *Selected Numismatic Studies [I]*, *թիւ* 32. *Նոյնի՝* *Coinage of Cilician Armenia* (1979), էջ 131, *թիւ* 12a. *Նոյնի՝* "Cilician Armenia and Crusader Antioch," էջ 830, *Selected Numismatic Studies II*, *տախտակ* 19։

[47] Bedoukian, *Coinage of Cilician Armenia* (1962, 1963), էջ 131, *թիւ* 9-12, *տախտակ* I։

[48] Bedoukian, *Coinage of Cilician Armenia* (1979), էջ 131, *թիւ* 9-12, *տախտակ* I։

[49] Nercessian, *Armenian Coin Auctions*, էջ 115, *թիւ* 280, 281։

[50] Nercessian, *Metrology*, էջ 6։

[51] *Նշանաւոր դրամահաւաք, որուն ժողովածուն վաճառուեցաւ Նիւ Եորքի մէջ, չորս կամ հինգ տարբեր աճուրդներով*։

[52] Nercessian, *Armenian Coin Auctions*, էջ 52-65։

[53] Classical Numismatic Group, Inc., Auction 36: A Public & Mail Bid Sale, էջ 767, *ծախուած* $1.430/-։

[54] Nercessian, *Armenian Coin Auctions*, էջ 115, *տախտակ* 21, *թիւ* 281։

[55] Gustave Schlumberger, "Monnaies des Princes Chretiéns d'Orient, a l'Époque des Croisades," *Revue Archéologique*, Vol. XXX, 1875, էջ 345-349. *Նաեւ՝* *Numismatique de l'Orient Latin*, *Փարիզ*, 1878. *Նաեւ՝ վերահրատարակութիւն կրաց*, 1954, էջ 40, *տախտակ* III, *թիւ* 10։

[56] *Սիպիլեան*, էջ 18-21, *նկար* 8։

[57] *Բասմաջեան*, էջ 148, *նկար* 85։

[58] *Ժագ Դը Մորգան, Հայ ժողովուրդի Պատմութիւնը (հայերէն թարգմանութիւն, Պոստոն*, 1947), էջ 254։

[59] *Պտուկեան, «Լեւոն Ա. Թագաւորին եզակի Մէկ Դրամը», սիւնակ 178-184. Նաեւ՝ վերահրատարակութիւն՝* *Selected Numismatic Studies [I]*, էջ 392, *ծանօթ* 18։

[60] Munzen und Medaillen A. G. Basel, Auktion 30, *Պազէլ-Զուիցերիա*, 5-6 *Նոյեմբեր* 1965, էջ 61, *տախտակ* 49, *թիւ* 789, *ծախուած* S.F.1.200 (S.F. 1.00 = 0,25$)։

[61] S. Boutin, *Collection N. K.: Monnaies des Empires de Byzance, ...Monnaies de l'Arménie Artaxiate et de l'Arménie Cilicienne, Մասսաչուսէթս-Հոլանտա*, 1983, էջ 165, տախտակ LXIV, թիւ 1223։

[62] E. Bourgey, *Numismatique Collection N. K.; Monnaies Byzantines, Barbares, Orient Latin, Arméniennes, Փարիզ*, 27-29 Հոկտեմբեր 1992, էջ 92, թիւ 887, *ծախուած՝* FF 6.800 (FF 5.00=$1.00)։

[63] Nercessian, *Armenian Coin Auctions*, էջ 21-25։

[64] Bedoukian, *Coinage of Cilician Armenia*, 1979, էջ 131, թիւ 9։

[65] Gustave Schlumberger, "Mélanges de Numismatique et de Sigillographie Médiévales; I Monnaies d'Argent Inédites a Légende Latin du Roi Leon (ou Livon) II d'Arménie," *Revue Numismatique*, IV չրջան, Vol. IX, 1905, էջ 355-358, պատկերազարդուած։

[66] *Գրչանկարներու քննարկութիւնը այս յօդուածի նպատակէն դուրս է։ Սակայն, քանի որ չորս գրչանկարներ լոյս ընծայուեցան նկարներու տախտակներուն մէջ, պէտք է յիշուի այս մասին։ Գրչանկարները ԳՆ2 եւ ԳՆ3 պատրաստուած են Շլումբերժէի կողմէ, կամ ալ ինք պատուիրած է արուեստագէտի մը, որ զանոնք պատրաստէ։ Գլխաւոր տարբերութիւն մը կայ, որ ուշադրութեան առարկայ պէտք է դառնայ։ Լեւոն Թագաւորի թագին ձախ կախազարդը՝ ԳՆ2ի վրայ ունի կոր գիծ մը։ ԳՆ3ի վրայ՝ երեք հատ կէտեր։ Իսկական դրամի լուսանկարին վրայ, միայն երկու կէտեր տեսանելի են, երրորդը կամ ճզմուած, կամ ալ ջնջուած է։ Այս ցոյց կու տայ, որ գրչանկար մը միշտ եւ ամբողջովին չի նմանիր իսկական դրամին. ան գծագրուած նկար մըն է, կախեալ՝ արուեստագէտ գծագրիչի ըմբռնումէն, թէ ի՛նչ պատկերատիպ ունի խնդրոյ առարկայ դրամը։ Հետազօտողը պարտի շատ ուշադիր բաղդատել գրչանկարը եւ դրամը։ Այս պարագային մեծ տարբերութիւն կայ գրչանկարին եւ լուսանկարին միջեւ։*

[67] *Բասմաջեան*, էջ 148։

[68] Bedoukian, *Medieval Armenian Coins*. *Նաեւ՝ Selected Numismatic Studies [I]*, էջ 211, թիւ 33։

[69] Bedoukian, *Coinage of Cilician Armenia* (1962, 1963, 1979), էջ 131, թիւ 9-12։

[70] *Պատուկեան, «Լեւոն Ա. Թագաւորին եզակի», սիւնակ* 178. *Նաեւ՝ Selected Numismatic Studies [I]*, էջ 392։

[71] *Ներսէսեան, «Կիլիկեան Հայաստանի Թագաւորներուն կիսադրամները»։*

[72] Bedoukian, *Medieval Armenian Coins*. *Նաեւ՝ Selected Numismatic Studies [I]*, էջ 261, թիւ 33. *Նոյնի՝ Coinage of Cilician Armenia* (1979), էջ 131, *տախտակ* I, թիւ 9. *Նոյնի՝* "Cilician Armenia and Crusader Antioch," էջ 830. *Նաեւ՝ Selected Numismatic Studies II, տախտակ* 19։

[73] Bedoukian, *Coinage of Cilician Armenia* (1962, 1963), էջ 131, *տախտակ* I, թիւ 10։

[74] *Նոյն*, էջ 131, *տախտակ* I, թիւ 11։

[75] *Պատուկեանի Coinage of Cilician Armenia* (1962, 1963) *գիրքերու տախտակներուն մէջի թիւ* 11 *եւ* 68 *նկարներուն որակը գոհացուցիչ չէ կաղապարներու ուսումնասիրութեան համար։*

[76] Raymond H. Kévorkian, *Arménie entre Orient et Occident. Trois Mille Ans de Civilisation, Փարիզ*, Bibliothèque Nationale de France, 1996, էջ 244, *սիւնակ* 5, *թիւ* 191[5]. *Գէորգեան կու տայ* 12 *մմ տրամագիծ Շլումբերժէի բիլլոնին համար, բայց դրամի տրամագիծին այս չափը ճիշդ չէ։ Ամանդրի ճշդօրէն չափեց տրամագիծը՝* 18/19*մմ։ Գէորգեան նաեւ չընծայեց այս լատինատառ բիլլոնին նկարը. սակայն, հրատարակեց գոյքամատեանի արձանագրուած թիւը՝ Շլումբերժէ* 1391։

[77] *Իւրաքանչիւր կաղապարի համար նախահաշիւ կատարելը վիճելի խնդիր է։ Որոշ դրամագէտներ առաջարկած են զանազան պատկառելի թիւեր՝* 2.000*էն մինչեւ* 78.000

կտոր դրամ իւրաքանչիւր երեսի կաղապարին համար (F. de Callatay, "Calculating Ancient Coin Production: Seeking a Balance," *Numismatic Chronicle*, Vol. 155 (1995), էջ 289-311. նաեւ՝ W. W. Esty & G. F. Carter, "The Distribution of the Numbers of Coins Struck by Dies," *American Journal of Numismatics*, Vol. 3-4, 1992, էջ 165-186)։

[78] Նոյն։

[79] Արդիական աճուրդի ցուցակներու մեծամասնութեան նկարներուն պատրաստութեան համար կը գործածուին թուային նկարչական մեքենաներ (digital camera) եւ կը տպուին նկարները 1/1 համեմատութեամբ։ Անկասկած, տպուած նկարներուն տրամագիծերը չափել գիտական մօտեցում մը չէ, քանի որ գիրքերու կամ ցուցակներու տպագրութեան ընթացքին նկարներուն չափը կրնայ փոխուած ըլլալ։ Ալլպէս, տրամագիծերու չափերուն համար այլընտրանքը պիտի ըլլայ ունենալ ոչինչ (կամ միայն մէկ հայատառ բիլլոն այս խումբին մէջ) այս չափագանց հազուագիւտ դրամներուն համար։

[80] Պաուկեան, «Լեւոն Ա. Թագաւորին եզակի» սիւնակ 175. նաեւ՝ *Selected Numismatic Studies [I]*, էջ 389։

[81] Munzen und Medaillen, Auktion 30, էջ 61, տախտակ 49, թիւ 789։

[82] Bedoukian, *Coinage of Cilician Armenia* (1962, 1963, 1979), էջ 137, ծանօթ. 1։

[83] Nercessian, *Armenian Coin Auctions*, էջ 109, տախտակ 18, թիւ 255. նաեւ՝ Classical Numismatic Group, Inc., Auction 36: A Public & Mail Bid Sale, էջ 67, թիւ 714։

[84] Եղիա Ներսէսեան, «Յաւելեալ Փաստարկներ Կիլիկիոյ Հայոց Ոսկեդրամներու Վաւերականութեան Շուրջ», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. Իմ., 2001, էջ 113-124. Նոյնի՝ վերահրատարակութիւն՝ *Armenian Numismatic Studies II*, Լոս Անճելըս, 2009, էջ 210-221, տախտակ 41։

[85] Y. T. Nercessian, *Silver Coinage of the Artaxiad Dynasty of Armenia*, Լոս Անճելըս, 2006, դրամներու տոհմագրութեան համար տե՛ս՝ "Catalogue"ի բաժինը, էջ 24-115։

[86] Պիտի փափաքէի չնորհակալութիւն յայտնել Ռուբէն Վարդանեանին՝ Հայաստանի Պատմութեան Թանգարան, Դրամագիտութեան Բաժին, քառորդ երկդրամի նկարն ու չափագիտական տուեալները ինծի ուղարկելուն համար. նաեւ՝ Մ. Ամանդրիին՝ Ֆրանսայի Ազգային Մատենադարան, լատինատառ բիլլոնի չափագրական տուեալները ինծի ուղարկելուն համար, ինչպէս նաեւ նոյն հաստատութեան Ֆրանսուա Թիերիին՝ Շլումբերժէի բիլլոնի նկարին համար։

THE QUARTER DOUBLE TRAMS AND BILLIONS OF KING LEVON I
(Summary)

YEGHIA NERCESSIAN
ArmNumSoc@aol.com

Quarter double trams and billions are the rarest coins issued by King Levon I (1198-1219). The quarter double tram is a part of the one-lion series of coins, which was issued at the beginning of his royal reign. His billions, both with Armenian legend and Latin legend, were struck for circulation within the principality of Crusader Antioch.

In 1962 Paul Z. Bedoukian catalogued three quarter double trams in his *Coinage of Cilician Armenia*. In the revised edition of this work, the census of quarter double trams remained the same. In the 1962, 1963, and 1979 editions of CCA, only the weight of one quarter double tram is reported. In 1979, in the revised edition of CCA, Bedoukian catalogued two Armenian-inscribed billions and five Latin-inscribed billions.

Since then, the number of quarter double trams has increased to five, the number of Armenian-inscribed billions to three, and the number of Latin-inscribed billions to six.

There are photographs of only four of the known quarter double trams, which were struck with two obverse dies and two reverse dies. The three Armenian-inscribed billions used the same obverse die but the reverses were struck with three different dies. The six Latin-inscribed billions can be classified according to three different variations of the legend; they were struck with six different obverse dies and six different reverse dies.

Numismatists have carried out some experiments and calculated the number of coins that can be struck with ancient and medieval dies. If we use the lowest figure, 2,000 coins for one obverse die, then they struck 4,000 quarter double trams, 2,000 billions with Armenian inscription, and 12,000 billions with Latin inscription.

The survival rate of quarter double trams may have been 0.1%, of the billions with Armenian legend, and 0.05% of the billions with Latin legend. These figures give some idea of the very low survival rate of some of the rarest Cilician Armenian coins and the huge loss that the Armenians have sustained.

Four examples of quarter double trams have an average weight of 1.34 grams and a diameter of 17.65 mm. Three examples of billions inscribed in Armenian have an average weight of 0.70 grams, and their diameter is 16.67 mm. There are six known billions inscribed in Latin; the average weight of four examples is 0.94 grams, and the diameter is 18.25mm.

ՍԷՑԴԱԲԱԴԻ ՀԱՑՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՆՇԱՆԱԻՈՐ ՄԻ ՔԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ

ՏԻԳՐԱՆ ՍՐԿ. ԲԱՂՈՒՄԵԱՆ
tigransrk@yahoo.com

Հնդկահայ գաղութի կեանքում իր ուրոյն դերն ու նշանակութիւնն է ունեցել Բենգալիա նահանգը[1], ուր հայերը բնակուել են անգլիացիներից շատ առաջ՝ Ժէ. դարասկզբին։ Դրա ակնյայտ վկայութիւնը կալկաթայի Ս. Նազարէթ հայկական եկեղեցու բակում գտնուող նահանգի ամենահին քրիստոնէական գերեզմանն է, որը 1884 Օգոստոսին յայտնաբերել է հնդկահայ գաղութի քաջ գիտակ, հմուտ բանասէր Մեսրոպ Սէթը։ Փաստօրէն, 1630ին իր մահկանացուն կնքած Ռգաբիբէ հայուհու գերեզմանը ոչ միայն պատմական եւ մշակութային արժէք է հայերի համար, այլեւ իր նշանակութեամբ եւ արժէքով պատմականութիւն է ձեռք բերել հենց Հնդկաստանի համար[2]։

Բենգալիան յատկապէս ծաղկում ապրեց Մուղալ[3] կայսրութեան կառավարիչների օրօք, երբ նպաստաւոր պայմաններ ստեղծուեցին միջազգային առեւտրի համար, որից էլ մեծապէս օգտուեցին եւրոպացի եւ հայ վաճառականները։ Բենգալիայում առեւտրական լայն գործունէութիւն էին ծաւալում ժամանակի նշանաւոր հայ վաճառականներ Յովհաննէս Փանոս Քալանթարը, նրա եղբօրորդի Յովհաննէս Իսրայէլ Սարհադը, Յովհաննէս Վազէդը, Յովհաննէս Պետրոսը եւ ուրիշներ, ովքեր իրենց հեղինակութեամբ եւ գործունէութեամբ վայելում էին Մուղալ կայսրերի բարեացակամ վերաբերմունքը։ Նրանց շնորհիւ ծաղկում էր ապրում ջութի, մետաքսի, պարարտանիւթի եւ այլ ապրանքների առեւտուրն ամբողջ Հնդկաստանում։ Մուղալ կայսրութեան կառավարիչների, 1688ին Յովհաննէս Փանոս Քալանթարի եւ Անգլիական Արեւելահնդկական Ընկերութեան միջեւ կնքուած պայմանագրի շնորհիւ հայերն ունէին բոլոր ազատութիւնները եւ իրաւունքները[4]։ Շատ անգամ հենց հայերն էին դառնում միջնորդ կայսրութեան եւ օտար առեւտրականների միջեւ՝ լուծելով զանազան եւ երբեմն էլ անհնարին թուացող խնդիրներ[5]։ Յելացի եւ հմուտ վերոնշեալ վաճառականների, նահանգում ունեցած նրանց դիրքի եւ ամենակարեւորը՝ տեղի կառավարիչների լաւ վերաբերմունքի շնորհիւ նպաստաւոր պայմաններ էին ստեղծուած հայերի բնակութեան եւ բազմանալու համար։

Ի դէմս հայերի՝ նահանգի կառավարիչները տեսնում էին աշխատասէր, դիմացինին յարգող, գործունեայ եւ հիւրասէր մարդկանց, ովքեր ոչ միայն մտածում էին իրենց անձնական շահոյթի մասին, այլ նաեւ իւրովանն օգտակար լինում հենց Հնդկաստանին։

Հայերը բնակուում էին Բենգալիայի Սէյդաբադ, Կալկաթա, Ջինսուրա, Դաքքա, Պատնա, Կասիմբազար եւ այլ քաղաքներում։

Այսօր հայաբնակ է միայն Կալկաթան, ուր ապրում են շուրջ 150 հայեր։ Զանազան պատճառներով նրանց մեծ մասը չեն խօսում հայերէն եւ կտրուած են իրենց ազգային արմատներից։ Վերջին տարիներին, սակայն, որոշակի աշխուժութիւն է նկատւում, երբ Հայոց Մարդասիրական Ճեմարանը յանձնուեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տնօրինութեանը[6], եւ Կալկաթայի եկեղեցական

վարչութեան ջանքերով նորոգուեցին հայկական եկեղեցիները, բարեկարգուեցին յարակից տարածքները, ուշադրութիւն դարձուեց նաեւ հայերի սոցիալ-տնտեսական պայմաններին[7]։

Սկզբում հայերը Բենգալիայում պաշտօնապէս հաստատուել են Մուրշիդաբադի[8] մատոյցներում գտնուող Սէյդաբադ քաղաքում, որն այն ժամանակ Բենգալիայի մայրաքաղաքն էր։ Մասնաւորապէս ժամանակի Աուրանգզէբը (1658-1707) կայսրն[9] իր ֆարմանով 1665ին Սէյդաբադում հող է նուիրում հայերին՝ թոյլատրելով բնակութիւն հաստատել այնտեղ[10]։ Հայերին տրուած արտօնութեան մասին է վկայում նաեւ ԺԸ. դարում Հնդկաստանի Արեւելեան Ընկերութեան աշխատակից Բոլցը՝ մասնաւորապէս ընդգծելով. «Հայերը, ովքեր մեծ առեւտրական գործօն են Հնդկաստանում, վաղ ժամանակներից մնայուն գաղութներ են ունեցել նաեւ Բենգալիայում, մասնաւորապէս Սէյդաբադում։ Նրանց վաճառականութիւնն էլ հաստատուած էր մուղալական ֆարմանով, որով իրենց երկու գլխաւոր ապրանքների՝ մանուֆակտուրայի եւ հում մետաքսի վրայ 3.5 տոկոս հաստատագրուած հարկ էր դրուած»[11]։

Աուրանգզէբի կողմից հայերին հող նուիրաբերելն իրօք ուշագրաւ փաստ է։ Հայերի նկատմամբ նման չռայլութիւնն ու վերաբերմունքը պայմանաւորուած էր հաւանաբար մի շարք հանգամանքներով՝ Հնդկաստանի պատմութեան մէջ ունենալով նաեւ իր նախադէպը։

Նախ՝ մինչ այդ հայերն արդէն իսկ իրենց հաստատուն դիրքն ունէին շրջապատում եւ վայելում էին տեղացիների վստահութիւնն ու յարգանքը։ Տեղին է յիշատակել հայերի նկատմամբ Աուրանգզէբի նախորդներից՝ Աքբարի (1556-1605) վարած խմաստուն եւ հեռատես քաղաքականութեան մասին։ Վերջինս, ցանկանալով երկրում զարգացնել արհեստագործութիւնը եւ խթանել առեւտուրը, իր թագաւորութեան սահմաններում ազատ ելումուտքի իրաւունք է տալիս հայ վաճառականներին։ Հայ առեւտրականներն առանց մաքսի կարող էին ցանկացած ապրանք ներմուծել եւ արտահանել, մտնել եւ առեւտրով զբաղուել երկրի այնպիսի շրջաններում, ուր օտարների մուտքն արգելուած էր։ Աքբարը Ագրայում նաեւ հողատարածք է յատկացրել հայերին եւ նպաստաւոր պայմաններ ստեղծել նրանց գործունէութեան համար։

Ոչ-պակաս էական է նաեւ այն փաստը, որ Աքբարի օրօք հնդկահայերը նաեւ պետական կարեւոր պաշտօններ են զբաղեցրել։ Օրինակ՝ ազգութեամբ հայ էին երկրի գլխաւոր դատաւոր Միր Ադըլը կամ Աբդուլ Հայը, պալատական բժշկուհի Ճուլիանան, պորտուգալերէնի թարգմանիչ Դոմինգօ Պիրէսը։ Ազգութեամբ հայ էին նաեւ այլ պետական պաշտօնեաներ։ Եւ վերջապէս հայուհի էր հենց թագաւորի կանանցից մեկը՝ Մարիամ Զամանի Բեգումը։ Հետաքրքրական փաստ է նաեւ, որ Աքբարը, սկզբում զաւակ չունենալով, որդեգրել էր Ջուղայեցի Ճակոբջանի որդուն՝ Ղուլղունէլին[12]։ Ինքնին այս փաստերը խօսուն վկայութիւն են տուեալ ժամանակաշրջանում հայերի նպաստաւոր դիրքի եւ երկրում ունեցած նրանց նշանակալի դերակատարութեան մասին, նաեւ՝ լաւագոյն նախադէպեր Աուրանգզէբի համար։ Ուստի չպէտք է զարմանալ հայերի նկատմամբ նրա վարած քաղաքականութեան վրայ[13]։ Կարելի է ենթադրել նաեւ, որ Աուրանգզէբը չատ լաւ ծանօթ էր հայերի աշխատասիրութեանը, տեղանքը չէնացնելու եւ բարեզարդելու նրանց շնորհքին եւն., ուստի

առանց երկմտելու էլ հայերին է նուիրաբերում այդ հողակտորը՝ վստահ լինելով, որ նրանք անպայման ծաղկեցնելու են այդ տարածքը։

Ցետագայ պատմութիւնը լաւագոյնս ապացուցում է, որ առաջին հնդկահայերը ոչ միայն հայկական եկեղեցի են կառուցում այնտեղ, այլ նաեւ բարեկարգում եւ շէնացնում են տարածքը։ Անգամ այսօր Սէյդաբադում, ուր այլեւս հայեր չկան, երբ այցելում ես հայկական եկեղեցի, ակամայից բախւում ես նոյն իրողութեան հետ։ Կալկաթայից մեքենայով 5-6 ժամ հեռաւորութեան վրայ գտնուող այդ քաղաքը դնալիս ճանապարհին ամէնուր հանդիպում ես խարխուլ տների, չքաւոր մարդկանց։ Բայց երբ մօտենում ես եւ տեսնում հայոց եկեղեցու տարածքը, իրապէս զարմանք ես ապրում, քանզի կայսեր կողմից ժէ. դարում նուիրաբերուած այդ տարածքը կրկին խնամուած վիճակում է, պարսպապատ, բարեկարգուած, իսկ եկեղեցուն պատկանող լիճը՝ մաքուր։

***

Հայերը Սէյդաբադում հիմնականում զբաղւում էին կտորի եւ հում մետաքսի առեւտրով։ ԺԸ. դարի կէսերին արդէն բազում հայեր էին այնտեղ ապրում, որի ակնյայտ վկայութիւնը Սուրբ Աստուածածնին հայկական եկեղեցու կառուցումն է 1758ին՝ Կալկաթայի ժամանակի հայ համայնքի ղեկավար, ջուղայեցի նշանաւոր վաճառական, բարեգործ Յովհ. Պետրոսի († 1778)[14] անձնական միջոցներով՝ ի յիշատակ իր հանգուցեալ ծնողներ Ցարութիւնի եւ Ովսաննայի եւ իր հարազատների։ Ցաւօք, վերջին տարիներին Կալկաթայի եկեղեցական վարչութեան ջանքերով Սէյդաբադի եկեղեցում կատարուած շինարարական-վերականգնողական աշխատանքների պատճառով եկեղեցուց անհետացել է հիմնադրման մասին արձանագրութիւնը։

Բարեբախտաբար այն պահպանուել է Հնդկաստանի եւ Մալրագոյն Արեւելքի Հայրապետական պատուիրակ Տ. Հայկազուն Արք. Աբրահամեանի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ձեռագրատունը պահուող անտիպ օրագրում։ Սրբազան Հայրը, 1965 Ցունուարի 31ին այցելելով Սէյդաբադ, շարադրում է օրուայ մասին իր տպաւորութիւնները։ Իր արժէքաւոր օրագրութեան մէջ նա մէջբերում է նաեւ եկեղեցու կառուցման արձանագրութիւնը. «Շինեցաւ պայծառափայլ Սուրբ Աստուածածնի եկեղեցիս հանդերձ երկոքին գաւթօքն իւրովք եւ չորեքկողմեան պարսպօքն եւ սենեկօք յամի Տեառն 1758 Արամ 15 (*Դեկտեմբերի 30ին - Տ.Բ.*), արդեամբք եւ ծախիւք Խոջաբաբեան (*Հաւանաբար պիտի լինի՝ Խոջա Աբրահամեան - Տ.Բ.*) ամենաբարեպաշտ եւ Քրիստոսիւ զօրացեալ ՊԵՏՐՈՍ աղային, որ եւ է տունս տէրունեան, յիշատակ բարեաց իւրոց յիշել Պետրոս աղային եւ լուսահոգի ծնօղացն՝ հօրն Ցարութիւնի եւ մօրն Ովսաննայի եւ կողակցին Դաստագուլի եւ եղբարցն Գրիգոր աղային եւ պարոն Բարսեղին եւ այլ ամենայն արեանս առու մերձաւորացն նորին, կենդանեացն եւ առ ի Քրիստոս հանգուցելոցն։ Գրեցաւ ի փոքր թուին Ազաթիայի 145 (1760), համիրայ ամսոյ 15 (*Նոյեմբերի 30ին - Տ.Բ.*)։ Է սա տաճար տէրունեան, հրեշտակաց բնակարան եւ մարդկան քաւարան։ Վերջ»[15]։

Խոջա Պետրոսի ջանքերի չնորհիւ 1763ին բարեկարգուել է նաեւ 1707ին հիմնադրուած Կալկաթայի Ս. Նազարէթ հայկական եկեղեցին. աւելացուել են մայր խորանի աջ եւ ձախ կողմերում գտնուող խորանները։ Ս. Գրիգոր Լուսա-

ւորչին նուիրուած խորանը նա կառուցել է ի յիշատակ իր եղբայր Գրիգոր Յարութիւնեանի[16], իսկ միւսը նուիրաբերել Քրիստոսի երկու անխոնջ աշակերտներին՝ Ս. Պետրոսին եւ Ս. Պօղոսին՝ ի յիշատակ իրեն։ Այդ մասին են վկայում եկեղեցում արուած արձանագրութիւնները[17]։

ԺԸ. դարի վերջում եւ ԺԹ. դարի սկզբում, երբ Սէյդաբադը դադարում է առեւտրական կենտրոն լինելուց, հայերն սկսում են լքել այն՝ բնակութիւն հաստատելով Հնդկաստանի այլ վայրերում։ Ըստ Մեսրոպ Սէթի՝ 1860ից յետոյ 75 տարիներ շարունակ Սէյդաբադի հայկական եկեղեցում կրօնական արարողութիւն չի կատարուել։ Վերոգրեալ թուականից մինչեւ Առաջին Համաշխարհային Պատերազմն էլ եկեղեցին մեծապէս տուժել է երկրաշարժերի, ջրհեղեղների եւ հրդեհների պատճառով։ Միայն մասնակի վերանորոգութիւններ են կատարուել անցած դարի տարբեր ժամանակներում։

Եկեղեցու համար բախտորոշ էին յատկապէս Ի. դարի 50ականները։ Մասնաւորապէս Կալկաթայի հոգեւոր հովիւ Տ. Արամայիս Քհնյ. Միրզայեանը 1954ին երկու անգամ այցելում է Սէյդաբադ, մօտիկից ծանօթանում եկեղեցու վիճակին եւ իր մտահոգութիւնների մասին տեղեկացնում Կալկաթայի եկեղեցական վարչութեան անդամներին։ Նոյն եկեղեցականի նախաձեռնութեամբ մեծ ուխտագնացութիւն է կատարւում Սէյդաբադի հայոց եկեղեցին 1962ին։ Կալկաթահայ համայնքի 53 անդամներ մասնակցում են Սուրբ Պատարագին եւ հաղորդութիւն ստանում։ Նոյն տարում Սէյդաբադ է այցելում նաեւ Հայրապետական Պատուիրակ Տ. Ասողիկ Եպս. Ղազարեանը։ Այս այցելութիւնների արդիւնքում եկեղեցին վերանորոգւում եւ բարեկարգւում է։ 1963 Յունուարի 26ին՝ Հնդկաստանի Հանրապետութեան Օրը, Տ. Պօղոս Քհնյ. Պետրոսեանի ձեռամբ կատարւում է եկեղեցու վերաբացման արարողութիւնը։ Դրանից յետոյ աւանդութիւն է դառնում հնդկահայ համայնքում ամէն տարի Յունուար ամսին ուխտի գնալ Սէյդաբադ։

Ի. դարի 60-70ականներին, ժամանակի հոգեւոր առաջնորդների նախաձեռնութեամբ ամէն տարի Մարդասիրական Ճեմարանի մի խումբ սաներ ուխտի են մեկնել երբեմնի հայաշատ այս բնակավայրը, ուր մատուցուել է Սուրբ Պատարագ եւ կրկին աղօթք հնչել։ Եկեղեցու վերջին խնամակալներն են եղել Մատթէոս եւ Մերի Կարապետեանները, ովքեր նախանձախնդրութեամբ եւ ամենայն փութաջանութեամբ շուրջ կէս դար՝ մինչեւ 1968, խնամել են եկեղեցին եւ նրան յարող տարածքը՝ հայաշունչ ոգով լցնելով Տիրամօրը նուիրուած աղօթատունը։

Սէյդաբադում մինչեւ այսօր էլ տարեցները մեծ ոգեւորութեամբ եւ ըրախտագիտութեամբ են յիշում Մատթէոս Կարապետեանին՝ նրա մասին զարմանահրաշ դէպքեր պատմելով, թէ՝ Աստուած երազում յայտնւում է Մատթէոսին եւ պատուիրում, որ թողնի իր ընտանիքը, զաւակներին եւ մեկնի Հնդկաստան՝ դառնալով հայազուրկ Սէյդաբադի Սուրբ Աստուածածին եկեղեցու խնամակալը։ Չիմանալով անգամ նման եկեղեցու գոյութեան մասին, բայց անսալով Տիրոջ հրամանին՝ նա թողնում է ամէն ինչ, պարսկաստանից Հնդկաստան գալիս եւ ստանձնում եկեղեցու խնամակալութիւնը։ Այստեղ նա ամուսնանում է ազգութեամբ հնդիկ Մերիի հետ եւ 20 զաւակ ունենում։ Նա օժտուած է եղել անսահման եւ տիտանական ուժով։ Ըստ տեղացիների՝ երկար

ժամանակ գիւղին մեծ դժուարութիւններ պատճառող մի վագրի հետ մարտի բռնուելով, երկու կէս է անում նրան քաջ Մատթէոսը[18]։

Սէյդաբադի Ս. Աստուածածին եկեղեցին վերազարթօնք ապրեց ԻԱ. դարասկզբին։ 2005-2006ին Կալկաթայի եկեղեցական նորընտիր վարչութիւնը ձեռնամուխ եղաւ Սէյդաբադի հայկական եկեղեցու վերանորոգման աշխատանքներին։ Եկեղեցին այժմ ունի զուտ հայկական նոր զանգակատուն եւ նոր հիւրատուն։ Հայ համայնքին են վերադարձուել նաեւ տեղացիների կողմից նախկինում ապօրինաբար զաւթուած յարակից տարածքները։

2006 Դեկտեմբերի 5ին Հնդկահայոց հոգեւոր հովիւ Տ. Օշական Վրդ. Գիւլգիւլեանի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տիգրան Սրկ. Բաղումեանի մասնակցութեամբ կատարուել է վերանորոգուած եկեղեցու դռնբացէքի արարողութիւնը, իսկ 2007 Մարտի 4ին, Հնդկաստանի եւ Մալրագոյն Արեւելքի Հայրապետական Պատուիրակ Տ. Աղան Արք. Պալիոզեանի ձեռամբ օծուել են Ս. Աստուածածին վերանորոգուած եկեղեցու Սուրբ Սեղանը եւ սիւների 16 խաչերը[19]։

***

Հնդկաստանի հայ առաքելական միւս եկեղեցիների նման Սէյդաբադի Ս. Աստուածածին եկեղեցու բակում են հանգչում բազում հայորդիներ, ովքեր իրենց վերջնական հանգիստն են գտել երբեմնի հայաշունչ այս քաղաքում։ Այժմ պահպանուել է շուրջ 80 գերեզման։ Դրանց մի մասի արձանագրութիւններն անընթեռնելի են. կան նաեւ մի քանի գերեզմանաքարեր, որոնց վրայից ընդհանրապէս ջնջուել են արձանագրութիւնները։ Ցայսօր պահպանուած ամենահին գերեզմանը Մկրտիչ անունով ոմն հայի է, ով մահացել է 1760ին։ Վերջինիս տապանաքարը բոլոր կողմերից ջարդուած է, իսկ վրայի արձանագրութիւնը՝ դժուարընթեռնելի։ Ժամանակագրական առումով նրան յաջորդում են եւս երկու գերեզմաններ։ Առաջինը «Մօվսեսի կողակից ազնիւ տիկին Մարիամ խանումին»ն է, ով մահացել է 1765ին եւ թաղուել եկեղեցու բակում։ Նոյն տարում է իր մահկանացուն կնքել նաեւ Նիկողայոս քահանայի որդի Պետրոսը։

Այսօր դժուար է ասել, թէ ժամանակին քանի գերեզման է եղել Սէյդաբադի եկեղեցու մերձակայքում, քանզի այս առումով տեղեկութիւնները հակասական են։ Թորգոմ Գուշակեան Պատրիարքը, 1917 Մարտի 2ին այցելելով Սէյդաբադ, խօսում է շուրջ 110 գերեզմանի մասին[20]։ Ցաւօք, նա չի անդրադառնում գերեզմանների վիճակին։

1954 Նոյեմբերի 20ին Տ. Արամայիս Քհնյ. Միրզայեանի առաջնորդութեամբ մի խումբ հայեր այցելում են Սէյդաբադ։ Կալկաթայի եկեղեցական վարչութեանը հասցէագրած իրենց նամակում նրանք նշում են եկեղեցու եւ տարածքի անմխիթար վիճակի մասին։ Անդրադառնալով գերեզմաններին՝ նամակագիրները տխրութեամբ արձանագրում են, որ գերեզմանների մեծ մասի վրայից անհետացել են գերեզմանաքարերը, չատերի վրայից հնարաւոր չէ ընթերցել արձանագրութիւնները[21]։

2006 Դեկտեմբերի 5ին՝ Սէյդաբադի վերանորոգուած եկեղեցու բացման արարողութեան ժամանակ առիթն ունեցանք ծանօթանալու եկեղեցու վերջին խնամակալներ՝ կարապետեան ամոլի թոռնուհի Հելենա Քրէյի հետ, որի ման-

կութիւնը եւ պատանեկութիւնն անցել են եկեղեցու շրջակայքում։ Ըստ վերջինիս՝ եկեղեցու ողջ շրջակայքը 70ականներին պատուած է եղել գերեզմանաքարերով եւ հնարաւոր չի եղել անգամ ազատ քայլել։ Դժբախտաբար, հայերի բացակայութեան, անուշադրութեան եւ բնական աղէտների պատճառով այսօր գերեզմանների մեծ մասն անհետացել է։

Սէյդաբադի եկեղեցու շրջակայքում են թաղուած ժամանակի համայնքային-ները, հոգեւոր սպասաւորներ, վաճառականներ եւ ուրիշներ։ Թաղուածների մեծամասնութիւնը տղամարդիկ են։ Տապանաքարերի արձանագրութիւնները վկայում են, որ երբեմն այնտեղ թաղուած են այս կամ այն ընտանիքի բոլոր անդամները։ Վերջին փաստը ցոյց է տալիս, որ ԺԸ. դարավերջ-ԺԹ. դարասկզբին Սէյդաբադում հայերն ունեցել են կազմակերպուած համայնքային կեանք՝ համախմբուած լինելով հայոց եկեղեցու շուրջ։ Ապագային թողնելով պահպանուած գերեզմանների տապանաքարերի ամբողջական վերծանումը՝ ստորեւ ներկայացնում ենք դրանցից ամենակարեւորները։

Սէյդաբադի Ս. Աստուածածին եկեղեցու գաւթում է թաղուած Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանի հիմնադիրներից, ժամանակի նշանաւոր հայ վաճառական Մնացական Վարդանեանը (1772-1827)։ Նա ծնուել է Նոր Ջուղայում 1772 Սեպտեմբերի 6ին։ Երիտասարդ հասակում գաղթել է Հնդկաստան եւ հաստատուել Սէյդաբադ քաղաքում՝ զբաղուելով առեւտրական գործունէութեամբ։ Անուրանալի է յատկապէս նրա բարոյական աջակցութիւնը Հայոց Մարդասիրական Ճեմարանի հիմնադրման գործում։ Փաստօրէն, նա իրականութիւն դարձրեց Ճեմարանի մէկ այլ հիմնադրի՝ Աստուածատուր Մուրադխանեանի տեսիլքը՝ ունենալ կրթական հաստատութիւն, ուր հայ երեխաները կը ստանան ազգային կրթութիւն։ Յետագայում նրա մասունքները տեղափոխուել են Կալկաթա եւ ամփոփուել Ս. Նազարէթ եկեղեցու գլխաւոր խորանի ետնամասում։ Սակայն մեր հետազօտութեան արդիւնքում պարզեցինք, որ եկեղեցական վարչութեան անդամները միայն նրա տապանաքարն են տեղափոխել, իսկ աճիւնը դեռեւս հանգչում է Սէյդաբադի հայկական եկեղեցու բակում։ Մեր տեսած՝ Հնդկաստանի հայկական գերեզմանների մէջ Մնացական Վարդանեանի տապանաքարն ամենագեղեցիկն է, արուեստի իսկական մի գլուխգործոց։ Գերեզմանաքարն այսօր տարբեր մասերից յարդուած է՝ ծածկուած սպիտակ մարմարեայ տապանաքարով։ Շրջանակի մէջ կանգնած վիճակում քանդակուած է ժամանակի տարազով նրա պատկերը՝ ձեռքին մէկ գիրք, որի չորս կողմում շրջանաձեւ գրուած է. «Մնացական Վարդան Սմբատեան, թիւն փոքր 212», այսինքն՝ 1827։ Տապանաքարի վերեւում տարբեր զարդաքանդակներ են, փողաւոր հրեշտակներ։ Այն ունի 29 տողից բաղկացած չափածոյ մի արձանագրութիւն։ Ամբողջական արձանագրութիւնը ժամանակին տպագրուել է Մարդասիրական Ճեմարանի 150ամեակին նուիրուած գրքում, այն մէջբերել է նաեւ Հայկազուն Սրբազանն իր օրագրութեան մէջ[22]։ Սակայն աչքի անցկացնելով տպագիրը, Սրբազան Հօր դուրս բերածը եւ համեմատելով գերեզմանաքարի արձանագրութեան հետ՝ նկատեցինք որոշ սխալ ընթերցումներ եւ վրիպակներ, ուստի ստորեւ տալիս ենք արձանագրութիւնն ամբողջութեամբ։ Յատկանշական է որ տապանաքարի վերջին տողի վրայ քանդակագործը նշել է իր անունը։

ԸՍՏ ԱՀԵՂ ՎՃՌՈՅ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ
ԲՆՈՒԹԻՒՆՍ ՀԱՄԱՅՆ ՆՈՅՆ ԲԱՆԻՒ ՓԱՅԼԻ
ՍՕՂՕՄՕՆԵԱՆՆ ԱՐԴԷՆ ԿԱՏԱՐԻ
ԹԷ ՀԱՆԳՈՅՆ ԵՄ ԵՒ ԵՍ ՄԱՀԿԱՆԱՑՈՒ
ՅԱՂԱԿԱՐԾՍ ՀԱՍԵԱԼ ԱՌ ՍԱ ՀՐԱՄԱՆ
ԱՅՆ ՎՃԻՌ ՄԱՀՈՒ ՈՐ ՏՈՒԱԻ ՄԱՐԴԿԱՆ
ՈՐՊԷՍ ՄԻ ՀՈՂՈՅ Ի ՆՄԱՆԷ ՍՏԵՂԾԱՆ
ՆՈՅՆՊԷՍ ԵՒ Ի ՆՈՅՆ ՀՈՂ ՎԵՐԱԴԱՌՆԱՆ
ԱՅՆ ԻՆՉ ՋԲԱՂԻՒՐ Ի ԳՈՐԾՍ ԱՇԽԱՐՀԻ
ԱՅՐ ՎԵՀԱՆՁՆ ՔԱՋ ԵՒ ՄԵԾԱՀՈԳԻ
ԱՆԴԷՆ ԱՌ ՆՄԻՆ ԸՆԴ ԱԽՏ ՏՈԳՈՐԻ
ՅԱՄԻՆ ԻՒՐ ՅԻՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ
ՋԻՄ ԱՀԱ ՀՐԱՒԷՐ ԱԽՏ ՎԱՂԺԱՄԱՆԵԱԼ
ԱՆԴԷՆ ԱՌՆ ՄԻՆ ԻՄՍ ՀԻՃԱՐԿԵԱԼ
ԹԷԵՒ ՍՊԵՂԱՆԻՔ ԲԱՋՈՒՄ ՅԱՃԱԽԵԱԼ
ԲԱՅՑ Ի ՉՈՐՍ ԱՒՈՒՐՍ ՋՍԱ ՓՈՂՈՏԵԱԼ
ԻԲՐ ՁԻ ԱՐԱԳ ԱՌ ՅԵՐԿԻՐ ԼՈՍԵԱԼ
Ի ԽՈՐ ԴԱՄԲԱՐԱՆ ԱՍՏԷՆ ԳԼՈՐԵԱԼ
ԹԷՊԷՏ ԱՌ ՎԱՅՐԻ ԽԱՄՐՈՒԹԻՒՆ ԼՈՒԾԵԱԼ
ԱՅԼ ԱՆԵՂԾԱԿԱՆ ԿՐԿԻՆ ՁԳԵՑԵԱԼ
ՅԱՆՈՒՆ ՄՆԱՑԱԿԱՆՆ ԱՅՐՍ ԱՅՍ ՊԱՏՈՒԻ
ՎԱՐԴԱՆ ՍՄԲԱՏԵԱՆՑ ՅԱՐՄԱՏՈՅ ԲՂԽԻ
Ի ՏԻՍ ՀԱՍԱԿԻ ԹՈՂԵԱԼ ՁԻՒՐ ՀԱՅՐԵՆԻ
ՈՐ Է ՆՈՐՆ ՋՈՒՂԱՅ ԳԱՅ ՁՀԵՏ ԻՒՐ ԲԱԽՏԻ
ԵՒ ԱՐԴ ՁԵՕԹՆ ՁԱՒԱԿՍ ԹՈՂԵԱԼ ՅԱՇԽԱՐՀԻ
Ի ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԷՍ ՀՐԱԺԱՐԻ
Ի ՍԷԻՅՏԱՊԱՏ ՅԱՄԻ ՓՐԿՉԻ 1827-ԻՆ
ՀԱՋԱՐԻԱՅԻ ԱՄՍՈՅ ԹԻՐԱՅ 15-ԻՆ
ՏԱՊԱՆԱՔԱՐՍ ՔԱՆԴԱԿԵԱԼ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏ ԳՐԻԳՈՐԵԱՆ։

Սէյդաբադում Մնացական Վարդանեանի կողքին է ամփոփուած նրա կողակից Եղիսաբէթի մարմինը։ Տապանաքարի վերեւում քանդակուած է երկար մազերով մի կին, որի գլխավերեւում երկու կողմերից հատւում են խնձորենու եւ տանձենու ճիւղերը։

ԵՂԻՍԱԲԵԹ
ԺՐԱԳԼՈՒԽ ԿՈՂԱԿԻՑ ԵՒ ԱՐԺԱՆԻ ԱՄՈՒ
ՍԻՆ ՄՆԱՑԱԿԱՆ ՎԱՐԴԱՆԻ 333 ԱՄԻ ԴԵ
ՌԱՓԹԻԹ ՀԱՍԱԿԻ ԻՒՐՈՅ՝ ԹՈՂԵԱԼ
ՁՎԾՏԱԿԻՐ ԱՅՐ ԻՒՐ ՅՈՂՔՍ ԵՒ
ՁԵՕԹՆԵՔԻՆ ՊՏՈՒՂՍ ԱՐԳԱՆ
ԴԻ ԻՒՐՈՅ, ԱՅՍԻՆՔՆ Ձ7 ՁԱՒԱԿՈՒՆՍ
ԻՒՐ ՅՈՐՔՍ: ՀԱՆԳԵԱՒ Ի ՏԷՐ ԵՒ
ՄԱՐՄԻՆ ՍՈՐԱՅ ԱՄՓՈՓԵՑԱՒ
ՅԱՅՍՄ ՏԱՊԱՆԻ Ի11 ԱՐԵԳ ԱՄ
ՍՈՅ ԿԱՄ 4 ԱՒԵԼԵԱՑ ԱՄՍՈՅ

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1816 Ի ՍԷԻԴԱՊԱՏ (*Մարտի 19ին - Տ.Բ*)։

Մ. Աստուածածին եկեղեցու բակում են թաղուած նաեւ երեք հոգեւորականներ, ովքեր կա՛մ վիճակաւոր հոգեւորականներ են եղել, կա՛մ էլ Հայրապետական Նուիրակ։ Եկեղեցու հարաւային դռան մօտ է Մինաս վարդապետի գերեզմանը, որի մէջտեղում քանդակուած է վարդապետական գաւազան։ Գերեզմանաքարն ունի հետեւեալ արձանագրութիւնը։

Ի ՇԻՐԻՄԻՍ ԱՍՏ ԱՄՓՈՓԻ
ՄԱՐՄԻՆ ՈՒՄԵՄՆ ՍՐԲԱՅՍԻՐԻ։
ՍԱՅ ՄԻԱԲԱՆ ԱՄԵՆԱՅՓՐԿՉԻ
Ի ԸՍՊԱՀԱՆ ՇՕՇ ՔԱՂԱՔԻ։
ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒ ՄԵԾԻ ՎԱՆԻ
ԱՆՈՒՆՆ ՍՈՐԱ ՎԵՐԱՋԱՅՆԻ։
ՐԱԲԲՈՒՆ ՄԻՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԵՒ ՔԱՐՈԶԻՉ ՀԱՍԱՅՆ ԱՋԳԻ։
ՊԱՆԴԽՏԵՑԵԱԼ ՅԱՅՍՄ ԱՇԽԱՐՀԻ
ՈՐ Ի ՀՆԴԻԿՍ ԱՅՍ ՔԱՂԱՔԻ։
ԲԱԶՄԱԱՇԽԱՏ ՅՈՅԺ ՎՇՏԱԼԻ
ՎԱՂՋԱՆ ԱՌԵԱԼ ԱՂԷՏԱԼԻ։
ԱՄԱՑ ԳՈԼՈՎ ԵՕԹԱՆԱՄՆԻ
Ի ՍԷԻԴԱՊԱՏ ԿԵԱՆՍ ՎՃԱՐԻ
ԹԻՎՆ 1803Ի, ՈՎԴԱՆ ԱՄՍՈՅ 15Ի, (*Յունուարի 29ին - Տ.Բ*)։

Տապանաքարի արձանագրութիւնից տեղեկանում ենք, որ Մինաս վարդապետը «վաղջան առեալ աղէտալի»։ Հաւանաբար այս արտայայտութիւնից պէտք է ենթադրել, որ նա մահացել է ինչ-որ հիւանդութիւնից, ամենայն հաւանականութեամբ՝ այն ժամանակ մահացու համարուող մալարիայից։

Վերոգրեալից քիչ ներքեւ Սուրբ Էջմիածնի նուիրակի գերեզմանն է։ Տապանաքարի մէջտեղում երկգլխանի օձագլուխ վարդապետական գաւազանն է, որի երկու կողմերում կարդում ենք հետեւեալ արձանագրութիւնը։


ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻ
ԱԾՆԻ ՆՈՒԻՐԱԿ ԵՓՐԵՄ ՊԵՏՐՈՍԻ
ՏԷՐ ՍԱՀԱԿ ԱԲԵՂԱՅԻՆ։
ՋՈՐ ԽՂՃԱԼԻ ՄԱՀՈՒԱ
ՄԲ ԱՍՏԷՆ ՓՈԽԵՑԱՒ։
ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ
1789 ՅԱՊՐԻԼԻ 7 Ի ՍԷ
ՅԴԱՊԱՏՈՋՍ։

Սէյդաբադում է ամփոփուած նաեւ ումն Մելքումի որդի Տէր Բաղդասարի մարմինը, որի տապանաքարն ունի հետեւեալ արձանագրութիւնը։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԷԼՔՈՒՄԻ ՈՐ
ԴԻ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՏԷՐ ԲԱ
ՂԴԱՍԱՐԻՆ, ՈՐ ՓՈԽԵՑԱՒ
ՅԱՇԽԱՐԷՍ ԹԻՎՆ ՀԱՅ
ՈՑ 1231, ԱՋԱՐԻ, ՀԱՄ
ԻՐԱ ԻԱ, ՍԷՏԱՊԱՏ (1782 *Դեկտեմբերի 6ին - Տ.Բ.*)։



Էջմիածնի Նուիրակի տապանաքարը



Մինաս Վարուժանեան տապանաքարը

Ուրախալի է, որ վերջին տարիներին Կալկաթայի եկեղեցական վարչութեան եւ Մարդասիրական Ճեմարանի պաշտօնէութեան ջանքերով տարբեր առիթներով ուխտագնացութիւններ են կատարուում Սէյդաբադ եւ Ս. Աստուածածին եկեղեցի։

Սէյդաբադի հայոց եկեղեցին եւ հայերին պատկանող ամբողջ տարածքն անլուռ վկաներն են երբեմնի բարգաւաճ հայ համայնքի, որտեղ գործել եւ արարել են հայ նախնիք։ Վերջին տարիների նպատակասլաց աշխատանքը յոյս է ներշնչում, որ հնդկահայ համայնքի այս գոհարը, անկախ հայերի լինել-չլինելուց, դեռ երկար ժամանակ կանգուն կը մնայ, քանզի այն ոչ միայն հայ մշակութային ժառանգութեան մէկ մասնիկն է, այլեւ իր պատմականութեամբ եւ նշանակութեամբ դարձել է նաեւ բազմակրօն եւ հին քաղաքակրթութիւն ունեցող Հնդկաստան երկրի պատմամշակութային հարուստ ժառանգութեան անբաժան մասը։

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Պատմական Բենգալիան վերջին երկու հազարամեակների ընթացքում եղել է տարբեր կայսրութիւնների եւ թագաւորութիւնների մաս։ 1947ից յետոյ կրօնական առումով այն բաժանուեց երկու մասի. մուսուլմանական բնակչութեամբ մասն անցաւ Արեւելեան Պակիստանին, իսկ այնուհետեւ՝ Բանգլադէշին, իսկ միւս մասը մնաց այժմեան Հնդկաստանի տարածքում։ Արեւմտեան Բենգալիան Հնդկաստանի 28 նահանգներից է, որի պաշտօնական լեզուներն են՝ բենգալերէնը, հինդուն եւ անգլերէնը։ Այս նահանգում են գործում հայկական հինգ եկեղեցիները՝ Կալկաթայի Ս. Նազարէթ (1707), Ս. Գրիգոր Լուսաւորիչ (1906), Տինդրայի Ս. Երրորդութիւն (1867), Ջինսուրայի Ս. Յովհաննէս (1695-1697), Սէյդաբադի Ս. Աստուածածին (1758), եւ 189ամեայ Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանը։

[2] Այս մասին տե՛ս՝ Mesrovb J. Seth, "The Oldest Christian Tomb in Calcutta, Bengal Past & Present", *Journal of the Calcutta Historian Society*, January-June, 1932, էջ 27-9, Mesrovb Jakob Seth, *Armenians in India*, Calcutta, 1983, էջ 419։ Տապանաքարի լուսանկարը եւ այլ մանրամասներ տե՛ս՝ Տիգրան սարկաւագ Բաղումեան, *Արեւմտեան Բենգալիայում Թաղուած Հայ Հոգեւորականները*, Երեւան-Կալկաթա, 2007, էջ 13-5, 77։

[3] Կառավարող գերդաստան Հնդկաստանում՝ 1526-1857։ Այն հիմնադրուել է Թիմուրեանների առաջնորդ Բաբուրի կողմից, երբ վերջինս յաղթում է Դելիի վերջին իշխան Իբրահիմ Լոդիին։ Մուղալը (Mughal) մոնղոլ բառի պարսկերէն տարբերակն է։ Ասպէս էին կոչւում կենտրոնական Ասիայի այն թափառաշրջիկները, ովքեր իրենց Ջինգիզ Խանի յետնորդներ էին համարում։ Մենք է եղել մուղալ կայսրերի ազդեցութիւնը ժամանակի արուեստի եւ ճարտարապետութեան վրայ։ Մուղալ կայսր Շահ Ջահանի օրօք կառուցուել է աշխարհի հրաշալիքներից մէկը՝ Թաջ Մահալը։

[4] Մուղալ կառավարիչների վարած հետաւոս քաղաքականութեան հետեւանքով հայերը հաստատուեցին Հնդկաստանի զանազան քաղաքներում։ Նրանք ոչ միայն զբաղւում էին առեւտրական գործունէութեամբ, այլեւ կառուցում շինութիւններ, հիմնում աշխատատեղեր, բարեգործական, կրթական եւ այլ հաստատութիւններ՝ դրանով իսկ նպաստելով նաեւ երկրի տնտեսական զարգացմանն ու ժողովրդի բարօրութեանը։ Հայերի մէջ կային նշանաւոր դիւանագէտներ, իրաւաբաններ, բժիշկներ, մշակոյթի գործիչներ, ովքեր նպաստեցին Հնդկաստանի զանազան բնագաւառների զարգացմանը։ Իսկ Յովհաս Փանոս Քալանթարի հետ կնքուած պայմանագրով հայերն անգլիացի վաճառականների նման նոյն իրաւունքներն ստացան։ Նրանք ազատ երեւոյթի իր-

բաւունք ունէին անգլիական բոլոր առեւտրական կեդրոններում, կարող էին ապրել ընկերութեանը պատկանող քաղաքներում եւ այլ վայրերում, դառնալ սեփականատէր, իրենց կրօնական գաղափարները բաւարարելու համար եկեղեցիներ չինել, առեւտրական բեռներն առանց մաքսի տեղափոխել անգլիական նաւերով, եւն. (Seth, էջ 231-244, Վահան Բալբուրդեան, *Համաշխարհային Առեւտուրը Եւ Իրանահայութիւնը 17րդ Դարում*, Թեհրան, 1966, էջ 221-223. նաեւ՝ Ա. Գ. Աբրահամեան, *Համառօտ Ուրուագիծ Հայ Գաղթավայրերի Պատմութեան*, Հտր. Ա., Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 457-460. նաեւ՝ Լէօ, «Հայկական Տպագրութիւն», *Երկերի Ժողովածու, Հինգերորդ Հատոր*, «Հայաստան» Հրատ., Երեւան, 1986, 512. նաեւ՝ Արշակ Ալպօյաճեան, *Պատմութիւն Հայ Գաղթականութեան, Հայերու Ծրուումը Աշխարքի Զանազան Մասերը. Գ. Նոր Դարու Սկիզբէն Մինչեւ Ի. Դարու Սկիզբը. Ա. Մաս Արեւելեան Գաղութներ*, Հտր. Գ., Գահիրէ, 1961, էջ 320-323, 337-361)։

[5] Երբ 1690ականներին անգլիացիները հաստատուեցին Կալկաթայում, նրանք ցանկանում էին գործակալատուն եւ մեծ ամրոց չինել՝ ապրանքներն ապահով պահելու համար։ Բայց դրա համար անհրաժեշտ էին հողակտորներ եւ ամենակարեւորը՝ մուղալ կայսեր արտօնութիւնը։ Անգլիացիները քաջ գիտակցում էին, որ մուղալի կառավարիչների մօտ իրենց համար կարող են բարեխօսել եւ միջնորդներ լինել միայն հայերը, ովքեր տարիների աշխատասիրութեան եւ հաւատարմութեան շնորհիւ վայելում էին տեղի կառավարիչների համակրանքն ու յարգանքը։ Ուստի ընտրութիւնը կանգնում է Խոջա Իսրայէլ Սարհադի վրայ։ 1698ին վերջինիս եւ արքայազն Ազիմ-ուշ-Շանի միջեւ բանակցութիւններով անգլիացիներին է վերապահւում Կալկաթայի երեք գիւղերի վարձակալման իրաւունքը։ Յետագայում նոյն այս վաճառական հայն իրեւ պատգամաւոր 1715ին Դելի գնաց եւ անգլիացիների համար կարողացաւ ձեռք բերել «Մեծ Ֆարմանը», որով Հնդկաստանի մէջ փաստօրէն հիմնադրուեց Բրիտանական կառավարութիւնը (Մեսրովբ Ց. Սէթեանց, «Հայերն Իբր Քաղաքական Ոտից Կայան Հնդկաստանի Մէջ. Խոջա Իսրայէլ Սարհադ», *Բազմավէպ*, Հտր. Ղե., 1937, թիւ 1, էջ 68-72. նաեւ՝ Տիգրան սարկաւագ Բաղումեան, «Նշանաւոր Հայ Վաճառականն Ու Դիւանագէտը՝ Խոջա Իսրայէլ Սարհադ», *Ազգապարտ*, թիւ 6, 2009, էջ 28-29)։

[6] Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանը հիմնադրուել է 1821ի Ապրիլի 2ին ջուղայեցի բարերարներ Աստուածատուր Մուրադխանեանի տեսիլքով եւ Մնացական Վարդանեանի անմիջական նախաձեռնութեամբ։ Նրանց նպատակն էր հայեցի եւ ազգային կրթութեամբ ապահովել հնդկահայ գաղութի զաւակներին։ Ճեմարանն իր պատմութեան ընթացքում գաղութի կեանքի նման ունեցել է վերելքի եւ անկման շրջաններ։ Տարբեր շրջաններում այստեղ են դաստիարակել նշանաւոր հայորդիներ Յովհաննէս Աղանուրեանցը, Յարութիւն Գալուստեանը, Մեսրովբ Սրկ. Թաղիադեանը, Յովհաննէս Աւդալեանը եւ Աստուր Կիւզէլեանը։ Ճեմարանի ականաւոր սաներից են Ժթ. դարի հայագէտ Մկրտիչ Էմինը, Թադէոս Աւետումեանը, Յարութիւն Տէր-Յովհաննեանցը, Մեսրոպ Սէթը, երուսաղէմի Հայոց Պատրիարք Կիւրեղ Բ. Իսրայէլեանը, Տ. Ներսէս Ա. Քհնյ. Ներսիսեանը եւ ուրիշներ։ 1953ին Ճեմարանին է միանում Դաւթեան Օրիորդաց Վարժարանը։ 1990ականներին աշակերտներ չլինելու պատճառով Ճեմարանը կանգնած էր փակման վտանգի առաջ։ Կալկաթահայերի եւ նախկին Ճեմարանականների նախաձեռնութեամբ եւ Արեւմտեան Բենգալիայի Բարձրագոյն Դատարանի որոշմամբ 1999ին Ճեմարանը յանձւում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տնօրինութեանը։ Վեհափառ Հայրապետի տնօրինութեամբ վերջին շրջանում բազմաթիւ փոփոխութիւններ են կատարուել այնտեղ. բարձրացել է կրթական մակարդակը, բարելաւուել են սաների կենցաղային պայմանները եւ Ճեմարանը վերագտել է իր երբեմնի ազգային նկարագիրը։ Այսօր այնտեղ ուսանում են շուրջ 80 սաներ՝ Իրանից, Հայաստանից եւ Իրաքից (Ճեմարանի մասին տե՛ս՝ Զ. Գ. Հանանեան,

Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանը 1821-1971, Թեհրան, Տպարան «Ալիք», 1971, էջ 9-96)։

[7] *Վերջին 5 տարիներին Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեամբ եւ Կալկաթայի Եկեղեցական Վարչութեան նախաձեռնութեամբ վերանորոգուել են Կալկաթայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին եւ Հայկական Ծերանոցը, Հիմնովին վերանորոգուել են Տինգրայի Ս. Երրորդութիւն եկեղեցին, բարեկարգուել է եկեղեցու տարածքը, կառուցուել է «Գարեգին Բ. Վեհափառի անուան բժշկական կենտրոնը։ Այս ընթացքում վերանորոգուել են Սէյդաբադի եւ Մադրասի Ս. Աստուածածին հայկական եկեղեցիները, Կալկաթայի հայկական ակումբը եւ Հայոց Մարդասիրական Ճեմարանի վարչական շէնքերը։ Յատուկ ուշադրութիւն է դարձուել նաեւ փոքրաթիւ հայերի ընկերային-տնտեսական պայմանների բարելաւմանը։*

[8] *Մուրշիդաբադը Բենգալիայի ամենահին քաղաքներից է՝ անկախ կառավարիչների վերջին մայրաքաղաքը եւ բրիտանացիների տիրապետութեան ժամանակ՝ առաջինը։ 1704ին Մուրշիդ Կուլիա խանի կառավարութիւնը Դաքքայից տեղափոխւում է Մաքսուդաբադ՝ վերջինիս տալով իր անունը։ Մուրշիդաբադ քաղաքը Գանգէսի վտակ Բհագիրաթիի հարաւային ափի վրայ է։ Ինչպէս ԺԸ.-ԺԹ. դարերում, այնպէս էլ այսօր այն մետաքսի արտահանման մեծ կենտրոն է, ունի նաեւ զարգացած գիւղատնտեսութիւն։ Այսօր մեծաւ մասամբ քաղաքի բնակիչները մուսուլմաններ են եւ հինդուներ։*

[9] *Աուրանգզէբը կամ Ալամգիր Ա.ն (ամբողջական անունը՝ Աբու Մուզաֆֆար Մուհիուդդին Մուհամմադ Աուրանգզէբ Ալամգիր) Մուղալ կայսրութեան վեցերորդ կառավարիչն է՝ Շահ Ջահան կայսեր երրորդ որդին, ով 48 տարիներ կառավարեց Հինդուստանը։ Նա շատ կրօնամոլ էր՝ հաւատարիմ իսլամական օրէնքներին։ Նրա կառավարութեան օրօք բազմաթիւ հնդկական տաճարներ քանդուեցին եւ եղծուեցին, ոչ-մուսուլմաններին պարտադրուեց իսլամական կրօնը։ Ազդուելով մուսուլմանական օրէնքներից՝ Աուրանգզէբն արգելեց արքունիքում երաժշտութիւնը, աքսորեց բազմաթիւ երաժիշտների, պարողների եւ երգիչների, երկրում դադարեցրեց ծաղկում ապրող մանրանկարչութիւնը, որոնք էլ բազմաթիւ խռովութիւնների պատճառ դարձան։ Նա իր երեխաներից չատերին եւ նրանց կանանց աքսորեց եւ բանտարկեց՝ իր կեանքի մայրամուտին մնալով միայնակ։ Մահացել է 1707ին Ահմէդնագարում՝ 90 տարեկան հասակում։*

[10] *Աբրահամեան, էջ 448-449. Նաեւ՝* Anne Basil, *Armenian Settlements in India*, Calcutta, 1969, էջ 34. Նաեւ՝ Seth, էջ 325։

[11] *Վկայութիւնը մէջբերել է Սէթն իր աշխատութեան մէջ, տե՛ս՝* Seth, էջ 325։

[12] *Այս մասին տե՛ս՝ Թովմաս Յօղամալեան, Նոր Ջուղայեցւոյ Պատմութիւն Հնդկաց, Մասն երկրորդ, Կալկաթա, Տպ. Ազգասէր Արարատեան, 1849, էջ 141-148. Նաեւ՝ Ալպօյաճեան, էջ 299-300։*

[13] *Աքբարի վարած այս իմաստուն քաղաքականութեան շնորհիւ հայերը մնայուն կապ հաստատեցին Ագրայի շրջակայքում եւ 1562ին կառուցեցին հայկական եկեղեցի, որ կանգուն էր մինչեւ ԺԹ. դարը։ Հայերի ներկայութեան մասին է վկայում նաեւ Ագրայի հայկական գերեզմանատունը։ Այս մասին տե՛ս՝ Աբրահամեան, էջ 447-8. Նաեւ՝ Ալպօյաճեան, էջ 299-301. Նաեւ՝ Բայբուրդեան, էջ 195. Նաեւ՝* Seth, էջ 2-3, 120-34։

[14] *Նշանաւոր այս հայ վաճառականին Յովսէփ Էմինը 1792ին Լոնդոնում տպագրուած Յովսէփ Էմին Հայի կեանքն ու Արկածները ինքնակենսագրական աշխատութեան մէջ անուանում է «կալկաթահայերի երկրային աստուած», որն էլ խօսուն վկայութիւնն է այն խորը յարգանքի, որ Յօղա Պետրոսն ունեցել է հնդկահայ գաղութում* (Amy Apcar (ed.), *Life and Adventures of Emin Joseph Emin 1726-1809 Written by Himself*, 2nd

edition, Calcutta, 1918, էջ 435. Նաեւ՝ Խօջամալեան, էջ 50-75. Նաեւ՝ Seth, էջ 343-56)։ Խոջա Պետրոսի տապանաքարի արձանագրութիւնը տե՛ս՝ Բաղումեան, էջ 8-9։

[15] Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. N 631, թ. 207ա։ Սրբազանի մէջբերած եկեղեցու արձանագրութեան որոշ հատուածներ ուղղել ենք՝ այն համեմատելով 1963ին Կալկաթայում լոյս տեսած գրքոյկի մէջ զետեղուած արձանագրութեան լուսանկարի հետ (*A Short History of the Armenian Apostolic Church of Holy Virgin Mary* (Saidabad, West Bengal), Calcutta, 1963, էջ 20)։

[16] Գրիգոր Յարութիւնեանը, հնդկական աղբիւրներում յայտնի է Գորգին Խան անունով։ Նա բենգալական բանակի հրամանատար է նշանակուել Բենգալիայի իշխան Միր Կասիմի կողմից՝ յամառ պայքար մղելով անգլիացի գաղութարարների դէմ։ Նրա առաջնորդութեամբ հնդկական բանակը բազում յաղթանակներ է տարել անգլիացիների դէմ։ Վերջիններս անգամ փորձել են կաշառել նրան, բայց հայ զօրավարն անպատուաբեր է համարել ուխտադրուժ լինելը եւ մերժել նման առաջարկները։ Նա գործօն մասնակցութիւն է ունեցել 1762-63ի հնդիկ-անգլիական կռիւներին։ Մահացել է 1763 Օգոստոսի 11ին դառնալով դաւադրութեան զոհ (Խօջամալեան, էջ 82-123. Նաեւ՝ Աբրահամեան, էջ 464-9. Նաեւ՝ Լէօ, էջ 518-9. Նաեւ՝ Ալպոյաճեան, էջ 340-1, 344-5. Նաեւ՝ Seth, էջ 384-418)։

[17] Բաղումեան, էջ 9։

[18] Մատթէոս Կարապետեանի մասին այս զրոյցները մեզ պատմել են ամերիկաբնակ նրա դուստրը՝ Լուսի Այվազեանը եւ այժմ Սէյդաբադում ապրող տարեցները։ Մենք մի քանի անգամ այցելել ենք երբեմնի հայաշատ այս քաղաքը եւ ամէն անգամ հպարտութիւն ապրել՝ տեղի բնակիչներից զանազան հետաքրքրական պատմութիւններ լսելով Սէյդաբադի Ս. Աստուածածին եկեղեցու վերջին խնամակալների մասին։

[19] Բաղումեան, էջ 10-11. Նաեւ՝ *Էջմիածին*, ԺԲ., 2006, էջ 124։

[20] *Ամբողջ Երկեր Տ. Թորգոմ Պատրիարք Գուշակեանի, Զ., Հնդկահայք, Տպաւորութիւններ եւ Տեղեկութիւններ (Պատկերազարդ)*, Երուսաղէմ, Տպ. Ս. Յակոբեանց, 1941, Դուրեան Մատենադարան, թիւ 21, էջ 170։

[21] A. Caro Martin, *The Armenian Community in India, Its Churches and Affairs*, Calcutta, 1958, էջ 41։

[22] *Armenian College Old Boy's Union Souvenir*, Golden Jubilee, 1909-1959, Calcutta, 1965, էջ 5. Նաեւ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. N 631, էջ 206-207։

THE ARMENIAN CHURCH OF SEYDABAD AND SOME OF ITS FAMOUS TOMBSTONES
(Summary)

TIGRAN BAGHUMIAN
tigransrk@yahoo.com

The State of Bengal has had a unique meaning in the life of Armenians in India, who started to live there in the early 17th century before the British. By the mid-18th century, Armenians had become a very active merchant community in Bengal. At first they settled at Saidabad, a suburb of Murshidabad, and in 1665, by virtue of a royal Farman issued by Mughal emperor Aurangzeb (1658-1707), they were granted a plot of land and were permitted to form a settlement.

In 1758 the Armenians built a church dedicated to St. Mary with money donated by Khoja Petros Arrathoon, a famous Armenian merchant and benefactor of the time.

The author reflects on the history of the Armenian Church and community of Saidabad, on the Armenian cemetery and quotes the lost inscription of the founding of the Church.

The author notes that Armenian tradesmen, clergymen and representatives of the community are buried in the Saidabad Church cemetery. The inscriptions of the gravestones of Mnatsakan Vardan, one of the founders of the *Hayots Martasiragan Djemaran*, of his wife Elizabeth and of three clergymen buried there are particularly mentioned.

The article gives an account of the last caretakers of this Armenian Church, Matheos and Mary Carapiet, and their generous activities to preserve the church and the Armenian spirit as well as the legendary stories told about Matheos by the locals.

ՀԱԼԷՊԻ ԳԱՆՁԱՏԱՆ ՍՐԲԱՁԱՆ ՄԱՍՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՄԱՄՆԱՏՈՒՓԵՐԸ[1]

ՎԱՐԴԻ ՔԷՇԻՇԵԱՆ
Vartyk@armenia.com

ՆԵՐԱԾԱԿԱՆ

«Գրեցաւ ժողովրդու գրգունքս ի մեծահռչակ քաղաքս որ է Բերիայ որ կոչի Հալ[է]պ ընդ հովանեաւ Սբ. Ա[ստուա]ծածնին, ի թուականութե[ա]ն Հայոց ՉՃՀԸ (1429/1329)[2], ի ներ եւ ի դառն ժամանակիս ի հայրապետութե[ան] տ[եառ]ն Յակոբայ եւ ի թագաւորութե[ա]ն տղայ Լեւոնի որդի Աւշին թագաւորի գրեցաւ ձեռամբ նուաստ եւ սուտանուն ք[ա]հ[ա]ն[ա]յի Ստեփանոսի. որք կարդայք կամ աւրինակէք մեղաց թողութի[ւն] խնդրեցէք մեղաւորիս եւ Ա[ստուա]ծ մեզ եւ ձեզ ողորմեսցի. ամէն...»[3]:

Ահա այն բանալի յիշատակարանը, զոր կը կարդանք 1329ին Հալէպ գրչագրուած ժողովածու մատեանի 177րդ թերթին վրայ: Հալէպահայ գաղութի սկզբնաւորման առումով ամենամեծ կարեւորութիւն ունեցող այս ձեռագիրը կը վկայէ, թէ ԺԳ.-ԺԴ. դարերուն արդէն, Հալէպի մէջ կար կազմաւորուած հայ գաղութ, որ ունէր իր ինքնուրոյն եկեղեցին: Թէպէտ պատմական անուղղակի տուեալները կը վկայեն, շատ աւելի վաղ ժամանակներէն ո՛չ միայն Հալէպի, այլեւ չրջակայ գիւղերու եւ բերդերու մէջ կայք հաստատած հայ բնակչութեան գոյութեան մասին, սակայն վերոյիշեալ գրաւոր վկայութիւնը ամէնէն վաւերականն է:

Ցայտնի է, որ Հալէպի հայկական գաղթօճախը կազմաւորուած է ԺԴ.-ԺԵ. դարերուն՝ հաւանաբար իբրեւ հետեւանք Արեւմուտք-Արեւելք ցամաքային առեւտուրի վերաշխուժացման[4]: Իբրեւ հայկական գաղթավայր ան առաւել կը նշանաւորուի Կիլիկիոյ Հայկական Թագաւորութեան անկումէն ետք (1375), երբ մեծ թիւով հայեր կայք կը հաստատեն Հալէպի մէջ:

Ցետագայ դարերուն հայութեան թիւը չարունակ կը համալրուի ինչպէս բուն Հայաստանէն, այնպէս ալ հայկական զանազան գաղթավայրերէ հասնող գաղթականական հոսանքներով: Հալէպի հայութիւնը թուային իր բարձրակէտին կը հասնի Ցեղասպանութեան տարիներուն, երբ բռնագաղթի ենթարկուած հայութիւնը ապաստան կը գտնէ Սուրիոյ՝ գլխաւորաբար Հալէպի մէջ:

Այսօր ալ, հին քաղաքի պարիսպներէն դուրս թաղամաս մը կայ, ուր ամբողջովին պահպանուած են միջնադարեան Հալէպի գոյներն ու նկարագիրը: Ճիտէյտիէ կոչուող ընդարձակ այս չրջանը, միջնադարուն բնակեցուած էր քրիստոնեաներով, ուր կը գտնուէին քրիստոնեայ տարբեր համայնքներու պատկանող եկեղեցիներն ու բնակարանները: Այստեղէն, միջնադարեան նեղ փողոցներէն մէկը դուրս կու գայ Սալիպէ (Խաչ) կոչուող թաղամասը, որուն կամարակապ սալայատակ նրբանցքներէն մէկը կ'առաջնորդէ դէպի հայոց Ս. Աստուածածին եւ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցիները: Միեւնոյն չրջափակի մէջ գտնուող այս մատուռ-եկեղեցիները, գոյութիւն ունեցած են հալէպահայ համայնքի կազմաւորումէն շատ առաջ, եւ կը կարծուի որ անոնք սկզբնապէս քրիստոնեայ այլ համայնքներու պատկանած են:

Հալէպի գաղութի յիրաւի դարաւոր՝ շուրջ եօթհարիւրամեայ պատմութիւնը կարելի չէ պատկերացնել առանց Հայ Առաքելական Համայնքին պատկանող Ս. Աստուածածին եւ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցիներուն։ Հալէպահայոց պատմութեան այնքա՛ն չաղախուած այս զոյգ եկեղեցիները, ներկայութիւն մը եղած են ո՛չ միայն իրենց հոգեւոր եւ նիւթեղէն իմաստով, այլեւ ապաւէն ու զօրաւոր պատուար հանդիսացած՝ հայրենի հողէն հեռու, այլակրօն միջավայրի մէջ ապրող հայութեան գոյատեւումին եւ ազգային ինքնութեան պահպանումին համար։ ԺԵ. դարէն սկսեալ Ս. Քառասնից Մանկանցը եղած է Բերիոյ Թեմի Առաջնորդանիստ եկեղեցին։ Որպէս Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմական կարեւոր կեդրոն, Ս. Քառասնիցը ժամանակ առ ժամանակ հիւրընկալած է Սսոյ կաթողիկոսները, որոնք երբեմն իբրեւ ապահով վայր կայք հաստատած են Հալէպի մէջ, այստեղէն ղեկավարած Սսոյ Աթոռի հոգեւոր գործերը։ Հոն կատարուած են եպիսկոպոսական ու կաթողիկոսական ձեռնադրութիւններ, մինչեւ իսկ Ս. Միւռոնի օրհնութիւն։

Ս. Քառասնից Մանկանց եկեղեցիին գաւիթը եղած է դամբարանը Հալէպի թեմակալ առաջնորդներուն, երբեմն ալ արժանայիշատակ անձերու, իսկ հին մատուռը եղած է վերջին հանգստարանը Կիլիկիոյ կաթողիկոսներ Ազարիա Ջուղայեցիի (1601), Պետրոս Կարկառեցիի (1608), Մկրտիչ Քեֆսիզեանի (1894)։

Տակաւին ԺԵ. դարուն, եպիսկոպոսի, հետեւաբար եւ թեմի, առկայութիւնը անկասկած հետեւանք էր մեծաթիւ հայ համայնքի գոյութեան։ Մինչեւ դարավերջ, հայերու թիւը այնքան բազմացած է Հալէպի մէջ, որ անհրաժեշտութիւն դարձած է ընդարձակ եկեղեցիի մը կառուցումը։ 1499-1501ին Հալէպահայ մեծատուն Ռէիս (տանուտէր) Իսայի միջոցներով կը կառուցուի դարպաս քաղաքականը՝ հայոց առաջնորդարանն ու ուխտաւորներու յատուկ հիւրատունը (հոգետուն), իսկ հին մատրան դէպի արեւմուտք ընդլայնումով՝ կը կառուցուի նոր՝ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցին։ Նոյն թուականին դէպի երուսաղէմ ուխտի ճանապարհին, Մովսէս վարդապետին ընկերակցող անանուն ուխտագնաց մը, չափածոյ յիշատակարան մը ձգած է ձեռագիր Գանձարանի մը մէջ։

Մովսէս վար[դա]պետն եւ ես ծառայն,
Եկայք յաշխարհս արեւմտեան։
Ձի տեսնցաք սբ. Յարութե[ա]ն.
Եկեալ հասաք տունըս Շամեան,
Հալապ քաղաք ի շահաստան։
Հանդիպեցաք ուրախութե[ան],
Եւ ցնծացաք հոգով լըման,
Ձի նոր շինեալ էր սբ. խորան,
Յանուն սրբոց Խ. (քառասուն - Վ.Ք.) Մանկան[5]։

Եկեղեցւոյ հիմնարկէքն ու անուանակոչութիւնը կ'առնչուի Դ. դարուն Սեբաստիոյ մէջ նահատակուած Քառասուն Մանկունք սրբացեալ զօրականներուն՝ Արեւելքի ամէնէն ժողովրդական սուրբերու յիշատակին հետ։

Ցիշեալ նախնական կառոյցը դար մը ետք՝ 1616ին կ'ընդարձակուի եւ հիմնովին կը վերակառուցուի արդեամբ՝ Ջուղայեցի նշանաւոր խոճաներ Պետիկ եւ Սանոս եղբայրներուն։ ԺԶ.-ԺԷ. դարերուն ամենատարբեր վայրերէ Հալէպ հա-

ած հայ խոճաներն ու վաճառականները, որոնք տիրապետող դիրքեր գրաւած էին միջազգային առեւտրատնտեսական յարաբերութիւններու մէջ, կ'առաջնորդէին եւ կը հովանաւորէին հալէպահայ հասարակական, եկեղեցական եւ մշակութային կեանքը։ Բնական է, որ նախնական անշուք եկեղեցին, անյարիր էր տեղւոյն բարգաւաճ հայութեան, յատկապէս երկրի առեւտրատնտեսական կեանքէն ներս վերելք ապրող մեծատուն խոճաներու ճաշակին ու պահանջներուն։ Այս շրջանին է, որ եկեղեցւոյ տարածքը ընդարձակուելով, նախկին եկեղեցիի հիւսիսակողմը կը կառուցուի երեք խորաններով՝ սիւնազարդ կամարակապ այժմու եկեղեցին։ Շինութեան ընթացքին անաղարտ պահուած են ինչպէս սկզբնական՝ հին մատուռը, այնպէս ալ 1499ին կառուցուած բաժինը[6]։

Հալէպահայ խոճաներն ու վաճառականները թանկագին սպասներով, ծիրանական առարկաներով եւ սրբանկարներով զարդարած են նորակառոյց եկեղեցին։ Պատահական չէ, որ ժամանակի բազմաթիւ ձեռագիր յիշատակարաններու մէջ Ս. Քառասնիցը կը յորջորջուի «երկնաւմամբ», «յոյժ գեղեցիկ եւ վայելուչ», «աստուածաբնակ եւ սրո[վ]բէագումար մէնաստան» բառերով[7]։ Սիմէոն Լեհացի, որ 1616ին երուսաղէմ ուղեւորութեան ճամբուն վրայ այցելած է Հալէպ, մեծ դրուատանքով կը պատմէ Հալէպի հայոց եկեղեցիներուն, յատկապէս նորակառոյց Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մասին. «...Սուրբ Աստուածածին եւ Սուրբ Քառասնից. եւ յայսմ ամի նոր նորոգած էր եւ մեծցուցած՝ լայն եւ ընդարձակ, գմբէթաշէն եւ սայլակապ, յոյժ գեղեցիկ եւ վայելուչ. եւ շինօղն էր խոճայ Սաւօս՝ եղբայր խոճայ Պէտիկին...»[8]։

Դառնալով Պետիկ եւ Սանոս Զելեպի եղբայրներուն անուան յիշատակութեան յաճախականութենէն, կը թուի թէ Ս. Քառասնիցը վայելած է յիշեալներուն առանձնայատուկ հոգածութիւնը եւ չռայլ մասնակցութիւնը եկեղեցւոյ կառուցման եւ բարեզարդման գործին։

Ս. Աստուածածին եւ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցիներուն կից գործած է դպրատունը, ժամանակի հասկացողութեամբ՝ ուսումնարան մը, որ յայտնի էր իբրեւ գրչութեան կեդրոն։ Բազմաթիւ վարպետ գրիչներ տքնած ու ձեռագիր մատեաններ օրինակած են այս դպրատան մէջ, նաեւ գրչութեան արուեստի գաղտնիքները փոխանցած իրենց աշակերտներուն։ Հալէպի գրչատան մէջ ստեղծուած են հարիւրաւոր ձեռագիրներ, որոնցմէ մեզի հասած են մօտ երկու հարիւր մատեաններ։ Անոնց մեծ մասը իրենց ստեղծման օրէն կը պահուին Ս. Քառասնից Մանկանց դիւանին մէջ, կարեւոր մաս մըն ալ ժամանակի ընթացքին ցրուած են աշխարհով մէկ եւ կը պահուին տարբեր մատենադարաններու եւ մասնաւոր հաւաքածոներու մէջ։

Միջնադարեան հայ Հալէպը նշանաւոր էր նաեւ գեղանկարչական ուրոյն դպրոցով, որ զարգացման բարձր աստիճանի հասած էր արեւելեան եւ արեւմտեան մշակոյթներու խաչաձեւումով եւ կը զանազանուի իր ինքնատիպութեամբ եւ արտայայտման եղանակներով։ Ս. Քառասնից Մանկանցի որմերն ու սիւները այսօր ալ կը զարդարեն հին եւ թանկագին սրբանկարներ, որոնց մեծ մասը գործն են հալէպահայ նկարիչներու։ Առանձնայատուկ հետաքրքրութիւն կը ներկայացնեն նաեւ Հալէպի հին ապարանքներուն մէջ գտնուող հայ վարպետներու վրձինին պատկանող փայտէ զարդանախշ որմնածածկերը։

Հինէն ի վեր միջազգային առեւտրատնտեսական յարաբերութիւններու մէջ կարեւոր հանգուցակէտ համարուող Հալէպ քաղաքը եղած է նաեւ արհես-

տագործութեան նշանաւոր կեդրոն։ Հալէպ հաստատուած հայերը նշանակալի դեր ունեցած են Սուրիոյ արհեստագործութեան զարգացման մէջ։ Անվարան կարելի է ըսել, որ միջնադարեան հայ հոգեւոր եւ նիւթական մշակոյթի գրեթէ բոլոր ճիւղերը՝ գրչութիւն, մանրանկարչութիւն, տաղերգութիւն, գիտութիւն, հայկական կիրառական արուեստի տեսակները, փոփոխութիւններով եւ փոխազդեցութիւններով հանդերձ, իրենց արտայայտութիւնը գտած են հալէպահայ մշակութային կեանքէն ներս։

Հալէպահայ խոճաներն ու վաճառականները, առեւտրաարհեստաւորական բարձր խաւի ներկայացուցիչները, ինչպէս եւ բարեպաշտ ժողովուրդի լայն խաւերը նիւթական մեծագումար նուիրատուութիւններով ո՛չ միայն սատարած են տեղւոյն եկեղեցիներուն, թանկագին սպաս եւ ծիսական առարկաներ նուիրաբերած անոնց, այլ նաեւ նպաստած են օտար երկնքի տակ հայկական աւանդական մշակոյթի զարգացման։

***

Դարերու ընթացքին Հալէպի զոյգ եկեղեցիներուն մէջ հաւաքուած գանձերը մեծ երկիւղածութեամբ պահուած ու պահպանուած են եկեղեցւոյ սպասաւորներուն կողմէ յաջորդ սերունդներուն փոխանցուելով իբրեւ թանկագին աւանդ։

Եկեղեցական, պատմական ու մշակութային այս թանկագին մասունքները ամփոփելու եւ հանրութեան ներկայացնելու անհրաժեշտութենէն մղուած, 1991ին Ս. Աստուածածին պատմական եկեղեցին (մատուռը) կը վերածուի գանձատուն-թանգարանի[9], որ ի յիշատակ Զարեհ Ա. կաթողիկոսին (1915-1963) կը կոչուի Զարեհեան։

Հալէպի Գանձատան մէջ ժողովուած են գեղարուեստական մեծ արժէք ներկայացնող հայ մտքի ու ոգիի արգասիք հանդիսացող աւելի քան 650 ստեղծագործութիւններ, եկեղեցական թանկագին սպասքի, նուիրական առարկաներու, զգեստներու, ձեռագործներու եւ սրբանկարներու բացառիկ հաւաքածոներ։

Տարբեր եղած է Գանձատան ցուցանմուշներուն ճակատագիրը, ինչպէս տարբեր է անոնցմէ իւրաքանչիւրին անցած ճանապարհը։ Հայ աւանդական արուեստի եզակի այս նմոյշները, որոնք այժմ տեղ գրաւած են Գանձատան մէջ, մեծ մասով պատրաստուած են Հալէպի արհեստանոցներուն մէջ, տեղւոյն լաւագոյն վարպետներուն կողմէ, եւ որ աւելի յատկանշական է անոնց մեծ մասը պատուիրուած են հալէպահայ բարեպաշտ ժողովուրդին կողմէ, յատկապէս Հալէպի եկեղեցիներուն նուիրաբերելու նպատակով։

Թանկագին այս իրեղէններու չարքին, նկատառելի թիւ կը կազմեն նաեւ դէպի Երուսաղէմ ուխտի ճամբուն վրայ Հալէպէն անցած հաւատացեալներուն նուէրները։

Գանձատան մէջ պահուող առարկաներուն կարեւոր մաս մը Հալէպ տեղափոխուած է տարբեր ժամանակներու ընթացքին, հայաչխարհի ամենատարբեր վայրերէն՝ Հալէպ հասած հայ գաղթականներու հետ, եւ այդ առումով հալէպեան հաւաքածոն առանձնայատուկ հետաքրքրութիւն կը ներկայացնէ, իբրեւ ազգագրական տարբեր խումբեր եւ միջավայրեր ներկայացնող գեղեցիկ խճա-

նկար։ Գանձատան հաւաքածոյին իւրաքանչիւր նմոյշը կը կրէ ինչպէս ազգագրական այս կամ այն շրջանի աւանդական արուեստի իւրայատուկ դրոշմը, այնպէս ալ զինք ստեղծող վարպետին գեղարուեստական ըմբռնումներուն կնիքը։

Եւ վերջապէս, իւրօրինակ այս հաւաքածոյին ամենանուիրական բաժինը կը կազմեն Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ եկեղեցիներուն պատկանող եկեղեցական առարկաներն ու ծիսական անօթները, որոնք փրկուած եւ մեծագոյն դժուարութիւններով Հալէպ փոխադրուած են Ցեղասպանութենէն ազատած հայ գաղթականներուն կողմէ։ Հալէպ ապաստան գտած հայեր, իրենց հայրենի եկեղեցիներուն, երբեմն ընտանիքներուն պատկանող սրբազան մասունքները նուիրաբերած, կամ ի պահ տուած են տեղւոյն եկեղեցիներուն։

Դարերու հոլովոյթին մէջ Հալէպի եկեղեցիներուն մէջ հաւաքուած եկեղեցական սպասքի եւ թանկագին առարկաներու հարուստ հաւաքածոն՝ տարբեր չափի եւ ձեւի նրբաշխատ խաչեր, հիւսկէնակերտ արծաթ, ոսկեզօծ աշտանակներ, անօթներ, սկիհներ, բուրվառներ, քչոցներ, ծնծղաներ, նրբագեղ ասեղնագործութիւններ, որոնք երբեմն զարդարած են հայրենի եկեղեցիներուն խորանները, այսօր կը պատմեն անոնց անցեալի փառքերուն ու չքեղութեան մասին։

Մինչ ցուցանմուշներ դառնալը, անոնք ո՛չ միայն ի պահ դրուած, այլեւ գործածուած են տեղւոյն եկեղեցիներուն մէջ. յատկապէս տօներու եւ յատուկ օրերու առիթներով՝ եկեղեցւոյ պահոցներէն հանուելով մաս կազմած են եկեղեցական արարողութեանց[10]։

Հալէպի Գանձատան հարստութիւններէն են մասունք պարունակող եկեղեցական տուփերն ու զարդերը, որոնց մեծ մասը իրենց ստեղծման օրէն պահուած են Հալէպի եկեղեցիներուն մէջ, ուրիշներ՝ այլուր ստեղծուած, երբեմն այլ եկեղեցիներու պատկանած, տարբեր ճանապարհներ անցնելով, ի վերջոյ իրենց ապահով ապաստանը գտած են Հալէպի մէջ։

Սոյն յօդուածով, կը ներկայացնենք Հալէպի Ջարեհեան Գանձատուն-Թանգարանին մէջ պահուող ամենահետաքրքրականՙ հայ աւանդական մշակոյթի պատմութեան, եւ մանաւանդ եկեղեցւոյ պատմութեան համար մեծ արժէք ներկայացնող մասունքներու եւ մանանաւուփերու հարուստ հաւաքածոն։ Հարկ է նկատել, որ սոյն աշխատութիւնըՙ սրբազան առարկաներու եւ մանանաւուփերու ամբողջական ներկայացում-նկարագրութեան առաջին փորձն է[11]։

ՍՈՒՐԲԵՐՈՒ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ ԵՒ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Հայ պատմագրութիւնն ու յատկապէս եկեղեցական գրականութիւնը հարուստ է հայոց մէջ ընդհանրացած սուրբերու, նահատակներու եւ վկաներու նուիրուած վարքագրութիւններով, ինչպէս նաեւ պատմաճանաչողական նշանակութիւն ունեցող երկերով, որոնց մէջ հայկական վանքերու եւ եկեղեցիներու մասին հարուստ տեղեկութիւններու շարքին, կը յիշատակուին նաեւ վանական այդ հաստատութիւններուն մէջ պահպանուած սուրբերու մասունքներն ու սրբազան առարկաները[12]։ Այս իմաստով մեծ աշխատանք կատարած է Հայր Տաճատ Եարտըմեան, որ այլազան աղբիւրներէ հաւաքած եւ ցանկագրած է Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մէջ պահուած սուրբերու

մասունքներուն եւ սրբազան առարկաներուն հարստութիւնը[13]։ Սակայն ինչպէս այս, այնպէս ալ միւս բոլոր աշխատութիւնները գուտ աղբիւրագիտական բնոյթ ունին, հետեւաբար զերծ են յաւելեալ մանրամասնութիւններէ եւ նկարագրականներէ. լաւագոյն պարագային կը նշուի անոնց գտնուած վայրը կամ պատկանած եկեղեցին, այլապէս առիթը պիտի ունենայինք համեմատելու, գուցէ նաեւ բացայայտումներ կատարելու, որովհետեւ բացառուած չէ, որ տարբեր աղբիւրներու մէջ յիշուած այս կամ այն սրբավայրին մէջ պահուող սուրբերու մասունքներէն առնուազն քանի մը հատը, տարբեր ճանապարհներով Հայէպ հասած են եւ այժմ կը պահուին տեղւոյն Գանձատան մէջ։

Մինչ նկարագրութեան անցնիլը, անհրաժեշտ կը նկատենք հակիրճ անդրադառնալ քրիստոնէական մտածողութեան մէջ խարսխուած սուրբերու եւ անոնց մասունքներուն հանդէպ յարգանքի եւ պաշտամունքի հաւատքի դրսեւորման։

Մասունք կը կոչուին մահացած կամ մարտիրոսութեան պսակ ընդունած սուրբին նիւթական-մարմնաւոր մնացորդները, ինչպէս նաեւ սուրբին անձին առնչուած իրերն ու առարկաները։

Քրիստոնեայ սուրբերու կամ մարտիրոսներու աճիւնները պաշտամունքի առարկայ դարձնելու աւանդոյթը սկիզբ առած է քրիստոնէութեան առաջին դարերուն։ Պատմական հնագոյն յիշատակութիւնը պահպանուած է *Մարտիրոսութիւնք Պողիկարպոսի* երկին մէջ (Բ. դար), ուր սուրբերու մասունքները կը գնահատուին «աւելի թանկագին, քան ամենաթանկագին քարը, եւ աւելի ցանկալի, քան ամենաազնիւ ոսկին»[14]։

Քրիստոնէութեան հալածանքներուն յաջորդող դարերուն, սուրբերու մասունքներու պաշտամունքը լայն տարածում գտած է ե՛ւ Արեւելքի, ե՛ւ Արեւմուտքի մէջ։ Մասունքներու պաշտամունքը առաւել զօրացած է կրօնական մաքառման շրջանին՝ Քաղկեդոնի ժողովէն ետք (451)։

Հռոմէական եկեղեցւոյ մէջ մասունքներու հանդէպ մեծարանքի դրսեւորումներ իւ յայտ եկած են Դ. դարէն սկսեալ եւ կ՚առնչուին ստորերկրեայ շիրիմներուն՝ կատակոմբներուն (երբ յատուկ արարողութեամբ մեծարուած են սրբացուած գերեզմանները)։ Հին ատեն սովորութիւն չկար սուրբերու մասունքները շարժական տուփերու կամ աջերու մէջ զետեղել. անոնք կ՚ամփոփուէին գերեզմաններու մէջ. նոյնիսկ փոքր մասունքներ տեղափոխելու պարագային յատուկ գերեզմաններ եւ գերեզմանաքարեր կը պատրաստուէին։ Ահա թէ ինչու միեւնոյն սուրբի անունով բազմաթիւ գերեզմաններ կը գտնուին աշխարհագրական տարբեր վայրերու մէջ[15]։

Ընդհանրապէս սուրբերու, նահատակներու կամ վկաներու մարմինները կը պահուէին հին վկայարաններու[16] մէջ։ Աւելի ուշ (Դ. դարէն սկսեալ), կը կառուցուին սուրբերու յիշատակին նուիրուած եկեղեցիներ կամ խորաններ, ուր եւ կը զետեղուին սիրուած սուրբերու մասունքներէն։ Այսպէս ահա, սուրբերու մասունքներ տարածուած են աշխարհի զանազան կողմերը եւ հաւաքուած քրիստոնէական հաւատքի հին կեդրոններու մէջ (Աղեքսանդրիա, Անտիոք, Հռոմ, Կոստանդնուպոլիս, Երուսաղէմ, Աթէնք, եւն.)։

Հայ եկեղեցւոյ մէջ սուրբերու մասունքներ պահելու աւանդոյթը նոյնպէս կ՚առնչուի Դ. դարուն։ Ըստ Ագաթանգեղոսի, Գրիգոր Լուսաւորիչ Կեսարիոյ

մէջ կաթողիկոս օծուելէ ետք, Հայաստան վերադարձին իր հետ բերած է Յովհաննէս Մկրտիչի եւ Աթանագինէս վկայի մասունքները եւ թաղած Եփրատ գետին մօտ, եւ այդ մասունքներուն վրայ կառուցած է եկեղեցի[17]։ Իսկ Ղազար Փարպեցի կը պատմէ, որ Վարդան Մամիկոնեանն ու հայ նախարարները երբ Պարսկաստանէն վերադարձած են Հայաստան, դիմաւորուած են սուրբ մասունքներով. «Եւ ելեալ ընդ առաջ նոցա դասք պաշտաւնէիցն Քրիստոսի, բերելով ընդ ինքեանս զնշան կենսատու խաչին եւ զնշխարս սրբոյ առաքելականն Գրիգորի...»[18]։

Աւելի ուշ, ինչպէս միւս եկեղեցիները, Հայ Առաքելական Եկեղեցին եւս որդեգրած է մասնատուփի սկզբունքը, որուն նախնական ձեւերը մարմինի մէկ մասի՝ առաւելաբար աջի նմանութեամբ պատրաստուած մասնատուփերն են։ Հինաւուրց աւանդոյթներ ունի Աջերու գործածութիւնը Հայ Եկեղեցւոյ մէջ։ Մաղաքիա Արք. Օրմանեան կ'ենթադրէ, թէ Աջերը եղած են մասնատուփերու եւ մասանց պահարաններու նախնական ձեւերը։ Աջը, որպէս այդպիսին պայմա-նական անուանում մըն է, քանի որ բազուկի տեսքով պատրաստուած արծաթէ կամ ոսկէ պահարանի մէջ կը դրուէին ընդհանրապէս սուրբի նշխարները։

Յաճախ կարելի է հանդիպիլ միեւնոյն սուրբի մէկէ աւելի աջերու կամ մարմինի այլ մասի նմանութեամբ մասնատուփերու, քանի որ մասանց յատուկ պահարաններու մէջ կ'ամփոփուէր սուրբերու մասունքի՝ աջի կամ մարմինի փոքր մաս մը միայն, մինչեւ իսկ փշուր մը։ Ցետագային կը կիրարկուին ճաճանչի, խաչի, արկղիկի եւ այլ ձեւի մասնատուփեր։

Հայ Եկեղեցին, իբրեւ մէկ մասնիկը Քրիստոսի տիեզերական ընդհանրական եկեղեցւոյ, բացառիկ արժէք եւ մեծարանք ընծայած է ո՛չ միայն հայ, այլեւ քրիստոնեայ այլ ազգերու եւ դաւանանքներու պատկանող սուրբերուն եւ անոնց մասունքներուն։ Եարտըմեան, սրբազան մասունքներուն նուիրուած իր աշխատասիրութեան մէջ դիտել կու տայ, որ հայերը ընդհանրապէս ուխտի կ'երթային ա՛յն սրբավայրերը, եկեղեցիներն ու վանքերը՝ ուր կը պահուէին այս կամ այն սուրբին մասունքները, եւ համբուրելով, երկրպագութիւն ընելով, մոմ վառելով ու ջերմեռանդ աղօթքներով ուխտ կը կատարէին[19]։

Ընդհանուր հաշուարկումի մը համաձայն, իւրաքանչիւր հայկական վանքի ու եկեղեցւոյ մէջ միջին հաշուով 10-20 մասունք կը պահուէր, ըստ այդմ 1915էն առաջ հայոց սրբավայրերու մէջ սրբազան մասունքներուն թիւը կը գերազանցէր երեսուն հազարը[20], որոնց մեծագոյն մասը կորսուած ու փճացած է, ինչպէս գիրենք պաշտպանող եկեղեցիներն ու վանքերը։

Բարեբախտութիւն պէտք է նկատել, որ Հալէպի հինաւուրց գաղութին մէջ դարեր շարունակ, նախանձախնդրութեամբ հաւաքուած ու պահուած են սուրբերու մասունքներ, որոնց հանրագումարը կը ներկայացնէ բաւական ճոխ հաւաքածոյ մը, որն իր հնութեան եւ քանակի տեսակէտով արժանի է յատուկ ուսումնասիրման։

Հալէպի Գանձատան մէջ համախմբուած մօտ երկու տասնեակ մասունքներու եւ մասնատուփերու գանձը, պայմանականօրէն՝ ըստ առարկայի բնոյթի, կարելի է բաժնել չորս խումբի՝ Աջեր, տարբեր չափի ու ձեւի խաչեր, խո-

բանազարդեր եւ արկղիկներ, որոնք յատկանշական օրինակներ են առնուազն ԺԷ. դարէն Ի. դար երկարող ժամանակաշրջանի հայկական արծաթագործութեան։

Այս նմուշներէն իւրաքանչիւրը կը հարստացնէ մեր ծանօթութիւնները մասունքներու առանձնայատկութիւններուն եւ հայ եկեղեցական արուեստի ճիւղերուն մասին։ Անոնց մէջ կան ե՛ւ քրիստոնէական ընդհանրական սուրբերու, ե՛ւ հայ եկեղեցւոյ սուրբերու մասունքներ։ Հալէպի Գանձատան մէջ կը պահուին՝ Ս. Թովմաս առաքեալի եւ Ս. Թէոդորոսի Աջերը, Ս. Ստեփանոսի, Ս. Յակոբոս Տեառնեղբօր, Ս. Յակոբ Մծբնացիի, Ս. Թէոդորոսի, Ս. Գէորգի եւ այլ սուրբերու պատկանող արբազան մասունքներ։

Անոնց աշխարհագրական տարածքը նոյնպէս ընդարձակ է. մեծ մասամբ Հալէպի, այլեւ Երզնկայի, Կարնոյ, Այնթապի, Ամիդի, հաւանաբար նաեւ Ջուղայի եւ կիլիկեան տարբեր բնակավայրերու մէջ ստեղծուած նմուշներ են, որոնք գաղափար մը կու տան հայկական ոսկերչական արուեստին վերաբերեալ ընդհանրապէս, եւ զարգացման բարձր աստիճանի հասած հայկական արծաթագործութեան տարբեր կեդրոններու չուրջ մասնաւորապէս։ Այս բոլորին մէջ առանձնայատուկ տեղ կը գրաւեն հալէպահայ արծաթագործութեան նմուշները։

Պէտք է նշել, որ հայկական արծաթագործութեան աւանդոյթները իրենց շարունակութիւնը գտնելով Հալէպի մէջ, հարստացած են նոր ձեւերով ու բովանդակութեամբ։ Հալէպի մէջ առաւել զարգացած էին սատէքեարութիւնը (ձոյլ ոսկին կամ արծաթը յղկելու, կռելու կամ այլ եղանակով կաղապարներու պատրաստում)։ Սխալայէճիութիւնը (զարդերու վրայ քարերու ագուցում), Հալէպի հայ արհեստաւորները համբաւաւոր էին չիֆթի՝ հիւսկէնակերտ զուգաթելի, հատիկազարդումի, արծնակիտումի, փորագրութեան եւ այլ մասնագիտացուած ճիւղերու մէջ, որոնց լաւագոյն օրինակներէն կը հանդիսանան Գանձատան մէջ պահուող կարգ մը նմուշներ։

Գանձատան հաւաքածոյին մաս կազմող նմուշներուն մէջ առաւել մեծ թիւ կը կազմեն խաչերը՝ իրենց բոլոր տեսակներով՝ խորանի կամ սեղանի, ձեռաց խաչեր, եւլն., տրուած ըլլալով որ խաչը եկեղեցական սպասքի ամենագործածական տարրերէն մէկն է, որ միաժամանակ ե՛ւ գործնական, ե՛ւ յարդարանքի նշանակութիւն ունի։ Առանձին խումբ մը կը կազմեն նաեւ խորանի զարդերն ու ճաճանչակերպ մասնատուփերը, ինչպէս եւ արկղիկի ձեւով պատրաստուած մասանց պահարանները։

Նմուշներուն մէկ մասը ունի արձանագրութիւններ, որոնք հետաքրքրական տեղեկութիւններ կը հաղորդեն ստեղծող վարպետին, պատուիրատուին, պատկանած եկեղեցւոյն, վայրին ու թուականին մասին. աւելի ստուար խումբ մը՝ բոլորովին զերծ է արձանագրութենէ կամ մասնակի տեղեկութիւններ կը հաղորդէ։

Այս հաւաքածոյի շարք մը նմուշներ կ'առանձնանան արուեստի կատարելութեամբ. լաւագոյններէն են՝ Ս. Ստեփանոս Նախավկայի մասունքով խորանի փոքր խաչը, 1803ին կարին պատրաստուած Ս. Թէոդորոսի մասունքով սեղանի մեծ խաչը, Տէր Դաւիթ քահանայի որդի՝ Բարսեղին համար 1660ին պատրաստուած մասնախաչը։ Ընտիր ձեւաւորում ունի 1668ին Հալէպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ նուիրաբերուած Ս. Գէորգի մասունքով խաչը։ Կա-

տարման վարպետութեամբ եւ նրբութեամբ աչքի կը զարնէ 1809ին Հալէպի մէջ պատրաստուած մասնատուփը եւ այլ մասունքի պահարաններ։ Վերջիններս ըստ հիմնականին արծաթէ են, մեծ մասամբ ոսկեզօծ, կան արծնապատ, կիսաթանկարժէք գունաւոր քարերով ընդելուզուած խաչեր, ճաճանչազարդեր, աջեր եւ այլ մասնատուփեր։

Նկատի առնելով այս առարկաներուն պատմական, եկեղեցական եւ մշակութային արժէքը, մասնագէտ ուսումնասիրողներու ուշադրութեան կը յանձնենք Հալէպի Ջարեհեան Գանձատան մէջ պահուող, իրենց հնութեամբ եւ կատարողական բարձր արուեստով ուշագրաւ մասնատուփեր, տալով իւրաքանչիւրին նկարագրականը։

ՍՈՒՐԲ ԱՋԵՐ

1. Ս. Թէոդորոսի Աջը

Հալէպի հաւաքածոյի նուիրական սրբութիւններէն են Ս. Թէոդորոսի եւ Ս. Թովմաս առաքեալի Աջերը։

Գանձատան հնագոյն նմուշներէն մէկը կը թուի ըլլալ Ս. Թէոդորոսի[21] Աջը (թիւ 335), որ նախապէս պահուած է Սըրբխոլը կամ Գորոբու Ս. Թորոս վանքին մէջ. յետագային մեզի անյայտ ճանապարհներով հասած է Հալէպ։

Հալէպի Գանձատան մէջ պահուող Ս. Թէոդորոսի Աջը արծաթեայ է, ոսկեզօծ ձուլածոյ, դրուագուած յաւելուածներով (երկայնքը՝ 24, լայնքը՝ արմունկի 7, իսկ դաստակի մօտ՝ 11 սմ.)։

Դատելով աշխատանքի պարզ եւ խստաբարոյ ոճէն կարելի է ենթադրել, որ գործ ունինք Աջերու նախնական օրինակի մը հետ։ Ան ձեռքի նմանութեամբ պատրաստուած մասնատուփ մըն է, որուն մէջ ըստ էութեան զետեղուած են նահատակ սուրբին մասունքները։ Միաձոյլ, անամէջ, բոլոր հինգ մատները իրարու փակած Աջի պարզունակ յօրինուածք մըն է ան։ Կոր գիծերով դրուագուած են եղունգները եւ յօդերուն հատուածները։ Դաստակը երիզող նեղ ծայրագօտիին վրայ փորագրուած է հետեւեալ արձանագրութիւնը. «ՍԸՐԲԽԼԵ ՍՔ. ԹԷՈ[ԴՈ]ՐՈՍՈՒ ՄԱՍ»։

Արձանագրութեան մէջ յիշուած այս «Սըրբխլե» անուանումը կը յուշէ, որ Ս. Թէոդորոսի Աջը նախապէս պատկանած է սուրբին յիշատակին կառուցուած Սըրբխլը Ս. Թորոս կամ Թէոդորոս վանքին։

Սըրբխլը Ս. Թորոս Վանքը կը գտնուի Բարձր Հայքի Երզնկա եւ Դերջան գաւառներու միջեւ, Երզնկա քաղաքի արեւելեան կողմը, Խնճորիկ գիւղին մօտ, կառուցուած ընդարձակ լեռնահովիտի մը վրայ։ Վանքը կոչուած է նաեւ Քորոփու կամ Գորորու վանք, Սրբխլը կամ Սրբըգլը Ս. Թորոս։ Աւանդութեան համաձայն, այս վանքը հիմնուած է իբրեւ վկայարան նահատակ Ս. Թէոդորոսի։ Մինչեւ ԺԹ. դարասկիզբ վանքը կանգուն եղած է, եւ կը պահպանուէր փոքրաթիւ միաբաններու կողմէ։ Հակառակ անոր որ, Ս. Թորոս կամ Թէոդորոսը եղած է հայ ժողովուրդի մէջ ընդհանրացած եւ սիրելի սուրբերէն, որուն յիշատակին բազմաթիւ վանքեր ու սրբատեղիներ կան զանազան վայրերու մէջ, սակայն մեզի ծանօթ աղբիւրներու մէջ կը յիշատակուի սուրբին մասունքը պարունակող միակ մասնատուփ մը, որ անցեալին պահուած է Սեբաստիոյ Ս. Նշան կամ Ս. Խաչ վանքին մէջ. «Մասն Սրբոյ Նահատակին Թէոդորոսի Աբեղայիճ.- Որդի Գոհարիճ նահատակին, Թէոդորոս Աբեղայն, միաբան Սրբոյ Նշանի Վա-

ցիցս, որ վկայեաց վասն հաւատոյ...»[22]։ *Ս. Թէոդորոսի Աջի այլ օրինակ՝ յայտնի չէ, հետեւաբար Հալէպի մէջ պահպանուող այս Աջը յատուկ հետաքրքրութիւն կը ներկայացնէ ո՛չ միայն հնութեան տեսակէտով, այլեւ՝ եզակիութեան։*

2. Ս. Թովմաս Առաքեալի Աջը

Գանձատան մէջ պահուող Աջերէն երկրորդը՝ Ս. Թովմաս առաքեալի[23] Աջն է (թիւ 549)։ Աջի վրայի արձանագրութենէն կը տեղեկանանք որ ան յիշատակ է ումն «Յամբեցի... վարդապետի», որ էր առաջնորդ «ընյն ուխտին»։

Աղբիւրներու համաձայն Ս. Թովմաս առաքեալի մասունքներէն անցեալին պահուած են Ս. Էջմիածնի վանքին եւ իր յիշատակին կառուցուած Ս. Թովմայի կամ Ագուլիսի վանքին մէջ, ընդ որում Ս. Թովմաս առաքեալի Աջի այլ օրինակ մը չէ յիշատակուած մեզի ծանօթ աղբիւրներու մէջ, ուստի այս պարագային եւս գործ ունինք Աջի եզակի նմոյշի մը հետ։

Հալէպ պահուող Թովմաս առաքեալի Աջը արծաթեայ է, ոսկեզօծ, ձուլածոյ, դրուագուած հատուածներով (երկայնքը՝ 23, լայնքը՝ արմուկի՝ 7, թաթի՝ մօտ 12 սմ.)։

Գանձատան իւրայատուկ նմուշներէն մէկն է ան, թէ՛ ոճի, թէ՛ բովանդակութեան առումով։ Ծօրինուածքը կը ներկայացնէ սնամէջ, միակտուր, ձեռքի նմանութեամբ պատրաստուած մասնատուփ մը, չորս մատները իրարու փակած, բթամատը՝ առանձին։ Մատները եւ եղունգները ընդգծուած են դրուագման եղանակով։ Արծաթը ժամանակի ընթացքին բաւական սեւցած է, Աջը օժտելով մուգ գոյնով։

Դաստակին արտաքին երեսին, թեթեւ բարձրութեան վրայ, գնդիկազարդ, նուրբ օղամանեակի մէջ զետեղուած է մասունքը։ Դատելով երեւոյթէն, մասունքը նախապէս զմռսուած եղած է, այժմ քայքայուած վիճակի մէջ է, նկատելի են խեժանման նիւթի եւ տեղ-տեղ կարմրաւուն կնքամոմի մնացորդներ։ Բազուկի վերի հատուածին վրայ փորագրուած է տերեւանման քառաթեւ խաչ մը, շրջապատուած մանր տերեւիկներէ կազմուած քառանկիւն շրջանակի մը մէջ։

Աջին ներքին երեսակողմին վրայ կը կարդանք հետեւեալ արձանագրութիւնը. «ՅԻՇԱՏԱԿ Է ՍՈՒՐԲ ԱՋՍ ԹՈՎՄԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՅԱՄԲԵՑԻ ՍԿԿ[24] (!) ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՍ Դ(Է)ՏԻՆ ԵՒ ՆՈՅՆ ՈՒԽՏՆ ԱՅՆ Ի ՊՐԻԽԱՅ (!) Ի ԹՈՒՎԻՆ ՌՄՀԹ» (1830)։

Ժթ. դարէն մեզի հասած Ս. Թովմաս առաքեալի այս Աջը, այն եզակի նմուշներէն է, ուր նախնական անաղարտութեամբ պահպանուած են վաղ քրիստոնէական շրջանի Աջերու որոշ առանձնայատկութիւնները։ Այս տեսանկիւնէն, Ս. Թովմաս առաքեալի այս Աջը կը յիշեցնէ Աջերու պարզագոյն օրինակները, որ կը վկայէ, թէ մասնատուփերու, տուեալ պարագային՝ Աջերու սկզբնատիպերը իրենց անխաթար արտացոլումը գտած են հայ արծաթագործութեան մէջ, գոյատեւելով մինչեւ ուշ միջնադար եւ աւելի ուշ ժամանակներ։

ՄԱՄՆԱԽԱՉԵՐ

3. Խորանի խաչ, Ս. Ստեփանոս Նախավկայի մասունքով

Հալէպի հաւաքածոյի հազուագիւտ նմուշներէն է Ս. Ստեփանոս Նախավկայի[25] մասունքը պարունակող խաչը (թիւ 424), որ աչքի կը զարնէ որքան ո-

ճական առանձնայատկութեամբ, նոյնքան իր գեղարուեստական արժանիքներով։

Բացառիկ վարպետութեամբ եւ նրբագեղութեամբ պատրաստուած այս մանախաչը հայկական արծաթագործութեան եւ ակնագործութեան զանազան հնարքներու գեղեցիկ զուգորդում մըն է։ Դժուար է որոշապէս ըսել իր տեսակին մէջ եզակի այս նմոյշին ստեղծման վայրը, որ անկասկած հայկական արծաթագործութեան աւանդաշատ կեդրոններէն մէկը ըլլալու է. ոճական որոշ առանձնայատկութիւններ հիմք կու տան ենթադրելու, որ Նոր Ջուղայի արծաթագործութեան բնորոշ օրինակ մըն է ան, եւ կ'առնչուի ԺԶ.-ԺԷ. դարերուն։ Հաւանաբար Հալէպ խարսխած «Ճօխացի» խոճաներէն մէկը նուիրաբերած է տեղւոյն եկեղեցւոյն։ Ըստ այս ենթադրութեան կը խօսի նաեւ այն, որ Ս. Ստեփանոս Նախավկան եղած է Նոր Ջուղայի մէջ առաւել տարածուած եւ սիրուած սուրբերէն։

Խաչը պատրաստուած է ձուլման եւ դրուագման արուեստով, զուգաթելի յաւելումներով։ Խաչը ապակեայ նուրբ շերտերէ կազմուած քառաթեւ է, զարդարուած մանր փիրուզներով (երկայնքը՝ 29, լայնքը՝ 11.5 սմ.)։ Սրագագաթ, ալեծեւ կտրուածքով թափանցիկ թեւերը առնուած են նուրբ, գրեթէ անտեսանելի շրջանակներու մէջ։ Իւրաքանչիւրին կեդրոնը, ուղղակի ապակիի վրայ ոսկեզօծ նուրբ օղամանեակի վրայ, ագուցուած են զմրուխտագոյն կանաչ քարեր։

Կեդրոնի՝ թեւերու հատման անկիւններէն դուրս կու գան կոր եզրագիծեր ունեցող չորս ճաճանչներ, որոնք յատուկ գրաւչութիւն տուած են խաչի յօրինուածքին։ Իր կարգին՝ ամբողջ քառաթեւը առնուած է փիրուզայեա նուրբ շրջանակի մը մէջ։

Խաչին կեդրոնը, փիրուզներով պատուած ոսկեզօծ օղամանեակի մէջ ագուցուած ապակիին ներքեւ դրուած է մասունքը, որուն չուրջ թուղթէ երիզի վրայ գեղագրով գրուած է. «Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ»։

Ապակիի, արծաթի, ոսկեզօծի եւ կապտականաչաւուն քարերու նուրբ համադրութիւնը, գունային, այլեւ որակական աշխուժութիւն հաղորդած են ընդհանուր յօրինուածքին, որ կը վկայէ ինչպէս զայն չինող վարպետին, այնպէս ալ պատուիրատուին նրբաճաշակութեան մասին։

Խաչաթեւին երկրորդ երեսը գրեթէ նոյնութեամբ աշխատուած է, փիրուզայեա երիզներով, կեդրոնը՝ մասնատուփի տեղը ծածկուած է արծաթի շերտով, կը պակսին արտաքին կողմի թեւերուն զմրուխտագոյն քարերը։

Բռնակը խաչին միացած է փոքր գունդով, երկուքն ալ մնասուած՝ հաւանաբար հարուածի հետեւանքով ճեղքուած են։ Բռնակը յարդարուած է պարզ ոլորապտոյտ կէտգիծ փորագրութեամբ, դիւրաւ կարելի է նշմարել որ կոթառը կը զիջի կատարման յղացքի եւ գեղարուեստի տեսակէտով։ Ամենայն հաւանականութեամբ յետագային վերաշխատուած է, որուն վրայ արձանագրուած է հաւաքածոյին հին թիւը. «թիւ 24, ծանր. 1804» եւ հին թիւ մը՝ «203»։

4. Խորանի խաչ՝ Ս. Գէորգի մասունքով

Ահա հաւաքածոյի մարգարիտը կոչուելու արժանի նմոյշ մը՝ Ս. Գէորգի[26] մասունքով[27] խորանի խաչը (թիւ 425), պատրաստուած Հալէպ, 1668ին։ Այն լաւագոյն օրինակ մըն է Հալէպի մէջ արհեստը արուեստի վերածած հայ վար-

պետներու բարձր համբաւեան։ Այստեղ կիրարկուած են հայ աւանդական ոսկերչութեան գրեթէ բոլոր ճիւղերը՝ ձուլում, դրուագում, դրոշմում, ոսկեզօծում, արծնակիտում։ Բոլորովին այլ ոճական սկզբունքներ ի յայտ կը բերէ Հալէպ ստեղծուած խաչի այս օրինակը։ Անոր գեղարուեստական եւ կառարողական առանձնայատկութիւնները կը վկայեն տարբեր ուղղութեան մը մասին. ուղղութիւն, որ առաւել կը մօտենայ Երզնկայի, Կարնոյ, Կեսարիոյ, եւ այլ կեդրոններու ոսկերչական արուեստի ոճաբանական սկզբունքներուն, եւ կը հաստատէ Հալէպի մէջ հայկական արծաթագործութեան արդասաւորման մասին։ Այս հանգամանքը ինքնին վկայութիւն մըն է հայկական բնակավայրերու եւ Հալէպի միջեւ մշտական առնչութիւններուն եւ առեւտրաարհեստաւորական խաւերուն դէպի Հալէպ անընդհատ հոսքին մասին։

Հայկական կիրառական արուեստի աքանչելի այս նմոյշը կը վկայէ ստեղծող ե՛ւ վարպետին ե՛ւ պատուիրատուին արուեստի բարձրաճաշակ ընկալումներուն մասին։ Նախաձեռնողն ու ոգեշնչողը անկասկած եղած է պատուիրատուն, ժէ. դարուն Հալէպի մէջ ապրած եւ ստեղծագործած նշանաւոր ծաղկող-նկարիչ՝ Խաչատուր Իրն (որդի) Մուրատ Պալին, որուն գեղանկարչական համբաւենէն օգտուած ըլլալու է վարպետ ոսկերիչը։

Մեր ուսումնասիրութեան առարկայ խաչը արծաթէ է, ամբողջովին ոսկեզօծ. կազմուած է երեք մասերէ՝ քառաթեւէ, կոթառէ եւ գունդի մանրիկէ (երկայնքը՝ 27.8, լայնքը՝ 12 սմ.)։ Ան սրասայր, եռագագաթ, ելուստաւոր քառաթեւ խաչ մըն է, որուն երեք թեւերը հաւասար, ստորին թեւը՝ քիչ մը աւելի երկար է։

Խաչին ամբողջ մակերեսը ծածկուած է բուսական զարդանախշերու ընտիր մշակումով՝ վարդեակներ, արմաւենիկներ, ոճաւորուած ծաղիկներ, որոնք իրենց պատկերագրութեամբ համահունչ են հայկական զարդարուեստի յայտնի տարրերուն։ Զարդանախշերուն յարդարանքը կատարուած է բարձրարուեստ հմտութեամբ. ամբողջ մակերեսը արծնապատուած է սեւի, գմրուխտի եւ փիրուզի գունային նուրբ անցումներով, որ գեղանկարչական երանգներով օժտած է խաչը։

Հայկական խաչքարերու ոճով պատրաստուած խաչի այս օրինակին յաւելեալ պերճութիւն հաղորդած են գեղարուեստական յարդարանքի մնացած տարրերը՝ խաչին չուրջբոլորը զետեղուած ճաճանչանման տերեւներն ու զարդապսակները։ Քառաթեւը կազմող չորս անկիւններէն դուրս կու գան չեղակի ճաճանչներ, նոյն ճաճանչանման ելուստները կը շարունակուին ստորին թեւին վրայ, աքանչելիօրէն ներդաշնակուելով հիմնական գաղափարին հետ։

Ճաճանչանման զարդերու յաւելուածներ կան նաեւ թեւերուն վրայ՝ ալ եւ ձախ կողմերը։ Ափսոս որ գեղակերտ այս զարդերէն քանի մը հատը ինկած են։ Չորս գլխածայրերուն վրայ, նոյնպէս եղած են զարդապսակներ, որոնցմէ միայն աջակողմեանը պահպանուած է։

Արտաքին երեսին վրայ՝ կեդրոնը փոքր բարձրութեամբ ապակիով ծածկուած տուփիկին մէջ ամփոփուած է սուրբին մասունքը, որուն չուրջը՝ թուղթէ երիզի վրայ գեղագիրով գրուած է «Ս. ԳԷՈՐԳ»։

Երկրորդ երեսը գրեթէ առաջինին կրկնութիւնն է՝ գեղեցկօրէն դրուագուած եւ արծնապատուած։ Կեդրոնական մասին վրայ պատկերուած է խաչ մը՝ աստիճանաբար լայնցող, ծաղկաթերթիկներ յիշեցնող քառաթեւ մը։

Բուն խաչը կոթառին միացած է զարդանախշ գեղեցիկ գունդով, որ հարուածէ վնասուած է, նկատելի են նաեւ վերանորոգութեան հետքեր։ Գունդին վրայ կը կարդանք հետեւեալ արձանագրութիւնը. ՅԻԾ[Ա]Տ[Ա]Կ Է ՍԲ. ԽԱՉՍ ՄՈՒՐԱՏ ՊԱԼՈՒՆ ԵՒ ՈՐԴՈՑՆ ԽԱՉԱՏՈՒՐԻՆ ՄԱՐԻԱՄԻՆ ԵՒ ՀՌԻՓՍԻՄԻՆ ԵՒ ԿՈՂԱԿՑՈՒՆ ՍՏՈՒ..... ԻՆ Ի ԴՈՒՌՆ ՍԲ. ՔԱՌԱՍՈՒՆՔ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԹՎԻՆ ՌՃԺԱ » (1662):

5. *Սեղանի մեծ խաչ Ս. Թէոդորոսի մասունքով*

Հալէպի հաւաքածոյի բարձրարուեստ նմոյշներէն է անկասկած Ս. Թէոդորոսի մասունքով սեղանի մեծ խաչը (թիւ 369), պատրաստուած Կարինի, 1803ին։ Վարպետն է դերջանցի Տէր Սարգիսը։ Արծաթեայ, ամբողջովին ոսկեզօծ այս չքեղ խաչը (երկայնքը՝ 31, լայնքը՝ 31 սմ.), աշխատուած է ձուլման ու դրուագման արուեստով, տեղ-տեղ փորագրութեան եւ զուգաթելի յաւելումներով եւ ունի հայկական ոսկերչութեան աւանդական դպրոցներուն բնորոշ յարդարանք։

Բուն օրինակը բաղկացած է հաւասարաթեւ լայնանիստ խաչէ. գլխաւոր այս խաչին մէջ տեղադրուած է մէկ այլ՝ հին խաչ մը։

Արուեստի գործ մը ըլլալու կոչուած այս մասնախաչը արժանի է յատուկ ուշադրութեան. աշխատանքի նրբութիւնը համապատասխան է պատկերուած նիւթի հարուստ բովանդակութեան։ Խաչը պատրաստող քահանայ վարպետը ո՛չ միայն տիրապետած է ոսկերչական արուեստի գաղտնիքներուն, այլեւ հնարամիտ լուծումներ տուած է առաջադրուած խնդիրներուն։

Դրուագման եղանակով իրականացուած նրբաճաշակ աշխատանք, համաչափութիւն եւ գեղեցկութիւն զարդանախշերու, պատկերներու եւ արձանագրութեան, փորագրուած՝ բազմահմուտ վարպետին կողմէ։ Խաչը ուշագրաւ է նոյնքան իր գեղարուեստական արժանիքներով, որքան՝ պատկերներուն սրբանկարային արժէքով. ակնյայտ է, որ զայն ստեղծող վարպետը ներշնչուած է հայ մանրանկարչութեան ու պատկերագրութեան աւանդոյթներէն։

Խաչի ձեւով պատրաստուած այս մասնատուփը, կը ներկայացնէ ընդգծուած համաչափութիւններով, լայնանիստ քառաթեւ մը։ Կեդրոնէն կը տարածուին ալիքաւոր, խոր կտրուածքներով չորս թեւերը. նոյն այս յարդարանքը կը շարունակուի խաչաթեւը կազմող չորս անկիւնները ամբողջացնող տարածութեան վրայ, ալեծեւ ճաճանչանման գեղապսակ կազմելով սոնակին շուրջ, որուն վրայ տեղադրուած են հայ ճարտարապետութեան եւ մանրանկարչութեան մէջ տարածուած՝ թեւաւոր հրեշտակներու գլխիկներ։ Բոլորը միասին սոնակին շուրջ պտտող ճառագայթներ կը յիշեցնեն, վերածուելով հայկականացած՝ սոնականման խաչի։ Ներքագեղ այս յարդարանքը խաչի յօրինուածքը օժտած է գեղարուեստական եւ իմաստային յագեցուածութեամբ։ Սոնակէն դուրս եկող ճառագայթները կը խորհրդանշեն աշխարհի յաւերժական պտոյտը, իսկ Տիրոջ հրեշտակները՝ կ՚իրականացնեն Աստուծոյ եւ մարդոց հաղորդակցումը քրիստոնէական տնօրինութեան մէջ։

Ամբողջ խաչը առնուած է հմտօրէն ոճաւորուած եռաչերտ երիզագօտիի մէջ, որ իրերայաջորդ հիւսակներու եւ տերեւիկներու շղթաներ կը գոյացնէ։

Արտաքին երեսի կեդրոնի յօրինուածքը՝ սրածայր եւ լուսաններով, խոշոր տերեւանման խաչ մըն է, որ չորս բեւեռներով ամրացուած է բուն խաչին։ Ըստ

էութեան չարժական այս խաչը միաժամանակ կը կատարէ ծածկոյթի դեր, մասունքը պարունակող խոռոչին համար։ Իրական անակնկալ մըն է բուն՝ անոմէջ խաչին մէջ տեղադրուած ձուլածոյ հին խաչը որ կը պարունակէ մասունքը՝ (ոսկորի կտոր)։ Ան բաց է, առանց ապակիի, նախնական ձեւով ամրացուած։ Պարզ, ուղիղ գիծերով ձուլածոյ այս խաչը չատ հին է, եւ համաձայն արձանագրութեան կ'առնչուի Ս. Թէոդորոսի նահատակութեան թուականին՝ 1187[28]։ Հին խաչին վրայ կը կարդացուին «ԽԱՉՍ ՇԻՆԵԱՑ...» բառերը, չարունակութիւնը գոցուած ըլլալուն, կարելի չեղաւ ընթեռնուլ։ Յարաբերաբար նոր ժամանակներու գործ հանդիսացող բուն խաչը, փաստօրէն որպէս մասնատուփ ծառայած է մասունք պարունակող հին խաչին համար։ Այդ կը հաստատէ նաեւ բուն խաչին վրայ գտնուող արձանագրութիւնը՝ խաչը չինուելու եւ հին խաչը՝ մասունքով հանդերձ, անոր մէջ ամփոփելու մասին։

Առաջին հայեացքով աննշան թուացող այս հնարանքը, արժանի է յատուկ ուշադրութեան։ Ան կը վկայէ խաչը կերտող վարպետին ստեղծագործ մտքին եւ գեղարուեստական ճաշակին մասին։

Չորս թեւագլուխներուն լայնադիր հարթութեան վրայ տեղադրուած բոլորակ պնակիտներուն մէջ պատկերուած են չորս աւետարանիչները, իրենց խորհրդանշաններով, իսկ կեդրոնական՝ մասունքը ծածկող խաչին վրայ, նոյնանման պնակիտի մէջ պատկերուած է Աստուածամայրը՝ մանուկ Քիսուսը գիրկը, երկուքն ալ թագակիր։

Ս. Կոյսը կը կրէ երկար պարեգօտ մը, գլուխէն վար իջած քողը ծածկած է ամբողջ մարմինը։ Քիսուս մանուկը ձախ ձեռքով բռնած է խորհրդանշական գունդը, իսկ աջով՝ երկար ցօղունով ծաղիկ՝ քրիստոնէական յաւերժական կեանքը խորհրդանշող դրախտի ծաղիկը։ Չորս թեւերուն վրայ, նոյնանման մետալիոններու մէջ կան չորս աւետարանիչներու կիսանդրիները՝ համապատասխան խորհրդանիշերով։

Վերի խաչաթեւի վրայ՝ բոլորակ պնակիտի մէջ պատկերուած է Ղուկաս Աւետարանիչը՝ լուսապսակով. դէմքին վրայ յատակ կ'երեւին նրբօրէն մշակուած դիմագիծերը եւ սրածայր կիսամօրուքը։ Աջին՝ կը տեսնուի Ղուկասի խորհրդանիշը հանդիսացող արծիւը, իսկ ձախ կողմը կը կրկնուի նոյն՝ ցօղունով ծաղիկը։ Կիսանդրիին վարի մասը կ'ընդելուզէն հագուստին խոշոր ծալքերը, որոնք երկնային ամպի տպաւորութիւն կը ստեղծեն։

Խաչի վարի թեւին նոյնանման պնակիտի մէջ պատկերուած է Յովհաննէս Աւետարանիչը, լուսապսակ դէմքով, կիսամօրուս։ Աջ ձեռքին գիրք է, գոց վիճակով։ Աւետարանիչին ձախ կողմը պատկերուած է իր խորհրդանիշ ցուլը, իսկ աջ կողմը՝ ցօղունազարդ ծաղիկը։ Վարի մասը ծածկուած է ամպանման հագուստի ծալքերով։

Աջակողմեան թեւի պնակիտի մէջ պատկերուած է Մատթէոս Աւետարանիչին կիսանդրին՝ լուսապսակով. դէմքին ուրուանկարը՝ արտայայտուած գիծերով եւ կիսամօրուս։ Մատթէոսը աջ ձեռքով բռնած է բացուած գիրք, իսկ ձախով՝ փետուր մը։ Անոր ձախ կողմը՝ պատկերուած է Մատթէոսի խորհրդանիշ՝ հրեշտակը, իսկ աջին՝ ցօղունով ծաղիկ մը։ Կիսանդրիին վարի մասը ծածկուած է ամպանման հագուստի ծալքերով։

Ձախակողմեան թեւի պնակիտին մէջ պատկերուած է Մարկոս Աւետարանիչը, լուսապսակով եւ ընդգծուած սրածայր մօրուքով։ Աջ ձեռքին ունի փե-

տուր, իսկ ձախին՝ բացուած գիրք։ Հագուստի ծալքերուն մանրանկարը հոս ալ նոյն ձեւով կը կրկնուի։ Մարկոսին աջ կողմը կ'երեւի զինք խորհրդանշող առիւծի բաշը, երկուքին միջեւ՝ վերի մասը պատկերուած է առանց ցօղունի վարդածաղիկ մը։

Պնակիտները երիզուած են շեղակի տերեւիկներէ կազմուած, հատիկազարդ նրբագեղ շրջանակներով։ Այս նոյն նախշը կը շարունակուի կեդրոնի խաչը երիզող չքեղ գօտիին մէջ։

Խաչին հիմնական չորդարանքին մաս կազմող չորս թեւերուն վրայ պատկերուած աւետարանիչները կը խորհրդանշեն չորս Աւետարանները։

Ամբողջ յօրինուածքը չագեցած է հայկական մանրանկարչութեան եւ զարդարուեստին յատուկ գեղագիտական մտածողութեամբ։

Երկրորդ երեսակողմը նոյնպէս աչքի կը զարնէ կատարեալ մշակուածութեամբ ու ներդաշնակութեամբ։ Քառաթեւը եզերուած է նեղ՝ շեղակի գիծերէ կազմուած գօտիով, երիզագիծերու միջեւ տարածութիւնը ծածկուած է իրար յաջորդող ծաղիկներու եւ տերեւներու նախշերով։ Կեդրոնական հարթ տարածութեան վրայ, զարդանախշ շրջանակի մէջ պատկերուած է խաչուած Քրիստոսը, իսկ գլխուն վերեւ, ուղղանկիւն շրջանակի մէջ փորագրուած են՝ «Յ.Ն.Ի.Հ.» սկզբնատառերը (Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից)։

Տեսարանին մէջ առնուած են նաեւ խաչելութիւնը խորհրդանշող՝ արեւն ու լուսինը, ընդգծուած դիմագիծերով որ կը ծառայէ պատկերին իմաստային ամբողջականութեան։

Այստեղ եւս կը շարունակուի արտաքին թեւերուն տեղադրուած մետալիոններու պատկերագրական գաղափարը, մէկ տարբերութեամբ որ անոնց մէջ, փոխան չորս աւետարանիչներուն պատկերուած են չորս նոյնանման հրեշտակներ, հայ զարդարուեստի մէջ յաճախակի հանդիպող թեւաւոր հրեշտակներու գլխիկներ։

Քառաթեւին կեդրոնական տարածութեան ծաղկազարդ ճոխ յատակին վրայ կանոնաւոր գիծերով արձանագրուած է. «ՆԱԽԿԻՆ ՊԵՏ ՈՒՂ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ՍԲՅ. ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ԷՐ ՍԲՆ. ԹԷՈԴՈՐՈՍԻ, ՈՐ ՅԱՅՆ ՄԻՋՈՑԻՆ ՆԱՀԱՏԱԿ[Ե]ՑԱՒ ՓՐԿՉԻՆ 1187Ն ՅԵՏ ԱՅՆՐ ԹՈՒԻՆ ՓՐԿՉԻՆ 407ԻՆ (!) ԼԵՋՈՒ ՍՐԲՆ. ԹԷՈԴՈՐՈՍԻ ԱՌՆԻ Ի ՄԵՋ ՍԲ. ԽԱՉԻՆ: ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԴԵՐՃԱՆՑԻ ՏԷՐ ՍԱՐԳՍԻՆ ՁՍՈՅՆ ՍԲ. ԽԱՉՍ ՇԻՆԵՑԱՒ ԵՒ ՄԻՒՍ ՀԻՆ ԽԱՉՆ ՀԱՆԴԵՐՁ ՍԲ. ՄԱՍԱՄԲՆ ԱՄՓՈՓԵՑԱՒ Ի ԱՄԻՆ ՌՄԾԲ (1803) Ի ԿԱՐԻՆՈՅ ՔԱՂԱՔՆ»։

Վարը անվարժ գիրով աւելցուած է «ԱՐՁՐՈՒՄ (1803)», որ հաւանաբար ետքը աւելցուած է։

6. *Սեղանի խաչ՝ մասունքով*

Ոսկերչական արուեստի ընտիր ստեղծագործութիւն է 1660ին պատրաստուած մասունք պարունակող սեղանի այս խաչը (թիւ 301)։ Այն արծաթեայ է, ոսկեզօծ (երկայնքը՝ 16.7, լայնքը՝ 14.7 սմ.), ընդելուզուած կիսաթանկարժէք քարերով։ Պատրաստուած է ձուլման եւ դրուագման արուեստով, փորագրութեան եւ գնդիկագարդման յաւելումներով։

Կատարման վարպետութեամբ ու նրբագեղութեամբ արուեստի իսկատիպ գործ մըն է այս մասնախաչը։ Ան հաւասարաթեւ, հայկական զարդարուեստի

եւ արծաթագործութեան աւանդոյթներու վարպետ զուգորդութեամբ իրականացած խաչի ընտիր օրինակ մըն է։ Ընդհանուր յօրինուածքը դասական է, զուգաթեւի հմուտ մշակումով։

Աստիճանաբար լայնցող, սլացիկ համաչափութիւններով չորս թեւերը կը կազմեն սրածայր գոգաւորութեամբ քառաթեւ մը։ Ամբողջ խաչը երեսապատուած է, աւելի ճիշդ՝ հիւսուած է հայ զարդարուեստի մէջ յաճախակի հանդիպող, բարդ ուրուանկար ունեցող, իրարու մէջ միահիւսուած բուսական նախշերու՝ հիւսկէնակերտ վարդեակներու եւ տերեւիկներու արտակարգ մշակումով, որ ըստ էութեան կը կազմէ խաչին կարեւոր եւ հիմնական յարդարանքը։

Արտաքին չորս թեւերուն՝ լայն հատուածին վրայ, բարձրադիր օղամանեակի մէջ ագուցուած են հաւկթաձեւ խոշոր քարեր, իսկ դէպի կեդրոն՝ նեղ հատուածին վրայ փոքր չափի գունաւոր քարեր։ Խաչաթեւին չորս անկիւններուն միջեւ զետեղուած են փիրուզէ մանր ակեր։ Թեւերուն սրածայր գոյգ ծայրագլուխները եւս զարդարուած են փիրուզէ մանր ակերով։

Խաչին կեդրոնը՝ փոքր բարձրութեամբ ուղղանկիւն ճերմակ ապակիի տակ, զետեղուած է մասունքը։

Երկրորդ երեսակողմը ունի հարթ եւ ողորկ մակերես, որուն վրայ վարպետօրէն փորագրուած է հետեւեալ արձանագրութիւնը. «ԽԱՉՍ Յ[Ի]Շ[ԱՏԱ]Կ Է ՏԷՐ ԴԱՒԹԻՆ ՈՐԴՈՒՆ ԲԱՐՍԵՂԻՆ ԹՎ ՌՃՁ» (1660)։

Ցաւօք յիշատակութիւն չկայ մասունքին պատկանելիութեան մասին, եւ՝ թէ ու՛ր ստեղծուած է այս ընտիր գործը։ Սակայն դատելով աշխատանքին հնութենէն եւ ոճական առանձնայատկութիւններէն, կարելի է ենթադրել, որ ան խոր ընդհանրութիւններ ունի հայկական արծաթագործութեան նշանաւոր կեդրոններուն մէջ պատրաստուած կրօնածիսական առարկաներուն հետ, որոնց կարելի է հանդիպիլ զանազան թանգարաններու եւ ուղեգիրքերու մէջ։

7. Ջեռաց խաչ՝ մասունքով

Գեղարուեստական ուրոյն յարդարանք ունեցող խաչի օրինակ մըն է (թիւ 436) մասունք պարունակող ձեռաց խաչը (երկայնքը՝ 13.5, լայնքը՝ 6 սմ.)։ Արծաթեայ ոսկեզօծ այս մասնախաչը պատրաստուած է ձուլման եւ դրուագման եղանակով։ Բաղկացած է երկու մասէ՝ քառաթեւէ եւ կոթառէ։ Ձուլածոյ, ներքին կտրուածքներով, սրասայր գագաթներով խաչը, ուշագրաւ է որքան նրբագեղութեամբ ու պարզութեամբ, նոյնքան հայկական զարդարուեստին բնորոշ տարրերով։

Ընդհանուր յօրինուածքը կը յուշէ հայկական մանրանկարներու հետ որոշակի ընդհանրութեան մը մասին։ Խաչը գեղակերտող վարպետը ըստ երեւոյթին ներշնչուած է բնօրինակէ մը։ Իհարկէ հետաքրքրական է խաչին պարականոն կառուցուածքը, չորս խաչաթեւերուն կը փոխարինեն չորս շեղաձեւ ճաճանչաթեւեր, կազմելով շեղանկիւնաձեւ խաչ մը։ Ճառագայթանման թեւերը կը ներկայացնեն խոր դրոշմուներով, հետզհետէ լայնցող հնգանիստ ճաճանչազարդեր, ծայրագլուխները սուր աստիճանական կտրուածքներով։

Ճաճանչաթեւերուն միջեւ, չորս անկիւններէն իւրաքանչիւրին մէջ, զետեղուած են միանման մանրաքանդակներ՝ հրեշտակներու գլխիկներ՝ ամփոփուած վարդեակներէ կազմուած նախշերու մէջ, որոնք միասին ուղղահայ-

եաց եւ հորիզոնական գիծերով զարդանախշ խաչ մը կը ձեւակազմեն, ներդաշնակ համադրութիւն մը ստեղծելով ճաճանչախաչի յօրինուածքին հետ։

Այս բոլորը, ոճական առանձնայատկութեան հետ միասին, խորհրդապաշտական նշանակութեամբ օժտած են յօրինուածքը։

Խաչին արտաքին երեսին կեդրոնը, թեթեւ բարձրութեամբ օղամանեակի վրայ ամրացուած է բոլորակ ապակի, որուն տակ գետեղուած է մասունքը։ Խաչին երկրորդ երեսը կը կրէ գրեթէ նոյն յարդարանքը. կը բացակային հրեշտակներու մանրաքանդակները, իսկ կեդրոնը՝ մասունքը պարփակող շրջագիծը ծածկուած է արծաթի ուռուցիկ, ողորկ շերտով։ Խաչաթեւը կոթառին միացած է գնդանման անզարդ մասնիկով։

Կոթառին վրայ կայ արձանագրութիւն՝ «ֆիւ 25, ծանր. 40 կ.», որ հաւաքածոյին հին թիւն է։ Այս նմոյշը չունի որեւէ արձանագրութիւն, թէ որու՝ մասունքը պահուած է այնտեղ եւ թէ ե՛րբ եւ ուր պատրաստուած է մասնատուփը։

8. Ձեռաց խաչ Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի մասունքով

Գանձատան մէջ կը պահուին մասունք պարունակող քանի մը միանման արծաթէ ձեռաց խաչեր, պատրաստուած՝ եթէ ոչ միեւնոյն վարպետին ձեռքով, ապա նոյն արհեստանոցին մէջ։ Անոնք ամբողջութեամբ պատուած են զուգաթելով զարդարուած գունաւոր քարերով, եւ կը կրեն Հալէպի մէջ ծաղկած հայկական ոսկերչական արուեստի դրոշմը։

Ասոնցմէ է Յակոբ Մծբնայ Հայրապետի[29] մասունքով հիւսկէնակերտ խաչը (ֆիւ 288) որուն նմանօրինակներուն կարելի է հանդիպիլ ԺԸ.-ԺԹ. դարերու Հալէպի հայ վարպետներու աշխատանքներուն մէջ։

Մեր ուսումնասիրութեան առարկայ՝ Յակոբ Մծբնացիի մասունքը պարունակող խաչը արծաթէ է, ոսկեզօծ, աշխատուած հիւսկէն զուգաթելի եւ հատիկազարդման արուեստով, համօրէն ոճաւորուած վարդեակներու եւ արմաւենիկներու ծաղկային զարդանախշերով (երկայնքը՝ 24.5, լայնքը՝ 11 սմ.)։ Ոճական առանձնայատուկ համամասնութիւն կը կազմեն թեւերուն կիսաբոլոր, եռագագաթ վերջոյթները, քառաթեւը կազմող առնիին չորս անկիւնները յարդարուած են բուսական զարդանախշերէ կազմուած յաւելուածներով, որոնք յաւելեալ պերճութիւն կը հաղորդեն յօրինուածքին։

Արտաքին չորս թեւերուն, ծայրի լայն հատուածներուն վրայ, նուրբ շրջանակի մէջ ագուցուած են միջին չափի, ուռուցիկ կանաչ ակեր։ Իսկ կեդրոնը՝ բարձրադիր քառանկիւն տուփին մէջ, ապակեայ ծածկոյթի տակ ամփոփուած է մասունքը։ Մասունքին կցուած է թուղթէ բարակ երիզ մը, որուն վրայ կայ գեղագիր արձանագրութիւն. «Ս. ՅԱԿՈԲ ՄԾԲՆ[ԱՅ] ՀԱՅՐԱՊԵՏՆ»։

Երկրորդ երեսակողմը, նոյն հիւսկէն հատիկազարդ բանուածքն է, թեւերուն վրայ ագուցուած են նիստաւոր, ճերմակ ակեր, իսկ կեդրոնը՝ տեղադրուած է խաչուած Քրիստոսի մանրաքանդակը։ Խաչին երկու երեսները իրար միացած են հիւսկէն երիզագօտիով։ Խաչին գեղարուեստական յօրինուածքին աշխուժութիւն կը հաղորդեն անոր վրայ ամրացուած փայլփլուն քարերը։

Կոթառը՝ կլոր է, անզարդ եւ հարուածներէ մնասուած։ Անխնամ կերպով զօդուած այս կոթը անկասկած բուն խաչինը չէ, որ հաւանաբար կոտրուած եւ

յետագային ուրիշով մը փոխարինուած է։ Վրան փորագրուած է «52», որ հաւաքածոյի հին թիւն է։

9. Ձեռաց խաչ՝ Ս. Թովմաս առաքեալի մասունքով

Ցաջորդը՝ նոյնատիպ ձեռաց խաչ մըն է՝ Ս. Թովմաս առաքեալի մասունքով (թիւ 426)։ Խաչը արծաթէ է, ամբողջովին ոսկեզօծ, աշխատուած հիւսկէն գուգաթելի եւ հատիկազարդումի եղանակով, ԺԸ. դարու երկրորդ կիսուն, Հալէպի մէջ (երկայնքը՝ 27, լայնքը՝ 13 սմ.)։ Հալէպեան արծաթագործութեան յատկանշական նմոյշներէն է ան, բաւական նման ներկայ յօդուածի թիւ 8 եւ թիւ 10 խաչերուն. հաւանաբար նոյն վարպետի գործերէն է։

Ներբօրէն մշակուած հիւսկէն զարդանախշերը յաւելեալ շքեղութիւն տուած են Հալէպեան ոսկերչութեան այս ընտիր օրինակին։ Գեղահիւս վարդեակներու եւ տերեւիկներու ցանցկէնակերտ մակերեսը, յարդարուած է սրանկիւն նուրբ յաւելամասնիկներով։

Խաչաթեւին գլխածայրերը՝ թագերը կազմուած են եռագագաթ կիսակոր-ներով, որոնցմէ իւրաքանչիւրին կեդրոնը ագուցուած են գոյնզգոյն՝ դեղին եւ կարմիր քարեր։

Քառաթեւը կազմող չորս անկիւնները ամբողջացած են հիւսկէն զարդերով, որոնք ճաճանչաթեւերու տպաւորութիւն կը ստեղծեն։

Կեդրոնը՝ թեթեւ բարձրութեամբ օղամանեակի մէջ տեղադրուած է կլոր, թափանցիկ ապակի, որուն տակ ամփոփուած է մասունքը։ Մասունքը շրջապատող թուղթէ երիզի վրայ կ'երեւի գեղագիր արձանագրութիւնը. «ՍԲ. ԹՈՎՄԱՍ ԱՌԱՔԵԱԼ»։

Երկրորդ երեսակողմը, նոյն ցանցկէն, գնդիկազարդ հիւսուածքն է, կեդրոնը՝ զետեղուած է խաչեալ Քրիստոսի նրբաքանդակը։ Թեւերուն վրայ կան գոյնզգոյն ակեր։ Երկու երեսակողմերը իրար միացած են ցանցկէն խիտ հիւսուածքով։

Խաչը կոթառին միացած է հիւսկէն գեղեցիկ գունդով, իսկ կոթառը՝ ողորկ եւ անզարդ, վարի մասը լայնցող. վրան փորագրուած է «թիւ 4 ծանր. 220 կ», որ հաւաքածոյին հին թիւն է։

10. Ձեռաց խաչ՝ Ս. Յակոբ Տեառնեղբօր մասունքով

Մանանախաչի մէկ այլ օրինակ է Ս. Յակոբոսի[30] մասունքով ձեռաց խաչը (թիւ 427), յար եւ նման նախորդ՝ (ներկայ յօդուածի թիւ 8 եւ 9) երկու խաչերուն։

Խաչի այս օրինակը ի տարբերութիւն նախորդ երկուքին, ունի արձանագրութիւն, որմէ կը տեղեկանանք որ ան ստեղծուած է 1763ին, Հալէպ։

Այս խաչը արծաթէ է, ոսկեզօծ, նոյն հիւսկէն, գուգաթել, բանուածքով (երկայնքը՝ 27, լայնքը՝ 13 սմ.)։ Ամբողջովին ցանցկէն, գնդիկայեւ, բուսական զարդանախշերով նրբահիւս խաչ մըն է, եռաալիք, կիսակոր կտրուածքով թեւագլուխներով։ Աստիճանաբար լայնցող թեւերուն վրայ ագուցուած են գունաւոր (դեղին եւ կարմիր) քարեր։ Խաչին կեդրոնը՝ փոքր բարձրութեամբ տեղադրուած է հաւկթաձեւ ապակի՝ յատուկ շարժական փակիչով։ Ապակիին տակ, կ'երեւի մասունքը, թուղթէ երիզի մը ներքոյ, որուն վրայ գեղագրով գրուած է. «ՍԲ. ՅԱԿՈԲՈՍ ՏԵԱՌՆԵՂԲԱՅՐ»։

Երկրորդ երեսակողմը նոյն ցանցկէն բուսական նախշազարդ բանուածքն է, կեդրոնը՝ զետեղուած է խաչուած Քրիստոսի մանրաքանդակը, իսկ թեւերուն վրայ ամրացուած են կարմիր եւ կանաչ ակեր։ Երկու կողմերը իրարու միացած են հիւսկէնակերտ երիզով։

Խաչը կոթառին միացած է հիւսկէնակերտ չքեղ գունդով մը։

Մասնախաչի այս օրինակը, առանձնայատուկ է իր ծաղկազարդ կոթառով, որուն վրայ ոլորապտոյտ համաչափ գիծերու մէջ փորագրուած է. «ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ. ԽԱՉՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՈՐԴՈՅՆ ՏԻՐԱՑՈՒ ԱՆԴՈՒՆԻՆ ԴԱՏԵՐ ՍԷՅՏԷԻՆ ԿԵՆԴԱՆԵԱՑ ՈՐԴՈՅՆ ՏԻՐԱՑՈՒ ԾՐԾՕՍԻՆ ՅՈՎՍԷՓԻՆ ԿՈՂԱԿՑԻՆ Ի ԴՈՒՌՆ Ք[ԱՌԱՍՈՒՆ] ՄԱՆ[ԿԱՆՑ] ԵԿ[ԵՂԵՑԻՈՅ] ԹՎԻՆ ՌՄԺԲ» (1763)։

11. Ս. Բառնաբայ առաքեալի մասունքով փոքր խաչ

Մասնատուփերու մէկ այլ տեսակ է Գանձատան մէջ պահպանուող Ս. Բառնաբայ[31] առաքեալի մասունքը պարունակող փոքր չափի խաչը (թիւ 526), ստեղծուած՝ 1734ին, անյայտ վայրի մը մէջ, ի յիշատակ մեզի անծանօթ Ս. Յովհաննէս եկեղեցւոյ։ Փոքր չափի այս մասնախաչը, մասունքի պահարաններու ընդհանրացած ձեւերէն է, որ առաջին հայեացքով թէեւ լանջախաչ կը յիշեցնէ, սակայն անոր կիրարկումը սերտօրէն առնչուած է Աջերու հետ։ Աջի ձեւով պատրաստուած մասնատուփերը, յաճախ վարպետներու գեղագիտական ճաշակին եւ հնարամտութեան շնորհիւ, իսկ աւելի յաճախ՝ պատուիրատուներու հայեցողութեամբ, օժտուած են յաւելեալ պերճազարդերով, ինչպէս՝ մատանի, թեւնոց, բազկամանեակ, եւն. այդ զարդերու կարգին կը պատկանին նաեւ չղթայով թեւնոցին ամրացուած զարդախաչերը, որոնց մէջ սովորաբար կը զետեղուէին սուրբերու մասունքներ։ Ահա այսպիսի կախովի զարդախաչ մըն է Ս. Բառնաբայ առաքեալի մասունքը պարունակող վերոնշեալ խաչը։

Թեթեւակի յարդարուած արծաթէ ձուլածոյ խաչ մըն է այն, աշխատուած դրուագումի եւ զուգաթելի յաւելումներով (երկայնքը՝ 7.5, լայնքը՝ 5.2 սմ.)։ Խաչին ստորին թեւի ծայրապանակին ամրացուած չղթային առկայութիւնը կը յուշէ, թէ ան նախապէս կցուած եղած է առարկայի մը, ամենայն հաւանականութեամբ՝ Աջի մը։

Պարզ, ուղիղ գիծերով մասնախաչի այս օրինակը, օժտուած է հին գործերուն յատուկ նախնական խստաբարոյ պարզութեամբ։ Երեք խաչաթեւերը հաւասար են, իսկ ստորինը՝ մասամբ մը երկար, հարթ եւ ողորկ մակերեսով։ Արտաքին երեսին կեդրոնը, փոքր բարձրութեամբ տեղադրուած ապակեպատ շրջանակի մէջ ամփոփուած է մասունքը։

Խաչի միակ յարդարանքը քառաթեւին վերջնագիծերը ընդգծող պարզ, հիւսքի ձեւով երիզագօտին է։

Երկրորդ երեսակողմը, հարթ մակերեսի վրայ փորագրուած է հետեւեալ արձանագրութիւնը. «Յ[Ի]Շ[ԱՏԱԿ] ՍԲ. ՕՎԱՆԷՍ ԵԿԵՂԵՑՈՒՆ Է ԲԱՌՆԱԲԱՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՄԱՍՆ Է ԹՎ ՌՃՀԳ ԻՆ»(1734)։

12. Ս. Երմողայոսի մասունքով փոքր խաչ

Փոքր չափի զարդախաչի այլ օրինակ մըն է Ս. Երմողայոսի[32] մասունքով արծաթեայ խաչը (թիւ 526ա), որ 1772ին անյայտ վայրի մը Ս. Յովհաննէս եկե-

դեցիին նուիրաբերած է Տէր Ցոհան քահանան։ Դատելով յօրինուածքին բնոյթէն դժուար չէ գուշակել, որ ան նախապէս կցուած եղած է Աջի մը։

Խաչը կոփածոյ է, հարթ մակերեսով, հատիկազարդումի յաւելուածներով (երկայնքը՝ 9, լայնքը՝ 9 սմ.)։

Խաչի այս յօրինուածքը կը ներկայացնէ ալեձեւ, սրածայր կտրուածքներով քառաթեւ մը։ Մռնակին անկիւնները յարդարուած են ճաճանչներ չիշեցնող ելուստաւոր նախչերով։ Զորս թեւերուն կեդրոնէն՝ ուղղահայեաց եւ հորիզոնական, նեղ ուղիղ գիծով կ'անցնի գնդիկազարդ երիզ մը։ Կեդրոնաձիգ այս երիզները, իրենց կարգին կը կազմեն խաչ մը։ Առաջին հայեացքով պարզ, անդամ աննշան թուացող այս մանրամասնը, սակայն, յատուկ նրբագեղութեամբ օժտած է խաչի գեղարուեստական գաղափարը։

Կեդրոնը տեղադրուած բարձրադիր, նոյն՝ գնդիկազարդ երիզով տուփի վրայ, ագուցուած է ուղղանկիւն ճերմակ ապակի, որուն տակ կ'երեւի մասունքը (փշրանք)։

Երկրորդ երեսակողմը հարթ եւ ողորկ մակերեսի վրայ՝ մանր, անհամաչափ տառերով փորագրուած է հետեւեալ արձանագրութիւնը. «ԵՐՄՈՂԵԱ Ք[Ա]Հ[Ա]Ն[ԱՅ]ԻՆ ՍԱՍՆ Է Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ Տ[Է]Ր ՅՕՀԱՆԻՆ Ի ԴՈՒՌՆ ՍԲ. ՈՎԱՆԷՍ ՅԵԿ[ԵՂԵՂԵՑՈՒՆ] ՌՄԻԱ» (1772)[33]։

Խաչերու վերջին երկու օրինակները յատուկ հետաքրքրութիւն կը ներկայացնեն որպէս նոյն աշխարհագրական տարածքի գործեր, որ կը վկայէ արծաթագործութեան ուրոյն դպրոցի մը մասին, որն ըստ երեւոյթին, աւելի հակուած էր դէպի հին դասական օրինակները։

ՄԱՄՆԱՏՈՒՓԵՐ

13. *Մասնատուփ Ս. Գէորգ Զօրավարի*

Գեղարուեստական կատարելութեամբ եւ մշակման բացառիկ վարպետութեամբ յատուկ ուսումնասիրման արժանի է Ս. Գէորգի մասունքը պարունակող արծաթէ ոսկեզօծ այս մասնատուփը (թիւ 533), գեղակերտուած Հալէպի մէջ, 1809ին։ Եզակի կոփածոյ այս մասնատուփը, պատրաստուած է դրուագման, փորագրութեան եւ հատիկազարդումի արուեստով (երկայնքը՝ 16, լայնքը՝ 12 սմ.)։

Ան հաւկթաձեւ, ուռուցիկ ծածկոյթով մասնատուփ մըն է, ուր աչքի կը զարնեն զինք ստեղծող վարպետին նրբաճաշակութիւնն ու հնարամտութիւնը։ Ակնյայտ է, որ վարպետը ոչ միայն տիրապետած է ոսկերչական արուեստի զանազան հնարքներուն, այլեւ յաջողած է բացառիկ խորհրդաւորութեամբ օժտել մասնատուփը։

Արկղիկը գոցող արծաթէ պատեանը, որ ըստ էութեան մասնատուփն իսկ է, առնուած է ոսկեզօծ չքեղ երիզագօտիի մէջ։ Վարպետօրէն ոճաւորուած ծաղկային այս զարդագօտին, կազմուած է իրար յաջորդող գնդիկազարդ վարդածաղիկներու եւ տերեւիկներու չղթայով։ Տերեւիկներու կտրտուած եզրերը, առանձնայատուկ չքեղութիւն հաղորդած են ընդհանուր յօրինուածքին եւ ասեղնագործ երիզի մը տպաւորութիւնը կը ստեղծեն։

Պատեանի մակերեսը ծածկուած է հմտօրէն մշակուած բուսական նախչերու եւ փորագրուած գրութեան նրբագեղ համադրութեամբ։ Կեդրոնական գլխաւոր հատուածին վրայ պատկերուած է ծաղկաթերթերէ կազմուած հա-

ւասարաթեւ խաչ մը։ Թեւերուն բուսական այս նկարագիրը, կը շարունակուի նաեւ խաչի կեդրոնի յարդարանքին մէջ, ուր վանդակաձեւ գիծերը վարսանդաառէջք կը յիշեցնեն։ Թեւերուն անկիւններէն դուրս կու գան սրածայր տերեւիկներ, ներքին համամասնութիւն կազմելով ընդհանուր գեղարուեստական յղացքին հետ։ Խաչին չուրջբոլորը ծածկուած է նրբօրէն հիւսուած բաղեղազարդ տերեւիկներով։ Իսկ վերի եւ վարի կիսակլոր հատուածները կը լրացնեն ծաղկաթերթերու պսակները, գեղեցիկ ամպհովանիկներ կազմելով խաչին շուրջ։

Մաղկային այս նախշապարը երիզող երկշարք երիզագիծերուն մէջ, գեղեցիկ բոլորագիրով փորագրուած է հետեւեալ արձանագրութիւնը. «Յ[Ի]Շ[Ա]ՏԱԿ Է ՄԱՍՈՒ[Ն]ՔԸՍ ՍՐԲՈՅՆ ԳԻՎՈՐՔՅԵԱ ՍԱՍԸՆՑԻ Մ[Ա]Հ[ՏԵՍ]Ի ԿԱՍՊԱՐԻ ԴՍՏԸՐ ՄԱՐ[Ի]ԱՄԻՆ Ի ԴՈՒՌՆ ՍՐԲ. Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԱ ԵԿԵՂԵՑՈՒՆ. ԹՎԻՆ ՌՄԾԸ Իճ» (1809)[34]։

Մասնատուփին երկրորդ երեսակողմը՝ ամբողջ մակերեսը ծածկուած է ճերմակ, թափանցիկ ապակիով, որուն տակ տեղաւորուած է բամպակի մէջ ամփոփուած մասունքը (ոսկորի կտորներ), առնուած նոյն՝ արտաքին երեսի ծաղկային ոսկեզօծ երիզագօտիին մէջ։

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Սոյն յօդուածին ստեղծման եւ ցուցանմուշներուն տեղւոյն վրայ ծանօթանալու ընձեռուած առիթին համար, յատուկ շնորհակալութիւն կը յայտնենք Հալէպի Հայոց Թեմի Առաջնորդ Տ. Շահան Ս. Եպս. Սարգիսեանին։*

[2] *Թուականի այս ճշդումին մասին տե՛ս՝ Վարդի Քէշիշեան, «Մանիա Ղազարեան, Աչոտ Ստեփանեան, Հալէպի Հայոց Գեղարուեստը», Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԻԲ., 1999, էջ 407-420։*

[3] *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի Մ. Քառասուն Մանկունք Եկեղեցւոյ Եւ Մասնաւորաց, կազմեց՝ Արտաւազդ Արք. Սիւրմէեան, Հտր. Ա., Երուսաղէմ, 1935, էջ 214։*

[4] *Է.-Ը. դարերուն իրենց զարգացման գագաթնակէտին հասած «Մետաքսի ճանապարհով» իրագործուող տնտեսական եւ մշակութային փոխյարաբերութիւնները Ը.-Թ. դարերուն կը սկսին անկում ապրիլ, իրրեւ հետեւանք ծովային ուղիներու աշխուժացման եւ քաղաքական որոշ գործօններու։*

[5] *Յուցակ, էջ 151։*

[6] *Արտաւազդ Արք. Սիւրմէեան, Պատմութիւն Հալէպի Հայոց, Հտր. Գ., Քննական, 1355-1908, Փարիզ, 1950, էջ 253-254։*

[7] *Հայերէն Ձեռագրերի Ցիշատակարաններ, (1641-1660ԹԹ), Ժէ. Դար, Հտր. Գ., կազմեց Վազգէն Ցակոբեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1984, էջ 381 (եւ այլուր)։ Նաեւ՝ Սիմէոն Դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն, Տարեգրութիւն Եւ Ցիշատակարանք, ուսումնասիրեց եւ հրատարակեց՝ Հ. Ն. Ակինեան, Վիեննա, Մխիթարեան Տպ., 1936, էջ 318։*

[8] *Սիմէոն Դպրի, էջ 318։*

[9] *Նոյն չրջափակին մէջ երկու առանձին եկեղեցիներու աննպատակայարմարութիւնը, փոքրիկ եկեղեցին ընդարձակելու անկարելիութիւնը, ինչպէս նաեւ հայութեան այլ թաղամասերու մէջ կեդրոնացումը նկատի առնելով, օրուան ազգային-եկեղեցական իշխանութիւններու որոշումով, Ս. Աստուածածին անունով եկեղեցի մը կը կառուցուի հայաբնակ նոր թաղամասի մէջ, իսկ հինը կը վերածուի Գանձատուն-Թանգարանի (բացուած՝ 7 Մայիս, 1991), արդեամբ ֆրանսահայ բարերար Գէորգ Պագրճեանի։*

[10] Մեր քաղած բանաւոր տեղեկութիւններուն համաձայն, Գանձատունը կազմակերպելու աշխատանքներուն զուգընթաց, 1991ին աշխատանքային հրաւէրով Հալէպ ժամանած հայրենի արուեստաբան Մանիա Ղազարեան ղեկավարած է Գանձատան ցուցանմուշներու ցանկագրութիւնը, որոնց մէջ ցաւօք նկատեցինք բազմաթիւ սխալագրութիւններ։ Մինչ այդ, մասնակի փորձ մը կատարած էր Հալէպի պատմութեան մեծ երախտաւոր Արտաւազդ Արք. Սիւրմէեան։ Վերջինս իր Պատմութիւն Հալէպի Հայոցի Գ. հատորին մէջ (էջ 899-911) նկարագրած է Ս. Քառասնից եւ Ս. Աստուածածին եկեղեցիներուն մէջ պահուող ծիսական առարկաներու փոքր խումբ մը, առանց որոշակի ցանկագրումի կամ դասակարգումի։

[11] Այս յօդուածին Բ. մասով, յաջորդիւ կու տանք նոյն բնոյթի մնացեալ մասունքներու եւ մասնատուփերու նկարագրութիւնը։

[12] Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մէջ պահուող սրբազան մասունքներու եւ մասնատուփերու մասին հարուստ նիւթ կը պարունակեն հետեւեալ աշխատութիւնները.- *Աչխարհացոյց Վարդանայ Վարդապետի*, քննական հրատարակութիւն Հայկ Պէրպէրեանի, Փարիզ, Տպ. Արաքս, 1960. նաեւ՝ Հ. Գարեգին Վրդ. Սահակեան (Զարբհանալեան), *Ճաղաջս Բարեխօսութեան Սրբոց եւ Ջնչխարս Նոցա եւ Ջպատկերս Մեծարթոյ*, Վենետիկ, 1852. նաեւ՝ Հ. Վարդան Վրդ. Հացունի, «Սրբոց Նշխարները», *Բազմավէպ*, (1906-1907ի զանազան թիւերու մէջ). նաեւ՝ Գէորգ Մեսրոպ, «Թուրքիոյ Հայոց Կորուստները 1915-1922ին. Ազգապատկան Գոյքերու Տեսակէտով», *Հայաստանի Կոչնակ*, ԼԱ. տարի, Յունիս 27, 1931, թիւ 26, էջ 808. նաեւ՝ Առաքել Պատրիկ, *Պատմագիրք-Ծուշամատեան Սերաստիոյ*, Պէյրութ, 1947. նաեւ՝ Հ. Համազասպ Ոսկեան, *Վասպուրական-Վանի Վանքերը*, Ա. մաս, Վիեննա, Մխիթարեան Տպ., 1940. նաեւ՝ Յովհաննէս Եպս. Շահխաթունեանց, *Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ Հինգ Գաւառացն Արարատայ*, Հտր. Ա., Էջմիածին, 1842, եւն.։

[13] Հ. Տաճատ Եարտըմեան, «Հայաստանի Վանքերուն եւ Եկեղեցիներուն Մէջ Պահուած Սուրբերու Մասունքներ եւ Սրբազան Առարկաներ», *Բազմավէպ*, ՃՄԸ տարի, 2000, թիւ 1-4։

[14] *Հրիստոնեայ Հայաստան Հանրագիտարան*, «Հրիստոնեայ Հայաստան» հանրագիտարանի գիտախմբագրական խորհուրդ՝ Հ. Մ. Այվազեան (Գլխ. խմբագիր-տնօրէն) եւ ուրիշներ, Երեւան, Հայկական Հանրագիտարանի գլխաւոր խմբագրութիւն, 2002, էջ 690-691։

[15] Մաղաքիա Արք. Օրմանեան, *Միաբան Բառարան*, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1957, էջ 157-8։

[16] Նահատակ սուրբի նահատակուած կամ թաղուած տեղը կառուցուած մատուռ։

[17] Ագաթանգեղոս, *Հայոց Պատմութիւն*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1983, էջ 455։

[18] *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց*, Հտր. Բ. (Ե. դար), Անթիլիաս-Լիբանան, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ 2003, էջ 2252-2253։

[19] Մասունքներու պաշտամունքը առաւել լայն տարածում գտած է աւանդական հին եկեղեցիներու մօտ, ներառեալ՝ Հայ Առաքելական Եկեղեցւոյ, Հայ Կաթոլիկ Եկեղեցին նոյնպէս ընդունած է սրբազան առարկաներու պաշտամունքի այլեւայլ ձեւեր, մինչ Հայ Աւետարանական Եկեղեցիին դաւանաբանութիւնը կը մերժէ ընդհանրապէս սուրբերու միջնորդութիւնը եւ պաշտամունքը։

[20] Եարտըմեան, էջ 135։ Հմմտ.՝ Գէորգ Մեսրոպ, էջ 808։

[21] Թէոդորոս աբեղայ, որդի Գոհարինէ նահատակին (Գոհարինեանք՝ ԺԲ. դարու վկաներ, սեբաստացի չորս եղբայրներ՝ Գոհարինէ, Ռատիոս, Մամիդէս եւ Տուքիոս), երիտասարդ տարիքին աբեղայութեան կարգ ընդունելով, միաբանած էր Սեբաստիոյ Ս. Նշան վանքին։ Թէոդորոս աբեղայ, իսլամներու կողմէ ամբաստանուելով՝ կը

ձերբակալուի եւ հաւատուրացութեան կը բռնադատուի։ Սակայն մերժելով՝ կը բանտարկուի եւ խոշտանգումներու կ՚ենթարկուի։ Ապարդիւն կ՚անցնին նաեւ զինք բռնութեամբ մզկիթ մտցնելու բոլոր ջանքերը։ Թէոդորոս ցմահ հաստատ կը մնայ իր հաւատքին վրայ, մինչեւ որ չարաչար խոշտանգուելով կը սպաննուի։ Ըստ Յովհաննէս Սեբաստացիի, Թէոդորոսի նահատակութենէն ետք Սարդիս անուն հայազգի իշխանը, մեծամեծ նուէրներով կաշառելով ամիրան, երանելիին մարմինը մեծ պատիւով թաղել տուած է Սեբաստիոյ Ս. Նշան վանքի Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ, շիրիմին վրայ դրել տալով՝ «Այս է տապան հանգստեան սրբոյն Գոհարինեայ, որդւոյն Թէոդորոս նահատակին, ի թուին ՊԼԶ (1387) վասն նահատակութեան...» (*Յովհաննէս Սեբաստացի, Պատմութիւն Սեբաստիոյ*, աշխատասիրութեամբ՝ Բ. Լ. Զուգասզեանի, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1974, էջ 162)։

[22] *Մայր Ցուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հմր. Տասներորդ*, կազմեց՝ Ն. Արք. Պողարեան, Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1990, էջ 28։

[23] Թովմաս առաքեալը (կոչուած է նաեւ Երկուորեակ, Թադէոսի կամ մէկ այլ աշակերտի եղբայրը ըլլալուն համար), Գալիլիայէն էր։ Անոր մասին ակնարկութիւններ կան երեք Աւետարաններու (*Մատթ.* 10.1-4, *Մարկ.* 3.13-19, *Ղուկ.* 6.12-16), իսկ Յովհաննու Աւետարանին մէջ կը յիշատակուի Ղազարոսին յարութիւն տալու առնչութեամբ, երբ Քրիստոս աշակերտներուն առաջարկած է երթալ Բեթանիա՝ մեռած Ղազարոսը «արթնցնելու»։ Անձնուրաց եւ Քրիստոսին մինչեւ մահ հետեւելու պատրաստ Թովմասը սակայն, թերահաւատութիւն ցուցաբերած է յարուցեալ Քրիստոսի նկատմամբ եւ մինչեւ իր աչքով չտեսաւ յարութիւն առած Քրիստոսին մարմինի վէրքերը, չհաւատաց, բայց տեսնելէ յետոյ ըսաւ «...Տէր իմ եւ Աստուա՛ծ իմ» (*Յովհ.* 20.24-29)։ Քարոզած է Սուրբ-ստան, Պարսկաստան եւ Հնդկաստան, ուր - ըստ աւանդութեան - նահատակուած է՝ աղօթքի ժամանակ նետահարուելով։ Հայ եկեղեցին Թովմաս առաքեալին յիշատակը կը տօնէ Աստուածածնի Վերափոխման երրորդ կիրակիին նախորդող Շաբաթ օրը։

[24] Թերեւս սակաւակեա՞ց։

[25] Ս. Ստեփանոս Նախավկան Ա. դարու քրիստոնեայ հայրերէն է, առաջին վկան, որ իր արիւնը թափեց Քրիստոս Աստուծոյ Որդի վկայելով։ Մէկը Քրիստի հօթանասուն (կամ՝ հօթանասուներկու) աշակերտներէն, զոր ուրիշ վեց հոգիներու հետ, նախնական եկեղեցին կարգեց եկեղեցւոյ սեղանի սպասաւոր (սարկաւագ)։ Սուրբ Գիրքը անոր մասին կը վկայէ, որ ան լեցուած էր աստուածային «այր լի շնորհօք եւ զօրութեամբ, առնէր արուեստս եւ նշանս մեծամեծս ի ժողովրդեանն» (*Գործք* 6.8)։ Քարոզած է Քրիստոսը, այդ պատճառով արտասահմանէն եկած հրեաները Ստեփանոս Նախավկային դէմ գրգռած են Երուսաղէմի հրեայ ժողովուրդը, քահանաներն ու օրէնսգիրները եւ զինք յանձնած բարձրագոյն ատեանին։ Զինք քարկոծելով սպաննած են Երուսաղէմի մօտակայքը։ Յետագային, անոր մասունքները տեղափոխուած են Վենետիկ եւ դրուած S. Georgio կղզիին Մայր եկեղեցիին մէջ, ուր եւ ամէն տարի կը տօնուի սուրբին յիշատակը։

Հայ Եկեղեցին Ս. Ստեփանոս Նախավկայի յիշատակը կը նչէ Աւագ տօներու հետ՝ Դեկտեմբեր 25ին, կամ յաջորդ օրը (եթէ Դեկտեմբեր 25ը կիրակի է կամ պահոց է)։ Անցեալին Ստեփանոս Նախավկայի մասունքները գտնուած են Հայաստանի բազմաթիւ վանքերու եւ եկեղեցիներու մէջ։ Իր անունով վանքեր ու մատուռներ կառուցուած են հայաշխարհի զանազան վայրերու մէջ, որոնցմէ նշանաւոր են Ջուղայի Ս. Ստեփանոս Նախավկայ եւ Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայ վանքերը։

[26] Ս. Գէորգ Զօրավար, Գ.-Դ. դարերու վկայ, Հայ Առաքելական Եկեղեցիի տօնելի սուրբերէն։ Հասակ առած է քրիստոնեայ ընտանիքի մէջ։ Զինուորագրուելով, իր անօրինակ արիութեան եւ խամաոութեան շնորհիւ հռոմէացի Դիոկղետիանոս կայսրի օրօք (284-305) հասած է զօրավարի աստիճանի։ Երբ սկսած են քրիստոնեաներու

դէմ հալածանքները, Գէորգ պատուած է քաղաքին հրապարակին մէջ կախուած ընդդէմ քրիստոնէութեան արքունական հրովարտակը։ Այդ արարքին համար, ենթարկուած է չարչարանքներու, սակայն ոչ միայն չէ ուրացած հաւատքը, այլեւ Տէրունական խօսքով քաջալերած հայրենակիցները՝ կոչելով չվախնալ անոնցմէ, ովքեր իւ զօրու են մարմինը մեռցնել, բայց ո՛չ հոգին։

Բազմաթիւ աւանդութիւններ հիւսուած են Ս. Գէորգի մասին, որոնցմէ մէկուն համաձայն ան վիշապն սպաններով, ազատած է կոյս մը։ Ընդհանրապէս ընկալուած է իբրեւ վիշապասպան սուրբ։

Ս. Գէորգի անունով եկեղեցիներ ունին ե՛ւ հայերը ե՛ւ եւրոպացիք։ Հայ եկեղեցին անոր յիշատակը կը տօնէ Խաչվերացի երկրորդ Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը։

27 Ս. Գէորգ Զօրավարի մասունքներ պահպանուած են Հայաստանի բազմաթիւ եկեղեցիներու եւ վանքներու մէջ, տրուած ըլլալով, որ Ս. Գէորգ ամէնէն ժողովրդական սուրբերէն մէկն է։ Անոր մասունքները գտնուած են իր յիշատակին կառուցուած վանքերու եւ եկեղեցիներու, ինչպէս նաեւ զանազան սուրբերու անունը կրող սրբարաններու մէջ։ Ցայտնի են՝ Մուղնիի Ս. Գէորգ, Գոմաց կամ Տատրակարնակ Ս. Աստուածածնի (Վան-Վասպուրական), Լիմ Անապատի Ս. Գէորգ, Ս. Էջմիածնի, Ղուկ Ս. Գէորգ (Խարբերդ), Ջոջգլուխ Ս. Գէորգ վանք (Վան-Վասպուրական) եւ այլ վանքերու մէջ պահուող Ս. Գէորգի մասունքները։ Ուշագրաւ է, որ ԺԷ. դարուն Հալէպի մէջ նոյնպէս, հայ մարդը պահպանելով հայրենի երկրին դարաւոր աւանդոյթները, փորձած է նոր բնակավայրին մէջ ստեղծել հաւատքի եւ պաշտամունքի այն հարազատ միջավայրը, որ պիտի ըլլար իր հաւատքի ապաւէնը։ Ասոր վառ օրինակներէն մէկը կը հանդիսանայ Ս. Գէորգի մասունքը պարունակող մասնախաչը։

28 Թէոդորոսի նահատակութեան թուականը տարբեր աղբիւրներու մէջ տարբեր կը նշուի։ *Հայոց Նոր Վկաները (1155-1843)* (աշխատութեամբ Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, Վաղարշապատ, Տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1903, էջ 11) գիրքին մէջ ենթադրաբար 1156 կամ 1157 թուականը կը նշուի։ Ջամչեան (*Պատմութիւն Հայոց, Հտր. Գ.*, Վենետիկ 1786, էջ 178), այս վկային մասին կը խօսի 1204ի դէպքերը շարադրելէ ետք, ըսելով թէ նահատակութիւնը տեղի ունեցած է 40-50 տարի առաջ, Գրիգոր Տղայի կաթողիկոսութեան տարիներուն։ Ըստ առաջնոյն՝ (1204էն 40-50 տարի առաջ) Թէոդորոսը պէտք է նահատակուած ըլլայ մօտաւորապէս 1155-65ի միջեւ, որ կը համապատասխանէ *Հայոց Նոր Վկաներու* նշած թուականին։ Երկրորդ տուեալը, որ կը վերաբերի Գրիգոր Տղայի կաթողիկոսութեան տարիներուն, աւելի ուշ է՝ 1173-93։ Յովհաննէս Սեբաստացին իր *Պատմութիւնի* մէջ Թէոդորոսի նահատակութեան քանի մը թուական կու տայ, նախ՝ 1139, ապա՝ 1149, մինչ Սեբաստիոյ մէջ պահուող մասունքներու նկարագրութեան բաժնին մէջ նաեւ՝ 1387, որ հաւանաբար սխալմունքի արդիւնք է, եւ պէտք է ըլլայ՝ 1187։ Օրմանեան (*Ազգապատում*, 1396) Թէոդորոսի նահատակութեան թուականին համար հիմք ընդունած է *Հայոց Նոր Վկաներու* տուեալները։ Փաստօրէն մեր կողմէ ներկայացուող մասնախաչի վրայի արձանագրութեան մէջ նշուած է Թէոդորոսի նահատակութեան ստոյգ թուականը՝ 1187։

29 Յակոբ Մծբնացի համաքրիստոնէական սուրբ է։ Երիտասարդ տարիքէն ինքզինք նուիրած է ճգնողական-ասկետական կեանքի։ Ըստ հայոց Ճառընտիրներու՝ Գրիգոր Ա. Լուսաւորիչին հօրաքրոջ որդին էր ան, պարթեւական տոհմէ։ Ըստ վկայաբանութեան, հայոց Մեծն Խոսրով Ա. (211-259) թագաւորին սպանութենէն ետք, դայեակին կողմէ տարուած է կեսարիա, ուր եւ կրթուած է քրիստոնէական հաւատքով։ Ապա քոյրը գինք տարած է Պարսկաստան, ուր ապրած է արքունիքին մէջ։ Յետագային ընտրելով ճգնակեացութիւնը մտած է Մծբինի վանքերէն մէկը՝ Մարուգէ Ճգնաւորի մօտ։ Փորձած է բարձրանալ Արարատ լեռը՝ Նոյեան տապանը գտնելու, բայց Մասիսի լանջերուն յոգնած-ննջած է։ Ըստ աւանդութեան Աստուածոյ հրեշտակը անոր մատուցած է տապանէն կտոր մը, ուր եւ հիմնուած է Ակոռիի Ս. Յակոբ վանքը։

այստեղ ալ պահուած են Յակոբ Մծբնայ հայրապետի մասին ոսկորը եւ տապանի փայտի կտորը՝ իրարու չղթայով ամրացուած։ Այժմ Յակոբ Մծբնացիի Աջը, Նոյեան տապանի փայտի կտորին հետ կը պահուի Ս. Էջմիածնի վանքին մէջ։ Յակոբ Մծբնացի 338ին կազմակերպած է Պարսից արքայ Շապուհ Բ.ի զօրքերէն պաշարուած Մծբինի 70օրեայ պաշտպանութիւնը։ Կ'ենթադրուի որ մասնակցած է Նիկիոյ Տիեզերական ժողովին (325)։ Աւանդութիւններու համաձայն, հրաշքներ գործած է, բուժած է անդամալոյծներ, յարութիւն տուած մեռած մանկան եւն.։

Հայ եկեղեցին Յակոբ Մծբնայ հայրապետին յիշատակը կը տօնէ Յիսնակաց երրորդ կիրակիին յաջորդող չաբաթ օրը։ Հայ ժողովուրդի մէջ ամէնէն սիրուած սուրբերէն է ան։ Անոր յիշատակին հիմնուած են վանքեր եւ եկեղեցիներ, իսկ մասունքները տարածուած են բազմաթիւ սրբարաւայրերու մէջ։

30 Յակոբոս Տեառնեղբայրը Յիսուսի հօթանասուն աշակերտներէն է, Թադէոս առաքեալին եղբայրը, ծնած է Գալիլիա։ Կոչուած է Յակոբոս Կրտսեր՝ ի տարբերութիւն Յակոբոս Աւագ կամ Երէց առաքեալի։ Յակոբոս սուրբ էր ծննդեան օրէն եւ այդ պատճառով միայն անոր թոյլատրուած էր մտնել Երուսաղէմի տաճարի սրբարանը՝ ժողովուրդին համար Աստուծոյ աղօթելու։ Եղած է Երուսաղէմի Մայր եկեղեցիի առաջին եպիսկոպոսը։ Քարոզած է Եգիպտոսի եւ Պաղեստինի մէջ, նահատակուած է 63ին՝ քարոզած ատեն։ Աւանդութեան համաձայն Հերովդէսի հրամանով 44ին Երուսաղէմի մէջ գլխատուած Յակոբոս Աւագին գլուխը յանձնուած է Յակոբոս Տեառնեղբօր, որ գլուխը թաղած է իր տան պարտէզին մէջ։ Այս տան տեղը կառուցուած է Երուսաղէմի հայկական Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարը, ուր ցայսօր ի ցոյց կը դրուի Յակոբոսի գլխուն գերեզմանը, այսինքն՝ գլխադիրը։

Հայ եկեղեցին Յակոբոս Առաքեալի յիշատակը կը տօնէ Աստուածածնի վերափոխման երրորդ կիրակիին յաջորդող չաբաթ օրը՝ Շմաւոն (Սիմոն) առաքեալի հետ։ Յակոբոս Տեառնեղբօր մասունքները անցեալին պահպանուած են Մեծոփայ վանքին, Սաղմոսավանքին եւ Ս. Էջմիածնի վանքին մէջ։

31 Բառնաբաս առաքեալը Յիսուսի կրտսեր աշակերտներէն էր։ Անոր մասին ակնարկութիւն կայ Աստուածաշունչի մէջ՝ «Եւ Յովսէփ, որ կոչեցաւ Բառնաբաս յառաքելոց անտի, (որ թարգմանի որդի մխիթարութեան)» (Գործք 4։36)։

32 Ս. Երմոդայոս քահանայ, երկու Բիւրքէն ազատուածներէն էր եւ կը մնար թաքստոցի մէջ։ Հոգեւոր ուսուցիչը եղած է Պանթալէոն վկային (բժիշկ), որ հիւանդներ կը բժշկէր աղօթքով եւ Յիսուսի անունով։ Մաքսիմիանոս կայսեր հրամանով, Երմոդայոս եւ իր ընկերները նահատակուած են, անօրինակ տանջանքներու ենթարկուելով։

33 Հակառակ անոր որ թիւ 526 եւ 526ա երկու փոքր զարդախաչերը չղթայով մը իրար միացած են, սակայն ակնյայտ է, որ գործ ունինք երկու իրարմէ անջատ խաչերու հետ։ Այդուհանդերձ, այս զոյգ խաչերը ունին չատ կարեւոր մէկ ընդհանրութիւն. երկուքն ալ պատկանած են միեւնոյն եկեղեցիին, թէ յատկապէս ո՞ր Ս. Յովհաննէս եկեղեցիին, դժուար է ըսել, քանի որ հայաշխարհի մէջ այդ սուրբին անունով եկեղեցիները բազմաթիւ եղած են։

34 Սաունցի Գասպարին եւ անոր ընտանիքի անդամներուն անուններուն կը հանդիպինք նաեւ Հալէպի գանձատան մէջ պահուող այլ առարկաներու, ինչպէս՝ 1802ին Հալէպ պատրաստուած արծաթէ բուրվառին, 1822ին արծաթէ կողքով Աւետարանին (1822) վրայ, որ կը վկայէ թէ բարեպաշտ այս ընտանիքը, պարբերաբար թանկագին նուէրներ մատուցած է տեղւոյն եկեղեցիներուն։ Յատկանշական է, որ նշուած բոլոր առարկաները պատրաստուած են Հալէպի մէջ, յատկապէս տեղւոյն Ս. Աստուածածին եւ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցիներուն նուիրաբերելու նպատակով։

THE SACRED RELICS AND SACRED BOXES OF THE ZAREHIAN TREASURE HOUSE OF ALEPPO
(Summary)

VARTY KESHISHIAN
Vartyk@armenia.com

The author sheds light on 13 relics and sacred vases which were salvaged and safeguarded in the Churches of Holy Forty Martyrs' (*Serpots Karasnits Mangants*) and St. Mary (*Sourp Asdvadzadzin*) of Aleppo and now constitutre a precious part of the Zarehian Treasure House (*Zarehian Kantsadoun*) of Aleppo.

Keshishian assesses the historical, ecclesiastical and cultural value of these items in the context of the history of the Armenians of Aleppo, the Christian conceptualisation of saints and sanctity, and the reverence and worshipping that exists among Christians towards these sacred relics.

Among the items described are holy hands, crosses of different shapes and sizes, decorative ornaments of the altar and sacred boxes. The author details their inscriptions and motifs and traces their origins.

This collection presents different schools and styles of Armenian silversmithing and includes remarkable samples that extend from the 17th to 20th century. Though most items were produced in Aleppo, items of other Armenian-inhabited areas are abundant too. They raise unique interest since they represent different ethnographic groups and regions.

These items give an idea of both the high quality and the level of artisanship of goldsmithing and silversmithing in the different regions of Western Armenia and Cilicia.

In fact, the most significant part of the collection is the objects that belonged to the churches of Western Armenia and Cilicia which were rescued and brought to Aleppo by the Armenian genocide survivors with great sacrifice. Each of these items bears testimony to the ruined and deserted Armenian churches in Western Armenia and Cilicia.

Equally important are the relics produced in Aleppo as they represent high quality samples of Armenian silversmith artisans of Aleppo. The traditions of Armenian silversmith artisans were continued in Aleppo and further developed and enriched with new content and style, thanks to the Aleppine Armenian artisans who transformed this artisanry into an art.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

ՍԱՄՈՒԷԼ ՊՕՂՈՍԵԱՆ
Samvelp77@mail.ru

Պետականութիւն չունեցող հայ ժողովրդի համար Ի. դարի սկիզբը լեցուն էր արհաւիրքներով, իսկ անհատ բարերարների ջանքերով անհնար էր դարմանել վէրքերը, ուստի բարեգործական լուրջ կազմակերպութիւնների ստեղծման անհրաժեշտութիւն էր առաջացել։ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան ստեղծումը Թիֆլիսում (1881-1921), Հայոց Մարդասիրական Ընկերութիւնը Բաքուում, բաւական արդիւնաւէտ գործունէութիւն ծաւալեցին Անդրկովկասում հայկական դպրոցների ցանցը ընդլայնելու առումով, աջակցեցին մշակութային ու աղքատախնամ ձեռնարկներին, սակայն դրանք չվերածուեցին համազգային կառոյցների, քանի որ կովկասի ռուսական իշխանութիւնները չթոյլատրեցին գործունէութիւն ծաւալել Անդրկովկասից դուրս։ Այս շրջանում ստեղծուող բարեգործական կառոյցները, փաստօրէն, գործում էին ոեւէ պետութեան տարածքում եւ ի վիճակի չէին համահայկական խնդիրներ լուծել։

Մշակութային ու բարեգործական ուղղուածութեամբ ապակուսակցական, համազգային հզօր ընկերութիւն ստեղծելու գաղափարը հայ գործիչների շրջանում բաւական երկար ժամանակ լուրջ քննարկումների առարկայ էր։ Ժամանակը, որ այդ շրջանում հայ մշակութային ու յատկապէս կրթական կեանքի զարգացումը կապուած էր եկեղեցու, բարեգործական կառոյցների եւ բարերար անհատների աջակցութեան։

Հայ բուրժուազիայի ու մտաւորականութեան մի պատկառելի հատուածը քաղաքական ու յեղափոխական պայքարի միջոցով հայութեան վիճակը բարելաւելու գաղափարը անօգուտ, նոյնիսկ վնասակար էր համարում, քանի որ մտահոգուած էր, որ դա նոր գրգռութիւնների ու ջարդերի պատճառ կարող էր դառնալ։ Նման պայմաններում օտարութեան մէջ գործող, ազգի ճակատագրով մտահոգուած հայ գործիչներից չատերը եկել էին այն եզրակացութեան, որ հայրենի հողում բնակուող հայութեան վիճակը կարելի է բարելաւել միայն հայկական բարեսիրական միութիւն ստեղծելու միջոցով, որը չէր ունենալու քաղաքական ուղղուածութիւն, միաւորելու էր հայ ժողովրդի բոլոր խաւերին ու կուսակցութիւններին, աջակցելու էր հայութեան մտաւոր ու անտեսական վերելքին։

Այդ առթիւ Լեւոն Զորմիսեանը (1896-1980) *գրում է, որ հայ բուրժուազիան դատապարտելի էր գտնում ոչ միայն յեղափոխական մեթոդը, այլ ընդհանրապէս քաղաքական գործունէութիւնը, եւ նրանց մէջ տարածուած էր այն մտայնութիւնը, թէ կարելի է արեւմտահայութեան վիճակը բարելաւել առանց հրապարակային, յստակ քաղաքական ծրագիր կազմելու եւ դրան հետեւելու, ապաքաղաքական գործունէութեամբ,* «որ խորքին մէջ քաղաքականութեան կերպ մըն էր, բայց յստակ բանաձեւումով մը հռչակուած չէր»[1]։

Արեւմտեան Հայաստանում բնակուող գաւառահայութեան ծանր, դժոխային վիճակը բարելաւելու խնդիրը զբաղեցնում էր բոլորին։ Մեծ տէրութիւնների կողմից բարենորոգումների հարցի պարբերական արծարծումները այդպէս էլ չէին փոխում արեւմտահայերի վիճակը, այլ նոյնիսկ աւելի էին վատացնում եւ նոր ջարդերի պատճառ էին դառնում։ Նման պայմաններում ազգային գործիչները տարբեր միջոցներ էին փնտռում, որոնցից մէկը համազգային հզօր կառոյցի ստեղծումն էր, որ նիւթական օժանդակութիւն ցուցաբերէր կարիքաւոր հայ բնակչութեանը։

Համընդհանուր վստահութիւն վայելող, համազգային բարեգործական կազմակերպութիւն անհրաժեշտ էր նաեւ հայ մեծահարուստների թողած կտակները ճիշտ օգտագործելու համար։ Շատերն էին խոշոր գումարներ յատկացրել բարեգործական նպատակներով, սակայն դրանք կարճ ժամանակում փոշիանում էին եւ իրենց նպատակին լրիւ չէին ծառայում։ Հիմնական թերութիւնը այն էր, որ անձեռնմխելի դրամագլուխ չէր պահւում եւ գումարները ամբողջութեամբ ծախսւում էին, որից յետոյ այդ հիմնադրամով ստեղծուած դպրոցը կամ որբանոցը փակւում էր կամ նոր նուիրատուութեան կարիք էր առաջանում։ Դա, բնական է, չէր խրախուսում հարուստներին նոր գումարներ յատկացնելու՝ ազգային կարիքները հոգալու համար։

Հրապարակախօս Վահան Քիւրքճեանը (1878-1915) «Հայկական Միութիւնը» վերնագրով յօդուածում զարգացնում էր այն միտքը, որ տարիներ շարունակ խորհրդակցութեան, հրապարակագրութեան եւ գործնական փորձերի առարկայ հանդիսացող Հայկական Միութիւնը պէտք է դառնայ քաղաքական միութիւնից զրկուած հայ ժողովրդի գերագոյն մարմինը եւ «զրջօրէն ծրագրուած ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ եւ կանոնաւոր ՏԵՒԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ազգին բարոյական եւ տնտեսական շահերը պիտի պաշտպանէ»[2]։

Հայ գործիչները ոգեշնչուած էին յատկապէս Համաշխարհային Հրէական Դաշնութեան (Ալիանս Իզրայէլիթ Իւնիւերսալ) օրինակով։ Այն ստեղծուել էր Փարիզում, 1860ին եւ բաւական արդիւնաւէտ գործունէութիւն էր ծաւալել հրեաներին օգնելու գործում։ Այն նիւթական մեծ օժանդակութիւն ցոյց տուեց Ռուսաստանում կազմակերպուած հրէական ջարդերից տուժածներին։ Ինչպէս յայտնի է, 1905ին սկսուել էր ռուսական առաջին յեղափոխութիւնը։ Ցարական իշխանութիւնները տարբեր մեթոդներով փորձում էին Ռուսական կայսրութեան ժողովուրդներին հեռու պահել յեղափոխութիւնից։ Այդ մեթոդներից էր տարբեր ժողովուրդների միջեւ ազգային ու կրօնական բախումներ հրահրելը։ Անդրկովկասում ազգամիջեան ընդհարումներ կազմակերպուեցին հայերի ու կովկասի թաթարների (ներկայիս ադրբեջանցիների նախնիների) միջեւ։ Իսկ Ուկրաինայում կազմակերպուեցին հրէական ջարդեր։ Այդ ողբերգական իրադարձութիւնների հենց յաջորդ օրը եւրոպական թերթերը տեղեկացրին, որ Համաշխարհային Հրէական Միութիւնը 200.000 ֆրանկի օգնութիւն է ուղարկել տուժած հրեաներին[3]։ Հրէական Միութեան կողմից այդ կայծակնային օգնութեան փաստը հայ գործիչներին մտածել էր տալիս, որ անհրաժեշտ է ունենալ նմանատիպ կազմակերպութիւն, որը արագօրէն նիւթական աջակցութիւն ցոյց կը տար հայ աղէտեալներին։

Հայկական միութիւն ստեղծելու գաղափարը 1903ին գործնական հողի վրայ փորձեցին դնել փարիզահայ մի խումբ մտաւորականներ։ Նրանք ստեղծե-

ցին «Հայկական Միութիւն» անունով մի կազմակերպութիւն, որի նպատակն էր. «1. Զարգացնել համերաշխութիւնը հայոց մէջ, 2. Պաշտպանել օրինական միջոցներով հայ ժողովրդին բարոյական ու նիւթական շահերը, 3. Ամրապնդել հայ մտքին կապերը եւրոպական քաղաքակրթութեան հետ, եւ ճանչցնել Եւրո-պային՝ հայ ժողովրդին մտաւորական ու տնտեսական կեանքը, 4. Նպաստել հայ դպրոցներու զարգացման, աշխատիլ մասնաւորապէս համալսարանական քաղաքի մը մէջ հայկական քոլէժի մը հիմնարկութեան, 5. Քաջալերել ամէն հրատարակութիւն եւ գործ որ կը ձգտի այս արդիւնքները յառաջ բերել»[4]: *Սակայն այդ կառոյցը ինչ-ինչ պատճառներով այդպէս էլ չգործեց եւ ցրուեց:*

Հայկական միութիւն ստեղծելու հարցը 1904-1905ին աչխուժօրէն սկսեց արծարծուել հայկական մամուլում (Ազնահիտ, Լուսաբեր, Շիրակ, Ազատ Բեմ, Բազմավէպ եւն.):

1904ի վերջերից նման միութիւն ստեղծելու հարցը կրկին բարձրացրեց ճանաչուած հրապարակախօս, գրաքննադատ, գրող Արշակ Զօպանեանը (1872-1954) *իր հրատարակած Ազնահիտ ամսագրում*[5]: Նա գտնում էր, որ *չպէտք է փորձել վերակենդանացնել մէկուկէս տարի առաջ Փարիզում ստեղծուած, բայց չգործած «Հայկական Միութիւն»ը:* «Լաւագոյն է,- գրում է նա,- նորէն հիմնել այդպիսի մարմին մը, այնպիսի պայմաններու մէջ որ անոր կենսականութիւնը եւ տեւականութիւնը ապահովեն: ...Պէտք է որ խումբ մը համասեռ (homogene) անձեր, իրար ճանչցող, սիրող, յարգող, եւ նիւթական կամ մտաւորական լուրջ զոհողութիւններ ընելու կարող ու տրամադիր, իրենց ազատ կամքով ու համաձայնութեամբ, կազմեն կորիզ մը, զայն հաստատեն առաջուց հաւաքուած դրամական կարեւոր գումարի մը վրայ, եւ յետոյ հրապարակ գան գործելու, եւ այդ ձեւով կազմուած ընկերութիւնը հետզհետէ ընդարձակելու համար: Այսպէս կազմուած է Ալիանս Իսրայէլիթը, ինչպէս եւ նմանօրինակ ընկերութիւններէն շատերը: Մինչեւ որ այս պայմանները չլրանան, «Հայկական Միութեան» խոշոր ծրագրով ընկերութիւն մը չի կրնար յաջողիլ, եւ կամ՝ եթէ հիմնուի այդպիսի ընկերութիւն մը, Փարիզի մէջ արդէն գոյութիւն ունեցող փոքրիկ ընկերութիւններուն պէս սահմանափակ բան մը կը մնայ»[6]: *Նա գտնում էր, որ միութեան կենտրոնը անպատճառ պէտք է լինի Փարիզը, ուր կար ազատ գործունէութիւն ծաւալելու հնարաւորութիւն, եւ հաւաքուած էին բազմաթիւ ականաւոր հայ գործիչներ:*

Նրան արձագանգեցին բազմաթիւ հայ պարբերականներ, այդ թւում՝ եգիպտահայ մամուլը՝ Լուսաբեր, Շիրակ, Ազատ Բեմ: Բոլորն էլ պաշտպանեցին Զօպանեանի տեսակէտները եւ գտնում էին, որ նման կազմակերպութեան կենտրոնը պէտք է լինի Փարիզը:

Միայն Վենետիկի Մխիթարեանների Բազմավէպը զարգացրեց այն միտքը, որ հայկական միութիւն ստեղծելու ամենայարմար վայրը կարող է լինել Եգիպտոսը[7]: *Հեղինակը դա փաստարկում էր այնտեղի բազմամարդ ու մշտական հայ համայնքի առկայութեամբ, որ մօտ էր գտնուում հայրենիքին, կար ազատ գործունէութիւն ծաւալելու հնարաւորութիւն, իսկ հայերն այդ երկրի պետական, քաղաքական ու տնտեսական բնագաւառներում բաւական բարձր դիրք ունէին:* «Եգիպտոսը ամէնէն յարմար միջավայրն է, ուր կարելի ըլլայ հիմնել

գործ մը, որ մեր երկրէն դուրս՝ մեր ազգային կեանքին վրայ հզօրապէս պիտի ազդէ ամենաբարերար ներգործութեամբ»[8],- *մատնանշում էր հեղինակը։*

1904 Յունուարին Արփիար Արփիարեանը (1851-1908) *Վահան Մալէզեանին ուղարկած նամակում կարծիք էր յայտնում, որ անհրաժեշտ է մի ինչ-որ ազգային ընկերութիւն ստեղծել, որը կը նպաստէր հայերի տնտեսական ու մտաւոր զարգացմանը, առանց քաղաքական ու յեղափոխական ձեռնարկների[9]։ Համահայկական միութիւն ստեղծելու նպատակով հաւաքներ կազմակերպեցին նաեւ Եգիպտոսի հայ մտաւորականները, նոյնիսկ ստեղծեցին յանձնախումբ՝ մշակելու ծրագիրն ու կանոնադրութիւնը, սակայն այդպէս էլ չկարողացան կազմակերպութիւնը կեանքի կոչել։ Քիւրքճեանի վկայութեամբ վերջին անգամ հայկական միութիւն ստեղծելու նպատակով 1905 Հոկտեմբերին է կահիրէում 14 մարդուց բաղկացած ժողով գումարուել։ Սակայն Պօղոս Նուբարի կողմից Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն ստեղծելու լուրը վերջ է տուել այդ հաւաքներին[10]։*

1905ի սկզբին համահայկական կառոյց ստեղծելու փորձ արեց կովկասահայ մեծահարուստ Ա. Մատուրեանը, որը Լոնդոնում հիմնեց «Հայկական Միութիւն» (Armenian Alliance)։ *Սակայն այն նոյնպէս չկայացաւ եւ լուծարուեց 3 նիստից յետոյ։*

Ինչպէս տեսնում ենք, համահայկական բարեգործական կառոյց ստեղծելու գաղափարը բաւական հասունացած էր հայութեան ծանր վիճակով մտահոգ գործիչների մօտ, անընդհատ արծարծւում էր մամուլում եւ նոյնիսկ մի շարք անյաջող փորձեր էին կատարուել նման կազմակերպութիւն ստեղծելու համար։ Այդ բոլոր ձախողումների պատճառը պէտք է համարել այն, որ համահայկական միութիւն ստեղծել փորձում էին հիմնականում մտաւորականութեան ներկայացուցիչները, որոնք չէին տիրապետում բաւարար նիւթական միջոցների, այդ գործիչներից շատերի մօտ բացակայում էր կազմակերպչական փորձը, նրանց մէջ չկային այնպիսի մեծ հեղինակութիւններ, որոնց հայ մեծահարուստները կը վստահէին խոշոր գումարներ։ Միւս կողմից, հայ դրամատէրերի հիմնական մասը ցանկութիւն չունէր իր ժամանակը վատնելու գուտ բարեգործական գործունէութեան վրայ։

Նման համազգային կազմակերպութեան ստեղծման գաղափարը գործնական հողի վրայ դնելու եւ իրականացնելու համար պարտական ենք եգիպտահայ նշանաւոր բարերար Պօղոս Նուբար փաշային (1851-1930)։ *Նա երիտասարդ տարիքից աչքի էր ընկել բարեգործութիւններով։ Եգիպտոսում կազմակերպուող հանգանակութիւնների ցուցակները գրեթէ միշտ գլխաւորում էր Նուբարի անունը։ Նա մեծ օժանդակութիւն ցուցաբերեց 1895-1896ի համիդեան կոտորածներից մազապուրծ եւ Եգիպտոս ապաստանած հազարաւոր փախստականներին[11], 1904ի Սասունի ջարդերից, 1905-1906ի հայ-թաթարական ընդհարումներից տուժածներին[12], մշտապէս աջակցում էր Էջմիածնի կաթողիկոսարանին ու Կ. Պոլսի Պատրիարքարանին[13]։ Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, Նուբարն աջակից էր ոչ միայն եգիպտահայ համայնքին, այլ նաեւ արեւմտահայութեանն ու կովկասի հայութեանը պատուհասող անհամար եւ իրար յաջորդող աղէտների դարմանման գործին։ Ժամանակի ընթացքում նա համոզուեց, որ մասնակի հանգանակութիւններ կատարելով կամ անհատական օգնութեամբ անհնար է վերացնել ի. դարի սկզբի հայ ժողովրդի անհուն թշուառութիւնը։*

Նուբարը եւս գիտակցում էր համազգային բարեգործական կազմակերպութեան անհրաժեշտութիւնը, քանի որ տեսնում էր, թէ ինչպէս են աղէտները իրար ետեւից պատուհասում հայ ժողովրդին, իսկ օգնութիւնը միշտ ուշ էր տեղ հասնում, քանի որ հանգանակութիւնները դանդաղ էին ընթանում: Հանգանակուած դրամարների մի մասն էլ փոշիանում էր մինչեւ տեղ հասնելը, եւ դա աւելի էր վատացնում աղէտեալների վիճակը: Դրամահաւաք էին կազմակերպում նաեւ յեղափոխական կուսակցութիւնները, որոնց հաւաքած գումարների մեծ մասը կորչում էր անյայտ ուղղութիւններով: Վերակազմեալ Հնչակեանները նոյնպէս քանիցս նրան դիմել էին դրամ ստանալու պահանջով, բայց Նուբարը, չնայած եղած սպառնալիքներին, մերժողական պատասխան էր տուել, քանի որ վնասակար էր համարում յեղափոխական ամէն տեսակի գործունէութիւնը: «Այս քառասային վիճակին մէջը կ'ապրէինք,- գրում է ՀԲԸՄ հիմնադիրներից Երուանդ Աղաթօնը (1860-1934), - երբ օր մը, ողբացեալ Պօղոս փաշան, յուսահատ եւ դառնացած, ըսաւ.- Մենք այս չարիքին առաջքը չպիտի կրնանք առնել, գէթ ջանանք անոր ցաւալի հետեւանքները դարմանել: Եւ այդ վայրկեանէն միտքը դրաւ «Ալիանս Իզրայէլիթ»ի նման ընկերութիւն մը կազմել՝ որու մասին տարիներ առաջ խօսուած էր արդէն»[14]:

Ըստ Աղաթօնի դեռեւս 1901-1902ին ինքը, Նուբարը եւ Ապահ Պետրոսեանը[15] խօսել են նման կազմակերպութիւն ստեղծելու անհրաժեշտութեան մասին: Աղաթօնը նոյնիսկ այդ կառոյցի համար ծրագիր էր կազմել[16]: Սակայն բարեգործական կառոյց ստեղծելու գործին Նուբարը աւելի լրջօրէն լծուեց երբ 1904ի Մայիսի կոտորածներից եւ 1905ին սկսուած հայ-թաթարական ընդհարումներից յետոյ ականատես եղաւ, թէ օգնութեան գումարները ինչքան դանդաղ են հանգանակւում եւ տեղ հասնում: Միաժամանակ նա տեսնում էր թէ ինչ արագութեամբ է Հրէական Միութիւնը օգնութեան հասնում իր հայրենակիցներին:

Մինչ համահայկական կազմակերպութիւն ստեղծելը Նուբարը մանրամասն ծանօթացաւ Հրէական Միութեան կանոնադրութեանը եւ գործունէութեանը: Աղաթօնը բարերարին ներկայացրեց տարիներ առաջ իր կազմած «Հայկական Միութեան Ծրագիր»ը, որը խմբագրել էր Լեւոն Մկրտիչեանը: Սակայն Նուբարը բոլորովին այլ ծրագիր պատրաստեց եւ ստեղծեց խմբագրական խորհուրդ, որտեղ ընդգրկեց Եագուպ Արթին փաշային (1842-1919), կարապետ բէյ Շերիմճեանին (1851-1926), Մկրտիչ Անդրանիկեանին (1851-1939), Աղաթօնին եւ Նազարէթ Տաղաւարեանին (1862-1915)[17]:

Այսպիսով, հաշուի առնելով հայութեան դիմագրաւած դժուարութիւնները՝ ազգային բարերարը մտայղացաւ Համաշխարհային Հրէական Միութիւն կազմակերպութեան օրինակով ստեղծել համահայկական բարեգործական մի ընկերութիւն, որը ժամանակին օգնութեան կը հասնէր աղէտների դէպքում, կը նպաստէր հայութեան նիւթական ու տնտեսական վիճակի բարելաւմանը, կրթական առաջընթացին:

Այդ նպատակով 1905ի վերջերին նա կահիրէում ստեղծեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, որի նպատակն էր. ա.՝ օժանդակել հայ ժողովրդի եւ իր հայրենիքի մտաւոր եւ բարոյական զարգացմանը, բ.՝ օգնել նրանց նիւթական եւ տնտեսական վիճակի բարելաւմանը, գ.՝ քաջալերել այդ

արդիւնքները առաջ բերելուն ծառայող ամէն ձեռնարկ ու հրատարակութիւն[18]։

Կահիրէում Նուբարի կողմից ՀԲԸՄ ստեղծելու լուրը առաջինը եկեղեցու բեմից ժողովրդին աւետեց Եգիպտոսի թեմի առաջնորդ (1905-1912) Մկրտիչ եպիսկոպոս Աղաւնունին (1863-1941)՝ 1905 Դեկտեմբերի 10ին։ Նա յայտնեց, որ հիմնադիր-նախագահն արդէն Միութեան դրամարկղ է մուծել 1000 ոսկի, որից 200 ոսկին անմիջապէս պէտք է յանձնուէր «Կովկասի Արկածելոց Նպաստ Հանգանակող Յանձնախումբ»ին, ինչպէս նաեւ յանձն է առել ամսական 20 ոսկի մուծել կազմակերպութեանը[19]։

ՀԲԸՄ հիմնադրութեան լուրը մեծ խանդավառութեամբ ընդունուեց հայ հասարակութեան կողմից։

ՀԲԸՄին ընծայուած լայն ընդունելութիւնը Հուսաբերի յօդուածագիրը բա-ցատրում է ազգային լուրջ կազմակերպութեան ստեղծման գաղափարի բաւա-կան հասունացած եւ իրականացման ժամանակը հասած լինելով[20]։

Չնայած, որ սկզբում դեռեւս չէր հրապարակուել ծրագիրը, կանոնագիրը եւ միւս հիմնադիրների անունները, «...բայց Պօղոս փաշա Նուպարին նախագահութիւնը երաշխաւորութիւն մըն է թէ լուրջ ձեռնարկի մը հանդէպ կը գտնուինք» այդ օրերին գրում է Արփիարեանը[21]։

Նուբարը մեծ հեղինակութիւն էր վայելում ոչ միայն իր բարեգործութիւնների ու բարձր դիրքի, այլեւ իր գործնականութեան շնորհիւ։ Արփիարեանը մի քանի ամիս անց գրում, որ Նուբարը իր մեծ իմացականութեամբ, ընկերական բարձր դիրքով, բիւրեղային պատուասիրութեամբ, ազգին մատուցած ծառայութիւններով անզուգական անձնաւորութիւն էր, որի կողմը սուրբ ամէն հայի մտածմունքն ու յոյսերը[22]։ Հրապարակախօս Լեւոն Մկրտիչեանը եւս վկայում է, որ այդ հաստատութեան սկզբնական յաջողութեան առաջին պատճառը հիմնադրի հանդէպ եղած բացարձակ վստահութիւնն էր[23]։

Նոր կազմակերպութեան ստեղծմանը ուրախութեամբ արձագանգեց նաեւ Զօպանեանը, չնայած դեռեւս հրապարակուած չէին ՀԲԸՄ կանոնադրութիւնն ու նպատակները։ «Հաճոյքով իմացայ Եգիպտոսի հայ թերթերէն թէ Գահիրէի մէջ խումբ մը Հայեր որոշեր են հիմնել «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» մը «Ալիանս Իսրայէլիթ»ի ծրագրով, եւ թէ Պօղոս փաշա Նուպար յանձն առեր է պատուոյ նախագահութիւնը եւ իր որդին՝ Առաքել պէյ գանձապահի պաշտօնը։- Գրում է Զօպանեանը եւ աւելացնում,- Կը մաղթեմ որ այդ ընկերութիւնը ըլլայ այն որուն պէտքը կը զգացուէր վաղուց եւ որու մասին «Անահիտ»ի մէջ գրած եմ յաճախ։ Այստեղ ես այն կարծիքը յայտնած էի թէ այդպիսի ընկերութեան մը վարիչ մարմինը պէտք է Փարիզի պէս կեդրոնական քաղաքի մը մէջ հաստատուի. իմ կարծիքս միշտ կը մնայ անփոփոխ. բայց Պօղոս փաշայի պէս անձնաւորութեան մը գործին գլուխն անցնիլը հասկնալի կը դարձնէ որ առ այժմ ընկերութեան հիմունքը հաստատուի Գահիրէի մէջ»[24]։

Այսպիսով, Նուբարի հեղինակութեան շնորհիւ ՀԲԸՄը մեծ ոգեւորութեամբ ընդունուեց ոչ միայն եգիպտահայութեան, այլ նաեւ ընդհանրապէս հայութեան կողմից։

Ինչպէս տեսանք, ՀԲԸՄը հիմնուեց դեռեւս 1905ի Դեկտեմբերին, սակայն նրա պաշտօնական ստեղծումը՝ հիմնադիր ժողովը, տեղի ունեցաւ 1906 Ապրիլի

15ին եւ հաստատեց Միութեան կանոնադրութիւնը։ Առաջին ատենագրութիւնը վկայում է. «Այսօր, 15 Ապրիլ, 1906, Ս. Զատկի առաջին օրը, ստորագրեալքս, ի Գահիրէ, Նորին Վսեմ. Պօղոս Բաշայի ապարանքը, կազմեցինք ընկերութիւն մը «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անուամբ...։ Ընկերութեան Վարչական առաջին ժողովը բաղկացած է Կանոնագրիս 10րդ Յօդուածին մէջ նշանակուած 10 անդամներէն եւ այսօրուընէ Ընկերութիւնս կազմակերպեալ հռչակուած է»[25]։

Այդ ժողովին մասնակցեցին եւ հիմնադիր փաստաթղթի տակ իրենց ստորագրութիւնները դրեցին հետեւեալ անձինք.- Պօղոս Նուբար փաշա (ատենապետ), Եադուպ Արթին փաշա (փոխատենապետ), Երուանդ բէյ Աղաթօն (փոխատենապետ), Առաքել բէյ Նուբար (1881-1954) (գանձապահ), Տքթ. Նազարէթ Տաղաւարեան, Մկրտիչ Անդրանիկեան (1851-1939), Գրիգոր Եղիայեան (1833-1911), Կարապետ բէյ Շերիճեան, Մկրտիչ բէյ Մարկոսոֆ (1849-1919), Յովհաննէս բէյ Յակոբեան (1855-1917)։

Կանոնագիրն ունէր երկու անփոփոխելի պայմաններ՝ 1.- Ընկերութիւնը մարդասիրական հաստատութիւն է, որեւէ քաղաքական կամ առեւտրական հանգամանք չունի, 2.- Ընկերութեան հիմնական դրամագլուխը անձեռնմխելի է։

Առաջին դրոյթի միջոցով կառոյցը հեռու էր մնալու քաղաքական հոսանքներից, քանի որ հակառակ պարագայում չէր կարող լինել համահայկական կազմակերպութիւն։ Նուբարը խնդիր էր դրել ստեղծել Բարեգործականը բոլոր հայերի համար՝ առանց դաւանական ու քաղաքական բաժանումների։

Անձեռնմխելի դրամագլխի մասին դրոյթը, որը սովորական երեւոյթ էր Եւրոպայում, հայ իրականութեան մէջ առաջին անգամ կիրառուել է ՀԲԸՄի կողմից։ Նախկինում ստեղծուած հայկական բարեգործական կառոյցները անձեռնմխելի դրամագլուխ չէին պահում, որի հետեւանքով հիմնական դրամագլխի ծախսուելուց յետոյ և՛ իրենք և՛ իրենց ստեղծած հաստատութիւնները դադարում էին։ Եթէ անձեռնմխելի դրամագլխի մասին դրոյթը չլինէր, բնականաբար հայութեանը պատուհասող աղէտները դարմանելու համար ՀԲԸՄի գումարները չէին բաւարարի եւ կը սպառուէին գործունէութեան առաջին իսկ տարիներից, իսկ կառոյցը կը դադարեցնէր իր գործունէութիւնը։ Նուբարի կիրառած այդ նորութիւնը պատճառ դարձաւ, որ նրա ստեղծած միութիւնը եւ միւս բարեգործական հաստատութիւնները (դպրոցներ, հիմնադրամներ եւն.) յաջողութեամբ գործեն մինչեւ այսօր։

Այդ երկու դրոյթների չնորհիւ Նուբարը կարողացաւ կազմակերպութիւնը պահել բարեգործական ուղու վրայ՝ հեռու քաղաքական վերիվայրումներից եւ ապահովեց նրա յարատեւութիւնն ու յետագայ բարգաւաճումը՝ անձեռնմխելի դրամագլխի չնորհիւ։

ՀԲԸՄի կանոնագիրը հաստատելու համար դեռեւս Ապրիլի 12ին Նուբարը եւ Արթին փաշան պաշտօնապէս դիմել էին Եգիպտոսի իշխանութիւններին։ Ներքին Գործերի նախարար Մուստաֆա Ֆեհմի փաշան Մայիսի 7ին պաշտօնական պատասխան ուղարկեց, որտեղ նշուած էր. «Կը շնորհաւորեմ զՁեզ որ Հայոց նիւթական եւ բարոյական վիճակի բարելաւման հոգածու կը գտնուիք, եւ Կառավարութիւնն ընդունելով այդ գործին օգտակարութիւնը՝ յաջողութիւն կը մաղթէ անոր»[26]։

Այսպիսով, 1906 Ապրիլի 15ին, պաշտօնապէս հիմնուեց ՀԲԸՄը, որի հիմնադիրները հանդիսացան եգիպտահայ մի խումբ մեծահարուստներ։ «Շատ գաղափար չունէինք այդ կարգի ուժերէ կազմուած մարմնոյ մը յարատեւութեան եւ օգտակարութեան վրայ,- *գրում է Միքայէլ Նաթանեանը* (1868-1954),- բայց շատ չանցած մեր այդ կարծիքը փոխուեցաւ...: Գործին գլուխը կը գտնուէին արդարեւ, այնպիսի հոյակապ դէմքեր եւ անձնաւորութիւններ, եւ անոնք ա՛յնքան սրտովին նուիրուած եւ փարած էին Հ.Բ.Ընդ. Միութեան, որ անիկա Հայ կեանքի մէջ նոր դարաշրջանի մը սկիզբը եղաւ»[27]։

ՀԲԸՄի հիմնադրումից երեք տարի անց, անդրադառնալով Միութեան ստեղծման պատճառներին, վարչութեան տեղեկագիրը նշում է, որ հիմնադիրները «ուզեցին մանաւանդ լրացնել պակաս մը՝ ազգային բազմաշատ եւ ստիպողական պէտքերը ուսումնասիրելու, ինչպէս նաեւ անոնց հարկադրած դարմանները հոգալու: Մեր շատ մը ազգային ընկերակցութիւնները, որոնք տեղական խնդիրներու կամ մասնաւոր նպատակի մը համար կազմուած են, իրենց անձուկ միջոցներով եւ սահմանափակ գործունէութեամբ չէին կրնար բնականաբար ընդգրկել ազգային յեղաշրջումի ընդարձակ գործը: Այս պատճառաւ վաղուց ըմբռնուած էր ազգային ընդհանուր Միութեան մը կարեւորութիւնը: Այս մտածումը ունենալով երեք տարի առաջ յղացանք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան գաղափարը՝ անջատ դաւանական կամ դասակարգային խնդիրներէ, եւ իր գոյութեանը մէջ անկախ ազգային իշխանութիւններէն կամ ոեւէ կուսակցական ազդեցութիւններէն»[28]։

Նուբարը իրեն յատուկ եռանդով ձեռնամուխ եղաւ Բարեգործականի ծաւալման ու զարգացման գործին, եւ առաջին արդիւնքներն երեւան եկան շատ կարճ ժամանակում։ ՀԲԸՄը գերազանցեց բոլոր սպասումները, քանի որ դարձաւ Սփիւռքի ամենահզօր հասարակական կազմակերպութիւնը, որի մասնաճիւղերը տարածուեցին հայկական բոլոր համայնքներում եւ յետագայում մեծ դեր խաղացին սփիւռքահայութեան կրթական, մշակութային ու մարզական առաջընթացի գործում։ ՀԲԸՄը նաեւ մեծ աջակցութիւն ցուցաբերեց Խորհրդային Հայաստանին՝ վերաշինութեան եւ ներդաղթի կազմակերպման գործում[29]։

Այսպիսով, ՀԲԸՄի ստեղծումը կատարուեց ժամանակին, եւ այն ունեցաւ խոշոր ներդրում հայ ժողովրդի կրթական, մշակութային, մարզական եւ ինչու չէ՝ նաեւ տնտեսական կեանքում։

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Լեւոն Զորմխեան, Համապատկեր Արեւմտահայոց Մէկ Դարու Պատմութեան, Հատ. Գ. (1908-1922), Պէյրութ, Տպ. Մեւան, 1975, էջ 115։*

[2] *Վահան Քիւրքճեան, «Հայկական Միութիւնը», Լուսաբեր, Գահիրէ, 30 Մարտ 1905։*

[3] *Էդուարդ Մելքոնեան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պատմութիւն, երեւան, «Մուղնի» Հրատ., 2005, էջ 34։*

[4] *Արշակ Զօպանեան, «Մարդ Մը», Անահիտ, թիւ 11, 1904, էջ 162-163։*

[5] *Նոյն, էջ 161-163. նաեւ՝ Արշակ Զօպանեան, «Բառ Մը Պ. Զերազին», Անահիտ, թիւ 2, 1905, էջ 44-45։*

[6] *Զօպանեան, «Բառ Մը», էջ 45։*

[7] *«Գաղափար Մը եւ Բարեփոխումները», Բազմավէպ, Հատ. ԿԳ., թիւ 3, Մարտ, 1905, էջ 105-110։*

[8] Նոյն, էջ 107։

[9] *Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 1906-1931*, Փարիզ, 1935, էջ 451։

[10] *Մելքոնեան*, էջ 33։

[11] *Երուանդ Օտեան, Պօղոս Փաշա Նուպար, Հրատարակութիւն Եփրատ Գործակալութեան*, Կ. Պոլիս, Տպ. Արաքս, 1913, էջ 12։

[12] *Լուսաբեր*, 23 Դեկտեմբեր 1905։

[13] *Արտաշէս Գարտաշեան, Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար*, Հար. Բ., Վէնետիկ-Ս. Ղազար, 1986, էջ 280։

[14] *Երուանդ Աղաթօն, Ինչ կը Խորհին Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան Հիմնադիրները*, Փարիզ, 1933, էջ 26։

[15] Բուն անունով Աւետիս Գըմգըմեան։ Մնած է Արաբկիր 1872ին։ 1895ին իբրեւ հնչակեան կիլիկիա անցնելով Աղասիի հետ կը կազմակերպէ Զէյթունի ապստամբութիւնը։ Աւելի ետք կ'անցնի Եւրոպա եւ Պօղոս Նուպարի յանձնարարութեամբ կը հաստատուի Գահիրէ։ Կը դառնայ հիմնադիրներէն Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան։ 1921ին կ'անցնի Կիլիկիա՝ պաշտպելու անոր ինքնապաշտպանութեան համար։ Կը մահանայ Գահիրէ 1928ին։ 1918ին հրատարակած է Արծիւներու Բոյնը հատորը, նուիրուած Զէյթունի 1895ի դէպքերուն։

[16] *Մելքոնեան*, էջ 34։

[17] *Մելքոնեան*, էջ 34-35։

[18] *Ոսկեմատեան*, էջ 25։

[19] «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն», *Լուսաբեր*, 12 Դեկտեմբեր 1905։

[20] Կիլիկեցի, «Հայկական Բ. Ը. Միութիւնը», *Լուսաբեր*, 21 Դեկտեմբեր 1905։

[21] Արփիար Արփիարեան, «Կարկառուած Ձեռք», *Լուսաբեր*, 14 Դեկտեմբեր 1905։

[22] Հայկակ, «Գործ Մը՝ Կոթող Մը», *Լուսաբեր*, 7 Յուլիս 1906։

[23] Լեւոն Մկրտիչեան, «Բարեգործականին Ճաշոցութեան Գաղտնիքները», *Միութիւն*, Յունուար-Յունիս, 1926, էջ 41։

[24] Արշակ Զօպանեան, «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն», *Անահիտ*, թիւ 1-2, 1906, էջ 27։

[25] *Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 1906-1913*, Գահիրէ, 1914, էջ 29։

[26] *Կանոնագիր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան*, Աղեքսանդրիա, 1906, էջ 3։

[27] Միքայէլ Նաթանեան, «Ռամկավար Կուսակցութեան Կազմութեան Պարագաները», *Եգիպտահայ Տարեցոյց 1925, Ա. Տարի*, Աղեքսանդրիա, Տպ. Ա. Գասապեան, 1924, էջ 163։

[28] *Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն. Եռամեայ Տեղեկագիր*, Գահիրէ, 1909, էջ 7-8։

[29] Այդ մասին տե՛ս նաեւ՝ այս հատորին մէջ տեղ գտած Վահէ Ղազարեանի հրապարակումը։

THE CIRCUMSTANCES THAT LED TO THE FOUNDING OF THE ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

(Summary)

SAMUEL POGHOSSIAN
samvelp77@mail.ru

Founding a strong pan-national organization with a cultural, philanthropic, and non-partisan orientation was a topic of serious and extensive discussion among Armenian activists in the early twentieth century.

This idea was implemented by Boghos Nubar Pasha of Egypt. Nubar was convinced that piecemeal fundraising and individual help was not enough to alleviate the dire conditions of the Armenians due to continual massacres and killings in the Ottoman Empire at the beginning of the 20th Century.

Against the backdrop of various attempts at establishing a pan-Armenian philanthropic, a-political, and non-partisan organization, the author highlights certain factors that turned Nubar's brainchild into a success, unlike its various predecessors, which were limited, constrained within the boundaries of single states, and did not have an untouchable fund.

The author also notes that Nubar's authority was a guarantee of the success of the project as he gave credit and weight to the organization. The news was welcomed by both the native Armenians of the Ottoman Empire and those who resided beyond its borders.

The author notes that the founding of the AGBU happened at the right time. It had a huge impact on the cultural, educational and economic improvement of Armenians worldwide.

ԱԼԲԱՆԻԱՑԻ ՀԱՅԵՐԸ ԵՒ ՀԱՅ-ԱԼԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com

Արեւելեան Եւրոպայի ամենափոքր երկրի՝ Ալբանիայի հետ հայ ժողովուրդն ունեցել է պատահական յարաբերութիւններ, որոնք մինչ օրս ուսումնասիրուած եւ համակարգուած չեն։ Ալբանիայի հայութեան մասին ամենամեծ հրապարակումը կատարել է Ալբանիայի Հայկական Միութեան երբեմնի նախագահ Յարութիւն Եաղհանէճեանը Բէյրութի Մխիթար ամսագրում[1]։ Ամերիկացի գիտնական-լրագրողներ Միրանդա Վիքերսի եւ Ջէյմս Փեթիֆէրի Ալբանիային նուիրուած արժէքաւոր մենագրութեան մէջ անդրադարձ կայ նաեւ տեղի հայերին[2]։

Հայ-ալբանական ամենավաղ առնչութիւնը վերաբերում է ալբանական գրականութեան արշալոյսին։ Ալբանիայի ազգային գրականութեան հիմնադիր Պիետուր Բոգդանին (Pjetër Bogdani, մօտ 1630-1689, յայտնի նաեւ իտալական Պիէտրօ Բոգդանօ անունով) որոշ չափով առնչուել է հայ իրականութեանը։ Իտալիայի Պադուա քաղաքում նրա հիմնած Tipografia del Seminario տպարանում հրատարակուել են արեւելեան լեզուներով գրքեր, այդ թուում՝ եբրայերէն, արաբերէն եւ հայերէն։ «Մարգարէների Անէծքը» (Cuneus Prophetarum) վերնագրուած ալբաներէն գրուած նրա առաջին գրքի երկրորդ հատորը՝ «Աչխարհի Փրկիչ Քիստւս Քրիստոսի կեանքը»։ Այն ընդգրկում է Հին Կտակարանի Դանիէլի Գրքի Թ.24-26 հատուածների լատիներէն, յունարէն, հայերէն, ասորերէն, եբրայերէն, արաբերէն, իտալերէն եւ ալբաներէն թարգմանութիւնները։

Հայերը եւ ալբանացիները միմեանց ճանաչել են Օսմանեան կայսրութիւնում, քանի որ Ալբանիան եւս մաս է կազմել այդ կայսրութեան։ Մասնաւորապէս հայահոծ Կոստանդնուպոլսում եղել է ալբանական թաղամաս՝ Առնաուտքէօյը, որտեղ բնակուել են նաեւ քիչ թուով հայեր։ Արեւմտահայերն ալբանացիներին անուանել են առնաուտ/առնաուտ, ինչպէս՝ թուրքերը։ այս արմատն ունի նաեւ հայկական Առնաուտեան/Առնաուտեան ազգանունը։ Օսմանեան միջավայրում է ծնունդ առել «Ալբանացուն՝ սուրը, հային՝ գրիչը» ասացուածքը[3]։ ԺԸ. դարի հայ հեղինակ Երեմիա Չելեպի Քէօմուրճեանը գրել է «Վասն էքմէքճի Առնաուտ Տիմոյի Ումեմն Որ Սիրեաց Զաղջիկ Մի Հրէի Մրգատայ Անուն» գեղարուեստական երկը, որը ներկայացնում է քրիստոնեայ ալբանացու եւ հրեայ աղջկայ սիրոյ պատմութիւնը։ Այս ստեղծագործութեան մէջ Քէօմուրճեանը բարձրացրել է տարբեր կրօնների պատկանող երիտասարդների միջեւ սիրոյ իրաւունքը եւ հակառակ կրօնական արգելքներին՝ սիրոյ յաղթանակի գաղափարը[4]։

1912ի Նոյեմբերի 26ին Ալբանիան անկախութիւն է հռչակել՝ հինգ դար շարունակ Օսմանեան կայսրութեան մաս կազմելուց յետոյ։ Այդ կարեւոր իրադարձութեան նախաշէմին եւ դրանից յետոյ էլ, երկրի քաղաքական իրադրութեան վերաբերեալ բազմիցս գրել է հայ, մասնաւորապէս արեւմտահայ մա-

մուլը՝ թարգմանաբար հրատարակելով ինչպէս միջազգային լրատուական գործակալութիւնների տարածած ալբանական լուրեր եւ օտար մամուլում Ալբանիայի մասին լոյս տեսած յօդուածներ, այնպէս էլ տեղ տալով ինքնուրոյն նիւթերի[5]։

Մեր տուեալներով՝ Ալբանիայում առաջին հայերը հաստատուել են Ի. դարի սկզբին։ Նրանք եղել են սուլթանական բանակի ծառայողներ եւ օսմանեան վարչարարներ։ Այնուհետեւ Մեծ Եղեռնի հետեւանքով այս երկիր են հասել հայեր Օսմանեան կայսրութիւնից եւ հարեւան երկրներից (Յունաստան, Բուլղարիա)։ Սակայն հայ գաղթականների պարբերական մուտքն Ալբանիա սկսուել է 1925ին։ Ալբանացիները, հիւրասէր ժողովուրդ լինելով եւ տեսնելով հայերի լուրջ եւ օգտաշատ գործունէութիւնը, գնահատել են եկուորներին, նրանց չեն ենթարկել ազգային կամ կրօնական խտրականութեան։

1920ականների Ալբանիան՝ Եւրոպայի միակ մեծ մասամբ մահմեդական եւ տնտեսապէս ամենայետամնաց երկիրը, ունեցել է Խորհրդային Հայաստանի չափ տարածք՝ 28.7 հազար քառակուսի կիլոմետր, 800 հազար բնակչութեամբ։ Տարիներ անց Ալբանիա այցելած հայաստանցի պարուհի Անժելա Շահնաբաթեանը վկայել է. «Գեղեցիկ է Ալբանիան, գեղեցիկ ու այնքան նման մեր Հայաստանին։ Ձորերն աննման Լոռին են յիշեցնում։ Երբ մտաբերում եմ Կորչայի լճափով անցնող ճանապարհը, կարծես թէ երէկ Բայազէտից վերադարձած լինեմ։ Այդ լիճն էլ մեր Սեւանի նման բարձր լեռների վրայ է ընկած, բայց աւելի փոքր է։ Մենք չլողացանք այնտեղ, բայց կերանք լճից բերուած ձուկը, որը նոյն իշխանն էր։ Զարմանալի է, չէ՞։ Իսկ մեզ թւում էր, թէ Հայաստանից բացի ոչ մի երկիր իշխան ունենալ չի կարող... Մեր այս երկու երկրների արտակարգ նմանութեամբ պէտք է բացատրել, որ Ալբանիայի հայերը, թէեւ կարօտով երազում են իրենց հայրենիքը, բայց միեւնոյն ժամանակ մխիթարւում՝ Հայաստանի նմանութիւն այնտեղ գտնելով»[6]։ Իսկ 1958ին ալբանական Բաշկիմի թերթը գրել է. «Ընդհանուր շատ բան կայ մեր [եւ հայերի] մէջ. եւ պայքարը, եւ սովորոյթները, եւ օրէնքները։ Մեր երգերն ու պարերն էլ ունեն ընդհանուր կողմեր»[7]։

Աչխարհագրական նմանութիւններից բացի պէտք է յիշել նաեւ, որ հայոց լեզուի պէս ալբաներէնը եւս առանձին ճիւղ է հնդեւրոպական լեզուաընտանիքում։

Ալբանական հասարակութեան մէջ, ինչպէս եւ հայկականում, շատ ուժեղ են ընտանեկան կապերը. երկու ժողովուրդներն էլ ունեն աչխարհացրիւ սփիւռք, որը հետեւողականօրէն օգնում է հայրենիքին։ Ցաւկանչական է նաեւ, որ ալբանացիների մէջ տարածուած երաժչտական գործիք է հայկական դուդուկը։

Ահա այս երկրում հաստատուած մի հայ 1925ին թղթակցութիւն է ուղարկել հայ մամուլին՝ տեղեկութիւններ տալով Ալբանիայի ժողովրդի եւ տեղի պայմանների մասին։ Ըստ այդ թղթակցութեան՝ Ալբանիայի կառավարութիւնը մինչ այդ սեփական դրամ եւ տնտեսական քաղաքականութիւն չունի, ամէն քաղաք ունի իր նախընտրած դրամը։ Առեւտրականները եւ արհեստաւորները քրիստոնեաներ են, իսկ հողագործները՝ մահմեդականներ։ Երկրի հարստութեան աղբիւրների օգուտները վայելում են հարուստ կալուածատէրերը, իսկ

ժողովուրդն աղքատ է։ Նոյն այս թղթակիցը նշել է նաեւ, որ ժողովուրդը մեծ մասամբ ծոյլ է եւ նախաձեռնութեան ոգուց զուրկ, իսկ տնտեսութիւնը խիստ նախնական է։ Նա տեղեկացրել է, որ երկրում շատ աշխատանք չկայ, այդ պատճառով պետութիւնը հրահանգել է օտարականների հանդէպ թոյլատու չլինել։ Կառավարութիւնը խոչընդոտում է այնտեղ հաստատուել ցանկացող հայերին, մինչդեռ տարիներ առաջ Ալբանիայի ղեկավարութիւնը ցանկութիւն է ունեցել ընդունել հայ չերամաբոյծներ, գորգագործներ եւ արհեստաւորներ, իսկ հայ հողագործներին՝ պետական հող տրամադրել։ Բուն ալբանացի ժողովուրդը համակրանքով է վերաբերուում հայերին[8]։ Արդէն 1927ի տուեալով «Ալպանիոյ մեծ քաղաքներու մէջ կը գտնուին բաւական թուով հայ արհեստաւորներ, ինչպէս նաեւ քանի մը ազատ արուեստի մարդիկ, մասնաւոր համակրանք կը վայելեն մեր հայրենակիցները եւ դժգոհ չեն իրենց վիճակէն»[9]։ Ալբանական կառավարութեան ժրնեւի ներկայացուցիչը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պատուիրակին յայտնել է, որ Ալբանիայի կառավարութիւնը պատրաստ է ընդունել քանի չափ հայ չերամաբոյծ ընտանիքներ, որոնց ամէն դիւրութիւն կ՚ընձեռուի։ Հայ Ազգային Պատուիրակութեան անդամ Տիգրան Բաշալեանն ալբանացի պատուիրակին խորհուրդ է տուել այդ հարցով դիմել Աթէնքի հայոց առաջնորդին։ Հայ Ազգային Պատուիրակութիւնը հաստատել է, որ 50ի չափ հայ արհեստաւորներ արդէն բնակուում են Ալբանիայում, բոլորն էլ բարեկեցիկ վիճակում[10]։

Ալբանիայի Վլէօրա քաղաքից 1930ին հայ մամուլին ուղարկուած մի թղթակցութեան մէջ յիշուում է Ալբանիայի հայութեան թիւը. Տիրանա՝ 6 ընտանիք (բժիշկ, դեղագործ, պանդոկապետ, սրճարանատէր, երկաթագործ եւ դերձակ), Վլէօրա՝ 5 ընտանիք (բժիշկ, ատամնաբոյժ, աղիքի եւ տուրճի վաճառական), Դուրացցօ (Դուրէս)՝ 5 ընտանիք (երկուսը օսմանեան տարիներին զինուորական կոչումով մնկնել են եւ հաստատուել այնտեղ՝ ամուսնանալով ալբանուհիների հետ), Շկոօդրա (Շկոդէր)՝ 2 ընտանիք (մին՝ կաթոլիկ երկրաչափ, միւսը՝ աղիքի մշակման գործարանի տէր), Գորչա (Կորչա)՝ աքչեհիրցիներ (նոյնպէս զբաղուում են աղիքի մշակութեամբ), կինոգասթրօ (պէտք է լինի Գիրոկաստրա)՝ մէկ ընտանիք (գորգի վաճառական), Լիւշնէա՝ մէկ ընտանիք (երկրագործական վարժարանի չերամաբուծութեան ուսուցիչ)։ Դուրէսում հայերին է պատկանել մեծ եւ շքեղ «Բոն Մարչէ» վաճառատունը։ Ալբանահայերի ընտանեկան լեզուն հայերէնն է եւ երեխաներին հայկական դաստիարակութիւն են տալիս։ Ընդհանրապէս նիւթապէս լաւ վիճակում են եւ օգնում են կարիքաւոր հայրենակիցներին[11]։ Թէեւ չեն ունեցել եկեղեցի, վարժարան, ակումբ կամ կազմակերպութիւն՝ միմեանց կապուած են եղել ազգասիրական բարեկամութեամբ

1932ին Ալբանիայի ութ գլխաւոր քաղաքների առեւտրական հաստատութիւնների տնօրէն Արամ Կիւլպենկեանը, այցելելով Ստամբուլ, տեղի Արեւելք օրաթերթին հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդել ալբանահայութեան մասին. «Հայերը լաւ անուն հանած են Ալպանիոյ մէջ եւ մեծ քաջալերութիւն կը գտնեն կառավարութեան կողմէ իբրեւ պարկեշտ եւ աշխատասէր մարդիկ»[12]։ Ութ քաղաքներում մորթու եւ աղիքի մշակման ողջ գործը հայերի ձեռքին է եղել. կեսարացի 5-6 ընտանիք աղիքի գործում մենաշնորհ են ունեցել եւ զբաղուել դրա արտածմամբ։ Ամենահարուստ վաճառականներն են եղել Պոտիկեան

եւ Պալճեան եղբայրները։ Դուբացցոյում բնակուող Հայկ Պալճեանը 1930ականներին բաժանորդագրուել է Փարիզի Ջուարթնոց ամսագրին եւ տարեգրքին[13]։ Տիրանայում յայտնի է եղել մի առատաձեռ։ Մնուշդով պիլեճիքցի Զենոբ Մկրտիչեանը հիմք է դրել լիմոնադի արտադրութեանն Ալբանիայում եւ տարածել երկրով մէկ, այնուհետեւ յատուկ մեքենաներով սկսել պաղպաղակի եւ այլ անուշեղէնների արտադրութիւն։ Եաղհանէճեան եղբայրներին է պատկանել հրուշակի արտադրութեան մեծաչնորհը։ Արքունի ընտանիքի հալթայթիչը եւս հայ է եղել՝ Պարոյր Կիւլմէզեանը։ Ալբանահայերը եկեղեցի եւ դպրոց չունենալու պատճառով յաճախել են յունական եկեղեցի։ Հարուստներն իրենց զաւակներին ուղարկել են Ցունաստանի հայկական դպրոցները կամ Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան Վարժարանը[14]։

Նոյն 1932ին Փարիզի Ճառաչ օրաթերթի սեփական թղթակիցը Ալբանիայից տեղեկացրել է, որ երկրի մտաւորականութեան եւ պաշտօնեաների մեծ մասը բարեկամ է հայ ժողովրդին։ Նրանց մի մասը կրթութիւն է ստացել Օսմանեան կայսրութեան դպրոցներում եւ հայ ուսուցիչներ է ունեցել, իսկ Ալբանիայի մտաւորականներից չատերը նոյնպէս պաշտօնավարել են Օսմանեան շրջանում եւ առիթ են ունեցել մօտիկից ճանաչել հայ ժողովրդին եւ գնահատել նրա կարողութիւնները։ Ճառաչի թղթակցի վկայութեամբ՝ Ալբանիայի տարբեր շրջաններում բնակւում են 100ից աւելի հայեր. բոլորն էլ ինքնաբաւ են, ոմանք՝ լաւ դիրքի հասած։ Նա յիշել է հայ առատաձեռ։ Վէլօրայից՝ Մանուէլ Աստուրեանին եւ Պէրպէրեանին, Լիսքովիքից՝ Երուանդ Հէքիմեանին եւ Տիրանայից՝ Հ. Պուրնազեանին[15]։ Ի դէպ, առատաձեռ։ Պէրպէրեանի որդին 1932ին աւարտել է Ալբանիայի Սպայից Վարժարանը, եւ այդպիսով ալբանական բանակի շարքերում եղել է մի հայորդի սպայ[16]։ Մէկ տարի անց, 1933ին, ալբանաբնակ մի հայ երիտասարդ այցելել է Ստամբուլ եւ Ժամանակ թերթին տեղեկութիւններ է տուել Ալբանիայի հայերի մասին՝ յիշելով արքայական ընտանիքի առատաձեռ։ Մանուէլեանին եւ Դուրէսի մեծագոյն վաճառատան հայ տէրերին, որոնց մասին արդէն յիշատակուեց[17]։

1935ի տուեալով Ալբանիայում բնակուել են 120 հայեր՝ ցրուած տարբեր քաղաքներում։ Նրանց պատկանել են աղիքի գործարաններ եւ հիւսուածեղէնի արհեստանոցներ։ Ալբանացիները եւ մասնաւորապէս պետական պաշտօնեաները չարունակել են մեծ համակրանք տածել հայերի հանդէպ[18]։

1930ականներին Ալբանիայում որոշ անուն է ունեցել բժիշկ Մոգին (Երմոգինէ) Փոթուրլեանը։ Նա ծնուել է Թուրքիայի Զոռլու գիւղաքաղաքում, եղել իշխան Ճելիլի անձնական բժիշկը։ Որոշ շրջան բնակուել է Կոնիա-Էրէյլիում, եղել քաղաքապետարանի բժիշկը։ 1915ին խնամել է աքսորի ճանապարհին այնտեղ իջեւանած Գրիգոր Զօհրապին։ 1918ին Փոթուրլեանը հաստատուել է Տիրանայում, յետագայում դարձել 1928ին իրեն Ալբանիայի թագաւոր հռչակած արկածախնդիր Ահմէթ Զոգուի (յայտնի որպէս Զոգու Ա.) եւ նրա ընտանիքի անձնական բժիշկը։ Արժանացել է նաեւ արքայական թիկնապահ գնդի գնդապետի աստիճանի։ 1938ին Զոգու Ա.ն Երմոգինէ Փոթուրլեանին եւ առատաձեռ։ Յակոբ Մարգարեանին պարգեւատրել է Սկանդէրբէգի չքանշանով՝ ի նշանաւորումն իր թագաւորութեան տասնամեակի։ Երկու հայ բժիշկներն էլ բարձր են գնահատուել ալբան ժողովրդից, յատկապէս Փոթուրլեանը, որին թագաւորը

տարբեր առիթներով արտայայտել է իր անձնական երախտագիտութիւնը եւ գնահատանքը՝ մատուցած անգնահատելի ծառայութիւնների համար[19]։

1930ականներին Տիրանայում է ապրել նաեւ զմիւռնիացի Յարութիւն Յակոբեանը (յայտնի Սարհատ անունով)։ Պատանի հասակից եղել է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անդամ, 1890ականներից մասնակցել կուսակցական գործերի, Յունաստանից Զմիւռնիա, Պոլիս եւ Կովկաս փոխադրել զինամթերք։ Պոլսի հայաթափումից յետոյ տեղափոխուել է նախ Յունաստան, ապա հաստատուել է Ալբանիայում[20]։ Այստեղ ունեցել է մի փոքր կալուածք։ Մահացել է 1941ին։

Երբ 1943ին Ալբանիան բռնազաւթել են նացիստական զօրքերը, տեղի հայերը մասնակցել են նրանց դէմ ծաւալուած պայքարին, օժանդակել պարտիզանական շարժմանը։ Ոմանք գերեվարուել են համակենտրոնացման ճամբարներ, չատերը՝ զոհուել։ Ինչպէս վկայել է տարիներ անց Ալբանիայում հիւրընկալուած վերոյիշեալ հայ արուեստագիտուհին՝ «Ապրելով Ալբանիայում, այդ սակաւաթիւ հայերը անմասն չեն մնում ալբանական ժողովրդի կեանքից... Թանգարանում մենք ծանօթացանք այն հերոս հայերի անուններին, որ պատերազմի ժամանակ եղբայրաբար պաշտպանել էին Ալբանիան եւ զոհուել պատուով»[21]։ Վերոյիշեալ ատամնաբոյժ Մանուէլ Աստուրեանը զոհուել է երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, Գերմանիայում՝ տխրահռչակ Մաութհաուզէնի համակենտրոնացման ճամբարի չինարարութեան ժամանակ[22]։ Ալբանիայի նացիստական գրաւման ժամանակ զոհուել են ուրիշ ալբանահայեր եւս, իսկ ազատագրման պայքարում՝ մի քանի հայաստանցի մարտիկներ։

1946ին Ալբանիան հռչակուել է ժողովրդական հանրապետութիւն։ Երկրի նորընտիր ղեկավարը՝ բռնատէր Էնվէր Խոջան, որը չիստուն տարի երկիրը մեկուսացրել է աշխարհից, սեւեռուն նպատակ է դարձրել ամբողջովին ալբանացնել երկիրը։ Խոջան անձամբ անձնական լաւ յարաբերութիւններ է ունեցել հայ համայնքի որոշ անձանց հետ (օրինակ, նրա անձնական ատամնաբոյժն է եղել Աստուրեանը՝ վերոյիշեալ ատամնաբոյժ Մանուէլ Աստուրեանի որդին եւ Էմիլ Աստուրեանի հայրը[23])։ Հայերին թոյլ է տրուել պահել իրենց ազգանունները, սակայն արգելուել է ամէն տեսակի եկեղեցական արարողութիւն, իսկ գաղտնի ոստիկանութիւնը տներից բռնազաւթել է հայերէն գրքերը[24]։

Միւս կողմից 1950-ականներին սկիզբ առաւ խորհրդա-ալբանական մշակութային փոխայցելութիւնների մի կարճ շրջան, եւ Խորհրդային Հայաստանը ներգրաւուեց այդ խորհրդա-ալբանական բարեկամութեան «պարտադիր ծրագրի» մէջ։

«Եղբայրական» հռչակուած երկիր սկսել են այցելել խորհրդահայ արուեստագէտներ։ 1953ին Երեւանի Ճարտարապետների Տանը բացուել է Ալբանիայի տնտեսութեան զարգացմանը նուիրուած յատուկ ցուցահանդէս, ներկայացուել է 250ից աւելի ցուցանմուշ կրթութեան, արուեստի, գրականութեան վերաբերեալ[25]։ Ռուս չարժանկարիչ Սերգէյ Եուտկեւիչի, խորհրդա-ալբանական արտադրութեան «Ալբանիայի Մեծ Զօրավար Սկանդերբէգը» պատմական չարժանկարի (1954) գլխաւոր դերերից մէկը կատարել է հայ բեմի մեծ դերասան Վահրամ Փափազեանը։ 1956ին Երեւան է այցելել ալբանական պատուիրակու-

թիւն եւ Հայաստանում ուսումնասիրել է կրթական աշխատանքի մեթոդները[26]։ Նոյն թուականի աշնանը ալբանացի ֆուտբոլիստներ ժամանել են Երեւան, որոնց օդակայանում դիմաւորել են «Բարի գալուստ թանկագին հիւրերին» հայերէն եւ ալբաներէն մակագրութեամբ պաստառներով։ Սեպտեմբերի 23ին Երեւանի «Սպարտակ» ֆուտբոլի խմբի հետ տեղի է ունեցել հանդիպում[27]։ 1957ի Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներին Ալբանիայում հիւրընկալուել է Հայաստանի Երգի-Պարի Պետական Համոյթը, որը տարբեր բնակավայրերում տուել է 40ից աւելի համերգ՝ արժանանալով ալբանական մամուլի ջերմ գնահատանքին[28]։ Նոյն 1957ին Երեւանում լոյս է տեսել ալբանացի բանաստեղծ Անդոն Ջակօ-Ջայուպիի բանաստեղծութիւնների ժողովածուն՝ թարգմանուած ռուսերէնից[29]։ Նոյն տարին Ալբանիա է այցելել նկարիչ Գրիգոր Խանջեանը, որն ստեղծել է ալբանական բնանկարների եւ դիմանկարների մի շարք՝ «Սկանդէրբէգի Հրապարակը Տիրանայում», «Շուկայ. Ալբանիա», «Վին Գիւղը», «Երիտասարդ Մայր», «Աղջկայ Դիմանկար», «Հանգիստ», «Ալբանական Դիմանկար»[30]։ 1958ին Հայաստան են այցելել ալբանական մշակոյթի գործիչներ, որոնց թուում՝ Տիրանայի Դրամատիկական Թատրոնի անուանի դերասան Ջոկա Պետէրը։ Նա հանդիպումներ է ունեցել հայ արուեստագէտների հետ[31]։ 1958ին են կայացել նաեւ դաշնակահարուհի Արեւիկ Աւդալբէկեանի եւ ջութակահար Յակոբ Վարդանեանի հիւրախաղերն Ալբանիայում, որոնք արժանացել են ալբանական Պունա պարբերականի դրուատիքին[32]։

Ինչպէս տեսնում ենք, բոլոր այս իրողութիւնները վերաբերում են 1950ականներին։ Ալբանա-խորհրդային այս հատուկենտ կապերը չարունակուել են մինչեւ 1968, երբ Ալբանիայի իշխանութիւնները դադարեցրել են երկրի անդամութիւնը Վարշաւայի Ուխտին, խզել ամէն կարգի յարաբերութիւն Խորհրդային Միութեան հետ եւ մեկուսացրել երկիրը ամբողջ աշխարհից։

1990ին Հայաստանի անկախութեան հռչակումով եւ Արեւելեան Եւրոպայում Վարշաւայի Ուխտի մարումով, Ալբանիայի հայերն ազգային զարթօնք են ապրել՝ ազատուելով, ինչպէս ալբանահայ գործիչն է բնորոշել, «յիսնամեայ բռնաբարական կղզիացումից»[33] եւ քայլեր առել կազմակերպուելու իրրեւ համայնք։ 1991ի Մարտի 17ին Տիրանայի հայերը համախմբուել են «Ալբանիայի Հայեր» մշակութային միութեան չուրջ, որի ղեկավար է ընտրուել Յարութիւն Եաղհանէճեանը, քարտուղար՝ նեարդավիրաբոյժ, Տիրանայի Համալսարանի դասախօս Էմիլ Աստուրեանը (ծն. 1956ին)։ Այդպիսով, առաջին անգամ յիսուն տարուայ ընթացքում ալբանահայերը միաւորուել են ազգային կառոյցի չուրջ։ Էմիլ Աստուրեանը հայ մամուլին տեղեկացրել է, որ նոյն թուականի Ապրիլի 21ին մի ալբանացի կաթոլիկ քահանայ պատարագ է մատուցել Վարդանանց հերոսների, 1915ի նահատակների եւ Ալբանիայի հայերի ննջեցեալների յիշատակին։ Նոյն տարում Միութեան մասնաճիւղ է հիմնադրուել Դուրէսում[34]։ «Ալբանիայի Հայեր» միութիւնը կապեր է հաստատել Յունաստանի, Իտալիայի, Լիբանանի հայկական միութիւնների, Լիսաբոնի Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան եւ Փարիզի Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդարանի հետ։ 1990-91ին Ալբանիայի հայերը սերտ կապեր են հաստատել Սալոնիկի ակտիւ հայ համայնքի հետ՝ վերջինից ստանալով ազգային կրթութեան վերաբերեալ նիւթեր։

1990ականների տուեալով՝ Ալբանիայի չուրջ 200 հայերի մի մասը զտարիւն հայեր են, մնացեալը՝ ալբանախառն հայեր (ամուսնացած առաւելապէս ուղղափառ, քան կաթոլիկ կամ մահմեդական ալբանացիների հետ)։ Նրանց ազգանուններն են՝ Աբոյեան, Աստուրեան, Եաղհանէճեան, Զաքարեան, Խաքիճեան, Կիւզէլեան, Հալէպլեան, Մարգարեան, Միրզայեան, Մեսճեան, Շահնայեան, Զաքմաքճեան, Պալճեան, Պատէեան, Պուրնուզեան, Փափազեան, Փիրալեան, Փոթուրլեան, Գնաճեան[35]։ Ըստ ՀՀ Արտաքին Գործերի նախարարութեան 2002ի հրապարակման՝ Ալբանիայում բնակւում է 500 հայ[36], ներառեալ՝ սակաւաթիւ Հայաստանից արտագաղթածներ։ Մեծ մասն ունի բարձրագոյն կրթութիւն եւ աչքի են ընկել յատկապէս իրաւաբանական եւ բժշկական ոլորտներում։

Իրականութեանն աւելի մօտ են թուում Վիքերսի եւ Փեթիֆէրի նշած տուեալները։ Նրանք նշել են, որ Ալբանիայում հայերը հաստատուել են Ցեղասպանութիւնից յետոյ, հիմնականում Տիրանայում, Դուրէսում եւ Վլէօրայում, այնուհետեւ այստեղ են եկել խորհրդային բանակի հայ զինուորականներ իրենց ընտանիքներով։ Ներկայ դրութեամբ նրանց թիւը մօտ 800 է՝ Տիրանայում եւ Վլէօրայում[37]։

Ալբանահայ նոր սերունդների մօտ հայոց լեզուի կատարեալ չիմացութիւն է եղել, բացառութեամբ Կիպրոսի Մելգոնեան կրթական Հաստատութիւնում ուսանած մի քանի ալբանահայ երիտասարդների։ (Անգամ նրանք բաւական հեռացել են հայութիւնից, ինչպէս՝ Աւնի Դրասա Խաքիճեանը, որի հետ հաստատել ենք նամակագրութիւն)։ 1992ին Ցարութիւն Եաղհանէճեանը Տիրանայում կազմակերպել է հայոց լեզուի երկսեռ դասարան։ Նա կոչ է արել սփիւռքահայ միութիւններին սատար կանգնել ալբանահայ նոր սերնդի կրթական կարիքներին՝ նրանց վերջնական ձուլումից հետու պահելու նպատակով։

1993ի Ցուլիսին Ալբանիայի հայերին այցելել են Գիւտ արքեպիսկոպոս Նագգաշեանը Փարիզից՝ Տ. Ժիրայր ծայրագոյն վարդապետ Թալճեանի ընկերակցութեամբ։ Ալբանահայերի մեծ մասը չէր տեսել ո՛չ հայ քահանայ, ո՛չ հայ եկեղեցական արարողութիւն։ Տեղացի ալբանացի կաթոլիկ մի քահանայ իր համերաշխութիւնն է ցոյց տուել հայ հոգեւորականներին՝ երկու անգամ նրանց տրամադրելով իր եկեղեցին։ Մատուցել է հայկական պատարագ, ալբանահայ փոքրիկները մկրտուել եւ օծուել են[38]։

1990ականների սկզբին երկրում տիրող ընկերային-տնտեսական դժուարութիւնների պատճառով սկիզբ է առել Ալբանիայի բնակչութեան զանգուածային արտագաղթը տարբեր երկրներ, հիմնականում՝ Արեւմտեան Եւրոպա։ 1993-1995ին Ալբանիայի հայ համայնքի անդամներից չատերն արտագաղթել են, ոմանք՝ վերադառնալու պայմանով[39]։

Ցիշենք մի քանի աչքի ընկած ալբանահայերի։

Ալբանիայի Հեղինակային Իրաւունքների եւ Ցարակից Հարցերի Ընկերակցութեան նախագահն է երգահան Հայկ Զաքարեանը (ծն. 8.05.1951)։ Միջնակարգ կրթութիւնն ստացել է ծննդավայրում, յաճախել դաշնամուրի եւ այլ երաժշտական գործիքների դասընթացների։ 1969-1974ին երաժշտական յօրինում է ուսանել Տիրանայի Արուեստի Ակադեմիայում։ Զաքարեանը նախ աշխատել է սիրողական երաժշտախմբերի հետ, ապա դարձել Դուրէսի «Մուջո Ուլքինակու» արուեստի դպրոցի դասախօս՝ մի քանի տարի ղեկավարելով այդ

դպրոցի երաժշտութեան տեսութեան եւ յօրինման բաժինը։ Ստեղծագործում է գրեթէ բոլոր երաժշտական սեռերով[40]։ Զաքարեանը յայտնի է առաւելապէս կինօերաժշտութեամբ։ Նա երաժշտութիւն է գրել 27 տեղական չարժանկարների համար, ինչպէս՝ բեմադրիչներ Սահիր Կումբարոյլի «Լաստ Օրէնքի» (1976), Մարկ Տոպալլայի «Ամուսնութեան Զայները» (1978), Գեղիմ Էրեբարէլի «Գիշեր Առանց Լոյս» (1981), Դիմիտէր Անագնոստիի «Եղրայրներ եւ Ընկերներ» (1982), Կուլտիմ Եասկուի «Ընկերները» (1982), «Ջերմ Ջուք» (1983) եւ «Ոսկորդական Ցանցանք» (1987), Կրիստակ Միտրոյի եւ Իբրահիմ Մուլայի «Լաւ Մարդը» (1982), Քաանիֆեսէ Կեկոյի «Տաուլանտին Քոյր է Փնտռում» (1984), Նեժատի Տաֆայի «Դու Ջպիտի Լռես» (1985), Ֆեհմի Հոսհաֆիի «Ցանուն Ազատութեան» (1987) եւն.։ Զաքարեանը եղել է նաեւ «Ալբանա-Հայկական Բարեկամութիւն» Ընկերակցութեան նախագահը։

Ալբանական մի քանի չարժապատկերներում գլխաւոր դերերով հանդէս է եկել հայուհի Անիտա Մարգարեանը (հաւանաբար վերոյիշեալ ատամնաբոյժ Յակոբ Մարգարեանի դերդաստանից)։ Նա ծնուել է 1961ին, Տիրանայում, աւարտել է Տիրանայի Համալսարանի Բժշկութեան Բաժինը։ 1978ին գլխաւոր դեր է ստացել ալբանացի կինօբեմադրիչ Գեղիմ Էրեբարէլի «Կարմիր Ժապաւէններով Աղջիկները» (1978) չարժանկարում, ապա նաեւ՝ Վիկտոր Գյիկայի «Տարին Շուրջբոլոր» (1980), «Գարունը Միայնակ Չի Գալիս» (1988), Պիրօ Միլկանիի «Մերութեան Գոյները» (1990) չարժանկարներում։ Անիտա Մարգարեանը նաեւ վերջին կինօնկարի բեմադրի հեղինակն է։ Յետագայում հաստատուել է Փարիզում, որտեղ նկարահանուել է Լիրի Բեգէյի «Բարբարոսներից Հեռու» ֆիլմում։

Տիրանայում գործող DIDACT ALBA կրթութեանն օժանդակող ընկերութեան նախագահն է Ժիրայր Յովսեփ Զաքմաքճեանը (ծն. 1970), գլխաւոր տնօրէնը՝ Տիրան Զաքմաքճեանը։

Հայ-ալբանական հատուկենտ կապերը չարունակւում են՝ հիմնականում մշակոյթի բնագաւառում, տարածաշրջանային համագործակցութեան ոլորտում։ 1999ին Տիրանայում կայացած արուեստաբուժութեանը նուիրուած միջազգային սեմինարին մասնակցել են նաեւ երեք հայաստանցիներ՝ դերասան Լեովա Իւանեանը, բեմադրիչ Յասմիկ Խաչերեանը եւ երաժշտագէտ Լիլիթ Սիմոնեանը։ 2001ին Երեւանում կայացած «Փոքրիկ, Փոքրիկ, Փոքրիկ» միջտարածքային թատերական փառատօնին մասնակցել են նաեւ դերասաններ Ալբանիայից՝ ներկայացնելով «Մեղալի Երկու Երեսը» բեմադրութիւնը, որ չօշափում էր քաղաքական թեմաներ[41]։

Այսպիսով, ի դէմս ալբանաբնակ սակաւաթիւ հայութեան՝ Եւրոպայի հայ համայնքների խճանկարն ունենում է եւս մէկ գոյն, յար եւ նման այլ փոքր երկրների հայագաղութներին։ Կազմաւորում Մեծ Եղեռնի հետեւանքով, արագ ուծացում ազգային միաւորուած կեանքի բացակայութեան եւ խառն ամուսնութիւնների հետեւանքով, ազգային որոշակի գարթօնք, հատուկենտ աչքի ընկնող ներկայացուցիչներ տարբեր ոլորտներում։ Ինչ վերաբերւում է Հայաստանի եւ Ալբանիայի միջեւ կապերին, ապա դրանք, ինչպիսին էլ որ լինեն, ի սկզբանէ դատապարտուած են ունենալու պարագայական, եւ չարունակելիու-

թիւն չենթադրող բնոյթի՝ առկայ առնչութիւնների սակաւադէպութեան եւ փոխադարձ հետաքրքրութեան ու չահերի դրեթէ բացակայութեան պատճառով։

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Յարութիւն Եաղհանէճեան, «Նամականի», *Մխիթար*, թիւ 13, 1993, էջ 21-24։

[2] Miranda Vickers, James Pettifer, *Albania: from Anarchy to a Balkan Identity*, C. Hurst & Co. Publishers, 1997, էջ 206-207։

[3] James Pettifer, "Back to Life. Doctor Revives Albania's Armenian Community," *Armenian International Magazine*, July 1991, էջ 35։

[4] Տե՛ս՝ Յասմիկ Սահակեան, «Երեմիա Չելեպի Քէօմուրճեանի Մի Անտիպ Պոէմը», *Բանբեր Մատենադարանի*, 6, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ., 1962, էջ 409-27։

[5] Տե՛ս, օրինակ՝ Ազատամարտի Լոնդոնի թղթակից Մ. Բ. Փափազեանի յօդուածները՝ «Ալպանական Դէպքերը եւ Անգլիական Մամուլը», *Ազատամարտ*, 17.20.07.1911, «Ալպանական Դէպքերը եւ Անգլիական կարծիք», նոյն տեղում, 13-26.07.1911 եւն.։

[6] «Տիրանա-Բուդապէշտ-Սոֆիա», *Սովետական Հայրենաց*, թիւ 2, 1958, էջ 62։

[7] «Բարեկամները Գրում Են», *Սովետական Հայրենաց*, թիւ 2, 1958, էջ 66։

[8] «Հայերը Դէպի Ալպանիա», *Մարմարա*, 18.02.1925։

[9] «Հայերը Ալպանիոյ Մէջ», *Ապագայ*, 9.07.1927։

[10] «Հայ Գաղթականներ Ալպանիոյ Մէջ», *Հայրենիք*, 12.09.1928։ Լուրը կրկնուել է նաեւ մի քանի օր անց՝ «Ալպանիա Հայ Շերամապահներ կ'ուզէ», *Հայրենիք*, 19.09.1928։

[11] «Հայեր Ծիրուցան», *Յառաջ*, 18.03.1930։

[12] «Հայերը Ալպանիոյ Մէջ», *Հայրենիք*, 22.09.1932։

[13] Տե՛ս՝ «Նամականուփ», *Ջուարթնոց*, 1.12.1938։

[14] «Հայերը Ալպանիոյ Մէջ», *Հայրենիք*, 22.09.1932։

[15] Հաւանաբար միեւնոյն անձնաւորութիւնն է դերասան Մանուէլ Մարութեանի յուշերում յիշատակուած առատնաբոյժ Յարութիւնը, որը 1926ին բնակուել է Փարիզում, Բէն Ակիբայի դերով մասնակցել Մարութեանի բեմադրած «Ուրիէլ Ակոստա» ներկայացմանը, այնուհետեւ տեղափոխուել է Ալբանիա (Մանուէլ Մարութեան, *Ի՞նչ է Պատահում Բեմի Վրայ, Բեմի Ետեւ եւ Բեմից Դուրս*, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Հայ Տիպ Քոմփիւկրաֆ, 1986, էջ 131)։

[16] «Ալպանիոյ Հայ Գաղութը», *Յառաջ*, 15.04.1932։

[17] «Ալբանիոյ Հայերը», *Հայրենիք*, 16.11.1933։

[18] «Ալպանիոյ Հայերը», *Ալիք*, 6.06.1935։

[19] «Ջոկու Թագաւորին Պալատին Մէջ», *Արագ*, 3.10.1937. նաեւ՝ Albania Honors Court Physicians, *Hairenik Weekly*, 30.09.1938։

[20] Նրա մասին տե՛ս՝ «Սարհատ Մեռած», *Հայրենիք*, 11.07.1930։ «Սարհատ Ողջ է», անդ, 29.07.1930։ «Սարհատ կը Հերքէ Իր Մահը», անդ, 22.08.1930։

[21] «Տիրանա-Բուդապէշտ-Սոֆիա»։

[22] Տե՛ս՝ նրա թոռան՝ բժիշկ Էմիլ Աստուրեանի վկայութիւնը՝ Pettifer։

[23] Vickers, Pettifer, էջ 206։

[24] Pettifer:

[25] «Ալպանական Ծուցահանդէս Երեւանի Մէջ», *Հայաստանի Կոչնակ*, 30.05.1953, էջ 734։

[26] «Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 18.02.1956, էջ 164։

[27] «Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 22.12.1956, էջ 1220։

[28] «Տիրանա-Բուդապէշտ-Սոֆիա», էջ 60։ *Հայաստանի Կոչնակը Հայաստանի Երգիծարի Պետական Համոյթի՝ Ալբանիայում տուած համերգերի թիւը նշել է 96, ինչը թիւրիմացութիւն կամ վրիպակ է («Հայ Ազգային Կեանք», Հայաստանի Կոչնակ*, 23.11.1957, էջ 1124)։

[29] *Անդոն Զակօ-Զայուպի, Բանաստեղծութիւններ, թարգմ. Վահագն Կարինց, Մ. Ճարուխեանան, Երեւան, Հայպետհրատ, 1957։*

[30] Nonna Stepanyan, Boris Zurabov, *Grigor Khandjyan: Jivopis, Grafika* (*Գրիգոր Խանջեան. գեղանկար, գծանկար*), Երեւան, 1987, էջ 37-39։

[31] *Ն. Ստեփանեան, «Զոկա Պետէրը Երեւանում», Սովետական Արուեստ, թիւ 12, 1958, էջ 79։*

[32] *«Բարեկամները Գրում Են»։*

[33] *Եաղհանէճեան, էջ 21։*

[34] Pettifer.

[35] *Նոյն, էջ 22։*

[36] *Տե՛ս՝ Ծովէփ Խուրշուդեան, «Սփիւռքահայ Գաղթօջախների եւ Համայնքների Կապիտալի, Ինովացիոն-Տեխնոլոգիական եւ Մտաւոր Ներուժի Հաշուառում, Քարտէզագրում եւ Դասակարգում», Հայաստան 2020. Զարգացման եւ Անվտանգութեան Ռազմավարութիւն, Երեւան, Տպ. Տիգրան Մեծ, 2003, էջ 364։*

[37] Vickers, Pettifer, *էջ 206։*

[38] *Եաղհանէճեան։*

[39] Vickers, Pettifer, *էջ 206-207։*

[40] http://artistetshqiptare.com/kreu.php?faqe=artist&artID=229

[41] *Արծուի Բախչինեան, «Փոքրիկ, Փոքրիկ, Փոքրիկ.... Միջտարածքային Թատերական Փառատօն Երեւանում», Օրեր, Թ. 1-4, 2001, էջ 35։*

ARMENIANS IN ALBANIA AND ARMENIAN-ALBANIAN RELATIONS
(Summary)

ARTSVI BAKHCHINYAN
Artsvi@yahoo.com

The Armenians have had occasional historical and cultural relations with the smallest of the Balkan countries, Albania. In the early 20th century Armenians from the Ottoman Empire settled in Albania. In 1925 groups of Armenian immigrants lived in various cities of Albania. They totalled 120 in 1935. Mostly craftsmen, some of them owned their own small businesses.

The proclamation of Socialist regime in Albania weakened the local Armenian community and reduced its number. After the collapse of Communism Albanian Armenians made some attempts at unification. In 2002 the 500 or so Armenians founded a cultural association in Tirana called "Armenians of Albania". Currently the community includes some figures like the composer Haig Zaharian and film actress Anica Markarian who are renowned in the Albanian contemporary arts.

ԱԿՆԱՐԿ՝ ԵՐԱԺՇՏԱԳԷՏ-ՄԱՆԿԱՎԱՐԺ ՀԵՂԻՆԷ ՔԱՑԱԽԵԱՆԻ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

ՆԱԹԱԼԻ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
harutyunyan.natalie@gmail.com



Երաժշտագէտ եւ մանկավարժ, ԽՍՀՄ վաստակաւոր ուսուցիչ՝ Հեղինէ Քացախեանը, լինելով Ի. դարի 20ականներին Հայաստանում ձեւաւորուող նոր՝ խորհրդային կրթական համակարգի առաջնեկներից, իր երկար կեանքի ընթացքում անդադար աշխատանքի եւ ինքնակատարելագործման շնորհիւ դարձել էր Հայաստանի երաժշտական կրթութեան ամենահեղինակաւոր մասնագէտներից մէկը, որին սիրով եւ ակնածանքով էին վերաբերւում ոչ միայն Հայաստանում։

Հեղինէ Քացախեանը ծնուել է Թիֆլիսում 1908 կամ 1909ի Յունուարի 1ին[1]։

Ըստ իր յուշերի, նա որոշ ժամանակ յաճախել էր իր քրոջ՝ Մարգարիտի հետ Թիֆլիսի Գայիանեան դպրոցը, սակայն որեւէ փաստաթուղթ այդ մասին չի պահպանուել, եւ նոյնիսկ իր ինքնակենսագրականում նա չի անդրադառնում այդ փաստին։ Հաւանաբար, այդ ժամանակահատուածին է վերաբերւում նաեւ իր մասնակցութիւնը եկեղեցական երգչախմբին, որի մասին նա պատմում էր միայն ընտանեկան շրջապատում[2]։ Իր անձնական թերթիկում պահպանուած ինքնակենսագրականի համաձայն նրա ուսումնառութիւնը սկսուել է 1918ին, երբ ընդունուել է Երեւանի Միասնիկեանի Անուան II (երկրորդ աստիճանի) աշխատանքային դպրոցը, որն աւարտել է 1927ին։ Այդ տարիների ընթացքում բացայայտուեցին Հեղինէի բարձր աշխատունակութիւնը[3], յիշողութիւնը, նրա երաժշտական ընդունակութիւնները եւ առանձնակի սէրը երաժշտութեան հանդէպ, որոնք ուղեկցում էին նրան ողջ կեանքում։ Հետաքրքրական է, որ նրա առաջին քայլերը երաժշտութեան մէջ համընկել են Հայաստանի առաջին հանրապետութեան վերջին՝ 1921ի ընթացքում տեղի ունեցած երկու նշանակալի մշակութային իրադարձութիւնների. 1921 Յունուարի 23ին կայացել է Երեւանի ժողովրդական Համալսարանի հանդիսաւոր բացումը, իսկ նոյն թուի Դեկտեմբերի 22ին բացուել էր Երեւանի Երաժշտական Ստուդիան՝ Ռոմանոս Մելիքեանի ղեկավարութեամբ։ 1924-25 ուսումնական տարում, երբ նրա կազմը համալրուեց յատուկ հրաւիրուած մասնագէտների՝ երաժշտագէտ Սպիրիդոն Մելիքեանի, կոմպոզիտորներ Ալեքսանդր Սպենդիարեանի, Արտեմի Ալվազեանի, փիլիսոփայ Արշակ Ադամեանի եւ այլոց կողմից[4], այն վերափոխուեց կոնսերվատորիայի[5]։ Ստուդիայում նա հետեւել է Սպենդիարեանի տեսութեան եւ կոմպոզիցիայի դասերին[6], զուգահեռ յաճախելով Աննա Մնացականեանի մասնագիտական դաշնա-

մուրի դասարան։ 1927ին Քացախեանն աւարտեց դպրոցը եւ Մոսկուայի, իրաւունք ստանալով աշխատելու մանկապարտէզում։ Ցաւոկ հարկաւոր է նշել, որ Միասնիկեանի Անուան Դպրոցի սաներն աւարտական դասարանում անցնում էին երաժշտութեան եւ նկարչութեան դասաւանդման մեթոդիկա[7] եւ դպրոցն աւարտելուց անմիջապէս յետոյ կարող էին դասաւանդել մանկապարտէզներում երգի եւ նկարչութեան դասեր։ Սպ. Մելիքեանի մեթոդաբանութեան[8] համար հիմքի վրայ Քացախեանը կառուցեց յետագայում սոլֆեջիո տեսական նիւթերի դասաւանդման իր պարզ եւ ազդեցիկ մեթոդը[9]։ Դա թոյլ տուեց նրան, դպրոցն աւարտելուց անմիջապէս յետոյ աշխատանքի ընդունուել Հայտնարկօօպի մանկապարտէզում՝ որպէս մանկավարժ եւ դաշնակահարուհի, միաժամանակ չարունակելով իր ուսումը արդէն նորաստեղծ կոնսերվատորիայում։

1929-1930 ուսումնական տարում, երբ նա դեռեւս սովորում էր Կոնսերվատորիայի Մանկավարժական Բաժանմունքում, սկսեց կազմակերպել Հայաստանի առաջին արհեստավարժ երաժշտական դպրոցը[10]։ 1931ին նա աւարտեց Կոնսերվատորիայի Մանկավարժական Բաժինը, իրաւունք ստանալով աշխատելու երաժշտական դպրոցում, եւ անյապաղ գործի անցաւ որպէս տեսական առարկաների ուսուցչուհի եւ երգչախմբի ղեկավար[11], միաժամանակ աշխատելով նաեւ մանկապարտէզում։ 1932ին, սակայն, տեսնելով, որ աշակերտների թիւը արագ աճում է, նա թողեց մանկապարտէզը[12], լիովին նուիրուելով դպրոցին։

«Սոլֆեջիո» եւ «երաժշտական գրականութիւն» դասանիւթերը, որոնք նա սկսել էր դասաւանդել երաժշտական դպրոցում, պահանջում էին նոր մօտեցում, նոր մեթոդաբանութիւն։ Քացախեանը ուսումնասիրում էր Ռուսաստանի փորձը այդ ասպարէզում, սակայն, իրագործելով այն, փորձում էր միաժամանակ կիրառել այն հայկական նիւթի վրայ։ Ժամանակը քիչ էր։ Հարկաւոր էր պատրաստել ապագայ լիարժէք հայ կոմպոզիտորներ եւ առհասարակ երաժիշտներ, որոնց ականջը[13] արդէն իսկ մանուկ հասակից սովոր պիտի լինէր հայ ելեւէջին, նրա կշռութաւոր եւ կառուցուածքային առանձնայատկութիւններին, որոնք նա պիտի կարողանար տարբերել այլ ազգերի ժողովրդական եւ արհեստավարժ երաժշտութիւնից։ Քացախեանը ցանկանում էր, որ երաժշտական մասնագիտական կրթութեան ծրագրերը Հայաստանում, ընդունելով Մոսկուայից ստացուած մեթոդաբանութիւնն ու ծրագրերը, որոնցում գերիշխում էին եւրոպական դասական եւ ռուսական երաժշտութիւնը, ընդգրկեն նաեւ երեխաների համար մատչելի հայ երաժշտութիւն եւ տարէց-տարի բարդացնելով, ընդգրկեն բաւականին բարդ բազմաձայն օրինակներ։ Նրա նպատակներից ամենակարեւորն այն էր, որ երեխաները զարգանան հնարաւորինս բնականոն ընթացքով, վստահութեան եւ սիրոյ ջերմ մթնոլորտում, սովորելով լուծել ուսումնական բարդ խնդիրները ստեղծագործաբար, կարծես խաղալով։ Դա վերաբերում է մասնաւորապէս սոլֆեջիոյի դասընթացին, որում երեխաները գրում են երաժշտական թելադրութիւններ եւ երաժշտական ստեղծագործութեան իրենց առաջին փորձերն են անում։ Մանուկների ստեղծագործութիւնները այն ժամանակ արդէն իսկ տպագրւում էին *Պիոներ կանչ* եւ այլ մանկական թերթերում[14]։

Այդ անկաշկանդ, հետաքրքրասիրութիւնը արթնացնող մթնոլորտում է, որ մեծացել են այժմ մեծանուն երաժիշտներ՝ կոմպոզիտորներ Առնօ Բաբաջանեանը, Էդուարդ Միրզոյեանը[15] Ալեքսանդր Յարութիւնեանը, Ադամ Խուդոյեանը, Ղազարոս Սարեանը, Գագիկ Հովունցը, Էդգար Յովհաննիսեանը, Ռոբերտ Ամիրխանեանը, Մարտին Վարդազարեանը, կատարողներ՝ Օնիկ Ջաբաջանեանը, Արեւիկ Աւդալբեկեանը, Յակոբ Վարդանեանը, Ադիկ Մատինեանը, Կարէն Կոստանեանը, Ալեքսանդր Ջաուչեանը, Նելլի Դանիէլ-Բէկը, Ջեմֆիրա Բարսեղեանը, Ադա Յակոբեանը, Եաչա Զարգարեանը, Կարապետ Հայրապետեանը, երաժշտագէտներ՝ Մագարիտ Յարութիւնեանը, Գէորգ Գէօդակեանը, Նովալիս Դերոյեանը, Մարգօ Բրուտեանը, Քնարիկ Գրիգորեանը[16], Թերեզա Արազեանը, Ջուլիետտա Ալաւերդեանը եւ բազմաթիւ այլ երաժիշտներ, որոնք ոչ միայն փայլել են համաշխարհային ասպարէզում, այլեւ իրենց հերթին կրթել են երաժիշտների յաջորդ սերունդները[17]:

1941ին, չբաւարարուելով Երեւանի Կոնսերվատորիայի Մանկավարժական բաժնում ստացած իր գիտելիքներով, Քացախեանը մեկնում է Մոսկուա, որպէսզի ընդունուի Մոսկուայի Կոնսերվատորիայի երաժշտագիտական Բաժինը: Սակայն սկսւում է Հայրենական Մեծ Պատերազմը, եւ նա վերադառնում է Երեւան, եւ, չնայած պատերազմի դժուարութիւններին, 1941ին կրկին ընդունւում է Երեւանի Կոնսերվատորիա եւ 1946ին աւարտում է այն որպէս երաժշտագէտ[18]:

1946ից մինչեւ 1969 Քացախեանը աշխատում է նաեւ Կոնսերվատորիային կից Ջայկովսկու Անուան՝ տաղանդաւոր երեխաների համար նորաստեղծ Երաժշտական Տասնամեակում: Այդ դպրոցում նրա սաներն էին կոմպոզիտոր Մ. Վարդազարեանը, դիրիժոր Մելիք Մաւիսակալեանը, երաժշտագէտ Արմէն Բուդաղեանը, թաւջութակահար Ջոն Գէորգեանը, ալտահար Արթուր Սուլթանեանը, դաշնակահարներ Մադլենա Բադալեանը, Իրինա Մեդրակեանը եւ այլ տաղանդաւոր երաժիշտներ:

1953ին Քացախեանը նշանակւում է Ալեքսանդր Սպենդիարեանի Անուան Դպրոցի տնօրէնի ուսումնական խնդիրների տեղակալ:

Ամփոփելով իր դասաւանդման փորձը, նա գրում էր մեթոդական ձեռնարկներ, որոնցից առաջինը նրա հանրայայտ *Մոլֆեջիօն* էր (Երեւան, 1959): Դա Խորհրդային Հայաստանում ստեղծուած սոլֆեջիոյի աննախադէպ մի դասագիրք էր, որը կազմուած էր բացառապէս հայ երաժշտութեան նմուշներից: Դրան կարօտ էին թէ՛ ուսուցիչները, եւ թէ՛ երեխաները: Հասկանալի պատճառներով դասագրքում չեն ընդգրկուած հայ հոգեւոր երաժշտութեան նմուշները[19] եւ որոշ, խորհրդային տարիներին արգելուած հայրենասիրական երգեր, օրինակ՝ «Ջարթիր, Լաօ» երգը: Միեւնոյն ժամանակ, դասագրքում զետեղուած է այդ երգի նոր տարբերակը (տե՛ս 172՝ Բաբաջանեանի «Երիտասարդական»ը), որից կարելի է կռահել, որ այդ երգը կոմպոզիտորին քաջ ծանօթ է եղել, եւ որ հեղինակը ցանկացել է, որ «Ջարթիր, Լաօ»ի մեղեդին, թէկուզ եւ տարբերակմամբ քօղարկուած լինելով, այնուամենայնիւ հնչի եւ արթնացնի հայ մարդու հայրենասիրական զգացմունքները:

Դասագրքի նիւթը ներկայացուած է 3 բաժիններով, որոնցից առաջին եւ երկրորդ բաժիններում ընտրուած են պարզ չափերի մէջ գրուած մեղեդիներ, որտեղ ուսուցչի ուշադրութիւնը կարող է կենտրոնանալ հետզհետէ աւելի

բարդ տոնայնութիւններում երեխաների լսողութիւնը վարժեցնելու խնդիրներին։ Երրորդ եւ չորրորդ մասերում հիմնական ուշադրութիւնն ուղղուած է կշռութաւոր բազմազան բարդութիւնների վրայ, իսկ հինգերորդում՝ երկձայն երգեցողութեան վրայ, որն, ինչպէս յայտնի է, բազմաձայն երգեցողութեան բանալին է։

Սոլֆեջիոյի առաջին հայկական դասագիրքը երաժշտական դպրոցների համար առանձնանում է նախկինում տպագրուած երաժշտութեան դասագրքերից ոչ միայն բազմաձայնութեան եւ այլ երաժշտական խնդիրների հանդէպ առանձնակի ուշադրութեամբ, այլեւ երաժշտական նիւթի բազմազանութեամբ։

Այստեղ են Կոմիտասի, Ռ. Մելիքեանի, Սպ. Մելիքեանի, Վալիա Սամուէլեանի, հայկական ժողովրդական երգերի ձայնագրումները, Քրիստափոր Կարա Մուրզայի, Կոմիտասի, Ռ. Մելիքեանի, Գրիգոր Սիւնու, Մուշեղ Աղայեանի, Թաթուլ Ալթունեանի, Գայիանէ Ջերոտարեանի եւ այլոց ժողովրդական երգերի մշակումները։ Բացի դրանից, ընդգրկուած են յայտնի կոմպոզիտորներ Սպենդիարեանի, Ռ. Մելիքեանի, Անուշաւան Տէր-Ղեւոնդեանի, Ա. Մանուկեանի, Միքայէլ Միրզայեանի, Մարտին Մազմանեանի, Անտոն Մայիլեանի, Կարօ Ջաքարեանի, Նիկողայոս Տիգրանեանի մեղեդիները, հատուածներ Ա. Մանուկեանի «Ջարի վերջը», Մ. Մազմանեանի «Ճուտիկ», Սարգիս Մուրադեանի «Շունն ու կատուն» մանկական օպերաներից, Արմէն Տիգրանեանի «Անոյշ» եւ «Դաւիթ Բէկ», Սպենդիարեանի «Ալմաստ» օպերաներից, Արամ Խաչատրեանի «Գայիանէ» բալէտից։ Ներկայացուած են նաեւ Ալ. Ծարուխիւնեանի, Ստեփան Զրբաշեանի, Է. Ծովհաննիսեանի, Դանիէլ Ղազարեանի, Ռ. Աթայեանի[20], Աշոտ Սաթեանի, Վահագն Արարատեանի, Արամ Սաթունցի, Գ. Սողոմոնեանի, Ա. Հարենցի, Գ. Գեղարիկի, ինչպէս նաեւ կին կոմպոզիտորներ՝ Սուսաննա Գալիկեանի[21], Գեղունի Ջիջեանի, Վալիա Սամուէլեանի, Սոֆիա Սամուէլեանի, Լիւսիա Սաֆարեանի, Գ. Ջերոտարեանի երգերը եւ մշակումները։ Դա մեծապէս նպաստեց հայ երաժիշտների ստեղծագործութիւնների լայն ճանաչման եւ երեխաների ինքնուրոյն ստեղծագործութեան խթանման։

Դասագիրքը, որի 1959ի հրատարակման տպաքանակը 3.000 օրինակ էր, շարունակ վերահրատարակւում էր, իսկ նրա տպաքանակը՝ պահանջարկի աճին համաձայն, շարունակ աճում էր։ 1961ին եւ 1964ին այն արդէն 5.000 էր, 1967ին հասաւ 10.000, իսկ 1969ին՝ 15.000 օրինակի։ Այդուհանդերձ, 1974ին կրկին պահանջուեց նոր վերահրատարակում։ Այսպիսով, 15 տարիների ընթացքում դասագիրքը անփոփոխ վերահրատարակուեց 7 անգամ եւ մինչ օրս կիրառւում է թէ՛ Երեւանի, եւ թէ՛ մարզերի երաժշտական դպրոցներում։

Այդ ձեռնարկին հետեւեցին մի շարք նոր՝ նոյնպէս հայկական երաժշտութեան նիւթերով գրուած սոլֆեջիոյի դասագրքեր, որոնցից նախ եւ առաջ հարկաւոր է նշել Աթայեանի եւ Միքայէլ Տէրեանի կազմած դասագիրքը (Երեւան, 1961), որտեղ օրինակները ներկայացուած են ոչ թէ եւրոպական մաժոր-մինորային համակարգի համաձայն, այլ ըստ հայ երաժշտութեան ձայնեղանակների։ Գնահատելի է նաեւ, որ ամէն երաժշտական նմոյշ ունի համապատասխան յղում իր աղբիւրին՝ այս կամ այն բանահաւաքի կամ կոմպոզիտորի համապատասխան հրապարակուած կամ ձեռագիր երկի[22]։

Քացախեանի դասագիրքը սկիզբ դրեց մի շարք ուսումնասիրութիւնների, որոնք ուղղուած էին հայ երաժշտութեան աւանդոյթներն եւ ընթացիկ կեանքի

երեւոյթները համատեղելու եւ պատշաճ կերպով նոր սերունդներին ներկայացնելուն։

1967ին հրապարակուեց Քացախեանի երաժշտական թելադրութիւնների ժողովածուն, որը նոյնպէս կազմուած էր զուտ հայկական մեղեդիներից։ Բաւականշական է, որ Քացախեանի ջանքերով ռուս կամ այլ ազգի սոլֆեջիոյի նոր ձեռնարկներում տեղադրուեցին նաեւ հայկական նիւթեր[23]։ 1987ին՝ յետմահու[24], լոյս տեսաւ երաժշտական դպրոցների 4րդ դասարանի աշակերտների համար Քացախեանի պատրաստած երաժշտական գրականութեան դասագիրքը։

1969 Դեկտեմբերի 1-28՝ Քացախեանը, Խորհրդային Միութեան արուեստագէտների պատուիրակութեան կազմում, գործուղուեց Բաղդադ՝ երաժշտական նոր կրթօջախ հիմնադրելու։ 1970 Յուլիսի 8-14՝ նա մասնակցել է Մոսկուայում կայացած Թ. Համաշխարհային Խորհրդաժողովին (ISME), որը նուիրուած էր երաժշտական կրթութեան հարցերին[25]։ Հայաստանի կողմից հրաւիրուած էր նաեւ Էդ. Միրզոյեանը։

Քացախեանը յաճախ մասնակցում էր Հայաստանի Կոմպոզիտորների Միութեան կազմակերպած հայ կոմպոզիտորների նոր երկերի քննարկումներին։ Պահպանուել է դրանցից մէկում արտասանած իր ելոյթի ձեռագիրը, որում նա յորդորում է «մանուկների համար նուրբ ճաշակով գեղարուեստական բարձր որակի ստեղծագործութիւններ» գրել, անդրադառնալով երեխաների համար գրուած երաժշտութեան բոլոր ոլորտներին եւ մանրամասնելով ամէնքի պահանջմունքները[26]։ Անճամբ ճանաչելով երաժիշտներից շատերին, անընդմէջ պահպանելով նրանցից շատերի հետ բարեկամական յարաբերութիւնները, նա մշտապէս լսում էր նոր ստեղծագործութիւնները եւ պարզորոշ կերպով արտայայտում էր իր կարծիքը դրանց մասին։ Նա ուշադիր լսում էր ուսուցիչների կարծիքները այդ ստեղծագործութիւնների զուտ կատարողական առաւելութիւնների եւ թերութիւնների մասին, եւ իր դրուատանքով կամ քննադատութեամբ, որոնք սովորաբար խորապէս հիմնաւորուած էին լինում, օգնում էր լաւագոյն երկերի լայն ճանաչմանը, ինչն իր հերթին նպաստում էր ժողովրդի գեղարուեստական ճաշակի բարձրացմանը։ Մասնակցում էր նաեւ երաժշտական կրթութեան խնդիրների քննարկումներին մամուլում[27]։

Առհասարակ, Քացախեանին իրրեւ մարդու եւ մասնագէտի բնորոշ գիծը ուշադրութիւնն էր մարդու՝ յատկապէս ստեղծագործող մարդու նկատմամբ։ Նա հիանալի հասկանում եւ զգում էր նրանցից ամէն մէկի հոգեբանութիւնը, ակներեւ հեշտութեամբ չփման եզրեր գտնելով ե՛ւ երեխաների, ե՛ւ մեծերի հետ[28]։ Նրա բացառիկ յիշողութիւնը թոյլ էր տալիս անսխալ վերականգնել ամէնը, ինչ կապուած էր տուեալ անձնաւորութեան հետ, սակայն նա երբեւիցէ իր գիտելիքն ի չարի չէր կիրառում եւ նոյնիսկ ծայրաստիճան վրդովուած լինելով, նախընտրում էր կրկին բարի եւ կամեցող վերաբերմունք ցուցաբերել։

Սոլֆեջիոյի դասագրքի, սոլֆեջիոյի թելադրութիւնների եւ երաժշտական գրականութեան դասագրքից բացի, Քացախեանը թողել է նաեւ անտիպ աշխատութիւններ՝ «Սոլֆեջիո Առարկայի Դասաւանդման Մեթոդիկա», «Երաժշտական Թելադրութեան Դասաւանդման Մեթոդիկա», «Ալ. Սպենդիարեանի Անուան Երաժշտական Դպրոցում Ընդունելութեան Քննութիւնների Անցկացման Մեթոդիկա» եւ «Երաժշտատեսական Առարկաների Դասաւանդման 50 Տարուայ Փորձը Հայաստանում»։

1960ի Նոյեմբերի 24ին Քացախեանին չնորհուեց Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան Վաստակաւոր Ուսուցչի կոչում։ Նա պարգեւատրուել է «Հայրենական Մեծ Պատերազմի՝ 1941-45 Տարիներին Քաջակորով Աշխատանքի Համար» չքադրամով (1946), Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի Նախագահութեան Պատուոգրով (1965), «Վ. Ի. Լենինի Մննդեան 100ամեակի Առթիւ՝ Քաջակորով Աշխատանքի Համար» չքադրամով (1970) եւ «Պատուոյ Նշան» չքանշանով (1971)։

Հեղինէ Քացախեանը մահացել է 1986 Սեպտեմբերի 13ին։

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Քացախեանի ծննդեան վկայականում նշուած է 1908, որը չի համապատասխանում անձնագրում ամրագրուած եւ այլ բոլոր պաշտօնական փաստաթղթերում հաստատուած 1909 թուին։ Այսօր դժուար է ստոյգ պարզաբանել դրա պատճառները, եւ, քանի որ Հեղինէ Քացախեանի բոլոր յոբելեանները նշուած են եղել մէկ տարուայ ուշացումով, ապա եւ, շարունակելով այդ աւանդոյթը, 100ամեակն էլ մէկ տարով պէտք է ուշանար։ Սակայն ո՛չ 2008, ո՛չ էլ 2009ին որեւէ անդրադարձ նրա անունը Հայաստանում նկատուեց։ Այս համեստ ակնարկը մի փորձ է մոռացութիւնից փրկելու նրա աւանդը՝ Ի. դարի հայ երաժշտութեան պատմութեան համար։

[2] Գալիանեան դպրոցին վերաբերող միակ յիշատակումը Քացախեանի գրառումներում կապուած է Սպիրիդոն Մելիքեանի անուան հետ։ Վերջինիս մանկավարժական գործունէութիւնը սկսւում է Թբիլիսիի Գալիանեան դպրոցից, որտեղ նա տալիս էր երգեցողութեան դասեր, ապա Երեւանում 1925ին Միասնիկեանի Անուան Դպրոցում կազմակերպել էր երգեցիկ խումբ (Սպիրիդոն Մելիքեան, Ազգային Արխիւ (ԱԱ), Ֆոնդ 1274, ցուցակ 3, գործ 10, ձեռագիր)։

[3] Մինչ օրս պահպանուել է նրա պատմութեան տետրը, գրուած շատ գեղեցիկ մանր ձեռագրով, որում նա, հաւանաբար, կատակի համար, նշել է տետրակի աւարտի պահը՝ «1926 թուի Մարտի 14ին ժամը 12ին», ինչպէս նաեւ այդ «պատմական իրադարձութեանը ներկայ իր բոլոր ընկերուհիների անունները եւ տեղը։

[4] Տե՛ս՝ Armen Budagian, *Yerevanskaya Gosudarstvennaya Konservatoria Imeni Komitasa - 85*, (Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիա - 85), Երեւան, 2008, էջ 10, 19։

[5] Կոմիտասի անունով այն կոչուել է աւելի ուշ, 1946 Դեկտեմբերին՝ Մշակոյթի Նախարարութեան ընդունած առանձին որոշմամբ։

[6] Այդ դասերը նա վարում էր ոչ-պաշտօնական կարգով՝ իր ընտրած ուսանողների համար։

[7] Քացախեաններից ընտանեկան արխիւում պահպանուել է Միասնիկեանի Անուան Աշխատանքային II դպրոցի կողմից տրուած աւարտական վկայականը, որտեղ թուարկուած են այնտեղ դասաւանդուած բոլոր առարկաները։ Այդ ցուցակում կան՝ «Երաժշտութիւն Եւ Երաժշտութ. Մեթոդիկա», «Նկարչութիւն Եւ Նկարչութ. Մեթոդիկա»։ Քացախեանի դպրոցական դասընկերուհի՝ գեղանկարչուհի Հեղինէ Աբրահամեանը հաւատում, որ երաժշտութեան հետ Սպ. Մելիքեանը դասաւանդում էր երաժշտութեան մեթոդիկա եւ աւելացրեց, որ նկարչութեան մեթոդիկան նոյնպէս դասաւանդւում էր։

[8] Սպ. Մելիքեանի դասաւանդման արմատները թերեւս պէտք է փնտռել հայկական ձայնանիշերով գրուած երգի ձեռնարկների մէջ։ Այդպիսիք լոյս էին տեսել Ժ-Թ. դարի վերջում եւ կիրառւում էին հայ դպրոցներում նաեւ Ի. դարի սկզբում։ Դրանց շարքին է Նիկողայոս Թաշճեանի *Դասագիրք Եկեղեցական Քաղեցգրութեան Հայոց դա-*

սադիրքը (Էջմիածին, 1874), որին յաջորդել էին Եղնիկ քահանայ Երզնկեանցի Դասագիրք Հայկական Քաղաքրութեան (Էջմիածին, 1887) եւ Արշակ Բրուտեանի Հայկական Եկեղեցական Միասեան Երգեցողութեան Ուսումնասիրութիւնների եւ Միջնակարգ Դպրոցների Համար (Էջմիածին, 1890) դասագրքերը։ Համեմատելով դրանք Սպ. Մելիքեանի կազմած Դասագիրք Երգեցողութեան։ Ժողովածու՝ Հայկական Ժողովրդական, Ազգային եւ Եւրոպական (Թարգմանած) Միաձայն Երգերի (երկու մասից, երկուսն էլ՝ Թիֆլիս, 1912) ձեռնարկի հետ, նախատեսուած թ՛ւ ծխական, թ՛ւ թեմական դպրոցների համար, կարելի է նկատել, որ էութեամբ եւ բովանդակութեամբ նա հետեւում է իր նախորդների՝ յատկապէս Երզնկեանցի դասագրքի հիմնական սկզբունքներին։ Ի դէպ, վերջինիս դասագիրքը բաւականին տարողունակ եւ հիմնաւոր է, իսկ նրա նախաբանում գետեղուած է 1886 Դեկտեմբերի 15ին Թիֆլիսում հեղինակի յօդուածը՝ «Մի Բացատրութիւն Հանրակրթական Դպրոցների Երաժշտութեան Ուսուցիչների Համար», որն այսօր էլ չի կորցրել իր մեթոդաբանական նշանակութիւնը։ Ի տարբերութիւն Երզնկեանցի, Սպ. Մելիքեանը ընդամէնը մէկ բացատրութեամբ, որն «Մ՛ով, Հայոց Աստուած» երգն է, զետեղել է իր ձեռնարկում աշխարհիկ՝ ժողովրդական եւ հեղինակային երգեր։ Երկրորդ տարբերութիւնն աւելի ակնբեւ է. Սպ. Մելիքեանի ձեռնարկը, ինչպես նաեւ մէկ տարի յետոյ Սանկտ-Պետերբուրգում հրատարակուած Ռ. Մելիքեանի եւ Ա. Մանուկեանի կազմած Երաժշտական Ալբենարանը, գրուած են եւրոպական, այլ ո՛չ հայկական ձայնանիշերով։ Մակայն բոլոր յիշատակուած ձեռնարկները, բացառութեամբ Սպ. Մելիքեանի ձեռնարկին, ունեն մէկ ընդհանուր թերութիւն. նրանցում չի նշուած երգերի հեղինակների անունները։ Հարկաւոր է ասել, սակայն որ Սպ. Մելիքեանն էլ հետեւողական չի գտնուել իր գաղափարի նկատմամբ. նա նշել է ոչ-բոլոր երգերի հեղինակներին եւ մի քանի դէպքերում նշել է ոչ թէ երգի անուանումը, այլ երգի առաջին բառերը (օրինակ, «Իտալացի Աղջկայ Երգը» նա ներկայացրել է որպէս «Մեր Հայրենիք» առանց նշելու երգի կոմպոզիտորին եւն.)։ Միւս կողմից, այդ ձեռնարկում հայ ժողովրդական երգերն ու պարեղանակները որպէս այդպիսիք ներկայացուած են աշակերտութեանը։ Դա թոյլ տուեց ուսուցման մէջ ընդգրկել նաեւ երաժշտագիտականազգագրական որոշ տարրեր։ Սպ. Մելիքեանին նուիրուած իր ակնարկում Քացախեանը նշել է. «Պէտք է ասել, որ այդ շրջանում ոչ միայն Սպ. Մելիքեանն էր աշխատում հանրակրթական դպրոցում, այլեւ մեր լաւագոյն մանկավարժներ՝ կոմպոզիտոր Միքայէլ Միրզոյեանը, Ազատ Մանուկեանը, Ռոմանոս Մելիքեանը։ Բոլորն էլ ազգային երգերը համարում էին սրբութիւն եւ մատաղ սերնդին դաստիարակում էին ազգային ոգով» (*Սպիրիդոն Մելիքեան, նոյն*)։ *Վերջինս կոնսերվատորիայում Մանկավարժական Ֆակուլտէտի ստեղծման նախաձեռնողներից մէկն էր։ Ի դէպ, Ֆակուլտէտի առաջին խմբի 40 ուսանողներից աւարտեցին միայն չորս հոգի, որոնցից երեքը՝ Սաթիկ Ալամազեանը, Սուսաննա Վարդանեանը եւ Հեղինէ Քացախեանը նուիրուեցին երաժշտական մանկավարժութեան գործին։*

[9] *Նկարագրելով Մելիքեանի դասաւանդման մեթոդը, նա գրել է.* «Նրա դասաւանդման հիմքը հայկական ժողովրդական երգն էր։ Սպիրիդոն Մելիքեանը ուսուցանում էր երեխաներին հայկական երգեր, օրինակ՝ Հոյ-Նար, Աղուէսը, Ջաղցի Դռնով եւ այլն, ինքը կատարում էր խօսքերով, ապա երեխաները գտնում էին նոտաները, տեւողութիւնը, ապա գրում գրատախտակին եւ արտագրում տետրերում։ (...) Ամենագլխաւորը, երգի ուսուցումը կատարում էին կամերտոնով, առանց դաշնամուրի օգնութեան։ Սպիրիդոն Մելիքեանի մեթոդիկայում գնահատելին այն է, որ նա դաստիարակում էր երեխաներին հայկական ժողովրդական երգի ինտոնացիայով, բացի այդ կամերտոնի գործածութիւնը զարգացնում է երեխաների մէջ ինտոնացիայի մաքրութիւնը։ Յաւօք սրտի պիտի ասել, որ հիմա օգտագործում ենք շատ քիչ» (*նոյն*)։ *Ի դէպ, պահպանուել է Սուրէն Զարեկեանի՝ Սպ. Մելիքեանին պատկերող մի*

երգիծանկար, որում պարզ երեւում է ձեռքում բարձր պահած կամերտոնը (Budagian, էջ 39)։

[10] Սկզբում այն քառամեայ էր։ 1930ին նրան շնորհուեց Սպենդիարեանի անունը, իսկ 1935ին այն դարձաւ եօթնամեայ (*Ա. Սպենդիարեանի Անուան Երաժշտական Մասնագիտական Դպրոց - 75, կազմ.՝ Նոնա Ոսկանեան, Երեւան, 2006*)։ 1993ից դպրոցում գործում են նաեւ բարձր դասարաններ եւ փաստօրէն այն տասնամեայ է դարձել, սակայն մինչ օրս դպրոցի պաշտօնական կարգավիճակը՝ որպէս եօթնամեայ դպրոցի, անփոփոխ է։ Սպենդիարեանի անուան պատիւը բարձր պահելու անհրաժեշտութեան գիտակցութեամբ, նա ներտօրէն համագործակցեց Սպենդիարեանի տուն-թանգարանի հետ եւ դարձաւ «Սպենդիարեանականների Ակումբ»ի նախաձեռնող խմբի անդամ։ Հաւաքելով դպրոցի պատմութեան համար կարեւորութիւն ունեցող արձանագրութիւններ, նամակներ, լուսանկարներ, ծրագրեր եւ յուշանուէրներ, նա յոյս ունէր երբեւիցէ տեսնել սիրելի դպրոցի պատմութեան մի թանգարան։ Ցաւօք, այն ստեղծուեց նրա մահուանից յետոյ, երբ դպրոցի տնօրէնը դարձաւ ջուխտակահար եւ խմբավար Մերուժան Սիմոնեանը։ Վերջինիս ջանքերով եւ նոյնպէս նրա նախկին աշակերտ՝ գործարար Ռուբէն Յարութիւնեանի շնորհիւ 1998ի Նոյեմբերի 26ին բացուեց հետաքրքրական եւ դեղեցիկ մի թանգարան, որին շնորհուեց Հեղինէ Քացախեանի անունը՝ որպէս դպրոցի հիմնադիրներից մէկի։ Ցաւօք, թանգարանն երկար չգոյատեւեց։

[11] Անդրադառնալով այդ տարիների դասաւանդման իր փորձին, Քացախեանը գրել է. «Մենք շատ լավ ծանօթ էինք հայկական մանկական երաժշտութեան հետ. Ա. Տէր-Ղեւոնդեան, Ռ. Մելիքեան, Ա. Մանուկեան, Ա. Մայիլեան, Մ. Միրզայեան, Մ. Մազմանեան: Գիտէինք ռուսական, արեւմտաեւրոպական կոմպոզիտորների ստեղծագործութիւնները: Մեր դասաւանդման մեթոդիկան բազմազան չէր, բայց հետաքրքրացնում էինք երեխաներին» (*«Սոլֆեջիոյի Եւ Երաժշտական Գրականութեան Դասաւանդման Առաջընթացը 1930 Թուից ԵՒս Այսօր»* (*մինչեւ 1984*) , *ՀՀ ԱԱ, Ֆ. 274, ց. 3, գ. 18*)։

[12] Այդ մանկապարտէզի հետ կապուած Քացախեանը, որին մանկապարտէզի երեխաները անուանում էին պարզապէս «ընկեր Էլիա», մի հետաքրքրական դէպք է պատմել։ Մի օր մանկապարտէզ էր այցելել Մոսկուայից Երեւան ժամանած դեռեւս ոչ այդքան յայտնի կոմպոզիտոր՝ Արամ Խաչատրեանը։ Նա եկել էր երեխաների երաժշտական տուեալները՝ լսողութիւնը, կշռոյթի զգացողութիւնը եւն. ստուգելու, քանի որ նա մտահոգուած էր ընդունակ երեխաների յետագայ երաժշտական կրթութեան հարցերով։ Երեխաներից մէկը՝ փոքրիկ Առնօն մի խաղ է առաջարկում Մոսկուայից եկած «քեռուն»։ Ասում է. դու մի նոտայի հարուածիր, իսկ ես քեզ կ՝ասեմ, թէ դա որ նոտան է։ Այդպէս, մի մանկապարտէզում, կայացաւ երկու հայ մեծ կոմպոզիտորների՝ Արամ Խաչատրեանի եւ Առնօ Բաբաջանեանի առաջին հանդիպումը, որը ինչ-որ տեղ կանխորոշեց վերջինիս ճակատագիրը։ Հասկանալի է, որ այդ խաղին փոքրիկ Առնօն ծանօթացել էր «ընկեր Էլիա»ի շնորհիւ, որի մօտ եւ շարունակել էր իր ուսումը Ա. Սպենդիարեանի Անուան Երաժշտական Դպրոցում։

[13] Հետաքրքրական է, որ Քացախեանի համար «ականջ» ասածը, ի տարբերութիւն «լսողութեան», մի տեսակ փիլիսոփայական, բայց միաժամանակ խիստ գործնական նշանակութիւն ունէր։ Դա մարդու ֆիզիկական բնութեան եւ նրա հոգեւոր կերտուածքի իւրատեսակ մի չափանիշ էր։ «Ականջ ունեցող» նա անուանում էր ոչ միայն լաւ լսողութիւն ունեցող երաժիշտներին, այլ նրանց, ում աշխարհընկալումը լսողական տեսակի էր եւ նրանում վառ կերպով արտայայտուած էին այդ անձնաւորութեան ճաշակը, բնազդը եւ ինտելեկտը իրենց միասնութեամբ։ Դա մշտապէս արտասանուում էր յարգանքով եւ հաւատով, նոյնիսկ եթէ այդ ականջ ունեցողը մի փոքր երեխայ լինէր։ Իսկ «ականջ չունի» նա ասում էր ամենածայրայեղ դէպքում, երբ իր

համար պարզ էր դառնում, որ, այդ անձնաւորութեան համար երաժշտութեան մէջ որեւէ անելիք չկայ։

[14] Եղիշէ Զարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանում պահպանւում է Բաբաջանեանի «Պիոներական Քայլերգ»ի ձեռագիրը, որը նա գրել է 9 տարեկան հասակում՝ Զարենցի մակագրութեամբ։ Դա կոմպոզիտորի ամենաառաջին տպագրուած ստեղծագործութիւնն է (ԳԱԹ, Ա. Բաբաջանեանի Անուան Ֆոնդ)։

[15] Արձագանգելով Քացախեանին վաստակաւոր ուսուցչի կոչման շնորհմանը, կոմպոզիտոր Միրզոյեանը գրել է. «Հիանալի արդիւնքներ է տուել երաժշտութեան այդ համեստ մշակի գործունէութիւնը։ Է. Քացախեանի ձեռքի տակով անցել է 1.000ից աւելի աշակերտ։ Նրանցից շատ-շատերը, ինչպէս պէտք էր սպասել, այժմ դարձել են երաժշտութեան ասպարէզի ճանաչուած եւ անուանի մասնագէտներ։ Ահա անունների մի շարք, որը կարող է պատիւ բերել ամէն մի ուսուցչի. կոմպոզիտորներ Ա. Յարութիւնեան, Ա. Բաբաջանեան, Ղ. Սարեան, Է. Յովհաննիսեան, Ջ. Տէր-Թադեւոսեան, Ա. Ածեմեան, միջազգային մրցանակաբաշխութեան լաւրեատներ Եու. Եղիգարեան, Ժան Տէր-Մերկերեան։ Քացախեանի այս եւ շատ ու շատ աշակերտներ միշտ մեծ երախտագիտութեամբ ու սիրով են յիշում հարազատ ուսուցչուհու անունը» («*Մեր Ուսուցիչը, Մեր Ընկեր Էլիան*», *Երեկոյեան Երեւան*, 15 Դեկտեմբեր 1960)։

[16] Քնարիկ Գրիգորեանը յայտնի է որպէս Սպենդիարեանի կեանքի եւ գործունէութեան հետեւողականօրէն ուսումնասիրող երաժշտագէտ։ Նա ոչ միայն հեղինակ է *Ալ. Սպենդիարեան. Կեանքը Եւ Ստեղծագործութիւնը* ուսումնասիրութեանը (Երեւան, 1952), այլեւ կազմել, խմբագրել եւ ներածական յօդուած է գրել Սպենդիարեանի գրական ժառանգութեան՝ յուշերի եւ նամակների հրապարակման համար՝ *Alexander Spendiarian. Vospominaniya, Pisma* (*Ալեքսանդր Սպենդիարեան, յուշեր, նամակներ*), Երեւան, 1962։ Քացախեանին եւ Գրիգորեանին միասրտում էին սէրն ու նուիրումը աշխատանքի եւ մեծ կոմպոզիտորի արուեստի նկատմամբ։ Նրանք սպենդիարեանականների ակումբի հիմնադիր անդամներից էին։ «Սիրելի ուսուցչուհուս, ընկերուհուս, կոլլեգայիս Էլիայիս՝ լաւագոյն ցանկութիւններով»՝ այսպէս է մակագրել Գրիգորեանը իր գրքերից մէկը, նուիրելով այն Քացախեանին եւ այն յատկանշական է նրանց պարզ, ջերմ եւ անմիջական յարաբերութիւնների համար։

[17] Ալ. Սպենդիարեանի Անուան Դպրոցի տնօրէններից երկուսը՝ Բարկէն (Բորիս) Սարգսեանը (1956-82) եւ Մերուժան Սիմոնեանը (1997-99) նոյնպէս նրա աշակերտներն են եղել։ Մանկավարժութեան ասպարէզում երկար տարիներ աշխատում էին նաեւ Պետրոս Հայկազեանը, Էլզա եւ Ռոզա Թանդիլեանները, Տատիանա Հայրապետեանը, Անահիտ Շահբազեանը եւ շատ ուրիշներ։

[18] Այն տարիներին Երեւանի Կոնսերվատորիայում նրան դասաւանդում էին Վարդգէս Տալեանը (հայ երաժշտութեան պատմութիւն եւ պոլիֆոնիա), Հայկ Գիւլիքէօխվեանը (գրականութիւն եւ էսթետիկա), Գէորգ Մաճկալեանը (թատրոնի պատմութիւն), Ջաւէն Վարդանեանը (երաժշտութեան պատմութիւն), եւն.։ Ուսանողական տարիներից պահպանուել են նրա գրառումները, որոնցից չատ հետաքրքիր է «Հայ Երգը Իր Ճիւղերով» ուսումնասիրութիւնը (ՀՀ ԱԱ Ֆ. 1274, ց. 3, գ. 12)։

[19] Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի Ժողովրդական Ստեղծագործութեան Ամբիոնում պահպանուող Ազատ Մանուկեանի կազմած *Փոքրիկ Մանկական Երգարանի* մէջ միակ հոգեւոր նմուշի՝ # 21 «Աղօթք» երգի վրայ մեծ խաչ է քաշած։ Ի դէպ, Սպ. Մելիքեանի կազմած ժողովածուի միակ հոգեւոր նմուշը՝ Մակար Եկմալեանի «Մ՛ով, Հայոց Աստուած» երգը խորհրդային տարիներից մինչ օրս հնչում է այսպէս կոչուած «դաւադրաբար»։ Ճիշտ է, այդ դէպքում, երաժշտութեան բնոյթը պահպանելով, որոշակի վերափոխման են ենթարկուել երգի բառերը. այժմ այն հնչում է որպէս «Մ՛ով, Հայոց Աշխարհ»։ Այնուամենայնիւ, երաժշտութեան լիցքը

եւ կատարման յատակօրէն վեհ եղանակը նոյնիսկ այդ չէզոք խօսքերի դէպքում խոր ու ազդեցիկ տպաւորութիւն են գործում։ Ի տարբերութիւն երգի ճչգրիտ խօսքերով կատարմանը, որի ազդեցութեան մէջ մեծ է գիտակցականօրէն աղօթքն ասելու տրամադրուածութեան դերը, փոփոխութեան ենթարկուած տարրերակի լիցքը ազդում է առաւելապէս ենթագիտակցութեան վրայ։ Հետաքրքրական է, որ Քացախեանի խիզախումը՝ զուտ հայկական նմուշներով սոլֆէջիոյի ձեռնարկ գրելու եւ պետական պատուէրով այն լոյս ընծայելու 1959ին, երբ Ստալինի մահուան օրից անցել էր ընդամէնը 6 տարի, խթանեց նոր աշխատանքներն այդ ուղղութեամբ։ Արդէն 1961ին Քացախեանի *Սոլֆէջիոյի* խմբագիր՝ երաժշտագէտ Աթայեանի եւ խմբավար Տէրեանի համատեղ աշխատանքով լոյս տեսաւ մի նոր սոլֆէջիոյի ժողովածու, որում արդէն ընդգրկուած էին կոմիտասի «Տաղք եւ Ալելուք», ինչպէս նաեւ Եկմալեանի «Պատարագ»ի հատուածները։

[20] Իր գործունէութեան սկզբնական շրջանում յայտնի երաժշտագէտ Աթայեանը ստեղծագործում էր, եւ դա շատ կարեւոր է հասկանալու համար նրա կատարած աշխատանքի, մասնաւորապէս կոմիտասի ստեղծագործութիւնների խմբագրութեան հետ կապուած հարցեր։

[21] Սուսաննա Գալիկեանը ոչ միայն մանկական երգերի, այլեւ կարեւոր նշանակութիւն ունեցող մի ձեռնարկի՝ Նախադպրոցական երաժշտական *Խաղերի եւ Պարերի Ձեռնարկի* հեղինակ է։ Այն հրատարակուել է Երեւանում, 1961ին։

[22] 1965ին լոյս տեսաւ նոյն հեղինակների *Երկձայն եւ Եռաձայն Սոլֆէջիոյ* ձեռնարկը, գրուած նոյն՝ ակադեմիական ոճով։ Այդ դասագրքերը մեծ մասամբ կիրառւում են երաժշտական ուսումնարաններում եւ կոնսերվատորիայում, դպրոցներում՝ աւելի սակաւ։ 1977ին հրատարակուեց Սոֆիա Սամուէլեանի եւ Ստեփան Նաղդեանի կազմած սոլֆէջիոյի դասագիրքը, որը հայ եւ եւրոպական կոմպոզիտորների երաժշտական օրինակներից բացի առաջարկում է նաեւ յատուկ մշակուած ձայնավարժութիւններ, որոնք օգնում են երեխաներին ընկալել այս կամ այն դասի երաժշտական նիւթը։ Այն վերահրատարակուել է 1982ին եւ մինչ օրս յաջողութեամբ կիրառւում է երաժշտական դպրոցներում։ 1980ին լոյս տեսաւ Եուրի Գէորգեանի եւ Ց. Բեքարեանի *Սոլֆէջիոյ* դասագիրքը, որում արտայայտուել է հեղինակների նոր մօտեցումը առարկայի հանդէպ։

[23] Պահպանուել են նրա գործընկերներ՝ Մարիա Պաւլովնա Անդրէեւայի եւ այլոց հետ նամակագրութիւնը, որտեղ ասւում է հայկական երաժշտութեան նմուշների ներմուծման մասին այդ հեղինակների ձեռնարկներում. «Ես ունեմ հայկական սոլֆեջիոյի երկու ձեռնարկներ, որոնք Դուք ինձ նուիրել էք,- գրել է Անդրէեւան,- Այնտեղից որոշ մեղեդիներ ես արդէն փոխառել եմ։ Ցանկալի կը լինէր հայկական երգեր լինէին նուագակցութեամբ, ռուսերէն թարգմանուած տեքստով՝ որեւէ մի գեղարուեստական գործ» (*ԱԱ, Ֆոնդ 1274, ցուցակ 3, գործ 23, ձեռագիր*)։ Նման խնդրանքները չատ էին ուրախացնում Քացախեանին, եւ նա մշտապէս սիրով կատարում էր դրանք։ *Մենք՝ աշակերտներս, ապրում էինք հաճելի զարմանքի պահեր, երբ նոր լոյս տեսած ռուսական ձեռնարկներում գտնում էինք մեր երգերը, որոնցից ոմանք կարող էին դեռեւս մեզ անծանօթ հայկական ժողովրդական երգեր լինել, եւ դա էլ աւելի հետաքրքիր էր դարձնում մեր դասերը։*

[24] Քացախեանը ցանկանում էր, որ առնուազն իր այդ դասագիրքը լոյս տեսնի պատկերազարդ՝ գունաւոր նկարներով, որպէսզի երեխաների համար այն լինի առաւել հաճելի եւ տրամադրող։ Սակայն այդ ցանկութիւնը ոչ ոք չէր չտապում կատարել, եւ ապաւելով, որ այդ հնարաւորութիւնը ընձեռնուի, նա յետաձգում էր գրքի լոյսընծայումը։ Ի վերջոյ, հասկանալով, որ օրհասական պահը մօտեցել է, տպարանի աշխատողներն 1986ին արագացնում են տպագրման աշխատանքները, բայց եւ այնպէս

իր վերջին դասագիրքը պատկերազարդ տեսնելու ցանկութիւնը մնում է չիրականացուած։

[25] ISME – International Society of Music Education: Նրա ելոյթի բնագիրը չի պահպանուել, սակայն պահպանուել են նրա գրառումները խորհրդաժողովին ելոյթ ունեցած մի շարք այլ հեղինակների մասին. իր սովորութեան համաձայն, Քացախեանը մշտապէս գրանցում էր ամէն մի նորոյթ, որը կարող էր օգտակար լինել երաժշտական կրթութեան ասպարէզում։ Իր անուանի «Մոլինկիլոյի եւ երաժշտական Գրականութեան Դասաւանդման Առաջընթացը 1930 Թուից Առ Այսօր» (մինչեւ 1984) երկում Քացախեանը ներկայացրել է բազմաթիւ բաց դասեր, մեթոդական զեկուցումներ, խորհրդաժողովներ, Մոսկուայի, Լենինգրադի (Ս. Պետերբուրգ), Վիլնիուսի, Տալլինի, Ռիգայի, Խարկովի, Մինսկի, Թբիլիսիի, Բաքուի գործակիցների հետ, որոնք տեղի են ունեցել նշուած ժամանակամիջոցում (ՀՀ ԱԱ, ֆ. 274, ց. 3, գ. 18)

[26] ԱԱ, ֆ.1274, ց. 3, գ. 10 (ձեռագիր) տարեթիւը չի նշուած, ենթադրաբար, դա 60ականներին է։ Այդ ելոյթում Քացախեանը մասնաւորապէս յորդորում էր երիտասարդ կոմպոզիտորներ՝ Սոֆիա Սամուէլեանին եւ Գեղունի Զքիչեանին աւելի շատ երգեր գրել երեխաների համար, ասելով, որ նրանք կարող են գրել լաւ երգեր, բայց քիչ են գրում։ Այսօր կարելի է ասել, որ Զքիչեանը յայտնի է հայ մանուկների համար գրուած իր բազմաթիւ երգերով։ Մանկուց ճանաչելով եւ սիրելով այդ երգերը, ապագայ երաժիշտները յետագայում սիրով անդրադառնում են նրա վոկալ եւ գործիքային այլ ստեղծագործութիւններին։

[27] Պահպանուել է Մովեռական Արուեստ ամսագրում նրա ելոյթը երաժշտական կրթութեան ընթացիկ հարցերով։

[28] «Օր-օրի փոխւում է կեանքը, զարգանում ու հարստանում: Պէտք է հասկանալ աշակերտի հոգեբանութիւնը, ճանաչել իւրաքանչիւրին, որպէսզի հնարաւոր լինի գտնել այն բանալին, որն ամենաարդիւնաւէտը կը լինի երաժշտութեան հիմունքները սովորեցնելու համար: Ամէն անգամ, երբ պատկերացրել եմ, որ դասարանում սպասող անհամբեր հայեացքներ կան, հետաքրքրասէր ու բանիմաց աշակերտներ, կրկին անգամ զգացել եմ, որ շատ զգոյշ պիտի մտնել դասարան, շատ պատրաստուած, որովհետեւ դու պատասխանատու ես քո իւրաքանչիւր խօսքի, իւրաքանչիւր մեկնաբանութեան համար»՝ *ասել է Քացախեանը Լեանգարդ Թերթի Թղթակցին (Գոհար Ռչտունի, «Անուն Բարձր Ու Վսեմ. Գեղեցիկ Ապրած Օրերի Ուսուցիչը», Լեանգարդ, 05.10.1980)։ Կարծում ենք, նրա այս խօսքերը մշտապէս արդիական են։*

AN OVERVIEW OF HEGHINE KATSAKHIAN'S PEDAGOGICAL AND MUSICAL ACTIVITY
(Summary)

NATALY HARUTUNIAN
harutyunyan.natalie@gmail.com

The author brings to the limelight the pedagogical activity of Heghine Katsakhian, who had a significant input in the development of a number of musicians and composers in Soviet Armenia and in the promotion of children's music.

Born in Tbilisi in 1908/09, Katsakhian studied in the newly inaugurated Yerevan Musical Studio under the able directorship of Romanos Melikian. In parallel, she attended the piano classes of Anna Mnatsakanian. After graduating from school, she started working as a piano and music teacher in a kindergarten while she continued her studies in the newly inaugurated Yerevan Conservatory.

In 1931 she graduated from the Conservatory and started working in the first professional music school in Armenia. She taught theory and conducted the school choir. Several renowned musicians graduated from this school, including Edward Mirzoyan, Alexander Harutunian, Adam Khudoyan, Ghazaros Sarian, Gagik Hovunts, Edgar Hovhannissian, Robert Amirkhanian, Martin Vartazarian and many others.


The author narrates the dedication of Katsakhian to music and pedagogy and the effort she put into persuading Armenian composers to compose children's songs and music.

Katsakhian's main contribution, however, was in the field of school textbooks. After dedicating herself totally to schoolwork in 1932, she published her methodology textbook, *Solfegio* in 1959. This was the first musical textbook that included Armenian compositions. In some fifteen years the book had seven reprints with a total of over thirty-five thousand copies, and it is still being used in Yerevan and musical schools elsewhere.

The author assessed the textbook along with a number of similar Armenian textbooks that were published after 1874 and asserts that Katsakhian approached Armenian music teaching in an innovative way and enriched its traditions.

ԱՇՈՏ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ (1937-1999)
(Ստեղծագործական Դիմանկար)

ՆԱԶԵՆԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ
m_ag@inbox.ru



Աշոտ Ասատուրեան



Տեսարան «Արա Գեղեցիկ Եւ Շամիրամ» բալէտից. Շամիրամ՝ Էլվիրա Մնացականեան, Արա Գեղեցիկ՝ Յովհաննէս Դիւանեան

Աշոտ Ասատուրեանը, պատկանում է այն արուեստագէտների թուին, որոնց ստեղծագործութեան մասին ասում են՝ «այն ամէնքի համար չէ»։ Նա մահացաւ 1999 Մայիսին, Երեւանում, ընդամէնը 62 տարեկան հասակում։ Իր 33ամեայ բալէտմայստէրական գործունէութեան ընթացքում նա ստեղծեց 22 բալէտ՝ Լենինգրադում (Սանկտ-Պետերբուրգ), Սարատովում, Եկատերինբուրգում, Երեւանում, Չելիաբինսկում, Խարկովում, Թբիլիսիում, Բաքուում։ Սա՝ չհաշուած այն բոլոր «դասական» կարգավիճակ ունեցող բալէտների վերաբեմադրութիւնները, չհաշուած այն բոլոր օպերային եւ դրամատիկ ներկայացումները, որոնցում նա շատ անգամ հանդէս եկաւ որպէս բեմադրութեան համահեղինակ։ Չհաշուած նաեւ բազում խորեոգրաֆիկ մանրանկարները։ Եւ տակաւին՝ բազմաթիւ բեմական մարմնաւորում չստացած իր հեղինակած բեմագրերը՝ «Ապուշը» (ըստ Ֆիոդոր Դոստոեւսկու համանուն վէպի), «Ֆեդրա»ն (Ռասինի դրամայի հիմքով), «Կերպարանափոխութիւններ» (ըստ Մաքսիմ Գորկու «Աղջիկը եւ Մահը» երկի), «Վազք» (ըստ Միխայիլ Բուլգակո-

վի դրամայի, որը մտայղացած էր իրականացնել կոմպոզիտոր Կոնստանտին Օրբելեանի համագործակցութեամբ), «Ռուզանը» (ըստ Մուրացանի համանուն դրամայի), «Շէյխ Սանան» (արեւելեան սիրավէպի հիմքով), «Սեւանը» (Գրիգոր Եղիազարեանի երաժշտութեամբ), եւն.[1]։

Ասատուրեանի կենսագրութիւնը երեւի թէ ամենայատակ ձեւով չարագրուած է իր վերջին՝ 1997ին Խարկովի Ուկրաինական Օպերայի եւ Բալէտի Թատրոնում բեմադրուած, Սերգէյ Ռախմանինովի «Սիմֆոնիկ Պարերը» բալէտի իր ծրագրում.-

«Հիւանդոտ զգայունակութեամբ եւ բոցավառ երեւակայութեամբ, անյոյս սիրահարած երաժիշտը ճանապարհ է ընկնում փնտռելու իր երազանքը: Նրա զգացմունքները, յոյզերը, յիշողութիւնները մարմնաւորւում են երաժշտական մտքերի եւ կերպարների ձեւով: Բայց ահա, փշոտ ճանապարհին, անցնելով կրքերի խռովքի եւ հոգեկան տագնապի միջով, նա հանդիպում է իր Մուսային՝ իր Հայրենիքը, որը դառնում է նրա համար մեղեդի, սեւեռուն գաղափար, որը հետապնդում է նրան ամէնուր: Նա ճանաչում է տրտմութիւն եւ թախիծ ողբերգական վալսի պարեղանակում: Ամենահարազատ մեղեդին մղձաւանջային ստուերներում է, նրա սիրտը ճզմւում է, նրան տոգորում են մռայլ մտքեր՝ արդեօ՞ք հաւատարիմ է նա, ճի՞շտ է արդեօք իր ընտրած ուղին: Սարսափելի մենութեան մէջ նա լսում է մեղեդին՝ Հայրենիքը սպասում է նրան: Կրկին վերադառնում է սեւեռուն գաղափարը՝ սիրոյ մասին վերջին մտքի կերպարանքով, որն ընդհատուել է ճակատագրական քայլով՝ նա լքել է Հայրենիքը:
Հերոսը տարօրինակ ամբոխի շրջապատում է գտնւում, նրա ականջներում հնչում են տնքոցներ, ճչոցներ, ծիծաղի պայթիւններ, սակայն չի լսում մեղեդին. ներդաշնակութիւնը լքել է նրան: Խրախճանքը շարունակւում է, լսում են քայլերգի հնչիւններ: Դա թաղման զանգահարութիւն է: Հնչում է Dies irae[2], Հայրենիքի գրկում նա շարունակում է իր փշոտ ճանապարհը»:

Բալէտում ընդգրկուած երաժշտութիւնը՝ «Սիմֆոնիկ Պարերը», Ռախմանինովի վերջին ստեղծագործութիւնն է: Սա նաեւ Աչոտ Ասատուրեանի բեմադրած վերջին բալէտն է:

«Սիմֆոնիկ պարերը,- *նշում է Ասատուրեանը,*- կոմպոզիտորի վերջին երկն է, գրուած 1940ին: Ըստ էութեան, սա ինքնատիպ եռամաս սիմֆոնիա է, որի մէջ չկան պարեր պարզեցուած (մաքուր) տեսքով եւ անուանումը չի համապատասխանում ստեղծագործութեան մէջ ներդրուած խոր բովանդակութեանը: Ես կ'անուանէի դա, երեւի թէ «Փիլիսոփայական պարեր», որովհետեւ երկում ներդրուած են փիլիսոփայական խնդիրներ եւ համամարդկային գաղափարներ: Ստեղծագործութեան մէջ ներդրուած են անհատական, ենթակայական մտորումներ: Կարելի է ենթադրել, որ սա պատմութիւն է Արուեստագէտի դառը ճակատագրի մասին, հայրենաբաղձութեան եւ Արուեստագէտի մենակութեան մասին: Ինքը՝ հեղինակը սկզբնապէս ենթադրում էր տալ երկի մասերին ծրագրային անուանումներ՝ «Առաւօտ», «Կէ-

սօր», «Երեկոյ»: Սակայն խմբագրութեան վերջին պահին նա հրաժարուեց որեւէ պարզաբանումներից, ըստ երեւոյթին չկամենալով ընդգծել յօրինուածքի ինքնակենսագրական բնոյթը:

Բալէտը մտայղացած է որպէս եռամաս պարային սիմֆոնիա Արուեստագէտի ճակատագրի, ստեղծագործական ներտումների ու հիասթափութիւնների մասին: Սա գլխաւոր հերոսի խոստովանութիւնն է նրա հայրենաբաղձութեան եւ հոգու ներդաշնակութեան կորստի մասին: Երկի երեք մասերը, համաձայն կոմպոզիտորի մտայղացման, կապուած չեն յաջորդական որոշակի բովանդակութեամբ: Դրանց միաւորում են Հերոսի ներքին երկխօսութիւնը, նրա յոյզերը, ապրումները: «Առաւօտ», «Կէսօր», «Երեկոյ» խորագրերը հնարաւոր է մեկնաբանել նաեւ որպէս «Ծնունդ», «Մեղսագործութիւն», «Համբարձում» եւ կամ՝ «Իմացութիւն», «Հիասթափութիւն» եւ «Մահ»: Բալէտի գլխաւոր թեման է արուեստագէտի գոյացումը գեղեցկութեան եւ ներդաշնակութեան որոնումներում, աշխարհի արուեստագիտական մտապատկերի կազմաւորումը: Պատահական չէ, որ կոմպոզիտորը անդրադառնում է Բեթհովէնի տիտանական 9րդ սիմֆոնիային: Գլխաւոր թեման «Սիմֆոնիկ Պարեր»ում մերձենում է 9րդ սիմֆոնիայի գլխաւոր թեմային:

«Սիմֆոնիկ Պարեր»ը կոմպոզիտորի «կարապի» երգն է, այս ողբերգական սիմֆոնիան աւարտում է ոչ թէ «Գովերգ (ներբող) ուրախութեամբ (բերկրութեամբ)», այլ «Dies irae»ով: Այստեղ Ռախմանինովը մերձենում է Բերլիոզին, սակայն եւ Բերլիոզը գլուխ էր խոնարհում Մեծ Բեթհովէնի առաջ»[3]:

Շարադրուած «Սիմֆոնիկ Պարեր» բալէտի բեմագրի եւ Ռախմանինովի երկի վերլուծման ամէն տողի տակ, ինքը՝ Ասատուրեանը կարող է ստորագրել. «Սա իմ մասին է, իմ կեանքի պատմութիւնը»: Ուստի մենք էլ, Ասատուրեանի ստեղծագործական դիմանկարը շարադրելիս օգտուում ենք «Սիմֆոնիկ Պարեր»ի բաժիններից վերնագրերից, դրանց աւելացնելով ենթավերնագրեր:

ԱՌԱՒՕՏ
Թբիլիսի

Աչոտ Ասատուրեանը ծնուել է 1937 փետրուարի 20ին, Թբիլիսիի Հալաբար հայաբնակ արհեստաւորական թաղամասում, կօշկակար Անդրէյ Ասատուրեանի ընտանիքում: Այս փաստը կարծես կանխորոշում էր նրա ապագան, նամանաւանդ որ հայրը հաստատուն որոշում էր ընդունել, որ Աչոտը նոյնպէս պէտք է կօշկակար դառնայ: Որոշ չափով արուեստին կապուած էր նրա մայրը, որը տնային տնտեսուհի լինելով հանդերձ՝ չափազանց սիրում էր թատրոնը, գնում էր համերգների, օժտուած էր դերասանական որոշ տուեալներով, շատ պատկերաւոր կերպով ցուցադրում էր Հալաբարի բակերում հարեւանների միջեւ ծագող աղմկոտ վիճաբանութիւնները. նաեւ հեքիաթների դերասանօրէն պատմող էր: Բազմանդամ ընտանիքը (հայր, մայր եւ վեց երեխայ՝ չորս որդի, երկու դուստր, Աչոտը չորրորդն էր) բնակւում էր մէկ փոքր սենեակում: Արդէն 13 տարեկան հասակում Աչոտին ուղարկեցին աշխատելու գործարանում

որպէս բանուոր-կօշկակար՝ հացի փող վաստակելու։ Սակայն էլ աւելի վաղ շրջանից Աստուրեանը առանձնանում էր ընտանիքի տեսանկիւնից «տարօրինակ», զարմանալի եւ ոչ-այդքան ցանկալի ունակութիւններով։ Նա պաշտում էր դասական երաժշտութիւնը, որն իր կուռքը մնաց ողջ կեանքի ընթացքում։ Հնարաւորութիւն եւ միջոցներ չունենալով յաճախելու երաժշտական դպրոց, նա ստուարաթղթի վրայ նկարեց դաշնամուրի ստեղնաշարը եւ «պարապումնուագում» էր դրա վրայ։ Շատ վաղ յայտնաբերուեցին նաեւ նրա ունակութիւնները գեղանկարչութեան ասպարէզում։ Եւ վերջապէս, նա տոգորուած էր բալէտի արուեստով։ Ի վերջոյ, դէմ դնելով ընտանիքի, մանաւանդ հօր եւ մեծ եղբօր արգելքներին, Աստուրեանը 12 տարեկան հասակում (որն արդէն, բալէտի օրէնքներով, մեծ տարիք է պարարուեստով լուրջ զբաղուելու համար) ընդունուեց Թբիլիսիի Պարարուեստի Ուսումնարանի փորձարարական դասարանը։ Այստեղից սկսւում է Աստուրեանի վերընթաց ճանապարհը դէպի բալէտմայստէրի դժուարագոյն մասնագիտութիւնը։

Թբիլիսի - Սանկտ-Պետերբուրգ

Աշոտ Աստուրեանը ստացել է իր ժամանակի համար եւ Խորհրդային Միութեան պայմաններում բարձրակարգ եւ բարձրագոյն կրթութիւնը որպէս բալէտմայստէր։ Թբիլիսիի Պարարուեստի Ուսումնարանում սովորել է ընդհատումներով՝ 1962ի ամռանը աւարտելով Խորհրդային Միութեան ժողովրդական արտիստ, ականաւոր պարող եւ բալէտմայստէր Վախթանգ Ճաբուկիանիի (1910-1992) դասարանը։ Մէջընդմէջ նա պարել է Թբիլիսիի Փալիաշուիլու Անուան Օպերայի եւ Բալէտի Ակադեմիական Թատրոնում եւ Տաշքենդում՝ Նավոյիի Ուզբեկական Ակադեմիական Օպերայի եւ Բալէտի Մեծ Թատրոնում։ Իսկ պարային գործնական փորձը շատ կարեւոր է բալէտմայստէրի համար։ 1962ին նա ընդունուեց Լենինգրադի Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովի Անուան Կոնսերվատորիայի նորաբաց Բալէտմայստէրական Բաժինը, որի կազմակերպիչն ու ղեկավարն էր ռուս ականաւոր բալէտմայստէր, նորարար Ֆիոդոր Լոպուխովը (1886-1973)։ Ինչպէս նշում է Էռա Բարուտչեան.-

> «Լոպուխովը հրաւիրեց այնպիսի յարգուած պաշտօնակիցների, ինչպիսիք էին Նինա Ալեքսանդրովնա Անիսիմովան, Իգոր Դմիտրիեւիչ Բելսկին, Նատալիա Ալեքսանդրովնա Կամկովան[4], նաեւ դասական ժառանգութեան գիտակներին։ Սկզբում մասնագիտութիւնը՝ բալէտմայստէրական վարպետութիւնը, վարում էր ինքը՝ Լոպուխովը։ Սակայն շուտով տասներկու հոգուց բաղկացած կուրսը նա բաժանեց երեք արուեստանոցների։ Իր արուեստանոցում նա թողեց ընտրեալ ամենասիրելի ուսանողներին՝ Աշոտ Աստուրեանին, Նիկոլայ Մարգարեանցին[5], Գէորգի Ալեքսիձէին[6] եւ Եֆիմ Խմելնիցկուն[7]։ Բոլորը վառ անհատականութիւններ էին։ Եւ բոլորից պրոֆեսորը ստեղծագործական հրաշքներ էր սպասում»[8]։

Պէտք է նշել, որ Լոպուխովի ստեղծագործական հաւատամքի ներքոյ ձեւաւորուել են ոչ միայն Խորհրդային Միութեան լաւագոյն բալէտմայստէրներ Եուրի Գրիգորովիչի (ծն. 1927)[9], Վլադիմիր Վարկովիցկու[10] (1915-1974), կոնս-

տանտին Բոյարսկու (1915-1974) խորեոգրաֆիկ ոճերը, այլեւ ամերիկեան հանճարեղ Ջորջ Բալանչինի (1904-1983) սիմֆոնիկ պարի գաղափարը, քանի որ երիտասարդ Գէորգի Բալանչիւաձէն (Բալանչինի իսկական անուն-ազգանունը) 1920ականներին Բեթհովէնի Չորրորդ Սիմֆոնիայի երաժշտութեամբ Լոպուխովի նորարարական «Պար-սիմֆոնիայի» ստեղծման անմիջական մասնակիցն է եղել։

Ի՞նչ է նշանակում լինել Լոպուխովի աշակերտը եւ ընդհանրապէս Լենինգրադի Կոնսերվատորիայի Բալէտմայստէրական Բաժնի առաջին շրջանաւարտներից մէկը։ Ասատուրեանը, ի տարբերութիւն բազում բալէտմայստէրների, բեմադրում էր երաժշտական պարտիտուրով, այլ ոչ թէ լսողութեամբ (այսինքն, ընկալելով երաժշտութիւնը զուտ նուագակցող դաշնակահարի նուագից, ձայնասկաւառակից կամ էլ ձայներիզից)։ Ստեղծագործութեան դաշնամուրային տարբերակը հիանալիօրէն նուագում էր նոտաներից, գիտէր բեմադրուող ներկայացման երաժշտութեան գործիքաւորման բոլոր առանձնայատկութիւնները։ Ուսումնասիրել էր երաժշտութեան տեսութեան բոլոր հիմնարար բաժինները՝ երաժշտութեան տարրական տեսութիւն, ներդաշնակութիւն, բազմաձայնութիւն, երաժշտական ձեւի վերլուծման հիմունքներ։ Սա թոյլ էր տալիս նրան բացայայտել երաժշտութեան բոլոր ելեւէջները եւ դրանք արտայայտել պարարուեստի միջոցներով՝ կարծես «տեսանելի» դարձնելով երաժշտութիւնը։ Սա ակնյայտ է դառնում Ասատուրեանի բեմադրութիւնների վերլուծման ընթացքում[11]։ Նաեւ անհրաժեշտ է նշել կերպարուեստի խորը իմացութիւնը, որը, զուգորդուելով Ասատուրեանի գեղարուեստական ճիրքի հետ, թոյլ տուեց նրան ստեղծել իր բեմադրած մի շարք բալէտների՝ Արիփ Մելիքովի (ծն. 1933) «Առասպել Սիրոյ Մասին»՝ ըստ «Ֆարհադ եւ Շիրին» սիրավէպի, Արամ Խաչատրեանի «Գայիանէ», Սերգէյ Բալասանեանի (1902-1982) «Լէյլի եւ Մեջնուն»՝ համանուն արեւելեան սիրավէպի հիմքով) բեմական գլեւստների ուրուագծերը, որոնք մարմնաւորուեցին նշուած ներկայացումներում։

Գեղարուեստի եւ բեմական տարածքի ճիշտ պատկերացումը թոյլ էր տալիս Ասատուրեանին լուծել նաեւ ներկայացման լուսաւորման հարցերը, արտայայտչական ճիշտ չեշտադրումներ անելով եւ ստեղծելով «լուսային իմաստական յաջորդաշարք», ինչն ակնյայտօրէն դրսեւորուել է նրա բազմաթիւ ներկայացումներում։ Ուսուցման տարիները Խորհրդային Միութեան ամենաառաջատար արուեստի կենտրոնում՝ Լենինգրադում, թոյլ տուեցին Ասատուրեանին դեռեւս 1960ականներին ծանօթանալ ոչ միայն առաջնակարգ ռուսական բալէտի լաւագոյն նմուշներին եւ կատարողներին, ներկայ լինել թէ՛ տեղական, թէ՛ արտասահմանեան նուագախմբերի համերգներին, ճանաչել ոչ միայն ռուս, այլեւ արեւմտաեւրոպական արդիապաշտ երաժշտութիւնը, այլեւ ծանօթանալ արեւմտեան «պարի դպրոց»ի եւ ի. դարի համաշխարհային բալէտի այժմէական, արդիական միտումներին[12]։

Ընկալելով դրանք՝ նա յետագայում իր բեմադրութիւնները իրականացնում էր՝ ելնելով այդ միտումների չափանիշների բարձունքից։ Եւ թերեւս այդ էր պատճառը, որ նրա երկերը, նրա պարային «լեզուն» թէ՛ զարմացնում էին իրենց նորարարութեամբ, թէ՛ յաճախ հերքւում ու չէին ընդունւում, յաճախ էլ քննադատւում էին Խորհրդային Միութիւնում լայն տարածում գտած 30ական-ների եւ դեռեւս 60ականներին կենսունակ «դրամբալէտի»[13] ջատագովների

կողմից։ Վերջապէս, զուտ անձնական հակումների շնորհիւ Ասատուրեանը դեռեւս Լենինգրադում ճանաչեց ոչ միայն բարձրորակ գեղարուեստական գրականութիւնը, այլեւ հիմնովին ուսումնասիրեց փիլիսոփայական եւ աստուածաբանական գրականութիւնը։ Այդ մասին վկայում են նրա արխիւում պահպանուած լենինգրադեան գրադարաններում կարդացած գրականութեան իր կողմից կազմուած քարտարանը։ Ամէն հերթական բալէտային երկ ստեղծելիս, ինչպէս նաեւ բալէտային բեմագրեր գրելիս, նա հիմնովին ծանօթանում էր տուեալ երկի, դիպաշարի, երաժշտութեան հետ կապուած ոչ միայն փիլիսոփայական եւ աստուածաբանական (հարկ եղած դէպքում) գրականութեանը, այլեւ դրա հետ առնչուող գիտական՝ պատմական, արուեստագիտական, երաժշտագիտական, բանասիրական գրականութեանը։ Դրա ապացոյցն են նրա անձնական արխիւում պահպանուած իր բեմադրութիւնների եւ բալէտային բեմագրերի պարզաբանագրերը։

Ի դէպ, Ասատուրեանը այլ մարդկանց, նոյնիսկ մերձաւորների կողմից, ընկալուել է որպէս սակաւախօս մարդ։ Երբեք չի պատմել իր մտայղացումների մասին, տրամադրուած չի եղել, ինչպէս շատերը, երկար մեկնաբանել իր երկերի ներիմաստը։ Աւելին։ Եթէ կարդանք պաշտօնականօրէն հրապարակուած Ասատուրեանի բալէտների լիբրետոները, իսկ այնուհետեւ համադրենք դրանք նրա բալէտների տեսագրութիւնների եւ անձնական տետրերում գրառուած մտորումների հետ, ապա կը պարզուի, որ հրապարակուած լիբրետօն (որը կազմում էր բալէտմայստէրն ինքը) կարծես դիտաւորեալ կերպով թաքցնում է այն, ինչ բեմադրութեան մէջ ներդրել էր բալէտմայստէրը։

Աչոտ Ասատուրեանը բեմադրիչ էր, որը պարային լեզուով մարմնաւորում է շատ խորը մտքեր։ Նրա ներկայացումը դիտելուց յետոյ հանդիսատեսը չէր հեռանում «թեթեւ» եւ «դեղեցիկ» բալէտից զուարճացած, այլ՝ միշտ ընկնում էր մտորումների գիրկը եւ երկար մտածում թէ՛ բարոյական, թէ՛ փիլիսոփայական հարցերի շուրջ։ Թերեւս այդ է պատճառը, որ, կրկնենք, Աչոտ Ասատուրեանի ստեղծագործութիւնը ամէնքի համար չէ։

Վերադառնանք Լենինգրադ։ Ուսման տարիներին Ասատուրեանը մի շարք բեմադրութիւններ է իրականացրել Լենինգրադի Կոնսերվատորիայի Օպերային Ստուդիայի Բալէտային խմբում։ Նշուած խումբը 1961ին հիմնել եւ երկար տարիներ ղեկավարել է Ռուսաստանի վաստակաւոր արտիստուհի Նինա Ռուբէնի Միրիմանովան[14], յատկապէս նկատի ունենալով, որ նոր բալէտմայստէրական բաժանմունքի ուսանողները պէտք է յատուկ բեմահարթակ եւ պարային խումբ ունենան իրենց ուսանողական ստեղծագործական փորձերը իրականացնելու համար։ Այս բեմահարթակում Ասատուրեանը բեմադրել է՝ 1963ին Ռախմանինովի «Պրելիւդը» (4 րոպէ, համարը, տոնայնութիւնը նշուած չեն) եւ «Խաղաթղթերով Պար»ը Արամ Խաչատրեանի երաժշտութեամբ (որոշակի երաժշտական երկը նշուած չէ), 1964ին՝ Ռախմանինովի «Երկու Երաժշտական Ակնթարթ» (թիւը կամ տոնայնութիւնը նշուած չեն), 1965ին՝ Ռախմանինովի «Էտիւդ»ը (կրկին թիւը եւ տոնայնութիւնը նշուած չեն), Բորիս Պրորոկովի «Ա Զպէտք է Կրկնուի» գծանկաչական սերիայի մոտիւներով (այս երկը ներկայացուել է 1965ին Մոսկուայում կայացած Ժամանակակից Պարի Համամիութենական Մրցոյթում), 1966ին՝ աշխատանք Իգոր Ստրաւինսկու «Օրփէոս» բալէտի վրայ, 1967ին՝ 1) հատուածներ Ստրաւինսկու «Փերիի Համբոյրը» բալէտից, 2)

խորեոգրաֆիկ յօրինուածք «Ցաչիզմի Զոհերի Ցիշատակին» Դմիտրի Շոստակովիչի «Թիւ 8 Կուարտէտ»ի երաժշտութեամբ[15]։

1967ին Ասատուրեանն աւարտում է Լենինգրադի Կոնսերվատորիայի Բալէտմայստէրական Բաժինը, որպէս դիպլոմային ներկայացում ցուցադրելով Մելիքովի «Առասպել Սիրոյ Մասին» ամբողջական, մեծածաւալ (3 դործողութեամբ) բալէտը Սարատովի Նիկոլայ Չերնիշեւսկու Անուան Օպերայի եւ Բալէտի Թատրոնում՝ ստանալով «բալէտմայստէրի վարպետութիւն» աւարկայի քննական «գերազանց» գնահատականը։

ԿԷՍՕՐ
Սարատով

1968ին Ասատուրեանը ստանձնում է Սարատովի Օպերայի եւ Բալէտի Թատրոնի գլխաւոր բալէտմայստէրի պաշտօնը։ Այստեղ նա աշխատեց մինչեւ 1973։ Այդ ժամանակ նա բեմադրեց.- 1968ին՝ արդէն յիշատակուած «Առասպել Սիրոյ Մասին» եւ Պիտեր Չայկովսկու «Մարդուկ-Ջարդուկ» բալէտները, 1969ին՝ յարմարեցրեց դասական՝ Լիւդուիկոս Մինկուսի «Դոն Կիխոտ» բալէտը (Մարիինեան՝ Կիրովի Անուան Լենինգրադի Օպերայի եւ Բալէտի Թատրոնի տարբերակը), 1971ին՝ ռուս կոմպոզիտոր Էդուարդ Լազարեւի (ծն. 1935) «Անտոնիոս եւ Կլէոպատրա» բալէտը, 1972ին՝ Խաչատրեանի «Գայիանէ»ն։

1971ին նա բեմադրեց Սուերդլովսկի (այժմ Եկատերինբուրգ) Անատոլի Լունաչարսկու Անուան Ակադեմիական Օպերայի եւ Բալէտի Թատրոնում «Առասպել Սիրոյ Մասին» բալէտը, իրականացրեց մի շարք օպերաների պարային հատուածների բեմադրութիւնը, ինչպէս նաեւ մի շարք խորեոգրաֆիկ երկեր Սարատովի Պարարուեստի Ուսումնարանի սաների համար։ Հիւրախաղերի է տարել խումբը Ռուսաստանի մի շարք քաղաքներ եւ արտասահման (Հիւսիսային Կորէա)։

Տեղին ենք գտնում մէջբերել հատուածներ Ասատուրեանի հետ Սարատովում ստեղծագործական ժամանակաշրջանի գործակից Ռուսաստանի վաստակաւոր արտիստ Գեննադի Ալբերտի (ծն. 1947) մեզ ուղարկած յուշերից[16]*.-*

> «Այնպէս ստացուեց, որ ես աշխատել եմ Աշոտ Անդրէյի Ասատուրեանի հետ չորս թատերաշրջան՝ 1968-1972: Ցանկութիւն է առաջանում աւելացնել՝ ընդամէնը չորս թատերաշրջան... Եթէ իմ կեանքում չլինէր այս չորս թատերաշրջանը, ապա համոզուած եմ, պարարուեստի իմ ընկալումը ընդհանրապէս, իսկ դերասանի եւ բալէտմայստէրի գործունէութիւնը մասնաւորապէս կ'ընթանային հաւանաբար այլ կերպ: Սարատով: 1968: Չերնիշեւսկու Անուան Օպերայի եւ Բալէտի Թատրոն: Բալէտային խմբի եւ նրա ղեկավարի առաջին հանդիպումը: Պ. Չայկովսկու «Մարդուկ-Ջարդուկ» ապագայ առաջնախաղի ներածութիւն, եւ բալէտմայստէր, որը նստած է դաշնամուրի առջեւ եւ բացատրում է դո-մաժոր աղաջոյի տարբերութիւնը սոլ-մաժոր աղաջոյից: Եւ այնուհետեւ, կտրուկ անջատելով ձեռքերը դաշնամուրի ստեղնաշարից, բալէտմայստերը կանգնեց իդէալական երկրորդ դիրքով եւ համարեա լրիւ ուժով կատարեց grand-plie (*բալէտային չարժում՝ խորը նստել եւ բարձրանալ - Ն.Մ.*), պարզաբանելով, որ այս

շարժման մէջ է պարփակուած երեխայի կողմից մեծահասակների աշխարհի ճանաչման ողջ իմաստը... Դերասանների եւ բալետմայստէրի հանդիպման մասին աւելի բանաստեղծական պատմութիւն ես այլեւս չեմ լսել»։

Ալբերտը նաեւ նշում է, որ Ասատուրեան բալետմայստէրի համար սիմֆոնիկ պարը եղել է ալֆա եւ օմեգա։ Իւրաքանչիւր դրուագ, որ բեմադրուած էր «դրամբալէտի» աւանդոյթներով, նրան կատաղեցնում էր։

Սարատովում աշխատելու տարիներին Ասատուրեանը դասաւանդել է նաեւ տեղի պարարուեստի ուսումնարանի աւարտական դասարանում։ Ահա թէ ինչ է գրում նրա մասին նախկին աշակերտ, յետագայում Սարատովի թատրոնի մենակատար եւ 1996ից գլխաւոր բալետմայստէր Վալերի Նեստերովը (ծն. 1954) իր յուշերում Ասատուրեանի մասին, որոնք չարադրուած են «Ինքնատիպ, Վառ Տաղանդ» խորագրի ներքոյ։

«Առաջին անգամ ես ծանօթացայ Աշոտ Անդրէյի Ասատուրեանի հետ 1969ին, երբ սովորում էի պարարուեստի ուսումնարանում... Նա մեզ դասաւանդում էր դասական պարի հիմունքները: Ասատուրեանը գերադասում էր պարապել դահլիճի մէջտեղում, քան փայտի մօտ, եւ միշտ ինքն էր ցոյց տալիս վարժութիւնների համակցութիւնը (*այսինքն, ոչ-բառային բացատրութիւններով - Ն.Մ.*), ամէնից շատ սիրում էր ցոյց տալ թռիչքներ: Իսկապէս, Ասատուրեանն օժտուած էր բարձր թռիչքով եւ վարպետօրէն օգտւում էր դրանից: Նա իմ ամենասիրած դասաւանդողն էր: Գուցէ այն պատճառով, որ յատուկ ջերմութիւն եւ հոգատարութիւն էր ցուցաբերում իմ հանդէպ: Երբ իմ բալէտային կօշիկները մաշւում էին, բերում էր թատրոնից նորերը եւ նուիրում ինձ... Ասատուրեանը միշտ աշխատում էր անձնուրաց եւ ի վիճակի էր վարակել եւ ներշնչել կատարողներին իր օրինակով: Սակայն եթէ տեսնում էր, որ դերասանը պարում է ոչ-լրիւ ուժով, չափազանց գրգռւում էր եւ կարող էր վտարել փորձից: Ամէնից շատ Ասատուրեանը սիրում էր աշխատել այն դերասանների հետ, որոնք օժտուած էին շարժումների գեղակերպութեամբ եւ դերասանական անհատականութեամբ: Դա դիւրին է հասկանալ, քանի որ պարը նրա ներկայացումներում յագեցուած էր յուզական բովանդակութեամբ, այլ ոչ թէ ցուցադրում էր տեխնիկական հնարքներ: Ասատուրեանը պահանջում էր դերասաններից, նոյնիսկ փորձի ընթացքում, երաժշտական, յուզական, իմաստաւորուած շարժում եւ թատերական արտայայտչականութիւն: Ասատուրեանը, ինչպէս ոչ ոք, զգում էր այս կամ այն կատարողի անհատականութիւնը եւ պարի ստեղծման ընթացքում միշտ դրանից էր ելնում»։

Նեստերովի յուշերում նկարագրուած Ասատուրեանի աշխատանքային ոճը՝ դերասանի հետ, անչափ դիպուկ է։ Համարեա նոյն կերպ են նրա մասին պատմել մեզ թէ՛ ռուս, թէ՛ ուկրաինացի եւ թէ՛ հայ պարող-պարուհիները, որոնց հետ նա աշխատել է ինչպէս՝ Հայաստանի ժողովրդական արտիստ Յովհաննէս Դիւանեանը (ծն. 1952), հայ բալէտի մենապարուհի Ելենա Պաւլիդին (ծն. 1953), Ռուսաստանի ժողովրդական արտիստ Իգոր Մոեցիւր-Մովան (ծն.

1965), *Ուկրաինայի Խարկովի Օպերայի եւ Բալէտի մենակատար Օլգա Վասիլիանսկայան* (ծն. 1954)։

Նեստերովի յուշերում ցաւով կարդում ենք, որ 1960-70ականների սահմանագլխին Խորհրդային Միութեան մէջ իշխող գեղագիտական եւ գաղափարական չափանիշները ոչ մի կերպ չէին համընկնում Ասատուրեանի գեղագիտական, ստեղծագործական, գաղափարական չափանիշների հետ։ «Աշոտ Անդրէեւիչը,- գրում է Նեստերովը,- եղել է արուեստում առաւելապաշտ... Միշտ զգացւում էր նրա լիովին անկախութիւնն ուրիշի կամքից։ Ասատուրեանին ոչինչ հնարաւոր չէր «կապել», մեղմացնել նրան, դրդել փոխզիջման...» Նշուած հանգամանքները բերում էին անհասկացողութեան, յաճախ բախման՝ վերադաս մարմինների հետ... 1973ի սկզբին նա թողեց իր պաշտօնը Սարատովի թատրոնում եւ եկաւ Երեւան, իր հայրենիքը, եկաւ մեծ սպասումներով եւ պատրաստ իր ամբողջ կեանքը եւ ստեղծագործութիւնը նուիրել Հայաստանին, հայրենի պարարուեստին...

Երեւան

Աշոտ Ասատուրեանին Երեւան հրաւիրեց այդ ժամանակ Սպենդիարեանի Անուան Օպերայի եւ Բալէտի Թատրոնի գլխաւոր բալէտմայստէր եւ երեւի թէ ամենաականաւոր հայ պարող Վիլէն Գալստեանը (ծն. 1941), որի համբաւը՝ որպէս կատարողի, դուրս է եկել Հայաստանի սահմաններից շատ հեռու։ 1969ին Ասատուրեանը, դեռեւս լինելով Սարատովի Թատրոնի գլխաւոր բալէտմայստէր, հրաւիրեց Գալստեանին հանդէս գալու Բազիլի գլխաւոր դերում «Դոն Կիխոտ» բալէտում։ Նրանք ընկերացան եւ վերջապէս, 1973ին Ասատուրեանը տեղափոխուեց Երեւան, որտեղ իրականացրեց իր առաջին բեմադրութիւնը հայրենիքում՝ հանրաճանաչ կոմպոզիտոր Սերգէյ Բալասանեանի «Էջլլի եւ Մեջնուն»ը։ Սպենդիարեանի Անուան Թատրոնում աշխատելով 1973-90ին, Ասատուրեանը բեմադրեց ընդամէնը ութ բալէտային ներկայացում։

Ինչո՞ւ այդպէս պատահեց։

Արդարեւ, Սպենդիարեանի Թատրոնում ծնունդ են Ասատուրեանի հետեւեալ բալէտային երկերը.- 1973՝ Բալասանեանի «Էջլլի եւ Մեջնուն». 1975՝ Խորհրդային Միութեան ժողովրդական արտիստ Կոնստանտին Օրբելեանի (ծն. 1929) «Անմահութիւն» բալէտը, որը նոյն տարում արժանացաւ Համամիութենական Առաջին Մրցանակի Հայրենական Մեծ Պատերազմին նուիրուած Բալէտային Երկերի Համամիութենական Մրցաշրջանում. 1977ին՝ «Լոյսի Սիմֆոնիա»ն, Էդուարդ Միրզոյեանի (ծն. 1921) «Սիմֆոնիա Լիտաւրներով» գործի երաժշտութեամբ եւ Պարոյր Սեւակի «Մարդը Ափի Մէջ» բանաստեղծական շարքի ծրագրային հիմքով. 1980՝ Մորիս Ռաւէլի «Դափնիս եւ Քլոյան». 1982՝ Գրիգոր Եղիազարեանի (1908-1988) «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ» բալէտը. 1983՝ «Թեմա Վարիացիաներով (Ջորջ Բալանչինի յիշատակին)» Զայկովսկու Նուագախմբային Երրորդ Սուիտի վերջաբանի երաժշտութեամբ. 1985՝ «Հերոսական Բալլադ»ը Առնօ Բաբաջանեանի համանուն երկի երաժշտութեամբ. 1989՝ Ստրաւինսկու «Օրփէոս» բալէտը։

Ահա թէ ինչ է պատմում Հայաստանի ժողովրդական արտիստ Նուագավար Եուրի Դաւթեանը (ծն. 1929) Հայաստանում Ասատուրեանի առաջին՝

«Լէյլի եւ Մեջնուն» բալէտի ստեղծման կապակցութեամբ։ Նախապէս նշենք, որ բալէտը ստեղծուեց Դաւթեանի՝ որպէս նուագադարի եւ Ասատուրեանի՝ որպէս բալէտմայստէրի, համագործակցութեամբ։

«Թատրոնը վաղուց էր ուզում բեմադրել Սերգէյ Բալասանեանի «Լէյլի Եւ Մեջնուն»ը: Առաջին իսկ հանդիպման պահից ինձ յուզեց Աշոտ Ասատուրեանի լաւագոյն պրոֆեսիոնալ պատրաստուածութիւնը. նա հոյակապ զգում էր երաժշտութիւնը, գիտէր ամէն մի տակտում ինչ է կատարւում, եւ, ամենահետաքրքիրը, նա բոլոր իմ նուագախմբային փորձերին, ո՞նց էր անում, չգիտեմ՝ նստած էր, ու ամէն անգամ հետաքրքրւում էր. «Երուի Հայկովիչ, այ այս տակտում, որ այս գործիքները նուագեցին, մի՞թէ այդպէս պէտք է հնչի, թէ՞ այդտեղ այլ կերպ պէտք է լինի»: Վերջացաւ նրանով, որ ես ասացի. «Աշոտ, կարո՞ղ է դու իմ գրաքննիչն ես»: Ծիծաղեց եւ ասաց. «Չէ, պարզապէս ես լաւ գիտեմ նոտագրութիւնը եւ գործիքաւորման նրբութիւնները»: Եւ իրօք, նա հոյակապ կլաւիր էր նուագում դաշնամուրով, բացի դրանից գալիս էր ինձ մօտ պարտիտուրի բոլոր մանրամասնութիւնները քննարկելու: Այդ է պատճառը, որ նրան յաջողւում էր այդ ողջ կտրուածքով երաժշտութիւնը խորութեամբ վերլուծել, ճիշտ զգալ եւ դա արտայայտել պարային երանգներով: Զարմանում եմ, թէ ինչպէ՞ս էր ժամանակ գտնում 20 րոպէից կէս ժամ ինքը պարապել որպէս պարող: Մի անգամ հարցրեցի. «Աշոտ, այդ ինչո՞ւ ես անում»: Ասաց. «Եթէ ես ինքս չպարեմ, այդ բոլոր շարժումները չկատարեմ, ինչպէ՞ս եմ յետագայում դրանք շատ համոզիչ կերպով ցոյց տալու դերասանին»:

Հայաստանի վաստակաւոր արտիստ, այժմ Սպենդիարեանի Թատրոնի գլխաւոր բալէտմայստէր Ռուդոլֆ Խաւատեանը (ծն. 1947) այսպէս բնութագրեց Աշոտ Ասատուրեանին. «Այսօր, երբ ես խորացել եմ բալետմայստերական գործի մեջ, տեսնում եմ, որ Ասատուրեանը միշտ պատրաստուած էր գալիս դահլիճ փորձի եւ փնտռումների մէջ չէր գտնւում, այսինքն՝ ժամանակ չէր տալիս, որպէսզի պարողը սկսի ձանձրանալ. անընդհատ նիւթ էր տալիս, որ քո մարմինը սկսի աշխատել: Ասատուրեանի հետ շատ հետաքրքիր էր աշխատել, որովհետեւ ինքը տեսնում էր պարողի ոչ թէ այդ պահի արդիւնքը, այլ տեսնում էր նրա մէկ ամիս, մէկ տարի յետոյ առաւելագոյնի հասած արդիւնքը՝ այսինքն, նա տեսնում էր դերասանի կարողութիւնը»։

Մէջբերենք նաեւ մի հատուած Հայաստանի ժողովրդական արտիստ, Երեւանի Պարարուեստի Քոլէջի գեղարուեստական ղեկավար Դիւանեանի յիշողութիւններից. «Նա միշտ պատրաստուած էր գալիս դահլիճ, եւ ամենակարեւորը՝ շատ երաժշտական էր, ինձ հազուադէպ է պատահել բալէտմայստէր, որը նոտա առ նոտա բոլոր շարժումները ցոյց տայ: Երբ նա ցոյց էր տալիս շարժումները, անձամբ, ինձ համար շատ պարզ էր, թէ նա ինչ է պահանջում թէ՛ պարի եւ թէ՛ կերպարի տեսակէտից»։

«Ամենակարեւորը,- *ասում է 1970-80ականների մենապարուհի Պաւլիդին,-* ոչ թէ շարժումն էր, այլ այդ շարժման յուզական ելեւէջի ըմբռնումը Ասատուրեանի հետ աշխատելիս: Ինչ վերաբերում է դերին, ապա կատարելով

Շամիրամի դերը՝ զգում էի մեծ հոգեբանական ծանրաբեռնուածութիւն, այդքան խորն էր Ասատուրեանի մտայղացուած կերպարը»:

«Դա մի զարմանալի մթնոլորտ էր, կախարդական մթնոլորտ էր, որ ստեղծում էր Ասատուրեանը»՝ *պատմում է Պարի Պետական Համոյթի առաջին նախկին մենակատարներից Սրբուհի Բաբայեանը (ծն. 1951), որն աշխատել է Ասատուրեանի հետ «Դվէյ Եաման» պարային համարի վրայ։*

Եւ այսպէս, գալով Հայաստան, Ասատուրեանը հանդիպեց իր Մուսային՝ Հայրենիքին... Սակայն դա միակ մուսան չէր, որ պատահեց Հայաստանում Ասատուրեանին։

Էլվիրա Մնացականեան

*Կարելի է պնդել, որ Հայաստանի ժողովրդական արտիստուհի Էլվիրա Մնացականեանը (ծն. 1944), որն աշխատել է բազում բալէտմայստէրների հետ եւ 1966-1999 կատարել է առաջատար դերեր մօտ 40 ներկայացման մէջ, եթէ նոյնիսկ 1973ին չհանդիպէր Աշոտ Ասատուրեանին, այնուամենայնիւ, կ՚աւարտէր իր բեմական ուղին որպէս Սպենդիարեանի Անուան Թատրոնի առաջին մենապարուհի... Սակայն հանդիպումը Ասատուրեանի հետ բախտորոշ էր։ Նա դարձաւ բալէտմայստէրի թէ՛ կինը, թէ՛ մերձաւոր ընկերը, թէ՛ մուսան։ Տասից աւելի բալէտ Ասատուրեանը բեմադրել է՝ նկատի ունենալով Մնացականեանի պարային եւ դերասանական ոճը, ստեղծելով նրա համար բազմապիսի եւ խորը կերպարներ՝ թէ՛ Էֆլի, թէ՛ Աղջիկ՝ «Անմահութիւնից», թէ՛ Քլոյա՝ «Դափնիս եւ Քլոյա» բալէտում, թէ՛ Էւրիդիկէ՝ «Օրփէոս» բալէտում եւ թէ՛ Շամիրամ՝ «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ» բալէտում։ Աշոտ Ասատուրեանը եւ Էլվիրա Մնացականեանը միութիւն էր, որը որակում են «աւելին, քան սէրը» արտայայտութեամբ։ Էլվիրա Մնացականեանը հետեւեց Ասատուրեանին Խարկով եւ 1997ին նրա հետ վերադարձաւ Հայաստան։ Նա դադարեց պարել այն պահից, երբ մահացաւ նրա ամուսինը, ընկերը, բալէտմայստէրը՝ Աշոտ Ասատուրեանը։

ԵՐԵԿՈՑ
Խարկով

Թերեւս երեկոն սկսուել էր դեռ Երեւանում, երբ հասկանալով, որ Հայրենիքը յանկարծ խորթ մօր կերպարանք է ստանում եւ թատրոնում առանձնապէս ոչ մի ցանկութիւն չունեն լայն ճանապարհներ բացել իր առջեւ, Ասատուրեանը 1990ին հեռացաւ Խարկով, որտեղ ստանձնեց Լիսենկոյի Անուան Ուկրաինական Ակադեմիական Օպերայի եւ Բալէտի Թատրոնի գլխաւոր Բալէտմայստէրի պաշտօնը։ Այդուհանդերձ Խարկովի «երեկոն» նոյնպես լի էր բազմակողմանի գործունէութեամբ։ Ահա թէ ինչ է գրում Խարկովի Ուկրաինական թատրոնի գրական բաժնի վարիչ, բալէտի խորը մասնագէտ, արուեստագիտութեան դոկտոր Ալեքսանդր Ջեպալովը (ծն. 1953) Ասատուրեանի «ուկրաինական» ժամանակաշրջանի գործունէութեան մասին իր յուշերում[17]*.-*

«Աշոտ Ասատուրեանը եկաւ Խարկովի թատրոն բարդ պահին, երբ բալէտային խումբը փորձում էր յարմարուել՝ տեղափոխուելով հին,

հնախարխուլ շէնքից նորը: Նոր շէնքի առաջին բալէտները դարձան Իգոր Ստրաւինսկու «Օրփէոս»ը եւ «Հրեղէն Թռչուն»ը Աշոտ Ասատուրեանի բեմադրութեամբ: Մինչ այդ պահը Ստրաւինսկու բալէտները ընդհանրապէս ուկրաինական բեմում չեն բեմադրուել: Սա եղաւ նաեւ նորարարութիւն, առաջին դասը, որով Ասատուրեանը խրատի դաս տուեց խմբին: Ստանձնելով Խարկովի գլխաւոր բալէտմայստէրի պաշտօնը՝ Ասատուրեանը իր հետ բերեց Սանկտպետերբուրգեան-եւրոպական աւանդոյթները: Առաջինը՝ չէր հրաժարւում ԺԹ. դարի դասական ժառանգութիւնից («Քնած Գեղեցկուհին»[18] վերականգնուեց Մարիինեան թատրոնի խմբագրութեամբ, իսկ «Դոն Կիխոտ»ը նա բեմադրեց աւելի յեռնուելով Պետիպայի[19], այլ ոչ Գորսկու[20] ոճի վրայ): Երկրորդը՝ Ասատուրեանը անվախօրէն ակադեմիկ խաղացանկ էր ներմուծում «նորդասականութիւնը»: «Օրփէոս»ի մասին Ա. Ասատուրեանն ասում էր, որ իր բալէտի վերջնական իմաստն է ցոյց տալ Արուեստագէտի ներքին պայքարն իր հետ. որպէս երկատուածութեան խորհրդանիշ նա ընտրեց Սեւ հրեշտակին, ստեղծագործութեան խորհրդանիշ Եւրիդիկէին: Նմանապէս, Խարկովի բալէտային խմբին եւ հանդիսատեսին անսովոր հնարքներից՝ Ասատուրեանը օգտւում էր Չայկովսկու երաժշտութեամբ «Թեմա Վարիացիաներով» բեմադրութեան մէջ: Այդ բալէտը նուիրեց Բալանչինի յիշատակին, ինչը խնդրեց յատուկ նշել թատերական ծրագրում: Ս. Ռախմանինովի «Սիմֆոնիկ Պարեր»ում նա նորից ներգրաւեց դրամատիկ «եռանկեան մէջ» հիմնական հերոսներին՝ Արուեստագէտին, նրա Մուսային եւ ահաբեկող Մահուան կերպարը: Ռախմանինովի հայրենաբաղձային երաժշտութիւնը, գրուած հայրենիքից հեռու, անչափ համապատասխանում էր այս խնդրին: Այդ թախիծը զգացւում էր Արուեստագէտի ճկուն ելեւէջներում, որին լքում էր Մուսան, սակայն ողջունում էր Հայրենիքը: Դիպաշարը խորհրդանշական բնոյթ էր կրում: Ասատուրեանը մտաւ ուկրաինական արուեստի պատմութեան մէջ Ալեքսանդր Կաներշտէյնի[21] «Եւպրաքսիա» բալէտի առաջին բեմադրութեամբ, որը կայացաւ 1994ին:

Խարկովում Ասատուրեանի բեմադրած նորդասական բալէտներում յստակօրէն ակնյայտ է այն միտքը, որ արուեստագէտը, որը ձգտում է բարձր արուեստի, յաճախ չի հասկացւում մարդկանց կողմից, թերագնահատւում է եւ նոյնիսկ ժխտւում: Աւաղ, այդ բախումը Աշոտ Ասատուրեանը, ըստ երեւոյթին, կապում էր անմիջականօրէն իր ստեղծագործական ուղու հետ: Եւ, ըստ երեւոյթին, նա ճիշտ էր:

Ասատուրեանի Խարկովում ստեղծագործական աշխատանքի փորձը ցոյց տուեց, որ ակադեմականութեան եւ նորարարութեան խելամիտ զուգորդումը իրաքանչիւր բալէտային խմբի խաղացանկային քաղաքականութեան հիմքն է: Այս ճանապարհին նա ունեցել է եւ յաջողութիւններ, եւ վրիպումներ, սակայն հիմնականում նա չէր սխալւում՝ իրեն ուղեցոյց ընտրելով ստեղծագործական որոնումը, արժանի պետերբուրգեան բալէտային դպրոցին»,

Արուեստաբան Զեպալովի յուշերում, որոնք աւելի շատ պէտք է համարել վերլուծական յօդուած, տրուած է Աշոտ Ասատուրեանի վերջին տարիների

ստեղծագործության ճիշտ մեկնաբանությունը։ Սակայն Զեպալովին, հաւանաբար, ինչպէս եւ նրա հետ համագործակցող արուեստագէտներին մինչ օրս յայտնի չէր, թէ որքանով ինքնակենսագրական բնոյթ է կրում թէ՛ «Օրփէոսը» եւ թէ՛ «Սիմֆոնիկ պարերը» Ասատուրեանի բեմական մեկնաբանութեամբ։ Արդէն 1990ից դեռ Երեւանում նրան հետապնդում է «Մահուան» կամ «Մեւ» հրեշտակը։ Արդէն ծանր հիւանդ լինելով 1990ից, ինչի մասին գիտէին միայն ամենամերձաւորները, նա մեկնեց Խարկով, որտեղ վիրաբուժական օգնութիւն ստանալուց յետոյ մի քանի տարով երկարացրեց իր կեանքը։ Հիւանդութիւնը նորից սրուեց 1997ին, եւ արդէն «Սիմֆոնիկ պարերը» բեմադրուում էին այն պահին, երբ նա, առողջական վիճակի վատթարացման պատճառով փաստօրէն ապրում էր թատրոնում եւ ոյժ չունէր նոյնիսկ թատրոնից տուն հասնել (Էլվիրա Մնացականեանի վկայութեամբ)։ Այդ է պատճառը, որ 1997ի վերջին Ասատուրեանը «չատ յանկարծակի ձեւով» (Խարկովի բալէտային խմբի կարծիքով) հրաժարուեց գլխաւոր բալէտմայստէրի պաշտօնից եւ վերադարձաւ Երեւան։

Կրկին Երեւանում եւ Ինչուներ

«Գիշեր է։ Լռին թախիծով քայլում եմ փողոցով։ Ձմռան բոլոր ձախորդութիւնները ու տհաճութիւնները մոռացուած եւ անհամբեր սրտով բռնում եմ թատրոնի ճամփան»[22]։

Վերջին մէկուկէս տարում Երեւանում Ասատուրեանը բեմադրեց երեք գործ՝ 1998՝ Տիգրան Զուխաջեանի «Արշակ Երկրորդ» օպերայի պարային տեսարանները (բեմադրիչ՝ Տիգրան Լեւոնեան, 1936-2004) եւ արդէն յիշատակուած «Դիլէ Եաման» եղանակով պարը Հայաստանի Պարի Պետական Համոյթում, եւ 1999ին իրականացրեց Լեւոն Շանթի «Հին Աստուածներ» դրամայի բեմադրութեան պլաստիկ-պարային ձեւաւորումը Սունդուկեանի Անուան Դրամատիկական Թատրոնում (բեմադրութեան ռեժիսոր՝ Հայաստանի ժողովրդական արտիստ Վահէ Շահվերդեան, ծն. 1945)։

Այնուամենայնիւ, վերջում նորից անդրադառնանք Աչոտ Ասատուրեանի գործունէութեանը Երեւանի Օպերայի եւ Բալէտի Թատրոնում 1973-1990։ Ինչո՞ւ 17 տարում նրան յաջողուեց բեմադրել ընդամէնը 8 բալէտ։ Ինչո՞ւ նա չկարողացաւ ծաւալել ոչ մի կազմակերպչական գործունէութիւն։ Չէ՞ որ նա հանդէս էր եկել որպէս բեղմնաւոր բալէտմայստէր եւ լաւ կազմակերպիչ թէ՛ Սարատովում, թէ՛ Խարկովում, որտեղ նա բացի բեմադրական աշխատանքից բաւում անգամ դուրս է բերել ռուսական եւ ուկրաինական խմբերին հիւրախաղերի։ Այնտեղ նա առաջ է քաշել երիտասարդ պարողներին, նախապատրաստել նոր սերունդ։ Եւ Երեւանում անցկացրած տարիներին նա բեմադրեց նաեւ հնդկական «Կաջուրահու» երաժշտութեան հիման վրայ ստեղծուած «Հրաժեշտ Արեւելքին» բալէտը Նորայր Մեհրաբեանի (ծն. 1941) «Բարեկամութիւն» համոյթում (1990), բալէտներ Սարատովում («Թեմա վարիացիաներով» Մոցարտի Լա մաժոր սոնատի երաժշտութեամբ եւ Մորիս Ռաւէլի «Բոլերօ»ն, 1977), Եկատերինբուրգում եւ Ջելիաբինսկում Խաչատրեանի «Գայիանէ»ն, (համապատասխանաբար՝ 1982 եւ 1984ին), Թբիլիսիում (Կոնստանտին Օրբելեանի «Անմահութիւն»ը, իմիջիայլոց առաջին հայ բալէտը, որ բեմադրուեց Փալիաշուիլու Անուան Օպերայի եւ Բալէտի Թատրոնում, 1979), Բաքուում

(Նարիման Մամեդովի «Ումայ» ադրբեջանական ազգային բալէտը, 1981)։ Ջէ՞ որ նա երեւանում բեմադրեց պարեր եւ պլաստիկ տեսարաններ բազում օպերաներում ու Դրամատիկական թատրոնում, ինչպէս նաեւ մեծ թուով պարային մանրանկարներ, որոնք այդպէս էլ չցուցադրուեցին։ Ջէ՞ որ նա գրել էր բազմաթիւ պարային բեմագրեր, որոնք մտայղացել էր բեմադրել իր հայրենի բեմում։ Ինչո՞ւ նա 1973ին երեւան հաստատուելուց յետոյ մի քանի տարի ապրում էր բնակարանային դժուարին պայմաններում։

Արդեօ՞ք այս եւ նման բազում հարցերի պատասխանը չէր փնտռում Աչոտ Ասատուրեանը իր վերջին՝ «Սիմֆոնիկ Պարեր» բալէտում։ Արդեօ՞ք չէր դրել հարցադրումը հետեւեալ կերպ. «Ե՞ս եմ դաւաճանում Հայրենիքը, թէ՞ Հայրենիքը՝ ինձ»։ Ջէ՞ որ նա վերադարձաւ Հայրենիք արդէն անբուժելի հիւանդ, աշխատեց մինչեւ համարեա կեանքի վերջին օրերը յօգուտ Հայրենիքի եւ մահացաւ (1999, Մայիսի 23)՝ վերջապէս յաւերժօրէն կապուելով հայրենի հողին։

ՏԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Սոյն յօդուածում եւ մօտ ապագայում հրատարակութեան պատրաստուող «Աչոտ Ասատուրեան» մենագրութեան մէջ չէր կարող համակողմանիօրէն բացայայտուել Ասատուրեանի կեանքը եւ ստեղծագործութիւնը, եթէ մեզ օգնութիւն ցոյց չտային մի շարք հայ, ռուս, ուկրաինացի արուեստագէտներ։ Այստեղ ցանկանում ենք չնորհակալական խօսք ասել Աչոտ Ասատուրեանի այրիին՝ Հայաստանի ժողովրդական արտիստուհի Էլվիրա Մնացականեանին, որ մեզ տրամադրեց Ասատուրեանի ողջ դիւանը՝ նրա բեմադրած բալէտների տեսահոլովակները, բալէտմայստէրի ձեռագիր բեմագրերը եւ ներկայացումների բեմադրմանը վերաբերուող մտորումներ պարունակող բազմաթիւ տետրերը, նաեւ ներկայացումների թատերական ազդերը եւ ծրագրերը, լուսանկարները եւ այլ նիւթեր։ Աչոտ Ասատուրեանի մանկութեան եւ հասուն շրջանի (մասնաւորապէս երեւանեան գործունէութեան տարիների) մասին տեղեկութիւնները քաղուած են նոյնպէս Էլվիրա Մնացականեանից եւ նրանց միակ զաւակի՝ Արա Ասատուրեանից մեր գրառած յիշողութիւններից, ինչպէս նաեւ հայ թատրոնի մի շարք պարող-պարուհիների, նուագավար՝ Հայաստանի Հանրապետութեան ժողովրդական արտիստ Եուրի Դաւթեանի, բեմադրիչ Վահէ Շահվերդեանի հետ ունեցած հարցազրոյցներից։ Լենինգրադում, Սարատովում, Խարկովում նրա ուսման տարիների եւ գործունէութեան մասին մեզ գրաւոր յիշողութիւններ են ուղարկել Ասատուրեանի գործընկերներ Լուա Բարուտչեան, Գենադի Ալբերտը, Վալերի Նեստերովը, Իգոր Ստեցէուր-Մովան, Օլգա Վասիլիանսկայան, Ալեքսանդր Զեպալովը, Նիկոլայ Մարգարեանցը, որոնց նոյնպէս յայտնում ենք մեր երախտագիտութիւնը։

[2] Ատծոյ ցաւման օր (յատիներէն)։

[3] «Սիմֆոնիկ Պարեր» բալէտի ծրագիրը եւ բալէտի բովանդակութեան պարզաբանումը առնուած են Աչոտ Ասատուրեանի անձնական ֆոնդում պահպանուող տետրերից։ Հրապարակւում է առաջին անգամ (թարգմանութիւն ռուսերէնից)։

[4] Նինա Անիսիմովա (1909-1979), Իգոր Բելսկի (1925-1999), Նատալիա Կոմկովա (1907-1973)՝ ռուս-խորհրդային բալէտի ականաւոր գործիչներ։

[5] Մագումով հայ Նիկոլայ Մարգարեանցը (ծն. 1928ին) աւարտել է Կիեւի Պարարուեստի Ուսումնարանը 1949ին եւ Լենինգրադի Կոնսերվատորիայի Բալէտմայստէրական Բաժինը (Վոլուխովի դասարան)։ 1949-1950 եղել է Դոնեցկի Օպերայի եւ Բալէտի Թատրոնի մենակատար, 1953-1962՝ մենակատար-պարող Ուկրաինայի Պարի Համոյթում։ Եղել է Պերմի (1967-1971), Տաշքենդի Նավոյիի Անուան (1971-1975), Բաշկորտստանի (1986-1988) օպերայի եւ բալէտի թատրոնների գլխաւոր բալէտմայստէր,

կրասնոյարսկի Օպերային Թատրոնի Բալետային Խմբի հիմնադիր եւ գլխաւոր բալետմայստէր (1977-1983)։ Դասաւանդել է Լենինգրադի Կոնսերվատորիայի Բալետմայստերական Բաժնում (1975-1977)։ Բազմաթիւ բալետների բեմադրիչ է, այդ թւում՝ Արամ Խաչատրեանի «Սպարտակի» (Պերմ եւ Ուֆա), Ուզբեկստանի եւ Թուրքմենստանի Պետական մրցանակների դափնեկիր։ Պատկանում է, ինչպէս եւ Աստուրեանը, 1960-80ի նորարար բալետմայստէրների սերունդին։ Այժմ բնակւում է Սանկտ-Պետերբուրգում։

[6] Գէորգի Ալէքսիձէ (1941-2008), ականաւոր ռուս-վրացի բալետմայստէր։ Եղել է Աշոտ Աստուրեանի մտերիմ ընկերը թէ՛ Թբիլիսիում, թէ՛ Լենինգրադում, թէ՛ այլուր։

[7] Եֆիմ Խմելնիցկին կոնսերվատորիան աւարտելուց յետոյ չի շարունակել իր գործունէութիւնը որպէս բալետմայստէր։ Ազգին յայտնի չէ։

[8] Տե՛ս՝ Era Barutcheva, *Georgi Alexidze – Khareograf Bojey Milostiyu* (Գէորգի Ալէքսիձէ՝ Աստծոյ ողորմութեամբ բալետմայստէր), Սանկտ-Պետերբուրգ, 2005, էջ 20։

[9] Եուրի Գրիգորովիչ (ծն. 1927), հանրաճանաչ ռուս բալետմայստէր։ Նրա Արամ Խաչատրեանի «Սպարտակ» բալետի բեմադրութիւնը հռչակուած է աշխարհով մէկ։ 2009ին բեմադրեց «Սպարտակը» Հայ Ազգային Օպերայի եւ Բալետի Թատրոնում։

[10] Վլադիմիր Վարկովիցկի, յայտնի բալետմայստէր, աշխատել է Խորհրդային Միութեան տարբեր քաղաքներում։ 1953-1955 եղել է Երեւանի Սպենդիարեանի Անուան Օպերայի եւ Բալետի Թատրոնի գլխաւոր բալետմայստէր։

[11] Աշոտ Աստուրեանի մօտ տասը բեմադրութիւն բարեբախտաբար պահպանուել են տեսասկաւառակների վրայ։

[12] Լենինգրադեան Կոնսերվատորիայի Բալետմայստէրական Բաժնում դասաւանդուող առարկաների եւ դասաւանդման մեթոդաբանութեան մասին մեզ հանգամանօրէն պատմել է Աշոտ Աստուրեանի դասընկեր եւ ուսանողական տարիների մօտիկ ընկերը Նիկոլայ Մարգարեանցը (հարցազրոյց հեռախօսով Սանկտ-Պետերբուրգից Սեպտեմբեր 2009ին)։

[13] «Դրամբալէտ» (բառացիօրէն բալէտ-դրամա) ուղղութիւնը ձեւաւորուել է 1930ականներին որպէս Խորհրդային Միութեան բալետային հիմնական եւ «միակ ճիշտ» ուղղութիւն։ Այդ ուղղութեանը յատկանշական էր դիպաշարի շատ մանրամասն ցուցադրումը ոչ թէ պարի, այլ մնջախաղային չարժուձեւերի միջոցով։ Իսկ պարում էին միայն այն տեսարաններում, որտեղ «պատշաճ էր»՝ խնջոյք, տօն եւն.։ 1960ականներից «դրամբալէտը» հետզհետէ սկսեցին հերքել բալետմայստէր նորարարները, որոնք համարում էին, որ բալետում ամէն ինչ պէտք է արտայայտուի միայն պարարուեստի խորեոգրաֆիային յատուկ արտայայտչական ձեւերով։ Չնայած ժամանակին, 70ականներին, երբ «դրամբալէտը» արդէն դուրս էր եկել բեմադրական փորձից, սկսուեց նրա արժանիքների հերքումը։ Այնուամենայնիւ, առարկայական յետադարձ հայեացք գցելով, պէտք է ասել, որ «դրամբալէտը» ունի եւ դրական կողմեր, մասնաւորապէս՝ բալետային դերասանի արտայայտչականութեան զարգացման առումով։ Պէտք է նաեւ նշել, որ դրամբալէտի ուղղութեան ներքոյ են ստեղծուել Սերգէյ Պրոկոֆեւի «Ռոմէօ եւ Ջուլիէտը», «Քարէ Ծաղիկը», «Մոխրոտը», Արամ Խաչատրեանի «Գայիանէն» եւ «Սպարտակը» եւ այլ կոմպոզիտորների՝ գեղարուեստական մեծարժէք բալետային երաժշտական երկեր։

[14] Նինա Միրիմանովա (ծն. 1917), Ռուսաստանի վաստակաւոր արտիստուհի, ծագումով հայ։ 1934ին աւարտել է Լենինգրադի Էստրադային Տեխնիկումը։ 1934-1938՝ եղել է Լենինգրադի Օպերայի եւ Բալետի Փոքր Թատրոնի առաջին մենակատարուհին։ Բացի 1961ին հիմնադրուած Լենինգրադի Կոնսերվատորիայի Օպերային Ստուդիայի Բալետային Խմբից նաեւ 1983ից եղել է Լէոնիդ Եակոբսոնի «Խորեոգրաֆիկ Մանրանկարներ» (Լենինգրադ) մեծ համբաւ վայելող բալետային խմբի փորձավար։

[15] *Այս տեղեկութիւնները գրանցուած են Սանկտ-Պետերբուրգի խորեոգրաֆիայի ամբիոնի յատուկ «Աշխատանքային Տետրում»։ Այդտեղից ներանք արտագրել եւ մեզ է ուղարկել Սանկտ-Պետերբուրգի Կոնսերվատորիայի հայագգի պրոֆեսոր Էռա Բաբուջեան, որին կը ցանկանայինք յատուկ շնորհակալութիւն յայտնել։*

[16] *Սոյն յօդուածում Աշոտ Ասատուրեանի մասին բոլոր յիշողութիւնները եւ մէջբերումները հաւաքել ենք մենք Յուլիս-Հոկտեմբեր 2009ին։ Դրանք հրապարակւում են առաջին անգամ (որոշ մասը՝ ռուսերէնից հայերէն թարգմանութեամբ)։*

[17] *Այն մեզ է ուղարկել վերնագրելով դրանք՝ «Հայ Օրփէոսի Ծարկովեան Երգը»։*

[18] *«Քնած Գեղեցկուհի» բալէտի երաժշտութեան հեղինակն է Պիոտր Զայկովսկին։*

[19] *Մարիուս Պետիպա (1818-1910), ազգութեամբ ֆրանսիացի, ռուս հանճարեղ բալէտմայստէր, որի բեմադրութիւնները այժմ էլ կազմում են ոչ միայն ռուս, այլեւ համաշխարհային բալէտի խաղացանկի «դասական» համարուող կորիզը։*

[20] *Ալեքսանդր Գորսկի (1871-1924), ռուս բալէտմայստէր։*

[21] *Ալեքսանդր Կանեըշտէյն (1933-2007), ուկրաինացի երգահան։*

[22] *Աշոտ Ասատուրեան, «Անուշի» Վերջին Բեմադրութիւնը», Հայաստանի Հանրապետութիւն, 9.07.1998։*

ASHOT ASATURYAN
(1937-1999)

NAZENIK SARGSYAN
m_ag@inbox.ru

Outstanding choreographer Ashot Asaturyan is definitely one of those whose works can be termed "not for everyone."

Asaturyan was born in Tbilisi in 1937. As a choreographer, he received the best education of his time. He studied in the class of the prominent dancer and choreographer Vakhtang Chabukiani at the Tbilisi Dance School. In 1962 he attended the newly inaugurated Choreography Department of Leningrad (St. Petersburg) Conservatory, where his teacher was Fyodor Lopukhov, groundbreaker in Soviet choreography. Under his tutorship, Asaturyan acquired in-depth knowledge of choreography, theory of music and fine arts. He had a good knowledge of classical literature, philosophy and theosophy. After graduating from the Conservatory, Asaturyan became the main choreographer of Saratov Opera and Ballet Theater during 1968-1972. He became the choreographer at the Spendiarian Opera and Ballet Theater in Yerevan between 1973 and 1990 and the principal choreographer of Lysenko Opera and Ballet Theater in Kharkiv, Ukraine, between 1991 and 1997.

A prolific choreographer, Ashot Asaturyan staged as many as twenty-two ballets in St. Petersburg, Saratov, Sverdlovsk, Yerevan, Tbilisi, Chelyabinsk, Kharkiv, Baku. He co-produced numerous operas and dramas, reproduced a number of the classics of the dance on the stages of Saratov and Kharkiv and created numerous choreographic scenes. He is also the author of dozens of librettos, which have not been staged.

Due to his profound knowledge of music, Asaturyan created ballets of "visible" musical intonation and form. He was also a talented artist and was costume designer for many of his productions. He had a perfect sense of light and color and wisely mixed them into his own "light dramaturgy." Asaturyan's ballets are peculiar examples of a philosophical paraphrase with multiple meanings, with some of them, particularly, Stravinsky's "Orpheus" and Rakhmaninov's "Symphonic Dances," presenting autobiographic reflections on his thorny life.

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂԻ ՀԱԻԱՏԱՄՔԸ. ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐԵԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ՄՈՎՍԻՍԵԱՆ
tsmovsisyan@yahoo.com

ՄՈՒՏՔ

2009 թուականը Հայաստանի համերգային կեանքում նշանաւորուեց Տիգրան Մանսուրեանի ծննդեան 70ամեայ յոբելեանին նուիրուած համերգաշարով։ Անհատ-կատարողներն ու երգչախմբերը, սիմֆոնիկ ու կամերային նուագախմբերը պարբերաբար հայ հանդիսականին ներկայացնում էին Մանսուրեանի շուրջ կէսդարեայ ստեղծագործական կեանքի յետադարձ ուրուագիծը՝ աւանդականի ու նորարարականի, ազգայինի ու համամարդկայինի զարմանալի ներդաշնակութեամբ տարբեր տարիներին գրուած նրա բազմաստեղ ու բազմաբնոյթ երկերը։

Արուեստագէտի գործի գնահատականը տուեցին երաժշտագէտներն ու կատարողները, Մանսուրեանի երաժշտութեան նուիրեալ երկրպագուներն ու մտերիմները։

Ներկայացուող յօդուածը մեծատաղանդ երաժշտի, մտաւորականի ու հայրենասէր քաղաքացու ստեղծագործութեան արժեւորման մի փորձ է յոբելեանի առիթով։

Հայ երաժշտութիւնն իր բազմադարեայ զարգացման ընթացքում ունեցել է բազմաթիւ վերելքներ, ծնել հանճարների եւ տաղանդաւոր արուեստագէտների աստղաբոյլեր։

Ի. դարը հայ երաժշտութեան մէջ նշանաւորուեց որպէս դասական մասնագիտական ստեղծագործական դպրոցի կազմաւորման, ձեւաւորման եւ աննախընթաց վերելքի շրջան։ Եւ եթէ դարասկզբին հայ երաժշտարուեստն առաջին քայլերն էր անում արեւմտաեւրոպական դասական սեռերի ու ձեւերի իւրացման ուղղութեամբ, ապա 50ականներին վստահ կարելի էր խօսել կայացած երաժշտական արհեստավարժ դպրոցի մասին՝ իր անսասան ռահվիրաներով՝ Կոմիտաս, Տիգրանեան, Սպենդիարեան, Խաչատրեան, ովքեր ուղենշեցին երաժշտութեան զարգացման յետագայ ընթացքը։ Եւ եթէ Խաչատրեանական-Սպենդիարեանական ուղին անմիջականօրէն շարունակեցին յաջորդ սերնդի ներկայացուցիչները՝ Գրիգոր Եղիազարեանը (1908-1988), Առնօ Բաբաջանեանը (1921-1983), Էդուարդ Միրզոյեանը (ծն. 1921), Ալեքսանդր Ճարուխիւնեանը (ծն. 1920), Ղազարոս Սարեանը (1920-1998) եւ ուրիշներ, ապա Կոմիտասեան ուղին դեռեւս սպասում էր իր դանդաղ, անտեսանելի, վաղուց փափաքած ծլարձակմանը։

Կոմիտաս արուեստագէտի ու նրա գործի պաշտամունքի հաստող երկրպագումը դարձաւ Մանսուրեանի ու իր սերնդակից շատ արուեստագէտների ստեղծագործական հաւատամքը։ Ժողովրդական արուեստի թաքնուած չերտերին խորամուխ լինելու, այդ ամէնը բացայայտելու եւ Ի. դարասկզբի լեզուաոճական արտայայտչամիջոցներով մատուցելու Կոմիտասի անգերազանցելի

վարպետութիւնը երիտասարդ կոմպոզիտորի համար կարեւորագոյն ուղենիշ է հանդիսանում եւ չարունակում մինչ օրս։ «Կոմիտաս... այդ եզակի անձնաւորութեան հետ իմ ունեցած առանձնայատուկ կապը երբեք չի թուլացել ողջ կեանքիս ընթացքում,- իր հարցազրոյցներից մէկում հաւաստում է Մանուրեանը,- ... Նրա երգերի, երգչախմբային ստեղծագործութիւնների, դաշնամուրային մանրանուագների եւ մեծածաւալ պատարագի միջոցով Կոմիտասին յաջողուեց միաւորել Հայաստանը։ Երբ իրական Հայաստանից յոգնում եմ, ես շրջւում եմ դէպի միւս Հայաստանը, որը Կոմիտասի երաժշտութեան մէջ է»[1]։

Այսպէս, ազգային հինաւուրց աւանդոյթների ու նորարարական չարժման համարձակ յայտնագործութիւնների միահիւսման դեռեւս Կոմիտասից եկող կարեւոր սկզբունքով նշանաւորուեց հայ երաժշտութեան զարգացման նոր շրջափուլը, որի ընթացքում ասպարէզ եկաւ ինքնուրոյն ու անկրկնելի մտածողութեան տէր, արուեստում իրենց առաքելութիւնը խորապէս գիտակցող երաժիշտների մի ողջ համաստեղութիւն՝ Տիգրան Մանսուրեանի գլխաւորութեամբ, որոնց թւում էին Աշոտ Զոհրաբեանը, Մարտուն Իսրայէլեանը, Վահրամ Բաբայեանը, Էդուարդ Հայրապետեանը, Երուանդ Երկանեանը եւ ուրիշներ։

Արմատական վերափոխումների այդ ալիքը 1960ականներին հանդիսացաւ աւտենի խորհրդային միութեան երկրներում տասնամեակներ չարունակ իշխող ամբողջատիրական հասարակարգի գաղափարախօսութեամբ պարտադրուած «երկաթեայ վարագոյրի» վերացման բնական հետեւանքը։ Այն, ինչ տարիներ չարունակ արգելուել, հեռացուել էր խորհրդային իրականութիւնից, 50ականների «հալոցքից» յետոյ դառնում է մատչելի, հասանելի։ Այն, ինչ տասնամեակներ քօղարկուած էր մնում «բուրժուական», «կապիտալիստական», «հակահումանիստական» արուեստի պիտակների խորհրդաւոր չղարչի տակ, հնարաւոր է դառնում լսել, հնչեցնել, տարածել, դասաւանդել... Այս վերելքի չրջանում նոյն սերնդի ամենատարբեր կոմպոզիտորական դպրոցների ներկայացուցիչներ երեւան եկան իրենց նորարարութեամբ, աննախադէպ թարմութեամբ. Ռուսաստանում՝ Ալֆրէդ Շնիտկէ, Էդիսոն Դենիսով, Ռոդիոն Շչեդրին, Էստոնիայում՝ Արւօ Պեարտ, Վրաստանում՝ Գիա Ղանչելի, Ուկրաինայում՝ Վալենտին Սիլուեստրով եւ ուրիշներ։ Առաջին հերթին խօսքը վերաբերում է երաժշտական մտածողութեան ատոնալ եւ դոդեկաֆոն նոր համակարգերին, արուեստում, մասնաւորապէս երաժշտական մշակոյթում բանական, կառուցողական, նախասկզբի գերիշխանութեանը, նոր աննախընթաց արտայայտչաձեւերի, տեխնիկական եւ տեխնոլոգիական հնարքների համակողմանի կիրառմանը արուեստում։

Ինքնըստինքեան հասկանալի է, որ այս համընդհանուր վերափոխումների ալիքին հաղորդակից եղաւ նաեւ հայ երաժշտարուեստը։

60ականների սերնդի ստեղծագործողների՝ նորարարութիւնների հանդէպ ունեցած բուռն հետաքրքրութիւնը Մանսուրեանը բացատրում է նրանով, որ իրենք փորձում էին ուշացումով բացայայտել ու միաձուլել մինչ այդ իրենց համար անյայտ կոմպոզիցիոն տեխնիկաներն ու մեթոդները։ «Բայց ինչքան շատ նոր տեխնիկաներով էինք «հանդերձաւորւում», այնքան աւելի բարդանում էր ինքնուրոյն ոճի պահպանման խնդիրը։ Մեզանից ոչ մէկը չէր ցանկա-

ցում լինել սոսկ արեւմտեան ոճերի, արեւմտեան երաժշտութեան ընդօրինակողը»[2], ասում է արուեստագէտը։

Այսպիսով, 60ականների նորարարական գործընթացը որդեգրած հայ կոմպոզիտորների եւ մասնաւորապէս Մանսուրեանի ստեղծագործական անհատականութիւնը արժեւորւում է ոչ այնքան նորարարական հնարքներով ինքնանպատակ հրապուրուածութեամբ, որքան՝ շատ աւելի խորը, հիմնաւոր ստեղծագործական հաւատամքով՝ արդի մտածողութեան տեխնիկական հնարքներով ազգային երաժշտութեան շրջանակներն ընդլայնելու հնարաւորութեամբ։ Արեւմտաեւրոպական մաժորա-մինորային շրջանակներից դուրս գալու գաղափարը հնարաւորութիւն ընձեռեց երաժշտին խորամուխ լինելու ազգային երաժշտութեան հնագոյն ակունքների մէջ՝ բացայայտելով աշխարհիկ ու հոգեւոր դրսեւորումների լայն հնարաւորութիւնները։ «Քսաներորդ դարի արեւմտեան երաժշտութեանը յատուկ խստագոյն տոնայնական խախտումը երբեմն արեւելեան մտածողութեան հետ նոր եզրեր գտնելու հնարաւորութիւն է ընձեռում։ Ահա այդ ճանապարհով եմ գտել իմ ոճը»՝ նոյն հարցազրոյցում ասում է նա։

Նորարարական արտայայտչամիջոցները, երեւոյթներն ու հնարքները կոմպոզիտորի ստեղծագործութեան մէջ վերահմաստաւորւում, միախառնւում են արուեստագէտի ինքնատիպ մտածողութեան ու գրելաոճի հետ, իւրաքանչիւր առանձին դէպքում ենթարկուելով տուեալ ստեղծագործութեան որոշակի մտայղացմանը, սակայն պահպանելով ազգայինի հանդէպ ունեցած իր յատակ դիրքորոշումն ու հիմնորոշ ստեղծագործական սկզբունքները։

Ահռելի ժամանակագրական ու աշխարհագրական ընդգրկում ունեն Մանսուրեանի ստեղծագործութիւնը սնուցող ակունքները՝ սկսած հայ միջնադարեան երաժշտութիւնից, մանրանկարչութիւնից, քնարերգութիւնից ու ճարտարապետութիւնից մինչեւ կոմիտաս, նորվիեննական դպրոցից, տպաւորապաշտութիւնից, խորհրդանշապաշտական գրականութիւնից ու պոեզիայից մինչեւ դերիրապաշտութիւն։

Կեչառեցուց, Քուչակից մինչեւ Լորկա, Ֆոլկներ ու Կաֆկա, Զարենց ու Սահեան, Փարաջանով եւ Մալեան։ Նախընտրած ուղղութիւնների, արտայայտչաձեւերի ու ստեղծագործական եղանակների վաւերուն, միմեանց հակասող ու միմեանցից բեւեռայնօրէն տարբերուող երանգապնակն են կազմում նորդասականութիւնը («Պարտիտա Սիմֆոնիկ Նուագախմբի Համար», «Կոնցերտ Երգեհոնի եւ Նուագախմբի Համար»), դոդեկաֆոնիան («Ջութակի Սոնատ N 2»), մոդալ ու սերիալ տեխնիկաները («Ջութակի Սոնատ N 1», «Դաշնամուրային Տրիօ», «Դաշնամուրային Երեք Պրելիւդ», «Սաղմոս Երկու Ձէյտաչի եւ Ջութակի Համար»), սոնորային եւ ակուստիկ միջոցները («Ջութակի Սոնատ N 2», «Տետր Ողբագին Տաղերգութեան»), ոճերի միահիւսման ինքնատիպ փորձերը («Ջինէ Թագուհին» բալէտը, կինօերաժշտութիւնը, երկու կոնցերտները թաւջութակի եւ նուագախմբի համար, «Ալտի Ու Թաւջութակի Կոնցերտ»ը, «N 3 Կուարտէտ»ը)։

Մանսուրեանի ստեղծագործութեան բազմաչերտ ու բազմաբնոյթ էութիւնը անմիջականօրէն կապուած է արուեստագէտի կենսագրութեան հետ, որը ճակատագրի բերումով ներառեց Արեւմտահայաստանի ու Արեւելահայաստանի մշակութային առանձնայատկութիւնները, գաւառի ու մայրաքաղաքի

կենցաղային ու աշխարհայեացքային նրբութիւնները, ԽՍՀՄ, մասնաւորապէս խորհրդահայ երաժշտակրթական համակարգի հիմքերն ու համաշխարհային մշակութային նորագոյն ձեռքբերումներին խորամուխ լինելու եւ դրանք ստեղծագործաբար իւրացնելու անհագ տենչն ու կարողութիւնը։

Տիգրան Մանսուրեանը ծնուել է 1939ին Բէյրութում։ Հայրենադարձութեան առաջին հզօր ալիքը Մանսուրեանների ընտանիքը տեղափոխում է Հայաստան, Արթիկի շրջան, ուր նա առաջին անգամ առնչւում է արեւելահայ, յատկապես Շիրակի շրջանին բնորոշ բառ ու բանին, կենցաղին ու բանահիւսութեանը։ Երաժշտական վառ ընդունակութիւնները դեռ վաղ հասակից են դրսեւորւում եւ աստիճանաբար վերաճում երաժշտութեանը նուիրաբերուելու հաւատամքի։ Երաժշտական դպրոցին յաջորդում են ուսումնառութիւնը Երեւանի Ռոմանոս Մելիքեանի Անուան Երաժշտական Ուսումնարանում (1956-1960, Էդուարդ Բաղդասարեանի դասարան) եւ Կոմիտասի Անուան Կոնսերվատորիայում (1960-1965) եւ ասպիրանտուրայում (1965-1967)՝ Ղազարոս Սարեանի ստեղծագործական դասարանում)։

Ստեղծագործական առաջին փորձերը՝ «Լարային N 1 կուարտէտ»ը եւ այլ գործեր, վկայում էին հեղինակի լուրջ ու նպատակասլաց անհատականութեան, արուեստում իր առաքելութիւնը գիտակցող մտաւորականի սկզբունքային դիրքորոշման եւ հայրենի մշակոյթի հանդէպ տածած պաշտամունքի մասին։ Այսպէս, դեռեւս երիտասարդ կոմպոզիտորի առաջին հրապարակախօսական ելոյթներից մէկում կարդում ենք. «Ես կ'ուզէի գիտակցել այն խթանները, նախաստեղծ զգացմունքները, ներքին տրամաբանութիւնը, որ ծնում են երաժշտութեան այս կամ այն ազգային յատկանիշները, նրանց անկրկնելիութիւնը... Եւ այստեղ ինձ շատ է օգնում կապը հայրենի մշակոյթի հետ։

Յատկապէս երաժշտութեան եւ արուեստի միւս ճեւերի խորը կապերն են որոշում, ըստ իս, նրա տեղը այն գեղարուեստական համակարգում, որը կոչւում է բառիս լայն իմաստով մշակոյթ։

... Ինձ համար օրինակ է ծառայում հայկական ճարտարապետութիւնը։ Նրանում եմ ես տեսնում ազգային մշակոյթի, ազգային ոգու առաւել ամբողջական արտայայտութիւնը։ Կ'ուզէի երաժշտութեան միջոցով հասնել այն հոգեւոր բարձունքներին, որոնց հասել է հայ ճարտարապետութիւնը»[3]։

Տիգրան Մանսուրեանը հեղինակ է տարբեր ժանրերի բազմաբնոյթ ստեղծագործութիւնների, որոնցից իւրաքանչիւրը, վստահօրէն կարելի է ասել, նոր, համարձակ ու աննախադէպ երեւոյթ էր հայ երաժշտական իրականութեան մէջ։ Դեռեւս առաջին լուրջ երկերից սկսած՝ «Ինտերիէր» լարային կուարտէտը, «Պարտիտ»ը սիմֆոնիկ նուագախմբի համար (1965), «Կոնցերտ»ը՝ երգեհոնի եւ նուագախմբի համար, «Գիշերային երաժշտութիւն» սիմֆոնիկ կտաւը, «Թռչունի Ուրուանկարը» պիէսների շարքը կլաւեսինի եւ հարուածայինների համար եւ այլ գործերում դրսեւորուեց Մանսուրեանի բացառիկ անհատականութիւնը, որոնող-ստեղծագործողի եռանդուն մաքառումները՝ ի. դարի երաժշտական ոճերի եւ ուղղութիւնների, տեխնիկական հնարքների եւ կառուցողական համակարգերի յորձանուտում։ Ինքն էլ բազմիցս խոստովանել է, որ «գիտակցաբար էր դիմում այդ փորձերին, գիտակցում էր նաեւ դրանցից շատերի վաղանցիկութիւնը, բայց անյաղթահարելի պահանջ էր զգում այդ ա-

մէնի միջով անցնելու, այդ ամէնն իր միջով անցկացնելու, ֆիլտրելու, իրենը դարձնելու, իրացնելու»[4]։

Ծօրինուածքային ոչ մի նորոյթ, ճարտարապետական ոչ մի հնար չվրիպեց կոմպոզիտորի ուշադրութիւնից։ Սակայն նորի ամէն մի կիրառում Մանսուրեանի գրչի տակ ստանում էր շատ ինքնատիպ, շատ ազգային, միայն իրեն՝ Մանսուրեանին բնորոշ արտայայտչաեղանակ, ներքին էութիւն, որը միաւորում էր եւ շարունակում է միաւորել իրարից տասնամեակների հեռաւորութեամբ բաժանուած, ոճերով ու արտայայտչամիջոցներով իրարամերժ երկերը։ Եւ այդ միասնականը, ընդհանուրը Մանսուրեանի երաժշտութեան ազգային խոր ակունքներն են, ազգային ժառանգականօրէն վերապրուած պատկերացումը, ազգային հինաւուրց շերտերի զարմանալի գգացողութիւնը եւ այդ շերտերն արդի միջոցներով վեր հանելու բացառիկ ունակութիւնը։

70ականներն ու 80ականների սկիզբը կարելի է անուանել Տիգրան Մանսուրեանի ստեղծագործական հասունութեան, ստեղծագործական անհատականութեան կայացման շրջան, երբ ստեղծուեցին գործիքային սոնատները, NN 2-3 կուարտէտները, «Դաշնամուրային Տրիօ»ն, երկու կոնցերտը՝ թաւջութակի եւ նուագախմբի համար, «Կրկնակի կոնցերտ»ը՝ ալտի եւ թաւջութակի համար, «Սաղմոս՝ երկու Ֆլէյտաի եւ Ջութակի Համար»ը։

«Սաղմոս»ում դրսեւորուեց Մանսուրեանի ստեղծագործական մէկ այլ նախասիրութիւն, որն սկիզբ էր առել դեռեւս «Թռչունի Ուրուանկարը» շարքում։ Խօսքը տարբեր նուագարանների արտասովոր տեմբրային համադրութիւնների, հազուագիւտ կիրառուող գործիքների, անսպասելի կատարողական կազմերի հանդէպ ցուցաբերած հետաքրքրութեան մասին է, որը հետեւողականօրէն զարգացրեց հեղինակը յետագայ ստեղծագործութիւններում։ 90ականների վերջերին տեմբրային, անսովոր համադրութիւնների նմանօրինակ արտայայտութիւններ դարձան «Հաւատով Խոստովանիմ» ստեղծագործութիւնը՝ ալտի (գործիք), սոպրանոյի եւ արական քառեակի համար, «Հայրէնները»ը՝ ալտի եւ հարուածայինների համար։

Բազմաեռ եւ բազմաբնոյթ ստեղծագործութիւնների հեղինակի ուշադրութիւնից չվրիպեց նաեւ երաժշտական թատրոնը։ 1988ին գրուեց «Ջիւնէ Թագուհին» հեքիաթ-բալէտը՝ ըստ Հանս Քրիստիան Անդերսէնի համանուն հեքիաթի (բեմ.՝ 1990ին, Երեւանի Սպենդիարեանի Անուան Օպերայի եւ Բալէտի Թատրոնում)։ Հետաքրքիր երաժշտա-լեզուական լուծում գտաւ Մանսուրեանը՝ համաշխարհային ճանաչման, համամարդկային սիրոյ արժանացած ու յաւիտենական գաղափարների մասին պատմող այս հեքիաթի երաժշտական մեկնաբանման համար։ Բալէտի երաժշտութեան լեզուն պարզ է ու մատչելի, անսահման յուզական, քնարական, նաեւ անպաճոյճ, պարային թափանցիկ, բարի ու սրտամօտ, շատ դէպքերում դիտաւորեալ «ակնարկելով ու նմանակելով» բալէտային ստեղծագործութիւնների հանրաճանաչ վարպետների՝ Իգոր Ստրաւինսկու, Սերգէյ Պրոկոֆեւի, Արամ Խաչատրեանի ոճերին։

Տիգրան Մանսուրեանի երաժշտութիւնը ընդհանուր առմամբ կարելի է բնորոշել որպէս մտահայեցողական-հոգեբանական, թէեւ ինքը՝ կոմպոզիտորը տարանջատում է իր ստեղծագործութիւնը կերպարային ընդգրկումով եւ լարանային ուղղուածութեամբ երկու տեսակի. «Մէկը՝ անձնական է, միւսը՝ ծէս, ռիտուալ... Առաջինում ես եմ, միւսի մէջ ես չկամ։ Դա էլ, այսինքն, ես եմ,

բայց, ասես, հայելու մէջ անդրադարձած»[5]՝ *ասում է կոմպոզիտորը։ Սակայն երկու տեսակում էլ գերիշխում է ստեղծագործողի ինքնամփոփ, մտասոյզ հոգեվիճակը, որը թելադրում է նաեւ ստեղծագործութեան մէջ կամերայնութեան գերիշխումը։ Ընդ որում Մանսուրեանի ստեղծագործութեան մէջ կամերայնութեան ձգտումը արտայայտում է Ի. դարի երկրորդ կէսի կարեւոր միտումներից մէկը՝ սակաւապէտութեան, նուազագոյն միջոցներով առաւելագոյն արտայայտչականութեան հասնելու ձգտումը։ Դրա հետ մէկտեղ, իր իսկ խոստովանութեամբ, սակաւապէտու-թեան դրսեւորումն ընկած է հայկական երաժշտութեան էութեան մէջ՝ լինի դա գործիքային երաժշտութիւն թէ աւանդական երգեցողութիւն։* «Հայկական երաժշտութեան էութիւնը երեւան է գալիս արտայայտչամիջոցների չափազանց խնայողական օգտագործման մէջ,- *ասում է Մանսուրեանը*:- Ինտոնացիա լինի, ռիթմ թէ տոնային ելեւէջ, ամէն ինչ խիստ չափաւոր է օգտագործում»[6]։

Մանսուրեանը դիմել է կամերային ժանրի ամենատարբեր դրսեւորումներին՝ գործիքային, անսամբլային, վոկալ, վոկալ-գործիքային, խմբերգային, եւ դրանցից իւրաքանչիւրում դրսեւորուել է հեղինակի՝ կամերայնութեան նուրբ ընկալումը։

Կամերային ժառանգութեան մի ստուար մաս են կազմում վոկալ ստեղծագործութիւնները՝ սեռի ամենալայն, բազմազան ու համապարփակ ներառումով՝ սկսած քնարական երգերից ու ռոմանսներից մինչեւ վոկալ-գործիքային ու խմբերգային շարքերը։ Այստեղ էլ դրսեւորուեց կոմպոզիտորի բացառիկ աչխարհայեացքը, լայն մտահորիզոնը, հայ եւ օտարազգի պոեզիայի հնագոյն նմուշներից մինչեւ մեր օրերի մեծագոյն հեղինակների երկերին քաջատեղեակութիւնը, գեղագիտական նուրբ ու բծախնդիր ճաշակը։ Անչափ ընդգրկուն է հեղինակների ցանկը, որոնց բանաստեղծական երկերը ներշնչանք են հաղորդել կոմպոզիտորին՝ հայկական միջնադարեան բանաստեղծութիւնից («Տետր Ողբագին Տաղերգութեան»՝ Խաչատուր Կեչառեցու, «Հայրէններ»՝ Նահապետ Քուչակի), հայ դասական բանաստեղծութիւնից («Գարնան երգեր»՝ Ցովհաննէս Թումանեանի, «Երեք Նայիրեան Երգ»՝ Վահան Տէրեանի, «Արուեստ Քերթութեան»՝ ըստ Եղիշէ Չարենցի, «3 Մադրիգալ»՝ Կոստան Զարեանի, «Սրնգահար Լուսինը»՝ Ռազմիկ Դաւոյեանի), արեւմտաեւրոպական բանաստեղծութիւնից («Երեք Երգ» Գարսիա Լորկայի) ստեղծագործութիւններով, եւն.։ Այս ասպարէզում նոյնպէս, ինչպէս եւ միւս սեռերում, Մանսուրեանը հանդէս եկաւ որպէս ժամանակի համարձակ նորարարներից մէկը՝ իր ստեղծագործութիւններով հարթելով վոկալ սեռի զարգացման անհնախընթաց ուղիներ, սեռին հաղորդելով նոր որակ եւ բովանդակութիւն ներմուծելով նրանցում։

Համաչխարհային ու հայ դասական գրականութեանը քաջածանօթ լինելով՝ Տիգրան Մանսուրեանը հմտօրէն կիրառեց իր տաղանդը ֆիլմերի երաժշտութեան ինքնատիպ ու իւրօրինակ արուեստում՝ այստեղ եւս հասնելով անգերազանցելի արդիւնքների։ Բաւական է թուարկել միայն հայաստանեան կինոյի աննախընթաց վերելքի մասնակից բեմադրիչներին, որոնց հետ համագործակցեց Մանսուրեանը. Սերգէյ Փարաջանով՝ «Նռան Գոյնը» (1969), Հենրիկ Մալեան՝ «Մենք ենք, Մեր Սարերը» (1969), «Կտոր Մը Երկինք» (1980), Ալբերտ Մկրտչեան՝ «Հին Օրերի Երգը» (1982), «Մեր Մանկութեան Տանգօն» (1984),

Սերգէյ Իսրայէլեան՝ «Գիքոր» (1982), Բագրատ Յովհաննիսեան՝ «Աչնան Աբեւ» (1987) եւն.։ Անուններ, որոնք կերտեցին արդի հայ կինօարուեստը, բարձրացրին մի նոր աստիճանի։ Եւ այդ կարեւոր գործընթացին անմասն չմնաց նաեւ երաժշտութեան հեղինակը։

Երաժշտութեան, երաժշտարուեստի եւ ստեղծագործող անհատի իր առաքելութիւնը քաջ գիտակցելով՝ Մանսուրեանն այսօր էլ շարունակում է ստեղծագործել. «Իմ համոզմունքն է, որ ամէն մարդ աշխարհ գալիս իր բաժին հարցերն է ստանում։ Ոմանց համար ստեղծագործելը սոսկ այս հարցերին պատասխանելն է։ Ես իմ ստեղծագործութեամբ աշխատում եմ նաեւ հարցեր առաջացնել»[7]։

Կեանքի եօթերորդ տասնամեակը բոլորած արուեստագէտի հասուն գործերում նկատելի է խոհափիլիսոփայական, հայեցողական վերաբերմունքը վաղանցիկ եւ ունայն երեւոյթների հանդէպ։ Գործիքային կոնցերտների եռագրութիւնը («Ալտի կոնցերտը, Ջութակի եւ ալտի համար գրուած կրկնակի կոնցերտը եւ «Ջութակի կոնցերտը») կեանքի փորձութիւններով, ճակատագրի հարուածներով, ստեղծագործական վերելքներով ու անկումներով, անձնական երջանկութեան վայելքի ու կորստեան ցաւից իմաստնացած արուեստագէտի խոստովանանքն է։ Հեղինակի իսկ խօսքերով, դա քնարահոգեբանական ողբերգութեան գագաթնակէտն է՝ ամբողջութեամբ հիմնուած «խաչի» թեմայի վրայ։ Եռագրութեան աւարտը՝ «Ջութակի կոնցերտը խորհրդանշում է այն սահմանագիծը, որտեղ սկիզբն ու աւարտը հանդիպում են միմեանց։ «Դա գագաթնակէտն է եւ առաջին քայլը դէպի իրականութեան սահմաններից այն կողմ անցնելը, դէպի մէկ ուրիշ աշխարհ՝ Ունայնութեան կամ Յաւերժութեան աշխարհը բափանցելը»[8]։ Իսկ Յաւերժութիւնից անդին ստեղծագործողի առջեւ բացւում են նոր, անմեկնելի հորիզոններ՝ առաջադրելով բիւրաւոր հարցեր…

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Մանսուրեանի հարցազրոյցը Թինա Քոհնի հետ հրատարակուել է* ECM New Series CD *ալբոմին կցուած երկլեզուեայ գրքոյկում, այնուհետեւ Յակոբ Մուլիկեանի թարգմանութեամբ հրատարակուել Ազգ օրաթերթում՝ «Հաւատով Աստուածանիմք» վերնագրով, Ազգ, թիւ 30, 18 Փետրուար 2006։*

[2] *Նոյն։*

[3] Tigran Mansuryan, "Slovo Molodyoji" (*Երիտասարդութեան խօսքը*), *Sovetskaya Muzika*, N 5, 1968, *էջ* 18։

[4] *Հեղինակի հետ 1999ին մեր ունեցած անձնական զրոյցից։*

[5] *«Ո՞վ է Ստեղծագործողը, Ի՞նչ է Ստեղծագործելը», գրի առաւ Հ. Այվազեանը, Մովսեսական Արուեստ, N 2, 1982, էջ* 18։

[6] *Ազգ, «Հաւատով Աստուածանիմք»։*

[7] *Մովսեսական Արուեստ, էջ* 20։

[8] *Ազգ, «Հաւատով Աստուածանիմք»։*

TIGRAN MANSURIAN: THE COMPOSER'S CONCEPTUAL FRAMEWORK
(Summary)

TSOVINAR MOVSISIAN
tsmovsisyan@yahoo.com

The 1950s marked the unprecedented resurgence of professional classical music composition in Armenia. In this context, for Mansurian and for many of his generation, Komitas and his compositions became their inspirational idol and conceptual framework.

The fundamental changes of the 1960s in the Soviet Union resulted in the tearing of the iron curtain, of the totalitarian system that had prevailed for decades. Armenian music was affected by this broad wave of extensive changes. The Armenian composers of the 1960s tried belatedly to explore and integrate the compositional techniques and methods of the West, which were heretofore unknown to them. In this regard, through modern conceptual and technical skills, Mansurain enlarged the limits of Armenian national music.

Mansurian's sources of inspiration include Armenian medieval music, miniature painting, architecture and poetry (Ketcharetsi to Kuchak) and extend to Komitas, the new Viennese School, and impressionism. They include as well the various schools of literature from symbolism to surrealism, to Lorka, Faulkner, Kafka, Charents, Sahian, Paradjanov, and Malian.

However, the adoption of innovations took an original, national turn through his creation and became his unique manner of expression. Compositions which opposed each other in style and expression and were separated from each other by decades were unified through Mansurian's inherited and revived national sense. These compositions were produced in an excellent manner.

In the works produced in his mature years, one can see the composer's philosophical approach towards temporary phenomena. The composer, who has become wiser due to his life experience, is currently trying to penetrate the world of eternity or the void, which opens new undecoded and uninterpreted horizons.

THE GENOGRAPHIC PROJECT VISITS HAIGAZIAN UNIVERSITY[1]

MIRVAT EL-SIBAI
mirvat.elsibai@lau.edu.lb
RITTA SCHELALA & MARC HABER (*contributors*)

Where do we really come from? And how did we get to where we live today?[2]

Many DNA studies suggest that all humans today descend from a group of African ancestors who—about 60,000 years ago—began a remarkable journey. The Genographic Project is seeking to chart new knowledge about the migratory history of the human species by using sophisticated laboratory and computer analysis of DNA contributed by hundreds of thousands of people from around the world. In this unprecedented and real-time research effort, the Genographic Project is closing the gaps of what science knows today about humankind's ancient migration stories.

DNA studies have permitted scientists to categorize all humans on Earth in genealogical groups sharing one common ancestor at one given point in prehistory. They are called haplogroups.

Y-DNA haplogroups are useful to determine whether two apparently unrelated individuals sharing the same surname do, indeed, descend from a common ancestor in a not too distant past (400 to a couple of thousand years back).

Human Y chromosomes are male-specific sex chromosomes; nearly all humans that possess a Y chromosome will be morphologically male. Because the X and Y chromosomes are so different in size, they do not engage in crossing over or recombination during cell division, so their genes are not mixed up. This means that men pass their Y-chromosome on unchanged from father to son, down through the generations (except for rare mutations). Rare mutations are derived from copying mistakes. When the DNA is copied it is possible that a single mistake occurs in the DNA sequence; these single mistakes are called single nucleotide polymorphisms (SNPs). These SNPs are used in order to reveal the haplogroup of each male. The haplogroups are the major branches on the Y chromosome tree defined by SNPs which have accumulated with time and which become markers for male lineages.

Located in Asia Minor, Armenia borders Turkey to the west, Georgia to the north, Azerbaijan (including the disputed Nagorno Karabagh region) to the east and southwest, and Iran to the south. The historical Armenian kingdom once extended into northeast Turkey and northwest Iran, from the Caspian to the Mediterranean seas. Armenia was located at the center of what has been called the "cradle of civilization." Because it was situated between Eastern and Western civilizations, the country was continually caught in the turmoil of war. At the same time, however, its seat astride trade and migration routes between Europe and Asia Minor allowed goods and ideas to pass frequently through the land. For most of

the period from the first century A.D. to the present day Armenia has been subject to the hegemony of more powerful neighbors. External powers that have ruled or exerted dominant political influence over Armenia include the Romans, Parthians (and later Persians), Byzantium, Seljuk Turks, Mongols (thirteenth to early fifteenth centuries), the Ottoman and Russian Empires, and most recently (until 1991) the Soviet Union. Forced and voluntary dispersions over the years have led to a large worldwide Armenian diaspora including in Lebanon.

Armenia has been little-studied genetically even though it is situated in an important area with respect to theories of ancient Middle Eastern population expansion and the spread of Indo-European languages.

As part of the Genographic project effort and because of particular interest in Armenian lineage/heritage, part of the Lebanese population, we visited Haigazian University in Beirut on March 24 in 2009. We were helped by the administration, who actively encouraged the students and staff to participate in the study and, thanks to the students' scientific curiosity and enthusiasm, we were able to collect enough male samples to add to our pre-existing 100 samples to draw a map of the male genetic lineage of Lebanese Armenians. At Haigazian we collected samples from 54 males and 42 females.

Our experiments and analysis[3] showed that the non-Armenian Lebanese and Armenian Lebanese communities both share the same major haplogroup, which is J2 (28.9% and 28.1%, respectively). Haplogroup J2 is mainly found in the Northern Fertile Crescent, the Mediterranean, Iran, Central Asia, and Southern Europe and is associated with Phoenician commercial and colonial activities. J2 subclades are also found in the South Caucasus (Georgia, Armenia, Azerbaijan), Iran, Central Asia, and South Asia. This suggests that, if the occurrence of Haplogroup J among modern populations of Europe, Central Asia, and South Asia does reflect Neolithic demic diffusion from the Middle East, the source population is more likely to have originated from Anatolia, the Levant or northern Mesopotamia than from regions further south.

24% of the Armenian Lebanese belong to R1b haplogroup. In fact, other genetic studies showed that the geographical distribution of the R1b haplotype is such that it is shared by Armenians (in Armenia) and two other populations from the Caucasus. Moreover, it is lacking in most other populations from the Caucasus, as well as in the other populations from further east. On the other hand, it is more frequently found in Europe, where as we know, haplogroup R1b tends to have higher frequencies as well. R1b is the most frequently occurring Y chromosome haplogroup in Western Europe.

In conclusion, the Lebanese Armenian community shares a lot of similarity with the non-Armenian Lebanese community. This is due to centuries of shared history and genetic interaction in a geographical neighborhood that has shared a similar political fate and cultural makeup.

ENDNOTES

[1] This report is provided upon the request of Antranik Dakessian, who helped us conduct DNA sampling at Haigazian University.

[2] For this report we have referred to various genographic and scientific websites, like https://genographic.nationalgenographic.com/genographic/index.html ; http://www.eupedia.com/europe/origins_haplogroups_europe.shtml#Introduction

[3] Done in the laboratories of Dr. Pierre Zalloua, LAU, Byblos.

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՑԵՐՈՒ ԾԻՆԱՑԻՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ - ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁ

(Ամփոփում)

ՄԻՐՎԱԹ ԱԼ-ՍԻՊԱԻԻ
mirvat.elsibai@lau.edu.lb

Լիբանանցիներու ծինային ծագումնաբանութեան սերտողութեան ծիրին մէջ, հետազօտողներու խումբ մը 24 Մարտ 2009ին ժամանեց Հայկազեան Համալսարան եւ արեան նմոյշներ առաւ 96 հայերէ, որոնք աւելցուեցան հետազօտող խումբին կողմէ Լիբանանի այլ վայրերէ առնուած չուրջ 100 հայերու նմուշներուն։

Ծօդուածը կը հաղորդէ գոյացած նմուշներուն հիմամբ կատարուած հետազօտութեան նախնական արդիւնքը։

Ըստ այդմ, լիբանանցի հայերն ու ոչ-հայերը ունին նոյն հեփլոկրուփի՝ J2 բարձր համեմատութիւնը՝ 28.1% եւ 28.9%։ J2 հեփլոկրուփը առաւելաբար տարածուած է Արգաւանդ Մահիկի հիւսիսային շրջանին, Միջերկրականի արեւելեան ւազանին, Իրանի, կեդրոնական Ասիոյ եւ հարաւային Եւրոպայի մէջ։

Հետազօտութենէն ի յայտ կու գայ նաեւ, որ լիբանանահայութեան 24 առ հարիւրը կը պատկանի R1b հեփլոկրուփին։

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ



ՆԱՅԻՄ ԱԼ-ԵԱՖԻ
(1936-2003)

Արաբ գրականագէտ, գրաքննադատ, բանասէր, ձեռագրագէտ, հասարակական գործիչ եւ համալսարանի դասախօս՝ Դոկտ. Նայիմ Ալ-Եաֆի ծնած է Սուրիոյ Հոմս քաղաքը 1936ին: Նախակրթութիւնը ստացած է ծննդավայրին մէջ, որմէ ետք մեկնած է Դամասկոս, ապա Գահիրէ, ուր աւարտած է տեղւոյն պետական համալսարանի Արաբական Գրականութեան Բաժանմունքը:

Երկար տարիներ դասախօսած է Ալճերիոյ, Սուրիոյ եւ Քուէյթի համալսարաններուն մէջ: Նախագահած է Սուրիոյ Արաբ Գրողներու Միութեան Հալէպի մասնաճիւղը եւ մշակութային եռուն գործունէութիւն ծաւալած հոն: Գործակցած է հալէպահայ մշակութային միութիւններու հետ, տալով հայութեան առնչուող մէկէ աւելի դասախօսութիւններ:

Եաֆիի գրական-ուսումնասիրական վաստակին մաս կը կազմեն տարբեր բովանդակութեան 24 հատորներ, ինչպէս նաեւ գրականագիտական եւ գրաքննադատական բնոյթի բազմաթիւ ուսումնասիրութիւններ, յօդուածներու ժողովածուներ եւ արաբ ժամանակակից մարդը յուզող բազմաթիւ այլ գործեր:

Եաֆի անտարբեր չէ մնացած հայութիւնը յուզող հարցերու նկատմամբ: Իր կեանքի վերջին տարիներուն ընթերցողի սեղանին դրած է հայագիտական բնոյթի 4 գիրքեր.-

1- مجازر الأرمن وموقف الرأي العام العربي منه (Հայկական կոտորածներն ու արաբ հանրային կարծիքի դիրքորոշումը անոր հանդէպ), Դամասկոս, 1992, 104 էջ: Գիրքը կը խօսի Հայկական Ցեղասպանութեան օրերուն արաբ ժողովուրդի դիրքորոշումին մասին՝ պաշտօնական եւ ժողովրդային մակարդակներով: Հեղինակը նախ ընթերցողին կը ծանօթացնէ Հայկական Ցեղասպանութիւնը, անոր դրդապատճառները, հետեւանքները, օտար երկիրներու դիրքորոշումն ու պատասխանատուութիւնը, ապա՝ կ՚անցնի հիմնական նիւթին:

Գիրքին վերջին գլուխը կը վերլուծէ արաբական արդի գրականութեան երկու մեծ դէմքերու՝ Ապտուլ Ռահման Մունիֆի եւ Իպրահիմ Ալ-Խալիլի վէպերուն Հայկական Ցեղասպանութեան նուիրուած հատուածները:

2- جمال باشا السفاح – (Մարդասպան Ճեմալ Փաշա), Դամասկոս, 1993, 175 էջ: Ճեմալ Փաշա արաբներուն ծանօթ է «մարդասպան Ճեմալ Փաշա» մակդիրով, որովհետեւ ի՛նք էր որ Ա. Աշխարհամարտի օրերուն՝ 1915-1916ին Դամասկոսի եւ Պէյրութի գլխաւոր հրապարակներուն վրայ կախաղան բարձրացուց 34 արաբ մտաւորականներ՝ բանաստեղծներ, խմբագիրներ, կրթական, մշակութային եւ կրօնական գործիչներ:

Դոկտ. Եաֆիի այս գիրքը, որ Ճեմալ Փաշայի մասին գրուած առաջին մենագրութիւնն է արաբ պատմագրութեան մէջ, պատմական դէպքերու քննարկ-

ման կողքին, կը վերլուծէ մեծ մարդասպանին ճկարագիրը, անոր ոճրային բնազդն ու կերպարը: Վերջին գլուխը նուիրուած է երկու հայորդիներու կողմէ անոր ահաբեկման պատմութեան, ուր հեղինակը կ'անդրադառնայ Հայկական Ցեղասպանութեան եւ Ճեմալի սպանութեան դրդապատճառներուն:

3- صورة التركي في الشعر العربي الحديث – شعر المشرق والمهاجر ١٨٧٠–١٩٢٠ (Թուրքի կերպարը արաբական արդի բանաստեղծութեան մէջ - Արեւելքի ու արտասահմանի բանաստեղծութիւնը, 1870-1920), Դամասկոս, 1995, 239 էջ, հեղինակակից՝ Մահէր Ալ-Մունաճէտ: Խիստ հետաքրքրական հատոր մը, որ գրական վերլուծումի կ'ենթարկէ թուրքին կերպարը՝ ԺԹ. դարավերջի ու Ի. դարասկիզբի արաբական արեւելքի երկիրներուն մէջ ծաղկած բանաստեղծական գործերուն մէջ:

Թուրք ժողովուրդի ծագման ու հնագոյն պատմութեան նուիրուած մուտքէն ետք, հեղինակները կ'անցնին հիմնական նիւթին՝ զայն բաժնելով գլխաւոր երեք մասերու.

Ա. Թուրքին քաղաքական կերպարը (բռնատէր, աւազակ-թալանիչ, աղետաբեր եւ վերջապէս՝ ոճրագործ-ցեղասպան):

Բ. Թուրքին ընկերային ու բարոյական կերպարը (ամբարտաւան, դաւադիր, մարդատեաց ոխակալ, դաւաճան, տգէտ ու գիտութեան թշնամի):

Գ. Թուրքին կրօնական կերպարը:

Քննարկուող իւրաքանչիւր կերպարի հետ մէջբերումներ կատարուած են տուեալ նիւթին հայող բանաստեղծութիւններէն, իսկ հատորի վերջաւորութեան տրուած են նիւթին առնչուող 20 քերթուածներ:

Իր տեսակին մէջ հետաքրքրական ու այժմէական հատոր մը, որ արժէ բարգմանաբար ունենալ հայերէն ու այլ լեզուներով:

4- نضال العرب والأرمن ضد الاستعمار العثماني (Հայերու եւ արաբներու պայքարը Օսմանեան գաղութատիրութեան դէմ), Դամասկոս, 1995, 102 էջ, հեղինակակից՝ Դոկտ. Խալիլ Մուսա: Գիրքը բաժնուած է վեց գլուխներու. առաջինը կը խօսի օսմանցի թուրքերու, արաբներու եւ հայերու մասին, երկրորդը կը քննարկէ 1839-1916՝ արաբներու եւ թուրքերու յարաբերութիւնները, երրորդը նուիրուած է հայ եւ թուրք յարաբերութիւններուն՝ 1860-1923, չորրորդը՝ թուրքերու դէմ հայ եւ արաբ համատեղ պայքարին, հինգերորդը՝ անոնց քաղաքական պահանջքներուն, իսկ վեցերորդ ու վերջին գլուխը կը խօսի հայ եւ արաբ ժողովուրդներու յարաբերութեանց ներկայ իրավիճակին ու հեռանկարներուն մասին:

Դոկտ. Ալ-Եաֆի երկար տարիներ ապրած է Սուրիոյ Հալէպ քաղաքը եւ մահացած այնտեղ՝ 8 Սեպտեմբեր 2003ին, մօտ տարի մը Սէն Լուի հիւանդանոցի իր անկողինին քամուած մնալէ ու անողոք հիւանդութեան դէմ յուսահատ պայքար մղելէ ետք:

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ
mihran.min@aya.sy



ՎԱՌԼԱՄ (ՎԱՀՐԱՄ) ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
(1928-2008)

Պատմաբան, թարգմանիչ Վառլամ Մարտիրոսեանը ծնուել է 1928ին, բանուորի ընտանիքում, Թբիլիսի, ուր ստացել է սկզբնական կրթութիւնը: 1947-1952՝ ուսումը շարունակել է Երեւանի Պետական Համալսարանի Միջազգային Յարաբերութիւնների Ֆակուլտէտում: Աշխատանքային գործունէութիւնը Մարտիրոսեանը սկսել է իբրեւ մանկավարժ՝ 1952-1956՝ Արթիկի շրջանի Հոռոմ գիւղի դպրոցում դասաւանդելով պատմութիւն եւ ռուսաց լեզու:

Այնուհետեւ, հանգուցեալ պատմաբանի կեանքի գերակշռող մասն անքակտելիօրէն կապուել է ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիային: 1959-1997 եւ 2004-2008՝ նա աշխատել է Պատմութեան Ինստիտուտում, իսկ 1999-2004՝ Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտում: Պատմութեան Ինստիտուտի ասպիրանտուրայում ուսումնառութեան տարիներին (1956-1959), Մարտիրոսեանը ձեռնամուխ է եղել ԺԸ. դարի հայ-վրացական յարաբերութիւնների պատմութեան ուսումնասիրութեանը: 1967ին պաշտպանել է թեկնածուական թեզ, որը յետագայում լոյս է ընծայել իբրեւ մենագրութիւն՝ *Հայ եւ Վրաց Ժողովուրդների Համագործակցութիւնը Ազատագրական Պայքարում (XVIII Դարի 20ական Թուականներ)* (1971) խորագրով: Այս գրքում նա առաջին անգամ օգտագործել է Մոսկուայում գտնուող Ռուսական Կայսրութեան Արտաքին Գործերի Նախարարութեան արխիւի մեծաքանակ անտիպ փաստաթղթեր, ինչը նրան հնարաւորութիւն է ընձեռել ամբողջ խորութեամբ եւ գիտական պատշաճ մակարդակով լուսաբանելու հայ եւ վրաց ժողովուրդների պայքարը պարսիկ կեղեքիչների ու թուրք ասպատակիչների դէմ: Նրա հիմնական հետեւութիւններն առ այսօր առարկութիւնների տեղիք չեն տալիս: Աւելի յատկանշական եւ այժմէական է այն, որ Մարտիրոսեանը հաւաստել է Անդրկովկասում Ռուսաստանի տիրապետութեան հաստատման առաջադիմական բնոյթը: Հայ-վրաց-ռուսական յարաբերութիւնների պատմութիւնը յետագայում եւս մշտապէս գտնուել է նրա ուշադրութեան կենտրոնում: Այս թեմային նա նուիրել է բազմաթիւ յօդուածներ ու հրապարակումներ, որոնք լոյս են ընծայուել հայրենական տարբեր պարբերականներում եւ գիտական հրատարակութիւններում:

Արխիւային աշխատանքի հանդէպ հակում եւ սէր ունեցող պատմաբան-աղբիւրագէտը երկար տարիներ աշխատել է տարբեր ռուսական արխիւներում եւ իր անուրանալի ներդրումն է բերել ԺԸ. դարի հայ-ռուսական յարաբերութիւնների պատմութեանը նուիրուած փաստաթղթերի ժողովածուների կազմման աշխատանքներին, ինչպիսիք են Պատմութեան Ինստիտուտի իրականացրած՝ *Armiano-Russkie Otnoshenia Vo Vtorom Tritsatiletii XVIII Veka, t. III* (Հայ-ռուսական յարաբերութիւնները XVIII դարի երկրորդ երեսնամեակում, Հտր. III) (1978), *Armiano-Russkie Otnoshenia V XVIII Veke, 1760-1800, t. IV* (Հայ-ռուսական յարաբերութիւնները XVIII դարում, 1760-1800թթ., Հտր. IV) (1990) ստուարածաւալ հրատարակութիւնները:

Մարտիրոսեանի գործունէութեան մէջ նշանակալից տեղ է գրաւեցրել նաեւ թարգմանական աշխատանքը: Վարժ տիրապետելով ռուսերէն եւ գերմաներէն լեզուներին, նա պարբերաբար հայերէն է թարգմանել եւ հայ գիտական հանրութեանն ու ընթերցող հասարակութեանը ներկայացրել ռուս յայտնի գործիչների կենսագրականներ՝ *Դմիտրի Դոնսկոյ* (1985), *Պուգաչով* (1989), եւ *Աւստրօ-Հունգարիայի Դիւանագէտների Հաղորդագրութիւնները Հայոց Ցեղասպանութեան Մասին (1915-1918 թթ.)* (2004) Հայոց Ցեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան համար մեծ կարեւորութիւն ներկայացնող փաստաթղթերի ժողովածուն:

Մարտիրոսեանն ազնիւ, բարեացակամ եւ սկզբունքային անձնաւորութիւն էր: Ղարաբաղեան շարժման շրջանին, լինելով խիստ դժգոհ խորհրդային իշխանութիւնների՝ հայ ժողովրդի արդար պահանջի հանդէպ ցուցաբերած անբարեացակամ վերաբերմունքից, նա դուրս եկաւ Խորհրդային Միութեան Կոմունիստական Կուսակցութեան շարքերից, իսկ յետագայում անդամագրուեց ՀՅԴ-ին:

Դառն էր Մարտիրոսեան մարդու ճակատագիրը: Մահից մի քանի տարի առաջ նա կորցրեց կնոջը, այնուհետեւ յիսունը հազիւ բոլորած միակ զաւակին, որի անժամանակ վախճանը շատ ծանր տարաւ:

Վառոյմ Մարտիրոսեանը իր մահկանացուն կնքեց 7 Հոկտեմբեր 2008ին Երեւան:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ
varuzhan_poghosyan@yahoo.com

ԷՄՄԱ ԿՈՐԽՄԱԶԵԱՆ
(1930-2009)

Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի Ինստիտուտ-Մատենադարանի աւագ գիտաշխատող, արուեստագիտութեան դոկտոր, նկարչուհի Էմմա Մուշեղի Կորխմազեանը ծնուել է 1930 Սեպտեմբեր 23ին, Մոսկուայում, շինարարի եւ քիմիկոսի ընտանիքում: 1941ին տեղափոխուել է Երեւան: 1954ին աւարտել է Գեղարուեստա-թատերական Ինստիտուտը եւ աշխատանքի անցնելով Մատենադարանում՝ ընդգրկուել է ռուս արուեստաբան, հայ միջնադարեան արուեստի մասնագէտ եւ վերականգնող նկարիչ Լիդիա Դուռնովոյի կազմակերպած արուեստագէտների խմբում, որոնք Հայաստանում առաջինն են զբաղուել եկեղեցական որմնանկարների ու ձեռագիր մատեանների մանրանկարչութեան վերականգնմամբ ու ընդօրինակմամբ: Կորխմազեանն անմիջական մասնակցութիւն է ունեցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տաճարի, Տաթեւի վանքի, Լմբատավանքի, Արուճի, Ախթալայի, Ղրիմի Ս. Խաչ եւ մի քանի այլ եկեղեցիների եզակի որմնանկարների փրկութեան գործին:

1960ականներից Կորխմազեանը հիմնականում նուիրուել է հայկական մանրանկարչութեան ուսումնասիրման գործին: Նրա ջանքերն ուղղուել են Ղրիմի հայ միջնադարեան արուեստի ուսումնասիրմանը: 1971ին «Ղրիմի Մանրանկարչական Դպրոցը» թեմայով պաշտպանել է ատենախօսութիւն եւ ստացել արուեստաբանութեան թեկնածուի աստիճան: 1976ին հրատարակ-

ուել է նրա *Ղրիմի Հայկական Մանրանկարչութիւնը (XIV-XVIIդդ.)* գիրքը, որի շնորհիւ լոյս է սփռուել հայ մատենական նկարչութեան մի նոր դպրոցի վրայ: Գրքում վեր են հանւում ու մեկնաբանւում Ղրիմում ապրած տաղանդաւոր հայ մանրանկարիչների գործերը, որոնք մինչ այդ ծանօթ չէին արուեստասէր հասարակութեանը:

1970-80ականներին Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատուէրով Կորխմազեանն ստեղծել է սրբապատկերներ Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի եւ միջնադարեան այլ վարպետների մանրանկարների հիման վրայ, որոնք զարդարում են հայ եկեղեցիները Հայաստանում եւ Սփիւռքում (Իրաք, Իրան):

1977ին Կորխմազեանն իր գործընկերուհու՝ Իրինա Դրամբեանի հետ ընթերցողների սեղանին է դրել Մատենադարանի գեղարուեստական գանձերին նուիրուած ռուսերէն գիրքը, 1987ին՝ հայկական մանրանկարչութեանը նուիրուած ռուսերէն աշխատանքը: «Մատենադարանի Գանձերը» մատենաշարով տարբեր լեզուներով եւ տարբեր տարիների լոյս են տեսել հայ մանրանկարչութեան վերաբերեալ նրա գիտահանրամատչելի գրքոյկները՝ հայերէն եւ ռուսերէն լեզուներով: 2006ին Հրաւարդ Յակոբեանի, Լիլիթ Զաքարեանի եւ այլոց հետ լոյս է ընծայել *Մատենադարանի Մանրանկարչական Գանձերը* մեծադիր albomը ֆրանսերէն: Հայ մանրանկարչութեանը նուիրուած զեկուցումներով հանդէս է եկել մի շարք հանրապետական, համախորհրդային եւ միջազգային գիտաժողովներում:

Կեանքի վերջին շրջանում, 2008ին Երեւանում լոյս տեսաւ Կորխմազեանի Ղրիմի Սուրբ Խաչ Մենաստանին նուիրուած ռուսերէն աշխատութիւնը (Իրինա Բաբայեանի համահեղինակութեամբ), իսկ Սիմֆերոպոլում (Ղրիմ) նոյն թուականին լոյս տեսաւ *Ղրիմի Հայկական Մանրանկարչութիւնը* (հայերէն եւ անգլերէն) մենագրութիւնը: Նա Օլեգ Գաբրիէլեանի եւ Կոնստանտին Էռլիխի կազմած *Ղրիմ. Հայեր. Արարման Տասը Դարը* ժողովածուի (Սիմֆերոպոլ 2008 հայերէն, ռուսերէն, ուկրաիներէն եւ անգլերէն) գլխաւոր խորհրդատուներից էր: Վերջին երկու գրքերի համար Կորխմազեանը Ղրիմում արժանացել է Այվազովսկի Եղբայրների մրցանակին:

Կորխմազեանը մինչեւ կեանքի վերջին օրերն աշխատել է անմնացորդ նուիրումով՝ բազմաթիւ ծրագրեր թողնելով անաւարտ: 2009ին, «Նայիրի» Հրատարակչատնից, յետմահու լոյս տեսաւ Հայդէ եւ Հելմուտ Բուշհաուզէնների եւ Կորխմազեանի *Armenische Buchmalerei und Baukunst der Krim/ Armianskaya Knijnaya Jivopis I Arkhitektura Krima* (Հայկական մանրանկարչութիւնն ու ճարտարապետութիւնը Ղրիմում) գերմաներէն եւ ռուսերէն երկլեզու հատորը որը նուիրուած է Մատենադարանի յիսնամեակին:

Էմմա Կորխմազեանը մահացաւ 2009 Յունուար 13ին, Երեւանում:

ԼԻԼԻԹ ԽԱՆԱՂԵԱՆ



ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆ
(1930-2009)

Լիբանանահայ գրականագէտ, գրաքննադատ եւ մանկավարժ, Մեծի Տաճն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան (ՄՏԿԿ) Մեսրոպ Մաշտոցի շքանշանակիր դոկտոր Գրիգոր Շահինեան ծնած է Պէյրութ, 1930ին: Ընտանիքին հետ փոխադրուելով Դամասկոս, կը յաճախէ տեղւոյն Ազգային Սահակեան Վարժարանը, ապա՝ Մարիսթ Ֆրէրներու դպրոցը: Վերադառնալով Լիբանան, երկրորդական ուսումը կը շարունակէ Համազգայինի Նշան Փալանճեան ճեմարանը, զոր կ'աւարտէ 1949ին եւ անմիջապէս ուսուցչութեան կը պաշտօնակոչուի նոյն հաստատութեան մէջ: 1952-56 կը յաճախէ Պրիւքսէլի Ազատ Համալսարանը (Vrije Universiteit Brussel), ուր կը մասնագիտանայ մանկավարժութեան եւ գրականութեան մէջ: Պէյրութ վերադառնալով, 1956-1987 կը շարունակէ իր պաշտօնավարութիւնը ճեմարանին մէջ, դասաւանդելով հայ գրականութիւն, ֆրանսերէն լեզու եւ ֆրանսական գրականութիւն: 1966-70 Պէյրութի մէջ կը հրատարակէ *Անեկան* գրական-մշակութային եռամսեան: *Անեկան* կը դառնայ ոչ միայն Շահինեանի գրականագիտական ուսումնասիրութիւններուն եւ գրաքննադատական հայեացքներուն ամբիոնը, այլեւ կը հանդիսանայ սփիւռքահայ, յատկապէս երիտասարդ գրողներու ստեղծագործական փորձերուն եւ գրականութեան, արուեստի ու ազգային հարցերու մասին արտայայտուելու ազատ բեմը: 1970-94 Շահինեան կը պաշտօնավարէ Լիբանանեան Համալսարանին մէջ իբրեւ ֆրանսական գրականութեան դասախօս: 1999-2007 ՄՏԿԿ Զարեհեան Դպրեվանքէն ներս կը դասաւանդէ հայերէն, մատենագրութիւն եւ մանկավարժութիւն, իսկ Քահանայից Պատրաստութեան Դասընթացքներու ծիրէն ներս՝ հայերէն:

1979ին Սորպոնի Համալասարանէն (Université Paris Sorbonne-Paris IV) Շահինեան կը ստանայ դոկտորի կոչում, պաշտպանելով Շահան Շահնուրի ստեղծագործութիւններուն վերաբերող իր աւարտաճառը՝ "Drame et Poésie d'Exile":

1987ին կը նշանակուի վարիչ ՄՏԿԿի Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնին (ԽԳՄԿԿ), զոր կը վարէ մինչեւ 2007, նպաստելով լիբանանահայ դպրոցը վկայեալ մանկավարժներով օժտելու կենսական պահանջքին:

1994ին Երեւանի Պետական Համալսարանին մէջ ներկայացնելով «Շահան Շահնուրի Ստեղծագործութիւնը» գիտական ատենախօսութիւնը, Շահինեան կը ստանայ Բանասիրական Գիտութիւններու Դոկտորի աստիճան:

1998-2003 Շահինեան վարած է ՄՏԿԿի արխիւատան պատասխանատուութիւնը: Այնտեղ կատարած իր ուսումնասիրութիւններէն հաւաքուած են բազմահատորեան նիւթեր, որոնցմէ հրատարակուած են *Աքսորի Օրագիր – Շաւարշ Նարդունի* (ՄՏԿԿ, 2000) եւ *Թղթակցութիւն Մեծի Տաճն Կիլիկիոյ 3 Կաթողիկոսներու Եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա. Մուրադբէգեանցի* (ՄՏԿԿ, 2002) հատորները:

Մեծ է Շահինեանի գրականագիտական եւ գրաքննադատական վաստակը: 1961ին Մշակ Հրատարակչատունէն լոյս կը տեսնէ անոր առաջին մենագրութիւնը՝ *Համաստեղ*: Երիտասարդ գրականագէտին այս գործը կը համարուի Համաստեղի գրականութեան համապարփակ ու խորաթափանց ուսումնասիրութեան առաջին ծաւալուն փորձը: 1962ին, նոյն հրատարակչատունէն լոյս կը տեսնէ իր *Հատընտիր* գրադատական յօդուածներու ժողովածուն, նուիրուած սփիւռքահայ եւ հայրենի գրողներու գործերուն: Ասոր կը յաջորդեն *Գուրգէն Մահարի Վաթսունի Հանգրուանին* մենագրութիւնը (Մշակ, 1964), *Հանդիպումներ* նորագոյն գրադատական յօդուածները ամփոփող հատորը (Շիրակ, 1966), *Ձիւներն Ի Վեր* Լեւոն Շանթին նուիրուած մենագրութիւնը (Համագգային, 1967) :

Շահինեանը յիրաւի կարելի է համարել Շահնուրի գրականութեան լաւագոյն գիտակներէն մին: Շահնուրի գրականութեան բոլոր ծալքերը ուսումնասիրելու ու անոր վաստակը լոյսին հանելով գրողին արժանին մատուցանելու Շահինեանի մասնագիտական մօտեցումին արդիւնքը կ'ըլլան ոչ միայն զոյգ աւարտաճառերը, այլեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարանէն լոյս տեսած *Drame et Poésie de l'Exile dans l'Oeuvre d'Armen Lubin en Particulier et d'Ecrivains Arméniens de France en Général* (1979), *Կենսագրութիւն եւ Մատենագիտութիւն Շահան Շահնուրի* (1981) եւ *Շահան Շահնուր, Աքսոր եւ Արուեստ* (1985), հատորները, իսկ *Parages d'Exile: Nouvelles, des Chahan Chahnour* ֆրանսերէն հատորը (1984, Ջնեւաք, Le Temps qu'il Fait) կ'ամփոփէ Շահինեանի կատարած Շահնուրի երեք պատմուածքներու ֆրանսերէն թարգմանութիւնը: Շահինեանի նուիրումը Շահնուրի գրականութեան դրսեւորուած է նաեւ իւրովի. ան Շահնուրէն երեք պատմուածքներ՝ «Պճեղ Մը Անոյշ Սիրտ», «Առաւօտեան Շեփոր» եւ «Հոսանքի Եզրը» կը վերածէ թատերգութեանց, հաւատալով որ բեմադրուելով անոնք աւելիով հասանելի կը դառնան հայ հասարակութեան (*Թատերական Պատկերներ*, Շիրակ, 1986): Մամուլի տակ է Շահնուրի կեանքին ու գրական ստեղծագործութիւններուն նուիրուած եռահատորը, որ ծրագրուած է հրապարակել 2010ի աշնան Երեւանի մէջ, *Ազգ* օրաթերթի հրատարակութեամբ:

Շահինեանի խմբագրութեամբ ՄՏԿՎէն լոյս տեսած են Գրիգոր Զօհրապի (1988) եւ Մատթէոս Մամուրեանի (1990) *Երկեր* հատորները, Վահրամ Մավեանի *Ամբողջական Երկերը* (Ա. հրտ.՝ 1993, Բ. Հրտ.՝ 1996, Էջմիածին) եւ Սիլվա Կապուտիկեանի *Գիրս Մնայ Յիշատակող* հատորը (1996): Շահինեան գործակցած է նաեւ ՄՏԿԿի Դանիէլ Վարուժան Գրական Հիմնադրամի կազմին հետ եւ լոյս ընծայած 17 հատոր՝ արեւմտահայ դասական գրողներու գործերէն:

Հայ գրականութիւնը ֆրանսախօս ընթերցողին հասու դարձնելու նախանձախնդրութեամբ, ՄՏԿՎը լոյսին կ'ընծայէ Շահինեանի *Panorama de la Litterature Armenienne* (Անթիլիաս, 1980) եւ *Oeuvres Vives de la Litterature Armenienne* (Անթիլիաս, 1988) հատորները: 1993ին, Փարիզի *CNRS*ի հրատարակութեամբ լոյս կը տեսնէ Քլոտ Մութաֆեանի *Le Royaume Armenien de Cilicie* հատորը, գործակցութեամբ Գրիգոր Շահինեանի: Հայերէնի եւ ֆրանսերէնի իր քաջատեղեակութիւնը զինք կը մղէ պատրաստելու հայերէն-ֆրանսերէն գործնական բառարան մը, որ 1997ին լոյս կը տեսնէ Պէյրութի Շիրակ Հրատարակչատունէն: Յարութիւն Քիւրքճեանի եւ Շահինեանի գործակցու-

թեամբ, նոյն տպարանէն լոյս կը տեսնէ *Ֆրանսերէն-Հայերէն Գործնական Բառարանը* (1998) եւ *Ֆրանսերէն-Հայերէն-Ֆրանսերէն Միացեալ Բառարանը* (2000), որուն համակարգչային տարբերակը՝ *E-lexique Machtots* ամբողջացած տեսքով կը թողարկուի 2008ին, Փարիզ:

Շահինեան զանազանութիւն չդրաւ մանկավարժութեան ու գրականագիտութեան միջեւ: Անոր մանկավարժական գործունէութիւնը չսահմանափակուեցաւ ԽԳՄԿԿի դասարաններուն մէջ: Շահինեան ՄՏԿԿի տպարանէն լոյս կ'ընծայէ *Հայերէնի եւ Հայ Գրականութեան Դասաւանդման Կերպ* (1995), *Հայոց Պատմութեան Դասաւանդման Կերպ* (2002) եւ *Հայերէնի Քարելատումի Ձեռնարկ* (2006) մանկավարժական ուղեցոյցները, որոնք կը խօսին Շահինեան մասնագէտ մանկավարժին լայն մտահորիզոնին ու արդիական մտածողութեան մասին: Մանկավարժական արդի ուղղութիւններն ու ձգտումները ազգային մանկավարժութեան աւանդներուն ագուցելու եւ սփիւռքահայ դպրոցին մէջ հայագիտական նիւթերու դասաւանդման առարկայական ու ենթակայական խոչընդոտները վերացնելու Շահինեանի տեսական թէ գործնական մօտեցումները պէտք է անպայմանօրէն ուսումնասիրուին, ինչպէս նաեւ պէտք է հրատարակուի անոր անտիպ մնացած *Մանկավարժական Խոհերը*:

Մեծ ուշադրութիւն դարձնելով պատանիներու ընթերցանութեան կարեւորութեան ու պատանեկան գրականութեան անհրաժեշտութեան, Շահինեան կը սկսնաւորէ Խաչեր Գալուստեան Մանկապատանեկան Մատենաշարը, որմէ ցարդ հրատարակուած են 22 հատորներ՝ մեծամասնութիւնը լոյս տեսած իր լեզուա-ոճական պատշաճեցումներով: *Սասնայ Ծռեր* դիւցազնավէպի զրոյցները, պատանեկան տարիքի յարմար արեւմտահայ եւ արեւելահայ գրողներու գործերը ենթարկուելով մանկավարժ գրականագէտին բծախնդիր հպումներուն դարձած են մատչելի սփիւռքահայ դպրոցականին: Աւելին, Շահինեան կը հեղինակէ նաեւ երկու պատանեկան պատմուածքներ՝ *Պիժու* (Անթիլիաս, 2003) եւ *Հայրիկին Ու Տատումին Ամառնային Արկածները* (Անթիլիաս, 1999): Անտիպ կը մնան *Արեգ* մանկապատանեկան գործը, եւ *Ծովասար* նախակրթարանի Ա.-Ե. դասարաններու հայերէնի դասագիրքերու շարքը:

Ան ֆրանսերէնէ թարգմանած է նաեւ Ժանին Ալթունեանի *Քա՜ց Միայն Իմ Դիմաց Ճամբաներն Արմենիոյ* (Անթիլիաս, 2001), Աբրամ Զաաթարիի եւ Մոնիրա Խմիրի *Portraits du Caire: Van Leo, Armand, Alban* (Actes du Sud, 1999), Ալեքսանտր Նաժժարի *Պատերազմի Դպրոցը* (Շիրակ, 2001), *Դար Մը Պատմութիւն ՀԲԸՄի* (գործակցութեամբ Շաղիկ Արծրունիի, Փարիզ, 2001) եւ Ճիովանի Կուայթայի զրոյցները Գարեգին Ա. Ամենայն Հայոց հայրապետին հետ՝ *Հանդիպում Մը Երկրի Եւ Երկինքի Միջեւ* (Քանատա, 2008) հատորները:

2004ին, Շիրակ Հրատարակչատունէն լոյս տեսաւ անոր վերջին՝ *Վերապաղ* յուշագրական հատորը, ուր ի յայտ կու գայ Շահինեան մարդուն, հայուն, հայ գրականութեան ու դպրութեան նուիրեալին պայծառ ու մտերմիկ երեսը:

Շահինեան համեստագոյն անձնաւորութիւն մըն էր: Երէցին ու երիտասարդին, լիբանանահայ տարբեր հոսանքներու մտաւորականներու, արուեստագէտներու ու գրողներու հետ սերտ կապեր պահպանող, միշտ հանդարտ, բարեհամբոյր բայց միաժամանակ յախուռն կեցուածք ունեցող բազմակողմանի զարգացումի տէր մտաւորականն էր ան, որ լիբանանահայ մամուլի

էջերէն չէ վարանած յայտնելու իր կարծիքը, երբեմն նոյնիսկ ի հեճուկս իշխող մտայնութեանց: Եւ ան այս իրաւունքը վաստակած էր ջանադիր աշխատանքին ու սկզբունքային կեցուածքին շնորհիւ: Սփիւռքահայ բազմաբեւեռ ու երբեմն խորապէս պառակտուած կառոյցին մէջ Շահինեան եղաւ այն քիչերէն, որոնք գրական աշխատանքն ու սեփական գաղափարախօսական համոզումները չնոյնացուցին, այլ արժանաւորին արժանին մատուցանելով վայելեցին համազգային յարգանք:

Դոկտոր Գրիգոր Շահինեան իր մահկանացուն կնքեց 15 Փետրուար 2009ին, Պէյրութ:

ԱՐՄԷՆ ԻՒՐՆԷՇԼԵԱՆ
urneshlian@yahoo.com



ԱՐՄԷՆ ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ
(1941-2009)

Ճարտարապետ, հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող հասարակական կազմակերպութեան հիմնադիր-նախագահ, ճարտարապետութեան դոկտոր Արմէն Հախնազարեանը ծնուել է 1941 Մայիս 5ին, Թեհրանում, ագուլեցի Յովհաննէս Հախնազարեանի ընտանիքում: Հայրը 1922-1932 ուսանել է Պրահայում, պատմագիտութեան եւ փիլիսոփայութեան դոկտորի կոչում ստացել Պրահայի Համալսարանում, այնուհետեւ երկար տարիներ եղել է հայկական դպրոցի տնօրէն Թեհրանում: Որդին յետմահու հրատարակել է հօր *Գողթան Գաւառ* աշխատութիւնը (Թեհրան, 1991):

Հախնազարեանը տարրական եւ միջնակարգ կրթութիւնն ստացել է Քուշէշ Դաւթեան դպրոցում, որն աւարտել է 1959ին: Գերմանիայի Աախէն քաղաքի համալսարանում (T. H. Aachen) ուսանել է ճարտարապետութիւն եւ քաղաքաշինութիւն:

1968ին շուրջ 6 ամիս զբաղուել է Պարսկաստանի Ատրպատական նահանգի (պատմական Արտազ գաւառ) տարբեր շրջաններում՝ Պարսպատունիքում (Ղարադաղ), Ուրմիայում, Սալմաստում, Խոյում, Արդաբիլում եւ Թաւրիզում գտնուող հայկական վանքերի ու եկեղեցիների, մասնաւորապէս Ս. Թադէոս Առաքեալի, Ծործորի Ս. Աստուածածին եւ Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայ վանքերի ուսումնասիրութեամբ, լուսանկարմամբ եւ չափագրութեամբ: Նման աշխատանքներ է կատարել նաեւ Նոր Ջուղայում պահպանուած 13 եկեղեցիներում, Փերիայի եւ Չարմահալի երբեմնի հայաբնակ գիւղերում: Ս. Թադէոս Առաքեալի Վանքի ուսումնասիրութիւնը հիմք է ծառայել ճարտարապետութեան դոկտորական թեզի համար: *Սուրբ Թադէի Վանքը* մենագրութիւնը հրատարակուել է Միլանի «Հայ Ճարտարապետութեան Վաւերագրեր» մատենաշարով, անգլերէն եւ հայերէն: Նոյն մատենաշարով է հրատարակուել նաեւ նրա յաջորդ՝ *Նոր Ջուղա* աշխատութիւնը (1992, հայերէն եւ անգլերէն, նոյնը հրատարակուել է նաեւ պարսկերէն):

1972-1978՝ Գերմանիայից կազմակերպել է գիտարշաւներ Արեւմտեան Հայաստան եւ Կիլիկիա, որոնց արդիւնքը հիմք է ծառայել *Հայկական Ճարտարապետութիւն* 7 հատորանոց մանրաժապատէնների հրատարակութեանը փրոֆ. Վազգէն Բարսեղեանի (ԱՄՆ) մեկենասութեամբ:

Շարունակական աշխատանքը, որի նպատակն էր գիտարշաւների միջոցով պատմական Հայաստանի տարածքում (ներառեալ Փոքր Հայքն ու Կիլիկիան, նաեւ Սփիւռքը) գտնել, ուսումնասիրել եւ հանրութեանը ներկայացնել հայկական պատմամշակութային արժէքները, հիմնաքար է դարձել 1978ին «Հայկական Ճարտարապետութեան Ուսումնասիրութիւն» (Research on Armenian Architecture) հասարակական կազմակերպութեան ստեղծման համար: 1998ին Կազմակերպութիւնը պաշտօնականացել է Երեւանում: Այն ունի մասնաճիւղեր Աախէնում, Լոս Անջելըսում եւ գործակիցներ՝ տարբեր երկրներում:

1982-1985 Հախնազարեանը ղեկավարել է Թեհրանի Ս. Գէորգ, Ս. Գրիգոր եւ Վանքի եկեղեցիների վերականգնման աշխատանքները: 1996-1997 մասնակցել է Սիրիայի Քեսաբ քաղաքի երկու եկեղեցիների եւ բնակելի երկու շէնքերի վերականգնմանը: Գերմանիայի Քէօլն քաղաքում հայոց առաջնորդարանին տրուած գերմանական բողոքական եկեղեցին վերակառուցել է Հայ Առաքելական Եկեղեցու ծիսակարգի համեմատ: Հախնազարեանը Հայաստանում մասնակցել է մի քանի վանքերի եւ եկեղեցիների՝ Տաթեւ գիւղի Ս. Մինաս եկեղեցու, Ապարանի Ս. Խաչ եկեղեցու, Սաղմոսավանքի, Ուշի գիւղի Ս. Սարգիս Վանքում դամբարան-մատուռի, Արցախի Քարինտակ գիւղի եկեղեցու եւ նշանաւոր Դաղիվանքի վերականգնման աշխատանքներին եւ ղեկավարել դրանք: Շուրջ 25 տարի եղել է «Երկիր Եւ Մշակոյթ» հասարակական կազմակերպութեան վարչութեան կազմում:

Հախնազարեանը հեղինակ է ճարտարապետութեան վերաբերեալ մի շարք յօդուածների, մասնակցել է բազմաթիւ գիտաժողովների եւ մի շարք երկրներում զեկոյցներով ու ցուցահանդէսներով ներկայացրել հայկական ճարտարապետութիւնը:

Հախնազարեանի մշտական գործակիցը եղել է կինը՝ ազգութեամբ գերմանուհի ճարտարապետ Մարգրէթը:

Արմէն Հախնազարեանը մահացաւ 2009 Փետրուար 19ին, Աախէնում, աճիւնի մի մասն ամփոփուած է Արտաշաւանում:

ՀՀՀ

ԿԱՐԷՆ ԻՒԶԲԱՇԵԱՆ
(1927-2009)

Հայագէտ-բիւզանդագէտ, միջնադարեան հայ պատմագրութեան երկերի թարգմանիչ, պատմական գիտութիւնների դոկտոր Կարէն Սկրտչի Իւզբաշեանը ծնուել է 1927 Յունուար 6ին, Երեւանում, շուշեցու ընտանիքում: Ուսանել է Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան Բաժնում: 1947ին ուսումը շարունակել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ) Համալսարանում՝ դառնալով ականաւոր հայագէտ Յովսէփ Օրբելու վերջին աշակերտը: 1955-1958՝ Իւզբաշեանն աշխատել է Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին

Ձեռագրերի Ինստիտուտ-Մատենադարանում, 1958ից՝ ԽՍՀՄ Գիտութիւնների Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի Լենինգրադի Բաժանմունքում: Ղեկավարել է Ինստիտուտի՝ Յովսէփ Օրբելու հիմնադրած «Կովկասի Կաբինէտ»ը:

Իւզբաշեանը զբաղուել է հայոց պատմութեան եւ մատենագրութեան, հայկական ձեռագրերի, հայ-բիւզանդական յարաբերութիւնների ուսումնասիրութեամբ: Հրատարակել է մի քանի տասնեակ մենագրութիւններ, յօդուածներ, գրախօսականներ: Նրա աշխատասիրութեամբ լոյս է տեսել հայ միջնադարեան պատմագրութեան կարեւոր երկերից մէկը՝ *Պատմութիւն Արիստակէսի Լաստիւերտցւոյ* գրական յուշարձանը (Երեւան, 1963): Առանձին գրքերով ռուսերէն լոյս են տեսել Իւզբաշեանի՝ Բիւզանդիայում 1180-1204 թթ. դասակարգային պայքարին եւ Խաչակրաց չորրորդ արշաւանքին (Երեւան, 1957), Բագրատունիների դարաշրջանի հայկական պետականութիւններին եւ Թ.-ԺԱ. դարերի Բիւզանդիային (Մոսկուա, 1988) նուիրուած աշխատութիւնները, *Ակադեմիկոս Յովսէփ Աբգարի Օրբելի (1887-1961)* (Մոսկուա, 1964, ռուսերէն, նոյնը հայերէն՝ Երեւան, 1971), *Ե. Դարի Հայկական Էպոպէան. Աւարայրի Ճակատամարտից Դէպի Նուարսակի Պայմանագրութիւնը* (Երեւան, 1989, նոյնը ռուսերէն՝ Մոսկուա, 2001, հայերէն երկրորդ հրատարակութիւնը՝ Երեւան, 2005), Հայաստանի պատմութեան եւ մշակոյթին նուիրուած հնագոյն ժամանակներից մինչեւ Երրորդ Հանրապետութիւն ռուսերէն աշխատութիւնը (հեղինակակից՝ Գագիկ Սարգսեան եւ ուրիշներ, Երեւան, 1998), *Ոսկեդարի Վերջին Աստղը՝ Ղազար Փարպեցի* (Էջմիածին, 1999), *Հայագիտութեան Ներածութիւն* (Սանկտ-Պետերբուրգ, 2003, ռուսերէն, նոյնը հայերէն՝ Երեւան, 2006):

Կարէն Իւզբաշեանը մահացաւ 2009 Մարտ 5ին, Սանկտ-Պետերբուրգում. թաղուած է տեղի Սուրբ Յարութիւն եկեղեցու բակում:

ՀՀՀ

ՀԵՆՐԻԿ ԻԳԻԹԵԱՆ
(1932–2009)

Արուեստաբան, ՀՀ արուեստի վաստակաւոր գործիչ, հայ կերպարուեստի եռանդուն քարոզիչ եւ կազմակերպիչ, հասարակական գործիչ Հենրիկ Սուրէնի Իգիթեանը ծնուել է 1932 Մարտ 5ին, Թբիլիսիում: 1949ին աւարտել է Երեւանի Կիրովի անուան թիւ 12 միջնակարգ դպրոցը: 1956ին աւարտել է Երեւանի Ժդանովի Անուան Ռուսաց Եւ Օտար Լեզուների Պետական Ինստիտուտի Ռուսաց Լեզուի եւ Գրականութեան Բաժինը: 1963ին աւարտել է Լենինգրադի Ռեպինի Անուան Գեղարուեստի Ակադեմիայի Արուեստի Տեսութեան Եւ Պատմութեան Բաժինը: 1960-76՝ աշխատել է Հայաստանի Պետական Պատկերասրահում որպէս Հայ Կերպարուեստի Բաժնի Վարիչ: 1968ից եղել է ԽՍՀՄ եւ Հայաստանի նկարիչների միութիւնների անդամ:

1970 Մարտ 13ին հիմնադրել է աշխարհում առաջին մանկական ստեղծագործութեան թանգարանը: 1972ին նախաձեռնել եւ հիմնադրման օրուանից ղեկավարել է Հայաստանի Ժամանակակից Արուեստի Թանգարանը՝ առաջինը ոչ միայն ԽՍՀՄում, այլեւ ողջ սոցիալիստական երկրներում:

Իգիթեանը 1978ին հիմնել է Գեղագիտութեան Ազգային Կենտրոնը, որի կազմում Մանկական Ստեղծագործութեան Թանգարանից բացի գործում են կերպարուեստի եւ դեկորատիւ-կիրառական արուեստի ստուդիաները, փոքր թատրոնը, մանկական ֆիլհարմոնիան: Կենտրոնը ունի մասնաճիւղեր Հայաստանի տարբեր մարզերում:

1980ին Իգիթեանին շնորհուել է Հայաստանի արուեստի վաստակաւոր գործչի կոչում: 1989-91՝ ակտիւ հասարակական գործունէութիւն է ծաւալել ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդում որպէս ժողովրդական պատգամաւոր, ապա՝ Գերագոյն Խորհրդի անդամ: Պարգեւատրուել է շքանշաններով եւ մեդալներով («Ժողովուրդների Բարեկամութեան» շքանշան, «Մովսէս Խորենացի» մեդալ, ԼՂՀ «Մխիթար Գօշ» մեդալ, Կալիֆորնիայի Լոս-Անջելըսի Համալսարանի Հայագիտութեան Ամբիոնի «Գրիգոր Նարեկացի» ոսկէ մեդալ, Ֆրանսիայի Հանրապետութեան Մշակոյթի Նախարարութեան Արուեստի եւ Գրականութեան շքանշան): 2004ին ընտրուել է Երեւանի պատուաւոր քաղաքացի: 2007ին արժանացել է ՀՀ նախագահի արուեստի բնագաւառում նախատեսուած մրցանակին՝ *«Ի. դարի հայ արուեստի ուսումնասիրութեան եւ տարածման գործում ունեցած նշանակալի ներդրման համար»*: 2009ին Ֆրանսիայում Հայաստանի տարուայ կապակցութեամբ նոյնպէս արժանացել է մեդալի:

1980ին հրաւիրուել է Մոսկուա որպէս Ողիմպիական խաղերի ժամանակ բացուած «Ես Տեսնում Եմ Աշխարհը» մանկական միջազգային ցուցահանդէսի տնօրէն: 1987ին ԱՄՆում Իգիթեանը ներկայացրել է Հայաստանի մանկական արուեստը եւ 9 ամիս շարունակ դասախօսութիւններ է կարդացել ԱՄՆի տարբեր քաղաքներում: 1989ին Իգիթեանը եւ «Մոսկուայի Վիրտուոզներ» նուագախմբի հիմնադիր եւ նուագավար Վլադիմիր Սպիւակովը մանկական արուեստի ցուցահանդէս են բացել Ֆրանսիայի Կալմար քաղաքում: 1990ին նոյն ցուցահանդէսը բացուել է Դաւոսում՝ միջազգային տնտեսական ֆորումի ժամանակ: Իգիթեանը բազմաթիւ միջազգային ցուցահանդեսներ է կազմակերպել եւ ղեկավարել աշխարհի տարբեր երկրներում, 1991ին Գերմանիայի Բոխում քաղաքում, 1998ին՝ Բուենոս Այրէսում, 1999-2000ին՝ Համաշխարհային Բանկում (Ուաշինգթոն), 2000ին՝ Եւրոխորհրդարանում (Ստրասբուրգ), 2000ին՝ Հռոմում, 2001-2002ին՝ Նիւ Եորքում, Չիքագոյում, Միլուոքիում (ԱՄՆ), 2003ին՝ Եւրոմիութիւնում (Բրիւսէլ):

Հենրիկ Իգիթեանը հեղինակ է բազմաթիւ մենագրութիւնների, կատալոգների, ալբոմների, այդ թւում՝ *Մարտիրոս Սարեան* (Երեւան, 1965), *Յակոբ Գիւրջեան* (Երեւան, 1966), *Գէորգ Գրիգորեան - Ջոտտո* (Երեւան, 1967), *Յովսէփ Կարալեան* (Երեւան, 1967), *Յովհաննէս Այվազովսկի* (Երեւան, 1967), *Արտօ Չաքմաքչեան* (Երեւան, 1971), *Երուանդ Քոչար* (Երեւան, 1972), *Մեղրակ Առաքելեան* (Երեւան, 1975), *Յակոբ Ամանիկեան* (Երեւան, 1978), *Վաղարշակ Էլիբեկեան* (Թբիլիսի, 1979), *Նիկողայոս Նիկողոսեան* (Երեւան, 1979), *Ռուդոլֆ Խաչատրեան* (Երեւան, 1980), *Երուանդ Քոչար* (Երեւան, 1980), *Մինաս Աւետիսեան* (Երեւան, 1984), *Յակոբ Յակոբեան* (Երեւան, 1989), *Հրաշքների Աշխարհ (մանկական թանգարան)* (*Wonderland*, 1997), *Ֆուջիյամայից Արարատ (միջազգային մանկական արուեստ)* (Երեւան, 1997), *Թանգարան* (Երեւան, 1998, «Աշխարհի Լաւագոյն Գրքերը» ցուցահանդէսում ստացել է UNESCOի մրցանակը որպէս տարուայ լաւագոյն գիրք, 1998), *Gabo* (Գաբրիէլ Մանուկեան) (Երեւան, 1998), *Արմէն Գէորգեան* (Երե-

ւան, 1999), *Albert* (Ալբերտ Յակոբեան) (Երեւան, 1999), *Արամ Խաչատրեան* (Երեւան, 1999), *Հայկական հերիաթներ* (ծրագրի եւ առաջաբանի հեղինակ, Երեւան, 1999, հայերէն եւ անգլերէն), *Յովհաննէս Թումանեանի հերիաթները* (ծրագրի եւ առաջաբանի հեղինակ, Երեւան, 1999, հայերէն, անգլերէն եւ ռուսերէն), *Սարգիս Համալեաշեան* (Երեւան, 2000 եւ 2006), *Երուանդ Քոչար* (Երեւան, 2000), *Յովնաթանեանից Մինաս* (Երեւան, 2001), *Մարիամ Դիլանեան* (Երեւան, 2002), *Թենի Վարդանեան* (Երեւան, 2002), *Էմիլ Կազազ* (ծրագրի հեղինակ, Երեւան, 2004), *Հայկական Ներկապնակ* (ծրագրի հեղինակ, ալբոմ 2 մասից, Երեւան, 2005), *Ջաջուռեցի Մինասը* (Երեւան, 2006), *Վրոյր* (Երեւան, 2006), *Աշոտ Յովհաննիսեան* (Երեւան, 2007), *Գագիկ Ղազանչեան* (Երեւան, 2008):

Իգիթեանից մի շարք աշխատութիւններ հրատարկուել են տարբեր լեզուներով, ինչպէս՝ «Մինաս Աւետիսեան» (մենագրութիւն, Մոսկուա՝ 1970, Լենինգրադ՝ 1975), «Լաւինիա Բաժբէուկ-Մելիքեան» (Մոսկուա, 1980, 1982), «Ռուդոլֆ Խաչատրեան» (Մոսկուա, 1984), «Վաղարշակ Էլիբեկեան» (Մոսկուա, 1991), չեխերէն՝ «Մ. Ս. Սարեան» (Պրահա, 1966), «Մինաս Աւետիսեան» (մենագրութիւն, Պրահա, 1984), հունգարերէն՝ «Սարեան» (Բուդապեշտ, 1967), գերմաներէն՝ *Armenische Malerei* (Հայկական նկարչութիւն, Լայպցիգ, 1975), «Մինաս Աւետիսեան» (Բեռլին, 1975), սլովակերէն՝ *Armenska Paleta* (Հայկական ներկապնակ, Բրատիսլաւա, 1976), պորտուգալերէն՝ *Pintura Armenia Contemporanea* (Լիսաբոն, 1978), լեհերէն՝ *Malarstwo Armenii* (Հայաստանի նկարչութիւնը, Վարշաւա, 1987), անգլերէն՝ *Tree of Life* (Բէյրութ, 1995), *Noah's Arc* (Բէյրութ, 1995), *Modern Art Gallery* (Երեւան, 1997), ֆրանսերէն՝ *Art Contemporain d'Armenie* (կատալոգ, Փարիզ, 2007), իտալերէն՝ *I Colori dell'Armenia* (Հայաստանի գոյները, Հռոմ):

Հենրիկ Իգիթեանը բազմաշնորհ անհատականութիւն էր, աչքի էր ընկնում գիտելիքների հսկայածաւալ պաշարով, քաղաքացիական խիզախութեամբ, աներեւակայելի աշխատասիրութեամբ: Այդ ամէնը արտացոլւում էր նրա արուեստաբանական, կազմակերպչական եւ հասարակական-քաղաքական բեղուն գործունէութեան մէջ: Մեծ է Իգիթեանի վաստակն ազգային կերպարուեստի զարգացման ու տարածման, երեխաների գեղագիտական կրթութեան, հասարակական գործունէութեան ասպարէզներում: Իգիթեանի կերպարը լաւագոյն է տրուած Եակով Զարգարեանի *Այդ Իգիթեանը* գրքում (2001, Երեւան, ռուսերէն, 2008, Երեւան, հայերէն):

Հենրիկ Իգիթեանը մահացաւ 2009 Մայիս 11ին, Երեւանում:

ՀՀՀ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայկազեան Հայագիտական Հանդէսի ԻԹ. Հատորի Շնորհանդէսը

Հայկազեան Հայագիտական Հանդէսի ԻԹ. հատորի շնորհանդէսը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 14 Մայիս, 2009ի երեկոյեան ժամը 7:30ին, Հայկազեան Համալսարանի Տէրեան Հայագիտական Գրադարանին մէջ: Շնորհանդէսին ներկայ էին Հայկազեան Համալսարանի Նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեան, Համալսարանի հոգաբարձութեան անդամներ, մտաւորականներ եւ հայ գիրն ու դպրութիւնը, հայ մշակոյթը սիրող ու քաջալերողներու կոկիկ հոյլ մը:

Իր բացման խօսքին մէջ, խմբագրական կազմի անդամ, Արմէն Իւրնէշլեան, բարիգալուստ մաղթեց ներկաներուն, մատնանշեց ամէնամեայ, կրկնուող այս հայագիտական ժամադրութեան էութիւնը, ապա ներկայացուց օրուան գեկուցաբերը՝ պետական երեսփոխան Տքթ. Եղիկ Ճէրէճեանը, որ աշխատակից է նաեւ *Հանդէսի*ն:

Տքթ. Ճէրէճեան գեկուցեց *Հանդէսի* «Հայագիտութիւնը Եւ Սփիւռքի Նախարարութիւնը» վերնագրեալ խմբագրականին շուրջ, եւ մէջբերելով խմբագրականին հայագիտութեան հանդէպ ունեցած երկակի արժեւորումը՝ հաւաստեց որ ըստ իրեն՝ «հայագիտութիւնը կը մնայ Հայրենիք-Սփիւռք յարաբերութեան կարեւոր բնագաւառներէն մէկը»:

Տքթ. Ճէրէճեան նկատեց որ Սփիւռքի նախարարութեան հայեցակարգին մէջ հայագիտութիւնը «արժանացած է համապատասխան ուշադրութեան» եւ մանրամասնեց Սփիւռքի Նախարարութեան ունենալիք դերակատարութիւնը՝ հայագիտութեան առնչութեամբ, ինչպէս՝ հայագիտութեան արդի եւ հեռանկարային հիմնահարցերու լուծման գիտական ծրագրում, «հայագիտութիւն» մասնագիտութեան համալսարանական վկայում, սեմինարներու կազմակերպում՝ արտերկրի հայագիտական հիմնարկներու մասնակցութեամբ, եւ համահայկական հայագիտական ելեկտրոնային շտեմարանի ստեղծում: Տքթ. Ճէրէճեան «բաւականին ընդգրկուն եւ հեռանկարային» գտաւ զանոնք:

Ապա խօսք առաւ *Հանդէսի* Պատասխանատու Խմբագիր Հայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կոանեան, որ հաստատեց որ ԻԹ. հատորը «իր գիտական բովանդակութեամբ եւ ուսումնասիրութիւններուն լրջութեամբ պատիւ կը բերէ զինք հրատարակող հաստատութեան ու խմբագրական կազմին ...նաեւ՝ Սփիւռքի հայագիտական միւս հրատարակութիւններուն»: Ան պնդեց որ «հայագիտութիւնը հայը հա՛յ կը պահէ, զայն հաղորդակից դարձնելով իր անցեալի արժէքներուն: Հուսկ հայագիտութիւն բառով կը հասկնամ՝ հային հայկական ինքնութեան գիտակցում»:

Վարդապետը հաստատեց որ «գոյատեւելու... հասարակաց վտանգուածութեան գիտակցութիւնն է որ Հայաստանը մղեց Սփիւռքին աւելի մօտենալու: Օրերը ա՛յնպիսին են, որ Հայաստան ու Սփիւռք իրարու յենելով է որ պիտի վերապրին»: Ապա Հայր Կոանեան Սփիւռքի Նախարարութեան առաջին

առաքելութիւնը նկատեց «Սփիւռքի հայութիւնը հայ պահել... հետեւաբար Սփիւռքի Նախարարութիւնը հայագիտութիւնը պահելու եւ կարեւորելու է իբր ազգապահպանումի հզօր ազդակ»: Ան երկրորդ առաքելութիւնը նկատեց «Սփիւռքը միացած պահելը՝ նախ իրարու միջեւ, ապա Հայաստանի հետ», ու Սփիւռքի Նախարարութեան առաքելութիւնը նկատեց Սփիւռքի եւ Հայաստանի հայագէտները «բանակցութեան հրաւիրել», եւ հարկ նկատեց, որ «առաջին հերթին Սփիւռքի Նախարարութիւնը բաղկացած ըլլայ թէ՛ Հայաստանէն եւ թէ՛ Սփիւռքէն ընտրուած անդամներէ, լիիրաւ իրաւունքով»:

Վարդապետը իր խօսքը եզրափակեց հաստատելով որ «ազգ մը կը գոյատեւէ ո՛չ միայն իր գէնքով, այլ նաեւ իր ազգային գիտակցութեամբ: Հայ ըլլալ միայն արիւն չէ, այլ նաեւ իր արժէքներուն գիտակցութիւն: Հայագիտութիւնը ինքնագիտակցութեան հզօր ազդակ է»:

Ապա ամբիոնը բաց յայտարարուեցաւ ազատ կարծիքի: Մեր Գասպար Տէրտէրեան, Արմէն Յարութիւնեան եւ ուրիշներ յայտնեցին իրենց մտածումներն ու տեսակէտերը հայագիտութեան ուղղութիւններուն, կալուածներուն, բառապաշարի, ուղղագրութեան միատարրութեան եւ առնչակից հարցերու մասին:

Շնորհանդէսի պաշտօնական բաժնի աւարտին բեմ հրաւիրուեցաւ Համալսարանի Նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեան, որ շնորհակալութեան խօսք ուղղեց *Հանդէս*ի խմբագրական կազմին, անոնց աշխատանքը կոչեց «կոթողային», եւ դիտարկեց որ «Սփիւռքի ու հայրենիքի հոգիները կամրջող նորագոյն հաստատութիւն-նախարարութիւնը՝ խոստացեալ շնորհք է:- Աւելցնելով, որ,- Արդէն մեր *Հանդէս*ն ալ իր նիւթերովն ու աշխատակիցներով Սփիւռք-Հայաստան անքակտելի կապը ամրապնդելու ջանքին մէջ գտնուած է միշտ»:

Շնորհանդէսի աւարտին, Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեան, Տքթ. Եղիկ Ճէրէճեան, Անդրանիկ Վրդ. Կոռնեան եւ *Հանդէս*ի խմբագրական կազմը միատեղ հատեցին աւանդական կարկանդակը:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԷՐԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ԿՈՂՄԷ ՁԵՌՔ ԲԵՐՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՄՈՒԼԻ ՑԱՆԿ 2009

Ա. Հայերէն Գիրքեր

Գէորգ Արէլեան, *Նետենք Բոնենք*, Պէյրութ, Համազգային, 2009, 64 էջ:

Յակոբ Աղամեան, *Պուպրիկներու Հարսանիքը*, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2009, 165 էջ:

Սիլվա Աբօլիքեան, *Աղօթք Առ Աստուած*, 44 էջ:

Պետրոս Ալահայտոյեան, *Բալու (Եւ Տարածաշրջանի) Երաժշտական Ազգագրական Հաւաքածոյ*, Կլենտէյլ, Դրազարկ Հրատ., 2009, 446 էջ:

Աւետիս Ահարոնեան, *Ազատութեան Ճանապարհին*, Պէյրութ, Ոսկեդար, 1992, 250 էջ:

Սերգէյ Աղաճանեան, *Քաղաքական Երգիծանքը Գուրգէն Մահարու Արձակում*, Պէյրութ, Առանձնատիպ ՀՀՀ Հտր. ԻԹ., 2009:

Պարոյր Աղպաշեան, *Ապրուած Հրապարակագրութիւն Յետադարձ Հայեացքով, Մեկնաբանութիւններ, Վերլուծումներ, Քննարկումներ, Խորհրդածութիւններ Բ. Հտր.*, Պէյրութ, ՄԱՀԱԵՄ, 2009, 400 էջ:

Վարդգէս Ամատունի, *Ապրիլեան Եղերերգ*, Պէյրութ, Արամազդ, 1961:

Հասան Ամջա, *Տեղահանութիւն եւ Ոչնչացում*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ, 2007, 47 էջ:

Արգամ Այվազեան, *Նախիջեւանի Պատմաճարտարապետական Յուշարձանները*, Երեւան, Հայաստան, 1978, 132 էջ:

Օմրաամ Այվանհով, (թրգմ.՝ Յասմիկ Նաճարեան), *Մարդը Տիեզերական Կառոյցին Մէջ*, Ֆրանսա, Prosveta, 2001, 48 էջ:

Շողիկ Աշըգեան, *Քառորդ Դար. Հայերը Տուպայի եւ Հիւսիսային Էմիրութեանց Մէջ*, Քուէյթ, 2008, 296 էջ:

Ա. Աւոսիտիս, (թարգմ.՝ Էմմա Ազարիկեան), *Հայերը եւ Երիտասարդ Թուրքերը. Կիլիկիոյ Կոտորածները*, Հալէպ, Տպ. Արեւելք, 2009, 166 էջ:

Արաքսիրցի Վերապրողներու Յանկը, Երեւան, Մուղնի, 2009, 77 էջ:

Արփիար Արփիարեան, (մշ.՝ Գրիգոր Շահինեան), *Կարմիր Ժամուց*, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1992, 77 էջ:

Աւագ Ծաղկող, Ֆինլանտա, YKP, 1984, ա.է.

Ռաֆայէլ Աւագեան, *Եօթ Գարունների Երկրում. Գիրք Երկրորդ. Աստղագիտութեան Դաս*, Երեւան, Սովետական Գրող Հրատ., 1981, 653 էջ:

Պերճուհի Աւետեան, *Կռունկը*, Հալէպ, 1994, 148 էջ:

Ժասմէն Բաբայեան, *Արցախի Խոհանոց*, Երեւան, Հանրագիտարան-Արմենիկա, 2007, 194 էջ:

Վազրիկ Բազիլ, *Առօրեան*, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2009, 125 էջ:

Արամայիս Բալոյեան, *Իտալիայի Արտաքին Գործերի Նախարարութեան Պատմական Դիւանագիտական Արխիւի Վաւերագրերը Հայկական Հարցի Մասին 1913-1923թթ. Հտր. Ա. 1913-1917*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ, 2008, 250 էջ:
Արծուի Բախչինեան, *Հայերը Հիւսիսային, Կեդրոնական եւ Հարաւային Ափրիկէում*, Պէյրութ, Առաձնատիպ ՀՀՀ Հտր. ԻԹ., 2009:
Գառնիկ Բանեան, *Անխոնջ Միտքեր*, Երեւան, Համազգային, 2007, 214 էջ:
Ծովինար Բանուչեան, *Տե՛ս, Որ Լռում Եմ...*, Երեւան, Անտարէս, 2008, 240 էջ:
Գէորգ Բրուտեան, *Հայկական Տարազ*, Երեւան, Հայաստան, 2007, 137 էջ:
Գէորգ Գառեան, *Մրմունջներ*, Պէյրութ, Տպ. Զարթօնք, 1987, 86 էջ:
Յովհաննէս Գարճեան, *Եկեղեցական Օձացոյցի Հետքերով*, Պէյրութ, Հրատ. Ջանասէր Երկշաբաթաթերթի, 1997, 172 էջ:
Արմէն Գարօ, *Ապրուած Օրեր*, Պէյրութ, Ոսկեդար, 2005, 260 էջ:
Յ. Գեղարդ, *Յիշատակի Խնկաման*, Պէյրութ, Համազգային, 2007, 455 էջ:
Կարօ Գէորգեան, *Նոր Քնար. Ձայնագրուած եւ Պատկերազարդ Ընդարձակ Երգարան*, Հալէպ, Կիլիկիա, 2008, 609 էջ:
Միսաք Գոչունեան, *Կեանքի Տեսարաններ*, Իսթանպուլ, 2009, 169 էջ:
Գրախօսականներ, Պէյրութ, Առաձնատիպ ՀՀՀ Հտր. ԻԹ., 2009:
Սեդա Գպրանեան-Մելքոնեան եւ Մոնթէ Մելքոնեան, *Իրականութիւնը. ՀԱՀԳԲ. Յեղափոխական Շարժման Փաստաթղթերը*, 1992, 247 էջ:
Զաւէն Գրիգորեան, *Հայոց Աւանդական Պատմութիւն. Գործնական Դասագիրք Դ. Տարի*, Աբէնք, Տպ. Յովհ. Առաքելեան, 1991, 202 էջ:
Գրիգոր Նարեկացի, *Մատեան Ողբերգութեան*, Երեւան, Լեգալ Պլիւս, 2008, 484 էջ:
Գրիգոր Նարեկացի, *Ներբող եւ Աղերս Սուրբ Կոյսին*, Երեւան, ՎՄՎ-Պրինտ, 2008, 59 էջ:
Հայկ Դեմոյեան, *Հայկական Ջինանաշաններ, Դրօշներ, Պետական Պարգեւներ*, Երեւան, Տիգրան Մեծ, 2008, 93 էջ:
Եղիշէ Արք. Դուրեան, *Ընթացք Ի Գրոց Բարբառ*, Երուսաղէմ, Սրբոց Յակոբեանց, 1960, 100 էջ:
Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, *«Եպիսկոպոսը» Հայ Եկեղեցական Մտածողութեան Մէջ*, Վենետիկ, Ս. Ղազար, 2003, 143 էջ:
Միքայէլ Եուսուֆեան, *Տօնական*, Փասատինա, Arax Printing, 1998, 387 էջ:
Երեւանի Պետական Համալսարան, Երեւան, ԵՊՀ, 2009, 191 էջ:
Երեւանի Պետական Համալսարան, Սրտի Խօսք, Երեւան, ԵՊՀ, 2009, 171 էջ:
Երեւանի Պետական Համալսարանը Վաւերագրերում, Երեւան, ԵՊՀ, 2009, 187 էջ:
Երեւանի Պետական Համալսարան, Կենսագրական Բառարան, Երեւան, ԵՊՀ, 2009, 602 էջ:
Զարեւանդ, *Կրնա՞ Ըլլալ Հաշտուիլ Թուրքին Հետ*, Երեւան, 1997, 32 էջ:
Սարգիս Զէյթլեանի Դատի Իրազեկման եւ Պահանջատիրութեան Խորհուրդ, Երեւան/Լոս Անճելըս/Պէյրութ, Հրազդան Զէյթլեան Հրատ., 1994, 104 էջ:
Ձիաց Մեր Հանապազորդ..., Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2008, 211 էջ:

Ներսէս Թամամեան, *Աւագներու Տակ. Բանաստեղծութիւններ*, Նիւ Ճըրզի, 1988, 160 էջ:
Վարդան Եպիսկոպոս Թէքէեան, Պէյրութ, Աւետիք Հրատ., 2009, 57, 29 էջ:
Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը 1913 Է. Տարի Բ. Հրատ.*, Հալէպ, Կիլիկիա, 2008, 433 էջ:
Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը 1914 Ը. Տարի, Բ. Հրատ.*, Հալէպ, Կիլիկիա, 2009, 487 էջ:
Փասքալ Թէօրնելի, *Հանրապետական Շրջանի Իսթանպուլահայ Գրականութեան Արդի Գրողներ*, Իսթանպուլ, Օհան Մաթպաասի, 2008, 128 էջ:
Բիւզանդ Թորիկեան, *Պատմութիւն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Գ.*, Պէյրութ, Համազգային, 2003, 379 էջ:
Յարութիւն Թորոսեան, *Դիտանկիւնէս*, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2008, 291, էջ:
Ալեքսանդր Թոփչեան, *Պանք Օթոման (վէպ)*, Երեւան, Գասպրինտ, 2008, 229 էջ:
Ալեքսանդր Թոփչեան, *Պանք Օթոման (վէպ)*, Պէյրութ, Արծիւ, 2009, 192 էջ:
Յովսէփ Թոքաթ, *Հայ Արծաթագործ Վարպետներ*, Լոս Անճելոս, Van Publishing, 2005, 294, xxxv էջ:
